# ՆԱՐԵԿ ԱՂՕԹԻՑ

# ՆԱՐԵԿ ԱՂՕԹԻՑ

ՀԱՄԱՌՕՏ ԵՒ ԶԳՈՒՇԱՒՈՐ ԼՈՒԾՄԱՄԲՔ

ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ՏԵԱՌՆ Հ. ԳԱԲՐԻԷԼԻ ԱՒԵՏԻՔԵԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1859. ՌՅԸ.

# ԴՐՈՒԹԻՒՆՔ

ՅՈԳՆԱԹԱԽԱՆՁ ԲԱՆԻՑ ՕԳՏԱԿԱՐԱՑ
ԱՊԱՇԽԱՐԱՆԱՑ ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏՈՒՑ ԱՆՁԻՆ ՍՏԳՏԱՆԱՑ
ԶՂՋԱԿԱՆԱՑ ԿԱՆՈՆԱՑ ԿԵՆԱՑ ԿԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ
ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆՑ ԱՆԵՐԵՒՈՒԹԻՑ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՑ
ՄԵՂԱՆԱՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆՑ
ՑՈՒՑՄՈՒՆՔ ԳԱՂՏՆԵԱՑ ՏԱՐԱԾՄՈՒՆՔ ԾԱԾԿԵՑԵԼՈՑ
ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆՔ ԹԱԳՈՒՑԵԼՈՑ ՍՊԵՂԱՆԻՔ
ԶՕՐԱՒՈՐՔ ՎԻՐԱՑ ԱՆԲԺՇԿԱԿԱՆԱՑ
ԴԵՂՔ ԱԶԴՈՂԱԿԱՆՔ ՑԱՒՈՑ ԱՆՏԵՍԱԿԱՆԱՑ
ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ ԲԱԶՄԱՄԱՄՆԵԱՑ ԵՐԿԱՆՑ ՎՏԱՆԳԻՑ
Ի ԴԻՄԱՑ ԿԱՐԵԱՑ
ԱՄԵՆԻՑ ԲՆՈՒԹԻՒՆՔ ԱՌԻԹՔ ԱՐՏԱՍՈՒԱՑ
ՊԱՏՃԱՌՔ ԱՂՕԹԻՑ

Ի ԽՆԴՐՈՅ ՀԱՅՑՄԱՆՑ ՀԱՐՑ
ՄԻԱՆՁԱՆՑ ԵՒ ԲԱԶՄԱՑ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԱՑ
ԱՍԱՑԵԱԼ

## ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

# ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

# ԲԱՆ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Աստուածախնամ տեսչութեանցն արդիւնք ընդ դարս իւրաքանչիւր բազմօրինակ երեւեալ 'ի բարեգործութիւն հայկական ծննդոցս, միշտ տան շնորհակալութեան քննողաց՝ ոչ միայն զընտրութիւն ազգի ազգի պարգեւացն գիտել հաւաստաբար, այլ թէ յորոց ձեռն պարգեւի՝ ճանաչել յարգանօք եւ ընդունել համբուրել ։ Ընդ թիւ երկնաձիր պարգեւացս գրեսցի արդարապէս եւ աղօթանուէր մատեան գերերջանիկ հօրս մերոյ Նարեկացւոյն Գրիգորի. գործ արդարեւ, որում զուգահաւասար չեւ եւս գտեալ յայլ ազգս՝ պանծայ բարձր 'ի գլուխ. եւ զգօնութեանն պատիւ ոչ միայն յառաջին պատճառ անդր 'ի վեր ձկտեցուցանէ, այլ եւ զերկրորդն պատճառ՝ զմատակարար գրչութեանն՝ գերապատիւ փառօք 'ի նախակրօնիցն նմանութիւն վերածեալ տանի։

Նոր ինձ երեւեալ Մովսէս, 'ի Նարեկեան բարձրապատիւ մենարանէն առբերելով 'ի Հայս զտախտակս աղօթից, որպէս նախնին այն՝ զօրինացն առ Իսրայէլ 'ի սինէական առանձնութենէն ։ Դաւիթ հոգերգող Հայաստանեայցս եկեղեցւոյ, իմանալի քնարօքն պարագլուխ անցեալ առաջի քրիստոսեան տապանակին, ոչ մարմնապէս հոլանեալ 'ի կաքաւս ցնծութեան, այլ զհոգւոյն մերկացեալ զծածուկս մեղանաց՝ 'ի տեսիլ աշխարհի, հրեշտակաց եւ մարդկան. սկզբնապար ապաշխարողաց, երգս խոստովանութեան արձանագրեալ յուսումն զղջացելոց. ոչ զօտարացն ոգւս առնուլ 'ի բերան, իբր զՍաւուղայն կամ զԱբեններայ, (Բ. Թագ. Ա. 18. Գ. 34.) այլ զանձանցն մեռելութիւն յերգ արկանել 'ի լսելիս Աստուծոյ՝ յարութեանն յուսով ։

Նա՛ զինչ այլ յաւէտ ինձ ընտանի՝ քան ՚ի Նախնին իմ զոր հայ նկատել՝ և անուամբն և պաշտամամբ. Նոր Լուսաւորիչ, երկրորդ Գրիգորիոս, աւանդեալ մեզ զաղօթից սահման, իբր առաջինն՝ զհաւատոյն. յակոբեան նահապետին՝ Յովսէփ ցանկալի, սովելոցն հոգւով կերակրիչ. յաճախապատում վարդապետին՝ աշակերտ ամենարուեստ, որ ՚ի դոյզն յայս մատեան ած միացոյց զբանականն արուեստ ընդ աստուածայնոյն, զաստուածաբանութիւնն տեսական ընդ խորհրդականին, զպատմողական առած սուրբ գրոց ընդ մեկնողականին, զաղօթից հոգի ընդ բանաստեղծականին, զերկիւղ ընդ սիրոյ, զյոյս ընդ զղջութեան, զԱստուծոյ բարիսն ընդ մարդոյն չարիս. և ՚ի մի բան՝ զԱստուած ընդ մարդոյ. եղեալ արդարև դպիր աջողակ արքայութեանն նորա, արտաբերելով ՚ի սրտին գանձարանէ զմեղր նորագործ ստեղծաբանութեան, և զհին զինի աստուածեղէն սիրոյն.

Ո՛չ այլ յունաստան՝ մի ընաւ ինքնապարծ ճոխասցի յիւրն Որփէոս կամ ՚ի Հոմերոս, և մի Իտալիա ՚ի Վիրգիլիոս կամ յՕվիդիոս. զի մեծ քան զնոսա առ հայաստանեայքս ծագեաց երանաշնորհն Գրիգորիոս, որ գիտաց զապատամբ հոգին բանաստեղծութեան հնազանդել ընդ թևօք աստուածայնոյ հոգւոյն. և զայն՝ որ ընդ երկնաւս ևեթ ճախրէր, յախորժանս մարդկան զնուագն յարմարելով, համարձակեաց վերաթևել ՚ի բուն իսկ երկինս, անդ քաղցրացուցանել նուագս ախորժալուրս ՚ի լսելիս Աստուծոյ և հրեշտակաց.



Արժանոյն գրեգորի· ազդէ տիրուհի,
մատչել յիւր որդին ՚ի Սոտեր կղզի·

# ԳԻՏԱՆՈՒԹԻՒՆ ԼՈՒԾՄԱՆՑ

Բայց սակայն գոյ մեզ 'ի կարգ այսց գովեստից՝ ոչ փոքր պարաւանս զմերոյ հեզգամտութեանս խոստովանել, երբ յեռանդեալ յարժանաւոր ընդունելութենէ արդեանցս, և զապերախտութեան ինչ առ 'ի նոյն բերելով կարծիս՝ անձանաչողութեանն մասամբ. վասն զի թէպէտ և յառաջնոց անտի ժամանակաց մինչև 'ի մեզս՝ ամենեցուն փորձել է մատեանս, և մատենագրողն բարեհամբաւեալ, սակայն ոչ ումեք յառաջնոյն, և սակաւուց ոմանց 'ի յետնոյն խնամ ցուցաւ՝ զանյայտութիւնն որ 'ի նմա, արժանապէս բացայայտութեամբք ածել 'ի տեսութիւն. որով աղօթաւորացն անձինք անձաշակք յարդմանէ իմաստիցն հիացեալք, աղօթէն հոգւով, այլ սակաւք մօք. վկայեն զսա թանգարան լինել ականց պատուականաց, բայց անաւագ փայլման լուսոյ երեւացն:

Ուր յայլ ազգս՝ մեր խրթնածածուկ մատենի յոլովս տեսանեմք կացեալ մեկնութիւնս հինս և նորս, մի զմիով 'ի նախանձ բացայայտութեանն ձեռնեալք հայրասէր բարոյիւք. և զսա 'ի յառաջնոցն զթողեալն, զղեղչեալն և զծածկեալն՝ յետինքն փութան լնուլ, ընդարձակել, և յերեւան ածել. որով մատեանն զկնոլին զընաւորին այս լոյս. մատենագրողին յարգ և փառաւոր բարեհաչակին. մեկնութիւնք երբ համախառնեալք գովին. ընթերցողք գնան երբ 'ի տանջեան անայլթաքելի: Առաւելագունի իմն փութոյ պէտք էին 'ի նորեկեան մատենիս բացայայտութիւն, յորում առ ամենայն զլուխ համառօտ ափոփել տեսանեմք զանյայտութեանն ծածկոյթ, գողանալով զիմաստից տեսութիւն բազում ուրեք 'ի պրատեացն խոկ՝ թող թէ 'ի թերատեաց:

Այլ արդ թէ և զկանուխ երկասիրութիւնն ոչ աւանդեցին մեզ առաջինքն, յանպարապութենէ թերևս արգելեալք, կամ յայլ ինչ պատճառաց, սակայն զանազանն արգեօք ջանացան երևեցուցանել ոմանք 'ի յետնոց. և զգովութեան զասն վերընդունեաք յօժարութեան մասամբ, երբ կամակարք 'ի լնուլ զսա 'ի նախնեացն զպարտս. զի և հատուցումն անագան՝ հաւաստ է 'ի գովելին: Նա արդարև կատարելա-

դանի եւ գովութեան էին ժառանգաւորք, եթէ զոյգ յաջողութեանն՝ եւ արդիւնք իւրեանց 'ի գլուխ ելանէին առաւ գովելի քննութեամբ, եւ հարազատ բացայայտութեամբ։ Այնպէս առ այսուիկ խիք խիք թէրակատար գտանէք, յորս եկեղեցւ թողին պատճառս աշխատութեան, նորոգ քննութիւն 'ի մէջ առնուլ, եւ զբաւականն առ բացայայտութիւն, թէ եւ ոչ զամենակատարն, որ 'ի մարդկային երկասիրութիւնս 'ի բաղձալեացն է՝ այլ ոչ 'ի հասանելեացն։

Բայց աստանօր մինչեւ մեր 'ի բուն մատեանն ձեռն արկեալ, զանյայտութիւնն որ 'ի նմա՝ հատուածաբար 'ի հանդէս բերել պատշաճ վարկանիմ. եւ թէ մեք ամենք յեղեղեալն նախ քան զմեզ, կամ որով օրինակաւ աշխատ եղեն 'ի նորայն բացայայտութիւն. զարձեալ եւ որ այժմու մերս է բացայայտութիւն՝ զոր կարգ ընթացից եւ հանգամանս պայմանեալ ունիցի։

ԽՐԹՆՈՒԹԻՒՆ ՆԱՐԵԿԻՆ

Զանյայտութիւն գրոց՝ անեաստոփասելեան անուամբ կրկին առէ Դաւիթ փիլիսոփայ. ('ի մեկն. պորփ. պր. Կ.) այսինքն է՝ բառից, եւ ոճաւորութեանց. Բայց առ մերս մատենութիւն՝ երկրկին առել որոշագոյն կարծեմ. այսինքն է՝ բառից, բանից, եւ ոճաւորութեանց կամ խոհարից. Երրորդն այս անյայտութեանցս պարածանեալ իմն ոճաւորի նարեկեան մատեանս բովանդակ, իբր երկիր 'ի նախատեղծ ընթերթեանն աներեւոյթ գոլով, եւ խաւար 'ի վերայ անդնդոց խորխորոց տացաւածոյն. (Ծննդ. Ա. 1.) եւ նա ինքն երջանիկ մատենագրողն թուի ինձ բառ Դաւթայ օրինակին՝ 'ի մասն լերինն 'ի մթին երկրին ամբացեալ յաւէտ աստուածեղ արդարութեանն այլ. (Ա. Թագ. իզ. 14.)

Անյայտութիւն բառից ակասանի ոչ միայն 'ի բառսն իւրեանց եւ անընտելս. որպէս ֆոզոնք, խոծխող, անդրածնեւք, եւ այլն, այլ եւ որք առավար նշանակութեամբ են եդեալ. որպէս անդարք, փոխանակ բառին՝ անդրադարձելի. նշոսթոն, փոխանակ յակառութեան. նանկոսթոն, փոխանակ խորամանկութեան եւ այլն. Թող զայլաբանեալ ձայնսն, այլ ինչ 'ի վերին երեսս՝ եւ այլ բառ գիտաւորութեանն նշանակելով. Այս առաջին անյայտութիւն թէպէտ առաւելապէս յաճախեալ 'ի մատենիս՝ բայց դիւրախառնակ եւ 'ի մեկնել. զի միայն կամ երկուց բառից յայտնութիւն 'ի վեր ելանէ բանն, որում եւ բառագիրքըն ինքնին նպաստեն։

Երկրորդ անյայտութիւն՝ որ բանիցն է, 'ի քերթողական շարիցն անի զմթութիւն. իբր զի թէպէտ եւ ընդելականն իցեն բառքն, սակայն բառ ոչ սովորութեան բերելով զերբեանցն շարամանութիւն յաճ զեբաղանն, մասն 'ի բանսն արկանեն. Եւ այս զարձեալ յաճախագոյն երեւեալ 'ի բաղմարանեան մատենիս, բայց ոչ զժուարապատում առ խնամով՝ որոց կիրթքն են 'ի քերթողական մարդս։

Բայց երրորդն՝ անյայտութիւն խոհարից՝ կարի առաւելական եւ առանաւմէր մասն այն է, ուր 'ի բառսն ընտելս եւ 'ի պարզ շարադրածս

ևսկ՝ խնամոք յօրինակի զանխլանան · անյայտեալ թարգչի յարմարութն յաջորդ բանին ընդ անցելոյն, հետևութիւն պատճառին առ խնդրին, միաբանութիւն օրինակին առ օրինակելոյն · մանաւանդ թէ պատերազմաց ևս կարծի բաղում՝ ուրեք բան ընդ բանի, պատճառ ընդ խնդրոյ, օրինակ ընդ օրինակելեաց · մինչև յերկար խուզմանցն զայցէ յերևան որ 'ի խորս անդ գեղեցիկ հաշտութիւնն · Եւ ուրեք գործեալ, զի կարծէ որ ընթերցողն՝ թէ ըմբռնեալ զխնամոյն, այլ ոչ ըստ գլոցին մտաց · և ուրեք յառաջադրեալ են խնամոքն, այլ պատճառս ստուգութեն անյայտ · և այլ ուրեք՝ արտաքին կերպարանք բանին յայտնական, բայց ոչ ազնուագոյն, վասն որոյ և ուղիղն խնդրելի ·

Այս ազգ անյայտութեան զաստուածաբանութիւնն կոչէ իւր սմանցակ, և զընդարձակ հմտութիւն աստուածային գրոց, հարցն առաջնոց, վաղնջուց ամփոփութեանց, ազգային պատմութեանց, և որ այլ ևս գրութեանց են պարագայմունք, և 'ի վերայ այսոցիկ՝ զերկայնամիտ խուզարկութիւն առաջի եդելոց բանիցն · Բայց շատ ևս այն է՝ զի յետ խուզարկական քննութեանն վասահակարծ լեալ գործի մտացն անհաւութեամբ, անկանի սուգանի ընդ խորութեամբ բանին, և առ եղեն անկարանալ՝ բայց եթէ եղեռնական փայտիւն՝ աղօթից ձեռնտուութեամբ որոց վարդապետին · (Կ · Թագ · Ի · Ե ·) զոր վարձն քաջայայտ՝ ամ մաղիւր խոստովանել ·

## ՄԵԿՆԻՉՔ, կամ ՑՈՒՑԱՆԻՇՔ ԼՈՒԾՄԱՆՑ

Արդ այսպիսեաց անյայտութեանց վերբերել զխաւար զաղօթական մատենս, ժամ է արդ տեսանել՝ ոյք ամանք 'ի բարեխնդրացն հոգ յանձին կալան քննութեամբ լուսաբանել զնոյն ·

Ամենեցունց գրաւորաց աչներև կայ ընդարձակ մատեանն, զոր 'ի միջում դարու երևեցոյց Յակոբ պատրիարք Նալեան տպագրութեամբ 'ի Կոստանդնուպոլիս յամին 1745 · յորում բաց յաղօթական բանիցն՝ և զճառս որոց վարդապետին առնու 'ի բացայայտութիւն · Արդարև աշխատութիւն բազում յանձն առեալ 'ի գրել, որպէս և երևի, բայց ընդարձակութեամբն յայլ խոսս վարդապետականս, կամ բանաւորականս՝ ոչ ժամանեալ առ զճշգրիտ տեղեկութիւն առաջի եդելոց բանիցն ·

Սա ետքն 'ի բանս իւր յիշատակէ լուծմունս յանուն Սարգսի քաջարան Մեկնչի կաթուղիկեայց · այլ և յերբուստ յառաջաբանին տայ 'ի լոյս, թէ Լամբրոնացւոյն ևս արարեալ իցէ լուծմունս, թէպէտ և իւր տեսեալ չիք · Արդարեն բարեբաստիկք ամենք լինէաք, եթէ երկարին ջանիւք բաղմանարդեան Սարգիս և Լամբրոնացին՝ գեղեցկին ճշգրիտ որձակեալ իցեն 'ի մթին երկիր Նարեկայ · և ուխտիւք իսկ ախորժեմ այնպէս հաւանել առ 'ի միտս, իբրև քաջք պատահեալ քաջի · Այլ զի մի 'ի համբաւոյ խաբեբ ընդունիցին անքննաբար, որպէս առ բազումս 'ի գրոց տեսեալ եղև, յայտ առնեմ՝ թէ յիշատակեալ լուծմունքն ոչ Սարգսի է Մեկնչին և ոչ Լամբրոնացւոյն · Վասն զի գտաւ առ մեզ

սակաւք օրինակ այնց լուծմանց․ գրեալ բոլորագիր 'ի մեր Թուին ՊԾԵ․ (յամի տեառն 1406․) յորում բանքն են նոյն՝ զոր Յակոբ պատրիարքն 'ի մէջ առնու յիւրում մեկնութեանն յանուն Սարգսի․ և սակայն մեր օրինակս 'ի Ճռաքաղ անգ այլով նոր գրչաւ գնէ․ [illegible]․ և ոչ մի ինչ յայտարարութիւն նշանակի 'ի կարգի լուծմանցն կամ 'ի յիշատակարանին, թէ Սարգսի իցէ արարեալ։ Այլ թէ այնոցիկ լուծմանց որ հանգամանք իցեն, կամ ո՞ւմ ումեք ընծայել արժան իցէ, ահա քեզ պատկեր կերպարանացն 'ի համառօտ սաւ-բացցրեալ, յորմէ և մասնաւորին յարգ և ժամանակ իմանի։

Այսպէս երևի 'ի լուծմանդ անգր՝ ջան պարզելոյ զգաղտնիս մատենին, այլ ոչ հաւաստր ջանին հմտութիւն կարևորացն 'ի նոյն․ վասն որոյ բազում ուրեք զբանան խրթնածածուկս՝ կամ լռութեամբ պատուէ, կամ վեր 'ի վերոյ բանիւք թողու յանյայտութեան, կամ անյարմար խմաստս արատայայտէ․ որպէս և 'ի կարգ մերոյ լուծմանցս անսցի։ Այսմ հակառակ՝ յոլովակի զբաւս կամ զբանս դիւրիմացս՝ ինքն բացատրէ անհեգգաբար՝ ոչ մի անգամ և ոչ երկիցս․ որպէս, [illegible], և այլն։ Նոզայն՝ ուրեք բազմապատնութեամբ եա․ որպէս 'ի սկզբան մատենին, [illegible], ակսանի 'ի Թիւ արկանել զազգս ձայնից՝ զյօդեալն և զանյօդն, զնշանականն և զանուշան, և օրինակօք զիւրաքանչիւր բացատրել յամմկէաս։ Նմանօրինակ և զատացեալն անգ, 'ի [illegible], նիւթ առնու ընդարձակութեան բանից, ատենելով ըզբաժանումն զգայութեանց և կարողութեանց հոգւոյ, և զիւրաքանչիւր նոցա առ միմեանս բաղդատութիւն․ զոր ոչ մի ինչ հարկ տեղւոյն պահանջէր։ Էր տեսանել 'ի նմա այլ ևս այլս կարծիս, զմիոյ գլոյ բան այլում տալով․ որպէս 'ի բան Ե․ Չ․ զատացեալն, [illegible], որ է Յովելայ Գ․ 14․ լուծմանցն ընծայէ Ովսեայ, ուր չէք։ Զայսպիսիս և այլուր առնէ։

Բազում ուրեք 'ի կիր առնու վայրապար զբառս և զա՛ ասմիկան, որպէս, [illegible]։ [illegible]․ (այսինքն այնպէս․) [illegible]․ բառ այսմ և այլն։

Նա ոչ այս միայն, այլ յոլով ուրեք իբր ընտանեբար վարէ անխտիր զայլազգական ձայնս՝ զթուրքին, և զարաբացւոյն, և զայլոց․ որպէս 'ի մեկնել զողջակէզն՝ գնէ [illegible]։ [illegible], այսինքն ընդարձակ։ [illegible], փոխանակ՝ միջակայնոց։ [illegible], փոխանակ մուրհակի։ [illegible] չափով։ [illegible], այսինքն առհաւատչեայ, գրաւ։ [illegible], այսինքն ատենդ․ [illegible], այսինքն զաշն։ [illegible], այսինքն զատախազ։ [illegible], այսինքն նուաճանքիս։ [illegible], այսինքն նկարել։ [illegible], այսինքն ընդդէմ թագաւորի մարտնչել։ [illegible], այսինքն ապրհանգամ։

[illegible], այսինքն գանձարան ։ [illegible], [illegible], այսինքն գիրք ։ [illegible], այսինքն օձառ ։ [illegible], այսինքն բորոտ, առեալ 'ի լատինէն՝ [illegible] ։

Արդ զայսոսիկ զչնչգամանս լուծմանցդ կշռելով, ո՞ որ լսել անգամ ախորժեսցէ՝ թող թէ ընդել բանիւ, Սարգսի մեկնչի լինել արարուած, կամ Լամբրոնացւոյն Ներսէսի. որոց ընթերցուածն բանից, զցուցութիւն խօսից, ո՞ն ընտանի յամենայն գիրս իւրեանց աշխարհատես փայլէ ։ Այս Սարգսի ոչ ինչ օտարոտի բառից կիրառութի է տեսանել. իսկ առ Լամբրոնացւոյն՝ գուն ուրեք 'ի պատարագամեկնիչն կամ 'ի թուղթս իւր 'ի հարկէ բանիցն հարևանցի յիշատակելով. քանզի չէ եւ առ նոցա ժամանակօք սովորեալ էր 'ի վարդապետական գիրս՝ ըզռամկական և զայլազգական խօսս վարել անխտիր. այլ առ վերջին կիլիկեցւոցն տեսանեմք զայդ սովորութիւն ։ որպէս 'ի գրութիւնս Վարդանայ, 'ի Մեկնութեանն Մարկոսի, և յայլս ։ Վասն որոյ իմ կարծիք յայն յօժարեալ են, թէ առաջնորդ լուծմանցդ մի յայնց կիլիկեցւոց իցէ իբր 'ի չորեքտասաներորդ դարուն, որպէս բայց յասացեալ նշանացդ՝ զայն եւ նկատեմք 'ի լուծմունս անդ, զի յաստուածաբանական բանս ուրեք 'ի կիր առնու զսխոլաստիկական բացատրութեան, որ 'ի լատինական գրոցն թարգմանելոց առ այնու ժամանակօք ընկալեալ է ։ Իսկ թէպէտ այն լուծանող՝ անուանակից գոլով Սարգսի, կամ փաղաքակից Լամբրոնացւոյն, համբաւն ընկալաւ և տարածեաց նոյն լինել ընդ նոսա. որպէս ասկս նոցին պատճառաց՝ յայլ բազում տեսանեմք լեալ խառնակութիւնս անձանց և գրութեանց նոցա ։ Մանաւանդ՝ այլ եւ պատճառ գուցէ եա ոմանց՝ Լամբրոնացւոյն Ներսէսի կարծել զառ գործ. իբր զի լուծիչն 'ի բանն Ը. 1. 'ի մեկնել զասացեալն ։ [illegible] կամ [illegible], և այլն, 'ի կիր առնու գրուն բանս սրբոյ Լամբրոնացւոյն՝ որ 'ի Մեկնութեանն Սողոմոնեայ. Է. 9. 11 ։ Կամ, զի զերկու աղօթս հօգւոյն սրբոյ, որ 'ի բանն ԼԴ, բացայայտելով Լամբրոնացւոյն 'ի պատարագի գիրսն, համբաւն անձեցոյց հաչակել, թէ զնարեկն ոչ յն պարզաբանեալ իցէ ։

Ի լրումն բանիցս՝ զայն եւ ազդ առնել կարեւոր է, զի կայ և այլ օրինակ լուծմանց՝ ընթրութեամբ համառօտեալ յամբողջ օրինակէն՝ զոր ասացաք. և 'ի համառօտելոյ առաւ կրճատութեամբ արարեալ այլ օրինակ լուծմանց, որ և այն իսկ է՝ որ 'ի տպագիր Նարեկն կայր 'ի վերջոյ արձանացուցեալ, իբր Ճրագ առկայծեալ աղօտանշանանց՝ մինչ ցանիւ արշաւել նախա 'ի մթագցած վայրս ։ Իսկ այսպէս երից եղելոց օրինակաց լուծմանցն՝ աղբիւր նոցա այն է, զորմէ կանխեցաք տալ տեղեկութիւն. զոր և 'ի մեր լուծմունս յիշատակեմք, նշանակեալ ՀԻՆ ԼՈՒԾ. կամ ԼԾ.

## ՀԱՆԴԱՄԱՆՔ ՆՈՐՈՑ ԼՈՒԾՄԱՆՑ

Այլ արդ եթէ բառ նախ տեսցելոցս, մեկնողական գրուածոցս այլոց 'ի նորեկեան մատեանս՝ բռնական էին առ անմերձաւորեալս գրչաց բանիցն, մեզ ոչինչ աշխատութիւն էր բովանդակին լինել յաւելուածագիր · այլ զթերին ևեթ լցուցիչ · զի ոչ եթէ արհամարհեալք ինչ կամ սպառնացեալք այլոցն վասնակալ յաւէտ յօժարինք, որ ընդ իմաստութեան բնաւ ոչ հաղորդի · բայց ընդ աղցանեաբ բարւոյն՝ և գիտաւորն ընթերցել խրատեսցէ։ Վասն որոյ 'ի դոյն խորհուրդ կամեցեալ տըւեալ զանձն 'ի հանդէս նորոց լուծմանց, այնպիսի ջանացաք պահել կարգ, զի յամենայնի բառ կարի հարազատութիւն իմաստիցն խնդրեսցի, և ընդ հարազատութեանն՝ բացայայտութիւն, և յերկուսեան՝ պատշաճաւորութիւն պատուեալ։

Ա՛ւ 'ի գլուխ հարազատ իմաստից գրոց՝ հարազատութիւն բնագրին է առաջին խնդրելի · նախ իսկ 'ի լուծումն առնուլք զբնագիր մատենիս բառ օրինակին՝ որ 'ի բազմապատիկ սխալմանց սրբեալ տպագրեցաւ 'ի Կոստանդնուպոլիս, և 'ի մեզ։ Բայց և առ այնու 'ի ձեռագիր օրինակս՝ որ առ մեզ, դարձեալ հետազօտեցաք · մանաւանդ որ ընտրելագոյնն է՝ գրեալ 'ի մեր թուին ՉԿԴ, և յետ այնր համեմատեալ ևս ընդ այլ օրինակի Մխիթարայ աբբահօր վարդապետի · առ որ յեշատակագիր հանդէպ յաւելեալ այգ անձն՝ կարի վասահանալ 'ի նոյն։ Յօրինակէ առաջի բազում արեալ յեշատակեսցէ 'ի կարգի լուծմանց զտարբերութիւնն որ 'ի տպագրելումն այլ այգ եղեալ կան, նշանակեալ, 'Ի լու· օրինաց, կամ 'Ի Ձեռ օրին։

Այսպիսատր յաւարհասցեալք 'ի բնագիր անդր, զիւրաքանչիւր տեղի կարօտ մեկնութեան՝ ոչ բառ կամի կամ վայրապար խուսեք անցանել հասանելցաք, այլ եթէ քերթողականք էին, եթէ աստուածաբանականք, եթէ իմաստասիրականք և կամ պատմականք, զամենայնն 'ի բուռն ակնլանց անտի հասանել հոգացաք · և մանաւանդ 'ի բնագրի անդ ընդ անցելոց բանիցն և ընդ յաջորդացն համեմատել · զի պատահէ բազում անգամ իմաստից ինչ ինքնին առանձինն լինել ճշմարիտ, բայց կարգի հետեւանաց բանիցն ոչ անկանել։ Այլ թէ արեք երբեք բառ ինչ կամ բան յետ զգուշաւոր քննութեան ոչ եկն 'ի հաստատ գիտնութիւն, զհաւանականն նշանակեցաք, կամ երկբայականս վարեցաք զիմք · լաւ համարեալ արդարահոգ երեւել, քան բանագէտ։

Զընթացս լուծմանցս ջանացաք յոյժ բացայայտ յարմարել, որպէս մեկնչաց է առաւելութիւն · զի ինքնին ընդարձակս վայելչութիւն իմաստիցն ջահաւորեալ անկարօտ պաճուճանաց բանից։ Յիւրաքանչիւր տեղի՝ ուր ոչ բանիցն է, զայն նշանակեսցէ կեռաւ, և զլուծումն 'ի վերոյ բերեալ լուսաւորեսցէ գիտատան, թողեալ ընթերցողին՝ առբաժ աչօք ածօնել զբնագիրն, զի մի թերակատար կամ այլ ընդ այլոյ իմաստն կարծեսցին։ Ի գիտութիւն այնոցիկ՝ որք չեն քաջավարժ

'ի բարբառ գրոց, ուրեք 'ի կարգի լուծմանցս, և բազում ևս 'ի կատարածին մեկնեցաք զբառս աշխարհիկ և այլազգի բարբառով ըստ նշանակութեանցն որով վարին 'ի մատենիս :

Բայց քանզի 'ի մերում խորհրդեան չափաւոր համառօտութիւնն կայր առաջի նպատակ, խնամով հրաժեշտ կալաք յամենայնէ որ ինչ անկարևոր երկարութեան է պատճառ : Վասն որոյ զվկայութիւնս սուրբ գրոց՝ զորս յաճախութեամբ 'ի կիր առնու երջանիկ վարդապետն, ոչ զամենայն որոց և ուստի էին՝ նշանակեցաք, զի մի յանչափն ձգեսցուք· այլ միայն զանծանօթն ըստ տեղւոյ կամ ըստ իմաստից, կամ յորս կայր ինչ գիտելոյ արժանի, ծանուցանել ջանացաք :

Զգուշացաք առաւելապէս, մի անյարմարութեամբ արտաքոյ փակել յառաջ զրոյցս, կամ անժամանակ ինչ իւրս յաւելել 'ի հանդէս վիճաբանութեան· զի ոչ գրանցս իմն՝ և ոչ մարտեգս կառուցանել ատտանոր յանձն առեալ եմք, որով կամ բանսպասք երևեսցուք, և կամ բանամարտք· այզգրեն այլոց գրոց թողցուք· խոկ յառաջիկայս՝ լուծմանց է գիրս, 'ի քննել հաւաստութեամբ զմիտս բանիցն, և 'ի լսել ճշմարտախնդիր աշակերտութեամբ : Կամիմք զի ինքն սուրբ վարդապետն զիւրսն խօսեսցի· մեք խօսելոյն որոշողք լինիցիմք՝ առնուլ և տալ զճշմարտս բանին· այլ ոչ եթէ 'ի բերանոյ նորա 'ի մեզ կորզել զվարդապետութիւնն, ճոխարան լինել 'ի մեր գեհս· զի մի աղօթական ձեռոյն բղձականութիւն փոխեալ 'ի վարդապետական, կորուսցէ զիւրն համեստութիւն :

Նա և արդ այսպիսեաւ երկխօսութեան զօտւով ընդելով զմիտս, և մաղթանաց ձեռն առ նոյն ինքն երջանիկ աղօթարարս մեր ամբարձեալ, զհետ ընթեսցուք զժուարամատոյց նորայն բանից· եթէ հասանիցեմք ինչ, այն շնորհք, և եթէ անհասութեամբ յետնիցիմք, մեզ չէ ինչ անծանօթ չափաւորութիւնս մեր· այլոց արդարամտաց տալի առաջարկել :

Բայց 'ի քննել մեր զիմաստս աղօթական բանիցս, զբղձս հայցման նոցա՝ և մեք և ընթերցողք յաստուածուստ անտի ուսցուք և հայցեսցուք· վասն զի այս ոչ ընդ քննութեամբ գայ, և ոչ բանիւ կերպարանի· որպէս հաստատութեամբ արտայայտեաց ճաշակողն աղօթից՝ հրեշտակն լուսեղինեան, բացայայտեալ 'ի պատարագի գիրսն զաղօթս հոգւոյն սրբոյ՝ որ 'ի բանն ԼԳ. ասէ· « Աղօթքս և անխօս է սուրբ զաղօթից բան մտին. զի նա խօսի ընդ այնմ և ոչ հանգստութեան առնէ զինչ վերջին վարուց ման հոգւոյն աստղին, որում ձայնարկեալ յասէք. խօսք զայն բանին հաղորդակցութեամբն ելիւ հնոյ. և զայս առանց նորին որոնել՝ ամայն է . . . բայց թէ ծովանւոյս ընդ կիրթ նորին անցեալ, ծանիցէ »: Նա զկնի զարձեալ· « Զու 'ի բանջին և զգուշել՝ անարգութեան է շնորհին. և ասանձ զայն ճանաչել՝ անխրաթեան է լուսին . . . Զի խորհուրդ դիտել բնաւ խոյ առաւել յաւարտ, մինչև 'ի ձեռն է սորին փութիւթեան բղխեալ. և յորժամ առաւելս, ապա հաւատայանցն՝ թէ ով փիտէ »:

Նա արդարև ինձ վարձս քրտանց՝ և հանդիսատ վաստակոց զայն չափ համարիմ, եթէ 'ի ակնկալեալ իմաստից աղօթիցս՝ և բղձից ակնկալու-

թեան զչափ յանձին առնուցում. և 'ի գոյն են կամք ըղձանաց խնդ վան անձինս կարօտելոյ՝ և ովք իբրև զնան են. և ոչ անյոյս յընդունելութենէն. զի թէ իւրոյն չարաչարաց բարեխնդիր եղև յերկրի սատուածարեալ վարդապետս, ('ի բանն ԾԵ. ԾԷ. ՁԳ.) յերկինս զօրժանի փափագումն իւրոց աշխատաւորաց՝ անուս զխորդ առնիցէ։

## ՈՐ ԻՆՉ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻՏԵԼԻ

Զջեռ հանրական անդէկութեանցն որ յաղագս Նարեկեան աղօթից մատենի տուան յառաջնումն տպագրութեան, և որ այժմդ երկրորդեցան սակս մեզ կարեւորն լինելոյ 'ի գիտել և յուշի ունել, կարճառօտ իմն յաղագս երկրորդ տպագրութեանս առել ունիմք, ոչինչ այլ փոփոխումն արարեալ մեր յայսմ՝ բայց զի վերստին խնամով 'ի գրչագիր օրինակս մեր հետաքննեցաք զտարբերութիւնսն, և զերևելեան նշանակեալ ծանուցաք։ Այլ առաւել ևս քան զգոյն, յաւելուածս արարաք 'ի լուծմունս անդ՝ ուր ուրեք յառաջնումն համառօտիւք եւեթ առեալ էր մեր տեսութիւն, և կամ զանց ևս արարեալ։ Թէպէտ և այսքանեօք ևս ոչ եթէ զարժանն կամ զբովանդակն համարիմք նշանակեալ զբացայայտութիւն. քանզի պանծալարուեստ մատենիս բարձրութիւն և կամ խորութիւն գերազանցէ մեզ քան զարչափել։

# ԳՐԻԳՈՐԻ

# ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

## ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

### ԲԱՆ ԱՌԱՋԻՆ

#### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ

#### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ձայն հառաչանաց [1] հեծութեան սրտի՝ ողբոց աղաղակի քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց. և մատուցեալ եդեալ 'ի հուր թախծութեան անձին տոչորման՝ զպտուղ բղձից ճենճերոյ տատանեալ մտացս, բուրվառաւ կամացս առաքել առ քեզ. Այլ հոտոտեցիս հայեցիս, գթած [2] քան 'ի պատարագն բոլորապըտուղ մատուցեալ ծխոյն բարդութեան. Ընկալ զակուամանեայ բանիւս յօդուած քեզ 'ի հաճութիւն, և մի 'ի բարկութիւն. ելցէ 'ի խորոց սատի զգայութեանց խորհրդակիր սենեկիս՝ փարփառակի ժամանել առ քեզ՝ կամաւորական նուէր բանական զոհիս, ողջակիզեալ զօրութեամբ ճարպոյ՝ որ յիմն է պարարտութիւն. Այլ [3] 'ի գնելս իմ ընդ քեզ զառ խառնեալ աղերսիւ, հզօր, մի լիցի զհամբարձումն ձեռաց անպարըշտեան Յակոբու, ըստ բողոքելոյն Եսայեայ, և զանիրաւութիւնն Աբելեանի՝ տաղտակալի քեզ երևեսցի. զոր առակ եօթանասներորդի երկրորդի սաղմոսին ազդէ. [4] այլ լիցի զաւրեալ խունկին հաճոյական 'ի խորանին Սելովայ, զոր Դաւիթն կանգնեալ նորոգեաց տա-

տապանակին հանգստեան 'ի գերութենէն դարձելոյ, որ 'ի վերստին գիւտ կորուսելոյ հօրեց տաւիղ, ընդունելի կամաց քոց լիցի :

Բ. Բայց քանզի [5] ձայնդ ահաւոր դատաստանիդ հատուցման՝ [6] ուժգին հնչեցեալ 'ի ձորն վրէժխնդրութեան, կրկինս ինձ երկնէ մարտից յարուցմանս, այժմէն գուշակեալ շարժմանս յուզմանց ներհակականաց, որ յիմում անձին ցուցանի, խռովութիւնս ամբոխից, հարեալք ընդ միմեանս զէն առ սուսեր՝ խորհրդոյն հոյլք, չարեացն ընդ բարին, և գերեալ զիս 'ի մահ ըստ հին զխրատածոյն՝ որ նախ քան զչորհին ժամանել առ իս. զոր ընտրեալն առաքելականացն դասուց Պօղոս՝ առօրինակեալ զՄովսէս, զՔրիստոսի փըրկութիւնն յաղթող ցուցանէ : Սան զի թէ [7] մերձ է օր տեառն, որպէս գիր ասէ, 'ի հովիտն անձուկ ապարախին Յովսափաթու և հեղեղատին Կեդրոնի, փոքր հանգխարանայն խռովանց ժամադրութեանց, որ կենցաղականս այսր յուխտենի զհանդերձելոյն ինձ կերպարանէն, ապա եւ յաւէտ մերձեցաւ 'ի վերայ իմ արքայութիւնն ոյ [8] մարմին եղելոյ, մեծապէս դառեալ զիս առիթ մասնուց բազմաց տեսակաց՝ զանազան մասանց յանդիմանողաց ճշմարտապատմից, քան զձեռին նորին վերականգումն անդ ուրեմն երբեմն 'ի հարուածս եդովմայեցւոց և փղշտացւոց, և այլոց բարբարոս ազգաց : Բանզի [9] այն ընտրութիւն ամօք չափեցաւ, խոկ պատուհաս իմում պարտուց առանց աւարտման ունի զահման : Ահ, զօր և որոգայթ անձողորմելի, ըստ մարգարէին և առաքելին. տագնապաւ մեծաւ առ գուրս ինձ հասեալ՝ զամօթն մշտնջենաւոր ատեան ցծայրել : Օ՜ որ միայն քո է հրաշագործել պտուղս գեղոյ 'ի հընարս կենաց ամենայնարան տարակուսանաց հոգւոց վըտանգից, բուժիչ ամենայնի՝ գոլեալ 'ի փառս անճառս անտահմանելի բարձրութեան, յաւիտեանս յաւիտենից :

---

1 [illegible] : Սկսեալ աղօթիցս զայսոսիկ խմբատ ունի : Զձայն հառաչանաց սրտիս հանդերձ պաղատանօք ողորմ քեզ վերընծայեմ, ով տեսողդ գաղտնեաց սրտի. Թէպէտ և դու ոչ կարօտիս խնամ ձայնի՝ ծածկապէս գոլով : Նո. 'ի հայր սրտակից սրտմտութեանս ուրկանելով

զխղճս հոգւոյս իբրև խունկ փառելի, կամէի իբր բուրվառաւ մատուցանել առ քեզ։ Զի մինչ իմ անդադար շարժելով 'ի մտածութիւն չարեաց իմոց և բարեաց քոց, շարժէ զկամքս իբր բուրվառ՝ առ քեզ վերառաքել զցաւալից կիրս հոգւոյս։

Ի սկզբան աղօթիցս նկատել արժան է, զի սուրբ վարդապետն բառ ներգործութեանց հոգևոր փոփոխման կարգէ զբանն։ Քանզի յորժամ սկսանի մարդ առանձնանալ 'ի մարմնական զբաղմանց, և հոգին ամփոփի 'ի ներքս 'ի սիրտ իւր, 'ի լուսոյ շնորհացն այն նախ առաջին տեսանէ զզարշութիւն մեղաց իւրոց, և զապերախտութիւն առ նա։ Այսպէս յիշելով զահեղ դատաստանն այն ապառնացեալ 'ի գրոց, շարժի 'ի նմա երկիւղ դատապարտութեան, և յերկիւղէն տրտմութիւն սաստիկ, և 'ի տրտմութենէն հառաչումն և ողբ։ Վասն որոյ իբրև խօսել սկսանի, բնաւորապէս նախ հառաչանք ծնանին խառն ընդ արտասուս, և ապա պատճառք տրտմութեան և երկիւղին յայտնին։ Ահա զայսոսիկ ներգործութիւնս գնէ սուրբ վարդապետն յայսմ առաջին բանի։ Ի շարժմանց անտի տրտմութեան և երկիւղին՝ սկսանի մարդ զգայնանալ յանձն իւր, կշտամբել զիւր հեզգութիւն, զանմտութիւն և զանկարութիւնս. և յուսահատեալ յանձնէ, ապաստանի յնա՝ հայցելով 'ի նմանէ փրկութիւն հոգւոյն։ Եւ զայսոսիկ գնէ սուրբ վարդապետն յերկրորդում բանին։ Իսկ իբրև այսպէս քաջալերի հոգին յուսով Թողութեան, փարատելով տրտմութեան և երկիւղին, զուարթանայ այնուհետև 'ի խոկումն բարութեան և գթութեան նոյ. և փոխանակ հառաչական ձայնից՝ 'ի գովութիւն նոյ պարապի անդադար։ Եւ զայս ներգործութիւն յայտնէ սուրբ վարդապետն յերրորդում բանին։ Այսպիսի կարգաւորութեամբ ըղձից սկսանի յընթացս աղօթիցս, ուրեք զմաքրողական ներգործութիւնս դնելով, ուրեք զլուսաւորութեան, և ուրեք զմիաւորութեանն ընդ նմա։

2 Քան 'ի դողդոջման։ Քան յաջակեաց հին օրինացն՝ որ բովանդակ այրեցեալ, Թանձր ծխով մատուցեալ լինէր, առաւել հաճեսցիս յայս իմ բանաւոր պատարագս։ Ձայնակս բանքս աղօթից՝ զոր գրով կազմեմ, և ոչ լոկ ձայնիւ կամ բերանով, ընկալցիս հաճութեամբ, և մի 'ի բարկութեան. իբր յանդգնութիւն համարել զգրով աղօթելս. քանզի բաղձամ և ջանամ զի եղցէ բղձական զոհ և ընծայ 'ի խորոց սրտի խորհրդակից մտաց, այսինքն մտացս կամ հոգւոյս՝, յորում խորհուրդք և մտածութիւնք ամբարեալ կան։ Եւ այս ընծայ կամաւորական՝ ճաշակաւոր, արագագոյն ևս ժամանեսցէ առ քեզ քան զբազբրա բերանոյս, և քան զիւրէ ձեռնս, բարձրացեալ կեղեալ վառեալ ճրագաւ խորշակի, այսինքն բառ փառման ճարպոյ, կամ զօրէն ճարպոյ։ Օրինակ Իմն, ձենձերոյ։ Վառեցի որպէս ճարպ, կամ եռացի որպէս ձէնձէր ոչ յետ է դողդոջման. այլ օրին. դողդոջմանն է։ Ի նուիրել աղօթիցս՝ Թէ և գրով, այլ բառ բղձականութեան սրտիս փափագեմ, զի պատարագութիւն ոչ յիս եթէ մարմնոյ, հալեցի որպէս ճարպ, և եթէ հոգւոյ ստասատութիւն վառեսցի, բորբոքեսցի, և այսպէս ընծայ աղօթիցս նուիրեսցի քեզ՝ և մտօք և բերանով և ձեռամբ։

3 Եւ 'ի գեղեցիկ։ Ի վարել իմ զատ կամ 'ի զատախազելս առաջի քո ընդդէմ մեղացս և ապստամբ մարմնոյս և հակառակ զաւաճանող գիւին։ Կամ, 'ի խառնափնդելն զմեզս իմ առաջի քո, որ է զատախազութիւն զինէն։ Կամ, յորժամ իբր զատ վարել Թուիմ առ քեզ աւելով, ընդէր մերժես զիս, վասն էր Թողեր զիս, էր վասն փորձիմ, տկարանամ և այլն։ Այսպիսի զատախազութիւն իմ՝ Թէ և ապաշխարանաց աւարտեալ, մի ապրեալ կայլի, զգուշի եղիցի քեզ իբրև ...

յակոբեանցն կամ իսրայէլացւոց, որոց ասէր եսայեաւ (ա. 15.) «Յորժամ համբառնայցէք զձեռս ձեր, դարձուցից զերեսս իմ». զի որպէս զաղօթել նոցա մերժէիր՝ վասն ունելոյ նոցա զձեռս լցեալս արեամբ, նոյնպէս և զիմ աղօթելս կարես արհամարհել վասն կամաւ և յանհոգութէ յանցանելոյս: [illegible] այսինքն. և մի երբե զանօրէնութեան բարեկացւոց տաղտկալի երևեսցի քեզ իմ աղօթելս: Թուի հայել 'ի բանն դանիէլի. գլ. ժգ. ուր վասն չորրորդ թագաւորացն ասէ, թէ խօսեցաւ մեծ՝ եւ անօրէնութի 'ի բարեկամէ 'ի ծերոց թագաւորացն: Քանզի գործ նոցա երևէր արդարութի և ուղիղ աստուածպաշտութիւն ժողովրդեանն. ուր ընդ հակառակն՝ աստի այ անօրէնութի էր: [illegible] զոր և աստուածային բանն հզր. սաղմոսին ծանուցանէ 'ի 7 տան. «Եղիցէ որպէս 'ի ճարպոյ անիրաւութիւնք նոցա». այսինքն անիրաւութիւնք նոցա որպէս նուէր ճարպոյ ձևանան, երևին երբե զոհ պարարտ, որ ըստ երբին անիրաւութիւն է: Արդ մի այսպէս համարեսցի և իմ աղօթելս:

4 [illegible]: Այս իմ նուէր աղօթից ընդունելի լիցի քեզ երբե զհանձելի խունկն բուրեալ 'ի [illegible], զոր դաւիթն կանգնեաց: Դերանունդ [illegible] ցուցանէ զխորանն. և յեղանակ բանին այնպէս կարծեցուցանէ, թէ զմովսիսակերտ խորանն՝ որ կայր երբեմն 'ի սելով, եբարձ դաւիթ և կանգնեաց 'ի քաղաքի իւրում 'ի սիոն. (Բ. թագ. Զ. 17.) բայց ըստ մեկնչաց՝ նոր խորան շինեաց դաւիթ, իսկ արարեալն 'ի մովսիսէ՝ կայր 'ի բամոյ գաբաւոնի. որպէս գրի (Ա. մնաց. ԻԱ. 29.) որում պաշտօնեայ կարգեալ էր սադովկ քահանայ. (անդ. ԺԶ. 39.) վասն որոյ զառաջեալն սորոյ փոփոխակաւ այսպէս մարթ է իմանալ: Աղօթքս իմ ընդունելի քեզ լիցի երբե զխունկն մատուցեալ 'ի խորանին սելովայ, [illegible]. այսինքն զորպիսի և դաւիթ կանգնեալ [illegible], այսինքն նորակերտեաց վասն հանգստեան տապանակին՝ 'ի [illegible] [illegible]. զի թէպէտ յետ գերութեան ամս քան եկաց 'ի տան ամինադաբայ, (Ա. թագ. Է. 2.) և յետ այնր ամիս երիս 'ի տան աբեդդարայ, (Բ. թագ. Զ. 11.) բայց քանզի կայր առանց խորանի որպէս անցաւոր, վասն այսորիկ երբե նոր դարձեալ 'ի գերութենէն՝ հանգիստ ածէր զայն դաւիթ. որ և ասէ 'ի դարձ կորուսեալ հոգւոյս [illegible]. օրինակի:

5 [illegible]: Ի բովանդակ բանիս յառաջ ասացաւ զբանն (յովել. Գ. 2.) «Փողովեցից զնոսա 'ի ձորն յովսափատու» և այլն: Հին լուծմունքն ըստ կարծելոյ բաբունեաց ոմանց՝ իմանայ ըստ ճառին բղկատարածէ այլազգեացն յաւուրս յովսափաթայ արքային յուդայ. (Բ. մնաց. Ի. 22.) բայց անյարմար է. զի 'ի բանն յովէլայ՝ [illegible] ոչ է անուն արքային, այլ տեղւոյ. թէպէտ և մեկնիչք անմիաբան են՝ թէ զոր տեղի նշանակիցէ: Թող զայն՝ զի յովէլ յետոյ է ժամանակաւ քան զյովսափաթ արքայ. և այս մարգարէութի նորա հայի յապագայ կոտորած հեթանոսաց. (տես 'ի բովանդակ գլուխն.) վասն որոյ ըստ քաջ մեկնչաց՝ յովէլական բանս ակնարկէ զհարուածս հեթանոսաց՝ որ առ մակաբեցւովք. տես և զնին 'ի լուծ. 7: Իսկ առ 'ի մեօս՝ այն հարուած և վրէժխնդրութի հեթանոսաց օրինակէ զոր ընդհանուր դատաստանին: Ուստի այս ձայն ասէ՝ [illegible]. երկու խուժութիւնս կամ շփոթս յես ծնանի, մի՝ որ 'ի մասյս խղճէ հարկանիմ, և միւս՝ որ յահաւորութենէ դատաստանին: Կամ, [illegible], այսինքն այլեայլ պատերազմունս հակառակ միմեանց. [illegible]. այսինքն ցուցեալ յանձն իմ յաղմուկս խորհրդոց հակառակաց: [illegible]: Որպէս 'ի մարմնական պատերազմին բազում անգամ խու-

փութիւն արկանէր ած 'ի մէջ հեթանոսաց, և զմիմեանս սատակէին. (ըստ Բ. Մնաց. Ի. 22.) այսպէս և առ իս ամբոխք այլևայլ խորհրդոց ընդ միմեանս մարտնչին, և կոտորեն զանձն իմ. [illegible] մասնաւութի չար գործոյս՝ ընդ մասնաւութե բարեացն որ յայ. իբր զի ես չարիս յանձնեսի, և ած զբարիս իւր ատատացուցանէր։ Կամ, պատերազմ չար յօժարութեց մարմնոյս՝ ընդ բարի կամս հոգւոյս. զի յաղթէ դատաստանին զարթնոյր բարի կամք հոգւոյս, որում ընդդէմ կացեալ կամք մարմնոյս, յաղթահարեն և գերեն զիս 'ի մահ մեղաց [illegible], այսինքն ըստ հին օրինացն մախեսի, որ զպատուահաս մահու 'ի վերայ ածէր յանցուցելոցն։ կամ, ըստ առաջին մեղացն և ապականութեանն՝ որ յադամայ ինձ գիպաւ. յորում կայր [illegible] [illegible] մկրտութե և նոր օրինացն [illegible]։ [illegible], այսինքն որում շնորհի պօղոս [illegible], 'ի մի օրին. և ըստ հին ըն. [illegible], այսինքն բաղդատելով զմախէս կամ զհին օրէնս, զքնի [illegible], յաղթող յարդարացուցանելն. ըստ այնմ (գործոց. ԺԳ. 38.) «Յամենայնէ յորմէ ոչ կարացէք օրինօքն մովսէսի արդարանալ, սովաւ ամենայն որ հաւատայ՝ արդարանայ». (տես և համեմ. Ը. 2. 3։) Սոյնպէս յաղթող 'ի դատելն. ըստ բանին (եբրայ. Ժ. 28. 29.) «Արհամարհեալ ուրուք զօրէնսն մովսէսի, առ երկուք կամ երիւք վկայիւք մեռանէր. իսկ ո՞րչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն՝ որ զորդին այ առ ոտն եհար» և այլն։ Արդ այսմ շնորհի յանցաւոր գոլով ես, ո՞րչափ պատուհաս մնայ ինձ։

6 [illegible]։ [illegible] օրինակն այլազգ ունի. [illegible] [illegible]։ [illegible] պարզեալ է. ձայնք ահաւոր դատաստանին յերկնից անտի հնչեցեալք սաստիկ, արդէն գուշակեալ են կամ ծանուցեալ զերկրին պատերազմ, այսինքն չարաժամն ներհակաց ամբոխմանց որք լինին 'ի հոգի իմ. և խառնեալք ընդ միմեանս հարկանեն խորհուրդք մտացս՝ իբրև զէն առ սուսեր, մի խորհուրդն մարտնչի ընդ միւսոյն. մի խորհուրդն իբրև սուսեր վիրաւորել կամի, միւսն իբրև վահան կամ զրահ պահպանել հնարի. այսպէս մարտնչին հոյլք կամ բազմութիք չարեացն ընդ բարեացն են։

7 Մեղք է [illegible]. (ըստ յակոբ. Գ. 14.) 'ի փոքր հովիտն [illegible], որ թարգմանի՝ դատաստան ահեան, և [illegible], որ ըստ ոմանց աշխարհագրաց՝ անցանէր ընդ այն հովիտ. և էր տեղի կատարման դատաստանի և պատուհասից. որպէս այրեաց զկուռս, ընկենլոյ անդր զաղծութիւնս տաճարին, և այլն. (Դ. թագ. ԺԸ. 13։ Բ. Մնաց. ԻԹ. 16. Լ. 14։) Ուստի գոլով տեղիք մահուոր պատուհասից այ, եղեն [illegible], տեսարանք, [illegible], իբրաւցի հատուցմանց՝ ըստ ժամանակին սահմանելոյ յայ. և սոյն [illegible], համեմատեալ առ հոգեոր պատուհասն, և առ ընդհանուր դատաստանն. զի այն մարմնաւոր պատուհասք և մահուաւոր դատաստանքն՝ որ 'ի կենցաղական յաւիտենիս, զհանդերձեալն [illegible], ձևացուցանէին։ 3 օրին. [illegible]։ Արդ, ասէ, եթէ առ յանցուցեալս 'ի հեթանոսաց ապստամբ մարգարէն մերձ լինել ասէր վրէժխնդրութե, [illegible] 'ի [illegible], որ ընդ շնորհօքն մեղայ, դատապականն [illegible], (ըստ բանին պաւղոսի. Ժ. 11.) [illegible], այսինքն մարդասպանեալ կամ քնի. [illegible], գործող յանցանաց, և պարտաւոր բազում [illegible], որ 'ի շահեցմանէ պարգևացն այ. որք են զանազան մասունք Ջշմարտապէս կշտամբիցի [illegible]

Նորին [illegible]· այսինքն պարգեւքն այդ առ իս՝ առաւել պարտաւորեն զիս քան զպարգեւատուութիւն ձեռինն այդ՝ որ առ Իսրայէլացիս, յորժամ 'ի հարկանելն յայլեաց ժամանակս զեգիպտացիս եւ զայլ հեթանոս՝ զԻսրայէլացիս պահպանէր, եւ նոքա ապերախտ լինէին։ Կամ, մեծապէս պատժապարտ գտանիմ ես քան զեբրայեցւոյն պատժապարտն ձեռինն այդ 'ի հարուածս եգիպտացւոց· [illegible], վասն մարմնաւոր պատուհասից նոցա, [illegible], առժամանակեայ էր, այսչափ կամ այնչափ ամս· իսկ իմ պատուհասս՝ յաւիտենական է։

8 [illegible]։ Լաւ օրինակն, եւ հին լուծ· զնեն· [illegible] 'ի [illegible]· այսինքն 'ի վերայ իմ մեծապէս մարմին եղելոյս գործովք մեղաց։

9 [illegible]· Ի լաւ օրին· [illegible]· այսինքն, այն պատուհաս նոցա՝ որոշեալ կամ սահմանեալ ամօք չափիւ։

# ԲԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Վերստին յաւելեալ կրկին հեծութեան՝ նորին հակողի առ նոյն ակերս մաղթանաց բանի։

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ

## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ քանզի առ բարձրեալն իմ [1] յօդաւո-
րական շրթամբք կարգաս, որ գործովք միայն գրաւի
եւ ոչ սանկղծաբանութեամբ կաշառի, որ յԱրգելափոս
միշտ ունիս զօրաւիգ զգայուն, զի՞նչ օրինակ առ այս քեզ
նմանագոյն եւ յարմարական ատենաւոր եղից՝ անձն իմ
պարտաւոր, [2] պատժակիցս կործանեցելոյն Սոդոմայ,
ընկերանեալ դատախազս Նինուէի, անարի բարբարոս
քան զոխերիմն Հարաւային, վատթարագոյն քան զՔա-
նան, յանմանեցեալս քան զԱմաղեկ, [3] անբժշկական
քաղաք գրօշելոց, նշմար մնացեալ ապստամբութեան
հինն Իսրայէլի, յիշատակարան պահեալ ուխտազան-
ցութեանն Յուդայ, կշտամբեալս գեր քան զԾուր,
տարամերժեալս քան զԾայդան, խորթաբարոյս քան
զԳալիլեա, աններելիս քան զանհաւանն Կափառնաում,
պարսաւեցեալս իբր զՔորազին, բամբասեցեալս ընդ
Բեթսայիդայ, [4] անպարկեշտ ծաղկեցեալ ալեօք Եփ-
րեմի, աղու աղաւնիս միշտ յիմարութեամբ՝ այլ ոչ հան-
դարտութեամբ, [5] 'ի կորեանց առիւծուց անձնական օձս

եղեռնային, կերպս ձուոյ քարբից լցեալ ժանտութբ, պատկերս վերջին հարուածոյն Նեռնաղեմի, ըստ բանին Տեառնի՝ և առաքելոյն Յոհաննու, տաղաւարս մերժեալ՝ հանեալ 'ի կործանումն, խորտակեալ [6] զկարգս վաստահարան, և կրկին ծրդեալ չինուածս խոսուն, թողեալ ժառանգութիւն յարմարական, մնացեալ տունս սատուածակերտ, ըստ բանից նախագրեցելոցն՝ Մովսէսի, Դաւթայ և Եզեկիելի, յորկս բանական՝ [7] ունողս բորոտութեան, հարուածեալ խրատու քերման, օրինիւ կազզուրեալ, օծեալ կաւոփն՝ ողբական հեղութեամբն, անձարակ գտեալ յելս հնարից, քակտեալ վերստին ձեռամբ շինողին, արտաքս ընկեցեալ հրա ացի հատուցմամբ հրամանաւ հզօրին 'ի տեղի անսուրբ, հերքեալ տարագրեալ խորոցաւ մեծաւ՝ ամենայնիւ առանց խնայելոյ, ծածկեալ զկամս [8] յերկրի չարեօք, ըստ աւանդականօրէս ժխտողին՝ որ յաւետարանին ցուցանի։

Բ. Մալ զու ինձ, [9] ինձ հօգւոյ և ամենայն մարմնոյ՝ ըստ զուանելոյ աստուածաշնորհին, երկայնամիտ և քաղցրագութ՝ ըստ որբոյն Յովհաննու ձայնին, ընդհէս կատարել 'ի բոյց հաձութիւն օրհնեալդ կամաց՝ զնկղջնութեալ մատեան մաղթանաց այսր ողբերգութեան։ Եւ ընդ լալով սերմանել բանիս [10] 'ի նախընթաց չուս աստիճանաց օթևանացս պատրաստութեան, 'ի կատարածն ժամանելոյ հասարման հնձոյն, զարձայց բերկրեցեալ լրութեամբ քաւութեան՝ պտղոյն երանութեան որայիցն բարութեան։ Մի տայցես ինձ արգանդ սրտի անորդի՝ Տէր Խորայելի, և սորին աչաց ցամաքեալս՝ ով ամենազութ։ Այլ բանական մաղթողիս՝ հզօր և օրհնեալ, [11] նախ քան երկնի, և երկրին երկրի, և նա ցօրենոյ և գինւոյ և ձիթոյ, և նոքա Խորայելի։ Եւ երկնաւորայն աղերս որ առ քեզ՝ հօգւոյս աղղենցէ, քան թէ տարերաց ապականացուաց։ Դու ստեղծիչ՝ և ես կաւ, բաց տարակուսելոյս 'ի մասու մաղթանաց այսր հեծութեան՝ կամ քաղցրութեան՝ զօրանալ ասելն. զի մի 'ի բանալ վերնային երկնի՝ [12] անընտիր գտեալ կրթութեան փայելման լուսոյ, իբր զխաւթմանց ապաւէցայց ջնջեալ 'ի միջոյ։ Այլ զրկելոյս, ըստ մաղթանաց զոյման սաղին, և այժ թալկացելոյս, և [13] կեանք մաշելոյս՝ մասյս խղճիւ, այլ ոչ տաժանմամբ

կրից՝ աշխատութեամբ զքեզ խնդրելոյ, առ զսամբ
մաղթանացս, և տուր զողորմութիւն քո շնորհացդ. ըն-
կալ զփոքրս 'ի ակարէս, և շնորհեա զմեծդ առ 'ի հզօ-
րէդ. զօրացո զլանս զգչման, առաքեալ 'ի մեզ հոգի 'ի
բարձանց՝ ամենաշունչ պատգամօքս [14] 'ի սմա եղելոցս:
Պարգևեա բարերար՝ [15] զառակն Եսայեայ, լուսաւորեալ
առ ճշմարտութիւնն, մատուցանելով մահու արժանոյս՝
ընդ պղնձոյս գոյի անարգս ձայնի՝ [16] զոսկի քո շնորհի,
ընդ անզարդութեան երկաթոյս սնութեան գունոյս՝
պղինձ պճնելի, ցոյցք առաքինութեան, հրաշէկ Լի-
բանանու: Ընդէ՞ր [17] կարծրացուցանես զսիրտ եղկելւոյս՝
չերկնչել 'ի քէն, անճառ և ահաւոր: Մի՛ եղէց անպ-
տուղ 'ի փոքր վաստակոյս՝ իբր ապաջան սերմանող ան-
բերրի երկրի: Մի՛ լիցի ինձ [18] երկնել և ոչ ծնանել,
ողբալ և ոչ արտասուել, խորհել և ոչ հառաչել, ամ-
պել և ոչ անձրևել, ընթանալ և ոչ հասանել, ինձ ձայ-
նել և քեզ ոչ լսել, պաղատիլ և անտես մնալ, կողկո-
ճել և ոչ ողորմել, աղաչել և ոչ ինչ օգտել, [19] զոհել
և ոչ ճենճերել, [20] զքեզ տեսանել և դատարկ ելանել:
Այլ ինձ նախ քան զկարդալս իմ առ քեզ՝ միայնդ
հզօր. [21] մի՛ զանկլճար տանջանացն տոյժս՝ ընդ թուով
աւուրց մեղօք կեցելոյս չարագործիս ինձ հատուցաներ:
Կեցո զիս գթած, լուր ինձ ողորմած, մարդասիրեա նե-
րող, խնայեա երկայնամիտ, պաշտպանեա ապաւէն,
բարերարեա հզօր, ազատեա ամենակալ, կենագործեա
նորոգող, վերականգնեա ահաւոր, լուսաւորեա երկնայ-
ին, բժշկեա հնարաւոր, քաւեա անքնին, պարգևա-
տրեա առատ, շնորհազարդեա աննախանձ, [22] հաշտեա
անախտակիր, ընկալ անոխակալ, սրբեա 'ի պարտուց
օրհնեալ: Ոչ թէ յառեցից զաչս իմ, նայեցեալ [23] 'ի հայ-
եցուածս երկուց վտանգից յուսոյ թշուառութեան,
զքոյդ տեսից փրկութիւն՝ յոյս և խնամակալ. եթէ
նկատեալ զխոեցից 'ի վեր [24] յամենազրաւ ուղին սա-
կալի, հրեշտակ քո խաղաղութեան քաղցրութեամբ
ինձ պատահեսցէ: Ցոյց ինձ տէր 'ի յելիցն աւուր շըն-
չոյս արձակման՝ մաքրութեան ոգի լուսով ամբարձեալ
'ի յերկնաւորացն երջանկաց՝ պարգևօք սիրոյ քոյ ե-
կեալ հասեալ: Ի յարդարոցն կատարելոց՝ կարեաց ինձ
կցորդ ժամանեցուսցես. [25] զանակնկալն բարի՝ չարիս 'ի

յուսահատութեանն ասոր շնորհեցես ։ Ո՛ւ լիցի քեզ, բարեբանեալդ, որ փրկութիւնդ ես ամենայնի, եթէ ախտացեալս քո ոչխարի՝ գազան գժնդակ տացես ուղեկից, մեղօք մեռելոյս՝ անախտ կեանք, կործանելոյս պարտեօք՝ փրկութիւն ։

Գ.. Երգեօք մեռայցես [26] զբարերարելդ՝ ակնկալութիւն. անտեսեսցե՞ս զգթասիրելդ՝ խնամող. այլայլեսցե՞ս զմարդասիրելդ՝ անփոփոխ. Նհանջեսցե՞ս զկենագործելդ՝ անվախճան. թողուցո՞ւս զողորմութիւնդ՝ երջանիկ պտուղ ։ Եղուաղեսցե՞ս զքաղցրութեանդ բարեշնորհ ծաղիկդ. անպատուեսցե՞ս զհիւթ պանծանաց քումդ ճոխութեան. յեղանակեսցե՞ս զփառս հերաց քումդ բարձրութե՛. ո՞չ պահեսցես զվայելչական զարդ պայծառութեան քումդ պսակի ։ Եթէ [27] ողորմածացն է երանութիւն, իսկ դու բնաւ իսկ արքայութիւն լըցեալ փափագմամբ, ո՞չ զբոլորն պարգեւեսցես փրկութիւն. ո՞չ մատուցանիցես դեղ վիրացս, ո՞չ սպեղանիս խոցուածոյս, ո՞չ դարման տկարութեանս. ո՞չ ծագեսցես լոյս 'ի խաւարի՝ յուսացելոյս 'ի քո զօրութիւնդ՝ կենաց պարգեւդ տիեզերաց, որ միայնդ ունիս փառս [28] ինքնութեամբ իսկութեամբ եւ յարակայ միանջենաւորութեամբ, վկայեալ 'ի բնաւից, օրհնեալ եւ փառաւորեալ յերկս յաւիտեանս, եւ անդր քան զպայման սահմանի իմանալեաց յաւիտենից. ամէն ։

---

1 Յօդասարանին շրթամբ. այսինքն մարմնական շրթամբք կամ բերանով միայն գոչես առ ած. (ըստ եսայ. իթ. 13.) « Ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս ». իսկ ած բարի գործովք միայն գովի, շահեցեալ լինի, կամ հաշտի, և ոչ աղերսանօք բերանոյ, որպէս բանիւք ճարտարութե՛ կաշառի իբրև զմարդկային դատաւորս կամ իշխանս. ըստ այնմ, (ա. կորն. դ. 20.) « Ոչ եթէ բանիւք է արքայութիւն այ, այլ զօրութբ » ։ Արդ որովհետև դու այսպէս բանիւք միայն կարդաս առ ած, զխիղճ ունելով յեղկելոյ աշխարհի, զո՞ր յարմար նմանութիւն եղից, և այլն ։

2 Գործակից խորհրդեցելոյն ։ Որպէս կինն Ղովտայ՝ թէ և ելեալ 'ի Սոդոմայ, սակայն եղև հաղորդ պատուհասի սոդոմայեցւոց՝ վասն յետս հայելոյն, այսպէս և ես ելեալ յաշխարհէ, բայց 'ի սէր աշխարհային դառնալով, գտանիմ պատժակից աշխարհականաց ։ Ընկերանեալ դառնաղու ։ Դառնախառն լինիմ չարագործաց, որպէս եղև յոյժ Նինուէացւոց, զարժանահաս կործանումն նոցա գուշակելով, և 'ի չպատուհասել զնոսա այ, զարմանալով խիստ որպէս թէ զչարեր. բայց լուեալ յայ

զխրատուն ներողութեան՝ լսեալ, և անդէն կերեաց զչէր մարգարէու-
թեան խօսից։ Այսպէս և ես, ասէ, ընդդէմ չարագործաց անպատու-
հաս մնացելոց փքեմինգիր լինիմ, բայց յանդիմանել պատասխանիմ։
ԱՌՆԷ ԽՈՐԽՈՐԱՏՍ. երկչոտ, անձնապահ. կամ բիրտ, փայլենի տաղտուկ-
գիս, որ անհնարինաձայն եմ ՚ի գժուարին գործս, կամ ՚ի լեառն զբանս
իմ. ուր տիկինն սարոյ յանձն առ զգժուարութիւն ձանապարհաց ՚ի
լեառն զխմառութեն աղօտեն, և եշեյց զաղտուսկանութեան բարուց։

3 ԱՆՁՈՒՇԱՅԱՆՔ ԱՂՈՒՆ։ Հին լուծ. խմինոյ զքաղաքան՝ յորս եղեն զօ-
րութիւնք ՔՆԻ, և ոչ հաւատայինս։ Սակայն զայնանիկ սարեւ տասնեակն
յեղէ ասուր փարդակեան, զգայելեա, զկափտաղաստակ, և այլն։ Դոր-
ձեալ, խմինոյ զերուսաղէմ, որում ած էր պաշտպան, և հրեայք ըղ-
պատկերս կաոց զրօշեն ՚ի պարիսպն։ Բայց օտար է և այս. այլ խմանի
ասա բաբելոն լաս բանին (երեմ. ծա. 9.) «Բժշկեցաք զբաբելոն, և
ոչ բժշկեցաւ»։ Ի նմա էին զրօշեալք չաստուածոց. խակ ՚ի յես՝ մեղք
և աւազ։ ՆԵՒՈՐ ԽՈՍԵՑԱՒ։ Զբան երեմ. (Ղ. 11.) «Արդարացոյց զանձն
իւր ապստամբութիւն խաբուելի» և այլն, յարմարելով յանձն իւր ասէ։
Հինն խաբուեալ ապստամբեալն յայս պատուհասեցաւ, քնքեցաւ. խակ ես
մնացի ՆՈՐՍ, կամ չաշարդ նորա ապստամբութեան, տարանելով ՚ի քեն։
՚Նոյնպէս ուխտազանցութեան յուդայի եղէ յերուսաղէմ. ես խմով
գործովք ցուցի թէ որպէս լինի ապստամբել յայս, և ուխտազանց զը-
տանել, նորա խաբուեալեալք և յուդայեանք, ՚ի յես երեւն այժմ իբրև
՚ի մնացեալ իւրեանց և ժառանգ չարութեան. ես զրեալս ՚ի նոր խա-
բուել՝ եղէ հնոյն խաբուելի հետևող և նախանձաւոր, ՚ի նոցա պատու-
հասին ոչ խրատեալ։

4 ԱՆԳՈՒՆԱԿ ԾԱՆՈՒՑԱՒ։ Ի մի օրին. և ՚ի հին լուծ. ԱՆԳՈՒՆԱԿ. և
մարթ է ասել իբրև մանկրայ՝ անպարկեշտարար, կամ անառօթու-
թեանք ծաղկեալ այլքս մորուաց կամ գլխոյ։ Է բան ովսեայ. (Է. 9.)
՚ի յանդիմանութիւն եփրեմայ կամ խաբուելի. որ ծերացաւ ՚ի գխառ-
թեան օրինաց, յաստուածպաշտութէ, և ՚ի փայլունմն բարեմարդարեկ
խնամոցն իմ. և սակայն անառօթեալ զգործ մանկութեն ասէր՝ կա-
պաշտութեամբ և արհամարհութեամբ բարեացն իմ։ Այսպէս և ես, ասէ, հնա-
ցեալ յանցգնութե և ՚ի փայլունմն շնորհաց, զամենայն ՚ի չար կամս
անձին անառօթարար։ Ովսեայ բան է և յաջորդն։ ԱՆԳՈՒՆԱԿ. այս-
ինքն մեղանարաց սպանեալ, բայց յանդգնութենէ, և ոչ ՚ի բանաւոր
հանդարտութենէ։

5 Ի ԽՈՐԷԱՆՑ ԱՒԵՏԵԱՑ։ Ի սուրբ և յաւաղինն որոնց եղի ես անպի-
տան, բանական ամս ԽԱՒԱՐԱՅԻՆ, յոյժ չար և մեռանելի։ Յարմարէ ըղ-
բանն (եսայ. Ա. 6.) «Կոփուն ասխւծու, և ՚ի նոցանէն խէք». որ լաս
զլոյն յայլ մասս հայի։ Նոյնպէս յաջորդն. ԽՈՑՔ ԽՈՒՆՑ. (եսայ. ծԹ.
5.) նմանութեան ձուոց քարբից, որ արտաքուստ ռուռնի կարծիմ, և ՚ի
ներքս լի եմ ժահու թունով մեղաց։

6 ԴԻՐԵԼՈՅ ՀԱՐԱՒԱՆԻ։ փակմանք և այլ ամրութիւնք զրան. զուռն ՚ի
մեղ զգայութեանցն. և փակմանք՝ երկիւղն իմ, զոր խորտակեցի ասէ. ԽՐԽՆ
ԾՐՏԵԱԼ. յետ սաստիկն որդութեան՝ վերստին ներկեալ կամ ապօրեալ
մեղօք չինուածս բանական։

7 ՈՍԿԻ ԽՈՐՏԱՄԱՔԻ։ Յանձն ասակէ զգրեալն (ղեւտ. ԺԳ. 34.) յա-
ղագս բորոտութեան տան. որ լաս քաշ մեկնչաց՝ էր մաշումն և ապա-
կանութեն որմոյ և քարանց՝ ներգործեալ ՚ի խոնաւութէ և յորդանց
կերպարաց. զորս լաս օրինաց պարտ էր քերել, և այլ քարինս դնել,
և այլ հողով կամ կաւով ծեփել. և եթէ դարձեալ երեւեսցի, ՚ի հի-
մանց քակել զտունն, և արկանել ՚ի տեղի անսուրբ։ Նոյնպէս ես, ասէ,

բանական տունս՝ բարձանալ մեզք, փրկեցայ խրատու աստուածպաշտու-
թեան, հաստատեցայ օրինօք աւետարանին, ծեփեցայ հեղ փառաբանե-
ութեան իբրև կաւով․ և սակայն անբաժանելի միացեալ, ընկենլոց եմ ընդ
անապականս 'ի գեհեն։ Հին լծ․ զասելն՝ [illegible], մեկնէ՝ թէ
քահանայն արտասուօք կու տանէր, և այնու օծանէր զորմն։ Հրէա-
կան զբոյց է անհիմն։

8 [illegible] 3 օրին․ [illegible]։ Եղէ, ասէ, իբրև զատաղանդն տը-
ւեալ 'ի տեսանել աղախնաւոր ծառայն․ զի փոխանակ յարգելոյ զնա
'ի շահս բարեգործութե, ծածկեցի թշբուցի յերկրաւոր իբրև չար գոր-
ծովք․ կամ ծածկեցի յերկրի տխմոց և մոլութեց․ Նմանեալ [illegible]
[illegible], ըստ որում յաւետարանին ցուցանի առակաւ․ (Մատ․
ԻԵ․ 24։) Ցանդուգն և անխրատ թշնամանք նորա՝ որով զանէր իւր կո-
չեալ խիստ և պահանջող, էր արդարև ժխտել, ուրանալ զբարերարու-
թիւն նորա․ ուստի արժանի եղև կորուսանել ոչ միայն զշահն, այլ և
զաւանդեալ տաղանդն։

9 [illegible]։ Բանն մովսէսի, (Թուոց․ ԺԶ․ 22․) [illegible]
[illegible]․ այլ օրին․ և հին լուծ, [illegible], որ ոչ թուի ու-
ղիղ։ Աստուածաշնորհ ասէ մովսէս, այսինքն ած այնն շնորհօք պայծա-
ռացեալ, կամ ըստ հին լուծ․ ած կարգեալ փարաւոնի․ ըստ [illegible]
[illegible], մի օրին․ [illegible]․ զոր և գնէ հին լուծ․ և բերէ զաւանդու-
թիւնն՝ թէ սուրբն յոհաննէս աղօթեաց գյաջողել հոգւոյն սրբոյ 'ի
գրել զաւետարանն։ Այնպէս և սուրբս խնդրէ, ասէ, զկատարումն
գրոցս ըստ կամացն ած։ Սակայն աստ [illegible] առելն ուղիղ է․ զի յի-
շատակի այս վասն բանին, [illegible] [illegible], որ է ձայն յուշա-
նու․ Գ․ 2։ Ցես խոստովանելոյ զողորմելի վիճակ անձինն, զայ 'ի յա-
ռաջբանական բանս։ Նա արդարև այսպէս անկիմանացայ ասէ, յանցեալ,
մերժելի գտայ․ բայց դու միշտ նոյն ած ես, որորիչ հոգւոյ և մարմ-
նոյ․ չկամիս կորուսանել զոր արարեր։ Ուստի երկայնամիտ լինիս առ
գործ մեր, և զբազում ողորմութիւնդ ցուցանես 'ի ներել յանցաւո-
րաց։ Վասն որոյ աղաչեմ, շնորհեա 'ի հաճոյս քո կատարել զսկսեալ
գիրս աղօթից․ զանէ ողբերգութի իմ ընդունելի քեզ լիցի․ որովհետև
ոչ լոկ մերանու կամ սնակու գրեմ զմաղթանքս, այլ և լալով սըր-
մանեմ, և այլն։

10 [illegible]։ Ջգջմամբ սերմանելով զբանս՝ յառաջին գը-
նոյս աղօթիցս, ընդ որս իբրև ընդ սաոխմանս եղանելով մաանելոց եմ
յօթեանս անախտութե, 'ի քաղելն զպտուղ աղօթիցս՝ զարձայց բերկ-
րեալ [illegible] [illegible], լսելով զքաւութի մեղացս, կամ կատարեալ
քաւութբ․ մի օրին․ [illegible]։ Հայի 'ի բանն սաղմ․ ՃԻԵ․ 6։

11 [illegible]։ Ի բանն ովսեայ․ (Բ․ 21․) ուր ըստ ձայնին ա-
սելն « Լուայց ես երկնից », խմանի՝ քաղցր արարից զազդեցութի երկ-
նից՝ ամպովք և անձրևօք և ջերմութեամբ․ որով երկինք բարւոք ներ-
գործեսցեն յերկիր․ և երկիր արդիւնաբեր լիցի, և արդիւնք առատու-
թեամբ հանձնեսցեն զիւրայել։ Այսու օրինակաւ բնական պահան-
ջումն և կարօտութի իւրաքանչիւր իրացդ՝ համարի իբր խնդրուածք․
զի մարդ ցանկայ առատ արմտեաց․ և արմտիք՝ պարարտութե երկրի․
և երկիր՝ բարեխառնութե օդոյ․ և օդք կամ երկինք՝ քաղցր մատա-
կարարութենն ած։ Այսմ նման է զաքար, Ը․ 12․ « Այլ ցուցից խա-
ղաղութի․ այգի տացէ զպտուղ իւր․ և երկիր տացէ զարմտիս իւր․ և
երկինք տացեն զցօղ իւրեանց․ և ժառանգեցուցից », և այլն։ Արդ նախ
նիզ բանական մաղթողիս լուր, ասէ, որ վասն հոգևոր կարօտութեանս
հայցեմ, քան թէ առաքելոց 'ի պէտս մարմնոյս։ Ի բանն ովսեայ գնի

ԾԽՐՈՒՄԷՆ․ որ զօրով ալքայանիստ թագաւորացն խորտակել, խմանի փո_
խանակ համօրէն հրէական ազգին․ վասն այն և ասէր զնէ՝ ԽՐՈՒՄԷՆ։
Թող զի և օրինակ ինչ եօթանասնից ՚ի բնագրին ունէր զնէ ԽՐՈՒՄԷՆ։
ԱՅՆ ԵՐԿԻՆԱՒՈՐԱՑՆ ԱՐԴԱՐ․ Ոմանք խնդրեն զբան (զաքար․ ա․ 12․) «Մին_
չև յերբ ոչ ողորմեսցիս ՚ի վերայ Երուսաղէմի»։ Բայց լաւ կարգի բա_
նիս հայի առ ունեւականն, ուր զասէն՝ լուսոյ եւ երկնից՝ խորհրդա_
րար իմանոյ սուրբ վարդապետս, (որպէս նաև կիւրեղ և օգոստինոս,)
՚ի վերայ հրեշտակաց մատակարարաց աշխարհի, որք զերկրի շինութիւն
խնդրեն․ վասն որոյ նոցա խնդրուածք, ասէ, առաւել ինձ օգնեսցեն,
քան թէ ապականացու տարերաց։

12 ՍՊԻՏԱԿԻՐ ՓԱՅԼՈՒ․ խառն եղեալ ՚ի սաստկութիւն երկնային լուսոյն․
կամ, անընդհատ, անծանօթ ՚ի վարժումն հայեաց լուսոյն։ Կամ — ԸՆ_
ՏԻՐ․ իմանի անփորձ, ոչ ընտրեալ հրով․ և թուի առնուլ ընկերային
զնմանութիւն կաւոյն, բառ որում նախ ասաց, թէ դու սանդերձ կամ
ձևացուցիչ իմ ես՝ իբրև կաւոյ․ զօրացո անդէն զիս իբրև կաւ թըր_
ծեալ․ զի մի զուցէ ՚ի յայտնել քո անփորձ լինելով, և ոչ ահկալով
ծագման լուսոյն, հալեցիմ լուծանիցիմ իբրև զմոմ, որպէս անթուրծ
կաւն լուծանի և քայքայի։

13 ԿԵՆԱՑ ՃԱՇԱԿԵԼԵԱՑ․ Դու կենացն ես մաշակելեաց ինձ, որ մաշեալս եմ
՚ի մեղաց խողխէ, ԹԷ ՈՉ ՓՈՓՈԽՈՒՄ․ և ոչ եթէ ՚ի տաժանելի աշխա_
տութէ խնդրեցիս զքեզ։ Հին լծ․ իմանոյ, և ոչ մեծա տաժանմամբ
կարեմ թողութի գտանել։ Բայց ոչ յարմարի՝ ոչ յանդեալ բառն,
և ոչ յընթացս բանիցս, ուր մնացանեց զյուսադրութի իւր կրկնէ։
ՍՊ ԳԵՐԱԳՈՅՆ․ ընկալ զընծայ մաղթանացս, և տուր զողորմութի ՔՈ ՇՆՈՐ_
ՀՈՒԹՈՅ․ զծրի պարգև շնորհացդ․ կամ փոխադրութի հոլովոյ, այսինքն
զշնորհս ողորմութէ քո։ Արդարև մատուցանեմ քեզ, ասէ, զընծայ ա_
ղօթիցս, բայց այսու ոչ իբրև պարտապան առս ինձ փոխարէն․ այլ ՚ի
քումմէ առատութէդ ձրի առս ողորմելով․ քանզի և հաճոյական մաղ_
թանքս ՚ի քէն աւանդեալ է ինձ, և իբր քո մատուցեալ՝ ընդունելի
քեզ լինի․ ուստի շնորհ է ինձ մաղթելս, շնորհ է ընդունելցդ, և շնորհ
փոխանակ շնորհի է՝ կատարեցդ զհայցուածս իմ։

14 Ի ՁԵՌՆ ԷՐԴՄԱՍՈՒԹԵՆ․ Ածական է բառին ԴԱՐՁԱՒԱՐՈՑ, փոխանակ ասելոյ՝
ԷՐԴՄԱՍՈՒԹԵՆ, որպէս և ՚ի բանն Ժդ․ 2․ ասի, «Ոչ մատակարարն ստամանե_
լոց»․ այսինքն ստամանելովք․ տես վասն այսր յընդարձակ Քերական․
երես 373։ Կամ թերևս սեռական յառաջացուցիչ իմանալ է զդ, այս_
ինքն պատրաստօք ՚ի սեռ եղելոց կամ յիշատակելոց սրբոց մարգա_
րէից և առաքելոց։ Արդ ասէ․ զօրացո, այսինքն ազդեա առ զբանքս
զղջման, աղաւաղելով ՚ի նոսա և ՚ի մեզ զհոգի վերին շնորհացդ ՚ի ձեռն
ածաշունչ բանիցն՝ զորս ասացին յիշատակելի։

15 ԶՈՍՈՅՆ ԽՕՍԵՑ․ Հին լծ․ հայելով ՚ի բառն՝ ԼՈՒՍԱՒՈՐԵԱԼ ԱՄ_
ՆԵՆԱԳԱՆԻՑ, կարծէ յիշել զբանն, (՚ի գլ․ կ․ 1․) «Լուսաւորեա
լուսաւորեա Երուսաղէմ»։ Բայց հեռի է․ զի այն բառք նշանակեն, ՚ի
ծննդեանն կամ ՚ի բուն իւրն փոխելով ծննդեանս զառակաւոր և զօրի_
նակական բանն եսայեայ, (՚ի նոյն գլ․ 17․) «Փոխանակ պղնձոյն բե_
րից քեզ ոսկի» և այլն․ մատուցանելով փոխանակ ձայնի աղօթիցս՝
որ անարգ է իբրև զպղինձ, զոսկի շնորհից․ և փոխանակ երկաթանման
անութեան մտաց՝ ասել զառաքինութիւն․ որոց ցուցք կամ օրինակ
է փայլումն պղնձի, ԵՐԿԱԹ՝ հրադոյն, կամ ըստ հին լծ․ ՚ի հուր շի_
կացեալ և կարմրացեալ։ Իսկ ԼՈՒՍԱՒՈՐ ասէ՝ կամ ըստ նշանակու_
թեանն զնի, այսինքն պայծառ, փայլուն․ զի այնպէս թարգմանի․ և
կամ զի ՚ի լերանանէ եկանէր պղինձ ազնիւ, ըստ բանին (Բ․ օրինաց․

ը․ 9․) «Ի լերանց նորա հատանիցես պղինձ»․ զոր մեկնիչք իմանան զլերանց Լիբանանու։ Համբրոս վասն սիզանի որ մերձ է 'ի Լիբանան, ասէ՝ աատտացեալ պղնձով։ Այս սիզան վիճակեցաւ ցեղին Ասերայ, որում յօրհնութիւնն ասէ Մովսէս․ (Բ․ օրին․ լԳ․ 25․) «Երկաթ և պղինձ եղիցին կօշիկք նորա»։ Հին լուծ․ զասելն՝ [illegible], իմանոյ, 'ի նմանութիւն ապիմեաց վասն զծուլութիւն իմ իբրև զպղղինձ․ բայց մեր եղեալս է ըստ կարգի բանին։

16 [illegible] ․ 2 օրին․ [illegible]։

17 [illegible]։ Եսայ․ ծԹ․ 17։ Կարծրացուցանել կամ խստացուցանել զսիրտ մարդոյ՝ իմանի չտալ զլոյս մտաց և զփրկձուկ սրտի առ 'ի ճանաչել և խորշել 'ի չարէ մեղաց և պատժոյն․ կամ իմանի արգելուլ զշնորհսն՝ որք հարկաւորք են 'ի լուծանել զխստութիւն սրտի։

18 [illegible]։ Յայտնի է բանս այլևայլ օրինակաւ զմիինչ յայս աւուր, այսինքն թէ 'ի գրելս իմ և յաղօթել զգլխաւոր բանքս՝ որք են սկիզբն գարձի և ուղղութեան իմոյ, մի եղէց զուրկ 'ի կատարմանէն։ [illegible] իմա զձայնեալն բերանով միայն և անգործ յօժարութբ։ Այսպ թէ ոչ՝ ճշմարիտ սրտիւ ձայնելն, աղաչելն, կողկողելն՝ ոչ երբեք անտես լինին յնյ․ մանաւանդ թէ այնպիսւոյն յառաջ քան զձայնելն լսէ ած․ ըստ որում ասի Եսայ, կէ․ 24․ որպէս ասաց սուրբ վարդապետս իսկ ասէ, [illegible], և այլն։

19 [illegible]։ Հայի 'ի բանն ա, Թագաւ․ Բ․ 15․ 16․ ուր ցուցանի անկատար լինել զոհին առանց ճենճերելոյ․ յորմէ եղև առակութիւն ասել․ ճենճերեալ զոհ քո․ (ա․ Թագա․ իշ․ 19․) այսինքն կատարեալ և ընդունելի լիցի։

20 [illegible], 'ի խորհուրդ պատարագին, 'ի ձև խաչին, և 'ի պատկերս․ կամ, զսէրք անուանելն զքն ասէ․ զորմէ անս 'ի բանն են․ լուծ․ 16։

21 [illegible]։ Մի զյուխանձնական պատուհասն հատուցանելս ժամանակաւ մեղուցելոյս, որ թէպէտ և արդար է առ ծանրութն մեղացս, բայց և զանձ է 'ի կրել․ զի անոթէ, և ոչ վճարել։

22 [illegible]։ այսինքն անբարեկացող, անօգնական․ [illegible] 'ի [illegible]․ 2 օրին․ 'ի [illegible]։

23 Ի [illegible]։ այսինքն մահուան մարմնոյ, և զատապարտութե հոգւոյ․ կամ, պատժոյ վնասուն, որ է զրկումն յանմահոյն բարեաց՝ և մանաւանդ յնյ, և պատժոյ զգայութե, որ է տանջումն անմահոյն չարեաց գեհենին։

24 [illegible]։ Հին լուծ․ իմանոյ զճանապարհ մահուն, բայց այն ոչ ասի 'ի [illegible]։ Այլ իմանալի է օգն, ընդ որ անմնեցուն հոգիքն անցանեն, և յօդային այսոց պատերազմեալ լինին․ որպէս ցուցաւ սուրբ հօրն մերոյ անտոնի, ուսաւ յարբայն մարկոս, և յայլս։ Արդ ընդ այս ճանապարհ, ասէ, որ զամենեցուն հոգիս զբաւէ, փոխանակ զեւսոյ՝ հրեշտակ խաղաղութե ինձ պատահեսցէ։ Ի այն միտս և յաջորդն․ [illegible], յաւուր մահուան իմոյ առաջնորդ զհոգի սուրբ կամ մարտիր, լուսով և ոչ բարկութբ առաքեցեալ յերկնաւորացն հրեշտակաց, և զպարգևս սիրոյ՝ զաւետիս փրկութե բերելով առ իս։

25 [illegible], զփրկութիւն, զարքայութիւն՝ որում 'ի գործոց իմոց ոչ ակնունիմ, ինձ չարիս շնորհեսցես 'ի [illegible], 'ի ժամ մահուն, կամ 'ի դատաստանին՝ յորժամ չեք յոյս յանձնէ իմմէ։

26 [illegible]։ Այս է 'ի հեսանական եզանակաւ հար-

ցուածոյ պաղատանքն ոչ եթէ զտարակոյս ինչ կամ զերկբայութիւն նշանակէ, որպէս թէ հնար իցէ մնալոյ ՚ի յ զբարերարելն, այլայլել կամ անուանել զմարդասիրելն, և այլն. այլ մանաւանդ զանհնարութիւն իւրն յայտ առնէ, և այնու թախանձէ՝ զգութն ամենայն ժողովրդ. իբրև ասել. գիտեմ տէր, զի անհնար է քեզ մնալոյ զբարերարելն, և այլն: ՚ՆՇԱՆԱՑԻՆ. խափանել կամ դադարեցուցանել զկենդանագործելդ: ԱՆՇԵՂԵԼԻ, ոչ խանգարես, ոչ թառամեցուցանես զքաղցրութիւնդ, որ իբր ծաղիկ գեղեցիկ անուշահոտ՝ զարդ է քեզ, և զմայլեցուցիչ ոգւոյ մերոյ. ոչ անպատիւ առնես զգթութիւնդ՝ որ է պարծանք քոյոյ մեծութեանն: ՈՒ ՉԵՂԱՆԱԿԻՍ, ոչ փոփոխես զՏԵՍԱԿ ՀԵՐՈՅ, հերք կամ վարսք՝ փառք են գլխոյ, և ալիք՝ զխմոյ. այսպէս ոյ փառք՝ ողորմութիւն, երկայնմտութիւնն և հայրախնամ անաչութիւն: Ի սոյն խորհուրդ՝ գլուխ նորա և հերք իւր սոր սպիտակ երևէին ՚ի տեսլեան Յովհաննու. ա. 14:

27 ՈՐ Է ՈՂՈՐՄԱԾՈՅՆ Է: Աղերս է առ ամ՝ կարի բնագաւառիչ բառ օրինակի քանանացւոյն, նախին իսկ Քնի բանիւ զնա ժողովով: Դու տէր հրամայեցեր՝ երանի առնելով ողորմածաց. և ես աղաչեմ քոյով զքեզ թախանձեմ, և խաւարիմ իրաւունս: Եթէ չափաւոր ողորմածն երանելի է, եթէ փոքր ողորմութիւն է ցոյց և արդիւն երջանիկ հոգւոյ, ապա դու որ բուն իսկ երանութիւն ես և երանացուցիչ, որչափ ևս ունիս առատանալ յողորմութիւն. դու բոլոր երանութիւն, ապա և բոլոր ողորմութիւն. դու ամբողջութիւն լի զմայլմամբ՝ ցանկաս տակաւին, զի մարդ առ մարդ ողորմած լինիցի, կարօտեալ առ կարօտեալ: Ապա անկարօտ դու՝ զիարդ ոչ առլիբերացուցանես զքո զողորմութիւն:

28 ԻՆՔՆԱԲՈՅՆ ԻՆՔՆԱԲԷՆ: Դու միայն ունիս փառս ՚ի քեն, ինքնին ՚ի քո բնութեան, ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐԴ, անկարօտ արտաքին առաջական և աւելորդ փառաց. և այն՝ անփոփոխան ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ: Զ օրէն. ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐԱԲԻՆ. և մարթ է պարզել, ՚ի յարակայ մշտնջենաւորութիւն, այսինքն յանփոփոխան յաւիտեան: Փառք քո ոչ յայլմէ ակսանին, ոչ ինքնին նուազին բնաւ, ոչ ժամանակաւ չափին: Այսպէս վկայեալ ես յամենեցունց՝ որք զաւանեն զքեզ ամ Ճշմարիտ. այսպէս ամենայն արարածք՝ թէ և անցաւորք, վկայեն թէ դու մշտնջենաւոր ես, փառաւորեալ ՅԵՐԷՆ ՅԱՒԻՏԵԱՆ. այսինքն յանցեալ ժամանակին, ՚ի ներկայս և յապառնին. ՆԱ ՆՈՅՆ ԵՍ ԴՈՒ ԶԳՈՅԱՆ, յեսոյ ես քան զմշտնջենաւորութիւնն, որ է յաւիտեան իմանալեացն հոգեղինաց. կամ առաջ ես քան զանհնարին հանդերձեալ յաւիտենին, որ է հոգեոր և իմանալի: Արդ կամի, համօրէն արարածք յիւրաքանչիւր կարգի և ՚ի տեղութեան անբանքն փառաւորեն զքեզ վկայելով բնութեամբ. և իմացականքն՝ բանիւ ես, թէ մեք անցաւորք եմք, և դու մշտակայ. մեք թէ և յարատեւեալք իցեմք, բայց կարեմք զաման յանգոյութիւն. իսկ քեզ նուազել անհնար է. դու կաս և մնաս, թէպէտ երկինք և երկիր անցանիցեն. որպէս և էիր իսկ՝ մինչ նոքա ոչ գոյին:

## ԲԱՆ ԵՐՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ*
*առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր իմ տէր, տուիչ պարգեւաց, ինքնաբուն բա-
րի, [1] ամենից տիրող հաւասարապէս, միայն արարիչ
ըմնաւս յոչէից, փառաւորեալ, անքնին, ահեղ, ահար-
կու, սոսկալի. հզօր, սաստիկ, անտանելի, անմերձենա-
լի, անըմբռնելի, անխմանալի, անճառելի, անտեսանե-
լի, անզննելի, անշօշափելի, անորմնելի, անսկիզբն, ան-
ժամանակ. [2] անշամանդաղ գիտութիւն, աներկեւան
տեսութիւն, ճշմարիտ էականութիւն, բարձր եւ խո-
նարհ, [3] օրհնաբանեալ գոյութի՛, աննուէր ծագումն,
ամենափայլ ճառագայթ, [4] խոստովանեալ լոյս, անտա-
րակոյս վստահութիւն, անտարտամ հանգիստ, [5] ան-
յեղլի կնիք, աննահանջելի տեսիլ, [6] վկայեալ անուն,
ճաշակ քաղցրութեան, բաժակ բերկրութեան, հաս-
տիչ հոգւոյ հաց, [7] օտար մթութեանց սէր, աներկբայ
խոստումն, ծածկոյթ ցանկալի, զգեստ անկապուտ, օ-
թոց բաղձալի, զարդ փառաց, ձեռնընկալու մեծ, ապա-
ւէն գովեալ, աննուազելի շնորհ, անսպառելի գանձ,
անապական անձրեւ, [8] արփիացնցուղ ցօղ, [9] ամենատե-
սաց դեղ, ձրի բժշկութիւն, կրկնաձիր առողջութիւն,
վեհագոյն խրախոյս, [10] անպատիր կոչումն, համօրէն ա-
ւետիս, սրբամեծար թագաւոր, աղքատասէր պաշտ-
պան, մշտահարուստ տուիչ, [11] անխափան դիմեցումն,
աննահանջելի հրաման, [12] անհամառօտ յոյս, երկար
տեւողութիւն, անզղջական տուր, ամենաբաշխ աջ, ար-
դարակշիռ ձեռն, անաչառատես ակն. մխիթարութեան
ձայն, սփոփանաց լուր, բերկրութեան բերումն, [13] ա-
նուն կենդանի, նախախնամող միտն, անգայթագղելի
ելք, անխարդախ ընթացք, կենդանարար կամք, [14] ան-
նենգելի խրատ, աննախանձ պատիւ, [15] լայնական հը-
նարք, անձկական պայման, անգտանելի հետք, անե-

րեւոյթ շաւիղ, [16] անչափագիր պատկեր, որքանութիւն անսահման, աննմանական տէր, անզուգական գութ, ողորմութիւն բազմազեղ, [17] խոնարհութիւն աճնելի, համբոյր փրկական ։ Այլ եւս քան զայս [18] աղջմունք վայելչականք՝ աստուածութեանդ նուիրելիք • օրհնեալ, գովեալ, բարեբանեալ, քարոզեալ, աւետարանեալ, հռչակեալ, հնչեցեալ, պատմեալ, [19] անխօսելի կամօք աղաչեալ, և որ ինչ առ մեզ բերին առ ՚ի քէն համանք քաղցրութեան, զոր հանդերձելոյն ձիրից ընտրանեն կերպարանութիւնք • որով զուարթ ցուցանես ՚ի փրկութիւնն իմ, երանութիւն, իբր ՚ի պարապութենէ իմեքէ ախորժ անհնարոք լցեալ • զի ոչ իմիք ինչ մատախարապատուաս փառաւորիս երգով, այլ զի պատճառ իմն ասցես զփորձս աղերս՝ մեծիդ փրկանաց ։

Բ. Եւ քանզի առ ամենայն հասակ անկեցեալ յերկրի ազգ բանականաց՝ այս պատուէր նկարագրական նորոգ մատենի ողբոց նուագի, որ զամենեցունց ունի զերրից պատահմանց նշանակեալ յիւրում պատկերի, [20] իբր կշռոց մեծագործական կարեաց համայնից, առ բոլոր գումարս բազմահօտ տիեզերակցս քրիստոնէից, առ նախնի ժամն ժամանողաց, և առ երկրորդ կոչեցեալ չափու արբունն, առ որ ՚ի կատարած աւուրն կոչեալ՝ տկարացեալն ծերութեամբն, առ պարտաւորս և որդորս, [21] առ ինքնադոյ բարձրայօնն և սնոտեալ անձնադատ զանձալն, առ բարիսն և եղեռնագործս, առ նըկունս և առ արիս, առ տարակս և ներքոյանկեալս, առ սեպուհս և գերաշխարհիկս, [22] միջակայնոց և պայազատաց, շինականաց և տոհմականաց, արուաց և իգաց, հրամայողաց և հնազանդելոց, գերելոց և նուաստից, մեծից և փոքունց, պատուականաց և ռամկաց, ձիաւորժից և սակականաց, քաղաքականաց և գեղջկաց, արքայից գաւազանութեանց ՚ի սանձս ահաւորին ըմբռնեցելոց, միայնացելոց՝ վերնականայն խոստակցաց, մաքրականաց [23] անիրանուէր զգաստութեանց, քահանայական երջանկակրօն ընտրութեանց, այցելութեանց բարեզգեստից զխոսութենց, աթոռակալութեանց նախագահից սրբանուէր տեսողութեանց • որոց ամենայն աղերս աղաչանաց, և ամենայն խորան բարեաց առ գլուխ աղօթից այսր մատենիս մատակարարեցի, ձեռնարկեալ հոգւոյդ

զօրութեամբ՝ կարգել ինձ մաղթանս բազմադիմիս, և ամենեցուն սոցին խնդրուածս՝ գթութեան մեծիդ յանդիման լինել սովաւ հանապազ։

Դ. Եւ որպէս զսոյն ընթերցողացն 'ի սիրտ յըտակս՝ բժշկութիւն հոգւոց և մաքրութիւն յանցանաց, թողութիւն պարտուց և արձակուրդ մեղաց կապանաց։ Եղիցի բղխումն արտասուաց սովաւ վարժելոցն, և պարգևեալ տացի 'ի ձեռն սորին ապաշաւ ըղձից։ Շնորհեսցի տէր և ինձ ընդ նոսին առ 'ի քէն զղջումն կամաց, և նոցա խմբիս ձայնիւ 24 շունչս բարեհամբոյրս։ Նուիրեսցի վասն իմ այսու մատենիւ պաղատանք նոցին, և բանիւս այսու 25 հեծութիւնք նոցին ընդ իմ խնկեսցին։ 26 Ընդ համբոյր ճաշակման այսր աղերսութեան, շնորհ լուսոյ քոյ մտեալ բնակեսցէ։ 27 Եթէ եղիցին ինձ բարեպաշտք ընծայիլ սովաւ, ընկալ կենդանեօքն վասն քո, գթած, և զիս ընդ նոսին։ 28 եթէ ախտս ինչ սրբանուէրս կաթուածոյ աչաց սովլիմ բերիցի, եղիցի 'ի քէն խնամակալ՝ և յիս անձրևեալ։ 29 եթէ գրեսցի և 'ի փրկութիւն կարգեսցի հաղորդելոցն յայս կերս կենաց, որպէս կամիս քո օրհնեալ՝ և ինձ համարեալ։ Եթէ հեծութիւնս աստուածահաճոյս 'ի ձեռն այսր բանի 'ի գաղտնեաց ուրուք յառաջ եկեսցէ, օգտեցայց քև բարձրեալ՝ և 30 ես ընդ նմին։ 31 եթէ ձեռն մաքուր՝ խնկով հանդերձեալ առ քեզ համբարձցի, հասցէ միասցի ընդ իմս ձայնի և աղաչողացն աղերս յառաջ մատուցեալ։ Եթէ պաղատանս 32 բազմադիմիս ընդ իմս երկնեսցի, լիցի և ինձ քև վասն սորին կրկին նուիրեալ. եթէ յարգեսցի 33 այս անձին բանի պատարագ՝ քեզ 'ի հաճութիւն, նախայլոցն ընդ իս քև ընծայեսցի։ Եթէ 'ի տխրանաց ինչ ձանձրութենէ որ նուաղեսցի, կանգնեսցի վերստին հաստարանաւ այս հառաչանաց՝ 'ի քեզ յուսացեալ. 34 եթէ համբարտակն վստահութեան մեղօք յատակի, այսու արձանօք պատկանեցելովք աջով քո պաշտպան՝ դարձեալ կառուցի։ Եթէ 35 յուսոյն ձգարան սուսերըն յանցանաց հատեալ կորեսցի, կցեսցի դարձեալ միանգամ կամօք ամենակալիդ բարւոք պատուաստեալ. եթէ վտանգ մահու 36 անձնական ցաւոյ զօք պաշարեսցէ, գտցէ փրկութիւն սովաւ առ 'ի յայս կենաց՝ յաղօթելն առ քեզ կեցու-

ցէ. եթէ առաջնորդն որ առաջնորդէ 'ի սէրս խուզէ,
քաղցրութեանք քո՝ ամեն առնելով ոգւոյ. Եթէ [57]
անբաւելի կորուսանք պարունակ՝ յանդգնեալ որ խորոց
իցէ ընկլուզեալ, եկեսցէ 'ի լոյս կարթիւ այս Հնարից՝
ըն պատապարելով. եթէ [58] թշուառութեանք խորից խա-
ւարին գործոց իցէ որ ծածկեալ, ցուցցէ անդրէն վասն
քո՝ միայն առաւէն՝ 'ի լոյս արդարութեան երեւալ. Եթէ [59]
պաշտամանն վտանգութեան զանձն ապաքէն էրցէ, ըն-
կալցի այսու միջնորդիւ ձեռն քո զնա՝ անփոփելով 'ի
նոյն Հաստատութեան. եթէ [60] անձըն 'ի զգուշութեան
պաշտօնեայն որ զեղծեալ, ապաշխարեալ անփոփ առ 'ի նոյն
զարժ նորոգելոյ. Եթէ [61] առատս զնա իւր քերթմանն՝
զգաւթեանք խնչ զօր խաւարեցէ, սթափեսցի 'ի նոյն
յայս նշան խոստովանել և երկրպագել խաչին խոր-
հրդոյ. եթէ [62] անարէնութեան մրրիկ խորտակիչ Հող-
մոյ յանկարծ բախեսցէ զՀաստատեալ մարմնոյ շինուա-
ծոյ մարդոյ յերկրայինս ծովու, Հանդարտեսցի անդրէն
զեկոս այս թեւոյ 'ի լոյս պատկանելով.

Դ. Եւ արդեօք լինել զեղ կենաց առ Հնարս զա-
ւոյ Հոգւոյ և մարմնոյ քոյ աստուածածնոյ՝ զայս կար-
գել առՀման այսոց մատենի սկզբնեցելոյ յանուն քո՝
բարձրեալ. Օգնեսջիր իմ՝ զու կատարեա. եղիցի Հո-
գի քո խառնեալ 'ի սա. շնորհ զօրութեան մեծի միա-
ցի 'ի քո ձեռն շնորհել աստուածարանութիւն. զի զա-
ատս զօրութիւն մՀանել արտոյ, և ընդունիս փառս
յաւիտենից. ամէն.

---

1 Աշխէն [illegible]. Ըստ արարչական զօրութեան, և ըստ Հանրական տեսութեան անմեկնելի Հաստատութեան [illegible], Հայեցմանց և մարմնականաց, մեծաց և փոքունց, բարեաց և չարաց. Ըստ [illegible] տեսութեան՝ սկզբնաւոր [illegible]. [illegible]. Դա միայնակ [illegible] զարմանալութեան [illegible] զանմնոյն յոչնչէ. Կամ, զա միայն կարող [illegible] յոչնչէ. [illegible] Հաստատութեան [illegible] լինել [illegible] 'ի աստուածաբանութեան՝ ոչ զը ընա.

2 [illegible]. [illegible], [illegible], ըստ [illegible] զանմնոյն յառաջ և յոյժ [illegible], և ոչ [illegible]. Հանդէպ [illegible] զիտութեան՝ որ 'ի [illegible] իւր [illegible], և ընդ [illegible]. [illegible]. Որ զանմնոյն [illegible] երկրպագելոյ, Հաստատեալ 'ի [illegible]. [illegible]. [illegible], [illegible], [illegible] 'ի զօրն իւր.

պով և Ջրհեղեղս 'ի Ծննդոցն, անվրիպելի 'ի գիտութիւն · Բարձր և խո-նարհ · Բարձր բառ ներկայութեանն յերկինս 'ի վեր, և խոնարհ 'ի բանս խաղս երկրի, բառ առաջի · Ճլը · Ց · « Թէ ելանեմ յերկինս, դու անդ ես · և թէ իջանեմ 'ի դժոխս, և անդր մտա ես » · Կամ, բարձր յեռութիւն, և խոնարհ 'ի խնամս ամենայն արարածոց՝ նաև նուաստից · Կամ, բարձր անհասութիւն վերոյ քան զամենայն միտս, և խոնարհ՝ Ծննդեան զալով նաև 'ի մանանս արարածոց ·

3 Օրհնութեան · մի որին · օրհնութեանց · այլ որ · օրհնութեան 'ի փո-խոխման ·

4 Խոստովանութեան · Այս են հաւատոյք միայն խոստովանելի, և ոչ այսոց անտանելի երրեակ զմարմնական բայսն · Կամ, բայս թէ և ճիշդին ոչ երևելի, բայց յամենայն զգալեաց խոստովանեալ բառ ներզործու-թեանն · զի և նա ճիշդն բայսն զգալի խոստովանի՝ թէ ես ոչ էի, այլ իմ ստեղծիչ՝ եղիցի բայս, ես եղէ · և որպէս բայս և տես, նոյնպէս խաւար և գիշեր խոստովանին և որչափ զնա ·

5 Աւետեաց · Աւետաւորելի 'ի բնութիւն, և 'ի հետս զոր զրոյցեաց յարարածս · Կամ, անպայմանելի 'ի վերնոյ խոր, 'ի բանս և 'ի խոստմունս, որք առ մարգարէ եկեալ հասանաին ·

6 Վկայութեան · Նշանաւոր անուն վկայելոյ է ոչ միայն առ անծա-նօթս, այլ և առ հեթանոսս 'ի վկայութիւն բնական արարածոց · բառ այնմ · (գործ · ժդ · 16 ·) « Ոչ եթէ առանց վկայութեան զինքն եթող՝ բա-րերարութեամբն առ յերկնից ձեզ անձրևս » և այլն · Կամ, ինքն իւր վկայելոց անուան իւրում առաջով, ես եմ իմ, այս է անուն իմ · (ելից · խը · Ց ·)

7 Օրհնութեանց · Ստար 'ի մնութենէ, այսինքն անպայման՝ անդա-դարելի սէր · Կամ, որ 'ի սիրելն ոչ մնացեալ յաղթեն իւրն · որպէս 'ի մարգարէին սէրն խանդի բարւոյ անպայման անմնացորդութիւն, անհատա-թիւն, անհատոյց փոխյանդգրութիւն, և այլն, որով խաւարին միայն · հին բն · խնամոյ, աստուածեղէն յոյս և խաւարեալց սիրոց, արտաքոյ զարմի նոցա ·

8 Աղերսանաց եղ · Ի ծագման արևու իջեալ զօղ · այսինքն յար պարարտացուցիչ և զուարթացուցիչ բուսոց · Կամ, Հաւատոյ զօղ · Ըստ հին բն · բուսոյ փայլուն ·

9 Աննախանձ տէր · այսինքն մանանայ գեղ ամենայն զաւաց, որ առ-զոյց վասն ամենայն խորագէտի, և ընդ ամենայն բանաւոր նոցա · Կամ, մա-նանայ իջեալ և ցօղեալ ոչ 'ի մի կողմն երկրի, ոչ միայն յանապատ որպէս առ Իսրայելացիսն, ոչ առ մի ազգ եւեթ, այլ ընդ ամենայն երկիր, առ բոլոր ազգս մարդկան · Մարթ է ես խնամոյ ընդհանուր 'ի վերոյ բնական գեղոյ՝ զոր 'ի բոյսս և յարմատս պարգեւէ իւր անդոյ մանր անձրևաց ընդ իմ երկիր, որովք և Տէր Բեղմնաւոր շնորհէ սնանել-բոց · Եւ, Արքայիս տուրչութեան, զոր որպէս զմարմնաւոր և զհոգևոր առաջնութիւն շնորհէ, ոչ միայն մարմնոյ նուիրական գեղովք · այլ և հո-գւոյ՝ երկնից հիւանդութեանց · կամ, յարժամ սրբուհեաց առողջացուցա-նէ զմարմին, զսիրտ և զհոգի բժշկէ ·

10 Աղօթից խորան · Կոչումն որով զմարդիկ հրաւիրէ 'ի հաւատս կամ յապաշխարութիւն կամ յերկնային փառս, ոչ է պատուելի կամ վրիպելի յերկրէ կոչմանէ, Ջրհեղեղաւս կոչէ զամենեսին · Կամ, յոր-ժամ մարդ կարգայ առ իս, և կոչէ յորդութիւն, ոչ պատուի, ոչ խափի, ոչ 'ի գետն եղանէ · Կամ, զոր կոչումն և զանուն ընծայեսցի իմ բառ զլխոյ · ամենայնին Ջրհեղեղաւ է, ոչ պատարագք կամ սաստութիւն կոչի · որպէս բարձրացի 'ի մարդկանէ սաստութիւն կոչին յայս կամ յայն անուն · և որ-

ղէս հեթանոսք սուտ անուանս տային չաստուածոց իւրեանց։ Հին ըծ․ մեկնէ, անուտ է զոր առնեմ վասն քո։

11 [illegible]։ Ըստ հին ըծ․ անարգել կամ մերձ յանհենալին՝ որ զխմեն առ նա։ Կամ, որ բանից զխափանս զխմելոյ առ ինքն։ Կամ, որոյ անուշութեան չարժանին ոչ յուսեքն, և ոչ իւիք խափանին։

12 [illegible]․ այսինքն տեսողական, երկայնամիտ յոյս․ զի ամ միշտ սպասէ դարձին մեր։ Կամ, յերկար յուսացուցիչ․ զի տայ արդարոց ակն ունել խնամոցն իւր, և ոչ յուսահատիլ։ Կամ ըստ հին ըծ․ անզղջանելի խոստումն։ Յայս գլուխ զբազումս յանուանցդ խմա ընծայեալ իւր ներգործաբար, այսինքն ըստ որում ծածկէ, զգեցուցանէ, առողջացուցանէ, յուսացուցանէ, մխիթարէ, և այլն։ [illegible]․ 'ի յաւիտենից տեսող ամենայնի, յորմէ ոչ ծածկին հետաւորքն ժամանակաց և տեղեաց։ Կամ, յառաջախնամ տեսչութիւն, կանխա տնտեսող ամենայնի։

13 [illegible]։ Աստուածդ անուն միշտ կենդանութեան նշանակէ, հակառակ անկենդանի աստուածոց․ և է կենդանարար ամենայնի որ կարգայ ձշմարտութեան։ [illegible]։ Եւք խմանին թէ սկիզբն, և թէ կատարած գործոց․ 'ի գործս իւր յամենայնի՝ 'ի սկսանել և 'ի կատարել՝ չէք ընաւ վրիպումն․ որպէս սկսանի, նոյնպէս 'ի գլուխ տանի զամենայն անարգելաբար։ Նման այսմ յաջորդն, [illegible]․ այսինքն անսխալ յընթացս նախախնամութեան իւրոյ, ոչ խարդախելի յիմեքէ։ Կամ, ըստ հին ըծ․ յառակ, առանց նենգութեան, առ ամենեսին արագ ընթանայ, և չոյս հասանէ։

14 [illegible]։ Խրատ իւր, ուսումն կամ առաջնորդութիւն վարուց՝ է միշտ ուղիղ, անվթանգ, և ոչ երբէ զմարդկան խրատս՝ 'ի վնասակարն բերեալ․ և ոչ երբէ զպատգամս կաց, յորս միշտ խաբէութիւն է։ [illegible]․ պատիւ կամ մեծարանք զոր ընծայեմք իւր, ոչ զրգռէ 'ի նախանձ․ ոչ ոք կարէ նախանձել ընդ փառս իւր՝ բայց սատանայ միայն։ Կամ, 'ի պատուել և 'ի մեծացուցանել իւր զմարդիկ՝ ոչ նախանձի ընդ փառս նոցա, այլ խնդայ, հակառակ աշխարհական իշխանաց՝ ոյք 'ի փառաւորել զոք՝ է երբեք զի ընդ ակամբ հային, և թիւր կասկածանօք նախանձին ընդ նա, որպէս սաւուղ փեսայացուցեալ իւր զդաւիթ, հերձանէր ընդ յաջողուածս նորա։

15 [illegible]։ Ընդարձակ կամ ձարտար 'ի գտանել հնարս, ամենայնի հնարաւոր․ բայց և [illegible], այսինքն ձիգ 'ի կարգել և 'ի պահպանել զզայման իւրաքանչիւր իրաց․ զի թէպէտ և ամենահնար է, այլ ոչ կամի վայրապար փոփոխել զզայման բնութեց։ Հին ըծ․ [illegible] խմանայ՝ անձկալի, փափաքելի․ այլ ոչ յարմարի դիմարաժանեալ բառին [illegible]։ [illegible]։ Յամենայն արարածս կան հետք իւր ըստ նախախնամութեան և ըստ զօրութեան, բայց միայն չկարեն գտանել մի ըստ միոջէ։ [illegible]։ Ճանապարհ իւր 'ի բնականս և 'ի գերբնականս՝ ոչ միայն աչաց չերևի, այլ ոչ և մտաց որպէս արժանն է․ մինչ զի անանց այլազգ եա խորհել երբեմն, և ասել ոչ ուղիղ է ճանապարհ տեառն։

16 [illegible]։ Պատկեր է իւր և սուր, ոչ գծիւք չափելի երբէ զնկարէն պատկերս զգալիս։ Նոյնպէս [illegible]․ քանակութիւն կամ մեծութիւն ոչ սահմանաւ կամ կողապաւ փակեալ, նման նիւթական քանակութեան․ [illegible]․ կերպարան կամ ձև՝ որոյ նման ոչ գոյ, հակառակ զգալի ձևոց՝ որոց նման գտանի միշտ։ Սոյնպէս [illegible]․ գութ կամ ողորմութիւն՝ որոյ հաւասար ոչ է գտանել։ Յայսմանիկ ցուցանել կամի, թէ բազում անուանք և իրք այս-

պսակք ընծային Աստուծոյ, բայց մեծաւ անչափելութեամբ յարարածոց:

17 Խոնարհութիւն [illegible]: Խոնարհութիւն ընծայել ում՝ ոչ ըստ ցածուն համարմանն խմանի՝ զոր մարդ պարտի ունել զանձնէ և նուաստանալ, այլ ասի զիջումն նորա և քաղցրութիւն 'ի խնամել զնուաստս. և յանուկս առնել զոր 'ի մէնջն առ նա արհամարհանս. զի ոչ 'ի մերմէ նուաստութենէ խորշի, և ոչ իւրոց արհամարհանացն լինի անհաշտ վրէժխնդիր: Վասն այսորիկ յիրաւի սքանչելի է, փառաւորելի ամենայն հիացմամբ, որպէս անհասն այն բարձրութիւն զայսքան զիջումն յանձն առնու: [illegible]: Երբեմն բարեկամ սիրելի՝ համբուրիւ ընտանութեան միանալ ընդ մարդիկ. և այն է նշանակ ընդունելոյ զնոսա 'ի փրկութիւնն յաւիտենից:

18 [illegible]: Թողում այլ ես քան զայսոսիկ անուանք կամ ձայնք վայելուչք են քեզ և ընծայելիք ածութեանդ, որովք օրհնեալ ես, գովեալ, և այլն: [illegible] ասէ զանուանս կամ զկոչմունս վերադրեալս ում. վասն զի այն ամենայն ոչ ըստ էութեան նորա ասին, այլ ըստ ազդեցութեանցն զոր ներգործէ 'ի մարդիկ և յամենայն արարածս. կամ են ձայնք յարմարեալք 'ի գործոց ում և 'ի բազմազեղ խնամոցն, այլ և 'ի կատարելութեանցն զոր յարարածս տեսանեմք. ուստի են ձայնք յայտնիչք անկատար ճանաչմանն զոր ունիմք զում, և լինին ազդողք կամ ծանուցողք մեզ ածային կատարելութեանցն: Այս է զոր և 'ի լուծ. 12 ասացաք, թէ բազումք յանուանցդ ընծայլին ում ըստ ներգործութեանցն զոր առնէ առ մարդիկ և առ այլ արարածս:

19 [illegible]: Անվրէպ բաղձանօք և հայցուածովք 'ի մէնջ առաջիկեալ: Կամ, որոյ կամքդ անսուտ է 'ի կատարումն աղաչանաց մերոց: Թողում և զայլ առատութիւս քաղցրութեան քո 'ի մեզ. [illegible]. զորպէս առատութիւն քաղցրութեան քո՝ որով բազմապատիկ անուանց և կոչմանց արժանանաս, յօրինուածք ասացելոյ ճառիս կամ աղօթից յայտնարանեն: Որով, այսինքն ամէն յայտնի խոստովանութիւն քաղցրութեան քո՝ զուարթանաս 'ի փրկել զիս, երբեմն 'ի համեղ կերակրոյ ինչ ախորժանօք ճաշակեալ. ոչ եթէ խնդրել ունայնախօս ձայնիւ նոր փառս քեզ ստանալով, այլ զի զիմբր աղաչանս իմ ասելս պատճառս փրկութեան և պարգևաց մեծաց ում:

20 [illegible]: Այս աւաչման և կարգաւորութեան ողջական աղօթից յօրինեալ է վասն ամենայն հասակի մարդկան, և ըստ աստիճանի բոլոր քրիստոնէից. երբ հաղորդ [illegible], քաջ տեղեակ կարեաց ամենեցուն, որ երբ 'ի պատկերի յանդիմանեալ երևեցուցանէ զկիրս բոլորեցուն: Այն ամենայն կարեաց կցորդ եմ ես, այլ և մասնաւոր երբեմն հասարակաց բերան և թարգման: [illegible]. պարզելի է, առ ժամանակն 'ի նախնի ժամուն, այսինքն առ նուիրեալն յանձապաշտութեան 'ի մանկութեան հասակի. և [illegible]. առ կոչեցեալն յերկրորդ ժամուն [illegible], չափաւոր հասակն պատանութեան կամ երիտասարդութեան: 1 օրին, և հին ըծ. [illegible], ուր եթէ չիցէ վրիպակ, մարթ է իմանալ՝ 'ի չափն իւր վարեալ կամ հասեալ բանն, ասախքն. այլ օրին. [illegible], յայտնի վրիպակ: Զասեալն [illegible] կոչեցեալ, մարթ է պարզել ես, երկրորդ հասակ կոչեցեալն: [illegible] 'ի [illegible], առ այն որ 'ի կատարածի աւուրն՝ յերեկոյին, այսինքն 'ի ծերութեան [illegible] 'ի մեջակութեան ում: 2 օրին. և հին ըծ. [illegible]: Այսպէս առ խորհրդանշիւր հասակ կարգեալ են բանք աղօթից՝ առ մանկունս, առ երիտասարդս, առ ծերացեալս, յայտնելով զիւրաքանչիւր հասակի զկիրս և զախտս: Իսկ 'ի յաջորդ

բանն չարադատին այնոցիկ սահմանք աշխարհական և եկեղեցական կարգի։

21 [illegible]։ Այն որ ինքն զանձն յարգէ, առ անձնահաճ ամբարտաւանն, որպիսի փարիսեցին էր։ Զ որին. և հին ըծ. [illegible], բարձրամտեալ յիւր սրբութենէ. որպէս թէ ինքն միայն գոյ, կամ յինքենէ ունիցի զամենայն։ Ա. [illegible]. որ զախտալին ձանուչելով զասի զանձն, որպէս մարդասպան։ մի որին. և հին ըծ. [illegible]։ Ա. [illegible], առ ազատ. և [illegible], առ երեւելի աշխարհաւ և գաւառաւ։

22 [illegible]։ Աստանօր 'ի վերջահայով տրական փոխեն բառքս, որ յանգեալն եղան 'ի նախդրիւ տրական. [illegible], որք են 'ի չափաւոր սահմանի բառ ազգի. բառ իշխանութեն, կամ բառ հարստութեան. և [illegible], իշխանաւորաց՝ ազնուականաց բառ ազգի և բառ իշխանութեն. [illegible], որք ազգաւ և ծննդեամբ գեղեցիկք են. և [illegible], որք սատր և ծննդեամբ քաջատոհմիկք։ [illegible], այսինքն վեհ կամ 'ի բարձր աստանի եղելոց։ Զ որին. [illegible], որ չյարմարի աւելորդ. զի այս բառ զիմացի [illegible]. իսկ [illegible]՝ բառ համանիշ քննութեան է յորմէ աշակերտ [illegible] բարձին. այսինքն եալ, եղբ, եալք, եղոց, և նշանակէ՝ եղելոց, այնոցիկ որք են գերագոյք, և այլն. [illegible], եղելոց 'ի կարգ մեծաւորաց կամ հեծելոց, որք և պատուաւորք են, և առ եւրոպացիս Դասպետք ասին. և [illegible]. այնոցիկ որք չեն գրեալ յազնուութի զինուորական, զոր յանորէն՝ [illegible] ասեն, և այնր քաղաքայնութիւն է [illegible] բառն, այսինքն ռամիկ, հասարակ ժողովրդական. և բառ յանականին գիմաբանանի առ պատուաւոր կամ պաշտօնեայ։ [illegible]. որք բնակութեամբ 'ի քաղաքս կան, և պարապին 'ի քաղաքային արհեստս. և [illegible], որ յագարակս բնակեն և մնանին, և 'ի վաստակս ագարակային սնանին։ [illegible], զառաջ կամ խորախ թագաւորաց, որք ձախանան 'ի վերայ մարդկան, այլ նկրտյ անկեալ են կարեաց, և կարօտք են ազօթից իբրև զայլ մարդիկ. որք և 'ի սանձս ոչ ընթանեալք են, բառ որում վանն նորոգանդիութեան սատյեալ է. ուրեք կարեն 'ի քինքս քո, և այլն. (Կ. Թագ. ԺԲ. 24.) Զնոյ սանձ 'ի բերան դնի. այլ թագաւորաց 'ի սիրան արկանէ տծ. բառ բանին առակ. « Սիրտ թագաւորի 'ի ձեռն այ »։ Մինչև յայս զաշխարհաբար աշխարհական կարգի յիշատակեաց առաքելաւորն. դհեա այսր գայ եկեղեցականն։

23 [illegible]. այսինքն առաքելոցն, որոց գործ է զդասատութիւն պաշտել 'ի պատարագի. [illegible], եպիսկոպոսաց՝ որք այցելուք և գլուխ են եկեղեցւոյ. [illegible], գաղտաբանք 'ի փառս սրբութեն, որում ցոյցք են արտաքին զարդք զգեստուն. [illegible], պատրիարգաց՝ որք նախապատիւք են յեկեղեցւոջ, [illegible], զօրութի չորրորդ և ձեռնադրութեն բաշխողք, կամ նախըրեայք այս գաղթս ասելով 'ի պաշտպանութի հաւնի իւրեանց։ Զերոց եկեղեցական դասուն յիշատակէ բանիւս՝ սկսեալ 'ի փոքրագունէն. որք են միայնակեացք կամ միանձանք, առաքելոյ, քահանայ, եպիսկոպոս, և պատրիարգ։ Աստ [illegible], ամենեցուն ասյա 'ի ձե աղօթից մատակարարեալ զխնամածս, ունելով՝ [illegible], այսինքն արգարոց կամ զինոց՝ զի աղօթեսցեն վասն իմ, կամ զի ունիցին առ ձեան զինդրուածս աղօթից. և [illegible], մեղուցելոց և ազխտալոց, զի ունիցին զեզգածեալ աղօթելոյ։ Զայսպիսի ձեռնարկ ոչ եթէ յիւ ազատանձնեալ արարի. առէ, այլ [illegible], վասահացեալ 'ի զօրութի հայեցող սրբոց, զիանն

լով վասն իմ՝ նախ կարգել մաղթանս պէտպէս, և ապա վասն այլոց ա-
մենեցուն ։ Նախկնայն զեկուցումն կայ 'ի բանիս, իբր ասել՝ ոչ եթէ նոր
առաջնան աղօթից կամի աւանդել, այլ թէ յաղօթել մերում զոր խղձս,
զոր սրբասէս արժան է զարթուցանել 'ի սրտի ։ քանզի նաև յաղօ-
թելն լոկ զանէրևութական զՀայր մերն՝ կարող է ոք, և պարտ ևս զնոյն
զզանազան խղձս բղխել 'ի սրտէ ։

24 Ըստ... բարեհաճութեան ։ Խնդրել աղօթիւք առաջի նորա շնորհ կամ հա-
ճի աղօթից, կամ հաստատութիւն սրտի՝ հաճելի և ախորժելի քեզ ։

25 Հետ...թեան նորին ։ Նորա հաստատութիւն՝ ընդ ․․․ , ընդ իս, կամ ընդ
իմ աղօթիցս քեզ ․․․ , մատուցին իբրև խունկ անուշից ։

26 Ընդ ․․․ ։ Յարմար ախորժանօք 'ի բերան առնել մատուցա-
նէ որ զայս աղբանակն բանիւս, ․․․ , շնորհ լուսաւորութեան
մտաց հանգիցէ, բնակեսցէ 'ի մտաւորութեան, քաղցրութեան աղօթքս 'ի
միտս աղօթաւորին, և ոչ լոկ 'ի շրթունսն ։

27 Եթէ ․․․ ։ Եթէ զխնկեսցին յետ իմ բարեպաշտք մատչել
առ քեզ այս աղօթիւք, ․․․ , յինքեանեւեց զայն կենդանիս՝
ընկալ և զիս զմեղաւորս ընդ նոսին ։

28 ․․․ ։ Եթէ յասացին արտասուք պղտութեամբ
նախկնեալ բղխեսցեն յայսոց աղօթողացն, յիս ևս ցողեսցին ։

29 Եթէ ․․․ ։ Եթէ աղօթական բանս հաճոյ լիցի, և արասցէ 'ի
փրկութիւն հազարպատկերեացն ․․․ երկից զգձման, ինձ ևս հասանիցեն ։

30 Եւ ․․․ ։ Մի օրին ․ ընդ ․․․ ․ այլ՝ ընդ ․․․ ։

31 Եթէ ․․․ ։ Յարմար մաքուր ձեռն պաշտօնէից եկեղեցւոյ
խունկս մատուցանէ քեզ 'ի պատարագի կամ 'ի ժամակարգութեան,
միասցի ընդ այն նաև իմ ձայնս, և խնդրուածք այլոց ․ քանզի և խըն-
կարկութեն նշանակ է ընծայման աղօթից ․ ըստ բանին ( յայտն ․ Ե ․ 8 ․ )
բուրվառս լի խնկով, որ է աղօթք սրբոց ։

32 ․․․ ։ Զ օրին ․ ․․․ ։ Եթէ այլ ևս բազմա-
զան խղձք յազգմանէ շնորհաց քոց ծնանիցին յայլս, աղաչեմ զի և ինձ
լիցի այն պարգևեալ ․ ․․․ ․ մի օրին ․ ․․․ ։

33 ․․․ ։ Եթէ այս անձնաւոր և բանական պատարագս
սրտից կամ հաճոյ լիցի քեզ, կամ հաճիցիս ըստ անտի առնել, ․․․
․․․ , այլոց նախնեացն ևս պատարագ կեց խնամս, կամ փոխանակ իմ
ընծայեսցի քեզ ․ Նոյն կամի, այս բանաւոր պատարագ թէ և հաճոյ-
ացի քեզ, բայց միայնակ անկար է և զուգմարեալ ․ ուստի աղաչեմ
խառնել միացուցանել ընդ այնմ և զպատարագ արդարոցն առաջնոց,
կամ որք նախ քան զիս ընկալան պարգևս աղօթից ։

34 Եթէ ․․․ ։ Եթէ աշխարհական վատահութեան կամ ապաշխա-
րութեան որ 'ի ձեռն բարեգործութեանց, կործանեսցի մեղք, ․․․
․․․ , աղօթիւքս իբրև քաղցրաձայն յարմարեալք աջով քո՝ նորոգեա-
ցի միասնեալ ։

35 Յ․․․ ։ Եթէ լոյս յաւայն լուս այնմ որ հայի 'ի բարի
գործս մեր, կորիցի սուրբ մեղաց, վերանին կցեսցի զգլխական
աղօթիւքս ։

36 ․․․ ։ Եթէ մահարեր հալեկան ․․․ կամ չար ա-
նակաւթիւն պաշարեսցէ զոք, ․․․ 'ի յայս կենաց զօրասցի ։

37 ․․․ ։ Եթէ որ կորուսեալ անքաւելի պարտեաց
կամ մեղաց՝ իցէ իբր այժմէն ընկղմեալ յանդունդս դժոխոց, այսու
աղօթիւք իբրև կարթիւ ելցէ 'ի լոյս յաւուր քաւութեան ։

38 ․․․ , այսինքն խարեւթեանց ․ մի օրին ․ և հին ըծ ․
․․․ , այսինքն արդարութեանց ․ Եթէ որ զաղանի գործովք մեղաց թըմ-

բեալ կայ պատրանօք, և իբր յորոգայթի պաշարեալ, զօրասցի դարձեալ յողորմութիւն քո ապաւինեալ:

39 Պահպանութիւն հրահանգութեան: Եթէ ամրութիւն կամ պատսպարանն ապաւինութեան թուլանայցէ, որով խնամի երկեւղն ոչ, կամ հաւատք հաստատուն, կամ ջանք բարեգործութեան, ձեռն քո տէր՝ հաստատեսցէ զնա դարձեալ աղօթիցս նպաստիւք:

40 Ամօթ 'ի ղեկաւորութենէ: Եթէ որ վասն խորոյ անհոգութեան կամ ստահակութեան զուրկ և թողեալ մնայցէ 'ի գթութենէ պահպանող հրեշտակացն: Կամ, եթէ որ անփոյթ անտես թողեալ կայ 'ի տեսչութենէ առաջնորդաց և հոգևոր վերակացուաց, թափառեալ իբրև ոչխար՝ որոյ ոչ գոյ հովիւ, այնպիսին ակնկալցի գտանելոյ քաջ հովուիդ, և առ 'ի քէն պահպանութեանն:

41 Սովորական գիտային: Եթէ մարմնական ախտ տենդի, լուծութեան և նմանեաց խռովեսցէ զոք: Կամ, տագնապ խղճմտութեան, թերահաւատութեան, կամ հայհոյութեան նեղեսցէ զոք, զգաստասցի կամ զօրասցի նշանաւ աղօթիցս՝ գտանելով զզօրութիւն սրբոյ խաչիդ:

42 Անօրէնութեան ճշմարիտ: Եթէ արտաքին փորձանք մարմնոյ, հալածանաց, և այլն, հարկանեն զմարդ յերկրայինն ծովու, զեկաւ աղօթիցս 'ի քեզ ամրասցի. որպէս յորժամ 'ի ծովուն գալիլեայ յարեաւ յանկարծակի մրրիկ, և զնաւակ աշակերտացն տագնապէր. և նոքա 'ի քեզ աղօթիւք ապաստանեալ հանդարտեցան: Զոր ինչ մաղթէ սուրբ վարդապետն յայս գլուխ յաղագս զօրութեան աղօթիցս, տեսանեմք ընդունելի եղեալ առ նա 'ի բազմապատիկ ներգործութիւնսն որովք դարման գտանեն բարեպաշտօնքն յախտս մարմնականս և կամ հոգեկանս: Սակայն արժան է աղօթականին՝ մի առ այլս ևեթ հայեցուցանել զխնդիրն, որպէս թէ այլք իցեն ընդունակ յայս կամ յայն կարիս, այլ տաւեալ յանձն նկատել՝ և իւր վասն հայցել նախ զբժշկութիւն ախտին, որով ապա և վասն այլոցն լսելի եղիցի:

## ԲԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ քանզի սկիզբն կալայ խօսել ընդ քեզ՝ որ 'ի ձեռին ունիս զշունչ կենդանութեան հողեղէս բազմամեղի, յիրաւի սարսեալ դողացեալ տագնապաւ մեծաւ յանէտ երկնչիմ. վասն զի ահաւոր և անտանելի է[1] 'ի սահմանէ բանի փոխչելի յիշատակ անձնօրապրելի անաչառդ քո ատենի՝ 'ի կշտամբումն իմ պարտաւորի՝ արարիչ երկնի և երկրի: Եւ զի և[2] չիք իսկ բժշկութիւն բազմախտամիդ սաստկութեան վիրացս անողջանալի, խայթ-

մանց խածուածոց մահաբերին բերանոյ ժանեաց՝ որսա-
գլին զանձն իմ 'ի կորուստ: Մանաւանդ զի [3] ոչ գոյ
պատասխանի, ըստ առակողին, յաւուր պատերազմի, և
ոչ բանիւ խրատանալի, և ոչ վերարկուաւ պատսպարե-
լի, և ոչ գլխակօք կեղծաւորելի. ոչ առ երեսս բանիւք
մատչելի, և ոչ կերպարանօք երբեք խաբելի, ոչ յօ-
դուածովք բանից սատելի, ոչ արտագմամբ ոտից փախչե-
լի, ոչ թիկանց դարձուցանելի, [4] ոչ գլխոց ընդ երկիր
մածուցանելի, ոչ բերանով ընդ հող հատանելի, ոչ 'ի
խորս երկրի ղօղելի: Քանզի մերկ են քեզ ծածկեալքն,
և հրապարակեալ են աներևոյթքն. արդարութիւն իմ
նուաղեալ և խոպան ունայնացեալ. մեղանքն յայտնե-
ցեալ և յաւէտ առաւելեալ. չարիքն իմ ճոխացեալ,
և ես կորստական. [5] իրաւանցն կշիռ պակասեալ, և անի-
րաւութիւնն խիկոյն զօրացեալ. բարեացն բերք հա-
լեալ, և սխալմունքն արձանացեալ. աւանդն կորու-
սեալ, և պատուիրքն այժմէն գտեալ. մահուն մուր-
հակ գծեալ, և աւետեացն կտակ եղծեալ: [6] Բարերարն
տխրեցեալ, և բանսարկուն ուրախացեալ. հրեշտակաց
գունդն թախծեալ, և սատանայ [7] խնծղիւք պարեալ.
վերնական զօրքն ողբացեալ, և սատանայինքն բերկրե-
ցեալ. սպանողին մթերք լցեալ, և պահողին գանձն
կապտեալ. օտարին կողմն կանգնեալ, և ստացողին պար-
գև մատնեալ. հաստողին ձիր մոռացեալ, և կորուսչին
հաճոյքն պահեալ. [8] երախտիք փրկչին հեղգնեալ, և բե-
լիար զուարթացեալ. կենացն աղբիւր փակեալ, և [9] դո-
ռողին ժանգ ժանգիս ժամանեալ:

Բ. Եւ արդ ո՞չ ապաքէն [10] ըղձալի էր, ըստ գրոյն
կանխութեան նախաձայնելոյ, ոչ ստեղծանիլն երբեք
յարգանդի և ոչ նկարիլն 'ի յորովայնի, ոչ 'ի ծնունդ
յառաջագայիլ և ոչ 'ի լոյս կենաց հասանիլ, ոչ 'ի թիւս
մարդկան գրիլ և ոչ 'ի հասակ աճման ամբառնալ, ոչ
'ի պատկեր գեղոյ զարդարիլ և ոչ բանիւ հանդերձա-
ւորիլ, քան ընդ այսպիսեաց սատակադունից և սարսա-
փելեաց ըմբռնիլ պարտուց, զոր և ոչ վիմաց կարծրու-
թիւն բերէ, թող թէ մարմնոյ լուծականութիւն:

Գ. Եւ արդ [11] տուր բարեգութ՝ աղաչեմ զքեզ,
տուր ինձ ողորմութիւն, որ զայսոսիկ դու ինքնին քե-
զէն քոյովդ բանիւ մեզ սահմանեցեր առնել, թէ

տուք զայդ նուէր յանուն փրկութեան ձերոյ ինձ, և սուրբ եղերուք. զի զողորմութիւն կամիմ, և ոչ զպատարագ։ Նա բարձրացիր վերստին խնկեալ այսր յիշատակս, որ ունիս զամենայն, և ՚ի քէն է ամենայն, և քեզ փառք յամենեցունց. ամէն։

---

1 Ի ՍԱՀՄԱՆՔ ԲԱՆԻ։ Փախչի ՚ի սահմանէ բանի, այսինքն անցանէ քան զբան, անասելի է յիշատակ անզերծանելի դատաստանին, յորում իմ պարտիքս կշտամբելոցք են։

2 ՉԻՔ ԻՄ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ։ Եթէ յիշատակ ահագին դատաստանին ինքնին սարսափելի է, ևս առաւել այնու զի և խոց սաստիկ վիրաց հոգւոյս՝ զոր ՚ի խածմանէ կարծիչ դիւին ընկալայ, չիք բժշկութիւն բնաւորապէս, կամ ըստ հասարակ կարգի։

3 ՈՉ ԳՈՅ ԴԱՐՄԱՆԻ։ Քաղուածոյն է բանս (Ը. 8.) ուր դնի ԴԱՐՄԱՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ, այսինքն բան հաշտութեան կամ ողջութեան. և աստ առեալ է փոխանակ արդարացուցիչ պատասխանւոյ, կամ անմեղադրելի լինելոյ։ Մանաւանդ այնու առաւել սարսափելի է, ասէ, դատաստանին ժամանակ, զի նաև ՚ի մարմնական պատերազմի յորժամ յետ բանակցաց լինելոյ երկուց կողմանց ոչ յաջողի հաշտութիւն, և ՚ի մարտ գործեալ ձեռն արկանեն, չիք այնուհետև ընդունել պատգամաւորութիւն։ Այնպէս ՚ի հասանել քոյդ դատողութեան՝ որք միանգամ չեն նախ հաշտեալ ապաշխարութեամբ, ոչ այլ գտանեն ժամ պատասխանւոյ։ Եւ ոչ ԲԱՆԻ, թէ և լինէր նոյն ժամանակ, բայց չունին բան արդարանալոյ, պապանձեալ մնան։ Ոչ վերարկու իւիք գոյ ծածկել. ոչ ՏԵՍԱԿԻՑ, պատրուակք երեսաց այլակերպել։ 2 օրին. ՏԵՍՈՅ։

4 ՈՉ ՏԵՍՈՅ ԸՍՏ ԵՐԵՍԻ։ 2 օրին. չիք ՏԵՍՈՅ։ ոչ է հնար զդէմս յերկիր մածուցանել. և ոչ զերեսն ՚ի հող առնուլ, և այլն։

5 ԻՐԱՒԱՆՑ ԿՇԻՌ։ Կշիռ կամ չափ իրաւանց զոր պարտ էր հատուցանել ինձ, կամ իրաւանց արդար գործոյն՝ պակասեալ է։ Ակնարկէ ՚ի գրուած ձեռին երևեալ Բաղտասարայ արքային, զոր և ընթերցաւ Դանիէլ մարգարէ. (Ե. 27.) «Կշռեցաւ ՚ի կշիռս, և գտաւ պակասեալ»։ Նոյնպէս առ իս պակասեցաւ, ասէ, կողմն արդար գործոց կամ բարեգործութեան. և հակառակ կողմն անիրաւ գործոց զօրացաւ, ծանրացաւ։ ԲԱՐԵԱՑՆ ԲԱՐՔ. եթէ ունէի սակաւ արդիւնս բարեաց գործոց, հալեցաւ, ունայնացաւ. և փոխանակ՝ ախտական գործք իմ կամ վերջինք յոգնեցան, հաստատեցան։

6 ԲԱՐԵՐԱՐՆ ՓՐԿԻՉԷՆ։ Այս եղանակ առոգանութեան առեալ է ՚ի բանից գրոց, որովք ասի՝ զցնծալ ինձ, հոգալ, և այլն։ Այսպէս թէ ոչ՝ տրտմութիւն ընծայել ինձ և հրեշտակաց որոց՝ որք յերանութեան են, իմանի անյատկապէս ըստ պատճառին ևեթ, այսինքն է՝ զի մեղք և կորուստ մարդկան պատճառս տան ինձ և հրեշտակաց տրտմելոյ, ողբալոյ՝ եթէ հնար էր։ Այնպէս ըստ պատճառին իմանի ուրախութիւն սատանայի և դիւաց, որոց՝ կորստեամբ մարդկան ընծայի նիւթ ուրախութեան, այլ ոչ ուրախութիւն յառաջ, կալով նոյն ՚ի դատապարտութեան։ տես և Կ. ԼԾ. 30։

7 ԽՆԴՈՒԹԻՒՆՔ ԴԱՐՁԱՒ։ Մեկնի՝ խնդութիւնք. հրճուանք։ 2 օրին. և հին ըն. ԽՆԴՈՒԹԻՒՆ. և այլուր որոնելի է ԽՆԴԻՒ։

8 Երախայք փրկչին։ Ի պատճառս անպիտան վարուց քրիստոնէին՝ անհամար երախայք փրկչին լինին խոր 'ի ծոցը · որպէս թէ բնական զսարթացեալ ընդ խելոյն պաշտօնէից, 'ի կատակման ամենայն զկատ_ տակս քնի փրկչին, ասելով · զարիւն քո հեղեր 'ի փրկանս մարդոյն, և ոչ փրկեցաւ, այլ ինձ տասեալ ծառայեաց՝ որ ծարաւի էի ա_ րեան նորա ։ Այսպէս՝ մեզաւոր քրիստոնեայ խոյատակէ զքո փրկիչ յիւրն կողմանէ · և զինչ քան զայս տասեալ արտասւելի և ողբալի ։

9 Գ[illegible]։ Փոխանակ կենաց աղբերն՝ ժանգն ստամոքսի, այսինքն Թոյնն համեալ է առ խո ։ 2 օրին · և հին ըծ · ծ[illegible]․ և մեկ_ նի՝ ժառանգութեն գառաղին ստամոքսի, որ է հոյր գեհեննին ։ Սակայն ծ[illegible] ասել՝ յարմար եա է զիմադրեալ բանին [illegible] · և Թուի անկար_ կել 'ի բանն յայսմ · (Ժբ · 15 ·) ուր ասի՝ վիշապին ստամոքսի հեղուլ 'ի բերանոյ իւրմէ ջուր հեղձուցիչ, որ խմանի Թունաւոր չարութիւն նորա ։ Ընդ ոչ կարայ համանել Թոյն նորա զհետ կնոջն, բայց առ իս ժամանեաց՝ ասէ ։

10 Ընկոյզ եւ չոր [illegible]։ Բազում են աստուածք 'ի գիրս՝ անի_ ծանել զոր ծննդեան, կամ ընարելի ասել զոչ ծնանելն, և այլն · (յոբ · գ · 1 ։ ժողով · դ · 3 · զ · 3 · 4 ։ երեմ · ի · 14 ·) զոր և 'ի կիր ածեա_ ալ սուրբ վարդապետս, ոչ եԹէ պարզապար անիծանելով կամ ապախտ անելով զմարդկային կեանս սակս մարդկային Թշուառութեց, այլ բատ որում ապաշաւանաց մեղաց, և արժանի կորստեան լինի · զի լաւ է ոչ գոլ ընաւ, քան չարաչար գոլ հակառակ նմ · որպէս և ասէրն առաց վասն յուդայի (մատ · իզ · 24 ·) և աստ ասի զինի՝ Թէ լաւ էր ոչ գոլ յաչխարհ, քան պարտաւոր լինել այնպիսի ստորիկ տանջանաց, զոր և ոչ կարծր վէմք կարեն տանել. Թող Թէ ակար մարմինք ։ Այսու մոքք լաւ եա էր ոչ 'ի ծնունդ յառաջադայել աւէ, և ոչ 'ի [illegible] ծ_ նան · աստ փոխադրութի է հոլովոյ, և զնելի էր՝ յածնումն հասակի ամ_ բառնալ · որպէս և յաջորդն, ոչ 'ի [illegible], փոխանակ, ոչ 'ի գեղ պատկերի կամ գիմաց զարդարիլ ։ և ոչ [illegible] · ոչ եըա_ նել 'ի լեզու, ոչ 'ի խօսս զարգանալ ։

11 Տուր ինձ ողորմութիւն ։ Դու խնդրեին առաջեր, տուք ողորմութի, և ամենայն ինչ ձեր սուրբ է ։ Ահա քոյին բանիւ զքեզ աղաչեմ և Թա_ խանձեմ, տուր ինձ զողորմութի քո, որպէս զի ամենայն ինչ զոր 'ի քէն ունիմք՝ սուրբ եղիցի 'ի մեզ · քո երախայք, քո անուն, քո փառք որ 'ի վերայ մեր հասեալ են, սուրբ եղիցին, մաքրեսցի յանձինս մեր ամենայն զոր մեք մերովքս յանցանօք աղտեղեցաք ։ Արդ [illegible] նո_ րոգ ողորմութե, որպէս և յառաջնումն բարձրացեալ ես · կամ վերլա_ ուին [illegible], օրհնաբանեալ, գովեալ [illegible], յիշատակաւ քոյ_ ոյ բանից և ողորմութեանց, որպէս և առաջեր, զողորմութիւն կամիմ քան Թէ զպատարագ ։ ԵԹէ 'ի մէնջ յաղքատաց և 'ի չարակամաց զո_ ղորմելն պահանջեցեր · որչափ եա տասեալցիս դու յողորմութեան · որ [illegible] · զամենայն պարգևս ունիս, և զամենայն անսակ ողոր_ մելոյ՝ ոչ միայն արժանաւորաց, այլ և անարժանից · և [illegible] [illegible], 'ի քումմէ բարութենէ եկանէ ամենայն բարի · մինչ զի եԹէ դու փակիցես զգուռն ողորմութեան, յայլմէ գտանել զայն՝ ոչ գոյ ։

# ԲԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն ազերս մաղթանաց բանի։*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ ես երկրածինս մարդ՝ կենցաղականաւ՝ անկայուն գոյիւ զբաղեալ, և յիմարութեամբ պատրողականաւ զինեալս յիմարեալ, որ ամենայնիւ ստեմ, և ոչ միով իւիք ճշմարտեմ։ Քանզի [2] որովք զխօսք մեղադրեցելովք նշանակօք աղաղակեցելովք՝ յանդգնեցայց լինել յանդիման քում դատաստանիդ, ով իրաւադատ ահաւոր, անճառ, անպատում, հզօր Աստուած բոլորից։ Քանզի գասեալ ստատոյն 'ի սոյն զապերախտութիւն մեղուցեալ անձինս առ քում երախտիս, ցուցից զի-րաւունս քո միշտ զօրացեալ և զանիրաւութիւնս իմ յաւէտ պարտաւորեալ։ Որ արարեր զիս 'ի քո պատկեր պանծալի՝ 'ի ձեռն մեծիդ տպաւորութեան, զտկարս օժանդակելով։

Բ. Զարդարեցեր բանիւ, փայլեցուցեր փչմամբ, մտօք ճոխացուցեր, իմաստիւք աճեցուցեր, հանճարով հաստատեցեր, 'ի չնչականացն որոշեցեր, հոգւով իմա-նալեաւ խառնեցեր, [3] իշխանականին գոյիւ պճնեցեր, ծնար հայրաբար, սնուցեր դայեկաբար, տածեր ստա-ցողաբար, տնկեցեր զամպարիշտս 'ի քում գութի, ջրովն կենաց ոռոգեցեր, աւազանին ցօղով մաքրեցեր, կենացն վտակաւ արմատացուցեր, հացիւդ երկնայնով ջամբեցեր, ծայլին արեամբդ արբուցեր, անհպիցն և անհասանելեացն ընտանեցուցեր, [4] զաչս երկրեղէն 'ի քեզ համարձակեցեր, լուսովդ փառաց վերածածկե-ցեր, զհողանիւթ մատունս անմաքուր ձեռացս 'ի քեզ մատուցեր, զմխիլս անարգ մահացու՝ իբր փնջալ լու-սոյ յարգեցեր, [5] զհայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մար-դասիրաբար և անարժանիս իմոյ անձին կոչեցեր։ Եւ կոչեր զսերմանս լցեալ նմանութեամբ՝ 'ի ժառանգա-կիցն կարգալ զքեզ, ոչ կշտամբեցեր զյանդգնեալս 'ի

քո կցորդութիւն, ոչ ստուերացուցեր զտեսիլ աչացս 'ի քում անպարկութիւն, ոչ արգելման կապանաց ընդ մահապարտացն տարագրեցեր, ոչ խորտակեցեր զգաստակ բազկիս՝ որ անմոքրապէս առ քեզ համբառնայր, ոչ մատնեցեր զոտս խնոյ մատանցս 'ի շօշափելն զգանդ կենաց, [6] ոչ պատեցին զինև մառախուղք 'ի ձօնելն ըզքեզ՝ ահաւոր, ոչ փշրեցեր զպարս ատամանցս յըմբոշխնելն զքեզ՝ անապահմանելի, ոչ գնացեր բարկութեամբ խոտորնակ՝ [7] խոտորնակի ընդ քեզ հեռանալս, իբր ընդ վրիպեալ տանն Իսրայելի, ոչ խայտառակեցեր 'ի հարսնարանից զանարժանս քում պարերգութեան, ոչ 'ի գձուձ հանդերձին տեսիլ զանօրինեալս յանդիմանեցեր, ոչ կապանօք ձեռացս և ոտից յարտաքին խաւարն հալածեցեր։

Գ. Այս ամենայն մասունս բարեաց և զներելոյդ երկայնմտութիւն ընկալեալ 'ի քէն՝ բարերար, օրհնեալ և յամենայնի միշտ երկայնամիտ, [8] փոխադրեցի զնասակարս պարտեաց՝ անթիւս և բազմօրինակ անօրէնութիւնս, մարմնականաց և անձնականաց՝ ամենակեր բազմածուփ խորհրդոց յուզմանց երկրաքարշութեանց։ Այսպիսի քեզ, տէր իմ և տէր, ընդ այսքանեաց բարեաց փոխաբերեցի. զայս քեզ ինձէն հատուցի չարիս, ըստ մախխեան յանդիմանութեանն առակի, մնացեալ զիմաստութիւն և սիրողս յիմարութե։ Այսց բարեաց [9] երախտեաց կաճառս՝ ընդունայնութեան գնացիւք՝ չարաչար ունայնացուցի. զայս լուսաւորութիւն շնորհաց անճառից 'ի բարձրելոյդ խնամոց բարգեցեալ՝ մրրկաւն խելագարութեան ցնդեցի։ Ու թէպէտ բազում անգամ ծանուցար կարկառմամբ ձեռին քո այցելութեան ձգել զիս առ քեզ, ոչ հաւանեցայ ըստ մարգարէին որ զԻսրայէլէ ամբաստանութե. և թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյանալ, և ոչ ընդ այսմ սահմանաւ ուխտին փակեցայ, այլ դարձեալ զնոյն նիւթեցի չարիս, անդստին [10] յաձն առաջին մանկաց, փշոցն մեղաց հերկեցի զանդաստան սրտիս յորմանն արդիւնաւորութիւն։ [11] Եւ իս եղանեն աւանդք աստուածարեալ սուրբ մարգարէիցն. քանզի մնացեր յինէն խաղողոյ, և ես ընդ այնորիկ փուշ շառաւիղեցի. դարձայ յանախորժ դառնութիւն պըտ-

զդ՝ այգիս օտարացեալ. բուռն հարի զանհաստատ հող-
մոյ. որովք միշտ տատանեալ այսր անդր տարաբերիմ.
ըստ ձայնի երանելոյն Յոբայ ընդ ճանապարհ իմն ան-
դարձ գնացի. ՚ի վերայ աւաղոյ շինուածս յիմարութե՟
կառուցի ։ [12] Այնատարր հետովք խաբեցայ կենացն
անձկալեաց հասանել. փակեցի ինձէն զելիցն ուղեորու-
թիւն. բացի կամաւ զկորստեան խորխորատն ։ Եցի
զպատուհան լսելեացս իմոյ առ բանից կենաց ընդունե-
լութիւն. կափուցի զաչաց հոգւոյս հայեցուած առ ՚ի
զկենացն դէմ նկատել ։ Ոչ ընդոստեայ ՚ի թմրութեց
քնմանէ մնացս ՚ի պատգամ փողոյդ ահաւորութեան.
ոչ զգաստացայ ՚ի բողոք գուժի հրափորձական աւուրն
ընտրութեան. ոչ երբեք զարթեայ ՚ի նիրհմանէ քնոյն
մահացուի, որ ՚ի կորուստն կարապետէ ։ [13] Ոչ ետու
հանգիստ քոյ հոգւոյդ ՚ի մարմնեղէնս տաղաւարի. ոչ
ընդ բնութիւն շնչոյս խառնեցի զմասն շնորհաց քումդ
պարգեւի. իմոյս ձեռօք կոչեցի կորուստ, ըստ առակողին,
զհոգիս կենդանի մահացուցանել ։

Դ. Այլ զի՞նչ է ինձ սակաւս եւ նուաղագոյնս յօդել [14]
սահմանս կսկծելիս չարաբերականս, մինչ անցեալ է
ըստ քանակութիւն եւ վրիպեալ ըստ բժշկութի ։ Ո՞րդ
քո է ընձեռել կեանս հոգւոյ մեռելոյս, եւ անախտակա-
լութեամբ մաքրել առ այցելութիւն դատապարտելոյս
որդի ա՟յ կենդանւոյ. քեզ փառք յամենայնի. ամէն ։

---

1 ԱՆՀԱՍՏԱՏ ՀՈՂՈՅ ։ Գողով եա մարդ երկրածին, ոչ միայն անհաս-տատ իրօք աշխարհի զբաղիմ, այլ և յիմարութ՟ իբրև արբեցուցիչ գինւով մոլութեան եղեալ, [illegible]. յորժամ ըստ յիմարութեն խօսիմ կամ գտանիմ, միշտ սասեմ և սխալեմ. արբեալն մարք՝ ոչ երբեք առ է զճշմարիտն, այլ ընդ հակառակն՝ մարմնով արբեալն խօսի բա-զում անգամ զճշմարիտն, թէպէտ առանց զգալոյ և անընտրողաբար ։ Այսպէս ըստ յիմարութեն խմանի ասելն միշտ. այլ ոչ եթէ առհա-սարակ յամենայն բանս. ապա թէ ոչ՝ նաև յասելն զայս բան՝ սուտ-խօս լինէր ։

2 ՈՐՈՎՔ ՄԻՇՏ ։ Սակայն աՀա զգաստացեալ այժմ քո շնորհօք ՚ի թմրութէս, ճանաչեմ և խոստովան լինիմ, թէ որպիսի՞ գիմօք, որո՛վ երեսօք ունելով եա զվերագրեալ նշանակս կամ ցոյցս պարաւելիս, յանդիման լինել իշխեցեմ քում դատաստանիդ. մանաւանդ յորժամ զիմ ապերախտութիւնս գնիցեմ հանդէպ անբաւ երախտեաց քոց ։ Քանզի արարեր զիս ըստ պատկերի պատկերիդ քո [illegible]. այսինքն զնմանութիւն մեծիդ ա՟յ տպաւորելով յիս. կամ զու վեհդ, ամենապատուական քեզէն գծագրելով, և ոչ հրեշտակաց ձե-

ասք · Դիմօք օժանդակելով · այսինքն զիս զդիտաւ անկարողս՝ զանյարմարս 'ի քոյ նմանութենէդ, դու քեզէն յարմարելով: Իսկ թէ իւ արարաւ մարդ 'ի պատկեր այ, թէ բնութբ, և թէ ըստ շնորհի, բացայայտի յաջորդդքն:

3 Խնկաւորեալն Փայտ : Անձնիշխան կարողութբ զարդարեցեր, որով մարդ՝ տէր է գործոց իւրոց:

4 Զօր երկնային : Զերկրաւոր ազս իմ համարձակեցուցեր հոյել 'ի քեզ 'ի խորհրդեան սեղանոյ: մի օրին · Դուռ, այսինքն զաջ ձեռն իմ: Զձեռն իմ : Թուի յանձն իւր յարմարել զգրեալն (Բ · մակ · ա · 20 ·) ուր պատմի յաղագս հրոյ տաճարին՝ թէ քահանայք նախ քան զկործանումն թագուցին յանջրդի ջրհորի, և յետ ժամանակաց հանեալ զայն իբրև ջուր թանձրացեալ, և արկեալ 'ի վերայ ողջակիզացն անդէն բորբոքեցաւ: Արդ որպէս այն հուր իբր 'ի մոխիր դարձեալ էր, այլ յետոյ հրակերպ վառեցաւ, նոյնպէս զիս, ասէ, որ անարգ մոխիր էի, նաև մեղաւոր եմ, դու 'ի լոյս նշուլաւորեալ փոխեցեր:

5 Զհոյս քո հայր : Որովհետ անարգամեծար բարերարութիւն է այս, զի զահաւոր զհայր քո ըստ ծնութե՝ արժանեցեր լինել նաև ինձ անարժանիս հայր · դու քեզէն՝ քո կամաւ և վճռով ուսուցեցեր՝ զնա հայր մեր կարդալ: Եւ ես զարմանամ, զիարդ ոչ այրեալ առաջի բերան իմ 'ի կարդալն զքեզ ժառանգակից և եղբայր:

6 Ուղղագոյն զենն : Յընծայելն զքեզ կամ 'ի մատուցանելն 'ի սուրբ սեղանին, ոչ պատեաց զինև մառախուղ 'ի քաւմէ աղաւորութենէք · զոր օրինակ եղև 'ի տաճարին սողոմոնի, յորժամ քահանայքն հանգուցին զտապանակ ուխտին 'ի սրբութիւն անդր · և յանկարծակի ամպ ելից զտունն, մինչև չկարէին քահանայքն կալ 'ի պաշտօն · առ որ երգեաց և սողոմոն · տէր ասաց հովանի լինել մեգով · (Գ · թագ · Ը · 10 · 11 · 12 ·) Նոյնպէս ոչ փչեցեր, ասէ, զառամանս իմ, յանդուգնաբար դպէղ 'ի ծառայէն, 'ի ծանելն զքեզ ընդ տեսակաւ հացի 'ի խորհուրդ սուրբ հաղորդութեան: տես և Խէ · ըծ · 9:

7 Խոստովանէք ընդ քեզ : Ոչ վարեցար խառնակ ընդ գնացողս ընդ քեզ խառնակի · որպէս առ առաջն իսրայէլի · (Եղեկ · Ժզ · 5 · 36 ·) այսպէս նախադրութբն ընդ կրկնելի է զօրութբ · այսինքն ոչ գնացեր խառնակի ընդ հեռեալս խառնակի ընդ քեզ · ոչ ածեր 'ի վերայ իմ զհակառակն ինձ, որ զհակառակն կամաց քոց գործեցի:

8 Փոխարէնն : մի օրին · Փոխարինէն : Փոխանակ բազմապատիկ երախտեացն և երկայնմտութեանց՝ ես պարտաւորս հատուցի քեզ անթիւ անօրէնութիւս մարմնական և հոգևոր մեղաց · Անճին, զամենայն աղտեղութիս կրող խորհրդոց · Երկրաւորակերպ, երկրաւէր յօժարութեանց: Զայսպիսի զարշանս մեղաց հատուցի քեզ, եղեալ յիմար ժողովուրդ՝ ըստ յանդիմանութեն մովսէսի · (Բ · օրին · ԼԲ · 6 ·)

9 Նորոգեա նման : 2 օրին · Նորոգեա, գուցէ փոխանակ Նորոգեա : Զայսքան բարերարութեց ժողովս կամ յաճախութիս անձնայնացուցի, անգործ արարի, 'ի մնոտի գործ պարապելով:

10 Յօձն առաջին : Ակնարկէ 'ի բանն (Երեմ · Զ · 9 ·) «Կրկնեսջիք որպէս կթող՝ յոյս իւր» · այսինքն 'ի ատենս որթոյն՝ յորժամ կթեսցի: Այսպէս և ես 'ի մեղան յորժէ արբեցայ, վերստին դարձ արարի:

11 Այն ի նման : Յես կատարին, որ ես յարմարին բանք և օրինակք մարգարէից, զոր 'ի վեր և 'ի վայր յիշատակեմ:

12 Լայնատարած ճեպով : Յայժ լայն և ընդարձակ ճանապարհաւ կարծեցի համանել ցանկալի կենաց արքայութե, հակառակ անէրանական ճանոյն · (Մատ · Է · 13 ·)

13 Ոչ էսուս հանգէոս։ Հայր յատակեալն (Ծննդ. Կ. 3.) « Մի մնա-
ցէ ոգի իմ 'ի մարդիկդ վասն լինելոյ դոցա մարմին ». որպէս և ստա-
նին նշանակ հոգւոյն՝ ոչ եգիտ հանգիստ 'ի մեռելոյ մարմինսն. (անդ Ը. 9։) Եւ որ և բան իմաստ. (ա. 4.) « Հոգին սուրբ ոչ բնակէ 'ի մարմնի վարեցելոյ մեղօք »։ Այսպիսի բացատրութիւն է յաճախ, ըստ ԲԷռ-ԲԷոն Ըէյա, ընդ շնչաւոր կամ զգայական հոգւս ոչ խառնեցի, այսինքն ոչ հաղորդեցի, ոչ միաւորեցի զնման շնորհաց հոգւոյն սրբոյ՝ զիմաստութիւն կամ զհանճար կամ զմարգրութիւն. զի շնչաւոր մարդ ոչ ընդունի զհոգւոյն այ. (ա. կոր. Բ. 14։) Այսպէս հոգիս իմ բանական մնալով ընդ շնչաւորին՝ անմահ 'ի հոգւոյն շնորհաց, եւ լինելն կորուստ անձին գործեցի։

14 Սաղմոս ԻԹ. Զինչ օգուտ ինձ, ասէ, չարել կամ հեռանալ զայստորիկ ստուա բանքս կսկծեցուցիչս. և կամ էր վասն յառաջ բերեմ. ... , չափաւորս, ամփոփեալս, կամ որք չափով հատուածոյ յարմարեալ են. զինչ այսպիսի առ իս մեղապարտութիւն, որ անկեալ է ըստ ... , քան զչափ. և ... ըստ ..., 'ի վեր քան զբժշկութիւն, անյոյս առ 'ի բժշկիլ։ Զ օրէն. ... Արդ առ ինչ այսպան յինէն աստցեալք, մինչ ոչ զչափ չարեաց կարեմ ճանաչել և ասել, և ոչ բժշկութիւն ինքնին գտանել, կամ այնմ լինել արժանի, բայց զի զգոյդ ողորմութիւն շարժեցից՝ կեանս շնորհել, և այլն։

# ԲԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Իսկ արդ[1] զի՞նչ բարւոք գոյ առ այս, կամ ո՞ր օգուտ ինձ առ այն սահման ընթացից ձայնիս հեծութեան՝ լքանել, և ոչ զամբարեալ շարաւ մահացու վիրիս՝ խառնաւ բանիս արտաքս հերքել, և կամ զծանրութիւն սրտիս մթերեալ ցաւոյս հոգեկան խիթոյս, իբր առաջակայու ցանողական հնարաւորութեամբ, մատնամուխ զզուանօք փախել։

Բ. Ոչ քանզի[2] ոչ գտայ արժանի պարծելոյ 'ի փառս ընդ սրբոցն դաս, որոց լի են բերանք նոցա ծաղու, և շրթունք խրախանց ցնծութեամբ, ըստ առակօղին և սաղմոսողին, 'ի կարգն երկրորդ գխոհեցից՝ զնմանին իմ յիշատակել հանգոյն աստանօր. Թէպէտ առ խմում Թերութեան բարւոյ անբարեաց՝ և նոքա յաղթականք

լցեն, իբր ապաշաւեալն քան զանապաշխարն։ Տօնելի եղև Մ՝անասէ առ խնդս պղտորս առաւելութիւն. պատուեցաւ և փարիսեցին առ գժնէիս անխարշտութիւն. գովեցաւ անառակ որդին առ անդարձիս ախտաղանցութիւն. յիշատակեցաւ [3] կեղծաւորութի որդւոյն Շմաւեայ առ անշնորհութիւն ապախտաւորիս. օրհնաբանեալ եղև աւազակն, որ դատափաղն է անհաւատից. պատուեցաւ և [4] կինն պոռնիկ՝ սկզբնամայրն ապաշաւողաց։ Ոչ պակաս քան զՓարաւոն զատեղծուած սրտիս իմ խստացուցի. ըստ օրինակի խաւլութեան ծիրկաց ծովու ծփեցայ. ոչ այնքան սարսեցի և պատկառեցի 'ի սաստկութենէ քումդ հրամանի, որքան ալիք ծովուն յեղերացն։ Ոնգ թիւս չափուց կշռութեան առ խմ գործոյ՝ և [5] աւաղոյն կոյտ սահմանեցաւ. պակասեալ անբաւելոյն չիզջք առ համբարս խնդս անօրէնութեանց։

Գ. Օ՛ի թէպէտ և յոյժ բազում են մանունքն 'ի յախտաս ջրոյն համահաւաքեալք, այլ [6] ուրոյնք և առանձնականք 'ի ծննդոց աղէլութենէ. իսկ մեղանք [7] իմոյս յանցանաց՝ անթիւք, զորս անհնար է առնել 'ի մի։ Ոմն և ծնունդք իւր, ոմն և շառաւիղք իւր, ոմն և բեծք իւր, ոմն և արկածք իւր, ոմն և փուշք իւր, ոմն և արմատք իւր, ոմն և հաստատածք իւր, ոմն և պտուղք իւր, ոմն և ոչխարք իւր, ոմն և ձիւղք իւր, ոմն և սուրք իւր, [8] ոմն և արմկունք իւր, ոմն և ձիրանք իւր, ոմն և մասունք իւր, ոմն և խլրտմունք իւր, ոմն և զօրութիք իւր, ոմն և ազգմունք իւր, ոմն և նշմարանք իւր, ոմն և տիպք իւր, ոմն և մնացուածք իւր, ոմն և սուսերք իւր, ոմն և մթութիւնք իւր, ոմն և յարձակմունք իւր, ոմն և հնարք իւր, ոմն և պատիրք իւր, ոմն և դիտմունք իւր, ոմն և դիմեցմունք իւր, [9] ոմն և չափք իւր, [10] ոմն և խորք իւր, ոմն և դարշութիւնք իւր, ոմն և կայծակունք իւր, ոմն և կիրք իւր, ոմն և մթերք իւր, ոմն և գանձք իւր, [11] ոմն և ցնցուղք իւր, ոմն և աղբերք իւր, ոմն և գետաք իւր, ոմն և շանթք իւր, ոմն և հրդեհմունք իւր, ոմն և պատկառանք իւր, ոմն և վիհք իւր, ոմն և անդունդք իւր, ոմն և բորբոքմունք իւր, [12] ոմն և աղջութիւնք իւր, ոմն և ամպրոպք իւր, ոմն և կայլակք իւր, ոմն և հատմունք իւր, ոմն և հեղեղք իւր, ոմն

և սատանամանիք իւր, ամն և զրոյնք իւր, ամն և շաւիղք իւր։ Հնոյն և տապ իւր, հրատն և գոլորշիք իւր, [13] Հաւլոյն ձարպին և ձէնձերմանք իւր, օշինդրն և դառնութիւն իւր, կործանիչն և հնազանդեալք իւր, բանաւորն և յեղուզակք իւր, գողոյն և սպառազէնք իւր, աւազակապետն և գումարտակք իւր, գազանն և կորիւնք իւր, խածանողն և ծակոտածք իւր, [14] ապականագործն և նմանիք իւր։

Դ. Արդ այսոքիկ [15] պէտք են զխաւարութեանց ապականողաց ոգւոց համայնից, զասեալք ընդ ինքեամբք նուաճութիւք մասանց՝ իւրաքանչիւր ոք 'ի սոյանէ բիւրք բիւրուց և հազարք հազարաց. իսկ զհամայնիցս թիւ նա միայն զօրէ իմանալ, որ զաւ 'ի մէնջ չէութիւնն գրեալ՝ իբր գէութիւն գործոց ունանէ։ Այլ արդ եթէ որ զանձն ոչ խաբեսցէ, և առ երեսս ոչ կերպարանեսցի, և կեղծաւորաբար [16] ոչ անհաւատեսցէ, և մարդ զինքն ծանիցէ, և հասարակաց բնութեանս վարեսցի, և երկրածին զանձն գիտեսցէ, և 'ի չափու իւրում կանոնին կացցէ, իմասցի ծանիցէ զնախաթիւ մասանս արկածիցդ վերագրելոց, թէ ոչ ընդունայն ինչ գրեցի և կամ զընտու խոկութիւնն սահմանեցի, որ 'ի մերս բնութեան պատահի ազգի ազգի վրիպականութիւն. այլ 'ի բիւրուցն արգասեաց չարեաց չափ մի երևեցուցի, զի նոքօք և զայլսն իմաստասիրեսջիր, թէպէտ և ոչ բաւանդակապէս։

---

1 Զինչ բարի գոյ։ Զինչ բարի գոյ կամ ծնանի յայսմանէ, կամ զինչ օգուտ 'ի բանս հեծութեան մտաւ թուլանալով, վհատելով, եթէ ոչ զամբարշտաց չարեաց. զլլեալ թարախ մեղաւորի վիրացս սրտագէս հանել խորանոյ այրեցող երկաթով յանդիմանական բանիս. և զծանրութիւն սատակչացս՝ որ առ զհոգւոյ իմ, սատակացուցիչ հնարիւք. այսինքն մասն մանելով 'ի փորն՝ և շարժելով զաղբեան՝ արտաքս փախել։

2 Ու զուայ ուղտոյն։ Վասն խնոյ մեղաց չեղէ արժանի պատծել փառաց ընդ դասս սրբոց, բառ բանի առաքելոյն (Յոբ. Ե.) որոց բերանք լի են խնդութեամբ բառ առաքելին. (յոբ. Է. 21.) ուստի չեղաբեալ խորդալ ընդ արդարոց անմեղաց, որք յառաջնում կարգի են, մտայ ինձ զխժել 'ի կարգն երկրորդ, որ ապաշխարողացն է, մեղուցելոց եւրն զկոթեղեալ և — ... հանդիմանեալ առ թերութիւն իմ, կշռելով զբարեմասնութիւն պակասութիւն իմ, վերադարձն են և նորա, որչափ ապաշխարողն քան զանապաշխարն. վասն զի մանաւանդ խաւսի ապաշխարողիս՝ հաչակէի եղև բաղդատել ծանրութեան պարտուց իմոց։ Այլ փա-

ընթացին ունելով գրաւի գործս ինչ, պատուելի եղև քան զնա, որ ամ՛ բարշատութիւն միայն ունիմ, և այլն։

3 ԿԵՂԾԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՈՐԴԱՅՆ ՄԻԱԲԱՆ։ Յիշատակելի եղև կեղծեալ առատաձեռնութիւն ոմանց կամ ազատաց ոմանց. (Գ. Թագ. ԺԶ. 21. Բ. Մնաց. ԻԶ. 21.) Զի կամելով ծախել 'ի ամենայնին, կարծէր աւելի ինն ամենայն 'ի պատիւ այս. որով զծածկութիւն կամս եղեալ, ուր ես ապաշխարհ եմ։

4 ԿԵՆՆ ԴԱՒՆԻՆ։ Մարգարէութեան մարխամ կարծեցեալ. բայց հաւանեալ եա՛ կինն այն յայտնի մեղաւոր 'ի տան սիմոնի բորոտի. որ և յորհնարանեալ ընթացեալ քնի պատուեցաւ։ Եւ առ մայր կամ առաջին առն ոչ միայն պանծեալ ապաշխարութեամբ, այլ և զի 'ի գիրս՝ առաջին ապաշխարող 'ի հաւատացեալ կանանց՝ նա յիշատակի. թող զխաչար՝ որ չէր 'ի հաւատացելոց։

5 ԱՒԱԶԱԿՆ ԽԱՉԻ։ Համեմատութիւն չափու չար գործոյս՝ կայր առաջնոյ աւազակի, չափելի եղև. և անդրաւ իրաց ԸՆԴԴԷ. գեղջն պակաս գտան քան զանօրէնութիւնս իմ։

6 ՈՐԴԻՆ Ն ԱՌԱՔԻՆՈՅՆ։ Թէպէտ թուով բազում են մանր երբ՝ առայ, խնձր և այլք ժողովելոց յանին ծովու, բայց հետի և զարկ են 'ի ծնանելոյ. իսկ իմ չարիքն՝ ինքեանք անթիւք են, և զայլս ես ծնանին։ Աղա 'ի յաջորդաց կարգելով զնէ գրաղաւմ՝ թուով վախթաւն և երկու, զորս մի առ մի մեկնել՝ երկար լինի, մանաւանդ և գծուարին. զի բազումք 'ի բանից այլաբանելոյ գոլով, 'ի զանազան մեղս կամ յախտս յարմարին։ Զայս միայն առել շատ լիցի. զի զգլխաւոր մեղան կամ զախտս եղանի զնելով ԻՌ, զերկրորդն մէջս բազմաւոր զնէ, յայս ամել թէ միոյ չար ախտի բազում են ծնունդք չարք։

7 ԽՄԲԻՆ ՅԱՆՑԱՆՈՑ։ 3 օրէն. ԽՄԲԻ ՅԱՆՑԱՆԱՑՆ։

8 ՈՃ Ն ԱՐՔԱՒՆԻ ԽՈՐ։ Արմաւին՝ (տիրանէկ) որով լինի հարկանել կամ մղել զայլս։ Այսպէս բարկութեան արմատք են կռիւ, նախատինք, և այլն։

9 ՈՃ Ն ԼՈՔԻ ԽՈՐ։ Մեղքն՝ որք առաջման ունին, որպէս են արտաքին մարմնական մեղք՝ շաղլութէ, արբեցութէ, և այլն, որոց 'ի պակասել նիւթոյն՝ թէպէտ և կայցէ կամք մեղացն, այլ գործն ոչ յաջողէ, որով և անհնարին ամենէ։

10 ՈՃ Ն ԽՈՐՔ ԽՈՐ։ Մեղքն՝ որք ընդ հակառակն վերագրելոց՝ 'ի խորս հոգին. որպէս են հոգևոր մեղք հպարտութէ, նախանձու, են։

11 ՈՃ Ն ԳՆՑԱՒՂՔ ԽՈՐ։ այսինքն ցայտմունք. որպէս գայթակղութէ մեղքն, որոց ցայտմունք են մեղք գայթակղելոցն. կամ վատանունութիւն ծնողաց, տանն, ազգին, և այլն։

12 ՈՃ Ն ԱՂՋԻՈՒԹԻՒՆՔ ԽՈՐ։ Մթութիւնք. խաւարք. որպէս արբեցութիւնն՝ որ ածէ խաւար 'ի միտս և յուշս։

13 ՀԱՒՑՆ ՃԱՐԴԻՆ։ Ի լու օրինակն այս հաստատեալ յետոյ զնի քան զհետևեալն, ՕՂԻՆԳՐՆ Ն ԳԱՌՆՈՒԹԻ ԽՈՐ։ Հալոց է կաթայն կամ ամեն՝ յորում հալի ճարպն և զճենճերն 'ի վեր առայ. և խմանի ախրա մեղաւորին՝ որ 'ի հուր ամենաջանոց կամ անձկութէ արտին մաշէ զփափկութիւնան, յորս վայելեաց յաշխարհի։

14 ԱՂԱԽԱՆԱՓՈՐԾՆ Ն ՆՄԱՆԻ ԽՈՐ։ Չէք յերխս օրին։

15 ՊԵՏՔ ԵՆ ԳԼԽԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ։ Վերաճառեալ մեղքս են երեք իշխանք և գլխաւորք. ընդ որովք կան այլ մեղք երեք ՆՈՒԱԶՈՒԹԻՒՆՔ, հպատակք. և զամենեցուն թիւան ած միայն զխոն, որ զոչէ կարծեցեալն 'ի մէջ երեք գեղեալս ուսանել։

16 ՈՒ ԱՆՀՆԱՐԻՆԷՑԷ. այլ օրէն. ՈՉ ԱՆՀՆԱՐԻՆԱՑԷ։ Եթէ որ առանց

խորհելոյ զանձն և կեղծաւորելոյ ոչ երկմտեսցի, այլ մարդ ճանաչե-
լով զանձն՝ զհաստատակաց ընթացին կերպ զգայցէ, և խնամայցէ զինչ հոգածին զօր, և 'ի չափու տկարութեան իւրոյ մնայցէ արդեօք, յայտնի ծանիցէ այնպիսին՝ թէ զինավատեալ մասունս պատահմանց ըն-
թեանս ոչ աւելորդ գրեցի, և ոչ ինչ զյաւանդակ չափն ծանուցի զա-
նազան սխալմանց՝ որք յապականացու ընութենէ շարժին. այլ 'ի բիւր գործոց չարեաց սակաւս ինչ յայտնեցի, որովք և զայլս կարիցէք ի-
մանալ, թէպէտ տակաւին ոչ բովանդակապէս: Վասն զի նկատելով զհամբաւական ապականութիւն ընութենէս, խնամովք թէ ամենահակող է մարդ 'ի չարիս՝ թէ ոչ յամենակալէն ոյ ուղղեսցի 'ի բարին:

## ԲԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ
առ նոյն աղերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ես զի մի զփրկութեան փութահութիւն 'ի բա-
պառ կորեցից, և ապաղէն եղեալ մտանեցայց այրքա-
նեաց աներևութից ընդդիմամարտից, որք ոչ այլ ինչ են՝ քան թէ ընտանիք թշնամիք ինքնածին բուսեալք զօր վերագրեալքդ սահմանեցին՝ [1] զոլքանութիւն պատ-
կերին ձեռյ եղեալ աչհարկուս, ցուցից առ սմին բազ-
մարդյ բանութեան [2] մարտիկացդ՝ զօրեղ ախոյեանս աս-
տուածականս՝ ամենայաղթողս և անպարտելիս, [3] թէ և կսկծելիս կիրս և դժուարակութ պտուղս ծառոց ան-
հասանելեաց, և անկոխ ճանապարհաց երկք և տա-
ժանմունք: Բանզի զայն ամենայն գունդս չարութեան բանսարկուին զօրաց՝ սակաւ մի արտօր կաթուածոց աչաց, իբր զճճիս զեռունս բազմատանիս [4] խոխայթից երկրի տկար խլրտմանց՝ անկեալ 'ի վերայ ծորումն ձի-
թոյ կամ զոյգն դեղ ինչ սատակչական, ցամաքեցու-
ցանէ. և զոյգն մի հառաչումն սրտի հեծութեան ելեալ 'ի յոգւոց, իբր շնչումն հարաւային ջերմութեան խառ-
նեալ յարևու, զատանամանեաց սառնութիւն հալէ. բանզի [5] ըստ միում նմանութեան հեշուածինք են, և ըստ միումն զիմացրութեան զիւրամեաք:

Բ. Բայց ես ոչ երբեք կասեցից զատել զգաստապար-

տեսլոյ՝ բանից կսկծմանց, [6] պարտել զպարտաւորեալս՝ իբր զվնասակար անփրկանաւոր անհնարինելի. վասն զի զանձինս սատակեալ 'ի յիմաց նեղչացն, անձանց զօրութի տամ կենդանանալ առ Հօգւոյս կոչուստ։ Տունկս զառնուատեան, որ զգարշութիւն անսուտ վարուց ծաղկեցի. բարունակս ապականաբեր և մահհոտկուզեան, որ զկորստեան զինեն երկնեցի. Քանանու զաւակս՝ և ոչ Յուդայի, ըստ ասից մեծին Դանիէլի. որդիս գեհենին, և ոչ արքայութեան. ժառանգս դժոխոց, և ոչ փառացն փափագելեաց. նիւթս տանջանացն, և ոչ հանգստեան։ Ապերախտս առ երախտաւորդ, ապաշնորհս առ բազմապարգևդ, միշտ մեղուցեալս առ երկայնամիտդ, զառնացուցիչս քաղցրութեան բարերարիդ, ծառայս չար և վատ, ըստ աւետարանեան յանդիմանութեն, խոստունս զչարիս գործել ըստ Եսայեայ նախասացութեանն, ժիրս առ ժանդագործութիւնս զազրութեան։ Փոյթս առ 'ի բարկացուցանել զՏէրն, մշտաշարժս առ գլուս սատանայական, հանապազորդեան [7] վիշտս ստացողին, թոյլս առ բարեացն թախս, [8] ծոյլս առ երանութեանն ընտրութեան, դանդաղս առ զխոստմունս խոստացելոցն, անարիս առ կարիս պիտանեացն և օգտակարացն, պաշտօնեայս տիրադրուժ երախտամոռաց։

Գ. Այս անձինս մեղաւորի, զի զարարիչն իմ բարկացուցի. վայ որդւոյս կորստեան, որ զկենդանութիւն ձիր մեռացոյ. վայ պարտապանիս անհամար [9] բիւրուց քանքարաց՝ որ ոչ գոյ հատուցանել. վայ բեռնակրիս ծանրութեան մեղաց դժնէից, որ չունիմ դառնալ [10] առ հանգստարարն. վայ վնասակարիս տէրունեան պարտուցն, որ [11] չէք հնար յանդիմանն լինել հզօրին. վայ եղեգնախառն կիզանողական նիւթոյ, որ տոչորելոց եմ 'ի գեհենին. վայ ինձ առ այս յիշատակ, զի [12] նետք բարկութեանն Այ այրեցելովք են գործեալ. վայ յիմարութեանս, որ ոչ մտաւեցի [13] զծածկեցելոցն յայտնութեան հանդէս. վայ ամբարշտիս, զի միշտ անդադար [14] ոստայնս չարեաց կկեցի. վայ զմարմինս պարարողի կերակուր որդանցն անմահից, կատաղայն թունաւորայ զխորդ համբերեցից. վայ ինձ առ արբումն մահուն բաժակի, որպէս զյաւիտենականն տաժեցայց. վայ ինձ առ ելս անարժան հոգւոյս յեղկելի մարմնոյս, իբր զա-

տաւորին ճշմարտի յանդիմանեցայց . վայ ինձ առ նուազութիւն իւղոյն լապտերաց, զի անարծարծելի է աղօտանալն . վայ ինձ առ ձեռս տագնապի [13] ահին պակուցման, յորժամ առագաստին մուտն փակեսցի . վայ ինձ առ ձայնին ահաւորութեան զօղացուցչաց և սարսափելեացն բանից՝ երկնաւոր թագաւորին ընդձայն կոչելոյն, թէ ոչ գիտեմ զքեզ :

---

1 Զուարթնոցին գոգցելոյն յետս եդեալ ահաւորութեան : Ցուցին ... , են : 2 օրին . այսպէս ունին . Սահմանելոյն զուարթնոցին գոգցելոյն յետս : Եւ եդեալ ահաւորութեան ցուցին ... , և այլն :

2 Մարտկոց : 2 օրին . Մարտկոցաց :

3 Թէ և խոնարհել : մի օրին . Թէպէտ և խոնարհել : Խմաստք սկսուածոյ աղօթիցս են : Զայսքան աներկայթ պատերազմաց՝ որք են խաղ ընտանի թշնամիք ծնեալք յախտաւոր բնութենէս, 'ի համար արկի՝ իբրև պատկեր ինչ աշարկու բանակի ձեռացուցանելով : Բայց զի մի վհատեալ այսու՝ իբրև անզէն մատնեցայց 'ի ձեռս նոցա, ցուցից ընդդէմ այդչափ բուռն պատերազմացս՝ ախոյեանս զօրեղս, զխմակոյս անհնարինս, այսինքն զպարծս աղաչխարութեան, զպաշտս, զաքնութիւն, զողբս, և այլն . Թէպէտ և այսպէս թուին կսկծեցուցիչ գործք, իբր դժուարականելի պտուղք իցեն բարձր ծառոյ, կամ անկոխ անհարթ ճանապարհաց աշխատութիւնք . զի այսպէս երևին՝ իբրև հակառակք ապականեալ բնութեան, և ախտութեան 'ի մեղս : Սակայն ըստ իւրեանց ներգործութեան կարի դիւրինք են . զի բաւական է սակաւ մի արտօսր, գոյզն ինչ հառաչումն, և այլն :

4 Խուայծից երկրի . Որդանց կամ թրթրոյ՝ որք 'ի փտութեանց ծնանին 'ի հող, թխոր խուրտմայց, և անզօր շարժմամբ սողին 'ի հող :

5 Ըստ մեռեալ նմանութեան : Մեղքն ըստ օրինակի ճճեաց դիւրաւ ծնանին 'ի մեզ փոքր մասնութեամբ և հեշտութեամբ . որպէս ճճիքն 'ի գոյզն ջերմութենէ : Բայց և ըստ մեռեալ տնկաբարութեան, ըստ հակառակ դեղոյն՝ դիւրաւ մեռանին, ճճիքն ձիթով կամ փոշւով, մեղքն՝ սակաւ արտասուօք :

6 Պարզել զգաստութեան : Ոչ կասեցից, ասէ, այսինքն կասեցայց, ոչ դադարեցից հարկանել կշտամբութեամբ և թշնամանօք զպարտաւոր անձն իմ . վասն զի աղաչխարութեամբ սատակեմ զոմանս 'ի մեղաց իմոց, և յետոյ ծուլութեամբս զօրութիւն տամ այլոց մեղաց կենդանանալ . զոր օրինակ, աղաչխարեմ զլարկութիւն, և կենդանացուցանեմ զհպարտութիւնն, և այլն :

7 Վախճան ... : այսինքն արարողին այ, կամ ծնողին զմեզ աւազանաւն . զի առնելով զանհաճոյսն այ՝ վշտացուցանեմք զնա :

8 Ծայր առ երանութեան ընտրելոյ : այսինքն առ երանելի վիճակ ընտրութեանն 'ի փառս, կամ առ երանութիւն ընտրելոցն : Հին լուծ . ըստ այլ օրինակաց գնէ՝ առ երջանկութիւն երանութեանն, և ասէ 'ի վերայ ինն երանութեանց, որով ասէ՝ 'ի բնութենէս մերմէ ընտանենամք այ : Նորոգ, հեղգ, ծանրաշարժ 'ի հայեցուած կամ 'ի նպատակ խոստացեալ բարեացն . անարի, երկչոտ, անձնարակ 'ի կարևոր գործս՝ պիտանիս ինձ և ընկերաց :

9 Բիւրոց ամենարոց ։ 2 օրին · Բիւրոց ամենարոց ։

10 Առ հանգստարանն ։ մի օրին · առ հանգստարանն ։ Վ․այ ինձ , ասէ , որ ծանրաբեռնեալ եմ գժնդակ մեղօք , և ոչ իշխեմ դառնալ առ հանգուցիչն , որ կոչէր զիս ասելով եկայք աշխատեալք և բեռնաւորք · զի այլ անգամ թեթևացոյց զիս 'ի մեղաց , և ես դարձեալ բեռնաւորեցայ ։

11 Չիք հնար յանդիման լինել ։ 3 օրին · չիք յանդիման լինել ։

12 Նեղք բարկութեանն ։ մի օրին · ընդ նեղք բարկութեանն ։ Վ․այ ինձ , ասէ , 'ի յիշատակելն զայս , թէ նեղք բարկութեանն ոյ գործեալ են այրեցելովք · այսինքն յայրեցեալ նիւթս , կամ մխեալք 'ի կրակ ։

13 Զծածկեալսն յայտնութեան համբաւ ։ 3 օրին · զծածկեալսն համբաւ ։ Վ․այ յիմարութեան իմում , որում 'ի միտ ոչ առի թէ ծածկեալ յանցանք իմ , ամօթալի մեղքն հանդիսիւ և քննութեամբ յայտնելոց են 'ի տիեզերական ատենին ։

14 Ոստայնս չարեաց կկոցի ։ Զթելս չար գործոց կկոցաւ գործեցի · այսինքն զմեղս 'ի մեղս յաւելի ։ Ակնարկէ 'ի բանն (Եսայ․ ծթ․ 5․) « Զոստայն սարդից անկանեն » ։

15 Աւերն գամբարանին ։ 2 օրին · սնոտին գամբարանն ։ Յայս երիս յետին բանս ըստ սակի յիմար կուսանացն յարմարէ զաղէտս հոգւոյն · յորժամ իւղ ողորմութեան պակասէ 'ի հանդերձեալսն , և առ աղաչեցուցիչ ասացեալ ընդ փակեալ առագաստին երկնից · ուր սարսափելի ձայնն լսի թագաւորին , ոչ գիտեմ զձեզ ։ Այսպէս կնքէ զաղօթքս , մնացեալ զոգցես առ սաստիկ պակուցմանն , կամ ոչ իշխեալ 'ի փառաւորութիւն աւարտել · որում ոչ ուշ եդեալ ընթերցող ոք՝ չգիտեմ որպիսի շատախօս , կարծելով ընդ զթերին՝ յաւելու ստամբակ խօսս յերկարս զզուելին՝ անյարմարագիրս՝ յօրինակ ինչ գրեալ 'ի թուին ոժգ․ 1363 ։ Բայց նկատել արժան է՝ զի ոչ այս բան միայն , այլ և Զ և Է․ սակաւ փառաւորութեան աւարտի , պատաղեալ զլխոյն 'ի կշտամբանս մեղապարտ անձինն · մինչև ապա 'ի բանն Թ փառաւորեալ զկշտամբանսն , գրչակութեամբ առ 'ի յայս մեծացուցանէ , և 'ի փառս կնքէ ։

## ԲԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն ալեաց մաղթանաց բանի ·

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա․ Արդ զի՞նչ գործեսցես անձն իմ կորուսեալ , կամ ո՞ւր թաքիցես , կամ զի՞արդ ապրեսցիս , կամ ո՞րպէս 'ելցես 'ի մեղաց բանդէ ։ Քանզի բազում են պարտիքդ և անթիւ հատուցմունքն , սաստիկ կշտամբանքն և անվախճան նախատինքն , անողորմ են հրեշտակքն և անկաշառ դատաւորն , հզօր ատեանն և անաչառ բեմն , քամահելի սպառնալիքն և անողորմ հատուցմունքն , ա-

հարկս հրամանն և մերկապարանոց յանդիմանութիւն, հրեղէն են գետքն և անանցանելի են վտակքն, թանձրամած խաւարն և [2] արտաքոյ այցելութեան մտաւորացն, ապականութեան է, գուբն և մշտնջենաւոր է տարտարոսն, ամենայն տարապարան և անշէջ սաստկանանքն: Իսկ արդ արդարև քեզ են գանձեալ գանձքն պատքեկ գծողակք և տարժանելի օթևանք անդրմերձելեաց պատուհասից, ով անարժան անձն իմ մեղաւոր, չարագործ, [3] պղծեալ, բազմաբիծ, և սահման անպատանի բնաւին անմարդութեան: Ահա զարգիւնս գործոց ձեռաց քոյ ժառանգեսցես՝ թխրեալդ 'ի յանցութեց և զառածեալդ 'ի մարդութեանց, տարագրեալդ յարգարութեանց և 'ի կարգաց պարկեշտութեց, ունայնդ 'ի լաւութեանց հոգեպարգև հարստութեանց, [4] նախանձարկու բարերարին և ամենակալ Թագաւորին:

Բ. Իսկ քանզի կառուցեր քեզ անել արգելան և անփախչելի որոգայթ, [5] խառնակեալ քեզէն զանբժշկականս քո վէր և զանօրինակս հարուած, վկայելով զանձինդ զդարադականս մահու զանբուժելիդ բեկութիւն, ով չարդ 'ի բարեաց, [6] ով դառնութիւնդ 'ի քաղցրութեց, ով խաւարդ 'ի լուսաւորաց, ով կապտեալդ 'ի ողջնոց, ով դարձեալդ 'ի գալեաց, ով անբարիշտ 'ի բարեպաշտից, ով ընչազեալդ 'ի բանականաց, ով անմիտդ 'ի մտաւորաց, ով անհամաձայնդ յեմանից, ով անմաքուրդ յընտրելոց, ով մահացուդ 'ի կենդանեաց, [7] ով խոժոռականդ 'ի սրբոց, ով արբշիռդ 'ի պարկեշտից, ով կեղծաւորդ յարդարոց, ով անպիտանդ 'ի պիտանեաց, ով անարգդ 'ի փառաւորաց, [8] ով նուաստդ յառաւելութեանց, ով գերիդ 'ի գերագունից, ով նուաստագոյնդ 'ի վեհից, ով աղքատդ յընչեղաց, [9] ով անարժանդ 'ի փրկութեանց, ով ամանիդ 'ի բարձրութեանց և 'ի հոգևոր հարստութեանց, և հատուածեալդ յօրհնելոց:

---

1 Սուրբ 'ի Գիրս Բանից: 2 որին. Եղանիշն 'ի Գեղանուշ Բանից: Որպէս թէ արտաքոյ ապականութեան անկեալ, բառ արտաքոյ 'ի նախնեաց ասացեալ. մի տարակուսանք խառն, մեր արդեօք Թարգմանէ, մեր փախչելի. կամ հնարս գտանիցէ 'ի բանից մեզոյն գրեթանելոյ:

2 Արտաքոյ այցելութեան: Զարդ յայցելութեան կամ 'ի հնարից և

մառախուղն, այսինքն անխափանելի. կամ, այնպիսի մութ տատասկ՝ որ ոչ լինի այցելութիւն կամ օգնութիւն:

3 Պատնէշ. խնամութիւն, բառ որում փոխանակ ասելոյ սիրոյն իւր՝ յախտաւոր սէր ախտաբոյծ հեշտացեալ:

4 Նախանձորդեալ բարկութեան: Դիպող ՚ի նախանձ բարկութեան, բառ բանին Ա. Կոր. Ժ. 22. « Եթէ նախանձ ինչ արկանիցեմք տեառն »:

5 Խառակելեալ սեղան: Դու ընդունիս, ասէ, խառնակելով զանդրանիկ կերպ վերա մեզայ, և վճարելով զխորտակումն մահճաւորատ անձինց, շինեցեր քեզ անկանելի աղեխանս: Վասն զի թէպէտ անկեալ խառնվանութիւն ազատէ զմարդ յարատոյ և ՚ի պարտեաց մեղացն, սակայն մահացուացն իւրև ձեռնադրով հաստատէ զապարատութիւն իւր, այնու զի ոչ ես ընդ. կարէ մխոել կամ անդարձ ցուցանել զանձն:

6 Ոչ դառնացեալ ՚ի ծաղրացուցէ. խնամ իւր թանձրացեալ. այսինքն ով զանձն ՚ի քաղցուցեց. որպէս և հեշտեցայն ՚ի թանձրացելոյն գինի:

7 Ոչ խոհերանաց: Պղծեալ կամ զազրեալ ՚ի մեղաց:

8 Ոչ նաւաւոր յառաջացութեան: Նսեմեալ կամ կորուստ ՚ի լուսելոյ, կամ ՚ի լուսութեանց:

9 Ոչ անուրջանս ՚ի ձրիաբաց: Այսինքն ՚ի փրկելոյ: Զայտանիկ ձեռբանից խնա ընդհանրապէս, ով չարդ ՚ի մէջ բարեաց, ով զառնութիւն ՚ի մէջ քաղցրութեանց, ով խառարդ ՚ի մէջ լուսաւորելոց, և այլն. որբևեր, զինեալք ՚ի մէջ ժամեկալեաց. հովուածեալ, անիծեալ, բանադրեալ ՚ի մէջ օրհնելոց:

## ԲԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելեալ կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն ողբոց մաղթանաց բանի.*

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ զինչ արժանաւոր բան քեզ բանիբանս շարադրեցից [1]՚ի կարգի մաղթանաց մատենիս այսր ողբերգութեան, ով անձն իմ թշուառ, անձնատուական և առ ապստամբանս բանից անբարբառ, անուղղամն ոչ և որոյն մանկանացութեան: Ո՜ ի եթէ գլխ մի ծովաց [2]՚ի յորդութիւն գեղջ յեղեղեցից, և ըղգաշտս ապարախոյզ բազմօք աղհմանեալ՝ ՚ի տարածումն լայնութեան քարանձաւ չափեցից, և զաւուրսն յորոց անդադար շաւիղս եղեգանց ՚ի հաստատուն զգուշութեան գլխոց կազմեցից, և ոչ գիտէ մի ՚ի բարդելոյն անօրէնութեանց զօրեցից ընդ զբօսն սահմանի զբաւել: Կա՛ զի թէ զհնդիս Նախաստան ՚ի մի լուծ կշռոց զօդեցից:

և կամ զլեառն արարատեան 'ի կէտ ամբարձման [3] Նրժարի միոյ արդարութեան միջնորդ կացուցից, ոչ հաւասարէ այնր հարթութեամբ համազուգակցել։

Բ. Ո՛ստոս [4] ամբարձուղէ՛ ստուարատեղն՝ տերեւալից՝ ունայն 'ի պտղոց, նմանակից յաւէտ հարազատ այնր թզենւոյ՝ զոր տէրն գօսացոյց. քանզի սաղարթօք վարսից, այս է՝ արտաքին զինօք բարեշուք կերպից՝ իբր պսակաւ խիկք պաճուճեալ, [5] բացականայն գոս բաղձալի. իսկ եթէ մերձեսցի ոնկողն խուզել զկնդրելին, գտցէ զքեզ ունայն 'ի բարեաց և զարշելի 'ի գեղեցկութեանց, ծաղր տեսողաց և նշաւակութիւնք նախատողաց։ [6] Ո ի եթէ աստաժամին յանգգոյշ ժամուն հերացանծ տունկն պտղաբերոյս անկենդան, որ զոյն պատկերն է անպատրաստից, եկն ընդ անխծիւք, և կամ երկիր տապեալ ցօղով, [7] և ոչ բազմապատիկ զաւակս արգասեաց երկրագործութեան տածողացն մատուցանէ՝ քեալ մասամբ, իսկ դու՝ ով անձն իմ եղկելի, սահման բանաւոր և տունկ կենդանի՝ և ոչ 'ի ժամու իւրում պտղաւոր, իբր ոչ զնոյն կրեսցես պատիժ նախնում տակիդ։ Ա՛ռ զի [8] զհամայնն ընկալար 'ի քեզ անպակաս յառաւելութեանց, սկզբնաւորեալ 'ի մարդն առաջին և մինչև 'ի սպառումն ծննդոց նորին, զերս գործոց նմանութեանց և զգխաւորս նորոգս՝ առելիս և անախորժելիս հատուածին զքեզ տղ։

Գ. Աչ վասն զի եղի զքեզ նպատակ համդէպ երեսաց տեսութեան մտացս՝ անձն իմ անպիտան, վլինօք ձգելոց արձանաց բանից, իբր զանընդել զաղան վայրենի՝ անողորմաբար զքեզ քարկոծել։ Որ թէպէտ և [9] ոչ պատահիմ անուանիլ արդար, սակայն յառաջնումն պատասխանւոյն՝ իբր ընդ սոսկի ումեմն՝ ընդ անձին յօժարամիտ կամօք ազորիմ, ըստ իմաստութեանն բանի. և զլոյզս մտաց խորհրդոցս գաղտնեաց [10] իբր զգլխաւորեալ յանդաւորութիւն չարութեան գործոց խառնամանեալ, քեզ տարածեցից՝ ամ իմ և տէր։ Ո՛վ իրով չափով չափեցից զանձինս սորանք, 'ի քոյդ անմնեալ զթութեանց [11] այսրէն չափեցայց՝ ընկալեալ զշնորհս յաճախագոյնս ընդ [12] մեծագունիցս պարտեաց։ Աչ որքան վիրացն հարուածք անբժշկականք և անհնարաւորք ճարակեցլին, այնքանեօք չափովք կրկին առ ամին

և խնամոք առաւելից բարձրեալ բժշկիդ բարեհաճա-
կեալ լուսաւորեսցին. և [13] 'ի պարտուցն առաւելութի,
նոյնքան փոխատուիդ առատատուութիւն բարեբանեալ
միշտ պատկեսցի, ըստ խնկաւորդ քում առակի : Օ՛ի
քո է փրկութիւն, և 'ի քէն է քաւութիւն, և աջով
քո նորոգութիւն, և ձեռամբ քո զօրեղութիւն, և 'ի
հրամանաց քոյ արդարութի, և յողորմութեանց քոյ
ազատութիւն, և յերեսաց քոց լուսաւորութիւն, և 'ի
գինւոյ քոյ զուարճութիւն, և հոգւոյդ քո բարութի,
և օծմամբ իւղոյ քոյ սփոփութիւն, և ցօղով շնորհի
քոյ զուարթութիւն. և դու տաս մխիթարութիւն, և
մատուցանես զվհատութի, և բառնաս զխաւար վշտ-
տաց, և պչեծութիւն ողբոց 'ի ծաղր փոխես : Եւ քեզ
վայել է օրհնութի գոհութեամբ հանդերձ յերկինս, [14]
և յազգս հարցն և 'ի ծնունդս նոցա, և յաւիտենից
յաւիտեանս. ամէն :

---

1 Ի յաւէժ հեծեծանաց : Կտակ կոչէ յայս ասէ՝ թէ զայս մատեան ողբոց գրեալ վասն իմ և վասն իմոց նման մեղաւորաց, կամիմ յայտնել 'ի սմա իբրև 'ի հայելի՝ թէ ով եմ ես, զինչ էի, զինչ եղէ, և զինչ կարեմ լինել այժմ և զկնի մահու, և ցանկամ զի որպէս կտակ՝ հաստատուն և հաւատարիմ մնասցէ :

2 Ի յորդախաղաղութեան տեղւոյ : Եթէ զկեծ մի փոխեսցես 'ի գոյն սեւակի, և ըղձալոյս ողորմելոց ծաղկոյ, բաղում ընդարձակութեամբ արարից իբրև տարածեալ թուղթ. և շարադրեմ, զկրձունս անատոց եղեգանց կաղմեսցես իմոյ գրիչս, ոչ կարեմ զամփոփեն 'ի բարդեալ մեղացս 'ի գիր անցուցանել :

3 Ներքին հոյ արտաքուստ : Ուղիղ կամ հաւասար թաթի մոյ. եթէ ասէ, հանդէպ մեղացս 'ի մի կշիռ եղից զմայրս լերանանս, կամ զլեառն արարատեան՝ այսինքն զմասիս, ոչ հաւասարին միով չափով կշռել :

4 Ծառա աճեալ ... ունող բարձր ուղէշ կամ շառաւիղս. կարօտացեալ, հաստ առեղամիք, կամ ոստովք : Առասնոր յայլ եղանակ փոխէ զկշռամբանան. իբրև զի կարող էր ով խորհել և ասել առ աղօթաւորս մեր, այսպէն կան 'ի քեզ նաև բանք բարիք և գովելիք, և զինչ զայնցանէ լսել՝ զմեղապարտն միայն յեղյեղես : Առ որ ասէ. դոյն իսկ յանձնէ իմոյ պարտաւանս. զի թէ և կրօնաւորութեամբ և քահանայական կարգաւ և վարդապետութեան երեիմ իբրև ծառ բարձրացեալ, ամրացեալ ոստովք, տերևալից, բայց մեղ են պտուղքն. նման եմ անխծապարտ թզենւոյն, և այլն : Զայս յանդիմանութի տատկացուցանէ 'ի կարգին :

5 Բարգաւաճեալ ... : Հեռաւորեցին բաղձալի ես վասն երկոցն և կախեալ տերևոցն, այսինքն արտաքին բարեպաշտական նշանօք, որովք իբր պատկեալ զարդարիս : Բայց յորժամ անկողն ծօ մերձենայ առ քեզ՝ զպտուղն խնդրելով, գտցէ զքեզ դատարկ 'ի բարեաց. և ...

՚ի փեղշութեանց, այսինքն զգուշել ՚ի նոյն իսկ գեղեցկութենէ աներևոյն վասն անպարտութեանց. կամ, ՚ի մէջ գեղեցկաց գործել։

6 Զի եթէ աղաչեմ. Եթէ յանդէպ ժամանակին, յանդիւղ ծամօն, յանկարծելի ժամու տասուանին անբևաղարդ թզենին անպտուղ՝ որ փոքր օրինակ է անպատրաստ կամ հեզգ անձանց, անէծս ընկալաւ. իսկ դու զոլով տանէկ բանաւոր՝ որում միշտ է ժամանակ բարեգործութե, առ կայն և ոչ գտնէ ՚ի կարևոր ժամուն, կամ և ոչ երբեմն առնելով պը տուղ, Քէը. զիարդ ոչ նոյնպէս պատժեսցիս ըստ նախասացեալ օրինակին։

7 Եւ ոչ Բազմադարեն .... ամբարշտաց, Եւ ոչ յամառ. մի օրին. և բազ մադարեն .... ոչ ամբարշտաց, Եւ ոչ յամառ։

8 Զհամայնն ընկալաւ ՚ի ձեռս Զամենայն չարիս՝ որք են բերք նանրու թեան և առէլիք այս, կամ զմեղս ամենեցուն ՚ի քեզ ընկալար. անգո յաստուածութեանց, ըստ, աստուծոյ, սկսեալ յառաջին մարդոյն մինչև ՚ի վերջին ծնունդ նորա։ Զայս կամ ըստ նմանութեանն առէ, իբրև թէ նման ամենայն մեղուցելոց՝ որ եղեն և լինելոց են, մեղայ. և կամ զի վասն ամենայն մարդկան որ գալոց են, կայմէ զաղօթս ըստ աեղւոյն ՚ի բանին Գ. Զ. վասն այն մինչև ՚ի վերջին մեղուցեալն յար մարէ զբանն։

9 Ու դատաւոր առաջնոյ։ Թէպէտ և չէմ արժանի կոչել արդար, բայց զգործ արդարոյ արարից, այսինքն զամբաստանութիւն անձին, ըստ բանի իմաստնոյն (առակ. ժը. 17.) « Արդարն անձին իւրում չարախօսէ ՚ի սկզբան բանից իւրոց »։

10 Իբր խղճմտանք յանդիմանութեան։ Զզգալանի խորհրդոց մտա ծութեան՝ իբրև զլրացեալ կատարումն չար գործոց խոստովանելով։

11 Առաջին մեղաւոր։ Որպէս զի որչափ ես մեղադրեմ զանձն իմ, փոխարէն ընկալայց զչափ ներողութեան յանպակասելի գթութենէդ քոյ։

12 Ընդ Քրիստոսի դատաւոր։ Այսինքն, փոխանակ աստուծոյ պարտեաց. յայլ տպագրեալս կայր, ընդ Քրիստոսի. բայց այժմու եղեալս ըստ լաւ օրինակին՝ առաւել յարմար է։

13 Ի դարձուցանել առաջնոյն։ Ի չառաւելթէ պարտուցն առաւել ես զմին առատ թողութի փոխատուիդ, ըստ քում առակին, թէ մատու ցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոյ, և ՚ի չկարելն հատուցա նել՝ զամենայնն շնորհեաց. (մատթ. ժը. 24. 27.)

14 Եւ յաղագս հարցն։ Քեզ վայել է օրհնութի ոչ այժմ միայն, կամ զոր այժմ կարեմք մատուցանել, այլ և ամենայն օրհնութիւն որ լինէր յառաջնոց հարցն, կամ ՚ի ժամանակս նախահարցն, և որ յետ այսր լինիցի ՚ի ծննդոց նոցա։ Նաևէնայն յայս առնէ, թէ որպէս զխոստով բանս մեղացն յառաջին մարդոյն մինչև ՚ի յետնին յարմարեաց յանձն իւր, ըստ ըծ. 8. նոյնպէս զանեալ զամենեցուն օրհնութիւնն ընծայել այս. որպէս յամբաստանելն զանձնէ՝ զամենայն մեղուցելոց կերպա րանս զգեցաւ զանձամբ՝ թէպէտև բազում անօթով, նոյնպէս յար գարացուցանել և ՚ի մեծացուցանել զնա՝ աստուածոյն յօժարու թեամբ յինքն առնու զբերան և զախտ ամենայն արդարոց՝ որ յէր կինս և որ յերկրի։

# ԲԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ քանզի միապէս մատնէ կորստեան և[1] զզղջումն անժգնապէս և մեղանչելն մոլեգնաբար. զի թէ և օտարացեալ իմն են 'ի միմեանց այլայլութիւնք նմանութեանցն, սակայն զկերպարանս երկաքանչիւրոյն առ միմեանս եղեալ, զմի և զնոյն վհատութեան ծնունդս արտադրեն։ Զի մինն զհզօրին ձեռն իբր ապիկար թերահաւատէ, իսկ միւսն ըստ նմանութեան քառոտանեաց պաճարեցելոց յանզգայս եղեալ, զյուսոյն ատամն խզէ. վասն որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ՝ հանապազ խնդրոյ սատանայ, իսկ երկրորդաւն՝ ըստ նմանութեան լափլիզող դժոխոցային գազանի՝ իբր կերակուր արեամբ պարարի։

Բ. Եւ արդ[2] իբր զգանեալ բազմահարուածեան հեծանաւ և յափն մահու ժամանեալ, դոյզն ինչ դարձուածն շնչոյ ընկալեալ և յոգի կենդանի եկեալ կողկողեցայց, պատապարեցայց, կանչեցայց, յարեայց յանկենդանականս կորստենէ, օժանդակեալ Քրի ձեռամբն՝ որ զթածն է յամենայնի. 'ի բարերար յերկնաւոր հօրէն՝ փրկութեան և բժշկութեան պտուղ ընձեռեալ ինձ[3] մեղուցելոյս, ախտացելոյս և մահացելոյս։ Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց՝ զհաւատոյն շինուած կառուցից. քան զի և[4] ոմն 'ի նախնեացն սրբոց զինեալ, փոխեցաւ իսկոյն յանմահականն վիճակ վերին. զապաշխարութեանն դեղ ընկալեալ, ապաշաւանաց թռչական զգրաւականն անեղծութեան աստէն ժառանգեաց, 'ի վեր քան զորոց առաքեալ ընդ նմին ցուցանէ, որք զհանդէսն մրցանակին յերկրի կատարեալ, ապագայիցն և երկնաւորացն յուսոյ հաւատացին, և անտեսիցն ճոխութեանց փարթամացան։ Իսկ[5] զխորախոյս անեղանի պաշտելի բանին յի-

չեալ առ ամին, զի ամենայն ինչ հնարաւոր է այնմ՝ որ հաւատայն, [6] է զի և զչափն ընտրականայն բարեմասնութեան ոչ հաճելեայն գնեալ աստանօր, զայս սպառկեր բանի ընկալաք նախնի գահերեց առ 'ի սրբութենէն մեւս սովին հանդերձել. առանց որոյ և ոչ տէրն փառաց զիւրսն առ մեզ հրաշագործեաց զօրութիւնս, եթէ ոչ նախ ընակից խնդրեաց բարեպաշտութեանն իւրոյ զհաւատոյն մեր. ուստի և [7] կեանս ընձեռել զօրէ ինքնիշխան բաւականութեամբ առընթեր գոլով ոչ. քանզի հաւատք քո կեցուցին զքեզ, օրհնաբանեալն ոչ բերան վկայեաց: Քանզի արդարև [8] սեան տեսութի և կատարեալ խնամութիւն և առ ած ընտանութիւն և բարձրելոյն ծանօթութիւն՝ հաւատոց մանն՝ երջանիկ և ընտրեալ անուն, որ [9] յարանցեալ մնայ անվթար և անփակելի, պատուակից գոլով սիրոյ և յուսոյ: Ո՛ ի եթէ [10] փոքու սերմանի զոյն հատի մանանխոյ չափոյ նմանատի հաւատք զլերանց մեծութիւն փոխէ զօրեղապէս 'ի սիրտս ծովու, առաւ յերաւի ընկալաք զայն սկզբնաշաւիղ առաջնորդ կենաց՝ աներկմիտ պաշտօն առ ած, [11] որ զապառնիսն և զծածկեալսն առանց երկբայութեան 'ի հոգւոյն աչս տեսանէ, [12] Երրորդութենն փառաւորելի անուանքն պատուեալս հաւատք՝ ընդ սիրոյն զատեալ և յուսոյ: Ո՛ ի թէ և զերկին հաստատես առանձնաւորականս 'ի մի և 'ի նոյն խորհուրդ զխոստուցես, յաւէտ մեծացիս նորօք 'ի յած. քանզի թէ հաւատաս 'ի նա, և սիրես. որով և յուսաս աներկբութից պարգևաց նորին: Նմա փառք յաւիտեանս. ամէն:

---

1 [illegible]: Զգօումն քան զչափն աւելի, այսինքն յառաջատութք, մորինակ 'ի կորուստ մանանէ իբրև [illegible]. այսինքն կատարութք և անսանձ. զի թէպէտ կարի առրելոյ և անմանք էն մեմեանց, սակայն բաղդատելով ըստ գործոյն՝ զնոյն անյաւութեն ներգործեն: [illegible], անչափ զզօումն՝ զձեան ոչ թերահաւատութք ակար համարի՝ 'ի ներել նաև զզօացելոյն և տաղաչխարագին: Իսկ [illegible], անսանձ մեզանչելն՝ իբր անսաստ անզգայ ասնելով 'ի չարիսն, [illegible], զայս զարձմանն բանիս, կամ զկալ յաւոյն առ ած՝ իսկ. վասն զի կամ յանդգնաբար վառաչի յաղարմութենոյ, և կամ խաստաբառութք հրամարէ 'ի փրկութենէ: Վասն որոյ [illegible], ընդ անչափ զզօումն [illegible], հաղաբարթելով կամ խանդաղատելով խնդրոյ աստանոյ. զի բարի կարծեցուցանելով զայնպիսի զզօումն, զիւրաւ խարէ զմարդ: Իսկ [illegible], աներկիւղ մեզանչե-

լուն, իբրեւ զաղամ սրբելով. այսինքն ինձ արիւնախանձ՝ լիզելով լուծեալ զարիւն. և դժոխորովայն, որոյ որովայնն անյագ է իբրեւ դժոխս. կամ բուռն իսկ դժոխքն են որովայն սատանայի. այսու այս մարդոյ յայտնապէս մեղանչել, և նորա մեղօքն պարարեալ հեշտանալ:

2 Իբր զծեծեալ բազմահարուածեան: Իբրեւ զծեծեալ, և 'ի բազում անդամս մարմնոյն հարուածեալ կամ ջարդեալ. հեծանաւ, հասա դաւազանաւ կամ բրով: Մարթ է եւ իմանալ բազմահարուածեան հեծանաւ, այսինքն սաստիկ հարկանող գաւազանաւ. յանկարծ մահու, 'ի դուռն մահու հասեալ, փոքր մի ոգի առեալ, և զօրացեալ կանգնեցայց, և այլն:

3 Մեղուցելոյս: Զ օրին. Մեղաւորիս:

4 Որ 'ի նախնեացն, Ենովք, ուսուցեալ շնորհաւ. այլ օրին. ուսուցեալ, այսինքն հաւատովքն զօրացեալ ըստ առաքելոյ (Եբրայ. ԺԱ. Ե.) առաւելաքոյ մահկանացու կենացս փոխեցաւ. զարդարեալ սրբութեան գեղ ընծայեալ. հաւատոյն զօրութեամբն ապաշխարելով 'ի կեանս յայս, այսու իբրեւ թոշակաւ դաւանութեան անեղծութեան ժառանգեաց զԵդեմ, այսինքն յառաջ քան զմեռանելն: Ի սոյն յարեալ է և որ զկնին. 'Ի վերջ ժամն կորոյ. այսինքն Ենովք զանեղծութիւնն ժառանգեաց առաւել քան զնոսա, զորս առաքեալն յիշէ ընդ նմա, այսինքն քան զԱբէլ, քան զԱբրահամ, և այլն. զի Ենովք իբր երեք ժառանգեաց յառաջ քան զմահն. իսկ այլքն [illegible]. այսինքն թէպէտ զհանդէս վկայոյն յաղագս ոչ բովանդակ կատարեցին յերկրի. բայց ապագայ երկնաւոր հատուցմանցն յուսով անի ունէին յետ մահուն. կամ 'ի յոյս հանդերձեալ երկնաւոր բարեացն՝ հաւատովք կացին մնացին, առանց մտանելոյ ինչ զանէ ժառանգելոյ առանձնոր: Վասն ապաշխարութեան Ենովքայ տես զկնի. ԺԱ. ԻԹ. Թ:

5 Զերամաւոր փեսային. զյորդոր հաւատոյն յիշեցից զաւետարանականն, թէ ամենայն ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայ:

6 Եւ ոչ և այլ: Եւ և այս, զի եթէ զչափ համեմատութեան ընծայի և ամենահաճոյ առաքինութեանցն քննեսցուք, զյաւէտ հաւատոյ զառնելն [illegible], առաջին և զկնաւոր քան զայլս. եւ զի հաւատոյ զաւանութիւն պատրաստեսցէ առ 'ի [illegible], առ 'ի մտանել 'ի սըրբութիւնս եկեղեցւոյ միութեամբն. որով շնորհաշարժեալք՝ այլ բարեգործութիւնքն հաճոյ լինին այ:

7 Կենաց ընծայեալ շնորհ: Կեանս հոգւոր և մարմնաւոր զօրէ տալ հաւատքն միայն իբրեւ զօրութիւն առանց օժանդակութեան պահոց, աղօթութեան, ճգնութեանց և այլ բարի գործոց՝ որք ոչ հային անմիջաբար յԱծ. իսկ հաւատք [illegible], անմիջաբար յԱծ հայելով, ունի զայն զօրութիւն. ուստի և քն հաւատոյն տայր զարժանութիւն:

8 Անուն փեսային: Հաւատքն է յատուկ կամ պայծառ անուն փեսայութեան իմանալեացն և Աստուծոյ. զի թէպէտ ըստ ինքեան նուէր է, բայց համեմատեալ առ բնական լոյս մտաց, առաւել պայծառ այս զիմել զաստուածայինսն, զոր բնական լուսով ըստ այնմ միայն և կամ կարծեօք ճանաչեմք: Կատարեալ խորհրդոյն, իբրեւ հաստատեալ յանուան միկրութիւնն այս, քան զատուցական իմաստութիւն հաստատեալ 'ի փիլիսոփայ լոյս մտաց: Ի [illegible]. զի հաւատոյն ճանաչեմք առաւել մտօք առ Ած, և նմանիմք Աստուծոյ մտաց: [illegible], այսինքն այս իբրեւ զկրկնական արարչի և փախճանի: [illegible]. այնչափ ընդարձակ և աղուորական՝ որ ունի միայն կոչեցաւ, և ընծայի Աստուածայինն 'ի Նմանէ անուանադրեցան՝ [illegible]: Եւս, ընծայի անուն [illegible] ըստ սուրբ գրոց անուանեալ. իբրեւ թէ ոչ ունող զհաւ կամ սկիզբն, առանց հաւելոյ կամ սպառել

լոյ. քանզի յորժամ հետեւ եղեւ մարդն, եղեն եւ հաւատք. ոչ 'ի յետագոյ գոլոյ յայտնեցան հաւատք, այլ 'ի սկզբանէ հաւատովք խնամովք զյաւիտենական հաստատեաց. բառ երրորդ. ժա. 3.

9 Յառաջիկայ Հաւ. Որպէս աստեղք սկսանելոյն են հաւատք, նոյնպէս մշտամնայականն, զորով եւ նմանն ձայնիւ՝ լոյս, կամ լուսաւոր. Նմ բարեգործութիւնք իւր ասպատ, կամ ընդ արտաքին պարագայս կարեւորք, ոչ մշտ՝ եւ ոչ յանհնացանց գործին. խակ հաւատքն իւրն կարեւոր եւ անհրաժեշտ արտաքին իւրոյ՝ մշտ անեւաղ մնայ 'ի կեանս յորս, անքիքող եւ անփոփոխ, անփոխելի եւ անփոփոխն՝ ընդ յուսոյ եւ սիրոյ. Կամ, 'ի սկզբանէ աշխարհի մինչ 'ի կատարած՝ յանհնայն միշնակ կենաց ձգեցաւ հաւատքն. մինչ զի նաեւ յանտեսն միշնակ անմեղութեանն կայր եւ կարեւոր էր՝ որպէս յոյսն եւ սէրն. Նաեւ խնամովք, զի զմեղադրելով աստուածութիւն ընծայէ հաւատոյ ասոր փոփոխելոյ՝ ոչ հանդիսաւորեալ յուսոյ եւ սիրոյ, այլ բարոյական առաքինութեանց. Իսկ զառաջին յառաջինուլ Հաւ., մի զհանդերձեալսն խնամոք. զի անդ 'ի գէմ յանգիտան տեսութեան այլ խափանեսին հաւատք՝ որպէս եւ յոյսն, ոչ միայն բառ ներգործութեանն, այլ եւ բառ ունակութեան. զի զօր յայտնի եւ անկարաստ տեսանելով ժառանգէ որ, ոչ միայն չհաւատոյ զայն եւ չյուսայ, այլ եւ ոչ կարէ հաւատալ եւ յուսալ այնուհետեւ. Բայց եթէ իմանալիցեմք մնալ բառ գործոյն եւս, այսինքն բառ երանութեանն՝ որ փորձք է հաւատոյ.

10 Փոքր աներեւոյթ գոյի. Հաւատքն բառ չափու փոքր աներեւութականն կամ աներեւոյթի իրի, որ է հաւատ մատանիոյ, զորաւոր է, եւ այլն. Բառս աներեւոյթ՝ անծանօթական է աստ, ի մանակումբ 'ի սեռականէ բառին անբառ., որպէս 'ի բանէն Ինքն անծանօթի կենդանի. բառ այսմ առեալք անհնարանի, զարմանալի, անհասանելի. այսինքն անհասկացող, եւ այլն. Եթէ, ասէ, այնչափ փոքր հաւատք կարող է զլեռնս խախտել եւ 'ի ծով ընկենուլ, ապա յիրաւի զայն հաւատս ընկալաք անզրմահալար., յաստիճանաց առաջնորդ 'ի կեանս հոգւոյ եւ մարմնոյ, կամ 'ի կեանս շնորհաց եւ փառաց. այլ եւ ընկալաք Անդրէաս ..., անփոխ եւ մշտ հաստատ պատուն իւ, առաջ անծանօթութիւն զխնդրելով արտաքին պաշտամանց, յորս մարթ է երբեմն ստորել երեւելի իրէր. կամ կեղծաւորել, կամ աւերել. Զհասարակութիւն բանիս մարթ է պարզել եւ այսպէս. ապա յիրաւի զայն սկզբնաշարից առաջնորդ կենաց ընկալաք անեղծ մեա պաշտօն իւ. զի առանց հաւատոյ անհնար է պաշտել զնա.

11 Ուր Զօրացուցան, զլինելոյն կամ զհանդերձելոցն, այլ եւ զանցելոցն անհերքելագոյն 'ի հոգւոյն սուրբ Փրկչին, ասաց անուանել. զի հաւատքն է յանդիմանութիւն որոց ոչն երեւին. բառ երրորդ. ժա. 1.

12 Աներեւութից ... Աներեւութի կամ զերեւութթիւն ասէ, որ է անտեսն խորհրդաւոր եւ սքանչելին, եւ կամ զածային անձինն ասէ. զի որպէս փնտրանէ զաւանելք՝ թէ երեք անձինք են յԱծ, այնպէս զհաւատոյն եւ զծածկագոյն՝ նախին անուանեք ասէ առաքեալն. (ա. կոր. ժգ. 13.) Մնան հաւատք՝ յոյս՝ սէր, սոքա երեքեան. Դադարեալ, այլ ասէ եւ երրորդութեան անուանքն պատուի հաւատան. զի որպէս անուանս Երրորդութեան՝ յերկնաւորն կոչել կոչին, նոյնպէս հաւատոյն ընդ իւր ընծայեցին զանուն, զերկնաւորն թիւ կոչէ. այսինքն. Ե. հաւատ. Դ. յոյս. Գ. սէր. Զի թէ եւ զերիս հաւատոյ առաքինութիւնս, զերիս պաշտամանց զանազանելոյ. զայս կամ զերից առաքինութեանցն ասէ. այսինքն. եթէ զհաւատ՝ զյոյս եւ զսէր՝ որք որոչեալ եւ զանազանեալ են բնութիւ, 'ի Հ Ե 'ի Նոյն խորհուրդ երեւոյթ. այսինքն յԱծ զերեւելին միացուցեալ իւրն յառաջնոյ եւ 'ի փոխման,

Նորօք մեծամեծս 'ի յանձ. զի ԲԵ հաւասար 'ի Նա կրէր յանձնանն բարի և 'ի բարեկրար, ոճէլ ևս զնա. և սիրելով՝ յաւէտ փայելել յանկերելոյ պար_գևս նորա։ Այսոր քաջ միաբանի ասացեալն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. Ճառ Ա. յաղագս հաւատոյ. «Նախ յառաջագոյն հաւա_տայ մարդ. և ապա հաւատայ, սիրէ. և ապա սիրէ, յուսայ. և ապա յու_սայ, արդարանայ. և ապա արդարանայ, չինի. և ապա չինի, վերանայ». Եւ այս է մեծամեծն 'ի յանձ, զոր ասաց նոա գրիգոր. Կամ զարմեալ մէջէն հօքաւածովն զանձայքն անձանց առէ, որք որոշին անձնասպանաբ. որպէս կայէ և 'ի բանն ԽԴ. Դ. զայս ևեթ 'ի մի խորհուրդ գիտակցել, առէ, ընդ երից աստուածութեան, այսինքն զհաւատն՝ հօր նմանեցու_ցանելով, զյոյսն որդւոյ, և զսէրն հոգւոյն սրբոյ, այսու յարդարեալ 'ի բարիս՝ մեծամեծս յանձ. քանզի 'ի միա ասնեա՝ թէ որպէս ոչ է հայր միայնակ առանց որդւոյ և հոգւոյ, այնպէս ոչ է հաւատք հաճոյական առանց յուսոյ և սիրոյ. առաւել յորժամ հաստատեն 'ի նա, քանզի ես սիրել և յուսալ։ Կամ խնա այսպէս, որպէս զոր անձն ամբողջն կոր_զայցես հաւատով, ընդ նմա և զայլ անձինն զասնես փառն համա_գոյութեան, այնպէս զորս յերից ամենազօրական աստուածութեանցս որոշ մարդ յանձին ունիցիս, առանձնա և զայլն՝ որք ընդ միմեանս կա_պեալ կան. և այնպէս մեծամեծս նորօք յանձ քաւթեամբ արժանի պար_գեւաց և փառաց յերկինս։

## ԲԱՆ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոյի առ նոյն ակերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ ես յետին գաւառական՝ ունայն 'ի բա_րեաց, նսեմացեալ խորհրդով մտացս [1] 'ի սկզբնաւորն խօ_սեցելութեան 'ի ձեռն ձեռին ասացողին խոյ յանձնեմ յու_սով հաւատամ Յսի Քսի առնել զոր կամի. Քանզի հաւատացի, վասն որոյ և խօսեցայ խոստովանեալ Պօղո_սիւ, ուսեալ 'ի Դաւթայ, թէ և արդ կենդանի մար_թանք նորա այց լինի արդարոյ. որպէս հաւատովք ծա_նուցեալ զնա, և զզօրութիւն յարութեան նորա, ըստ առաքելոյ, և զհաղորդութիւն չարչարանաց նորա, և որ զկնի բերին ասացեալքն. Այսպէս է ամեն և յայժ նմա_նատիպ՝ հաւատոյն խոկալով և 'ի նորադս այս փափա_գութիւն, որ 'ի մեղացն 'ի բաւութիւն, և [2] 'ի չարա_գործութենէ յարդարութիւն, և յանմաքրութենէ 'ի սրբութիւն, և յանբաւելեացս պարտեաց [3] մաքրու յան_

ցանաց՝ յանդատապարան երանութիւն, և 'ի ծառայա-
կան կապանաց յերկնաւորն ազատութիւն։ Քանզի [4]
զխորդ ոչ արդեօք չքնաղ քան զբան՝ և 'ի մթութե-
նէ երկեանութեան խաւարի զտեալ՝ և Աստուծով օ-
ժանդակեալ և օգնեալ սիրտ մեղաւորի, որ ընդ մարմ-
նապէս ծիծաղելն՝ առ Նմին հեծէ հոգեպէս։ Որ թէ-
պէտ և յամբարձմանէ բարձրութեան գերագունիցն
կայից՝ ստորասուզեալ ծանրութեամբ յանդնդային վե-
հին խորխորատ գբոյն կործանման, [5] նորագիւտ մեղօքն
անջրելեօք, ունի և նշխար նշուլից փրկութեան կենաց
հայաւոր, [6] իբր կայծակն լուսոյ պահեցեալ 'ի միտս և
յոգի, որպէս զհուրն նշանաւոր և զարմանաւոր Թանձ-
րամած՝ հրաշիւք մնկարգեալ վեհին հրամանի [7] 'ի
յատակս ներքինս նիրհեալ ջրհորոյն։ Ուստի և մե-
ղուցելոյն խապառ Թաղծելոյ, և ակնկալութիւն բարւոյն
բարձելոյ, և համարձակութիւն շնորհին լքելոյ, յու-
սալ վերստին անդրէն միւսանգամ նախապարգևիցն
փառաւորութեանց դարձեալ հասանել. քանզի և
յաստուածուստ անդուստ հանդերձի և այս՝ ներգոր-
ծիլ առ սոյնս. վասն զի ոս զտուողին զօրութիւն ամե-
նահնար ունտարանէ։ Զոր խունկ հաճութեան մեծա-
պէս հոտոտի ած, քան յամենայն բուրումն անուշից,
և քան 'ի խառնեալն երբեմն աղացմամբ 'ի սպաս խո-
րանին, որ է կերպարան անձանց խոնարհից զիջեալ բե-
կութեամբ՝ առ 'ի միութիւն նոյն նմանութեան։ Ըստ
որում հարցեալ փրկչին ամենից՝ ցանկաս ախտացեալս
տեսանելեօք, հաւատա՞ք ասելով առ այդ թէ կարող
եմ առնել ձեզ զայդ, ոչ պարգևեաց աչաց նոցա լոյս,
եթէ ոչ նախ զհաւատոյն գրաւ ընկալաւ։ Քանզի
զինչ քան զմեռելութիւն քառօրեայն դիոյ առ կենդա-
նութիւն մեզ անյուսագոյն, [8] առ որ կանանցն ժամա-
նելոց 'ի յառս արարչին հաւատոյն հանդերձանօք, ան-
յապաղաբար զփառացն ո՞յ տեսին զհանդէս՝ 'ի յեղբօրն
կենդանութիւն։

Բ. Իսկ [9] աստատին անխափան շնորհին մնացելոյ
զկնի մեղանացն՝ հզօրագոյն են վկայք։ Նախ Նինուէք,
զկնի Ահարոն, յետ նորա Դաւիթ, դարձեալ և Պետ-
րոս. ընդ որս և փոքրն Եղիազար, որ 'ի մեծէն ո՞յ ո-
ղորմեալ՝ մեծագունիցն վկայեցաւ։ Նշելոյդ է առ այս

և բանն առակի անառակ որդւոյն. Թողում զպատանիկն՝ որ 'ի տեառնէ գողեցաւ, և զմաքսաւորն՝ որ 'ի բարեգործէն յիշատակեցաւ, և զաւազակն երջանիկ՝ որ յաղձակուՃն վերջին շնչոյն հաւատովքն պսակեցաւ, [10] և զոր անքաւելին էն պարտիք՝ զհաղորդեալքն սպանման մահու արարչին. առ որս և գլխաւորն ընտրելոց Պաւղոս, որ երբեմն նախանձն էր անօրինաց: Յորոց ոմանք ծանօթութեամբ օրինին զկորեալքն անդրէն կանգնեցան բիւրապատկեան զերազանցութք [11] քան զնախակրօնիցն առաւելութիւն: Իսկ [12] որ նախ քան զօրինակին աւշութիւն՝ զաւանդն պահեալ հայրենի մերձաւորագոյն զօղ պատուիրանի սկզբնահօրն զաւանութեան, որ և զնախնւոյն պարտիս խնքեան վարկուցեալ, զնորայն իւրովքն տուժեաց կրից տաժանմամբ, ոչ քաւեցաւ միայն ծածկեալ 'ի յերկրի, այլ չարչարելեան մարմնով՝ բանականաց ընութեան կենաց կոչապետ՝ յաղթող զօրապէս բանութեան մահու փոխեցաւ: [13] Իսկ ոմանք 'ի բուսոյ տհաս հասակին չարութեամբն յերկարաձգեալ. 'ի կատարեալ տիս ժամանակին ոչ 'ի բարձրութեանն կայից հասեցան, քան թէ 'ի ստորնականաց թշուառութեանց զժնէից կենացս 'ի կամացն երկնից համբարձան: [14] Այլ թէ այն ժամանեաց կանխաւ՝ զօրացեալ 'ի չարեացն զարձ, որ մինչև յօկեղէն նիւթ յեղանակեալ հոգւոյ գոյութեան, և պատկերն արքունի 'ի պատիւ կերպիս մեռոյ նկարեալ արքունականն քանդակուածով, անկորուստ և անփոխադիր և յաղթող զաւաճանութեան զմերս ենթադրեալ ընութիւն, ապա առաւել յուսալի է այժմ մերկապարանոց լուսաւորութիւն անքող և անվերարկու՝ տերամբ Քրիստոսեալ. որով և միշտ հաստատեալ պահի 'ի մեզ բանն տէրունի, ըստ մարգարէին ձայնի, ուխտ խաղաղութեան և կնիք հաստատութեան առ հաշտարարն միջնորդ՝ երկնային անմահ կենդանի և մշտնջենաւոր բարեխօս: Նա ուրեմն ըստ այսու կանոնի Աշխարհազանի, և անփոխադրելի սահմանի, և արարչական պայմանի, [15] համբուրեմ հաւատոց շրթամբք զպատկեր բանիս, և անն ունիմ փառացն շնորհի. քանզի արդարեւ յարդարացուցանելն զմեզ տէր՝ ոչ որ զօրէ զատապարտ առնել, ըստ առաքելական բանին սահմանի:

Դ. ՄԱ [16] յայս անստուերագիր վստահութիւն ապաստան, կամ կործանեալս կանգուն, թշուառացեալս յաղթող, վրիպեալս ՚ի դարձն կենդանական, ամենաթշուառ չարագործս ՚ի յոյսն, մահու մատնեցեալս ՚ի կեանսն, ընդ ապականութեամբ վաճառեալս ՚ի ձիրն, դժոխային գործովք գրաւեալս ՚ի լոյսն, ստորնաւէր անատնակենցաղս յերկինս, կրկին գայթակղեալս ՚ի վերստին փրկութիւնն, մեղօք կապեցեալս ՚ի համգըստեամն խոստումն, անբժշկական վիրօք վարանեալս ՚ի դեղն անմահացուցիչ, ստամբակեալս վայրագութեամբ ՚ի սանձն հանդարտութեան, սրացեալս վարատական ՚ի կոչումնն, ապառում դժնդակս ՚ի հեզութիւն, ընդգլխաքան լուտացողս ՚ի ներումնն։ [17] Ի ՔՍ ՅՍ և ՚ի Հայր նորին հզօր և ահաւոր, յանուն և ՚ի կամս բարերարութեան հոգւոյն ճշմարտի. օրհնաբանեալ խոկութեանն և միածնութեանն՝ զօրութիւն և արքայութիւն, մեծութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

---

1 Ի ձեռն ձեռին ամենակալի. Յառաջին եղանակութիւնն իմ. ՚ի ձեռն ձեռին. զայս ոմանք ըստ հին ըծ. իմանան՝ ՚ի ձեռն քոյ, որ է ձեռն հօր։ Բայց օտար է. այլ իմանի՝ ձեռամբ կամ զօրութեամբ սեփականին իմոյ յոյժ է. զի սուրբ վարդապետս սովոր է այլուր ևս գրեան ՚ի ձեռն՝ դնել փոխանակ գործիական մասնկան. որպէս աստ և ՚ի բանն ԺԸ. Զ. «Ի ձեռն ձեռին ամենակալի». այսինքն ամենակալ ձեռամբդ։ այնպէս պատմ. ասպարանից. «Ես ՚ի ձեռն ձեռին մեծութեան ծածութեան». այսինքն ձեռամբ մեծութեան, և այլն։ Արդ առեալ կամի բանիւս. նայեցեալ մտօքս յառաջին եղանակութիւնն՝ որով զօրութեամբ արարչին իմոյ ՚ի շաղէ ՚ի գոյ անդ, հաւատամ և յուսամ և զայլ ամենայն անհնարինս գործել. առաւել և ՚ի մեղաց նորոգել զիս, և այլն։ Վասն զի որպէս հաւատացի ամենայն բանիցն՝ զոր գաւանեմ, ըստ գաւթի և առաքելոյն, նոյնպէս հաւատացի թէ նաև այժմ կենդանի խնդրուածք նոցա օգնականն ինձ՝ առ ՚ի կենդանի հաւատովք շնորհել ոչ միայն զնա, այլ և զզօրութիւն յարութեան և զհաղորդութիւն չարչարանացն. զի այսմ գաւանութեան կից է, կամ ըստ որում դարձ հաւատոյն փոփոխութեան ՚ի մեղաց յարդարութիւն, և այլն։

2 [illegible]։ 2 օրին. ՚Ի [illegible]։

3 [illegible]։ 2 օրին. [illegible]. և նոյն իմաստ են. այսինքն ՚ի պարտեաց մահաբեր մեղացս՝ որ առ իս անքաւելի են, անարժան թողութեան, փոխադրել յերանութիւնն երկնաւոր՝ յորմէ չէր անկանել երբէք։

4 [illegible]։ Ո՞չ ապաքէն զարմանալի և ՚ի վեր է քան զբան՝ սիրան մեղաւորի, որոյ միայն զանեալ ՚ի խաւարէ երկրայութեան յորդորմութիւնն այն, և յայն օրինեալ, ընդ ծիծաղելի մարմնով հոգւոյն հատանել զզգամբ։ Որ թէպէտ և ՚ի բարձրագոյն սրբութենէ անկեալ

իսկ 'ի խորս՝ նոր մեղաց Անկրելեաց, գժուարաւ քաւելեաց, սակայն ու-
նի և Նշխար Նշանէն Քրիստոսեան, զմիացուածս լուսոյ փրկութեան՝ զհա-
ւատս և զյոյս յաղթութեն նոյ. որ պահէ 'ի մեղսամակարդ հոգի նո-
րա, իբրև զհրաշալի հուր տաճարին, Նախարդեան, թանձրացեալ 'ի հրա-
մանէն նոյ իբրև ջուր 'ի յատակս Ներհեան. անշէջ ջրհորոյն, որ և խա-
կոյն վառեցաւ (Բ. մակաբ. Ա. 19. 20:) Ջուր և Նշդոյեան, որ բո-
լորովին ապականեալ է, և անկեալութեն բարւոյն բարձեալ 'ի նմանէ, և
փառահաւութեն ընդունելոյ զշնորհն թուլացեալ. միայն սակաւին յուսով՝
մերանին հասանելոյ Նախադրիփիւն Քաղաղութեան, յառաջագոյն
պարգեւեալ շնորհացն և առաքինութեանց՝ որք փառաւորեցին զհոգին:
Ամպ և յանձանաց. այս կայծակն հաւատոյ և յուսոյ՝ որ նկրտործէ 'ի
սիրտ մեղաւորին, յորժամ պատրաստի 'ի նմա. զի զզօրութեն արդարացու-
ցանողին ցուցցէ լինել ամենակարող: Կամ, յորժամ անօրինին այս, զի թոյլ
տալով նորա անկցի մարդ 'ի մեղս. զի յետոյ կանգնելով զնա 'ի մե-
ղաց՝ երևեսցի ամենազօրութեն նոյ: Ցուր խառնէ. յայս հաւատք զղջման
աւելի հաճի նծ, քան 'ի ծխանելիս հին օրինաց խառնեալս 'ի զա-
նազան խնկոց աղացելոց, որ էր օրինակ անձանց բեկելոց զղջմամբ. Առ
'ի ձեռն Նոյն Նմանութեան, այսինքն առ 'ի ունել զնոյն նմանութիւն.
զի որպէս այն խունկք մանրեալք և 'ի հուր արկեալ վառէին առ 'ի
պատիւ նոյ, նոյնպէս սիրտ մեղաւորի զղջմամբն և ապաշխարութեամբ
խորտակեալ վառեսցի 'ի սէր նոյ:

5 Նարդիս Նշմն Անկրելեաց: Այս չէր յօրինակս ինչ:

6 Իբր խայծառ լուսոյ: 2 օրին. Իբր խայծական լուսոյ:

7 Ի յանդէ Ներքին Նհրհեալ ջրհորոյն: Այսպէս ունէին մեր օրինակքն. համաձայն բնագրի (Բ. մակաբ. Ա. 19.) ուր այլ ապագրեալ գնէր եղանակի Ներքին Նհրհեալ ջրհորոյն:

8 Առ որ խառնեցան: Քան զմեռելութեն չորեքօրեայ վախճանելոյ չէր ինչ անյուսալի առ 'ի կենդանանալ. և սակայն վասն այնր կանանցն, այսինքն քերցն ղազարու ժամանելով յառս քնի հաւատովք, անսին զփառսն նոյ 'ի կենդանանալ եղբօր իւրեանց:

9 Աստղին անխզդաց Եղեազարու: Իսկ թէ այսպէս, կամ դարձեալ ան-
կորուստ միայն շնորհն յետ մեղաց, բազում են վկայք: Նախ՝ Եսաւ, որ
ապաշխարելով ընդ մեղս նախահօրն, կամ ընդ իւր մեղսն, վայելելոյ
բառ մասին զանմահութեն՝ զոր կորոյս ադամ: Կարծեք ապաշխարու-
թեանն ենովքայ՝ թուի տարածեալ 'ի փիլոնէ իմաստասիրէ. զի առ 'ի
լուծմունս ծննդոց (բան Ա. համար 82.) յասելոյն թէ ենովք յետ
ծնանելոյն զմաթուսաղա՝ հաճոյ եղև նոյ, մեկնաբերէ՝ թէ յառաջին մե-
ղուցեալ, յետոյ ապաշխարեաց: Եւ Ահարոն՝ յետ մեղաց որթագործու-
թեանն ոչ կորոյս զքահանայութեն: Ընդ որս և Եղեազար: Այս
եղեազար ոչ է աւարեանն (Ա. մակաբ. Բ. 5.) ոչ եղեազարոս ծերն՝
որ նահատակեցաւ (Բ. մակ. Զ. 18.) և ոչ միւս եղեազար քահանայ,
որ պատմի (Դ. մակաբ. Զ. 1:) Զի զսոցանէ ոչ պատմեն գիրք՝ մեղու-
ցեալ ինչ և ապաշխարեալ: Ոմանք բառ հին ըծ. իմանան զեղեազար
որդի ահարոնի՝ փոքր քան զնադաբ և զաբիուդ. իբրև թէ յանցուցեալ
իցէ չկամելով ճաշակել զվասն մեղացն (ղևտ. Ժ. 16:) Սակայն յայտ
ոչ մեղանս նա, և ոչ ապաշխարութեն եցոյց. ուստի և մանաւանդ լսել
յահարոնէ զպատճառս չուտելոյն՝ հաւանեցաւ: Այլա միայն իմանալ
զեղեազար կրսեր որդի մովսէսի (ելից. ԺԸ. 4.) որ անթլփատ գոլով
ընդդէմ հրամանին նոյ, մինչեւ զաւանայր մովսէս յեգիպտոս, հրեշ-
տակ տեսանէ կամէր սպանանել զնա, այսինքն կամ զմովսէս, և կամ
աւելի զմանուկն վասն անթլփատութեն. և 'ի թլփատել զնա մօրն՝

ներեաց հրեշտակն (Եկկլ. Դ. 25։) Արդ այն հեղումն արեան եղև ե-ղեռնական գործ ապաշխարութեան, որով ազատեցաւ 'ի մահուանէն · ռասխ 'ի [illegible]; բերանով հրեշտակին՝ ողորմեալ մկրտեցաւ [illegible], այսինքն մոխրի և կեռչ նորա և բովանդակ խորայեղոցոց։ Կամ այսպէս խնա · փոքրն այն մահուկ ողորմութիւն գտեալ 'ի մեծէն այս, այլոց մեծագործիցն հասարակ վկայ եղև՝ թողութիւն գտանել ա-պաշխարութեամբ։ Եւ զայս եղիտալ [illegible], ասէ, ոչ միայն վասն մանկա-կան հասակին, այլ և համեմատութեամբ եղիտալարու աչարուենան · զի ա-հարան երեկ գոլով քան զմովսէս ծննդեամբ և աստուածութեամբ, յառա-ջագոյն ծնեալ էր զեւրն եղիտալ քան զմովսէսին։

10 [illegible]։ Թողում յիշել [illegible], այսինքն զհաղորդեալսն սրբանման քնի արարչին, որ անքաւելի պարտիք են՝ վասն անհնարին չարութեանն · և սակայն բաղումք 'ի նոցանէ հաւատովք ապաշխարեալ արդարացան։ կամ [illegible] խնա փոխանակ սեռա-կանի · այսինքն թողում յառաջ բերել զանքաւելի պարտս զհաղոր-դելոյն մահուն քնի։ [illegible], այսինքն ընդ որոց թողում և զգլխա-ւորն ընտրելոց պօղոս · կամ, բաց յորոց և գլխաւորն ընտրելոց պօ-ղոս վկայ է այսմ, որ երբեմն գլուխ էր մեղաւորաց։

11 [illegible]։ Ոմանք 'ի մեղուցելոցն ընդ օ-րինօք՝ յապաշխարելն առաւել գերազանցեցին սրբութեամբ քան զե-ղեալսն 'ի նախկին կրօնին, այսինքն 'ի բնական օրէնս։ Կամ, այնպի-սի ապաշխարողք առաւել սուրբք եղեն քան զմնացեալսն 'ի կրօնի աս-տուածպաշտութեան՝ զոր նախ ընկալան, այսինքն քան զանմեղ մնա-ցեալսն · զի բազմաց՝ անկումն պատճառ լինի յորդորագոյն ընթա-նալ յառաքինութիւնս՝ քան զոչ անկեալսն · և այս է գործ կարգաւո-րութեանն այս, և ոչ 'ի զիտաւորութենէ կամաց մեղուցելոցն։

12 Որ [illegible]։ Ասելք՝ որ նախ քան զգրաւոր օրէնսն՝ զսահմանս բնական օրինացն պահելով, առաւել մերձաւոր և նմանող գտաւ [illegible], այսինքն արքահամու, որ սկզբնահայրն էր հաւատոց և ճշմարիտ աստուածպաշտութեան · և [illegible] զազանաց զպարտակս բարուն անձինն համարելով, [illegible], զնորա պա-տուհասն առժեաց · մնացեալք [illegible], փոխանակ ա-սելոյ՝ ամենամայք կամ աշխատութեամբ կրից իւրոց · (թերևս ոչ ա-սելով բնաւ պատուղ, որպէս աւանդութիւն է ոմանց)։ Այլ յուս ոչ լոկ 'ի մեղաց քաւեցաւ, և յետոյ ըստ այլոց ապաշխարողաց՝ մեռեալ ծած-կեցաւ յերկրի, այլ չարչարելի մարմնովն իւրև յաղթող մահու՝ և կա-բապէտ կենդանութեան բնութեամբ՝ փոխեցաւ կենդանւոյն։

13 [illegible]։ Ոմանք 'ի դարձելոյն հեթանոսաց, որք ոչ երբեք 'ի բարձրութենէ շնորհաց եղեն, այլ 'ի մանկութենէ՝ [illegible], չարեաց կեալով ընդ երկար, ապա հաւատովք արդարա-ցեալք · 'ի թշուառութենէ չարաչար վարուց յերկինս վերացան, որպէս բախար, հաւթ, և այլք։ Ցայլ տարագիր եղեալ էր՝ [illegible] · բայց ուղիղ եւ է [illegible], ըստ մեր օրին։

14 [illegible]։ Եթէ կանխաւ 'ի բնական և 'ի գրա-ւոր օրէնս զօրացան հաւատք ապաշխարութեան՝ դարձուցանել 'ի չա-րեաց, և այնչափ սրբել, [illegible], խրթն սակի մաքուր աս-նել զհոգեղէն ապականութիւնս մեր, և զզատակերն արքունի ածային շնորհաց նկարել 'ի հոգիս մեր, և զմեր բնութիւնս առնել անչարժ 'ի բարին՝ և յաղթող պատրանաց սատանայի, ապա եւ առաւել այժմ յօրէնս շնորհաց յաւանի է պայծառ լուսաւորութի հաւատոյ և շնոր-հաց, յորում քո է հաշտութի, և այլն։ Կամ, եթէ կանխաւ այնչափ

արդարացւոց հաւատքն, մինչ չև մարգարէութեանն քնի ամփոփեալ էր բնութիւն մեր, և դատիչն օրէնքն. ծածուկն բնութիւն չև էր միաւորեալ ընդ կերպիւ մերոյ, անկորուստ և անայլայլելի միաւորելով, և լինելով յաղթող պատրանացն սատանայի, ապա այժմ յետ լինելոյ այսր ամենայնի՝ առաւել ևս յուսալի է, և այլն:

15 Համբերել․․․ ողորմիլ բանիւ: Ընդունելով հաւատով զշնորհատուութիւն բանին. և այն ունիմ կատարեալ ծնունդ, շնորհի արդարութեան՝ որ է սերմն փառացն երկնայնոց, կամ, շնորհին՝ որ է փառք հոգւոյ:

16 Յայտ անձնադիմեալ: Յայտնապէս յայտնի գրեալ, կամ յանձնիցն յաստուածութիւն ապաստանեալ, կործանեալս մեղօք՝ կանգուն կամ հաստատել: Վերծանել. սխալեալս, կամ մոլորեալս՝ 'ի դարձ, այսինքն կամ, հաստատիլ 'ի դարձն, 'ի յոյսն, 'ի կեանսն, և այլն: Արգահատել. փախուցեալս և թափառականս գիմել 'ի կոչումն իմ: Ապաւինել. խնդրեմ, յանձնեա՝ հաստատիլ 'ի հեղութիւն: Տարադրել. յարաբանս, անխռովապէս հաստատիլ 'ի ներումն մեղաց իմոց, և այլն:

17 Ի մեզ ինձ: Այս վստահութիւն իմ հաստատի կամ յաղթող զօրութեամբ քո, և հօր նորա, և անուամբ և կամօք հոգւոյն սրբոյ, որոյ օրհնաբանեալ խոկութիւն՝ է կամ եղելի զօրութիւն, արքայութիւն, և այլն:

## ԲԱՆ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելեալ կրկին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ես արդ քանզի յաւէտ [1] յառաջնում գրքեանն յուսահատութեանն բանիւ լքայ, և տարակուսանաց հեծմանցն 'ի մահ ձաղկեցայ, աստանօր 'ի յուսոյն կերպարան փոխեալ՝ յարգահատել համարձակեցայց. զԵրրորդութիւնն սուրբ կարդալով յօգնականութիւն ինձ մեղաւորիս: [2] Որ և անդստին իսկ յօրհնաբանելն և 'ի դաւանելն զկենդանարարն բնաւից ած, խոկոյն և կոչումն ընտանի ձայնի ահաւորութեան անուան շնորհաձիրն բարերարի՝ մահացելոյս է կենդանութիւն, ըստ մարգարէին նախաձայնութեան, թէ որ կարդայ զանուն տեառն, նա կեցցէ: [3] Եւ եւ ոչ միայն կարդամ, այլ նախ հաւատամ մեծութեան նորին. ոչ եթէ վասն պարգևաց նորա մատուցեալ յաղօթս դեգերիմ, այլ իբր զկենդանութիւն խոկալէս, և զշնչոյ տուրևտութիւն հաւատոյ, առանց որոյ ոչ է շարժողութիւն կամ ըն-

թայութիւն․ զի ոչ այնքան յաւսոյն հանգուցիս, որ-
քան սիրոյն կապանօք բերիմ։ Ոչ 'ի տուրսն, այլ 'ի
տուողն յաւէտ կարօտիմ․ ոչ փառքն են ինձ անձկալի,
այլ փառաւորեալն է համբուրելի․ ոչ կենացն փափա-
գանօք, այլ կենարանին յիշատակաւն միշտ ճենճե-
րիմ․ [4] ոչ վայելչոյն տարփանօք հեծեմ, այլ հանդերձե-
ղին տենչանօք յերկնամանց ասոր կախանիմ․ ոչ զհան-
գիստն խնդրեմ, այլ [5] զհանգուցչին զերեսս աղաչեմ․ ոչ
հարմարանին խնձոյից, այլ փեսային անձկութեամբ
մաշիմ։ Ի ձեռն որոյ զօրութեան վստահացեալս ակնկա-
լութեամբ [6] վերապրեցելոց յանցանօք բեռանց՝ աներկ-
միտ յուսով հաւատամ 'ի կարողին ձեռն [7] ապաստա-
նեալ, ոչ քաւութեան միայն հասանել, այլ զնոյն ինքն
տեսանել յողորմութիւն և 'ի գթութիւն և յերկնից
ժառանգութիւն, թէպէտ և յոյժ եմ տարագրելի։

Բ․ Եւ արդ բազում պատկառանօք ամաչեցելոց զի-
մաց կորացեալ, [8] զմիջնորդ ազդման կափուցմանց երկա-
կի շրթանցս՝ արժանափակ աղխիւ կարկելոց՝ առ անհա-
մարձակ լեզուիս շարժութիւն, նորոգեցից 'ի յերդ հա-
ռաչման պաղատանաց յեղանակութեանցս աղխողիմ
հեծեծանաց՝ 'ի բարձունս աղաղակելոյ։

## ՄԱՂԹԱՆՔ ԶՕՐԱՒՈՐՔ
## ԱՐՀԱՒՐԱՑ ԳԻՇԵՐԱՑՆՈՑ

Գ․ Ինկալ բաղցրութեամբ, տէր ամ հզօր, զզա-
նացողի զաղաչանս․ մատիր գթութեամբ առ պատկա-
ռեալս զինքս․ փարատեա, ամենապարգև, զամօթա-
կան տխրութիւնս․ բարձ յինէն, ողորմած, [9] զանբերելի
ծանրութիւնս․ անջրպետեա, հնարաւոր, զմահացու
կրթութիւնս․ աւարեա, միշտ յաղթող, զխաբողին հա-
ճութիւնս․ բացայրեա, վերնային, զմեղելոյն մառա-
խուղ․ կնքեա, կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս․ ցր-
ուեա, ծածկատես, զմթնողին չար գամունս․ խոր-
տակեա, անքնին, զմարտողին գիւեցմունս։ Տեառնա-
գրեա քո անուամբդ զլուսանցոյցս երդ յարկիս․ պարփա-
կեա քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս․ [10] գծագրեա
քո արեամբդ զմուտ սեմոց սենեկիս․ կերպացո դքո նը-
շանդ 'ի հետս ելից մաղթողիս․ ամրացո քո աջովդ ըղ-

հանգստեանս խշտի. մաքրեսցես 'ի հաղբից զծածկա-
րան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ զտառապեալ
անձն ոգւոյս. անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչ
մարմնոյս. կացուսցես շրջափակ զպար զօրուդ երկնայ-
նոյ. կարգեսցես 'ի գլխի ընդդէմ գլուխն դասու։ Տուր
հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման 'ի
խորութեան գիշերիս, բարեխօսութեամբ հայցուածոց
սրբոյ Աստուածածնին և ամենայն ընտրելոց։ Ամփոփեալ[11]
պարուրեա զպատուհան տեսութեանց զգայարանացս
խմառից անզարհուրելի զետեղմամբ 'ի ծփական խառ-
վութեանց, կենդաղական զբաղմանց, անրջական երա-
զոց, [12] խօլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ ան-
մոռանալի պաշտպանեալ։ Նաւ սթափեալ վերստին 'ի
ննջմանէ ծանրութեան ամենազգաստ արթնութեամբ,
հոգենորոգ զուարթութեամբ 'ի քեզ արձանացեալ,
զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց քեզ, [13] ա-
մէնօրհնեալ թագաւոր փառաց անճառից, փառաբա-
նողաց երկնաւորամբ խմբից երգակցեալ, յերկինս ա-
ռաքել։ Զի դու փառաւորեալ ես յամենայն արարա-
ծոց յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

1 [illegible]։ Ի բանս Զ. Է. Ը. հայելով 'ի բազմապատիկ անօրէնութիւնս իմ և յարդար դատաստանն այ՝ յուսահատութեան բանիւ զիս պարտաւորեցի. և ասացի աւրականանօք իբրև հեծանու. հատս զաւազանս հարուածեցայ մինչև 'ի մահ. այս է՝ խնով բանիւ խոստովանեցայ զոչ որդի կորստեան, և ոչ փրկութեան՝ ցուցանի կան յիս անօրէնութիւնք։ Բայց այժմ զկերպ յուսոյն յանձն իմ ընկալեալ, հայելով 'ի զօրութիւնն այ՝ իշխեցից ասել, պաղատիլ, յաղթանութիւն ինձ կոչելով զաւուրբ երրորդութիւնն, որ կարէ և կամի զիս արդարացուցանել։

2 [illegible]։ Այնչափ յուսալի է ողորմութիւն այ, և արագահաս օգնականութիւն նորա, մինչև անգէն 'ի զաւանելն զնա սրտիւ, իսկոյն յօգնութիւնս բերանով ևս իբր ընտանեբար կոչել զանուն նորա, թէ և ինքնին աչաւոր է. և այն կարդալն կամ կոչելն կեանս տայ մեռելոյս, ըստ մարգարէին, որ կարդայ զանուն տեառն՝ կեցցէ։ [illegible]։ Այսպէս զնի 'ի լոռ օրինակս առակէլ համեմատ ընագրին յովելեայ (Բ. 32. և Հռովմ. Ժ. 13.) այլ և յարմար նախընթաց բանին, յորում ասէ, կոչումն ընտանի ձայնի [illegible] բարեբարին՝ մահացելոյս է կենդանութիւն։ Իսկ յայլ աւրինակս զնի. [illegible]։

3 [illegible]։ Ես ոչ լոկ բերանով կարդամ զնա, ոչ առակարար 'ի յուսոյ շարժեալ, օգնութի նեթ հայցեմ 'ի կարիս իմ, այլ սրտիւ նախ հաւատամ մեծութեան նորա։ Որ [illegible]։ Որ փան

ընական և գերբնական պարգևաց նորա աղաչեմ, այլ զնոյն ինքն պար-
գևատուն համարիմ ինձ ճշմարիտ կենդանութիւն, և շունչ հոգւոյս և
մարմնոյս. զի ըստ գերբնական կենդանութեան՝ որ ՚ի ձեռն սրբարար
շնորհաց, նա միայն է պատճառ. և ըստ բնական կենդանութեան՝ առաջ-
նիչ միայն նա է, և նա ինքն ընդհանուր պահպանիչ, և կատարիչ պահ-
պանութեան երկրորդ պատճառաց: Այսու բանիւ ոչ խափանի՝ թէ զպար-
գևսն նորա չիցէ պարտ խնդրել կամ սիրել, կամ ոչ վասն հատուցման
վարձուց ծառայել նմա. քանզի է և այս ՚ի գովութեան մասին, և աւան-
դեալ ՚ի սուրբ գրոց. այլ նշանակէ՝ թէ չէ պարտ ՚ի պարգևսն անդ
զանելի առնուլ, կամ վասն պարգևացն միայն խնդրել զնա. զի այս
վարձկանի է, և յոյս ՚ի սիրոյ անձին՝ քան նմա. վասն այն յարէ. [illegible]
[illegible]: Իսկ օրինակ
նախսիրութեան է՝ առաւել զնա սիրել քան զպարգևս նորա, և զնոյն սի-
րել վասն նորա և յնա: Այլ գերազանց ևս սիրոյ է՝ զնա միայն սիրել
՚ի պարգևս ևս, ոչ զի մեզ պարգևէ, այլ զի յինքեան է պարգևատու.
որով պարգևքն և պարգևատուն լինին միայն նիւթ սիրոյ, իսկ նա և
բարութիւն նորա լինի բուն առարկայ և շարժիչ սիրոյ: Զայս ևս կամի
յայտնել սուրբ վարդապետս յայս բան և ՚ի յաջորդսն:

4 [illegible]: Ոչ համեմատական վայելմանցն ցանկութիւ հաւաչեմ,
այլ [illegible], զնոյնս պատրաստեալն բաղձանօքն [illegible],
՚ի նկրտեն խորոց սրտիս կակածն բաղձալ ալլոմ:

5 [illegible]: Այսինքն խնդրեմ, որոնեմ:

6 [illegible]: Այսինքն բնաւմք վերացեալ
յանցանաց: Թէպէտև, ասէ, պարտաւոր եմ նախատացեալ մեղօքն,
բայց ՚ի զօրութիւն փրկչին իմոյ վստահացեալ, աներկբայ հաւատամ
ոչ միայն քաւութիւն գտանել, այլ և զնա ինքն յիւր բնութիւնն ստա-
նել. [illegible], ողորմութիւ և գթութիւ նորա. [illegible]
[illegible]. համեմատ ժառանգութեանն երկնից:

7 [illegible]: 2 օրին. [illegible]:

8 [illegible]: Թէպէտ և վստահութիւն այսպիսի ունիմ յո-
ղորմութեան նորա, բայց մեղա լի եմ պատկառանօք, և ամօթ երեսաց իմոց
ոչ թողու ՚ի վեր հայել. այլ միայն զմիջնորդ, այսինքն զաղօթելս որ է
միջնորդ ապշելոյ ՚ի պատասխանատու շրթանցս արտաքնայես փակելոյ
վասն մեղացս, որպէս զի անհամարձակ լեզուս շարժեսցի, գործեսցից
՚ի յերգ հառաչանաց, [illegible], այսինքն զանազան
պաղատանաց. կամ ՚ի փոփոխումն խնդրուածոց: Կամ, [illegible], այս-
ինքն զգերելս՝ որ է գործի ապշելոյ կամ խօսելոյ պատասխանեալ շրթանցս.
զի գիրն է նշանակ խօսից. և համր բերանոյ՝ ձեռն է գործի խօսելոյ
նշանացի, կամ գրով: [illegible], կամ ասիւ. արտաքնայես
փակող՝ կամ խրատողի փակմանք: Ի մի օրին. [illegible], այսինքն ցաւով
կամ ամօթով մեղաց պատասխանեալ շրթանցս: Հին լուծ. [illegible]
[illegible] խնմանց զմիտս, որ ապշէ հոգւոյն և մարմնոյն: Բայց անյարմար է
կարգի բանին:

9 [illegible]: Բարձ յինէն զանտանելի ծանրութիւ մե-
ղաց, կամ սրտմտութեան սրտիս: [illegible], ՚ի բաց առ, հեռացո [illegible]
[illegible]: (օրին. ինչ՝ [illegible]) զմահաբեր ապարութիւն մե-
ղաց, կամ զմահաբեր գլորմանս, և զախտս մեղաց: [illegible], այլ օ-
րին. [illegible]: այսինքն ցրուեա կամ եղծեա [illegible] [illegible],
զհեշտութիւն կամ զհրապոյրս խաբողին սատանայի: [illegible], հե-
ռացո, կամ յայտնեա զնատախուռ [illegible], կատարեալ գիւտն, որ մի-
թացուցանէ զայս մտացս՝ առ ՚ի չտեսանել զպատրանսն: [illegible], ար-

գել. խափանեա զկորուսչին սատանայի ընթացմունս 'ի վերայ իմ, կամ զխորհուրդս և զձեռս նորա ընդդէմ ինձ :

10 [illegible] : Ըստ որում խորայեղացւոցն հրամայեցեր յեգիպտոս՝ օծանել զսեամս տանց իւրեանց արեամբ զատկական զառ֊նինն, որպէս զի մի մերձեսցէ սատակիչն 'ի տունս նոցա, եւ սատ֊ակել ես ինքն հայցեմ, քո՛ ածայլին արեամբ նշանագրեսցես զմտաւոր սենեակս. այլ և զմարմինս, զի մի մերձեսցէ սատանայ : Կնքեա՛, ձեռամբ զնշան խաչիդ 'ի շուրթս եղից և մտից իմոց, զի մի օձն դարա֊նակալ խայթեսցէ : Պահպանեա զհանդերձանս [illegible], զանկողինս յոր հանգչիմ : Մաքրեսցես 'ի [illegible]. 'ի վտանգաւոր երազոյ՝ որք երբ որո֊գայթ կարեն լինել 'ի ծածկարանի անկողնոյն կամ զիպուածով, կամ 'ի չարութենէ մարդկան և դիւաց : Պահեսցես [illegible] : Եթէ [illegible] ասացի փոխանակ մարմնոյ, որպէս և 'ի բանսն ԼԶ. Գ. ԼԹ. Գ. ԿԹ. Գ. բացատրի, անխիտս պահել զաշխատաւոր մարմինն՝ որ է հոգւոյն իբրև բնակարան : Իսկ [illegible] առեալ փոխանակ հոգւոյ, ըստ որում յաճախ նշանակէ, բացատրի՝ պահեսցես զառատապէս անձն՝ որ է հոգիս. և համարի բացայայտիչն եղեալ 'ի սեռական հոլով, ըստ անսովոր ոճոյն, զորմէ յընդարձակ քերական. համար 845 : [illegible], անխիտակի արտասցես զչուանչ կամ զկենդանութիւն մարմնոյս՝ զոր դու շնորհեցեր :

11 [illegible] : Պատեա կամ պահպանեա զաչս իմ, որ է զլխաւոր զգայարան՝ ծանուցող խմաստից մտաց, զոր ամփոփեսցես աներկիւղ գաղարմամբ կամ հանգստեամբ քնոյ :

12 [illegible] : այլ օրէն․ [illegible]․ խառնխնութն երևա֊կայմանց կամ երևութից՝ որք 'ի խելառութենէ լինին :

13 [illegible] : Օրինակք ինչ այսպէս ասացեալ, [illegible] : այլքն պակասին :

Զայս զօրաւոր մաղթանք [illegible], որն 'ի հայկաբանից՝ անուն յոխնեփ սարկաւագ յոխհաննիսեան, տեղեակ աւուրց բարբառոյ՝ թարգմանեալ է 'ի նոյն լեզու, և ընծայեալ ալեքսանդրի կայսեր նոյա իբր ողերձ հաճոյական :

# ԲԱՆ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Աստուած բարերար հզօր ահաւոր, [1] հայրդ բա֊րի ողորմութեանց շնորհի, որոյ անուն իսկ մեծիդ գթութիւն և զընտանութիւն աւետարանէ, քաղցր դժնէից և անպոռնկացողաց : Ընդ քեզ և [2] որդիդ քո իբ֊րև զքեզ, զօրաւոր ձեռն իբրև զքոյդ, անժամանակ ան֊

բութեամբ ահեղ, ընդ արարչութեանդ քում բարձրացեալ։ Այլ հոգիդ սուրբ ճշմարտութեան՝ բղխեալ առ 'ի քէն անսպառութեամբ, [3] կատարեալ խոկութի գոյ, էութիւն մշտնջենաւոր, հաւասար քո ամենայնիւ, փառակից որդւոյ քոյ տէրութեամբ։ Երրեակ անձնաւորութիւն՝ համայն անքնին, [4] տրոհեալ 'ի գլխոց՝ ուրոյն զատուցմամբ. իսկ [5] միաւորեալ համաղուգութեամբ, նոյնագոյ բնութեամբ տիրապէս, անշփոթ և անանջրպետ՝ միով կամօք և կցորդութեամբ. ոչ երիցութիւն ումեմն 'ի յումեմն և ոչ քթթել մի ական առնուազութիւն միոյն ժամանեալ, քան թէ պատճառ սիրոյ երկնայնոյ անստուեր լուսոյ՝ որ առ մերն է ծանօթութիւն, միով պակաս սրբասացութեան անսկզբնաբար ա̃ծաբանեալ։ Քանզի արդարեւ վերաձայնեալս այս խոստովանութիւն [6] երեքփառատրեանդ դաւանութեան զվէմն հաւատոյ Պետրոս երանեաց. իսկ զդատապարտելոյս անձն մեղօք՝ [7] բարեհրամանն քո ակնարկութեամբ, ով խնդրողդ գերելոյս, հրաշանորոգ արդարացուցէ։ Քանզի թէպէտ և քո իցեն պարգեւք, և քո ողորմութիւնք, այլ ոչ 'ի պարգեւսն ես այնքան հռչակեալ, որքան յողորմութեանն. զի երկրորդն ըղքոյդ յաճախէ զփառս, իսկ առաջինն զճգնաւորայն յայտնէ զգործս. զի պարգեւք՝ վաստակոցն են փոխատրութիւնք, իսկ ողորմութիւնք՝ մեղուցելոյս բարերարութիւնք։

Բ. Այլ արդ [8] մի զօրացին մարդկայինս գործք առաջի քոյոյդ շնորհաց, ա̃ծ գթութեանց, թէ և անդր իսկ իցեն [9] քան զօրէնս հասարակաց բնաւորականս համանց. այլ յաղթող եղեալ քոյդ երկայնմտութեան, նուաղ եղիցի առ քումդ մասին ընթացք երկրածնաց։ Քանզի և [10] որ մաքրութեամբն պերճանային օրինականացն վստահութիւնք, 'ի լուսաւորել քոյդ արդարութեան զուշակ ներկայիս, ամենանուաղ անձկութե-լեալ հրէութիւնն յետնեալ, և յաւէտ ընդ տարագրական ողորմելոյն, առաւել նորա գտան կարօտեալ մարդասիրութեան։ Այլ քանզի ամենայն ինչ հնարաւոր է քեզ, բարերար, լուր պաղատանաց գոչման հեծութեանս՝ որ կարդամ առ քեզ. ողորմեա, կեցո և մարդասիրեա։ Զի քո է երկայնմտութիւն, քաղցրու-

թիւն, փրկութիւն, քաւութիւն, և փառք [11] յաւիտենի-
ցուց յաւիտենից ազգաց · ամէն ։

---

1 Հայրդ Մայրէ ։ Ոչ միայն ած ես մեր՝ այլ և հայր բարերար · ողոր-
մութեանդ ընդհանր, 'ի շնորհաց ողորմութեանդ հայր ես մեր՝ և ոչ բնու-
թեամբ · որոյ և հայրական անուանդ զընտանութի ցուցանէ մեզ · քաղցր
գոլով ժամանց, և անփոփոխելոյ, այսինքն ապերախտից ։ մի որին · ան-
հոգացելոց ։

2 Որդիդ ես ։ Ան քեզ և ընդ քեզ է միշտ որդիդ, նման քեզ յաւի-
տենին, զօրաւոր ձեռն նորա կամ կարողութիւնն իւրև դքոյդ, անժա-
մանակ և աչաւոր ըստ ակրութեանն · ընդ անբաժանելի, ընդ արար-
չական բնութեանդ բարձրացեալ ։ Այնպէս որդի է քո, զի ոչ ևւկք և
ոչ երբէք 'ի քէն պակասի ։

3 Կատարեալ խոհեմութիւն ։ Նոյնպէս և հոգիդ սուրբ յառաջ եկեալ ա-
ռանց սպառելոյ, ամենայնիւ նման քեզ՝ կատարեալ բնութիւն, կամ
անձն գոյով, ոչ անկատար զօրութի ինչ՝ ըստ մոլորուէ հոգեմարտից ։

4 Տրոհեալ 'ի դիմաց ։ Բաժանեալ, զանազանեալ ըստ դիմաց կամ ըստ
անձանց, որպէս զանազանի, որոշ ասացեալ 'ի ձեռն անձնական յատ-
կութեց, որք 'ի միմեանց իրապէս զանազանեն և զանազանեն զանձինն ։
Վարդապետք յունաց և հայոց, այլ և հնդոյինք 'ի լատինացւոց՝ առեալ
'ի կիր զանուն զնծայրն անձանց զբառքս՝ բաժանեալ, զատեալ, որո-
շեալ, անջատեալ, և այլն · առ 'ի ցուցանել միայն զգոյացական և զան-
չափելի զանազանութիւն նոցա ընդդէմ սաբէլի և այլոց աղանդաւո-
րաց, որք պատահական զանազանութի ինչ ևեթ դնէին 'ի նոսա ։ Այլ
զի այսպիսի բառք կարեն ևս նշանակել զբաժանումն 'ի մասունս, կամ
զայլեայլութի բնութեան, ըստ այսմ՝ անբաժանելի, անանջատ ասէին
զնծայրն անձինսն · որպէս և աստ զկնի ասէ, անբաժ և անշփոթ ։
Վասն որոյ ըստ այլեայլ մասաց զայսպիսի բառս ուրեք ընծայէին նծայրն
անձանց, և ուրեք ոչ ։ Ըստ որում և շնորհալին 'ի ՃԺ · թղթ · առ մա-
նուէլ կայսր գրէ · « Եւ ոչ գարշեալ հրէականին հետևողի սաբէլի լի-
բէացւոյ ձայնակցելով, զերիսն 'ի մի հաւաքել անձնաւորութիւս, այլ
բաժանեմք անբաժանաբար, և միաւորեմք որոշմամբ՝ ըստ ուղղափառ
հարցն դաւանութեան » ։ Ցայսպիսի իրս քաջայայտ գոլով ազգմաու-
թիւն և մեծ զգուշութիւն հարցն, յանդգնութիւն է սադրանել զկի-
րառութիւն նոցա ։

5 Միաւորեալ համագոյութեամբ ։ Նոյն նծայրն անձինք՝ որք ըստ յատ-
կութեցն զանազանին, միաւորեալ են միանաբար մի և նոյն անհատ
բնութեամբ ծնողին, այսինքն յաւէտպէս, իսկապէս, և ոչ անյատ-
կաբար որպէս զբաղում մարդիկ, որք մի բնութի ասին միայն ըստ տե-
սակին ։ Անշփոթ, անորոշելի 'ի միմեանց՝ ըստ էական համութեան, և
միաւորութեամբ, զործակցութե 'ի խնամս արարածոց ։ Որով խմանի թէ
անորոշելի են ոչ միայն առ 'ի ներքս բնութե և այլ բացարձակօքն, այլ
և առ արտաքս 'ի անսկսութի արարածոց ։ Ոչ էական մեծ 'ի յա-
ղէս · ոչ մեծութի կամ առաւելութի միայն քան զմիւսն · կամ, ոչ իշ-
խանութի միայն 'ի վերայ միւսոյն · և ոչ առաջին է միւսն, և ոչ վայրկեան
մի առ նախապատիւն միոյն ժամանակաւ, մինչ 'ի նոցանէ նուազեալ կամ պա-
կասեալ 'ի գոլոյ, որով խմանի գոյակցութի նոցա ։ Կամ, և ոչ սակաւ
մի՝ մինն առ կարօտութի միւսոյն ժամանեալ յօդնել, որով խմանի հա-
մազօրութիւն ։ Կամ, և ոչ փոքու իմն միայն առ նուազութիւն ժամա-

նեալ, այսինքն նուազ կամ թերի գտեալ քան զմիւսն․ որով իմանի հաւասարութիւն։ [illegible]։ Կրկնակի յարի այս ընդ նախադաս բանից․ մի՝ իբրև նմանութի առեալ յարեգակնէ․ այսինքն որպէս պայծառ լոյս արեգական պատճառ է ջերմութե, և երկքին համանգամայն են, արեգակն՝ լոյս և ջերմութի, այսպէս յերից անձանց մին քան զմիւսն և ոչ փոքու ինչ նուազեալ է կամ յետին․ [illegible], այսինքն որպէս թէ, կամ իբրև պատճառ գոլով մին հայր՝ [illegible] հօգւոյն սրբոյ, [illegible]՝ որդւոյն։ Ու [illegible] է [illegible]․ այս օրինակ բացատրութե ըստ մերում ճանաչման առի․ կամ որչափ 'ի մեր կողմանէ ճանաչել կարող եմք։ Ո․ր 2․ օրին․ եւ հին ըծ․ գնեն․ [illegible]։ Երկրորդ՝ իմանի այսպէս․ աստուածային անձինք հաւասար են, և չեք 'ի նոսա մեծ և փոքր, առաջին և յետին․ [illegible], այսինքն բայց եթէ 'ի պատճառս երկնային սիրոյն, որով անուանեաց լյան որդին մարդացու, և եկն 'ի մեր ծանօթութե, որով փոքր և յետին առ քան զհայր։ Այս համազգոյ երրորդութե [illegible], երեք սրբերգութիւն, որ 'ի [illegible] ասեալ՝ 'ի [illegible] աւարտ բոլորականն իբրև զպսակ․ [illegible], որպէս անակնկալն օրհնաբանեալ 'ի հրեշտակաց․ կամ, 'ի սկզբանէ, միշտ, ըստ որում ոչ գոյ 'ի գիրս՝ թէ երբ սկսան այսպէս օրհնել զնա։

6 [illegible]։ մի օրին․ [illegible]․ և առի երկրպագութեան, զի ըստ ելոյն զերիս անձինսն զուգանեաց պետրոս․ զհայր և զորդի՝ յասելն, դու ես [illegible]․ և զհոգին սուրբ յասելն, [illegible]․ այսինքն աննողի զկենդանի հոգին․ զի որպէս ասէ 'ի բանն ԼԴ․ 7․ « Ոչ գոլով ընդ նմա հօգւոյն, անհաղորդ ասն և [illegible], և առ ամենայն հրաման նուազեալ »։ Այս փոխանակ բային՝ [illegible]. օրինակ մի գնէ [illegible]․ իբրև թէ զմիմն հաւասարս անուանեաց կամ կոչեաց պետրոս։

7 [illegible]։ Խոստովանութիւն երրեակ ածութեանց, ասէ, զպետրոս զարդարին արժանի երանութեան արար․ իսկ զանձն զառաքելակցս մեզ՝ քո բարերար հաճութեամբդ զանէ արդարացուցէ, որ առաւել հրաշալի է քան զպետրոսի երանութիւն․ զի այն իբրև վարձք հաւատոյ նորա շնորհեցաւ։ Վասն զի թէպէտ երկոքին եմ 'ի քեն են, այսինքն թէ [illegible], որ է յաղթանակ կամ հատուցումն վաստակոց բարեաց, և թէ [illegible], որ է ձրի բարերարութի առ անարժանս, բայց երկրորդս առաւել յաճախէ զփառս քո՝ քան թէ առաջինն՝ պարգևքն, որ իբրև վարձք՝ յայտնէ միանգամայն զարժանաւոր գործս [illegible], այսինքն առաքինեաց, ճգնելոյն՝ աշխատելոյն 'ի գործս բարիս։

8 [illegible]։ Մարթ է իմանալ 'ի վերայ բարի գործոց, և 'ի վերայ չարեաց։ Եթէ, ասէ, միայն ընդ բարեգործութեանց մարդկան կշռես զպարգևսդ, երկի՝ թէ մարդկային գործք զօրանան՝ բանադատելով զքեզ 'ի պարգևատրել․ արդ մի այսպէս զօրասցին մարդկայինս գործք, [illegible], թէ և գերազանց իցեն և 'ի վեր քան զկարողութի մեր հասանելոյ բնութեան։ Իսկ 'ի վերայ չար գործոց իմանի․ եթէ մեղաւորացս ոչ շնորհես զողորմութիւն, երկի թէ մեղքն՝ որ է միայն գործ մարդկան, զօրանայ քան զքո ողորմութիւնդ՝ խափանելով զնա։ Արդ մի զօրասցին, թէպէտ և յոյժ մեծամեծք իցեն և անցեալ քան զամենական մեզս՝ որք 'ի բնական ակարութէ և յապականութենէ գործին։ Այլ յամենայնի քո երկայնմտութիւնդ յաղթող եղեալ, պակաս երևեսցին [illegible], համեմատեալ առ քեզ, [illegible], այսինքն գործքն եթէ բարիք, և թէ չարք։

9 Քան զերկինս հաստատեալս ։ Զ օրին. զան զերկինս բնաբնեալ հաստատեալս ։
10 Որ հաստատեցեր զերկնայինն ։ Ոչ միայն 'ի մեղանչելն, ասէ, կարօտեալք ողորմութեան, այլ և յարդարագործութիս. քանզի և որք արդարութեամբն պարծեցին ՝ արդարանային ողորմութեամբ. այլ. կարօտեալ էին. հին օրինաց արդարութիւնքն, կամ այնց օրինապահաց երկիւղածութիւնքն ։ Զ օրին. արդարոյն ։ այսինքն սատանայական օրինացն ։ Սակայն 'ի յայտնել նորա քոյդ արդարութեան, զոր եդեր նոցա, որ ծանուցանէր նոցա զարդարութեան նոր օրինացս, զառնելին զինքեանս կարօտեալ ողորմութեան իբրև զչեկրքեալ հեթանոսն ։ Ըստ այսմ ասէր ած Եսայեա. (ա. 12.) զպատարագս ձեր, զշաբաթ, զամսագլուխս, զպահս և զգատարկութիս ոչ ընդունիմ. որպէս և ('ի կզ. 6.) ասէ. « Իբրև զհնան գերձս ապարահէց ամենայն արդարութիւն մեր » ։ Զոր և Տէրն կըշտամբեաց (մատթ. Ե. 20.) « Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր առաւել քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից » ։
11 Ցանկանայցես՝ յաւիտենից աւագաց ։ Քեզ փառք յամենայն գարուց ազգաց, կամ յամենայն նախնի ազգաց ։

# ԲԱՆ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակօղի առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Պաղատիմ առ քեզ լուսոյ ճառագայթ, արքայ երկնաւոր, գովեալ անպատում, որդի անճառ ծնողիդ այ. խոնարհեցո զունկն քո՝ բարձրեալ բարեգութ, կենաց ապաւէն, նորոգ մերձեցեալ կրկին աստանօր 'ի հառաչումն նուաղս ձայնի վիրաւորելոյս ։

Բ. Ոչ ցուցեալ է երբէք, եթէ աղաչեաց զքեզ 'ի ձեռն աւազակացն որոյ խաղխաղեալն, քանզի կարկամեալ էր. ոչ ձայն պաղատանաց զկնի արձակեաց, քանզի [1] անկարող էր. ոչ մատամբքն տատանելոց զաղէտ վտանգին յայտնեաց տեսողիդ, քանզի խորտակեալ էր. ոչ աչս կողկողագինս արտասուօք ողբոց՝ բարերարիդ յանդիման կացոյց, քանզի ճնշատապատ էր. ոչ 'ի պատգամ բանից միջնորդի զողորմածիդ կամս հաճեցոյց, զի [2] անայցելու էր. ոչ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն արիւներանգ ներկուածով ձորձոց զգթածիդ զսիրտ ճմլեցոյց, վասն զի անյոյս էր. նա և [3] ոչ ծըն-

զօլքն հաստատութեամբ իբր գարշապարաւ ոտին փա-
րեցաւ, այն զի անցաւոր էր. քանզի կիսամեռն ամէ-
կենդանութիւն՝ առկա նոյն նոյա է 'ի մեռելութիւն։ Ա-
նաւանց զի ⁵ 'ի քոյոցդ խրատեալ բանից, և բարերա-
րեալ ⁶ քոյդ ողորմութեամբ, և փառօք քո լուսաւոր-
եալ, ոչ միայն զի ոչ վերջացաւ 'ի հակառակն քո ըն-
թացից, այլ առաջակեալ առաքինութեամբ յիր
թշնամեացն թիւ յաւելաւ, ընդ նոցին գաշնաւորեցաւ,
մարմնեաց առելեացն քոյ։

Գ. Իսկ դու բարձրագոյն, բարերար, անոխակալ, ամենակեցոյց, ոչ միայն զի ոչ պահեցեր զօրագործին մեղաց յիշատակ, այլ և ոչ բանիւ յանդիմանեցեր. ոչ տան հարեր անկելոյն, այլ կարեկցաբար մատուցեալ զծայրագոյն ցուցեր զխնամս։ Եւ քահանայապետս բաս աշխարհականն ⁶ ակէս օրինին՝ զօրաւոր առ մահաւն պաշտօն՝ զառաքելաբար անխծիր և բանալով քարանցն ծղմամբ 'ի խորտակումն խոցելոյն արտաքեալ մահուամբ. և ⁷ ոչ որպէս զեռանդանն կարապետացն անկատարագործ՝ 'ի յերկուցն միջի բաժանեալ խաղաց, հնոյն լրումն և նորոյս սկիզբն, անդրէն 'ի հողոյ յառաջխաղանն հանգստացեալ՝ զկիրառութեանն անէսէր զխաղաղ, զի մի առաւելին օրինակութեամբ տապարաւն արմատակուրա՝ զմահուն պաշտօն 'ի քեզ նկատեալ, յառաջ քան զփորձ առաւելին առաւելեալ. այլ հեթանոսացն պահպան անուն առաքելութեանն, որք 'ի Հրեիցն ընկալեալ զօրէնս ամբոխ պահեցին, զոր նորա մանաւանդ, նոյն կցորդեալ մարմնոյդ վերարկուաւ մերձակերպարան խառնութեամբ, զաղտաղութիւն զծագրեցեր զաւետիս առ սատարազգին. և ութերորդ նկարագրութեան անապականաս ձեռն կարկառեալ, յարուցեր զմարդն նախնին միացուցեալ 'ի մահ խորոցն ծննդեան։ Օտամեցելոյն սիրտ բերկրեցուցեր, և զՀաւատոյն հաստատեցեր, և ⁸ զերկու ասացեալս մտադրեալ կցկին զաւարթացուցեր։ Նմանին կենդանատու մնացին և բաժականն լուսոյ լցեր. Հայցեն երկնային արդարութեանց զկին մարմնով նոր յեղանակեցեր։ Աներկայութիւն ⁹ երջանիկ աղանց խաղաղութեան յանձանձեցեր, զօրեցեր և խնամարկեցեր։ ¹⁰ Հանգստութեան զբաւական աղծութեամբ անզգուշեալ պահեցեր, մինչև յաւելն ըն-

այ ածել ։ Ի ձեռն [11] երկարանջիւթոյ միջնորդաց՝ նախնեաց և երկրորդաց տաշութեան կոճկոց կենդանականաց, մարդասիրապէս զարմանատրեցեր ։ Նա որպէս երբեմն ընդ Մովսէսի՝ թևս տարածեալ արծուոյն օրինակաւ ընկալար զնա, և 'ի հանգիստն հանգստութեան երկրին բարութեան առաջնորդեցեր, և զսանին կերակուր ջամբել հրամանատրեցեր վարդապետութեանց ։

Դ. Նա որք [12] որ զհատ ծայրագոյնին բարութեան լուսոյ յամենայնի բովանդակապէս հրաշակերտեցեր, զօտարին զգանձ քեզ սեպհականեալ՝ զքո աստուածն ու քեզ զարձուցեր, կեցո և զիս մաքրեալ 'ի մեղաց պարտեաց, որ ձրի պարգևես և անպատրաստից ։ ընդ որոյ և ինձ տացես քաղցրութիւն և բժշկութիւն, բարեգութ, զօրեղ անքննին, անեղծ, ահաւոր, օրհնեալ միշտ յաւիտենից յաւիտեանս ։ ամէն ։

---

1 Անմատչելի էր ։ Ոչ կարէր կանչել, անհասանելի էր ։ Մօտաւորեալ մօտեցար ։ այսինքն մատչելի եղեր ։ Պատմեմ առ քեզ, ասէ, թէ և նուաստ ձայնիւ վասն միջնորդեալ զօրէս հոգւոյ ։ բայց մի մերժեր աղաչեմ, այլ առ անկեալն 'ի ձեռս աւազակացն դու [illegible] մերձեցար գթութեամբ ։ որ ոչ ձայնիւ աղաչեաց ։ ոչ մատամբք զօրէնան եղոյց ։ ոչ արտասուօք կոչկոչեցաւ ։ ոչ բարեխօս ունէր, և այլն ։

2 Անայլայլ էր ։ Անփոփոխական, անխառնածու էր ։ ասաստի ոչ կարէր բարեխօսութիւն միջնորդի ուրուք հաճեցուցանել զնա ։ [illegible] ։ ոչ զեղծակութիւն կամ [illegible] ջանասիրեալ մարմնոյն, և արհնաթաթախ զգեստն, և այլն ։

3 Ու ծնողին հաշտութեանն ։ Ոչ հաստատութիւն կամ զօրութեանց ծնողացն՝ իբրև առանց վարեցաւ զալ առ քեզ ։ այն զի [illegible] էր, այսու զի, կամ վասն զի անկանոնելի էր, չկարէր 'ի վեր կալ ։ Բանս [illegible] բառարքի 'ի բայէն՝ [illegible], [illegible] ։ ասաստի ոչ նշանակէ անյայտնելի, այլ անկանոնելի ։

4 Ի [illegible] խորտակեալ բանիցս ։ Անկեալն 'ի ձեռս աւազակաց առի խոցոտել յերուսաղէմէ յերիքով (ղուկ. Ժ. 30.) և երուսաղէմ գոլով աթոռ օրինաց և ծագման թեան (եսայ. Բ. 3.) վասն այն իջանելն յերուսաղէմէ՝ նշանակէ թէ խոտորեալ էր նա յօրինացն ։ յորմէ [illegible]՝ [illegible] 'ի Ճանապարհ մեղաց, որ երկրորդան նշանակի ։

5 [illegible] ։ Զ օրին ։ [illegible] ։

6 [illegible] ։ Հին օրինացն՝ որ տկար էր առ արդարացուցանել, և [illegible] 'ի [illegible] (Բ. կոր. Գ. 7. 9.) [illegible] ։ մի օրին ։ [illegible] ։ այսինքն հին օրէնն ։

7 Ու [illegible] ։ [illegible] ոչ իբրև [illegible], (որ և էր [illegible] 'ի [illegible],) որ միջնորդ գոլով

հին և նոր օրինաց՝ անկատար գործով տայր միայն զմկրտութիւն ապաշխարութեան առանց հոգւոյ շնորհաց ։ Արդ ոչ երբեք զայս գնացքի հայեցար 'ի վաղնջ վկայութիւն . զի մի առաջնականն օրինակաւ արմատահատ տապարին՝ զոր յովհաննէս ասացանէր ( մատ . գ . 10 .) [illegible] , զառաւելութիւն հին օրինաց 'ի քեզ տեսանելով վկայութեան , անզուգութիւն մեծացի [illegible] , նախ քան զփորձ կամ զկիրս վերահաս պատուհասիցն ։ այլ օրին . ևս հին ըծ . [illegible] . որ է 'ի վերայ յովհաննու ասնու զայս , երբեք թէ առանց փորձելոյ՝ զմեղուցեալն տապարաւ հատանել ասէր . բայց անյարմար է ։ Այլ ասմունքս այն նմանեցար , որ էր 'ի հեթանոսաց [illegible] ։ ասմունս՝ պաշտպան թարգմանի . և 'ի տեղւոյն ասմունքի կոչեցան բնակիչքն՝ որք յառաջեատանեաց եկին անդր , և ընկալեալ զօրէնս հրէից , և պահեցին մինչև 'ի քն ( դ . թագ . ժէ . 24 .) [illegible] , այսինքն ասմունքայոց հաւատացեալք՝ զգեցեալ զմեր մարմինս , և զապատարար աւետիս ծանուցեր [illegible] , առ այլս մարդկան՝ որք 'ի քէն օտար էին ։ Կամ , զայն աւետիս ասէ , զոր ետ կնոջն սամարացւոց ( յովհ . դ . 23 .) [illegible] , ծածկեն քո ներգործութեամբ [illegible] , որ զանեղծութիւն կամ զառաջնութիւն տայ , ձեռն կարկառելով յարուցեր զպատմ բովանդակ բնութեամբս . որում օրինակ էր անկեալն 'ի ձեռս աւազակաց ։ Տարբերութիւն կայ յօրինակին . զի մի օրին . զնէ՝ ոչ զեստական կարապետայն անկատար գործ ։ Այլ օրին . « Եւ ոչ զեստական կարապետաւն անկատար գործ . . . առնայն 'ի հոգւոյ ապաշխարականն հանդիսացեալ , զվկայութիւն տեսեալ զմեռանց . . . յառաջ քան զփորձ տառապոյն » ։ Միւս օրինակն ևս նախ զնէ [illegible] . առաջ տրաբեալ [illegible] . յետոյ այլով զբջաւ , [illegible] ։ Ուր զասէն՝ յառաջ քան զփորձ [illegible] , մարթ է պարզել , նախ քան թէ առաւ հասող տապարին արգելանեք կատարել . և կոզմին խնամոյն ։ Եւ ոչ զեստական կարապետին յովհաննու , կամ ոչ զեստայի կարապետաւն անկատար գործ ցուցեր , զմանուկն ևեթ ապանալով , և մկրտութիւն տալով առանց հոգւոյ , այլ հեթանոսաց սամարացի անուանք առաքեալեացն կցորդեցար մարմնոյ զգեցմամբ ։ ուր [illegible] , և կրկնումն [illegible] ։

8 [illegible] ։ Զեղջելի բնութիւնն՝ որ միանգամ յազամ թշուառացաւ , կրկնապատիկ զուարթացուցեր . ըստ այնմ « Եւ ոչ որպէս յանցանքն , նոյնպէս և շնորհքն » . ( հռոմ . ե . 15 .) Կամ , զազամ զոր նախ 'ի դրախտին՝ վերստին յեկեղեցւոջ զուարթացուցեր ։

9 [illegible] ։ Հրեշտակաց , կամ առաքելոց , զորս 'ի գովեանոյս կոչէ « ծածապարդ աղերք զնգէց » ։

10 [illegible] ։ Դարմանեաց կամ առաջնորդութեամբ բաղցր և թեթև օրինաց , [illegible] , անմեղ կամ առանց տառապանաց պահեցեր ։ Հին ըծ . զբառս խնդաց զսերաստանեան մարմնոյն , որ ընդ խաչին եբարձ յաւ իւր զմեղուցեալ բնութիւնս ։

11 [illegible] ։ Դարմանատարեցեր առաջութիւն երկաբանեիր կենդանի կաւկայն՝ առաջնոյն կամ հնոյն , և երկրորդին կամ նորոյն , որոց օրինակ էին երկու զաւեկանքն ատեան 'ի սամարացւոյն ։ Եւ որպէս երբեմն [illegible] , այսինքն ընդ ձեռամբ մանկան իբրև արծուի 'ի վերայ թևոց առեալ զձագսն . ( ըստ 2 օրին . ԼԲ . 11 .) 'ի հանդերձ երկրին բարութեան առաջնորդեցեր . և զկերակուր բանի օրինացն ջամբեր նոցա՝ հրամայեցեր [illegible] , առաջնորդաց , ուսուցչաց ։

12 [illegible] ։ Դու որ զամենայն գործս ծայրագոյն բարութեան

բաժանդակագլեա հրաշալի օրինակաւ կատարեցեր առ կորուսեալ ընտանութիւնս մեր. մինչ յերաւի տանել, զի՞նչ ինչ առնել էր, և ոչ արարի. և [illegible]. զլրուողին ստամոքի զգողալով զանձն, որ են հոգիք մարդկան, յափշտակելով 'ի նմանէ առ քեզ դարձուցեր, կեցո և զիս, և այլն։

# ԲԱՆ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

*Վերստին յարուցեալ կրկին հեծութեան նորին հակոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ [1] դարձեալ ասասցուք վերստին առ նոյն հեծութի սրտիս վտանգի ինձէն մատուցեալ, սովին նախապէս 'ի նոյն ձայն բանի՝ զամենապարգեւդ աղաչահարեցից, առաջնորդեալ ողբոց վտանգիւ 'ի սպառ. [2] Իբր մեռեալ կենդանւոյ անմահից մաղթեմ ոչ [3] խոստովանեալ ընդ փառացդ քո զիմ անարգութիւն, և առ չարեօքս իմովք զքոյդ բարութիւն. որովք յաղթեալ զօրոյ քան թէ բժշկեալ, և ամաչեցեալ քան թէ համարձակեալ, ուխտակորոյս ուանդամանաց։

Բ. Եւ [4] կրկին առակն որ առ իս, որ ոչխարին որոյն ասացուցիւ, որ յետին [5] անզգայութեանն էր մատնեցեալ՝ մոլորեալ, և 'ի լերինս ուր ոչ է այցելութիւն՝ [6] ընդ գազանականացն գնայ և կայն վայրենութեան թափառեալ, ոչ մերձաւոր զօղ տանու մի հօտին, ոչ բան ունէի, որով և զցաւոյն աղէտ պատմէի, ոչ ձեռն ձգողական, որ համբերին է ազդողական։ Եւ դու միայն գովեալդ [7] յոգելածայն յաւիտեանց և յարդի ծննդոյս, զտեալ բառ մաղթանաց զօրման երգողին՝ զիս զմեղուցեալս յանհնչին մոլորութենէ, խնամածոլին տեսչութեանն կամաց հովիւ կոչեցար. և ոչ միայն հովացար, այլ և խնդրեցեր. և ոչ գտեր միայն, հրաշագործ, այլ անճառելիդ բարերարութեանդ սիրոյ 'ի կենդանաբարդ քո յուս բարձեր, և ընդ երկնայն զօրուն դասեցեր 'ի հայրենիդ քո ժառանգութիւն։ Եւ արդ դու հզօր կենարար օրհնեալ այցելու զթածդ յողորմու-

թեան, եթէ [8] զնոսա ընկալար զապաբանեալսն աղեր-
սանաց, որ մինն 'ի միջոյ մահու սահմանի էր չարչարե-
ցեալ, իսկ միւսն ըստ անբանիցն անզգայութեան վտա-
րանդի բացամերժութեամբ յանդրնական վայրի վարա-
նեալ, 'ի բառաչ ձայնի բարբառոյ, որ անկերպաւոր ան-
նշանական, ա՜ծ այլն բարեխնամութեամբդ տնտեսեցեր
զտիեզերահրաշն խնամողութիւն առ կորուսելոյն մեծ
թշուառութիւն, յայտնեաց վերստին և արդ զթու-
թեանցդ խորք և բարերարութէցդ հոսանք՝ առ սնո-
ընեալս առաւելութեամբ [9] վերադրելոցդ օրինակու-
թեամբ, առ բազմօրինակ մահու պարտականս, [10] առ
որ 'ի բարութեանց խառնից քաղցրութեանց յատուկ
համն չար, առ անդամն մարմնոյ արժանաւորս հարուածն,
առ համաձարակ ամենաբոլոր ախտացեալ հոգիս վիրա-
ւոր, առ հաւասարեալս անզգայութեանց անասնոց, առ
օտարացեալս յընտանութենէ խնամողոյ, առ աննմանս
հանդունակից բանաւորութեանց: Որ եթէ տարացոյց
գոյր, ես ասէի. թէ նմանակից գոյր իմ, պատմէի. թէ
հանդունակից գոյր, ես ճառէի. թէ հաւասար գոյր,
ես գրէի. թէ զուգագործ գոյր, ցուցանէի. թէ օրինակ
գոյր, ես ազդէի. թէ [11] յանցեալսն, հայթայթէի.
թէ 'ի ներկայումս աստ, ես յուսայի: Բայց քանզի
անցեալ է ըստ օրինակ, և հրաժարեալ [12] ըստ նմանու-
թիւն, զոր միայն քո է քաւել, բժշկել և [13] կենդանագոր-
ծել, կենդանարար համայն մեռելոց, նորոգութիւնդ
տիեզերաց:

Գ. Ոչ եթէ սրբոյն սրտի տեսութեամբ երջանիկն
Պաւղոսեայ անօրէնութիւն չարեաց բարձրացեալ առի
քան զգլուխ, և ըստ ծանրութեանց բեռանց դժուա-
րակրելոց յանցմունք մեղաց, իսկ որ առ իս կրկն սխալ-
մունք [14] գերազանցէ քան զհեղեղսն ջրակուտակ տիե-
զերասոյզ ամենապարտ ծովուն յորդութիւն, և զկոյտ
լերանց վերադրէ: Այլ շնչեսցէ օդ քո քաղցրութեան
իբր առ Նոյին, և որ զերկինս հալէ զօրութիւն, ցա-
մաքեցուցանել զխղճս ջրակոյտս բազմակոհակս՝ և երկ-
բակործան խնցս պարտեաց և լեռնակարկառ բարձրու-
թեան մեղացս ամբարձելոց: Այլ [15] համառօտեալ զբան
քո հզօր՝ ամենակար հնարաւորութեամբ հակիրճ հա-
տուցմամբ, որպէս առհաւ էր քաւութեան, ըստ մար-

գարէքն, առ երկարաձիգս անօրէնութիւն. և ներելով խնամ յամառութեան, ով երկայնամիտ ողորմած օրհնեալ. Թողցես միանգամայն, բարեգործեսցես խնապէս, հատցես բոլորովին զանվճարելի պարտուցս զարժանահատոյց տոկոսեացս տոյժս տաժանակիրս։ Եւ զի և չիք իսկ առ քեզ ցասումն սրտի, և կամ բորբոքումն բարկութեան, որպէս [16] ոչ կրէն նենգութիւնք և կամ նշմարանք մթութեան. քանզի կեանք են 'ի կամաց քոց և լոյս, և ոչ արարեր զմահ և ոչ խնդաս ընդ կորուստ մարդոյ ըստ Դաւթի և Սողոմոնի։

Դ. Եթէ [17] մարդկան կարգեցեր զայս կէտ սահմանի մեծի պայմանի՝ 'ի բարեվիճակդ քո կանոնաց՝ ոչ փոխատրել անգրէն չարի չար, այլ եօթնանասնիցս եօթն թողուլ անդուստ 'ի յառուր զիւրաքանչիւր մեղանաց զպարտս. և այդ բան առ մեզ, որ միշտ 'ի բնութեան ունիմք [18] բնաւորաբար ուղերձեալ զախծս չարեաց անհամար բիւրուց նորոգ յայտնելոց, որք օրինաւորին երեւին յանդաստան սահմանի ամենաբոյս փշածին բնութեանս, ըստ անսուտ քո վկայութեան, որ թէ միտք մարդոյ 'ի խնամս չարի են արձանացեալ 'ի մանկութենէ. Զի որ զկատարեալ մաքրութիւնն ունէր աւետարանիչն կենացդ բանի Յովհաննէս, և զինքն ընդ հասարակաց բնութեան լծակցեալ, հաստատեաց զճշմարտութիւն քո առ իւն ստութիւն յայտ արդարացեալ. Թէ ասեմք, ասէ, մեղս ինչ մեք չունել, սուտ առնեմք զնա. Եւ արդ [19] կատարեալ է բան քո խնկեալ, և 'ի գլուխ ելեալ անպակաս 'ի ստուգութենէ առ իմ մոլորութի և դժնդակ անխրատութի։ Վասն որոյ խնայեա յիս ողորմութեամբ, քաղցրութեան ճաշակաց աղբիւր, միայն օրհնեալդ յամենայն յաւիտենից. ամէն։

---

1 Դաշինս տաստ: Օրինակք չորք իբրև բայ առնուն զդաշինս, և զբայն հաստատել յարեն 'ի յաջորդն, այսինքն դատելով վերստին առ նոյն հեծութիւն, մատուցեալ ամէն նուագս 'ի նոյն ոմն բանի, և այլն։

2 Իբր Գառնուն: Մի օրինակ ընթեռնու. Իբր Գառնուն կենդանեացն՝ անմահից մաղթեմ. ըստ որում ասի, կենդանեացն մեռեալ է (Ա. Տիմ. Ե. 6.) և առանց նորա եւ մարթ է իմանալ, նման մեռեալ կենդանեաց՝ քեզ անմահից մաղթեմ։

3 Խստաջանենալ: մի օրին. Խստաջանեսցի: Խստացուցանելով վասն փա-

տաց քոց զիմ անարգութիւն. կամ, համեմատութիւ, հանդէպ փառաց
քոց: Եւ ոռ չարեաց իմոց. համեմատութիւ չար գործոց իմոց՝ զբարու-
թիւն քո: Որոց. այսինքն չարեօքս՝ 'ի խորհել իմում յաղթեալ գտայ 'ի
պարտաւորութեան, քան թէ բժշկեցայ 'ի նոցանէ: Կամ, բարութիւն քո
յաղթեալ պարտաւորեցայ, քան թէ բժշկեցայ նոքօք: Ի խոստովանելն
զփառս քո և զմեծութիւն՝ խոստովանիմ զանարգութիւն իմ, հանդէպ
չարեաց իմ գնեմ զքո բարութիւնդ. տեսեալ մեծամեծ փառք քո, և
բարութիւնդ գերահռչակի յորժամ զանարգութիւնս յիշատակեմ և
զչարիս. որով փոխանակ համարձակելոյ 'ի քումն բարութեանդ, ամա-
չեցի յաւէտ, ամօթերես գտայ, զոլով ախտաղանց և կորուսիչ խիղճ
ամենօրեալ պարգևացդ:

4 Կրկին տասն: Յետ առաւել անկելոյն 'ի ձեռս աւազակաց՝ երկրորդ ա-
ռաքն՝ որ է մոլորեալ ոչխարին: Արտաքին փարաւոնին, անարգ օրինակումն:

5 Անգթութեամբ եւ ժամանակաւ: Ահա օրին. ժամանակ 'ի չարիս:

6 Ընդ փարաւոնեանս: Ընդ զազանաբարոյ զնացին 'ի գործ մեղաց
և 'ի վայրենի կրօնս կապարշտութե զեղերեալ, հեռի զոլով 'ի փոքրիկ
հօտէն ածապաշտից: Ոչ ետուն անձին խոստովանութեան՝ առ 'ի պատմել
զաղէտս մեղացն. ոչ ինքեան յիշողութեան, բարի գործոց, որ հանդերձ է ողոր-
մութեան: 2 օրին. ողորմութեան. գործի ազգելոյ կամ խօսելոյ: Համի են,
առէ, 'ի խոստովանութիւն, և ոչ ունէի զանէ բնական գործս բարիս,
որ առաջնչան և յոյս՝ երբեմն զանձողաց և խոստովանելոյ. որպէս առաջ
հայրն սփիւն վասն պատճեն կնոջն, որ առնէր գործս ողորմութեան:
(վարք հարց. հա. ա. եր. 624:)

7 Յանդիմանեցին յարուցանեն: Գոլեալ դու 'ի սկզբանէ ժամանակաց,
կամ յառաջին ազգաց և յայժմու ծնելոցս, զանձեալ զիս զանկեալս
'ի խաւարային ճանապարհ մեղաց, նման մոլորեալ ոչխարին, բառ բա-
րեխնամ առաջութեւ հովիւ Քրիստոս, յանձն առեր կոչել հովիւ, կա-
տարելով զհայցուած սաղմ. ճիը. մոլորեցայ ես որպէս ոչխար կորու-
սեալ, խնդրեա, և այլն: Ոչ լոկ հայրայար փրկութե իմում խնամելով
ասէ, այլ և անձամբ իջանելով, որոնեցեր, ընթացար յամենայն անդին
առ 'ի զտանել: Եւ ոչ միայն բարում վշտօք գտեր զանկեալս ծառայութեան,
բառ եղեկիելի (լդ. 11. 12.) 'ի միզի խնդրելով, այլ և անձնա զԹռեք
սիրոյ բարձեր յուս քո ընդ խաչին, և զառակիդ արարեալ երկնաւոր
հօտին, ժառանգ հօր քո կարգեցեր. և այնպէս որ նախ մոլորեալ ոչ-
խարն էի, եղէ որդի սիրելի. իմ էր կորուստն, դու զայն քեզ համա-
րեցար. խնձ վինանկեաց զիւսն՝ հայր առանելով զանտահմանն ած. իսկ
դու իբր գիւտի հանդիպեալ զուարճացար՝ եղբայր քեզ առանելով և
ժառանգակից: Ո՛վ անճառելի բարերարութի, արդարև նորահրաշ,
վայելուչ քեզ միայն՝ որ հրաշագործ ես:

8 Զհեռա ընկալար, այսինքն զանկեալն 'ի ձեռս աւազակաց, և զոչ-
խարն մոլորեալ. կարգաթանեալն ազերաանց. զպատապանձեալն առ 'ի ա-
զերսել: որոց միոյն 'ի միջոց ժամու. մի օրին. 'ի միջոց. այսինքն 'ի մէջ
սահմանի մահու: այլ. 'ի միջոյ. իսկ միւս ոչխարն՝ տարագնաց հեռաց-
եալ յանքնական հոյսի. մի օրին. յանքնական, յանբնակ լերին առաս-
նեալ: մի օրին. յանբնական: 2 օրին. յանբնաւ: Այսպէս մարդն առա-
բացեալ 'ի շնորհաց և 'ի դրախտէն, յայս աշխարհ անփծից և 'ի ճա-
նապարհ մեղաց փարանեալ, որ ուղեղ բնութեանն և նախնի վինանկին
շնորհաց ընդգեմ էր: Ահա 'ի մեղսն իբրև զոչխար բառաչելով անհնան
ձայնիւ զաղէտսն ցուցանէր. զի խիղճ մտացն նաև 'ի հեթանոսս վկայէր
զանկարգութիւն մեղացն, սակայն առանց զխտելոյ՝ թէ յումմէ է այն
ձայն, և զիարդ լինիցի արդարանալ:

9 [illegible] ։ Այսպէս ունին մեր օրինակք երկք և հին լծ · յարմարագոյն ես · զի կամի ասել, բառ օրինակի անձկեցին 'ի ձեռս աստուածոյ, և մաշեցաւ ոչխարին ։

10 Ա— որ 'ի [illegible] ։ Երկնեցիր զթուլթս առ ի ստ չար համս, որ 'ի խառնուածէ ածայրին բարութեան մեռան [illegible], այսինքն զառնալ, արտաքսեալ, զարկ և անձամբ 'ի քարգր նիւթոց ։ Կամ, առ ի՞ որ զուտ չար կամ զառն համ եմ ։ Մասին զթուլթս առ անձնամբ [illegible] [illegible], այսինքն բանաւորաց, որ բնութեամբ և կերպարանօք նմանակից եմ բանաւորաց, այլ գործովք անբանից համասարիմ ։

11 Թե [illegible] ։ Այլ և այլ բառիք զմի միտս յայտ առնէ, յետ ամէնայն թէ անձնամբ եմ բնութիւնակից բանաւոր մարդոց ։ Եթէ արզարև զայլ ոք ինձ օրինակ կամ համասար կամ նմանագործ 'ի մեղանչելն, ոչ լաւի, առաւնց ամաչելոյ ցուցանէի ։ Եթէ յանցելումն, յառաջին մարդիկն, կամ որ յառաջ քան զիս եղեն, գտանէի զոք ինձ նման յանցաւոր, [illegible], մխիթարեալ լինէի՞ թէ չեմ ես միայնակ ։ Թէ 'ի [illegible], եթէ յայամ ժամանակի տեսանէի զոք նման ինձ մեղուցեալ և ապաշխարեալ, [illegible] այնպէս լինել ։ Բայց քանզի ես 'ի վեր է քան զօրինակ, քո միայն է, և այլն ։

12 Ը—ք Նմ—ն—ութ—ն ։ 3 օրին · ըստ նմանութեան ·

13 Կենդանութիւն ։ 3 օրին · հրաշագործեն ։

14 Գերազանցէ ։ 3 օրին · գերազանցեն է ։ Իմ սխալանմունս առաւելու քան զյորդութիւն ջրհեղեղին · որ ծածկեալ ծածկեաց զբարձանց երեսս երկրի, և զամենայն զյամաքայինս ապականեաց ։ [illegible] [illegible] [illegible] · վերացեալ անցանէ բարձրանալ քան զգլուխս լերանց · կամ որպէս թէ 'ի վերայ գլխոց լերանց ասրեալ ընթերնու՞ երբե զառաջան նոյի ։ Բայց առաջին [illegible] որպէս առ նոյիւն, չինչեալ հոգիս ոչ արդարութեան, այլ [illegible] քո · այս Է՞ չնչեալ, ազդեալ այն [illegible], որ զեկերես հարթէ, կարծանէ, բառ առաջելուն առ եղեւ մարգարէ (Գ · Թագ · ԺԹ · 11 ·) որ և յանձարեցաւ զգեցաւ պատանեաց և մեղաց իմոց ։

15 [illegible] ։ Ի գործ դնելով զհամատառ բան քո՞ որ հզօրն է երբե հոգիս ուժգին, և ամենակար 'ի հնարս քաւութեան, կարծ՞ վճարումն ընդունելով քաւեալս, բառ մարգարէին որով ասէիր, աստ զու նախ զանօրէնութիւս քո զի արդարասցիս (Եսայ · խգ · 26 ·) թէպէտ իմ անօրէնութիւնքս երկայն են՞ բառ նոյն մարգարէի (Ե · 18 ·) բայց այսու կարճ բանիւ ցուցեր ես կամ հնարս քաւութեան · և միանգամայն համառատ բանիւդ՞ թէ թողեալ լիցին քեզ մեղք քո, համեմ զպարտաւս իմ, և այլն ։

16 Ու [illegible] ։ Դիւրին է քեզ, ով երկայնամիտ, արագ թողուլ զյանցանս իմ · զի ոչ խափանեն զքեզ՞ որպէս 'ի մեզ կիրք բարկութեան · ոչ գոյ 'ի քեզ ոխս ունել 'ի սրտի · [illegible], մնացեալ պատրութեան մաաց · այլ ընդ հակառակն՞ կենդ են 'ի կամաց քոց բառ առաքեալ զաւթի (ատղմ · իԹ · 6 ·) և ընդ կարուստ մարդոյ ոչ խնդաս բառ ասելոյ ադամանի (իմաստ · ա · 13 ·) Յանուն ադամանի յեղատակէ զգեբին իմաստութեան՞ բառ առաքական յորջորջմանն ։

17 Եթէ [illegible] ։ Եթէ յաւետարանական կանոնս քո զայս բան առհմանի կարգեցեր մեզ, մի հատուցանել չար փոխանակ չարի, այլ ներել իւրաքանչիւր եղբօր եօթանասնեկս եօթն, և այսպիսի պատուէր առ մեզ աստուծ՞ ապ 'ի բնէ տիրասարք եմք, որչափ ես զու ներեսցես, և այլն ։ Այս հետեւումն կայ յառաջին, [illegible] ։

18 [illegible] ։ Բնական տիրասարութեամբ՞ որ 'ի մե-

զայն ադամայ, ունինք մառուցեալ կամ յառաջբերեալ 'ի մեզ զա-
րասս մեզոյ կամ չար յօժարութեց, որ է սերմնաւորն ելեւն, որք ըստ
օրինաց մարմնոյ ծնանին և երևին 'ի փչարեր բնութենս: Կամ, որք ըստ
խորտակիչիւր հասակի և վիճակի իբրև որինք 'ի վեր երևին, որպէս
յանդատանի ըստ զանազան եղանակաց և օդոյ՝ այլ և այլ են բոյսք:
Այսպէս այլ ախտք են 'ի մանկութե, այլ 'ի պատանութեան, այլ յե-
րիտասարդութե կամ 'ի ծերութե: Սոյնպէս զանազանութիւն է ախ-
տից ըստ այլ և այլ վիճակի և գիտուածոյ. այլով ախտանանք 'ի հա-
րստութե, և այլով յաղքատութե, այլով աշխարհականն, և այլով
եկեղեցականն, այլով այր, և այլով կանայք, այլով իմաստունք, այ-
լով տգէտք, ըստ այսմ և յայլս: Հին լուծ. զբաւն սերմնաւորն, մինչէ
իբրև անուն, այսինքն ունող զօրէնս, որովք երևին 'ի մեզ ախտք բնու-
թեան ըստ առաքելոյն հռովմայ. Է. 7. 8. բայց իբր բայ մեկնել՝ առա-
ւել ընտրելի է:

19 Կատարեալ է բան սա: Այսինքն բանն որով առաջեր, միով մար-
գոյ 'ի խնամս չարին հաստատեալ. և 'ի գլուխ եկեալ երևի միշտ փոր-
ձով առանց սխալելոյ խելք, որ է ճշմարտութեան, այսինքն առ 'ի ցոյց
խնոյ մոլորութե և խիստ անիրաւութենս. կամ, այն բան քո անվրէպ
կատարեալ յիմում մոլորութե: Վասն որոյ այսչափ գիտառակ և
չարաւէր զօլով ապականեալ բնութենս, առաւել ես կարօտ է խնայե-
լոյ, և այլն:

# ԲԱՆ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն ազերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ո՜վ, որ դու միայն ա̃ծ երկնաւոր՝ բարձրեալ, բարեգործ. քո է զօրութիւն, քո ներողութիւն, քո բժշկութիւն, քո առատութիւն, քո են պարգեւք, քո միայնոյ են 'շնորհք ձրի, քո քաւութիւն, քո պաշտպանութիւն, քո հնարք անխափանելիք, քո արուեստք անզանելիք, քո չափք անչափելիք, դու ողջոյն և դու կատարած: Քանզի ոչ երբէք ստուերացուցանէ զլոյս ողորմութեան քո՝ խաւար սրտմտութեան. վասն զի ոչ ես գրաւեալ ընդ մասամբք ախտից՝ 'ի վերդ քան զբան: Պատկեր անպարագիր անդր քան զըղձանութիւն կըշռութեան, անչափ լայնութիւն փառաց, անտարրափակ ընդարձակութիւն հաստ զօրութեան, անամփոփելի առաւելութիւն բարձրութեան, անտկարանալի բա-

բերկրութիւն զթութեան։ Դու դարձուցանես, ըստ մարգարէին, յայգ զատուերս մահու. որ իջեր կամաւ 'ի տարտարոսն ներքին[3] արգելականացն բանտի, յորում և մաղթանացն ձայն էր ազխեալ, և զերեալ անտի զմթերիցն կապուտ փառաւորելոյն հոգւոյ, ուսերբ հրամանի յաղթական բանիւ զկապ սատակման մահուն խզեցեր, և զմեղացն կարծիս ցրուեցեր։ Դարձ առ իս՝ որ[4] զընդամ զընդամնաւ վէհս տղմանուց զգոյս յերկաթս մեղաց, վիրաւորեալ խոցմամբ ոլաքաց բանսարկուին նետից։

Բ. Ահա դու յամենայնի տէրդ բարերար, լոյս 'ի մէջ խաւարի, որհնութեանց զանձ, ողորմած, գթած, մարդասէր, կարող, զօրաւոր, անպատում, անքնին, անճառ,[5] բաւական ըստ որքոյն Յակոբայ, անհնարիցդ ամենից դիւրապատրաստ հնարաւորութիւն, հուր ծախիչ զխոտս մեղաց,[6] ճաճանչ կիզանող ընդհանրական թափանցանցութեան խորհրդոց մեծի,[7] յիշեա զիս յողորմութեան քո, որհնեալ, և մի յիրաւունս քո. 'ի ներողութեան քո, և մի 'ի հատուցման. յերկայնմտութեան քում 'ի հաստատութեան։ Եթէ կշռեսցես զմեղանաց խմոց ծանրութիւն, ընդ քաղցրութեան քո և մի ընդ արդարութեան. զի առ սակ նախնումն՝ յայտ է նուազեալ, իսկ 'ի ներհակ վերջնոյս՝ յաւէտ ծանրակիր։

Գ. Արդ մատիր առ իս, բարութիւն, որպէս յանկանն բժշկութիւն հակառակ քո համբարձելոյն. բարձ 'ի մեղուցելոյս զհողմ մահու խաւարութեանս, զի հանգիցէ յիս ամենակալ հոգւոյդ խաղաղութեան։ Ու քեզ փառք յամենայնի, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

1 [illegible]։ մի որին. [illegible]։

2 [illegible]։ Պատկեր՝ որ գծով ոչ ամփոփիս, և արտաքոյ [illegible], այսինքն քան զչափ համեմատութեան ձևոյ և գծի։ Զայս և զհետևեալսն առ որդին ասէ, բայց ըստ հասարակ բանի ածութեան, և ոչ ըստ որում անձն եղեալ. ասաց հօր և հոգւոյ եւ պատշաճին։ [illegible], ընդարձակութի կամ սաստիկ զօրութեան, որ ոչ փակիս 'ի սահմանի տարերաց. կամ ոչ կալիս 'ի բնական ազդեցութի տարերաց։ [illegible]. անուանութեան հեռաւորութեան, որ տեղեաւ կամ չափու ոչ ամփոփիս։

3 [illegible]։ Յետ փրկական քո մահուան իջեր [illegible],

իշխանական կամօքդ՝ և ոչ 'ի բռնութենէ կամ ըստ պարտուց 'ի ներքին տարապարտն արդարոցն՝ որք ըստ պարտուցն ադամայ արգելեալ կային 'ի դժոխս․ յորում և դուռն մաղթանաց փակեալ էր, այսինքն ոչ զօրէր աղաչանք․ զի ոչ ողորմութե էր տեղի․ ուստի և ոչ անարդարոյն լինէր ազատութի․ զի եթէ լոկ մաղթանաց չկայր տեղի, զիա՞րդ անապաշաւ մեղաց և դատապարտութե լինէր թողութիւն։ Եւ [illegible], զյափշտակեալ հոգիսն՝ զորս վասն յանցանացն ադամայ իբրև իւր կալուած մթերեալ ունէր սատանայ ընդ իւրով իշխանութեամբ, յաղթող բանիւ իբրև սրով խզեցեր զարգելս մահուն պարտաւորութեան (ըստ զաքար․ թ․ 11․) «Արձակեցեր զկապեալս քո յանջրդի գբոյ»։ Եւ [illegible] ․ այսինքն փարատեցեր յարդարոյն զատաղնապս և զարհաւիրս՝ որ 'ի մեղաց։ Կամ, արձակելով զկապեալսն 'ի սատանայէ, բարձեր զկարծիս հրէից՝ որք համարէին զքեզ չարագործ և մահապարտ, այլ և զկարծիս դիւացն՝ որք կարծէին զքեզ իբրև զայլ մարդիկ մեռեալ 'ի պատիժ մեղաց։

4 [illegible]։ Տառապիմ, չարչարիմ 'ի զընդանի վշտս, [illegible], Թանձր աղմով լցեալ գբոյս, որով խմանին զարշութիւնք մեղաց։ Նման Երեմիայ ընկեցելոյ 'ի գուբ աղմոյ, զոր չարախօսք նորա իբրև նեխիւք խեղդանէին։

5 [illegible]։ Կարող յանձնային՝ ըստ որում ասացաւ առ յակոբ նահապետ (Ծննդոց․ լէ․ 11։) մի օրին․ [illegible]։

6 [illegible]։ Այրեցող իբրև զճառագայթս արեգական, [illegible] ․ այսինքն ճաճանչ առ հասարակ յանձնայն ինչ Թափանցող․ [illegible] ․ որ ունի զմեծ խորհուրդ, կամ զաղանածածուկ․ զի լոյս ածային մասյն անցանէ մինչև ցորոշումն շնչոյ և ոգւոյ, և քննիչ է մտաց և խորհրդոց սրտից (եբրայ․ դ․ 12․) և այսու Թափանցութբ զամենայն կեզանէ մաքրելով․ զայլս սպառելով, ոմանց բարի կարծեցեալ խորհուրդքն և իղձք՝ ցուցանին լինել չար․ յայլս աղցմունք զարմանալիք ներգործին, և այլն։ Թուի ակնարկել զբան իմաստ․ է․ 24․ 25․ «Ընդմտանէ ընդ ամենայն վասն յստակութեան․ քանզի ճաճանչ է այս զօրութեանն» և այլն։

7 [illegible] ․ ողորմութեամբ քով, և մի իրաւամբք արդարութեան․ երկայնմտութեամբդ, [illegible], ծիրդ կամ անաչառ քննութբ։ Զմեզս իմ կշռես ընդ քաղցրութե քո, և մի ընդ արդարութեն․ [illegible]։ 2 օրին․ [illegible], առ չափ ողորմութեանց մեղք իմ Թեթևանան․ [illegible], հանդէպ արդարութեանց ծանրանան։

# ԲԱՆ ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Որդ աղաչեմ զինամակալդ վտանգաւորաց տաժանելեաց կրից թաղծութեանց հոգւոց վշտացելոց,[1] մի յաւելուր հեծութեանս ցաւ, մի խոցեր զվիրաւորեալս, մի զատապարտեր զպատժեալս, մի տանջեր ըզչարչարեալս, մի զաներ զհարուածեալս, մի զլորեր զանկեալս, մի կործաներ զգայթակղեալս, մի մերժեր զհեռացեալս, մի տարագրեր զհալածեալս, մի ամաչեցուցաներ զպատկառեալս, մի կշտամբեր[2] զհարթուցեալս, մի խորտակեր զբեկեալս, մի խռովեցուցաներ զամբոխեալս, մի ալէկոծեր[3] զբքացեալս, մի սասանեցուցաներ զդղրդեալս, մի չփոթեր զմրրկեալս,[4] մի կեղեքեր զգիշատեալս, մի ջաղջախեր զբեկեալս,[5] մի փօշեր զմորմոքեալս, մի կուրացուցաներ զխաւարեալս, մի զարհուրեցուցաներ զապշեալս, մի խորովեր զխարշատեալս, մի մահացուցաներ զհիւանդս, մի բեռանց ծանրութեան մաճաներ զտկարս։ Մի անուր յաւելուր կարկամեալ թիկանցս, մի կրկնակի ողբումն զառն հեծութեանս, մի ուժգնագոյնս վարեսցիս առ հողս, մի սաստկագոյնս առ մոխիրս, մի անաչառագոյնս առ ստեղծուածս, մի ահարկութեամբ առ փոշիս։ Մի ընդ հարկանիր խստութեամբ մեծդ ընդ փոքուս, լոյսդ ընդ ստորնականիս, ընութ՟ բարիդ[6] ընդ 'ի բնէ չարիս, ողկոյզդ օրհնութեան ընդ պտղոյս անիծից, քաղցրութիւնդ իսկապէս ընդ համայն դառնութեանս, փառաւորեալդ անփոփոխ ընդ ամենևին անարգիս, կենացդ նշխար ընդ կաւոյս զանգուածոյ, տէրդ տերանց ընդ աղմի երկրայնոյ, աննուաղ լիութիւնդ ընդ չքաւոր սորկիս, անկապուտ ձոխութիւնդ ընդ անպատսպար տառապելոյս, անկարօտ բարութիւնդ ընդ ամենաթշուառ աղքատիս։ Քանզի ո՞վ որ հատեալ յառաւօտ՝ և[7] ի ծագման լուսոյն խիթայ մթանալ, և կամ

ընթերակաց կենաց՝ մահանալ, կամ աղքատութեան՝ և պարտաւորիլ, կամ շնորհաց՝ և դատապարտիլ, կամ փրկութեան՝ և մատնիլ, կամ նորոգման՝ և եղծանիլ, կամ օրհնութեան՝ և տարագրիլ, կամ բժշկութեան՝ և վիրաւորիլ, կամ լիութեան՝ և նուաղիլ, կամ յաճախութեան հացի՝ և քաղցնուլ, կամ գետոյ հոսանաց՝ և պապաքիլ, կամ մայրենի գթոյ՝ և նենգիլ, կամ խնամոց աստուածեան աջոյդ՝ և զզուիլ։

Բ. Եւ արդ ընդ ախտացելոյն սաստկապէս մարմնոյս բորոտութեամբ հոգւոյս վտանգաւ և ես պաղատիմ, տէր եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Ընդ [8] աչացուացն նեղելոց մշտագիշերին խարխափանօք մեծական ձայնիւ հառաչեմ. ոչ որդի անուանեմ Դաւթի, այլ ծնունդ էիդ ա͞յ դաւանեմ. [9] ոչ միայն ռաբբի կոչեմ, որ վարդապետացն է պատիւ կարծողական զխոկն գիտելոյ, այլ տէր երկնի և երկրի հաւատամ։ Ոչ ձեռինդ միայն ձգմամբ հպաւորութեան, ով բարեգութ ա͞ծ մերձաւոր, այլ 'ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ՝ ակն ունիմ զօրել քո բանիդ առ իմ բժշկութիւն։ Ոչ թէ ինչ խորոց կասկածանաց միջոցի բանի, որ երկմտութեանն կարծի նշանակ, 'ի մէջ արկանեմ [10] կամելոյն և ողորմութեանն, այլ կամիս որպէս բարեգութ, և կարես որպէս զարարիչ. ասա բանիւդ, և բժշկեցայց։ Ընդ հարիւրապետին հաւատոց [11] և ես լծակցեմ. ոչ մինչ անձուկ միայն բացակայութեամբ հեռի լինելով խորան 'ի խորանէ հաւատամ ազդել քոյ կարողութեդ առ յարութիւն և բժշկութիւն, այլ 'ի վերինն երկնի բազմելով և 'ի ստորինս երկրի բովանդակ, առ հրաշից սքանչելութիւն ոչ ունիմ հատուցանել։

Գ. Շնորհեա ինձ, որպէս զատակնիք բանին քո վճռեալ առ պառնկլին ընդունելութիւն, [12] հնգից հարիւրոց դենարաց պարտուց շնորհարաշխութիւն՝ ա͞ծ բարութեանց և տէր երանութեանց, որ յաճախն ընձեռել՝ բազում փառաւորիս, և 'ի շատն մատուցանել՝ նուազն չափ սիրիս, և յառաւելն ողորմել՝ կրկին բարգաւաճիս, և յայսքան բարիս իրաւամբք գովիս, և [13] ամենայնի տէր գոլով հաւասարորդ ճանաչիս, և որ զլուլոյն ունիս՝ ընդ մերում կշռիս, և անճառելեաւդ ձրիւ մերայնովքս վճարիս, և ընդ երկրաւորիս զանվախճանն

պարտ վարկանիս, և մեծապրեալ քո զմերս՝ վեհս զոհաբանիս, և 'ի սակաւուն տուչութիւն զոյգն փառաւորիլ ոչ ամբարտաւանիս։ Նոյն և ինձ զնոյն գթութիւն ունողիս զգործս անհամար պարտուց. զի և 'ի Ճառս երախտեաց քումդ պարգևաց՝ [14] Նորին խոկ սակով սիրելի կարգեսցի. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

---

1 Մի յաւելուր։ Մի լքանելով զիս 'ի քո յուսոյդ և 'ի մխիթարութենէդ, 'ի վերայ հեծութեան տառապելոյ ցաւ հոգւոյս։ Յայս հայեին բովանդակ յաջորդ բանքն պէսպէս նմանութեամբ. յորս ասելն առ իմ, մի խոցեր, մի գլորեր, մի կուրացուցաներ, և այլն, իմանի՝ մի թողուր խոցիլ, գլորիլ, կուրանալ։

2 Զհարուածեալս։ Զխրատեցեալս, կամ զանկնդրեալս 'ի խղճէ մըտացս՝ մի կշտամբեր։

3 Զբքացեալս։ Զհարեալս 'ի բքոյ, զհողմակոծեալս մի տար ալէկոծիլ։

4 Մի ճեղքեր զփշրտեալս։ Մի աղճատեր կամ ծուատեր զպատառեալս։

5 Մի կրծեր զխարշակեալս։ Մի խածաներ զկոկծեալս։

6 Ընդ 'ի բնէ չարիս։ Ընդ իս՝ որ բնութեամբ չար եմ վասն լինելոյս յոչընչէ, որ ըստ ինքեան չար է, կամ վասն սկզբնական մեղացն, որ 'ի ծննդենէ ընդ բնութեան առաջեալ լինի։ Կենաց նշխար. սկիզբն կենաց՝ մի հարկաներ ընդ անկենդան կաւոյս։

7 Ի ծագման լուսոյն իմոյ, կասկածի՝ երկնչի մթանալ, խաւարիլ։ Եւ մահ ընթերակայ կենաց, մերձ գոլով կենացն՝ երկնչի մահանալ։

8 Աւուրցն ներշնչոյ։ 2 օրին. աւուրցն ներշնչելոյ։

9 Ոչ միայն ռաբբի։ Իբրև զկոյրն ոչ լոկ ռաբբի կոչեմ զքեզ, որ է ստորական պատուի վարդապետական, կարծեցելոյ ինչ գիտելոյ. այսինքն որ ընդ կարծեօք թողու գիտել զինքն կամ զբռուն անձն, թէ ո՛ և որպիսի ոք է. զի կոյրքն և հրէայք վարդապետ միայն կոչելով զքեզ, ոչ ցուցանէին զանեղութիւն քո և զաստուածութիւն. վասն որոյ ես Տէր տէրն և տէրն հաստատեմ։ Ոմանք զմերոցգրեալ բանդ այսպէս իմացան. վարդապետական անուն առեալ լինի յուսուցանելոյ. և ցուցանէ զգիտութիւն իսկութեան օրինաց. և վարդապետք հրէից ռաբբի անուն ընդունելով, կարծեցուցանէին գիտել զիսկն օրինաց, և ոչ գիտէին։ Բայց այս դիտաւորութիւն ոչ յարմարի բովանդակ բանին։

10 Կամելոյն և ողորմութեանն։ Ոչ եթէ իբրև զբորոտն (մատ. ը. 2.) որոշումն ինչ կասկածական բանի 'ի մէջ ձգեմ կամելոյդ և ողորմութեանդ, ասելով, եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել. որ զերկմտութիւն ինչ ցուցանէ կամելոյն. այլ ես հաւատամ անկասկած՝ թէ իբրև ողորմած՝ կամիս, և իբրև ամենակարող՝ կարող ես։ Այս են միտք բանիս. սակայն հայելով յամփոփ պարբերութիւնն, վրիպակ երևի 'ի բառն կամելոյն, փոխանակ գրելոյ կարելոյն. ապա թէ ոչ՝ առանձինն կամելն և ողորմութիւն կամ ողորմելն՝ զնոյն նշանակութիւն բերեն. ըստ որում և 'ի բացատրելն ասէ, կամիս ողորմել բարերար. ուստի ոչ յարմարէր խարոց [illegible] 'ի մէջ կամելոյն և ողորմութեան. այլ և 'ի բանի բորոտին եթէ մանաւանդ խարոց զնի 'ի մէջ կամելոյն և կարելոյն. զոր և սուրբ վարդապետս մեկնելով, զատաբար յիշէ զկամելն և զկարելն։

11 ՈՒ ԵՍ ԾԱԽԵՑԻՑ. 2 օրին. ԾԱԽԵՑԻՑ. այսինքն կցորդիմ հաղորդիմ՝ ընդ հաւատոց հարիւրապետին. ոչ թէ սակս հեռաւորութեան ԽՕՍԻՆ 'Ի ԽՕՍՔՆ, սուն 'ի սմանէ՝ հաւատամ զօրել կարողութեանդ 'ի յաղթացանել կամ 'ի բժշկել միայն, այլ 'ի վերին երկնիս բազմելով քո, և 'ի ստորին երկրիս ԲՆԱԿԵԱՅ, ամբողջ գոլով. կամ բովանդակապէս ոչ կարեմ սա զարմանագործութիւն անիրաւ հրաշից քոց ՀԱՒԱՏԱՅՆԵԼ. այսինքն բանիւ վճարել կամ պատմել : Հին լուծ. զբաղդատութիւն այսպէս իմանալ. 'ի բժշկութեան հարիւրապետին սակս միջնորդ հեռի էր, իսկ ես և ոչ սակս միջոց հաւատամ, այլ անընդմիջելի մերձ : Յայտ հեռի ձգի 'ի զիտաւորութէն սորոյ վարդապետիս, որ յայտնապէս ասէ, թէ նաև 'ի բարձրութեան երկնից հաւատամ զօրել կարողութեանդ. և ոչ թէ լոկ սակս բացակայութեանն :

12 ՀՆԳԻՑ ՀԱՐԻՒՐՈՑ ԴԵՆԱՐԵԱՑ : Որ (ղուկ. է. 41.) դնի դահեկան. իսկ սուրբ վարդապետս դենար ասէ, զի երկու բառքս փոխան միմեանց դնին. որպէս (մարկ. ժդ. 5.) ուր դահեկան ասի, նոյնն (յովհան. ժբ. 5.) դենար դնի :

13 ԱՄԵՆԱՅՆ ՏԷՐ ԳՈՒՑԷ: 2 օրին. որպէս և հին լուծ. ԱՄԵՆԱՅՆ ԳՈՒՑԷ. այսինքն դու ամենայն ինչ գոլով, ՀԱՍԱՐԱԿՐԵՑ ԾԱՌԱՅԻ. իբրև հաւասար մեզ 'ի գաշն մնանես, խոստանամք պարտ ամենս զքեզ՝ ըստ վաստակոց վարձս չափել : Զամենայն ինչ ունելով, ԸՆԴ ՄԵՐՈՎՍ ԼԻՑԻՍ. ըղձեղ տաս 'ի փոխարէն գործոց մերոց : Կամ, ամենայնիւ հարուստ ձրի գոլով, սակաւին այնու փոքումն զոր մեք ունիմք, զինչանիս իբրև կարօտ, կամ զաւակել ինչ սոցեալ համարելով : Եւ փոխանակ անձառելի ձրեցդ՝ ՄԵՐԱՅՆՈՎՍ ԼՑՈՒՐ. զմեր գործս վճար առնուս և չառանաս : Եւ զայն մեծ համարելով, ԼՑՈՒ ԳՈՀԱՑԱՒՆՔ. մեծապէս փառաւորիս : Կամ, բազում գոհութիւն ընդունելոյ արժանի ես. այնու զի զմեր չնչին գործս համարիս իբրև մեծամեծ վաստակս : Եւ յորժամ 'ի փոքր գործոց մերոց քեզ սակս փառք լինին, ու ԱՐԺԱՆԱՒՈՐԻՍ. ոչ գժուարիս՝ անփայելուչ համարելով քաւ մեծութեանդ զփոքր տուրս մեր : ԲԱՒԱԿԱՆԻՐԷ. այլ օրին. ԲԱՒԱԿԱՆԷ :

14 ՆՈՐԻՆ ԻՍԿ ԱԿՆ: Նովին չափով. ընդ թիւ երախտեաց քոց՝ նովին չափով կարգեսցի սիրելն քո զիս, և իմ զքեզ : Կամ, ըստ պայմանի սիրոյ պարտականին կարգեսցի և իմ սիրելն. որում տայցէ՝ թողուլ զբազում մեղսն վասն յոյժ սիրելոյն : Կամ, նոյն իսկ սիրելն զքեզ՝ լինիցի մեծ երախտիք քո. զի յորժամ վասն բազում թողութեանց առաւել սիրեցից զքեզ՝ իբրև զպարտապան պարտականին, նոյն իսկ մեծ երախտիք են քո :

# ԲԱՆ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Որդ ես ծնունդս մեղաց, որպէս մահացու երկանց, արդարեւ անսահման [1] բիւրուց քանքարաց տաժից գոլ հատուցանող 'ի միում աւուր։ Ո՛չ [2] ոչ թէ առ փոքրկութիւն մարդկային մտաց հայցեմ ներութիւն, այլ առ անճառ լուսութիւն փրկչիդ Յսի Քսի պաղատիմ մարդասիրութիւն. որ չէի երբեմն՝ և ստեղծեր, չմաղթեցի՝ և դու արարեր, չև ես եկեալ 'ի լոյս՝ և տեսեր, ոչ յայտնեցեալ իմ՝ և գթացար, ոչ կարդացեալ՝ և խնամարկեցեր, ոչ համբարձեալ ձեռն՝ և նայեցար, ոչ պաղատեալ՝ և ողորմեցար, ոչ կերպացեալ ձայնիս՝ և լուար, ոչ հեծեծեալ՝ և ունկնդրեցեր, [3] գիտելով զարդեան զխոցուածոյս՝ և չանտեսեցեր, նախահայեցող աչօք նկատեալ զպատժապարտս չարագործութիւն՝ և յօրինեցեր։ Եւ արդ զքո արարեալս և զքև փրկեալս և զայսքանեաց խնամոց յանձնանձեալս մի 'ի սպառ կորուսցէ մեղացն հարուած գիտաք բանսարկուին, մի յաղթեսցէ յամառութեանս իմոյ մտախուզ՝ ներողութն քո լուսոյ, մի սրտիս կարծրութիւն՝ երկայնամիտ բարութեանդ, մի մահացու մեղքս՝ ամենակատար լրութեան, մի տկարութիւնս նիւթոյ՝ անպարտելի բարձրութեան։

Բ. Ո՞հ կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս յանուն քո, հզօր, արտասուս ողջ իբրև զառաջինն [4] մինչ 'ի դրախտին փափկութն զպտուղն կենաց կթէի։ Կաշկանդեալ գօսացեալ 'ի կոր կործանմամբ ընդ կնոջն տագնապելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուառութիւն, ընդ երկիր պշուցեալ [5] մեղացն կքմամբ՝ սատանայական բուռն կապանօք, զի մի զերկնայնոյդ ընկալցի զողջոյն. խոնարհեաց առ իս, միայն ողորմած, զի բարձրացուսցես զփայտս խոնարհ բանաւոր անկեալ, և զօրացեալս

ծաղկեցուցես [6] 'ի բարի կրօնս վայելչութեան, ըստ աստուածաբանութեան սուրբ մարգարէին ։ Որպէս զ'ի ծնէ կոյրն անլուսաւոր՝ չունիմ տեսարան, որով զստեղծ- ջիդ նկատեալ զկերպ մաղթեցից, հզօր բարեգութ, մի- այն դու պաշտպան ակնարկեալ խնամովք անճառ քոյ ոկրոյ՝ 'ի չնչական խօսուն քո անօթս, յանէից [7] գոյա- ւորութիւն լուսոյ հասուցես ։ Ընդ երկոտասանամեայ չարեօք չարչարեալ փչտայլն կանչն տանջեցելոյ՝ զե- տովք մեղանաց արեան հեղեղմ՝ հայեաց 'ի բարձանց անմատոյց լուսովդ պարածածկեալ, [8] ուր ոչ է քննել ձեռատեղծական վերարկու ձորձոյ, այլ տարածումն հրաշից ամենայն ուրեք զօրացեալ ։ Ոչ օծութեամբ իւ- ղով պատժապարտս ընդ մեղաւորին մատուցեալ առ կենդանատուիր ասից զարշապարդ՝ զկաթիլս աչացս վար- սիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ զամբիծ հաւատս ամբարձմանն բազկացս ստոյգ զաւանմանն հոգւոյ ող- ջունիւ շրթանց կափուցմանն զերկիր համբուրեմ, խառ- նեալ հեծութիւն [9] աղերսս արտասուաց՝ բժշկութիւն հոգւոյս աղերսեմ ։ Առնեալ մեղանօք [10] հոգւոյս գոյ- ութիւն լուծեալ մեղկութբ, և յերկուց կողից միա- նականգնմանն անհաստատ հետովք, զընթացից գործին՝ նահանջմանն չարին՝ զհետևակման բարձողութիւն շի- նուածոյ մարմնոյս՝ առ եւ ծառայն կենդանարիթ պաղոյն խափանեցելոյ, պատապարեսցես անդրէն վերստին, մի- այն հնարաւորդ առ 'ի փրկութիւն ։ Օ փառաբանա- բան [11] հաստուածոց կերպիս 'ի քէն եղելոյ՝ անխափան խոյմանք հանկարծոյ արգել հոլմ բանաւորութին ։ Հեղին քո ազդեալ մեծագործութեանք, ըստ յաւետարանին բժշկեցելոյ, հրաշափառապէս բարեգործեսցես բանդ կենդանի՝ ինձ խօսողութիւն անասնաթարելի ։ Ընկեալ կամ չարեօք 'ի մահիճս ախտից ընկողմոց մեղաց՝ զի կենդանի և խօսուն մեռեալ, կարեկցեալ խնամն թշ- ուառութեան՝ [12] ողորմածութ քրոմանց ձայնից, ով բարերար ողորմ, օրհնաբանեալ աչացդ ցօղով վերա- կանգնեսցես 'ի կենդանութիւն, իբր զմիջնլին 'ի յան- չնչական մեռելութենէ ։ [13] Ստոյգ զամենայցոյս 'ի գբի մեղաց կամ՝ տարակուսեալ, ձեռն մատուցեալ՝ արև ան- սուեր ողջ բարձրելոյ, հանցես զիս 'ի լոյս քու մի Նր- ջուլից ։ Ընդ աղխողոյ թշուառութեան կականման

ձայնի այրւոյն 'ի Նայլին մօր միամօրին, [14] տատանմամբ մատանցն, կոծմամբ կրծիցն, հառմամբ արտասուացն, տուայտանօք ախրութեան գլխոցն, և ես պաղատիմ վերջին հեծութեամբս, տուր յուսահատելոյս զբաջալերութիւն մխիթարութեան գթած քո բանից, առելով և ինձ զովեալդ բարի առեղծիչ աշխարհի, թէ մի լար զերի բազմաց ողբալի. որով ընդ պատանւոյն կենդանացելոյ 'ի վշտացելոյ ծնողին սփոփանս՝ զամենապարտ ոգիս ընկալայց 'ի քէն ընդ նմին կրկին նորոգեալ: Ընդ [15] այսակիր անզգայելոյն զիւալուկ և քարակոչկոծ հեղձամղձուկ եղկելի անձանցն, քամահելի զխախախս հերացն, վայրենաբերս բանդագուշելոցն, 'ի քէն ողորմեալ փրկիչ բոլորից, իբրև զնոսին առ քեզ զիմեցից. Հերքեալ մերժեցես զզունդս չարացն ապականողաց 'ի քո խորանէս, զի ժամանեալ հոգիդ քո բարի այսրէն հանգիցէ, լցեալ զմարմինս մաքրութեամբ հնչոյս՝ զցեցմամբ անգամոցս, զզաստ արասցես զխելագարեալս ամենաթշուառ: Ընդ գերեցեալ դժոխարհակաց [16] վտարանդելոցն հոգւոց արգելեալ կամ 'ի վտանգի. զճառագայթ ողորմութեան փառաց քոյ ծագեալ՝ լոյս իմ անձկութեան, 'ի կապանաց օտարին զերծեալ զիս ազբեցուսցես: [17] Նաւամտորդայթ աներևութերակ վրիպակ արահետ զարշութեամբ մեղացս ջրգողեցեալ ոգւոյս կերպարան կայ 'ի տագնապի. զծածկեցեալն 'ի տեսողութեանց զչարագործին [18] թիւնիցն այտուցմունս, քո ինքնաւորդ զօրեղութեամբ որդի այ, զթածաբար առողջացուսցես: Օ բազմազան տարազս ցեղիցն զանազանից ախտաւորութեանց [19] մահացուցանողաց իւրականօք կորստեան բերիւք, զժնդակարմատն շառաւեղօք հատատեցելովք 'ի յանդաստանի անօրէն մարմնոյս, տարակորզեսցես 'ի ձեռն ձեռին ամենակալի, որ արօրադրեալ միշտ՝ և մշակես զսահմանս հոգւոց առ բանիդ կենաց արդիւնաւորութիւն:

Գ. Եւ քանզի անյառ ըստ նմանութիւն օրինակութեանց յանցուածոցս վէր, [20] ըստ ճարակողն քաղցկեղի, առ ընառ անդամս մանաւորեալ զախտին տարածումն, չիք սպեղանի իբր Նարայէլի առ անչափութիւն խարանացն մատուցանել. 'ի խորոխաց բարձից մինչեւ ցափն կառուցման լութեան անդամոցս չէ առողջու-

թիւն, այլ ամենեքին անպաճուճութիւն։ Իսկ դու՝ ողորմած բարերար օրհնեալ և երկայնամիտ Թագաւոր անմահ, լուր պաղատանացս արգահատութեան սրտիս վըտանգի, որ կարդամ առ քեզ տէր 'ի նեղութեան։

---

1 [illegible]։ 3 օրին. [illegible]։ Բիւր քանքարոյ կարասեան պարտապան եմ 'ի հատուցանել 'ի միում աւուր. բիւր աստ՝ զանթիւ բազմութիւն յայտնելով. այլ փան [illegible] ասէ.

2 [illegible]։ Ոչ ըստ փոքրկութեան մարդկային մասոյ հայցեմ թողութիւն, այլ ըստ անսպառ լիութեան փրկչիդ [illegible], հայցեմ զմարդասիրութիւն։ մի օրին, [illegible]. զի եթէ մարդկային չափով խորհէի, ոչ համարձակէի բնաւ հայցել ներումն։

3 [illegible]. այսինքն զայժմու դիպուածոյս։ Հոլով անուանեալ՝ կամ իբր պատմական դնի, և կամ է սեռական յառակայուցիչ՝ ընկերեայն ունելով զայլ անուն հայցական, այսինքն զվճռակ արդեան դիպուածոյս, և կամ զայլ այնպիսի։ Հաւասարի գիտելով քո, ասէ, զայժմու անարժան պատահմանս մեղաց և զպարտիս, ոչ անմեւս ապարէր. նախահայեացդ քո ճանաչմամբ տեսեր՝ որչափ չարիս գործելոց էի, և 'ի վերայ այսր ամենայնի յօրինեցեր զիս արարած վայելուչ։

4 [illegible]։ Առաջնոյս, ասէ, զբազում հոգւոյս՝ զմիտս և զկամս իբրև զառաջինն յանմեղ վիճակին, յորում եթէ կացեալ էաք, կեթէի զարատըն կենաց։ Կամ, զոր յայնժամ կեթէի միջնորդութեամբ ազատնոյ. զի որպէս նորա արտաքումն 'ի դրախտէն համարեալ լինի և մեզ, նոյնպէս կայն և վայելել նորա անմահութեան։ Կամ, իբրև զառաջինն յանմեղութեան աւազանին, յորժամ 'ի սուրբ եկեղեցւոջ կեթէի [illegible]. զսուրբ հաղորդութիւնն։

5 [illegible]. այսինքն կծկմամբ, կարկամութեամբ, իբրև ըղկարկամեալ կինն 'ի վայր կորացեալ, անուղղելի կայ հոգիս. կարկամութեամբ մեղացն իբրև կապով սատանայի ընդ երկիր կցեալ, չկարեմ զերկնաւոր ողջոյնդ ընդունել։

6 [illegible]։ մի օրին. [illegible]. այսինքն 'ի բարեկարգ գեղեցկութե։ ըստ [illegible], ըստ նմանին պատգամին եզեկիելի (Ժէ. 24.) « Բարձրացուցանեմ զփայտ խոնարհեալ . . . և դալարացուցանեմ զփայտ ցամաքեալ »։

7 [illegible]։ 4 օրին. [illegible]։ Որպէս 'ի ծնէ կուրին, ասէ, որ չունէր բնաւ գործարան աչաց, նորոգ աչս կազմեցեր, այսպէս ինձ ծնելոյս 'ի մեղս՝ զուրկ 'ի լուսոյ շնորհաց և ճշգիտութեան՝ նորոգ լոյս շնորհաց գոյացուսցես։

8 [illegible]։ Յերկինս՝ ուր անմատոյց լուսովդ ծածկեալ ես, ոչ գոն 'ի քեզ քղանցք ձեռագործ վերարկուի, զի 'ի նոյնս մերձենալով բժշկեսցայց իբրև զկինն տեսանես. այլ [illegible]. պաշտելի գործոց յիմանալեան և 'ի զգալիս առ հասարակ ներգործեալ. որք իբր ձանդերձ ծածկեն զխակութիւնդ, բայց և ցուցանեն զանծութիւնդ և զզօրութիւնդ. և ես յայս պաշտելեաց տեսութիւնս մերձենամ իբրև 'ի քղանցս հանդերձի քո, զի զատուցան միայն պաշտելի զօրութեանդ ծանուցեալ, և ոչ զբովանդակն։

9 [illegible]։ մի օրին. [illegible]։ այլ. [illegible]

[illegible]։ Ոչ ծնմամբ իւրով, կամ իւրով ծնանելով ես պատճառաւոր, մատուցեալ ընդ մեղաւոր կնոջն առ կենդանարար ոտից գարշապարաց զարտասուս իմ հերովք գլխոյ քեզ ընծայեմ, այլ [illegible] ընծայեմ, և այլն։ Կամ, այլ զամբիծ հաւատս [illegible], այսինքն զամբիծ հաւատս Ճշմարտութեանդ դաւանելով, և այլն։

10 [illegible]։ Ցրուեալ մերոյ հոգւոյս կազմուած. զի զգայականն ապստամբեցաւ 'ի բանէն, և կամքն յառաջնորդութենէ մտաց. [illegible], յերկուց ոտից հոգւոյն, որք են կամք բանին և կամք մարմնոյն, [illegible], միով կողմամբն կաղաց և յօժարութեանց մարմնոյն գնալով անհաստատ առ բարին։ Արդ դու հնարաւորդ 'ի փրկել [illegible], զկամս բանին՝ որ զծանրութիւն մարմնոյս բառնայր, և ուղղէր 'ի Ճանապարհ կենաց ծառայն, և խափանեցաւ արգելմամբ չարին, վերստին զօրացո։

11 [illegible]։ Զլեզուս՝ որ է գործի փառաբանութեան 'ի չինուածի մարմնոյս, հանգուցեալ չունչն սատանայի։ Դու բանդ կենդանի հոգւովդ քով ազդեալ [illegible], շնորհեսցես ինձ խօսողութիւն համարձակ, ուղիղ։

12 [illegible]։ Ողբական խմբեալ փոխանակ լալականի, առեալ կամի. կարեկցելով իմ թշուառութեանս լալականք՝ որք դժբաղդաց ձայնս արձակեն։ Իսկ խմբեալ իբրև ածական [illegible], նշանակէ, ողբական ձայնիւք դժբաղդաց, կամ ողբովք ձայնից։ բառն [illegible] 'ի բառէն [illegible] նշանակէ՝ հարկանելով կծեւելն. (ծեծկոծելով լալ։) բայց Չ օրին. [illegible]։ Իմաստք ամբողջ բանիս են. նման զաղաւու անկեալ կամ ես յանկողին ոչ մարմնական հիւանդութեան, այլ մեղաց. որով թէ և կենդանի երևիմ, այլ հոգւով մեռեալ գիտակն եմ։ Բայց կարեկցելով թշուառութեանս իմում, որպէս յայնժամ բազումք եկեալ ցաւակից լինէին քերցն Ղազարու, ընդ նոսա կենարար արտասուօք կանգնեա զիս։

13 [illegible]։ Ակնարկէ զընկեցումն Երեմիայի 'ի գուբ տղմոյն. Նա, ասէ, վասն չարեացն այլոց դատապարտեալ էր (Ողբոց. ա. 20.) իսկ ես առոյգ և յիրաւի 'ի խղճէ մտացս դատապարտեալ, կամ 'ի գբի մեղացս։ Դու որդի ձայ՝ հան զիս 'ի լոյս, որպէս զԵրեմիա եհան Աբդեմելէք եթեովպացի (Երեմ. լը. 7։) Անդ Աբդեմելէք եցոյց զայնպիսի խնամս, որ թարգմանի՝ ծառայ թագաւորի. իսկ դու որդի ես ձայ. Նա՝ եթովպացի թխամորթ. և դու [illegible]։

14 [illegible]։ Չ օրին. [illegible], իբրև թէ ընդ տատանման։ [illegible]. Նուաղմամբ կամ հիւծմամբ արտմութեան։

15 [illegible]։ Դիւահար անզգայից։ [illegible], 'ի գիւղն ամնջեալ. [illegible], քարամբք կոծեալ և բրտացեալ։ [illegible], 'ի ամնջմանէն խեղդեալ։ [illegible], զարհուրելի, և նման խուլոյ խամնափնդոր և ցրտեալ հերացն։ [illegible], այլանդակ դիմօք խելագարեալն։ Այսպիսի անուամբք նմանեցուցանելով զողորմելի հանդամանս դիւահարացն՝ զորոց գրեն (Մատթ. ը. 28։ Մարկ. ե. 2։ Ղուկ. ը. 26.) բառ օրինակի նոցա, ասէ, և ես գտից 'ի քէն ողորմութիւն. զի մերժեսցես 'ի մարմնոյ իմմէ՝ որ է խորան քո, զչեւական ախտս. և հոգիդ քո՝ [illegible], վերստին կամ առ 'ի մարմինս հանգիցէ, մաքրելով զհոգիս իմ, և զչեչուցանելով զմարմինս պարկեշտութեամբ։

16 [illegible]։ Իմա զհոգիս առաջին արդարոյն՝ արգելեալս 'ի գժոխս ներքինս վասն պարանացն ադամայ. առ որս լոյս ծագեցաւ քո յետ խաչելութեանն։ Բառ այնոցիկ հոգւոց, ասէ, արգելեալ

կամ և ես մեղջք 'ի վտանգ կորստեան․ լուսով ողորմութենդ ապրեցո զիս 'ի կապանաց սատանայի։

17 [illegible] [illegible]։ Զմեղս նմանեցուցանէ ծածկողութեան, որ է գաղտնութիւն [illegible], 'ի ծածուկ կամ անյայտ պատճառս ննջող զմարմինն․ [illegible], ընդ անյայտ երախս կամ ճանապարհս մարմնոյ ընթացող․ [illegible], վրիպեալ կամ խոտորեալ 'ի բնական խորշակաց հիւթոյն․ [illegible], յամենայն մասունս և 'ի հիւթս մարմնոյ տարածեալ։ Այսպէս մեղքն զգայնի որոգայթիւ զիւրեան՝ ընդ անյայտ ճանապարհս զգայութեանց մտեալ ընդդէմ ուղիղ բանին և օրինաց, տարածեցան յամենայն մասունս հոգւոյս, և յամենայն շարժմունս նորա։

18 [illegible] [illegible]։ այլ օրին․ [illegible]։ [illegible], այսինքն քայլ զօրութեամբ որ անկարող են դեղոց, արմատոց, առողջացոյց։

19 [illegible]։ 2 օրին․ [illegible]։ Եւ զի մի զամենայն անտակս ախտից մի մի յիշատակեսցէ, զայլ ևս բազմազան ազգս ցաւոց որք ապականեն զոգիս՝ 'ի բերանոյ կորուսիչ պատուհասին, բառ որում գժընդակարոյս շառաւեղք յառաջադայքն յախտաւոր մարմինս, դու Տէր 'ի բաց կորզեսցես, խլեսցես ամենակալ ձեռամբդ, զի քո է խնամով մշակել զանդաստան հոգւոյ մերոյ՝ առ 'ի պտղաբերել զբանից կենաց։

20 [illegible] [illegible]։ Ըստ նմանութեան կերող կամ ապառող քաղցկեղի․ (որ է կերպաս․ չիրխիկնջէ․) — [illegible], առ ամենայն անդամս հաղորդեալ զտարածումն ախտին․ ուստի և ոչ բաւէ ապեղանի առ անչափ տարածութիւն կամ բազմութիւն [illegible], բացեալ և այրեցեալ վիրացն․ 'ի [illegible], յոտից մինչև ցգլուխ չէք առողջութիւն, այլ բոլորովին [illegible], անբժշկելի ախտ կամ ցաւ ըստ Եսայեայ (ա․ 6։) Իսկ դու ով ամենազօր թագաւոր՝ մի ընդ անարժանութիւնս իմ հայեսցիս, այլ 'ի կողկողագին պաղատանս որդւոյ վտանգելոյ։

# ԲԱՆ ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի․

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա․ Լայեաց ամենահայեաց տեսութիւն կենաց բարութեան յուսոյ 'ի մեծապարգեւ աղաղակ ցուցանել ամենայն հեծեծանաց։ Ո՛վ հզօր մեծութիւն, անուն ահաւոր, բարերար կենդանի, լոյս ցանկալի, ճաշակ ախորժելի, կոչումն պաշտելի, բարութիւն խոստովանելի, [1] ազդումն խնկելի, խոկութիւն դաւանելի, էութիւն փառաւորելի, գոյութիւն օրհնաբանելի, տէր Աստուած ընդ

Հօր քում գոլեալ և երկրպագեալ, և ընդ Հոգւոյդ
սրբոյ բարձրացեալ և վերաձայնեալ, որ միայն [2] մարմնա-
ցար վասն մեր ըստ մեզ, զի արասցես զմեզ վասն քո
ըստ քեզ, լոյս ամենայնի, յամենայնի ողորմած, Հզօր,
երկնային, և այժմ գլուծեալ և զխորտակեալ հոգա-
նիւթ անօթս՝ ամծօրէն հրաշակերտութեամբ, աղաչեմ
գթած, նորոգ հաստատեա։ Օ՛ քոյին պատկերս մեղօք
հնացեալս՝ [3] 'ի քրայս հալոցաց կայծակամբ բանից, պա-
ղատիմ առ քեզ, վերստին ձուլեա։ Օ՛ խախտեալ շի-
նուածս քում հանգստեան [4] խորանի մարմնոյս՝ պահ-
պանաւ հոգւոյս, մաղթեմ բարերար, 'ի բնակութիւն
քեզ մաքրագործեա։ Մ՛ի հատուցաներ չարեացն իմ
գործոց զնոյն փոխատրութիւն։ [5] Ա՛րբեալ եմ ըստ մար-
գարէին բանի՝ և ոչ 'ի գինւոյ. թափեա զմրուրս անօ-
րէնութեան թմբրութեան մահու բաժակիս՝ ազատա-
րար հրամանաւդ ամենակեցոյց, զի մի զքոյդ քամեցից
'ի վերջին աւուր յետնում հատուցմանն։
Բ. Ա՛րդար ես յիրաւունս քո, և յաղթող 'ի դա-
տաստանի. եթէ մահու մատնես, Ճշմարիտ են գործք
քո. եթէ դատապարտես՝ աստուած սխեալ զանձօ-
ղականն կշտամբութիւն, ստոյգ են հատուցմունք քո.
եթէ յանդունդս խորոց սուզեսցես, թէ զկենդանու-
թիւն շարժմանս բարձցես, թէ զբանիս զօրութիւն ու-
նայնացուսցես, թէ զաչացս պատուհանս ստուերացու-
ցես, [6] թէ զկենացն ճաշակ 'ի քեզ ինքն ամփոփեսցես,
թէ զհասարակաց կերակրոյս զարմանս բարձցես, թէ [7]
զաւուրցս հարստութիւն համառօտեսցես, թէ ընդ իջ-
ման քաղցրութեան ցօղոյ՝ և հուր տեղասցես, թէ [8] 'ի
լսութենէ բանի քոյ սովեցուսցես, թէ զականջացս
դրունս խցցես, թէ զշնորհիդ ձիր կորուսցես, թէ զգե-
տին յատակի ոտիցս [9] սասանեցուսցես, թէ յանձկալի
երեսաց լուսոյդ քոյ հանցես, թէ 'ի համօրէն աշխար-
հէ աստի հերքեսցես, թէ փայլատակմամբք հրոյ պա-
կուսցես, թէ անբժշկական ցաւօք դատեսցես, թէ դի-
ւաց չարաց մատնեսցես, թէ գազանաց ժանեօք ման-
րեսցես, թէ հողմով ցասման հոսեսցես, և թէ այլ
ինչ նորոգ արարած տանջանարանաց կազմեսցես՝ չար
քան զտարտարոսն և սաստիկ քան զգեհենն, թունա-
ւորագոյն քան զօրգունն, տարակուսելի քան զխա-

ւորն, երկնաւորացն քան զխորխորատն, ողորմելի քան զմերկութիւնն, վկայեմ անձամբ անձին՝ յայժ [10] պարտապան գոլ սոցա ։

Դ. Այլ քանզի յաւէտ սպառօրագոյն են [11] նմանութիւնք փոխատուութեանցն առ աղքատութիւն մեղանացս՝ իբր պատկերակիցք միատեսակք զուգաշաւիղք նշանակիչք այսր խորհրդոց, արդ կարեւոր է խոստովանել և յանդիմանել զերեսայն ծածկոյթս առ ծանօթութիւն խնդրողին ։ Որպէս՝ զի ոչ ջերմն սիրով առ ընկերին կարիս մատուցայ, [12] յիրաւի 'ի նախնումն մտանգին տագնապեալ տառնում ։ Այլ զի ոչ [13] զցանկականն խորխտականութիւն սանձեցի, յարժանի կրեմ եղկելիս զանգոսնալի զկիզումն ։ Այլ քանզի ոչ սիրեցի զլուսոյդ աւետիս, արդար հատուցմամբ 'ի մթութիւն ընթանողական միգին կորստեան վիճակեալ գանգատիմ ։ Այլ զի ոչ խորեցի զմնունս փոքունցն յանցանաց, իբր անշնասակարք վարկանելով, պատկանապէս 'ի խածանողականացն զազրոյն զեռնոց խթեալ խոցոտիմ ։ Այլ զի ոչ ձեռն կարկառի առ կիրս վտանգաւորին՝ այց առնել նմին, 'ի դէպ իսկ [14] ըստ դծայրութեան այսր օրինակի ապականութեանն գրոյ նուիրեալ մատնիմ ։

Դ. Այլ արդ [15] ոչ յոծուստ ամենաբարի զանձուցդ չարիս, և ոչ 'ի լուսոյդ նշուլից խաւար, և ոչ յապաւինութենէդ զայթակղութիւն, այլ ես ինձէն կորըստեան որդիս զտի զայսոսիկ․ մեղանք անօրէնութեան իմոյ զանձեցին նիւթեցին զայսքանեաց բարկութեան մթերս․ [16] հոգւոյ իշխանին մոլորութեան հնազանդեալ, թողի զոնեղի քո նորա, ըստ գրոյն խրատու յանդիմանութեան ։ Այլ քանզի յայսմեցաւ յեռուստ զաղանեաց առականաց [17] մարմնոյս անդամոց, և արկու զերեսօք կերպիս անվայելուչ սուտեր ամօթոյս, ըստ մարգարէին առակի, ողեղս ցուցեալ զիս ամենեւին իբր մերկացեալ խայտառակեցելոյ պոռնկի, ծաղկեա յիս զլյս քաւութեան՝ արքայ երկնաւոր․ զի [18] թօթափեալ զմեղաց փուշս, ըստ աւետեաց ձայնին դարձելոցն 'ի Բաբելոնէ, նոտայց վերստին կանգնեալ 'ի հողոյ, և 'ի հաստատութիւն յուսոյդ հիմնացեալ անսասանելի, ըստ եսայեան բանին, զգեցեալ զզօրութիւն բազկի կարութն նախնում մաքրութեանն, վասն մեծութեան փառաց քաղց-

րութեան ամենապարգեւ քոյ նմութեանց · օրհնեալ յաւիտեանս · ամէն ։

---

1 Աղաչեմ խնդրել · այսինքն աղերսանօք կամ զօրութեան օրհնելի ։ Իմաստութեան պարգեւ · խոհեմութիւն կամ գիտել եղ՝ է միայն զսուրբն, հաւատալի, և ոչ հաստատելի · որպէս և էութիւն, գոյութիւն՝ հաստատեալ է ։ 2 օրին · հաստատեալ · օրհնութեանն՝ քան թէ քննել ։ Նա եւ, յաւ բարձրական իրքն՝ խոհեմութիւն նոցա կամ էութիւն և գոյութիւն ոչ են ինքնին պարզապար նկատեալ՝ ոչ ենթակայ ներգործութեանց, և ոչ սկիզբն, զոր օրինակ մարդոյ խոհեմութիւն կամ էութիւն մասնաւոր յինքեան՝ ոչ արարեալ ամի, և ոչ արարող, այլ իբրև անհաս կամ անձնաւորեալ ։ Ընդ հակառակն՝ յոյժ խոհեմութիւն նորա և գոյութիւն ինքեանք է փառաւորեալ և փառաւորիչ · նոյնպէս ինքնին է արարող, պահպանիչ, են ։

2 Մարգարէ հոգին ։ Վասն մերոյ փրկութեան, ըստ այնմ, ըստ բնութեան մերում, եղեալ իբրև զմեզ մարդ ։ Զի արասցես զմեզ հոգի, փառս փառաց քոց, փառս արժանեաց քոց, ըստ այնմ, իբրև զքեզ սուրբ, և որդի ոչ՝ շնորհօք ։

3 Ի թշուառութեան ։ Զքո պատկերս հեղեալ մեզք՝ վերստին ձուլես 'ի հոգեւորական քուրայս, (այսինքն 'ի կրապարանի կամ 'ի ասնի արծաթագործաց ·) [illegible], հրով փորձառութեան քո, կամ զօրութեամբ հրամանիդ ։

4 Խորհուրդ [illegible] ։ Զմարմինս՝ որ կարծեցաւ խորան հանդստեան քո, և մեզք խախտեցաւ, մաքրագործեա [illegible], այսինքն հանգերձ հոգւովս, որ է պահապան մարմնոյս ։

5 Անթիւ [illegible] ։ Յախտաւոր կրից հոգւոյ, և ոչ թէ 'ի բնական գինւոյ արբեցեալ եմ, ըստ մարգարէին եսայ (իթ · 9 · ծա · 21 ·) որ չար եա է քան զմարմնոյ արբեցութիւն ։ Այլ դու բարերար՝ [illegible], մաքրեա յինէն զչարաչար մնացուածս մեղաց իմոց, որք են իբր մրուր գինւոյ, և մահաբեր թմրութիւն ածեն 'ի վերայ · զի մի յեսոյ [illegible], զբաժակ բարկութեան և վրէժխնդրութեան խաղաս արբից, հաշտեցեալ բովանդակ 'ի հանդերձեալ ատենին · ըստ բանին երեմ · (իե · 15 · 16 ։) Հին ըծ · [illegible] իմնոյ զհանդերձեալ ատենին, և [illegible] զատակ պատուհասն · և համարի՝ թէ աղաչէ սուրբս այժմէն թափել 'ի վերայ իւր զպատուհաս անտի ատենացն ։ Բայց ոչ յարմարի այս կարգի բանիցն ։

6 Թէ [illegible] ։ Զկենդանական շունչս, կամ զհոգիս, 'ի [illegible], յեսս ասացեա ։

7 Զ[illegible] ։ Զբարգմութիւն առուրցս կամ ամաց կարծեցես ։

8 Ի [illegible] ։ Ի լսելութեանն բանից քաղցեալ թողուցուս, ըստ բանին՝ տաց ձեզ սով լսելոյ զբան տեառն (ամովս · ը · 11 ։)

9 Ա[illegible] ։ մի օրին · [illegible] ։

10 Պ[illegible] ։ 2 օրին · [illegible] ։

11 [illegible] ։ Յոյժ յարմար են համեմատութիւնք հաստուցմանցն կամ պատժոցն՝ որ մեան ինձ աստ կամ 'ի հանդերձեալն, առ նմանութիւն մեղացս · որք իբր պատկերակիցք՝ են [illegible] · այսինքն այսր համեմատութեան պատժոց ։ մի օրին · [illegible] ։ Արդ զայս կարեւոր է, սակս, խոստովանել, և բանալ [illegible], զպատարագն բանին, զի ծանիցէ ինդրողն · զոր և 'ի կարգին բացայայտէ ։

12 Ի նախնական հրանգին ։ ի պատահել առաջին փառնգին կամ փորձանաց՝ յիրաւի սատանայ կարօտութե, այնու զի սատուցեալ գոյոյ ՚ի կարիս ընկերին ։ փառաւորեալ 4 օրին . փառաւորեալ ։

13 Զսանձաձիգն խրախուսանօքն ։ մի օրին . խրախուսանօքն ։

14 Ըստ գծագրութեան ։ փոխանակ զի անկելոյն ՚ի գուբ կամ ՚ի բանտ՝ ոչ մատուցի ձեռն, պատշաճապէս ըստ նշանակութե այսր օրինակի՝ մատնիմ ՚ի գուբ դժոխոց ։

15 Ու յածանօք ։ Որովհետև անհնար է յածայլին անհնարանի զանձուցդ յատակ գալ չարի ինչ, որպէս ոչ ՚ի լուսոյ խաւար, և ոչ յամուր ապառաժէ գթել կամ զայթակղել, յայտ է թէ ես կորստեան որդիս հնարեցի. մեղք իմ զանձեցին զայրացեալ բարկութեան Տեառն. զայսքան նեղութիւ, պատճառս բարկութե այս ՚ի պատուհասել զիս . ուր զայրացեալ առեալ իբրև ածական բարկութեան, ինքն յորդորակ եղեալ է, զի նախ բարկութեն ընկերային բազմութեան խնամի ։ Իսկ առեալ ածական բառին Տեառն, սեռական եղեալ է իբրև յառակացուցիչ՝ ըստ անսովոր ոճոյ ։ տես քերակ . համար 924 ։

16 Հոգւոյ իմոյն ։ Յայլ տեղ եղեալ էր Տեառն հոգւոյ, ըստ այլ և այլ դրչագրոց ։ Սակայն ոչ միայն ըստ իմաստին չյարմարի առել՝ Տեառն հոգւոյ, ուր յիշատակեալ պատուհասքն պատշաճին և մարմնոյ, այլ առաւել եւ՝ զի այլ օրինակք ընթեռնուն՝ հոգւոյ իշխանին . և այն իսկ գոյ ՚ի դէպ բանի ժողովողին ։ « Եթէ հոգի իշխանին ելցէ ՚ի վերայ քո, մի թողուր զտեղի քո » ( Ժ . 4 ։) Ըստ ճառին զայլ միտս ունի բանդ . բայց յարմարական մեկնութեամբ առէ, հոգի իշխանին նախանձու . 2 օրին . նախանձու՝ այսինքն նենգութի կամ կատաղութիւն դիւին չարժէտւս ՚ի վերայ իմ, և ես հնազանդեալ կամաց նորա, թուլացայ, թողի նմա զսիրտ իմ՝ որ տեղի քո է . զայր իշխանն նախանձու արարի քան զքեզ . ըստ Գրոյն Իմաստու, որ խրատէ լոկն չթողուլ զտեղին, յանդիմանէ զթողլսն ։

17 Մարմնոյս անդամոց ։ Խայտառակութի մարմնական գործոյս, որք առին անդամք մարմնոյ (կողոս . Գ . 5 ։) Իսկ յիշատակեալ առակաւոր բանն բովանդակ՝ է նաւումոյ (Գ . Ե . 6 .) « Յայտնեցից զխառնուտ քո, և ցուցից ազգաց զամօթ քո » և այլն ։ Ուր հին ըն . անյարմարապէս ըստ մասին զեսայեայ բանն կարծէ (խէ . 2 . 3 .) « Բաց զպրունս քո ... յայտնեսցի ամօթ քո » . և ըստ մասին յեզեկիէլէ բերէ առել ։ Զապուատ անատնոց ձերոց յերեսս ձեր գործեցից . որ չէ յեզեկիէլ, այլ ՚ի մաղաք . Բ . 3 . առի . « Ցանեցից զապուատն ընդ երեսս ձեր՝ զապուատն տօնից ձերոց » ։

18 Թօթափեալ զմեղաց բեռն ։ Հայի ՚ի բանն եսայ . ծբ . 2 . « Թօթափեա զփոշիդ, յառն կաց և նիստ երուսաղէմ » և այլն . որ ակնարկէ ՚ի դարձեալն ՚ի գերութեն բաբելացւոց . որպէս և զինի յայտնէ ։ Սոյնպէս առեալ զզգեցեալ զզօրութիւն, է բանն եսայ . (անդ համար . 1 .) Զգեցիր զօրութեան . այսինքն կարողութե ։ Իմաստք բանիս են . որովհետև տէր խոստովանութեամբս յայտնեցի զամօթանս մեղաց իմոց, ծագես յիս զլոյս քաւութեան՝ որով ծածկեսցի խայտառակութի իմ . և մաքրեալ ՚ի մեղաց՝ հաստատեսցայց յանդամանելի յոյդ, զգեցեալ զկարողութի ըստ առաջին մաքրութե աւազանին . և զայս հայցեմ վասն մեծանալոյ փառաց քոց, զի քաղցր ես նախ առ անարժանս ։

# ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոյի առ նոյն աղերս մաղթանաց բանի .*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր տէր անոխակալ և երկայնամիտ, ներող, բարեգութ, հզօր, ողորմած. ահա ճշմարտութեամբ են գործք քո, և խոստովանեալ դատաստանք քո. վերկայեալ են ընտրութիւնք քո՝ տեսողդ ծածկութից։ Ընդ երից երջանկաց մանկանցն՝ որք կիզանողական բոցոյն փորձեցան և ոչ վնասեցան 'ի Բաբելովնի, զնոյն թախծութեան զերդն հառաչեմ, մեղայ, անօրինեցայ, յանցեայ, ապստամբեցայ, և պատուիրանաց քոց ոչ անսացի։ Այլ քանզի մաքուր գոլով 'ի վնասուց նոքա, և զայս խոստովանութիւն գոչէին, իսկ ես ընդ նոցայն՝ նոյնն աղերսիւ ձայնակցեալ սմին ողբոց երգութեան, և այլ յաւելից՝ ամենապարտս մահու։ [1] Ընդ Դանիէլի երանեալ և սուրբ մեծ մարգարէի, որ 'ի քում հարազատութեան ազգականութենէ տանն Յուդայի՝ շառաւիղ ընտրեալ, զնորայն առեալ ընդունական և նուիրական բանից պաղատանս, խմբելս պատժականութեան գոչմամբ հեծութեանս և այլ կրկնեցից։ Ի մէջ գիտութեանս՝ անպատշաճականս զնացի, զարտուղի սխալեալ դժնդակապէս. այս է ամենայնիւ ամենայն իրօք մեղանչէին։ Ըստ սահման կշռութեան կամաց քոց արտաքս վարեցի. որ է հաւաստի կերպարան բանիր անօրէնութեան։ Ընդխոյն չափոց չարութեան գործոց լրումն յանձնութեան նիւթեցի. որ է ճշգրիտ պատկեր յանցաւորութեան։ Սպառնացար, և ոչ զարհուրեցայ. արգահատեցեր, և ոչ երբէք լուայ. որ է ապըստամբութեան յայտնի նշանակ։ Քեզ արդարութիւն հանդերձեցեր, բարերար, և ինձ ամօթ և պատկառանս պատրաստեցեր. քեզ փառս վայելչականս, և ինձ նախատինս յարմարաւորս. քեզ քաղցրութեան յիշատակ, և ինձ [2] մաղձ քացախեալ 'ի կատարածի. քեզ

բարերարութիւն անլուելի, և ինձ ձայնս ողբոց աղաղա-
կի. քեզ օրհնութիւնս երգոց խնկելի, և ինձ մերժումն
տարագրութեան [3] անյուսալի. քեզ իրաւունս բազմար-
ժանիս, և ինձ պատասխանատուութիւնս ամենախա-
րանս. քեզ բարձրութիւնս անճառ գովեստից, և ինձ
զանձին լինելոյ [4] պատիժ ձաղանաց:

Բ. Այլ արդ [5] ընկալար դու բարեաց ընտրութեանց
անկշիռ սահման՝ զքոյոցդ ախորժականաց կնքելոց պար-
գաց վերաբերեալ ըստ քեզ, և ես զխոյս սատէն առ ամէն
պարտուանս յոգունս կրկնակի բարդեալ ինձ ըստ իս:
Նաև եթէ անպարտիցն մաղթանաց այս էր յանձնառու-
թիւն, իսկ ինձ զո՞րս հիւսեցից չարս և տողս բանից դըր-
բուխականաց, որ քան զամենայն զժնեայս յուէտ վրի-
պեցայ: Մոլորեցայ [6] անսառակ ընթացիւք 'ի միտս վայ-
րենիս. յանդգնեցայ շրթամբք խօսից 'ի բանս երկրա-
ւորս. ճակատեցայ անկասելի 'ի պատկառելեայն գոր-
ծոց: Փքացայ, վերացայ, որ յետ սակաւ մի ժամանա-
կի 'ի հող մահու եմ իջանելոց. գոռոզացայ, բարձրա-
ցայ, որ [7] և ոչ զգրաւական հոգւոյս տուրևառութեան
շնչոյս ունիմ 'ի ձեռին: Ամբարտաւանեցայ փոշիս շնչա-
ւոր, ամպարհաւաճեցայ կաւս ձայնաւոր, հպարտացայ
հողս անարգութեան, 'ի վեր ամբարձայ մոխիրս մեր-
ժելի, [8] բազուկ կառուցի բաժակս մանրելի: Տարածե-
ցայ առաւել իբր վեհ, և դարձեալ իբր զհերքեալ առ
իս ինքն ամփոփեցայ: Բարկութեանն բոցով ցոլացայ
տեղւոյ բանաւոր. իբր զանմեռ ոք մեծամտեցի, որ ընդ
քառատանեաց մահու եմ փակեալ: Կիրկս արկի կեն-
ցաղոյս սիրոյ, և 'ի քեզ թիկունս փոխանակ գլխոյ
դարձուցի. 'ի Թողիչս մնաց ընդ խաւար խորհրդոց սլա-
ցայ. զանարատ հոգիս մարմնոյս փափկութեամբ յաւէտ
վատեցի. զզօրութիւն աջական կողմանս ակար արարի, [9]
աշխարհայս կայից ուժգնութիւն տալով յաղթեցի:
Զքեզ իսկ [10] տեսի հոգացեալ վասն իմ, զոր չէ աստ
գրել, և ոչ պատկառեցի. իբրև զհաւ վայրենի սրա-
ցայ, ըստ ոխեցեան բանին առ Եփրեմ, 'ի նախնին իմ
սովորութիւն: [11] Յաղօթարանն վայրի ընդ պատաղ-
մանս այսր կենցաղոյս շրջմնակեցայ. ոչ կացուցի յո-
տին [12] զերխվար մտացս երասանաւ բանին: [13] Ընդ հին
չարութեանցն նորոց ինքնաստեղծութիւնս գտի. ա-

նուէրս ըստ Յոբայ ծանունս և անտանելիս ինձէն ինձ սաստկացուցի ։ [14] առիգած անկարկատելի, ըստ Երեմիայի, զանձն իմ արարի ։ [15] իբր զվիժած անզգելի կոչմամբ, ըստ առակարկուին, 'ի մարդկանէ համարոց եղծայ ։ իբր զհանդերձս ինչ [16] ապարահից, ըստ Եսայեան բանին, զաղբացայ ։ որպէս զթրծեալ ամանս խեցեղէն փշրեցայ անարծարծելի ։ ըստ բանբասանացն Եզեկիայ 'ի մարգարէէն զչորրորդ չափն անօրէնութեան սատակման ինձ պատրաստեցի ։ [17] Եւ զի՞նչ ստութիւն առ այս՝ և զայս յաւելուլ ընդ այս ։ քանզի զկրանն իսկ զխանուէր Մողոքայ առի ինձ այսրէն՝ առ գժոխոցն ժառանգութիւն, ըբեալ զերկնայինն յեղանակաւ իմն օրինակի [18] նմանակիր ձևակերպութեան, որպէս առակ պատկերի աստեղն Ռեփանայ բաբելականի՝ յԻսրայէլէ պաշտեցեալ ցուցաւ 'ի Սինայ ։

Գ. Իսկ արդ զի 'ի նախնի չորհին համարձակութէ դարձեալ փոխեցայ, զրկեցայ, ելայ, հեռացայ, բաժանեցայ և անպատուասաելի կորեցայ, [19] արդ ընկալ զիս տէր վերստին կերպարանեալ 'ի պատկեր հոգւոյ, զանարժանս կենաց իբր զմահապարտ, իբր զչարագործ, իբր զպատկառեալ, իբր զկորեան եղեալ բանսարկուին, որպէս զանբժշկելի [20] մերժեցեալ, որպէս զհանեալ յառակս մահու, որպէս զգարշեցեալ, որպէս զխոտան գըտեալ քո կոչմանդ, որպէս միանգամայն 'ի կորուստ վարեալ, որպէս դեգերեալ, որպէս վանեցեալ, որպէս տարակուսեալ, որպէս թշուառացեալ, որպէս վհատեալ, որպէս կործանեալ, որպէս խորտակեալ, որպէս բեկեալ, որպէս զթախծեալ, որպէս յոգի տրտմեցեալ, որպէս թշնամանեալ ։ Իսկ դարձեալ ակնարկելով քո՝ զթած, մարդասէր, հզօր, 'ի յաղերս բանիս՝ որպէս զղջացեալ, որպէս խոստովանեալ, որպէս 'ի յոյս քո դիմեցեալ, որպէս զապաշխարեալ ։ Որ կշռես, գրես և մեծ համարիս զհառաչ հոգւոյ և զաղդումն չնչոյ հեծութեան, զկսկիծ շրթանց, զպարքել լեզուի և զտխրականութիւն երեսաց, զկամս խորհրդոց և զյօժարութիւն խորութեան սրտից ։ Որ փրկութիւնդ ես անձանց, և տեսող ոչ գործեցելոց, և ստեղծիչ բոլորից, և բժիշկ վիրաց աներևութից, պաշտպան յուսացելոց, և բարեխնամող տէր ամենեցուն ։ Եւ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս ։ ամէն ։

1 Ընդ դատիկեսն: Ի վերայ աղօթիցն դանիէլի. որ 'ի դլ. Թ. 4. 5. յարմարէ զյաջորդ բանսն: Խնդրե դատաստանաւորեան. խմով հեծողական գոյնմամբ պատժապարտութեան՝ յաւելեալ 'ի բանս դանիէլի: Ի մեզ ամ-օթերեսան. զխոստովանութիւն օրինաց քոց՝ անհնարդաբար վարեցայ, և խոստ-ովանեցայ չարաչար. որ է ամենայն իրօք մեղանչեցի. այսինքն զխոստովանութեամբ և չարութեամբ: Ըստ առաջին. արտաքոյ ուղղութեան կամաց քոց եղև, որ է խակութիւն կամ բուռն հանդամանք իմոյ անօրէնութեան. այսինքն զորովելի անօրէնութեան: Անգիտութեամբ. անգիտակցի չարից կամ բազմութեան չար գործոցս՝ զկատարումն յանձնախութեան գործեցի, որ է բուռն նշանակ յանցաւորութեան, կամ անխրատութեան: Աղաչանօք. և ոչ երկեայ. աղաչեցեր, և ոչ լուայ. որ է ապաշխարութեան նշանակ: Յայս չորեսին հաստատեալ ընդարձակէ զչորեսին խօսս դանիէլի և երից մանկանց. այսինքն մեղաք անօրինեցաք, անիրաւեցաք, ապստամբեցաք: Արդ եթէ նոքա անմեղք և բարեգործք այսպէս խոստովանութիւն յանձն առնուին զմեղուցելոց, պիտոյ է, ասէ, առաւել ես քան զնոցայն ամբաստան լինել զիմոց մեղաց:

2 Մեղայ երկնից: Որպէս յետ աւելորդութեան՝ քաղցրախառն ստամոքին, և մաղձն դառնանայ, այսպէս ինձ դառնութիւն սրտի և խղճի մտաց լինի 'ի յերկնից. յետ կատարման մեղացն, կամ 'ի մահուանս:

3 Անցաւորի. չէք 'ի 4 օրինակ: Հեղ իմաստ: Ըստ անձնառ երախտեաց քոց առացար քեզ իրաւունս 'ի վերայ իմ յայժ արդարացիս, խոս ինձ ապերախտիս մնայ պատասխանի լի տարակուսանօք. ևս կարեցեալ 'ի չքմեղս լինել. թէ ջատագովել կամիցիմ, անդէն պապանձիմ:

4 Պատիժ յաւիտ: Ինձ արժանի է պատիժ իայտնակութեն, այս է՝ պատիժ զմխիթր լեզելոյ:

5 Ընդուներ զոր: Ի փոխարէն բարերարութեանցն որ առիս, ընկալար զու զանիշխելի առաջին, կամ չափ իմոյ ընդհան., այսինքն զանազան զալեկի անուանց՝ զորս յիշատակեցի, այս է՝ արդարութեան, փառաց, քաղցրութեան, օրհնութեան, իրաւանց, զովեստից, և այլն. որք են իբր կնդրուկ խնկելի, և պատուղ ընդունելի յարարածոց՝ ըստ հեղ, որպէս վայել է քեզ 'ի հատուցումն պարգևաց քոց: Իսկ ես ընդ հակառակն 'ի հատուցումն մեղաց իմոց ընկալայ առանձին բազմապատիկ պարտաւորս, ըստ իս, որպէս վայել է ինձ: Մարթ է ևս զբառսն անիշխանելի մեկնել իբր կոչական. այսինքն ընկալար զու ով անիշխելի առաջին բարի և ընտրական կատարելութեանց՝ զհատուցումն անարժելի պատըց գովութեան:

6 Անխոստ ընդդիմ: Անամօթ կամ անկարգ ընթացիւք մոլորեցայ 'ի մեծ չարութիւ. 'ի խորհուրդս ստորս, կամ ապստամբողականս: Յանդըդնեցայ ընդդիմ իմոյ, փոխանակ առնելոյ՝ խօսիւք շրթանց: Ընդդէմ սրբոյն, մոլեգնեցայ, խոտորեցայ առանց կասելոյ կամ դադարելոյ 'ի պատկառելի գործոց: Յայսոսիկ բանս կարգաւ խոստովանի ըզմեղս խորհրդոյ, բանի և գործոյ:

7 Եւ ոչ ըմբոստ: Զանձին յիմար իշխանութեն և ոչ զամբութեն կամ զպահպանութեն հոգւոյս, որ է տերևաւոր թեան ինչոյ: մի օրինադրէ, և ոչ ըմբոստութեան ընդդէմ դատաւորութեան: այլ օրինի. և ոչ ըմբոստութեան հոգւոյս դատաւորութեան ընդդէմ: այլ օրինի. և ոչ ըմբոստութեան ընդդէմ դատաւորութեան:

8 Բաժանեալ իմաստ: Զբազուկս ընդդէմ քեզ վերացուցի՝ մանրելի բաժակս. որ զխաբարէկ անօթս եմ իբր խեցեղէն կամ ապակի: Թուի ակնարկել յառաջեալն վասն բարեկինի, բաժակ ունի 'ի ձեռին ոսկեան. բայց զի ընդդէմ դարձաւ նոյ, փշրեցաւ խապառ (երեմ. ծա. 7. Ճ. 24.

29 :) Կամ, ըսկըսայն օրինակ առնու զարբեալ ոք, որ 'ի զայրացման ունելով 'ի ձեռին զբաժակն, նովաւ հանդերձ ձգէ զբազուկ ընդդէմ այլոց, և անգէն մանրի բաժակն:

9 Անէֆանդո ֆայէց: Ձախոյ կողմանս, այսինքն յօժարութե մարմնոյս և սատանայի ուժգնութե տալով, շողբէշէ· յաղթահարեցի, կամ նուաճեցի զաջակողմն բարեաց· կամ, յաղթ արարի, այսինքն մեծացուցի և յաղթող արարի զձախակողմնս 'ի վերայ աջակողմանս:

10 Տէտ հօֆարսէռ: Այսու կամ զանսիրն ասէ, որ ասանդի, թէ ետես զյս մանուկ 'ի գիրկս ածամօրն, զոր և աստ չէ արժան գրել, ասէ, վասն ամօթոյն կամ խոնարհութեն: Եւ կամ զհօգայն քնի 'ի պարտիզին ասէ· այսք հաւատոյ տեսի զքեզ հօգացեալ և որամեալ վասն մեղաց իմոց· [illegible] · այսինքն զոր զանց առնեմ աստ գրել, այլում բանի թողեալ· կամ զոր առաջնեմ յիշել աստ:

11 Յադէբարանն Հայրէ: Ի տեղւոջ աղօթելոյ կամ աղօթից յաչխարհական զբաղմունս պատուանեցայ:

12 Զէրէֆեր Նորօ: Զմիտս իմ որ անկեալ էր 'ի Ճանապարհ կամ 'ի տիղմ մեղաց, ոչ 'ի վեր կանգնեցի [illegible], հրամանաւ և իշխանութեամբ կամօքս, կամ մտածութեամբ բանիցն ոյ:

13 [illegible]: Ի վերայ նախկին տխուրս ապականեալ բնութեանս, կամ 'ի վերայ չարութեանց առաջին մեղաւորացն՝ ես նորանոր չարիս յինէն առեղծի:

14 Ադէֆարծ: Սփածանելի, կամ կոստ առ 'ի զցածիլ մարմնոյ· որպէս ասեմն՝ զոր կամայք արկանեն զանձամբ:

15 [illegible]: Իբրև զանցուցեալ տղայն, [illegible], որոյ անունն ոչ գրի, կամ ջնջեալ 'ի համարոյ մարդկան· (ըստ Ժողովողին· Զ· 3· 4:)

16 Ադորանէց: Այսպէս գնի ոչ միայն յօրինակս, այլ և 'ի բանն եսայ (կդ· 6·) ըստ ձեռագրաց· նաև 'ի մեկնութենն գէորգայ վարդապետի, և յայլ բազում գիրս գտանեմք գրեալ [illegible], իբր առաւել ընտրելի· թէպէտ և գոյ ես գրեալ [illegible]: Նշանակէ գաշտան· (ամսականը բանած կին:) [illegible]: Նման յանգիմանութե մարգարէին ամովսայ (ա· 3·) արարեալ առ եգովմայեցիս, որպէս և առ այլս հեթանոսաց՝ լցի և ես զչորրորդ չափ մեղաց իմոց, որում զհետ գայ վրէժխնդրութիւնն այ:

17 [illegible]: Չէք, ասէ, տաւթե ինչ, եթէ 'ի վերոգրեալդ յաւելից և զայս, իբր զի [illegible]: որպէս խարայէլացիք փոխանակ այ առին զկռանն մողոքայ· (ըստ ամովսայ· Ե· 25·) յորում լինէին նուիրմունք գիւաց, այսպէս և ես առի զախտս մարմնոյ՝ և զսէր արարածոց· [illegible], որով զգժոխս շահեցայ, թողեալ զերկնային ժառանգութիւնն· որպէս և խարայէլացիք վասն կապաշտութեանն՝ փոխանակ երկրին աւետեաց՝ զանապատն ժառանգեցին տեղի ոսկերաց իւրեանց: Եւ այս եղև յար և նման այնմ, [illegible], որպէս օրինակն պատկերի առեղն տառուծոյ հանմիայ պատուեցաւ յիսրայէլացւոց 'ի սինա՝ 'ի սրբազան տեղւոջ ածգխութե, այսպէս և ես՝ զախտս մարմնոյ՝ զկամս սատանայի պաշտեցի յեկեղեցւոջ, 'ի կրօնաւորութեն, և այլն: Ըստ հաւանականագոյն կարծեաց մեկնչաց՝ [illegible], զոր այսու անուամբ պաշտէին ամմոնացիք, էր սերապիս եգիպտացւոց, զորոյ արձանն կաղմէին 'ի ձև որթու կամ ցլու, և 'ի Ճակատ նորա պատկեր արեգական, և 'ի կողմանս նորա լուսին պակասեալ: Իսկ [illegible]՝ ըստ ոմանց է նոյն իսկ սերապիս եգիպտացւոց· ըստ այլոց՝ է արուսեակն, զոր 'ի ձև աստեղ

պաշտելին եղիցուցիք, փոխնիկեցիք և սարկաւագեայք։ Եւ սուրբ վարդապետս փոխանակ ասելոյ [illegible]՝ գնէ [illegible]. զի այսպէս գնեն լաւ օրինակք եօթանասնից 'ի բանն ամովսայ։ Արդ ասէ թէ զաստղն ակիանաց պատուեցին խորոյեալցիք 'ի սնեա. զոր եթէ նոյն համարեցինք ընդ մոլոքայ կամ սերապեայ, յայնժամ խմանի որթն՝ զոր արարին նոքա յանապատն սնեալ (եկեց. լբ. 4։) Իսկ եթէ այլ համարեցինք 'ի սերապեայ, ասկաւին Տէմարան՝ թէ 'ի սնեալ պատուեցին խորոյեալցիք. զի յեգիպտոս ուսեալ էին. և յեւանկէն անուն՝ զպատկերն ունէին ընդ իւրեանս 'ի ծածուկ. վասն որոյ յորժամ հանդիսիւ կանգնեցաւ պաշտօն որթուն, համարձակեցաւ և զայլ կարգ պաշտամունս յայանել կամաւոր ժողովուրդն։ Այսպէս գնեն համատասի մեկնիչք. որպէս և նշանակի այս յեզեկիէլի (Ի. 7. 8.) և զրանն ամովսայ (Գ. 26.) այլ և զորոյն ստեփաննոսի (գործոց. Է. 43.) խնմնան 'ի վերայ կաապաշտութեն՝ զոր արարին խորոյեալցիք յանապատին։ Իսկ զի ասէ [illegible], ոչ եթէ 'ի բարելուցուց ասին զպաշտօն ակիանաց, այլ զի և բարելոցիք պաշտէին զայն։

18 [illegible]։ 4 օրին. [illegible]։ այլ և հեաեւեալն այսպէս գնի, [illegible] 'ի [illegible]։

19 [illegible]. վերստին նորոգելով 'ի [illegible], 'ի հաղորդութեն հոգւոյդ սրբոյ, կամ 'ի կերպարանս բանականի. զի մարմնոյս ծառայելով 'ի մարմնին գործոյ իբր անբան։ Ընկալ զիս առաւ զանապաժանս կենաց՝ [illegible]. և այլն. հայելով 'ի չար գործս իմ։ [illegible]. բայց նայելով [illegible], ընկալ զիս [illegible]. և այլն։

20 [illegible]։ 3 օրին. [illegible]։

## ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հետութեան նորին հակոյն առ նոյն ալեքս մաղթանաց բանի.*

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ու քանզի ես լինելն անձամբ խնդրեալ ՝ ինքնագլուխ 'ի մահ՝ ոչ կայի երբեք 'ի յատս մարդոյ, և ոչ սիրտ բանականի առացայ, ըստ գրոյն, և քանզի ոչ փոփոխեցայ 'ի նախակարգելոյդ, և ոչ ընդ բարւոք ուղին ընթացայ, ընդէր ոչ զխոստովանական հետոյն խաւարանաց զդեւմ ցուցից 'ի սահման կարգի այսր ընթերցուածոյ։ Ո՞ա որս ածեալ յարմարեալ առ սոյն գկերպարան սեռակի բանից երեսաց, ըստ վերադրից նշանակելոց անփոփոխելի պահելով, խոստովանեցայց վերստին

դարձեալ աստանօր զմնացեալ չարութեանցն զբիծս, զոր յաջորդաւդ է իմանալի ։

Բ. Օտար ժամանագործս արժանապատիժս՝ աճեցուն սորա [2] գնացիք անաստութեան զգունդն Բելիարայ ։ Կաքաւս կայթից և ցոյցս վազից խաղալկացն գիւաց գարշելեաց Ճարտար խաբողաց ծուլութեամբս իմով շնորհեցի ։ Գանս գաղտնիս և խոցուածս անյայտս ՚ի կործանեցելոցն դաՀՃաց ընկալայ ։ Եւ Հեղգեցի ըղձանեալսն խաչին Քրի, քան թէ անդրէն առաւել կրկին խոկ զօրացուցի ։ Այսն ինձ Հեշտս անօրէնութեան անուանդ Ցոփ Հայհոյի [3] ՚ի մէջ պոռնկանաց, որպէս վասն Իսրայէլի ՚ի մէջ Հեթանոսաց ։ Հարուածս Հարուածոց փոխանակարս ապականութեանց [4] ժանգոյ և Թրթրոյ և այլոց կերչաց վասնողաց զծաղիկ Հոգւոյս, ըստ որքոյն Յովէլեայ Հրաշական ողբոցն, որ ՚ի ցոյց երկրի վասն Իսրայէլի՝ յառակս Հինից և չարաց Հոգւոց, յիս լինքն անկեցի. առեղծանել զնոսա պատրաստեցայ, քան թէ սատակել ։ Եւ իբրս կուռեալ Հաւաքեցի անձին իմում մարտիկս մոՀաղէնս. կշտամբիչս ինձ գոյացուցի անխրատս և անպատկառելիս. ներՀակս ինձ զօրացուցի ապառումն և անկռուելիս. [5] զառինս ինձ առի մասունս ընդ քաղցրաւենեացն ՃաՀակաց, ստացողն միշտ նենգաւորս, և առ բանսարկուն յաւէտ Հաւատարիմ ։ Եղեալ աղէտս, [6] վիշտ վտանգիս, խաւար անօթոյս, մութ պատկառանաց. [7] զխրդ և առ բանիս յանդիմանութե Համարձակեցայց. մեծ է ձայնս գուժի, և անբերելի բողոքս աղաղակի ։ Քանզի թէ պՀոզիս էր զիմ տեսանել, [8] տգեղս և նուաղս և ամենեւին ներգեւեալս, ցաւոք Հեծութեանս ՚ի վերջինս վարեալ վարանումն, և մրՃոտեալ աղտեղեալ գունով զազրութեան իբր զպաշտօնատար մեՀենի. վասն զի նոյն է սորա նմանել ձուլեալ պատկերի, և մեղաց ախտի ։ Որդ ես գնացի ընդ այս ՃանապարՀ կորստեան Հետոց խաւարի. ետու [9] զբաժինն քո ցանկալի յանապատ անկոխ, ըստ մարգարէին որ առ քաՀանայսն Իսրայէլի ամբաստանութեան ։

Գ. Եւ զխրդ ասացից անձին իմում մարդ՝ գրեալս ընդ անմարդիս. և իբր անուանեցայց բանական՝ անբանիցն յիմարութեան կցորդեալ. և որպէս կոչեցայց տե-

սանդղական՝ մթացուցեալ զլոյս որ յիս. և ընդէր համ բաւեցայց զգայական՝ զխմատիցս դրունս փակեալ. կամ որմովք ցուցայց [10] տղայութիւն նկարագրութեան անեղծին շնորհի՝ անձամբ ինձէն յօգի մահացեալ. նա և ոչ շարժողական և կամ շնչական ունիմ անուանել, թող թէ հոգեկան կամ [11] մտաց ընդունական. անպիտանս 'ի թիւս անօթոց, անարգս 'ի քարինս որմոց, արհամարհեալս 'ի կարգս կոչեցելոց, վատթարս 'ի յազգս հրաւիրելոց, արհաւրօք մահու պակուցեալս, [12] անխրախուսելի 'ի բոլորեցունց՝ ցաւովք և տանջանօքն Երուսաղէմի ըստ Երեմիայի բանին խրատեցեալ, պակասեալ աչուրցս 'ի հեծութենէ, և ընթացք ամացս 'ի հառաչմանէ, ըստ Նուագարանաց երգողին։ Իբր աստի 'ի ցեցոյ և փայտ 'ի յորդանէ, ըստ իմաստնոյն բանի, 'ի խիթմանէ սրտիս հալեցայ, իբր զոստայն սարդից մաշեցայ, ըստ սաղմոսողին, և խոտան գտայ. իբր զամպ առաւօտեայ և զցօղ վաղորդայնի, ըստ մարգարէութեան ձայնի, սպառեցայ։ Այլ ոչ 'ի մարդ որք ունիմ զյոյս, եթէ [13] անխծեալ 'ի տեսանողէն անյուսադրելի վհատիմ, այլ 'ի քեզ՝ տէր իմ ոգեսէր, որ ընկղմեալ 'ի քոյդ գթութեանց բարեաց անբաւից, և 'ի բևեռելոյն ժամու 'ի խաչին [14] մաղթեցեր մեծդ ողորմութեան առ հայր քո բարձրեալ՝ քո չարչարողացն։ Որդ շնորհեա ինձ յոյս քաւութեան, կեանք և ապաւէն, [15] և 'ի տուր շնչոյս թշուառի՝ առից զօգնդ քո բարի։ Ըւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով՝ զօրութիւն, յաղթութիւն, մեծութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

---

1 Խոնարհագոյն 'ի հող։ Նա ինքնին կամաւ գրաւեալ կամ մատնեալ 'ի մահ մեղաց և գժոխոց, ոչ կայի յոտս հաստատ։ Զանխել գազանին՝ որ ցուցաւ դանիէլի (է. 4.) յինքն յարմարէ. ոչ կայի, ասէ, ուղղորդ, գլուխ 'ի վեր, և ոտք 'ի վայր, որպէս է ձեւն մարդոյ. այլ անասնաբար բովանդակ յերկիր խոնարհեցայ. և ոչ սիրտ բանականի ստացայ, բանիւ վարեալ 'ի գործս իմ։

2 Գնդակ անկարգաւորեալ։ Գործովք անհնազանդութեան և ստահակութեան ամենեցուցի զզունդն սատանայի, ըստ որում և ես յաւելայ 'ի թիւ նոցա, և չար օրինակաւ զայլս բազումս գթեցուցի։

3 Ի մէջ այսոց։ Վասն իմոյ անօրէնութեան, հիւրոյ՝ յետին անպիտանիս՝ սքանչելի անուն փրկչին իմոյ հայհոյի 'ի մէջ այսոց կամ դիւաց։ Զբառդ այսոց իբր գոյական 'ի կիր առնու Նարեկ 'ի բանն Գ.Ա. 1։

4 Վանկոյ և Բյբյոյ։ Զակտաքէս պատահարս, ...

[illegible], վնասիչս յապականել, գործողս ապականութեն, խանգարիչս· [illegible], (որ է ոջիլ բուսոց·) և այլոց ապականիչ ճճեաց, զորս Յովէլ յիշատակէ (ա· 4·) վասն երկրին խորտակելի, յօրինակ հինից և այլոց թշնամեաց ապականչաց երկրի նորա, եւ զնոյնս յանձն իմ կրելոյ զանազան մեղաց:

5 [illegible]· Այն, ճաշակելի զառն իւր խորհրդոց և գործոց. [illegible], փոխանակ քաղցր ճաշակաց ածպաշտութեն, կամ առաքինութեն: Կամ, 'ի միասին ընդ ածային քաղցր պարգևաց՝ խառնելի զդառն կիրս, զչար [illegible], զախտաւոր շարժմունս: Այսու ամենայնիւ, [illegible], առ արարիչ և փրկիչ և պահպանիչ՝ միշտ եղէ նենգաւոր, անհաւատարիմ, իսկ առ անհաշտ թշնամին սատանայ՝ միշտ հաւատարիմ: Որչափ ողբալի է այս վիճակ, որչափ ամօթալի· և զարմանամ իսկ՝ զիարդ համարձակիմ եւ ինքնին յանդիմանել զայս:

6 [illegible]: Այսպիսի են եղանակք աւաղական միջարկութեն, փոխանակ ասելոյ, վայ վշտացս վասնզի, վայ խաւարի ամօթոյս, և այլն: Կամ երբ բացագանչական ցուցանէ զսաստկութի վշտին, խաւարին, և այլն, երբ ասել· Ողորմելի վիշտ, ողորմելի խաւար, և այլն:

7 [illegible]: Ո՞րպէս համարձակիցիմ 'ի յայտնել կամ 'ի հրապարակել զողորմելի բանս իմ· կամ, զիա՞րդ իշխիցեմ երևել այլոց, յորժամ բանքս իմ յայտնեսցին, և ամենեքին ծանիցեն զամօթալի սահման անձին իմոյ: Սաստիկ է բօթալից ձայնս, և անտանելի մեծաբարբառ բողոքումս զանձնէ իմմէ:

8 [illegible]: Ահաւոր զօրութբ կրկնելի է բայն [illegible]· երբ ասել· Քանզի եթէ հնար էր տեսանել զհոգիս իմ, [illegible] զայն ոգեղ և նուաղեալ· և ամենևին [illegible], տկարացեալ, թուլացեալ· և 'ի ցաւոց հեծութեն խղճի մտացն 'ի [illegible], 'ի յետին տարակուսանս անկեալ:

9 [illegible]: Բաժին այ տիրապէս՝ հոգի մարդոյն է· զի մարմին և այլ մարմնական արարածք՝ երկրի են և յերկիր դնան, իսկ հոգին առ ած դառնայ: Զայս բաժին քո, ասէ, [illegible], արարի որպէս անապատ, զուրկ 'ի պիտանի բարեաց, և ախտից գազանաց եղեալ կոխան և բնակութի, որպէս յանդիմանէր երեմիաս ժբ· 10:

10 [illegible]: Ո՞րպէս երևեցայց պատկեր կամ նմանութի [illegible], անմահին այ ըստ շնորհաց արարչութեան, կամ ըստ սրբարար շնորհաց, որ անձամբ սպանի զհոգի իմ մեղօք: Զբան պատկերին առ ած՝ ըստ անմահութենն եւ առնուն վարդապետք, 'ի բանէ անտի (իմաստ· բ· 23·) « Աստուած հաստատեաց զմարդ յանեղծութե, և 'ի պատկեր իւրոյ բարերարութենն արար զնա »: Ուստի ասէ, ո՞րպէս մնամ եւ պատկեր այ, որ անձամբ զանձն մահացուցի:

11 [illegible]: Է մասն սահմանի մարդոյն՝ ըստ աւանդելոց նախնեաց, ոլք սահմանէին զմարդ, կենդանի բանաւոր, մտաց և հանճարոյ ընդունական· այսինքն ունող կամ ընդունող մտաւորութեանց իմաստից: Մեղօք իմովք կորուսի, ասէ, որ ինչ է յիս բանական կամ զգայական· անբանից յիմարութեան նմանեցայ, տեսանելիքս խաւարեալ, զգայութիւնք իմ ապշեալ· և ոչ շարժողական կամ շնչական կոչելոյ արժանի եմ· զի առ բարին անշարժ եմ, և շունչ իմ յանզգայութիւն փոխեալ:

12 [illegible] 'ի [illegible]: Այսպէս ընթեռնուլ ըստ լաւ օրինակաց ուղիղ եւ է, քան թէ 'ի [illegible]: Անմխիթարելի եմ, ասէ, յամենայնէ՝ նման ցաւոց և տանջանացն երուսաղէմի· զորմէ ողբայ երեմիաս, ո՞ մխիթարեսցէ զքեզ, և այլն:

13 Աչօքն 'ի փառաւորէն ։ Զայս իմ, աստ. ոչ եմ եղեալ 'ի մարդ-կէ, որով արժանի անիծից լինելով ըստ երեմիայի (ժէ. 5.) յուսա-հատութիւն լցանիցիմ ։ Այլ յուսացեալ եմ 'ի տէրդ իմ ողեւէր, որ ընկղմեալ 'ի ծով գթութեան, որ 'ի զեղմանէ անբաւ գթութեանց քոց որ-պէս թէ ընկղմեալ, բոլորովին ըմբռնեալ, և անտես արարեալ զյոր-դութիւ ցաւոց խաչին, անդէն մինչ բեւեռեալն կայիր՝ վասն չարչար-ղացդ աղօթէիր ։ Ո՜վ անսահման գթութեանն ։

14 Մաղթեսցես ինձ ողորմութեան ։ Մաղթեցեր զմեծ ողորմութիւն 'ի հօրէ վասն քոց չարչարողացն ։ Կամ, մաղթեցեր զու՝ որ մեծդ ես ո-ղորմութիւ, կամ յողորմութե. ըստ առաքելոյն (Եփես. Բ. 4։)

15 Եւ 'ի բանս բերանոյ ։ Յաւանդեալն զթշուառ հոգիս իմ, առից զհոգի քո բարի ։ Կամ, հայի 'ի բան սաղմ. ՃԺԸ. 131. «Զբերան իմ բացի և առի զհոգի»։ Յորժամ խոստովանութիւ բանամ զբերան իմ, ընկա-լայց զհոգի շնորհացդ ։ Վասն այսորիկ Դարձեալ այլաբանեցից. (ԻԲ) գլուխ գիմանութե անձինս նկարագրեցից պէսպէս նմանութիւք. զի այս լիցի խոստովանութեան գաղտնի չար գործոյս ։

## ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Դարձեալ այլաբանեցից 'ի նոյն չարաչար բար-դեալ զկշտամբանաց եղանակ զարուեալ անձինս, ա-ծեալ մատուցեալ կրկին կացուցեալ նովին պատկերաւ 'ի նոյն պայմանի. թերևս գրեսցէ ինձ ամենագէտն զայս յանդիմանութեան դատակնիք կնքեցուցանողա-կանս բանի ճշմարիտ խոստովանութիւն համայնից գոր-ծոց գաղտնութեանց չարեաց ։

Բ. Այլ անձն [1] ձիս խօսնական կարծրերախ սանձա-կոտոր արձակերասան, յովանակս անհամբոյր վայրենա-կան և անկրթական, [2] երինջս ատողական անուղղական և անվարժական ։ Մարդս մոլեգնական տարագրական և կորստական, մանուկս մեղանչական անխրատական և վարատական, տունկս մահապարտական տարտամական և անգործական, [3] բանականս անասնական գազանական և անմաքրական ։ Ձիթենիս ամլական անպտղական և կործանական, [4] մարմինս հոգւոյս իմ թախծողական դատողական և տանջողական, խոցեալս անբժշկական

անխառնական և անկանգնական ։ Ոսկի շուրս կայսերական՝ [5] արդիւնատնական և անգատական, ծառայս սխալական փախստական և թշուառական ։

Գ. Ահա ես նոյն նմին կամաւորապէս [6] անձնամատն և մարմնակործան, հոգեկորոյս և միշտ մտախոսք, կամակոր խիկ և սրտաբեկ, ուշամոռաց և հանձարագլուխ, զգայազիրկ և իմաստապատ, յայրատատես և եզեռնալոր ։ Նս աստուստ և անդուստ բնաւխք բոլբոքմանք մահաբեր երկամբք չնասեալ, ոչ միով իւիք տեսութեամբ 'ի գործ ընտրութեան քեզ պիտանացուս, տերդ բոլորից • ողբամ զորովայնն, որ երկնեաց զիս • աշխարեմ զստինսն, որ դիեցուցին • ընդէր ոչ մաղձ մակարդեալ ընդ կաթինն ձգեցի, և զիարդ ոչ դառնութիւն ինձ ընդ քաղցրութեան ջամբեալ մատուցաւ ։ Զի եթէ ես ինձէն անձին խոսիմ դժնեայ դատախազ համբարձայ այպանեօք բանիւք, և ունիմ տակաւին զսուր բարկութեանս անխափանորհելի, [7] ով որ 'ի յերկրածնաց ասոփ զիս ողբեսցէ • զամենայն խայտառակեցից, զբնաւ Լութինս դատեալ տուժեցից, զհամօրէն զնաստակարացն զգունդ գանեցից, զխոցոտացն զխնուորութեանց դատախազեցից, զգայականացն զլխաւորութիւնս կշտամբեցից ։ Մեղայ ամենայնիւ յամենայնի, ողորմեա գթած • ոչ նոր ինչ գտեր յիս զյանցանացս պարտեաց մնաւախուղ, այլ նոյն եմ յաւէտ [8] նովին պատահմամբ պարտաւորութե, անկցելի ձորձով սխալեալ առաջի քո՝ անփոփոխելի, և դու միայն իսկապէս գթած օրհնեալ մարդասէր, ընդ աջմէ իմյս փրկութեան կանխեալ ներութեամբ անսայլայլելի ։

Դ. Որդ մասո, խնամակալ, հզօր, երկնաւոր, բարի, ամենից հաստիչ յոչէից, զբանից զօրութեան [9] իմատից կայծակն 'ի գործի ապգման լեզուխ շարժութեան, առիթ մաքրութեան յամենուստ զգայականաց դդաւորութեանց յիս մանաւորելոց՝ քո ձեռակերտից, սոքօք առ 'ի քէն եղելովք և բժշկելովք կրկին հանդերձանօք, անպակաս ձայնիւ, անհատ բարբառով, քեզ վերընծայել գոհաբանութիւն 'ի փառս մեծութեան հօրդ քոյ ընդ մերոյ, յաւիտեանս • ամէն ։

1 Զի՛ խռովեցան։ Նմանեցեալ 'ի բանէն խռովեալ. սեռ. խռովել. որպէս և 'ի բանէն յուզեալ, կամի յուզմանց։ խօսումն է, բաղձական բնութեամբ, այլ բարուք խռովութեամբ, ուրեք զխարծր բերան, այսինքն ըղձաւորութեան։ Յանդգնեալց ոճնանկելով զպատրաստութեան անձինն, առել կամի. ասէ 'ի մարդկայինն 'ի գովելի կարգաց սատարացն. բայց և ոչ զանդգնեալց զխառնակութիւնն զանէ ցուցանեմ, այլ զթերութիւնս նոցա կրեմ։

2 Նշմարեալ . այսինքն հեծող, որ գծուարի ընդ լծով. (տեղ բացոյ. սխոււփսխ ընող.) Թուի կազմեալ 'ի բանէն ... փոխանակ ասելոյ՝ ասացողական։ Նկատելէ 'ի պատմութիւն (Ա. Թագ. Զ. 12.) յորում երինջքն անդրանկածնիք զատուցեալք յորթուց իւրեանց՝ իբր հեծելով ձգէին զսայլն զսայլն յոր եդեալ կայր տապանակն այն. և առկայծ զնայլին ուղիղ անխոտոր ընդ Ճանապարհ իւրեանց, և մնայլին ընդ լծով. խակ են, առէ, հեծեալ ընդ բեռամբ այն, այլ ոչ ուղղեալ, ոչ կրթեալ 'ի բարիս։

3 Բանական . Բնութիւն բանական զօրով, ունելով բառ բարուց զանձնութեան անասնոց, ... , ունելով զկատարութեան զօրութեան, ..., ունելով զանձնարարութիւն անասունք կենդանեաց։

4 Մարմին ... ։ Ողբալի ասհման, մարմինս որ տուն է հոգւոյս, և ամին ծառայ լինելոց էր. եղև նմա տրտմեցուցիչ, դառնիչ և չարչարող։

5 Նշմարեալ. Որ իբր ոսկի չար կազմեցայ յոյ, այժմ վառեալ և ցրուեալ եղէ։

6 Ախտաժետ։ Այսու, և յաջորդ բանիւքն զբովանդակ մարդոյն վընասս 'ի Թիւ արկանէ. զբոլոր անձնս, առէ, մառանեցի 'ի մեղս և 'ի տանջանս. զմարմինս կործանեցի 'ի մարմնական մեղս և յայլումն, և 'ի կրծումն որդանց. զհոգիս կորուսի հոգեւոր մեղօք. մտօք խաբեալ 'ի գիւղն. կամօքս կորուսեալ խառնութիւն. սիրտս բեկեալ լրմամբ կամ անյօժարութիւն առ բարիս. ուշ յիշողականիս մոռացկոտ. հանճար խոհականիս սպառեալ. յառաջնութենէ ներքին զգայութեանց զրկեալ, և արթնութիւն նոցա կամ հմտութիւն նուաղեալ. աչքս յազդեցիս նկատեալ. ականջքս 'ի լսել չարութեանց պարապեալ։ Եւ ... , այսինքն յամենայն կողմանց՝ ներքոյ և արտաքոյ, բառ հոգւոյ և բառ մարմնոյ ամենայն բարբառմամբք մեղաց մնասեալ, ... , այս, և հետեւեալքն հայլին միայն 'ի վերջակ սկզբնական մեղացն՝ յորում մարդն յղանայ և ծնանի, և յետոյ զարձեալ 'ի ներգործական մեղս անկանի։ ... , վասն էր ոչ ծծեցի խառն ընդ կաթին, կամ փոխանակ կաթին զմաղձ, կամ զմաղձային զառն բնպելի, որով կարծեալ 'ի կենաց, որպէս մնայի 'ի պարտեաց մեղաց։

7 Ո՛չ ... 'ի ... ։ Եթէ ես յետ այսչափ անխոստմութեան զնէն՝ տակաւին զասք բարկութեան այս ունեմ բարձրացեալ 'ի վերայ իմ, ով որ 'ի մարդկանէ կարէ մեղմացուցանել զխս յողբոց առ տի, կամ 'ի կշտամբութեանց։ Այլ ... , զհոգիս և զմարմինս, և զզգայութիւնս զառեալ պատժեցից։ ... , զզխուարս 'ի զգայութեանց յանցխմանեցից, կամ զկատարումն չար ներգործութեանց նոցա պատժեցից. զայս՝ վասն որոյ հայեցմանն յանցխմանեցից անկերութեամբ, արտասուօք կամ 'ի խուարի կալով. զակամբս վասն անարժան լսողութեանց յանցխմանեցից ձայնիւ ողբոց. մտակցութեամբ, ունկնդրութեամբ ածայքն բանին. զլեզու վասն անարժան խօսիցն յանցխմանեցից լռութեամբ, անճաշակութեամբ, մերձաւորութեամբ, և այլն։

8 [illegible] գոգաւորէ։ Նովին գունով կամ պատով պարառութեան միշտ երեւիմ։ [illegible], անկարկատելի, պատառատուն համ զերծիւ յանցաւոր առաջի քո։ Եւ դու ողորմութեամբդ կաս ընդ աջմէ իմմէ 'ի փրկել զիս, եւ այլն։ Թուի ակնարկել 'ի տեսիլ զաքարիայ (Գ. 2. 3.) յորում տեսաւ յեսու քահանայ 'ի հանդերձս աղտեղիս առաջի տեառն, եւ այլն։

9 [illegible]։ Որպէս սերովբէն մատոյց զկայծակն 'ի բերան եսայեայ, սակայն այս սրբեաց զմեղս քո 'ի քէն (եսայ. Զ. 7.) այսպէս [illegible] զխմանալի կայծակն զօրութե քո 'ի լեզու իմ. [illegible], զի լինիցի պատճառ մաքրութե յամենայն արատոյ, [illegible], զգայութեանց քո ձեռամբդ յիս բաշխելոց կամ զանազանելոց. զի լեզու խոստովանութեամբն լինի գործի մաքրելոյ զմեղս այլոց զգայութեանց։ Որպէս զի [illegible], զգայութեամբքս որք 'ի քէն եղեն, եւ քեւ բժշկին, [illegible], վասն առնելոյդ եւ բժշկելոյդ՝ անդադար օրհնեսցեն զքեզ։

## ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

*Վերստին յաւելեալ կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր ա̃ծ ամենայնի, զօրաւոր յամենայնի, անպարագիր եւ անվայրափակ [1] տեղի ամենեցուն. բոլոր խկութեամբ հուպ յամենեսին, [2] անուրեք վայրից, եւ չիք սահման առանց քո։ Եւ երեւեալ երբեք, եւ ոչ տեսականութիւն առանց քո ծագման լուսաւոր։ Փառք ահաւորութեան, [3] անուն անհասութեան, կոչումն մեծութեան, ձայն անբաւութեան, խկութիւն անքննութեան, [4] անմատչելի հեռաւոր, եւ անընդմիջելի մերձաւոր, տեսող հեծութեան, նկատիչ թշուառութեան, մօտակաց թախծութեան, [5] ամենաբոյժ հնար անձառութեան, հայր գթութեանց, ծագող ողորմութեան, ա̃ծ մխիթարութեան։

Բ. Հայեաց տէր ողորմութեամբ 'ի պատկեր վշտաց դառնութեան բազմախոլտանգ կրիցս կարեաց, զոր հանդէպ քո տարածանեմ։ Կցորդակից լեր բժշկապէս, եւ մի 'ի խոյզ քննութեան կոչեր դատաւորաբար։ Որդարեւ մեծ է վտանգ տարակուսանաց ցաւոց այսր վա-

բանման, յորժամ իսկ մարմինն մեզօք զրաւեալ, և
անձն 'ի գործոց չարեաց ոչ մեկուսացեալ, [6] գործնա-
կանացն գործի սովորութեամբն կարեաց կապեալ, [7] զան-
գուածն հանգերձանաց մահացու կրիւք շաղախեալ, ըղ-
ձայութիւն որովն խնամոց խեթիւ խոցոտեալ. ախը-
կողութիւն բարեացն բնութիւն բարձեալ, և 'ի բանակա-
նութեանն ընդ անասունս դասակարգեալ, և [8] զադիր
զարշութիւն ընդ գոյութեանն շաղամանեալ, և [9] տե-
սականայն ողջ ելով խմանալքն վիրաւորեալ, և 'ի սատա-
կութենէ [10] յանցանացն յիշատակի յաւէտ յաւսահա-
տեալ, և տագնապաւ նախագործելոցն միշտ տարակու-
սեալ, և յատակութիւն աղերսին 'ի սպառ պղտորեալ,
և խղճիւ մտացն յուզմանց կրկին ճենճերեալ, և ձեռն [11]
'ի մաճի գործոյն գլեանոցն հետադարձեալ, և կերպ 'ի
յառաջ դիմեալ՝ ոտք 'ի վերջ կոյս յետահարեալ, և [12]
զխոստութեամբ էիցն՝ 'ի չէիցն միշտ խաբեցեալ, և [13] 'ի
մտացն մարտ՝ 'ի փորձանացն յաղթահարեալ, և [14] 'ի թա-
ռանչ որովն հագագլին դուռն հրդեհեալ, և խնաս զօ-
րութիւն բնոցն ամենայն ուրեք տոչորեալ, և անարև
միգով յամենայն մասանց պարփակեալ, և լոյսութիւն
անձնկալութեանն ամենևին 'ի սպառ ամփոփեալ, և [15]
անբերբերելեացն տոյժ 'ի զզայլյան տարաւորեալ, և եղկու-
թիւն կորստեանն 'ի յուշ անդ եկեալ, և դատակնիք
հատուցմանն 'ի դիւանի մտացն դրեցեալ, և բարերա-
րին ակն 'ի ցասումն ինն երևեցեալ, և լոյսն բնութը՝
զանկուածոյ հողոյս զայրացեալ, և ահաւորութիւն էին
ընդ փոքրկութիւն բնութեանս ընդհարեալ, և միշտ ո-
րոմանք բանից բանաւոր մախրոյս բարկացեալ, և իրա-
ւանցն վիմաք զարժանիս մահու կոչկոճեալ, և որ ինն է
տաղանդ՝ յանտաւակս աստէն կորուսեալ, և պատուա-
կան իրին առացուած իբրև անարգ յերկրի թաղեալ,
և [16] տաժանմանցն արգասիք ծուլութեանն մթով ծած-
կեալ, և իբրև զ'ի բաց բարձեալ նշմարան ճրագի չե-
րևեալ, և [17] պատասխանարան լեզուիս՝ յիրաւանցն օ-
տար՝ կարկեցեալ, և անհամբոյր շրթանցս դրութիւն
օրհնաւոր դասմանք պապանձեալ, և [18] յուզմունք մը-
տացս 'ի զանազան մասունս ցնդեալ, և զկեանն 'ի վե-
րայ օդոյն ոչ ինչ գիտացեալ, և 'ի կշռութիւն բարւոյն
ընտրութեան յիմար երևեալ, և ընթացք ելիցն նը-

հանճարոյք չարին խափանեալ, և վառարան իւղոյն ա-
ղիւնոյն հնոցի լցեալ, և անուանս գիր 'ի կենաց մա-
տենին եղծեալ, և կշտամբանք ընդ երանութեան անդ
արձանացեալ։
Գ. Եթէ զինուոր տեսանեմ, մահու ակն ունիմ. 19
եթէ պատգամաւոր, խստութն. եթէ մատենագէտ,
մուրհակի կորստեան. եթէ օրինաւոր, անիծից. եթէ
աւետարանական, փոշւոյ ոտիցն թօթափման. եթէ բա-
րեկամն, յանդիմանութեան. եթէ ապաւում, կսկծ-
ման։ 20 Եթէ ջրոյն ընտրութեան փորձիմ, խորտա-
կիմ. եթէ դեղ ինչ գտանեմ ձգեմ, սատակիմ։ Եթէ 21
բերս նկատեմ բարութեան, 'ի կարծեաց չարեացս
փախնում. եթէ ձեռն համբարձեալ, կորանամ. 22 եթէ
փոքր ինչ խրատիլ, սարսեմ. եթէ սակաւ մի թնդիւն,
ընդոստիմ. եթէ 'ի խրախճանս ընկերաց հրաւիրիմ,
դողամ. եթէ մեծիդ յանդիման լինիմ, սարսափեմ. ե-
թէ 'ի հարցումն բանի կոչիմ, կարկիմ. եթէ իրաւամբք
քննիմ, համրանամ։ Որդ այսքան ամենախշուառ և
ողորմագին տարակուսանացս 'ի վերայ միմեանց բարդե-
լոց, 23 որք զատոյն զգայականաց սրտիս գոյութեան 'ի
ներքուստ անտուստ անբժշկական ցաւօք՝ աներևակինե-
տիք խոցոտեալ, անտարաբերելի մշտակիր յարամնաց
հանապազամնիս բևեռեալ աստուստ ընդ հոգւոյս,
լցեալ շարաւով կրկին հարուածով, վտանգ սատակման
մահու գուշակեն։ 24 Փարախ մթերից պատեալ գեր-
կաթով գազանեացս ծածուկք ազդեն ինձ տագնապս՝
վերս պահեալս անխնամարկելիս ընդ ելս շնչոյս տա-
րևառութեան. յորոց նեղութեանց չարաչար ճնշեալ
աղաղակ ձայնիւ, խառնեալ արտասուօք՝ կողկողագին
թախծանօք հոգւոյ, բարեգործիդ հնարաւորութեան
յերկրատեղծիցս նահատակաց ընդ իմ մաղթողաց,
վերջին հեծութեամբս և ես ընդ նոսին արտասուօք ող-
բոց ամենեքումբք նուիրաղօք՝ զաղերսանս ըղձիցս 'ի տատ-
նայնոցս ատափ 25 յերկինս առաքեմ։ Շնորհեա տէր ան-
դորրութիւն կենաց հանգստեան ողորմելի վտանգակեցե-
լոյս 'ի յընդունայն երկրագործութիւս, համայնդ յամե-
նայնում, ամենայնիւ ստացեալ քեզ փառս։

1 Տեղի անձնեցուն : Նստուած առ ափն անձնեցուն, մի՛ պաղատա- ռապէս, ըստ որում զանձնոյն իրաց խոհութիւն յիւր միտս ամփոփեալ ունի: Երկրորդ, տարրոզապէս. զի զանձնեցուն զգօնն կրէ ՚ի զբօսու- թեան իւրում: Երրորդ. պատճառաբար. զի անձնոյն անձնեաց ինքն առաջ զզօրութիւն զեանեղչ կամ պարագրէչ այլ մարմնոց : 2 օրին. այս- պէս որոշեն, փեղի անձնեցուն բուռ խոհութեանն, հոգ յանձնեան :

2 Անառնէ ձմեռնէ : Ոչ բաժանեալ ՚ի վայրս ուրեք. և առհասարակ չէք առհման կամ տեղի առանց քո: Ոչ էրնէու. ոչ երկիւ բնաւ ուրեք. և առհասարակ ու փեաւխանութեան. ոչինչ երևելութիւն լինի յայսմի առանց ծագման քո. զի զլոյսն երևեցուցիչ անձնոյնի՛ դու ծագէ. կամ, ոչինչ տեսողութիւն ուրեք է պայծառ և ընդունող լուսոյ՛ առանց ծագելոյ քո զլոյս :

3 Անուն անհասութեան : Անուն նշանակիչ բնութեան ոչ չէ բնաւ գիտե- լի: Յակոբ հարցանէր յերևեալն՛ զինչ անուն է քո, և լուաւ պատաս- խանի, զի՞ հարցանես (Ծննդ. լբ. 29:) Նոյնպէս հարցանէր և մանուէ հայր սամփսոնի. և լուաւ, սքանչելի է (դատաւ. ժգ. 18:) Յորն անբաւ- ութեան, դու անուն անբաւ կատարելութեան է յայտնիչ. խոհութեան անհասութեան, էութի ունող անքննութեան, կամ անքննելի : Զայսոսիկ կոչմունս մարթ է առնուլ և այսպէս, անուանս անհաս, անբաւ, անքննե- լի, ոչ միայն տիրապէս առի, և ոչ բնաւ ումեք յարարածոց. բան անհասութիւն, անբաւութիւն, և անքննութիւն ոչ գտանի արարածոց ոչ. այսպիսի անհաս և անբաւ և անքննելի՛ կամ դու միայն է, և կամ բնաւ իսկ ոչ գոյ իրօք :

4 Անմատչելի հեռաւոր : Անմերձենալի ՚ի գոյն և ՚ի ճանաչել. զի ոչ խոհական հաղորդութիւն բնութեան, և ոչ արուեստ մնայց հնար է մերձե- նալ. և անընդմիջելի մերձաւոր. և առհասարակ գոյացութիւն այնչափ մերձ ես յիւրաքանչիւրս, զի ոչ գոյ միջոց կամ խտրոց ՚ի մէջ քո և նոցա. զի դու ՚ի գոյութիւն իւրաքանչիւր սահմանածոյ ընդմնանեն :

5 Անձնաբոյժ : Անձնոյնի բժշկող. այսպէս ուղիղ գրի ՚ի լաւ օրին. իսկ յայլս՛ անձնաբոյժ :

6 Գործնականացն փորձի : Հին լուծ. զլար գործան խմնոյ այսու : Բայց ստար է. այլ խմնոյի է կարողութիւնն՛ որ պատճառ է գործե- լեացն. և այսպիսի է նախ՛ կամքն, որ առաջին շարժիչ է ՚ի գործե- լեան, կամ ՚ի կատարումն ծանուցեալ բարւոյն. դարձեալ և այլ ըղ- գայարանք, և մանաւանդ ձեռն, որք արբանեկեն ՚ի գործել: Այս գոր- ծի, առէ, գործոց փորձն, սովորութիւն ախորժն, կամ բաւանդ ու- նակութիւն միայն իրք երկաթով կազմեալ է : Յայսմ բանէ մինչ ՚ի կա- տարած այսր համարոյ նկարագրէ զագխողորմ վիճակ մարդոյ, որ ՚ի մեղս ունակացեալ, և զգաստութիւն մեղացն ճաշակեալ, ոչ զգձանալ կա- մի և ապաշխարել, և ոչ ՚ի մեղանչելն հանգչի. այլ մարմնով և հոգւով և համայն զգայարանօք ՚ի յոյզս խառնութեանց ապերասան անմխիթար :

7 Զանգուածն հանդերձեալոց : Յօրինուած բնութեա՛ մահացու խառ- նութեանք սկզբնական և ներգործական մեղաց շաղախեալ իբրև զթի- նատր կերակուր :

8 Զուարթ փորձութեան : Զգուելի աղտեղութեն ընդ գոյութեան բնութեա կամ ընդ մարմնոյս միաւորեալ. որպէս զարշ ախտ՛ ՚ի մարմնի խոցի :

9 Տեսականացն ուշ եւս : Երևելիքս կամ արտաքինք իմ առաջ գո- լով, հոգևորքն կամ աներևոյթք իմ վերաւորեալ են. այսինքն արտա- քուստ մարմնով առողջ, և յերևս արդար և երկիւղած երևիմ, բայց հոգւով վիրաւորեալ մեղօք և խղճիւ :

10 Յանցանացն : 2 օրին. յանցանացն : Ի սաստիկ կամ յաղգոյ յեշա-

տանէ մեղայն յուսահատ լինիմ. և թէ և այժմ ոչ նոյնպէս մեղանչի-
ցեմ, բայց տագնապ ՆԱԽԱԳՈՒՇԱԿԵԼՈՅՆ, յառաջագոյն գործեալ մեղայն
մէջ զերկիւղ բերէ, զաղօթսն պղտորէ, և զխիղճ մտացն զայրացու-
ցանէ:

11 Ի ՀԱՃԻ ԳՈՐԾՈՅՆ: Ձեռքս 'ի մանր երկրագործութեան, կամ գործ-
ւոյն, այսինքն արօրոյն. առեալ կամի. ուխտեր հրաժարելոյ յաշխար-
հէ, ձեռն արկի 'ի մշակութիւն հոգւոյս իմ և այլոց. և առկայն բղձի-
ւ ՅԵՏՆՈՑՆ ՀԵՏԵՒԵԱԼ, զաշխարհականն իրս խնդրեմ, ըստ բանին աւետա.
(Ղուկ. Թ. 62:) Ի այն հայի և յաջորդն, ՅԵՏՍ 'Ի ՅԱՌԱՋ, և այլն:

12 ԳԻՏՈՒԹԵԱՄԲ ԷԻՑՆ: Գիտելով զբան զանանց բարիս երկնից, 'Ի
ԷԻՑՆ, յունայն յանցաւոր իրաց խաբեցայ: Կամ, գիտելով թէ զինչ են
երկրաւոր բարիքս, խաբեցայ 'ի նոցանէ այնու երևութիւ որով ոչ են.
զի անցաւորք գոլով և փչացմնիչ, իբրև անանց և հանգուցիչ ձևանան:

13 Ի ՀՓԱՅՆ ՀԱՐՓ: Նա որ հոգևոր զօրեալ մտօք ընդ մեղս խորհրդոյ
պարտէր մարտնչել իբրև կիրթ և զօրաւոր, 'Ի ՀԱՑԱՆՑՆ, 'ի փոքր և 'ի
գլխոյն պատերազմաց մարմնոյ յաղթեցայ: Կամ, 'ի մտաւոր պատե-
րազմի յաղթեցայ նախ 'ի փոքր փորձութեց խորհրդոյ: Կամ, 'ի խոռ-
վել մտացս խղճմտութք, նախ 'ի փոքր և 'ի ներքին մեղաց յաղթեցայ
վհատութեամբ և արտաքինութեամբ:

14 Ի ԹԱՌԱՄԵԼ ՍՐՏԻՆ: Ի հառաչանաց սրտին՝ կոկորդն ջերմացեալ, և
ընական խոնաւ հիւթ քմացն սպառեալ: Ի ՉՈՐԱՑԵԱԼՆ, ընդարձակու-
թիւնն որով կարող էի ունել յոյս մեծ, խափան արգելու:

15 ԱՆԲԵՐԵԼԵԱՑՆ ՓՈՅԹ: Անձանելի տառապանք հոգւոյս, կամ հան-
դերձեալ տանջանք գժոխոց՝ 'Ի ՇՓՈՒԼԻՆ ՓՂՁԱՑԵԱԼ, 'ի դէմս երևեալ
տրտմութեամբն. կամ 'ի զգալի իրս անտանելի զհանդերձեալ վրէժ-
խնդրութիւնն. զի արտաքոյ տառապանան 'ի տանջանս անիրաւաց (Ի-
մաստ. Ե. 21. ԺԶ. 24:) Այսպէս Կային 'ի խղճէ մտացն տագնապեալ,
զամենեսին իբրև գահին ինքեան անանէր (Ծննդ. Դ. 14:) Եւ ինքն
ուրբս ասէ զկնի: Եթէ զինուոր անտանելի, մահու տեղի ունիմ, և այլն:

16 ՏՃԱՆՆԱՆՑՆ ԱՐԳԱՒԻՔ: Պտուղք կամ արդիւնք աշխատութեանցն՝
զորս չահէի 'ի կիրառութէ տաղանդին իմ, ծուլութեամբ ծածկեցան, և
իբրև աղտ ընդ ծրագի պակասեալ անյայտեցան:

17 ԳՈՐԾԱԽԱՆԱՐԱՆ ՕՂՆՈՒԻ: Նեղութ՝ որ է գործի պատառախանելոյ,
ՉԻՐԱԿԱՆՑՆ ՕԳՆԵ, զօրհն յիրաւանց՝ ինքնին պարտանձեալ կայ. Ե ԱՆՀԱՄ
ԲԱՅՐ ՁՐԵԱՆՑ, գիրք կամ ձև անխորտ և գործելի շրթանցս՝ արդար գա-
տաստանի փակեալ լռութեամբ:

18 ՅԱՂՁՈՒԱԾ ՀԱՐՍԻ: Ամփոփեալ խորհուրդք մտացս 'ի զանազան
կողմանս տարուբերեն զիս. մերթ 'ի կողմն յուսահատութե, մերթ 'ի
զգօնութի. ապաշխարել կամիմ, և վարանիմ թէ զո՞ր ապաշխարութիւն
յանձն առից, կամ երբ. առ այլ որ բժիշկ գիտէ՝ ոչ թողու անթե.
ինքնին զանձնս բժշկել՝ ոչ է կարելի. արդեօք յանդգնութն առանձնա-
նալ լաւ իցէ, թէ 'ի միաբանութե կալ. և առ՝ զարտաքին ապաշխա-
րութիւն առնել, թէ զներքին միայն 'ի ծածուկ՝ առ 'ի չցայթակղեցու-
ցանել զայլս. միթէ հրաժարել 'ի վարդապետութէ, և զանձնս միայն
հոգալ, կամ արդեօք յետ ապաշխարելոյս՝ իցէ թէ դարձեալ անկանի-
ցիմ, և յո՞ր պատճառաց արդեօք: Այսպէս խռովեալ, ՉԻՏԱՑ 'Ի ՁԻՐԱՅ
ՕՓԻՆ, թէ ո՞ր իցէ օգտակար ինձ և այլոց՝ ոչ գիտացի. և յղանալ ըղ-
բարին՝ յիմարութե անկարող գտայ. որով և ԸՆԹԱՑՍ ՆԵՐՍ, եղանելոյն
'ի մեղաց՝ արգելմամբ զիւրն խափանեցաւ. Ն ՀԱՆԳՐԱՆ ԻՄՈՅ, կան-
թեղ մտացս՝ ԱՂԻՆԱՉ ԱՆՏԷ, ծնցուածովք մեղացս, (որպէս անշիւնն
է ծնուցեալ կրակի.) լցեալ խաւարեցաւ:

19 Եթէ [illegible]: Եթէ տեսանեմ զայր պատգամաւորեր, ակն ու-
նիմ [illegible], առաւել, աղտանալեաց: Եթէ [illegible], թէ տեսա-
նեմ զցայլ առանի, կամ որ պաշտօնեայ է դատաւորական դիւանի,
ակն ունիմ [illegible], պարտուց, կամ կորստեան առաջուածոց: Եթէ
[illegible], որինակէս տեսանեմ, ապաւեմ անէծս լինել: Եթէ [illegible]-
[illegible], ուսեապրանիչ կամ քաղաքիչ, ապաւեմ թօթափիլ զփոշի ո-
տիցն. փոխանակ [illegible]՝ 4 օրին. [illegible]: Եթէ [illegible], դժնեա-
րաց, մեամ [illegible], կակծեցուցիչ բանից: 3 օրին. [illegible]:

20 Եթէ [illegible]: Եթէ ջրովն այնուիկ՝ որով ըստ օրինացն
մեղանչի փորձեալ լինէր կինն շնացող՝ (Թուոց. Ե. 17.) փորձեցից և
ես, խորտակիմ. որպէս յայնժամ եթէ ճշմարտիւ շնացեալ էր կինն,
ըմպելն զջուրն՝ ուռնոյր որովայն նորա, և բարձք նորա խորտակէին:
Եթէ [illegible]. այսինքն գեղ ինչ քննութե, աղաչխարութե,
կամ ուղղութե առնում, փոխանակ առաջնոյնոյ աստակիմ:

21 [illegible]: Եթէ տեսանեմ յուսկրէ բարեաց ինչ բաշխումն,
ես ՚ի կարծեաց չարեացս փախչիմ, ոչ համարձակիմ մատչել՝ գիտելով
զանարժանութիւնս իմ:

22 Եթէ [illegible]: Եթէ տեսանեմ զփոքրիկ խրատիլակ,
(խանչակ, գօրգուլօք,) առնեմ իբրև զերկչոտ թռչունս ՚ի պարանոցս:

23 [illegible]: Այս իմ ողորմելի տարակուսանքս՝ զեսոյս զգայու-
թեան սրտիս ՚ի ներքուստ անհրեւոյթ նետիւք խոցանեն. որք [illegible]-
[illegible], անհնար առ ՚ի արտաքս հանել, միշտ մնան մխեալ և բեւեռեալ
՚ի հոգիս, և բոլորովին թարախով լցեալ, [illegible], խոցմանցն
և թարախեցուցանելոյն՝ զչարաչար մահ իմ ցուցանեն: [illegible]
[illegible], զաղանի փառութիւք հոգւոյս՝ իբրև [illegible], փոխադրու-
թիւն հոլովդ է, փոխանակ առելոյ՝ մեծերք թարախոյ, այսինքն թա-
րախ ժողովեալ ՚ի ներքս, [illegible] բժշկին, զոր ՚ի զննելն ըղ-
ձերան՝ ՚ի ներքս մտեալ. և յորժամ թարախս տեսանէ զերկաթն, խնա-
նոյ անբժշկելի գոլ զվէրսն. այսպէս ներքին փառութիւն իմ երևեալ
խիստ կանոնօքն աղաչխարութե, ցուցանեն ինձ զվէրս անդարմանե-
լիս պահեալ [illegible], ՚ի շնչափողս, կամ ՚ի թոքս հոգւոյս. յոր-
մէ և աղաղակ զջմմինս նուագեալ Ջնջի: Փոխանակ բառին [illegible],
մի օրինակ գնէ՝ [illegible]: Բայց ես ընդ նուազ ձայնիս խառնեալ զար-
տասուս աչացս, և զտրամութիւն հոգւոյս, քո հնարաւոր զօրութեդ
նուիրեմ զաղերսանս [illegible], ընդ որրոյն, կամ ընդ
ջերմեռանդն աղօթողաց [illegible], ընդ իմ կամ վասն իմ մաղ-
թողաց:

24 [illegible]: Այս օրինակ փոքր ինչ այլայլ է. [illegible]
[illegible]. և մարթ է իմանալ, մեծե-
րեալ թարախք կամ փառութիւնք հոգւոյս պատեալ ՚ի ծածուկ զկարծ-
րութեանց սրտիս:

25 [illegible]: Յերիս օրինակս կրկին գնի այս. այսինքն յեր-
կինս առաքեմ վերջին հեծութեանս: և զկնի. ՚ի առորդոյնոցս առաք
յերկինս առաքեմ:

# ԲԱՆ ԹՍԱՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի ·*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ ո՞րոց խնդրոց արժանաւոր վարկանելով զիս մատչիմ աղերսել, աղքատութեա՞նն յորմէ մերկացայ, եթէ փառացդ վայելչութեան յորմէ զրկեցայ, թէ կենացդ անմահականաց յորմէ հերքեցայ, թէ ընդ հրեշտակաց պարակցութեան յորմէ տրոհեցայ, թէ ընդ արդարոց մանկակցութեան յորոց ճեղքեցայ, [1] թէ ուրթոյն կենդանւոյ յորմէ քանդեցայ, թէ ոստ տնկոյն բերկրութեան յորմէ զօսացայ, թէ ծաղիկ փառացն շնորհի յորմէ թափեցայ, թէ պանծանացն ժառանգաւոր յորմէ կորացայ, թէ հայրենի ծոցոյն հարազատ յորմէ ընկեցայ, եթէ զգեստո՞յն լուսոյ պարծիմ յորմէ մերկացայ, եթէ 'ի սատցո՞ղ դարձին յուսացայց յորմէ խորթացայ, եթէ 'ի լուսո՞յն իղձս գլխեցից յորմէ մեկնեցայ, [2] եթէ Յիսուսի յանկերան յօդիմ յորմէ մերժեցայ, եթէ 'ի թեւս նորա մերձիմ յորմէ օտարացայ, եթէ յապաւէ՞նն ապաստանեցայց [3] յորմէ խեթացայ, եթէ 'ի փրկութեանն նորոգութիւն յորմէ մահացայ, [4] եթէ 'ի զգաստութեա՞նն զուարթութիւն յորմէ ես լքայ, եթէ 'ի կանո՞նն կենացն ուխտի յորմէ փոխեցայ, [5] եթէ 'ի սահմա՞նն հաստագրական յորմէ սահեցայ, եթէ յանշարժ վիմին անդութիւն յորմէ սասանեցայ, եթէ [6] 'ի չո՞րս գումարտակին յորմէ հանեցայ, եթէ 'ի քաղա՞քն անդրանկաց շինիմ յորմէ գերեցայ, եթէ հանապազորդեան հացին աղօթեմ զոր ոչ վաստակեցայ, [7] եթէ փոխադրութիւն երկանցն խնդրեմ յոր ոչ քրտնեցայ, թէ պարգեւօ՞քն պատկեցայց յոր չհանդիսացայ, թէ արձա՞ն խնձ կենաց գրեցից յորմէ ջնջեցայ, թէ զերախտեացդ ձիր յիշեցից զոր միշտ մոռացայ.

Բ. Ահա հատաւ և կամ [8] խզեցաւ լար կենաց յուսոյն, տիրեցայ 'ի բորոտութեանցն դարշութենէ հա-

մայն ախտացեալ, ամենայնիւ [9] սպառեալ զմարմինս ա-
պականութիւնն շրջապատեալ՝ մեռոյց այ̃ ։ [10] Պսակն պա-
լար փայլունակ ագեղ լինացեալ, մնացուած ինչ պա-
հեալ նախանձնակ երկդիմի կերպին, որ զկրկին անմար-
բութիւնն նշանակէ, պարծանացն նշոյլ ամենեւին ինձ
շիջաւ, փրկութիւնն մատնեցաւ, բարին ստուերացաւ,
ելք կենացն ընաւին փակեցաւ, մխիթարութիւնն բար-
ձաւ, դատաստանին ատեան մերժեցաւ, Թոյնք մահուն
ինձ արծարծեցաւ, սպանեալն կրկին ինձ կենդանացաւ, [11]
լատերն դադարք վիմաք կեցաւ, շաւիղն յուսոյն [12] կու-
րացաւ, հնարհին ծածկոյթ յինէն մերկացաւ, փառացն
վայելչութիւն ստուերացաւ, հանճարն առաջնորդական
խափանեցաւ, կշտամբանացն փուշ բազմացաւ, անօրէ-
նութեանն ուղէշ ծաղկեցաւ, բոց գեհենին ինձ բորբո-
քեցաւ, ծառայութեանն լուծ սաստկացաւ, սարկու-
թեանն կապ զօրացաւ. [13] ունողն յարկին կառուցման
ահա անկաւ, [14] բարձրութեանն վստահարան կործա-
նեցաւ, ընտանութեանն միաւորութիւն անջրպետե-
ցաւ, որբութեանն սիրող հոգին այ̃ տրտմեցաւ ։

Դ. Այլ քանզի զվերջինն համբուրեցի զառնութիւն,
տանջանս՝ խէթս՝ տխրութիւնս, վիշտս հոգեկանս, ցաւս
անխնամարկելիս, տարակոյս անյուսադրելիս, ամօթանս
անպարտուրելիս, խայտառականս անվերարկելիս, պատ-
կառանս անհամարձակելիս, փախուստս անդառնալիս,
հալածանս անմորդափրելիս, [15] երկայն ուղեւորութեան
տարաձեան անթօշակութիւնս, խոկ զու փրկութիւն զօ-
րութիւն և օգնութիւն, ողորմութիւն լուսաւորութիւն
քաւութիւն և անմահութի՛ տէր Յս̃ Քս̃, որդի այ̃ կեն-
դանւոյ, արարիչ երկնի և երկրի, որ ընձեռես ջուր պա-
քելոյն 'ի ծարաւուտ վայրս անապատի, օրհնեալ, բա-
րեգութ, հզօր, մարդասէր, երկայնամիտ, խնամակալ,
հնարաւոր, այցելու, պաշտպան աննախանձ, պահապան
յաղթող, կեանք անկորուստ, միջնորդ երկնային, լու-
թիւն անմուաղ, երանութիւն տօնելի, ձեռն ձգեալ սի-
րոյ ողորմութեան քոյ ինձ՝ ընկալ և մատո քաւեալ և
որբեալ զիս զամենապարտս՝ բանդ կենդանի՝ առ հա-
ւատարապատիւ քո հոգի, զի քև վերստին հաշտեալ
յիս դարձցի ։ Այլ 'ի ձեռն քո խրատն կամք մաքուր
նուիրեալ, [16] զօրեղն ինքնութեամբ զիս հօր ընծայեալ,

անդէն առ Նմին Նովիմբ միշտ 'ի քեզ հնչոյս ողջունի-կապեալ ընդ շնորհիդ՝ 'ի քեզ միանալ անբաժանելի։ Ամն որոյ քեզ ընդ Հօր քում Հոգւովդ սրբով եր-րեակ անձնաւորութեանդ 'ի միում բնութեան և 'ի մի ա̃ծութեան փառք, և 'ի ստեղծականաց կից գոհաբա-նութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

1 Թէ որչափ ողբոյն։ Եթէ ապաշխիցեմ իբրև ուս ողբոյն կենդանեաց՝ քնի. Այսպէս 'ի հետևեալսն զօրութեանք խնս գրեաս ԽԷ, այսինքն իբրև մոմ, իբրև ծաղիկ, և այլն։ Ի ստորոտ տրզին, եթէ յընդունող գարձին յուսացայց. յորմէ ստորացայ իբրև զանտառն ողղին։

2 Եթէ յետ յողբերն։ Մինթէ 'ի քո միաւորիցիմ իբրև սիրելի, յորմէ առելութեանքն կարեցայ։ Կամ, 'ի նրան՝ որք մարմին են քնի յերկինս։

3 Յորմէ խնթոյոյ։ Յորմէ խնթիւ կամ խառնելով հեռացայ. կամ ընդ որում խառնեցայ, թշնամեցայ։

4 Եթէ 'ի նկարագրութեան։ Ի զգաստութիւն հաւատարիմ և ալթուն ծառային, և իմաստուն կուսանացն վառաճացայց. յորմէ ես թուլա-ցայ։ Եթէ 'ի խոնան, յօրէնս աւետարանին, յորմէ փախեցայ յօրէնս հին մարդոյն։

5 Եթէ 'ի առհմանն։ Յուխտ մկրտութեանս և կրօնաւորութեանս, յորմէ գլորեցայ։

6 Ի ձորս գոմորային։ Ժողովեցի կամ խմբի վանականաց. յորմէ վա-րուքս հոտեցայ, անկայ, արտաքոյ մնացի։ Կամ, եթէ գոմորային խմացի ակնանակաւ զօրդ պարանոցի, (որպէս գնի եղիշ. Է. 106.) ըստ այսմ նշանակէ՝ 'ի կարգս սրբոց, որք են զարդ եկեղեցւոյ։

7 Եթէ հոլովութեան եղիանին։ Մինթէ խնդրիցեմ բառնալ յինէն զեր-կուանս աշխատութեան, զոր ա̃ծ օրինադրեաց ադամայ, եւ որ ոչ քըր-նեցայ։ Կամ, մինթէ խնդրիցեմ փոխադրել զերկուանս առաւ կենաց 'ի հանգերձեալ հանգիստն՝ ուր վասն ոչ քրտնեցայ. կամ, մինթէ խնդրի-ցեմ հատուցումն աշխատութեան՝ որովք ոչ քրտնեցայ։ Թէ դարձեալ, յաղթանակաւ վարձուց պսակեցիմ յայն ինչ գործ, կամ վասն այնր, յոր ընդդիմացայ, յորում ոչ ձգնեցայ, ոչ ընտիր գտայ։ Թէ ալլան. եթէ գեր հաստատութե, կամ գալութե կենաց կարծեցեմ ունել, յորմէ մանաւանդ քնքեցայ։

8 Խնդրոյս լոր։ Ցեա առեղյն՝ հոգոս, յաւելուլն՝ և յոն խնդրոյ, ըսկ-լեալյն նշանակէ՝ մանաւանդ, այսինքն, աշա լոր յաւայն հատու, կըս-րեցաւ, մանաւանդ թէ բոլորովին խղեցաւ, բարձաւ զլխովին շնորհն՝ որ է լոր հոգեւոր կենաց՝ շաղկապիչ ընդ ա̃ծ. և չէ յաւալի՝ թէ մնաց յիս կեանք հոգևոր։ Կամ, եթէ խմացի զհանգերձեալ կենաց և զյու-սոյ փրկութե, նշանակէ՝ բարձաւ համարձակութի կամ վստահութի փրկութեան վասն մեղացս և անարժանութեանս։

9 Աղաղակել։ մի օրինակ, աղաղակել հարկն աղախնութեանն։

10 Պղինձ դաշտ։ Յանձն այլաբանէ զախտ բարկութե ըստ գրե-լոյն (գեա. ժԳ։) Եւ առայեալ վերադոյն՝ թէ տերևոյ 'ի եարագութեան գոմորայնէ, որ առարածեալ սպառէ զմարմին, զայս առնու յօրինակ սկզբնական մեղաց, որ զբռնանդակ բնութին ապականեալ. Վասն զի Եւ թեպէտ յայս ապականութե բժշկեցայ, սակ. մկրտութբ, սակայն

վերստին ներգործական մեղքն երեւեցան յիս երբեւ [illegible] . փոքր ուսոյց փայլումն՝ բայց ագեղ, [illegible] երբեւ զլուան եղեալ, այսինքն ազխտակ բիծ, որ է սկիզբն եւ նշան բորոտութե. որպէս եւ ներգործական մեղքն սկզբնականին, որ եւ է [illegible]: 2 օրին. եւ հին լուծ. [illegible]: Որպէս պայծառն փայլումն եւ լինայեալ յառաջ քան զտարածանել բորոտութեան 'ի բազմանգակ մարմինն՝ կրկին տեսիլ արկանէ 'ի մարմինն. մի՛ ազխտակութիւն 'ի մաշկն եւ զնտտադոյն տեղի, եւ միւս՝ բնական գոյն եւ գերբ առաջ մասանց մարմնոյն (ղեւտ. ժգ. 3. 7:) Նոյ 'ի տարածել բորոտութենն 'ի բոլոր մարմինն, համակ միագոյն ազխտակ լինի. (անդ համար 13:) Իսկ եթէ յետ այնր երեւեսցի 'ի տեղւոջ ինչ առաջ գոյն, կամ կենդանի մարմին, պխտակ լեալ՝ համարի մնացեալ առաջին երկդիմի տեսլեանն, եւ բորոտութի չար. (անդ համար 14. 15:) Այսպէս անձնական մեղքն ագամայ՝ 'ի նախ երբեւ պայծառ լինայեալ, ըստ մասին հոգւոյն ազատանեաց զնա, եւ ըստ մասին մարմնոյն եթող այս՝ առաջ, բայց պարտաւոր եւ զխւրաինատսելի. եւ այն մեղք նորա տարածեալ 'ի ծննդեան՝ զբովանդակ բնութիւն ապար որդի բարկութե: Իսկ յետ պրկեալ մեր 'ի նորա մեղացն, յորժամ դարձեալ երեւին 'ի մեզ անձնական մեղք ներգործականք. այս համարի մնացեալ առաջին մեղացն ագամայ. երբ զի ըստ նմանութե յանցուածոյն ագամայ հոգւով ազատանէ, եւ ըստ մարմնոյ թէպէտ առաջ թողու, բայց պարտաւոր եւ ախտայեալ. վասն այն յարէ, որ [illegible]. այսինքն զհոգւոյն եւ զմարմնոյն, կամ զառաջինն եւ զերկրորդն: Ուստի եւ [illegible]. որով քննադատեալ լինելով մկրտութե, պարծիմք 'ի քս, [illegible] 'ի ձեռն յետագայ ներգործական մեղացն:

11 [illegible]: Նաւին հանդստարանն, կամ նաւահանգիստն մեծամեծ քարամբք խյաւ:

12 [illegible]: Ճանապարհ յուսոյն փակեցաւ:

13 [illegible]: Վերամբարձոյն շինուածոյ յարկին, (որպիսի է սիւնն, կամ գերանն, կամ հեծանաձգութիւնք,) անկաւ. եւ հոգեւորապէս իմա, երկիւղն որդիական առ ած՝ բարձաւ, որ 'ի վեր ունէր զշինուած տաճարինութե, ըստ սիրաքայ իէ. 4: Հին լուծ. խնանոյ զշողին՝ բարձող մարմնոյ:

14 [illegible]: Նեցուկն կամ մոյթ բարձր շինուածոյ. որ է համարձակութիւն յուսոյն:

15 [illegible]: Գնալոյն 'ի հանդերձեալ աշխարհ, որ յաւիտենական է եւ անդառնալի. զոր եւ տէրն ասէ գնալ յաշխարհ հեռի (ղուկ. ժթ. 12:) Այամ երկայն Ճանապարհի, ասէ, պատրաստեցի [illegible], ունայնաձեռն պակասութիւն թոշակի կամ պաշարի, փոխանակ ասելոյ, ոչ արարի բնաւ պաշար:

16 [illegible]. այսինքն հոգին սուրբ՝ որ զօրեղն է բնութեամբ, կամ զօրաւոր իմաստութե զնա հօր ընծայեալ, [illegible], միանգամայն նովին հոգւովն 'ի [illegible], սիրտաստացի ըղձանաք առ քեզ, կամ դրկախառն համբուրիւ ընդ քեզ. [illegible], այսինքն ընդ սիրելութեդ, ընդ բարեշնորհ գթոյդ, ընդ քեզ միանալ սասանց բաժանելոյ:

Դուցէ ոչ յար եւ պատշաճ՝ թուիցի ումանց՝ կատարած ագօթիցս ընդ անցելոցն բանից. երբեւ թէ յետ խոստովանելոյն 'ի կենաց ձայ, անդէն փոփոխակի զանձնականն բնաւութեն ձայ յուսայեալ խնդրեսցէ, զանբաժանելի առ նա զմիանալն: Սակայն արթուն ագօթաւորս մեր երկրպագումք աչօք փարի յաղաչանս իւր. մինչ յանձին մեղանն հայե_

ցեալ և ՚ի չարժամութիւն, լինի յուսակտուր խոպան. իսկ միւսովն յառեալ յանբաւ գթութիւն և ՚ի զօրութիւն ոյժ և ՚ի փրկանս քնի, յուսապատար քաջալերեալ զօրանայ. ուստի թէ առաջնումն իբր անդարամետական զանձն խոստովանի, երկրորդաւն ոչինչ երկբայի լինել երկնաքաղաքացի։ Եւ ահա ըստ այսոցիկ հայեցուածոց, խոստովանեալ նախ՝ թէ ընդ անօրէնսն մեղաւորեալն անջրդեհեցայ, այսինքն բարձաւ հեռացաւ. և թէ հեթենն ոյ փրփրեցայ, և թէ այսուքիւք զվերջին դառնութիւն և տանջանս և ամօթանս ինձ պատրաստեցի, յանձն առի, դառնայ տալս զքո թախանձել, զի ըստ ամենահնար իւրումն փրկագործութեան՝ ձեռն սիրոյ ձգեալ ընկալցի զինքն, և սրբեալ մաքրեսցէ առ համապատիւ հոգին սուրբ. և նորա եւս հաշտեալ, երկաքին որդի և հոգի միակամ հաճութիւն ընծայեսցեն երկնաւոր հօրն. որպէս զի հոգւոյն ազգաց զօրութեամբն, և որդւոյն համահամբոյր սիրոյն պնդութեամբ կապեալ միանայցէ անբաժանելի։

## ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Նայց քանզի ՚ի վերայ այսքանեաց գերութեանց ամենաթշուառ վտանգաւորիս [1] մի զմիով եւ և ես առնելոյ, զոր զկերպարանս անցիցն ՚ի մասնէ վերաձայնեալքդ նախագրեցին. ուստի և փոխեալ զեղանակ բանիս՝ այլ ոչ զեղկութիւն աղէտիս։

Բ. Նա զի [2] ծով է ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք յոյժ նմանագոյն. յորում կոհակօք բազմօք անթիւ զխեցմանց տատանեալ հոգիս ՚ի յայսմ աշխարհի մարմնոյս շինուածով իբր ՚ի նաւակի։ [3] Զոր Եսայիաս մարգարէ զյանկարծադէպ կատարածն որ ՚ի պարսկական հինից՝ Երուսաղէմի և Սամարիայ կործանմանն, նմանութեամբ այսր օրինակի կերպաւորեցոյց. որ և առ իմս հոգեորական խորտակումն զուգահայնել ոչ է սխալական։ Քանզի [4] մինչդեռ չուէի ես յանհոգութեան անտարակոյս վստահութեամբ, դոյզն կասկած արկածից ՚ի միտ բերելով առ խորոց փոքր միջոցին, որ ՚ի մէջ հանգստեանն և աշխատութեանն, իբր այն թէ հասեալ իցէ ձմեռն յամարայնի, բքարեր

հոգւով ժառանգեալ երկրաւորաց զխնդութեանս ան-
բանից զհանգստութիւնն ։ 5 Լուսոյ նման 'ի բարձ-
րանէ փայլեալ ակեայն խորանէրայ ։ 6 Խնւոյն ձեռ-
նարկութիւն քաղցրացեալ , 7 կայծն անկարծման 'ի կայից
խորոց ելեալ , տապաստին թշուառն յանկարծակամ
ծաւէնս պատուեալ , չքնաղածոյն շուք անպարտելի , 8
առատանք ձգողականոյն խաղեալ , 9 անսպառն զխոյն
զետակի խոնարհեալ , 10 աղբիւրացողին պղպջան կարե-
ցեալ , 11 աղբիւրութիւն խորոխին լուծու , 12 լուծք լու-
սաւորք անմոլոյն կցորդութեան բաժանեալն , 13 սանիք
ազգայոյն հեռոց զարդարեալն , 14 լառն հիմնին հաստա-
տունի բնակիչեալ , 15 դեկայն կառուցմանց անդրէն սու-
զան , շուայն յարմարութիւնք պահպանեալն , 16 այնու-
փոյտին պատուապարան խակոյն բեկու , 17 կապարանք զլու-
տին հաստատածոյ յօշատեալ , 18 զօղք անփոփոխն ծո-
ցոյն կաղմածոյ անարգեալն , 19 խեցք շրթանցն եղերոյ
խախտեալ սուեալ , 20 պարպարձոնք բազմախմբոյն ան-
կեալ բարձու , 21 վանդակապատին փշրեցութիւն յա-
տակեալ , 22 զարհուրելին հանգստարանն չքնթեալ , 23
մածմանք տախտակաշարք 'ի միաբանութենէ միմեանց
անջատեալն , 24 հեղձուք պտղմանն բեւեռացն քարշեալն 25
Արգասիք իւրն յեշատակարան ողբոյ ինձ նմանեալ ։
Նուաղիցն հանգէպ նուէրն զեղերեալ ողբոյ , ձեռն 'ի
ծնօտի եդեալ՝ արտասուաց գետս իջուցանել ։ Աշխարհ
տեսու մնացուածոյն՝ 'ի ծայրից ծփանաց աղէկից ծո-
վուն , իբր խաղխաղեալ բաժնում , ողորմագին թախծու-
նոք հեծէ ։ Սակս զի թէ զբարինուագեան երկնաւո-
րացն զօրօք յանխարհի ծովս առ 'ի զնորոգեալս իմ
տարան խնամոյ զգուշութեանս տայ աշխարհէ բանիւ
յարմարութիւն , ոչ ինչ փոխեցաւ 'ի սատակութենէ ։
Քանզի արդարեւ եղեւ բարեգութն տէր յատակ մարդ-
կութեա զթագաւորել ազգաակերյն , եղեւ առ 'նմին եւ զԱշխա-
տաւէ՛ մնջեալ եւ զՆուազու մնջեցեալ , յորոյ երկու ցն
կորեաւ վտանգութիւն յորինակ նմանութեան արտա-
սուեալ նոյն ։ Իսկ միւսն հանեալ յատակս անդընդոյ՝ ա-
ռասուն յաւոյն ձեռանք անողին յանքութն սպառե-
բեալ խաղաղութիւն ։

Դ. Նոյ 26 իսկ թէ յաւելից հայել զաստնախորդու-
կեղ սապատակ մարմնոյս խոյ նորոգեալ ։ Իսկ սոյնօր

տեսանել զփշրեալս նաւ ողբալի հոգւոյս ողջացեալ։ Իցէ՞ արդեօք տեսանել զբաժանեցեալս միջոցաւ մեծաւ՝ վերստին կցեալ։ Իցէ՞ արդեօք տեսանել զյոգնաթախիծ սիրտ փշտացելոյս բերկրեցեալ։ Ա՞րդ իցէ այն ունել նայել զյաւէտ[27] խաթարեալ կերպարան բնութեանս կրկին հանդերձեալ։ Իցէ՞ արդեօք թէ տեսից զքակ-տեալ տաղաւար թշուառացելումս միւսանգամ կանգ-նեցեալ։ Իցէ՞ արդեօք յաւալի նայել զապարամբրժեալ գերիս ազատեալ։ Ապաքէն գուցէ՞ այն ունել զանկեալս 'ի շնորհէդ լուսոյ դարձեալ կազդուրեալ։ Արդեօք տե-սից զվայելչութիւն ընտանիդ քո պայծառութեան յո-ղորմութիւն ինձ երևեցեալ։ Եթէ տեսից երբէք զա-մենատխուր կերպարան հոգւոյս ինձ ժպտեցեալ։ Ար-դեօք լուայց ընդ ձայնի զուժկս աւետեաց համբաւ ինձ տարբեցեալ։ Արդեօք տեսից զխաւարակործան լուսա-ցեալս անօթ կազմեցեալ։ Իցէ՞ թէ տեսցեն[28] պատու-հանք աչացս խնամոց զմուրհակ պարտուցս ինձ պա-տառեալ։ Եթէ յայտնեսցի[29] օրն իմ՝ անձկութեան շնորհին քաւութեան բարւոք ինձ ծագեալ։ Արդեօք մտից 'ի խրախճանութիւն խորանին լուսոյ քո առաջ-նորդեալ։ Իցէ՞ թէ կենդանի լինիցին ոսկերքս, ըստ Ե-զեկիէլի, ցամաքեալքս 'ի կենդանութեանց եկաւորու-թեամբ ազդողական շնչոյս զօրացեալ։ Իցէ՞ թէ յաւե-լից հայել 'ի տաճար սուրբ քո, աղաղակաւն մարգա-րէին 'ի փորոյ կիտին, հերքեալս 'ի լուսոյ որ կամ ա-ռաջի քո անմոռեցեալ։ Եթէ լինիցի խաւարամանուղս մթացելոց ծագման առաւօտ։ Եթէ հասցէ՞ տեսանել զտագնապեալս մշտատուոյց յեղանակս գարնանն մօտ։ Եթէ տեսից զցօղ անձրևոյն[30] կանանչացուցանողն հո-գւոյ ինձ արօտ։ Եթէ[31] իցէ՞ արդեօք նկատել զպատա-նարեկ հերքելի ոչխարս վերստին կամաց զթութեան քո հօտ։

Դ. Այլ քանզի ըստ բանին Յոբայ շուրջ պատեալ են չարեացն հնարք ընդ որ ոչ կարացից անցանել. իսկ եթէ լոյս ողորմութեան բարերար կամաց քոց ցուցցի, զթութեան քոյ դուռն բացցի, ճառագայթ փառաց քոց ծաւալեսցի, խնամք ձեռին քոյ յայտնեսցի, արե-գակնանդ կենաց որ տարածեսցի, առաւօտից ընձայլի տե-սիլ մերկասցի, առատութիւն քաղցրութեան քոյ աղ-

բերասցի, վասն արարչիդ կողից հոսեսցի, ծորումն անապակ [illegible] քոյ հեղցի, ծագումն աւետեաց շնորհի քոյ երևեսցի, պարգևելիդ քո ծառ ծաղկեսցի, [32] մատունք օրհնեալ մարմնոյդ բաշխեսցի, համառօտեալն անձկալութիւն հանդիպեսցի, հաստատեալ ձայն ողջունի քոյ տէր լուիցի, հեռացեալց խաղաղութիւն մերձեսցի. [33] յայսմիկ յաւէտ սրբին սահմանս երանականս հաւատ ընկալեալ յուսոյ հաստատնոյ, ապաւինեալ 'ի հոգիդ քո սուրբ, որ ընդ հօր քում պաշտի ձայնիւ քաղցրութեան ընդ քեզ փառաւորեալ 'ի լոյս անմատոյց, որով կեանք և երանութիւն քաւութեամբ հանդերձ ընծայեալ ինձ մեղապարտիս. յաւանդ անկորուստ ընդ իս պահելով առհաւատչեայ ճշմարիտ յիշատակի, 'ի ձիր անեղծութեան անուամբք անճառելեաւ ահաւորութեան հզօրի որոյ միայնոյ և անքննելի տէրութե երրեակ անձնաւորութեանդ՝ որ եսդ յինքութե յէութեան և յարակայութիւն բարձրութեան քաղցրութեամբ ողորմութեամբ և մարդասիրութեամբ պակեալ հանդերձեալ և թագաւորեալ: Այո առ ամենեսին ամենայնիւ յամենայնի կարող ես, գթած. և քեզ վայել է փառք յայսմ յաւիտենի և 'ի հանդերձեալ մշտնջենաւորութիւն յայտնութեան աւուրն մեծի, յաւիտեանս. ամէն:

---

1 ՄԻ ՂԹ–Հ: Որովհետև թշուառութիւնք հոգւոյս մի քան զմի առաւելեալք չարչարեն զիս, ինձ զեղանակ վիճակս նորա 'Ի [illegible], ըստ մասին ևեթ, կամ առաւել ինչ ծանուցին վերոյասացեալ բանիւք. վասն այսորիկ փոխելով միայն զձև բանին՝ այլ ոչ զողբական ձայնս, կամ զեղանակ սորին, [illegible]. այսինքն յայն զարձուցից զբանս առաւել, զի [illegible], և այլն: Ըստ այսմ 3 օրինակք առանց զլխագրի զնեն զայս հատուած, իբր յառաջնոյեալ բանին յարելով: Կայ և այլ տարբերութիւն. զի փոխանակ 'Ի [illegible], 3 օրինակք զնեն, 'Ի [illegible]. որպէս թէ նախ քան զայս վերաձևաւորեալքն: այլ որ. [illegible]: Ի սկզբան աղօթիցս [illegible] առելն՝ նշանակէ զմասնիկ հոգւոյն ընդ բանութիւ մեղաց, տխրելց և զառն խղճմտութե զիւոյ: Այլ և չարագրութիւն պարզելի է. 'ի վերայ կամ յաղագս այսպիսի գերութեան՝ որք մի զմիով երևեալս առնեն, կամ մի քան զմի զօրանան, [illegible]. այսինքն զորոյ զչարչարանս պատահմանցն փոքու ինձ ծանուցին նախաձևաւեալ բանք, [illegible], և այլն. և ըստ այսմ [illegible] միայ թարգմանութ:
2 [illegible]: 4 օրին. [illegible]: Յայս զլուխ զկնունս առ- [illegible]

3 [illegible] ։ Անձնորդէ 'ի բանն ( Ն · 30 · ) « Աղաղակ արտաքէ փառն նոյս տէր յաւուր յայնմիկ երբև զձայն ծովու ամբոխելոյ ալեաց » · ուր 'ի նախընթացին խօսի զհարուածոց ամէն խորայելի՝ առակելոյ յայգի փշաբեր (համար 25 · 26 ։) Եւ [illegible] առէ փառն բանին · « Վաղվաղակի արտաքս ընթացցին » և այլն ։ Իսկ 'ի [illegible], հայելով 'ի բանն, « Յարգս հեռաւորս, և ածցէ զնոսա 'ի ծագաց երկրի », և այլն ։ [illegible] զոր և իմասն հոգևոր խորտակման յարմարել՝ ոչ է ընդդէմ, կամ անպատշաճ ։ մի օրին · [illegible] այսինքն բարձրաձայն առել ։

4 [illegible] ։ Յորժամ 'ի մանկութէ, կամ 'ի ծագել բանաւորութեն՝ յառաջ քան զշարժել ախտից ընութէ, գնայի հանգարտութեամբ երբև զնաւ 'ի խաղաղ ծովի, [illegible] . սակաւ ինչ երկնեալ զժուարութէ կամ փորձանաց զգալով 'ի շարժել ցանկութէ, (որպէս զհողին՝ որ յառաջէ քան զակէկծութեն,) — [illegible] · զայս փոքր երկնեալ ունելով յաղագս սակաւ միջոցին՝ որ 'ի մէջ անախտ հանգարտութե մանկութեն, և 'ի մէջ պատերազմի ախտաւոր շարժմանցն · զի մանկութին սակաւ ժամանակս վայելէ յանխռովութեան ախտից · և երբև սկսանի ճանաչել զխրատումն նոցա և զանկարգութին, երկնեալ աշխատութեան ծնանի 'ի սիրտն, և խորշումն յածպաշտութենէ ։ Կամ, զայս երկնեալ կրելով 'ի վերայ սակաւ միջոցի զժուարութեն՝ որ 'ի մէջ աշխատութեան պատերազմին՝ և 'ի մէջ հանգստեան հոգւոյն · զի զժուարութի նուաճելոյ զախտս՝ 'ի սկզբանն է · և սակաւիկ մի կրթեալ, հանգչի հոգին 'ի բռնութենէ ախտից, և զխաղաղ առաքինութիւնն · որպէս և սուրբ վարդապետս առէ (մեկն · երգ · 308 · ) « Դառն է 'ի սկզբան առաքինութին, և յետոյ քաղցր » ։ Կամ, զայս երկնեալ ունելով յաղագս սակաւ միջոցի ժամանակին՝ որ 'ի մէջ աշխատութե աստի կենաց, և հանգստեան հանդերձելոյն ։ Արդ, առէ, յայսմ երկնելոյ զարհուրեալ, որպէս թէ յամօթայնի ձմեռն հասեալ իցէ, երբև ձիւնախառն հողմով, [illegible], հողմով որ յորուցանէ զերկրագործ ալիս խռովեալս · այսպէս շարժմունք ախտիցս խռովեցան և խորտակեցին զնաւ հոգւոյս մերոյ ։ [illegible] առէ՝ յորժամ ալիքն մի զկնի միոյ երեւս զեղանան · և [illegible], կամ զխաղխուղն առէ՝ որով ալիք հարկանեն զնաւն, և կամ զառ միմեանս զխաղումն նոյն իսկ ալեացն՝ յորժամ հակառակ հողմով փոթորկեալք, կամ յափն ծովու և 'ի ժայռս բաղխելով միմեանց ընդ առաջ եկանեն ։ Իսկ 'ի մարդն այսպիսի երկբայեան յուզմունք են փորձութիւք աշխարհի, մարմնոյ և սատանայի · կամ զոր առէ յովհաննէս (ա · Թղթ · բ · 16 ·) ցանկութի մարմնոյ, ցանկութի աչաց, և ամբարտաւանութի աստի կենաց ։ Նոյնպէսն, [illegible], և այլն, յերկս օրինակս այսպէս գնի · [illegible] ... [illegible] ։

Եւ ըստ այսմ ընթերցուածի այլպէս յարմարեն իմաստքն · այսինքն, մինչդեռ 'ի կեանս աշխարհի և կրօնաւորութեանս աներկիւղաբար և փառաց սրտիւ գնայի, թէպէտ կասկած ևեթ կրելով 'ի մահ ընդ ձախորդ պատահումն ինչ, երբև զի այնչափ փոքր է միջոցն ընդ աշխատութե և ընդ հանգիստ, մինչև թուէր ինձ թէ արդէն հասեալ իցեմ 'ի հանգիստն · աստի յայնչափ սակաւ միջոցի ոչ կարծէի հանդիպել վտանգաց ինչ, այլ վստահութբ գնայի · զոր օրինակ խաղաղիկ օդով որ մերձ իցէ 'ի նաւահանգիստ ։ Այլ արդ որպէս թէ ձմեռն յանկարծակի զարծեցի յամարանի, յուզումն ախտից ամբոխեաց զհանդարտութին հոգւոյս, և մատնեցայ 'ի վտանգս ։ [illegible], և այլն ։ Այս իմաստք առաւել ըստ կարգի երևին ։

5 [illegible]

6 [illegible]

7 [illegible]

8 [illegible]

9 [illegible]

10 [illegible]

11 [illegible]

12 [illegible]

13 [illegible]

14 [illegible]։ Յատակ նաւին ընկղմեցաւ, որ է հիմն և հաստատութիւն բոլոր շինուածոյն (նաւու թէքնէ։) Ըստ հոգևորին, զգայական ծանրութիւն և բաղձանքն՝ որք 'ի մարդն հիմն են բանական ծանրութեան և բաղձանաց, ընկղմեցան 'ի մարմնականս։

15 [illegible]։ Կապեալ ղեկին (տիւմէնին չէնպէր։) [illegible], այսինքն անիւէն կամ խակոյն ուղւոյն, ընկղմեցան. ուստի և [illegible], ուղղութիւն ընթացից նաւին խանգարեցաւ։ Ըստ հոգևորին, միտքն 'ի մարմնականս ընկղմեցաւ զհետ զգայութեանց. որով զնոյն մարդկային կենաց խոտորեցան յուղիղ ծանապարհէն։

16 [illegible]։ Ոզնափայտ է հաստ գերանն յատակի նաւուն՝ երկայնեալ 'ի խելաց մինչև 'ի գլուխն, յոր ամփոփին կողք նաւին (նաւի օմուրղա։) խակ [illegible]՝ կամ զնոյն խակ զօդափայտն առէ, երր զի ամրութիւն է կողից և տախտակաց յատակին, և կամ զհաստ բևեռն՝ որովք ոզնափայտն ամփոփի ընդ այլոյն։ Ըստ հոգևորին, զանկական մասն՝ որ կայ 'ի միջնոյն մարդոյ, խորտակեցաւ յանպատշաճ զանկութիւնս։

17 [illegible]։ Կողքն՝ որք կապեն զտախտակս յատակի նաւուն (զապալուղա։) [illegible], քակեցան։ Ըստ հոգևորին, ջիլք և կողք՝ որք կապեն և պատեն զկուրծս և զթիկունս մարդոյ, յանչափ զանկութենէն թուլացան, և անպիտանացան առ բարի զանկութիւնս։

18 [illegible]։ Միջն, կամ ներքին զատարկութիւն նաւին (ամպար։) յորում ամփոփին բեռինք, անփոխան եղև քայքայմամբ կողից և տախտակաց։ [illegible]։ այլ օրին. [illegible]։ Ըստ հոգևորին, ընդունակութիւն զանկականին առ հոգևոր շարժմունս կամ իղձս՝ կորեաւ. զի շնչաւոր մարդ ոչ ընդունի զհոգւոյն այ (Ա. Կորն. Բ. 14։)

19 [illegible]։ Յեռին կողմն նաւին՝ ուր շրթունքն եղերին (խշին քիւփիշտէնէրը։) խախտեալ 'ի բաց անկաւ։ Ըստ հոգևորին, բանք ածոյինք՝ որք են շնորհ շրթանց, պակասեցան 'ի մտաց։

20 [illegible]։ Զարդարուն նաւարանք՝ որք 'ի խելաց կողմն շինին (օթուրախի ակղուանք։) կամ մենաւանդ, վրանաձև կամ կամարայարկ հովանոցք արարեալ 'ի կառաց կամ 'ի տախտակէ 'ի խելս նաւին՝ հովանի առնել յարևէ և յանձրևաց. որպէս երևի 'ի ցլականս։ Ըստ հոգևորին, խաղաղութիւն հոգւոյն, կամ մխիթարութիւն 'ի մեղաց՝ բարձաւ։

21 [illegible]։ Վանդակաւէն յօրինուածոյն զեղեցկութիւն՝ որ յարդարին երես խելացն (կամ զամարային,) [illegible], եզ 'ի յատակ ծովու, կամ հարթեալ հաւասարեցաւ։ Ըստ հոգևորին, զարդք առաքինութեանց կամ արհեստից՝ 'ի բանական մասին անչքացան և անպատուեղ եղեն։

22 [illegible]։ Փառաւոր նաւարանն՝ յոր հանգչի նաւապետն, կամ իշխան նաւուց (թահտարավան։) Ըստ հոգևորին, խելապատակն՝ յոր էր յաթոռ տասնեւլապէս հանգչի հոգին, չփոթեցաւ պէսպէս ցնորիւք երևակայութեան։

23 [illegible]։ Տախտակամած նաւին (կէօվէրթէ.) 'ի կապակցութէ միմեանց բաժանեցան։ Ըստ հոգևորին, 'ի խառնութենէ կամ 'ի խանգարմանէ երևակայութե՛ կարգաւոր խորհուրդք մտաց, և փոխադարձ համաձայնութիւն ներգործութեանց կամաց պառակտեցան. մինչև զոր միտքն բարի ծանուցէ, կամքն չհաճի. և ընդ որ կամքն հաճի, երևակայութիւն խափանէ. և այնպէս պատերազմամբք և կռիւք են 'ի մարդն (Յակոբ. Դ. 1։)

24 [illegible]։ Բևեռք՝ որք ամրացուցին զտախտակս [illegible],

եղեն 'ի սեպհական խորհրդոյ։ Ըստ հոգեորին, երկնային ոգւոց, արդարութեան որդւոց, յիշատակ մահու, մատնութեան անօրէնութեան աշխարհի, և այլն, որք պահեն անձին զմիտս և զկեանս 'ի բարի մտածութեան խորհրդոց, բարձեալ 'ի սրտէ։ Եւ փոխ այսր ամենայնի թշուառութեանց

25 [illegible]։ Համեմատութիւն գործոյն՝ որ 'ի խորտակման նաւին և հոգւոյս, յիշատակարան ողբոց ինձ եղև։ Եւ զոր օրինակ [illegible], նաւավարն առաջի խորտակելոյ նաւուն կայով, և գձեռն 'ի ծնօտին դնելով ողբոց զանազանս զերթալոյ նաւին, մանաւանդ 'ի տեսանելն զխառնորդս նաւին՝ որք 'ի ծփման ալեաց ծովուն խորն զխաղ խաղեալ մարդ որ սպառեալին ազատելի ձայնիւ, այսպէս ոչինչ օտար է 'ի շփոթութենէ՝ համարել թէ կորստեան և ուղղիչ հոգւոյս քո համբերել հրեշտակաց ողբոց զմեղաց խորտակելն հոգւոյս։ Որպէս և եղոյ [illegible], յորինակ մարդկային բնութեան, [illegible], զայսպիսս ։ զոր ասացեալ առէ, կամ մեղ, ըստ որում մարդ եր, և կամ քեզ, ըստ որում հրեշտ՝ և սիրելութեան կալով բնաւին։ Եւ [illegible] մաանեց։ այս չէր յայտնապէս 'ի գիրս։ այլ կամ խնամոց զայլն 'ի մատնութեան գեշերին (եբրայ. Ն. 7.) և կամ զաւազելն ասեան առէ. « Վայ յոյր ձեռն որդի մարդոյ մատնեսցի » (մատ. ին. 24։) Սակայն 'ի բոլորն քոց ոչինչ չաշխեցան երաստալեմ և յաւզաս խորն զնաւեցեալ բոլորովին։ Իսկ զայսպիսս համեալ [illegible], մարմնովն 'ի գերեզմանն, և հոգւովն յարգելանս նախահարցն, [illegible] քերցն, [illegible], բանտապետն քոյ, [illegible], եհան արտաքս յանդուստ խաւարութեան կենդանութեամբն։

26 [illegible]։ Արգելոյ անսից նաւորդեալ զմարմինս, որ խորտակեցան ըստ զգայական մասին։ [illegible] ողջացեալ զհոգիս, որ փշրեցան ըստ բանական մասին։ [illegible] վերստին միաւորեալ ընդ նոյ զհոգիս՝ որ բաժանեցան կորստեամբ գերբնական ձրիցն։

27 [illegible]։ Եղծեալ, աւերեալ։

28 [redacted]։ [illegible], խմանալի աչաց մասցս։ Եւ եթէ ըղմարմնոյ աչս խմացուք, կոչին աչք [illegible], այսինքն խմաստութեան կամ հմտութեան, զի աչք զբաղում խրոց առանուք ակղէկութիւն։

29 [illegible]։ Արգելոյ որ նեղութեան խնդ, այսինքն մահուան, յայտնեսցի ինձ որ [illegible]։

30 [illegible]։ Որ կանաչացուցանէ ինձ զարօտ հոգւոյ։ Կամ, արգելոյ անսից զկանաչացուցիչ հոգւոյ զանձրևն՝ ինձ 'ի յարօտ. այսինքն 'ի Տնչակումն, կամ յարբումն։

31 [illegible], 2 որին։ [illegible]։ Մինչ ոչ կարելի, զի եւ նմանեալս զազանաբեկ աշխարհի՝ որ ըստ օրինաց պիղծ է և անպատասպանելի. վերստին որբեալ խառնեցից 'ի հօտն քոյ, 'ի դասս հանձնելի պատսպարաց։

32 [illegible]։ Եթէ այնչափ որբեալ մարդիցիմ, մինչև արժանաւոր լինել յանդգնելութեան սրբոց խորհրդոյ։ Եթէ [illegible], պակասեալ կամ հասեալ անձնկալութեան հանդիպեսցի։ [illegible], լսեալ կամ զազարեալ ողջոյնս խաղաղութեան։

33 [illegible]։ Սկսեալ 'ի բանէն՝ [illegible], են, մինչև ցվերջ գլխոյս կարգեալ է պաշտպանութիւն բանիցն։ Եթէ, առէ, ըստ աղօթութեան քո ցուցցի, եթէ զուած զթութեան քո բացցի, և այլն, [illegible], այսպիսիք աստուածապէս կամ միշտ երանելի վկանեա հաւատ ընկալեալ հաստատուն յուսով, և փառաւորեալ 'ի քո փառակից հոգւոյ, ոչ միայն քաւութեան զանից, այլ և կեանք և երանութիւն։ [illegible]

ամենօրհնեալ : զայս հաստատ և փառաւորութի իբր անկարօտ ասանց առ իս պահելով, ամենակարողդ, ապաւինեալ կամ զգուշական ձեռամբս յիշատակի բարերարութե քո, 'ի յիշատակէն (?), իբր պարգև անմահութեանն՝ որ լինելոց է անձառելի անուանիւ կամ զօրութեամբ : Որ և փառաւորեալ ես 'ի բուն էութեանդ, և 'ի միանգամայն բարձրութե. բայց և 'ի մերս մեզ վայել են քեզ փառք յայսմ յաւիտենի աշխարհիս, այլ և 'ի համդերձեալ միանգամայնութի յաւիտեանն (?), այսինքն 'ի համդերձեալ մեծի աւուրն յետնում որում յայտնելոց ես, և այն որ է միանգամայն, զի ոչ ունի երեկոյ և կամ գիշեր :

## ԲԱՆ ԲՍԱՆԵՐՈՐԴ՛ ՎԵՑԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի ըստ նոյն ոճերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ [1] ստուգապէս և իրաւարար, ընդ որս որք ըստ ձայնից կողկողանացն և զգանիցն յարմարութեան համդերձեն, 'ի նոյն գիր բերեալ զաւարտմունս տաղիցն, որովք տառեալ սաստիկ մորմոքեալ ձկլեցուցանէն զաղէտս կարեացն սրտին ըղձից առ արտասուացն բղխմունս. ուստի և բաղձեալ իմ 'ի գլուխս պարունակելից զտառս այնր երախանաց՝ որք զլալեացն յեղանակեն բանաստեղծութիւն, և ես ընդ նորին նոյին հեծութեամբ աւաղական ձայնարկութե՛ զանձինս տարածանեմ զվշտակրութիւն, որ [2] ոչ ընդունին մեռեալ աշխարհի, և ոչ խոկալես կենդանի ոք, ոչ ջերմ սոսկ և ոչ ցուրտ յատուկ, ըստ առակի աւետարանչին գրեալ 'ի յայտնութեանն. երկցս առելի երրեակ մեղութե և ամենասաստ արարչութեանն : Եւ այս են պատճանեալ [3] թախծականացն կերպարանութիք, կրկին ողորմելի այսու երևեցեալ՝ որ 'ի մի գիծ սահմանեալ կացուցանեն զթշուառութեանցն զօրինակ, այսպէս կցորդութեամբ շաղկապեալ :

Բ. Պարտուցն [4] ժխտեալ տաղանդացն՝ ձեռամբ մեծաւ 'ի տուժի, ես այլեկար մնացեալ անարժան գործոյքս յիրաւի, վասնիչ արքունի գանձուց [5] կրկնապատ և անթափելի, պատասխանատու մեծին ընծանեալ սն-

հրաժարելի, բեւր քանքարոյ խնդիր՝ ես չունիմ [6] կշռա-
մի ունկի։ Ներարեխոս կապեալ 'ի պահեստ դառն որ-
գելանի, հեծումն և վաստակ ցաւոց ճաշակեալ յան-
նշոյլ բանտի, անապաւէն տանջեալ անթոշակ կամ օ-
ղորմելի. [7] այլ յեղանակ ինձ ողբականաց աստուստ
կնքեցի, փոխատրեցի սովին բարբառով կոծ կոծելի,
կարգադրեցի շրջաբերութեամբ 'ի նոյն պայմանի, [8]
անհատական թիւ խորհրդական երկեակ տասնեկի։
Աղքատութեանն հնոց յամենուստ մասանց մրրկի, ան-
պատսպար թշուառ [9] վտանգեալ սրտիւ 'ի գրաւի, տա-
րակուսեալ հոգւով ապաշնորհ այր 'ի վրիպակի, [10] ան-
խնամելի հայցմամբ դատաստանն յինէն պահանջի։ Ե-
ղաց և մահու զինուք [11] զգայարան զաղմնեացս խոյի,
անփրկելի մատնեալ բռնութեան չարեացս գերի, սուր
սուսերաւ սաստից գոյութիւն ընութեանս յօշատի։
Յիշատակաւ բեմին [12] ատեանին 'ի դատաստանի, ան-
ծագելի մռայլ չարատես աչաց երևի, անձեռնկալ կա-
պեալ եղկելիս 'ի տարակուսի, ահարկութիւն դիմաց
պատկերի վերնոյն տեսանի։ Յոյժ անարև և անվերար-
կու 'ի տարտարոսի, անապաւէն մոլար մոլորեալ 'ի
հուր գեհենի, անյայտնելի կորուստ կործանեալ 'ի մե-
ղաց վհի։ Ահա զոր ունիմ [13] արծաթ անպիտան ոչ եր-
բեք յարգի, և ոչ ընդունի և կամ համբարի 'ի գանձ
տէրունի, հայցուած պղտոր և ձեռն անմաքուր անընդու-
նելի։ Այլ բեկեալ սրտիւ մասանց տատանմամբ յոյս
առեալ դարձի, [14] զդէմս 'ի յերկիր եդեալ պաղատիմ
մօրըդ Որդի, բարեխօսեա մաղթեա քաւութիւն ինձ
մեղաւորի՝ դու զօրաւոր [15] փրկանակ կենաց խակուհի
երկնի, [16] քեզ օրհնութիւնք ձայնից և բուրմունք խըն-
կոց 'ի յերկրի, և անուշից խղոց մատուցումն յամե-
նայնի։

Գ. Արդ յաճացեալ ողբոցս հիւսուած այլ մասն յա-
ւելի, բարերարին շնորհաց արտասուաց պտուղ մատու-
ցի. զկորստեան խորս չափելով զորքանն երբէք ոչ գտի, [17]
մտաւորօք բանիւք 'ի հանդէս նորին ջանացի, զմտացս
արագեալ զթևս [18] յերևոյթ իրին ոչ հասի, զուշին
պարտութիւն յանվթարելեացն բաժակ բարկութեան
'ի ձեռն իմ առի, զտարտամութիւն տարակուսանաց
իբր ճաշակումն մահու արբի. և այժմ զյանցիցն յա-

ձախողութիւն ողորմելի ձայնիւ յերգ արկի ։ Աներեւոյթ կրակարան տապոյ բորբոքմամբ մեծաւ անզովանալի , անտեսական իմն բրայս հալոցաց սաստիկ եռացմամբ անշիջանելի , [19] սլաքս նետից պատկանեալ գեղովք 'ի շտեմարան խորութեան սրտի , խիթք ցաւոց խոցոտմանն մահու 'ի գնացս երակաց գոյութեան լերդի , կիրք երկանց [20] անճարակ ձեռաց 'ի պատուած աղեացս անելանելի . [21] անզօրելի դեղոց ջերմութիւն 'ի յերիկամանց մասունս երկակի , անհնարաւոր դառնութիւն մաղձի [22] 'ի նախադուռն խմոյս կոկորդի ։ Աւաղս ձայնից լքուցանողաց 'ի փողս չնչոյս խոշորս հնչի , [23] բազմահատուած էութիւն ընութեանս ներհակք միմեանց 'ի պատերազմի , երկչոտութեամբ կարծեաց վարանեալ ամենայնիւ կայ 'ի վտանգի . հարազատաց դաւաճանութիւն անհաշտելի 'ի կառուածի , ոչ մեռեալ և ոչ կենդանի թաղեալ 'ի մեղաց դարշութեան տղմի , կասկածաւոր պատժապարտութիւն վերակնարկելով քեզ բարերարի , յանակնկալս կենաց վհէ արտաբերել 'ի լոյս անձկալի ։

Դ. Սոյն ինքն [24] որ զայս բան տպաւորեաց՝ ընդ երջանկայըն պատկերացն , ակնարկելով քո ողորմութեան անպարտիցըն հաղորդեսցի , վասն զենմանն ոյ բանիդ՝ բարեգործեալ քև կենդանասցի . [25] օրհնութիւն գովեալ քո շրթանց 'ի գլուխ բաշխողի այսր մատենի , հաստատեսցի ըղձականութիւն տողամնեան բանիս առակի , նկարագրեա հոգւով քո բարձրեալ 'ի նորոգումն աներծանելի . զի դու միայն ես երկայնամիտ ներող , քեզ փառըք յաւիտեանս . ամէն ։

---

1 Սփոփողէս Ն Իրոսաբոր ։ Արժանաւորս և յիրաւի՝ ընդ այնոսիկ որք բառ ողբական ձայնից կարգեն և զյարմարումն կամ զյօրինուած բանին , 'ի նոյն գիր դարձուցանելով [illegible] , զմերջս [illegible] (մի օրին . [illegible] , որ վերապակ թուի .) որով ատառել մորմոքիչ լինին բանքն , և յարատուս շարժեն , [illegible] և իմ 'ի գլուխ այնպիսի դասու բոլականաց , և այլն ։ Այսպէս բայս [illegible] յարել է ընդ յարաբերականին՝ [illegible] . և առեալ՝ [illegible] թարմատար է . այնպէս յաջորդն , [illegible] , բացայայտիչ կրկնութի է ։ [illegible] ժողովոյ դատուն , [illegible] , այնր խմբի բոլականաց ։ այլ օրինակ գնէ , [illegible] . այսինքն պարտաւոր խմբից , որք պար կամ դաս կոչեն ։ Եւ զկնի , [illegible] . 3 օրին . [illegible] ։

Այսու սկսուածով բացայայտէ սուրբ վարդապետս զհանգամանս

և զգիտութիւն ոտքերգակ կամ եղերական բանաստեղծութեան. իբր զի ոչ միայն եղանակ ձայնին ոտքերգին լինելոյ է, այլ և քերթուածք ոտանաւորին բանիցն կազմին ոտանաւոր չափով և նման յանգիւ. որպէս զի կրկնութեամբ նոյն ձայնի ամենայն ոտանին տաւեղ զերգակցին: Վասն զի բնական յօժարութիւն է մարդոյ՝ յամենայն կիրս ուրախականս կամ 'ի տրտմականս՝ միշտ 'ի նոյն գործածութենէ զխօսն. և որպէս տաղին առ, ուր ցաւս կրէ ոք, անդր արկանէ զձեռն:

2 [illegible]: Թէպէտ միրտութեամբ և ուխտիւ կրօնաւորութեան և քաղաքայութեան մեռեալ են աշխարհի, բայց սրտիւ և գործովք վարին ըստ ցանկութեան աշխարհի. ասափ և ոչ [illegible], որ զտեղոս և զգործ խնդրէ: Ու [illegible]. ոչ կատարելով ջերմ և եռալեալ յանձ, [illegible], զուտ ցրտացեալ, կամ ստապացեալ 'ի հաւատոց և 'ի կրօնաւորութենէ, այլ գաղջ (ըստ յայտնութեան. գ. 15. 16.) վասն որոյ [illegible] են, այսինքն յայժ տաղելի և զզուելի՝ արժանի փախչելոյ: Հին լուծ. մեկնել՝ եկեղս, այսինքն հագուստս, մարմնոյս, մտքս:

3 [illegible]: այլ որին. [illegible]: Տրամական բանիցն կազմութիւն. [illegible]. այլ որին. [illegible]: կրկնակի կամ տաւեղ ող բաղին լինելով այսու, [illegible] 'ի 4 [illegible]. 'ի մի տառ ստորանէն զձև ոտից թէ չափաւորութեանն: Յաղագս չափաւորականաց ոտից ծանիր, զի բաղմադակին է նոյնոյանց, ստորաբերեալ 'ի տառս [illegible]. բայց խոսրադանչիւր անդամն կամ տողն ոչ է զուգաւորեալ. զի յերկրորդ հատուածն: [illegible]. ամենայն 'ի 14, և այլք 'ի 15 վանկից բաղկանան. յերրորդ հատուածն: [illegible]. ամենայն բաղկանան 'ի 14 վանկից, և բաղումք 'ի 19, կամ 18, կամ 20 վանկից: Իսկ 'ի չորրորդ հատուածն: [illegible], ամենեքին բաղկանան 'ի 18 վանկից:

4 [illegible]: Զայսպիսի տաղանդաց չնորհաց ուրանալով, [illegible], մեծատ տաղնապաւ և փութացանաց պարապիլ տաւեղ: 3 որին. [illegible] 'ի [illegible]: որպէս թէ՝ զայսպիսի տաղանդաց ժխտելով միայն ծառայն՝ նա մեծաւ տաղնապաւ 'ի տուժի մնաց. իսկ [illegible], նաև անարժան գործովք վատնիչ գանձուն, և այլն:

5 [illegible]: Կրկին գատատաւանի պարտաւոր. մի՝ վասն չնաշհեցուցանելոյ զզանձն տէրունի. և միւս՝ վասն կորուսանելոյս, կամ զի առ պիտանիս զայս առ նեղոցն նոր, և անտեղիս առ պարապս եղբօրն: [illegible], անդերծանելի 'ի ձեռն ջատագովութեան, կամ միջնորդաւ, կամ փոխելով:

6 [illegible]: Բառս ունելի ըստ հին լուծ. կարծիւր սեռականն [illegible] կամ [illegible] բառին, այսինքն մեկեղ (յարգի մանրուք:) Բայց նորա սեռականն լինի [illegible], և զի ստատեր բանն է 'ի վերայ չափոյ, ուստի ուղիղ եա խնանի ստա յունական բառն՝ [illegible], կամ [illegible], որ է ծանրութիւն 8 կամ 12 տրամից. և տաւեղ կամի. յինէն լինի ստահանջումն [illegible], որ առնէ բաղում հաղարաւոր հօխայս. իսկ եա չունիմ զանէ չափ մի 8 կամ 12 տրամ փողոյ առ 'ի վճարել: Յայլ աղեկալ էր [illegible]. որպէս և յաջորդն, [illegible]. բայց ըստ լուս. որինակաց եղայք. [illegible], [illegible]:

7 [illegible]: Ամենք ըստ հին լուծ. զայն իբրև ածական անուն խնայեալ, մեկնեն՝ ստորին կամ զանազան եղանակ. կամ թէ այս ողբական ձև ստորին է յայլ աղօթից: Բայց լուս. եա խնանի իբրև չողկաց, որպէս թէ տաւել. եա յանձնչեալ բանտի կամ անսովորական և անպաչար, այլ միայն յեղանակ լուսականնոց խնձ մնոյ տաւեն:

8 ԱՆՀԱՓԱՅԼ ԲԻՒ · անհատանելի կամ անբաժանելի թիւ · զոր ոմանք խմբեն 'ի վերայ վանկից իւրաքանչիւր տողի · երբ թէ 13 վանկ զուգել, ձախտս թիւ է, որ չբաժանի 'ի հաւասար մասունս : Այլք խմբեն ըստ հին ըծ · զհաւասարութէ տողիցն, համարելով թէ իւրաքանչիւր տողք միաչափ են 'ի վանկն և 'ի հեգն, և ոչ հատանի առն 'ի տանէ : Բայց և ոչ մի 'ի մեկնութեանցդ ունի զանելի, զի անհաւասար են տողքն՝ ըստ ասացելումն 'ի ըծ · 3 Ապա այլազգ իմանալի է · եթէ զյաջորդ բառն ԵՐԻՄԱՑ ՓԱՆԷԻՑ, իմացուք՝ երկոտասան, որ այլք իմանան, և մեկնեն 'ի վերայ երկոտասան տողիցն՝ սկսեալ 'ի ԴՈՐՓԱՆՅՆ ծըիՓԷՈՒ տանէն մինչև ցայս տառնիկոյ տունս, ըստ այսմ երկոտասան թիւն առի ԱՆՀԱՓԱՅԼ, այսինքն անհատանելի կամ անպակասելի · երբ զի խորհրդական զուգել այս թիւ, ած մէջս զպակասումն նորա ընդր և ամբողջ պահէր · որպէս փոխանակ յուդայի ընտրեաց զմատաթիա՝ 'ի լրումն երկոտասան առաքելոց · և 'ի լրումն երկոտասան ազգաց ժառանգութէ՝ յերկուս բաժանեաց զցեղն յովսեփայ (Ծննդ · խը · 5 : ի · օրէն · ըդ · 17 :) Սակայն հաստատս իմաստս բառիցն ԵՐԻՄԱՑ ՓԱՆԷԻՑ, իմանալի է՝ երկկին տառն, այսինքն քառն · և յայս տանէ զատան է, յոր ասացաւ ատանաւորն, և առի ԱՆՀԱՓԱՅԼ, զի մի անհատ ձայնաւոր գիր է · Ն ԲԻՒ ԽՈՐՀՐԴԱՅԼԻՆ · զի նշանակէ զքառն, որ յայսմ բանի խորհուրդ ունի · զի վերագոյն զառակ քանքարացն յիշեաց · եւ այն առակ 'ի զուկ · (Մթ · 13 ·) ատուածի հնարի գնի, և առի՝ թէ առաջնոյն եա տասն հնաս, և նա յարգելով զայն՝ չահեցաւ այլ եւ տասն · և եղև ընդ ամէնն քառն (անդ · 16 :) Արդ ասէր վարդապետս ծանուցանէ, թէ վասն այն զատանաւորս է գրել ատարաւելի, զի ցուցից զիս պատրաստոր քառն հնասուցն եւ · այսինքն բազմապատիկ շնորհացն՝ զորս ընկալայ յԱյ, այլ և նոյնն համեմատեալ բարեացն՝ զորս չահել կարող եի, և հեզգութիւ կարաւսի զաւեալն և զանդլխն : Զայս միա յայս տանէ ասելն յատաջադրն, ԽՈՐՓԱՂՐԷՇԻ ՆՐՋԱԲԷՐԱԲԵԱՄԻ 'Ի ՆԱՅՆ ԴԱՅՄԱՆԻ, այսինքն կարգեցի զատանաւորս դարձուցանելով 'ի նոյն կերպ ատարաւմն 'ի գիրն Է : յոր 'ի վերայ բերելով թէ ԱՆՀԱՓԱՅԼ ԲԻՒ, են, այս իմանալ · որ է անհատ թիւ նշանակէչ քառնի : Ոմանք իմանալով զայս 'ի վերայ տողից իւրաքանչիւր տան, այսպէս բացատրեն · կարգեցի զատանաւորս այնպիսի թուով, որ 'ի ներքոյ երկու տասին անհատանելի է 'ի հաւասար կէս : Այսպէս հատուածն ԴՈՐՓԱՆՅՆ ծըՓԷՈՒ մինչև յերկրորդ համարն ըստ մեծի մասին բաղկանայ 'ի 14 վանկից · որոյ կէս է 7 · որ 'ի ներքոյ տասին ոչ բաժանի 'ի հաւասար մասն : Իսկ յերրորդ համարէն մինչև 'ի վերջն բաղկանայ ըստ մեծի մասին 'ի 18 վանկից · որոյ կէս է 9, որ և 'ի ներքոյ տասին ոչ հատանի 'ի հաւասար կէս :

9 ՎՓԱՆԳԷԱՒ ՈՐՓԻ 'Ի ԳՐՈՅ : Որովհետև աղքատութի կամ չքաւորութի հագեար բարեաց՝ երբև հնոց բորբոքեալ այրէ զիս չարչարանօք, և պարտատէրն զբաւեալ ունի զայլ ամենայն ինչ զիմ փոխանակ պարտուց, աչօս վտանգեալ կամ սրտիւ 'ի հոգս անմխիթարս · զի եա թըշուառս անպատսպար՝ անձկեանս եմ զլխովին · չունիմ ուստեք յոյս զերծուցանելոյ զքլրատն : Իսա տառել տարակուսեալ եմ հոգւով, զի խմմ յանցմանց ԱԴԱՄԵԱՅՆ եմ ես պարտատէրն 'Ի ՀՐԷԴԱՅՑ, բազում սխալմանց :

10 ԱՆԽԱՄԻԼԻ ՀԱՅՑՄԱՄԲ : Անողորմ քննութբ · կամ պահանջմի յինէն զատատանն, որում չէր հնար հայցմանց կամ աղաչանաց :

11 ԶՓԱՅԼՈՒՆ ՓՈՂՓՆԷԱՅՍ : Սիրտս կամ հոգիս՝ որ զգայութիւս իմ ըղձայ · զինուք մեղացս և մահու, զատապարտութեան՝ խոցաւի :

12 ԱՒՓՈՓԻՆ 'Ի ՓՈՓՈՓՈՓԱՆԻ : Յիշատակաւ ահեղ ատենին տանէն իսկ,

կամ այժմն իբրև 'ի գաստառանի անկեալ խաւար երևի չարաչար ողբոյ, այսինքն պղտորեալ կամ խառնեալ աչացս․ որպէս աչք երկչոտաց 'ի մեծամեծ արհաւիրս տեսանեն ։

13 Արծաթ անգինն ։ Է բանն երեմ․ (Կ․ 30․) բարի գործք իմ զոր ունէի, սակ, նախ քան զմեղանչելն, և կամ զոր 'ի մէջ գոլով արարի փառաւորութիւն, ճգնութիւն, և այլն, իբրև սուտ արծաթ ոչ արժեն, և ոչ մնասեն 'ի գանձն իմ ։

14 Զգեստ 'ի ձեռին ։ Արտաքին երկրպագութեան մարմնոյ՝ կարէ ընծայիլ նաև սուտ ծառայ, որպէս թագաւորաց լինի, և նաճապետք բաղում անգամ առնելին այլ մարդոյ, կամ հրեշտակաց ։

15 Փոխանակ կենաց ։ Անօսուն կենացն շնորհաց և փառաց․ կամ զօրծի փրկութեան կենաց․ այսպիսի է սուրբ կոյսն ոչ միայն բարեխօսութեամբն, այլ և ծննդեամբ զփրկիչն և զկենարարն, և չարչարակցութեամբն արբանեկելով ընդ նմա 'ի գործ փրկութեան ։ Խոնարհի Էրիի․ խեղակէս կամ ճշմարիտ թագաւորի երկնից ։

16 Բնաւ օրհնութեան յանձին ։ Օրհնութիւնն բառ որում է խոստովանութեան և բարեբանութեան սկզբնապատճառին ամենայն բարեաց, է գործ կրօնի, սաստ աւելադէս իմ միայն վայելչական ։ Բայց բառ որում զովեստ գերազանցութեան աւուրք, կամ ընծայումն շնորհակալութեան, է գործ յարգանաց կամ երախտագիտութեան, և պատշաճի նաև ստեղծուածոյ, յորս սատակեալէս սուրբ ծնողին ։ Իսկ Բարձրեալ Խնկոց, և Խաղաղ հոտոյ, են աւելադէս գործք կրօնի և ծառայելութեան․ վասն որոյ սրբոյն յիշատակաւ՝ իմ միայն ընծայելն ։ Յետ յօրինաւորեան բանիցն՝ ասպաւինելն 'ի պարտանս առ սուրբ տիրամայրն՝ զայն յայտ առնէ թէ ամենայն անյուսից պաշտպան և հզօր խնամակալ նա միայն է ։ Սորին վասն և զ Զ բանն կազմելով մաղթանս առ նոյն տիրամայրն, խորհրդով սկսանի ։ Եւ արդ 'ի Տէրն Աստուածոյ յաղագս ..., և այլն ։

17 Մտադիւրաբեկ բանիւք ։ Հանճարոտ կամ սակաւ բանիւք, 'ի հանդէս, 'ի յայտնութիւն կամ 'ի ցուցումն կորուսեալս ջանացի ։

18 Ցնորական խօսք ։ Ի սնոտութեան կամ 'ի բուն ապաշխարութիւն իբրև ոչ հասի մտօքս․ վասն որոյ ... ..., զյադթիլ մտացս, յանկարծակի, յանպատկառելի և յանշափելի խորոցն մեղաց՝ առի խնձ նիւթ զայրացման ընդդէմ անձինս․ որպէս որ անտառակութեամբք առնէ զբաղում պարտս, յետոյ ընդ անձինն պատերազմի, տեսանելով զբաղմութիւն պարտուցն՝ զոր չկարէ վճարել ։

19 Ասոյն նշոյ ։ Վասն մեղաց իմոց՝ իբրև սուր երկաթք նետից, ... ..., այսինքն սաստիկ մխեալք կամ թեւնաւորք՝ թափանցեն 'ի սիրտ իմ ։

20 Անձառ ձեռաց ։ Անզգայութեանց բանութեան խիթք (խռովութիւնք) յաղթս իմ պայթոյնն սաստից եղանելոյ արտաքս ։

21 Անպէտէ ... ։ Անզգայութեանց կամ անյաղթելի 'ի դեղոց ։

22 Ի նախատանս ։ Ի զաւիթ կոկորդին, այսինքն 'ի բերանն, կամ 'ի քիմսն ։

23 Բաղձանաց ... ։ Եղութիւն մարմնոյս՝ որ 'ի ներհակ սաբերաց կազմեալ, և բոլոր բնութիւն՝ որ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ բաղկացեալ․ և ամենեքին հակառակամարտք, տարերքն ընդ միմեանս, և մարմինս ընդ հոգւոյս, այժմ երկիւղիւ մեղացս և գատապարտին՝ ... 'ի ... ․ առ հասարակ տագնապի մարմինս և հոգիս ։ ... ..., հարապատք գոլով միմեանց՝ զմիմեանս զասանեն․ և այժմ անհաշտելի են 'ի ..., 'ի կատարել զերեսրս զասն խռովութեամբ խղճի մտաց ։ ... ..., կնատկենդան կալով իմ 'ի զարշ

տղմի մեղաց, երկիւղալի պատժապարտութիւն՝ զոր ճանաչեմ և խոստովանիմ, առ քեզ բարերարդ ամբաստանեմ զանձն իմ, և պարտաւորիմ հանել 'ի լոյս ցանկալի 'ի ջէջ. 'ի գրոյս՝ որ անակնկալ է կենաց, յորում մնալով, յոյս կենդանութեան ոչ գոյ:

24 Որ զայս բան: Ի բերան աղօթողացն դնէ աղաչել վասն իւր: Կամ մարթ է ասել, թէ որովհետև ասէր վարդապետս 'ի յիշատակարանի անդ գործակից իւր առնէ զեղբայր իւր Յովհաննէս, գուցէ նա ինքն արար զայս յաւելուած՝ աղօթել վասն երանելի Նարեկացւոյն: Այսմ նման կայ և 'ի բանն ԻԸ. 4:

25 Օրհնութիւն գովեալ քո: Օրհնութիւն քո տէր հանգիցէ 'ի գլուխ բաշխողի, յօրինողի և ասողի խրատականչելոյ զբանս զգծման այսր մատենի. որով կատարեցի մաղթանք աղաչանական բանին (առակաց. ժա. 26.) « Օրհնութիւն տեառն 'ի գլուխ սփռողաց »:

## ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեանց վերընծայելոց՝ զգլուխ թուոցս յարմարեցի կական և հեծութիւն, հառաչանք կողկողագինք, դառնութեան լալումն և արտասուաց երգ, դարձեալ սկսայց զձայն սպաղատանացս խոստովանօրէն զգծականաբար զգաղտնածածուկն յայտնաբարբառ. զի անդրադարձութեամբ սկզբնամբքն և վերջաւորօքն բանիւք, միոյն համաձայնութիւն 'ի մի թախանձ նմին մաղթանաց հոգեկեցոյցն խոնարհութեան աստանօր եդից:

Բ. Մեղայ մեծիդ բարերարութեան՝ անարգս մեղայ, մեղայ ծագմանդ ճառագայթից՝ խաւարս մեղայ, մեղայ շնորհացդ անբաւ երախտեաց՝ արդարև մեղայ, մեղայ սիրոյդ վերնում գթութեան՝ յայտնապէս մեղայ, մեղայ ստացողիդ յոչէութենէ՝ ստուգապէս մեղայ, մեղայ գերունակ գոգոյդ գրգանաց՝ անբաւս մեղայ, մեղայ աննուաղ լուսոյդ փայլման՝ նենգողս մեղայ, մեղայ ճաշակման անճառ կենաց՝ բազումս մեղայ, մեղայ անհաս պարգևացդ ձրից՝ հանապազ մեղայ, մեղայ զօրեալ մարմնոյդ ոյժ՝ մահու չափ մեղայ,

մեղայ պաշտելի արեան արարչիդ՝ խոկալէս մեղայ ։ Ա-
հա արդարեւ օրհնեալ է հաստատուած բանի յուսադրա-
կան սրտի այսր մեղայի . սոյն ես պատուելի աւանդ , ան-
մեռաց պատուէր , [2] հայրենեայն տուր , նախահարցն օ-
րէն , համայնից թօշակ , [3] անհերքելի բան , զօրաւոր պա-
տասխանի , կենդանութեան կանոնք , ախորժելի վեր-
նոյն , սիրելի սրբոց , անխզելի կապ , հրաշալի բարբառ ,
անշրջելի պատճառ , բաղձալի աղերս , փափաքելի սե-
ղան , պատարագ հնչումն , անհնարից ճարակ , կարծրու-
թեան վանիչ , [4] ծածկապաշտից սահման , հեթանոսաց
գիրք , վաղնջուց կանոն , քրիստոնէից հարազատ , արար-
չութեանն յաղթող , [5] անջրպետ հզօր , խորոց ահաւոր , [6]
արուեստ բարձրութեան , խորութիւն անչափ , հիաց-
ման անսիլ , [7] խորհուրդ կնքեալ , ընդ որ չիք ումեք ան-
ցանել , եթէ ոչ անմերձենալի մնաց արտաքման զատ ծա-
նիցէ ։ Զայն բարեպատեհ հրաշափառական , որ ոչ յի-
շատակեցաւ [8] 'ի վերջին դատաւորիք դասուն լքելոյ . զու-
ցէ առ նմին խզեալ համառօտ զվրիժակն իրաւանց մա-
հուն հասելոյ . յորմէ ընտրութիւնն ապագործ եղեալ ,
զսահմանն յաւիտենական քակտեցէ ։ [9] Ո՜ արդ փա-
ռաց մեծութեան , որով նոյն ինքն ծածկութիւնն պա-
կեալ բարգաւաճի ։ Քանզի մի՛ որ գիտեալ կալու զեղ-
ջերաց սեղանոյ այսր սրբութեան , և ոչ առժամայն
պրծեալ 'ի պատժոց անարատ դատու ։ Իսկ եթէ [10] Ա-
քար զարմեան , և Սաւուղ կիսեան , և Յուդա սիմո-
նեան , առեալ զայն ոչ արդարացան , և ես վկայեմ ի-
րաւամբք խոստովանեալ զայս պայման բանի , զի ակա-
մայիցն բանադատելոց ոչ է կատարեալ սէր , ուստի և
ոչ բովանդակապէս փրկութիւն ։ Իսկ ես կամաւ համ-
բուրեմ դարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ [11] զմկր-
տութեան հարազատս ։

Դ . Մ՝եղայ երախտեացդ մեծութեան՝ վերստին
մեղայ , [12] մեղայ մարմնոյ ձեան յագի հարեալ՝ յիմարս
մեղայ , մեղայ առ կեանս գրժողութեան՝ [13] իսկ և իսկ
մեղայ , մեղայ բանիդ ապախտ առնելոյ՝ չարաչար մե-
ղայ , մեղայ 'ի յոր սատակման ինձէն սախլեալ՝ վա-
թարս մեղայ , մեղայ պարտականս անկենդան մահուն՝
ձաղելիս մեղայ , մեղայ անպատկառ քո բարձրութե՝
տաղտկալիս մեղայ ։ Վ՝երջին ինձ [14] կրկին աշխար հո-

գեոր՝ զի 'ի կորուստ և 'ի կործանումն ինձ երևեցայ , զի անդարձ վարատեցայ , զի որդիս թշնամի գրեցայ , զի 'ի բարձանցն երկնից ընկեցայ , զի փուշ վարուց զի-զի ։ Եւ ես առ սմին ողբք աղաղակի , զի անձամբ զանձն անարգեցի , զի բազլին կորուսչին գտայ ։ Այլ իմն կըս-կիծ դժնդակ սրտի , զի [15] զիս ունին առ որ չեմ , զար-տաքնայարդար բաժակս անմաքուր , զըռեալ որմն դառ-շունակ , զոխն պարծանօք պաճուճեալս , զլոյս 'ի մայլ շրջեալ , զգերանակիր ակնս թշուառացեալ , զջահս փա-ռաց շիջեալ , զամենայնիւս յամենայնի ամենայն իրօք մխտակալս , [16] առ անօրինականն տէրունականս , առ յայտնութիւնն ա̃ծայինս , առ երևմունն ապաշխա-գիրս , առ խոնարհութիւնն սարսափելիս , առ այն զոր տեսի աչօք խակ խմելք , առ որ մեծ է պատասխանա-տուութիւնս քան առ համօրէն աւետարանին զարմանս , հիացմունս , հոգս հաղորդականս , [17] անդաճմունս ան-հնարաւորս , թուականութիւնս մնայց անբարդելիս , երմունս անկատարս , իջմունս անհաստատս , յուսահա-տութիւնս յարմարականս , յանդիմանութիւնս պատ-շաճականս , ձաղանս պատեհագոյնս , նզովս իրաւացիս , անէծս արժանահատոյցս ։ Արդ այսքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք , և ինքնահարուած տանջանաւո-րութիւն ։

Դ. Եւ քանզի կարող ես զայս ամենայն զպարտս թո-ղուլ , և զխայթուածս մահու բժշկել , տէր ողորմու-թեանց , ա̃ծ բոլորից , Ո՛վ թագաւոր բարձրեալ հօր որդի , ստեղծիչ գթած բարերար , օրհնեալ առատ հա-րուստ , ահաւոր հզօր ողորմած , տեսուչ ձեռնկալ հա-տիչ , ապրեցուցիչ զարմանիչ կեցուցիչ , երկայնամիտ անոխակալ ապաւէն , բժիշկ գովեալ երկնաւոր , անճառ լոյս կեանք , յարութիւն նորոգութիւն քաւութիւն . եթէ հայեսցես մարդասիրութեամբ , ըստ որում քոյդ են ամոլութիւնք , նայեցեալ 'ի քեզ կոչկոչիմ և ես . եթէ լուիցես , հառաչեմ . եթէ ունկն մատուցանիցես , պաղատիմ . եթէ անսայցես , աղերսեմ . եթէ ներեսցես , աղաչեմ . եթէ առ իս դառնայցես , գոչեմ ։ Ապա եթէ անտես առնիցես , կործանիմ . իսկ եթէ առ ոտն հար-կանիցես , լամ . եթէ զոգեպահն ոչ ընծայեսցես , մե-ռանիմ . ապա եթէ ահարկու զդէմ ցուցանիցես , սա-

տակիմ. իսկ եթէ սաստեսցես, դողամ. եթէ խեթիւ տեսանես, սոսկամ. ապա եթէ սաստկանաս, սարսափիմ. եթէ հալածես, հեծեմ. իսկ եթէ ընդ վայր հարկանիցես, հերքիմ. եթէ զողւոյ [18] վհատութիւնս ոչ տացես, տագնապիմ. եթէ խոստանաս, փախնում. ապա եթէ սպառնաս, ընկճիմ: Իսկ եթէ քննես, քարկոծիմ. ապա եթէ ուժգինս ակնարկես, սուզանիմ. եթէ ոչ անխայեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես, խիթամ. իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տացես, երկնչիմ: Օ բարեացն պարգեւ մատնեալ, զերանութիւն թողեալ, զշնորհն լքեալ, զուխտն ցրեալ, զաւանդն կենաց մոռացեալ, զհամարձակութեն վստահութիւն կորուսեալ, զառեղծիչ եկս բարկացուցեալ, զանձառու շնորհին ընդոտնեալ, զպատուոյն պատկեր այլայլեալ: Իսկ եթէ առ այս խեղդ մահու հեծութե ցաւոյ մարգարերեալ՝ առ ի ժամանեցուսցես, տէր Յս Քս, [19] զաղչեալն գիր ըմանիլ 'ի յիս, եթէ բժշկութիւն դադարեցուցանէ զմեղս մեծամեծս, որով ամենաառատ քաղցրութեամբ պատուաստեալ 'ի քեզ, զքոյդ կերպարան լուսոյ նկարեալ յոգի՝ վերստին գտեալ սնդեցայց քաւեալ, եւ [20] սուեղծեալ կրկին 'ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց. եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն:

---

1 [illegible] [illegible]: Զկարգութիւն թուոյ բանիցս նախադրելոց յարմարեցի ըստ բանաստեղծական ոճոյ լատինաց: Դարձեալ սկզբանց զպարզատունս [illegible] [illegible] (մի օրին. [illegible]) խոստովանելով զգիմամբ, [illegible] [illegible], զգաղտնիս իմ յայտնի բարբառով: Կամ հայցականն՝ [illegible] հայի առ բայն [illegible]: Է՛ և [illegible] [illegible]. զի կրկնութեամբ նոյն բառին 'ի սկզբան և 'ի վերջն հատուածոյն (որ է ձև Ճարտասանական՝ յունարէն ասացեալ [illegible], այսինքն բաղհիւսութիւն. և լատ. [illegible], այսինքն օձաձև:) [illegible] [illegible], զնոյն եղանակ արտաքին մաղթանաց եղեց առաւնօր: Ասան զի զնոյն բառ կրկնելով 'ի սկիզբն և 'ի վերջ բանին, իբրև թէ մի և նոյն ձայն ոլորոց լսի անընդհատ, և լինի մին իբրև արձագանգ միւսոյն, որ և կարի թախանձեցուցիչ է և ժառութեան եղանակ: Ի մի օրին. փոխանակ [illegible] [illegible], զոր [illegible]. և փոխանակ [illegible], զոր [illegible], ոչ թուի հարկաւոր, բայց կարէ ունել զայն խմաստ, թէ առէալ զնոյն բառ կրկնել և թախանձել՝ համարձակութեան յայտ է: Գոյ և այլ առրեբրութիւն յօրինակս. զի մի օրին, զոր [illegible]; այլ օրին. [illegible] [illegible]: այլ. [illegible] և [illegible].

2 ՀԱՅՐԵՆԵԱՑՆ ՓԱՌՔ : Ի հայրենիսն մեր 'ի դրախտին տուաւ յոյժ մե-ղայն, ներելովն և տրտմելով լսել 'ի նախաստեղծիցն: Իսկ ծանիր, զի զոր ինչ աստ ստամբոր յաղագս ՄԵՂԱՅԻՆ, իմանի 'ի վերայ ներգործու-թեան զղջման կամ խոստովանութե՛ զոր այս ձայն նշանակէ: ՆԱԽԱ-ՃԱՌՈՅՆ ՕՐԷՆ. թէ նախաստեղծիցն, և թէ այլոց նահապետաց եղաւ օրէն զղջմամբ արդարանալ. և նոքա զայս օրէնս յետնոցն աւանդեցին իբրև ամենեցուն հարկաւոր. վասն որոյ յարէ. ՀԱՄԱՅՆԻՑ ԲՆԱԿ. այսինքն պա-չար: Այս հնգեակ բանիւք ցուցանել կամի, թէ օրէն զղջման ոչ իբրև զայլ գրական օրէնս յետոյ եղաւ, և կամ վասն ումանց՝ և առ ժամա-նակ մի տևական, այլ 'ի սկզբանէ մինչև 'ի կատարած վասն ամենայն մեղուցելոց:

3 ԱՆՀԵՐՔԵԼԻ ԲԱՆ: Ըստ որում ոչ մերժէ ա͡ծ զմեղաւորն ճշմարտիւ խոս-տովանութե՛: ԿԵՆԴԱՆԱԲԵՐ ԽՈՐՀՈՒՐԴ: Ընդ ծով մեղաց, ընդ հոսանս փորձութեանց՝ մեղաւորին անցանելն մարդկան և ապրելն: ԱՆՍՊԱՌ ԳԱՆՁ. անլուծանելի կամ անգիւտագործ փառս. զի աստ խոստովանութիւն մեղաց վճարէ զպարտատոմսն: ԱՆՀՆԱՐԻՆ ՃԱՐ. անհնարին կամ դժուա-րաբուժելի մեղաց դեղ և դարման, կամ անհնարին պատժոյն հանդեր-ձելոյ հնարք: ԿԱՐԾՐՈՒԹԵԱՆ, խստութեան սրտի կակղիչ:

4 ԱՆԴԱՐՁԱԳԱՅԻՑ ԱՌԱՋՆ: Այսինքն կամաւ. զի արդարք 'ի մեղայէն սկսանէին զարդարութիւն. որպէս դանիէլ, երեք մանկունք, և այլն. տես 'ի բանն Թ. լուծ. 8: ՀԵԹԱՆՈՍԱՅ ՓՐԿԻՉ. հաւատացեալ հեթանոսք՝ որք զայլ օրէնս ոչ ունէին, զմեղայի օրէնն գտանէին և ընթեռնուին 'ի սիրտս իւրեանց: Սոյնպէս անհաւատ հեթանոսք լոկ բնական լուսով ճանա-չէին զուսումն բնական զղջման: Կամ, հեթանոսաց դարձելոց 'ի հա-ւատս՝ առաջին դիրք առնել լինէր մեղայն նախ քան զմկրտութիւնն, և այն է ՀԵԹԱՆՈՍԱՅ ԽՈՐԱՆ, 'ի սկզբան եկեղեցւոյ կանոնս աւանդեալ: ՊԵՏՐՈ-ՍԵԱՆ ՀԱՐԱՍՏԱՆ: Թէպէտ և ծանուցեալ է հեթանոսաց, սակայն ճշմա-րիտ մեղայն՝ որ 'ի շնորհացն ա͡յ՝ այլ և խորհրդականն, միայն քրիստո-նէից է յատուկ: ԱՐԴԱՐՈՑՆ ՅԱՂԹՈՂ: ըստ որում արգելու զբար-կութիւնն ա͡յ. որպէս դաւիթ այսու մեղայիւ խափանեաց զապատուհա-սն ա͡յ՝ որ 'ի բերանոյն նաթանայ (Բ. Թագ. ԺԲ. 13:) Սոյնպէս այ-սու մեղայիւ արգել զսուր հրեշտակին (անդ ԻԴ. 17:)

5 ԱՆՊԱՐՏԵԼԻ ԶՕՐ. Ըստ որում նահանջէ զբռնութի՛ սատանայի: ԽՈՐՈՑ ԱՀԱՒՈՐ. ըստ որում խափան արկանէ 'ի մէջ կենաց և մահու, ար-դարոց և մեղաւորաց. ըստ այնմ (ղուկ. ԺԶ. 26.) «Վիհ մեծ է ընդ մեր և ընդ ձեր»:

6 ԱՐՈՒԵՍՏ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ: Հնարք ամբառնալոյ 'ի բարձրութի՛ շնոր-հաց, կամ յերկինս. որպէս և ԽՈՐՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆԴ, ըստ որում յանդա-ւակ խորս մեղաց և դատապարտութե՛ ժամանեալ 'ի վեր ածնու զհո-գին. ուստի և է ՀՐԱՇԱԼԻ ՏԵՍԻԼ. այսինքն պանծալի տեսիլ, յորժամ զանդնդապարտականն առնէ երկնաքաղաքացի: Մարթ է և իմանալ, արուեստ կամ հնարք բարձր և գերազանց, ըստ որում ա͡ծ է զղջման հեղինակ և ուսուցիչ, և նովաւ միայն հնար է հաշտիլ ընդ ա͡յ: ԽՈ-ՐՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆԴ, անքննելի խորք գաղտնեաց ամբարեալ 'ի նմա. որպէս և յաջորդդ ասէ:

7 ԽՈՐՀՈՒՐԴ ԲԺՇԿԱԼ: Ոչ միայն ըստ որում 'ի նոր օրէնս զղջումն և խոստովանութի՛ են մասն խորհրդոյ ապաշխարութե՛ ընդ կնքով փա-կեալ, այլ և վասն բազում գաղտնութեանց որ 'ի նմա: Մի զի 'ի կա-տարել զղջման բազում գաղտնի ներգործութիւնս առնէ ա͡ծ 'ի սիրտ մեղաւորին: Երկրորդ զի անցումն 'ի մեղաց յարդարութիւն՝ է մի 'ի մեծամեծ սքանչելեացն ա͡յ՝ գերագոյն քան զարարչագործութիւն. իբր

զի մեղքն առաւել հեռի են յինէ, քան ոչէն յէակէ. և զի առեղծուածքն բնական բարեացն ոչ լինին բաժանորդ. իսկ արդարանալոյն՝ գերբնական բարեացն, և նմին իսկ բնութեան ոչ հաղորդին շնորհաց: Երրորդ գաղափարութիւն է 'ի զգջման, զի զՃշմարիտ զգջումն որոշէ 'ի սաոյն՝ ոչ միայն է կարողութիւն: Ահա ընդ այսոսիկ և ընդ այլ գաղափարութիւնս անցանել՝ անըմբռնելի մասց ասէ:

8 Ի ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ: Ոմանք ըստ հին լուծ. զցխաւոր իմացան զայս. ասելոյն բանն հայի 'ի վերջին դատաստանն համաշխարհական դատուն մեղաւորաց, որք լցանին յայս ընկալ երեթայք յինէն, և այլն: Յայնժամ դատաստանի, ասէ, ոչ յիշատակեցաւ հրաշալի ձայն մեղայի, յորժամ դատաւորն յանդիմանէր զմեղաւորսն վասն չկերակրելոյն զնոքն, վասն չարբուցանելոյն, և այլն (մատթ. իե. 42.) այլ փոխանակ մեղայի արդարացուցանել կամէին զանձինս. զի եթէ ասացեալ էին մեղայ, ՏԷՐ, ԵՐԲ ՏԵՍԱՔ, թերևս խակոյն խոլէր ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ՏԱՌԱՊԱՆՍ, զկնէժ խնդրութիւն արդարութեան ոչ, կամ զերաւայի վՃիռ դատապարտութեան. ԱՅԼ Ի ԸՆԴՈՒՆԵԼԻՆ, որոշումն արդարոց և մեղաւորաց, կամ յաւիտենական բացորոշութիւնն ոչ անգործ եղեալ, զյաւիտենական դատաստանն լուծանէր: Այսու ծանուցանել կամի, թէ որչափ է զօրութիւն մեղայասաց զգջման, մինչև 'ի վերջին յայնմ պահու ապաւէր 'ի դատապարտութենէ զմեղաւորսն, եթէ լինէր 'ի նոսա այնպիսի զգջումն Ճշմարիտ: Հին լծ. ԸՆԴՈՒՆԵԼՈՅՆ խմանոյ եւ զխորհուրդ մարգարէութեան. որպէս թէ՝ եթէ 'ի համաշխարհական դատն ասացեալ լինէր մեղայ, վՃիռ կամ ասհման մարգարէութեան ոչ 'ի գործ դնիւր: Բայց այս անյարմար է՝ ոչ միայն կարգի բանիս, այլ և ուղիղ վարդապետութեան. զի որպէս յայլ զգջացեալս՝ զգջումն, որոշութիւն 'ի մեղաց, ապաւութիւն 'ի դժոխոց՝ եղեն յարգեանց չարչարանացն քնի, նոյնպէս 'ի համաշխարհական յարգեանց քնի լինելոց էին այսուքիկ՝ եթէ արդարև զգջանային և մեղայ գոչէին:

9 ՁԻՒՆ ՃԵՐՄԱԿ: Ձմեղայն կոչէ զարդ և պսակ փառաց հոծութեան. զեղեցիկ նմանեցուցանելով զնա՝ սեղանոյն արքութեն, և զՃշմոյն իբրև եղջիւր այնր սեղանոյ. զորմէ բուռն հարեալ յանցաւորքն յիրայեւլոյսոյ՝ անպատիժ արձակէին: Արդ զոր օրինակ եղջիւրն՝ զարդ էր և պսակ սեղանոյն, սոյնպէս ՄԵՂԱՅՆ ոչ. և որպէս նոծ ողորմութեամբ և գթութիւն պսակէ զմեզ, նոյնպէս մեք զգջմամբ պսակեմք զնա, 'ի նա փառաւորեցուցանելով զեթագաւորութիւն հոգւոց մերոց և զփառսն, զորս մեղքն բարձեալ 'ի նմանէ: Թող զի 'ի ներել ոչ և 'ի թողուլ զգջացելոց պայծառանայ ամենակարողութիւն ոչ, ողորմութիւն, անյիշաչարութիւն, և այլն. որով և առաւել փառաւորի. մինչ զի նա ինքն նոծ՝ զարդ իմն անձինն համարելով, ասէր պարծանօք, եւ եմ որ ջնջեմ զանօրէնութիւնս. ով է իբրև զիս՝ որ թողում զմեղս, և այլն:

10 ԱՍՐ ՍՊԻՏԱԿ: Ասոանօր վերապակ ասլրգեալ է յօրինակն. զի ասր որդի էր քարմեայ, թոռն զամբրեայ, և թոռնիս զարայի (յեսու. Է. 1. 18.) որ և 'ի իբ. 20. ԶԱՐԱՅԵԱՆ ասի. ուստի թուի թէ ասզիզ եա է գրել՝ ասր ԶԱՐԱՅԵԱՆ: Արդ նորա երկքին՝ ասր, առաւել, յուդայ ասելովն ՄԵՂԱՅ, ոչ արդարացան, ոչ զերծան յարժանի պատժոյն. վասն զի ԱՆՁԱՄԲՔՆ ԽՆԴՐԵԱՑԱՆ. նոցա որք սկանայ բանադասեալ գործեն յերկիւղէ կամ յամօթոյ, կամ 'ի գործս յակամայս բանադատեալս, ոչ է ՃՇՄԱՐԻՏ ՄԵՂ. իմս զհատուցեալ սէրն ոչ իբր զեմարտաժանեալ անհաստատ սիրոյ և զգջման, որ կարէ լինել արդարացուցիչ. այլ զխոնարհաժանեալ կեղծ սիրոյ կամ երկիւղի. իբր ասել, ոչ է Ճշմարիտ սէր, այլ ըստ երկիւղ կամ այլ ինչք. որպիսի էր յիշատա-

կեալ արանցդ։ Զի ադար 'ի յանդիմանել զողութեն՝ առաջ մեղաց. (յեսու. է. 18. 20.) և աւսուղ՝ զի մեծարեսցի առաջի ժողովրդեան (ա. Թագաւ. ԺԵ. 30.) և յուդաս յետ պարտաւորելոյն քնի 'ի յուսահատ անձնոյն բանադատական մեղաց գոչեաց, և խեղդեաց զանձն։ Բայց ես, ասէ, խնով կամաւ և սիրով ընդունիմ և կրկնեմ զերջանիկ մեղայս. ուր ասելն՝ [illegible] [illegible], թերևս ասելով ես զրեալ եր՝ [illegible]. այսինքն կրկնեմ զերջանիկ բանդ զմեղայ։ Կամ թէ կայցէ փոխադրութիւն հոլովոյ՝ երբ յառաջացուցել 'ի սեռական հոլով դնելով զբացայայտիչն՝ ըստ շրջման ոճոյ. քանզի յասելն, կրկնելով [illegible] [illegible], բացայայտելի եր՝ որ է այն, այսինքն երջանիկ բանն կամ մեղայն։

11 [illegible] [illegible]։ Ընկեր կամ եղբայր մկրտութեան ասէ զմեզ այն. զի մկրտելն՝ մանաւանդ չափահասից, լինի խոստովանութեամբ և մեղայասացութեամբ. այլ և ըստ գործոյն միաբանեալն, զի մկրտութիւնն կարգեալ է 'ի բառնալ զսկզբնական մեղս, և խոստովանութիւն՝ զներգործականն. ուստի ապաշխարութիւնն կոչի երկրորդ մկրտութիւն, և աւազան։

12 [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։ Մարմնական գործովք զհոգիս սպանանելով. կամ, մարմնական ձեռօք, այսինքն անմիջաբար 'ի հոգևորս միջամտելով. կամ այսպէս զատանել կեանս. մեղաց մարմնոյ՝ ձեռնարկելով 'ի վնաս հոգւոյս. քանզի մեղքն ոչ միայն հոգւոյն վնասէ, այլ և մարմնոյ։ Հին լուծ. յաւելու և զայս միտս, ձեռօք կամ բռնամբ զկնուրդս հարկանելով, հարկանեմ զհոգիս։ Բայց այդ ոչ է եղանակ ինչ մեղաց, զոր աստանօր ընդարձակէ առըր վարդապետս, այլ լոկ արտաքին նշան զղջման. ուստի անյարմար է։

13 [illegible] [illegible] [illegible] [illegible]։ Խակապէս կամ Ճշմարտապէս մեղայ։

14 [illegible] [illegible]։ Այս է ինձ, ասէ, յետին և կրկնապատիկ ողբալի թշուառութիւն, զի ես ինձէն զանձն 'ի կորուստ և 'ի կործանումն մատնեցի։ Բայց ըստ փոխանակ բայլին [illegible]։ 4 օրին. զնէն [illegible]. և ըստ այսմ ասէր բայլին խմանի [illegible]. որպէս թէ ասել, մեղայն որ մի միայն հնարք է փրկութեան, ինձ 'ի կորուստ երևեցաւ կամ զատու, այսու զի թէ և ասեմ մեղայ, բայց առանց զատանելոյ. զի [illegible] [illegible], առանց զատանելոյ առ հայրն՝ հեռացայ, կամ արտաքսեցայ. զի որդիս՝ թշնամի համարեցայ, կամ եղէ. զի փոխանակ չար գործոց [illegible], գեղեցի, բարեկցի. է կատարեալն [illegible] բայլին. բայց 3 օրին. [illegible]։

15 [illegible] [illegible] [illegible]։ Զիս համարելն այնպիսի, որպիսի չեմ. համարելն զիս արդար, խնամոտուն, և այլն, որ մեղաւոր եմ և անմխ- [illegible], զարտաքուստ յարգարեալ և սրբեալ բաժակս, որ ներքոյ անմաքուր եմ։

16 [illegible], բոլորովին, [illegible], յամենայն ժամանակի և 'ի գործ [illegible] [illegible], առ ամենայն իրս մեծատակարս և յանցաւորս։ [illegible] [illegible]։ Վնասակար և յանցաւոր գտայ առ անօրէնութիւնս քոյ, կամ առ խորհուրդս մարդկեղութեան։ — [illegible] [illegible], առ ծանօթութիւնս ամայլին զաղանեաց՝ որպէս երկրորդութեան, սաեղծման, նախախնամութեան, նախասահմանութեան, զատաստանի, յարութեան, և այլն։ — [illegible] [illegible]. առ երևմունս յաստուածոյ գրեալս, կամ արտաքին վայելուչս. որպէս 'ի գրախաւին, 'ի լեառն քորեբ, 'ի սինա, 'ի Թաբոր, և այլն։ — [illegible] [illegible], առ զգեստս 'ի մեր սեղանութեան, կամ առ խոնարհական գործս որդւոյն, որք ապատաւորելի են մեզ։ — [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։ Այսու յայտնապէս ծանուցանէ զանստես իր մարմնոյ [illegible]. որով և հատառ աստուածութեան՝ որ կայ յազգի մերում. ասա թէ ոչ՝

մեկնելն 'ի վերայ տեսութեան 'ի պատարագի, կամ 'ի վերայ տեսանելոյ տաճարելոյ, որով երբեմն մեզ եւ երեւեալ համարի, եւ կամ այլ եղանակաւ մեկնելն, ամենայնն վերաբերի առ տեսութեան հաւատոյ աչօք. որով մարթ էր տեսեալ առել նաեւ զանօրէնութիւնս քնի, զյայտնութիւնն եւ զերեւմունսն. եւ սակայն սուրբ վարդապետս յայտնապէս խօսի զնէ ընդ տաճարին եւ ընդ վերջինս, ասելովն, [illegible], եւ ոչ տաճարին. այլ եւ յաշխարհումն: [illegible]: 2 օրէն. [illegible]. այսինքն առ այս տեսութեան, [illegible]. այսինքն քան յաղագս բոլոր աստուածականն պատշաճելոյ եւ վարդապետութեանց. զի այս հասարակաց է պարգեւ. իսկ զեմ յանդիմանն երեւելն՝ է առանձին շնորհ երբեմն յատուկ սիրելեաց եւ բարեկամի. որով տեսանել պարտական կացուցանէ 'ի սիրել: Նա, զի աստուածն 'ի լոյս անմատչելի բնակեալ. իսկ յայտնապէս երեւելն՝ այսպէս է Ներգործութեան, որ աղջամղջոյն եւ շարժէ. որպէս տաճարելոյն Թովմաս՝ որ 'ի լուր յարութեան քնի դժուարէր 'ի հաւանութիւն, 'ի տեսանելն զյարուցելոյն՝ աղաղակաւ դաւանեցաւ: Այպա տեսանել անպատմելի լինիմ, ասէ, զի յետ տեսանելոյս զքեզ աչօք՝ տակաւին 'ի մեզս դարձայ. ուստի մեծ է պատասխանատուութիւն, մեծ է [illegible], մեծ է [illegible], եւ այլն:

17 [illegible]: Մասծմանս, կամ հաղարկութիւնս, որում չէք հնար կամ ձար: [illegible]: Թէ կամ բաղմութեան հոգոց եւ թշուառութեանցս՝ անթուելի 'ի մասոյ: [illegible], կամս եղանելոյ յառաջին մաքրութեանն՝ բայց անզործ: Կամ, եղմանս 'ի պաշտօն այ, 'ի քարոզութիւն, եւ այլն, բայց առանց սիրոյ, անյօժար: [illegible]: խոնարհութիւս 'ի գործ ձգնութեան, առաքինութեան, օգնելոյ կարօտելոց, եւ այլն, բայց անհաստատ:

18 [illegible]: այլ օրէն. [illegible]:

19 [illegible]. է բանն Ժողովողի (Ժ. 4.) « Ողորմութիւն դարձուցանէ զմեղս մեծամեծս ». զոր սուրբ վարդապետս զնէ. [illegible], յայլ թարգմանութեանց առեալ. զի այսպէս ունի երրայականն, յոյնն, ասորին եւ լատինն: Նրթէ, ասէ, 'ի դուռն շարժեալ ընդ հեղձուցիչ ցասս հասաւանաց խնոց, [illegible], յաջողեսցես յես կատարել բանին զրոյ՝ բժշկութիւն բանից զմեղս, որպարե այսու ամենասաս քաղցրութեն միանամ յարիմ 'ի քեզ անբ յոյ, 'ի քոյդ կերպարան վերստին ձեւացեալ հոգով:

20 [illegible]: Ցեա առաջին սանդուխն 'ի բնական կեանս՝ վերստին սանդղեալ 'ի կեանս շնորհաց եւ փառաց անմահ յարութեր:

# ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արդ զո՞ր յայտնեցից, և յաղագս ո՞յց նշա-
նակեցից, և վասն որպիսեա՞ց ճառեցից, և զո՞րքան ծած-
կեալս մերկացուցից, և կամ վասն որո՞ց խոստովանե-
ցայց. զներկայի՞սն զոր արդէն ունիմ, թէ զանցելոցն
զոր մթերեցի. զապագայի՞սն յորոց կասկածեմ, թէ [1]
զբազմամաս շարժութեանցն յորոց զգուշացայ. զփո՞քրն
խնճ համարեալ՝ որ է ոչ մեծ զրկեալ, թէ [2] զանկեր-
պագրելին չյիշատակելի. զնուա՞ղն՝ որ է առաւել, թէ
զթեթևագոյնն՝ որ են ծանունք. զհոգեկանա՞ցն կրից
կորուսչաց, թէ զմարմնականաց ախտից սպանողաց. [3]
զառ դրունս հեշտականացն, թէ զծայրակատար վնասա-
կարութեանցն. զանէրևութի՞ցն, թէ զտեսականացն. [4]
զառ ձեռն հպաւորութիւն, թէ զառ նոյն ինքն շունչ
հեռաւորութիւն. [5] զլայնակա՞նն դիւրին խածմանս,
թէ զերկարաւորն նեղանձնութիւն. զխորութեա՞նն
զանչափութիւն, թէ զամենածախն յայտնատեսիլ. [6]
զյոքնագրե՞լին պռնկութիւն, թէ զառողջութեանն
անբժշկութիւն. զպարարտութե՞ան չարին մարմնոյս, թէ զառ-
վիրն բարւոյն հոգւոյս. [7] զխնամածի՞ն հանդիսանալ յոչ
ախորժելիսն ոչ, թէ զռնդադատութեանն տուամբ ծր-
գիլն 'ի նոյն մոլեգնութիւն. [8] զառ 'ի մա՞հն մեղաց, թէ
զընդունայնութեանն կարծեաց։

Բ. Արդարեւ որպէս կամաւ խելագար [9] զերծեալ 'ի
ձորձոյ, զառականացս տեսիլ յանդիմանեցի, զընդդէմն
գործեալ իմաստնոյն, որ թէ հանճարեղքն վերարկեա-
ցէն զամօթս իւրեանց, ստարացեալս 'ի կրօնից, հեռա-
ցեալս 'ի կարգաց, 'ի սրբութեան անտուրք, 'ի կուսու-
թեան անմաքուր, յարդարութեան ամբարիշտ, 'ի բա-
րեպաշտութե՛ վնասապարտ, բերանովս մերձ առ ստա-
ցողն և հեռի երկիմամբք, չխթամբքս պատուամո-

տոյց. ըստ մարգարէին, այլ ոչ եթէ սրտիւ։ Եւ եթէ
պարտ է զպատմելոյն ասել աստանօր, [10] չար քան ըզ-
տանջանսն յանդգնութիւն, իբր զուր ինձ պաշտօնա-
տարս տ̃ն, 'ի միտս անկայունս երկեակ ճանապարհաւ
մահու վարանեալս՝ ջանամ և ոչ ինչ օգտիմ, պնդիմ
և ոչ հասանեմ, փութամ և ոչ ժամանեմ, անձկամ
և ոչ տեսանեմ, փափագեմ և ոչ հանդիպիմ, կարօ-
տիմ և ոչ պատահիմ, [11] ունիմ զամենայն երկրի, և
եմ պատգամաւոր աղօթամուէր ամենայն աշխարհի։
Այլ թող զբազում զայսոսիկ, բարերար, և մի ունի-
ցիս. դիւրինք են քեզ զսոսին եղծանել, քան ինձ տա-
ժանաւորս աջով նկարել. վասն այնորիկ գրեցի առանց
խնայելոյ, զի դու առատապէս ջնջեսցես, օրհնեալդ, որ
վասն մեր մեղաւորացս երկայնամիտ անուանեցար, ըստ
մաղթանաց բանի հեծութեան սրտի Եզրի երջանկի, [12]
յոյժ նեղեալ անձն և ձանձրացեալ ոգի բանին յիշա-
տակաւ, որ զայն պատմէ. յամենայն կլից մահացու-
ցանողաց վտանգեալ, անկեալ 'ի վիհ զարշութեան մե-
ղաց անդնդախանաց ապականութեանց. քանզի չհաւա-
տամ, թէ լսես իսկ ինձ, ըստ Յոբայ ձայնին։ Արդ ես
ինձէն ինքնադրով անձնադատ գերի՝ կամաւորապէս [13]
մատն եղեալ բնութեանս, արգելի փակեցի կնքեցի առ
յինէն յամենայն մասանց զկենացն հնար, զի 'ի փըր-
կութիւն մեղօք կապելոյս կրկին մեծացիս գովեալ։

Գ. Եւ քանզի [14] 'ի մարգարէին բարւոք խրատեալ
փորձ գտցուք, մաղթել ընդ նմին հոգւով քո երգեալ՝
յուսով հաստատնով 'ի քեզ ապաստանեալ. առէք ընդ
ձեզ բանս, ասէ Ովսէէ, և դարձարուք առ տէր ա̃ծ
ձեր, և ասացէք դմա, կարող ես թողուլ զմեղս. զի ըն-
դունիցիք զբարիս, և վայելեսցեն 'ի բարութեան ան-
ձինք ձեր։ Ահա ա̃ծ խոստացաւ, և ո՞վ է որ ոչ լուիցէ.
նոյն ինքն վկայեաց, և ո՞վ է որ ոչ հաւատասցէ։ Արդ
այսօրիկ [15] վճիռ պաշտելի, նուիրեալ պայման, սահման
նոյնագոյ, կենաց աւետիս, կէտ տէրունի, դուռն բա-
րութեան, սփոփանաց հրաւէր, ճշգրիտ պատկեր, ան-
ստգիւտ գանձ, անմոռաց յիշատակ։ Այսու առ սոյն և
ես հաւատ ընկալեալ, աստուստ վկայեմ սմին ընդ մար-
գարէին, կարող ես յամենայնի թողուլ զմեղանս բաղ-
մաբեղունս. և ես զօրացիս կրկին բարձրացեալ՝ առ

ամենաթշուառ կործանեալ հոգիս ։ Զամենայնի իշխես, ամենայնի թագես, ամենայն ուրեք հասանես, ամենից բանութեանց յաղթես. զամենայն կարծրութիւն փշրես, զամենայն ընդդիմահար վանես, զամենայն խրոխտութիւն վանես, [16] զամենայն սրացեալ ընդոտնես, զամենայն զառնիս անուշես, զամենայն դժուարամերձելիս քաղցրացուցանես, զամենայն զպարտս ջնջես, զամենայն յանցանս թողուս ։ Կարող ես, զօրաւոր, հզօր, հնարաւոր, ամենարուեստ, զամենեցուն զմեղս ընկղմել և չքացուցանել բառնալ 'ի միջոյ, իբր զճաճանչ փոքու կայծական [17] սահմանեալ 'ի չափ ոչէից՝ անկեալ ընկլուզեալ կորուսեալ 'ի տիեզերատարածն ծովու ։

Դ. Արդ [18] բանիւ մաղթանաց վերծանողացն այսմ մատենի, որոցմէ վասն խաչի և չարչարանաց մահու որդւոյ քոյ, հայր գթութեան ։ [19] Ակիզբն առաքողի ողբերգութեան ձայնի այսմ արտօսրածին նուագի, որ զայս դեղ փրկութեան կենաց մեզ յարմարեցոյց, եղիցի բժշկեալ յանուն քո հզօր ։ Որ հետս ելից խոստովանութեան մեզ նկատեցոյց այսու պայմանաւ պատշաճականաւ, լիցի անարատ յիւրոյն պարտեաց ։ Որ ըղհարարութեանն թես հարթել մեզ վարդապետեաց [20] 'ի սոյն կանոնի կենաց պատգամի, եղիցի զերծեալ 'ի չար կապանաց մահու արկածից սկզբնականաց վերջնոց և միջնոց, Նորոգութեամբք բարեգործեալ, 'ի նորոգութիւն լուսաւորութեան. ընդ որում և մեք գրեսցուք երջանիկ գտեալ ընդ սմին ։

[21] Ընդդիմամարտ դիւաց այս նուագ աղօթից, և դիւատարտուա ջերմնատապեալ ախտաւորութեանց Աստուծով փարատիչ ։

Ե. Արդ այսքանեացս անբաւից հրաշից համդերձիչ հայր ամենաստեղծ՝ անունդ ահաւոր, ձայն սարսափելի, [22] կոչումն ընտանի, բան համբուրելի, ազդումն սքանչելի, հրաման սոսկալի, էութիւն անքննելի, գոյութիւն անճառելի, խնկութիւն անբաւելի, զօրութիւն անվճնելի, կամք ամենաբարի, տէրութիւն անսահմանելի, մեծութիւն անչափելի, բարձրութիւն անբովանդակելի, որքանութիւն անկշռելի, առաւելութիւն անհասանելի, [23] պատճառ որդւոյ հայրութեամբ, այլ ոչ նախա-

վրաւթեամբ . քն և 'ի ձեռն քոյդ անպարագիր զօրու-
թեանդ սաստեա տագնապող և գիւտական տենդիս ջեր-
մութեան, որ այրդեալ մուծաւ ընդ մեղաց, զի փախի-
ցէ 'ի մարդոյս' [24] զարհուրեալ 'ի սիրալի և յանբաւելի
արեան փառկի գառինդ երկնաւորի, որով արկեալ
միանգամ 'ի մշտնջենաւորս համայն մարդկեգաց :

Զ. Դու որդ [25] յայսց պատկառելի խոնարհութենէ ա-
բարչակերպ խորհրդոյ, ամաչեցէ սատանայ 'ի գործս
չարեաց իւրոյն հրեշտակաց . տանջեցի և հալածեցի,
հեռացեալ և արտաքս առաքեալ 'ի չքնաւածոյ խո-
րանէ քումդ բնակութեան յարտաքին խաւարն : Դու
ջնջեալ մարդկեա զարտասուս ողբոցս 'ի դիմաց մերոց,
և զհառաչումն ձայնիս հեծութեան 'ի սրտից մերոց :
Դու յիշատակաւ հարման հեղուսիցն [26] քառանախուշ
տաժանատեսիլ ողեպահանջից, որով սնդեցաւ մա-
ծինդ քո յաշտարակ խաչին, ցուեցի չարին : Դու 'ի
կողահերձ սայրասուր [27] սլաքէ ուժգին բախմանէ, որով
զլերն մեծ ընկալաւ, 'ի սպառ սատակեցի սկզբնարար
մահուն : Դու զի խոնարհեցոյց զգոլեալն զլուխ յաւան-
դել զոգին 'ի ծոց քո, բարձրեալ, ապստամբութիւն ան-
բարի բարուցն Բէլիարայ 'ի կոր կործանեցի, ամենայ-
նիւ հերքեալ 'ի կորուստ : Դու զի զօղեալ ծածկեցաւ [28]
անմահն իսկութիւն յորովայնի երկրի, այսու ամբար-
ձեալն հպարտութիւն կործեալ զտաղն 'ի յատակս
մահու դժոխոց մթին ստուերին յաւեալ գլորեցէ . և
յիշեցէ զատաջին հարուածն անբժշկական, որով մա-
հացաւ դիմամարտութիւն թիւնից վիշապին կենարարն
կլիւք ամենազօրին : [29] Վասն զի 'ի փառս քո, հայր ո-
ղորմութեան, երբ 'ի գովեստ որդւոյ քոյ հոգւովդ սըր-
բով զայս խոստովանիմ . քանզի ոչ պիտակ ինչ սոսկ զօ-
րութեանն ունի զմիւսմէն առ մի խորհրդական խո-
րութեան, այլ զանսկիզբն բանդ անձնաւոր ընդ անժա-
մանակդ հօր փառաւորեմք : Դու քեզ միայնոյ սուրբ
Երրորդութեանդ, հաւասարապատիւ տէրութեանդ,
համարուն անբաժին ինքնութեանդ' օրհնաբանութի,
գոհութիւն, զօրեղութիւն և անձառ վայելչութիւն մե-
ծութեան, բարեվիճակ հարթութեան, զուգակշիռ
հաւասարութեան յաւիտեանս . ամէն :

1 Զ[illegible] [illegible] ։ Կամիմ դարձեալ զգօնական աղօթս մատուցանել, խոստովանելով զյանցուածս իմ և զտկարութիւնս ։ Այլ տարակուսեալ եմ թէ զինչ յայտնեցից, վասն որոց խոստովանեցայց, արդեօք զներկայ մեղս իմ զոր ունիմ. արդեօք զանցեալն զոր ինձ պատրաստեցի. արդեօք զապագային յորս անկանել կասկածիմ։ Միթէ ըզդիւրասահելի շարժմունսն՝ որք սահել և յածիլ շարժին յանձն իմ, և տան զդիւրիլ 'ի բազում յանցանս. որպէս են շարժմունք բարկութեան, լեզուի, աչաց, և այլն ։

2 Զ[illegible] [illegible]։ մի օրին. [illegible] [illegible]։ Ոմանք ըստ հին ըծ. իմանան՝ ոչ արժանի նկարագրելոյ և յիշատակելոյ. և մեկնեն զմարմնական աղտեղի մեղաց։ Բայց զայնմանէ առօրէ խօսի. իսկ աստ ըստ կարգի զթեթև կարծեցեալ մեղաց իմանի բանս. զի աստ իսկ, արդեօք զփոքրն յիշատակեցից, զնուազն, զթեթևն։ Այսպէս [illegible] ասէ զայն խորհուրդս և զշարժմունս մտաց, որք արագ և իբր անզգայաբար կրին 'ի մեզ. զորս և չկարեմք երևակայել և մի ըստ միոջէ յիշատակել. սակաւ կամ մեղս չհամարիմք, և կամ փոքր. սակայն բազում անգամ յանհոգութէ եղեալ 'ի ծանր նիւթս, յանցանեմք. այսպիսի են շարժմունք հպարտութէ, թիւր դատողութեան, տրտնջման, երկբայութեան 'ի հաւատոյն, և այլն։

3 Զ[illegible] [illegible]։ Որք դրանց զգայութէց հեշտալիք են. և սակայն յետոյ [illegible] մնաս գործեն. այսինքն ծայրագոյնս կամ չարաչար կարօրեն զհոգին. կամ զծայրագոյն բարին շնորհաց ապականեն։ Կամ լաւ ևս. զորն յայտնեցից, [illegible] [illegible], այսինքն 'ի սկզբան հեշտացուցիչն, թէ [illegible], 'ի ծայրն կամ 'ի կատարման տանջիչ մնասակարան. զի բազումք 'ի մեղաց նախ հեշտացուցանեն, և ապա 'ի կատարածին տանջեն խղճիւ մտաց, կորստեամբ համբաւոյն, կարօտութբ ընչից, ցաւագարութբ, և այլն. որպէս արբեցութի, անառակութիւն, բղջախոհութիւն, և այլն։

4 Զ[illegible] [illegible]։ Զձեռամբ մերձենալն 'ի հրաժարելիսն, [illegible] [illegible] [illegible] [illegible], թէ նաև շնչով հեռի կալն 'ի յանձնառականաց։ Ասել կամի. Ած հրաժարեցոյց մերձենալ 'ի չարն, որպէս յարգելեալ ծառն, և ես ձեռամբս շօշափեցի զայն. հրամայեաց ընդգրկել զբարին, ես և ոչ շնչով կամ յօժարութբ բերանոյ մերձեցայ 'ի նա։ Մարթ է ևս իմանալ զմեղս՝ որ ձեռօք գործին, որպէս գողութի, ապանութիւն, և այլն. և զմեղս՝ որ 'ի հեռուստ կատարին շնչով բերանոյ, կամ լեզուաւ. որպէս հայհոյանք, բամբասանք, ստախօսութիւն, և այլն։

5 Զ[illegible] [illegible]։ Աստէն զհանգամանս մեղաց բացատրէ ըստ չորից տեսակաց գրից, այսինքն լայնութէ, երկայնութէ, խորութէ, և բարձրութէ. զի ոմանք իբրև լայն կամ ընդարձակ՝ հեշտացուցանելով խածանեն. որպէս արբեցութիւն։ [illegible] [illegible]։ ոմանք յերկար իբրև նեխիւ խոցանեն. որպէս նախանձ, հակառակութիւն, և այլն։ [illegible] [illegible]։ ոմանք կարի 'ի խորս արմատանան. որպէս հպարտութի, ատելութիւն, և այլն։ [illegible] [illegible]։ ոմանք զամենայն բարիս նաև զմարմնականս ծախեն, վատնեն, և ամենեցուն յայտնի լինի խայտառակութիւն, իբրև կայեալն 'ի բարձր տեղւոջ. որպէս են անառակութիւնք, խաղք նարդից, ապստամբութիւնք, և այլն։

6 Զ[illegible] [illegible]։ Ըստ որում պատնիքն անխախտ լինի ընդ բազում ալս, որ զլուխ են կնոջ։ Կամ, զի բազում մեղս յիւրմէ ծնանի՝ իբրև զբազմազլուխ վիշապ։ [illegible] [illegible] [illegible]։

ըստ որում ստորութեն պատկութեն անբաժանելի է յաստուածութենէ · կամ զի ստորականաց կատարելութիւնն ոչ են ամփոփմանց :

7 [illegible] : Զկամաւորապէս ջանալն 'ի գործս անառակութեան, թէ [illegible], 'ի բռնադատութեան չար ունակութեան ձգելն 'ի նոյն սովորական մեղս · կամ, զձգելն թախանձանօք, հրապուրանօք և սպառնալեօք այլոց 'ի մեղս՝ իբրև չտան տառապ փարելով ըստ բանին առակաց (Է · 22 :)

8 [illegible] : Զմեղաց՝ որ անթողլի գոլով և դժուարաքաւելի՝ մինչ 'ի մահ տանին, [illegible] · զընդդէմ կարծեաց՝ թէ մեղանչեմ, և յետոյ ապաշխարեմ :

9 [illegible] : Իբրև խնդրող ոք՝ մերկ 'ի հանդերձէ՝ զամօթալի անունն հագեալ երևեցուցի բանիւքս · զընդդէմ գործեալ [illegible] (Չ օրին · [illegible]) այնմ բանի առաքելոյն · որ ասէ [illegible] (առակաց ԺԲ · 16 ·) « Ծածկէ զանարգանս իւր այր խորագէտ » :

10 [illegible] : Ցանկացողութիւն՝ որ չար կամ դժնդակ է բան զպատուհաս իմ · խակ յանդգնութեան այս է, զի [illegible] · իբրև սաստ պաշտօնեայ էր, կամ իբրև ընդդէմ նապաստ և զբանջան պաշտօնեայ երևիմ, անհնազանդ մնալ, [illegible], իբրև զխորամանկութիւն յերկուս հետս կաղալով ( Գ · Թագ · ԺԸ · 21 ·) մերթ զԱծ պաշտելով, մերթ զդևն : Կամ սառուցեալ ապաշխարութեամբ վարելով 'ի բարին կամ 'ի չարն, և նուաղութեամբ միշտ 'ի բարին · որ երկոքին ևս մեղք և մահաբերք են · և սակայն յոյժ ամենայնի իբրև էր պաշտօնեայ ձեռնամտեան փարիսեցւոց · որ է մեծ յանդգնութիւն և անամօթութիւն : Այսպէս ձեռնյութիւն եւեթ պաշտօնեայ էր լինելով, [illegible] յարտաքին գործս, և [illegible] հոգւով :

11 [illegible] : Ոտնհար զամենայն մարդոյ ախտս կամ ըղձս և զպարտիս · կամ ուրիշ զամենայն որ երկրի է, այսինքն երկրաւոր և չնչաւոր մարդկանց · և սակայն [illegible], եմ իրք · ձեռնամ իբրև պատուհասուոր էր առ մարդ, և աղօթող առ Աստուած ամենայն աշխարհի :

12 [illegible] : Զեղբ ասէ յոյժ նեղելով, [illegible], յիշատակաւ մեղացն խորայելի · որ և զայն ինքն պատմէ (Ա · Եզր · Է · 72 : Թ · 2 :) Այսպէս և ես, ասէ, նեղեալ և ձանձրացեալ եմ յիշատակաւ մեղացս · և յամենայն մահաբեր ախտից վտանգեալ, անկեալ կամ 'ի խորս զարշութեան մեղաց, որք են դժոխային ապականութիւնք · մինչ զի դժուարին է հաւատալն՝ թէ լոյս ինձ առ 'ի հանել 'ի խորոց մեղացս :

13 [illegible] : Մոռանալով զիմ անձնս, կամ զապականեալ բնութիւն՝ ինքնարարական խոստովանութիւն, յայտնեցի յամենայն կողմանց լինել մահապարտ և անհնարաւոր առ 'ի կեալ · որպէս զի փրկելոյդ զիս՝ տառել մեծամեծաց, փառաւորեցից, կամ [illegible], վասն տառքին փրկութեանն, և վասն երկրորդիս :

14 [illegible] : այլ օրին · 'ի [illegible] է [illegible], և այլն :

15 [illegible] : Այսպիսի բանք ամօթալից՝ որք տան յայս թողութեան մեղաց, են վճիռ յարգելի, օրհնելի, ըստ որում են առատամբեր : [illegible], որպիսան օրէնք, կամ կանոն : [illegible] · կարգ կամ որոշումն անփոփոխելի : [illegible] · վճիռ կամ նշան ամբաստանելի : [illegible] · ըստ որում որոշարար երևեցուցանեն զկամս իմ, և զհանգամանս թողութեան մեղաց, այսինքն հաւատալ թէ կարէ և կամի ամ ներել, և այնպէս դառնալ առ նա սրտիւ զղջա-

ցելով ։ Անդգիւտ, անխորդափելի, կամ անմխոսելի գանձ, յորմէ գե. գանձին շնորհք քաւութեան ։ Վասն որոյ և ես այսու բանիւք հաւատ ընկալեալ, և այլն ։

16 Ջամբնայն ուրայնալ ։ Ջրամնայն առք ցցուեալս՝ ընդ ոտիւք ջարդեա ։

17 Սահմանեալ 'ի լոյս ուղիղ ։ Երբև գնացող լոյս փոքր կայծի, որ երբ անդրդ կամ աներևելի համարի ։

18 Բանիւ հաղթանակ ։ Նշան մինչ 'ի վերջն 'ի բերան աղօթողացն բանս գնէ այլովել վասն իւր, որպէս տեսար և 'ի բանն Ի Զ. 4 ։ ահա անգ. լծ. 24 ։

19 Անհուն առաջնոյ ։ Պատճառն յօրինողի այս գիշական բանիցս, եղեցի բժշկեալ, և այլն ։ Նա այն պատճառ խմանին ծնողք կամ փոր. ձագելս որդոյն, կամ որք յորդորեցին յօրինել զայն ։ Կամ խիս այս. պէս, սկիզբն ասացող, այսինքն յօրինող ողբերգութեա ։ Իսկ եթէ որ կոչական ասցէ, ով սկիզբն, և այլն, խմանի՝ ով տէր, պատճառող յօ. րինողի ողբոցս, նա՝ որ զայս գեղ փրկութեան մեզ կազմեաց, եղեցի բժշկեալ, և այլն ։

20 Ի տայն ձայնի ։ Նա որ 'ի այն աղօթական մասինի՝ խնդրական գիշմանք ուսոյց խորտակել զթևս հպարտութեան, աղաւեսցի 'ի չար կապանաց մահու աղխից, մեհարեր գործոց կամ մեղաց, ակնածութեանց, տամինեցն՝ գործելոց 'ի մանկութե, ծերոց, գործելոց 'ի ծերութե, և միջոց, գործելոց յերիտասարդութե ։ Կամ, աղաւեսցի 'ի պարտեաց սկզբնական մեղաց, և 'ի վերջին պատժոց հանդերձելոցն, և 'ի միջին ներկայ պատուհասից ։

21 Ընդդիմամարտ դիւաց ։ Յաղագս մանկաղբիս չէ յայտ՝ արդեօք որբ. բոյ փարգասերեսին իցէ, թէ այլոյ ուրուեք ։ Նա է աղօթքս առ հայրն ած վասն լուսնոտոյ ։ որք թէպէտ և 'ի բնական պատճառաց ախտանան, սակայն ազդեցութիւն գիւին խառնի բազում անգամ 'ի ատրեկացուցա. նել և 'ի բորբոքել զախտ արևանն ։

22 Կուսակ ընթանի ։ Անուն քո երբև ած՝ մեծ է և ահաւոր ։ բայց երբև հայր՝ ընտանի է, նշանակիչ ծնողական գթոյ ։ ուստի և քան հա. ճոյական, քաղցր 'ի բերան ասնուլ ։ Կամ, անուն քո ահաւոր և ասր. ասփելի է առ գեւ, առ խոտանս, առ ածուրացս ։ բայց ընտանի և ա. խորժելի առ հաւատացեալս, առ ածապաշտս ։

23 Պատճառ որդւոյ ։ Սկիզբն որդւոյ ծննդեանն, կամ երբև հայր ճշմարիտ արտադրութեամբ, որ առնիչանակ գոլով միշտ գոյակից իւր ունի զորդի ։ այլ ոչ նախատրութեամբ ։ ոչ նախնութե ժամանակի ։ որ. պէս յարափառ ծնողն յառաջ է ժամանակաւ քան զծնեալն ։ Կամ, ոչ լոկ նախ գաւելով անուամբն, որպէս հայհոյէր արիւ, որ մի անձն համարելով զհայր և զորդի, ընդ նմին գնէր՝ թէ հայր նախ գնի քան զորդի կոչմամբ միայն, և ոչ արտադրութեամբ ։

Յաղագս պատճառ բանիս յայտնի է ուսանողաց ածարանութե, զի փարգասերսք յունաց առփոփոխար 'ի կիր առնուն յածայինս, կոչելով զհայր՝ պատճառ որդւոյ, կամ հօրն որդոյ ։ որով խմանան զճշմա. րիտ և գիրական արտադրիչ սկիզբն անձին որդւոյ, կամ հօրն՝ ա. ռանց զանազանութե էութեան, և առանց կախման ։ և զայն կիրառու. թիւն յինքեանս ընկալեան փարգասերսք հայոց ։ գիտելով զուգեղ ի. մաստ բանին, և զուգմանութի լեզուացն, և միանգամայն ոչ անգիտա. նալով զայլ նշանակութի այնր բառի, ըստ որոյ ոչ պատշաճի ածային անձանց ։ զի պատճառ 'ի ասեղծուածս զայնցանէ առի առփոփոխար . յորս գոյ զանազանութի բնութե, և կախումն միայն զմիւսմէ ։ և ըստ այսմ մասայ՝ անպատճառ առեն փարգասերսք հայոց զորդին և զհօրն ասուր ։

որպէս Շնորհալին ասէ 'ի յն որդին, 'ի բանն յաղագս երրորդութեան. « Հայր է պատճառ՝ անպատճառից, որդւոյ ծննդեանն, հոգւոյն բղխմանն: Զի նմ՝ չէ ինչ պատճառ, ինք՝ պատճառաւ՝ գոյից պատճառ »: Զնոյն ասէ 'ի շարականն հոգւոյ գալստեան, 'ի կանոնն Դ. 'ի հարցն: Որ բոլորից ես պատճառ, և այլն: Նոյնպէս և յառաջին թղթին առ մանուէլ կայսր. « Հայր պատճառ, և որդի և հոգին 'ի պատճառէն անժամանակաբար, և ատանց պատճառի »: Իսկ վարդապետք լատինացւոց առերաբար 'ի կիր առնուն զբառն [illegible], և յառաջնոյն՝ երբեմն նաև զբառն [illegible]. որպէս Իրենէոս (գիրք ԺԱ և ԺԲ.) Օգոստինոս (գիրք ԽԴ. խնդրոց. ԺԴ.) Վիկտորինոս աֆրիկեցի (գիրք Ա. ընդդէմ արիոսի:) Անսելմոս (գիրք յաղագս բղխման հոգւոյն սրբոյ:) Րիկարդոս վիկտորեան (գիրք Ե. յաղագս երրորդութեան. գլ. Է.) Իսկ յետ երկոտասաներորդ դարուն խափանեցաւ առ լատինս կիրառութիւն այսր բառի, թէպէտ ասանց մերժելոյ զաւարութիւն այլոց այլոց. որպէս ասէ նա ինքն սուրբ Թովմաս ակուինացի 'ի Ժ. խնդ. յաղագս կարողութեան. յօդւածն Ա. առ 8. « Յոյնք ընդարձակագոյն վարին անուամբ պատճառին, զծագումն նշ այնու նշանակելով... վասն զի ոչ բառ պատշաճի առ ինչ 'ի լատին լեզու, զոր վասն համապատասխանոյ լեզուին մարթ է բառ պատշաճի ասել 'ի լեզու յոյն: Սակայն յընդունել մեր զանուն պատճառին յածայինս բառ յունաց, չէ պարտ յայն միտս խնդալ, որպէս յորժամ զանեղծաւածոյ առի »: Վասն այսորիկ 'ի փլորենտեան ժողովն՝ 'ի վիճաբանութեանն առն յոյնք անդադար 'ի կիր առնուին զբառն [illegible]. և երբեմն նաև լատինք բառ մտոց յունաց. մինչ զի նաև 'ի սահմանին հաւատոյ ասացին. « Որդին ևս է՝ ըստ յունաց պատճառ, և ըստ լատինացւոց՝ սկիզբն էնթակայութեան հոգւոյն սրբոյ, որպէս և հայր »:

24 [illegible]. այսինքն զարհուրեալ 'ի վեատելի տեսլեան կամ սքանչելի արեան երկնաւոր գառինն. որ և [illegible] է, այսինքն ոչ գոյ բան կամ չափ զօրութեան նորա. մինչ զի թէ և միանգամ հեղեալ կամ սրսկեալ, մաքրեաց զհամօրէն ընդ ամենայն յանխնանս: Աստանօր յառաջադրեալն 'ի [illegible] եղեալ է 'ի սեռական հոլով նման յառաջադրելին՝ [illegible], նկրշանակարար այնմ սրոյ սրով յառաջադրելին դնի 'ի հոլով յառաջադրելոյն. տես զնոր Ը. 25. 27: Արդ ասացէ, զի անհեղն զիամակն, և մնաստանդ ինքն զնե փոխեցէ 'ի անհեղեղն, զարհուրեալ 'ի հեղմանէ արեան քոյ փրկչին, որ միանգամ հեղեալ, 'ի մշտնջենաւորս անձն զզօրութիւն:

25 [illegible]: Որ ընդհանուր ցուցանէ զմիշտ քրիստոսական խոնարհութեանն, և զայն բաղմնցուցանէ, իբրև թէ 'ի պատկանելի խոնարհութեանց յայտնէ խորհրդոյ մարդկութեան, ամենեցուն ասանանց. հետագնեալ մերժեաց 'ի [illegible], այսինքն 'ի չինուածոյ խորանին՝ 'ի մարմնոյ քերովբէին կամ լուսանոին, յորում դու ինքն բնակես:

26 [illegible]: Բամբեցուցիչ. (փուշ փուշ ընող.) [illegible]. զմնգակ կամ ցանկացիչ ձեռին: [illegible]. այսինքն մեծ և առատ ընեայն քոյ, որ զոգին հանէին առաքեալ ցաւին, և քրիստոնէացուցանելին զանասուն և զլուսուն ընեաման: Արդ յիշատակաւ ընծայն այնուհետ աստիճեւցէ ցաւոյ չորին ասանանց՝ փոխանակ ընկերին զլուսանոն:

27 [illegible]: Ի ասարեկ բարեխառն կաղաչերժ և սուր սլաքին կամ ակիլին՝ սրով ընկալաւ փրկչին զմեծ և զդերանայեալ վերին, աստակեսցի ասանանց՝ առաջին զանց և պատճառ մաղման: Վէր

կայի փրկչին Քն եղև՝ ոչ միայն առ այլ վէրսն որ 'ի գանիցն և 'ի բևե֊ռացն, որ և ինքնին մանչացուցիչ էր, այլ և բառ անարգութեան և բառ յանդգնութեան ափզովին. զի ոչ խնայեաց նա և ոչ 'ի մեռեալ մար֊մին խաչելոյն։

28 Ընծան իւնոշինն։ փոխանակ թանձրացելոյ գինւ. այսինքն ան֊մաքուր եւ մաշկանոցա մարմնոյն ծածկեցաւ 'ի գերեզմանի։ Ո՛ յառ թաղմանն փրկչին՝ հաղորդութիւն նործեալ փառացն, կարծեցեալ էր խոնին սատանայի 'ի յառաջս խաւարային գժոխոց անելն զնեգն։ Եւ յեղեալ զառաջին հաղուածն որով 'ի փրկագործ կրից խաչեցելոյն թինկ սատանայի անհնարացեալ խաղաղ։

29 Վասն զի 'ի [illegible]։ Զամենայն զփրկագործ կիրս որդւոյ քո, և զխառնարութիւն սատանայի՝ այնպէս խառնախանիմ 'ի փառս քո ամ հայր արդարութեան, զի եղէ միանգամայն [illegible] 'ի [illegible] այսինքն 'ի փառաւորելս զքեզ՝ զհանեմ փառաւորել և զորդիդ և զհոգիդ՝ երրև համաստարապատի զանազանելս 'ի քեն։ [illegible]։ Նման [illegible] խմանի զոյական 'ի [illegible], որպէս [illegible], 'ի բանիցն [illegible], և նոյա֊նակէ՝ ակեալ, կարօտութեն. ասաի և խմաստն է, վասն զի մին յաստ֊ցեալ անձամբ ոչ ակտա ինչ կամ կարօտութիւն ըստ զօրութե ունի 'ի միամէն, [illegible], 'ի միում անհամանելի ածու֊թեան. որպէս հայհոյէին արխանոք և հակեմարոք, զորդի և զհոգի երրև կարօտեալ զօրութեի ինչ առել հօր. այլ զանազանեն բանդ [illegible] փառաւորելն ըստ անմանմանակ հօրդ, ըստ նմին խնա և զհոգին։ Այս խմաստք պատճառին այս են. եթէ եա զորդիդ և զհոգիդ համա֊րել իբր ըստ զօրութիս ինչ զքեն կախեալս, որպէս ադանդաւորքն կար֊ծէին, ոչ զհանեի 'ի փառաւորելս զքեզ՝ փառաւորել և զնոսա. բայց քանզի զամանեմ զնոսա անձնաւոր էութիւնս զուգապատիւս քեզ, վասն այն 'ի փառաւորելն զքեզ՝ փառաւորեմ և զնոսա. ընծայեալ քեզ զոչութե, կարողութիւն, [illegible], անձնաւոր փայլ֊լման, կամ արժանաւորի մեծամ, և միարան համապատուե, են։

# ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելեալ կրկին հեծութեան նորին հակողի
առ նոյն ակնյս մաղթանաց բանի.

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ զաւ միայն անկիզելի բարեաց, զթութի անձնա, որքի բարձրեալ միայդ ոյ, որ զաղջան զօրն թշա֊ռութեան ցուցեր փրկարան, և ոչ կորուսեան զառա֊պարապան, 'յեղանակեալ խնձ զաւուրն չար առ մեծ աւերոխ անհնարութեան։ Նժիշկ ախտալեցոց, հալե֊մոլրեալ ոխարեն, ակր ապաւինեալ ծառայես, զինի

անապակ մեծ տրտմեցելոյ, սպեղանեաց դեղ վիրաւո-
րեցելոյ, աղքատութիւն մեղօք գրաւելոյ, օրհնութի
բարեաց մերժելոյ, [2] կնիք շնորհաց խոտելոյ, օծումն
կոչման կապտելոյ, կանգնումն վերստին կործանեցե-
լոյ, պատսպարան հզօր գլորեցելոյ, օժանդակ վեհ
գայթակղեցելոյ, դուռն բարձրութեան տարակուսե-
լոյ, սանդուխք երանութեան եղկելոյ, ճանապարհ
շաւղաց մոլորելոյ, թագաւոր ներող պարտելոյ, քաղցր
յուսադրութիւն լքելոյ, ձեռնկալ կենաց հերքելոյ, [3]
մեծդ միայն և ամենաառատ, որ զլիութիւն բարեաց
առհմանեալ հեղուս անչափ յաճախութեամբ քան զոր
խնդրեմք և իմանամք, ըստ Պաւղոսի գոհաբանութեն.
Քանզի ննուց յըմնից և թուոց երից և չորեք տա-
սանց ՚ի վաղորդայնէ տանջեանն առ մուտս արևուն,
անդուստ առ նմին յաւէտ կարկառմամբ խոկ և խոկ ՚ի
սոյն անարգել սրտիւ, ՚ի վեր է քան զաղերսանաց ակն-
կալութիւն մարդկան, բարեգործել միմեանց շնոր-
հաւորութիւն. խոկ առ իմ թշուառութեան և անար-
գութեան զքոյդ եդեալ փառս, ամենակարող զօրու-
թիւն ահեղ, բոլորից ա՟ծ, օրհնեալ տէր Ք՟ս, որովք
սահմանեցի կշռութեամբ չափոյ հաստողիդ ընդ հո-
գւոյս հաւատարութիւն կցորդեալ։ Քանզի մեա յայսո-
սիկ անքաւ և անհետազօտելի, ամենևին բարի անման
բարկութեան խաւարի, ուստի յոյժ նուազ են քում
մեծութեան աստեղայն թիւք, զորս գոյացուցեալ յո-
չէից յորջորջմամբ անուանց կնքեցեր, և կամ հիւթ
երկրի ՚ի յօդս հեղեալ. զոր [4] ՚ի չգոյից հատեալ տա-
րածումն յատակի կառուցեր, քան ինձ նախադրեալ
համարդ սակաւութեան, որովք քեզ նմանիլ վարդա-
պետեցեր։

Բ. Ահա ծածկեցաւ և [5] ընկղմեցաւ ՚ի քոյդ լոյս կա-
մաց երկայնմտութեան՝ համուրց չարութի, իբր զոյղն
մայլ ՚ի տապ արևու, և որպէս աստուստ խոկ կիրք
բնութեանց զհասարակաց բարուց ցուցանէ։ Քանզի
ով որ ՚ի մարդկանէ մեղաւ, և ոչ զղջացաւ. ով որ զաղ-
րացաւ, և ոչ ամաչեաց. [6] ով որ զարշեցաւ, և ոչ պատ-
կառեաց. ով որ սխալեաց, և ոչ ապաշաւեաց. ով որ
կործանեցաւ, և ոչ հեծեծեաց. ով որ գայթակղեցաւ,
և ոչ սորջացաւ. ով որ պարտեցաւ, և ոչ ինքեամբ ըմ-

բերանեցաւ. ով որ պատրեցաւ, և ոչ յոգւոյ ելաւ. ով որ ճաշակեաց լեղի, և ոչ դառնացաւ. ով որ անկաւ 'ի բարձրութենէ, և ոչ ընդոստեաւ. ով որ կորոյս մեծութիւն, և ոչ աշխարեաց. ով որ զրկեցաւ յերանութենէ, և ոչ ելաց. ով որ կապտեցաւ 'ի շնորհէ փառաց, և ոչ ողբաց. ով որ գտաւ ինքեան վնասակար, և ոչ ըստգտաւ. ով որ մերժեցաւ յերեսացն տն, և ոչ հառաչեաց. ով որ լուաւ զայ սպառնալիսն, և ոչ սակացաւ. ով որ [7] ընդ մի չարեացն՝ հազարս չուաղեաց. ով որ մերկացեալ յաւուրս ձմերայնոյ, և ոչ զոփացաւ. ով որ անօրինեցաւ, և ոչ քարամբք զմիտսն կոծեաց. ով որ ետես զտորուկն յիւրում մեծութեն, և ոչ զկծեցաւ. ով որ կատարեաց չարիս, և ոչ զինքն իսկ նշովեաց. ով որ ախտացաւ, և ոչ զանձն դարմանեաց. ով որ յանօթալեացն գործեաց, և ոչ զիւրն մարմին ձաղեաց. ով որ 'ի պատկառելիսն հայեցաւ, և ոչ զօրն իւր անիծեաց. ով որ զգործեցեալսն յիշեաց, և ոչ տապացաւ. ով որ զգաղտնիսն մտաբերեաց, և ոչ խորովեցաւ. ով որ զծածուկսն նկատեաց, և ոչ մահ կորստեան խնդրեաց. ով որ զաներևոյթն կերպաւորեաց, և ոչ կրկին յերկիր կորացաւ. ով որ ընդ մեղացն հեշտութեան բոց անշէջ հնոցի ոչ խառնեաց. [8] ով որ զվնասակարսն ընտութեանն, և ոչ պապակեցաւ. ով որ զկամաւ ներգործեալսն, և ոչ սատակման ինքեան աղօթեաց. [9] ով որ զանճառելիսն, և ոչ խռովեցաւ. [10] ով որ զանկրելիսն էութեանն, և ոչ թախծեցաւ. ով որ զմեծամեծսն, և ոչ մաշեցաւ. ով որ զանբծութեանն ապականարարսն, և ոչ տոչորեցաւ. ով որ զտարագրութեանն պատճառ յանցմունս, և ոչ տագնապեցաւ. ով որ զերեսացն աղտեղի տեսիլ, և ոչ բարկութեան վերնոյն զանձն պարտ վարկաւ. ով որ [11] զմի 'ի կարևորացն մեղաց յաչս կերպացոյց, և ոչ զինուք մահու խոցեցաւ. ով որ զխայտառակմանցն, և ոչ վայս վհատութեան ընդ հեծութիւնս ձայնին հիւսեաց. ով որ յարքայական գահոյիցն տնանկացաւ, և ոչ կործանեալ 'ի վայր գլորեցաւ. ով որ ընդ պսակին պերճութեան հող 'ի գլուխ եղեալ, և ոչ կրկին չարչարեալ յոգի մահացաւ. ով որ ընդ պայծառ պատմուճանին քրձազգած եղեալ, և ոչ տխրեցաւ. ով որ զկեանս իւր կորոյս, և ոչ ա-

րեան արտասուս երկնեաց. մի՛ որք ընդ արկանելեաց լուսոյ խաւար զգեցաւ, և ոչ նուաղեցաւ. մի՛ որ՝ ի վերայ սգոյ սիրելոյ ոչ թառամեցաւ։ Նա այս կերպարանք Աստուածայինք պարտաւորիս յանդիմանութեան, տխուր դէմ, [12] քաղեալ ճաճանչ, ցամաքեալ խոնաւութիւն, [13] երիթացեալ շուրթն, անշքեալ տիպ, արտմեցեալ ոգի, այլայլեալ ձայն, կրկնեալ պարանոց։ Եւ զի [14] թէ որ զխնկութիւնն խնկ նշանակեսցէ, ոչ անօրինէ. անամբարտաւան միտ, անհպարտ սիրտ, անխնդրող պարգևի թշուառ, անաղերսալի պաքեալ, մերձակըշտամբելի դեգերեալ, խրուամբրժ սոլեալ, արդարալուկ քաղցեալ, պատշաճագոյն հարուածեալ, մերձավկայ մահապարտեալ, արժանապէս հանեալ, անձնանէձ եղկելի։ Եւ զայս թարգմանեալ ցուցանէ արդարագործ փարխեցին կշտամբեալ, և մեղապարտ մաքսաւորն բարեհամբաւեալ։

գ. Եւ արդ [15] եթէ զարխան՝ հնարաւորութի՛ բանսարկուին զատողին զմեզ գայթակղեալս, զկորան 'ի մեզ սերմանիս առ օրն համարեսցի, զխարդ ոչ զչարխն արկեալս 'ի մեզ հոգւոյ արութիւնս 'ի խնամակալութենէ՝ կամաց կեցուցչիդ ձն և ձն գրեացես, տէր բարեգութ, հզօր և յաղթող, քաւիչ մեղուցելոց, կարող յամենայնի առ ամենայն փրկութիւն։ Եթէ զանդունդս առ երկինս փոխես, և կամ զխաւար մթութեան [16] 'ի լոյս հաստատես, եթէ զդառնութիւն լեղւոյ 'ի մանանայի քաղցրութիւն կազմես, և կամ զկոծ սատակութեան վհատոյ 'ի պարս զատու բերկրութեան հարսանեաց կարգես, զխրխինք և հնարաւորք են քեզ այսպիկ. և ես քան զսոսին բաւես առ նոսին տիրեալ համօրէնից ահաւորագէս. և քեզ փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն։

---

1 Յէջման–ջէ. ԽԺ։ Զոր դուք ասացէք՝ թէ գոյ աւուրն չար իւր (մատթ. Զ. 34.) կամ, զոր սողոմոն ասէր (առակ. ԻԶ. 16.) թէ եօթն անգամ անկցի արդարն, խմացեալ զանկմանէ 'ի մեղս բաղում անգամ յաւուրն։ Դու զայս չար աւուրն փոխեցեր յաւէտս յաւուր, հրամայելով թողուլ եղբօր եօթն անգամ մեղուցելոյ 'ի միում աւուր. ծանուցանելով այսու՝ թէ զօրն ամբողջ մարթ է արդարանալ և փրկել. և ոչ թէ մնալով 'ի չարին՝ կորնչել։ Այն որ 'ի մերս ղուկ. ԺԷ. 4. գրի. «Եթէ եօթն անգամ մեղիցէ» և այլն. 'ի յոյնն և 'ի լատինն յաւելուածով առի, ;——ն։

2 [illegible] ։ Այսու և յաջորդաւն յայտ առնէ զներգործութիւն մկրտութեան, և օծմանն որ 'ի նմա. իբր զի քո՛ շնորհօքն և վաստակօք իւր է կնքիչ հոգւոյ մկրտելոյն, և օծանող՝ 'ի կոչելն առ ինքն զհողոպուտեալս 'ի զաւրդուց հոգևորաց ։ Կամ [illegible], իմա օծանող ըստ քննական անուան իւրոյ ։ Իսկ եթէ զայսոսիկ առցուք ոչ ըստ ժամանակի մկրտութեան՝ այլ ապաշխարութեան, նոյն իմասցուք յարմարին. իբր զի և ապաշխարութիւնն է երկրորդ մկրտութիւն ։

3 [illegible] ։ Դու միայն Ճշմարիտ հարուստ և Ճոխ, [illegible] ես միանգամայն 'ի պարգևել անխտիր. որ զլիութեն բարեաց [illegible] ունելով, այսինքն բովանդակեալ ունելով 'ի քեզ, հեղուս 'ի մեզ անսպառ առատութբ, առաւել քան զոր խնդրեմքն, և այլն. կամ, ըստ այլ օրինի. [illegible]. այսինքն զլիութեն բարեաց բաշխեալ ըստ իւրաքանչիւր չափու՝ առատութբ հեղուս, և այլն ։ [illegible] ։ Ի լաւ օրին. և 'ի հին լուծ. [illegible], կամ [illegible] ։ Այսաւսիկ յառաջ բերէ զաւացեալն տեառն առ պետրոս՝ 'ի միում աւուր ներել եղբօրն մեղուցելոյ եօթանասնեկի եօթն, որ առնէ 490 ։ Այսչափ անգամ, ասէ, յառաւօտէ մինչև 'ի մտանել արեւու, [illegible], այսինքն մերձ միմեանց, կամ հետզհետէ 'ի նմին աւուր [illegible], յօժարաբար, կամ զեջանելով 'ի [illegible] ներումն եղբօրն անարգել սրտիւ, [illegible], բարեբարել առ միմեանս ներողութբ, կամ շնորհել միմեանց, [illegible], առաւել է քան զայս խնդրելոյ մարդկան ։ Արդ իմում անարգ թշուառութեն օրինադրեցեր այսչափ ներողամիտ լինել առ ընկերն. որում համեմատեալ զքո մեծութիւնդ՝ զիարդ չափեսցի հաստատութեն հոգւոյս ընդ արարչիդ, որ անբաւդ ես և ամենարարի, և անման 'ի բարկութեն. վասն որոյ առաջի մեծութեն քո առաւել առկաւ են թիւք աստեղաց, և փոշեք երկրի յօդս ցնդեալք. քան թէ ինձ եօթանասնեկի եօթն թիւդ, որովք ուսուցեր նմանել քեզ՝ 'ի թողուլ եղբօր մեղուցելոյ ։ Բաղդատական ձեռնարկութեն է բանս, իբր ասել. եթէ իմում ակարութես հրամայեցեր՝ եօթանասնեկի եօթն անգամ ներել յանցուցելոյ եղբօրն, որչափ ևս յաճախութբ ներեսցես դու մեզ, որ անբաղդատ առաւելուս քան զմեզ, և որում աստեղայն թիւք ('ի բաղում օրին. [illegible]) և փոշեաց երկրի՝ սակաւաթիւք են ։

Զթիւն եօթանասնեկի եօթն, այսինքն 490. բացատրէ սուրբ վարդապետս այլովք մանաւոր թուովք. ուստի ասէ. [illegible], այսինքն ինն անգամ յիսուն, որ լինի 450 ։ [illegible] (մի օրին. [illegible]) Առաջին ատաղդրողք նարեկին 'ի բաց թողեալ էին զբառսն [illegible]. իբր սխալ և աւելորդ համարելով. վասն զի [illegible] բովանդակեալ շոյր զթիւն 490 ։ Սակայն յամենայն գրչագիր օրինակս և 'ի հին լուծմունս գոն այն բառք. վասն որոյ 'ի վերջին ապագիրս եդան 'ի տեղի իւրեանց ։ Իսկ իմաստ բանին դիւրաւ 'ի յայտ գայ՝ եթէ կիտադրութիւնն լինիցի որպէս եդաք մեք, այսինքն [illegible]. որով բառն [illegible] անկանի 'ի վերայ [illegible] և [illegible]. իբր ասել, և այլ թուոց՝ երեք և չորք առաւնց. որ առնէ 40. և յաւելեալ 'ի 450ն բովանդակի թիւն 490 ։

Այս եղանակ որոշման թուոց՝ է ըստ բնական կարգի շարադրութեանն, առեալ 'ի սովորական ոճոյ մարդկան՝ որով ասեմք. երկու և երեք անգամ, երեք և չորս զոյգ, և այլն, և իմանի ընդ ամենն՝ երեք անգամ, չորս զոյգ. Սոյնպէս 'ի սովորութեան գրոց ասի (Ելից Ի. 5.) «Յերիս և 'ի չորս ազգս», այսինքն ընդ ամենն՝ չորք ազգ. որպէս մեկնէ և սուրբն Եփրեմ յաւելն (հատ. ա. երես 221.) «Եթէ ոչ ապաշխարեսցեն, զպատուհասն հանցէ 'ի գլուխ չորրորդին» ։ Յար և

նման այսմ է առնելոյ առաջին․ « Ի վերայ երից ամպարշտութեանց դամասկեայ՝ և 'ի վերայ չորիցն ոչ դարձայց 'ի նմանէ »․ զոր և ութ անգամ կրկնէ անդ․ (Ա․ 3․ 6․ 9․ 11․ 13 ։ Բ․ 1․ 4․ 6․) յորս խմանի․ 'ի վերայ չորրորդ ամպարշտութեան, ևն ։ Աստ ըստ այսորիկ օրինակաց՝ առաջին առաւօտ, [illegible], նշանակէ՝ երից առաւուց, և չորրորդ առաւօտն, որ լինի ընդ ամենն 40 ։ Այսմ նման բացատրէ և հին լուծմունքն ։ Իսկ եթէ զբառն [illegible]՝ յարեսցուք 'ի բառն [illegible]՝ առեալ [illegible]․ կարի գծուարին լինի խմաստն և անստոյգ, և անհամեմատ կարգի չաբաթաւուն ։ Վասն զի եթէ խմանեսցուք այսպէս, և թուեսցուք երից, այսինքն 'ի վերայ երկուց թուոցն՝ յհնն յհնից, յաւել և զչորրորդ թիւն, այսինքն զչորեակ առաւն ։ Կամ այսպէս, յաւելեալ 'ի վերայ հնն յհնից՝ զերիս եւ թիւս, որ է չորեակ առաւն, յորոց գումարի 40․ և այնպէս գտանին երեք թիւք, այսինքն չորս, առաւն․ և սրբագրեալն 'ի ասացանէ՝ քառասուն ։ Եթէ առեալ այսպիսի՝ և այլ եւս խմաստիք ջանասցի ոք մեկնել, բանի և ըստ համձայնի ձգէ զբանն․ որպէս յայտնի է մանր քննողաց․ և թէ և չիցէ այլ ընդդիմութիւն, գանէ ուեւլորդ և անհատանմայր չարգաւուն [illegible] յաւելեալ 'ի վերայ [illegible]․ զի ըստ այդորիկ մասայ բառքն [illegible] լինէին բացայայտիչ բառիցն [illegible]․ վասն որոյ անդրադարձ էր զ՞ն խառնել 'ի մէջի գնել երկուցունցն ։

Այլինչ պակաս ըստ համձայնի է և այն խմաստ, զոր 'ի վերայ առաջնոյն յաւելու հին լուծ․ առեալ․ զ40 երկու կարգ աւուր․ այսինքն 26․ և 14 և այսպէս լինին երեք թիւք, այսինքն 150, 26, և 14 ։ Եւ ոչ այսու շատացեալ, 'ի բացայական միոյ չղջէ զբանն, առեալ․ առաւօտ և բերս՝ համատոյ, յուսոյ, և սիրոյ ոչ լինի թաղութիւն մեղաց․ և աւենոյն խորհուրդ՝ անուամբ երրորդութեան կատարի ։ Բայց աւանէ ընթերցողն՝ որչափ 'ի հեռաւորս ձգի բանն ։

4 Ի [illegible]՝ 2 օրին․ [illegible]․ Զհիւթ երկրի՝ խմանալով և զջուր և զօդ, յորոց հաստատեցեր, առէ, յայս առնել թէ այլ գոյացութիւնք են տարերքս արարչութեանցդ՝ որոց յերկնային լուսաւորաց, զորս եւ առէ՝ առեղծմամբ յոչէից գոյացուցեալ ։ Իսկ զառակս [illegible] կնքել (ըստ առաջ․ Ծնն․ 1․) ոչ եթէ նշանակէ՝ միում միում 'ի նոցանէ յատուկ անուանս եդեալ ոյ, որպէս այժմու առանգաւորք կոչեն նոցա անուանս ուրոյն ինքնահնաձայս․ այլ խմանի՝ ձանաչել ոյ համառօտաբար զհիւրաքանչիւր առանձին զբնութիւն և զզօրութիւն և զորպիսութիւն, և միանգամայն ընդ իւրով իշխանութեամբ վարել զամենայն յոր գործ և կամիցի, և նոցա անփոփոխ հնազանդել․ իբր այն թէ յանուանէ կոչեցեալք են․ քանզի յայս իսկ առհմանի առ մարդիկ անուանադրութեան պայման, ձանաչել որպիսութեան, և ընդ իշխանութեամբ ունել զիրն՝ զոր անուանէ ։

5 [illegible] ։ Յետ առեալն թէ անպատ է քո մեծութիւն 'ի ներքս, հեռակացուցանէ ։ Աչա ծածկեցաւ, այսինքն․ առաւ յիրաւի ծածկեցաւ 'ի լոյս երկայնամիտ կամաց քոց՝ չարութեան ամենեցուն, որպէս առեալ մութն 'ի լոյս արեւու ։ [illegible] ։ Զայս յաւելու իւրև երկրորդ պատձառ գթութեանց 'ներելոյն ոյ․ զի որպէս 'ի կողմանէ ոյ գոյ առատ ներողամտութիւն, նոյնպէս 'ի կողմանէ մարդոյն գոյ մեծ վրիպականութիւն, և գիւրութիւն աղաչանաց․ որպէս և ինքնին իսկ բնաւորական կիրք կամ ցաւն՝ զոր զգամք յետ մեղաց, [illegible], ցուցանէ զհատապականական բարս մարդոյն՝ զվրիպականութեան, և զգձականութեն, ուստի և զհարասիլն ներողութեան ։ Քանզի ով որ 'ի մարդկանէ մեղաւ, և ոչ զգձացաւ՝ զանէ բնական զղջմամբ իւրև ընդ չար ինչ և վնասակար բնութեան ։

6 Ո՛չ [illegible] : Այսինքն գործածեալ, տղաեղծեալ ։

7 [illegible] : Ո՛վ որ վասն միոյ եւեթ չարի մեղաց՝ 'ի ծննդեանն զխոստ նորա, [illegible] · ոչ հաղորդիցի աւազ եւ փոյ կարգաց անձինն : Ո՛չ [illegible] : Զայս կամ երբ նմանութիւն այլոց սասցելոյն 'ի մէջ արկանէ, այսինքն թէ զոր օրինակ մերկացեալն 'ի ժամանակ ձմերայնի՝ անհնար է թէ ոչ սառնեսցի, այնպէս զրկեալն մեղօք 'ի զգեստէ շնորհաց՝ անհնար է թէ չցրտասցի, չամաչեսցէ, եւ այլն : Եւ կամ փոխաբերութիւ իմանալի է մերկանալն եւ ձմեռն, այսինքն ով որ մերկացեալ 'ի ծածկութից շնորհաց 'ի ձմերային կեանս աշխարհի՝ [illegible], ոչ սառնացեալ, ոչ դողացեալ : Նմանօր ծանիր, զի 'ի յիշատակելն զանուանս կերպս կամ յաւդմունս՝ որ վասն մեղաց լինին 'ի մեղուցեալս, ոչ զխոտ զամենայնն ցուցանել կարե օրինաւոր եւ հետեւելի, որպէս անփծանել զանձն կամ զօրն, կամ զմահ անձինն խնդրել, եւ այլն, այլ թէ այսպիսի կերպք որք յոմանս լինին, յայտնի ցուցանեն զապաշխարող բարս մարդոյ ։

8 Ո՛չ [illegible] : Նշան մինչեւ 'ի բանն [illegible], եւ այլն, զօրութիւ իմանալի է բայն [illegible], այսինքն 'ի միտսն նկարեաց, յիշատակեաց, խորհեցաւ, եւ այլն : Ո՛վ որ, սաէ, տեսանելով գործեալ զայնպիսի չարիս՝ որք նմին իսկ բնութեան մարմնոյ վնաս ածեն, [illegible], ոչ առաջնորդեցաւ 'ի ցաւոց որոււոհ : Ո՛վ որ ընդ [illegible], 'ի հեշտութե անդ մեղացն ոչ զգայ յանձին զայրուցն խղճի՝ երբ ճաշակ իմն անշէջ բոցոյն գժոխոց ։

9 Ո՛չ [illegible] : Զանաստելի մեղան ամօթալիս գործեաց, կամ յիշեաց, եւ ոչ խռովեցաւ ։

10 Ո՛չ [illegible], այսինքն զանտանելեան բնութեան մերոյ, զզժնդակս, կամ զայն մեղս՝ որ յոյժ սաստ են, որպէս անդթութիւն, աւազակութիւն, եւ այլն ։

11 Զի 'ի [illegible] : Այսինքն զմի յայնց մեղաց՝ որք 'ի կարեաց բնութե գործին· այսինքն 'ի աղխատութենէ, 'ի տկարութէ, կամ պատճառաւ քնոյ, կերակրոյ, հանդերձից, եւ այլն : Իսկ 'ի բանէն՝ [illegible], մինչեւ [illegible] 'ի [illegible], եւ այլն· են իբր օրինակք մարդոյ անկելոյ 'ի շնորհաց մեղօք· իբրեւ թէ զոր օրինակ անհնար է չաղքնալոյ մարդոյ զրկելոյ 'ի թագաւորութենէ, 'ի պատւէ, 'ի փառաւոր հանդերձից, 'ի ստացուածոց, 'ի սիրելեաց, նոյնպէս մարդոյ մերկացելոյ 'ի շնորհաց : Ո՛վ որ [illegible] զստացուածն զկարեւորս կենացն կորոյս, եւ ոչ արիւն խլեաց յաչացն ։

12 [illegible] : Այսինքն ամփոփեալ, նուաղեալ լոյս աչաց ։

13 [illegible] : Այսինքն ցամաքեալ, չորացեալ ։

14 [illegible] : Եթէ զուղխն կիր զծծմարխան կամիցի յայտնել, ոչ սխալէ սաէ, թէ առ ամօթոյ մեղացն միայն ոչ կարէ ամբարտաւանել : [illegible] · ոչ սիրան հպարտանալ· թշուառ գոլով ոչ իշխէ պարզես խնդրել, եւ այլն : Զայս ամենայն սաէ, առ 'ի յաւտասել զնախատեցեալն իւր, թէ իւրն մեղաց բնականաբար ամաչեցուցանէ զմարդ եւ խոնարհեցուցանէ, որպէս եւ ցուցանի 'ի մեղաւորս մարդաւորն ։

15 [illegible] : Զ օրին· [illegible] : Եթէ ըղմեղան՝ որք հնարք եւ զեւսք են սատանայի, եւ իբր զեւր սերմանեա ցանէ 'ի մեզ : Կամ, եթէ զմեղան՝ խորամանկ ներգործութի սատանայի իբր զեւր սերմանեաս, [illegible], առ օրին կամ 'ի միում աւուր զանէ բազմապատիկ արգասաւորեալ, կամ 'ի միում աւուր այնչափ բազում թուով համարէ, այսինքն եօթանասնեկի եօթն : Կամ, առ

օրն համարեսցի, այսինքն յայն օրն դատաստանին 'ի համար բերիցէ, ճշգիւ հաշուեսցէ, և այլն: Ապա որչափ եւ տէրդ բարեգութ՝ զառ 'ի քէն անկեալ բարւոյն 'ի մեզ հոգւոյ տրամաբանս, զօրութիւն զղջման, ամօթոյ, երկիւղի, խոնարհութե, և այլն, քով խնամակալութեամբ ծն և ծն փրկեսջես, հաստատուն և արդիւնաւոր արասցես, կամ մի ըստ մինջէ նշանակեսցես, և ընդունելի համարեսցես:

16 Ի լոյս հասցուսցես: Այսպէս 'ի ներկայ ժամանակ գնեն բաղում օրինակք համեմատ այլոց բայից, փոխես, կալցես, կարգես: յայլ տպագիր գնիւր, հասուսցես: Եթէ, ասէ, 'ի գործս բնութեան կամ սքանչելեօք՝ ընդդէմ առ երկինս, զնորս ծոյլս բարձրացուցանես յերկինս ալեօք և ուսուցմամբ, կամ որպէս առ Ջրհեղեղաւ: Նոյնպէս միաբանեան, որ ըստ օրէ զխաւար գիշերի 'ի լոյս առաւօտու դարձուցանես, և զմեզ 'ի պայծառութիւն. կամ առ խորայեղացուածքն յեղխոյոս և յանապատին: ըստ օրինակին ընդայ, զգառն հիւթն՝ քաղցունս կազմես 'ի ատենկան, կամ որպէս զՋուր մեղային: Զինչ առաջնորդեան, զատաւնեկ կոծս արամութե՝ յուրախութեն հարսանեաց կարգես. որպէս առ այրին միամոր՝ կեցուցանելով զորդի նորա, կամ 'ի տան յայրոս իշխանին: Այս ամենայն քեզ դիւրին են և կարելի. և առաւել քան զայսոսիկ կարող ես, տէր զօրեղ ամենայնի, և այլն:

# ԲԱՆ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ ճշմարտեսցի բան քո, ողորմած բոլորից տէր, ներող և օրհնեալ, [1] 'ի բազմապատկելն պարտաւորութիւն աւուրն պատկերի զղջման մեղաւորին. թէ և առ յետին իսկ շունչն իցէ ընտրութիւն, և կամ 'ի մէջ չարութեանն փոխադրութիւն: Մանաւանդ զի դժնեայ [2] կցորդս այս անձնիշխանական՝ [3] միշտ մարտիկ, խաբող շողոքորթ, յարեալ 'ի ստութիւն, ըստ առակողին արածող հողմոց դժուարունելի, հաստողին փախչող, գերեալ որսողին, մոլեկան մարմնոյս, ներհակ ընկալից, յոգնապատճառեան ամենավարան, զոր քո է գիտել զքանեայն յաճախութիւն: Նա զկնի մեղանացն, ողորմագինս իմն ողբարկութիւնս վհատականս տաժանակիրս բազմաւաղելիս, քո առաջի տէր գթարկութիւնս գրեալս արտասուօք, թառանչս թշուառութեանց կար-

գերոց անբաւս չար վտանգից մեղսատագնապ պատկառեցելոյն ։

Բ. Եւ զի մի կրկնաբանութիւնս 'ի շատխօսութիւն կրթեսցի, առաւել քան զայն այսու ողբալի, քանզի ոչ երբէք համարձակի խնդրել իւր զարքայութիւն, այլ զտանջանացն թեթեւութիւն. [4] ոչ ընդ կենդանեացն 'ի լոյս, քան թէ ընդ գերեզմանականացն զգայական ննջումն 'ի խաւար. ոչ ընդ ամբարձեալսն, այլ ընդ բեկեալսն եւ ընդ խորտակեալսն ։ Ի հանգստեան իւրում վաստակեալ, 'ի խրախութեան ինքեան տրտմեցեալ. դիմօք ժպտեալ, եւ մտօք խոցեալ. կերպ 'ի ծաղր, եւ աչք 'ի յողբումն. երեսք զփոփոխանս ձեւացուցանէ, եւ արտասուքն զգաստութիւն սրտին Ճշմարտէ ։ [5] Նմանակք երկու յերկուլին ձեւոյն, մինն արեամբ եւ միւսն կաթամբ. երկու [6] բուրանոցք կայծակնաւորք, մինն խնկով եւ միւսն Ճենճերիւ. սկաւառակք [7] կրկին կրաւորականք համոց, մինն քաղցու եւ միւսն դառնութե. բաժակք զոյգ [8] առ երկուս բերմունս, մինն արտօսր եւ միւսն ծծումբ. [9] տաշտք կրեցեալք 'ի ծայրս մատանց, մինն գինի եւ միւսն լեղի. [10] դրունք տեսանելեաց ներհակաց, մինն 'ի լաց եւ միւսն 'ի վրիպումն. [11] խանութք հաղորդականաց հակառակութեանց, մինն արծարծէ եւ միւսն շիջուցանէ. հայեցուածք [12] դիմաց երկուց, մինն դոյզն ողոքանօք եւ միւսն անխնայելի բարկութեամբ. համբարձումն [13] երկակի բազկաց, մին 'ի հարուածս եւ մին 'ի մերժումն. [14] դէմք կրկնակի կերպից, մինն տըխրեալ եւ միւսն ցասուցեալ. կշտամբանք ընդ միոյ երկու, մինն ստեացս եւ միւսն ապառնեացն. [15] ապաւինութիւք կարծողականք, մինն գոնէ եւ միւսն թերեւս. 'ի մի բերան երկակի բարբառ, [16] մինն եղկութիւն եւ միւսն խռովութիւն. երկուս ազգմունս 'ի միում սրտի, [17] մինն կեղակարծ յուսոյ եւ միւսն Ճշգրիտ կորստեան. [18] ամպ լրթագոյն ահագնատեսիլ կրկին տեղացմանց, մինն նետս եւ միւսն քարինս. որոտումն ահեղ երկոցունց բերմանց, մինն կարկուտ եւ [19] միւսն հրացան. ցայգ ցաւագին երկուց վտանգից, [20] մինն լալոյ եւ միւսն մահու. [21] առաւօտ սգոյ երկուց բողոքմանց, մինն սաստից եւ միւսն ըսպառնալեաց. [22] արեգակունք երկու 'ի յերկուց ծայրից, մինն խաւարի եւ միւսն կիզման ։

Գ. Եթէ հարուածոց աջ կառուցանի, ինքեան վարկանի. և թէ ձեռն պարգևածիր, ոչ իւր ակն ունի։ Ի պարծանս ուրուք կորանայ, յամբարձումն գլխոյ ընկձի, 'ի չարեացն յիշատակ հեծէ, [23] 'ի ճառս մաքրոց պատկառէ, 'ի պատմութիւնս հանդերձելոյն երերի։ Եթէ օրհնի յումեքէ յայտնի, 'ի ծածուկ զանձն անիծանէ. եթէ գովեստ յումեքէ լսէ, պարսաւանօք զինքն կըշտամբէ. եթէ զարմլեսցի սաստկապէս, ինքեամբ ինքեան վիրայէ. եթէ ձաղեսցի ուժգին, սակաւ հատուցումն առաւել պարտուցն գրեսցէ. եթէ ըղձումն մահու ինքեան լիցի, այս առէ, և դարձեալ կրկնէ. և եթէ [24] որոգայթ մահու ճայթեսցէ յերկնէ, հազիւ ըղդեմն համբառնայցէ։ Ո՜ խորոց իրաւանցն մատեան խփեալ, զպատասխանութեանն յոյս կորուցեալ, զհամարձակութեանն ընթացս փակեալ։ Եւ [25] եթէ ոչ էր անփրկանաւոր կորուստ գերելոյն, զիւրայլին երթալ ոչ ինչ զանգատէր։ Արդարև [26] վայ մեղաւորին՝ որ տարակուսեալ կայցէ 'ի վերայ երկուց ճանապարհաց, ըստ հոգելից բանի իմաստնոյն։

Դ. Եւ արդ զիա՞րդ ոչ ողորմեսցիս, բարեգութ, այսքանեացս ձայնարկութեանց կոծկողագինս հեծեծանաց, որ անուամբս այսու մեծացար, թէ ողորմած եմ ես տէր։ Ահա առ չարութիւն գերւոյս բարութիւն քո, առ մահապարտիս դառնութիւն քաղցրութիւն քո, առ կորուսելոյս յայտնութիւն ճառագայթ քո, [27] առ յանդգնելոյս մոլութիւն ողորմութիւն քո, առ խակութիւն ճստակարիս հեզութիւն քո, առ կործանելոյս այցելութիւն աջ քո, առ ընկղմելոյս վերբերութիւն ձեռան քո, առ բժշկութիւն անողջանալի խոցուածոյս մատն քո, առ պակուցելոյս պաշտպանութիւն ոգի քո, առ տարախտաւորիս իմ վստահութիւն երկայնմտութիւն քո, առ օծումն ամենագժնելիս զօրութիւն քո, առ մեղաւորիս քաւութիւն հրաման քո, առ փախուցելոյս ապաւինութիւն տոք քո, [28] առ սրացելոյս պատսպարութիւն բազուկ քո, առ վրիպելոյս առաջնորդութիւն լոյս քո, առ տարակուսելոյս հնարաւորութիւն հանճար քո, առ անիծելոյս կրկին ստացումն օրհնութիւն քո, առ վհատելոյս քաջալերութիւն խրախոյս քո, առ վշտագնելոյս մխիթարութիւն բաժակ քո, առ նեղելոյս ըն-

դարձակութիւն կամք քո, առ ատեցելոյս կոչումն սէր քո, առ հաստատումն սասանեցելոյս բանն քո, [29] առ հոգւով վիրաւորելոյս կաթուած արեան քո, առ անէրևոյթ մթերս ցաւոցս ակնարկութիւն քո, առ յուսահատելոյս անդրէն ընտրութիւն իշխանութիւն քո, առ պատուաստումն կորեցելոյս կցորդութիւն քո, առ խաւարաւ մահու ծածկելոյս նշոյլ կենաց քոց, առ խռովեցելոյս իմ հանդարտութիւն խաղաղութիւն քո, առ վայրագութիւն օտարացելոյս ողջոյն քո, առ մեռելոյս դարձաւորութիւն ձայն քո։ Ո՜ դու տէրես ամենայնի գթութեամբ, և չիք 'ի քեզ մասն ինչ խաւարի. և ոչ է բարութիւն աւանց քո, և քեզ վայելէ փառք յաւիտեանս. ամէն։

---

1 [illegible]: Հրամայեալ բանն քո՝ որ յաղագս հոլթանաանելի հոլին մեղուցելոյն դարձի և զղջմանն, [illegible], այսինքն 'ի միում աւուր. թէ և 'ի յետին շնչոջ կենացն իւր յերեկոյի [illegible], դարձն կամ ընտրելն զբարին. և կամ 'ի [illegible], 'ի գործելն անդ զչար՝ հասցէ նմա փոխումն 'ի կենաց, կամ 'ի մեղաց յարդարութիւն: [illegible], ունելով մարդս ընկեր նիրհեան միջա խարեբայ, և յայլ կողմանէ՝ յետ մեղանչելոյն ցաւ և ապաշխարել և ողբալ, երկոքին այս են պատճառք՝ որք ներելի արդարութեան ցուցանեն զմարդն:

2 [illegible]: Ոմանք զմարդիկն խմիցան. բայց յաջորդքն ամենայն ոչ յարմարին նմա, որպէս և ոչ կամաց միայն, կամ բանական հոգւոյն: Այլ խմանի զգայութիւն, կամ զգայական մասն, որ [illegible], այսինքն նիւթնագլուխ, ապստամբ 'ի բանէն. հանապազ մարտնչի ընդ հոգւոյն, խարէ, յարի 'ի սնոտ յընդդիմոյն զգալի իրս, որոց իրրև զհաւատարմելի հաղմոց զչէտ արդի, ոչ յագելով զգալեօքս: [illegible] յարարչէն կամ յայլ փոխելի: [illegible], անկատակ մարմնոյս, [illegible] 'ի մարմնին անկեալ է և հարազատ, բայց իբր թշնամի վնասէ նմա, ցաւս՝ հիւանդութիւնս և աշխատութիւնս տալով նմա: [illegible], 'ի բազում պատճառաց զգալի հեշտալեաց չարժի. կամ, բազում պատճառանս հնարի 'ի կատարումն հաճոյից իւրոց. և [illegible], յամենայն զգալիս վարմնեալ թափառի. կամ 'ի խնդիր լինի նոցա, և 'ի չհասանելն՝ արամի, տարակուսի. և թէ քանի են այս արարմելի հանդամանք բնութիւն, դու միայն գիտես: Արդ իբրև այսպիսի խարդախ հետևելով հոգին՝ մեղանչէ, այնու հետև է անաանել 'ի նմա ողբս վշտալիցս, [illegible], հաւաչանս յաղագս թշուառութեանցն, և այլն:

3 [illegible]: Ի մի լաւ օրինակ այս տեղի կայ այսպէս. «Մինչ մարմնիկ խարդ. շաղփաթ յարեալ 'ի սատութի, լաս ատանքին արածող հողմոց. գժուարաւնելի հատաղին փախչող. գեղեալ արատին մարեկան մարմնոյս, ներհակ ամենկեց»: Յայլ օրինակս եւ բանն [illegible] գնի առ [illegible]. և խմանի. փախչողն՝ զգայական մասն այն-

չափ սաստիկ է, մինչև արարչին եւ գժուարըմբռնելի է, խոյս տայ յօրինացն նորա և 'ի հրամանաց:

4 [illegible] [illegible]: Ուշ համարձակի կամ յուսայ ընդ կենդանեացն 'ի լոյս բնակել, քան թէ ընդ մեռելոցն՝ [illegible] [illegible], որք կամ կենդանեացն 'ի խաւարի կալ: [illegible] [illegible], յերկրի փառաց, իշխանութիւն, մեծութիւն, կամ յերկինս երանութիւն. այլ ընդ [illegible], ընդ խոնարհեալսն աղքատութեամբ, արհամարհանօք:

5 [illegible] [illegible]: Երկուս բաժակս ունի յերկոսին ձեռս՝ լցեալս [illegible] [illegible]. բարկութեամբ նոյ, և [illegible] [illegible], քաղցր յուսով զըղջման: Այսու, և յաջորդ նմանութեամբք գիտէ ցուցանել զմեղաւորն 'ի մէջ երկուց կրից, այսինքն յուսոյ և երկիւղի, ողորմութեան և արդարութեան:

6 [illegible] [illegible]: մի օրին. [illegible]. այսինքն բուրվառք կամ սնօթք բուրմանց լցեալք կրակաւ, մին ծխէ զխունկ յուսոյ, և միւսն զծծումբ անձկութեան սրտի:

7 [illegible] [illegible]: Կրկին համոյ կրօղք, կամ ունողք, այսինքն զքաղցր և զդառն:

8 [illegible] [illegible]: Բղխմունս կամ հոսմունս: [illegible] [illegible] զըղջման. և [illegible] [illegible] վհատութեան:

9 [illegible] [illegible]. մի օրին. [illegible]:

10 [illegible] [illegible]: Աչք ներհակակիրք միմեանց. [illegible] 'ի [illegible], վասն մեղացն. և [illegible] 'ի [illegible], 'ի զըկումն 'ի տեսութէն նոյ և սրբոց. կամ ըստ միոյ կողման ողբայ զչարն, և միւսովն հակեալ կայ 'ի նախկին սխալանս:

11 [illegible] [illegible]. կրպակք կամ բովք կրկին հալոցական հակառակ ներգործութեանց. ըստ որում մին ջերմացուցանէ, այսինքն յոյսն զսիրտն. և միւսն չիջուցանէ, երկիւղն զանկեալութիւնն:

12 [illegible] [illegible]: Այսինքն մին քնի կամ սրբոց, որ քաղցրութիւն ինչ ցուցանեն. և միւսն՝ գիւին, որ [illegible], անողորմ բարկութիւն հայի: 3 օրին. և հին ըծ. [illegible]. փոխանակ անխնայելի. կամ, նոյն իսկ դէմք նոյ կրկնակի երեսին. ըստ որում յուսովն հայիմք իբր 'ի փրկիչ՝ քաղցր երեսի. ըստ որում երկիւղիւ իբր 'ի դատաւոր, զայրացեալ տեսանի:

13 [illegible] [illegible]. մին գիւին, որ իբր գահիճ ամբաստան 'ի [illegible]. և միւսն նոյ, որ իբր դատաւոր ձգի 'ի [illegible]:

14 [illegible] [illegible]: Մին պահապան հրեշտակին՝ [illegible], արտմեալ. և միւսն՝ նոյ [illegible], բարկացեալ:

15 [illegible] [illegible]: Անհնարութիւնք երկբայականք, զօրութեամբ իմս [illegible]. [illegible] [illegible]. այսինքն գոնէ սոսա միայն պատժեցայց, գոնէ յայսմհետէ մի մեղայց, և այլն: և [illegible] [illegible]. այսինքն թերևս զառաջին անմեղութիւնն գտից. թերևս տացի ժամ ապաշխարութեան, և այլն:

16 [illegible] [illegible]: Ի մի բերան երբեմն լսի եղուկ և վայ անձինն. և երբեմն [illegible], ընդդէմ գիւին և այլ պատճառաց մեղաց:

17 [illegible] [illegible] [illegible]. երկբայական յուսոյ: Յոյսն ըստ որում հայի 'ի խոստումն նոյ և 'ի զօրութիւն նորա, ոչ պարտի լինել երկբայութեամբ, բայց լինի՝ ըստ որում հայի 'ի գործակցութիւն մարդոյն, և 'ի չափ մեղաց նորա. յոր հայեցեալ մեղաւորն՝ զդող 'ի սրտի զաղգումն առոյգ կորստեան:

18 [illegible] [illegible]: մի օրին. [illegible]: Այսինքն մթագոյն. խաւարայինն. որ կրկին ինչ անկայ. [illegible] [illegible], այսինքն կայծակունս. որք

են ցաւք հոգւոյ՝ իբր նետ Թափանցեալ 'ի սիրտն ։ Եւ դառն թունիւ ։ որ-
պէս երբեմն լինի բնականապէս ։ և որպէս առ յեսուս ասպար ած ( յե-
սու ։ ժ ։ 11 ։) և 'ի մարդն ՚չմանեաց զպատահարս և զցաւս մարմնոյ ։

19 Մխեալ հրացեալ ։ Այրեցողական նետք , զորս երբեմն խառն ընդ կարկուտ առաքէր ած (ելից ։ Թ ։ 24 ։ իմաստ ։ ժզ ։ 16 ։)

20 Միոյն լուսոյ ։ Միոյն գիշեր լուսոյ փառն մեղացն ։ ըստ այնմ (ողբոց ։ ա ։ 2 ։) « Լալով ելաց 'ի գիշերի » ։ և այս գիշեր Թէպէտ և շուարիւ , բայց փրկարար ( բ ։ կորն ։ է ։ 10 ։) Եւ դառն մահու ։ յուսահատ զղջման ։ ըստ առաքելոյն (անդ ։) « Աշխարհի տրտմութիւն՝ մահ գործէ » ։ որ-
պէս և բ ։ 7 ։ « զի մի յառաւել տրտմութենէն ընկղմեսցի » ։

21 Առատօք ոգւոյ ։ Որ է ժամ քննուԷ և զատաստանի ։ յորում կրկին բողոքանն ։ աչաւոր ձայն կամ գոյժ լսի ։ Եւն առապէջ , կշտամբանաց և յանդիմանութէ վասն յանցանացն ։ Եւ դառն պղտորեալ , պատուհաս ։

22 Արեգակնային երկու ։ միայն և ած ։ կամ ՚նոյն ինքն ած կրկին օրի-
՚նակաւ ցուցեալ ։ 'Ի շներկուց ծագելոյ ։ երկուց հակառակ գործոց երևե-
ցուցիչ , կամ յերկուս ծայրս աշխարհի՝ յարևմուտս և յարևելս ։ Եւն խառարի ։ միայն՝ խաւարեալ մեղօքն ։ կամ ած յարևմուտս երևեալ , ըստ որում զլոյսն ողորմուԹէ ամփոփեալ է ( իմաստ ։ Ե ։ 6 ։) Եւ դառն ելե-
ման ։ ած յարևելս , ըստ որում մտանէ 'ի հուր գեհեննին ։ Այսու կրկին միօք , այսինքն ըստ որում զլոյսն ողորմուԹէ ոչ ծագէ , և մտանէ 'ի հուր տանջողական , իմանի եւ բարոյապէս ՚նախքն ած յարևելս և յա-
րևմուտս (սաղմ ։ կէ ։ 5 ։ 34 ։) Նկատել արժան է , զի յիշելով զերիս ժամանակսն , զլոյս կամ զգիշեր , զառաւօտ և զերեկոյն կամ զմիւ ,
զայն յայտ առնէ՝ Թէ առն զղջականի ընբռնեցելոյ 'ի խայԹս խղճի մե-
ղաց չէք հանգիստ ոչ զմիւ և ոչ զգիշեր ։ յիւրաքանչիւր ժամանակ ոչ զցիւրուԹի գտանէ , այլ զտագնապ ։

23 Ի ձեռս հարուց ։ Ի լսել կամ յընԹեռնուլ զվարս սրբոց և արդա-
րոց՝ ամաչէ , հակառակ ՚նոցա տեսանելով զիւր վարս ։

24 Որովայն հասա ։ կայծակն կամ շանԹ՝ որ յանկարծ հարեալ սպա-
նանէ , ձայնելով , շառաչմամբ արձակեսցի յամպոց ։

25 ԵԹէ ոչ էր անտրտմութ ։ ԵԹէ կորուստ կամաւ գերողին զինքն 'ի մահ , այսինքն անձնասպանին՝ ոչ էր անդարձանելի , այսպիսի տագնա-
պեալն խղճիւ մեղաց՝ ոչ գանգատէր սպանանել զինքն ։

26 Վայ ծերաւորին ։ Ակնարկէ 'ի բանն սիրաքայ բ ։ 14 ։ որ ըստ գրոյն իմանի 'ի վերայ երկակենցաղ մարդոյ , որ կամի ծառայել ած և գիւին ։ բայց սուրբ վարդապետս գեղեցիկ յարմարէ մեղաւորին , որ 'ի խղճէ մտացն խռովեալ կայ 'ի մէջ յուսոյ և յուսահատուԹե , որ վտանգա-
ւոր է յոյժ և աւաղելի ։ Զայս բան՝ հոգւոյս ասէ , որ սովորաբար ածա-
շունչ բանից պատշաճի ։ յորմէ մարԹ է ձեռնարկել , Թէ ընդ ածա-
շունչ գիրս դասէ զսիրաքայ իմաստուԹիւն՝ համաձայն արևմտեան վար-
դապետաց , ոչ հայեցեալ յերկբայուԹի այլոց արևելեան վարդապե-
տաց ։ քանզի և 'ի պարտաւոր ժողովն ապարեալ 'ի սիւն կաԹողիկոսէ՝ 'ի մեր Թուին մԾէ ։ 768 ։ յօրինակ ինչ , 'ի 25 կանոնին՝ Թէպէտ ընդ այլ սուրբ գիրս ոչ դասի , բայց օրինագրի ընԹեռնուլ առ 'ի յուսումն մանկանց ։ Այլ և յընԹերցուածս տօնի ռակեբերանին Ճաշոց գիրն առնու 'ի սիրաքայ գլ ։ լԹ ։ Սուրբ վարդապետս յիշէ զարձեալ զսի-
րաք 'ի բանն Հ ։ 3 ։ անուամբ իմաստոյ երգոյն ։

27 Առ շանդակելոյ հաւատոյն ։ այլ օրին ։ հաւարատին ։

28 Առ որոշելոյ ։ փախուցելոյս 'ի ձեռաց գիւին , կամ ուժգին Թա-
փով անկելոյս ։

29 Առ հոգւոյ վերադարձելոյ ։ Իմս , առ հոգւով վերադարձելոյս ։ որ-
պէս և զմիւսն , առ խառարան հասա ծածկելոյ , այսինքն առ ծածկեալս ։

# ԲԱՆ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

*Վերաբերին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոբի առ նոյն ալեբս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ քանզի բազմացուցի պայմանաւ բանիս զողբս տագնապի հեծութեան ձայնիւ մեծ հառաչանաց անփոփելի խնդրս վտանգի. զի դու ողորմած. [1] սկզբնահայրդ խաղաղութեան անյայտ ծածկութից որդի Ա̃յ կենդանւոյ տէր Յ̃ս Ք̃ս, քաղցրութ̃ի նայեցես քուեղ։ Արդարեւ կարող ես, ճշմարտապէս բաւական ես, եթէ կամիս՝ հնարաւոր ես. [2] կամիս առաւելապէս, որպէս եւ կարես։ [3] Հարստանաս մեծապէս ընդ տալն քան եթէ ընդ առնուլն, բազմանան քեզ գանձք 'ի ցրուելն քան 'ի ժողովելն, յաճախեն ստացուածք քո 'ի սփռելն քան 'ի ճշդելն, կուտին քեզ համբարք 'ի տարածանելն քան 'ի շտեմարանելն։ Հաւատամ [4] այսմ ամենայնի տէր՝ գտանել քեւ ելք փրկութե. հաւատամ անարգս ընդ պատուականին, յուսամ ընդ Աբրահամու եւ ընդ Աննայի. զի միոյն բանիւդ քո հաւատոց եւ միւսն քահանայապետին բարբառոյ անսաց։ Նման որոյ եւ ա̃ն 'ի խորին ծերութեան անհամար որդւոց հայր հաստատեցաւ, [5] զառանցեալն եւ զամուլն արգանդ Սառայի՝ անդաստան պտղաբեր արդեան օրհնութեան բազում ժողովրդոց մարգարէից սրբոց եւ թագաւորաց ընտրելոց հայել յուսացաւ։ Իսկ միւսն զանհանդերձելի երկիր որովայնին սնունդի եօթնեակ զաւակօք բարգաւաճեցոյց, [6] որ է թիւ մի անբաւութեան զընուն նշանակելոյ զէութիւն, ա̃ծութեանն յարակայութեան սահման անշէտապօտելի, եւ աւագանին նորածին որդւոց անհատ յորդութիւն։ Այս թիւ պանծալի, որում ոչ է կէտ կցորդի եւ ոչ սպառուած վախճանի, այլ կոյս ա̃ն է ուրոյն ընտրութեամբ նուիրեալ յուէտ անձառ վիճակաւ համայն յաւիտենիւ, դժուարաթարգմանելի մերոց խմաստից։

Բ. Երդ համարեա յարգարութիւն անյուսալի փըր-
կութեան հոգւոյս զամենակալարան ձայն կողկողանաց
որտիս հեծութեան, ընդ նախագրելոյն երջանկաց ե-
գեալ և գտեալ զայս գտանութիւն փոքր հաւատոց
խնդիս խնդրուածոց. զի կեցից և ես առ նոքօք բերկրեալ
ընդ նոսին, բուռն հարեալ քան զիմոց գործոց զքոյդ
շնորհաց. [7] Մանաւանդ զի կրկին բարձունք են և փա-
ռաւորք և քան զչափ կշռութեան բանի գերագոյնք,
խնամ խառնութեան հաշտարանք և հզօրագոյն քա-
ւարանք, և կարծեաց թերութեան մնաց սղայեալք.
ընդ արեան քո ահաւորի և բուն մարմնոյ ծնողդ քո խըն-
կելի. պարք առաքելոցն, դասք մարգարէիցն, գունդք
մարտիրոսացն՝ [8] ձիաւորեալքն հետևակ սպառազէն ա-
րիութեամբ մերկամարտիկն միջութեամբ, գումարք
միանձանց, [9] բոյլք բանականաց ընտրելոց, ժողովք բա-
րեկրօնից, [10] հոյլք հոգեղինաց յերկրէ երկնաւորաց,
զինուորութիւնք վերնականաց ընդ մեզ կցորդելոց, [11]
աւանդք երախայրեաց, մատուցմունք զուարակաց, լուց-
մունք ջամբարաց, բուրմունք խնկոց իւղոց համդերձա-
նօք, յաղթանակք փրկականնշանաց, կառուցմունք խո-
րանաց ա՟ծաբնակաց, ձեռք քահանայից շնորհիւ կատա-
րելոց։ [12] Եւ շարժումն անձին յիշատակ ա՟յ, առ փոփո-
խումն զարշապարի, առ կարկառումն աջոյ և ամբարձումն
բազկի, առ բարիս գոհութ՟ի, և առ գթել աղաչանք, առ
բանս ընտանիս, առ խօսս հասարակաց, առ ձայնս բնա-
ւորականս, առ գործոց յաջողուածս, առ առաքինութ՟ե
ջերմութիւնս, որ ՚ի տունջեան և ՚ի գիշերի՝ ընթաց-
մունս օգտակարաց հոգևորաց՝ քեւ առաջնորդեալք. ՚ի
նիրհել և ՚ի զարթնուլ, ՚ի պատերազմի ազգաց, ՚ի
մարտս դիւաց, ՚ի հակառակութիւնս հերձուածողաց,
առ փոքունս, առ մեծամեծս, առ ձգումն ըմպելեաց և
ճաշակումն կերակրոց, և որ ինչ միանգամ ՚ի կիրս մեր
կերպանան, եթէ հեշտականս եթէ տատանելիս. վասն
ոմանց աղօթս՝ մնալ ՚ի նոսին, և յաղագս ոմանց՝ զի
զերծ արասցես սքանչելապէս հնարիւք անճառիւք. հա-
ւատացեալ յամենեցունց, թէ [13] բաւական ես յամե-
նայնի, կաթնաբոյծ հասակաց, տղոց պատանեաց, [14]
մնաց վայրենեաց, ստամբակաց գառողաց. մինչ զի առ
թատերս տեսարանաց, և առ կոյտս խառնիճաղանճ

բազմութեանց, և կամ առ կարաւս կայթից անախոր-
ժականաց կանանց հզօրից՝ ոչ ես մնացեալ։

Գ. Երդ դու [15] սոսացար զամենեսեան, և քո են ա-
մենեքեան, և ողորմեցիր ամենեցուն՝ միայն բարե-
գութ. զի թէ և մեղիցեն, քո են. վասն զի 'ի քում
համարի են. քանզի գիտեն զզօրութիւն քո, ըստ ա-
ռաքողին մաղթանաց։ Արդ և ես կցորդիմ թշուառ
բանիւ վկայեալ սրբոյն յանցաւորացն. յանդգնիմ ա-
սել, թէ որ կարդայ զքեզ գովեստիւ, ծանուցեալ ըզ-
քեզ թէ իցես, [16] թէ և եօթեամբք իցէ վարձկեալ
կրկնապատիկ պատժաւորութեամբ, [17] առ այս օրինակ
կիրթ ձեռնարկութեան, զխորդ ոչ քո իցէ։ [18] Յորս է
տեսանել 'ի մէջ արջնատես ազատաց՝ ողիտականիչ
երամ աղաւնեաց, 'ի մէջ խոխոտականաց ձկոց անմաք-
րից՝ որպէս հանդարտաբարս, 'ի թիւ շանց գազանակա-
նաց գառինս նուիրելիս, հեզութիւն 'ի խստութեան,
կատարելութիւն 'ի թերութեան, խոնարհութիւն յամ-
պարհաւանութեան, ճշմարտութիւն 'ի ստութեան, [19]
միամտութիւն 'ի մանկութեան, անբծութիւն յայլա-
մտութեան, բարորութիւն 'ի չարութեան, պարկեշտու-
թիւն 'ի լկտութեան, ողորմութիւն յանգթութեան,
ապաշխարանք յանյուսութեան, քաղցրութիւն 'ի բար-
կութեան, հաշտութիւն 'ի թշնամութեան, անոխու-
թիւն 'ի խածանողութեան, քաջալերութիւն 'ի լլկու-
թեան, [20] օրհնութիւն 'ի նեստանձգութեան։ Յոր [21] ոչ
բաւականացայ երբէք 'ի գտանել ճշգրտապէս, թէ ով
յերկրածնաց ստոր կանխեսցէ ժառանգել զքեզ, որ
միայն անաչառաբար կշտամբես իրաւամբք զարդարու-
թիւն՝ առ անպարիշտ մարմին և առ պոռնիկ զղջա-
ցեալն. առ ամենեսին բարեգործ՝ միայն թագաւոր օրհ-
նեալ 'ի բարձունս և յամենայն յաւիտեանս. ամէն։

---

1 Սէր Բնահայրք խոստովանութեան. առաջին զարիչ և տուիչ խոստովա-
նութեան մեղաց։ Այսպէս անուանէ զքն, նախ՝ զի իբրև ած 'ի սկըզ-
բանէ ունողեաց մարդկան՝ խոստովանութի արդարանալ 'ի մեղաց,
ըստ եսայ (ա. 18։) Եկայք խօսեսցուք ընդ միմեանս ». և (խգ. 36։)
« Ընդ միմեանս դատեսցուք, ասա դու նախ զանօրէնութիս քո՝ զի ար-
դարասցիս », որ և զիւս և հնարք ած միայն է, զի մարդն զատկ մեղաց՝
ինքնին անձնարակ էր 'ի գտանել զայս, և 'ի յօսալ։ Երկրորդ. զի քո

ակըն անձամբ սուհանանիչ եղև խորհրդոյ ապաշխարութեան. այլ և զբազմաց զանխայտ մեղսն ած 'ի խոստովանութիւն. որպէս զանդամալուծին, և զփարիսեցւոյն ամբարտաւանողաց զշնացեալ կնոջէն. զորոց զմեղս գրելով մատամբն յերկրի՝ հրապարակեաց նոցա: Դարձեալ, զի և 'ի խորհրդական խոստովանութեան՝ ասացին ունկնդիրն և արձակիչն՝ ինքն քն է. որում պաշտօնեայ է քահանայն: Արդ ասէ, վասն այն բազմացուցի զբանս ամբաստանութեան մեղաց իմոց, և զզօրմեղն վիճակի անձինս, որպէս զի դու որ ասիչ և յորդորիչդ ես խոստովանութեան, տասցես ես չարժեացիս 'ի քաւել, և ոչ թէ 'ի դատապարտել. կամիս՝ զի խոստովանութեամբ իմով ես ծանեայց զխղճմտութիւն իմ, և ոչ եթէ դու լինէին ունիս ճանաչել զայն. այլ քեզ զներելն պահեցեր:

2 Կամս սաստկեալս: Այսինքն սաստկապէս կամիս, որպէս և սաստկապէս կոչէ: Կարողութիւնդ քո ոչ նուազ է քան զբարեխնամ կամսդ. որպէս առ մարդիկ պատահէ զի կամին ինչ, այլ չկարեն. իսկ դու ըստ առատ կամելոյդ՝ առատ և անսպառ ունիս զկարելն: Իսկ եթէ խմանուք զբանս յայս միտս, որպէս առատ է կարելդ, նոյնպէս և կամելդ, ըստ այսմ լինի բաղդատութեան կարգաւոր կարողութեանն այ ընդ կամելոյ նորա. զի ըստ այսմ միայն համաստրապէս անդրադարձին. այսինքն զոր կամի՝ կարէ, և զոր կարէ՝ կամի. և առկին ոճով կան բազում աստղագեղ առ նախնի վարդապետս. զորս յառաջ բերէ ամմարանն պետավիոս. հատ. ա. գիրք Ե. գլ. Է: Այլ ասկայն պարզապար ասել զկարողութեանն այ, ընդարձակ է քան զկամելն. զի բազում ինչ կարէ ած, զոր առնել չկամի:

3 Հարստանամ միտաղէ: Այս և յաջորդքն ոչ այնպէս խմանին, որպէս թէ ած նորոց հարստանայ 'ի սոյն, կամ իրօք նոր ինչ առնու, կամ ժողովէ, և այլն. այլ ընդ հակառակն սովորութեան մարդկան ձևացուցանէ զբանն, որք յաւելուլ սոյն նուազին յինչից, և ճոխանան 'ի ժողովելն, 'ի շահմարանելն, 'ի խնայելով պահելն: Իսկ ած այնպէս յօժարութիւն այս, որպէս թէ սովորին հարստանալ, կամ չասալուին աղքատանալ. ինքն յորդորէ զմարդիկ խնդրել և առնել զբարիս իւր, և խնդրողին՝ տալ քան զոր խնդրեացն այս. և ընդ անխնդրողն կամ ընդ երկմտողն չհաճի, զայրանայ իբր ընդ անգանիչս աստուածութեան իւրոյ: Եւ դարձեալ. առ մերս ծանօթութիւն՝ յաւելել շնորհելն մեծապէս ես հարստութեան այ բացերևի. տաւելապէս պայծառացու մեծութեան այ 'ի փրկագործելն քան յարարչագործելն, և տաւել 'ի փառաւորելն քան 'ի շնորհազարդելն զմարդիկ. տաւել հարուստ երևի ած յերկրի բաշխելով զեւր բարիս, քան յերկինս ենքեան միայն վայելելոյն: Վասն այսորիկ յիրաւի ասաց և 'ի բանն Դ. 1. մշտահարուստ առիչ:

4 Այսմ արժանի իեր: Յ օրին. չէր իեր:

5 Զառաջնոյն, զանցեալն 'ի ժամանակէ կամ 'ի կարողութենէ ծնանելոյ արգանդ սառայի՝ յուսացու ասանել իբրև պառաւեր անդատան արդեամբ օրհնութեամբ, օրհնեալ արգելանց կամ արմատոց, այսինքն մարգարէից և սուրբ թագաւորաց:

6 Որ է Որդի մարդարդեան: Զեօթնեակ թիւն ասէ նշանակիչ անբաւութեան. թէ ըստ իմաստասիրաց, յորս ակնթադարձութը զեօթնեակն կոչէին՝ կատարելութեան ամենայն մասանց, և իբր փոխանն իւրաքանչիւր իրաց. և թէ ըստ սուրբ գրոց, որ զեօթն թիւն առնու փոխանակ յոդնաթիւ բազմութեան. որպէս (առակ. իդ. 25.) «Եօթն չարիք կան 'ի սրտի նորա». և (ղուկ. ժէ. 4.) «Եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ» և այլն. ըստ այսմ ծննդ. դ. 15. և այլն: Ըստ հայկական մեծութեան.

այսու կամ զէութի արարածոցս խմանոյ. եւր զի ըստ պիւթագորեանց՝ եօթնեակն ամենայն իրաց կատարումն է եւ փոփոխումն. եւ կամ զէութի եւ զգոյութիւն ածութեան խմանոյ, որպէս թէ եօթնեակն նշանակէ զբովանդակ անդրութի [illegible] էջ, որ է [illegible]. այսինքն յաւիտենականութիւն։ Կամ, ըստ Զ օրին, որ վերջակէտ որոշէն զայս, եւ գլխագրով սկսանելին. [illegible]. խմանի եօթնեակ թիւն, զոր առուրն կոչէ անսկիզբն եւ անփոփոխումն։ Այսմ յարմարի եւ յայսմ. [illegible]. Այսինքն եօթնեակ թիւն՝ որով ամենայն ամեն առ ծնեալ զգուշակս, նշանակէ զանապատ ատառութի որդւոց առաքինին միջասութե. որով եկեղեցի հեթանոսաց ամուրն եւ անձնաւորն՝ բարգաւաճեցաւ։ [illegible]. եօթնեակն ոչ ունի 'ի նմանէ առանելին զայլ թիւ, որոյ կցորդութեանցն սկսանիցի. [illegible]. մի օրին. [illegible], եւ ոչ զայլ թիւ 'ի նմանէ առանելին՝ յոր առաջանայի. [illegible]. յիմաստասիրաց նմանութիւն կոչի առ եօթնեակն, զի ընդ առանեկեան ոչ ծնանի զայլ թիւ. վասն այսորիկ պիւթագորեանք կոչեն անմայր կոյս. զի ընդ առանեկեան չունի զայլ թիւ ծնող կամ ծնեալ։ Այլ ասեն՝ 'ի հզօր հօրէ ծնեալ. այսինքն 'ի միութէ. եւ յայս միտս աթէնաս անուանեն զնա, զի եւ զաթէնասայ առասպելեն ծնանելոց զօղ ուղղոյն արամազդայ՝ առանց մօր։ [illegible]. եօթնեակն առանձինն նախիրեալ էր՝ թէ ըստ հեթանոսաց, որք աթէնասայ չածոյն նախիրեալ էին զայն. ասաւ եւ պիւթագորեանք ասացեալ պատշաճող ասելին արբայքն իրաց. եւ թէ յածապաշտից 'ի հին եւ 'ի նոր օրէնս. որպէս եւ յայս է։ [illegible]։ այսինքն եօթն թիւք զերաղանց ընտրութ նախիրական է յամենայն ազգս եւ 'ի գործս. կամ նախիրեալ է 'ի նշանակել զեօթն յաւիտենն աշխարհի, եւ կամ զբուռն յաւիտեանն հանդերձելոյն, ըստ որում անսկիզբն եւ անփոփոխումն։ [illegible]։ Այս ամենայն վերագրեալ աստուածութիւ եօթն թուոյն բազում խորհուրդս ունին՝ զծուարին 'ի մեկնել. զի նշանակէ զամենայն իրաց զկատարելութիւնս, զկատարեան ծնունդ առաքինին, եւ զանթիւ բազմութի ծնելոցն, զանսկզբնութի եւ զանփոփոխմանութիւնն այլ, եւ 'ի վերայ այսոցիկ՝ զբանն ևս՝ որ անմայր ծնեալ յաւիտենից 'ի հօրէ՝ ոչ ծնանի զայլ որդի յածութէ ինք։ Զոր առայսք յազգս եօթն թուոյն՝ յիշեն եւ այլ մատենագիրք մեր. որպէս զաւիթ փիլիսոփայ. (սահմանաց. գլ. ժգ։) գրիգոր մագիստրոս (թղթ. առ արքայհամ ամիրայ։) Այլ եւ գրիգոր արշարունի ('ի մեկն. ընթերց. գլ. Է.) ասէ. « Եօթն թիւն 'ի առանեկին անծնանելց առի եւ անկատար », այսինքն անեղբ։ Սոյնպէս լամբրոնացին ('ի մեկն. սաղմ. հջ. « Զեօթն թիւզ՝ որք թուականութեանն եղեն հիմունք աշխարհիս, յաւիտենի առայքն նշանակ, զոլով անկատար եւ կոյս » եւ (ՃԺԶ.) « Կոյս անուանեն զսա եւ անծին, նախիրեալ եւ ակրանին »։ Սմանք ըստ հին լուծ. զմեկնեալ բանիս խմանան 'ի վերայ Է զրոյն, որ զեօթն թիւն ցուցանէ 'ի մեզ. եւ զոլով զիր անփոփ ըստ քերականաց՝ նշանակէ զեծ եւ զանասահման անդրութիւն նորա։ Այս խորհրդածութիւն յարմարի Է գրոյն, առկայն ընդդէմ որոյ վարդապետիս յայն ոչ հայի, այլ յեօթնեակ թիւն։

7 [illegible]։ Զայն ասէ առաւել զքս չնորհացդ կախեալ քան [illegible], վասն զի չնորհք քո եկրեին առաւել զերազանց են քան զիմ գործս. եւ չնորհքն թագութէ՝ զոր այժմս խնդրեմ, կրկին բարձր է քան զառաջին չնորհս անմեղութեան. զի այս առաւ առանց արժանաւորութեան. իսկ չնորհք թագութէ մառավանելն ընդ-

զեմ արժանաւորութենս, ապերախտ գոլով առ աստուծոյն. ուստի ա-ռաւել [illegible] են, զքո փառս յաւէտ մեծացուցանելով, և զերա-գոյն քան զհատուցումն մասայ։ Խոյ Թշնամութենս [illegible]. 1 որ. հաշ-[illegible], հաշտեցուցիչք. և [illegible], քաւիչք մեղաց և պատժոց, և [illegible], 'ի վեր քան զկատակած կամ զկարծիս մասայ, ան-երկրայելիք։ Այսմ շնորհաց միջնորդ լինելի ահաւոր արիւն քո, և ածածնայրդ և ամենայն սուրբք քո ըստ կարգի։

8 [illegible]։ Ճգնաւորք կամ անապատաւորք, որք հո-գեւորապէս ձիաւորեալք են, և մարմնով հեշտեալք. արիութեամբ զի-նեալք, և մերկ յամենայն իրաց մարմնչին։

9 [illegible]։ Գունդք վարդապետաց. մի որին. և հին լուծ. [illegible]. և մեկնիչ վանականաց, միաբանակեցաց. բայց աստուծոյն յար-մար է, զի ըստ կարգի զիւրաքանչիւր զաս սրբոց յիշելով, պարտ է զվարդապետացն զնել. իսկ զմիանձանս զատ յիշեաց։ Այլոք ևս [illegible], կամ [illegible] նշանակէ զվարդապետն 'ի բան վարդապետութեան։

10 [illegible]. այսինքն կուսանաց, որք հրեշտակային կուսու-թեամբն հոգեւորեալք են, և յերկրէ գոլով՝ իբր երկնաւորք կենցա-ղեցան։

11 [illegible]։ Ընդ միջնորդաւնս սրբոց, առէ, նորաստեղ-ծեն իմ և բարեպաշտութեք հաւատացելոց. այսինքն ընծայք աստուծոյ սրբոց։ [illegible], որք զնեալ լինին 'ի կերակուր աղքա-տաց, և 'ի հանգիստ ննջեցելոց։ [illegible], նուիրեալ փրկական նշանք. որպէս խաչք, աւետարանք, սկի, զանգակ, և այլն։ [illegible]. օրհնեցեն զիս, կամ օգնեցեն ձեռք քահանայից՝ [illegible] 'ի ձեռն մեռանելն [illegible]։

12 [illegible]։ Զայս ասէ յարեն 'ի նախընթացն բանն. իբրև թէ ձեռք քահանայից օծեալք են առ 'ի զարթուցանել զհոգին 'ի յիշատակ նոյ սուրբ պատարագաւն. ըստ այսմ վերաբերելն և զյա-ջորդան։ Բայց այլազդ լու ևս իմանի ըստ կարգի յաջորդ բանիցն, այլ և ըստ լու. օրինակին, որ վերջակէտիւ զատանէ, և զխառգրով սկսանի։ [illegible]։ Ուստի այն ամենայն բանք կազմն ընդ հետևայ բայն՝ [illegible]. իբր ասել. բարեխօսութիւն սրբոց քոց, և բա-րեպաշտութիւնք հաւատացելոց՝ քեզ աստուծորդեցին 'ի յիշատակ նոյ՝ 'ի շարժման մարմնոյ, [illegible]. 'ի քայլելն, 'ի ձգել ըզ-ձեռն, 'ի վերացուցանել զբազուկն, և այլն։ [illegible]. 'ի բարեգործելն՝ 'ի գոհութի աստուծորդեցին. և [illegible]. և 'ի մեղանչելն՝ յաղաչանս։ Ըստ այսմ յիշատակի զզոյշս, յառեղական խօսս. [illegible]. որք զբնական կիրս ծանուցանեն. որպէս լալ, հառաչանք, ծիծաղ, և այլն։ Հին լուծ. խմանայ՝ որք բնութեամբ քաղցրաձայնք են, կամ ոչ նոյնպիսիք։ [illegible]. 'ի գնալն 'ի տուէ և 'ի գիշերի։ [illegible]. յաղօ-թարս հոգւոյ քեզ աստուծորդեցին. ըստ այսմ խօս և զհեծեծալն։ [illegible] 'ի բնական կարիս և 'ի պէտս մեր հանգիս-տին, թէ հանճելիք, և թէ վշտալիք՝ զու աստուծորդեա, և այլն։

13 [illegible]։ այլ որին. [illegible]։

14 [illegible]։ Թուի զերիտասարդական հասակն առել, յա-րում է բանութի ախտից. որոյ վասն անուն ժամանակ կոչէ զայն սուր-բն մեկնիչ (տե. պեաք. ժա. 480.) Կամ, իմանայ զ բարբարոսս և ըզ-թանձրամիտս։ [illegible]. բանաւոր իշխանաց։ [illegible]։ այնչափ զզաւոր ևս, մինչ զի նաև 'ի անասնոց խաղաց, և յամբոխ ամքաց, և 'ի մէջ կոչւոց ոչ ևս մնայեալ. զի կամ 'ի

հանգստականաց անտի, և կամ 'ի նոյն իսկ խաղալկաց ունմք յիշէն զգեղ և զդժնանն. որպէս տայսա պատնիկն' որ յանպաժան անդուղն յիշելով զնոյն՝ գործա. առ նա (Վարք հարց. հտ. Թ. 409:) Նոյնպէս պարապեսի, որ յանդամ պարունն ձգեցաւ առ նա (անդ 660–664:)

15 [illegible] : այլ օրէն . [illegible] :

16 [illegible] : Թէ և բազմապատիկ պարտաւորութիւնք լցեալ իցէ ըստ կայենի եօթն վրիժուցն (Ծննդ. Դ. 24:) իսկ [illegible] կամ առաւելացուցիչ է, և կամ ցուցանէ զպարտաւորութիւն մեղաց և պատժոց, կամ զասանելոյս և զհանդերձեալոյն պատժոց:

17 [illegible] : Ըստ այսմ յիշատակեալ օրինակի, [illegible], այսինքն հինգ կամ զօրաւոր վճռոյ իմաստնոյն (Իմաստ. ԺԱ. 2. Թէ 'ի մեղանչելն' 'ի քում համարի եմք.) [illegible] : Բանն [illegible] այլում եւ փոխանակ վճռոյ կամ բանի դնի . որպէս 'ի բանն Ձն. 2. այլ և (Խորէն. Բ. 86:) Այսր անդուստ ամբողջ իմաստն են: Որովհետև դու տէր, առաջի ամենեցուն ես արդարութեամբ և փրկագործութիւք, և յաղորմելն' ամենայօրինակ, վասն այսորիկ թէ և մեղիցեն ունմք յանցաւորութիւք, ոչ եթէ այնու զադարեն 'ի լինելոյ քո . այլ ճանաչելով զզօրութիւն քո 'ի կեցուցանել, մնան 'ի քում համարի, որպէս իմաստունն ասօթելով ասէ . որում և ես յանցաւորս վկայելով համարձակիմ ասել, թէ այնպիսին թէպէտև իցէ բազմապատիկ մեղօք պարտաւոր, միայն թէ կարդասցէ առ քեզ իբր առ իւր արարող, զինչ ոչ լինիցի քո անդէն վաղվաղակի' ըստ անդրժելի վճռոյ իմաստնոյն:

18 [illegible] : Ի մէջ զանազան մեղաւորաց կամ մեղաց՝ քո զօրութեամբդ ունանի, զի կամ ընդ մեղաւորս խառն զանինն արդարք, և կամ 'ի նոյն իսկ մեղաւորաց յանկարծ արդարք լինին: Այնպէս 'ի խառնութիւն միայն' զանինի հեզութիւն 'ի միւսն. և կամ թէ նոյնն 'ի խառնութենէ զանոյց 'ի հեզութիւն: Ըստ այսմ իմա զբովանդակն: [illegible], սեապղն:

19 [illegible] 'ի [illegible] : Այսինքն 'ի խոտամանկութիւն. զի զխնդրութիւն բանիցն զայս միաս պահանջէ. և ածանցի 'ի [illegible] բառէն, և ոչ 'ի [illegible] : [illegible] [illegible], անկեղծութիւն 'ի կեղծաւորութիւն, կամ 'ի խորդախութիւն: [illegible] 'ի [illegible], բարութիւն, կամ բարեբարութիւն:

20 [illegible] 'ի [illegible] : Ոչ պահելն ոխս' յորժամ այլ ոք խածանէ բանիւ, կամ այլով ինչ: [illegible] 'ի [illegible], ոգի առնուլ կամ ափափիլ 'ի մէջ վշտաց, կամ յոյս ունել 'ի մեծ վշտանգս: [illegible] 'ի [illegible] : օրհնութիւն 'ի ձգելն այլոց զնետս անիծանաց. կամ գոհութիւն առ ած վասն ձախորդութեանց՝ յորժամ այլք ձգեն զնետս արանցման. կամ գոհութիւն' յորժամ ած զնետս թշուառութեաց արձակէ, ըստ Յոբայ (Է. 13.) « Նետիւք իւրովք խոցոտեաց զիս » .

21 [illegible] : Տեսանելով զի 'ի մեղաւորս խառն զանինն արդարք, և 'ի մեղաց յանկարծ արդարանաց մարդ, ոչ կարացի գիտել հաստատեա, թէ ով 'ի մարդկանէ ժառանգելոց է զքեզ. այլ դու միայն ուղիղ զատես, [illegible] [illegible]. ցուցանես զարդար դատաստան քո [illegible], առ այն ամբարիշտն' որ մեռանի, կամ մերուր կարծի. որպէս փարիսեցին, [illegible] [illegible]. որ պատնիկ կարծի, կամ է իրօք, և սակայն զղջացեալ է: Յայտնիսի բանս ասելն՝ ոչ բաւականացայ, կամ չկարացի գիտել, իմանի՝ անհնար է գիտել, թէ և 'ի քննել յանդգնիցի ոք: Զի եթէ 'ի

մէջ իւրաքանչիւր կարգի մեղուցելոց՝ գտանի և անմեղ, կամ մի և նոյն մեղուցեալ շարժելով 'ի շնորհաց ա՟յ դառնայ և արդարանայ, ո՞վ կարիցէ ընտրել ո՞ յանհամար մարդկանէ անմեղ իցէ. և կամ 'ի մեղուցելոցն ո՞ր ոք արդարանալ ունիցի։ Բայց միայն սրտագիտին ա՟յ է զայդ գիտել, և նմին ևեթ վայելուչ գիտել առ 'ի յարդար դատողութիւն։ Եթէ իւրաքանչիւր հաւատացելոց չէ տուեալ գիտել անգամ և զանձնէ հաւաստի՝ եթէ պիտանի արդեօք գտանիցի, կամ խոտան, այլոց օտարաց ո՞րպէս ընտրող լինիցի, կամ յումմէ առեալ իշխանութիւն։

## ԲԱՆ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ ես յետնեալս [1] 'ի նախադրութեանց
արժանաւորաց գրեալ ինձէն ընդ պարտաւորսն պատ-
ժոց, հայցեմ զողորմութիւն ընդ ամենեցուն մաղթա-
նաց. ընդ նկունս և անհամարձակս, ընդ տկարս և
փոքրկունս, ընդ ընկեցիկսն և արհամարհեալս, ընդ տա-
րագրեալսն և առ քեզ դարձեալս, [2] ընդ երկուացեալսն
և ճշմարտեալս, ընդ կործանեալսն և յարուցեալս, ընդ
ընկձեալսն և հաստատեալսն, ընդ գլորեալսն և կանգ-
նեցեալս, ընդ մերժեալսն և ընկալեալս, ընդ ատե-
ցեալսն և կոչեցեալս, [3] ընդ ապշեալսն և զգաստացեալս,
ընդ անառակեալսն և զսպեալս, ընդ հեռացեալսն և
մերձեցեալս, ընդ հերքեալսն և սիրեցեալս, ընդ պատ-
կառեալսն և զուարթացեալս, ընդ ամաչեցեալսն և
խնդամտեալս։ [4] Այլ ես պատմեմ աստանօր դարձեալ՝
ոչ զմեղսն Երուսաղէմի, ըստ մարգարէին հրամանա-
ռութեանն որ [5] առ ժողովուրդն նախկին, և կամ տանն
Յակոբու զանօրէնութիւնս նորա, այլ իմոյս ժամանե-
ցից յայտնութեան. քանզի աւաղ ընդ աղէտս մահու-
յարելով ըստ մարգարէին, յանդիմանեցից զիս ինքն
ինձէն իմովս ձայնիւ ըստ սաղմոսողին. որպէս զի յանձ-
նառական յայսմ համայնապատում խոստովանութե-
նէ [6] ոչ կարօտացեալ կրկնակին, միանգամայն 'ի սպառ
սրբեցայց օրհնեալ հրամանաւ Էիդ,

Բ. Եւ արդ կրկնելով ծունր բարեբարբառ քաղցրու-
թեան, տարածեալ զանձն իմ առաջի, զ'ի մահ դըր-
մամն ցուցից կերպարան. որ 'ի հող խոնարհեալ մածայ
ընդ երկրի, և ընդ անցաւորս այս կենցաղ կորստեան՝
անտանական դեռնաքարշութեան սողնոյ սահեցմամբ՝
կամօք բևեռեցայ: Այլ 'ի քեզ տէր յեցեալ իբր [7] 'ի
հաստարան կենաց զաւազան 'ի յարմատոյն Դաւթի
ընծիւղեալ մարմնով անճառ շաղկապմամբ յանեղ աս-
տուածութիւնդ, կանգնեցայց անդրէն կիսայար՝ պատ-
կառեալ 'ի քոյդ երախտեաց 'ի վայր կորացեալ դիմօք,
աչք 'ի բարձունս յառեալ ողորմագին տեսութեամբ 'ի
քեզ [8] մերձդ 'ի հեծութիւն, բնաւին ողորմութիւն,
բոլորովին քաղցրութիւն, զլիճ լուսոյ արտասուօք լը-
ցեալ՝ պաղատանս յուսոյ առաջի մեծիդ վերընծայեցից:
Լուր ամենառատ անմնաւաղ երկայնմտութեամբ՝ քո
դառնացուցիս, միայն դու 'ի յամենայնի սահման փըր-
կութեան, ած բոլորից, անճառ մեծութիւն, անբովան-
դակելի բնութիւն, անքննելի խոկութիւն, հզօր զօրու-
թիւն, կարող բարերարութիւն, անպակաս լրութիւն,
անճառ ժառանգութիւն, [9] վայելչական վիճակ, առատ
պատրաստութիւն, անստուեր խնամութիւն, տենչալի
տուրք, անձկալի ձիր, բաղձալի բերկրութիւն, անար-
խուր հանգիստ, անտարակոյս գիւտ, անկապուտ կեանք,
անծախելի ստացուած, անփոխանորդելի բարձրութիւն,
ամենարուեստ բժիշկ, անսասանելի հաստատութիւն,
դարձուցիչ մոլորելոց, գտիչ կորուսելոց, յոյս ապաւի-
նելոց, լոյս խաւարելոց, քաւիչ մեղուցելոց, ծածկա-
րանդ փախուցելոց, անդորրիչ խռովեցելոց, փրկութիւնդ
մահացելոց, արձակիչ կապելոց, ազատիչ մատնելոց,
պատսպարանդ սահեցելոց, վշտակիցդ գայթագղելոց,
երկայնմտութիւն տարակուսելոց, լուսոյ տեսակ, ցնծու-
թեան ցոյցք, օրհնութեան անձրև, հողի երեսաց, զօ-
րութիւն դիմաց, հովանի գլխոյ, շարժարան շրթանց, [10]
ազդումն բանի, կառավար անձին, բարձումն բազկի,
ձգումն ձեռին, երասանակալդ սրտի, ընտանի անուն,
մերձաւոր ձայն, կցորդութիւն հարազատ, խնամածու-
թիւն հայրենի, խոստովանեալ անուն, պաշտեցեալ
պատկեր, անպարագիր տիպ, երկրպագեալ տէրութի,
բարեբանեալ յիշատակ, խնդութեան մուտք, անվրէպ

շաւիղ, փառաց դուռն, Ճշմարտութեան Ճանապարհ,
երկնաճեմ սանդուղք։ Եւ այլ բազմութիւն բանից
գովեստից [11] անհամար կարգաց և տանց անբաւից, զոր
ոչ բերէ բերան երկրածին, և ոչ տանի գործի մարմնե-
ղէն, և ոչ կշռեն իղձք հոգեղէնք։

Գ. Առ քեզ հայի ամենայն ակն տեսողի, ա՜ծդ ամե-
նայնի. նայեա 'ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց
ծառայից, և թէ յաղախնաց որ աղաչեսցէ։ Եւ ըն-
կալ զցօղ ողորմութեան լոյս արտասուաց աչաց ցան-
կաթիլի՝ յանարատ սոս մարդեղութեան քոյ, Տ՜ր, և [12]
օրինակաւ խորհրդոյ հերաց կնոջն յանցաւորի՝ զառ քեզ
դարձն և զգաւանութիւն, և համբուրիւ շրթանցս առ
Ճաշակ փրկութեան կենացդ հաղորդութեան՝ համա-
ձայնապէս զանքակ միութիւն. և զնոյն զթութիւն նո-
րին ողորմութեանք ընկալեալ 'ի քէն, բարերար, [13]
զբաւականեսցես զմեծդ պարգև ընդ փոքու հաւատոյս.
և 'ի ձեռն զթութեան սիրոյ քոյ [14] առ քո անձկալի ա-
նունդ խոստովանեալ ծառայիս, դարձցին ձմեռունք հող-
մոյն խստութեան 'ի յօդ հանդարտութեան, և մրրկին
սաստկութիւն 'ի սէք ախորժութեան, և կարծիք եր-
կիւղին 'ի մեծ վստահութիւն, և պատուհաս պատժոյն
յերանութեան պատահումն, և վտանգք թախծանացն
'ի հոգևոր խրախճանութիւն, և ալէկոծութիւն ծփա-
նացն 'ի խոր խաղաղութիւն, և ղեկացն թևարկմունք
յանքոյթ նաւահանգիստն, և բերք բեռանցս մեղաց
փոխարկեսցի 'ի թռչակ շնորհաց։ Եւ յայսքանեացս ա-
մենից բիւրուց բարութեանցս 'ի քէն եղելոց՝ մեծասցի
անուն հզօրիդ խնկեալ և խոստովանեալ, ամաչեսցէ
բանսարկուն չարեաց՝ հեղձեալ և հալածեցեալ, ունայ-
նասցին մուրհակք մեղաց, [15] խզեսցին խաղքն, որո-
չեսցին որոգայթքն, կապտեսցին կապանքն, վանեսցի
վիհն, վերասցին վնասքն, պարտեսցին պատրանքն, ջրես-
ցին մեղքն, պատառեսցին պարտիքն, խորտակեսցի
լուծն, [16] քակտեսցին բեղիքն։ Եւ ընդ մայլ մթու-
թեան չարեացն յանցանաց և գլխացն բանակաց պա-
շարողաց՝ [17] արև փառաց քոց ժամանեսցէ կեցուցանել
փրկել և լուսաւորել, յաջմէ և յահեկէ, 'ի գլխոյ և
'ի թիկանց. և եղիցի նշոյլ առաւօտու հոգւոյ զարմայ-
նոյ ընդ ակնկալութեան սպասողացն քումդ երևման։

Զի դու ես բարերար առ ամենեսին, և հնարաւոր են քեզ ամենայնք. և ամենեցուն զկեանս կամիս և զփըր-կութիւնն բաղձաս։

Դ. Ով ամենապարգև ձեռն Յսի Քսի, [18] և առ իս դարձյիս կարկառեամբ շնորհի աջոյդ քո որոյ ընա-կեալ միացեալ, և ոչ հեռացեալ յանձկութեան սրտէ սիրոյ սեռնեկիս. և անեղծական քո նկարագիր՝ նըշ-խար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւէտ կոչ-մանս՝ ընդ իս պահեսցի, միջնորդեալ ընդ քեզ 'ի մա-տեան յաւիտենական կտակաւ կենաց հոգւոյդ աւետեաց երկնից յօրինողիդ։ Եւ [19] քեզ միայնոյ պատշաճողիդ, և միոյդ 'ի միոյ պատշաճաւէ, և ունողիդ զպատշաճ միոյ, երրեակ անձնաւորութեանդ և միոյ ա̃ծութեանդ վայե-լեն փառք յերկնաւորացն վեհից, 'ի սրբոցն դասուց, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

1 Ի ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՈՒՇԱՄԱՏՈՅՑ։ Ես յեռանեալս 'ի նախ եղեալ որ-ժանաւոր և գովելի կարգաց, այսինքն 'ի հեզութենէ, 'ի խոնարհու-թենէ, 'ի ճշմարտութենէ, և այլն. զորս նախ դասեաց քան զիւրա-քանչիւր ներհականս։ Կամ, յեռանեալս յառաւելութեանց անձանց՝ զորս կոչեաց աղաւնի, օձ, և գառն։ Յայտնեաց յեռանեալ գոլով-ւէ, և անձամբ ընդ պատուապարտան համարեալ, հայցեմ զողորմու-թիւն ընդ աղօթից ամենեցուն նոցա, կամ ըստ օրինակի աղօթից նո-ցա։ ԸՆԴ ՆԻՆԱՆԻ, ընդ երկչոտան, ընդ տկարս, ընդ արհամարհեալս. ԸՆԴ ՓԱՌԱՒՈՐԵԱԼՍ, ընդ այնոսիկ որք նախ մեղօք օտարացան 'ի քէն, և ապա զղջմամբ դարձան։ Ըստ այսմ իմանի և յաջորդքն մինչև 'ի ԱՅԼ ԻԸ։

2 ԸՆԴ ԵՐԿԲԱՅԵԱԼՍ և ՃՇՄԱՐՏԵԱԼՍ։ Ընդ տարակուսեալսն նախ 'ի փրկութենէ, կամ 'ի սրբութէ հաւատոյ, և ապա աներկբայացեալսն յուսով, կամ հաւատով։

3 ԸՆԴ ԱՂՋԵԱԼՍ։ 3 օրին. ԸՆԴ ԱՂԱՒՂԵԱԼՍ, բայց առաջինն պահէ զգլխագրութիւն բանին. այսինքն ընդ թմբրեալսն և զգաստացեալս, ընդ անզգայեալսն մեղօք կամ ախտութբ։ ՆՈՂԵԱԼՍ, այլ օրին. ՆՈՂՈՑԵԱԼՍ։

4 ԱՅԼ ԻԸ ԴԱՐՁԻՆ։ 2 օրին. ԱՐԴ ԻԸ։

5 ԱՌ ԾԱՂԿԱՀԵՐԴՆ ՆԱԽԻՆ։ 4 օրին. ՆԱԽՆԻ։

6 ՈՒ ԽՈՐՇԱԳՆԵԱԼ ԵՐԿԻՆԻՆ։ Այժմէն կամաւ հաւաստագնեալ խոստ-վանութեան առնեմ. զի մի կարօտացայց երկրորդ անգամ խոստովանել 'ի տիեզերական ատենին։

7 Ի ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԵՆԱՑ։ Ես իբր անուսուն գեղանաքար՝ յերկրաւոր ախտս և 'ի մեղս անկեալ մածեալ կամ։ Բայց աչս 'ի քեզ երկն 'ի գաւազան կենաց հաստատեաց յեցեալ ամրանամ, որ յարմատոյն յես-սեայ բղխեալ, այլ յանձնաւ ա̃ծութեան չաղկապեալ, առիչ ես կենաց, ուստի սնեալ 'ի քեզ՝ լամ և հայցեմ կանգնել անդրէն կենդանի. կի-սով մարմնոյն 'ի վեր ուղղեալ. այսինքն կարացեալ զխաչ առ աղօթս։

բայց զաչս միայն 'ի վեր ձգեալ կամ, կիսով ևեթ․ իբր զի եթէ ոչ եմ բոլորովին անմեղ, եղէց գոնէ ապաշխարութեամբ մաքրեալ։

8 [illegible]։ Աչք իմ, ասէ, յաւագին հայեցմամբ 'ի վեր նկատեն առ քեզ՝ որ մերձ ես 'ի հառաչանս մեղաւորաց։ [illegible]․ զնոյն աչս իմ յոր ժողովի լոյսն, որպէս ջուրք 'ի լճակ, ես արտասուօք լցեալ, աղօթս յուսով հանդերձ վերընծայեմ, և այլն։

9 [illegible]։ Բառ սրտիս ած է [illegible] մեր․ նոյն և բաժին հոգւոյ՝ մի միայն վայելուչ բանաւոր բնութեն ըստ ասացմ․ ակէր բաժին ժառանգութեան իմոյ։

10 [illegible]։ Ներգործիչ խօսից, շարժիչ լեզուի։ [illegible], այսինքն իրանաց կամ մարմնոյ․ զի բովանդակ զանգամս մարմնոյ թուէ՝ զգէմս, զլուխ, զշրթունս, և այլն․ ուստի [illegible] ոչ նշանակէ աստ հոգի։

11 [illegible]։ Կարգեալ կամ յարմարական անուանց․ և [illegible], ուրոյն կամ որոշեալ բանից․ զի աստ [illegible] ըստ քերթողաց իմանի։ Անհամար անուանք, ասէ, և զանազան կատարելութիւնք պատշաճին քեզ․ զոր ոչ կարէ բերան ձայնել, և ոչ ձեռն գրել, և ոչ իմաստ սրտի չափել։

12 [illegible]։ Ընկալ զգօղ արտասուացս՝ որովք լամ և ողբամ հաւատովքս՝ յանարատ սուս մարգարեն, վասն իմ․ որպէս կեննն յանցաւոր լոյր առ սուս քո, և ըստ նմանութեան հերաց նորա՝ որովք ջնջէր զոտս քո․ և այնու նշանակէր զխոստովանութիւն մեղաց՝ որք 'ի զգայութիս մեր բուսանին իբրև զհերս, ընկալ զառ քեզ դարձն իմ։ Նա 'ի համբուրելն շրթամբք զճաշակ կենացդ 'ի սուրբ հաղորդութեան, [illegible], որով մի շունչ, մի հոգի լինիմ, ընկալ [illegible], զանբաժանելի միութիւն իմ ընդ քեզ, ըստ այնմ, որ մերձենայ 'ի տէր, մի հոգի է։

13 [illegible]։ Իբրև գրաւական հանդերձեալ երանութեանդ տացես զմեծ պարգևդ թողութեան․ կամ հաստատես զայն փոխանակ փոքր հաւատոյս։

14 [illegible]։ Վասն սիրոյն զոր ունիս առ բազմաց ա-նուանց յն՝ խոստովանեալ 'ի ծառայէս քումմէ, կամ ըստ ումանց՝ առ սիրելի անունն՝ որով ես ծառայ քո կոչիմ [illegible]։ Արդ 'ի փառս և 'ի զօրութեան այսր անուանս՝ [illegible], ձմեռնային տատրակաչանց հովեք փորձութեանց փոխեսցին 'ի [illegible], 'ի յոգ քաղցր և ա-խորժելի։ [illegible], շարժմունք և տաճնորդութիւն զեկայն յաջողեսցեն ժամանել անխռով 'ի նաւահանգիստ։

15 [illegible]։ 4 օրին․ և հին լծ․ [illegible]․ և նշանակութիւնն մի է, այսինքն լարեալ որոգայթք, զի հ, և խ, ընդդ տառք են․ և աստ խեխը զնի վասն [illegible] բային, որպէս և յաջորդ հատուածքն նոյնա-ստ բառիք ձեռնան, [illegible], [illegible], [illegible], և այլն։

16 [illegible]։ մի օրին․ [illegible]։ Հին լուծ․ [illegible] խմանոյ զձողն՝ որ յառաջաստին գլուխն է։ Սակայն 'ի գիրս փիլոնի և յայլ տեղիս քննեալ, տեսանի զի այս բառ նշանակէ զղեկ նաւի, կամ զգլուխ ղեկին՝ որով այսր անդր ուղղի։ Ուստի աստ ես իմանալի է, քակեսցին ղեկք, կամ փայտն՝ որով ղեկն շարժի․ այսինքն հրապոյրք սատա-նայի, ներգութիւնք նորա, ցնորք մտաց, որովք դևն տատանեցուցանէ զնաւ հոգւոյն, և արկանէ 'ի վտանգ կորստեան։

17 [illegible]։ Փոխանակ խաւարի և մթութեան մեղաց՝ և բանա-կացն գիւաց՝ լոյս փառաց քոց հասցէ յամենայն կողմանց 'ի լուսաւո-

րել և 'ի փրկել զիս, և եղիցի ինձ ծագումն առաւօտու՝ [illegible], այսինքն բերող զարեգականյն օրոյ կամ եղանակի․ ընդ [illegible], տալով ինձ զլոյսն՝ որով տեսանիցեմ զքո սպասեն քեզ։

18 [illegible]։ Ո՛վ ամենայն պարգևաց տուող ձեռն փրկչիդ, գործիր և առ իս քո առատութեան շնորհացդ իբրև հզօր աջով, որով ընդ իս մխիթարեցես առանց հեռանալոյ։ և [illegible], անեղծանելի կնիք մկրտութեան տարւորեալ, որ նմանութիւն քո է, և մնացուած քրիստոնէական զաւառութեան, եղիցի մշտնորդ գրելոյ անուանս 'ի [illegible] 'ի յաւիտենական զալութեան, [illegible], հոգւովք սրբով զոր խոստացար իբր կնիք թողեր 'ի վերանալդ քում, և զնոյն զարձեալ շնորհեա 'ի խորհուրդ սուրբ դրոշմին։

19 [illegible] ՄԻՈՅՆ ՊԱՏՃԱՌԻԴ։ Զաւարտ ազօթիցս առ սուրբ երրորդութիւնն դարձուցանէ․ և փոխանակ անուան իւրաքանչիւր անձին՝ զեւրեանց յատկութիւնն կամ զծանօթութիւն դնէ․ վասն որոյ զհայրն ած ասէ՝ ՄԻՈՅՆ ՊԱՏՃԱՌ․ զի այս է նմա յատուկ՝ լինել պատճառ այլոց անձանց, և ինքն ոչ պատճառեալ յայլմէ։ Եւ ՄԻՈՅԴ 'Ի ՄԻՈՅ ՊԱՏՃԱՌԷ․ այսինքն որդւոյդ, որ է միածին, 'ի միոյ անձնէ 'ի հօրէ յառաջ եկեալ․ և այս է յատուկ որդւոյ։ Եւ ՈՒՆՈՂԻԴ ԶՊԱՏՃԱՌ ՄԻՈՅ․ այսինքն հոգւոյդ սրբոյ․ զոր ասէ ունել զպատճառ միոյ անձին․ իսկ այս պատճառ ոչ կարէ իմանել հայրն․ զի հայր է պատճառ երկուց անձանց․ և զի ունելն միայն զհայր պատճառ՝ ոչ ցուցանէ ինչ յատուկ հոգւոյն․ զի որդւոյ ևս պատշաճի այդ։ Այլ այն պատճառ միոյ անձին՝ իմանի որդին․ ուստի ասելն զհոգին՝ ունող զպատճառ միոյ անձին՝ հարկանշանակէ պատճառեալ կամ ելեալ 'ի յորդւոյ․ և զի որդին զայս պատճառելս 'ի հօրէ ունի, որպէս և զայլն ամենայն, նմին իրի զօրութեամբ իմանի՝ ելեալ նաև 'ի հօրէ, և առաւ այս լինի յատուկ հոգւոյն սրբոյ․ այսինքն ելանել 'ի հօրէ և յորդւոյ։ Այս այն բան է՝ որով բացատրեն ծածկեալն փարդալեալք զկարգ ծածկին ելմանց․ զոր և յիշէ տաթևացին (հարցմանց․ երես․ 105․) իբր զի 'ի նկրկս յամծ՝ հայր ՊԱՏՃԱՌ ՄԻՈՅՆ է․ որդին՝ 'Ի ՊԱՏՃԱՌԷ, ԵՒ ՊԱՏՃԱՌ․ հոգին՝ 'Ի ՊԱՏՃԱՌԷ, ԵՒ ՈՉ ՊԱՏՃԱՌ։ Եւ զայս բան սուրբ հարքն այլովք բացայայտ բանիւք աւանդեն․ ընդ որս և մեր լուսաւորիչն (ագաթանգեղ․ եր․ 266․) ասելով․ « Հայր յանձնէ, որդի 'ի հօրէ, հոգին 'ի նոյունց՝ 'ի նմին »։ Ոմանք բառ հին լուծ․ զասելն՝ ՈՒՆՈՂԻԴ ԶՊԱՏՃԱՌ ՄԻՈՅ, այլայլութեամբ դնելով մեկնեն՝ ունողիդ ՄԻ ՊԱՏՃԱՌ․ այսինքն զհայր։ Սակայն թող զայն՝ զի ունելն զհայր միայն պատճառ՝ ոչ լինէր յատուկ հոգւոյն, այլ և զի յասելն զհոգին 'ի հօրէ և յորդւոյ, տակաւին մի պատճառ իմանին հայր և որդի, ունելով զմի և զնոյն յառաջածելոյ զօրութիւն։ Թողեալ ասեմ զայսոսիկ, և կալով միայն 'ի վերայ բանի սուրբ փարզապետիս, կարի այլորանք են 'ի միմեանց ասելն՝ ՄԻ ՊԱՏՃԱՌ, և ասելն՝ ՊԱՏՃԱՌ ՄԻՈՅ․ վասն զի առաջինն յայտ առնէ զմիութիւն պատճառին․ իսկ երկրորդն՝ զմիութիւն պատճառեցելոյն․ մինչ զի 'ի վերայ նոյն իրի մին ճշմարտի, և միւն սուտ․ զոր օրինակ ճշմարիտ է ասելն․ ած է մի պատճառ արարածոց․ բայց սուտ է ասելն․ է պատճառ ՄԻՈՅ։ Եւ ընդ հակառակն՝ արարածք են պատճառեալք ՄԻՈՅ․ բայց ոչ մի պատճառեալ։ Այսպէս իմս զզանազանութիւն 'ի մէջ ասելոյն՝ ունողիդ ՄԻ ՊԱՏՃԱՌ, և ասելոյն՝ ԶՊԱՏՃԱՌ ՄԻՈՅ։ Տես և 'ի բանն ԽԸ․ լծ․ 51։ Յաղագս բանին ՊԱՏՃԱՌ տես 'ի բանն ԽԸ․ լծ․ 23։

# ԲԱՆ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արդ զյարմարութիւն պաշտաման բանիս [1] 'ի խայրեաց հոգւոյս քեզ նուիրելոյ, օրհնեալ բարեգութ, կցորդելով ընդ խնկազգեստին զուգամանապէս խառնեսցես 'ի յանուշութիւն կամութեան իւղոյն Մարիամու կնոջ բարեպաշտի։ Յոր հաւասարեալ նոյնութեամբ ընդ երջանիկ պոռնկացն 'ի քէն ընկալելոցն յաւէտահրաշ յարգանօք, պարարեսցիս մեծապէս իմովս բանիւ նուաստիւ, ընկալեալ յանհաս և 'ի բարեբանեալդ գլուխ բարձրելոյդ, անկշտամբելի 'ի բամբասանաց սաղմոսին, մի՛ ծծցէ զտերև ստոց գագաթան իւղ մեղաւորին։ Այլ արասցես զօրանալ կրկին յաճախութեամբ բուրման խոստովանութեան այսր մատենի 'ի բաղումն ազգեալ, համափիւռ ամենատարած և աշխարհալիր տանն տեսակաւ, ըստ օրինակի համեմատութեան նոցայն յիշատակի։ Քանզի դու նոյն տէր զգաստացուցիչ նախնի չարախորհից կանանց մեղաւորաց, [2] որոց առաքեալ զմարգարէին կերպարան՝ քումդ ճշմարտատիպ պատկերի յեղանակեցեր, անտուստ առսալին անճառ ներգործութեամբ 'ի յիս վերաբերեալ զծայրագոյն շնորհին կատարումն։ Ընդ անանական զարեայն կերակրոյ զբազմահամբար պտուղ ցորենոյդ կենացդ հացի, ընդ ապականացու արծաթոյն՝ զանքունականդ պատկեր, ընդ յիմարարար թմբրութեան գինւոյն՝ զբաժակդ արեան արարչիդ, ընդ իւղոյն առելոյ 'ի յայրատ կնոջէն հնոյ ժողովրդեանն՝ զօծումն շնորհին առ իս դարձելոյ, ընդ զերծման գլխաշուք կտաւոյն՝ զանապականութեան վերարկուն, [3] ապարանջանին պղճնութեամբ՝ զթուխս բարեմասնութեան, օրինին և աւետարանաւն՝ հանդերձ գործնական առաքինութեամբն, [4] ընդ ունկանն գնդի վայելչականն զարդու՝ զանստուեր

յիշատակ տէրունականդ ձայնի, [5] ընդ քոյոս պերճութեան լանջացն՝ զյոգնահաւաք աւանդս ուղղութեան քոյնակրօն լծոյդ քաղցրութեան։

Բ. Բայց զի է յայտնի ինձ պարծել, և ոչ վերըստին 'ի սոյն պատկառել։ Այլ յայլ օրինակ փոխեալ զմատեան մաղթանաց այսր ողբերգութեան, որ ինչ ինձ է յարմարաւոր, ամենայնիւ հատուցից զպատիժ պարտուցս իմոց մեղանաց, [6] 'ի մարգարէիցն տաուից բերեալ համառօտ՝ 'ի սոյն յարկ մեծից սաստիկ դատախազ. ընդ ողբոց նոցին լծակցեալ, քան թէ ընդ բերկրումն նոցա պարել. յորս հառաչանս, ձայնս հեծութէ, բողոքս բարկութեան, նախատինս խորտակման, լալումն կարևոր։ Այլ մեծիդ ա͠յ զթութիւն ամենաժաման՝ կանուխ ազդեցաւ յիմ յուսատրութիւն, առ որս՝ զղջմունս, խոստովանութիւնս, աւետիս, պարգևս, լուսոյ երևմունս, խրախոյս ա͠ծայինս, փառաց ժառանգութիւնս, հրաշից յայտնութիւնս, սքանչելեաց տեսութիւնս. յորոց ոմանք յոյս ընձեռեն, և ոմանք վհատութիւնս բազում մատուցանեն. յորս ես կամաւ կործանեալ՝ կորստեանն վիճակեցայ։ Զի եթէ [7] զգեստ ա͠յ զվարագուրին պատրուակ ասաց Եզեկիէլ, յորում օտար ժողովուրդն կուռս կարկատունս, որով պոռնկել ասէ 'ի նոսա, խոկ որքան պատիժ անմաքրութեանս եղիցի զա͠ծ զգեցողիս ներքոյ և արտաքոյ։ Զարմանամ, թէ զիա՞րդ ոչ կիզում. հիանամ, թէ ընդէ՞ր ոչ այրիմ. ափշիմ, թէ ո՞րպէս չյափշտակիմ՝ տանջեալ, լքեալ, չարչարեալ, ջաղխեալ, մանրեալ, խորտակեալ, կտրեալ, բաժանեալ [8] 'ի յօրինակէ ժանեաց կորուսչին, ըստ գրոյն։ Այլ այս միայն է պահեցեալ ինձ նշոյլ յիշատակի փրկութեան յուսոյ, զի քրիստոնեան աւետարանն կեանս է ամենեքին, [9] 'ի կերպարանաց պատկերի բանին ծանուցեալ. որով առ մեղանն դարձն, առ պարտիսն շնորհն, առ եղծումն նորոգութիւնն, առ անօրէնութիւնն քաւութիւնն, առ վէրն բժշկութիւնն, առ վտանգն անդորրութիւնն, առ պատիժն ներումն, [10] առ պատերազմն հանդարտանալն, [11] առ հուրն անձրևն, առ պատուհասն պարգևն, [12] առ ախտակալութիւն սատակմանն՝ ձիրն. [13] առ գործարան մահուն՝ կենացն ազատութիւն։

Դ. Այս զինչ է ինձ [14] զայսքանեաց յիշմանց 'ի թիւ արկանել, և ոչ զանճառելին աստանօր դաւել։ Յիշատակաւ հօրն բարձրելոյ՝ յորդին կցորդութիւն, յանուն միածնին՝ առ հայրն ընտանութիւն, սոցին ակնարկութեամբ ընդ հոգւոյն հաղորդութիւն. խաչին փրկանք, բանին սփոփութիւն, [15] բարւոք վարձ կամաց առ կըշռութիւն գիտողին, աւազանին կենդանարար՝ հաշտութեանն միջնորդութիւն, և այլք ամենայնք անթիւք բարիք 'ի բարերարէն բարդեցեալք, [16] ազատք 'ի հարկէ, արձակք 'ի լծոյ, իշխանականք և ոչ իշխեցեալք։ Այսքիկ են, որ ինձ 'ի մէջ դառնութեանս մահու՝ կեանս անտարակոյս աւետարանեն. քանզի եթէ ոչ զայսոսիկ ունէի, կանխաւ արդեօք կորուսեալ էի իսկ և իսկ ըստ բանի երգողին։ [17] Այլ փոքրկութեամբ որդւոյ զհայր փառաւորեմ, ոչ նուաստութեամբ հոգւոյ զորդի նախատեմ. համափառ ունիմ զերեսեան՝ և նոյն արարչութեամբ։ Քանզի և 'ի դէմս հոգւոյն սըրբոյ այս են աղաչանք, նախընծայ սկզբան պատարագին՝ յորում զանդ երկնաւոր զենանի, զայս աղօթեցի։

Աղօթք, որ նախ քան զպատարագն [18] մատուցանի։

Դ. Ամենակալ բարերար մարդասէր տէր բոլորից, յօրինող երևութից և աներևութից, փրկող և հաստատող, խնամող և խաղաղարար, հօր հզօր հոգի, հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութեան յանդիման եղեալ քեզ ահաւորիդ։ Մատչիմք մեծագողութեամբ սոսափիկ երկիւղիւ մատուցանել նախ ըզբանականս զայս պատարագ քում անզնին զօրութեդ, իբր աթոռակցի փառակցի և արարչակցի հայրենի անկարուստ պատուոյդ, և քննողի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց հօրդ Էմմանուէլի՝ ըզքեզ առաքչի, փրկչի և կենդանատուի և արարչի ամենայնի։ [19] Ի ձեռն քո ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն միաւորական տէրութեանդ, յորոց մի և դու ճանաչիս անհաս։ Եւ և 'ի ձեռն քո առաքինքն նահապետական տոհմին շառաւիղք՝ տեսանողք անուանակոչեալք, զանցեալսն և զգալոցսն, զեղեալսն և զոչ գոյացեալսն [20] անստուերաբար բարբառով բանի վերապատ-

մեցին ։ Զի ո՞չ քարոզեալ զքեզ Մովսէսի, որ [21] 'ի
գնալն քո 'ի վերայ ջրոյն, անպարագիր զօրութիւն, ա-
հեղ շրջարկութեամբ տածողականաւ՝ թեւապարփակ
պաշտպանողօրէն գթասիրեալ 'ի ծնունդս նորոգս՝ զա-
ւազանին խորհուրդ ծանուցեր ։ [22] Յոր կերպարան օրի-
նակութեան՝ նախ քան զկառուցանել զլոյծդ մածուած
վերջնում փարագուրիդ՝ յօրինեցեր, կարող տիրապէս,
զբովանդակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից գոյից
ամենայն էից յանէից ։ Քեւ ստեղծանին [23] 'ի նորոգու-
թիւն յարութեան ամենայն եղեալքս առ 'ի քէն յայնմ
ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղի, եւ օր ա-
ռաջին երկրին կենդանեաց ։ [24] Քեզ հնազանդեցաւ
միութեամբ կամացն որպէս հօրն իւրում ազգակիցն
քո, էակիցն հօր անդրանիկն որդի մերովս կերպիւ. ըզ-
քեզ աւետարանեաց ճշմարիտ ա̃ծ հաւասար եւ համա-
գոյ հօր իւր հզօրի, եւ զառ 'ի քեզ հայհոյութիւնն ան-
քաւելի քարոզեաց, եւ [25] իւր զա̃ծամարտիցն զքո հեռ-
տելոյն չարաբանական բերանս կարկեաց, եւ [26] զիւրն
շնորհեաց արդարն եւ անարատն զտիրն ամենայնի, որ
վասն մեղաց մերոց մատնեցաւ, եւ յարեաւ վասն զմեզ
արդարացուցանելոյ ։ Նմա փառք 'ի ձեռն քո, եւ քեզ
բարեբանութիւն ընդ հօր ամենակալի, յաւիտեանս
յաւիտենից. ամէն ։

Դարձեալ կրկնեսցի 'ի նոյն կարգ բանի, [27] մինչեւ վստահութեն լուսոյ
հրաշապէս յայտնեսցի ազգեաւ, աւետարանել վերստին զերկին խա-
ղաղութիւն ։

Ե. Աղաչեմք եւ աղերսեմք [28] արտասուալից հա-
ռաչմամբ յամենայն անձնէ [29] զփառաւորեալ արարչու-
թիւնդ անեղծ եւ անստեղծ անժամանակ հոգւոյդ գը-
թածի, [30] որ բարեխօսդ ես վասն մեր յանմռունչ հե-
ծութիւնս առ ողորմածդ հայր. որ զսուրբսն պահես,
եւ զմեղուցեալսն մաքրես եւ տաճարս կազմես կենդանի
եւ կեցուցիչ կամաց բարձրելոյդ հօր ։ Արդ ազատեա
զմեզ յամենայն անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ
քումդ բնակութեան. եւ մի շիջցին առ 'ի մէնջ լուսոյդ
շնորհաց փայլմունք 'ի տեսականացս աչաց իմացից.
վասն զի [31] զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօ-

թից, և ընտիր վարուց խնկելոյ։ Դու քանզի մինչ յԱն-
բարդութենէդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ
ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ, իսկ դու
ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օ-
թեւանս պատուականս[32] ամենայն պատրաստութեամբ
'ի վայելումն Ճաշակման երկնաւոր գառինդ, առանց
պատժոց դատապարտութեան ընդունել զայս անմա-
հացուցիչ մաննայս կենաց նորոյ փրկութեան։ Դու
հալեցի 'ի հրոյս յայսմանէ զայթագղութիւնս մեր,[33]
որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն 'ի
ձեռն ունելեայն մատուցման. զի յամենայնի քոյդ քա-
րոզեսցի գթութիւն, որպէս որդւոյդ ոյ՝ հօր քաղցրու-
թիւն. որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժա-
ռանգութիւնն, և զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային
արքայութիւնն արդարոցն երանութեան։ Այո այո և
ես մի եմ 'ի նոցանէ. և զիս ընկալ ընդ նոսին իբր մար-
դասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ,
զարեամբ Որդւոյ սրսկեալս։ Զի յայսմ ամենայնի՝
յամենայնի ծանիցի քո աստուածութիւնդ ընդ հօր փառա-
ւորեալ համապատուաբար 'ի մի կամս և 'ի մի իշխա-
նութիւն գովութեան. զի քո է գթութիւն և կարո-
ղութիւն և մարդասիրութիւն, զօրութիւն և փառք
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

1 Ի [illegible] [illegible]. ի պաղոց հոգւոյս։ Զյօրինուած զղջական բա-
նիցս, ասէ, զոր յըղձից հոգւոյս քեզ նուիրեցի, [illegible], հաւա-
տարապէս հաղորդելով ընդ նուէրս իւղաբերիցն, խառնեսցես յանոյշ
իւղն [illegible] [illegible] [illegible], մարխամու կղեռվոյ, կամ մագդաղէ-
նացւոյն, որ յառաջն մեղաւոր գոլով յետոյ զքեզ պաշտէր։ Յոր [illegible]-
[illegible], որով հաւատարեալ և ես [illegible], նովին նմանութեամբ
ընդ երջանիկ [illegible], մագդաղենացւոյն և շնորհեալ կնոջն, որք
զգթմամբն երջանիկք եղեն։ Իբր զի որպէս զնոցա անուշից օծումն հա-
ճութեամբ ընկալար, նոյնպէս խնկոց նուաստ աղօթիւք զուարճա-
ցիս. և ոչ յանդիմանեսցես բանիւ սաղմոսին, թէ իւղ մեղաւորի մի
օծցէ [illegible] [illegible], զգլուխ իմ։ Այլ արասցես և զիմ աղօթից
բուրումն ախորժել և տարածել առ ամենեսին, [illegible], լցուցանե-
լով զաշխարհ. [illegible] [illegible]. որպէս տունն՝ որ օրինակ էր աշխարհի.
լի եղև 'ի հոտոյ իւղոյն (Յովհան. ժբ. 3.) և որպէս զնոցա յիշատակն
հրամայեցեր քարոզել ընդ աշխարհ, այնպէս և զիմ խոստովանութեանս
արասցես։ [illegible] [illegible] [illegible] [illegible]. վասն զի դու նոյն տէր ես, որ զգա-
ստացուցեր և յարդեցեր զառաջին չարագործ կանայսն՝ զթամար, զրա-

խար, և զայլսն․ վասն որոյ և զիս կարող եմ զգաստացուցանել, և 'ի յարգի առնել զխոստովանութիւնս իմ։

2 Որպէս երամ կճղակաւորաց։ Այնց զգլխացեալ մեղաւոր կանանց օրինակ եդաւ զովեալ մարգարէին զգործն, որ հրամանաւն այ էառ խոր կին զպոռնիկն (ա․ 2․) և զայլ միս չնացեալ կին 'ի վարձու կալաւ, զի մի չնասցի (գ․ 1․ 2։) մի օրինակ գնէ՝ կճղակաւորէ․ Թերևս խմանալով և զեղեկնէլ, զորոյ զբանն սուրբ բերէ։ Բազում Ճշմարտութեան․ զայն գործս ասեմ՝ քեզ Ճշգրիտ պատկեր և օրինակ կարգեցեր․ անփոփոխ առ ածն։ զի 'ի չնորհացն՝ որ առ այն զգլխացեալ կանայսն եղեն, զծայրագոյն կատարումն չնորհին առ իս ցուցեր․ իբր զի գաանձամբ միաւորեցար ընդ պոռնկացեալ բնութեան մարդկան առ 'ի սրբել զաա․ որպէս ասէէ ընդ պոռնիկն՝ առ 'ի ողջախոհ առնել զնա․ և զարձեալցն 'ի չնութէ ոչ եդաւ զարի՝ անասնական կերակուր, և արծաթ ապականացա, և զինի արբեցուցիչ, որպէս եա ասէէ (գ․ 2․ 3․) այլ եդաւ զմարմին քո և զարիւն, և զկնիք չնորհաց քոց։ Ընդ ծածկոյ ատենիդ․ փոխանակ խաղոյն՝ որով օծար 'ի մեղաւոր կնոջէն, որ օրինակ էր հնոյ ժողովրդեան, եդաւ զօծումն մկրտութե։ Կամ հայի առ բանն եզեկիելի (ժզ․ 9․) իբրև թէ փոխանակ խաղոյն՝ զոր էառ մեղաւոր կինն՝ հին ժողովուրդն։ Ընդ կարմիր, փոխանակ մերկանալոյ մեղաւոր կնոջն՝ զհեթանոսութ, զծածկոյթ գլխոյն զկատան, զի կարասցէ հերովքն ջնջել զոտս քո, եդաւ զանապականութեան ծածկոյթն։ Կամ հայելով 'ի բանն եզեկիելի (անդ 7․) փոխանակ մերկութե գլխոյն մազովք լցելոյ՝ եդեր պսակ պարծանաց 'ի գլուխ նորա (անդ 12։)

3 Ապարանջանս։ Նման 'ի վայր հայի 'ի բանս եզեկիելի (անդ 11․ 12․) փոխանակ զարդարանաց ապարանջանին (պիլէզիկ․) որ դնի 'ի դաստակ մարդոյ, եդաւ զինուորութեան․ զկարժմանս բարի գործոց՝ հին օրինօքն, աւետարանաւն և գործնական առաքինութիւքն․ ձեռք մարդոյ՝ իբրև թևք, և գործք ձեռաց՝ իբրև թռիչք են։

4 Ընդ ականջին գնդի։ 2 օրին․ ընդ ականջօղին․ փոխանակ գնդի՝ որ է օղ ականջաց, եդաւ զանմռայ յիշատակ ածայնին բանից քոց։

5 Ընդ պսակի։ 2 օրին․ եւ հին լծ․ ընդ պսակ․ (այսինքն կերպարանլըխ, կամ լէօֆ․) փոխանակ ասյր՝ որ է զարդ լանջաց կամ պարանոցի՝ եդաւ զբազմապատիկ խրատս առաքինութեան 'ի բառնալ զբայցը լուծդ։

6 Ի մարգարէիցն գտանի։ Ի գրութեանց մարգարէիցն յիշատակեալ նշանագրս, համառօտիւ, կամ զհամառօտ բանս, 'ի այն յոլով, 'ի սոյն ձևս աղօթից մածից՝ իբրև յանդիմանիչ ինձ․ որոց նոյին հաղորդելով, քան թէ ուրախութեանն ընդ աւետիսն այ։ յոլով, յողբս նոցա տեսանեմ հառաչանս, և այլն։ Բայց 'ի վերայ այնր ամենայնի՝ մեծից այ գթութիւն ամենակալ, որ յանձնայն իբրս, և 'ի տեղիս, և 'ի ժամանակս, և առ ամենեսին ժամանէ, կանխաւ ծանուցաւ բանիւք մարգարէից, և օրինակօք զգլխացեալ մեղաւորաց, առ 'ի տալ ինձ յոյս փրկութեան։ Աղօթք, այսինքն որովք աղցեցեր զգլխանս, և այլն։ Յորոց նշանս, զգլխանսն, խոստովանութիւնք, աւետիքն, և այլն, յոյս տան ինձ․ և նշանս, երևմանքն, պքանչելիքն, կամ այլերախտութիւնքն առ ընկալեալ պարգևս այ, վճառութիւնս տան ինձ։

7 Զչեփոփոյ։ Հայի 'ի բանն եզեկ․ (ժզ․ 16․) ըստ սաղմոս թարգմանութեան, յորում ասի․ « Առեր 'ի հանդերձից իմոց »․ զոր սուրբ վարդապետս մեկնէ 'ի վերայ վարագուրի տաճարին, կամ վարագուրի սրբութեացն, որով այծ իբրև զգեստով ծածկեալ լինէր։ Եւ եթէ, ասէ, զայն վարագոյր կամ ընդ այնու վարագուրաւ առնելով խորայէ

լուսոյ կուսս կարկատուծս, կամ 'ի հանդերձս կառց, այսու պատնկել ասի, ապա քանի պատիժ կայցէ անմաքրութեան խմոյ, [illegible] [illegible], 'ի ձեռն մկրտութեան. և [illegible], 'ի ձեռն հաղորդութեան. կամ նկրոյ՝ ուխտիւ կրօնաւորութեան, և արտաքոյ՝ կրօնաւորական զգեստուս:

8 Ի [illegible] [illegible] [illegible]: Ի նմանութէ ժանեաց կամ յօրինականժանեաց սատանայի, որք են բանութիւնք նորա. [illegible] [illegible]. (ԺԸ. օրին. ԼԲ. 24.) « Ժանիս գազանաց առաքեցից »:

9 Ի [illegible] [illegible]: Ի համգամանաց կամ յանուանէ բանիս [illegible], Ճանաչի՝ թէ քնի աւետարանն ինձ կեանք է. [illegible] [illegible]՝ [illegible]. որով աւետարանաւ խոստացեալ լինի 'ի մեղանչելն՝ դարձն, և այլն:

10 Ըստ [illegible]. որով ցուցանի յետ պատկերաւմն գեւոց կամ աշխարհի՝ համդարտութեն լինել. կամ գագարելն 'ի պատկերաւմէ և 'ի հակառակութէ. որպէս 'ի գիշերի մատնութեանն՝ յորժամ պետրոս պատկերաւմիլ կամէր, քն համդարտեցոյց:

11 Ըստ [illegible] [illegible]: Ըստ հաւրն փորձանաց՝ անձրև այցելութեան. կամ փոխանակ հրոյ՝ անձրև. որպէս որդիքն զերեդեայ հուր յերկնից իջուցանել ասէին, և քն զանձրև ներողութեան իջոյց:

12 Ըստ [illegible] [illegible]՝ [illegible]: Որպէս յոմբանելն զքն՝ փոխանակ սատակմանն, որում արժանի էին ըմբռնողքն, ձիր բժշկութեան եցոյց յականջն մաղքոսի:

13 Ըստ [illegible] [illegible]. որպէս աւազակին 'ի խաչի անդ զարքայութիւնն խոստացաւ:

14 Զ[illegible] [illegible]: Ընդէր զմանաւոր հոգևորական բարիսն ած յիշատակելով 'ի թիւ բերեմ. և ոչ զայլ անճառելեան՝ զերկրաւորս և զձծայինս գնեմ սատանոր. որք են, [illegible] [illegible], հայր մեր կոչելովն զած՝ կցորդ լինել որդւոյն միածնի: [illegible] [illegible], որդի ած կամ քրիստոնեայ անուանելովն մեր՝ առ հայրն բնանի զոլ: [illegible] [illegible], համաութեամբ հօր և որդւոյն՝ մասնակից զոլ հոգւոյն: Եւ 'ի վերայ այսոցիկ՝ խաչին փրկագործութիւն. [illegible] [illegible], աւետարանին և ամենայն ածային բանից սփոփանքն և մխիթարութիւնն. և այլն:

15 Բ[illegible] [illegible]: Մի յանճառելի գործոցն ած այս է, զի բարի հատուցումն անէ յօժարութե կամաց, թէ և գործով ոչ կարիցէ կատարել, կամ գործն փոքր իցէ. կամ թէ այնպիսի կամաց փարձս տայ՝ որ արդէն իսկ պարտական էր ած. և զայս առնէ ած ըստ գատմամ իւրոյ, որ զխաէ զմարդս:

16 Ըստ[illegible] 'Ի [illegible]: Անճառելի պարգևքն ած ազատութ շնորհեն մեզ, և ոչ բանադատի ած 'ի տալ, կամ ընդունողքն՝ յառնուլ: [illegible] 'Ի [illegible]. ազատք 'ի ըծոյ պարտեաց. զի այն բարիք՝ ոչ ընդհանուր մարդկութեա, և ոչ իւրաքանչիւրոց առանձինն պարտականք են: Ի[illegible]. գերբնականք են, գերագոյն քան զպայման բնութեան. կամ, իշխանութեամբ տուեալք երբ և զխարդ և ում կամի. և [illegible]. 'ի նկրոյ կարողութեան բնութե, կամ ժամանակի և տեղւոյ և եղանակի:

17 Ըստ [illegible]: Զայս յաւելու 'ի նախադրեալ բանսն, իբր անցումն ինչ, կամ յառաջարան վասն յաջորդ աղօթիցն՝ որ առ հոգին սուրբ. որպէս թէ ասել. յայլ աղօթս առ հայր աղօթելով, և կամ առ որդին, ոչ եթէ զորդին՝ կրսեր առ հայրն գնեմ, և կամ առ հոգին ոչ աղօթելով, զնա նուաստ քան զորդի համարիմ. այլ զերեսեանն հա-

մտադիւ զաւանեմ։ Բռնէք և 'ի ձեռս հոգւոյն, 'ի նշանակ հաստա_
տութեան հոգւոյն ընդ հօր և որդւոյն՝ զյաջորդ աղաչանս մատուցա_
նեմ։ Նախընծայս ողջունէ զոգորմեալն ։ Ոմանք խմանան, թէ սուրբ վարդա_
պետս 'ի քահանայանալն՝ առաջին ընծայ արարեալ էր զյաջորդ ա_
ղօթս. և զայս մակաբերեն յաւելյն՝ աղօթիւք ։ Բայց այդ երկբայելի է.
քանզի և 'ի յաջորդ բանն ԼԴ. 1. և 2. վասն աղօթիցն և զաւանու_
թեանն ասէ. Նախընծայ, Նուիրաբերեալ. զուցէ ասիցեն՝ թէ և զայսոսիկ
յառաջագոյն արարեալ էր. բայց չունին ցուցանել ։ Այլ հարազատ
իմաստ բանիս այն է, թէ առաջին նուէր կամ պատարագութիւն սեղ_
բան պատարագին զայս աղօթս յօրինեցի. որպէս և յառաջ երթեալ
ասէ. մատչիմք մատուցանել նախ զբանականս զայս պատարագ ։ Զոր
և հայրապետք ազգիս ընկալեալ կարգեցին 'ի պատարագի աղօթան.
որպէս և սուրբն Ներսէս լամբրոնացի բացատրէ զայն ընդ այլ աղօթս
և ասէ. « Զայս անկեալ 'ի վերայ երեսաց մատուցանէ, զոյն յայսմ տա_
նելով, թէ մինչդեռ չև եմ 'ի քեն զօրացեալ, կորացեալս եմ և ան_
համարձակ ընդ ձեզ խօսելոյ. . . . վասն այսորիկ 'ի վերայ երեսաց ան_
կեալ, զայս աղաչանք անմատոյց ձայնիւ 'ի սկզբանէ մինչև ցկատար
ասարանէ » ։ Որ և ցուցանէ լամբրոնացին, թէ քահանայն ասէ զա_
ղօթս. թէպէտ այժմ եպիսկոպոսաց միայն պահեալ է ասել 'ի հան_
դիսի պատարագին. խակ եթէ քահանայն եւ կամիցի ասել առանձինն,
կարի զովելի է ։

18 Միաբանեալ ։ այլ օրէն. Համբէ ։

19 Ի յեռն ու ծառայու ։ Զխորհուրդ երրորդութեան հայցէ յայտ_
նեաց ասացելոց, և նոքօք աշխարհի, ասէ լամբրոնացին. կամ, զի և_
րեմամբ հոգւոյն աղանդակերպ 'ի յորդանան, և ամպաձև 'ի թաբօր՝
ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւնն ։

20 Առաւօտինն իմաստութեան ։ Մարգարէքն պարզ բանիւ և առանց
մանուածոյ գրեցին զյայտնութիւն, թէպէտ և բազում զաղտնութի
խմաստից և խորհրդոց զասնի 'ի նոսա ։

21 Ի փառս ու 'ի յերկինս ։ Զբան մովսէսի սուրբ հայրք խմանան 'ի
վերայ հոգւոյն սրբոյ ։ Խակ այլ մեկնիչք ըստ Ճառին խմանան զհողմ
օդայինն՝ ոչ 'ի բնական պատճառաց, այլ 'ի զօրութենէն այ զարթու_
ցեալ 'ի զանգուած ջուրց, որ առ 'ի մեօս՝ օրինակէր զհոգին սուրբ ։
Թարգմանիչք զուգակողմանն ։ Թուի ձևացուցանել զբանս ըստ եբրայա_
կան բնագրին. որ փոխանակ բառին շրջէր, ասէ Մեծսէր, կամ Մեր_
ջեր, որպէս հաւ 'ի թառուցանել զձագս իւր ։ Այսպէս և հոգին սուրբ
զթառուցեալ 'ի ծնունդս աւազանին ։

22 Յոր կերպարան ։ Յօրինակ ծննդեան զորդիս աւազանաւ մկրտու_
թեան, յօրինեցեր 'ի չգոյէ զբովանդակ բնութիւ տարերաց, յորոց
զգոյացան բոլոր զգալիքս. Նախ քան զիւրաքանչիւր. նախ քան զբաժանել
ջուրցն, և 'ի վեր առնուլ զմասն ինչ նոցա, որովք շինեցեր զառաջին հա_
ծանոյծ. զհեղուկ թանձրութի կերպարան հաստատեցեր ։ Ըստ կարծեաց բա_
զում հարց, որք համարին՝ թէ վերացուցեալ ջուրքն մածոյց ած ըղ_
բուն աստղալից երկինս, վերջին վարդապետս խմանի նոյն աստղալից
երկինքն. որ 'ի սարէ յերկրէ նկատելով. համարի իբրև ծածկոյթ կամ
անջրպետ արքայութե, կամ այլ ։ Խակ ըստ կարծեաց բազում մեկնչաց՝
որք զվերացուցեալ ջուրսն առնն զետեղեալ 'ի կամարն օդոյ՝ զուրբշէսք
և ամպովք. վերջին վարդապետն խմանի այս ջրեղէն կամար. և սա
վերջինն՝ նկատելով 'ի վերասա յերկնից ։ Այլ ասէ սուրբ վարդապետս,
թէ ստեղծումն տարերաց նախ քան զբաժանումն և զվերացումն ջուրց՝
նշանակէր զհոգևոր ծնունդս աւազանին. մի զի որպէս ընդ ջրովքն

ծածկեալ կային թանձր տարերք, և սերմանք տարրական բաղադրե-
լոց, նոյնպէս ընդ ջրով մկրտութեան՝ հոգևոր ծնունդքն։ Երկրորդ, զի
որպէս կարաց հոգի տալ առաջածնել զայն բնութիւն յինքէ, այսպէս
և հոգևոր ծնունդս՝ յանծնունդ ջրոյն։

23 Ի ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ։ Հայի՛ 'ի բանն (սաղմ. ՃԳ. 30.) «Ա-
ռաքես զհոգի քո. և նորոգես զերեսս երկրի»։ քե՛ նորոգին, առէ, յա-
րութեամբ ամենայն ներկայս. մարդիկ՝ յառնելով, իսկ երկինք և երկիր
մաքրելով, 'ի վերջին աւուր կենդանութեան, որ է օր ԱՌԱՋԻՆ ՆՈՐՈԳՈՒ-
ԹԵԱՆ. զի անմահ յարուցելոց աշխարհն՝ յայնմ աւուր սկսանի. և այն-
պէս է օր առաջին, զի ոչ ունի զերկրորդ և զերրորդ. այլ միշտ միայն
օր մի։

24 ՔԵԶ ՀՆԱԶԱՆԴԵՑԱՒ։ Որդին ած քեզ հնազանդ եղև, ԳՈՒԹԵԱՄԲ
ԿԱՄԱՑՆ, միաբանութեամբ կամացն՝ այնպէս որպէս հօրն իւրում, ԳԻՏԵՍ ԶԿԵ-
ՐՊԻՍ. զայս հնազանդութիւն արար մերով բնութեամբս. զի յառաւել հնա-
զանդութենէ պահանջէ զանհնազանդութեան բնութեան և կամաց, և զնկերըս
անկումն միայն առ միւսն. իսկ որդին ըստ ածութեանն ունելով զնոյն
բնութիւն և զնոյն կամս ընդ հօրն, անմարթ է առել ըստ ածային կա-
մացն հնազանդեալ հօրն, բայց եթէ կարծ անյատակապար՝ խմացեալ
զնոյն հաւասարութիւն 'ի նոյն գործ։ Զայս տեղի այսպէս պարտ է որոշել կի-
տիւ, և ոչ յարել 'ի յաջորդն առելով. ԳԻՏԵՍ ԶԿԵՐՊԻՍ ԾԱՌԱՅ ՍՊԱՍԱՒՈ-
ՐԵԱՑ. զի ոչ միայն յարմարութեան բանին զառաջինն պահանջէ, այլ և
բուռ օրինակն այնպէս զատանէ, և նոյնպէս գնէ և մեկնէ լամբրոնացին
'ի պատարագի անդ։ Իսկ ԱՌՆՈՒԼ առել զորդի առ հայրն՝ նշանակէ
բնութիւնակից, կամ զի երկոքին 'ի նոյն հօրէ յառաջ գան, թէպէտ
այլ և այլ օրինակաւ։

25 ԻՍԿ ԶՊԱՏՈՒԱԾԱՄԱՐՏԻՍ ԶՔՈ ՀԵՏԵՒԵԱՑՆ։ 2 օրին. ԻՍԿ ԶՊԱՏՈՒԱԾԱՄԱՐ-
ՏԻՍ ԶԻ ՔԵԶ ՀԵՏԵՒԵԱՑՆ, կամ ՀԵՏԵՒՍՑԵԱՑՆ. իսկ յօրինակ լամբրոնացւոյն,
ԶԻ ՔԵՆ։ Զչարախօս բերանս ապստամբելոցն 'ի քէն՝ պապանձեցոյց
բազում բանիւք, ցուցանելով զնոսա ածամարտս լինել. զի ընդդէմ
յայտնի սքանչելեաց ած հակառակէին, և սատանայի զօրութեան ըն-
ծայէին (մատթ. ԺԲ. 25։)

26 ԶԻՒՐՆ ՓՈՐՁԵԱՑ։ Ոմանք մեկնեն՝ զիւր բարիսն շնորհեաց. բայց
այս օտար է 'ի կարգէ բանին. այլ խմանի, թէ զառ 'ի քեզ հայհոյու-
թիւնն անթողլի առաց, իսկ զառ իւրն հայհոյութիւն՝ ներեաց։

27 ՄԻՆՉԵՒ ՀԱՆԳՈՒՑԱՆԵԼ ԼՈՒՍՈՅ։ Յօրինակն լամբրոնացւոյն գնի, ՄԻՆՉԵՒ
ԺԱՌԱՆԳԵՑՈՒԹԵԱՆ ԼՈՒՍՈՅՆ ՀՐԱՇԱԳԵՂ ԱՌԱՔԵԼՈՑ ՅԱՅՏՆԵՑԻ։ Խմաստ բանիս է.
դարձեալ կրկնեցից զկարգ աղօթիցս, որ մինչև ցարդ օրհնութեան էր և
բարերարութեան, փոխելով զայն 'ի խնդրուածս. մինչև ծագումն լուսոյ
հոգւոյն սրբոյ աղչեացի 'ի միտս իմ որպէս զգալի լոյսն յառաւօտուն
ժամու։ Կամ ըստ լամբրոնացւոյն, մինչև լոյս զօրութեանդ՝ զոր 'ի վեր
բացակայ յինէն տեսանեմ, առ իս հասեսցի։ Որով աւետարանեսցի 'ի
հոգիս կրկին խաղաղութիւն՝ զոր ետ քս առաքելոցն 'ի վերնատանն,
և տալ շնորհեաց նոցա փչմամբ զհոգին (յովհան. Ի. 19. 20. 21. 22։)
Իսկ եթէ ՀԱՆԳՈՒՑԱՆԵԼ գնիցի, խմանի. մինչև համարձակութիւն տացի
լուսոյ միտացս. զի որպէս աչք համարձակ տեսանեն 'ի պայծառ լոյսն,
այսպէս միտքն 'ի յայտնիլ հոգւոյն սրբոյ։

28 ԱՌԱՔԵԼՈՑԴ։ մի օրին. ԱՌԱՔԵԼՈՑ։

29 ԶՀՐԱՇԱԳՈՐԾԵԱԼ ՅԱՐՈՒԹԵԱՆԴ. այսինքն արարիչ։ մի օրին. ԶՀՐԱ-
ՇԱԳՈՐԾԵԱԼ։ յօրինակ լամբրոնացւոյն, և յայլ, ԶՀՐԱՇԱԳՈՐԾԻԴ։

30 ՈՐ ԲՈՒԽԵԱԼԴ ԵՍ։ Պատճառաբար խմանի այս, այսինքն որ տա-
ցանես բարիք աղօթել առ հայր՝ ընծիւք սրտին, որ անմռունչ հե-

ծուԹի առի ։ Այսպէս բացատրէ Նա ինքն սուրբ վարդապետս յառաջջարանի երգոց (երես 279 .) « Ի հեծուԹե աղօԹելն քո՝ հոգին սուրբ ուսուցէ քեզ զբանս օրհնուԹե՝ անբարբառ անմռունչ » ։ Իսկ յառելն՝ — [illegible] , զխմորոշականս [illegible] ոչ զնի փոխանակ առաջական գերանուան , որպէս Թէ՝ առ հայր քոյ . այլ փոխանակ ցուցականի՝ որ զմերձաւորն լաղլն ցուցանէ , որպէս Թէ՝ առ այդ հայրդ . յայս միտս բազում ուրեք դնէ սուրբ վարդապետս . որպէս և աստ ասորե . [illegible] ..... [illegible] , [illegible] ։ Սոյնպէս ԼԴ . 2 . առ նոյն հոգի խօսելով դնէ . [illegible] . այսինքն այդ որդւոյ՝ որ քեզ մերձ է , և այլն ։

31 [illegible] ։ Ի բազում բանից սուրբ գրոց ուսաք միանալ ընդ քեզ աղօԹիւք և մաքուր վարուք . որպէս և այն . « Որ մերձենայ 'ի տէր , մի հոգի են » (ա . կորնԹ . Զ . 17 ։)

32 [illegible] ։ մի օրէն . [illegible] ։

33 [illegible] ։ Որպէս անմաքրուԹի չրԹանցն եսայեայ սըրբեցաւ [illegible] , կայծակամբ՝ որ զկենդանի չրԹունս նորա այրեաց . կամ այնպէս այրեաց՝ որ զկենդանուԹի չրԹանցն պահեաց ։ Նոյնպէս ախալուԹն մեր 'ի մեզս՝ հալեալ սրբեսցի հրով սուրբ սեղանոյն , կամ մարմնոյն քոյ ։ [illegible] ։ Արդարև մի եմ և ես 'ի յանցաւորաց անտի , և առաւել քան զնոսա կարօտեալ ողորմուԹե մեծի . ընկալ և զիս . զի [illegible] , յայս ամենայն պարգևս , [illegible] , յամենայն ժամ , միշտ , կամ բովանդակապէս հաչակեալ փառաւորեսցի քո անուԹիւնդ . և այլն ։

## ԲԱՆ ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծուԹեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղԹանաց բանի .*

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա . Արդ [1] առ այսոքիկ Թշուառացեալ հնչյս իմոյ իղձք , և առ քեզ դաւանուԹիւնք յարմարականք , որ բովանդակես բանիւ զամենայն՝ ած , զոր 'ի նախնեաւն Հառեալ՝ և յերկրորդումն ցուցից ։ Իսկ [2] յանդիմանուԹիւնս գրաքննականս՝ 'ի կոյտս բազմուԹե ազգաց , և ԹարգմանուԹիւնս ժողովրդոց , զայս արգահատուԹիւնս մաղԹողականս նուիրեցի , զոր ներքնաշարեալքդ սահմանադրեն գոհաբանուԹիւնք ։

Ի հանդիսարանս խօսից առնելի բանս մաղթանաց, որով հոգին իմ[5] հաշտեալ հասանէ յօգնականութիւն։

Բ. Աղաչեմ զանփոփոխելի տէրութիւն ամենազօր հոգւոյդ հզօրի, տուաքես զցօղ քաղցրութեան քոյ, և[4] բարեգործես 'ի յանձին և յիշխանական ազգման ըղ-գայութեան զամենայնց հորհս բազմապարգև քո ողոր-մութեան։ Եւ հերկես զսանական անդաստան մարմնե-ղէն կարծրացեալ սրտիս՝ յընդունակութիւն արգասեաց հոգևոր սերմանց։ Քում ամենիմաստ էութեանդ խոս-տովանիմք զամենայն պարգևս 'ի մեզ ծաղկեալ և ա-ճեցեալ. որ ձեռնադրես առաքեալս, լցուցանես մարգա-րէս, ուսուցանես վարդապետս, բարբառեցուցանես հա-մերս, և բանաս զփակեալ ականջս խլից. որպէս ազգա-կիցն քո էակիցն հօր անդրանիկն որդի քոյին գործակ-ցութեամբ ներգործելով զայս ամենայն, քարոզեաց զքեզ ընդ հաւասարակից խոկութեանդ հօր։ Շնոր-հեա և ինձ մեղաւորիս խօսել համարձակութեամբ ըղ-կենդանարար խորհուրդ աւետեաց աւետարանիդ, հե-տևել արագաթռիչ ընթացիւք մտաց[5] ընդ անհուն աս-պարէզս քոյինաշունչ կտակարանաց։ Եւ 'ի մտանել իմ 'ի գլուխ հանդիսի մեկնութեան բանի՝ նախաժա-մանեսցէ առ իս գթութիւն քո, խօսելով յիս զարժանն և զպիտանին և զհաճոյսն քո 'ի ժամանակի, 'ի փառս և 'ի գովեստ ածութեանդ քո, և 'ի լրութիւն շինու-թեան կաթողիկէ եկեղեցւոյ։ Եւ կարկառեա 'ի վե-րայ իմ զամենամերձ աջ քո, և զօրացո զիս շնորհօք գթութեանդ քո. փարատեա 'ի մտաց իմոց զմէգ մը-թութեան մոռացութեան, ապաքինեալ ընդ նմին ըղ-խաւար մեղաց, ամբառնալ ուշիւ իմաստիցս՝ 'ի կենցա-ղոյս երկրէ 'ի բարձունս։ Լուսաւորեա[6] 'ի յիս վերըս-տին զծագումն անստուեր ճրագին գիտութեան ածու-թեան քոյ, հզօր, արժանի լինել առնել և ուսուցա-նել յօրինակ բարեաց ածասէր լսողաց։ Եւ քեզ ամե-նայն փառք յամենայնի ընդ հօր ամենակալի և ընդ որ-դւոյդ միածնի և բարերարի, այժմ և յանվախճան յա-ւիտեանս. ամէն։

Իսկ զհաւատոյ սահման բանի ընտրութեան շնորհի

կենաց կանոնի [7] առ համագոյ սուրբ Երրորդութեանն՝ զայս վարդապետեսցի, զոր շաւիղ կարգիդ վերանկարէ։

[8] Երրորդութիւն անայլայլական նորոգ ստեղծարանութեան աղբեւր լոյս, յոր ինչ 'ի Նիկիայն սահմանեցաւ հաւատ։

Գ. Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և երկրպագեմք զգուգափառ միութիւն ամենասուրբ Երրորդութեանն, ա̃ծութիւն անճառ, միշտ բարի, նոյնագոյ, հաւասարապատիւ, անհաս իմաստից թեւոց ըլլացման, 'ի վեր քան զօրինակ և անդր քան զնմանութիւն, գերազանց զօրով սահմանի անպարագիր բացարձակութեամբ, [9] յառաջ քան զհիմն յաւիտեանցս անտարրափակ էութեանց ստեղծականացս կարգաց, օրհնաբանութեամբ անթարգմանելեաւ ամենահարուստ մեծութեամբ յաւէտ պահեալ, հատոյց ժամանակաց և որ 'ի ժամանակի են կերպաւորեալք, ինքն պատճառ հանդերձիչ և յարմարագէս յօրինիչ տեսականաց և աներևութից։ Ոչ անուամբ չափեալ և ոչ յօրջորջմամբ նշանակեալ, ոչ որակութեամբ նմանեալ և ոչ քանակութեամբ կշռեցեալ, ոչ օրինակաւ ձևացեալ և ոչ որպիսութեամբ ծանուցեալ, [10] ոչ 'ի թերութենէ տարածեալ և ոչ 'ի լրմանէ ամփոփեալ, ոչ ուրեք երբեքի զրաւեալ և ոչ 'ի տեղւոջ վայրի երևեալ։

Դ. Հայր զթութեանց՝ ունող ամենայնի, և ա̃ծ հանուրց որ յերկնի և որ յերկրի, [11] բաց 'ի բանէն միայնոյ՝ որով զամենայն ինչ ունի. ստեղծիչ և տուիչ շնչոց ամենից, [12] բաց 'ի հոգւոյն խնկակցէ որով զհամայնն կազմեաց։

Ե. Մ՚ինն յերջանկափառ համազօր ահաւորութենէ երիցն անձնաւորութեանց [13] խոնարհեալ 'ի վերուստ՝ աստուստ 'ի ստորինս, որ էրն իսկ 'ի բնէ անբաժ 'ի ներքնոցս՝ անկապուստ մտալով փառացն աթոռոյ, և անկարօտ զխնացն [14] ծնողին իւրոյ, մտեալ 'ի սենեակ կուսին արգանդի [15] պարզաբար, և եղեալ անտի յօդաւորաբար մարմին էապէս անարոշելի, անթերի մարդկութեամբն և անպակաս ա̃ծութեամբն։ Մ՚ի որդի հօրն միայնոյ, և միածին անզրանիկ ա̃ծամայր տիրածին կուսին, [16] արարիչն յեղականումն մարդ եղով Աշխարհի

սկզբնածին. ահա ոչ գլխի եղելոց երկրաստեղծիցս նմա-
նութեան, այլ նոր և չքնաղ, թագաւորաց վեհափառ,
որ ոչ ցուցաւ 'ի գալս, և ոչ գոյացաւ 'ի ժամանակս,
անդրանիկ ըստ սաղմոսողին, քան զամենայն թագաւորս
երկրի. [17] անապական խառնութեամբ կերպացեալ ըղ-
մերս 'ի մարմնի, ըստ օրինի Հոգւոյ ընդ մարմնոյ, և ոս-
կւոյ ընդ Հրոյ, և կամ յայտնապէս իսկ ասել՝ լուսոյ
ընդ օդոյ, ոչ փոփոխեալ և ոչ անջատեալ։ Այն ինքն
եկեալ կամաւորութեամբ 'ի խաչն մահու, իբր զգառն
անարատ 'ի սպանդ վարեցաւ, և Հանդերձեաց զօրեղ
ինքնիշխանութեամբ զպարարածոց իւրոց փրկութիւն. [18]
չարչարեալ իսկութեամբ կենդանեաւք՝ եդաւ 'ի շիրմի
անորոշելի յա̃ծութենէն. եռօրեայ թաղմամբն 'ի գը-
ժոխս՝ սանդարամետականացն [19] վՀատելոցն բանտար-
գելոցն քարոզեալ ցուցաւ նորոգումն և լոյս։ Եւ աւար-
տեալ [20] զտնօրինականացն զփրկանաւորն զտնտեսութի̃,
ա̃ծապէս վերակենդանացեալ. և կատարեալ 'ի թեւս
Հողմոց՝ ելեալ 'ի Երուսաղէմ ամպով անքննութե̃ ծած-
կեցաւ. Համբարձեալ գեր 'ի վերոյ ամենայն երկնի,
նստաւ Ճոխութեամբ յաթոռն իւրական սկզբնաժա-
ռանգ Հօրն Հաւասարութեան, յորմէ և բնաւ իսկ ոչ
մեկուսացաւ, անկորուստ առեցելոյն և անուաղ սեպ-
Հականօքն։ Որով և եկեսցէ 'ի դատաստան Հատուց-
մամն, քննել զծածկեալսն կշռութեամբ չափոյ արդար
իրաւանց. որում սպասեմք և յոր աղօթեմք, Հաւա-
տացեալք յամենայնի՝ ամենայնիւ ամենակալ տէրու-
թեան նորա. [21] որ արդարեւ մի̃ն է միայն 'ի միայնոյն՝
'ի միոյն փառակցութիւն յաւիտեան երկրպագեալ։

Զ. Բարեբանեմք միշտ և օրՀնեմք ընդ որդւոյ և ընդ
Հօր և [22] զՀոգի էութեան նոյն, ամենազօր, Ճշմա-
րիտ, կատարեալ և սուրբ, որ յանէից գոյացոյց զբոլոր
եղեալքս ամենայն. ինքնագործ Համիշխան երկուցն եւ
ընդ նմին անեղծ և անտաՀման թագաւորութեան. ոյր
ինչ պատճառն առաջին և բանն աՀաւոր նորին ինքնու-
թեան, նոյն ինքն և Հոգին բարձրացեալ։ [23] Բարի ինք-
նակալ, ամենից բաշխիչ զՀօրն պարգեւս 'ի գովեստ ա-
նուան փառաց միածնին. որ ազդեաց յօրէնսն, ճչեաց
'ի մարգարէսն, [24] փչմամբ ազգակցին տպաւորեցաւ յա-
ռաքեալսն, [25] կերպիւ աղաւնւոյ ցուցաւ 'ի Յորդանան

՚ի մեծութիւն փառաց եկեղեցւոյն, փայլեաց [26] ՚ի գիրս աւանդականաց, արար հանճարեղս, զօրացոյց իմաստունս, լցոյց վարդապետս, [27] օծ արքայութիւն, օժանդակեաց թագաւորս, ետ վերակացուս, հրամանատարեաց փրկութիւնս, շնորհեաց ձիրս, հանդերձաւորեաց քաւութիւնս, զմկրտեալս ՚ի մահն Քի՛ ՚ի բնակութիւն իւր մաքրազարդեաց. զոր հայր և որդի, զնոյն և հոգին ներգործեաց, և նոյն է օծ խնկեալ տիրապէս ամենայն յամենայնի։

Է. Քանզի [28] ոչ նախանձուելոյն Աստուածութեան որ մեծ ինչ քան զմիւսն, և կամ զնի անուանին նուաստագոյն առ նմանն, և կամ ՚ի մինն առելով խառնակութիւն զոլ զիմացն, և կամ յերիցն տրոհումն ուրոյնութիւն եւ կամացն։ Քանզի անմեծար հայր ամենայնիւ, եթէ ոչ զնմանն ունիցի ինքեան զօրութիւն. որպէս ոչ գոլով ընդ նմա հոգւոյն՝ անհաղորդ ոմն և անկենդան և առ ամենայն հրամաննուալեալ։ Իսկ բանն եթէ ոչ անուամբ հօրն ծանիցի, որք ոմն և կամ լքեալ և կամ [29] ՚ի մահացուէ ումեմնէ ուէի։ Որպէս և հոգին եթէ ոչ ՚ի պատճառէն նշանակեսցի, [30] ապաշաւք ոմն թափառեալ՝ իբր զշունչ անզաւելի։ Այլ եթէ որ հակաճառական բանիւ [31] յաւանին կապուել զհայր ՚ի յետմէ բանէն, որ թէ էր երբեմն յորժամ և չէր, և անբանութեանն բամբասանօք պատուել վարկանի զմեծին մեծութիւն, և կամ սարկութիւն տացէ բղխողին՝ ոչ բնաւորաբար գոլով հոգւոր, որով այլ ինն գոյութիւն օտար մուծանել և կամ ամբոխումն ինչ այլայլական յանարատ պատիւ միութեան սուրբ Երրորդութեանն, զայնպիսին քարամբք պարսից հաւատոյ բանից, իբր զդժնդակ զեւս զխմանմարտիկս զազանականս, հերքեալ ՚ի միջոյ ՚ի բաց հալածեմք, եղեալ ՚ի նզովս զնոյնս ընդ նոսին՝ փակեմք ընդդէմ նոցին զկենդանին մուտ եկեղեցականս գաւթի։ Սակի զսուրբ Երրորդութիւնն փառաւորելով ՚ի նոյն տէրութիւն միակցորդ հաւատարութե՛, զուգաձայն սրբաբանութեամբ, հանգստութեամբ հարթութեամբ, օրհնեալ և փառաւորեալ յերկինս և յերկրի, ՚ի ժողովս անդրանկացն, և յազգս երկրածնացս բանականաց, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ը. Ընդ զայս [32] գոչումն ձայնուկ խորհրդոց կերպաւորելոց յայսմ մատենի՝ ամենայնք ականջաց մեծիդ ոչ ընծայեցուցի. ամլինք սպառազինեալ, և սոսա մնի 'ի հանդէսն : Այլ ոչ եթէ կարօտեալ խնդիր ինչ ձայնի այսմ մեծանաս, որ մինչև սանձեալ էր քո զամենայն՝ նախ քան զլինելն երկնի [33] փառաբանչօքն անմահից և երկրաստեղծս բանաւորօք, դու քեզէն 'ի քումդ լութենէ փառաւորեալ իսկ էիր. այլ զի զմերժեալս զիս յարգեսցես, անձառ քաղցրութիւն, ճաշակել ըզքեզ բանիւ հաղորդութեամբ : Իսկ զինչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ կենաց կանոնիդ ասել Ադամայի տէր, և զհրամայեալ պատուէրդ ոչ առնել. որ ինձէն իսկ զիս [34] զանկեղէն տախտակս խօսուն՝ նուիրեալ քումդ պատգամի, զգրեալս մատամբդ ոչ՝ եղծի, որ և խորտակելն է իրաւացի. և ես տխրատեսակ մոլ զերկրորդն նմանութիւն առեալ հայթայթեմ : Այլ արդ քանզի [35] բազմօք պաղատեցայ զլուսակօք խանդաղատականօք, որ ոչ է գրեալ 'ի յայս կարգ ձայնի, լուր, բարեգութ, ըստ ամեն բանի այսմ ամենայնի : Եղիցի և այս աղերս բարբառոյ հայցման աղօթից յօդեալ ընդ նոսին. Թերևս 'ի մաքրոց և 'ի կամարարից այսորւէր հայցի [36] պանից բաղարջոց իւղով զանգելոց 'ի սեղան փառացդ քոց մատիցէ :

Թ. Այլ դու բարերար և յամենայնի մարդասէր, Որդ մի՝ ոչ միոյ, հզօր և ամենակալ, որ յաղթես զըթութեամբ խնամոց քաղցրութեան քո, [37] ոչ հասարակականաց միայն մարդկութեանս իմոց զօսակցաց, առ որս յաւէտ է ամբոխութիւն և բիւրանամնեայ հակառակութիւն, այլ և հրեշտակացն անախտականութե, նաև և ես քան զայս՝ սրբամնելոցն անարատութեան. յորոց մի էր և Եղիաս, որոյ ցոյցք խոստութեանն 'ի Քորեբ լերինն նշանակեցաւ յերկս օրինակս, 'ի շարժումն մեծ, 'ի հողմն ուժգին, 'ի հուրն կիզանողական. իսկ քոյդ հեզութիւն երկայնմտութեան՝ 'ի հանդարտութիւն մեղմութեան օդոյն քաղցրութեան. քանզի [38] կամաց ողորմութեանց դու միայն ես, ըստ գրեցելումն : Սան զի թէ և հաճոյք գտան մերայներս աստուածութեն յեղանակեալ յայլ նմանութի վերնայնն, սակայն երկրածինք են և նոքա, ընտրեալք 'ի մարդկանէ. իսկ

դու ոչ ունիս չարանալ իսկութեամբ բարիդ, յամենայնի օրհնեալդ, ամենեքին փրկութիւնդ, ամենայնիւ հանգիստդ, համայնից անդորրութիւնդ, համօրէն ախտացելոց դեղ առողջութեան, աղբիւր ջրոյ կենդանւոյ ըստ Երեմիայ: Դարձ առ իս և ողորմեա ինձ, որ այնքան ծարաւես պասքիս անկարօտդ մ̃ծ խնամ փրկութեան, մինչ զի զուարթնոցն երկնից անմահից օրհնաբանողաց [39] քան զիս ընծայեցեր մարդկօրէն փրկական քահանայապէս և քաւչապետաբար՝ անեղծական յարակայութեամբ մշտնջենաւոր պատարագս օրհնեալդ քո գթութեան 'ի մերոց գինաց կենցաղականաց վասն իմ բեկելոյս հաշտութեան մաղթել, ողորմեա Երուսաղէմի. որ է լուսաւոր խորհուրդ յայց ելանելոյ մեծիդ յայտնութեան առ հրեշտակականն թափուր տեղի ստորանկելոց 'ի ձեռն մարդկան՝ քո կցորդութեամբ աւետարանեալ առակաւ այսր օրինակականս, Երուսաղէմի:

ժ. Արդարեւ լուար բարեգութ, անսացեր թագաւոր, ունկնդրեցեր կեանք և յոյս. 'ի միտ առեր երկնաւոր, յարգեցեր հզօր, նկատեցեր ծածկագէտ, տեսեր խնամակալ, կարեկցեցեր անպատում, խոնարհեցար միշտ բարձրեալ, նուաստացար ահաւոր, յայտնեցար անճառ, ամփոփեցար անսահման, բնակեցար անքնին, [40] մածար ճառագայթ, մարդացար անմարմին, շօշափեցար անքանակ, կերպաւորեցար անորակ, լցեր իսկապէս [41] զաղաչողացն բաղձանս: Դու իսկ եղեր թշուառացելոյս ինձ՝ ձայնիւ զուարթնոցն՝ բարի բարեխօս, միջնորդ կենդանի, պատարագ անմահ, սպանդ անվախճան, նուէր մաքրութեան, ողջակէզ անծախ, բաժակ անսպառ: Ահա ողորմած, մարդասէր, օրհնեալ, միշտ կատարեսցես [42] առ մեղուցելոյս զբարերարութիւն կամաց քոց կենդանատուաց, գովեալ երկայնամիտ. և քեզ վայել է փառք յաւիտեանս. ամէն:

---

1 [illegible]: Նա այսոսիկ են խղճք կամ յօժարութիւնք թշուառ հոգւոյ. և առ քեզ դաւանութիւնք [illegible], խոստովանութիւնք մտաւոր, կամ յատուկ քեզ վայելչականք. զոր թէ և բովանդակ տեսանես դու և գիտես, բայց ես որպէս 'ի [illegible], նախ քան զայս յանցեալ աղօթսն ծանուցի, զնոյն և յերկրորդումս ցուցեալ կրկնեցից:

2 [illegible]: Ի բացայայտութիւս, կամ 'ի հրա-

պարականական բանս՝ որ 'ի սուրբ գրոց. կամ Փրոֆանոյն ասէ, Թերևս զի 'ի գիր անցուցեալ զբանն՝ այսպէս խօսէր յաւէնի ըստ սովորութեան ատենից. որպէս և Շնորհալին ասաց զատենական խօսն առ Ժողովս հայրապետացն և ասէր. « Զխելքս մատուցանել զուգնաքեայ այսպիսի բանից, որ ոչ 'ի խելքս հայեալ, միանգամայն և յոգս ցնդեալ. այլ արձանագրեցեալ գրով ըստ գերակատար իմաստնոյն օրինի »: Արդ վասն այնպիսի ատենական վարդապետութեանց, զայս յաջորդ Արփհրաժութիւնս, ապաշանս նուիրեցի. զոր 'ներքոյ եդեալ աղօթական բանքդ ցուցանեն:

3 Համանուն: Ի միում, դաշնաւ. յայլ, դաշնեցեալ. որ և այս յարմարի. երբեմն թէ՝ որով հոգին սուրբ հայցեալ, աղօթիւք կամ պաշտամամբ պատուեալ. վասն զի բազում՝ պաշտօն և պաշտել, բազում անգամ գնին փոխանակ բանուոր կամ ձայնուոր աղօթից և օրհնութեան:

4 Բարեգործեա: Շնորհեա կամ յօրինեա զամենայնից շնորհս քո՝ 'ի յանձն, 'ի հոգւոյս, և յիշխանական աշխարհ շփոթութեան, 'ի լեզուս՝ որ իշխան և ազգաբար է զգայութեանց. կամ, 'ի միտս՝ որ իշխանաւոր տիրէ զգայութեանց, որ տիրապէս զգայ և ազդէ զիմաստս գրոց:

5 Ընդ անուան առաջարկեալ: Անցանել կամ գնալ արագ ընթացմամբ մտաց ընդ անանցանելի ընդարձակութիւն ծածկաւոր գրոց: Առաջնոց վարդապետաց սովորութիւն էր՝ զատենական ճառս կամ զքարոզս իւրեանց յօրինել 'ի վերայ բանից սուրբ գրոց, մեկնաբանելով զնոյնս, որպէս առնեն ասելեբեան, եփրեմ, և այլք. վասն այն ասացեալ հեղինակին կոչէ զայն:

6 Ի չէ Վերջին: Նոյնպէս յետ վերջին զնշոյլին զիտութիւն քո, որպէս միանգամ ծագեցեր 'ի լուսաւորութեան մկրտութեան. յայնժամ ծագեցեր առ 'ի ուսանել ինձ, այժմ ծագեա առ 'ի ուսուցանել այլոց: Կամ, վերջին ասէ պայծառացուցանել զշնորհս զիտութեան, որպէս 'ի սկզբան յառաջեալըն:

7 Առ համարս ասէ երրորդութեան: Զատչման զաւանութեան հաւատոյ որ առ սուրբ երրորդութիւնն, զայս կամ այսու օրինակաւ աւանդեցի, յօրինեցի, ըստ որում յաջորդ բանդ երևեցուցանէ: Զայս դաւանութիւն յայն սակս դնէ սուրբ վարդապետս, զի օրէն է քարոզչաց բանին՝ նախ զուղիղ հաւատոյ հիմն արկանել:

8 Երրորդութիւն անձնաւորեալ: Այսինքն դաւանութիւն երրորդութեան, կամ ճառ և բան յաղագս սրբոյ երրորդութեան: Զի սովորութիւն է զմակագրութիւն գրոց կամ ճառից 'ի նիւթոյն առնուլ, որպէս գիրք մովսէսի կոչին՝ Որ-ա, Ածի, Էւ, Բիա, և այլն. զի են բանք զլինելութենէ արարածոց, զելից խորայէլի յեգիպտոսէ, և զթուոց 'նոցա. նոյնպէս գիրք առակաց Իմաստութիւն կոչի. զի են խրատք իմաստութեան: Նմանապէս յարարչնոյն Ծննդոց ասի բանաստեղծութիւն հոմերոսի՝ յորում խօսի զեղինական պատերազմէ. և Ոդիսիա կոչի միւս ևս բանաստեղծութիւն նորա, յորում զոդիսևեայ ճառէ. ըստ այսմ և այլք բազումք: Կամ, եթէ կամիցի ոք, Երրորդութիւն խմանալ՝ երրորդումն, այսինքն երրորդ անգամ կրկնումն դաւանութեան հանգամանօքն. զի նախ՝ յառաջելոց աւանդեցաւ. երկրորդ անգամ 'ի ժողովս նիկիոյ և կոստանդնուպոլսոյ բացայայտեցաւ. իսկ երրորդ անգամ ինքն առաւել ևս ընդարձակէ աստ: Զայս դաւանութիւն երրորդութեան անձնաւորեալ ասէ, ըստ Ճշմարտութեան բանիցն և ըստ մասանց հաւատոյ. զի մի 'ի այլոց ոք կարծիցէ՝ թէ յաւելմամբ կամ այլայլութեամբ բանիցն փոփոխէ զիմաստս, և բազմացուցանէ զհաւատալիսն: Նորոգ Ընթերցանութեան, ըստ բացայայտութեան նորոգ եղանակաւ ընդարձակ յօրինեալ: Դաշնաւ

ջոյ, այս դաւանութիւն աւանդեցաւ յնոյ ըստ հաւատոյն կամ ըստ հանգա-նակին, որ 'ի ժողովն նիկիոյ աւանդեցաւ, որպէս և 'ի յաջորդսն զհա-ւատս նիկիական հանգանակին ընդարձակ ձևացուցանէ:

9 Յառաջ քան զամենայն յաւիտեանս: Ոմանք զհրեշտակաց իմանան. բայց ըստ ես իմանի՝ յառաջ քան զսկիզբն ստեղծեալ ժամանակացս, ա-ստուածային էութեանց. յորում էութիւնք ստեղծեալ իրացս ոչ էին փո-խեալ ընդ ատրեւոքս, այլ ծածկեալ 'ի միտս նոյ, նա անձնական որդ-նութիւ իւրոյ ամենահարուստ մեծութեն պահեալ էր. իբրև թէ՝ ան-կարօտ էր արարածոցս փառաւորութեն. զի յառաջ քան զնոցայն լի-նելութիւն՝ նորա մեծութիւնն է փառք իւր, որպէս զնի սաէ 'ի հա-մարն ԺԹ. տես ԼԾ. 33: Կամ, Յաւիտենից էութիւնք իմանին անմարմին բնութիւնք՝ որք ոչ փոխին ընդ ատրեւոք. իսկ ժամանակաւ կարգ են այլ ամենայն մարմնականք: Յառաջ քան գչիմնարկութի ժամանակաց, ասէ, յորում եղեն անմարմին և մարմնական բնութիւնք, օրհնաբանեալ է ածութեն՝ ոչ յայլմէ, զի ոչ կայր ինչ. այլ յինքենէ, և այս է ա-նուանեալն. զիարդ պք յիւրմէ օրհնեցի, փառաւորեցի. բայց եթէ զի ինքնագոյ ամենայն մեծութիւն նորա է փառք իւր:

10 Ու 'ի Բնութենէ գործեալ: Ոչ յառաջն թէրի և անկատար գո-ըով, աճեցաւ 'ի կատարելութի. և ոչ 'ի յետոյ, 'ի կատարելութենէ նուազեալ կամ պակասեալ. ոչ առաջ և յետոյ. ոչ ընդ ժամանակաւ եր-բեք փոխեալ, և ոչ 'ի սեղմաւ պարփակեալ: Ի կարգի բանիս զատա-նեաց ատորգութիւն արխառսեալական 'ի բաց աանի յնոյ. զի թէ և էակ է ծայրագոյն ամենուանակ, բայց ոչ իբր գոյացութի անուամբ ձա-նաչի կամ որոշի. ոչ քանակ 'ի նմա, ոչ որակ, ոչ առինչ նմանական, ոչ կրել, ոչ երբ ժամանակի, ոչ ուր տեղւոյ:

11 Ծնեալ 'ի Հօրէն: Հայր՝ է նա ամենեցուն, բայց միայն բանին կամ որդւոյն ոչ է նա ըստ ածութեն, թէպէտ և է նորա նա ըստ մարդ-կային բնութեն: Ոմանք 'ի հարց նաև ըստ ածութեն մեկնեցին զասելն քրիստ (յովհան. ի. 17.) առ նածն իմ. Որպէս սուրբն կիւրեղ (կոչ. ըն-ծայ. գլ. ժա. համար. 21.) ասէ. «Այլ աստ իմ, որդիութի, բնութի և միածնութի»: Ի սոյն միտս խօսի և սուրբն իլարիոս (գիրք Ժ. յա-ղագս երրորդութեն. համար 11. 12. և գիրք Դ. համար 53:) Բայց այս մեկնութիւն ոչ է հաստատուն և հարազատ:

12 Բղխեալ 'ի Հօրէ Հոգւոյն սրբոյ: Հայր է ստեղծող և կենդանացուցիչ ա-մենայն շնչաւորաց, բայց միայն Հոգւոյն սրբոյ ոչ է, որ էութի ընդ Հօր ունի զկենդանութի, և ընդ նմա կենդանացուցանէ զամենայն:

13 Խոնարհեալ 'ի Վերուստ ասպարէզ 'ի ներքոյ: մի օրին. Խոնարհեալ 'ի վերուստ անտի. այսինքն 'ի վերուստ անտի, կամ յերկնից: Ուր էր իւր 'ի Բնէ. այսինքն բնութեամբ կամ յառաջնմէ իսկ անբաժանելի 'ի ներքինոյս:

14 Ծնունդ Կուսի: Ի չորս օրին. Ծնողին Կուսի. և խմանի, այնմ որ ծնող է անախտ և անայլայլական եղանակաւ, որպէս սէրն անախտա-բար ծնանի: Կամ, այնպիսի ծնող՝ որ անխորժաբար ծնանի՝ և ոչ ըստ բնաւոր ազգմամբ, և կամ 'ի զխալոյ ինչ:

15 Պարզաբար: Երբեմն պարզ և անմարմին, կամ պարզ բնութեամբն. և եղեալ անտի յօդաւորաբար. յղացաւ կամ բաղադրեալ մարմնովն և հոգւով, մարմին եղեւ, մարմին խառնութեամբ, Աստուածապէս և ոչ կար-ծեօք, ամբողջ մարդկայնովն. որ անբաժանելի էր յածութենէն:

16 Աշտարակ անշարժական: Բանն նա արարիչ յեղական կամ 'ի ստեղ-ծեալ մայրն լինելով մարդ Աստուածն. Սկզբնածին. այսինքն առաջին ծնունդ կամ անդրանիկ մօրն, կամ առաջին ծնեալ 'ի կոյս մօրէ: Ան-

ու զնի. ոչ համեմատ կամ ըստ նմանութեան այլ մարդկան յերկրէ և-
գեղոյ, այլ նոր և սքանչելի, թէ ըստ ծննդեանն, և թէ ըստ եղանակի
ծննդեանն։ Բառն՝ [illegible] յայլ գիրս եւ երբեմն նշանակէ՝ համեմատ,
կամ ըստ. որպէս ըամբրոն. (Տես յաղագս սատին. եկեղեց.) «Նմ-
նայն օրէնքն ամ գիւր է, և զինի բնութեան». այսինքն համեմատ բնու-
թեան մերոյ. զայն գնէ և ('ի մեկն. սաղմ. ԺԶ։) [illegible] [illegible].
գերազանց քան զծնունդ թագաւորաց, որք ամենեքին բնութիւնակից
իւրեանց մերն ծնանին, և իբրև զայլ ազգաց տանց իշխանութեան,
այլ և բաղձալով զկուսութեն ծնանելոյն։ Իսկ բանն ած կուսածին՝ ան
[illegible] [illegible] [illegible] քան զամենայն թագաւորս (սաղմ. ձԹ. 28։)
Ուր 'ի մեջոյին կայ բառս՝ [illegible], այսինքն բարձր քան զամենայն թա-
գաւորս։ Բայց սուրբ վարդապետս հայեցուցանէ զայն և առ բանն [illegible]
[illegible]. իմանալով աստղին քան զամենայն թագաւորս ոչ միայն իշ-
խանութեք, այլ և ծննդեամբ ըստ մարդկութեանն. վասն զի միայն քո
ծնաւ թագաւոր, իսկ այլք ոչ ծնանին թագաւոր, այլ 'ի մարդկանէ
կարգին, թէպէտ և ծիրանածինք կոչին, թագաւորացն, և այլն։

17 [illegible] [illegible]։ Անշփոթ և անայլայլելի խառնութեք, այսինքն նեկրքին սերտ միաւորութեք. [illegible] [illegible] 'ի [illegible]. յինքն առեալ զմեր բնութիւն մարմնով, կամ զմերս հոգի 'ի մարմնի անդ։ [illegible] [illegible] [illegible], և այլն։ Այս օրինակք հոգւոյ, հրոյ, և լուսոյ՝ այնչափ միայն ունին յարմարութեն, զի որպէս անշփոթ և գոյացարար միաւորի հոգի ընդ մարմնոյ, և հուր ընդ ամկոյ, և լոյս ընդ օդոյ, այսպէս ան-շփոթ և 'ի նեկրքուստ իւրովէն միաւորի ածութեն ընդ մարդկութեան 'ի մի քո։ Ուր և յաղագս տարացուցի լուսոյ յաւելուն [illegible] [illegible] [illegible], նշանակէ՝ առաւել յայանի կամ երևելի օրինակ առ միաւորութեն քնի. զի լուսոյ ընդ օդոյ միաւորութեն առաւել զգալի է մեզ և ազգողական՝ քան զհոգւոյ և զհրոյ։ Զբառն [illegible] առնուլ փո-խանակ անշփոթ միաւորութեն յայտնի է ոչ միայն յայլ գրոց, այլ և 'ի կիրառութենէ սրբոյ վարդապետիս, որ 'ի բանն ծԲ. 2 առ ած առէ, միանալ ընդ լուսոյդ կենաց [illegible]։

18 [illegible] [illegible]։ Զարչարեալ Չմարմնապէս, [illegible], այսինքն 'ի կենդանութեն միայն, և ոչ յետ մահուանն, որպէս ոմանք հայհոյեցին՝ թէ հոգին քնի 'ի դժոխս ատանջեցաւ, որք և [illegible] անուանեցան։ Կամ, [illegible] իմա այսպէս. Չմարմնապէս չարչարե-ցաւ 'ի մահ մարմնոյն, կենդանի և անմահ մնալով ածութեամբն։

19 [illegible] [illegible]։ Սրբոցն՝ որք 'ի բանսն նախահարցն արգելեալ կային, և յերկար ակնկալութեամբ փրկչին սպասեալք էին, այսինքն հաշեալ և վատակեալ։ Կամ, եթէ [illegible] իմացիս յաստա-հասեալ, արգարև յուսահասք էին իւրեանց զօրութեամբ, կամ այլոց բարեխօսութեք զերծանիլ անտի։ Իսկ եթէ ոք յաղագս մեղաւորացն ասցէ զբանս, ասացէն և նոցա քո [illegible] [illegible] [illegible] [illegible], ոչ զի [illegible] նորոգեսցին և լուսաւորեսցին յայնժամ, այլ զի ծա-նիցեն՝ թէ ոչ հաւատացին 'ի նա, և 'ի չարի մեռանելոյն՝ զրկեցան 'ի նմանէ։ Բայց զսրբոցն աղատութիւն յայտնապէս առէ սուրբ վարդա-պետս 'ի բանսն ԻԸ. Ն։ տես անդ։

20 [illegible]։ Կատարելով քոյ մահուամբն զմարդեղութեն իւրոյ զփրկագործ խորհուրդն, ածապէս յարեաւ. և զնալով 'ի [illegible]. ըստ սաղմ. (ԺԷ. 11.) որով նշանակի արագութիւն վերելոյն յերկինս, նստեալ 'ի քրովբէական կառս՝ ծածկեցաւ [illegible] [illegible]. ըստ բանին գործոց (Ա. 9.) զի ամպով ծածկելն յաչաց առա-քելոց նշանակէր զանհասութեն փառաց և մեծութեն քնի։ Այսու օ-

ընկալաւ համբարձեալ յերկինս, նստաւ փառօք յաթոռն սեպհական՝ [illegible]։ Այս է մեկնութիւն ասելոյն՝ [illegible] հօր․ այսինքն հաւասար հօր ըստ ածութեան՝ իբրև բան և առաջին ժառանգ նորա․ յորմէ ոչ բնաւ [illegible], այսինքն հեռացաւ։ Ն֊կարուստ [illegible], պահելով զանուն զմարդկայինն, և անպակաս [illegible], ըստ ածային յատուկ փառացն։

21 [illegible]։ մի որդին ՚ի [illegible] հօրէ, ՚ի [illegible] հոգւոյն փառակցութեան։ Խոնարհեցուցեալ զնա ՚ի անսրբականան ներգործութիւն, ոչ եթէ ինքն փոփոխեցաւ կամ նուաստացաւ․ այլ մնաց նոյն միակ որդի միածին այն հօր, և նովին փառակցութեամբ ընդ հոգւոյն սրբոյ։ Այսպէս հաստատեսցէ զլսողին ակրութեն նորա․ և փառաւոր զալըստեանն ապառնեաց յանկանալով։

22 [illegible]։ Օրհնաբանեսցէ ընդ հօր և որդւոյ և զհոգին սուրբ, որ եակից է նոցա, հոգի նեղքին և էութե՞ միացեալ, ոչ արտաքին իբրև զարարած հոգիս։ [illegible], որ ինքնին իւրով զօրութե՞ գործէ, և իշխանակից է հօր և որդւոյ, որք ընդ նմա են միշտ, մի և նոյն անապառ թագաւորութե՞։ Որ [illegible], այսինքն հայր ած, և որ ինչ է բանն ած եակից, նոյն է հոգին սուրբ ըստ էութեանն և ըստ կատարելութեանց։ Այսպէս ըստ եակցացն խմանի բանս․ ուստի առէ, [illegible]․ իսկ յառաւելքն [illegible] ասին․ և այսմ յարմար է բանն ընդհարական պետրոսի՝ վարդապետ վճռոց ասացեալ․ « Հայր ծնաւ զորդի․ որ է այն ինչ՝ որ ինչ հայր է․ քանզի որ ինչ հայրն է, և որդի այն է․ բայց ոչ որ հայրն է, և որդի նա է »։

23 [illegible]։ Խնդրեսցէ կամ խնդրողան բարի, և ոչ ատեցանալ։ Ոմանք կիտիւ զատանեն՝ [illegible], [illegible]․ բայց լաւ եւս է միայար ընթեռնուլ ըստ ընտիր օրինակաց։

24 [illegible]։ Փչեմն որդւոյն ած՝ որ ազգակից առ վասն ընութիւնակից զոլոյն, որպէս ասացաւ (տես․ Ա․ ը․ 24։) Ոմանք յայսմ բանէ կամեցան ձևանալ, թէ որդին ոչ է բղխող հոգւոյն սրբոյ․ ասեն թէ ոչ՝ ոչ ասիւր ազգակից․ որպէս ասեն՝ հայրն ած զու֊լով յառաջածող որդւոյն և հոգւոյն՝ ոչ առ նոյն ազգակից։ Սակայն եթէ քննութեամբ խուզեն զայս, գտանեն նորին իսկ սրբոյ վարդա֊պետին՝ զերկս անձինն են [illegible] ասացեալ (՚ի զով․ ատար․) ուր գրէ․ « Հայր՝ որդի՝ հոգի՝ ՚ի մի չար գաւեալ, զթիւն պատուեալ և օրհնաբանեալ [illegible]՝ երկաստան վերանեկարէ »։ Նոյա ա֊րեան նաև յառաջածող և յառաջածեալ անձինքն ասին միմեանց ազգա֊կից։ Այսպէս ՚ի բանն հն․ 7․ առէ․ [illegible]։

25 [illegible]։ Հոգին սուրբ ՚ի նմանութիւն աղաւնոյ հան֊գեաւ ՚ի վերայ քնի ՚ի մկրտել նորա․ և այս անօրինեցաւ յայս առ ՚ի մեծայուցանել զփառս [illegible] ՚ի մկրտութի, զի մի նման այլոյն կար֊ծիցի կարօտ մաքրութե․ այլ թէ ինքն իսկ մաքրագործ է, ՚ի մաքրել եկեալ, առնել հոգւոյն շնորհաց։ Այսպէս ՚ի խոնարհել քնի կերպա֊րանաւ մարդոյն, փառաւորեաց զնա հոգին սուրբ՝ որպէս արժան֊ցուն վկայելով։ Զաղաւնոյն երևեցելոյ կարծիք է ՚ի վարդապետս․ ո֊մանք ասեն՝ թէ էր լոկ երևոյթ աղաւնոյ, այլք՝ թէ էր ճշմարիտ և գոյացեալ աղաւնի․ և զայս կարծիս նախնեաց յիշէ կիւրեղ երուսաղէ֊մի (կոչ․ ընծայ․ գլ․ ժն․ համար 8․) և ընդդէմ մեծն օգոստինոս, և ընդ նմա թովմաս ագուինացի (գ․ մասն․ խնդ․ լթ․ այր․ Է․ այլ և ՚ի մեկն․ յոհան․ գլ․ ա․ ընթերց․ ժդ․) իբրև առաւել համաձայն ընթ֊րերով․ թէպէտ և յառաջն զմիս կարծիսն եդեալ էր (՚ի ա․ գիրս վճռոց ժվ․ խնդ․ գ․ առ 3։) Սակայն այսու ոչ բնաւ համարեցան նո֊

քա, թէ հոգին սուրբ անձնաւորապար միաւորեցաւ 'ի բնութիւն աղաւնւոյ, և ոչ իսկ ասաց աղաւնոյն, թէ էառ զճշմարիտ աղաւնոյ բնութիւն. այլ ընդ հակառակն ասէ. «Երևեցաւ ոչ էառ զայն 'ի միութիւն անձին»: Եւ ոչ իսկ ճշմարիտ աղաւնի ասելն՝ հակառակ ինչ է աւետարանչաց. զի նոքա ասեն՝ թէ հոգին սուրբ իբրև աղաւնի երևեցաւ, և ոչ ասեն՝ թէ երևեալ աղաւնին էր իբրև աղաւնի: Որպէս յաւել՝ թէ 'ի նմանութիւն ամպոյ յայտնեցաւ 'ի Թաբոր, կամ նման հողմոյ էջ 'ի վերնատունն. ոչ իմանի՝ թէ ամպն և հողմն ոչ էին ճշմարիտ ամպ և հողմ: Եւ ոչ անհնար ինչ է՝ 'ի կեր առնուլ այս յայտնելիս ըղբուն զերական կենդանիս՝ 'ի նշանակ կամաց իւրոց, կամ յայլ պէտս. որպէս 'ի կերակրել զԵղիա՝ 'ի գործ արկ զագռաւս, որ յանապատս իսկ էր, և չէր հարկ ասել թէ երևեալ էր այն ագռաւս:

26 Ի [illegible]: Այսինքն աւետարանչաց, և այլոց առաքելոց, որք զաւանդեալսն 'ի քէն ընդ գրով արկին: Այս իմաստ է առնուլ հարկաւոր, քան թէ զմարգարէից իմանալ. զի նախ ասաց՝ աղաւաղ յորէնսն, չնչեալ 'ի մարգարէսն. ուստի միայն գնել զխօսելն յաւետարանսն, ըստ կարգի բացայայտութեան մերս հանդամանկի:

27 Օ[illegible]: Այսինքն այլայս, որպէս զցաւիթ, զմեծն կատանդիանոս, զմերս արդաս, և այլն: [illegible], զօրացոյց, յաղթող արար զթագաւորս: [illegible]. իշխանութեանց պարգևեաց, կամ հրամայեաց տալ ազատութիւս 'ի մարմնական և 'ի հոգեկան փորձութեաց: [illegible], ներգործեաց քաւութիւս մեղաց և պատուհասից. կամ, կարգեաց քաջալեր նզովս յեկեղեցի:

28 Ու [illegible]: Յերրորդութեան յորժամ մի անձն նախ թուի քան զմիւսն, ոչ եթէ այսու զնախաթութեանն համարիմք կատարելութեամբ մեծ, և զերկրորդն փոքր և նուաստ. այլ միայն զկարգ ածայինն յառաջադայութեցն ցուցանեմք: և [illegible] յասելն մի զերիս անձինսն, այսու ոչ զանձինսն չփոթեմք: և [illegible], և կամ յերիս զանազանելովն [illegible], որոշումն կամ ատրբութիւն զօլ կամաց նոցա, ընդ նմին և բնութեան: Այլ այնչափ անբաժան և հաւասար զաւանեմք զնոսա, մինչև [illegible], անպատիւ կամ անզօր լինէր, եթէ ոչ ունէր զխօր բանն անձնաւոր. որպէս ոչ ունելով զհոգին սուրբ, [illegible], անշունչ ամն և անկենդան լինէր:

29 Ի [illegible]: Նմանեալ հօր ող ծանուցելով զբանն, երևէր 'ի մանկանցաւ հօրէ ունմնէ ոչ զօրացէ ծնեալ. մի օրինակ. և [illegible] ունէր. այսինքն երևէր՝ թէ մանկանացու որդի է ունմն մնալոյ:

30 Աղաւնի [illegible]: Եթէ զհոգին սուրբ առանց բղխողին իմացուք, լինէր անսորդ ինչ հողմ ասասանեալ, զոր ոչ գիտես՝ ուստի գայ, կամ յո երթայ. և ոչ գայր 'ի թիւ անձնաւոր գոյացութեանց. որպէս և անմիայն խորհէլին ասել թէ ոգին ափոր իբրև զօդ թօյլ. և ոչ գայր ընդ կենդանիս (խմաստ. բ. 3:)

31 Յ[illegible]: Յանդգնի զրկել զհայր յիւրմէ բանէն. և [illegible]. (մի օրէն. [illegible]) [illegible], անարգանօքն՝ որով անբան ասնէ զհայր, կարծէ պատուել զմեծութիւն հօրն, և կամ նըւաստութիւն տայէ բղխողին, [illegible]. այսինքն ոչ բնութիւն ունելով զհոգին՝ այլ ստացական իբրև ստար էութիւն ինչ, զայնպիսին [illegible], պարսաւակաց, այսինքն բանիւք հաւատոյ հերքեմք և նզովեմք: Այս է բանն նիկիոյ ժողովոյն՝ եդեալ զկնի հանգանակին, [illegible], և այլն: Որպէս և յաջորդն. [illegible], է բանն մերոյ լուսաւորչին. իսկ մեք փառաւորեսցուք, և այլն: Առաւնոր զադարեցուցանէ սուրբ փոր-

գաղեաս զբան դաւանութեանն, ոչ խօսելով ինչ զորոց եկեղեցւոյ· զորմէ չէր յիշատակութի 'ի բուն նիկիական հանգանակին: տես վասն այսր 'ի բանն Հն· լու.ծ· 1:

32 Գործոց ծածկոց խորհրդոց: Զայսմանէ խոստովանութի զաղանի խորհրդոց ածութեանց, Ներգործողելոց, բացայայտելոց յայսմ Հաւատոյ դաւանութեան, քեզ ընծայեցի· որով զինեալ մտի 'ի հանդէպ ամենախօսութեան:

33 Փառաբանութեան անճառին: Այսինքն անճառ փառաբանութեք, կամ հրեշտակօք: Մինչ չէ առեղծեալ էիր զերկինս և զերկիր՝ հանդերձ հրեշտակօք և մարդկամբ, դու արդէն փառաւորեալ էիր 'ի Փառս Երրորդութեան. (3· օրին· Երրորդութեան.) 'ի քո անպարփական ընութեան· զի առեղծմամբ բանաւորացս ոչ յաւելաւ քեզ նոր կատարելութի, ուստի և ոչ նոր փառք ներքին· վասն որոյ խնով խոստովանողական դաւանութեամբս ոչ ինչ կարօտեալ մեծանաս 'ի քեզ, այլ զի հաճեցար յարգել զիս, ընդունելով զքեզ Բանին հաւատարմութեամբ, կցորդութեամբ բանիս հաւատոյ՝ որով առ քեզ գոչեցի:

34 Զօրհնեալն փառաւորի: Զհոգիս իմ, յորում 'ի մկրտութեան մատամբ քո շնորհացդ՝ և ոչ խնով աշխատութե գրեցեր զպատգամս օրինացդ, եդեր մեզք· և ես այժմ փրկագործութեան հրով մեքենաւ արտասուաց և ծնընդութեան զերկրորդ աւազանի ապաշխարութեան հաւաքելով, ջանամ կազմել: Թէպէտև, ասէ, հաւատոյ խոստովանութե դաւանեմ զքեզ տէր տէր· այլ զինչ օգուտ՝ յորժամ ոչ առնեմ միանգամայն զպատուէրս քո կենաց· այլ ես ինքնին 'ի ծննդենէ նուիրեալ քումդ օրինաց, ոչ իբր տախտակ քարեղէն անկենդան, այլ իբր ոսկեղէն և խօսուն գրելոյ շնորհօք հոգւոյդ· բայց գործովք եղծի, որոյ վասն արժանի եղէ խորտակելոյ· և մնայ ինձ բազում աշխատութեամբ նորոգել, և այլն:

35 Բազմօք գովութեամբ: Յառաջագոյն բազում օրհնական բանիւք պատուեցայ, որ ոչ էն գրեալ 'ի ձայնս դաւանութեանս: Յայսմանէ յայտնի է, թէ զայս դաւանութիւն յետոյ քան զայլ աղօթսն յօրինեալ է: Կամ, թերևս ակնարկէ յայլ աղօթս՝ զոր ձայնիւ առանց գրոյ մատուցեալ էր առ ած:

36 Պանից բաղարջոց: Բաղարջ կամ անխմոր պանից, այսինքն զնուակաց հացի (ազիմաց:) Բառն բաղարջ բազում անգամ իբրև ածական՝ նշանակէ անխմոր (որպէս Ելից· ժբ· 39: Իմ· 2: Դատաւոր· զ· 20:) և այլն: Խմորք այսր առնէ: Ի դաւանութեան բանիս ոչ յաճախեցի հայցուածս, բայց դու բարերար՝ ընկալ ընդ այսմ և զոր յառաջն պաղատանս յինէն արարեալս· և ցանկամ զի այս ամենայն խնդրուածք մատուցեալք առաջի քո 'ի մաքուր անձանց կամարարաց քոց՝ իբրև ըղբաղարջ պանս խազով զանգեալս ըստ օրինաց, այսինքն իբրև խոստովանութիւն անխառն 'ի խմորոյ հերձուածոց:

37 Ու հատուցանողաց ծառայ: Գթութե քո յաղթես ոչ միայն հասարակ մարդկան կամ առհասարակ ամենայն մարդոց, որք իբր ընութեակիցք՝ բնաւորապէս պարտին գթասէրք առ միմեանս լինել, և սակայն բազում անգամ ամբոխմամբ կրից և հակառակութե անգթանան առ իրեարս: Այլ և հրեշտակաց անմարմնոց, հրեշտակաց անախտ ընութեան՝ որով բարեսէրք են, գերազանցես գթութեամբ· իբր զի նոքա բազում անգամ անհամբեր լեալ չարութե մարդկան՝ պատուհասեին, թէ ոչ արգելուիր· որպէս ցուցաւ ('ի Բ· Թագ· իդ· 16: [illegible]): ոչ միայն հրեշտակաց գթութեն յաղթես, այլ առաւել քան զայս՝ նաև անախտութե սրբոցելոցն 'ի քեն, աբրահամու, դաւթի, եղիայի և այլոց, որք շնորհօք առաւել հաղորդեցան

գթութեան քո, քան թէ հրեշտակք իւրեանց բնութք, որոց և գործովք ներգործութեանն ուսոյց ած, թէ պարտ է արդարոյն լինել մարդասէր (իմաստ. ժբ. 19։)

38 Կամաց ողորմութեանց։ Հայր 'ի բանն (միքի. Է. 18.) « Զի կամեցող ողորմութեան է »․ կամ ըստ ոմանց, 'ի բանն. « Զողորմութիւն կամիմ, և ոչ զզոհ »․ դու միայն ես, ասէ, ունող կամաց ողորմութեան․ քանզի բնութեամբ յողորմելն ես յօժարել․ մինչ զի նաև 'ի պատուհասելդ՝ զողորմութիւն կամիս։ Զի և որք 'ի մարդկանէ առաքինութեամբն երևելիք եղեն, բնութք երկրաւոր գոլով երբեմն նուազեցան յողորմութէ․ իսկ դու ոչ [illegible], ոչ կարես խափանել բնութք բարիդ։ Տես և բան ՂԶ. ըծ. 14։

39 [illegible]։ Այնքան ծարաւիս խնամ փրկութե անհարուդ ած, մինչ զի զհրեշտակսն կարգելոց 'ի քոյդ օրհնաբանութիւն՝ ոչ միայն արգելուս 'ի պատուհասելոյ զմարդիկ զյանցաւորս․ այլ և իբրև միջնորդ զնոսա կացուցանելով առ փրկութի մարդկան, և քահանայս և քուրմս, սահմանեցեր աղօթել անլռելի առ գթութիւն քո աւելով, [illegible]․ որ է աղօթքն հրեշտակին (զաքար. Ա. 12։) Եւ զայս՝ [illegible]․ այսինքն միշտ 'ի նոյն պաշտօն խնդրուածոց պարապելով, իբր քահանայս միջնորդութեան՝ և ոչ առժամանակեայս որպէս զմարդիկ։ Զայնպիսի պաղատանս ասաց նոցա 'ի [illegible]․ այսինքն մաղթել 'ի մեր գիտութ որ կենդանականքս եմք և մարմնաւորք․ զերկնային կարգելով միջնորդս երկրաւորացս, ուր օրինակաւ երկրաւորն երուսաղէմի հայցեն այց առնել երկնաւորն երուսաղէմի, լցուցանելով զանկղ անկելոց հրեշտակաց փրկութեամբ մարդկան։ Փոխանակ [illegible]․ 3 օրին․ եղանի զնեն՝ [illegible] կամ [illegible]։ և փոխանակ [illegible], 4 օրին․ զնեն [illegible]․ այսինքն հրեշտակաց երուսաղէմի։

40 [illegible]։ Թանձրացար 'ի մարմնի անոսր բնութիւնդ։

41 [illegible]։ Կատարեցեր զբաղձանս հրեշտակաց (զոր վերագոյն յիշեաց։) Եւ նոցա աղաչանօքն [illegible]։ 2 օրին․ [illegible], եղիցիս ինձ եղեր բարի բարեխօս՝ մարդանալովդ, և այլն։

42 [illegible]։ Մինչ կատարեցեր 'ի վերայ մեղուցելոյս, կամ առ մեղուցեալս՝ զբարի պարգևս կամ զյաջողումն կենդանարար կամաց քոց։ Զկատարած աղօթիցս յայն կնքէ, թէ զաղաչանս հրեշտակացն միջնորդաց ընկալար, կատարեցեր առ մեզ․ բայց այնպիսի օրինակաւ՝ զի դու ինքն եղեր թշուառացելոյս ինձ արդարև բարեխօս և միջնորդ, [illegible], այն աղաչանք զոր 'ի զուարթունն ասացեցեր, կէն իբր 'ի քո բերանոյդ․ դու եղեր աղաչաւոր և կատարիչ, և 'ի կատարել զայն՝ ոչ այլ ինչ ասնես, բայց ընդ․ 'ի գլուխ տանել զբարեխնամ կամս քո։

# ԲԱՆ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն տէրս մաղթանաց բանի·*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ, տէր զօրութեանց, մեծութիւն ահեղ, [1] անպարագիր տէրութիւն, կամք ամենընդարձակ, առատութիւն անպակաս, ո՛վ որ զօրեցեր տօնել հանգիստ [2] պարերգութեանց ՚ի միոյ կաթուածոյ ցօղոյ քաղցր բարութեան, որ ցանկ գեղեղիս պատրաստել պատճառս հնարից խնամ փրկութեան։ Եւ զոր մեծն է գրեցից պատմել յապաւնիս. քանզի [3] ոչ անուանեցար հրեշտակաւք, և որ զպետութիւնս նոցունց հաստատեցեր, այլ և զերկինս զամբարօք նոյին զմտաւանց քոց գործ, ոչ գրեցեր երբէք սիրել զնոսա. այլ առեր ՚ի պատիւ մեծաց գովեստից առաջին զաւեալ զմարդասիրութիւնն։ Աստ որոյ կրկին մեծացուցեր քեզ անուն անճառ ՚ի խորհուրդս սոսկալիս. [4] զերկնայինս լուսակերպեցն կոչեցեր զնոսին սպասաւորս և զգլխաւորս յատուկ մատակարարութեանց. իսկ զաստրնային ծնունդս մահկանացուաց տիրական և ա՟ծական պաշտելի անուամբդ պերճացուցեր։ Ընցեալ վերստին ըստ սահման կշռութեան չափոյ, լայնեցեր քեզ կտակս գրոց ձեռից անբաւից զանապակ ծորմանն ծայրագունին վերնում բարութենն։ Եւս և ՚ի մարդանալդ քո [5] միդ յէութենէն, ամենից վասն ինքեանց և կեսոց վասն այլոց զեղեր առատութեամբ զտուրս կենաց, արուեստս բազմօրինակս, սքանչելիս ա՟ծագործս, նշանս ճշմարտատեսիլս։ Որպէս զի թէ անզգամալուծին պակասեալն ՚ի հաւատոյն՝ [6] հոգաբարձողն առաջարկութեամբ զցոյցս յուսոյն՝ զթացեալ ողորմեցար, և ո՛րչափ զօրեցեր առաւել բան քո ամենակար առ ախտալից մարմնոյս մաքրութիւն աղաղակողիս հառաչմամբ. քանզի արդարև մեծ են չափք հրաշից, [7] քան զանմաքրեալս հողի սուրբ հաստել, զլուացեալս պատկեր անտխրելի աղտոյ ներ-

գործել. Նա զի և երկրորդս առաւելութեամբ յաւազանին շնորհ յաճախեալ՝ զփառս հայրենի բարձրացուցանէ։

Բ. Դու ես տէր որ սրբես զմեզ, որպէս ընտրեցելոյն քո [8]Նախատպաւորեցեր Սողոմոնի. դու ես, որ 'ի մեղս և յանօրէնութիւնս վերակացու եղեր տոհմին Յակոբայ, մինչ յեգիպտացւոցն երկրի [9]ընդ խաւարին հեթանոսաց ընտանենային։ Դու ես, որ օրէնսդէտ առնես զմեղաւորսն 'ի Ճանապարհի, ըստ բանի երգողին Դաւթայ. դու ես որ [10]փոխատրես զքարեղէն սրտից կարծրութիւն 'ի լոյծ կակղութեան մարմնոյ գթութեան բանի ընդունելութեան։ Դու ես, որ բաւես ընձեռել սիրտ այլ, և Ճանապարհ մի՝ երկնչել 'ի քէն զբովանդակ կենացն սահման. դու ես, որ տաս զերկիւղ քո 'ի միտս խստութեան առ քեզ ուշ ունել հաւատովք, ըստ մարգարէիցն ձայնի։

Գ. Օրհնեալ քո շրթանցդ [11]զաշխարհաստեղծ բերանոյդ զաստուածեղէն անձրևացդ զկեցուցանողդ կաթուած մատն լսելեացս դրանց բացարան, որով զօձին խորամանկութիւն բանսարկուին թիւնից բարձցես և բժշկեսցես։ [12]Մենակալդ ձեռօք զխօսնականացս շարժողական գործի ըմբռնեալ՝ ազդեա զօրութիւն ձայնի, որ տաս բնաւից ընտրութիւն բանի. զի դատախարակեալ զպատշաճականն մի յանդգնաբար խօսելով իբր զնախնին կրեայց 'ի յուսոյդ, և անբանութեան մատնեցայց վանեալ յորսողէն։ Լուսաւորեա վերստին զխաւարեցեալ հոգւոյս աչս կենդանաբաշխ աջոյդ կարկառմամբ, զի մի համարձակութեամբն շիջեալ լապտեր շնչմամբ վիշապին՝ 'ի ներքոյ գրուանին ստորածածկեցայց։ Բարձ զանօրէնութիւնս իմ, տէր, և ընկեա 'ի խորս ծովու. [13] որ է փոքր առակ մեծութեան քումդ անբաւութեան, ըստ մարգարէին, զիմս ընկղմել չարութիւն։ Կանգնեա կործանեալս անձին [14]նշան վստահութեան. զի մի յուսահատութեանն կոթող կառուցեալ զծածկեցելոյն բաղբեսցէ։ Բայց, հզօր և գթած, [15]զբժշկարանիդ կենաց վարդապետարան, զի զառ 'ի ներքոյսն մշակութէ կորուսին սերմանց՝ մանկաղու կամացդ հաւպ առ արմատ խուզեալ հնձեսցես։ Դնէմ եղեալ հեռանել առ քեզ բոլորեցդ ամ՝ պետրոսեան օրինակութեամբն, 'ի

կենցաղիս ծովու մեղանացս ալեաց ընկլուզայ. [16] մատո
ժամանեա զաջդ կեցուցիչ յօգնականութիւն ինձ սա-
տանեցելոյս։ Ընդ քանանուհւոյն ձայնի 'ի խորոց սրտիս
պաղատիմ, սովեցելոյս [17] ապաշխարանաւորս կաղկանձո-
ղական ամենաթշուառ վտանգաւորիս, այլուստ կե-
րակրոյ փշրանաց հացի 'ի բազմաշեղջ քո սեղանոյ մաս-
նաւորեցես։ Լեր փրկութիւն [18] նիւթոյ խորանիս որ-
դւոյս դառնութեան, որ եկիր խնդրել և կեցուցանել
զիս զկորուսեալս։ Զի քո է մեծութիւն, յաղթու-
թիւն, և զօրութիւն, և դու ես քաւութիւն և բժշկու-
թիւն, նորոգութիւն և երանութիւն, և քեզ վայել է
փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն։

---

1 [illegible]։ Աներկրոյ սեռոզութի կամ ձմանա-չումն. կամ, աներկրայելի սեռութիւն, ինքնակալութի։ [illegible] ([illegible]) կամք ընդարձակեալ յամենայն բարիս, առ ամենեսին և յամենայն ժամանակի, ասելով և [illegible] անպակասելի. ոչ միայն կամիս և կարես զամենայն բարիս, այլ և արդեամբք առատապայցուցանես առանց նուազելոյ։

2 [illegible]։ այլ օրին. [illegible]։ Ո՛վ կարապետ յայտնի զօրութեամբ հաշտեալ 'ի [illegible], զփոքրիկ մասն ինչ 'ի միոյ կաթուածոյ բարութեան քո, որ միշտ պարապեալ պատրաստել հնարս փրկութեան իմոյ։

3 Ու [illegible]։ Թէպէտ և զհրեշտակս սիրէ ած, որպէս և զերկինս [illegible], տանեղջ, և զամենայն արարածս ըստ իւրաքանչիւր արժանութե, սակայն ոչ տայ 'ի գիրս յայտնապէս սիրել զնոսա, կամ 'ի սիրելոյն զնոսա ոչ տաւ այ անուն մարդասիրական. այլ վասն մարդոյ բազում անգամ տայ սիրել ած, և 'ի սիրոյ անտի անուանեցաւ. ուստի մեծ փառս համարի իւր [illegible]։ Որով և կրկին մեծացոյց իւր [illegible]. զի 'ի վերայ ած անուանն' որ արարչութեն է, ընկալաւ և [illegible], որ անձառելի անուն է, նշանակիչ սակաւի խորհրդոյ սիրոյ նորա. զի ած անուանին սեռ ձմանաչի. իսկ մարդասէր կոչմամբն' իբր հաւատարիմ և բարեկամ մարդկան։ Եւ ահա զայս որ մեծն է' [illegible], սա, ոչ եթէ զնոր ինչ և զանծանօթ յայտնելով, այլ [illegible] [illegible]. որպէս զի միշտ յիշատակեսցի յամենեցունց այսպիսի անհամեմատ գթութիւն։

4 [illegible]։ Փոխանակ ասելոյ' զերկնային լուսակերպս, զհրեշտակս' որք լուսակերպ և հրանիւթ ասին վասն անմարմնութեն և մաքրութեն, և վասն զմեզ լուսաւորելոյն, կոչեցեր պաշտօնեայս և [illegible]. իշխանս, վերակացուս [illegible] [illegible], մատուցող գործոց նախախնամութեն և փրկագործութեն։ Իսկ զմահկանացս մարդիկ' մեծացուցեր [illegible] և [illegible] [illegible]. առնելով նոցա, տիրել ամենայն երկրի. և զմեզ կոչելով ած փառաւորի, և զայլ' թէ ածք իցէք։ Այս գթութիւն քո անցեալ քան զամենայն հաւասարութեան մասց, [illegible] ընդարձակեցեր մարդկան' արժա-

Նայուցանել անթիւ Ճառս զանխառն և զծայրագոյն հեղմանէ ածային բարութեանդ :

5 [illegible]. այսինքն միշ յածութենէ. այնպէս խմա և 'ի բանն ԽԴ. 2 : Ի մարգմանաց քո ով բանդ ած՝ մի յածութենէն, առատութբ հեղեր, պարգևեցեր, [illegible], ժողովրդեան և իւրաքանչիւր կարօտելոց՝ յօգուտ նոցա. [illegible], տարելոց և այլոց պաշտօնէից՝ յօգուտ այլոց. շնորհեցեր առեմ տուրս կենաց, արուեստս, գանձելիս, և այլն :

6 [illegible]: Եթէ անդամալուծին՝ որ ոչ ինքեամբ պաղատեցաւ, կամ ոչ ինքնին եցոյց զհաւատս, այլ միայն հոգաբարձուք նորա առաջի արկին զցոյց կամ զնշանակս յուսոյ նորա, ողորմեցար, որչափ առաւել զօրեսցէ բան քո 'ի մարդկութիւն ախտալից մեղօք աղտեղեալ մարմնոյս, [illegible], այսինքն մարմնոյս կամ անձինս՝ որ ինձէն աղաղակեմ հառաչմամբ, կամ գոչեմ ըղբանս հեծութեան :

7 [illegible]: Քան զանմարմնոց հոգիս արբելն՝ առաւել մեծ զարմանալիք են զարդեն մարդկային անապակ պահել. վասն զի նախկինն է գործ առաջին շնորհաց. իսկ երկրորդս ենթադրելով զառաջին շնորհսն՝ պահանջէ և զհանդերձ նորաստ զօրութ ընդդէմ պատերազմաց մարմնոյ և գիւին : [illegible], անապատութին շնորհաց՝ առաւելապէս [illegible], 'ի վերայ շնորհաց մկրտութե յաւելեալ, կամ զերազանցեալ քան զաւազանին շնորհ. բստ որում զի այն 'ի մանկութե առանց մեր կամաց և գործակցութեան ընկալեալ, իսկ անապակ մնալն 'ի շնորհս՝ մերով կամօք և գործակցութբ. որով [illegible] առաւել բարձրացուցանէ, այսինքն թէ զայն փառսն՝ որով ինքն ած փառաւորի, և թէ զայն՝ որով մեք փառաւորիմք յած երանութեանն : Արդ յաւելուածով բանիս զայն ցուցանել կամի, թէ զմեծն հրաշից՝ այսինքն զանապակ մնալն 'ի շնորհս պարգևեցեր բազմաց, ապա տուր և զփոքրն՝ զդիւրինն, զսրբելն յաղտոյ մեղաց :

8 [illegible]: Այսու կամ զայն խնամոց, որ ասացաւ (Ելից լԴ. 7.) « Բառնայ զանօրէնութիւնս և զանիրաւութիւնս ». և կամ խնամոց զսրբել ձեռաց մովսէսի 'ի բորոտութե, յօրինակ մաքրութե 'ի մեղաց (Ելից Դ. 7 :)

9 [illegible]: Երկրպագեցիք յեզերաց կողմ, ոչ միայն զհեթանոսական պաշտամանս ասան, այլ և բազումք հաղորդեցան 'ի նոյն պաշտամանս, որպէս յեսու յանդիմանէ զնոսա (իդ. 14.) « Ի բաց արարէք զածս օտարոտիս, զորս պաշտեցին հարք ձեր յայնկոյս գետոյն և յեգիպտոս » : Արդ աստ, ընդ խառնակ կամակորութեան հեթանոսաց ընտանենոյին երկրպագեցիք, որ բնաւ օտար էր յաբրահամեան տոհմէ. քանզի որպէս բնակութբ եղին զատ 'ի հայրենեացն, նոյնպէս 'ի կամակորութենէ նոցա :

10 [illegible] . . . 'ի [illegible]: Փոխեա 'ի լուծութե կակղութեան, կամ 'ի լոյծ կակղութե : Զխստացեալ սիրտս փոխեա 'ի կակղութիւն մարմնեղէն՝ առ 'ի ընդունել զսերմն ածային բանին : [illegible], կարող ես առնել զսիրտ նոր, և զճանապարհ բարի՝ առ 'ի երկրպել 'ի քեն զամենայն ժամանակս կենաց :

11 [illegible]: Բերանոյ՝ որ աշխարհատարածիգ է. այսինքն քոյ ածոյ. զի որպէս մարմինն՝ ած ասի վասն միաւորութեանն յանձն բանին ած, նոյնպէս մասունք մարմնոյն՝ և անդամոյն մարմնոյքն ած ասին : Նոյնպէս [illegible] ասի թուքն, այսինքն ած, կամ առ ած բանն վերաբերեալ : Բստ այսմ և զինի ասի՝ [illegible]. և այ_

լուր, [illegible] , [illegible]. և այլն. այսինքն անմշակելին ձեռն, արարչագործին բազուկ: Արդ զնծային զԹուքդ կոխեցուցեալ, ասէ, ածցես այնու զականջս հոգւոյս. որպէս զի բացցին 'ի լսել զկենդանաբար բանս քո, և այնու բարձցես, բժշկեսցես զխորամանկութիւն օձին, որ են Թիւնք բանսարկուին սատանայի: Թերևս 'ի նմանութիւն սանտու զզօրութիւն մարդկային Թքոյ, որ արկեալ սանն 'ի բերան օձի՝ սպանանէ զնա:

12 [illegible] [illegible]: Աստուածային ձեռքդ կոչեալ զկալու իմ [illegible] [illegible]. (4 օրին. [illegible] կամ [illegible].) որ է գործի բանաւորաց կամ խօսելոյ, տուր Նմա զօրութիւն ձայնի. որպէս զի [illegible] [illegible]. ուսեալ զպատշաճ խօսս, և մի յանզգուշութեամբ խօսելով երբ [illegible] ազամ, անկայց 'ի յանցանս. և [illegible] մատնեցայց, անպատասխանի եղէց. 2 օրին. [illegible], և մարթ է իմանալ, անբան փյատց և սանձմանց:

13 [illegible] [illegible] [illegible]: Ծանր է փոքր օրինակ քո անբաւ մեծութեանդ:

14 [illegible] [illegible]: Արձան, կամ անբուԹի յուսոյ. զի մի յուսահատութեանն [illegible]. քար կանգնեալ (տեղւոյն Թուղ.) այսինքն՝ զի մի յուսահատութիւնն իբրև կոԹող կանգնեալ 'ի սրտի իմում, զծածուկ մեղս իմ հրապարակեսցէ:

15 [illegible] [illegible]: Բաց զմասնեան ուսմանց, կամ զխորդապետութեան հոգևոր բժշկութեանդ. որով [illegible] 'ի [illegible], զհեղլին բազբաջս ներմանց սատանայի՝ մանդապաւ. քո հրամանիդ յարմարաց անտի խուզեալ կորուսցես. վասն զի ներմանք ածայլն բանիցն զաւարԹութեամբ ընկալեալք՝ 'ի բաց հանեն զբոյս սատանայական ներմանց:

16 [illegible] [illegible] [illegible]: Կամեցայ առ քեզ գալ բառ օրինակին պետրոսի 'ի ծովս ալեկոծիս, եղէ 'ի վտանգ ընկղմելոյ. այլ ժամանեա հաս, մատո մերձեցա զուխդ աջաւուդ, զոր օրինակ պետրոսի արարեր:

17 [illegible]: Հին լծ. ասէ՝ լափին է, զոր սան չանն. և բառ այսմ ամանք իմանան՝ չան կերակրոյ սպասուղ: Այլ է գրեան [illegible] իմացուաք չւան սրտակին, բառ այսմ [illegible] նշանակէ իբրև զչւան սպասող կերակրոյ կամ փշրանաց: Ասկայն Չչգեն քննեալ, [illegible] 'ի պարսիկ բառէն [illegible] կամ [illegible], այսինքն ձի, նշանակէ ձիաւոր սրտարդ. վասն զի 'ի գիրս փիլոնի (ծննդ. բան դ. համար ՃԿԷ.) եռու կոչի [illegible], փոխանակ ասելոյ՝ հմուտ սրտոյ. և սոյա մեկնեալ եա ասէ. « Աստուածայնին ընդ շաւնս և ընդ զաղանս անէ զեւր զչեզերունն վարուց ». այսինքն սրտարդն շաւնս ընդ իւր շրջեցուցանելով, յանչէն և 'ի զազանորինակ անտառս զեզերել: Յայս միտս հայի և 'ի գիրս պետ. Թ. Ե. ասելն յաղագս որսորդութեն, « Հետամտարեալ զաստուածայնեայն հոգւս ». այսինքն զրադմուԹի սրտարդաւյն: Արդ բառ այսմ [illegible] նշանակէ սպասաւոր կամ ծառայող սրտարդի. որպէս է չաւնն սրտակին: Իսկ [illegible]՝ նշանակէ (փշնկփշնկացող:) Զանձն անուամ և եա, ասէ, ընդ քանանացի կնոջն զանարգ կոչումն չան. միայն զի և ինձ մանանաբերեսցես 'ի փշրանաց կենարար հացիդ:

18 [illegible] [illegible]. այսինքն, որպէս 'ի ձեռաց բարեկամաց, և առմնկարայեցուցելն 'ի ձեռաց հեԹանոսաց փրկեցեր զպասա խորանին և տաճարին, նոյնպէս փրկեա 'ի ձեռաց գիւաց զանձն իմ, որ նշուԹ եմ խորանի քո եկեղեցւոյ՝ հաւատովքս, այլ և կրօնաւորութեամբ և քահանայութեամբ:

# ԲԱՆ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ քանզի անթիւ են յաճախեցեալ և գերազանցութեամբ միշտ առաւելեալ փրկանաւորդ արգասիք շնորհաց [1] առ պարտուցս խնոց առաւելութի, չարչարանացդ հանդէս և յանձնառութիւն։ [2] Օ՜ ափդ ամփոփիչ ամենից հոգւոց գոյից արարիչ 'ի գործարանի մահուն նշանի խաչին հեղուեր, զի զձեռնարկութիւն իմ ընդդիմութեան կամաց քոց լքցես։ [3] Օ՜ ընթացողական ծակցութիւն երկոցունց ոտիցդ կեցուցանողաց՝ յանարգելութեանս պատճառ՝ 'ի պատժարանի փայտին մածուցեր, զի զփախուցեալս վայրագութի թշուառացելոյս գրաւականեսցես զթածարար։

Բ. Որ զօսանալ [4] ձեռաց կափողայն հրամայեցեր օրհնեալ զագաթանդ, որ զԹզենեայն տունկ առժամայն չորացուցեր, զի և զառ խոնարհելոյդ օրինակ կանխաւ աւետարանեսցես։ Որ զանողայն ապիրատութեան [5] ըղխոստովանեալդ ա՟ծ սպառնացար, որ զարուեստն մթացուցեր, զի մահացելոյս անձին բարութիւն հանգըստեամբ հանդերձ գործեսցես։ Որ զհայհոյչայն [6] հնարաւոր չարաքանութիւն կապտեցեր, որ զլուսնին պատկեր երանգաւ արեան գունեցեր, զի զանհամարձակ լեզուս 'ի գովեստ քեզ զօրացուսցես։ [7] Որ նախատողայն մեղեգնութեան սաստեցեր, որ զսարերս սասանեցեր, զի զթշուառացեալս զլուխ զթուլթեդ օծմամբ իւղեսցես։ Որ 'ի մոլորեցուցիչն կարդալ զքեզ ա՟ծասպանիցն՝ զօդուած ծնօտիցն բաժանեցեր քակտեալ 'ի միմեանց, որ զկարծրութիւն վիմացն հերձեր, զի զանուղղակս բարեաց հոգիս՝ 'ի բերմանէ ընդունայնութեան ողորմութեամբ հանդարտեցուսցես։ Որ զպահապանացն սուրս [8]
ընդերաց իւրեանց մատուցեր, որ զորալայն օձին սահեցման հողոյ մատնեցեր, զի զտառապեալս մարմնոյ ու-

կերս իբր 'ի գանձարանի պահեալ, կենաց յարութեան արժանացուցես ։ Եւ 'ի կնքելն զշիրմին փականս [9] կենդանակիր քո գերեզմանին՝ անզգեն յորդորեալս զնոսին յանդունդս երկրի սուզեցեր, զի 'ի տապանակի անձինս զնշխար լուսոյ հանգուցես ։ Եւ 'ի համբառնալն զքեզ կառուսեալ, և [10] իբր զերկրաւոր մարմին զգոցեալ, համայնաքինջ և ամենասուրբ զսերովբէ ծննդոյն կրձատեցեր, զի զիս զանարժանս յիշատակի ընտրութե բարեաց՝ անկորուստ և անմնջատելի ընդ փրկեցելոցն հաղորդեսցես ։ Եւ յարծաթոյն [11] կրկնակայէն կաշառաձգութիւն, որ 'ի գանձարանէ հօր քում նուիրաց քեզ զրաւ մատնութեան և անարգութեան մատնաւորեցին՝ զաւրացողացն մոլեգնելոց, ըստ հին հարուածոց հանոյն Սողոմոն՝ 'ի յարձան քարի յեղանակեցեր, զի զիս զրկեալս 'ի հաստատութեանց և ընդ իշխանութեամբ մահու վաճառեալս՝ արեամբ քո փրկեալ, 'ի հաստատութիւն վիճակ կառուսցես ։ Օրհնեալ կրկին, օրհնեալ վերստին, յամենայնի միշտ օրհնաբանեալ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

1 Ա— [illegible] ։ Փրկաւէտ գործք շնորհաց քոց միշտ գերազանցութիւն առաւելան առ իս, որով և իմ պարտիքս առաւելուն առ քեզ. և 'ի մէջ այնոցիկ կարի հրաշալիք եղեն հանդէպք չարչարանացն՝ զոր կամաւ յանձն առեր ։ Ի կարգ արկանէ ապա զմասունս ինչ անբունակամ չարչարանացն, յարելով զայս աղօթս առ անցեալն՝ վասն աւետարանին որով ասաց, եկի խնդրել և կեցուցանել զկորուսեալս. զի ցուցանիցէ զխորդ և իւ կեցոյց զս ։

2 [illegible] այսինքն զամփոփողդ կամ ժողովողդ ամենայն հոգւոց, և արարողդ ամենայն գոյացելոց ։ Հայր 'ի բանն յոբայ (Ժ. 8.) «Ձեռք քո արարին զիս». և (ԺԲ. 10.) «Ո՞չ 'ի ձեռին նորա իցէ շունչ ամենայն կենդանեաց և ոգի ամենայն մարդոյ» ։ Զայգպիսի առ, առէ, 'ի խաչին [illegible], ընծայեցեր, յանձն առեր զի ընծայեսցեն. որպէս զի [illegible] (3 որին. [illegible]) այսինքն զյանգդնութի իմ ընդդիմանալոյ կամաց քոց [illegible], Թուլացուցես, խափանեսցես, բառնայցես ։

3 [illegible] ։ Զերկոցունց առից կեցուցիչդ զհամբնթաց զօրութիւն, [illegible], վասն իմոյ անարգելութեանն և անզգուշութեան յընթացս պատուիրանաց քոց, 'ի պատմարանի խաչին [illegible], յանձն առեր սխտաալն արգելուլ. որպէս զի [illegible], զխափանող անհրահանգութիւնս, զատոչակութիւնս իմ [illegible] (մի որին. [illegible]) [illegible], զատեսցես, ընդանեսցես, 'ի կապ արկանիցես ։ Բայց լաւ օրինակն այլայց ընթեանու [illegible]

ղոց՝ յանուրջնելոյն պատճառի պատճառելոյն ... · և խմանի ,
զկեցուցանող սոս քո սնգեցեր 'ի պատմական փոյթին՝ որ պատճառ
կամ զործի եղև խեղ անարգել անհնարինութեան 'ի նախատեսութեան ,
յորժամ հաւաք մերձեցան 'ի ծառն արգելեալ ։ Խմաստքն ամբողջ են ·
եւ ինքնին և կամ 'ի նախատեսութեան անարգել զհայր առիւք մարմնոյ ,
և կամ բաղձանք զգայականք , խոյս տալով 'ի ճանապարհաց քոց ,
և յառաջ շարժիւս ընթանալով · վասն այն զկենդանաբար զքո զստոյդ 'ի
պատճառական խօսքն սնգել յանձն առեր , որով զօրէնքն և սպին ա-
նիգնս զանարգել ընթացս իմ ։

4 Ձեռաց Լուծողաց ։ Ոչ հրամայեցեր զոսանալ , չորանալ ձեռաց
հարկանողացն օրհնեալ Գոգաբանդ , այսինքն հարկանողաց զօրհնեալ
զաղանթող · որ բանիւ ենթ չորացուցեր զամբողջ տունս թզենւոյն՝ ըղ-
թանձրին և զկոչս · զինչ զմտաւորին էր քեզ նոյնպէս զմնացեն ձեռան
չորացուցանել փաղփաղունս , այլ զի ծանուցանիցես զաս իմ ներելոյդ
օրինակն ։

5 Զխօսովանելոյ Ձե ։ Ոչ սպառնացար , ոչ սաստեցեր չարութեան
զանողացն զխոստովանեալց ած , այնոցիկ որք կամ ճանաչէին զքեզ
ած , և կամ յայլոց լուեալ էին , և սակայն տակաւին զ յետին չարու-
թիւնն կատարէին զանհաւատութեամբ · իսկ զու տէր՝ որ Ողորմածի ,
զարեգակն մթացուցեր , խաւարեցուցեր , լսեցեր առ զանիչան՝ սակս
խեղ հանդատեան ։ Լաւ օրին · ամբարտաւ զքեզ Արարիչ · և զայս բառ
փոխանակ արեգական առնու սուրբ վարդապետս նաև 'ի յիշատակա-
րանին , այլ և 'ի զովեստ աստղերաց , և մեծրանոյ և 'ի պատմ · աստուա-
ծեց խօսքին ։

6 Հնարաւոր Ըմբռնողութեան ։ Զնենգաւոր չարախօսութե հայհոյչացն
ոչ Խրատեցեր , ոչ պատասխանեցուցեր · ոչ լսեցուցեր , ոչ կարծեցեր 'ի
բերանոյ նոցա իրաւացի բանիւք , ոչ 'ի բաց առեր զպատերազմ սառ-
թեան նոցա ։ Բայց թուի թէ մարթ է սատանոր Չարգետէս առնուլ 'ի
Խրտուստ բառէն , այսինքն կապուտակել , իբրև թէ զնենգաւոր լեզուս
կամ զչըթունս հայհոյչացն ոչ կապուտակեցեր , առ 'ի պատիժ սառե-
ցուցանելով զարիւնն (որպէս և ասեն · առի՝ մեմեռ ընել ։) Զայն մեա
ակնարկէ առելն զկնի , զու՝ որ զերեսս լուանին Գոճէնչէր , ներկեցեր 'ի
գոյն արեան մթացին , եւ տաւել կարող էիր զխտղրեկ անզամ լե-
զուի ներկել 'ի կապոյտ՝ սառուցմամբ և այտուցմամբ ։ Սակայն ոչ ա-
րարեր զայդ առ նոսա , այլ զու ինքն լռեցեր՝ առել խմուլ լեզուի հա-
մարձակութիւն լռութեամբ հնչել զօրհնութիւնս քո փոխանակ հայ-
հոյանաց նոցա ։

7 Ոչ Նախատողացն ։ Ոչ սաստեցեր կատարել յանդգնութե այնոցիկ՝
որք փչելոյ պասկանն նախատեցին զքեզ իբրև սուտ թագաւոր , կա-
րող զոլով զցլուխս նոցա խլել 'ի անդունդն՝ զու որ զերկին և զերկիր
ստանձեցուցեր · այլ տարար համբերութե այնոցիկ նախատանաց · որ-
պէս զի ծնմամբ չորրհաց քոյ զցլուխ եկեղեցւոյ զարզարեսցես ։

8 Ընդհէրաց Խուբէնոց ։ Զսուրս զինուորացն պահապանաց ոչ յազխս
նոցա մխեցեր , ոչ ընդ սասեր խուրևանց հաներ զնոսա , զոր օրինակ զո-
րովայն ածից ընդ հող տապալեցեր · որպէս զի քոյով յանձնառութե
ինքնին պահապան լինիցիս տապալեալ մարմնոյս ակերաց առ ան-
մահն կենդանութիւն ։

9 Կենդանութիւ [illegible] ։ Ի կնքել հրէից զգուռն գերեզմանին՝
որ կրէր կամ ունէր յինքեան զմարմին կենդանարար , կամ որ կեն-
դանի էր ածութեամբն միաւորելով , ոչ ... , յերկիր կործա-
նեալս զնոսա յանդունդս ընկղմեցեր · որպէս զի ' ... , 'ի զե-

բեղմանի մարմնոյս հանգուցես, պահեսցես ՃՆՆԻԱՐ ԼԱՍԱՅՏ, զմտա-
ցուածս օծման քահանայութե, կամ զնշխար սուրբ մարմնոյ քո, իբ-
րև ճրագ կամ կանթեղ՝ նշանակ յարութեան. որպէս և սովորութիւն
էր առաջնոցն՝ դնել կանթեղ 'ի գերեզմանի ննջեցելոյ, և սմանց նաև
զմասն 'ի սուրբ խորհրդոյն։

10 ԻԷՐ ԷՏՐՆՐԱԱՈՐ ՃԱՐՏՆ։ Յորժամ աստուծ̄ համբուրեցին հրեայք
վասն քո՝ գողացեալ յաշակերտացն իբրև զհասարակ մարմին այլ մարդ-
կան, որ անխնամ և անպահապան թողեալ, զիւրին է առ 'ի գողա-
նալ, դու ոչ յանդիմանեցեր զստութի նոցա խաբա ջնջելով զծնունդս
նոցա իբրև չեղեալս կամ կորուսեալս. զի խնայելովդ առ նոսա յայս
անձինս՝ թէ տասել ես զխս՝ թէ և անարժան յիշատակի՝ անկորուստ
պահես, և այլն։

11 ԿՐԾԱԿԱԼՆ։ Կապէնք ասին վարձք ընծայելոց կամ պատնկաց, և
նմանութեամբ՝ որ և իցէ վարձ անարժան։ Կրկին անգամ, ասէ, որ-
ծաթ վարձս անխրաւութե իբրև կաշառ, 'ի գանձարանէ հօր քո ՆՈԱԷ-
ՐԻՐ, 'ի լաւ օրին. ՆՈԱԷՐԱՆԻՐ, այսինքն 'ի գանձարանէ տաճարին առեալ
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻՆ, բաշխեցին, ՓԵՂ վասն քո, ԳՐԱՎ ՃԱՇՆԱԲԵՐԱՆ, իբրև հա-
տուցումն մատնութե յուդայի, և ԾՆԱՐԳԱՐԲԵՐԱՆ, վասն անուան կամ
սուտ վկայութե զինուորացն։ Արդ այսպէս յանխրաւել նոցա կրկին
անգամ 'ի գանձարան տաճարին, ոչ յարձան քարի ՅԷՂԱՆԱԿԷՏԷՐ, փո-
խարկեցեր ԳՈՐԾԱԳՈՐԾԱՅՆ ՃԷՆԱՓԱՆԵԼՈՅ, ըստ լսելեայն խմանի հայցական ա-
նուան իմչ, այսինքն, զցտս կամ զժողով մաչեգնեալ հրեիցն՝ քահանայ-
ից. ըստ հին պատուհասի ՀԱՆՈՅՆ ՃԱՉԱՔԱՐ, կնոջն ղովտայ, որ եղև հան,
այսինքն մեծ մայր, մամ մովաբացւոց (Ծննդ. ԺԹ. 37։) Զոր օրինակ
երբեմն 'ի կամել հեղիոդորայ իշխանին ձեռն արկանել յաւանդս տա-
ճարին, պատուհասեցաւ անդէն՝ անդցայ, թմբրեալ և անբարբառ (Բ.
մակաբ. Գ. 27. 28.) Նոյնպէս կարող էիր, ասէ, զժողով կաշառա-
կերծ քահանայիցն 'ի քար անդցայ փոխել նման կնոջն ղովտայ՝ իբրև
անխրաւեալս 'ի քարինս տաճարին։ Բայց անմեւ արարեր, կամելով
զիս զանհաստատս փրկել արեամբ քո յիշխանութե մահու, և յան-
սասանելի վէմդ հաստատել։ Բառն ՀԱՆՈՅՆ՝ այսպէս գրի 'ի լաւ օրինակս
եթէ նարեկին, և եթէ Բ. սխմաթ. Թ. Ե. իսկ ՀԱՆԱՅՆ գրել՝ սովորու-
թիւն է գրչաց սմանց, որք իմնիւ գրեն զայսպիսի անուանս, որպէս
մարգւոյն, արծաթւոյն, գիշերւոյն, և այլն. տես և Խդ. ԼԾ. 8։ Նաև
կարծեմ եղեն թէ ուղղականն իցէ ՀԱՆԻ, և այն եմուտ ես 'ի բառագիրս
և 'ի կիրառութե. սակայն 'ի քննութենէ մատենագրաց ոչ գտաւ ՀԱՆԻ,
այլ ՀԱՆ, ՀԱՆՈՅ։

# ԲԱՆ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արդ[1] այդ գումարտակ վերագասեցեալ բարեշնորհութեան քոյդ պարգեւաց առ իմս երախտիս, ով ամենագութ բարերար գովեալ եւ ամենազօր, թէ եւ սակաւք շարագրեցան աստանօր եղեալ, այլ արքայազունք են եւ իշխանականք ինքնակալութեանց, որդիք զօրութեանց, ծնունդք վեհից, մեծափառք, լուսաւորոգք եւ հրաշապատիւք. յաղթողական վերամբարձութեամբ գրօշիւք հաշակեալք ըստ գլխոց գլխոց պատկապաճոյճ գեղազարդելոց,[2] բերեալ ընդ ինքեանս անթիւ պետութիւնս օրհնաբանողաց, համբոյրս հեզս երջանիկս եւ խաղաղականս ՚ի ծայրին հարազատութեանց այնոցիկ նահանգաց, զորոց մարգարէն մաղթեաց ասելով, զարթո տէր զզօրութիւն քո, եւ եկ կեցուցանել զմեզ.[3] որք յոյժ զօրէն հալածել զմեզս, եւ զանյուսութեանն կարկուտ հալել եւ փախուցանել, քան թէ նախամարտիկն զինուորութիւն երկնային պարուն զգիշերավարն խաւարասէր սկզբնաներհակ բարուոյն ոյ։ Քանզի եւ զբնաւն այսքանեացս ձրից որ ՚ի բարձրելոյն ինձ անձրեւեցաւ տկարիս, թշնամւոյս եւ ապախտաւոր ծառայիս, անձառ է ասել. իսկ եթէ համարձակեսցի ոք զօրել խօսել, զտակաւս ՚ի բազմացն քան թէ[4] զխնկութիւն համանգամայնից. առ այստիկ զառաջին նիւթն յիշելով յորմէ հատեցաւն, իբր զտկար ոք նկուն[5] ՚ի զօրութէ մեծէ հերքեալ պարտեսցի։

Բ. Այլ[6] թէպէտ եւ այսպէս գրեցի, եւ դարձեալ զնոյն վկայեմ առ թերի խակութիւն հոգւոյս՝ եւ կատարելութիւն հասողիդ, եւ առ բարիսն իմ չարժանութիւն, սակայն ամենալցոյս աննախանձ եւ բազմազեղուն գովեալ արարչութեանդ զօրեղութեան վանեալ

են կարծրութիւնք արտաքերութեան սրտի բանսարկուին. որ քարին առակաւ՝ յուսահատն վհատութէ, սպառմամբ խոպանացման աղբերացս երկուց, որ 'ի զգայականս Ադամայ բղխել պատրաստեաց ակնաղբն, զի սառցեալ ծածկեսցի նոլաւ՝ որ 'ի յիս բարեգործութեան կենսատունկն զրախտ, ահա մի՛ ցամաքութեամբ արտասուացս՝ աղանդահնար պատրանօք՝ չարաչար խորամանկեսցէ վերստին հանել 'ի փափկութենէ նախնում վիճակին: Այլ [7] յորժամ կացցէ ած համբարձեալ հրաշիւք արտեւտից 'ի մէջ աստուածոյ հաշտարանացն խաղաղութեամբ, բարձեալ ընդ ինքեան զշնորհացն կտակ, առ որ ամենայն վնասակարութիւնք խարդախութեանց և կարճմտութիւնք սրտնեղութեանց իբր ընդ վիմեղէն լերին ընդդութեան բախեցեալ ցնդին, ջրոյ օրինակաւ սակաւս հեղեալ, և կամ հողոյ խորտակմամբ փշրեալ:

Դ. Որդ չե իմ կշտամբանքս՝ ըստ ձայնին Յոբայ՝ 'ի մարդկանէ իցեն, այլ յամենատես աչաց վերին հրամանիդ, մտեալ ընդ խղճիս տագնապ երկիւղիս, [8] սոսկմամբ սասանեալ յամենայն կարծեաց, ապաւինիմ և արդ անձամբ ընկեցեալ 'ի յոյժ հաստատութեան կենդանի անեղծ. զի ողորմութեամբ նայեցեալ 'ի յիս իբր 'ի պարտաւոր կորստեան պատժոց, առաջի բարերարութեան երկնայնոյդ յանդիման եղեալ [9] ապաձեռն անթոշակութեամբ, զքոյդ երախտիս անպատում փառաց բերելով ընդ իս՝ յուշ քեզ արկանեմ. որ ոչ մոռացմամբ զբաղեալ նիրհես, և ոչ թարթափմամբ աչաց ընդմիջեալ՝ զհեծութիւն կրից անտեսես: Վերացո յինէն, աղաչեմ զքեզ, խաչիդ լուսոյ [10] զխեղդ վտանգիս, հոգարկութեամբ տրտմութեանդ՝ զտարակուսելի տխրութիւնս, փշանիւթ պսակաւն՝ զբողբոջ մեղացս, զարկուածով գանին՝ զհարուած մահուս, ապտակին յիշմամբ՝ զկարիս ամօթոյս, թշնամանօք թքոյն՝ զանգոսնելի գարշութիւնս, լեղւոյն ճաշակմամբ՝ զհոգւոյս դառնութիւն: Ահա քո են այս ամենայն բարութիւնք անբովանդակելիք՝ այ միոյ միածին որդի. առ որովք զչարութիւնս իմ յիշատակեալ՝ զամենօրհնեալ անուն քո կարդամ բարձր աղաղակաւ [11] իմանալեացս պաղատանօք: Տես 'ի խոստովանութիւն զղջման պարտութեան ամաչեցելոյս, և տուր ողորմութիւն որդւոյս սատակման

*մաՀուն անմաՀի. զի 'ի բազմութեան խմբս մեղաց՝ վերստին կրկնեալ նովին անձնգմամբ առաւելութեամբ՝ քո ողորմութիդ աւետարանեսցի, Հաշտեցեալ Հնչմամբ աՀաւորութեան յերկնի և յերկրի: Եւ քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն:*

---

1 [illegible]: Խումբ, կամ կարգեալ բազմութի վերագրեալ քոց սպարգեացդ, — [illegible], առ 'ի բարեբարել ինձ: Այստանօր առուրբ վարդապետս զզանազան մասունս և զպտուղս չարչարանաց փրկչին՝ օրինակէ 'ի բանակ աղաստաղունդ զօրաց՝ որոշելոց պէսպէս գրօշակօք յաղթողականօք առ 'ի պատերազմիլ ընդդէմ մեղաց և սատանայի: Ուստի ասէ, Թէպէտ և սակաւ եզի, այլ [illegible] են, և այլն. վասն զի քնի ազգային են կիրք, և Նորա ինքնակալութեանն գործք. ոչ նուաճելեաց փառատէք, ոչ սրբոց միջնորդութիք, ոչ հրեշտակաց պաշտպանութիք, զի այսոքիկ ծառայից են և ծառայականք: Դարձեալ. ոչ իբրև զմովսիսական օրէնս՝ տկարք, այլ [illegible], զօրաւորք առ ամենայն բարեգործութիս մեր. [illegible], յամենաւոր երկրորդուէն անտեսակալք. զի հայր մասնեաց, որդին կրեաց, հոգին հաստատեմացոյց: Որով [illegible] են քան զերախտիս արարչագործութեան. [illegible], նոր լուսով ածային սիրոյն փայլատակեալք, և [illegible] [illegible]. Հրաշալի պատուով պայծառացեալք, յաղթող բարձրանալով 'ի վերայ մահու և դժոխոց և սատանայի. և որ սիրալին է՝ յաղթելով չարութե և խստասրտութե մարդկան. զի որոց ոչ յաղթեաց զօրութեամբն և մեծութեամբն, յաղթեաց սիրովն և մեռանելովն: Որպէս և ինքնին ասէր առ հրեշտակս (Եսայի. կգ. 3.) « Ճմլեցի զնոսա բարկութբ, և խլուցի յերկիր, և զամենայն հանդերձս իմ թաթաւեցի ». ընթերցիր անդ և զայլ յաջորդսն, որք զամենայն վերագրեալք հաստատեմացուցանեն. և առաւ առ 'ի բերան և 'ի սիրտ քո զայն մեծ առաջեալն մարգարէին (անդ համար. 7.) « Զողորմութի տեառն յիշեցից, զգովութիւն տեառն յաւէժ արարից. յամենայնի զոր հատուցանէ մեզ տէր » և այլն: [illegible] [illegible] [illegible], զանազան գրօշիւք ծանուցեալք ըստ պէսպէս մասանցն՝ գեղեցիկ պատկեր զօրդարելոց. զի այլ դրօշ է նախատանաց և հայհոյութեց փրկչին. այլ դրօշ զըպարտաթեցն. այլ դրօշ ինքնագործ նեղութեանցն, և այլ դրօշ յանարգացն կրելոց: Դարձեալ, այլ դրօշ վշտաց հոգւոյն, և այլ՝ ցաւոց մարմնոյն, այլ՝ խոնարհութեանն, այլ՝ հնազանդութեանն, ըստ այսմ և յայլսն:

2 [illegible]: Այս հանդէսք չարչարանաց փրկչին ունին ընդ ինքեանս 'ի գինի զպետութիս հրեշտակաց [illegible]. որք օրհնեն զզօրութի, զաէր և զյաղթութի չարչարեցելոյն, և ոչ թէ օգնեն նմա: [illegible], ունին զպետութիսն Համբոյրս, այսինքն քաղցունս, հեզս, և այլն: Եւ այս պետութիք են [illegible] [illegible], յաստուածային ընտանեացն, կամ 'ի ներքին պաշտանէից ոյ, [illegible], այնոցիկ զաւառաց երկնից, զորոց մարգարէն զուխթ խնդրէր (սաղմ. հթ. 3.) [illegible]. զզօրս քո զհրեշտակս զարթո 'ի զալուստ և 'ի զարմացումն սիրոյ քո առ մարդիկ, և եկ դու միայն 'ի կեցուցանել զմեզ:

3 [illegible]։ Այս ոչ ցուցանէ զհրեշտակս, այլ զհանդէս չարչարանաց փրկչին, որք խորհրդոց զօրութիւն և մեր յիշատակելովս՝ առաւել կարեն հաստատել զմեզ և զյուսահաստութիւն, [illegible], յաստուածայնական զինուորն, կամ զօրավարն երկնային զօրաց մերոյ՝ [illegible], զարուեստին աստուծոյ, որ առաջին ներհակ կանգնեցաւ բարւոյն այ։

4 [illegible]։ Զորսն չափ բովանդակ պարգևացն քնի ոչ կարէ խօսել, այլ զսակաւս 'ի բազմացն։ Սակայն և [illegible]. 'ի վերայ սակաւուց ձանուցմանն, յիշելով [illegible] զհամ՝ յորմէ կազմեցաւ, ընդ նմին և զակարութիւն իւր, յաղթիլ՝ ուսանելով զինքն անկարող 'ի ձանուցել և 'ի բացայայտել զայն սակաւն։

5 [illegible]։ 2 օրին. 'ի [illegible]։

6 [illegible]։ Թէպէտ և սաստի, թէ վասն հողածին ակարութեան մերոյ ոչ կարեմք հասու լինել նաև սակաւ պարգևաց քոց, և զարմանալ զնոյն խոստովանիմ [illegible], վասն ծանուցանելոյ զանհասութեան կամ զանյայտնութեան հոգևորն բնութեան, և զկատարելութիւն արարչիդ, [illegible], և վասն ծանուցանելոյ զանսպառութիւն իմ առ բարիս սակս մեղաց իմոց, սակայն ամենայօր և անմոռանալի արարչիդ [illegible]. այսինքն յաղթելի են նաև խոստովանութիւնք աստուծոյ, վասն որոյ ոչ կարէ նա արդարև բերել զգթութեան. ապա որչափ ևս յաղթելի է ակարութիւն հոգւոյ՝ առ 'ի ձանուցել և յընդունել զպարգևս քո։ [illegible]. այսինքն որ և աստուածոյ բառ նմանութեան կարծր քարի՝ յուսահաստութեամբ ջանայ խոստովանել զսէրս իմ, ցանկալեցուցանելով զերկուս այլ բերելս ուշադրս, զոր եդ ած 'ի բնութեանս՝ առ 'ի ստանալ զբարեգործութեան զրախտն։ Այսպէս զօրութիւն բայց խմանալի է 'ի բանիս առ ամբողջ ասելոյ զխմաստն. այսինքն ջանայ խոստովանել, և այլն։ Իսկ առաջին. [illegible], խմանի. վասն որոյ մի ցանկալեցուցանելով զարդարոս, [illegible], 'ի ձեռն մարդկայցին խորհրդութեան՝ հնարեալ զելել զիս 'ի փափկութեան անմեղութեան վիճակին։ Բառն, [illegible], 'ի մի օրին. և 'ի հին լուծ. զնի [illegible]։ Այսպէս [illegible]։ 4 օրին. [illegible] կամ [illegible]։

7 [illegible]։ Յորժամ քն ած կոչէ յասուր դատաստանի՝ բարձրացեալ [illegible], արդարեւ զործեալ խմաստութեան իւրոյ, 'ի [illegible]. 'ի մէջ սատանայից և մարդկայնոց (բառ ասացմունքն. ձա. 1։) [illegible]. որք հաշտեցուցիչք եղեն մարդկան ընդ այ՝ զխաղաղութիւնն այ քարոզելով. յայնժամ [illegible] անդ ընդ [illegible]. յանդիման առնէ զձեռս փրկագործութեան իւրոյ. յորմէ ամենայն նենգութիւնք սատանայի, և յուսահատութիւն մարդկան ցնդին՝ իբրև ջուր բաժանեալ ընդ վիմացն լեառն։

8 [illegible]։ 2 օրին. [illegible]։ Թէպէտ և 'ի մարդկանէ ոչ կշտամբեցիր ես, սակայն առ ամենայն զխտութեն դատողական քննութեանց աստուածայնոց 'ի խիղճ մտաց, սակայն աստանիմ ամենայն երկնային։ Բայց 'ի վերայ այսր ապաւինեալ ցուցանէ անձամբ յանդաւանելի յոյսը, թախանձեալ զողորմութիւնդ, և այլն։

9 [illegible]։ Յանդիման եղեալ երկնաւոր բարերարիդ՝ զաստուածական, և ոչ ունելով թուչակ կամ պաշտպան, միայն զգոհութեան բերել յաւէ արկանեմ, թէպէտ և ոչ մատուցան բնաւ, և ոչ ամենայն աւանդ զհատուցանել նեղելին ցուցաց մերոց։ Յետ այսր 'ի կարգ արկանէ զերախտիս փրկչին, յարմարելով առ խորհրդական զինքզինումն։

10 [illegible] : Բարձ յինէն լուսափայլ խաչիւդ զյուսահատու_ թիւնն, զոր իբրև խեցգ փանդաւռ արկանէ տատանեալ 'ի սիրտ իմ :

11 [illegible] : Ահա առ այսոսիկ անդրանկանգակելի և_ բախախս քո յիշատակեալ զչարութիւն իմ, զքո երկրպագելի անունդ՝ զզօրութիւն և զփրկագործ կարգամ ընդ 'ի փրկութիւն բարձր գոչմամբ, այս է՝ մաղթեա և հօգւոյս պարգևամետք, և ոչ ինչ զզայն ձայնիս : Ընդ իմս չարութիւն ապաշաւել յերկինս իբրև զաղաղակողացն և զնինուէա_ ցւոց, աչա և ես զաղաղակ փրկագործ կրկէց քոց, որոյ հեղումն արևանդ տասնեւ խօսի քան զաբելին, յերկինս վերամբառնամ սրտիս զգծմամբ : Տէր, հայեաց 'ի խոստովանութիւն սրտիս զգջացելոյ և պարտեցելոյ անձ_ նով, և ողորմեա ինձ որդւոյս արժանացելոյ [illegible], յաւիտե_ նից դատապարտութեան, որ է մահ իբր զրկումն յանմահին կենաց, և անմահ մեռեալ կեալ 'ի տանջանս : Զի 'ի [illegible] · որպէս զի ըստ բազմութեան մեղաց իմոց՝ նոյնպէս առաւել յաճախութիւն քաղցրեացի ողորմութիւն քո՝ յերկինս և յերկրի [illegible] . հրեշտակք և մարդիկ ահաւոր զարմացմամբ հաչակեալ փառաւորեսցեն զողոր_ մութիւնդ · տեսանելով թէ որչափ անհնարին իմաւմ չարութեան յաղ_ թող գտար՝ ոչ դատելով, այլ ներելով և 'ի քո չնորհս զիս ընդունե_ լով · և այսու կրկնապատիկ եւ մեծարեալ քաղցրեսցի քո ողորմու_ թիւնն՝ քան արդարութիւնն :

## ԲԱՆ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն ազերս մաղթանաց բանի·

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Բայց արդ որպէս երբեմն յայլ ընթերցուածի[1] որ 'ի սկզբնաւորականացն կարգի՝ զմեղանացն զխաւա_ րային ծննդոց գլխաւորացն օրինացն մարմնականացն անդամոց գրեցի, յորոց տիրեցայ ժառանգս մահու, նոյնպէս և յայսմ սահման ընտրութեան բանի զլու_ ծանելոյն զազատարարն օրէնս հոգւոյն կենաց որ 'ի տէր Յիսուս յիշատակեցից նուագս յոքունց, իբր յան_ բաւ բազմութեանց ծովու կաթիլ մի առեալ :

Բ. Զանգի են արդարև[2] կայսերականք ոմանք 'ի բարձրութեանն դասի բազմեալք, թոչականն չնորհաց լցեալք և հարստացեալք : [3] Թագաւորն և սիրեցեալք իւր, արքայն և պատուաւորք իւր, պատկերն և իշխա_ նականք իւր, բարեհաչակեալն և հնչմանք իւր, յաղ_

թոշակմանն և փողք իւր, զօրաւոյն և մարտիկք իւր, գովեցեալն և փառք իւր, փեսայն և պարաւորք իւր, [4] դշխոյն և օրիորդք իւր, [5] փեսաւէրն և համդերձանք իւր, [6] ազատութիւնն և շնորհք իւր, այցելութիւնն և ձեռն իւր, խոստումն և քաւութիւն իւր, պաշտպանութիւնն և աջ իւր, պարգևն և զարդ իւր, նշանն կենաց և ամրութիւն իւր, կնիքն և նկարագիր իւր, ամպն և հովանի իւր, արուեստն և հրաշք իւր, հոգին և անեղծութիւն իւր, բանն և կատարած իւր, ուխտադրութիւնն և լրումն իւր, զօրութիւնն և հրամանք իւր, լուսաւորմանն և սքանչելիք իւր, մանանայն և անապականութիւն իւր, վէմն կենդանի և վտակք իւր, սիւնն հրոյ և ճառագայթ իւր, ոստումն և ազդմունք իւր, յոյսն վերին և փրկութիւն իւր, ծառն օրհնութեան և պտուղք իւր, բարունակն և բարութիւնք իւր: Նու-
զի [7] մի զընտրեն ասելով յամենայնէն վրիպեցայց, իբր յարեգակնէ այլայլեալ աչաց տկարութիւն, 'ի շատն ասել լռեցից և 'ի սակաւն ժամանեցից, բաւականացեալ ամենայնիկար կարիս:

Գ. Բայց աւաղ յաւէտ աստանօր թշուառացելումս եղկելի անձինս, քանզի կարգ բանիս բերէ ինձ խառնել ընդ ձայն աւետեացս բողոք գուժիս. վասն զի ընդ այսոսիկ առընթեր սորին գայ արդարութիւնն և կշիռքն, վճիռն և հատուցմունքն, քննութիւնն և լոյսն, [8] յանդիմանութիւնն և զամբարքն, մերկութիւն և պատկառանքն, յայտնութիւնն և ամօթն, ամբիծն և վաստակքն, թիւրեալն և պատիժքն:

Դ. Դարձեալ վերստին աշխար կրկին եղկելոյս, քանզի գայ հասանէ [9] առ հասկ հասակիս անհնարին բարկութեամբ մանգաղն առ հունձս, դատաւորն առ ատեանն, հզօրն առ բեմն, սպառնացեալն առ կորուստն, բազուկն առ դատաստանն, գաւազան խրատուն առ հարուածն, սպառազինութիւնն առ նախանձն, հոլին առ ընտրութիւնն: Քանզի բանն զոր խօսեցայ ընդ իս, նա դատի զդատապարտեալս 'ի վերջնումն աւուր հատուցմանն: Ո՛չ կանխեա, բարեգութ, [10] նախընծայ քաղցրութեամբ առ նուաղ հեծութիւն վարանական երկիւղիս, և զօրութիւն ընձեռեա ձեռամբդ օրհնութեան 'ի յետին տագնապիս առաջինդ քո օգնութեամբ մխ-

*Թարել, բժշկել, քաւել և կենագործել։ Լոյս քեզ փառք յամենայնի յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

---

1 Ու 'ի [illegible]։ Որպէս յայլում բանի՝ որ 'ի կարգի առաջնոյն, այսինքն 'ի բանն Զ, գրեցի զծնունդս գլխաւոր մեղացն, որք են օրէնք և անդամք մարմնոյ (ըստ առաքելոյ. Հռովմ. Է. 23. Ը. 2.) նոյնպէս յայսմ որոշեալ բանի մանաւորապար յիշատակեցից [illegible], սակաւս 'ի բազմացն՝ զազատարար օրինաց հոգւոյն սրբոյ՝ որ քոյին շնորհեցաւ, [illegible], այսինքն զօրէնս որ ազատիչ է մեղաւորաց, հաւատացելոց։ Կամ, որպէս վերագոյն [illegible] աստ զմեղացն, նոյնպէս աստ [illegible]՝ խմա զօրէնս լուսաւոր գործոց, կամ զօրէնս որ լուսաւոր ծնունդս գործէ։ Եւ ապա 'ի կարգ արկեալ յիշէ զերախտիս քո և զգործս զօրութեան նորա։

2 [illegible]։ Երախտիք փրկագործութեան համեմատութեամբ այլ երախտեաց՝ են իբր կայսերականք, յեա բարձրագոյն կարգի գոլով, ըստ որում լցեալ են Թոշակաւ շնորհաց։

3 [illegible]։ Նախ մինչև ցայն, [illegible], հայրին յանձ կամ 'ի քո ընդ անուամբ Թագաւորի, յաղթականի, զօրավարի, և այլն. և առ իւրաքանչիւրսն ըստ համեմատութեան տարրեթեր գնէ կամ զաւրրս, և կամ զմեծութիւն ինչ ոյ. որովք յայտ առնել կամի, թէ նոյն ինքն ած ամենայն օրինակաւ, և համօրէն աւրբք նորա պատուղեցան բովանդակ յերախտիս մարդկան։

4 [illegible]։ Սուրբ ածածինն, և կուսանք հետևողք նորա, և կամ հրեշտակք։

5 [illegible]։ Ցովհաննէս մկրտիչ, [illegible], քարոզութիւն նորա, և մկրտութիւն ապաշխարութեան, որով հանդերձէր ճանապարհ առ քրիստոս։

6 [illegible]։ Փրկագործութեան ժամանակն, [illegible], զանազան պարգևք մրխակաւնք։ [illegible], այց առնելն մարդեղութիւ, կամ քարոզութիւ, և [illegible], բարերարութիւն, կամ յաջողումն պէսպէս գործոց։ [illegible] Թողութեան մեղաց, և [illegible], սրբելն ըզմեղս և զպարտիս։ [illegible], խնամք պահպանութեան, և [illegible], անվրէպ զօրութիւն նորա։ [illegible], հատուցմունք բարեաց, կամ պարգևք հոգւոյն սրբոյ, և [illegible], փայլմութիւնք պարգևաց, կամ զանազան ձիրք պանծալեաց, լեզուախօսութեան, և այլն, որք իբր զարդ են 'ի վերայ եօթն պարգևաց հոգւոյն։ [illegible], սուրբ խաչն, և [illegible], պահպանողութիւն իւր յամենայն փորձանաց։ [illegible] մկրտութեան, և [illegible], նմանութիւն որդւոյն քո 'ի մեզ, ըստ գաղատ. (Գ. 27.) «Որ միանգամ 'ի քս մկրտեցարուք, զքս զգեցեալ էք»։ [illegible], ամենայն հովանաւոր յայլակերպիլ քոյ, որ նշանակէր զհովանաւորութիւն իւր 'ի վերայ մկրտելոց։ [illegible], պանծալագործ զօրութիւն, և [illegible], հրաշալի գործք նորա։ [illegible] սուրբ առաքեալ հաւատացելոց, և [illegible], մաքրութիւն, սրբութիւն նորա, կամ անեղծ պահելն զընդունողս։ [illegible] քոյ, մարգարէից, և առաքելոց. և [illegible], անվրէպ կատարումն նորա։ [illegible]. ըստ այնմ (Ղուկ. ԻԲ. 29.) «Եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս և հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն»։ [illegible], տիրական իշխանութիւն քոյ, և [illegible], պատուէրքն. օրէնքն։ [illegible], առաջինն մկրտութեան, և [illegible], պանծալի գործք նորա Բայց մարթ

է [illegible] անուլ ասա զապաշխարութեան աւազանն․ զի զմկրտութիւն խնայաց 'ի բանն [illegible]․ և զի ասա անմիջապար գնի խորհուրդ սուրբ հաղորդութեան, որ տուեալ լինի լուացելոյն ապաշխարութբ: [illegible], անեղծ մնացեալ 'ի սափորին, նշանակ մարմնոյն քոյ, որ անապական առնէ զճաշակողն․ որպէս և [illegible], քո, և [illegible], արիւնն անմահական: Զայսոսիկ այլաբանութբ առնու 'ի մանանայէն և 'ի վիմէն' որ առ իսրայելացւովք, որպէս և զչեռեանալն, [illegible], [illegible], և այլն, որովք 'ի նոքա խմանին հացին սուրբ, և ձայնն հայրական 'ի վերայ քոյ 'ի յորդանան: [illegible], համբերձեալ կենաց անկողութեան, և [illegible]․ կատարումն յուսոյն' սասցմանք կենացն: [illegible], ած, կամ քո անկեալ 'ի գլխաւոր ալքայութեան, (ըստ բանի յայտնութեն ի․ 2․ 14․ 19․) և [illegible], վայելումն քոյ և քոյ․ [illegible], երանութիւն քոյ' որ յոյ չասաւորեալ, և [illegible], բարիք երանութեանն:

7 [illegible] Զի մի կամելով զամենայն երախտիս քոյ ասել, յամենայնէն զրկեցայց, և ոչ զմիոյն պայծառ ձանաչելով․ որպէս որ կամիցի զբովանդակ պայծառութեն արեգական նկատել, մթանալով աչացն' և ոչ զաւելու լոյս նորա և կամ զայլ ինչ յաւակ կարէ տեսանել․ վասն որոյ լռեցից 'ի [illegible], 'ի բազումս ասելոյն, շատացեալ ամենեքին ակար կարողութեանք ձանաչմանս:

8 [illegible]: Հրաշափառութեն զաղանի գործոց: [illegible], վկայութիւն խղճի մտաց, և հրեշտակաց և գիտաց: [illegible], արդարն, [illegible]․ վարձուց արժանի գործքն․ որպէս և [illegible], մեղաւորն, [illegible]:

9 [illegible]: Հաստանէ առ կեանս մարմնոյս' [illegible] մահուա 'ի հնձել, և յետ մահուն [illegible] քո [illegible] աստանձնական: [illegible], ապաւինացոյն' [illegible], առ 'ի պատապարտել, և այլն: [illegible]: Է բան իմաստ․ Է․ 18․ ամբանալն հոգւով արդարութեան առ 'ի խնդրելոյ զվրէժ մեղաց: Քանզի բանն քո զատի զյանցաւորս 'ի [illegible]. թէ իւրաքանչիւր կենաց, և թէ ընդհանուր աշխարհի:

10 [illegible]: Այլ դու ողորմած, մի յայն յետին օր թողուր զդատ եղկելւոյս, այլ կանխեա զթութբ կամ ներողութեանք որ ընծայեալ ինձ նախ քան զհասանել մահուն: Եւ զօրացո զիս օրհնեալ ձեռամբդ 'ի [illegible], որ այժմ, և որ 'ի ժամ մահուն․ [illegible]․ որով նախ ասաջին 'ի ծննդեանս օգնեցեր շնորհօք մկրտութեան․ կամ, որով յառաջն 'ի կենդանութեանս ողորմեցար:

# ԲԱՆ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելեալ կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ քանզի [1] զկերպարանն առաջին լքի 'ի մտաւորին թելադրութենէ, խմորս ծուլութեան կորուսեալ 'ի սպառ, ցուցից արդ այժմուս զՆոյն յիս տեսակ. ողորմելի հեծութեամբ թախծեալ 'ի հոգի, անաչառ խոստովանօք հրապարակաւ 'ի յեկեղեցիս բազմութեան ազգաց վերապատմեցից բարձր ձայնիւ, բարբառով մեծաւ աղաղակելով:

Բ. Մատեանս հնչական բարդեալ 'ի յինքեան [2] ներքոյ և արտաքոյ ողբս և վայս և ձայնս, ըստ տումարի տեսլեանն Եզեկիէլի, քաղաքս անպարտուար և անմահարձան, յարկս ունայն 'ի դռնափակոյ ամրութեանց, [3] այս տեսակաւ՝ այլ ոչ համեմատութեամբ, ջուրս աղտաղտին անախորժելի ծարաւեաց արբման, գետինս անօգուտ հերկագործութեան, սահմանս լքեալ հեղեղավայրս կենաց, խարանեցեալ և տատասկաբեր անդաստանս, անծախնամ երկիրս անձնաւոր՝ որ բանաւորութին պտղոյանց մշակեցոյ, [4] եւղընծիւղ փայտս պտղակորոյս, հատանելի ծառս ունայնաբերս, [5] կրկնամեռ խօսուն տունկս անյոյս, ամենաշէջ ճրագարանս անլոյս: Արդ վերստին առ սոյն բերելով զայս [6] նմանութիւն աւաղականաց, բազմօք կրկնեցից. որ ամօթոյն դառն պատուհաս պահեալ կայ հիքոյս, կրճումն ատամանց և անկէտ լալումն աչաց եղկելոյս, հայրական [7] ցասումն անապաժելի՝ դառնութեան որդւոյս, ապականութիւնն աննորոգելի՝ մեղուցեալ մարմնոյս, նոր կշտամբութիւն գտողիս չարեաց՝ ախտացեալ հոգւոյս, [8] տարաժամ տագնապի տարակուսանաց՝ ելից գերելոյս, զոր երկնային զօրքն մատուցանեն թշուառացելոյս, 'ի խրձունս որոմանցն վկայելով վտանգեցելոյս, 'ի ձայն ահարկու զանբժշկութիւնն ազդել լքելոյս:

գ. Ո՞չ արդարեւ երգս կատակերգութեան [9] Ջնա-
րահար պոռնկի, յածեալ և կածեալ քաջ հնչեցուցեալ
ողբս ողորմելիս և զկծեցուցիչս, ըստ առակաւոր բանին
Եսայեայ՝ որ ՚ի պատգամին Տիւրոսի. Զի թէ նա ըղ-
ձիպուածն փոքր անցից ապաւինեալցն ՚ի մէտոյ իմն տարա-
ւորեալ, բողքէր զխմոկս զխմոկս կերպից կերպից ա-
ւաղակմանց, ըստ կծողացն կաքաւելոյ. իսկ առ իս ո՛ր-
չափս և որոլխուն ձայնս մռմնջեցից վհատեցուցիչս. որ
զալատեանն տեառն ապաւեալ առանց վրիպմանց, մնա-
ցի անպատրաստ և անհանդերձելի. Ո՞րդ եթէ զգա-
տատմանցն աշաւորութիւն կրկնեցից, բազմացուցից
ինձ աշխար. [10] ապա եթէ զփորձն խելութեամբ ցու-
ցից, յաճախէ ինձ երկիւղ. իսկ եթէ զկերպարանացն
տեսիլ գրեցից, առաւելուն ինձ հառաչմանք, զի կան-
խաւ նկատեալ զայնս և ոչ անագան ապաշաւեցի. Ո՞չ
խնայեա յիս, զթած, մարդասէր, հզօր, բարերար,
ամենապարգև. Ո՞ր թագաւոր, օրհնեալ յաւիտեանս.
ամէն.

---

1 [illegible]. Որովհետև զառաջինս անմեղութեան զեղեց-կութիւն ՚ի բաց թողեալ կորուսի յորդորմամբ սատանայի, ցուցից այժմ պէսպէս նմանութիւնս զայլեւայլ կերպարան հնոյն մարդոյ ազգաց, զդասս օրինակաց յայտնապէս հրապուրակեցից զխայտառակութիւնս իմ ազգաց բազմաց ձայնիւ գրոյս: Բանիցն եմ [illegible] ընթերցող, ըն փոփոխեալ, և այլն: Հին լուծ. կերպարան հնոյն խեղճոյ ՚ի վերայ խաղացելոցս և գեղեցկութեան նորա. այլ չյարմարի տեղւոյս:

2 [illegible]: Ըստ օրինակի տեսլեանն եզեկիելի մասնեան եմ կենդանի (Ա. Գ.) ՚ի արտի կամ ՚ի միտս, և ՚ի բերանի լցեալ ամենայն ողբս. կամ, Ներքոյ՝ առաջի իմ, և արտաքոյ՝ առաջի մարդկան. կամ, Ներքոյ՝ վասն մեղաց խորհրդոյ, և արտաքոյ՝ վասն մեղաց մարմնոյ:

3 [illegible]: Արտաքին տեսլեամբ այլ երևիմ, բայց ոչ ըստ բնութեան համեմատեցուցիչ, այլ մանաւանդ մնացակար. զի զան մրջիւնք կամ գիրտք հեղանիութեան, այլ և մոխիրք բուսոց նմանեալք այնի, և համեմ զաժանք և մնաղիկք: [illegible], Ըստ տեղի յորում բուսանի կընիւն (զազ.) և ոչ բանջար ախատանի: Հին լծ. ասէ վասն կնիւնոյ թէ Յղեան է, որ ՚ի հեղեղատս բուսանի, մանրաբողբոջ ծիլն: [illegible]. Ծծմբին խնամքք յառաջն գործեալ երկիր բանաւոր. և ասկոյն յետոյ սատանայի պատրանացն անաղով, զնորա զլար մշակութիւնն ընկալայ:

4 [illegible]: Զի թէ նիս կորուսող զպատուղ իւր: [illegible], կարելի ծառս [illegible], որ բերեն միայն ծիլս անպտուղս և տերևս առանց պտղոյ:

5 [illegible]: Կրկնակի մեռեալ, յառաջն սկզբնական մեղօք, և ապա անձնական մեղօք. կամ, յետ մկրտութեան կենդանանալոյն ՚ի մե-

զաց՝ վերաբերին միաւեալ. որով և [illegible], և որ յայս մնայ անդրէն ինքնին նորոգեալ։ [illegible], Ծրագրեալ եւ կազմեալ բաղում առեղամբք և բերանովք, բայց ամենայնն չիջեալ է, որով բնաւ [illegible] եղէ։

6 [illegible]։ Դարձեալ կրկնեալ զեղանակ ուսոյական բանից ըստ նմանութեն լոլոկանաց, 'ի նման վերջ աւարտելով զբանն, այսինքն 'ի [illegible], որպէս ողբարկութն ասենն. տես 'ի բանն ԽՁ.

7 [illegible]։ մի օրին. [illegible], և այլ 2 օրին. [illegible]։ Այսա պահեալ կայ ինձ բարկութիւնն հօր՝ անողորմելի, անհրաժեշտ, ինձ որ հակառակ քաղցրութեան նորա եղէ որդի զաւանայեալ, ապահակ։ [illegible], ոչ խմանի աստ փառնէ, քաղցրութն մարմնոյ, որ յարութեամբն բարձեալ լինի, այլ նշանակէ զցաւրշութիւն և զաղանդութն, որ և մնայ 'ի յարուցեալ մարմինս անդէկք մեղաւորաց։

8 [illegible]։ Վարանումն տաղնապիչ, [illegible], եւանեալս 'ի մարմնոյ, կամ ժամու մահուանս. զայս տաղնապ մատուցանեն ինձ հրեշտակքն, օրինակաւ որոտմանցն վկայելով զպյրումն, և ազդելով զանրժշխելի զոլն իմ յայնմ ժամու։ Այս վկայութն հրեշտակաց է ինձ նոր [illegible], 'ի վերայ այլոց բաղում ապաշխարեալ ոյ։

9 [illegible]։ Փնտրահար պահիկ կնոջ, ըստ նմանական բանին եւայեալ (Խզ. 15.) ուր ասէ զախրան, թէ յետ եօթանասուն ամաց աւերածոյն «Եղիցի երբև երգ պոռնկի միոջ». զոր ըստ Ծառին խմաստ միկնիկք զվերաբերին չինութէ նորա, և զմեծագանձ վաճառաշահութեն, որով զայլոց ակողեաց փաճառականս առ ինքն ունէր ժողովել, ըստ օրինակի յայտնի պոռնկաց։ Բայց աւրբ վարդապետս այլ ազգ յարմարէ երրում բանին. երբև թէ՝ որպէս պոռնիկքն 'ի կործանիլ տիրոջն՝ քնարք զաղէտս երգեանց և զողբս հնչեցուցանեէին վասն կորուսանելոյն զանարժան շահս երգեանց, այսպէս և ես զերաւացի ողբս իմ հնչեցուցանեմ վասն կորստեան հոգւոյս, և եկեալ հասեալ դատապարտութես։ [illegible], եթէ եւայի զպատահար եօթանասնամեայ զալոց կործանմանն տիրոջն՝ որ յայժ փոքր է առ յաւիտենական դատապարտութեամբն, երբ մերձաւոր ձեայցուցանելով զաւշակէր [illegible] [illegible], ազգս ազգս, [illegible] [illegible]. զանազան աւարելի նմանութեց, ասյս վասն իմ որդիոյ տարակուսելի ձայնս [illegible], ընկերայն ողբերգեցից. թէպէտ և զբանն ապաշաւանաց բարձրաձայն ասեմ յաւոայ թողութե, բայց զտարակուսելին ըսիկ ասեմ. որ անվճեալ և մշտահաս զալստեան տեառն սպասելով, առկաւին անպատրաստ մնացի։

10 [illegible]. եթէ զփոքր կամ զաւհասարակաց զատաստանին, [illegible], մասնաւորապար կամ ծշդրտիւ ցուցից, խորհելով և յառաջ բերելով զզանազան ասոսս բարկութենն ոյ, զոր ըստ ժամանակս ժամանակս եցոյց. որպէս առ ջրհեղեղաւն, առ սոդոմացիս, առ քանանացիս, և առ այլս։ Եթէ զայսոսիկ մի ըստ միոջէ եղից առաջի, առաւելու երկիւղ իմ, և մեծ եւս պատուհաս ինձ հասանէ. որովհետև զխառելով զայս ամենայն, և ոչ գտնէ անպատն ապաշխարեցի։ Նա այսպէս տաղնապիմ. այլ զու տէր խնայեա, և այլն։

# ԲԱՆ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելեալ կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Մինակալ ա̃ծ բարերար ստեղծիչ բոլորից՝ լուր հառաչմանց ձայնիս վտանգի, և յերկիւղէ տագնապի ապագայից կարծեաց փրկեա կարող զօրութեամբ զերծեալ 'ի պարտեաց. քանզի բաւական ես յամենայնի առ ամենայն հնարս զօրանալ անբաւ մեծութեամբ և իմաստութեամբ անհասանելեաւ։

Բ. Այլ քանզի ուշիւ մտացս տեսեալ 'ի հեռուստ զհանդերձելոյն հանդէս ահաւորափայլ, նկատեմ ինձէն աստանօր կանխաւ [1] զտիւն լուսոյ սրբոցն յուսոյ, զօրն խաւարի պատժապարտիս պատուհասի. ուստի ոչ զօրէ ոք յեկիցս առ պատսպարան փախստեան. ոչ [2] անդունդք խորոց, ոչ վիհք վհից, ոչ բարձրութիւնք լերանց, ոչ անձաւք քարանց, ոչ կարծրութիւնք արձանաց, ոչ ծերպք ծակաց, ոչ փապարք փոսից, ոչ սորք հեղեղաց, ոչ բաւիղք խորշից, ոչ շտեմարանք յարկաց, ոչ ծածկութիւնք սենեկաց, ոչ եմակք հովտաց, ոչ ծործորք դժուարաց, ոչ վերաղրութիւնք բլրոց, ոչ արձակմունք ընչոց, ոչ անբաւութիւք ծովուց, ոչ սահմանք յորձանաց, ոչ հեռաւորութիւք եզերաց, ոչ ողբմունք ձայնից, ոչ հեղեղք արտասուաց, ոչ տատանմունք մատանց, ոչ համբարձմունք ձեռաց, ոչ պաղատանք շրթանց։

Գ. Մյոցիկ [3] սաստկութեանց մտացս անճողոպրելեաց դու ես, տէր Յս̃, հնարք և դադարք դիւրութե̃ և անդորրութեան փրկութեան ամենամեղս հոգւոյ. արդ հայեա 'ի յանդերձ վտանգիցս շրջադրութի̃ միայնդ քաղցր առ ամենեսեան։ Ածեա սուսերաւ յաղթական [4] կենացէն խաչիդ զցանցս վարմիս, որ յամենայն կայից պաշարեն 'ի մահ զգերիս, և հան 'ի յանդորր զոտս սասանեալ թիւր ընթացողիս։ Բժշկեա զհրատապ ջերմնական տոչորումն մղձկեալ սրտիս, մերժեա զխւայն

չարաչարութեանս շնուկ քո պարտաւորիս, հալածեա զյուսահատ անձկութեան հոգւոյս մթութիւն չարի կենակցիս, ցրուեա զծխամած թանձրութիւն [6] բանութեան մեղացս երեւոյթ մտերցս 'ի յիս, կոյս զգաղիր թխատիպ կրկցս ապականութեանս կարիս ։ Նորոգեա զպատկեր լուսոյ պաշտեցեալ փառաց մեծութեան անուան հզօրիդ յոգիս, զօրացո զշնորհիդ փայլումն 'ի 'ի դէմ դիմացս և 'ի կերպարան տեսութեան մտացս հողեղինիս, յարմար յերիւրմամբ կացո յարդարեալ՝ որ զքոյդ բերէ նկատումն՝ նշուլազարդ մաքրութեամբ զտեալ զմռայլս մեղաւորիս, ծայրին կենդանի անեղծ երկնաւոր լուսով քո ծածկեալ [7] յօրինակս երիս ։ Օ՜ի դու միայն ես օրհնեալ ընդ հօր 'ի զալեստ հոգւոյդ սրբոյ յաւիտեանս յաւիտենից • ամէն ։

---

1 Զգեստն լուսոյ ։ Հայեցեալ 'ի հանդէս դատաստանիդ՝ տեսանեմ զայն օրն՝ լինել սրբոյն տիւ լուսոյ, իսկ մեղաւորիս՝ օր խաւարի • որպէս յեգիպտոս իսրայէլացւոցն լոյս էր, և եգիպտացւոց՝ խաւար ( Ելից • Ժէ • 19 • 20 ։ Ժբ • 1 ։) Եւ յայնժամ ոչինչ յեղեղոցս կարէ լինել պատսպարան փախչելոյ ։

2 Աստուածոյ խորոց • այսինքն յոյժ խոր անդունդք • ըստ այսմ 'ի հետեւեալն՝ յորս նոյն բառ, կամ համանշանակ բառ կրկնի, սաստկացուցանէ միայն • որպէս Հրոյ հրոյ • այսինքն յոյժ խորին վիհք ։ Ծերոց ծերոյ • այսինքն յոյժ ներքսագոյն ծակք, և այլն ։ Ասոյ հեղեղաց • խորին փոսք գործեալք 'ի հեղեղաց • Բուսոյ բոյսոց • քուսաւոր ծածկոյթք խորշից ( աաշախ ,) որք աներեւոյթ առնեն զեղեալն 'ի ներքս ։ Ելոյ հող հողոյ • խոնարհագոյն կողմանք կամ ծագք հովտաց ։ Ծործորոյ դժոխայոց • լեռնային խոռոչք ապառաժուտ վայրաց ։ Վիրագարաթեան բերոց • 'ի վերայ անկումն բլրոց • կամ, խիտ առ խիտ բազմութիւնք բլրոց բարձրացելոց, ուր դիւրին է 'ի միոյ բլրոյ 'ի միւսն փոխչել ։ Տղմասուն շնաց • ուժգին յարուցմունք հողմոց, կամ եղմունք թանձր գոլորշեաց ։ Ահեղ յորձանաց • զարհուրելի հոսանք յորձանաց ( տաշ̃կ • կիրատայ ։)

3 Աղաչելութեան հատոյ • եթէ այսպիսի սաստիկ պատահարաց և իրաց՝ յորոց մերով զօրութբ չկարեմք ազատիլ, դու միայն ես հնարք, ապա մրջափ ես աչաւոր քո դատաստանիդ՝ զերծանելոյ հնարք 'ի քէն միայն լինի, վասն որոյ հայեաց յանդերծանելի Հրամանն Խրախուսաթեան, պաշարումն, որք շուրջ զինև եղեալ են ։

4 Կենդանի խաչիդ ։ Խաչիդ՝ որ է զէն կենաց կամ ապրանաց ։ 2 օր • Խաչիւ ։ Նզեա, առէ, սուսերաւ խաչիդ զկապս սատանայի, որ իբր վարմ 'ի մահ ըմբռնեն զիս զգերիս ։ Դիտեա, զի սատի մինչ 'ի բանն՝ յօրինակ Երէ, պահէ զձև նմանայանկ՝ 'ի Ի ։

5 Զարհուրեցուցանող ... ։ Դիւական նենգութեան ամբոխումն, խառնակութիւն ։

6 Բանութեան մեղացս երեւոյթ ։ Ցրուեա զթանձր ծուխն կամ մուխն, որ է երեւոյթ կամ կերպարան տխրացեալ մեղացս, որ մտեալ է 'ի ներքս յիս ։

7 Յօրինակն էջին: Ըստ հին լուծ · 'ի մարմին, 'ի շունչ, և յոգի · ըստ այլոց՝ 'ի միտս՝ 'ի բանն՝ և յիշողականն, որք օրինակք են առաջինն՝ հօր, երկրորդն՝ որդւոյ, երրորդն՝ հոգւոյն սրբոյ: Բայց ըստ իս պարզե բուն բանիւք սրբոյ վարդապետին · որ հայցէ մաքրելով զմթութի մեղացն՝ վերստին յինքն տպաւորել զնմանութիւնն այ ասելով, Նորոգեա զպատկեր · և այլն: Եւ զայս նախ՝ յոգի, 'ի հոգին՝ որ օրինակ է հօր · գոլով հոգին արմատ ամենայն յառաջութեց և կատարելութեց մարդոյ, որպէս և հայր՝ ամենայն ածայնոցն: Երկրորդ, 'ի գէղ դիմաց, շնորհօք մաքրութեան զգայարանացն · դէմքն՝ օրինակ որդւոյ, որ կերպարան է հօր · և զի մարդեղութեամբն երևելի եղև մեզ: Երրորդ, 'ի յերգորեան փառաբանեալ Տեառն, ուղիղ և պայծառ ճանաչելով զածայինսն · և ըստ այսմ միտքն՝ օրինակ հոգւոյն սրբոյ, որ քննէ զամենայն և զխորս այ: Դարձեալ, յօրինակն էջին, իմանի երրեակ եղանակ կամ նմանութի պատկերին այ · այսինքն բնականն՝ 'ի ձեռն իմացականութեան, գերբնականն՝ 'ի ձեռն սրբարար շնորհաց, և երանականն՝ 'ի ձեռն պայծառ տեսութեն այ 'ի հանդերձեալն · զոր և յայտ առնէ վերջին բանիւքն · Ամբողջն՝ կենդանին՝ անեղծ՝ էութեամբ ըստ Աստուծոյ ծածկեալ · այն է ըստ փափաքելի երևայցն այ, որով 'ի նոյն պատկեր նորոգիմք փառաց 'ի փառս (Բ. կորնթ. Գ. 18:)

# ԲԱՆ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի ·

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Որդի այ կենդանւոյ օրհնեալ յամենայնի, հօրդ ահաւորի անքնին ծնունդ, որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ · որ [1] 'ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քոյ փառաց՝ հալին մեղք, հալածին դեք, ջնջին յանցանք, [2] խզլին կապանք, խորտակին շղթայք, կենդանանին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն, և թագաւորէ ձեռն քո ամենակալ, քաւիչդ ամենայնի:

Բ. Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կե-

ցուցանել. Թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ո-ղորմութեամբդ, զի դու միայն ես [3] յերկնի անձառ, և յերկրի անզնին, [4] 'ի տարր գոյի, և յեզրս ծագաց աշ-խարհի, ակիզբն ամենայնի և յամենայնի ամենայն լըր-մամբ, օրհնեալ 'ի բարձունս, և քեզ ընդ հօր և հո-գւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն:

---

1 Ի ծագել առաւօտուն : Յորժամ ծագեսցես 'ի մեզ զանստուեր, զան-մթանալի քո լոյսդ, որ է լոյս աշխարհի և կենաց, որ ցուցանէ միան-գամայն զփառս քո և զողորմութիւնդ : Քանզի ըստ որում առանց նուա-զելոյ ծագէ 'ի քէն, ցուցանէ զփառս քո. իսկ ծագելովդ առ անարժան խաւարեալս կամաւ, յայտնէ զողորմութիւն քո : Այլ և 'ի մեծամեծ գործոց անտի՝ որ և տարր չարագածեալ յիշատակին, ցուցանէ զկա-րողութիւնդ 'ի փառս քո. և զի անաշխատապէս շնորհես ամենեցուն, ըզ-բազմապատիկ զխնամութիւնդ ծանուցանէ :

2 Խաւար կապանօք : Այս և յաջորդքն՝ կամ մարմնաւորապէս իմա-նին, ըստ որում ամենայն զօրութիւն եղեալ քո զկապանս բարձեալ, որ-պէս զպետրոսին զպօղոսին և զշիղայի. կենդանացոյց զմեռեալս, առող-ջացոյց զհիւանդս, և այլն : Եւ կամ իմանին հոգևորապէս 'ի մե-ղաց իմանալի կապանաց, ցաւոց, և այլն :

3 Յերկնի անձառ : Դու միայն յամենայնի որ յերկինս են՝ անձառելի ես, և դու միայն յերկրի անզնին, յամենայն երկրաւորս անզննելի մը-տօք : Կամ, դու միայն յերկնաւորաց հրեշտակաց անձառելի ես, և յերկրաւորացս անհասանելի : Կամ, դու միայն գոլով ներկայ յերկինս և յերկրի միանգամայն, անձառելի ես լեզուի, և անհաս մտաց, թէ զիարդ իսկութիւն կաս 'ի ներքս յամենայնի՝ առանց բաժանելոյ 'ի քէն, և առանց հեռանալոյ 'ի նոցանէ :

4 Ի տարր գոյի : Ի բնութիւն կամ յիսկութիւն գոյացելոց 'ի ներքս կաս, այլ և արտաքոյ նոցա յեզրս ծագաց աշխարհի : Կամ լաւ ես, 'ի տարր, այսինքն 'ի սկիզբն իրաց գոյացելոց, ըստ որում բառս տարր նշանակէ ես սկիզբն կամ առաջին յիրս. և այսմ համեմատ գայ յաջորդն, յեզրս ծագաց. այսինքն որպէս կաս 'ի սկիզբն իրաց, նոյնպէս 'ի ծայրս ամե-նայն իրաց աշխարհի : Ակիզբն ամենայնի. այս լաւ ես յարել յանցեալն, սկիզբն ամենայնի. և յամենայնի ամենայն լրմամբ. քան թէ ընդ յաջորդին, ամենայն լրմամբ օրհնեալ, և այլն. այսինքն թէպէտ և կաս 'ի սկիզբն ի-րաց, այլ և 'ի ծայրսն և 'ի կատարածն, սակայն ոչ բաժանիս, ոչ մասն ինչ աստ կաս, և մասն ինչ անդ. այլ ամբողջ լրութիւն բովանդակապէս կաս 'ի սկիզբն և 'ի կատարած իրաց. այնպէս զի նոքա միայն են հեռի 'ի միմեանց, իսկ դու նոյն և բոլոր յամենայնի, մօտ յամենեսին. քեզ մի է սկիզբն և ծայր իրաց : Այսպէս օրհնեալ և ծանուցեալ ես յեր-կինս 'ի բարձունս առ 'ի սրբոց. և մեք այսպէս դաւանելով յերկրի, փառս տամք, և այլն :

## ԲԱՆ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոկոյն առ նոյն այլերս մաղթանաց բանի·*

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր ամ՟ գթութեան, փրկութեան եւ ողորմութեան, քաւութեան եւ նորոգութեան, բժշկութեան եւ առողջութեան, լուսաւորութեան եւ կենդանութ՟ե, յարութեան եւ անմահութեան, յիշեա զիս յորժամ գայցես արքայութեամբ քո՝ ահաւոր, հզօր, բարերար եւ ամենաստեղծ, կենդանի, գոլեալ, ամենակատար, մերձ 'ի հեծութիւն[1] համայն եղելոց։ Ընդ խաչեցելոյն ընդ քեզ պաղատիմ, որ ոչ ըմբռնեալ վասն քո եւ ոչ կապեցեալ, ոչ կախեալ եւ ոչ բեւեռեալ, ոչ կափեալ յանուն մեծիդ եւ ոչ անարգեալ, ոչ լլկեալ եւ ոչ նշկահեալ, ոչ խորտակեալ եւ ոչ մահացեալ, եւ արքայութեանն արդարոց մասին[2] անձկալեաց լուսոյ արժանի ցուցեալ, իրաւամբք ուխտի երդմնականաւ ամենին ազդեալ զանփոփոխութիւն բարեացն տալոյ, փառաւորեցեր առ յոյս փրկութեան 'ի սպառ լքելոյս։

Բ. Օրհնեալ օրհնեալ եւ դարձեալ օրհնեալ, եւ զիս ընկալեալ նովին հաւատովք կանգնեա 'ի կործանմանէս, բարերար. բժշկեա 'ի հիւանդութեանցս ախտից, ողորմած. յեղերաց մահուս դարձո զիս 'ի կեանս, կենդանութիւն. քո եմ եւ ես, կեցո ընդ նմին, ապաւինութիւն. անձամբ մեռելոյս կենդանական շունչ ընծայեա, յարութիւն, կեանք, անմահութիւն, անպակաս բարութիւն, անսպառ շնորհ, անփոփոխ ներողութիւն,[3] աջ ամենազօր, ձեռն ամենիշխան, մատն ամենամերձ։ Կամեաց տէր եւ փրկեցայց, ակնարկեա միայն գթութեամբ՝ եւ արդարացայց, ասա բանիւ՝ եւ վաղվաղակի անարատ գտայց, մոռացիր զթիւս չարեացն՝ եւ անդրստին համարձակեցայց, առատաձեռնեա՝ եւ արդէն 'ի քեզ իսկ պատուաստեցայց. փառաւորեալդ յամենայնի յաւիտեանս. ամէն։

1 [illegible]։ Մերձ ես 'ի հաւասարս ամենայն մարդկան։

2 [illegible]։ Նշուլին որ վասն իւր յանդգանաց՝ և ոչ վասն քո մատնեցաւ 'ի խաչ, իւրովք հաւատովքն արժանի ցուցաւ արքայութեանն արդարոց, որ է մասն կամ բաժին փափաքելի երանութեանցն լուսոյ, այսինքն երկնային երանութեանցն։ Որում իբր ուխտի [illegible], ամէն ասելովն, որ է եղանակ երդման, [illegible], ծանուցանելով զանփոփոխութիւն խոստման քո, և արքայութեանն՝ զոր ետուր նմա, [illegible] զնոյն իսկ աւազակն 'ի խաչի անդ անարգութեան. որով ինձ մերժեցելոյս և յուսահատելոյս ետուր յոյս փրկութեան։ Զերջանիկ աւազակն, ասէ, ոչ անարգելով կամ չկեալ վասն քոյ. քանզի թէպէտ 'ի խոստովանել նորա զքեզ անպարտ ամենայնիւ, և ճշմարիտ Թագաւոր, յայտ է թէ հրեայք մատնեալ կատարեցան ընդդէմ նմա, բայց ոչ վասն այնր գաւանութեան եղև խաչեալ նորա և խորտակելն. քանզի և ընկեր նորա, որ հայհոյիչ եղև քոյ, խորտակեցաւ 'ի բարձան։

3 [illegible]։ Զօրութեան ոյ օրինակի յաջ կամ 'ի բազուկ աջոյ, յորժամ երևի 'ի գործս մեծամեծս արտաքոյ կարգի. զոր օրինակ զազատութիւն իսրայելացւոց յեգիպտոսէ՝ ասէր աջ աննել բարձր բազկաւ։ Յորժամ կատարէ զամփոփական նախախնամութե գործս, [illegible] կոչի. իսկ յամենայն մանր խնամս, կամ 'ի գեղեցիկ յօրինուած արարածոց՝ [illegible] ասի. զի արհեստք մատանց վճարին։ Նա ասէ [illegible], [illegible]. զի յամենայն 'ի մանր և 'ի փոքրագոյն գործս՝ զօրութեան ոյ մերձ կայ, և առանց այնր չլինի ինչ։ Արդ այսպիսի գոլով քո՝ ամենազօր, [illegible] ասէ, անուես արա զբաղեալ չարիս իմ. որք քեզ միայն թուելի են. և [illegible], անգէն վաղվաղակի առից համարձակութիւն. որպէս զաւազակին անուես արարեր խաղաղ, իբր այն թէ ընաւ գործեալ ինչ ալլուտ ոչ էր. նոյնպէս և ես՝ թէ առատաձեռնես ողորմութի, այժմէն 'ի քեզ միացայց, ըստ որում և զաւազակն բնակակից քեզ ընկալար 'ի դրախտին։

# ԲԱՆ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Բժշկական կրթականութե՛ ¹ ամենախոհեմ հնարաւորութեամբ պատճառ կենաց անախտականաց, թագաւոր զօրաւոր երկնաւոր՝ տէր Յի՛ս Ք՛ս. ա՛ծ ամենեցուն, իմանալեաց և տեսականաց. ² ահա դու 'ի յիս ըստ մարգարէին՝ որ ընդ ասելոյն՝ նոր կցորդութեան. առ որ բարեզարդ դաշամբ այս բանի ընդ քեզ միա_

թեան, լուսաւորեցոյց կրկին ողջացեալ հոգւով և մարմնով, ամենայնիւ կարող և անվախճանելի։

Բ. Որ [3] ոչ կարօտանաս սպեղանեաց առ պատրաստութիւն պատանաց հոգեկան վիրաց, ոչ ժամանակի, ոչ միջնորդի, ոչ աւուրց երկարաձգութեան, ոչ փոփոխս մատուցանելոյ, ոչ հատման, ոչ խարման, ոչ արագործութեան, ըստ երկրաւորս դեղատուութեան, առ որս միշտ է վրիպութիւն և ամենախառն տարակուսութիւն։ [4] Զի քեզ արարչիդ հոգւոյ և մարմնոյ ամենայն ինչ լուսաւորեալ է, ամենայն ինչ առաջի է, ամենայն ինչ գրեալ է, ամենայն ինչ դիւրին է, համայն հնարաւոր է, իմաստն գլխաւորեալ է, խոստումն լցեալ է, կամելն կատարեալ է, քո կոչելն աւետարան է, քո վճիռն ազատութիւն է, քո մատեանն շնորհ է։ Ոչ փակեալ ես ընդ օրինօք, ոչ պարունակեալ ես ընդ կանոնաւ, ոչ արգելեալ ընդ նուաղութեամբ, ոչ խոնարհեալ ընդ հնազանդութեամբ, ոչ պարագրեալ ընդ փոքրկութեամբ. ոչ չափեալ ես ընդ սահմանաւ, [5] ոչ վրիպեալ 'ի բարկութենէ, ոչ այլայլեալ ինչ 'ի ցասմանէ, ոչ սխալեալ 'ի խստութենէ, ոչ ամբոխեալ 'ի խռովութենէ, ոչ դղրդեալ յանդգնութէ, ոչ փոփոխեալ յողորմութենէ, ոչ պակասեալ 'ի բարձրութենէ, ոչ լքեալ յայցելութենէ, ոչ տկարացեալ 'ի փրկութենէ։ [6] Դու սկիզբն և լրումն ամենայնի, և 'ի քեն է ամենայն. և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն։

---

1 ԱՄԵՆԱՔԱՋ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ։ Ամենևին անգետակ ճարտարութեամբ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՐԹԱՑԱՆՈՒԹԵԱՆ, բժշկական հմտութե կամ արհեստի, պատճառ ես անսխալ կենաց։ Թուի ընկերայն զեկուցանել, թէ բայց յամենագէտ իմաստութէ և յազգոյ կարողութէ՝ որով ճանաչես և բանիւդ կարող ես զամենայն ցաւս, ունիս և զհամայն ցաւոց զփորձն և զանզեկութիւն՝ յորմէհետէ սխալացան մարդիկ 'ի սկզբանէ աշխարհի։ Ապաքէն բժիշկ ճարտար այն համարի առ մեզ՝ որոյ բազում իցէ փորձ. և զինչ կարծիք՝ եթէ ոք լինէր անգետակ անձամբ համօրէն ցաւոց պատահելոց 'ի սկզբանէ անտի։

2 [illegible] 'Ի ՉԻՔ։ Վաղվաղակի լեր դու 'ի յիս. ըստ . . . ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ, մերձաւորութեն՝ խոստացելոյ 'ի ձեռն մարգարէին, թէ ըստ առաջին միոյ գալոյ. որ է բանն եսայ. (ծբ. 9.) « Մինչդեռ խօսեսցես, ասասցէ՝ թէ աջաւասիկ հասեալ կամ »։ Որով զաշամբ այսր բանի միանալոյ ընդ քեզ. [illegible], որպէս և ասէր (անդ 8.) « Յայնժամ ծագեսցի կանուխ լոյս քո »։ ԿՐԿԻՆ ՈՂՋԱՑԵԱԼ հոգւով և մարմնով, որպէս և ասէր. « Բժշկութիւն քեզ վաղվաղակի հասցէ »։

3 Ոչ [illegible]։ Զմարդկային բժշկայն զանազան կարօտութիւս 'ի թիւ արկեալ, ցուցանէ զերկնաւոր բժշկին զանկարօտ զօրութիւնն 'ի բժշկել։ Դու, ասէ, ոչ միայն ամենարուեստ ճարտարութե՛ պատճառ կամ՝ ներգործող ես կատարեալ կենաց, այլ և ինքնին քո միանալովդ բժշկես անվրէպ։ Ուստի ոչ կարօտիս [illegible], 'ի կիր առնուլ ազնւ֊ ղանիս (մէհէլէմ,) և պատրաստել զայնս առ 'ի պատուելոյ զվէրս հոգւոց։ Ոչ կարօտիս [illegible], որպէս մարդ բժիշկ չկարէ երբ և կամիցի՛ առնուլ զդեղ, այլ ընտրէ զժամ ցրտոյն և ջերմոյն. և եթէ զպակաս ինչ գոր֊ ծանէ, ապառէ հասուցանելոյ, և այլն։ Ոչ կարօտիս [illegible], այսինքն օգնականի, գործակցի, ծառայողի. կամ, ոչ Յիսուս բարեխօսի և աղա֊ չաւորի՛ առ 'ի գործածն առնել հիւանդին, որպէս անմինք 'ի մարդոց բժշկաց հազիւ բազում աղաչանօք շարժեն 'ի անուշութի հիւանդին։ Ոչ կարօտիս [illegible], որ յորէ ձգելոյ զդարմանն. զի ոչ կարէ մարդն փարատել զախտն 'ի միում ժամանակի, այլ մեղմով, տակաւ տակաւ։ Ոչ կարօտիս [illegible], այլ և այլ դեղս տալոյ առ 'ի փորձել, կամ զնոյն դեղ առեալ կրկնելոյ կամ զանդեղին փո֊ փոխելոյ, մերթ 'ի գլուխ դնել, մերթ 'ի կուրծս, մերթ 'ի բազուկսն, և այլն։ Ոչ [illegible], հատանելոյ զվէրակ, կամ զխաղխաղթ, կամ զուե֊ լորդ խուլ ինչ։ Ոչ [illegible], ջերմացեալ երկաթով խարելոյ զմիս փը֊ տեալ, կամ զարմատս ուռուցից։ Ոչ [illegible], կարելոյ սրով զանդամ փտեալ, կամ սուր գանակաւ և ածելեաւ խզրատելոյ զմար֊ մին։ Ոչ կարօտանաս այսպիսի հնարից ըստ երկրաւորս [illegible], զարմանատրութե՛ դեղոց և բուժմանց. — [illegible], 'ի դարմանս մարդ֊ կային բժշկաց՝ թէպէտ և բազումս և զանազանս 'ի կիր առնուն. սա֊ կաւին [illegible], այսինքն յաճախ սխալումն լինի կամ 'ի չճանաչելոյ ըզ֊ պատճառս ախտին, կամ տալով դեղ անյարմար, կամ չտալով 'ի դէպ ժամու, և [illegible], առարկուածոք գործեն. յա֊ մենայնի կասկածելով սխալել. և 'ի մատուցանելն զարմանս ներքին անյայտ ախտից, գրեթէ միշտ 'ի փորձ փորձն՝ առնել օգտիցէ, և կամ ոչ։

4 Այլ [illegible]։ Դու քանզի արարիչ ես հոգւոց և մարմնոց, ամենայն ինչ քեզ [illegible] է, պայծառ, յայտնի է։ Այս և յա֊ ջորդին խմանին ընդհանուր առ ամենայն իրս. բայց առանձինն թերևս ըստ բժշկական ներգործութեանց յարմար ես է առնուլ. այսինքն որ ինչ առ բժշկութի պիտոյ է, ամենայնն քեզ յայտնի է, պատճառ հի֊ ւանդութեան, դեղն, ժամանակն. ամենայնն առաջի քո առձեռն է. ա֊ մենայնն [illegible] է, իբրև գրով բացատրեալ է. որպէս և բժիշկք գրեն վասն հիւանդութեան և վասն դեղոցն. ամենայնն [illegible] է. հնարաւոր, դիւրագործ և կարելի. և ոչ որպէս որ 'ի մէնջ բժշկացս, որոց ոչ միշտ դիւրին է գտանել զդեղն զոր խնդրեն։ [illegible], ճանաչումն քո, մատ֊ ծութիւն, կարգաւորութիւն գործովք ճմարտեալ է. [illegible] լցեալ է, կատարեալ զխոստացեալդ. որպէս ասէիր, ես եկից և բժշկեցից։ Կ֊ ձջ կատարեալ է. որպէս յաւէտ, կամիմ սրբեաց, և փողփողակի սրբեցաւ բորոտն։ Բ. [illegible]. այն զոր մարմնաւոր բժիշկք ազդ առնեն հիւանդին վասն զկտակն յօրինելոյ, մահու գուշակ է. իսկ դու յոր֊ ժամ կտակ առնել հրամայես, ուեմբ կենաց է յայնժամ. որպէս եզե֊ կիայ արքայի ծառայի բերանով եսայեայ՝ հրամանս առեալ վասն տանն. սակայն ընդ այնու ուեմբ կենաց եր ծանուցեալ։ Բ. [illegible], յորժամ վճիռ տաս՝ ասես, ոչ մեռանիցի՛ այլ կեցցէ, այն իսկ ազատութիւն է. որպէս յաղագս ղազարու ասացեալն՝ այն հիւանդութի չէ 'ի մահ, առաւել եղև յարութեն նորա։ Բ. [illegible], ըստ մարմնոց բժիշկն մա֊

տեան համարոյ մատուցանելով առ հիւանդն և կամ առ ընտանիս նորա, ծանուցանէ զծախս դեղոյն, և զվարձս բժշկութեան և զծառայողայն. բայց դու, ասէ, առաջի դնես հիւանդին զշնորհն զոր արարեր, ասելով ահաւասիկ ողջացար, այլ մի մեղանչեր. կամ, ահա որդի քո կենդանի է. կամ, լուծէք և թողէք երթալ, կամ, տուք նմա ուտել:

Զվերջին երիս բանսն, [illegible], [illegible], [illegible], ընդհանրապէս եթէ իմանամք, մեկնելի են. քո նոր կտակդ ոչ երբէք զկտակն հին՝ անէծս և թշուառութիւս գուշակէ, այլ օրհնութիւս, բարութիւնս աւետարանէ: Քո վճիռն արարեալ այժմ ոչ երբէք զմարդկան վճիռս՝ պատուհաս հրամայէ 'ի բանտ, 'ի տուգանս, 'ի մահ, այլ ազատութիւն շնորհէ 'ի մեղաց և 'ի պարտեաց: Քո մատեանն որով կանոնս աւանդես, ոչ երբէք զմարդկան դատաստանագիրս իւրաքանչիւր յանցմանց և յանցուցելոց պատիժ սահմանէ, այլ ներողութիւն, թողութիւն, երախուն, յորդոր 'ի զղջումն. և եթէ սպառնալիք են կոչեն, առ 'ի ներել է. այլ և զոր գործելն հրամայէ, յաջողէ շնորհօք. և ոչ երբէք զհին օրէնսդրութիւն՝ տայ միայն զպատուիրանն առանց ձեռնտու օգնականութեան:

5 Ու փոփոխումն: Ոչ գոյ 'ի քեզ բարկութիւն, որով սխալեցիր. ոչ [illegible], որով պղպջեցիր. ոչ [illegible], որով յանդգնութիւն խառորցիր. ոչ [illegible], որով ամբոխեցիր. ոչ [illegible], որով չփոթեալ տարակուսեցիր: Այլ հաստատ այսոցիկ՝ անփոփոխելի ողորմութիւն, քաղցրութիւն, և այլն:

## ԲԱՆ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն ալերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Աստուած անսահման, ծնունդ ոչ հարազատ անթարգմանելի, արարիչ բնութեան եղելոց, Որդի Թագաւոր, լոյս 'ի խաւարի սրտից մթացելոց. Ընդ մեղլմամբ և ընդ ապաքչիդ խոկութեամբ, մերայնովս գքոյինող ծանուցանող հրաշապէս: Հայր քո օրհնեալ երկնաւոր անճառ՝ որ առաքեացդ զքեզ 'ի վերուստ, [2] ում փառակիցդ ես արարչութեամբ. այնքան հօգացաւ փրկութեան իմոյ տարագրելոյ դերւոյ, մինչև զքեզ իսկ մատնեաց մարդկան: Իսկ դու կարող գոլով 'ի վեր քան զմիտս, զանտեսութեանն աւարտեալ խորհուրդ՝ հաճեցար ընդ պարտեցելումս զմահուն ճաշակել բաժակ անթերի մարդկութեամբ և անպակաս ա̃ծութեամբ: Եւ հոգիդ սուրբ կենդանարար՝ որպէս քո և Հօր քոյ

խնկակից, և համապատիւ էութեամբ ծնողին և ծնի-ցելոյդ ։ Մի Երրորդութիւն կատարեալ 'ի դիմաց երից անորոշելի հատուածոյ, անսկիզբն և անժամանակ, բնաւին բարերար, համայն կենդանարար, բոլորից խաղաղարար, ստեղծիչ գոյից և յօրինիչ ամենից, անքակութեամբ և միով բնութեամբ փառաւորեալ ։

Բ. Իսկ [3] եթէ հայրն գթած երկնաւոր հզօր՝ մին յէութենէ՝ վասն մահապարտիս յանցանաց մարդոյ ըղմիայնակ ծնունդդ յանքնին ծոցոյն, ոչ անխայեալ յորդիդ 'ի համապատւեդ և 'ի սիրելւդ, այլ կամաւ նուիրեաց մահու չարչարողացն զինու, ըստ մարգարէութեն Զաքարիայ. վասն զի զարթնուլ սրոյն 'ի վերայ հովուին, և հարկանիլ նոյն ինքն հօտապետին, և ցրուիլ ոչխարացն հօտին, որպէս օրինակն [4] նուրբ նախագրին և ուխտադրութիւն խորանին և նուիրումն արեան սպանդին և առակ խորհրդոյ աբրահամեան պատարագին, զփրկութիւն թշուառացելոյս 'ի կամաց կեցուցչիդ յառաջագոյն նկարագրէր. և արդ հիմ տրտմիս անձն իմ կործանեալ՝ ոչ յոմնուստ հնարաւորութեց, այլ 'ի բումդ ինքնագործ հակամիտութեանց. կամ ընդէր զիս խռովես՝ յուսահատութեամբ սատանայականաւ զմիտս հարեալ. յուսա յա՛ծ, խոստովան լեր նմա. և նա հոգայ վասն քո, ըստ դաւթեան սաղմոսին, [5] և այլ մարգարէի կենսախրախոյսն բանի ։

Գ. Իսկ [6] յեղանակ խնամարկելոյ հաստողին 'ի վեր է քան զսահման կշռութեան մտաց հրեշտակաց և երկրականաց. և եթէ բիւրս կրկնեսցի, ոչ լինի չափեալ. քանզի անբովանդակելոյն և բարերարելն է անճառելի ։ Եւ զի [7] ամ՛ն օրհնեալ զամ՛ն օրհնաբանեալ յերրորդական համագոյութենէն առաքեաց. իսկ նա 'ի հաճութիւն կամաց առաքչին մեռաւ. և միւսն աչաւոր՝ 'ի յերկուցն հաւանութիւն՝ մեծաջան բաղձանօք մաղթէ ։ Իսկ [8] համաբարւոյ միակամութեանն ցուցակ՝ առ 'ի ըղնոյն բարի ներգործել, որպէս հոգին կենդանւոյն և բանն բանականին, պայծառութիւն փառացն և կերպարան էութեանն ։ Նա կեանն փոյթ, առ ողորմութիւնն սթափ, առ ձեռնկալութիւնն պատրաստ, առ փրկութիւնն կազմ, առ առատութիւնն յորդ, առ յաճախութիւնն զեղուն, առ անբաւութիւնն լի, առ ամենա-

գթութեանն փարթամ, առ երկայնմտութեանն Տեառն, առ անհնարութեանն բարձրելոյ. մի Երրորդութեան կատարելոյ 'ի յանձանց երից, որ օրհնեալ յաւիտեանս. ամէն.

---

1 [illegible]. Ընդ մեզ են կատարելապէս մարդկութեամբն. և ընդ առաքելոց Հօր [illegible]. խոկալիս բնութիւն ածութեան. [illegible], մերով մարդկային բնութեամբս գոլին ամենակալ ծառայական հրաշալի օրինակաւ.

2 [illegible]. 2 [illegible]. Հայրն քո երկնաւոր՝ առ 'ի փրկել զիս, ասէ, զգերեալս 'ի սատանայէ, անչափ հոգալութեամբ գթաց զմիածին մատնեալ վասն մեր. իսկ դու որպէս արարչութեամբ փառակից ես նմա, նոյնպէս գթութեամբ նմանող եղեալ, մինչ կարգեալ էիր 'ի [illegible], առանց խղճի վճռոյ կատարել զգործ անմեղութեան, հանձն առեր [illegible], փոխանակ պարտաւորիս՝ յանձն առնուլ զմահ զմեղաց, զոր մարդ կատարեալ, որպէս և ած կատարեալ. ի նոյն կամաւորեալ և Հօրն առ ըստ, որպէս և կամեալ երկոցունց, բանգնացեալ առ ըստ երրորդութեան հոգացեալ առ իմ փրկութիւն. Այլ էր վասն այսչափ հոգալ 'ի վերայ իմ. միթէ խնամ փրկութեան կարօտ ինչ էր, նա որ անմահական և անախտ, բոլոր բարեկամ, յիրաւի կոչել փառաւորեալ. և այլն. Նախ սա, և երկրորդ 'ի կատարածին, [illegible], խնամք՝ յերից անդամանելի աստուածութեան կատարեալ են՝ եթէ ըստ միութեան, և եթէ ըստ երրորդութեան. այսինքն ծայրագոյն անճառ միութեամբ ըստ էութեան, և ծայրագոյն զանազանութեամբ ըստ անձանց. ոչ նոյնութեամբ էութեան միաւորելով զանձինս, և ոչ որոշմամբ անձանց բաժանել զմիութիւն էութեան. այնպէս խոկութիւն մի, որ երրորդութեամբն չբաժանի, և այնպէս կատարեալ երրեակ, որ միութիւն չբաժանի. Դարձեալ, այլևայլութիւն անձանց ոչ անկատար կացուցանէ զմի անձն քան զմիւսն. Այլ երրորդականն թիւ բովանդակէ ամենայն կատարելութիւն. լինել միոյ ածութեան յերիս անձինս՝ ցուցանէ ծայրագոյն կատարելութիւն. և է յատուկ ծայրագունի բարւոյն եթէ. Զայս ամենայն անճառ խնամս ածայինութեան փակէ յիրաւի այս բան կարճառօտ.

3 [illegible]. Իսկ արդ եթէ Հայրն երկնաւոր այնպէս հոգայ 'ի փրկութիւն իմ, ասա [illegible], ընդէր ասելս մի անձն իմ կորուսանել ոչ [illegible], ոչ յինքնալին Հայրամբն, այլ 'ի քո կամս զործեալ [illegible], այսինքն 'ի յանարութենէ կամ 'ի զինեցանեն առ չարն. Այսպէս կարապետեալ է բանս, իսկ այլքն են ընդ մէջ անկեալ բացատրութեան փրկագործ կամացն Հօր. Ոչ ինչ յեղեալ, ասէ, 'ի սիրելիք, այլ կամաւ նուիրեալ [illegible]. այսինքն նուիրեալ կամ մատնեալ զինա կամ գործարանի չարչարողացն մահուամբ, կամ առ 'ի մահ. Այլ այնպիսի կամաւորական նուիրումն, զի և կանխաւ 'ի Հին Կտակարանս մարգարէիւք յայտնեալ, և օրինակօք նախատպաւորեալ, և այլն. Ասա ընդէր խաւսես զիս անձն իմ, [illegible], որ 'ի սատանայէ չարչարեալ, կամ որ յատուկ է սատանայի վասն անզգամութեանն.

4 [illegible]. Որպէս օրինակն զաղանի նախատպին, այսինքն Հայրենի. որ անպարտ սպանեալ, առաջին տիպ եղև քո՛ի զենմանն. կամ, ըստ Հին բանի. օրինակն մախանի՝ որ բազկատարածութեամբն եղև օրինակ քո՛ի խաչելութեան. և ըստ այսմ [illegible] խնամի առաջին զլոյն.

Եւ ամենազօրութեան խորանին, զորով ցանկայ մանկանց զարմին ուխտին էր (Եբր. Թ. 20. 21.)

5 Նա որ ծագեցեր։ Բազում են առ մարգարէս այսմ նման բանք. որպէս Եսայ. Խ. 31. Ոգր. Գ. 24. 25. Դանիէլ. Ա. 7. և այլն. Բայց թուի խնամով և գովելի բանն առ յախտափառ աղբայ յաւգայ (Բ. Թագ. Ի. 15.) « Որ է ձեր պատուիրակել, այլ էր »։

6 Յերկնային խնամակալն։ Իսկ յերկնային խնամարկելոյն էր ոչ կարէ կշռել մտաք՝ ոչ միայն մարդկան երկրածնաց, այլ և ոչ հրեշտակաց անգամ. և եթէ բիւրեցս կրկին կշռեսցին, չափ ոչ գտանի. քանզի էր որ անդրանկագոյն է բնութիւն և զօրութիւն, նաև բարերարելի է անպատմելի։ Երկնային խնամարկելոյն այն է՝ զոր նախ առաց, և զինի առջադրեալ. այսինքն էր Քրիստոսիւ զխօսք հոգւոյ զփրկութիւն մարդկան, ոչ արժանաւորաց և հաւատարմաց, այլ ապաշնորհաց և թշնամեաց. և զայն հոգւոյ միածնում, և այն մահուամբ նորա, և զայն՝ կանխաւ հաստատելով մարգարէիւք և օրինակօք. և այն՝ 'ի նոյն կարգաւորելով զամենայն զաւրս անգելայս. և յայտագին խնամս բաժանման սուրբ երրորդութիւնն պարգևեալ. Բնութ. որ միայն չափել կարէ զխորութիւն սիրոյն էր։

7 Ով որդին Հայր Հօր, ... որդինին միածին ամենակալեաց. և ... հոգին սուրբ 'ի ... 'ի հաճութիւն հօր և որդւոյ ... ամենայն կամօք մարդնի. ուստի երեքին անձինք են պատուիրեալ են 'ի խնամս քո անձն իմ պարտաւոր։

8 Համաբարբառ։ Եթէ խնդրես, ասէ, ցուցանել կամ օրինակ այսր համաձայնիչ միաբանութեան երից անձանցն առ 'ի մէջն բարի ներդաշնակել, այնպէս խմա, որպէս Հոգին՝ լինգալեցին. որպէս կենդանին ոչ կայ և ոչ գործէ առանց հոգւոյ, և ոչ բանականն առանց բանին կամ մտաց. և ոչ փառքն արտաքին առանց պայծառութեան. Եւ ... , և ոչ էութիւն իրաց առանց կերպարանի կամ անտակի նոցա։ Այսպէս ոչ է, և ոչ գործէ հայր առանց որդւոյ և հոգւոյ։ Ուստի երեքին են միաբանակ են առ ... , և այլն։ Նա ... աներևութեանցն լի են. աննուաղութեանցն փառօք են. անհասութեանցն բարձրեալ են։ Բառն համաբարբառ ոչ է սեռական, այլ ուղղական, և նոյն իսկ համարարոյ բառն՝ իւիս գրեալ բառ ամփոփութեան բազում ձևոցըրոյ. զի և յայլ բառս առնէ. որպէս գլխերոյ, մարգւոյ, թեւրոյն, փայլեմարարոյ. և այլն։

# ԲԱՆ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

*Վերստին յաւելեալ կրկին հեծութեան նորին հակոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի·*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

*Ա. Եւ արդ յոյս բարեաց անկեալ ՚ի սրտի՝ անձն իմ կործանեալ, եւ զօտեաւն հաւատոյ սնդեալ զերկ-կամանցդ երկակի մասունս՝ [1] զկրկնապատող խորհրդոցդ զցանկականիդ գործարան, խոստովան լեր բարերարին իմ՝ զմտացդ իբրեւ զգործոց, զխորհրդոցդ իբրեւ զլու-թեանց, զանտեսիցն իբրեւ զյայտնեցելոց, զսրտից ծած-կութից իբրեւ զբարբառումն ձայնից, [2] զակնարկութեցն իբրեւ զարգելնականաց մեղանաց, [3] զողդել շրթանցդ իբրեւ ՚ի գլուխ ելելոց չարեաց, զոտիցդ հետոց իբրեւ զպա-տուիրանաւն իմ փախողաց, [4] զձեռացդ ձգումն առ յա-ռումն իբրեւ ՚ի հեղումն արեան գործոյն, [5] զծիծաղելն բնաւին իբրեւ զկամաւորական լքումն շնորհի, [6] զերդ-մնականն՝ որ թէ ՚ի հանդէպս թէ ՚ի տարադէպս՝ իմ զգործակցութիւն խաբողին, զամբարտաւանութիւնն իմ զհին կործանիչ նախաստեղծին բարձրութեան, զսրտին նեղութիւն իբրեւ զթերութիւն հաւատոյ, [7] զմեղկութիւնն իբրեւ զպարտութիւն զօրաւորին սնոտու-թեան, զսրտանջն առ փափկս կրիցն՝ իմ զուրացու-թիւն ուխտին որ առ տէրն, [8] զապերասանութիւնն իմ զթոյն իմն անզգութեանն, զամբարհաւաճութիւնն [9] իմ ոչէինչ առ վեհն գոռոզութիւն, զհպարտութիւն [10] իմ զկամաւոր հնարագէտ գտողին չարեաց, զակամայիցն ընդ կամաւորացն, [11] զբռնացելոցն ընդ հաւանականացն, զեկամտիցն ընդ բնաւորականացն, զանօրէնութիւնն ընդ ապստամբութեանն, զփոքունսն ընդ սաստկա-գունիցն, զնուազունսն ընդ յոլովիցն, զանճառիցն իմոց իմ զճառելեաց գտողին, զանցրելոց փառացն իմ զնկարելոց տեսողին ՚ի յարձան [12] մագնետիս վիմի, զթեթեւագունիցն [13] առ խորին մտաց իմ զաստուար ծան-րութիւն բեռանց, [14] զխնդիր չարից ծածկելոյն իմ*

զծնցող պաշտմնքումն սատերն սակի 'ի բերանոյ կնոջն կորուսի չորեքդրամեան կշռութեանն, [15] զանդնդականացն գործոց իբր 'ի յակմնքս ոչ արար ժամանելոյ. Օ այսօսիկ յաձախեա կուտեա կրկին յանձնառութիւ, վերստին պատմեալ աստանօր մեծաւ հեծութեամբ [16] զչեայն իբր զեղելոց, ընծայեալ ոչ զպարտութիւն վաճնեցեալ անձինդ. զի ընկալցիս 'ի փոխատուէն զշնորհօք թողութիւն [17] պարտուց մեղաւորին, զոր տեսին արդարացոյց և հրաշափառապէս հաշակեաց, ամենապատիկ ներբողիւ կրկնեալ զգովեստ զդշմանն քան զպարտաւանս մեղացն.

Բ. Նորոգեա և զիզեա անձինդ մեղապարտի բամբասանս յորունս զքոյսն [18] խոհերս բազմամանեայս, անձն իմ կշտամբեալ յորնախաթանդ բանիւ. զչարութիւնն, զանօրէնութիւնն, զվրիպութիւնն, [19] զառ 'ի մարմին համդխոն փախուստ, զպարտութիւնն, զմոլեգնութիւնն, զամբարշտութիւնն, զապշութիւնն, զթըմբրութիւնն, [20] զքունն արթնական, զառ 'ի յընթացան զնկրհումնն, զխորհուրդն օտարոտի, զբանիցն նանրութիւն, զզազրութեանն հաճութիւն, զյամենայն 'ի նըմին, զփափագէին ոչ ատելեացն, զաներկիւղութիւնն, զանասատութիւնն, [21] զանհարթութիւնն, զթերութիւն, զթիւրութիւնն, զլուծութիւնն, զծցութիւնն, զանկալ արձակումն, զծխծաղականն, զվինջողականն, զկատակերգականն, զգայթագղականն, զպատրողականն, [22] զանդէպ քաջութիւնն, զանյարմար մարտն, զառանց օրինի արիութիւնն, [23] զխեղդմունս հոգւոյն, զստամոքականն զերկշոտութիւն, զբազմատեսքնեան ձիւղն զբաշխտական, [24] զանպատկառ փարաքմունսն, զգժութիւնն, զգժգմութիւնն, [25] զանգատ ատելութիւնն, զմարմանջմունսն զխըրմբանղականս, զփքունցն զանկշռութիւնս, զխառնմանցն զրժողութիւնս, զուխտիցն մոռացութիւնս, [26] զնմանեացն այլակերպութիւն, զկեղծեացն քողարկութիւն, զփառամոլութեան մրրտութիւն, [26] զյօնիցն յաւակնութիւն, զապիրատութիւնն, զլնքնասիրութիւն, զնախադահիցն տենչութիւն, [28] զհատուցանելն եղեռնականացն, զնոցինն զանչափ աղձատանն, զվայրապար բերմունսն, զընթացկութիւնն խորամանկութեան բանսարկուին, զբա-

նին [29] սերմնակաթութիւն, զվաճառումն կենացն ընդ գնոց սատակմանն, զկորուստ աւանդիցն, զհայրենեացն ծախս, [30] զկատարումն ձգողական, զփոխել ըծոյ երնջոց անխզելի ըմբռնմամբ զանօրէնութիւնս, [31] զյարաթաթաւ տղմաբնակութիւնս, զլքումն լաւացն, [32] զընթադրութիւնս անկարծիցն, զկնի դարձին առ նոյն դարձ դաժանական, [33] զնորոգ մտացն, զօտար խորհրդոցն, զանկայուն կամացն, զհաչման հաղագին, զէութիւն ճնչոյն, [34] զեւս քան զսահման կանոնացն գլութեան՝ զիշխանականին զամենատիւ բացարձակութի, և զոր չէ ճառելի և կամ գրելի և կամ պատմելի և կամ յերեւս գիմաց բերելի ։

Գ. Եւ արդ զիա՞րդ բժշկեսցիս, անձն իմ եղկելի, 'ի յայսքանեաց տիգաց խոցոտեալ, բարձեալ թողեալ այր մի [35] տարագիր անողջանալի . ըստ մարգարէին . քանզի մի 'ի վերագրելոցդ բաւականացէս զորէ սատակման, թող թէ այսքան դասք ապանողաց դժնէից դահճաց շուրջ պաշարողաց ։ Մանաւանդ զի [36] ոչ այսու եւեթ նմանագրութեամբ կշռի տարացոյց տարժանեցելոյս, այլ զոր օրինակ անթիւ բազմութիւն կայտառաց կարճաց խայթողականաց՝ 'ի տարրին մասունս ծայրից ոլո-նոյն զօրհասական թոյնս բերելոց, և յաման մաշկեղէն արկեալ ամփոփէ զէլիցն շաւիղ կապարանին շրջափակութեամբ, ցուցանի արտաքուստ բարւոք, իսկ 'ի ներքուստ համբարք չարի և պահեստ կորստեան և կոյտ կսկծման և գործօնեայք սատակման և մշակք մահու ։ Արդ [37] այսոքիկ են ամբարեալքն քո անօրէնութեան տաժանեաց թշուառաքիրան թոշակք, [38] անձն իմ պարտական կրկին սատակման . որ կամաւորաբար ընկալար 'ի քեզ, զոր թշնամին սերմանեաց 'ի վերայ ցորենոյն՝ յագարակի աշխարհիս . ով այր անմաքուր՝ ամբարիշտ և ծոյլ, ընաւին առեցեալ, սիրողդ մտացդ ախորժմամբ զցեալն ամենայն անառակութեամբ, և զոր առաքեալ ցուցանէ զթիւս բանիցն սարսափելեացն կշտամբողաց, սաստուստ սկսեալ մինչև 'ի կատար կանոնի այնր պայմանի, և որ հասեալ են, ասէ, յո՞յ իրաւանցն վերայ, եթէ որք զայսպիսին գործեն և կամ կամակից են, արժանի են մահու ։ Արդ ես ինձէն զիս ինքն պարտ վարկայ կրկին հատուցման կորստեան սատակման 'ի մահ

դատապարտութեան. այլ 39 անխայեա յիս ողորմութեամբ՝ բարեգութ, կենդանի, հզօր, կամարար, կարող, հնարաւոր, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

1 [illegible]։ Զկրկին մասունս երկկամանցդ որ է գործարան ցանկականին կրկին պղտորիչ խորհրդոց, այսինքն ախորժութեան առ հեշտալին կամ առ չարս, և անախորժութեան առ արտմալին կամ առ բարին. կամ զի կրկին կիրք ծնանին 'ի ցանկականն, այսինքն ցանկութիւն յախորժելին, և փախուստ յանախորժիցն։ Արդ ակնդեալ, ասէ, հաստատեա զմէջս ցանկականիդ, խոստովան լեր [illegible], որում ամենայն ինչ յայտնի է, զմասդ մեղան իբրև զգործոց, զանկրակյթն իբրև զանսալ, և այլն։ Աստուծոյ այսպէս խոստովան լեր. իսկ քահանային՝ այնպէս որպէս և իրօք եղեալ է. այսինքն զմեղաց իբրև մասց, զաչացն իբրև աչաց, և այլն։

2 [illegible]։ Զհայեցուածոյն. [illegible]. իբրև արդեամբք կամ արտաքին գործովք եղեալ մեղաց։

3 [illegible]։ Զխօսելն կամ զբանս բերանոյ խոստովանեա [illegible] 'ի [illegible], իբրև գործովք վճարեալ չար։ 3 օր. [illegible]։

4 [illegible]։ Զբարկութիւն չարժումն ձեռին խոստովանեա [illegible] 'ի [illegible], աշխատողի կամ գործողի 'ի հեղումն արեան. կամ, գործողի զհեղումն արեան։

5 [illegible]։ Զհամարձակ և զանխափր ծիծաղելն, [illegible]. իբրև զկամաւ թուլանալ 'ի շնորհէ համեստութեան և զգօնութեան սրտի. զի անժամ ծաղր՝ նշան է թուլացելոց 'ի բարեկրօնութենէ. որպէս ասաց ծերն (վարք հարց. հտ. ա. 538։)

6 [illegible]։ Զերգնուլն ասանց հարկի, թէպէտ և 'ի [illegible], 'ի պաշտաման իցէ, և թէ 'ի [illegible], յանդէպ իցս, զի երդումն թէ և ճշմարիտ իցէ, առանց հարկի արարեալ անխափր, անպատուութիւն է անուանն այ, և վտանգ ստելոց յանպարժան և 'ի սուտ երդմունս։ Արդ զայնպիսի երդմնական բանս խոստովանեա իբրև զգործակցութիւն [illegible] սատանայի, կամ իբրև զնման գործ խաբեբայ մարդոյ։

7 [illegible]։ Զթուլանալն 'ի գործս առաքինութե [illegible], իբրև զյաղթիլ զօրաւոր առաքինեաց. կամ, իբրև զյաղթիլ և անկանիլ զօրեղ ակնդութեան և արիութե. կամ որպէս թէ յաղթեալ իցէ զօրաւորն մեր քն. զի լրումն զինուորին՝ համարի լրումն զօրագլխին, որպէս ասի զքաջն յուդայէ մակաբեան (ա. մակ. թ. 7.) թէ 'ի վատասրտիլ զօրաց իւրոց՝ լուծաւ, լքաւ, անկաւ։

8 [illegible]։ Զանհնազանդութիւն, զգիմադարձութիւն խոստովանեա [illegible], իբրև զծնունդ անողորմութեան. զի անհնազանդութիւն մեծ վկայս հաստատանէ բարի հրամայողին. կամ զի յանհնազանդութէ առ իշխանս՝ բազում վնասք ծնանին 'ի քաղաքն և 'ի ժողովուրդն։

9 [illegible]։ Զլուկ ամբարհաւաճելն խոստովանեաց իբրև ունայն և մնոտի իրք գոռոզանալ հակառակ վեհից կամ իշխանաց։ 2 օրին. [illegible]։ կամ իբրև համեմատել զանձն առ գերազանցեալսն 'ի մարդկանէ։

10 [illegible]։ Զհպարտութիւն խոստովան լեր իբրև զկամաւոր ծնունդ հայրազատ սատանայի գաղլն չարեաց։ Առաջին մեղք յաւ

խորհի հպարտութիւն եղե, իբրեւ անդրանիկ եւ յոյժ սիրելի ծնունդ սատանայի կամացն։ Բայց 3 օրինակք գնեն, իբրեւ [illegible] հարազատ, այսինքն այնպիսի հարազատ՝ որ ոչ կամի բնաւ տարանալ 'ի սատանայէ, ոչ բնաւ կամի ուղղել, խոնարհել։

11 [illegible]։ Զմեղայն գործելոց 'ի բանութե կամ յերկիւղէ՝ խոստովանեա ընդ [illegible], ընդ մեղայն որք գործին ինքնայօժար կամօք։ [illegible], զստացական մեղայն, կամ զոր չար օրինակաւ եւ խրատու այլոց գործեմք, խոստովանեա ընդ [illegible], ընդ մեղայն որք գործին 'ի բնական կարիս կերակրոյ, ըմպելեաց, քնոյ, եւ այլն. կամ ընդ մեղայն որք յապականութե բնութե ինքնին ծնանին. որպէս եկամուտ է հպարտութիւն, գողութիւն, սպանութիւն, եւ այլն. իսկ բնական՝ ծուլութիւն, անժուժկալութիւն, զանձն արդարացուցանել, ևն։ Նոյնպիսի բանս նախադրութեն ընդ, կամ խմանի հանդերձ, այսինքն զակամայն խոստովանեա հանդերձ կամաւորք, ևն. եւ կամ խմանի փոխանակ, իբր ասել, զակամայ մեղսն խոստովանեա փոխանակ կամաւորի, զեկամուտն փոխանակ բնականաց, զփոքունն փոխանակ մեծաց, ևն։ Զանօրէն գործսն խոստովանեա ընդ [illegible], փոխանակ անաստուածութե, կամ իբրեւ ուրացումն ած. զի անզգամն ասէ 'ի սրտի իւրում. թէ ոչ գոյ ած (սաղմ. ծբ. 1։)

12 [illegible] այսինքն մաղթանաց, յոյժ կարծր քարի։ Զայն մեղսն որք յինէն ոչ անցանեն 'ի գիր, խոստովանեաց ած իբրեւ նկարեալս առաջի նորա 'ի կարծր վիմի անջնջելի, բստ այնմ. «Մեղք յուդայ գրեալ են գրչաւ երկաթեաւ» (երեմ. ժէ. 1։)

13 [illegible]։ Զմեղս թեթեւ կարծեցեալս բստ դատման կամ համարման մարդոյ՝ խոստովանեա իբրեւ զծանրութիւն բեռանց մեղաց։

14 [illegible]։ Զբնութե ողբանութեան մեղայն ծածկելոց 'ի սրտիդ, որպէս [illegible] ապահանջեալ զչափ սատերին ծածկելոց 'ի փոր ձկանն (մատթ. ժբ. 26։) [illegible], բառ յունական՝ [illegible] որ ազգական է, այլ աստ իբր սեռական գնի փոխանակ ասելոյ [illegible]։ Նշանակէ զզրամ ինչ [illegible], չորս տրամ ծանրութե. որոյ արծաթին բստ աժէլիւն էր իբր մի զոլոթայ։

15 [illegible]։ Զ'ի խորս սրտի եղեալ մեղացդ խոստովանեա իբրեւ յերկնիս ժամանելոյ։

16 [illegible]։ 2 օրին. [illegible]. որ առաւել ռամկական հոլով է. բայց գոյ եւ առաջինն. որպէս ('ի կոչ. ընծայ. ժգ. համար 7.) « Իցէ ած կոյն »։ Արդ, ասէ, զչեղելոյն կամ զոչ գործեալ մեղացդ պատմեա իբրեւ զեղելոյ, ոչ ստութե, այլ ճշմարտութե. այնու զի թէ ոչ ևէր պահեր զքեզ, անկանէիր 'ի նոյն մեղս, յոժարս գոլով 'ի չարն, եւ անդադար զգրգռեալ 'ի գիւէն. ուստի վասն նորա եւս պարտապան ես ած իբրեւ պահպանողի. կամ, [illegible], խմս զթողեալ մեղաց, որք թէպէտ եւ ոչ գոն այժմ, բայց դու խոստովանեա իբր թէ իցեն։ [illegible] ած. խոստովանեալ ած զյաղթել քո, կամ զպարտաւորիլդ։

17 [illegible]։ Այս մեղսս՝ խմանի կենն պատնէի, զոր արդարացոյց քն (ղուկ. Է. 41։) 2 օրին. [illegible]. մի օրին. [illegible]. այսինքն շնորհօք թողութիւն պարտուց մեղայն՝ զոր ունէին քանեաց, կամ յարմն արդարացոյց։ Արդ ասէ. զոչ գործեալ մեղս եւ կամ զթողեալսն խոստովանելով ած իբրեւ թէ գոն այժմ, ընծայեա նմա զըս պարտաւորեալն. որպէս զի ընկալցիս զձրի թողութիւ պարտուց մեղաւոր կնոջն, կամ պարտուց մեղացդ. ոչ լոկ արդարանալով, այլ եւ գովութե, որպէս զմեղաւոր կնոջն զարմանալի օրինակաւ հաշտեցաւ քն, մեծաւ գովեստիւ երկին աննշմարելով զզգաստն նորա քան զպար-

տեսանես մեղացն։ Քանզի պարսաւեցաւ նա ծածկապէս 'ի փարիսեցւոցն՝ խորհելով թէ մեղաւոր է նա. բայց քո զգործս զգծման նորա մի առ մի թուելով, զծունրն գլխոյն, զլուացումն և զհամբոյրս ոտիցն, և զորբել հերացն, ասաց՝ թէ վասն զի յոյժ սիրեաց, թողեալ լիցին նմա բազում մեղքն։ Եւ յետոյ կրկին ասաց՝ թողեալ լիցին քեզ. և ապա երրորդ անգամ, հաւատք քո կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութի։ Տեսանես, որչափ առաւելաւ գովեստ նորա քան զպարսաւանսն։ Եւ եթէ այս կլին և ծունրն նորա նոյն համարեցի ընդ պատմեցելոյն 'ի մատթ. իզ. 7. որպէս երեխ կարծել որոյ վարդապետիս 'ի բանն Լ.Գ. 1. առաւել եւս հաչակեցաւ գովեստ զգծման նորա քան զպարսաւանս մեղացն, այնու զի լինելն նորա մեղաւոր՝ ծանուցեալ էր 'ի միում քաղաքի եւեթ (ղուկ. է. 37.) խակ զգծումն նորա և զարձն եղև քարոզելի ընդ ամենայն աշխարհ ըստ տեառն բանին (մատ. իզ. 13։)

18 [illegible]։ Թէպէտ և փոխատուն ած բազմապատիկ քան զպարտսն անձեցոյց զգովեստ զգծացելոյ կնոջն, բայց դու անձն իմ՝ մի սպասեր այնպիսում գովութե. մի՝ զի ոչ զսյդ այնմ մեղաւորի ունիս զգծումն. և միւս՝ զի թէ և ունէիր, քեզ անկ է միշտ զլարիսպ յիշել։ Վասն որոյ [illegible], յաձախեա, բեր յառաջ ոչ զովեստս քեզ, այլ [illegible] բազումս, զքո անզգամ կամ զզարշութիւնս բազմապատիս, [illegible], յոյժ խիթող և կսկծեցուցիչ բանիւ։

19 [illegible]։ Զփախչելն 'ի հօգևոր պատերազմէ. այսինքն, 'ի նեղութենէ, յաշխատութեանց, և այլն։

20 [illegible]։ Զննջելն յարթնութե ժամանակի, զանհոգութիւնն 'ի ժամ գործոյ։

21 [illegible]։ Զերթութիւն, զանմարդութիւն. կամ զանհաւատարութիւն և զփոփոխական լինելն 'ի բարին։ [illegible], զխարի խնայումն ընչից, մարմնոյ, և այլն։ որպէս ընդ հակառակն, [illegible], զանզգուշ կամ զանչափ ընդարձակութիւն յուսալ, 'ի խօսել, 'ի ժափել, և այլն։ [illegible], զցանկական չարժմունսն։

22 [illegible]։ Զանկարգ քաղցութիւն. որպէս արկանել զանձն 'ի վտանգ, ձեռնարկել 'ի գործ քան զկար, մեծարանել 'ի գիտութիւն, և այլն։ [illegible]. զխառն կամ անպատշաճ եղանակաւ մարմնչելն. որպէս թէ ընդդէմ արկարանութե մարմնչել լռութեամբ, և ոչ նուազութե կերակրոյ. ընդդէմ բարկութեան հակելով, և այլն։ կամ անորոշաբար մարմնչել ընդդէմ մեղաց և մոլութեց, ոչ հայեցեալ 'ի գլխաւորսն. 'ի փոքունսն առաւել խղճելով քան 'ի մեծամեծսն. կամ ոչ ընտրելով թէ կայ մեղք և մոլութիւն՝ որում յաղթելի է փախչելով, որպէս հեշտասիրութիւն. և է՝ որում յաղթելի է 'ի վերայ յարձակելով, որպէս անհամբերութի, և այլն։ [illegible]. առանց կանոնի 'ի դժուարինս ձեռնարկել. որպէս անառաջնորդ և ինքնագլուխ վարել յառաքինութիս, առանց աշակերտութեան վարդապետանոյ. մինչև անցեալ ընդ մարմնական ձեռնարկն, զմիաւորութիւնն ընդ այ խնդրել, և այլն։

23 [illegible], որ յանկարգ արտմութե։ [illegible]։ յայլ որին. կիսիւ զաւին. այսինքն զտարակուսանս և զերկչոտութիւս 'ի ձեռնարկութե հօգևոր վարուց, կամ 'ի վերայ թողութե մեղաց, և այլն։ [illegible]. զբազում սանդամբք չառաւիլեալ ձևւյս [illegible], անպտուղս, անգործս. այսինքն զանգործ մասծութիւնս։

24 [illegible]։ Զայս բառ խնդրեան ամանք ըստ հին լուծ. այլ և այլ. կամ պէտպիսութե, որ ոչ յարմարի բանիս։ Ն.յլ

թուի երանել 'ի պարսիկ բառէն [illegible], այսինքն շուն. որ 'ի գիրս եղծէի (երես 138.) գրի բարակ, և յայլ հին ժողոված բառից գրի՝ [illegible]. ուստի և [illegible] նշանակէ զանպատկառ գործ շան. որով մարթ է իմանալ թէ զշնական տափանս, և թէ զընդմիմեանս կատաղումն շանց, որով անպատկառաբար զմիմեանս խածատեն. և այս իմաստ համեմատ գայ այլոց մեղաց՝ զոր զկնի գնէ. այսինքն [illegible], [illegible], և այլն. զի սուրբ վարդապետս սովորաբար զնմանսն առ միմեանս մերձ գնէ։

25 Զ[illegible] [illegible]։ Զատանց քննութեան եղեալ, կամ զանիրաւ ատելութիւն և զխարշումն յայլոց։ [illegible] [illegible]։ յայլ օրին. և հին. լծ. [illegible]. որ ուղիղ ևս է։ Սովորաբար մեկնի՝ եռացումն ցանկութեան, որ գլխաւոր ըմբռնէ զզգայութիւնս։ Սակայն զցանկութեանցն յառաջագոյն ասաց. վասն որոյ թուի իմանալ զընդդէմն նախընթաց բանին, այսինքն անգութ ատելութեանցն. որոյ հակառակն է՝ անբան և անձնահաճոյ սէրն առ այլս. որով գլխաւոր ըմբռնի ոք 'ի բանս այնպիսի սիրելեաց, համեմատ բանի առաքելոյն (Բ. տիմ. Դ. 3.) «Կուտեսցեն իւրեանց վարդապետս ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց»։ Զ[illegible] [illegible], ոչ կշտելն, կամ ոչինչ համարելն զփոքր բարիս, կամ զթեթև մեղս։

26 Զ[illegible] [illegible]։ Ի նմանակցաց օտարաբար ձևանալն. որպէս 'ի կարգակից կրօնաւորաց այլակերպ վարելն 'ի հանդերձս, 'ի կերակուր, 'ի բնակութեան, և այլն. կամ, նման գործովք բարեաց՝ այլակերպ լինելն 'ի սրտի։ Յորմէ և [illegible] [illegible]. սուտ բարեպաշտութի՛ իբր քողով ծածկելն։ Բայց զերկոսին զայս մարթ է այլ ազգ ևս իմանալ. այսինքն զնման չար գործս այլակերպ համարելն, որպէս զանկարգ վրէժխնդրութիւն, որ է գործ բարկութեան, համարել իբր ճշմարիտ նախանձ բարւոյ. և առ 'ի հաւանեցուցանել զայս՝ առնուլ պատրուակ զսուտ պատճառս կամ իրաւունս։

27 Զ[illegible] [illegible]։ Զ յոյժ բարձրացուցանելն, որ է գործ ամբարտաւանութեան և գոռոզութեան։

28 Զ[illegible] [illegible]։ Զչար հատուցանելն չարաբարաց։ [illegible], զնոցա զանչափ [illegible], չարաբանութիւն՝ թէ զոր դու առնես զնոցանէ, և թէ նոցա պատճառ լինիս առնելոյ։

29 Ս[illegible]. (մի օրին. [illegible]։) զմտացութիւն ածայլին բանին, կամ զշատախօսութիւն, և զեղծուն թուլութի յամենայն խօսս։ Բայց առաջինն յարմար է յաջորդ բանիցն, [illegible] [illegible], այսինքն զհոգևոր կենսաբեր պարգևս վաճառել ընդ ժամանակաւոր իրաց՝ որք են գին առատակման. կամ զերկնային կեանսն վաճառել ընդ մեղաց։ [illegible] [illegible], շնորհացն մկրտութեան, և այլ պարգևաց։ [illegible] [illegible], զվաստնումն բարեացն ևս։

30 Զ[illegible] [illegible]։ Ի լաւ օրինակն կիսիւ զատանի այս 'ի յաջորդէն. բայց երկոքին ևս հային 'ի բանն եսայ. (Ե. 18.) և նշանակեն զչար սովորութիւնս՝ որք իբր կապ բանի ձգեն 'ի մեղս։

31 Զ[illegible]։ Միշտ թաթաւել, կամ շաղախել։ մի օրին. [illegible]. պղծաշաղախ, պղծալից։ [illegible] [illegible]. զթողուլն լաւացն կամ առաքինեաց. որ կրկին իմանի, թէ կրաւորաբար, այսինքն թողեալ լինելն կամ լքանելն 'ի բարի արանց իբր անուղղելի. և թէ ներգործաբար, այսինքն թողուլն զբարի արս՝ հեռանալով 'ի նոցանէ։

32 Զ[illegible] [illegible]։ Զներքոյ անկանելն անկարծելի թըշուառութեանց և մեղաց։ Բայց մի օրին. գնէ [illegible]. և իմանի առ ատն հարկանելն կամ արհամարհելն զնուաստս և զանարգս, կամ զան-

կեալն 'ի մեզս ։ Մարթ է նաև զբառն ԱՆԿՈՒԹԻՑ՝ ըստ այսմ մտաց առ-նուլ․ զի այսպէս նշանակէ ('ի մեկն․ ոսկեբեր․ Ծ․ 4․) « Ոսկորս ծնո-ղիցն իւրս այս ․․․ բայց եթէ յանկարծ՝ 'ի փառաթար արանց » ։ Այս երկրորդ իմաստ առաւել համեմատ է նախընթաց բանին․ որպէս թէ ասել․ զլուսն և զառաքինեան թողլ․ իսկ զանարգան կամ զմեղուցեալսն արհամարհեցի ։ ԶԻՆ ՓՈՒՅԻՆ․ յետ գանձուցն 'ի մեղաց՝ վերստին առ-նոյն մեղս զանձուալն, որ առաւել չար է և գարշելի ։

33 ԶՆՈՒՐԲ ՄԻՏՍ ։ Խոստովանելս զանկարգութիս մանծութեանցն՝ որք միշտ նորանոր ծնանին առանց գործոյ՝ զանկարգութիս ՆԵՐՔԻՆ ԽՈՐ-ՀՐԴՈՅ․ որք հակառակ են ամենայնին, կամ կրօնաւորական յանձ-նառութե․ զանկարգութիս ԴՆԴԱՅԱՆ ԿԱՄԱՑ, անհաստատ յօժարու-թեանց 'ի բարին․ զանկարգութիս ՇՆԱՅՆ ՀՈԳՈՅ, վայրապար խօ-սից, կամ աղաղակաւ խօսելոյն ։ ԶԵՌԱՆԴՆ ՄԻՏՑ, զկացուցանելն ըղ-ձնջաւոր մասն, այսինքն տիրացուցանել զզգայականն, իբր մեծ ինչ գնել զայն, նմա անսալ և ծառայել ։ Կամ, զմարմինն որ մեռեալ էր առաքինաւ․, վերստին կացուցանել կամ կենդանացուցանել ։

34 ԶԻՆՆ ԵՒՆ ՇՆՈՐՀԱՆ․ արտաքոյ սահմանի օրինաց, ՇԻՇԽԱՆԱԿԱՆ, զկանանցն կամ զբանական մասին՝ ՇՌԱՅՆԱԿԱՆ ԲԱՐԲԱՋԱԿԱՆԱՆ, յամե-նայն իրս ընդարձակելն, կամ կարի յոյժ հեռանալն և օտարանալն ։ ԵՒ ՇՐՐ ԸՍ ՅԱՆԷՆ ։ Գոյ և այլ ինչ բաղում զոր չկարեմ կամ ամաչեմ յայտնել, գրել, բերանով պատմել, կամ այլ օրինակաւ յիշեցուցանել ։

35 ՏԱՐԱԳԻՐ ԸՍՏ ՄԱՐԳԱՐԷԻՆ ։ Երեմ․ (ԻԲ․ 28․ 30․) « Գրեա զայրդ զայդ՝ այր տարագիր » ։

36 Ու ԹՈՅՆՆ ԵՒԹ ։ Այսպէսք վերադրեալ օրինակօք մեղաց ոչ չափի որպիսութե աշխատելոյս 'ի չարիս․ այլ են իբրև զբաղմութե կարծեաց․ և այլն, որք ՇՐՋԱՆԱԿԱՆ, զմահաբեր թոյնս ունին․ զոր այս զեռուն 'ի տանն իբրև յաման մաշկեղէն արկեալ, փակէ ՇԻՆԻՑՆ ԸՆԴԻՆ, զծայր տանն՝ ընդ որ թոյնն արտաքս ելանէ, ԽՈՎԱՐԱՆԻՆ ՇԻՐԱԳԱԽԱՆԻՆԵԱՄԲ, չարչարանակի գնտակերպ կապելով զխայթոցն ։

37 ԱՅՍՊԷՍ ԷՆ ։ Որպէս կարիճն արտաքուստ բարուք երևի, բայց ներքոյ 'ի տանն ամփարեալ ունի զթոյնս կորուսիչս և կսկծեցուցիչս, որք պատճառք են սատակման, այսպէս և ես արտաքուստ բարեկրօն երևեալ, բայց ներքոյ լցեալ կամ առացեալ չարեօքս, որք են անօրէ-նութե փառասիրաց ԲՆՈՒԹԱԿԱՆՑ ԲԱՆԻՑ, այսինքն փորձք առացեալք քրտամբք թշուառութեան, կամ թշուառացուցիչք ։

38 ԱՅՍ ԴՈՐԾՈՅՆ ։ Վասն այսքանեաց անօրէն գործոց արժանի ես կրկին սատակման, կամ որպէս 'ի վայր ասէ, ԿՐԿԻՆ ՀԱՓԵԾՄԱՆ, թող թէ զմլութե ։ Զի զոր թշնամին սատանայ ցանեաց զորումն մեղաց 'ի վերայ բարի ցորենոյն, դու փոխանակ խլելոյ զայն՝ կամաւորաբար ըն-կալար, պահեցեր և գործովք պտղաբերեցեր ըստ բանի առակելոյն զլցեալսն ամենայն անառակութեամբ (համմ․ ա․) ուր և 'ի կառա-բածի եդեալն կանոն առ խս ելանէ, թէ զիաէին զիրաւունս այս՝ զի մահու արժանի են ոչ միայն գործողք չարեաց, այլ և կամակիցքն ։ Իսկ ես ոչ լոկ կամակից այլոց լինելովս, այլ և անձամբ գործելով կատարեցի զչարիսն ամենայն ։ Վասն որոյ զիս ինքն ԴԱՐՁԵԱԼ ՋՈՐԻՆ, պար-տաւոր զատեցայ կրկին հատուցման պատուհասիցն ։

39 Այս ԱՆԽԱՅԷԱ ։ Չ օրին․ ԽԵԱՅԷԱ ։ Ես անձնադատ լինիմ, ասէ, այլ դու բարերութ՝ գոնէ խնայեա ողորմութեամբ․ զի չեմ արժանի լսել գոլութիւն ։

# ԲԱՆ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Որդ վերջացեալս ես յաւէտ ամենապատիժ, միշտ զգենեալ վայրենաբարոյ անձամբ անձին [1] մահու կշտամբիչ, արածողս զերամակս զաղերս վայրագասունս խոզից արօտականաց զարշութեան մեղաց [2] նախատ վարձկանութեանց, հովիւս տածողական [3] զհօրանս ուլուցն ամայաբնակաց 'ի վրանս հովուացն, ըստ երգոյն երգոց առ իս առակին. որ ոչ խակ ծանեայ զիս երբեք գիտել, թէ յով և յոյր պատկեր և վասն որոյ գոյացայ.

Բ. Ոհա՛ 'ի յասս տանողականս կրողաց երկուց մակցորդ խորհրդականաց, [4] ըստ ձեւոյ հրեշտակի կառացար, իբր 'ի թափս թեւոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց յաշխարհն հայրենական հայել, ով յիմար, զխարդ քեզէն կորացար յերկիր, զասանեայս միշտ հոգացեալ զխրտուածս, ընդ ցխոս անապատականս համարեցար. Իբր զճրագ բազմաբերանեան 'ի յաշտանակի մարմնոյ հատանեցաւ [5] զլոյդ բոլորութիւն, զի և այսու 'ի յօրինակէն շնորհէ մի՛ օտարասցիս զանձ տեսանել, և զմնացականացն իմաստաւորել. Ուսանականութեանն յարգանօք [6] կրկին ձախացար, զի զյաղթանակ բարեմանութեանն որ առ քեզ եղեն՝ մոռացել ըն-դունով խոստեցելս. Չեռնեղ հատանմամբ [7] յարմարատեան մատանցդ շառաւեղօք՝ զգործնականացն տնօրինել զանտեսութիւն, իբր կցորդ համեցելութեամբ ամենաբաշխ աջոյն ա՛յ՝ ա՛ծ կոչեցար. [8] Երից հարիւրոց և տասանց վեցից յօդիւք շաղկապեցար, յարեալ 'ի քեզ ընդ նոսին 'ի նոյն և պատշաճական մասունս չափոց ազդողականաց հնգից զգայութեանց, զի մի և երևելից նիւթականութիւն քում տեսութեան՝ մնացդ զխամին անպատ եղիցի. զի ոմանք ստուարք են և զօրաւորք, և այլք փոքունք են և պխանկք, կէսք կարծրակերպք

և ազգայականք, են և [9] գաղտնականք և պատուականա-գոյնք, դարձեալ կարեւորք և պատկառելիք։ Իսկ [10] թարգմանութիւնք սորին տեսութեան 'ի քեզ ենթա-րեալ իբր յարձանի անջնջականի անձն իմ եղկելի. որ-պէս զի և տարր ժամանակաց և շարունակ հետեւման ա-ւուրցն առ պատկ ամէն, իբր կանոնս իւիք սահմանեալ մտաւորիցդ՝ անախաղ և անայլայլելի պահեսցի։

Գ. Դարձեալ [11] այլ օրինակ հոգեւորական, որ զսի-րոյն յօդուած շաղկապէ 'ի մի առ եկեղեցի, քեւ խոր-հըրդածի. իբր զի առանց ընտրից զուգամանութեան կապակցել ըստ հաւանականաւ զկէտն ընդ փորուն, ճանաչեալ է հաստատածոյն անարատութի յանուն Քրիս-տոսի ժողովելոյն. որպէս 'ի հատուածս և 'ի նուազութի մեզ յանդգամոցս անարգացս պատուատակեցս 'ի մարմնի, կրճատեալ իմն է յօրինուած կազմութեան [12] մարմնոյ քում սեպհակ զգայականի, և շրջեալ է ընտանութիւն պատկերին յանարգ փոփոխութիւն։ Եւ արդ այսպի-սեաց, և ես բազմօք անզուգական հրաշակերտութի [13] եղական պատկեր ով՝ կշտամբեալ 'ի սպառ ողի իմ գե-րի. և թէպէտ յառաջին նմանութենէն կործանեալ զատր պատուիրանին յանցաւորութեամբ 'ի դրախտին կենաց, այլ առաջանին լուսաւորդ շնորհին զհոգւոյն փչումն առեալ, և նմանութիւն ես կերպարանին. և արդ ընդէր կորուսեր զփառսն երկնաւորս, իբր նախա-ստեղծն երբեմն [14] զվիճակն երկրաւոր յԵդին դրախ-տանի. ընդէր փակեցեր քեզէն քեզ զերկին, և զվե-րելոյն զդուռն աղխեցեր. ընդէր խառնեցեր ընդ ջրոյն մաքրութեան զախտ արատաւորդ տարժանութեան. ընդէր զլուացեալ զձորձ վերարկուին զարշելի գործովք զաղտաղոցեր. հեմ զեղեալ հանդերձին մեղաց պատ-մուճան անապակ վայելք քեզ արկեր. ընդէր զանա-ղացդ աւից սրբութիւն ճանապարհաւն ժանդից աղտե-ղեր. ընդէր կրկնեցեր խրատադատին զանխուզանցու-թիւն հին պատուիրանին. ընդէր մերժեցար 'ի պտղոյն շնորհաց, իբր զԱդամ 'ի ծառոյն կենաց. ընդէր [15] նեն-գեցեր քեզէն քո կամաւ զմտաւոր յաւոյն յարա-կայութիւն. ընդէր [16] պատկառանք անհամարձակելիք քոյին զխնայող նպաստեցեր. ընդէր զինեցար ընդդէմ քո ներհակ, ով ընդունարան խեղդարութեան. ըն-

գէր որսացար [17] 'ի ծուղակ մահու՝ թողեալ զպարահետն վստահութեան. ընդէր [18] կարթիւ պատրանաց ածար հաղորդ մարմնոյ կենդանարարին։ Այլ վերստին յուսացեալ 'ի նա կարդա նմա [19] ապաւինելոյս քաւիչ նորոգիչ փրկիչ կեցուցիչ և կենդանարար, ողորմած խնամող մարդասէր և անոխակալ բազմագութ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

1 Մահու կշռամբքն։ Նա ինքն խղճմտութիւն կշռամբեամբ զմահ մեղացս. կամ, 'ի մահ կշռամբիչ, այսինքն պարտաւորիչ։

2 Նախատ վարձկանութեանց։ Նախատելի, անարգ վարձկանութեանց կամ ծառայութեանց։

3 Զհօտս ուլոցն։ Հովիւս զարմանող զերամակս վայրենի ձագուց այծից, այսինքն զարշութեանց մեղաց. և այս վասն այնորիկ՝ վասն զի ոչ [illegible] երբեք, ոչ զմտաւ ածի զարժանաւորութիւնս իմ ըստ բնութեան և ըստ շնորհաց. վասն այն յանարգ ծառայութեան մեղաց զար-ձայ։ Եւ այս է բան երգոց (ա. 7.) « Եթէ ոչ ծանիցես զանձն քո գե-ղեցիկդ 'ի կանայս, ել դու զհետ գարշապարացն » և այլն։ և յայս միտս մեկնէ զայն սուրբ վարդապետս 'ի բանն մեկնութեան (երես 284։) [illegible] յինչ գոյացայ ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ և ըստ խոր-հրդանշելւոյ կարողութեան նոցա, և յայր նմանութեան և վասն որոյ պատ-ճառի, զորս և 'ի յաջորդն բացատրէ։

4 Ըստ ձևոյ հրեշտակին։ Ոչ եթէ մարմնոյ կերպարան ընծայէ հրեշ-տակի, այլ զի մարդս երկու ոտիւք միայն հողեղէն յերկիր, և երկու բազկօքն իբր երկու թևօք վերամբարձ կանգուն կայ դէպ յերկինս. այսու ձևով յայտ առնէ՝ թէ ոչ է երկրաքարշ, այլ երկնամթոնիչ պար-տի լինել իբրև զհրեշտակ, և հայել յերկինս իբրև 'ի հայրենիս։ Ահա 'ի ձև մարմնոյս նմանութեան հրեշտակի, և փոխանակն՝ երկնից փափա-քել։ Իսկ դու, ասէ, իբր քառոտանի անասուն՝ զերկրաւորս միայն հոգացայ, և համարեցայ ընդ չորս, ընդ վայրի էշս. Նախ 'ի [illegible], մթութիւն առնի վասն շրջման ձևոյն. զի բառն [illegible]՝ զոլով բացայայտէ տրականին 'ի [illegible]. գտնելի էր 'ի տրական հոլով, բայց փոխադրութեամբ գնի սեռա-կան, և այնմ համաձայնեալ ածականացն՝ [illegible]. ուստի պար-զելի է, 'ի յոռի տարօղս, երկուս միաբան խորհրդականս. այսինքն 'ի միասին շարժեալս։

5 Գլխոյդ բոլորակութեան։ Գլխոյդ բոլորակութեան զանազան զգայու-թեամբքն հաստատեցար իբր ճրագ բազմալոյս 'ի վերայ մարմնոյդ. զի և այսու 'ի [illegible], 'ի վայելչութենէ կամ 'ի յարմարութենէ օրինակին մի սուտարասցիս։ [illegible] կամ զճրագն ասէ, զի որպէս ճրագի լուսով տեսանեմք 'ի գիշերի, այսպէս լուսով զգայութեանց տեսանե-լով զարարածս, 'ի նոսա աղօտարար տեսանեմք զարարիչն իբրև 'ի մթան. և կամ օրինակ՝ ասէ զնոյն իսկ արարածս, որք իբր հետք են արարչին այ. ուստի ասէ, որպէս զգայութիւնքդ տեսանեն զարարածս, նոյնպէս մի սուտարասցիս նովաւ տեսանել զնա՝ որպէս զխարդ երևի 'ի նոսա։ Կամ դարձեալ, [illegible] մարթ է առնուլ զաշտանակ տաճարին. իբրև թէ որպէս այն աշտանակ մէջ վառեալ կայր 'ի ցոյց ներկայու-

թեանն այ, այսպէս և զմարմնոյ կազմեալ ած դնելով 'ի նմա զգլուխ իբրև Տէրոջ բազմայոյս, զի այնու տեսանիցէս զած :

6 [illegible] : Ի վերայ զգայութեանց յաւելու և բանականութիւնն, կամ խոստականն զօրութիւն, զի զգալութի հաղորդութեան բաբեալն որ յայ, քարոզեսցէս : Կամ, [illegible] հանճարոյ խնամի համեմատութեամբ առ անասունս. զի նոքա թէպէտ ունին նման մարդոյ ըզգայարանս զգլխոյն, այլ ոչ զխօսնական զօրաւն, որ յատուկ մարդոյ է :

7 [illegible] : մի օրին. [illegible] : Զձևոց համդերձ մասամբքդ հասանեալ ած, [illegible], զարհեստական գործոց իբրև վճարեալ. որով նման լինելով արարչական աջոյն այ, [illegible], այսինքն ստեղծիչ յօրինող արհեստական իրաց, որպէս նա՝ բնականացն :

8 [illegible] : Երեք հարիւր և վաթսուն մասունք կազմեալ, յաւելեալ 'ի նոյնս և զյարմար թիւ [illegible] . զգայուն մասանց հինգ զգայութեանց. որով ընդ ամէնն լինի 365 : [illegible], զգայութեանց տուան, զի մի արտաքին նիւթական կազմութիւն մարմնոյդ՝ տեսութեան մտաց [illegible] . անծանօթ կամ անյայտ մնասցէ. այլ տեսանելով և քննելով զգանազանութիւն, զգօրութի և զգործ իւրաքանչիւր ոսկերաց և յօդից, անտի ծանիցես զզօրութի և զիմաստութիւն արարչին. և 'ի միտ առցես՝ թէ մարդս իբրև փոքր աշխարհ՝ բովանդակի 365 մասամբք, որպէս ընդհանուր աշխարհիս ժամանակն պարփակի 365 աւուրբք : Զայսպիսի պատկեալ թիւդ ոչ է մարթ խմանալ 'ի վերայ ոսկերացն միայն. զի նոքին ըստ երևելի անդամոցնիկց՝ ոչ անցանեն քան զ304, ատամամբքն համդերձ. առանց որոց ոմանք գտեն 249, այլք՝ այլ ազգ : Այլ և զի սուրբ վարդապետս զկնի առէ ոմանց լինել փափուկ և աղցողական, և ոմանց կարծր և պատկառելի, որ ոչ պատշաճի ոսկերաց : Ըստ որի երևի թուել զանուանեալն ոսկերս համդերձ անդամօք և այլ մասամբք մարմնոյ ըստ հաշուելոյ բժշկաց այնր ժամանակի :

9 [illegible] : Փափուկք, կակուղք, որպէս լեզու, թոքք, սիրտ, և այլն :

10 [illegible] : Բացայայտութիւնք կամ խորհուրդք այսպիսի կազմութեան մարմնոյդ նկարեալ են 'ի թիւ մասանց մարմնոյդ. [illegible], իբր զի և սկիզբն կամ փոքր մասն ժամանակաց, և [illegible]. և հետզհետէ սկզբութի յաջորդութեան աւուրցն. [illegible], մինչև 'ի կատարումն տարւոյն, իբր [illegible] իւիք, իբր կանոնաւ համեմատութեան ընդ 365 թուոյ մասանց մարմնոյ, և աւուրց տարւոյն՝ ամբողջ պահեսցի : Բացայայտ իմաստքն են, մասունք մարմնոյդ, և աւուրք տարւոյ զուգաթիւ առհամանեցան, առ 'ի նշանակել քեզ թէ որպէս փոքրիկ մասն մարմնոյ պիտանի է և կարգեալ առ յայ, նոյնպէս և փոքր մասն ժամանակի՝ պիտանացու 'ի գործ արդարութեան. կարևոր մասին ինչ ժամանակի այնպէս ընդ գատաստանաւ է, որպէս և մասին մարմնոյ :

11 [illegible] : Ի միաւորութեան և 'ի կարգի մասանց մարմնոյն՝ խորհրդածէ զարձեալ զարտաքին միաւորութի անդամոց եկեղեցւոյ. իբր զի որպէս 'ի հատանել միոյ անդամոյ՝ ոչ մնայ ամբողջութի մարմնոյ, այսպէս առանց հաղորդակցութեան իւրաքանչիւր հաւատացելոց՝ հպատակելով վայրապաշտից առ մեծն, մնալ ամբողջութիւն մարմնոյ եկեղեցւոյ :

12 [illegible] : 4 օրին. [illegible] : Ի հատանել կամ 'ի պակասել միում ևեթ յանդրդ անդամոց մարմնոյս՝ որ է սեննակ մար-

գոյս, Թերանոյ կազմածն ոսկւոյն. և [illegible]. հարազատ
և բուն կերպարանք մարմնոյն փոխարկեն յանարգ ձև և 'ի տեսիլ։
13 [illegible]. Ստեղծեալ կամ' արարեալ պատկեր էր։ Իսկ
զնմանութիւն պատկերին' յայս գլուխ բաժանեալ բացատրէ, այսինքն
ըստ մարմնոյ մասին. ըստ որում ուղիղ ձևով մարմնոյն' ցուցանէ զեր-
կինս լինել իւր հայրենիք, որպէս էր սեպհական տեղի սորին երկինք.
Նորագործ ձեռակերտօք ցուցանի լինել արարիչ արհեստականաց, որ-
պէս ած' բնականացն. մասամբք մարմնոյն բովանդակէ յինքեան զչոր-
քանս ժամանակաց, որպէս և ած յիւրում յաւիտենականութեան։ Իսկ
զնմանութիւն պատկերին 'ի կողմանէ հոգւոյն և շնորհաց' տասանօր հա-
րևանցի յիշէ ասելովն. [illegible],
այսինքն, բաց յասացելոցս' ասել ևս բազում անհամեմատ և հրա-
շալի կազմութիւն հոգւոյդ և օծմամբ շնորհաց' հաղորդեալ պատկեր էր։
14 [illegible]։ Դու անձն իմ' որ մկրտութեամբն վերստին
եղեր Նմանութիւն էր' շնորհօք, ընդէր դարձեալ կորուսեր զերկնային
փառսն, որպէս ադամ կորոյս զերկրաւոր վիճակն, այսինքն զանմա-
հութիւն մարմնոյն, զանցաւութիւնն, զանապական զուարթութիւնն,
[illegible], յեդեմական դրախտին։ Վասն էր փակեցեր զեր-
կին. և [illegible], զցուան եղանելոյ 'ի վեր յերկինս' իբրև զանառա-
կօք անդեցեր։ [illegible]. ընդ ջուր մաքուր աւազանին մկրտութեան
խառնեցեր զցաւալից արտասուս ապաշխարութեան։ [illegible]. զհանդերձ
մարմնոյդ' որ մկրտութիւն լուացաւ, զարշելի գործովք աղտեղեցեր։ [illegible]
[illegible] զզգեստ պատմուճանին մեղաց' զոր 'ի բաց եդեալ էիր, վերստին
արկեր զանձամբ [illegible]։
15 [illegible]։ Խարդախութիւն ապականեցեր [illegible]
[illegible], զհաստատութիւն անմատնանալի յուսոյն առ ած։
16 [illegible]։ [illegible]' որով դք ոչ համարձակի
երևիլ, 'ի դէմս քո [illegible], արկեր իբրև Նդաստ և ծածկոյթ զար-
շութեան քո։
17 [illegible]։ Ընդէր անկար կամաւ որս յորդայթ մահաբեր, թո-
ղեալ [illegible], զհասարակաց անվտանգ ճանապարհն'
զոր ած հորդեաց։
18 [illegible]։ Ըմբռնեցար պատրողական կերով դու որ հաղորդ
եղեր կենարար մարմնոյն քի։
19 [illegible]։ այլ օրին. [illegible]։

# ԲԱՆ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի·*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ զինչ գոյ աւել ամաչեցելոյս յերեսաց մեծիդ ահաւորութենէ, բայց եթէ համրանալ և հող 'ի բերան եղեալ լռել 'ի սրտի, [1] ըստ մարգարէութեան խրատու, ահա 'ի բարւոյն կարկառեալ 'ի յոյս։ Իսկ եթէ զփականս շարժողութեան շրթանցս բացից, բանադատեցից խօսել կամեցեալ, դարձեալ զնոյն ձայն կրկնակական եղերերգութեան լալեաց բազմութեան [2] խէթ մնացս յառաջադրել։

Բ. Եւ արդ ողբակից մեծ մեղաւորին անօրինելոյ կամաւ առ 'ի մահ՝ զնորին գոչումն երկրորդեցից և ես ընդ նմին. մեղայ տէր մեղայ, և անօրէնութեանց իմոց ինձէն վկայեմ։ Հիւսեալ ընդ նմին զբանս յիսներորդի սաղմոսին, անթիւ գրեմ [3] զպարտուցս սակ անձինս մեղանաց՝ [4] քան զհիւղ երկրի հողմահոս փոշւոյ ընդ օդս ամենայն տարածեցելոյ։

Գ. Մեղայ յերկինս և առաջի քո, ընդ անառակ որդւոյն պատկառեցելոյ հայրենի գթոյդ վերստին դարձեալ թախանձ արկանեմ. զողորմելին ձայն աղերսանաց արտօսրածին ողբովք գոչման 'ի տխուր դէմս մատուցեալ առաջի քոյ տարածանեմ, հայր գթութեանց, ա̃ծ բոլորից, [5] չեմ արժանի կոչել և ոչ բնաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլ և անպիտան ապարան վարձկան։ Ընկալ զտմլեալս տարագրական, պարտական փառաց. և զցաւ քաղցոյս լքմանց [6] նեղոյս նուաղեցելոյս՝ կենաց քո հացիւդ բժշկեսցես։ Էր ընդ առաջ քո ողորմութեամբդ [7] 'ի սկզբնաւորս ապաւինութեան. զգեցո, գթած և անոխակալ, անօրինեալս մեղապարտի զնախակարպուտ հանդերձին ծածկոյթ. աւանդակորոյս ձեռացս ապտեղեալ մեղօք՝ զինիք մատանւոյն համարձակութեան ամենառատ կամօք մատուս-

ցես. զգարշապարաց թշուառութիւն մերկութեան ոտից՝ պատսպարութեամբ աւետարանական [8] ամրամերարկու օղից կօշկաց 'ի յօձին թինից միշտ ամրացուսցես: [9] Օ զուարակդ պարարակին եզինդ երկնայնոյ, որ է միածին որդին քո օրհնեալ խոկապէս մարդասիրութեամբ, կարօտելոյս բարեաց նուիրեա. որ մատուցեալ միշտ և անպակաս մնայ 'ի լրութեան, յարակայ զենեալ 'ի սպանդարանի անթիւ սեղանոց անսպառութեամբ, բոլոր յամենեսին և բնաւ յամենայնում, էութեամբ յերկինս և խոկութեամբ 'ի ստորինս, աննուազ մարդկութեամբ և անթերի ածութեամբ. փշրեալ և բաշխի 'ի մասունս անհատս, զի զհամայնն հաւաքեսցէ առ 'ի նոյն մարմին իւրում գլխոյ. քեզ փառք ընդ նմին, հայր ողորմութեան, յաւիտեանս. ամէն:

---

1 Ըստ հարկաւորելոցն: Բազում են 'ի մարգարէս այսպիսի բանք. բայց զոր սաւրբ վարդապետս ածէ՝ երեմիային է (որպէս Կ. 28.) «Նստի միայն լռիկ 'ի տան իւրում». այսինքն, 'ի սրտի: և 29. «Տացէ հողոյ զբերան իւր. վասն զի կայ յոյս»: Եւ յոյս հայի հետևորդ բանին. ասէ 'ի բերանոյ խորհրդեալ 'ի յոյս. այսինքն լռեցից 'ի սրտի, հաստատելով կամ վստահելով 'ի յոյս ողորմութեանն նոյ:

2 Խնդ իրաց: Եթէ համարձակեցայց շարժել զշրթունս իմ 'ի խօսել, ոչ եթէ զօրհնութիւնս քո երգել կարեմ ըստ դաւթայ, այլ խոկոյն խիղճ կամ հարուած մտացս թելադրէ զնոյն ողբական ձայնս երկրորդել: Ուստի ողբակից լինելով Դւթ մեղաւորին, մանաւանդ թագաւորին, որ կամաւ՝ և ոչ տգիտութեամբ կամ 'ի տկարութենէ անօրինեցաւ, զմահ և զկորուստ իւր խնդրելով. զնորա գոչումն երկրորդեմ, և այլն:

3 Զպարտուցս ոսկւոյ: Զհաշիւ կամ զթիւ պարտուցս, մնչեւ գեհենոց, 3 օրէն. գեղոց: Ըստ ողբական ձայնս մանաւանդ կցորդեմ և զծ սաղմ. ողորմեա ինձ ած. և տաւել անհամար խոստովանիմ զհաշիւ պարտուց մեղացս քան զփոշի, և այլն:

4 Քան զաւազ: այսինքն քան զփոշի: 2 օրէն. քան զհող:

5 Զի՞մ որդիդ կոչեցի. 'ի քեն սիրողապէս, և ոչ ծառայն յայլոց նոց որդի քո. կամ, չեմ արժանի կոչել որդի քո, և ոչ բնաւ [illegible], բայց յայտնանէ, կամ 'ի վերայ այսր՝ անուանել վարձկան քո:

6 Նեղելոյ նուաղելոյս: Նեղութե նուաղելոյս, կամ թուլացելոյս 'ի քաղցոյ:

7 Ի նախկին աղախնութեան. 'ի նախկին կամ 'ի նախընծայ աղախնութենէ. որպէս զանառակն ընդունելով նախ առ քեզ դիմեալ, ընդ առաջ գնացեր նմա:

8 Ամրամերարկու: Ամրութեամբ կամ պնդագոյնս ծածկող. օղից, ագանելեաց ոտից, որպէս կօշիկ, սանդալ: Զմերկութիւն ողորմելի ոտից՝ զգայութեանց՝ պահպանեսցես 'ի թինից սատանայի պատսպարութե ամրապահ կօշկաց աւետարանին, ըստ բանին եփեսաց. Զ. 15:

9 Զուարակդ պարարակին: Պարզելի է շարադրութիւն. զզուարակդ՝ այն

է երկնային եզն պարարակ, որ է միածին որդին քո, ՆՈՒԻՐԷՔ, որ միշտ մատչի պատարագ, և անպակաս մնայ։ ՅԱՐԱԿԱՅ ՉԻՆԷԱՆ։ Միշտ մինչև ՚ի կատարած աշխարհի զենուլ քո խորհրդաւոր, ՚Ի ՈՂՋԱԿԻԶՈՒՄՆ. ՚ի տեղւոջ՝ ուր ազանգք կամ ուխտք անասունք զենեալ լինին. և նմանութեամբ խմանի սուրբ սեղան պատարագին։ ԲԱՐՁՐ ՅԱՒԻՏԵԱՆ, բոլոր քո յամենայն սեղանս և ՚ի Ճաշակողս. Ի ԲԱՐՁՐ ՅԱՒԻՏԵԱՆՍ. և ամբողջ քո յամենայն մասն նշխարին, կամ բաժակին։ ԷՈՒԹԵԱՄԲ ՅԵՐԿԻՆՍ. գոյացութեամբ մարդկութեն յերկինս, Ի ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՄԲ ՚Ի ԱՇԽԱՐՀՍ, և նոյն Ճշմարտապէս յերկրի ՚ի սուրբ խորհրդեան՝ բովանդակ մարդկութբն և անթերի անձութեամբն։ ԲԱԺԱՆԻ ըստ տեսակաց հացին, Ի ԲԱԺԻՆ ընդ տեսակօք հացին և գինւոյն, ՚Ի ՄԱՍՆԱՒՈՐ ԱՆՀԱՏԻ, բաշխի ՚ի ներքոյ անթիւ մասանց նշխարին կամ գինւոյն՝ որք բաւական իցեն պահել զանատկս իւրաքանչիւր նոցա. կամ ԱՆՀԱՏԻ, իբր մակբայ՝ անհատաբար, առանց հատանելոյ կամ բաժանելոյ. այսինքն քո ըստ մասանց հացին կամ գինւոյն բաշխի բոլորն առանց բաժանելոյ իւրոյ։ Զբաժանումն խորհրդական տեսակաց հացին և գինւոյն՝ ընծայել քոյ ՚ի խորհրդեան անդ, առօրական ոՃ է վարդապետաց. յորոյ վերայ և ոսկեբերան ասէ (Ճառ իզ. ՚ի մեկն. Ա. կորնթ. Ժ. 16.) ՚ի բանն, Հացն զոր բեկանեմք. « Բեկանի մարմինն քոյ ՚ի հաղորդութիւն, որ ՚ի խաչին ոչ եղև, այլ ընդ հակառակն առաջաւ, ոսկր նորա մի փշրեսցի. և այնպէս զոր ոչն կրեաց ՚ի խաչին, կրէ վասն քո ՚ի պատարագին, մանրելով առ ՚ի լնուլ զամենեսին »։ Զնոյն խմասս դնէ և մեր վարդապետս (՚ի մեկն. երգ. երես 348։) Զի ՉՀԱՏԱՆԻ ՀԱՏԱՆԻՑԻ. զի զբովանդակ եկեղեցի Ճաշակողաց, միաւորեսցէ ՚ի մի մարմին ԻՒՐՈՑ ԳԼԽՈՅ, այսինքն զգլխոյ եկեղեցւոյ որ է ինքն քո. կամ ԻՒՐՈՑ խմանի՝ քոյ, այսինքն զի միաւորեսցէ զամենեսին ՚ի բարոյական մարմինն այ հօր, որ է գլուխ քոյ։ Եւ բացայայտ իմաստ բանիս է, թէ քո ամբողջ բաշխի իւրաքանչիւր հաւատացելոց, զի ամենեքին միով հացիւ կերակրով անեալք, ընդհանք միաւորեսցին յՃծ՝ իբրև մի մարմին խորհրդական։ Յայս համառօտ բան աւանդէ սուրբ վարդապետս զամենայն ուղղափառ Ճշմարտութիւ խորհրդոյ հաղորդութեան ընդդէմ նորաձայն աղանդոց լուտերականաց և կալվինականաց. զի դաւանի՝ թէ Ճշմարիտ զոհ է պատարագն քոյ, յորում ինքն իրապէս գոյացութեամբն գտանի. և ինքն բոլոր բաշխի հաւատացելոց, և ոչ թէ գոյացութի հացին կամ գինւոյն. և ՚ի Ճաշակողսն ներգործէ իւրով զօրութբ զնորհս միաւորութե ընդ այ։

# ԲԱՆ ՔԱՌԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Բարձրեալ, հզօր, անսկիզբն, անեղ, անբովանդակելի, [1] աննիրհելի ականդ նկատող, ծնող անքնին փառաց միածնիդ. [2] խրատացուցես զինս ողորմութի հերքեցելոյս ընդունելութեան առ երկնայինս և առ երկրաւորս։ Հնչեա զկեանս կորուսելոյս վերնականացն պարերգութեամբ, աւետարանեա բանիւդ օրհնութեան զկենդանութիւն իմ մահացելոյս, [3] զբարեբաստութիւն կամացդ յայտնեա, գովեալ բոլորից գոյից եղելոց, տացիր անուն քեզ անձառ և ինձ թշուառիս նորոգ փրկութիւն, կորուսցես զգիր մուրհակի մեղուցելոյս անբաստանութեան, զվճիռ հոգւոյս մահու ջնջեսցես կայլակօք արեան որդւոյդ սիրելոյ, վստահութիւն փրկութեան բարեաց արեամբ. Մի՛ք նկարեսցես, ցոյց զքանչելիս քո բարեգթութեանդ 'ի ճաշ հարսանեաց քում հարազատի։ Մի՛ փակեսցես զիմեւյս առ քեզ զառագաստ սրահի կենացդ յարկի, մի տրահեսցես 'ի բազմականացդ և 'ի բարեացդ քո զրկեսցես, մի պահեսցես 'ի գանձարանիդ զնիւթեալ իմ պարտուցս անօրէնութիւն, մի կնքեսցես 'ի քսակ բարեացդ զպղծութեանց իմոց զարշութիւն, [4] մի երկարս ինձ զվեր մեղացս 'ի յախտալից մարմինս ծածկեսցես, [5] մի զփտութիւն նեխութեան ցաւոցս ինձ անկակից մահու մնացուսցես, այլ բարձ բանիւ քոյդ ողորմութեան [6] զժանտութիւնն ապականարար, որպէս զի զատեալ 'ի հիւծմանց ախտից՝ առողջութեանն պատրաստեցայց. հնարաւորեա, գթութեանցդ հայր, մեծ խոցուածոյս զօրեղ սպեղանիս, [7] կարեւոր կործանմանս՝ բարի այցելութիւնս։ Զի քո եմ, տէր ոգեսէր, [8] թէ և առ մի՛ նուազ բնիւս մեղցեմ, բայց ոչ գրեցայց համայն մեղուցեալ, տուիչ կենաց իմոց բարերար, 'ի շնորհ պարգեւաց կենաց քոց ա-

պաւինեալ. զի Ճանաչելդ զքեզ բովանդակ արդարութիւն է, և գիտել զզօրութիւնդ քո՛ արմատ անմահութեան, որպէս և կանխաւ իսկ գրեաց իմաստունն. և դարձեալ՝ տիրելդ քո, ասէ, ամենեցուն, խնայել տայ քեզ յամենայն. և դարձեալ, մօտ է քեզ յորժամ և կամիս կարող գտանել։

Բ. Նոյն Սողոմոնի յուսոյ աղերսանք խնդիր առեալ տից. քանզի ոչ այլ ոք բազմամեղ [9] որ քան զնա լինէ զուգաշաւիղ. երբեմն որդի, ապա ատելի. երբեմն միջնորդ խաղաղութեան ընդ ժողովրդեանն, և յետոյ խռովոց որոշման բազում խավուլութեան. երբեմն օրէնք կենաց կացեալ, և յետոյ մուրհակ մահու հաստատեալ. զերկնաւորին պաշտօն ընդոտնեալ, և զտարրին անուն ծանուցեալ։ Նախանձաւ օցտող, [10] անկարօտ զրկող, անսովելի գող, զրգեալ տրտնջող, փափկացեալ փախստական, [11] սեղանանենգ սարտուցեալ, անպատասխանի մեծաբարտ, քաղցրանոյց հայհոյիչ, զաւակ հայրատեաց, [12] կտակարանացն մանիչ, Սողոմոնի շարախօս, մաւացող երախտեացն, իմաստուն սխալական, ամենագէտ յանցաւոր, ամօթապարտ զղջացեալ, [13] տարակուսեալ աշխատող, [14] աղաչաւոր կապաշտեալ, [15] յամբոյրն դարձաւոր, կաղակարծ ընկալեալ, կանկածաւոր հաշտութիւն, յապայս յիշատակ, յերկբայս փրկութիւն, չաւատալի գիւտ, [16] 'ի մահնէ մնացուած, խարդաւանեալ գերի, [17] կխտակտուր ապծեալ, կամաւոր անձնամատն, ամարդի յղփացեալ, բազմավրէպ հանճարեղ։ Ի յընթացս բանից [18] երկեակ որոշմանց՝ ամենայն ուրեք բանս արկեալ ողբոց և ձայնից, մեծ պարտաւ և փոքր գովեստ՝ իբր 'ի վերայ ինքնագրաւ կործանմանն, երգիծանութ խառնեալ ընդ աշխարհ. բան նորա թելադիր բարգաւաճութեան ամենայն հասակի, և խառրումն նորին 'ի շրթունս բնաւից թառանչ թախծութեան ողորմելիս ինձ ազդեալ։

Գ. Օրմանամ, վհատիմ տարակուսեալ աշխութեամբ. զի թէ նա այնքան զթեաց, ինձ զինչ պատահեսցէ. զիա՞րդ անկաւ ամբարձեալն, զիա՞րդ սասանեցաւ հաստատեալն, զիա՞րդ կործանեցաւ կառուցեալն, իբր օտարացաւ ծանուցեալն, զիա՞րդ [19] զոհականցաւ զաւակն ընտրութե, զիա՞րդ [20] սրացաւ մերձաւորն, զիա՞րդ

աղօտացաւ փայլեցեալն, զիա՞րդ պատանդեցաւ ազա-
տեալն, զիա՞րդ անօրինեցաւ ուսուցիչն, զիա՞րդ նուաղե-
ցաւ հռչակեալն, զիա՞րդ [21] անարգեցաւ փառաւորն,
զիա՞րդ փոքրկացաւ մեծատունն, զիա՞րդ ամբարշտեցաւ
բարեպաշտն, զիա՞րդ ամբարհաւաճեցաւ ընտրողն,
զիա՞րդ ունայնացաւ պատարունն, զիա՞րդ կորեաց զուխ-
տըն որ ընդ Բարձրելոյն: Պատկառեմ ասել, թէ և ընդ
սանդարամետականին կապեցաւ. զի կայր նորա և կաց,
ուստի սէրն ընդ պատկերաց, [22] վասն էր կամքն ընդ
խորանաց. զիա՞րդ ոչ յիշեցաւ յանդիմանութիւնն Սա-
մուէլի առ Սաւուղ եղեալ, հմայք, ասէ, մեղք են, և
ցաւս և աշխատութիւն ածէ թերափ 'ի վերայ. զիա՞րդ
ոչ հայրենի յանդիմանութիւնն, կուռք, ասէ, հեթա-
նոսաց դևք և անշունչք են, և նման նոցա լիցին պաշ-
տօնեայք նոցա: Տէր միայն ածէր զնոսա, Մովսէս նա-
խագրեալ յառաջաձայն ձաղանօք սաստիկս խիստ ամբաս-
տանէ, ոչ էր ընդ նոսա ասէ ա̃ծս օտարոտիս, զոր ոչ
ճանաչէին հարք նոցա: Ո՞ւր է մահաժամոյց ալեա-
նեայ [23] արձանն Փագովրայ, ո՞ւր տգեղն և [24] անպատշա-
լին սնգոյնացուց իգական ամենանգով ձուլածոյն, ո՞ւր
կանացի կերպն անգրելին խայտառակութիւն զազիր
տեսակին, որով ամօթոյ մարգարէքն զանասնորէն դի-
մեցուին անխտրաբար յանուն չարութեան անժուժ-
կալ դիւին անամօթաբար ձօնեալ մոլէին: [25] Տարաւ զէու-
թիւն բարեբաստութեանն՝ որ զնախնին որսաց 'ի կո-
րուստ, յաղթեաց մեծութիւնն իմաստիցն առաւելու-
թեան, գերեաց գոռոզութիւնն, յիմարեցոյց փափկու-
թիւնն, վանեաց արծաթն ծառայեցուցիչ, [26] յոքի զա-
տեցաւ զայրն տօնելի հին զէնն կործանողին, 'ի զրկացն
ա̃յ հանեալ՝ 'ի յոտս ստամբակին գթեցոյց, մեռոյց մեղ-
կութիւնն, թմբրեցոյց ծուլութիւնն, արբեցոյց շուայ-
տութիւնն: Ով զիւրապատիր մարմին երկրածին, ո-
րո՞վք ձայնարկութեամբք զքեզ աւաղեցից. քանզի ոչ
տիրապէս առ նա հանդիպի ընդդիմաբանութիւնս, այլ
ամենից սխալողաց՝ կամաւ վրիպելոց. վասն զի նոյնու է
խնամալ, թէ [27] անխրատ է պարծել յիմաստս մարմնոյ,
եթէ ոչ Աստուծով զատեալ ընտրեսցի. որ զի թէ առ
այս պայմանի յիմար ոք իցէ, և 'ի հատուցին կամս յու-
սասցի, ոչ ևս 'ի նորայոց անտի ինչ կրեսցէ:

Դ. Սոյլ քանզի սաստիկս և քստմնելիս ունի Սողոմոն զպարծիս իւրոյ յիշատակարան ինքնապարսաւն կըշտամբութեամբ, իբր մեռեալ խիկարէս համայն աշխարհիս անձնասիրութեան. զոր եթէ զխելն ոք նկատեսցէ, [28] Ունայնութեամբքն է իմանալի. [29] այլ և 'ի մատեանս քաջանայիցն և 'ի գիրս Սքեայ սիլոնացւոյ, [30] յորում զփոյթն իւրում ընթացիցն արտասուելիս ինն յեղանակէ. զուր ջան, անօգուտ վաստակ, անմիտ հետեւումն, անշահ արշաւանք, անկայուն երկք, [31] օտարին խմասք, [32] ոչընչից հողմք, բամբասելի բերք, անյարմար վարկածք, մնոտի սերմանիք, [33] աւաղափուլ շինուածք, ապականացու ստացուածք, քամահանաց տաժանմունք, [34] ինքնամարտ կռիւ, ընդ ոգւոյ իւրում դատ, [35] ընդունայնաթող քիրտն, մնոտակար փափաք, կորստական շաւիղ, վրիպակ ճանապարհ, կործանական կրթութիւն, մոլորապատիր վարժութիւն, հանապազասխալ տեսութիւն, [36] ակնայայրաստ պչրութի, պռնկակերպ կերպարան, ախտաբորբոք նիւթ, [37] դժնեատեսիլ գոյն, յոքնատխուր դեղ, [38] յոլովամեղծ ծուխ, շոգի ցնդելի, [39] վաճառ մերձ 'ի յառ, թաղուար քակտելի, ընդվայր աղաղակ, անպատճառաւոր ծաղր, [40] արհամարհելի ասպարէզ, [41] անձնավաճառ գիր, սատակչական ելք, անհամ մամածմունք, ստայօդ ճառ, զայրացուցանող զրոյցք, [42] եպերանաց խծբիծ, խեղադարութեան խնդիր, ամօթանաց ցոյցք, խայտառականաց յայտնութիւնք, առակ ապառնեացն, ապաշաւանաց գործ, [43] ըմպահկանաց պատմութիւն, հեղգացելոց օրինակ, խորխորատ ծածուկ, որս խաւարային, մահագուշակ վիհ, անյատակելի անդունդք, ուղեկցութիւն սպանողաց, յիմարութեան բարբանջմունք, դարանակալաց վայր, խարխուլ յարկ, շինուած սասանեալ, կամուրջ խախտեցեալ, [44] երևոյթ փախչելի, խաբող շողքորթ, անտպայ մատնիչ, ընդդէմ բարձրելոյն հակառակութիւն. Օ այս ամենայն մասունս բանից խոստովանական կանոնադրութիւն, 'ի սիրտս ընաւից նախասերմանեաց Սողոմոնս կանոնադիր դարձելոյ զղջման. որպէս [45] զի մի պարծեսցի ոք 'ի մարդկանէ բամբասաւորօք զինուորեալ նետիւք՝ զանձն և զընկերն խոցոտելով. քանզի կապարիշտ է բողոք ծածկեալն, որ զկեր-

պարանոն միայն ունի, և զոչ ախորժելիս ստեղծչին կատարէ ։

Ե. Իսկ արդ նա՝ որ [46] ոչ այնքան մեղաւ որքան զղջացաւ, մի՛ 'ի սպառ պախարակեսցի. այլ յիշեսցի այրն այն 'ի բարի, իբրև զհիմն յուսադրութեան 'ի ներունի տուն դիմելոց, յորժամ հոգւովն էջ յայցելութիւն ծնութեամբն անբաժանելեաւ՝ կենդարծել զանդ խոստմնեալն. զոր մեռեալքն ահա կենդանեացս անտարակոյս բերին աւետիս ։ [47] Ընդ որում մաղթեալ իմ պարտաւորի՝ իմաստութեանն ոչ ժամանելոյ, 'ի մեղանացն մասն կարգեալ, բարեբանեալ մեծիդ պաղատիմ. լից զնուազդ իմ բանադրութիւն 'ի յերջանկին համձարեղութիւն. նիւթեսցին ներկայիս հայցմունք 'ի բարդաւաճին յարդաւորութիւն՝ 'ի գերաշխարան արքային աղերս. այցելութիւն խնդրոցս դիցի քո ընտրեցեալ վեհ արքայորդւոյն, զոր միածնիդ օրինակեցեր ։ Յարեանն կցորդութենէ զքո փառակիցդ ճաշակեցաք. տուր փրկութիւն քայց ծառային, ամենահնար, զօրեղ, ահաւոր, 'ի ստեղծողիդ փառս անձեցուցեալ զանքաւելի մեղացն ջնջումն ։ Յիշատակաւ խորհրդոց բարեաց՝ ընդ ողորմեալսն նորոգեսցես. որ ամենահամ ախորժաճաշակ բազմապաճոյճ առակագրութեամբ զնծութիւնդ քո քարոզեալ 'ի մատեան լուսաւորդ կտակի, եկեղեցւոյ ընծայեաց հետս ճարութեան՝ խոստովանութեամբ մատչել առ քեզ, հայր ։ Քանզի ոչ հեռի յողորմութենէ առ այս ցոյց բանի է իմանալի, թէ անդրուստթեանն կախուած չէր անկեալ 'ի յեռանդն սրտին ըղձից, որ զճեպ զղջմանն փոքր ինչ կասեաց ։

Զ. Արդ [48] 'ի յոյշ բերեալ զոր 'ի քեզ անճառելի բարեմանութիւնք, զգթութիւն քո ողջունեսցես. որով զկործանեալն 'ի բազում դարուց՝ բամբասանաց քարաձգութեամբ, երանութեան վերարժանացս. որ յոքնահատան արտասուաց ելիւք զմէջ յատակի յարկին հեղեղեալ ապարանիցն իւր խրախճանութեան՝ սատակակակիծն ապաշաւանօք, հօրն կրիցն գերազանցեաց ողորմելի ողւոյն հեծութեամբ. զոր 'ի յաչաց բանիդ քո արտօսր՝ առ որ մերօվս 'ի յիւրն ախտակրեաց, երկայնամիտդ ներողութեամբ միացուցեալ խառնեսցես, գթած. և զանյարմարն առ նա կարծեցեալ զապականն

բարերանութիւն, 'ի փառս էակցի որդւոյդ կնքելով նովաւ կեցուցես զնա քաղցրութեամբ ընդ աղքատս ժողովրդոց ։ Ո՜վ այս [49] պաւետիկս ոմն բարեշնորհ արգահատէր ընդ Սողոմոնի, ամենայնիւ վարձս վարկուցեալ համակցորդ զուգաձայնութեամբ՝ իբր կենդանեօք նովաւ ընդ նմին վասն նորին աղերսել առ քեզ, զոր յաւելուած կարգիդ տնտեսէ ։ Քանզի և աւստացոյն 'ի նմանէ ստեղծեալն բազմահրաշաւորն մարգարէաձայն պատմագրութիւն ծնութեանն արդարացուցիչ՝ զՍողոմոն ողորմեալ կարգէ. որ զի անպարսաւ է աղօթելն, քան չարաբանելն վասն նորին ։

Է. Ո՜վ որ և ես մաղթեմ մեծ վստահութեամբ՝ նմանակից այսր հեծութեան՝ և զխմն ընդ նմին ընծայել գոչումն. զի թէ կորուսցես զմեզ զատեալ ըստ գործոց, ոչ պակասին փառք քո, զի իրաւամբք քո ճանաչիս. իսկ եթէ զացես, [50] այնքան բարձրանաս, որքան մեծութեդ քում վայել է. քանզի յաւէտ օրհնաբանելի ես դու երկրորդաւս՝ ողորմածութեամբ, քան նախահրամանն ստտկութեամբն ։ Դարձիր տէր՝ դարձիր քաղցրութբ 'ի խնամս գթութեան ձրի և ամէնատուտ պարգևօք սիրոյ մխիթարել յաւէտ [51] զտրտմեալքս համաշաւիղ տաժնապաւ տապոյ տաչորման անբժշկականի ։ Ձեռն եղեալ փրկութեան նորոգեսցես վէրսորն, քաւեալ և պատսպարեալ 'ի մեղսակործանս խորտակմանէ ։ Եւ քեզ [52] միայնոյ սկզբանդ և անսկզբանդ, ընդ սկզբանդ և սկզբնաւորիդ սկզբանդ՝ սուրբ Երրորդութեանդ և միում աստուածութեանդ փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

1 [illegible] ։ Այն կամ այլք ես՝ որ ընաւ ոչ նոքես. և մերա նկատես, տեսանես զամենայն ։ [illegible]. ծնող միածնից՝ որ փառաց է, այսինքն փառաւորեալ. կամ, որ քեզ փառքն է, ըստ այնմ. «Ես զքեզ փառաւորեցի յերկրի». (յոհ. ժէ. 4.) կամ, անքննելի փառօք ծնող միածնից ։

2 [illegible] ։ Իրաւացի ցուցցես կամ հրատարակեսցես զողորմութիւնդ, որ առ իս՝ յընդունելն զհեղքեալս կամ զմերժեալս ։ Այնպէս ջատագովեսցես զքո բարեխնամ ընդունելութիւնդ առ հրեշտակս և առ մարդիկ, որպէս զընդունելութիւն անառակին ջատագովեաց հայրն առ երէց որդին և առ ծառայսն, ասելով թէ զիւտ է կորուսելոյն, և կենդանութիւն մեռելոյն ։

3 [illegible] ։ Զբարեխնամութիւն կամ զերանելի

սահման կամաց քոց յայտնեա ամենայն արարածոց, ցուցանելով թէ որչափ անոխակալ և ներող կամս ունիս առ անարժան յանցաւորս· զի անատակին ոչ ներեցեր միայն, այլ և ընդառաջեցեր և գրկեցեր և համբուրեցեր, և քեզ մեծապէս գիւտ զնա համարեցար: [illegible] [illegible]· զի թէ յառաջին տեղ կոչէիր, կամ հայր, կամ բարերար, այժմ ցուցանելովդ զայնչափ հայրագութ գորով որպէս թէ նորոգ հայր լինիս և անուանիս: Կամ, քոյով այնպիսի ընդունելութբ անուն նոր վայել է քեզ, թէպէտ և այնպէս ես միշտ տակաւին անձանց· և արդարև առացաւ նա ինքն քո անուն նոր, կոչեցեալ [illegible] մաքսաւորաց և մեղաւորաց· այլ նմա ոչ փոյթ ինչ եղև ընդ այն, բայց միայն զի ինձ արասցէ [illegible] [illegible]:

4 [illegible] [illegible]: Այսինքն, մի ընդ երկար ծածկեսցես զմեր մեղսս: մի օրին· Վ [illegible]: այլ օրին· և հին լուծ· Վ [illegible]:

5 [illegible] [illegible]: Զնեխեալ փառութիւն հագեար ցուցս մի թողացուցես ինձ [illegible] [illegible], գործող կամ բերող մահու:

6 [illegible] [illegible]: մի օրին· [illegible] [illegible]: այլ· [illegible]:

7 [illegible]: ք, սաստիկ կործանմանս: Զօր· [illegible]:

8 [illegible] [illegible]: Թէպէտ և 'ի միում աւուր բիւր անգամ մեղանչիցեմ, [illegible] [illegible], ոչ համարեցայց, կամ եղէց խոպան՝ կամ բստ ամենայնի մեղուցեալ, ապաւինելով 'ի կենսատու շնորհ քո: Այս, և հետևեալքն՝ են բանն իմաստ· (Ժե· 2· 3· Ժբ· 18:)

9 [illegible] [illegible]: այլ օրին· [illegible] [illegible]· այսինքն երբև զնա· որպէս զաղամն ինձ համանման:

10 [illegible] [illegible]. զրկելով զնծ 'ի փառաց իւրոց, կամ զուցէ նաև զժողովուրդն՝ ծանր հարկօք· որպէս արտնջեցին առ Ռոբովամ որդի նորա (Գ· Թագ· Ժբ· 4:)

11 [illegible] [illegible]: Ի սեղանոյ բարեացն այ վայելեալ, նենգեաց և 'ի բաց եկաց· կամ, սեղանոյ տաճարին այ նենգեաց, յանդգնեն որոյ խոստացաւ պահել զօրէնս տեառն:

12 [illegible] [illegible]: Զանց առնելով զհրամանս օրինացն, չբազմացուցանել զկանայս յայլազգեաց, և չյարել 'ի կուռս նոցա· որով և [illegible] [illegible]· բստ որում օրինազանցութբ իւրով երբև անպիտանարան ցուցանէր զմեզս:

13 [illegible] [illegible]· տարակուսանօք ապաշխարող, թէ հասցէ արդեօք թողութեան մեղացն:

14 [illegible] [illegible]· աղօթաւոր այ, և յետոյ պաշտօնեայ կաց· կամ, ապաշանօք կանանցն կռապաշտեալ:

15 [illegible] [illegible]: Ահագին և յետ յանկերն 'ի մեզս՝ ապա դարձեալ· ուստի և [illegible] [illegible], երկրայական՝ ընկալեալ լինելն յայ, հաշտութեն, փրկութեն: [illegible] [illegible]· ապագայ ժամանակի եկեղեցն՝ յիշատակ երկիւղի, զգուշութե, խոնարհութե, և այլն: [illegible] [illegible], կամ այլ օրին· [illegible]· այսինքն դժուարահաւատալի գիւտն հոգւոյ նորա, ոչ 'ի կողմանէ զօրութեն այ, այլ զի գիտութբ մեղաւ, և յանդիմանեալ յայ, ոչ զղջացաւ· և ոչ սուրբ գիրն յայտնի ինչ ասանդեաց զապաշխարութէ նորա· քանզի և զբարձբաւանդական զօրս չինեաց կացն, ոչ երարձ, այլ յոսիաս ալեաց յետոյ քակեաց (Դ· Թագ· ԻԳ· 13:) Այսպիսի են պատճառքն՝ վասն որոց բազումք 'ի վարդապետաց ասեն զաղամն անապաշխար մեռեալ· թէպէտ այլք են ասեն ապաշխարեալ· ուստի յերկրայս մնայ փրկութիւն նորա: Տես զենի· լուծ· 28· և յայլն:

16 Ի ձեռնէ ճոխացելոյ ։ Ըստ մասին միայն մնացեալ թագաւորութեանն․ զի տասն ցեղքն ապստամբեցան ։

17 Կիսամեռեալ գործելով․ կամ ըստ փրկութեն, զի ոչ անմեղութեամբ, այլ ապաշխարութբ ապրեցաւ․ և կամ ըստ տէրութեն յորդին իւր, զի կտրեցաւ թագաւորութիւնն ։

18 Երկնեալ որոտմանց ։ Ի խօսս՝ երկու զանազան կամ հակառակ բանից յամենայն տեղւոջ քան երկնել․ զոյգ եղեալ զաղօթսն․ այլ օրին․ քան երկնել․ այսինքն նախատեալ, այպանեալ ։ Իսկ կրկին բանքն են՝ առ․ քոց վասն անկման այնպիսւոյ առն ։ և յուզմանց․ զարմանալ վասն գի․ տութբ և կամաւ և անպատճառ օտարանալոյն յԱյ․ որով մեծ եղև պարսաւ նորա, և փոքր՝ գովեստ իմաստութեանն և առաջին անմեղութեանն ։ Ի գերձեալ․ մեղադրանք խառնեալ ընդ ողբոց․ ընդ ողբոց կամ ցաւակցութե․ վարդապետութի նորա Իսրայէլի քարոզեալ․ խրատիչ բարեկարգութե ամենայն մարդկան ըստ իւրաքանչիւր հասակի, զրովք առակացն զմանկահասակս վարժելով, և ժողովողին՝ զ'ի չափ հասեալսն ։ Իսկ խոստովանն նորա յԱյ՝ 'ի բերանս ամենեցուն նորա գործեալ, որոմագին հառաչանաց նիւթ՝ ողորմելի, ողորմելի օրինակաւ կամ ցաւակցաբար խօսեցեալ ։

19 Զարհուրեցան ․ թխրեցաւ, խորթացաւ․ կամ մոլեգնեցաւ, յիմարեցաւ ։

20 Արարեր ․ փախեաւ, հեռացաւ ։

21 Անարգեցեր ։ մի օրին․ անարգեցեր ։

22 Վասն էր խնդրել ընդ ․ յօժարութիւնն՝ ընդ կապարիչս անտի պաշտամունս, յորոց խափեկին օրէնքն Այ ։

23 Առեալ քամովսայ ։ Փեգովր, որ և Փագովր և Փոգովր, էր կուռք մովաբացւոց, որում զբարձրաւանդակն շինեաց Սողոմոն ( Գ․ Թագ․ ԺԱ․ 7․) ուր անուամբ քամովսայ գնի․ զոր քաջ մեկնիչք նոյն համարին ընդ Փեգովրայ ։ Արդ աստ Քամովսայ․ զի այն կուռք եղև պատճառ կատարածի որդւոցն Իսրայէլի քան և չորս հազար արանց ( Թուոց ԻԵ․ 9․) սպանելոյ, այսինքն այլանդակ տեսլեամբ․ զի ըստ ոմանց՝ կազմեալ էր 'ի սեաւ քարէ՝ կանացի կերպարանաւ․ ըստ այլոց՝ առնաձև կազմեալ էր՝ և անամօթ տեսակաւ ։ Ոմանց թուեցաւ, թէ այս բառ գրելի իցէ՝ ․ բայց այսմ չէք հիմն՝ ոչ յօրինակաց նորեկին, և ոչ 'ի հաւատարի ծանօթութենէ վերագրեալ կուոցն փեգովրայ ։

24 Աստարովթայ ։ Խմանի աստարտէս չաստուած սիդոնացւոց․ զորոյ բարձրաւանդակն կանգնեաց Սողոմոն (Գ․ Թագ․ ԺԱ․ 5 ։) Լուսին էր սա, և արձանն եղջերաւոր կազմեալ, կամ 'ի ճակատ նորա եղջերաձև լուսին եդեալ, իգական ձևով խայտառակութեան 'ի գարշութիւնս գրգռելով զպաշտօնեայս իւր․ որք և մերկանդամ ծառայէին՝ ըստ հաճոյից այնպիսի ածուհւոյ ։ Այս է աստղեալն, որ և ․ և այլն ։

25 Տարան զ ։ Եբարձ 'ի Սողոմոնէ զատացուածս երջանկութեանն, այսինքն իմաստութեան նորա, ամբարշտութեն, և այլն, կինն՝ որ զազամ որսացաւ 'ի կորուստ ։

26 Յափշտակեցաւ ։ Սպան հոգւով զայրն գովելի, կինն՝ որ եղև առաջին զէն սատանայի ։

27 Անիրաւ է գործել ։ Ի Սողոմոն ունիմք խմանալ՝ թէ չար և ընդունայն է վստահել 'ի մարմնաւոր իմաստութիւն, թէ ոչ աստուծով ․ քննեալ զգուշասցի, կամ յԱյ աստինորդեսցի 'ի գործս ։ ․ խոկ եթէ ըստ այսմ պայմանի, այսինքն ըստ մարմնական իմաստութեան տգէտ իցէ ոք, յուսալով 'ի կամս Այ՝ կարէ զերծանիլ յախտաւոր գործոց սողոմոնի ։

28 Ոտնայնութեամբն է խնամոլի: Այսպէս յայտնակի է ըստ մերոց լաւ օրինակաց, այսինքն 'ի գրոց ժողովողին. քանզի յետ մեղացն գրեալ համարին հրեայք, հերոնիմոս, և բազում մեկնիչք. որպէս և հայ նախագրութի գրոցն ժողովողի յայս կարծիս յօժարի. թէպէտ այլ մեկնիչք՝ ոմանք անհաւանելի առեն, և ոմանք անյայտ թողուն: Այնպէս յաղագս գրոցն առակաց համարեցան ոմանք գրեալ յետ մեղացն. ընդ որս և հերոնիմոս: Եւ նա ինքն կիւրեղ երուսաղէմացի ('ի կոչ. ընծայ. գլ. Բ. համար. 14.) առաւ ցուցանէ զապաշխարութիւն սողոմոնի ասելով. «Նաև սողոմոն յանցեաւ. այլ զի՞նչ ասաց յետոյ. յետուստ ուրեմն, ասէ, և ես ապաշխարեցի»: Այս բան գտանի առակաց ԻԴ. 32. ըստ օրինակի ինչ եօթանասնից. որ ոչ գոյ յայլ թարգմանութիւնս. այլ և 'ի մերումն այլ ազգ գնի. այսինքն. «Եւ ընկալեալ զխրատ, ապաշխարեա». կամ ըստ ձեռագրաց. «Եւ յորժամ ընկալցիս զխրատ, ապաշխարեսջիր»: Արդ սուրբ վարդապետս մեր ըստ առաջին կարծեացն համարելով, թէ զժողովողն յետ մեղացն գրեաց սողոմոն, ասէ՝ թողեալ զայն յիշատակարան իւրոյ դարձին, անձամբ զանձն պարսաւելով և կշտամբելով, իբրև բոլորովին մեռեալ սիրոյ անձին և աշխարհի:

29 Ասէ և 'ի մատեանս քահանայիցն: Բ. մնաց. Թ. 29. ոչ յիշին մատեանք քահանայից, այլ բանք նաթանայ և աքիայ սիլոնացւոյ և յովելայ տեսանողի: Բայց գուցէ սուրբ վարդապետս 'ի վերայ մատենից քահանայից առնու զասացեալն (Գ. թագ. ԺԱ. 41.) «Ի գիրս բանից սողոմոնի»: Այս գիրք թէպէտ և այժմ չեն 'ի միջի, սակայն սուրբ վարդապետս, որպէս և այլք ոմանք՝ կարծեն, թէ յայն գիրս գուցէ պատմեալ կայր ապաշխարութիւն սողոմոնի:

30 Յորժամ զգային. յարաբերականն բառդ յորժամ ոչ ցուցանէ զգիրս քահանայից, կամ աքիայ, որք ոչ գոն այժմ, այլ զգիրս ժողովողի, յորում, ասէ, զգիրս իւրոյ անցեալ ընթացից կենացն ցուցելով բացայայտէ: Եւ ապա զյաջորդսն անտի հաւաքէ, որք կամ ըստ բանիցն, և կամ ըստ իմաստիցն միայն գտանին 'ի ժողովողն. և երկար լինէր աստ զիւրաքանչիւրոյ տեղին նշանակել:

31 Օտարին իմացք: Խորհուրդք օտարք 'ի լուսոյ բանին, կամ թիւր մոլար:

32 Ուրուիշ հոլովք: Ոլորք, կամ անցանելի իրաց շրջանք, կամ փոփոխութիւնք. որպէս և ասէ (ա. 6.) «Գնայ հողմ, և 'ի շրջանս իւր դառնայ հողմ»:

33 Աւազահիմն շինուածք: Վասն աւազոյ հիմանն փլեալ շէնք:

34 Ինքնամարտ կռիւ. սէր աշխարհի և ախտից՝ ընդ անձին ասոյ կռուիլ. ըստ բանին (Բ. 23.) «Ամենայն աւուրք նորա ցաւոց, և բարկութեան զբօսանք իւր, և այլն (եւ Է. 26. 27.)

35 Ընդունայնութեան քերթն. յընդունայն հարուածոց կամ աշխատութեանց ծնեալ քերթն. կամ ընդունայն չարչարող: Կործանական իրթանքն: այլ օրին. իրթանաց: Նուաստադանիր երթանքն: 3 օրին. երթանաց: այսինքն վարժմունք կամ ջանք որ 'ի մոլորութիւն արկանեն:

36 Ախմայարար գործութիւն: Աղաւաղիչ կամ հեշտացուցիչ աչաց անհամեստ զարդք: գանկերակ: 3 օրին. գանկերակ:

37 Դժնեադէմ իրք: Ընդ հակառակն առաջնոցն՝ իբր աշխարհի որք խորշելիք են և անհաճոյ իբրև զզժնեայ կերպարանս. որպէս խոշորութիւն զգեստու, ցամաքայինն կերակուր, և այլն:

38 Յուզեմեծ ծուխ. յոյժ թանձրացեալ ծուխ:

39 Վտանգելի 'ի յառ. այսինքն մերձ 'ի յափշտակութեն, դիւրաքարշանելի. զի իբր աշխարհի արագ յափշտակելին՝ կամ 'ի մարդկանէ, կամ 'ի մահուանէ, կամ 'ի ժամանակէ:

40 [illegible] ։ Խառնել վասն փոքրութեն, կամ վասն_գին · այսպէս խնանի աշխարհս, կամ ընթացք կենաց ։

41 [illegible] ։ Յորինե յաշխարհային իրս՝ է իբր ձեռագիր վաճառելոյ գանձն, կամ սորուկ լինելոյ ։

42 [illegible] ։ Պարաստանաց հետազօտութիւն ։

43 [illegible] ։ Սոցատանաց կամ խայտառակութեան պատմութեն ։

44 [illegible] ։ Աղաչք աւուրլ գիւրանցանելի ։

45 [illegible] ։ Զի մի որ հայելով թէ ինքն ոչ կատարա_ելոյ իբրև զաղամոն, կամ որպէս զայլ թերահաւատս, պարծեացի յանձն, բամբասանաց նետս ձգելով յայլս, որով զինքն և զընկերն խոցոտէ ։ Քանզի բառ վերոգրեալ բանից ժողովողին՝ կատարելոց է և աշխարհականն՝ որ քողով ամպարտութեն ծածկեալ 'ի վերին երեսս, զանհաճոյն նոյ գործէ ։

46 Ու [illegible] ։ Թէպէտ և մեզք սողոմոնի յայտնի են, իսկ զզջումն անյայտ մեզ, սակայն մեզք նորա գործովք միայն եղեն՝ և ոչ վարդապետութեք · իսկ զզջումն ոչ միայն գործովք, այլ և վարդապետութեամբ ժողովողին · որովք ոչ միայն առ մարդիկ իւրոյ ժամանակին արձանացոյց զիւր զզջումն, այլ և ամենեցուն յապա եկելոց եցոյց ճա_նապարհ զզջման · և այսու մատամբ զզջումն նորա տաւել առ քան զմեղսն ։ Վասն որոյ յիշելի է այրն 'ի բարի [illegible], որպէս զզխատար յաւտարեն, 'ի [illegible] · այսինքն աղաչ_խարդոց և զարձեալ առ ած · կամ այնոցիկ մեղուցելոց՝ որք զզջմամբ մեռեալ յառ փրկչին գիւմեցին, [illegible] բանականաւ՝ յորմէ անբաժանելի էր ածութիւն, էջ 'ի լիմպոսն՝ [illegible] · փրկել զյառաջուց հաւատացեալս իւր՝ որք անդն կային ։ [illegible] · այսինքն մեռեալքն՝ որք յարեան 'ի մահուանն քում, մեզ կենդանեացս ետուն աւետիս ազատութե հոգւոյն արդարոց · զի այն յարութի մարմնոյն՝ նշան էր ազատութե հոգւոյ · և որպէս քո մարմ_նոյն մեռելութեանցն՝ զմեռեալ զմարմինն կենդանացոյց, նոյնպէս հոգւոյն խշմանցն 'ի սատրինս՝ հոգւոյն արար ազգելութի · և որպէս 'ի մեռելոցն՝ միայն զորոյն մարմինս յարոյց, նոյնպէս յարգելեալ հո_գւոյն՝ միայն զարդարան ազատեաց ։ Եւ ոչ որպէս ոմանք հատարակ վճիռ վարդապետաց համարեցան՝ ասել, թէ յիջանելն քում ազատե_ցան այնոքիկ՝ որք հաւատային 'ի քո, եթէ յիւրեանց ժամանակին ե_կեալ էր յաշխարհ ։ Այս ոչ միայն չէ հատարակ վճիռ վարդապետաց, զոր յայտնապէս խոկ մերժէ ռակեղերան · մեկն · մատ · ճառ լգ · այլ և անհնին · զի ըստ այդմ պարտ էր համարել, թէ նաև տիւրացիք և սի_դոնացիք և սոդոմացիք ազատեցան 'ի դժոխոց, և ուրախանան այժմ ընդ աբրահամու և ընդ իսահակայ · վասն զի ինքն քո վկայէ զնոցանէ՝ թէ ապաշխարհէին, եթէ առ նոսա եղեալ էին զօրութիք իւր · աստի և հաւատային 'ի քո (մատթ · ժա · 21 · 22 · 23 ։)

47 [illegible] · այսինքն ընդ սողոմոնի, կամ վասն սողոմոնի մաղ_թեմ ես պարտաւորս, որ խմաստութե նորա ոչ ժամանեալ՝ մեղացն հաղորդեցայ ։ [illegible] · խառնեա զաւետս բանիս իմ 'ի հանճա_րեղ բանս [illegible], փառաւորեցելոյն սողոմոնի (այլ օրին · 'ի [illegible] ․) [illegible], մատոյին տաւջիկայ հոյցուածք իմ՝ որ վասն յարդութեան [illegible], այսինքն ճնխացելոյն, 'ի [illegible], 'ի յայժ աշխարող արքային ակերանս, կամ 'ի յայժ զզջական աղաչանս նորա ։ [illegible], կատարումն կամ ընդունելութի, [illegible] իմ և նորա՝ յաջողեսցի մեծ արքայորդւոյն · զոր [illegible] , օրինակ եառր խմաստութեանն, թագաւորութեանն, օրինա_

գրուԹիւն, չնուԹեամբ տանջողին, և այլն։ Փրկեա զծառայդ քո, 'ի փառս ամենազօրին բարձրացուցանելով [illegible] զծառային մերոյ նորա՝ խղճմտուԹեան և կատարելուԹեան։ Ճշմարտապէս [illegible], խոստացին բարեաց նորոգեա զնա ընդ սրբովքն. որ անարժանն և բազմաժամն ամենայն զանձուԹիդ քո փառօքեալ 'ի գիրս ամենայն, ժողովդին, և երգոցն, ամենեցուն զնոյն կամս եկեղեցւոյ՝ խոստովանուԹեամբ մատչել առ քեզ։ [illegible], հայելով 'ի ցոյցս բանից աղօԹից, խնամօք՝ Թէ ոչ յերկար ժամանակս չեաք մնայր 'ի ներքուԹեն, [illegible]. եԹէ չարժամն ինչ յանաչատուԹեն ոչ էր եղեալ 'ի սրտի նորա, որ զփոյԹ զղջման փոքր ինչ յապաղեցոյց. խորհելով զմեծամեծ պարգևսն ևս եղեալ առ ինքն, և զերկին զգուշացուցիչ ազդեցուԹեան ևս. որոց անսասանել, խոստրեցաւ յանձնԹողին. յայտնի մասնուԹէ ծանրուԹե մեղաց իւրոց՝ աստուածեցաւ սիրտն, և յանկաց 'ի զղջմանէն։

48 [illegible]։ Այլ դու յիշելով զանձառ բարեաց հաղորդուԹիւնդ, ցոյց զգԹուԹիւն քո 'ի աղօԹն. և զպարտաւէալն 'ի բազում ժամանակաց՝ երանուԹեսդ արժանի արա. կամ փոխանակ բամբասանացն՝ 'ի գովուԹի դարձո զնա, որ բաղձացեալ արտասուօք [illegible], զյափանցանակ յառաջ առաքունիցն ընդդր։ Այս աւանդուԹիւն է ամենայն, և ոչ 'ի գրոց։ Որով գերազանցեաց քան զապաշխարուԹեն զուԹի հօր իւրոյ. զի նա 'ի գիշերի զանկողինն միայն Թանայր արտասուօք. իսկ սորգին զապարանսն՝ զանձի խրախճանուԹեն ընդդր արտասուօք։ Զոր խոստովանեցեա, ասէ, յարտասուս մածնի քո, [illegible], մերով մարդկային բնուԹեամբս, կամ մերով բնական կրիւքս անխառնելեցաւ յիւր անձայնի անձն։ Եւ [illegible], զապաշխան հէն. որ Թէպէտ և մակագիր ունի, 'ի [illegible]՝ [illegible], սակայն անխարնակ կարծի նմա, կամ զի ոչ նորա է ասացեալ զայն, և կամ զի բանքն առաւել հային 'ի նորին աղօԹն 'ի քո, քան Թէ յառաջինն։ Այլ դու, ասէ, զայն ասացեա 'ի փառս որդւոյ քո դարձուցանելով, 'ի մեղուցեալն աղօԹն կատարեա զայն բանն. « Խրատ արասցէ աղքատաց ժողովրդեան իւրոյ, և կեցուսցէ զորդիս անանկաց » (Հանմոր 4. 13.) իբր ասել. Թէ ոչ ընդ անմեղսն, զանէ ընդ ապաշխարողս փրրկեսցի։

49 [illegible]։ Խմաստուն անն, [illegible]. հօգայր կամ աղաչէր վասն աղօԹնի, բարեգործուԹի համարելով ընդ նմա իբրև ընդ կենդանւոյ աղօԹակից լինել, և աղերսել վասն նորա առ քեզ։ [illegible], զոր և յաջորդ բանդ ցուցանէ. [illegible]. այսինքն գիրք կամ պատմուԹեն յորոյ մարգարէական հոգւով 'ի սաղմոնէ չարադրեալ. յորում ածայնի նախախնամուԹեն արդարացուցանի, ցուցանէ միանգամայն և զաղօԹն արդարեալ ջնջ, կամ այսու՝ զի մարգարէուԹէ արար զնա գրել առ իր գրոց, և կամ նմանուԹեամբ անցիցն յորոյ. իբր զի որպէս յոր 'ի մեծուԹեն անկեալ, յետոյ կրկին ևս մեծացաւ, այնպէս աղօԹն 'ի չնորհացն անկեալ մեզք՝ ապա զղջմամբն անդրէն բարձրացաւ 'ի չնորհս։ Որ [illegible]. այսինքն վասն որոյ անմեղադրելի է աղօԹելն վասն աղօԹնի՝ յուսալով Թէ ապաշխարեաց, քան Թէ անապաշխար համարելով չարարանել վասն նորա։ Ի աղօԹնէ գրեալ զգիրսն յորոյ՝ համարեցան և այլք 'ի վարդապետաց, ընդ որս զաւետն ամենք և զգիրդոր ածարանն. իբր զի 'ի Ճառն Թ. առ յովհաննու հայրապետ, յիշելով զբանն յորոյ. Գ. 13. կոչէ յանուն աղօԹնի։ Ոմանք անաի ևս ասեն կարծիս՝ աղօԹնի ասել գրեալ զյովբայն. զի ժողովն լուսովինեայ, այլ և մելքոսս ասր-

գիրս․ անծանօթ է այլ ևս Հնդկերէ յունաց՝ ՚ի կարգել անդ զնշանա-
կան սուրբ գրոց՝ զնիշ գրուածոյ սաղմոսի՝ յիշատակեն զայսպիսին։
Իսկ թէ ո՛ իցէ պատճառն, որ ապաշէր վասն սաղմոսի, սմանք զնիւ-
սայն գրիգոր սաէն․ սակայն ՚ի գործս նորա ոչ գտանէ այնպիսի ինչ․
որպէս և ոչ ՚ի գործս ճառարանին, կամ բարսղի, կամ ոսկեբերանին։
Ոմանք զեպիփան կարծեցին, (՚ի մեկն․ սաղմ․ հա։) Այլ ինձ թուի
զսիրաք խմանալ (զոր սուրբ վարդապետս անուանէ իմաստնոյ ասէր է
կոչել․ տես Շ․ 3․ և այլն։) Արդ սիրաք (գլ․ իէ․) յետ պատմելոյ ըզ-
մեծս սաղմոսին՝ յաւելու ՚ի համարն 24․ « Այլ ած ոչ թողցէ զողոր-
մութիւն իւր » և այլն․ որ արդարև աղօթական բան է վասն անձինն սա-
ղմոսի, և ոչ վասն որդւոց նորա ՚ի յաջորդութիւն թագաւորութեան․
վասն զի ՚ի ժամանակս յեսուայ և որդւոյ նորա սիրաքայ վաղու ևս
բարձեալ էր թագաւորութիւն յուդայ։ Նաեւ ոչ արկաք խնդիր,
արդեօք փրկեցաւ սաղմոն, թէ դատապարտեցաւ․ քանզի և յաստուծոյ
հարցն ոմանք զայս ասեն և ոմանք զայն․ և յետ նոցա վարդապետք՝ մեկ-
նիչք և ճառարանք երկուստեք քննեալ զպատճառսն՝ վճիռ արտադրեցին,
թէ [illegible]։ Եւ սա ինքն սուրբս գրիգոր մերթ զմին ցուցա-
նէ, և մերթ զմիւսն․ զի ՚ի համար ի․ ասէ․ [illegible]
[illegible], [illegible], [illegible]։ Իսկ ՚ի համարն դ և Ն,
՚ի գլուխ ժողովողին՝ սասկաց և յորում ցուցանէ զնա ապաշխարեալ և
փրկեալ։ Այլ կնիք բանից իւրոց զայս դնէ, թէ յասենի եկեղեցւոյ
լուր ևս է զանուլթեանց յիշատակել զնա, քան պարսաւել․ և թէ աղօ-
թելն վասն նորա ընտրելի է քան զանիծանելն։ Այլ թէ զիարդ աղօ-
թել վասն նորա արժան համարի, զի ՚ի համարն Ն ցուցանէ պատմեալ
յիջանելն քնի ՚ի բանս արգելեալ հոգւոցն, ասելի է նախ՝ վասն զի
երկբայութիւն ասէ զայն ապաստութի, և ոչ ստուգութիւն, վասն այն մնայ
տեղի օժանդակից աղօթից․ զի միայն վասն անապաշխար մեռելոց, կամ
վասն յայանի երանելոյն յերկինս՝ աղօթել չէ օրէն․ իսկ վասն երկ-
բայականացն՝ արչափ և բազմաժամանակեայ մեռեալ իցեն, չէ անդէպ
աղօթել, մանաւանդ յասանձին աղօթս։ Եւ այս ՚ի վերայ սաղմոնի ա-
ռաւել հաստատի, այնու զի վասն նորա մէջ ՚ի մեռս հաւատացելոց
կայր կասկած ընդ յուսոյ․ մինչև բառ գրելոյն ալափիոնայ մեկնչի՝ յիւ-
րում ժամանակին մեծանուն քարոզիչ ունէ ՚ի հանդէպ հրապարակաւ
պատմելոց զյայտնութիւն եղեալ առ սրբասէր ոմն, թէ սաղմոն յայնմ
ժամանակի զերծեալ ՚ի պատժոց՝ հանգեաւ յերկինս։ Ոչ հաստատեմք
զյայտնութիւնս, այլ այսու զբարեյուսութիւն հաւատացելոց ցուցանել
զխոսեմք։

Երկրորդ, այս աղօթել վասն սաղմոնի՝ է ցոյց զթոյ և սիրոյ առ
արժանաւորութիւն այնպիսւոյ առն։ Այսպէս աղօթեմք կատարման կա-
մացն նոյ յարարածս, և վասն հաստատութեան փառաց սրբոցն․ թէ-
պէտ և գիտեմք թէ առանց մեր խնդրոյ՝ կամք նոյ անվրէպ կատարին,
և սրբոցն փառք մէջ հաստատուն են։

Երրորդ, այս եղանակ աղօթից՝ բերումն է բանաստեղծական հոգւոյ․
որ սովոր է զանշունչսն հոգիացուցանել, և զանշարժսն զնացուցանել․
այսպէս և զչեղաւորն և զանցեալսն առնել մերձաւոր և ներկայ։ Նոյն
և զբազմաժամանակեայ մեռեալն զսաղմոն՝ ձայնացուցանէ իբր կենդա-
նի, և այնու օրինակաւ փրկութեան աղօթէ։ Այս եղանակ խնդրուա-
ծոյ գտանի և յայլ աղօթս եկեղեցւոյ․ զոր և սուրբ վարդապետս անդ-
արկէ ասա ՚ի համարն դ․ ասելով վասն իմաստնոյն՝ թէ [illegible]
[illegible]․ այսինքն իբր կենդանի զոլով սաղ-
մոն՝ նախա հանդերձ ազերսել։

50 [illegible] ։ Ի գամելոց զմեզ 'ի կորստենէ հոգւոյս, այնպէս փառաւորիս՝ որչափ վայել է քում անճառ մեծութեանդ. զի ճանաչի թէ անճառ է զօրութիւնդ, անճառ սէրդ, անճառ երկայնմտութիւնդ, և այլն ։

51 [illegible] ։ Մխիթարիչ զօրամեռեալս վասն մեղաց՝ ապաշխարողս, որ նմանակից է անձկութեանն սոցունի ։

52 [illegible] ։ Աստանօր առ անձնաւորս երրորդութեանն ասարէ զփառաւորութիւն, և փոխանակ անուան խոստովանիլի անձինն զնէ զյատկութիւնս նոցա. որպէս առաջ և 'ի բանին ԼԲ ։ Ուստի վասն անձին հօր զնէ, [illegible] և [illegible]. զի յատուկ է հօր՝ լինել սկիզբն այլոց երկուց անձանց՝ առանց ելանելոյ յայլմէ ։ [illegible] [illegible]. այսու զորդի խմանայ. զոր եթէ ոք ասցէ սկիզբն բառ արարչութեան, այդ ոչ յատուկ է որդւոյ, այլ երից անձանց հասարակ. առաւ սկիզբն առէ զորդի նկատմամբ այլոց նմային անձին. և զի լոկ [illegible] առաց՝ առանց յաւելլոյ [illegible], յայտ առնէ զորդի լինել այնպէս սկիզբն՝ որ չէ անսկիզբն. և աչա այս է յատուկ որդւոյ միայն ։ [illegible] [illegible]. այսու խմանի հոգին սուրբ. և եթէ մեկնեսցէ ոք, (որպէս ոմանք առնեն) թէ սկիզբն է արարածական սկզբանց, կամ սկզբնաւորող է ընդ հօր և որդւոյ, այդ ոչ յատուկ ինչ է հոգւոյն սրբոյ. զի պատշաճի և հօր և որդւոյ՝ լինել սկիզբն արարածական սկզբանց, և զի նոյն հայր է սկզբնաւորող ընդ որդւոյ և ընդ հոգւոյն, որպէս և որդի ընդ հօր և հոգւոյն ։ Նոյնպէս առ 'ի լինել յատուկ հոգւոյն՝ խմանալի է, սկզբնաւորեալ, այսինքն յառաջեկեալ 'ի սկզբանց, այս է՝ 'ի հօրէ և յորդւոյ. և յոյնականն առելն՝ [illegible], ոչ զբազմութիւն սկզբանց նշանակէ, այլ զերկոսին անձինսն, զորս յառաջին մասանս բանիս [illegible] կոչեաց. ասաւ առ 'ի ցուցանել թէ յերկուցն եւ յառաջ գայ հոգին՝ յոյնական եզ [illegible]. թէպէտ և մի և նոյն բղխմամբ յառաջ գայ 'ի նոցանէ, որով մի սկիզբն բղխման լինին, և ոչ երկու ։ Այս է հարազատ խմաստ բանիս՝ ճշմարտապէս քննելով ։ Եւ զայն բան և զխմաստ յայտնապէս ընկալեալ է սուրբ վարդապետս մեր 'ի սրբոյն գրիգորէ ճշմարտէ ։ Տեսցի 'ի ճառին ԼԸ. խօսեցեալ յանդիման սուրբ ժողովոյն կոստանդնուպօլսոյ, առէ այսպէս. « Որ անսկիզբն, և սկիզբն, և որ ընդ սկզբանն, մի ճշմարիտ է ». և ապա յանուանէ բացայայտելով առէ, անսկիզբն՝ հայր, սկիզբն՝ որդի, ընդ սկզբանն՝ հոգի սուրբ ։ Այլ զի մի կարծեսցի բառ արարչութեան կամ առ արարածս [illegible] առել զորդի, այդ առնէ աստուածաբանն յաւելուածովս. « Զի ոչ եթէ բնութեամբն է լինել սկիզբն ». այսինքն ոչ բառ ճշմարիտ բնութեան պատշաճի լինել որդւոյ՝ սկիզբն, այլ բառ անձինն. զի լինելն արարչական սկիզբն՝ պատշաճի ճշմարիտ բնութեանն՝ հասարակօրէն երից եւ ճշմարիտ անձանց ։ Իսկ որք յայլ միտս շրջել կամին, առելով թէ որդին [illegible] կոչի նկատմամբ արարածոց, և հոգին՝ [illegible] առի, այսինքն սկիզբն կամ սկզբնաւորող այլ արարածական սկզբանց, այսու մեկնութեամբ ոչ միայն խոտորին 'ի մտաց սրբոյ վարդապետին, որ զխաղ խոստովանիլի անձին զնէր յատուկն ընծայել, որպէս առացաք, այլ և տարաժամանն նախ՝ 'ի կարգէ բանին. զի յառաջին մասին յանելն զհայր՝ [illegible] [illegible], զբառն սկիզբն՝ խմանան նկատմամբ որդւոյ և հոգւոյն. իսկ 'ի հետևեալ մասունս զնոյն [illegible] բառն հայեցուցանէն առ արարածս. որում չունին և ոչ մի ինչ պատճառս ։ Երկրորդ, տարաժամն 'ի յատուկ նշանակութենէ բառին [illegible], որ ոչ նշանակէ սկիզբն, կամ սկզբնաւորող, այլ ունող սկզբան, կամ սկզբնաւորեալ. որպէս և այլ այսպիսի ածանցական անուանք, զոր օրինակ [illegible], [illegible], [illegible], ևն,

ըստ բուն նշանակութեանն խուռնից խմանին՝ ունող լուսոյ, փառաց, գունոյ. կամ լուսաւորել, փառաւորել, գունաւորել։ Ըստ այսմ առի (Ագաթանգեղ. եր. 282.) « Զխորդ քննել կարիցեմք... սկզբնաւորքս զանսկիզբն ». այսինքն սկզբնաւորեալքս զանսկիզբն։ Յայս միտս խմանալով և առթեայքն (Հարցմանց. եր. 63.) հարցանէ. « Յանսկզբնէն բղխէ հոգին, թէ 'ի սկզբնաւորէն ». և յետոյ փոխանակ ἀγέννητος բառին դնէ [illegible]։ Այս առնէ զհոգին ասել ἀγέννητος ἀγένητος, յայտնապէս նշանակէ՝ սկզբնաւորեալ 'ի սկզբանց. զի յայտնի բանս սեռական անուանն զօրութի պայմանական է. որպէս և յայլ բարբառս գտանի. ըստ այսմ առնէն (Երեմ. ԺԳ. 18.) « Վ[illegible]ք արոյ », խմանի՝ վերաւորեալք 'ի արոյ։ Որպէս և ասէր փորձապէս ասէ ('ի գոլ. մծին.) « Այլք կայսերաց հրովարտակաւք », այսինքն 'ի կայսերաց ունող զհրովարտակ, կամ պատուիրանաւորեալ։ Այլ յաւէտ ինչ համառօտեցաք միայն 'ի տուգութի մեկնութեա. իսկ զընդարձակ հաստատութիւն այսր խնդրոյ՝ յայլ գիրս հաստուցեալ եմք։

## ԲԱՆ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն տէրս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ո՛չ արդ մի տիրեսցեն անօրէնութիւնք [1] քում պատկերիս կայսերականի արքայութեանդ վերնում, ա̄ծ բոլորից լուսոյ. մի կապտեսցէ գաղտնի ապստամբ զզարդ փչմանդ շնորհի 'ի քո ստեղծեալս կերպէ. մի թագաւորեսցէ մեղքն խափանեալ մարմնոյս մահացուի առ 'ի գլուել զիս 'ի նոյն։ Զի՛ք իմ թագաւոր առ իշխել ընչոյս բաց 'ի քէն, Տէ՛ր, որ անբռնադատ հնազանդեցուցանես ըստ քաղցրութեան, որ բառնաս զկարիս մեղաց [2] ամենակարող բանիւ, որ արեամբդ քո սրբեցեր և մարմնովդ կերակրեցեր. որ կարգեալ սահմանեցեր [3] ուխտ կենաց անփոխադրելի, որ յոգի քո կնքեալ կցորդ քեզ գրելով, հօր քում միաւորեցեր ժառանգակցապէս. որ յանուն զենման միշտ յիշատակաւ քո չարչարանաց առ նոյն բարերար աղօթել համարձակեցեր, ստեղծիչ ամենից և կենաց։ Դու ես ա̄ծ ամենայն հոգւոյ, որ մեծացուցեր [4] զայս տուրս շնորհաց քոյ զամենայն գործոց քո հրաշս. ոչ զերկինս խորոցն զարդուք և հրեշ-

տակայն պայծառութեամբք, ոչ զերկիրս և զմարդկութիւնս և որ առ սոսա են զարմանութիւնք, ոչ զսահման լայնութեան ծովու և որ 'ի նմա են եղելութիւնք, ոչ զանդունդս աղխիքն հանդերձ և որ 'ի նմա են անբաւութիւնք, ոչ բարձրագոյն յօրինմանն այսքանեաց վեհին՝ որչափ առ խմն կարեկցութի, յասեն քո սուրբ մարգարէին՝ քաղցրութեանց յուսոյ բարութիւն, ո՞վ է ած իբրև զքո կարող թողուլ միշտ զմեղս և ջնջել զանօրէնութիւնս։ Ահա արդ խնկեալ են բանք քո, ողորմած, և խոստովանեալ բարերարութիւնք, փառաւորեալ խորք խորհրդոցդ, և երկրպագեալ զեղմանք շնորհացդ։

Բ. Արդարեւ ոչ որ բաւէ յեփրս թարգմանել խօսիւք նրբութական լեզուի 'ի մասանց այտի քումդ գթութեանց զոր առ իս ցուցեր, յօրինիչ. քանզի և [5] մեծ իսկ է զօրութիւն՝ զհնացեալն անդրէն նորոգել բոտ առաջնումն պայծառութեան, քան յանգոյից ստեղծագործել։ Եւ զի ոչ է քո տկարութիւն, որ զօրութիւնդ ես ամենայնի, առ որ բան քո միայն ազդեալ՝ զլութի գործոյն գլխաւորէ, ահա յարիցես փառաւոր լինել, բարեգործ, 'ի ստացուածս այս կրկին անչաւսալի փրկութեան. [6] զի իրաւամբք ուխտի բարձրացի հաստատուն եղեալ մեծագէս օրհնաբան աւետեաց քո ձայն 'ի քուեցդ շնորհ ծանուցեալ, ողորմութեան լռանկ ուղերձեալ, քան 'ի ձեռնագործ ստեղծանելոյն։ [7] Ո՛վ 'ի առ մինն արարիչ միայն ձեռնաչեփ, իսկ առ միւսն՝ առաջնով կոչմամբն և երախտաւոր. ընդ կերպացուցանելոյն և քաւիչ, ընդ նորոգելոյն և բարերար, ընդ հաստելոյն և ողորմած, ընդ կազմելոյն և հնարաւոր, ընդ յօրինելոյն և հեղ, ընդ նկարելոյն ամենազօր, ընդ առաջնորդելոյն և լոյս, ընդ տածելոյն հայր, ընդ զարմանելոյն խնամիչ, ընդ ողջ պահելոյն բժիշկ, ընդ ձեռնկալութեանն զօրավոր, [8] ընդ անպարտութեանն թագաւոր, ընդ արարչութեանն քաղցր, ընդ ամենատուր պարգեւացն առատ, ընդ միշտ անսալոյն ներող, ընդ ոչ բարկանալոյն անոխակալ, ընդ կարեացս վշտակցելոյ ծածկագէտ, ընդ յանձանձելոյ գթոյն առաւել, ընդ գեբանակ գործոյն ած, ընդ անսպառ բարութեանն՝ օրհնեալ յամենայնի։

Դ. Արդ որպէս ստեղծեր մինչ ոչն իսկ էի, և ծանուցար ինձ գոյացուցիչ, և այժմ զհոգի մաղթողիս մարմնոյս տաղաւարաւ յարդարեա անդրէն վերստին յանարատութիւն մաքուր սրբութեան նախնի լինելութեան. զի բազմասցի առաւել աճեցուն եղեալ յաճախ առատութիւն անսահմանելի[9] քոյդ սքանչելեաց նորոգ ներկայիս, քան զանցելոց հնոյն ստուերականաց։ Եւ ընդ ճանելոյս զթիւս մեղացս՝ որքան մնացս թէւս ընթանայ զանթերելիան յիշատակել, արդարացայց յանուն քո հզօր. և 'ի պատմելս ինձէն զանձին իմոյ բիծ, և դու թողցես զամբարշտութիւն բազում մեղանաց խոստովանելոյս, հզօր, ծածկատես, ամենատիրկիչ.[10] զի մի ծայրագոյն լրութեամբ աւետեացս, դարձեալ նախնումն կարօտացայց՝ երանելով զադմոսին զշնորհօք փրկեալսն միրառութեամբն. և փշովք մեղաց յոգի խոցոտեալ, ձեռն քո մխեցի յիս առաւելագոյնս այժմէն վերստին, ծանրս առնելով զերան պարտեացս քան զքաղցրութիւն պարգևացդ, այլ[11] ազատեա զիս օրհնաբանեալ հոգւովդ սրբով, աղաչեմ զքեզ՝ տէր ամենայնի, յօրինաց մեղացն և մահու։ Դու լոյս, թէ անկցի ընդ տկարութեամբ սահմանաւ ճշմարտութեանդ ծագումն իբրև զգրոյն օրինակ. քանզի ուր քաւութիւն է թագաւորեալ՝ վարեալ են մեղք, և 'ի խրախոյս կենդանի բանիդ՝ ոչ է յուսահատութիւն, և ամբարձեալ քոյոց շնորհաց՝ հալածեալ են պարտիքն, և մերձ գոլով ձեռինդ ոչ՝ ոչ գոյ անհնարութիւն, այլ ամենեին լուսաւորութիւն, բովանդակապէս զօրութիւն, անպարտելի կարողութիւն։ Դու ես փրկութիւն, կենդանութիւն, նորոգութիւն, ողորմութիւն, միանգամայն և քաղցրութիւն, արքայութիւն, անեղծութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

---

1 [illegible]։ Մի տիրեսցեն մեղքն՝ հոգւոյս, որ է թագաւորական պատկեր կամ նմանութիւն [illegible], վերին և գերագոյն թագաւորութեանց, այսինքն կամ տէրութեանց 'ի վերայ արարածոց, որում հաւասար արարեր զմարդս, կացուցանելով 'ի վերայ ամենայն ձեռակերտացդ. և կամ երկնային երանական արքայութեան, որում նմանութիւն է մարդս 'ի ձեռն սրբարար շնորհաց և երկնային փառաց։ Արդ այսպիսում թագաւորական երկնանման պատկերի քանի անվայելուչ է թէ անօրէնութիւնք տիրեսցեն։ [illegible], մի յափշտակեսցէ [illegible]

տանէն սատանայ ԴՆՈՐԴ․ զփչումն շնորհին, որ է զարդ հոգւոյս․ զոր օրինակեցեր փչմանն յերեսս ադամայ։

2 ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ԲԱՆԻԴ․ այլ որին․ ԱՇԽԱՐՀԱՓԱՌԱՒՈՐ։

3 ՈՐՈՎ ԿԵՆԱՑ․ Սահմանեցեր անփոփոխելի ուխտ կենաց, այսինքն զհորջորջումն սուրբ պատարագին, կամ զիմանալի խորհուրդս նոր օրինաց․ որ յետ ոչ ԿՈՐՈՒՍՏ մկրտութեամբն և զգեստն հագուստ քեզ առնելով, առ հայր քո մատուցեր իբր որդի ժառանգակից քեզ։

4 ԶՔԵԶ ԳՈՎԵՍՑԻ ԶՕՐՈՒԹԵԱՆ․ փրկագործութեան, արարչութեան, կամ խորհրդոյ սուրբ սեղանոյն՝ մեծացուցեր քան զայլ հրաշալի գործս քո․ ՈՒՐ ՔԵՐՈՎԲԷՔ․ զօրութիւն նոցա, այնպէս մեծացուցեր՝ հանդերձ ամենայն զօրօքն, և զեղեցկութիւն հրեշտակաց․ ոչ այնպէս մեծացուցեր զերկիր և զազգս մարդկան, և ոչ ՄԻ ԱՅԼ ԻՆ ՀՈՐԻՆՈՒԹԻՒՆՔ, զարմանալի իրք․ Ու ԴԱՆՉԱՆ, ոչ այնպէս ընդարձակեցեր զատարածութիւն լայնածաւալ ծովու, և որ ինչ 'ի նմա ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆՔ, զանթիւ կենդանիսն զայսպիսի 'ի ծովու․ ՈՒ ԴԱՆԴԱՂԴԱ․ ոչ զանդունդս խորութեան ծովու և կամ յամենայն, ԱՂԽԱՏ ՀԱՆԴԻՍԷ, խառաչեալ կամ փառաւորեալ այնպէս աչաղգինս ցուցեր, և այլն․ Ոչ բարձրացուցեր կամ փառաւորեցեր յօրինակի ԱՅՍՔԱՆ ՔԵՐԹՈՒ․ այսինքն այսքան զերագանցն իրաց, որչափ կարևկից լինելով ինձ 'ի թագաւոր զմեզս․ առաւ զու ինքնին զայս 'ի վեր քան զայլսն ցուցանելով, առաքեր ընդունով մարդարեին, ով է իբրև զես կարող թագաւոր զմեզս, և այլն։

5 ՄԵԾ ԻՍԿ Է ՇՆՈՐՀՔՆ․ Վասն այնորիկ ոչ որ 'ի բանաւորացս կարող է բացայայտել խորհուրդ, նոյն և մեզ խնդրել 'ի ՀՈԳԵՒՈՐ ԱՅՍՄ, նախ զնմանն ինչ զնմանութեան քոյ՝ թող թէ զիմանալին․ վասն զի սաստկել մեծ զօրութիւն երևի՝ զմեզս հնացեալ ապականեալ հոգիս նորոգել բառ առաջին արդարութեան, քան թէ յանգոյից սանեղծանել զայն․ ոչ զի այս քեզ զերկին իցէ քան զնորոգելն․ որովհետև ոչ է ԱՆ ԹՈՅԼՈՒԹԻՒՆ․ առ քեզ չէր տկարութիւն յոր և է գործս, այլ բոլորովին զօրութիւն ես․ և լոկ բան հրամանի քո կատարէ զամենայն։ Եւ այլ զի սաստկելոյն այդ ծառայութեան փառք քո 'ի կատարելոց զեմ անյայտ փրկութիւն։

6 ԶԻ ԻՐԱՒԱՄԲՔ ՍՐԲՈՅ․ Բանիւ այնր ուխտի՝ եսայեան խառացեալ (ԺԹ․ 10․) « Արդ յարեայց ասէ տէր, արդ փառաւորեցայց, արդ բարձրացայց »․ Հաւատ, ԲԱՐՁՐԱՑԻ, մեծ երևեցոյ անյայտ փրկութիւն իմ․ որովհետև այն աւետաւոր ձայն մեծապէս հասարակաւ եղեալ 'ի ԱՌԱՒՕՏ ՔԱՐԻ, պարգևաց քաւութեան մեղաց սատակել ծննդոյն, քան 'ի ՃԱՆԱՊԱՐՀ ԱՌԱՋՆՈՐԴԵԼՈՅ, քան թէ ամենագործագործելոյն։ Լինելոյն անհարկէ զատուելութիւն փրկելոյն քան զաստեղծանելոյն՝ այնու մասամբ զի յարարչագործելն ոչ արար ած ուխտ կամ խոստումն առ 'ի ստեղծանել, բայց առ 'ի փրկել՝ ուխտիւ խոստացաւ բազմիցս, ներելս և զբազգատութիւն երկուցն ընդարձակէ յաջորդ բանիւս։

7 ԶԻ ԱՌ ՔԵՆ․ Եւ ստեղծանելն՝ արարիչ միայն լինիս և ծանուցիս․ իսկ առ ՔԵԶ, առ փրկելն, առ քաւելն, ԱՌԱՋԻՆՔ ԽՈՍՏՈՒՄՆ, բայց յարարչական անուանէն՝ ծանուցիս և անուանիս և ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ, առ ամենախօս, առ յանդգնութիւն։ Վասնզի փրկելն, քաւելն զմեղս՝ եւ միայն զոյով, ցուցանէ թէ փրկիչն է ած արարիչ, բայց միանգամայն բարերարութեամբ առ յանդգնութիւն։ Զայսպիսի որպէսզի եղիցի ած առ մարդն մեղանչելով, և ոչ առ հրեշտակին յանդգնեցելոյս․ զի առ նոսա ծանուցի միայն արարիչ, հատուցիչ, յորինող, այլ ոչ քաւիչ, ողորմած, ներող, և այլն։ Եւ 'ի բաժանգամ կարգի բանիցս սպրս է խնդրել, թէ 'ի փրկագործութեան փառսն որ ինչ միանգամ արարչական զօրութեան է․ այլ ոչ անզբաղարձեալ՝ յարարչութեան ցուցանի որ ինչ 'ի փրկագործութեան․ առ

ափ որ փրկիչն է, հարկ է զի եղև և ած արարիչ. այլ ոչ բառ անզգա-
ցարձութեն՝ որ արարիչն է, հարկ եղև և փրկիչ լինել։ Զայն հետևումն
յայս աւանդ ուսուցիչ վարդապետս յերկու գիտութիւն բանիս, ընդ [illegible]
[illegible]. ընդ [illegible] [illegible]. այսինքն փրկագործեալն
որպէս ցուցանէ զած լինել ընդ արարչութեանն միածնածնին քաղցր.
նոյնպէս ընդ գերագոյնս զհօրն լինել ած միածնածնին։

8 Ընդ [illegible]. Ի փրկագործելն քաւելով զմեզ՝ Յիսուսիւ
և բարձրանալ ոչ միայն երրև անդրաղէ զպատր, այլ և ծաղաւոր եղ-
խեցով. վասն զի ապաւէլ յամենայն բանութեն ասասնողի, և բաժան-
դակ զպարտիս մեզայն հատուցանել, պահանջէ զանդրարակի զօրու-
թիւն. բառ այնմ « Փրկեսցէ զնաւ բազուկ իմ » (եսայ. կզ. 5.) Եւ
միածնածնին իշխելով փրկելոյն՝ իբրաւունք ունիլ ՛ի վերայ նոցա. բառ
այնմ. « Չէք անձանց ուրբ. քանզի գնոց գնեցայք » (ա. կոր. զ. 20.)
Ընդ [illegible]. ՛ի փրկելն՝ Յիսուսիւ իբրև փրկանաց խնայ կարեաց, և
միածնածնին ցուցանիւ զիւրայ զադանի թշնամութն խնայ. զաւ միայն
Յիսուսեան՝ թէ որպէս ՛ի խնամս չարին հաստատեալ են մեզ մարդոյ ՛ի
մանկութէ, վասն այն ներգոյածս լինիս, և այլն։

9 [illegible]. մի որին. [illegible]. Որպէս ՛ի սանդուղմանեաց զիս, ասէ,
ծանուցաք ինձ արարիչ, այժմ քաւելոյն զհօրի և զմարմին իմ նորա-
գեա յանդրաստութի [illegible], յայն մարդութեն որ ՛ի նա-
խասկիզբն մեղակեն շնորհեցաւ, կամ ՛ի որդութեն որ նախկին ծնըն-
դեամբ մկրտութեն պարգևեցաւ. որպէս զի բազմապատիկ անձնմանք
պայծառապէս ասատութիւն պատճէլի պարգևաց [illegible], այժ-
մու նոր որինաց քան [illegible], թէ քան զհին մանկականն որի-
նաց, և թէ քան զհին մեղակեն ապառաց, այլ և երկրորդ համեմա-
տեալք ու նոր օրէնս, առաւելականք են։ Եւ այս առաւելութի քան
զմանկականն բաղդաղյա է. զի անդ ոչ միայն չլինել մեզաց թողու-
թիւն նորին զօրութեանն, այլ և օրինական յանցմանք յանձնի կին,
եւ ներգործութիւն կարծի ասկաւ։ Այլ և քան զցրախան մեղակ ա-
ռաւելեալ է այս. զի անդ շնորհք միայն եղեն առանց յաղթութեան,
շնորհք արարչի՝ և ոչ փրկողի. որ միայն օրինաց նորայ պահեալ էր։

10 [illegible]. Զի մի յայտնակ բազմապատիկ առաւելութե
նորայ շնորհաց՝ վերածին կարգացուցող աստինայն, երր նորոգ որդեգ-
մկրտութի. որ ոչ գոլով հնարաւոր վասն անկրկնելի լինելոյն, երանե-
ցեց զայնանիկ, որ մկրտելոյն որդին, բանիւ ասպեաին (յա. 1.) « Եւ
բանի ու թողութի եղև մեզաց »։ Իսկ եւ խոյթմամբ մեզացս յանի
խոցոտեալ, ձեռն բարեկութե քո մխեցի յիս. և առաւել եւ ծանրեա-
ցին պարտեա քան զպարգևս քո. բառ նոյն ասպմ. 4. « Ծանրեաց
ձեռն քո ՛ի վերայ իմ, դարձայ ՛ի թշուառութի, զի հարան յիս փուշք »,
որպէս և ՛ի մեասումն (յէ. 3. 5.)

11 [illegible]. Հայի ՛ի բանն հասմ. (ր. 2.) « Օրէնք հոգւոյն
կենաց ՛ի քս յս ազատեցին զիս յօրինաց մեղացն և մահու ». վասն ո-
րոյ քու լեցի. թէ ծագումն շնորհութէ նոր օրինացդ անկցի ընդ [illegible]
[illegible], իբրև [illegible], այսինքն իբրև զեկին հին՝ որ օրինակ
էր. զորմէ և ասէ խոկ առաքեալ. « Որ անհնարին էր օրինացն, որով
տկարանայր մարմնով »։ Այլ ՛ի քո նոր օրէնս՝ թողութի մեզաց [illegible]
[illegible]. այսինքն իշխանաբար շնորհեալ, առաւ մեղքն ջնջին, և
ոչ եւթէ լոկ անսասս լինին։ և ՛ի [illegible], քո կենդանի և ազգազգական
բանիւդ խրախոյսս ասպով թէ ապաշխարեցէք, արձակեցէք, ոչ եւ մեայ
յուսահատութի։ և [illegible]. և յարմամ քո շնորհքն զօրանան,
ասասնան, գերագանցեն քան զյանցանանս, ոչ եւ մեան պարտք։

## ԲԱՆ ՅԻՍՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն ակերս մաղթանաց բանի.*

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

*Ա. Արդ, քանզի որպէս ոչ է առանց Քո ինչ ոգւոց փրկութիւն, և ոչ [1] առանց տեսման աչաց՝ առ լոյս զուարճութիւն, և կամ առանց արուեստին նշուլից արեւու երբէք քաղցրութիւն, այսպէս և ոչ առանց խոստովանութեան ծածկութից և սպղանաց անձին՝ քաւութիւն։ Ո՜վ զինչ [2] օգուտ քեզ է մաքրութիւնդ, եթէ ընդ փարիսեցւոյն դատեսցիս. և կամ զինչ վնասեսցէ զիս պարտիքս, եթէ ընդ մաքսաւորին զոլեցայց. և կամ ո՞ւր ասի պարտաւեալ մարգարէն Յովէլ՝ երիցս կրկնելով զանձին եղկութիւն. և կամ զի գացէ [3] որբոյն դատաստան առ ՚ի յիշատակ աւուրն մեծի. և կամ երբ արդեօք անմաքուր խնացի շրթամբք Եսայի հեռին ՚ի գործոյ ամէն Իսրայէլի. և զկարգ ամենայն պարտաւոր պաշտի ազատեան մարմնոյն՝ խնդս կարեկցեալ յանցաւորապէս առ հայր աղօթել. և կամ յո՞ր թարգմանի առած առակին, թէ [4] սիրտ իմաստնոյն ՚ի տան սգոյ, և սիրտ անմտին ՚ի տան ուրախութեան։ Ո՜վ որ զխայլէն Ադամայ անձին իւրում ոչ գրեսցէ, և [5] զմեղս ամենից իւրեան ոչ համարեսցի, իբր երջանիկն արքայից զհօրյն, կորոյս զիւրն արդարութիւն՝ որպէս անախտակիր գոլ ընութեանս. և [6] ոչ բերկրի սիրտ առ զուարթութիւն երեսաց աւետեօք յուսոյն, ըստ առակելոյն, եթէ ոչ յառաքելոյն Քո ուսեալ՝ ամենայնիւ ահա ըստ ինչ արտմեսցի։*

*Բ. Արդ ըղձալի է ինձ յաւէտ աստանօր [7] խրատն հին՝ նորոգ ընկալեալ՝ հոգեւոր համձարեղին, զոր անլռին իսկ երկրորդեաց, երթալ նստել ոչ յառաջին բարձին հրաւիրից ընդ ամբարշտացն նախրախորհուրդ ժողովելոց, ըստ Դաւիթ և Երեմիա ուխտի կանոնի սահման հաստատեալ հրաժարեցուցին, այլ ընդ զղջա-*

ցեալն սրտիւ պատկառեալն մեղօք՝ և 'ի դատաստա-
նաց մեծին սպառնացեալ ահիւ հատուցմանն, յետոյն
հաւատարեալ ասոէն 'ի յերկրի կամաւ խոնարհութե,
ուստի բարձրեալն Ա̃ծ պարարեալ բերկրի. որով ընդ
նախադասեալն 'ի բազմականն երանութեան համար-
ձակեցայց, [8] թէ ես և թէ նա հետեւեալ սոյնքս : Ո՞-
որ զերծեալ 'ի բամբասանաց բանի մարգարէին, որ 'ի
վէսս ամենս ակնարկի. մի՛ յիս, ասէ, մերձենար. մա-
քուր եմ, և մի՛ զիս տեսանիցէ : Ո՛վ [9] զանկշիան խո-
նարհութիւն երջանկին Պաւղի ինձ նոյնս առեալ
աւէլ ընդ նմին, ես իբրև զանասուն համարեցայ հեր-
քեալ 'ի զգայութենէ, և հասին չարիք ինձ շուրջանա-
կի. և նեխեցան և փտեցան վէրք իմ 'ի յանզգամիս
անբժշկութիւն, և զայլոց ամենից [10] ընտրելոց 'ի յաստ-
րեստանի՝ զկամաւորն կշտամբութիւն մեղապարտու-
թեան անձանցն անարատից. ընդ որս և զՅոբի մեծի
բաժանայի զասելն՝ ես ինձէն առեալ բարբառիմ, թէ
և ոչ զերեսս բաւական իցեմ համբառնալ 'ի վեր առ
քեզ Ա̃ծ :

Գ. Որդ ես [11] ճշգրիտ պատկեր ամենայն երկրի՝ զկնի
խառնեալ ընդ նոյին սպառոխ, և 'ի նոցայցն զաւ իս
դառնութիւն կրկին առաւելեալ, նորօք հեծեծեցից.
Թէպէտ և չէ ինչ պիտոյ գարշութեան գունոյ՝ դար-
ձեալ ողբերգութիւն : Ահա արդ մեղայ, զի անմտութե
գործեցի զոչ հաճոյն քո բազմօք սխալեալ յանցաւո-
րութեամբք. [12] նայեա յիս, գթած, որպէս երբեմն յու-
րացութեանն ըմբռնեալ Պետրոս, զի յոյժ ունայնա-
ցայ : Լուսաւորեա ինձ զողորմութեանդ քո ճառագայթ,
ամենեւին բարերարութիւն. զի ընկալեալ զօրհնութի
քո, տէր, արդարացայց կեցից և մաքուր եղէց [13] յան-
տեղծիցն քո խնոյ ըկողաց : Զանխիմ համարձակութի
զմեղապարտ [14] ձեռինս հաստատուած առ քեզ տարածա-
նել, մինչև մատուսցես զօրհնեալդ քո զաջ 'ի նորոգու-
թիւն դատապարտելոյս : Որդ յաղթեա վերստին ի-
մումս յանմտութեան բոյն հեղգութեամբդ առ իս ժա-
մանեալ մարդասիրապէս. և զամենայն յամենայնի ա-
մենայնիւ քո կարողութեամբդ՝ [15] զառաջին չարեաց միջ-
նորդն և վերջնակարգն թող ինձ, հնարաւոր անհա-
սից : Քո թագաւոր լուսոյն արդարոց :

Դ. Չեմ արժանի յիշել զանուն քո օրհնեալ, զի [16]
վտանգաւոր եմ բարեգործիդ մահու. հարուածոց առ կը-
նիքն, առ ճնարհն, առ փշումն, առ պարգեւն, առ ուանգն,
առ ձիրն, առ անուանն, առ որդեգրութիւնն, առ պա-
տիւն արքայական, առ պատկերն, առ դրոշմն, առ օ-
ծումն, առ ճոխութիւնն, առ համարձակութիւնն, առ
ընտանութիւնն, առ կեանսն, առ լոյսն, առ երանու-
թիւնն, առ յոյսն, առ փառսն, առ անփոխարինելի բաշ-
խութիւնն, առ պսակն անթառամելի, առ խոստմունսն
ծածկեցելոյն, որ քեւ տէր Տէր, բազմօք աւետարանե-
ցաւ ինձ յանձնեցելս իմիս և քարոզիս՝ [17] ունկնդրելոյ և
լսելեաց անլուր ականջացս. որ միշտ յառաջելութե
քումդ բարութեան յորդորատիկ յաւէտ քան զայն
չարիքն իմ յաճախեալ, ՚ի սպառ կործանեցին, մեր-
ժեալ ՚ի կենաց ընդ մահ կարգեցին, ծառայ կարգեալ
ապականութեան. Այլ արդ դու միայն իրաւացիդ և
Ճշմարտադատ բարերար՝ օրհնեալդ ՚ի գթութեան, մե-
ղաց քեզ անօրինեցայ անիրաւեցայ. վասն որոյ և եղ-
ծայ զեղծայ յանցեայ անգթաբշտեցայ. և ոչ լուայ խոս-
տովանեալ և երկրպագեալ զօրեալ քո բանից, որ [18]
դու իսկ երևեցար անձառելեաւ քո սիրովդ, զոր գրեն
իսկ մեծ է, և նշանակեն սարսափելի. Տէր արդա-
րութիւն և փառս և մշտնջենաւոր զօրութիւն, և ինձ
պատկառեցելոյ ՚ի քէն, խնամակալ, քաւութիւն և օ-
գնութիւն և բժշկութիւն, օգնութիւն և պահպա-
նութիւն սրտի և ոգւոյ. բարերանեալդ յաւիտեանս
յաւիտենից. ամէն։

---

1 Առանց փեսային ազգս։ Օրինակօք կամի ցուցանել՝ թէ ոչ գոյ քա-
ւութիւն մեղաց առանց խոնարհ խոստովանութեան և մեղադրելոյ անձին.
որպէս ոչ գոյ փրկութիւն հոգւոյ առանց քոյ, և ոչ զուարճութիւն լու-
սոյ առանց տեսութեան աչաց, և ոչ առանց առաջինին յառաջընթաց
լինելոյ՝ երևի քաղցր ծաղկունք սրտոց։

2 Օգտակար ինչ է։ Զ որին. օգտակար է ինչ։ Իբրեւ զու մարդութիւն ունի-
ցիս. և յայն պարծիցես, զինչ օգուտ է քեզ անտի, յորժամ ընդ
փոփոխեցուսցէ պարտաւոր գտանիս։

3 Մինչև դարձաւ։ Մինչէ այս ասէր մարգարէն՝ երկրա փոյ անձին
ասելով, և զահագին զատաստանն յիշելով (Յովել. ա. Յ. Բ. 11.) և
կամ այլ անձեղ որ՝ պարտաւոր զատաստանի կարծիցի. այսու զի
սակաւ յիշէ զօրն զատաստանի. և ձայն իւր, որպէս անմարմար չմնալիւ
համարեալի եղեալ՝ վասն աշխարհն զինչն՝ պղծութիւն։ և չիւրէ ամ

որդին ոչ ազատեան մարմնոյն խնամ տկարութեան կարեկցելով. իբր յանցաւոր ագահութեան հայր թէ ընդէր թողեր զնա, որ է եղանակ յանցաւոր ազդեցութի. մինչ այսու իբր պարտաւոր պաշտօնի կամ ձեռնադրութեան քրիստոս :

4 ՍԻՐՏ ԽՈՆԱՐՀՆ : Իսկ ժողովողն է (Է. 5:) Այս ասած կամ փոխ ազատմանեան ատակին չարաբարութեան. որոց յարմարելի է. կամ յոր մեա հայի : Եթէ ըստ մարգկային քաղաքական կենաց եւ խորհելով, խնամոյն զտրամադիս աշխարհի տալ պարտի յեւսանելի վասն զգուշութեան անձին. և անմխա է՝ որ զսրախոյսն յեշելով միշտ և 'ի նոյնս չանալով, անկանի անզգուշաբար 'ի վտանգս և 'ի վնաս, այսպէս եւ տալ ըստ հոգեւորական կենաց՝ խնամոյ է միշտ զխոր զմեզս և զպակասութիւն յիշել, վասն ներբաւին զանանցս, և յաղագս զգուշանալոյ :

5 ՉԱՐԱԽՕՍԷ : Ոչ է բաւական, ասէ, զոգասմայ մեզն զրել, համարել անձին խոյամ. քանզի զիանելք թէ ազատման ամենեքին մեղք. և մնանեցուք 'ի կարիս մեղաց : Այլ եթէ նաև զայլոց ամենից մեզսն ոչ խիղեան համարեսցի վասն ընութիւնակից զոլոյն և գիւրաաոչ խոլե զոյլս, ոչ միայն զայնոցիկ մեզսն որք ներկայք են կամ կենակիցք. որոց զուցէ պատճառ եւ լեալ իցէ չար օրինակաւ. այլ և զանցելոց մեղուցելոց. իբր եղջանիկն ապաշխարող զութիւն զհարանցն մեզսն, ասելով. « Մեղաք մեք ընդ հարս մեր » (սաղմ. ՃԵ. 6 :) Այսպ որ ոք ոչ այնպէս համարի, այլ ամբարտաւանէ իբրև զփարիսեցին, այնպի սին կարուանէ զխոր արդարութիւն՝ եթէ ունէր. որպէս ՓԱՐԻՍԵՑ-ՒՈՅՆ. որպէս թէ ինքն 'ի ներքոյ ախտից բնութեան անկեալ ոչ իցէ. կամ իբրև անկարեկից այլոց մեղուցելոց, սխալելոց. փոխանակ զի 'ի տեսանել կամ 'ի լսել զայլոցն սխալումն, խորհել պարտ էր թէ ինքն եւ նման նոցա սխալեալ իցէ, կամ կարէ սխալել :

6 ՈՒ ԲԱՐԵԿԱՄ ՄԱՐԴ : Ըստ առակելոյն (առակ. ԺԸ. 13.) « Սրտի բարկանեցելոյ երեսք ծաղկին ». եթէ ոչ տեսանել յասացելոյն՝ ըստ ոչ աղբամեալ վասն մեղացն (Բ. կորն. Է. 10 :) Եթէ հաւատացեալն յիշատակաւ մեղաց և ապաշխարութեան խոյոյ ոչ տրտմեսցի առ 'ի սիրոյն ոչ, ոչ կարէ սիրտ նորա սփոփել յուսով արքայութեան. և ոչ գեղք նորա ըերեն զուարթութի, այլ զաանութի 'ի սրտի և յերեսս երէ միշտ : Արդ տասուք ապաշխարութեան զուարթայուցանեն զպատկեր գիմաց :

7 ԽՐԱՏ ՀԻՆ : Սողոմոնի (առակ. ԻԵ. 6.) « Մի 'ի տեղիս մեծամեծաց մնասցես, և այլն ». զոր և ակրն երկրորդեաց (ղուկ. ԺԴ. 8 :) Զայսոսիկ բանս հոգեւորապէս խնամոյ ասէր փոխադրելոս, մի ընդ արդարս ունել զանձն. զի է ամենայնից լինել նախախնարհորդ հպարտաց. յորմէ զգուշացուցց զանիծ (սաղմ. Ա. 1. ԻԵ. 4. 5 : և երեմ. ԺԵ. 17 :) Այնպիսի բանիւ զանիծ և երեմիաս ինքնանց կանոն հաստատելով զգուշանալ 'ի բարեկեցութէ հպարտաց, նոյնպէս և զմեզ հրաժարեցուցին : Այլ զգեղական սրտիւ և յերկիւղէ զաստուածոյն ոչ կամաւ հաստատել առ խոնարհութէ ՅԻՍՈՒՍԻ, նուաստից՝ որք զյետին տեղի ընտրեն, ընդ որ զուարճանայ նա :

8 ԹԷ ԷՐ Ն ԲԷ ՆՈ : Թէ եւ մեղուցեալս, և թէ նա անմեղն, որ նախաղաց է սրբութե, ամենին խոնարհութեամբ գնալով, համարձակեսցի 'ի բազմակատս արքայութե : Ա- ոչ Վ... սրով ազատեսցէ 'ի կրաւորութէ մարգարէին, ոչ ... առ բարձրացեալս հայի, և է բանն եսայ. (ԿԵ. 5.) « Որք ասեին՝ 'ի բաց կաց յինէն, մի մերձենար յիս. զի սուրբ եմ » :

9 ԶԱՆԿԱՐԾ ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ : Զանհամեմատ խոնարհութիւն երանելոյն զաւթի ամենայն թէ աստիճանք և պաշտօնին. և գիտ խոստովանիմ

ընդ նմա՝ անտառն եղեւ, անմատչելի. և թէ նեխեցան վէրք մեղացս 'ի յանդգնութենէ անզգուշութեան, վասն անբժշկելի կամ անուղղելի անզգամութեան. զոր սաղմոսն ասէ, յերեսաց անզգամութեան իմոյ։ Եթէ այսպիսի խոստովանութեան անհամեմատ երկրի ընտրեալ անձին դաւթի, և սակայն առանց ստգանանաց ասէր նա ճշմարտութբ, եւ առաւել ես բազմամեղս ունիմ ասել առանց մեղադրութեան։

10 ԸՆԴԵՐԵՑ 'Ի ՅԱՌԱՋԱՑԱՆԻ։ Երից մանկանցն 'ի բաբելոնի, որք 'ի գերութեան գոլով ընդ ձեռամբ անօրինաց, ինքեանք ընտիրք միայն յանձպաշտութեն. և սակայն անարատքն՝ կամաւ զմեղապարտութիւն հարցն ընկալան յանձինս. որպէս և եզր քահանայ զերեսս անգամ ոչ համարձակէր ամբառնալ (Բ. եզր. Թ. 15։) Զոր ինչ ցայտեալ ասաց սուրբ փորձապետս, էր լուծումն տարակուսանաց ընթերցողաց ոմանց, որոց խոստովանողական բանք իւր կարծեին երեւիլ քան զչափն անցեալ։

11 ՃՇՄԱՐԻՏ ԴԱՏԱՒՈՐ։ 2 օրին. ճշմարիտ։ Նա, ասէ, գոլով ամենեին նման պատկեր ամենայն ԵՐԿՐԻ, մեղաւորաց, խառնեալ զպարտիս մեղաց իմոց ընդ նոցին պարտիս. և 'Ի ՆՈՑԱՅԻՑՆ, 'ի նոցա մեղացն կրկին անձեցուցանելով զցաւնութիւն սրտիս, այնպէս հառաչեցից. թէպէտ ուր գոյ անարգ գոյն, չէ պիտոյ յաւելուլ այլ տգեղութիւն. այսպէս 'ի վերայ գարշութեան յատուկ մեղացս ոչ է հարկ զայլոց մեղսն 'ի վերայ բարդել։

12 ՆԱՅԵԱ ՅԻՍ։ Զոր օրինակ յանկանիլ պետրոսի յուրացութիւն՝ դարձար հայեցար 'ի նա գթութեամբ առ 'ի զղջացուցանել զնա (ղուկ. իբ. 61։)

13 ՅԱՆԱՐԺԱՆԻՑՆ ՔՈ։ Մաքրեալ սրբեցայց 'ի մեղացս՝ որք չեն ստեղծուածք քո, այլ իմ արարած են, և զիս լլկեն. չարչարեն առա տագնապաւ խղճի, և անդ անհերքելի տանջանօք՝ եթէ քաւեալք ոչ իցեն։

14 ՁԵՌԻՆ ՀԱՐՈՒԱԾՈՅ։ Մեղօք կարկամեալ, գօսացեալ է ձեռն իմ, գործնական զօրութիւն հոգւոյս. և չեմ կարող համարձակ շարժել, դու տէր, օրհնեալ աջովդ բժշկեա, որպէս զչորացեալն ձեռամբ։

15 ԶԱՌԱՋԻՆ ԼՈՒՐԻՆ։ Զմեղսն՝ որք նախ բուսանին 'ի մանկութեան, և գործին 'ի տգիտութէ. ՄԻՋԱՀԱՍԻՆ, մեղօքն՝ որ 'ի յաճեցեալ հասակի գործին՝ և 'ի ակարութէ վասն բնութե ախտիցն. և ԾԵՐՈՒԹԵԱՆ, որք գործին 'ի կատարեալ հասակի, և գիտութբ և կամակարութբ, որք և բստ չարութեն վերջին են, այսինքն ծանր և դժուարաքաւելի։ Թող ինձ զայս ամենայն ամենահնար զօրութբդ. դու որ թագաւոր ես ԼՈՒՍՈՅՆ ԱՐԴԱՐՈՑ, այսինքն արդարոց որք 'ի լոյս են, մաքրութբ պայծառացեալք, կամ լուսաւորիչ արդարոց։

16 ՎՆԱՍԱԿԻՐ ԵՄ։ Վնասապարտ, կամ պարտաւոր եմ մահապարտ հարուածոց և չարչարանաց բարեգործից. կամ լաւ ես, մահու արժանի յանցաւոր եմ առ բարեգործդ. իսկ զի յանցաւոր եմ ԱՌ ԲԱՆՆ մկրտութե, և յայլն որ 'ի կարգէն յիշատակին, և ամենայնն են արգիւնք մկրտութե՝ թէ այժմ և թէ 'ի հանդերձեալն։ ԱՌ ԱՆՈՒՆՆ քրիստոնէական, որում յանցաւոր լինիմ չար վարուք։

17 ՈՒՆԿՆԱԽԻՑ Ի ԼՍԵԼԵԱՑ։ Խցեալ ունկամբ, և փակեալ առ լսելութիւն. երկոքին ես նշանակեն՝ անլսու։ Որ Գրշ. որչափ քո բարութեանց առաւելուր առ իս, այնչափ բազմապատիկ ես աճեցին չարիքն իմ։

18 ԴԱՐՁ ԻՄ ԵՐԵՍԱՑ։ Կամ զմարմնով երեսն յաշխարհ ասէ, և կամ զմտաւոր երեսն առ սուրբս, որպէս ասացաւ 'ի բանն Ի. ըԾ. 10. և ԻԵ. ըԾ. 16։

# ԲԱՆ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակող առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ո՞ւ արդ առ երկրածին ոք [1] պաղատեցայց այր մահացու ամենապատիր, [2] եթէ ընդունայն է աղաղակելն. առ մահկանացու բանական, եթէ սուտ իցէ փրկութիւնն առ յուսոյն վստահութիւն. [3] առ մարդ ոք եղծական, եթէ ընդ տկարութեան բանին և նամիր է զօրութիւնն. [4] առ իշխանս երկրաւոր գահից, եթէ անցաւոր է ընդ ինքեանս և իւրեանցն բարութիւն. [5] առ եղբայր ոք հարազատ, եթէ կարօտ է կամելոյն առ անձին անդորրութիւն. առ հայրն իմ երկրաւոր, եթէ պակասեալ են խնամակամքն ընդ աւուրց նուաղութեան. առ մայրն իմ որ երկնեաց, եթէ կասեցան զթութիւնքն ընդ նահանջել կենդանութեանն. առ թագաւորութիւնս աշխարհի արդեօք, [6] որք զմահացուցանելն միշտ արուեստաւորեն քան զկենագործելն. այլ առ քեզ բարերար ա̃ծ օրհնեալ 'ի բարձունս, որ կենդանի ես և զկենդանութիւն տաս ամենայնի, որ և յետ վախճանին զօրես անեղծապէս նորոգել:

Բ. Որ եթէ փախնումք 'ի քէն, դու զկնի ընթանաս. եթէ տկարանամք, զօրացուցանես. եթէ վրիպիմք, շաւիղ դիւրութեան ուղղես. եթէ պատկառիմք, քաջալերես. եթէ ախտանամք յանձն և 'ի մարմին, բժշկես. եթէ դարշանամք մեղօք, մաքրես. [7] եթէ սուտիմք, քո Ճշմարտութ̃դ արդարացուցանես. եթէ յանդունդս ներքինս սուզեալ գլորիցիմք, յերկինս ցուցանես. եթէ 'ի կամաց մերոց ոչ դառնամք, դու դարձուցանես. [8] եթէ մեղանչեմք, ողբաս. եթէ արդարանամք, ժպտիս. եթէ օտարանամք, սգաս. եթէ մերձենամք, տօնես. եթէ տամք, ընդունիս. եթէ յամրանամք, երկայնամտես. եթէ մեք ժխտեմք, դու առատապէս շնորհեալ

ընձեռես. եթէ լքանիք, սրամիտ. եթէ արխանաք, խնդաս:

Դ. Որպէս [9] հարիւրորդ երկրորդ սաղմոսն օրհներան հրաշագործական զվեհատելոյս զոհութ ափափել, և մեծ յոյս կենաց աւետարանէ առ փրկութեան հանդէս. որ յաղթական է գլխոց և տարակոյս բանաւորութեն. որ իբր զխոշոր տէրունի նշան բարեբախտ պանծալի գրանչելափառ, անխախտաւորհելի բարձրութեամբ լուսոյ և անպարտելի վերնոյն զօրութեամբ կանգնեալ է, ափոյեան անվանական և անշարժական ամենայնիւ յաւիտենական ընդդէմ անբարի բարույ բռնութեան Բելիարայ, որ ունի յիմրեան զանձս հողեղ օձաից գիտողաց մտաց ընծայեալս զպարտուին մահու և զլուծումն մեղաց, և յոյս կրկնս յերկնս յաւիտեանս, և վերագունն խաւարման աներևութեան արգարոյն, կանոնս բարեհրաւէրս և կենդանատուս զրեալս հոգւոյն ող. որպէս ամենայն խիկ երգ սաղմոսացն մաքուր օրից է տեսանելի կարգ կենաց մարդկան նկարեալ:

Դ. Զի թէ 'ի նախնումն [10] տեսար կերպարանն զոյս աւետիս և փառաց թէին ընդդրեալ ունէր՝ կործանման մահու նախամաման մեծ աւետագիր և կեանս երկնակրօնս վերնականցաս միշտ անձնաւէլս, և այն՝ ջինջական գիրն և յեղանակաւոր օրէնակն, և պաշտօնն գատապարտիչ վհատութեան յանցաւորացն, և խափանելի կտակն երկրայն, և տկար հաշտարարութիւն միջնորդացն, և թերութիւն բանից մաղթողացն: Որ զի թէ Սնանելի փրկութիւնն խոստովանելի է, անտառս վկայեալ յետ այնքանեաց մեղանաց անբժշկականաց. որ արեանբն արդարոց ելից վտխրեալն մեծի թագաւորին հրաշանօքն քաղաք հայրենի, բաց մարգարէագիր անաւտ պատմութեան. որ և [11] զմեծն խիկ անսանողաց բազմերախտս ձեռնկալութե խնամօրէնն պաշտպանութեան նախնականքն յարկին անօսութեան, մանկամարդ խրեան և նախնի, մերձեայն մահու արոցեաց, 'ի յերկրի մատեանս խղեալ դժնդակ սանջանօք մաշեաց, իբր խորհրդով ապստամբութեան զյուսոյն փրկանակ կարեալ: Նա որով զչար յաւերուածն մեղկանական [12] զբրէականն վերնամարտութիւնն 'ի բարձրեալն յանդգնութե. քանզի ոչ պատկառեաց երբէք զաւեղ-

ծովն պատի. եւ [15] զանուն յիւրաքանչ խորանէն մեր-
ժել. հալածեալ զնոյ հովին, Ինքնաւոր զանձն զատա-
նեալ։ Քանզի զնոյն տաճար տիրական խնկարկութե
հաստատելոյն տաճարն՝ հաշակութն երկրի տեսարան՝ ըղ-
ձարափելոյն ազանց որբառան, որ տեսին հրեշտակա-
կանք եւ ծածուկն հրամանք յաղթողականք լուսաւորա-
պէս յայտնութեամբ աղգեալ երեւէին, զայն վայր երկ-
նանման աչաւոր պատշէլեանս՝ [14] Մեւաւոր ամեն
քառագլխեանն նախանձարկու պատկերի աւերածոյն ան-
ապատի պաշտօնեակեղ զարշելի եւ զիւաձեւնձեր զոհա-
րան պատրաստեալ կազմեալ։ Օրհնեալ զալքայն երկ-
նաւոր 'ի յալքայական կոյից, զամենահզօրութեան՝ ո-
նոյն 'ի տապուածոյ խրոց, զատնուտերն՝ անհանգիստ
եւ թափառական տատանեալ, [15] Մշեղղեբուզոյ ձեռան
նկարեալ, եւ զանունն աշեղ վասպանզի արարեալ. զե-
րի տարեալ զաւանդ զոլերցն, որեալի զոզորմածին մանն
նուազեցուցեալ. արուեստն փորու ապարանք զարահն
լուսոյ կարգեալ, եւ ընտրից ունողին եւ ոչ գլխոյն տարա-
ւոր [16] յիւրայնոյն եդեալ. հատեալ զցանկ հզօրին, բախ-
տից հնացից զսեզանն մեծախորհուրդ արեանն ոսկեան
երեւեցուցեալ։ Այնեալ հեռս բազումն ընթացելոյ 'ի
զայթակղութիւն, հոլին կորուսեան հօտին տատակ-
մանն, մոլորութեան բանն վարդապետ, [17] եւ այն՝ զի-
տութեամբ կրօնիցն օրինաց, հայր ունելով զմեծն Ա-
զեկիա զնմանակիցն Պաւղի։

Ե. Յորժամ տագնապ զամենայն չարեաց, որ եւ զնոյ
պատիւն՝ որ զալքայութեանն փառս ընծայեալ նմա,
հայհոյեալ եւ թշնամանեալ, եւ [18] զաղօթկերպն բաղ-
մութիւն սուսերու մահու խողխողեալ։ Յնաանի զա-
ւաձան, մերձաւոր վասնից, հարազատ տատակից, կցոր-
դակից ազանց։ Ոչ Աստուած ոչ զոյր զաւնոյ. զի ոլոա-
ցեալ էր զնա. զԱբրահամ ոչ էր յիշել. զի խորթա-
ցեալ էր 'ի նմանէ. Սահակու ոչ էր աղօթել, զի նզո-
վեալ էր 'ի նմանէ. Յակոբելի ոչ էր պարծել, [19] զի տա-
րագիր էր ամենայն կարմանն մեծախորհուրդն շնորհի.
զգուշութեան երգ ոչ էր նուագել, զի կշտամբիչ էր նո-
րին. [20] 'ի քաւարանն ոչ էր մերձենալ, զի պղծեալ էր
զնա. 'ի տապանակն ածազիծ ոչ էր ապաւինել, զի ընդ
զարշութեան ձուլածոյին էր փոխանակեալ. առ Մով-

սէս ոչ էր կարդալ, զի անքաւելի էր պարտիքն որ առ նա. առ Աստուած ոչ գոյր աղաչել, զի վնասապարտ էր առ նա. առ մերձաւոր մարգարէիցն գունդ ոչ էր դիմել, զի սպանող էր նոցա։ Այլ նորա քաւութիւն մեղաց, և արքայութիւն Թագաւորութե՛ վերստին պարգևեալ տուաւ. զի քեզ, բարերար, բազմացուսցես կարգեսցես զօրհնեալս անձանս և անլռելիս 'ի յազգս տոհմից և 'ի դարս ժամանակաց, և զդուռն յուսոյն մերոյ անփակելի պահեսցես 'ի փառս քոյ բարձրութեան և 'ի փրկութիւն դատապարտելոց, անմահութեանց պարգևաց տուիչ Տ՟ր, գովեալ յաւիտեանս. ամէն։

---

1 Պաղատեցայց։ 3 օրին. պաղատեցայ. և կարէ յարմարիլ յիմաստ կարգի բանիցս. Իբր ասել. Եւ արդ մինչ առ երկրածին որ պաղատեցայ մինչև ցայժմ, մինչ առ մարդ, մինչ առ իշխանս, մինչ առ ծնողս և այլն, ոչ բնաւ. այլ առ քեզ պաղատեցայց բարերար ած օրհնեալ, են։

2 Եթէ ընդունայն է։ Յառաջնում տպագրութեանն զշաղկապս Եթէ յարեցաք 'ի վերջ յառաջընթաց բանին, գնելով. առ երկրածին ոչ է-թէ, ընդունայն է. առ մահկանացու բանական եթէ, ոչինչ իցէ ծերութիւնն, և այլն։ Իբր ասել, եթէ առ երկրածին որ կամ առ մահկանացու պաղատեցայց, ընդունայն է, և այլն։ Այսպէս եդաք յայնժամ ըստ օրինակին ապելոյ 'ի կոստանդնուպօլիս յամին 1774. ուր և յառաջաբանն ազդ առնէ՝ նոյնպէս գտեալ յընտիր օրինակս։ Սակայն ըստ որում կասկածէաք իսկ յայնժամ, և ակնարկեցաք 'ի լուծմունսն՝ ոչ միայն անտարբեր լինել այսպէս ձևոյ, այլ և զի մեր ընտիր օրինակն կիսապատանէ յանցելոյ բանէն, ընդ յաջորդին յարելով. Եթէ ընդունայն է, Եթէ ոչինչ իցէ. և այլն։ Սորին փոխ նորոց ևս հարցափորձեալ զայլ ևս օրինակս, տեսաք զի բազումք ընդ յաջորդին ընթեռնլով զԵթէն, յաւելուն և նշան հարցական՝ իբրև 'ի ձև տարակուսութե. զայն՝ զոր և աստ յետին բանն յայտ առնէ արդեօք շաղկապաւն. — Բանական արդեօք, որ մահկանացու էիցէ. և այլն. զնոյն միտս ցուցանէ և վերջայոյն առելն, Եթէ ոչինչ իցէ ծերութիւնն։ Ուստի ըստ այսմ ընթերցուածոյ լինի նոյն ձև բանին՝ զոր և յայլ տեղիս 'ի կիր առնու սուրբ վարդապետս, որպէս 'ի ԻԴ. 1. և ԻԸ. 1։ Եւ շաղկապն Եթէ իմանի իբր տրամաբանական. ռամկ. եփսամ. իսկ ըստ միւս ընթերցուածին նշանակէ իբր Թէական (ռամկ. էկէր։)

3 Առ Տէր ոչ։ Խնդրելի է որոշումն երից բանիցն՝ յորս ասէ, պաղատել առ երկրածին ոչ, կամ առ մահկանացու բանական, կամ առ Տէր Եղծական։ Թուի երկրածին ընդհանուր կոչել զոր և է ձևանաւ, Թէ մարդ իցէ, Թէ այլ կենդանի զօրաւոր. և սակայն առ այնպիսին, ասէ, ընդունայն է աղաչանքն, վասն զի կամ չիմանայ զխարիս այլոց, կամ չունի կարեկցութիւն։ Եւ մահկանացու բանական՝ տատանելին իմանի այր բանաւոր, Շարատարախօս, բանիբուն. բայց և 'ի սմանէ սուտ է, ասէ, փրկութիւն, զի ոչ կարէ բանիւքն ապրեցուցանել։ Իսկ մարդ Եղծական՝ առնուլ տատանելին զմարդ զօրաւոր, ուժեղ, քաջաձեռն, բայց և նորա զօրութիւն այնպէս մնուն է, ասէ, որպէս և բանն տկար։ Այսպէս առ ո՞

որ յայտնապէս պատուեցայց կամ պատուիցիմ, ասէ․ որոշեալն կամ անկարելի է, կամ չլինել անպարտ արդարացուցանել, կամ չկարէ հանել 'ի վնաս ։

4 [illegible] ։ Մինչ ունիցիմ առ երկրաւոր իշխանս պատգամել, որք թէ և կարող իցեն, սակայն որպէս մինչևանք և իւրեանցն իշխանութիւն անցաւորք են, նոյնպէս և բարերարութիւն նոցա կամ խնամակալութիւն անցանէ, դադարէ կամ ժամանակաւ, կամ փոփոխելով կամացն ։

5 [illegible] ։ Ի յաւէտ բերէ զօգնականութիւն՝ որ 'ի մարմնաւոր ընտանեացն յաւալի թուիցի ։ Մինչ, ասէ, առ հարազատ եղբայր իմ պաղատիցիմ, որ թէ և կամիցի յիս գթալին, բայց կարօտ է գուցէ և նա ջանալ յիւր խաղաղութի սրտի, և յինէն թերևս կամի գտանել օգնութի ։ Մինչ առ [illegible] պաղատիցիմ, թէ գուցէ արդեօք խնամական հօգք նորա առ իս՝ պակասեալ իցեն ըստ նուաղելոյ աւուրցն կենաց․ կամ մինչ առ [illegible] ըստ մարմնոյ, թէ արդեօք գագարեցան գութք նորա 'ի բառնալ կենացն նորա ։ Նաև նոյն անկարկութիւն կայ 'ի բանիս, զի հօրն գնութութի միայն տալով խնամոց և աւուրց, իսկ մօրն՝ գլխաւոր գութ և կենաց, թուի զեկուցանել թէ 'ի գրել սորին փափաքանեալ էր մայր նորա, իսկ հայրն սակաւին կենդանի կայր հինաւուրց ծերութեամբ պատկեալ ։

6 [illegible] ։ Մինչ առ թագաւորութիւնս աշխարհի պաղատիցիմ, ասէ, որք առ յանցաւորս՝ [illegible], այսինքն առաւօտու զուր 'ի կեր արկանեն, պատուհաս մահու տան, քան թէ ներեն և ջանան 'ի կեանս նոցա ։ Կամ, ընդհանուր են սակայն, Ճշմարիտ է թէ երկրային թագաւորն կարէ միայն բառնալ զկեանս՝ մեռուցմամբ, այլ ոչ երբէք կենդարձել․ մահու ունի իշխանութի, այլ ոչ կենաց տիրապէս․ կարող է չարչարանել, այլ ոչ զաղանեալն 'ի կեանս կոչել ։

7 [illegible] ։ այսինքն գքո Ճշմարտութիւն տալով մեզ, արդարացուցանես 'ի սուրբն ։ Նոյնպէս 'ի սուրբն պետարան՝ թէ ոչ Ճանաչեմ զքեզ, հայեցաւ 'ի նա յիս, և պետրոս դառնապէս լալով՝ դաւանեցաւ զՃշմարիտն և արդարացաւ ։ Բայց 2 օրինակք սան, [illegible], այսինքն եթէ սխալեալք 'ի քո Ճշմարտութէդ, դու լուսաւորելով արդարացուցանես․ որպէս պօղոսի արար և այլոց ։ [illegible] 'ի խորին անդունդս մեղաց կամ ծանր ծանր վտանգաց գլորիցիմք, [illegible], զյոյս մեր և զսիրտ յերկինս հայեցուցանես, քաջալերես յերկինս հայել ։

8 [illegible] ։ Առ քո խնայելով ըստ մարդկութեան, որպէս յերկրի աստ ողբոց և ապաշաւ զմեզ մեր ։ Բայց քանզի անոբոշարար առ ձեզ խօսի սաղմոս, այսպէս նմանութէ նշանակեն զգութն ձեզայն, կամ զսանձութեն առ մեզ․ որպէս և [illegible] խմանի հաճութիւնն ձեզ ընդ մեր արդարանալն ։

9 [illegible] ։ այլ օրին․ [illegible]․ որ է սաղմոսն օրհնութեան․ Օրհնեա անձն իմ զտէր, և ամենայն ոսկերք իմ․ յորում ցուցանելով զհայրական գութն ձեզ առ մարդիկ․ զերկայնմտութիւն, զներողութիւն, և այլն, մեծ յոյս կենաց ասանդէ մեղուցելոցս․ իսկ զեւայ՝ աշխարհութիւն է, և մեծ սարսափոյս․ որ և իբրև զխաչն անբաւնականն՝ կանգնեալ է 'ի մէջ եկեղեցւոյ 'ի գիշերային պաշտամանն՝ անխափանելի սփոփեան ընդդէմ հնարից սատանայի․ զի մասամբ երգեցողացն ծանուցանէ [illegible]․ սահմանի․ « Ո քաւէ բոլ մեղս քո, բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո »։ [illegible], ասաք օգտակար բարեացն և հանդերձելոցն, սաէլով․ « Ո լնու 'ի բարութէ

զցանկութիւն քո»։ Եւ չխոստովանէ անեղծութեան արարչին, ասելովն․ «՚Նո-
րոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո, և այլն»։ Որդեակ ազնուոյ իմ։
Զի մի կարծիցի թէ սոսկ ասացեալ տուեալութիւնքն պատշաճիցին միայն Ծր․
ստեղծմանն, յաւելու թէ զմի զայս ստեղծմա մեծացուցի, սակայն բոլան-
դակ խակ ստղմունք եթէ յառակ մոռք ՚նկատեսցին, են արդարև կատակ
կենաց՝ գծագրեալ առաջի մարդկան, իբրև զնոր կատակս զամենայն մա-
սունս ամծպաշտութեան ունելով յինքեան, որպէս և բացատրէ ՚ի յա-
ջորդ համարին։

10 Ստուեր կերպարանն։ Հին օրէնքն՝ որ էր տկար օրինակ նոր օրինացս, յինքեան ընդգծեալ. փակեալ ունէր զայս աւետիս և զայս Թողութեան մեղաց և այլ բարեաց, իբր յառաջընթաց աւետաբեր կործանման մա-
հու՝ որ քանզի լինելոց էր․ և այն զի՝ զյաւուրն այն օրէնք ջնջելի էր, և ըստուերականքն. փոփոխելի օրինակն․ և խափանելի կերպ նոցին․ ըստ որում խառամանքն և տօնականքն, պատարագքն, սրբութիւնքն, խըն-
բութիւնքն, և պաշտօնեայքն՝ ամենայնն էին երկրաւոր և մարմնաւոր․ թէպէտ և փոխման նորա հօգեար էր․ և տկար էր հաստատութեան, այս-
ինքն բարեխօսութիւն կամ՝ նախարարութեան միջնորդացն քահանայից․ Եւ թերութեան, անկատար մնալ բանից, ազօթից մաղթողացն (Զ օրին․ բանից.) այսինքն ամենայն մաղթողաց անկատարութեան։ Զայսօսիկ համառօտս հին օրինաց առնու յառաջելոյն (եբրայ․ Է․ Ը․ Թ։ և Ժ․ կարճ․ Դ․ 7․ 8․ 9։) Դիտես առաւելոր, զի ՚ի չորրորդ համարոյ սատի անկատար ընթացման խմաստք բանին մինչ ՚ի փոխման գլխոյս․ վասն զի կամելով ասել փորձապեան ՚ի թողութեան մեղաց՝ որ ՚ի հին օրէնս լինէր, առաւելութիւն եղբայրութեանն զենուհանաշխութեան նորա, զնէ միայն զառաջարկութիւն ասելով։ Զի թէ յառաջինն այն ՚ի տկար օրինակն կայր աւետիք թողութեան․ որ չէ Էր մաքրէր զխղճմտանս, այս-
ինքն այնչափ զի նոր մանաւէի փրկութիւն խոստովանելի է ըստ ան-
սուտ վկայութեան գրոց․ թէպէտ և բազմապատիկ յանցեաւ։ Նա յեր-
կար ցուցանելով զպէսպէս մեղս նորա և զդժուարութիւն թողութեան, ՚ի փոխմանն ածէ ՚ի վերայ, թէ այսպիսի մեղաց տեառն, և փրկչու-
թեան թագաւորութեան դարձուցանել ձեռն, առ ՚ի բազմացուցանել զգա-
մեստ փրկողին։ Նա սոյս ՚ի փառս սարսուէ զբանն՝ սասնոյ զնելոյ զեղբայրութեանն, թէ եա սաստել ՚ի նորումս յուսալի է թողութիւն դժուարաքաւելի մեղաց, և այլն։ Արդ վասն այսր դուցէ թուեսցի ս-
մանց՝ թէ զայն եղբայրութիւն ընդերայն թողու խմանալ։ Բայց մեզ ս-
սաւել հաւանելի է սակս, թէ ՚ի յաջորդ գլուխն ծր․ յառաջ բերէ
զայն, սր զտեսութեան յայս դարձուցանէ, թէ Գէր էառ զմեղս մեր-
կութեան՝ անձամբ առնելով Եբն Ի յոյժ եւ ողորմութեան․․․ ՚ի
ընդունելութեան նորա․ և որ զկնի այլ բանք ՚ի սոյն բաղդատուն հային։

11 Զձեռն իմ տեսանեմ։ Զէսայի մարգարէն, որ բազում երախ-
տեօք ձեռնտու եղև եզեկիայի՝ հօրն մանասէի․ և աղօթիւք պաշտպա-
նեաց՝ նախնեաց յօրէն, ՚ի նախնեաց նորա չինեալ ապարանիցն և տա-
ճարին․ մանկանց, զաստիարակ մանասէի, և նախնի, ծերացեալն յազ-
գատոհմի նորա․ զի ըստ կարծելոյ ոմանց՝ էր եղբօրորդի ամասիայի
որդւոյ յուդայ, յորմէ հինգերորդ էր մանասէ․ յաւելուն ոմանք ըստ
կրեմնց աւետարանդրոցաց և ըստ հերմինեանի, թէ եսայի անէր էր մա-
նասէի, ամուսնացեալ ՚նմա զեւր դուստր։ Արդ զսա կոչէ Ձծ սե-
սանողաց մարգարէից, ոչ միայն վասն յիշատակեալ առաւելութեանց,
այլ և ըստ մարգարէական բնդարձակ գրութեան, և ըստ երևելի յայտ-
նութեանց․ զոր մանասէ զմնգակ սանձանօք սղոցեաց սսէ, կարեալ
այնու զայս փրկութեան խարդ։

12 [illegible]։ Ի վերայ այսպիսի չար յանկուցած տառս զընդգէմ ներութե կամ խրատունդն այ գործեող [illegible], պատերազմի, որ էր զատնառն այ՝ ընտկարան առնել կայ։

13 [illegible] 2 որին․ [illegible], այսինքն զանուն խորանին կամ տանճարին այ՝ փոխել յանուն կայ։

14 [illegible]։ Սմանց թուեցաւ եղանել ՚ի յայն բառէն [illegible], կամ [illegible] որպէս գրի յայսն․ խա․ 16․ և նշանակել՝ քառակուսի յամենայն կողմանց․ զոր հայ բառն առեալ՝ խորանաւորդ, և ՚ի գիրս փիլոնի, որպէս և յայլ գիրս առի՝ [illegible], առնուլ ՚ի յաւանականեն։ Եւ ըստ այսմ գլխնորդ բառն՝ [illegible], համարին թարգմանութի բառին՝ [illegible], կարծելով թէ կուռք էր չորեքկուսի ջնձնել։ Հին լուծ, առէ՝ թէ քեան կին էր պոռնիկ, զոր յետ առասպելանն ՚ի պաշտօն առեալ, ձուլեալ մանուած զպատկեր նորա, և կանգնեալ ՚ի չորս գէմս տաճարին։ Անյայտ աւանդութի։ Վասն որոյ մեկնիչք այլ այգ առէն․ ըստ աղափինեայ ոմանք համարին՝ թէ [illegible], է նոյն խոկ եբրայական բառն [illegible], կամ [illegible], որ գնի անմալայ Ն․ 26․ զոր եօթանասունքն էգին՝ [illegible] և ՚ի մերս, [illegible]։ (տես ՚ի բանն Ի․ ԸԾ․ 17։) Իսկ այլք առէն, թէ զոր եբրայեցիք քիւռն կոչեն, աբարայիք և պարսիկք առէն քիւլան, կամ քէվան։ Իսկ թէ զինչ կուռք էր, բազումք առէն զարաւեակն․ իսկ կալմէթ մեկնիչ առէ, թէ ասորիք՝ արաբացիք և պարսիկք զերեւակն կոչէին քէվան, որոյ արձանն՝ (ըստ գրեցյն եւսեբ․ պատրաստ․ աւետ․ գիրք ա․ համար 10․) ունէր չորս աչս ՚ի գլուխն, երկու յառաջոյ, և երկու յետուստ․ և ՚ի փակել երկուցն՝ այլ երկուքն բաց մնային․ ունէր և երկու զոյգս թեւոց ՚ի թիկունսն։ Այլ թողեալ զհեթանոսաց զկնարանութն տատանելս, խնաստ տեղւոյս մերինակ ճշմարտի, եթէ [illegible] զարաւեակն խմացուք․ կամ զերեւակն կամ զոյլ ասող․ զի ամենայն զօրութեց երկնից տրար մանուած սեղանս ՚ի տաճարին (Դ․ թագ․ ԻԳ․ 5։) Եւ [illegible] առի՝ կամ վասն չորից աչացն ըստ եւսեբեայ, կամ զի ՚ի քառակուսի խորսինի հաստատեալ կայր․ և կամ ըստ ոմանց՝ ընդ չորս կողմանս տաճարին կանգնեալ էր։ [illegible], այսինքն, ՚ի նախանձ բարկութե չարժող զած․ և հայի ՚ի բանն եզեկիէլի (Ը․ 3․) որ հոգւոյն տարեալ ՚ի տաճարն, ետես անդ զայն պատկեր․ զի թէպէտ յախտ երարձ զպղծութիւն ՚ի տաճարէն, բայց յաջորդքն վերստին դարձան ՚ի կամակորութիւն մանասէի․ որպէս առի (Դ․ թագ․ ԻԳ․ 32․ 37։ ԻԴ․ 9․ 18։ և Բ․ մնաց․ ԼԳ․ 22․) և ցուցանէ երեմիա (ԼԲ․ 34։) [illegible]․ կամ վասն քաղաքին և տաճարին առէ, զորս վասն կայցն յանապատ աւերակ դարձոյց ած ըստ բանից մարգարէիցն․ և կամ զի զայնպիսի կուռս պաշտեցին իսրայէլացիք յանապատին․ վասն որոյ ՚ի բարկութենէն այ աւերեցան մահուամբ։

15 [illegible]։ Ճանաչիկ ածոյն ակկարոնի, [illegible], յարկ ընակութե արարեալ զատուն այ․ գերելով [illegible], զպահեստ արքունի գանձուց և տաճարին, զորս ժողովեալ զավէլին եզեկիաս, ՚ի պաշտօն կայցն ծախեալ մանուած․ կամ զգրրացան անօթս տաճարին գերեալ պատճառ եղև։ Ուղղալի օրինակաւ պակասեցուցեալ [illegible], զհատս տաճարին և զբաժին քահանայից տեսանն․ կամ ըստ ոմանց նուազեցուցեալ զբաժինն տեսանն զխարայէլ կապաշտութե։

16 [illegible]։ այլ որին․ [illegible]։ Զկրահ տաճարին կամ զրան տաճարին՝ աղուեսուն առաանոյի աղարտնք արար․ իսկ այ որ զամենայն ունի, և ոչ գլխոյն տեղի եթող յիւր տաճարէն։ [illegible]

ՇՆՈՐՀՔ ՀՕՐՆ. բարձեալ զվարագոյր սրբութեանցն կամ տաճարին, հմայէր 'ի վերայ սեղանոյ արեանն՝ որ զխորհուրդ մատուցման արեանն քոյ նշանակէր :

17 ԵՒ ԱՅՆ՝ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ. յերկս օրինակս անգիտութեանք. որ վրիպակ թուի. բայց մարթ է և մեկնել, այնչափ քօղ վարդապետ եղև մոլորութք, մինչև անգիտանալ կամ մոռանալ զճշմարիտ կրօնս օրինացն, թէպէտ և հայր ունէր զմեծն Եզեկիաս զածապաշտն :

18 ԶԱՂԲԻՒՐԱՆ, Զբազմութիւն աղօթականաց, կամ աղօթողաց. այսինքն մարգարէից և քահանայից :

19 ԶԻ ԴՈՒՌԳԻՐ ԷՐ : Ոչ կարէր, ասէ, պարծիլ յԻսրայէլ, վասն զի զուրկ և տարագեալ էր 'ի մեծ խորհրդաւոր շնորհէ այնր անուան, որ թարգմանի՝ ածատես :

20 Ի ՏԱՃԱՐԱՆՆ : Ի տաճարին՝ որ էր տեղի քահանութեան : Ի ՏԱՊԱՆԱԿԻՆ ԱԾԱԳԾԻ. որոյ ձև և չափ առ յայ տուեալ էր. կամ զի 'ի նմա պահէին ածագիծ տախտակքն. կամ զի տապանակն զած երևեցուցանէր : Ոչ կարէր մնալ մերձենալ, ասէ, 'ի տաճարն այ՝ ապրել ընդ հովանեաւ նորա, վասն զի պղծեալ էր զայն. և ոչ 'ի տապանակն այ ապաւինիլ իբրև զայլ յանցաւորս. զի փոխան նորա զպատկեր կռոց կանգնեալ էր :

## ԲԱՆ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոկողի առ նոյն ալերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Օրհնեալ տիրաբար 'ի քումդ էութեան, անսահմանելի և անփոփոխադրելի խոկապէս բարի, [1] պաշտօն խնկելի և երջանկութիւն խոստովանելի ամենայն երկրի, [2] երկայն յուսոյ ամենապատրաստ տեսութիւն, գթած ողորմած, որ ոչ պահես ոխս բազմութեան ամաց մեղանաց քթթել մի ական, որ հրաշաւորս զարմանալիս գեր քան զամենայն ազինս նախնեայն անհասման առաւելութեամբ [3] կրկին ընդ միոյ հաճեցար հեղուլ զողորմութեան վերնահոս վտակս ամենախնկաւորս 'ի շնորհաբաշխութեանս նորում։ Եւ [4] զանտուստ զմուտս լուսարանի պատուհանին անձկութեան նշուլից աղօտականաց, չափով զխտութեանցն ըստ Սողոմոնի, և իբր խոկ նմին և նմա ընդ նորին բացեր ընդարձակեցեր թշուառացելումս զառագաստն անջրպետարան ե-

լիոյն ողորմութեան ձրի պարգեւայն ա̃ծականաց. [5] զոր ընդ մէջ իմն մանաւորոք աւետաւոր յիշատակաց եւ 'ի Հնումն զայր տպաւորութիւն օրինակաւ նկարագրեր, զդարձարուքն առ իս եւ ես դառնամ առ ձեզ. եւ յորժամ դարձջիս եւ հառաչեսցես, յայնժամ կեցցես: Նա զի եւ [6] զաղջամղջին սեւութիւն գունոյն փոխարկել 'ի ձեան պայծառութիւն, եւ զարանցն արեամբ ներկելոյն յեղանակել 'ի պատահումն գեղման, ըստ Եսայեայ եւ Զաքարիայ, եւ 'ի մէջ բարկութեանն դարձեալ [7] զոյգ զողորմութիւն. քանզի անապատանալ քաղաքայն Իսրայէլի եւ [8] դարձեալ բնակիլ, եւ ճանապարհայն ամայի լինել 'ի չգոյէ մարդկան եւ [9] անցրէն հեռուիլ, եւ լքանիլ 'ի սոյն ոգւով եւ դարձեալ զօրանալ ձեռամբ, եւ գնալ ա̃յ 'ի տեղի իւր զայրացմամբ եւ դառնալ ողորմութեամբ, [10] ըստ ներողութեան զելոյն, եւ 'ի մէջ սաստիյն սպառնալեացն կրկին պաշտպանութիւն, եւ 'ի սըրտին խռովութեան յուզումն խնամոց գթութեան:

Բ. Այս մարգարէիւն ձայն խնկելի, որ [11] զօրհնեալդ քո գալստեան զազատարարդ հրաման կանխաւ ազդէին, եւ զոր չէ բանիւ նիւթեղէն լեզուի ընդ թիւ արկանել վասն անբաւութեան, փոքունք են եւ նուազունք օրինակք եւ նմանութիւնք, [12] հինք եւ ժամանակաւորք առ աւետեացդ քո յայտնութիւն եւ խաչիդ փրկագործութիւն: Որ յամենայն վայրի կառուցեր զխորանն վըկայութեան արեան քո ուխտի, որք մեծաբարբառ միշտ աղաղակեն [13] քան զզատակնիք մահուն Աբելի զյաղթանակ բարեաց քումդ հանդիսի, կեանս կրկինս եւ անմահականս շնորհաց, մկրտութեան, յարութեան, նորոգութեան, առ քեզ ընտանութեան, ընդ հոգւոյդ սրբոյ միութեան, քաւութեան, ազատութեան, լուսաւորութեան, մշտնջենաւոր մաքրութեան, խոկալէս երանութեան, ընդ վերնայնոյն կցորդութեան, անկապուտ փառաց, [14] 'ի շրթունս մեր ձայնիւ բարձրելոյն հաշտեցուցիչ բանից աղաչանք: Նա զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանօր յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց, [15] աստուած խակ լինել ընտրութեամբ շնորհին, եւ ընդ հաստողիդ միանալ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ, եւ ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ զոր կատարումն երջանիկ խոստմանն, ըստ Պաւղոսի բանին,

ոչ ունէր օրէնս։ Այլ դու, փրկութիւն, եկիր հայրե-
նիդ քո հայրատութեամբ, արարեր և կատարեցեր [16]
զլուսոյն յերկարաձգութիւն, որ առ քեզ պաշտօն ան-
համառօտելի, քաւիչ ամենայնի։ Եւ քեզ փառք ընդ
հօր քում 'ի գովեստ բարերանութեան հոգւոյդ քո
սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

1 [illegible]։ Արժանի պաշտաման ինկաց, այսինքն անկրաւութի պաշտօնելի։ [illegible], երանութի զոր ամենայն երկիր պարտի խոստովանել. կամ, բարերարութի, լուութի ամենայն արարածոց։

2 [illegible]։ Երկարաժամանակեայ յուսոյն արդարոց՝ [illegible], ամենեցուն, կամ ամենեքին պատրաստ և հաստատուն անսուտ ութի, կամ խնամարկութի։ [illegible], որ ոչ պահես ոխս [illegible], 'ի վերայ բազմամեայ մեղաց մերոց՝ և ոչ [illegible], և ոչ վայրկեան մի. թէպէտ և մեղքն բազմաթիւք իցեն, և ամօք բազմօք գործեալ, այլ գթութի քո ոչ տանի պահել ոխս. այսպէս ապաշխարութի, խրատէ, յորդորէ։ Թուի զասել սաղմոսին, և ոչ յաւիտեան պահէ ոխս, իմանալ՝ ոչ երբէք։

3 [illegible]։ Ի նոր շնորհապաշխութեան՝ փոխանակ միոյ խառնման կամ բարւոյ հին օրինացն՝ կրկին պարգևեցեր. զի այն՝ մարմնաւոր բարիս խոստանայր, կամ լոկ թողութի մեղաց. իսկ նորս՝ սրբութիւն շնորհաց և երանութիւն փառաց, և որ յոյժ սիկ յարմարելագ պարգևք հրաշալիք, անբաղդատ առաւելութեամբ քան թէ յառաջին ազգս նահապետաց. զեղեալ յողորմութենէ ոյ իբրև վտակք երկնաւորք։

4 [illegible]։ Զայնր հին օրինաց զնեղ լուսամուտն ընդունակս աղօտ ճառագայթից, այսինքն [illegible], շափաւոր և նուազ ծանօթութեանց նոր օրինացս, [illegible]։ Այսու իմանան ոմանք բառ հին լուծ. զբան Ժողովողի ժբ. 3. « խաւարեսցին որք անաանեն ընդ ծակս »։ Բայց ինձ այլ երկու ինչ թուին ասանդեալք 'ի սաղմոսէ. մին օրինականն. զի 'ի տաճարին արար պատուհանս հայեցեալս ծածուկս (գ. թագ. զ. 4.) ընդ որս նուազ լոյս մտանէր, և նշանակէր զնուազ ծանօթութի նոր օրինացս։ Երկրորդն վարդապետականն՝ ասանդեալ երգոց. ժբ. 9. « Հատեալ ընդ պատուհանսն ». զոր աւրբ վարդապետս 'ի մեկն. անդ (երես 293.) իմանայ 'ի վերայ մարգարէից. և ասէ. « այսինքն թէ յառաջ նոքօք զլոյս ծնութենէ 'ի մեզ նշուլեաց։ Այսմ յարմարին յաջորդ բանքն. զի. ասէ, թէ բանիւք մարգարէից բառ մասին յայտնեալ զշնորհապաշխութի նոր օրինացս. [illegible], ինքեան սաղմոնի, և ինձ ընդ նմին՝ բացեր զառագաստն կամ զպատրուակն [illegible], որ անջրպետէր կամ արգելոյր զելս ողորմութեան ածային պարգևացդ։

5 [illegible]։ Զօր միջնորդութի, կամ 'ի ձեռն մանուոր աւետաւոր [illegible], բանից։ [illegible], այսինքն, կիսակատար մանաւոր բանիւք աւետեաց՝ զնմանութիւն այսր շնորհաց [illegible], նկարագրեցեր, ծանուցեր առելով։ Դարձարուք առ իս, և այլն (զաքար. ա. 3։ մաղաք. գ. 7։) Եւ թէ յորժամ դարձջիս, և այլն (եսայի. լ. 15.)

6 [illegible]։ Լուա եսայ. (ա. 18.) և [illegible]

զարիւնաներկելոցն կարմրութիւն, յեղանակել. փոխեալ յասր սպիտակ (Ե_սայ. ա. 18:) Իսկ զառաքելոյ ասելն՝ է բանն (Զք. Թ. 7.) «Նա բարձից զարիւն նոցա 'ի բերանոյ նոցա, և զգարշելիս նոցա 'ի միջոյ ատամանց նոցա. և մնասցեն և նոքա այ մերում»:

7 Զոյգ զուգորմութեան: Զօրութեք իմա յեղել (Ամբակ. գ. 2:)

8 Դարձեալ բնակել: Լինել բնակիչք, չէր լինել (Եսայ. խզ. 26:)

9 Անդրէն հեծեծել. այսինքն անցանել ընդ այն անցաւորս:

10 Ըստ ներողութեան. ըստ թոյլ տալոյն, կամ յետ լքանելոյն՝ չէր, զհնարս, կամ զօգնականութիւն:

11 Զօրհնեալ զգթութեան: Սկսեալ 'ի բանէն, Նա եւ զուգորմուեցին անցաւորին, մինչեւ յայն, որ մարգարէից յայտ, զսի կատարեցութիւն ամենին, իբր ասել, այն զի զնեղեալսն ապաշխարութեանն, և զարիւնա_ներկեան յասրագոյն փոխելն, 'ի բարկութեան զողորմութիւն յիշելն, անտ_պատմելի քաղցրութեան՝ և գործեալ չէր լինելն, և այլ հետեւեալքն, այս ամենայն ձայնք մարգարէից թէպէտ առ անձնեան նշանակէին զխնամս այ առ իսրայէլ, բայց խորհրդեամբ զքո գալստեան շնորհաբաշխութիւն ծանուցանէին: Կամ բացատրելով ըստ կարգի շարադրութեան՝ իմանա_լի է: Այս ամ է անսրժելի ձայն մարգարէիցն, որք այսորիկ կանխա_ծանուցանէին զաստուածային զօրութիւն քոյոյ գալստեան յաշխարհ: Սա_կայն այլ ազգ յարմարին իմաստք անդ. ըստ լաւ օրինակի, որ զա_սելն. որ յայն մարգարէն, 'ի գլխոյ սկսանի, և յարէ 'ի յաջորդն, Ն զոր չէ բանի, և այլն. և իմանի այսպէս: Այս ձայնք մարգարէից՝ որք զքոյոյ գալստեան շնորհան ծանուցանէին, Ն զոր, այսինքն զոր և զմար_գեղութեանց շնորհ չէ հնար բանիւ թուել, փոքունք են այն բանք մարգարէից, օրինակք միայն և նմանութիւնք՝ համեմատեալ առ յայտնութեան աւետեաց քոց, և առ փրկագործութեան խաչին: Այս շարք բանիցս առաւել յարմարագոյն թուին մեզ:

12 Հինգ և ծածկեալ: Բանք մարգարէից առ իսրայէլ՝ հինք են համեմատութեամբ նոր աւետեացս. և ժամանակաւորք՝ զի զառժամանա_կեայս խոստանային, և առ ժամանակ մի. զի գործեալ անապատացան քաղաքք նոցա, և ձմնապարհք նոցա անկոխ գործեան, և այլն:

13 Բան զօրաւորին: Բան զբողոքումն մահուն հարկեալ՝ առաւել մե_ծաձայն գոչէն խորանք արեան քո, զորս յամենայն անդ. ոչ ընդ աբե_ղելոյ կառուցեր, և ոչ որպէս առ իսրայէլեանն՝ 'ի միում քաղաքի եւեթ. և գոչէն զյաղթանակ բարեաց հանդիսի չարչարանաց քոց: Կենաց կոչէն, գոչէն կամ խնդրեն ոչ մահ կամ պատուհաս, այլ կոչ_կէն կենաց շնորհաց և փառաց, կամ մարմնաւոր և հոգեւոր, կամ յետ կորուսանելոյն մեզոք զառաջինն շնորհան՝ զկրկին նորոգումն. և այսո_քիկ կենացք են՝ շնորհաց, գերութեան, և այլն: Շնորհ առս ընդհանուր իմանի՝ ձրի առնչութիւն կամ պարգեւ, և յաջորդքն են բացատրութիւն իբր մասունք այնր շնորհաց, այսինքն մկրտութեան, յարութեան, որդե_գրութեան, ապաշխարութեան, և այլն:

14 Ի շրթանց մեր խօսիս զուարթացոյն: Եթէ կից առցեն երկու բառք՝ խօսիս զուարթացոյն, թուի իմանալ զհայրմեղն, որ է ձայն աւանդեալ մեզ 'ի քէն, աղաչել նախ որդիաբէս զքեզ հայր, և հաշտեցուցանել ընդ աշխարհի: Իսկ եթէ զկատն՝ զուարթացոյն առցուք բառին համաշխա_րհէ, որպէս գրեն 2 օրին. ըստ այսմ առելն, 'ի շրթանց մեր խօսիս, իմա_նի ձայնաւոր աղօթքն հասարակաց պաշտամանն: Նա զխաղաղութեան բանիս է, թէ այնչափ ընտանեցաք այ, և կցորդք հրեշտակաց եղաք. մինչեւ որդիաբէս խօսել ընդ այ, և հրեշտակօրէն միջնորդ հաշտութեան լինել՝ թէ յերկրի, և թէ յերկինս՝ բարեխօս լինելով վասն մարդկան:

Նա այս խոկ մի է 'ի գերազանց պարգևացն՝ զորս 'ի չար արկանէր. ուս-
ափ ըստ չարագրութեան զասելն՝ բանից [illegible], 'ի սեռական հոլով ի-
մանալի է՝ [illegible], նման այլոց բառից։

15 [illegible]։ Եթէ ըստ տառաբերականն բանին (ի. պետ. ա. 4.) գերընական պարգևացն ածեալն ընութեանն լինիմք հաղորդա-
կիցք, առ մեզ, առէ, մեծ եա և աՀաւոր երախտիք են՝ ոչ լոկ կցոր-
դութիւ շնորհի ածանալ, այլ խոկալես խորելն ընդ արարչին միանալ
ակրանեան մարմնոյն ձաշակմամբն, և սուրբ արեամբն 'ի մի խառ-
նեալ ընդ կենդանի լուսոյդ։ [illegible], զայսոլիսի կատարելութի
և զլրումն խոստացելոց շնորհացն և փառաց ոչ ունէր օրէնն մովսիսա-
կան ըստ առաքելոյն (եբրայ. է. 19։)

16 [illegible]։ Զերկայն անհնարութի արդարոյն ա-
ռաջնոյ՝ զոր առ քեզ պահեցին [illegible], այսինքն առանց հա-
տանելոյ կամ թուլանալոյ, կամ զոր դու ինքն պահեցեր հաստատուն,
անվրէպ. ենէալ անձամբ արարեր և կատարեցեր [illegible]
[illegible], ձրիութի, լիութի, կամ հայրական իշխանութի. քանզի առ
այսչափ մեծ շնորհաբաշխութի պահանջի եթէ ձրիութի, եթէ իշխա-
նութիւն։

## ԲԱՆ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյն
առ նոյն աղերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր տէր զօրութեանց, բոլորից գոյից Թագաւոր, օրհնաբանեալ սրբութիւն, ամենեցուն, որ յաղթես սահմանի լայնատարած ընդարձակութեան,[1] ամենայն անբաւութեանց դու ես որքանութիւն. մինչ զի կարծրն[2] քեզ հաստատ է, և[3] լոյծն քեզ պնդակալ, և չիք քո իր անհնարաւորական, յաղթող զօրութիւն աՀեղ.[4] հուրն ցօղ իմն է զովական, և[5] անձրևն բոց կիզանողական։[6] Օ՛ քարն բաւես ցուցանել կերպարան ազգման, և զունայնն գնես անխօս և անշունչ արձան։ Օ՛ պարտաւորն ողորմեալ պատուական առնես, և զկործնեցեալն մարդ՝ իրաւամբք քննեալ զատես։[7] Օ՛ մատուցեալն 'ի մահ՝ բերկրութեամբ բարեաց արձակես, և զամաչեցեալն՝ զուարթ տեսութ՛ը ածեալ դարձուցանես։[8] Կանգնես զմնանեալն հարկից գլորման, և զատանեալն՝ 'ի փառահութիւն վիճիդ հա-

տանես ։ [9] Ո՜վ ախտացեալն բազմահնարաւ՝ երջանիկ կարգես, և զյառաջատեալն դարձեալ անդրէն 'ի յետս նահանջես ։ Եւ յորժամ սպառին առ 'ի մէնջ բարիքն, զաւուել զարմանալին յայնժամ ներգործես ․ քանզի վասն քո գիտես թողուլ զմեղս և ջնջել զանօրէնութիւնս, և քաւիչ լինել անիրաւութեանց և զմեղս մեր ոչ յիշատակել, ըստ Եսայեայ և Երեմիայ ։

Բ․ Դու [10] առ շնորհ նորոգ փրկութեանս բազմօք գոհաբանութեամբ հեւեալ, 'ի յաճախութիւն անբաւիցն լուեալ առ սմին խնդոյն կարկեցայ ․ քանզի կրկնեալ զլուսոյդ անսպառ բարիսդ, որ 'ի քէն առ իմ [11] յանմաս թշուառութի՛, քոյին ողորմի առ քեզ մաղթեցից, յարմարեալ դարձեալ 'ի նիւթս բանիս զսա ողբերգութեան այսր մատենի, ցկից թախծութեամբք և հեծեծանօք ։ Դու առեալ խառնեցից 'ի տաղիդ հաճութիւն ընդ ցաւոցն զզեղն, ընդ վհատութեանն զխրախոյսն, ընդ յուսահատութեանն զյիշատակդ անուան հաստողիդ, ընդ տխրութեանս զափոփանսդ, ընդ խնամս դառնութեան զքաղցրութիւն կենարարիդ, [12] ընդ պատիժ օրինին զշնորհսն, ընդ պարտս անխծիցն զազատարար օրհնութիւնդ, ընդ մարմնոյ մահուն զամենայնիւ նորոգութիւնդ ։

Գ․ Հաւատամ հզօրիդ բանի, ուստի վկայեմ․ լուր լութեան սրտիս, տէր Տ͞ր, որ հնչումն է առ քեզ մեծութեան ձայնի երկար գոչելոյ ։ Որ մարմնակից և պատկերակից մեր եղեալ, և [13] քահանայապետապէս անօրինակդ զօրինակին խորտակեալ զլուծ, ընդ զենման մահու անասնոցն՝ բարեբանեալ մարմնոյդ նուիրմամբ անմահապէս միշտ մատուցանիս, և աննուազաբար քաւութիւն շնորհես, ոչ սակաւամեղիցն միայն, այլ և [14] որոց հատեալ է ակնկալութիւն առ եւս կենաց ։ Ո՜վ [15] որքան զօրէ մարմնոց անդամոց առ մեզս կենդանութիւն, թէ և բիւրուց ամաց ունիցի յերկարաձգութիւն, յորժամ ընդ բոլորեցուն վասն սորին կամաւ և յօժարութեամբ զենումն ընկալեալ, մահու համբերես բաշխեալ 'ի քաւութիւն ։ Ո՜վ ոչ եթէ մաքրութեանդ աղբիւր պարտական գոյ մահու յոր ըստ օրէ կատարիլն, այլ կամօք քովք՝ հօգւոյդ գործակցութեամբ՝ 'ի հաճութիւն հօր և 'ի մեր հաշտութիւն ցանկ մատուցանիս ։ Իսկ եթէ

ամենիցդ ած անքնին՝ [16] խնամս վասն իմ առ իմ փըր-
կութիւն, 'ի դէմս իմ, իբր թէ ընդ քոյդ էութեան ես
իցեմ մարմնով պարունակողիդ կցորդ միացեալ. և դու,
բարերար, յաղագս իմ 'ի յիմս կերպի փոխանակեալ
ընդ իմում պարտեաց, և մահ ընկալեալ անպարտդ ըղ-
մահապարտիս փոխատուց պատուհաս, և 'ի յիմ անուն
յանցաւորաց, որպէս թէ կամաւ ընդ քեզ ես կըր-
ցեմ, բաղում մեռեալ և մնաս կենդանի. ոչ ուրացո-
ղացն ձեռօք, այլ դաւանողացն հաւատովք ածապէս
նուիրեալ և 'ի մասունս անհատս բաշխեալ:

Դ. Ո՞չ էր [17] ումն ողոքաւոր՝ չաւատալեացն պաշտօնա-
տար. մեծ ինձ և անկշռելի առ ամին դատէր անյարմա-
բագիր անձին յուսադիր, Հաւատամ զխոս և զեր-
ջանկութիւն. քան թէ մարտիրոսութեամբ իսկ՝ թող
թէ ուղղութեամբ իմն թշուառութեան [18] յանցաւոր
մարմնոս վախճան ընդունել: Իսկ [19] զանձառութի խոր-
հրրդոյս այսու զիտեցի. դաւանէր իսկոյն, որ զի և մար-
բոյն անձինք առանց նուիրման այսր յիշատակի չև են
իսկապէս կատարեալք 'ի սպառ, եթէ ոչ ընդ այս հրա-
շակերտութիւն մեծութեան հոգւով խառնեսցին: Ո-
պս թէ [20] մեղաւորիս մասին կրկին մատուցար բաժին
առելով՝ յուսայր, իբրև այն թէ ես ինքն եղէր ճշմար-
տիւ, գրաւեալ զիմ դաժանութիւն ընդ քում համե-
ղութեան, պատարագեալ քոյինանիւթ զանգուածոյ
նշխարաւդ կենաց լուսոյ: Այսու ամենայնիւ [21] 'ի վեր-
նատանն նախանուէր բարեշնորհութեան՝ անհնարաւոր
ախտիցն Ճարակ՝ զմարմին և զարիւն իւր բաշխեաց 'ի
քաւութիւն, 'ի վեր կարծեցուցանէր քան զնահատա-
կի վկայեցելոց արեանք կատարմամբ. [22] յուսոյս օրինակ
յարգաւորութեամբ գրեալ զիս 'ի փառս, այսմ փրկա-
նօք հաւատալի երևեցուցանէր, քան թէ բաւելոյ և ո-
ղորմելոյ և շնորհելոյ, որչափ ածականիդ առ մարդ գօ-
րութիւն, և տիրական ածախառն մարմնոյն կամաւո-
րական նուիրումն առ անմահական սպանդին մատու-
ցումն, և անմահն առ մահկանացու, լոյս առհաւոր առ
առուերայինս, յաւիտենականն քան զանցաւորս, բարձ-
րեալն քան զերկրաւորս, անստեղծն քան զեղականս,
բարին իսկութեամբ քան զթիւրեալս բնութեամբ, մա-
նաւանդ զի իւր է կամեցն և իւր կենդագործելն, որհու-
թեանն առիթ քան զանխծիցս պատճառ:

Ե · Արդ [23] տուր խոցելոյս 'ի սիրտ և յոգի, աղաչեմ գթած, զսա 'ի յերկնաւոր ընծայեալ զդեղդ կենաց, մատիր քաղցրութեամբ առ ախտացեալս մեզ, քաւեա 'ի պարտեաց՝ ամենակատար բաւականութեն։ Իսկ [24] առ 'ի յինէն այս է ճշմարիտ և անխաբելի կերպարան բանի, որ զի հաստիչդ ամենից 'ի սուրբս բնակես. և ըստ տարաղու սերմանն և հնձելն է խրատայի, ըստ ճշմարիտ բանին Պաւղոսի, և աչացուցն 'ի տառ արևու ոչ է զօրութիւն։ Այլ դու, բարերար հաստիչ յոլէից, յորդես յաւէտ խնկաղես համայն և զդաւանելն զքեզ՝ բաւական առ կենդանութիւն. և ոչ ես ընդ սահմանաւ փակեալ օրէնի, այլ յաղթես՝ մանաւանդ թէ խզես զկապ կանոնի, և [25] դու միայն մնաս պայման աւետեաց համօրէն յանցաւորաց տարակուսելոց։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս. ամէն։

---

1 Անհասն անբաւականութեանց։ Եթէ անբաւականութիւն ասցի փոխանակ անչափ կամ անհամար իրաց, իմասցին են. ամենայն իրաց՝ որք կամ մեզ անբաւ կարծին, կամ յինքեանս հետզհետէ կարեն յաճախել ըստ թուոյ, ըստ մեծութեան և ըստ կատարելութեան, ամենայնի նոցա՝ եթէ եղելոցն, և եթէ լինելոցն՝ դու ես սրբանութեն, չափ կամ սահման։ Սակայն զկարողութիւն յաջորդ բանիցն կշռելով, առաւել ընտրելի է անբաւականութիւն իմանալ առատօր՝ անհնարութիւն, անկարծելի կամ անհնարին իրք. որպէս և անբաւ նշանակէ ուրեք՝ անկար, անհնար։ Վասն զի իբր մեկնարար ընդարձակելով զբանդ՝ յաւելու. Ոչ է քո բերդ՝ թէ հաստատ է, կամ լայծն՝ ոլնոց, հուրն՝ ցօղ, անձրևն՝ բոց. և չէք քո, ասէ, իբ անհնարութեանցն. և թէ ոչ որ բաւէ ցուցանել խօսուն, և այլն։ Այսպ այսպիսեաց անհնարից՝ որոց չէ բաւական արարածական զօրութիւնն, դու չափ ես, ասէ, և կանոն։

2 Քեզ հաստատ։ Կարծրին՝ քեզ հեզուկ լինի. որպէս ջուրն յապառաժ վիմէն, կամ առուր պարխաւքն երկրաւլի ծնգնին հոսեալք։

3 Լոյծն. որպէս ջուրք կարմիր ծովուն առ մովսէսիւ, կամ յորդանան առ եղիսէիւ։

4 Հուրն ցօղ. որպէս 'ի հնոցն բաբելոնի։

5 Անձրեւն բոց. որպէս առ սոդոմայեաւն հուր անձրևեաց յերկնից. և առ եղիպտացիս նոյնպէս (ելից. Թ. 17. 19։)

6 Ջերմն թուլէ. զքարին կարես ցուցանել խօսող. որպէս ասէրն աւետ (ղուկ. ԺԹ. 40) և զբանական խօսունն առնել անխօս, որպէս զկնին ղովտայ։

7 Զմօտաւորսն 'ի հեռ. Զմերձեցեալսն 'ի մահ՝ ուրախութեան արձակես. որպէս զլուսան (դան. Ժգ. 63.) զղեւտար (գործ. Ժբ. 11.) զպօղոս (գործ. Ժզ. 18.) և հեռաւորեալսն զաւարթեցնես զարձուցանես, որպէս զառագեալսն, որք անարգեալք յառնեն հրէիցն՝ զնացին խընդութեամբ (գործ. Ե. 41.)

8 Կանգնեա զմարմինս · այս և յաջորդն հայրն ('ի սաղմ. ՃԺԷ. 13 ։ ըթ. 3 ։ զդ. 18 ։)

9 Զմարմնաւոր հարսն։ Որպէս զեղեկիսս, զոր վասն արտա-ասացն աստուածայնոց և աստուել ճոխացոյց · և զդաստիարակն, զյա-ռաջացեալն յընթացս իւր զարգացն՝ յետս դարձոյց վասն նորա ։ Ի վերաստացեալ բանսդ՝ զմի կամ զերկուս օրինակս միայն յիշեցաք · բայց մարթ է և զայլս յոլովս խմանալ ։

10 Նա ըստ նորա իբրեւ թէ։ Նախակարգեալ խնամք քո լինէին և 'ի հնումն · խակ առ բարիս նոր փրկագործութեան՝ բաղում աղօթիւք յառաջագոյն հետևեալ, այսինքն 'ի խնդիր եղեալ քննութեան, իբրև ան-բասք յաձախեցին՝ լսեալ պապանձեցոյ · տանջէ երբեալ, վասն որոյ այժմ կրկին յիշելով զնոյն բարիսդ, տոյն աշերտ-, քո պարգևօքդ ըղ-ձեալ ապաշեցից · կամ ըստ հին լուծ · քո աղօթիւքն՝ որով առաջեր, խնդրեցէք և առնուցուք։ Յարմարեալ 'ի նորա բանի, 'ի նիւթս մաղ-թողական բանիս կարգելով ըղձական ողբս արամութեան և հառաչանօք։ Բայց խաանեցից միանգամայն ընդ ըղձման ըղյոյն, և այլն ։ 'Ի տեսաղէտ համառօտ. Զ օրին · և 'ի հին լուծ · 'Ի տեսաղէն ։

11 Յամառ իշխանութեան ։ այլ օրին · իշխանութեան ։

12 Ընդ դուռն օրէնքն · ընդ պատժողական սպառնալիս հին օրինացն խաանեցից աշխարհ, զներողութիւն նոր օրինիս շնորհաց ։

13 Քահանայապետական ամբիոնէ ։ Իբրև քահանայապետ՝ դու որ ըստ ածութեան անօրինակդ ես, աշխարհին, զհին օրինաց զծառայութիւն բարձեր, փոխանակ զենման անասնոց՝ տալով զքո մարմինդ, և այլն ։

14 Որոյ հաստեալ է։ Այնոցիկ՝ որոց 'ի մեծամեծ չարիս ապրելով, պակասեալ է յոյս թողութեան և փրկութեան, դու քաւութիւն շնորհես մարմնոյդ պատարագաւ ։

15 Ո՛րդւոց երէ։ Զինչ զօրեսցէ կամ ընդդիմանայցէ յօժարութիւն և չարժումն մարմնոյ առ մեզ՝ թէպէտ և հազարաւոր ամս յամեալ իցէ 'ի նոյնս, յորժամ դու ինքն ածդ քո կամաւ պատարագեալ բա-ռիս 'ի քաւութիւն վասն այնպիսեաց։ Զի ոչ ինչ իցէ պարտական զօ-րով մահու՝ որ ըստ օրէ պատարագիս, այլ վասն մերոյ հաշտութեան ։

16 Իմոյ։ Եթէ ածդ բոլորից մատուցանիս խմով քնութեան, ձայն իմ, վասն օգուտի իմոյ՝ և ոչ քո, և այն՝ առ իմ թշնամութեան, վասն յաւիտենա-կան օգուտ փրկութեան, 'Ի տեղի իմ. 'ի կողմանէ կամ յանձնէ իմմէ, որ-պէս թէ ես ընդ քո եւթեան միացեալ կցորդ իցեմ մարմնով որ պա-րունակեաց զամենայն · այսու օրինակաւ վասն իմ՝ փոխանակ եղեալ պարտուց իմոց, յանուն իմ իբրև յանցաւոր, որպէս թէ ես ընդ քեզ կամաւ չարչարեցիմ։ Բարձեալ զեղեալ, բաղում անգամ պատարագեալ մեռանիս խորհրդաբար, և ոչ հրապարակ, իրօք և խոկութեամբ ։ Այս խորհրդական և անարիւն մահ քո ոչ լինի առ բարձրալոյն յեղակ, որպէս զարիւնաւոր մահն խաչին, այլ ձեռամբ քահանայիցն զաւանողաց ըղ-քեզ ։ 'Ի հաստատել ամենայն ։ տես 'ի բանին ԽԷ. ըծ. 9 ։

17 Ո՜վ աղաւաղեալ։ Այս անդի բովանդակ՝ խրթնութեան ունի վասն ոչ գիտելոյ մեր հաւատանաւ՝ ո ով իցէ աղաւաղեալս, և ուր, կամ զինչ իցէ ասացեալ ։ Այս ինչ հաւաստի թուի, թէ իցէ մի ոք 'ի դարձելոց հե-թանոսաց, 'ի պարսից, կամ յայլ ազգէ, որպէս մոգպետքն՝ որք 'ի ժամանակս սրբոյ զեւմեղեանց դարձան 'ի քրիստոնէութեան, և գրով և անդիր զմեր ճշմարտութեան քարոզեցին (եղիշ. երես 23 · 116 ·) ուր և յետինն այն հայրրեալ 'ի մարմին և յարիւն անսան, ասէր (եր. 119 ·) « Ճաշակումն անմահ խորհրդոյս (լեցի ինձ) 'ի ժառանգութեան երկնաւոր որդեգրութեան » ։ Այլ քանզի այնպիսի գրութեան 'նոյս անդոյս մեռ-

ցին, վասն այն չէ մարթ որոշաբար յայտնել զփաստ բանիցս: Բայց
նկատել արժան է, զի սուրբ վարդապետս յառաջ բերելով զբանս
ինչ նորա, յաւելու 'ի նոյնս զիւր խորհրդածութիւն. և յայտնէ լինի
այլափոխութիւն զնմանց բանին, մերթ յերրորդ դէմս խօսելով, մերթ
յերկրորդն, և մերթ յառաջինն: Այսպէս ըստ կարի արտայայտեցաք զերկդիմ-
նութիւնն:

Ասէր աղօթական ոմն, [illegible], կամ պաշտօնեայ,
կամ քուրմ: Իսկ թէ զինչ ասէր, յաղագս սուրբ խորհրդոյ պատարա-
գին՝ մեծ և անհասանելի վէմս ասաց ինձ, թէպէտ և քան զայսն անցեալ
գոլով, երևի [illegible] [illegible]. այսինքն յուսադրութիւն
ինչ՝ որ նորա անձինն անյարմար էր, ոչ գոլով քաջուսումն յածայինս.
կամ անյարմար էր նորա գրեալն, զի թէպէտ և ըստ մասին ինչ ճշմա-
րիտ էր, բայց ըստ այլ մասին ոչ զգուշաւոր. և գուցէ 'ի հեթանոսա-
կան կարծեաց յառաջ եկեալ, որք զմատուցումն զոհից առաւել հա-
մարէին քան զՃնշումն մարմնոյ և քան զայլ գործս առաքինութեանց:
Այսպէս թերևս ըստ այսմ խորհելով այն աղօթաւորն, ասէր՝ թէ Ճա-
շակմամբ սուրբ խորհրդոյն՝ [illegible] ընդունել 'ի փոխանակ մարմնոյս
[illegible], քան թէ նուա-
ստ լինելով վասն հաւատոյ, [illegible].
թող թէ ապաշխարութիւն և կրթութիւն բարի գործոց ուղղելով զախտա-
ւոր կեանս իմ, և բարի կենօք փոխանակելով. զի մեծ է մարտիրոսութիւն
մեռանելն, քան թէ ապաշխարութիւն Ճանապարհաւ. և եթէ առանց
Ճաշակման սուրբ խորհրդոյն ոչ զօրէ մարտիրոսութիւն առ փրկս, ա-
պա ևս առաւել չզօրէ ապաշխարութիւնն: Արդ նա այսպէս ասելով,
այնչափ հարկաւոր համարէր զներգործութիւն Ճաշակելն 'ի սուրբ խոր-
հրդոյն, մինչև առանց այնր զմարտիրոսութիւնն և զբարեգործական
կեանսն անբաւական համարէր առ փրկութիւն. որ չէ ուղիղ. զի եթէ
մարտիրոսն, կամ բարեպաշտ քրիստոնեայն 'ի մահ մերձեցեալ, ոչ
ժամանիցէ Ճաշակել 'ի սուրբ խորհրդոյն, առ 'ի չգոյէ ժամանակի՝
կամ քահանայի՝ կամ հաղորդի, տակաւին զօրութիւն արդեանցն քոյ՝
փառաց հասանէ այնպիսին:

18 [illegible]: Կասկածեմ վերապահ ինչ
առլցեալ աստանօր փոխանակ ասելոյ, [illegible]. զի այսպէս պահանջէ յարմարութիւն բանին. և յարելի է ընդ
առաջին հատուածին այսպէս, Հաստատամ զփառս և զերջանկութիւն
ընդունել 'ի փոխանակ անցաւոր մարմնոյս:

19 [illegible]: Այս բան սրբոյ վարդապետին է.
վերագրելով բանիւ աղօթաւորին, ասէ, [illegible], այսինքն նկատեցի, կամ
ցուցանել կամեցայ զանՃառելի զօրութիւն խորհրդոյ պատարագին. քան
զի թէպէտ ոչ ամենայնիւ յարմար էր, սակայն այնու [illegible],
այսինքն հաւատաւ կամ անվրէպ, թէ նաև մաքուր անձինք մարտի-
րոսաց և բարեպաշտից՝ առանց նուիրման պատարագին քոյ ոչ են ա-
մենևին կատարեալ. մինչև յայս հրաշալի գործ զօրութեանն այդ գտնէ
[illegible] չխառնեցին: Որով կամի ասել սուրբ վարդապետս, թէ թէ-
պէտ և փրկութիւն մարտիրոսաց և այլ բարեպաշտից կարէ լինել առանց
ներգործութեան 'ի սուրբ խորհրդոյն հաղորդելոյ, ըստ վերոյասացեալ
մտացն, սակայն ոչ առանց նուիրման պատարագին. զի արդիւնք մար-
տիրոսութեան և այլ բարեգործութեանց հաստատեալ են յարդիւնս մա-
հուն քոյ, որ պատարագեալ հաղորդի 'ի մեզ. և նոյն իսկ մարտիրո-
սութիւն հաՃելի է և զօրաւոր առաջի այդ, ըստ որում նմանութիւն է
մահուն քոյ, որ 'ի սուրբ պատարագին խորհրդածի. և զի այս մա-

քուր անձինք՝ թէ և իրք ոչ ժամանեսցեն հաղորդել, սակայն յայտնի կամ լուելոյն պարտին բաղձալ այնմ, որ է հացն խառնելի։ Դար-ձեալ, եթէ զփառաց մարտիրոսաց և այլ սրբոց խմացի բանս, ոչ է օտար․ վասն զի սրբով պատարագաւն լինի յաւելուած պատահական փառաց նոցա յերկինս․ որպէս հաստատեն ամենայն ընդ սրբոյն Թով-մայի աստուածաբանի ('ի Դ․ գիրս վճռաց․ զանազան․ ժը․ այլ․ ա․ խնդ․ բ։)

20 Մեղաւորիս վասն։ Այս բան ողջունական է․ վասն մեղաւորիս, ասէ, քան թէ վասն արդարոց կրկին պատարագեցար Թագաւոր․ այսինքն կրկնակի պատարագեցար, կամ վասն կրկին պատճառի, մի՛ վասն Թողութեան բազում և մեծամեծ մեղացս, և երկրորդ վասն արժանի լինելոյ երկ-նային փառաց։ Արդ զայս ասելով ողջունական, յաւելու՝ ասէ սուրբ վար-դապետս, իբրև առ քո խօսելով, Դէ ես ինձ եղեր․ այսինքն փոխանակ իմ եղեր․ և իբրև ես ինքնս մատուցար պարտապան և պարտս՝ 'ի հաշ-ուութիւ մեղաց և յանդգնութեան փառաց․ Գրաւական փոխանակ զանձին քեզ․ առեալ զիմ զանձնութիւն մեղաց և պատժոց փոխանակ քո քաղցրու-թեանդ․ և պատարագեցար փոխանակ զանգուածոյ նշխարաց, 'ի քեն նուիրեալ կամ կազմեալ զանգուածով մարմնոյդ, որ է նշխար կենաց լուսոյ։

21 Ի վերնատանն։ Այս բան ողջունական է, և ասել կամի․ այսու՝ զի քո յառաջին շնորհաբաշխութեան՝ որ 'ի վերնատան, իբր զարման անշնորհին ախտից հոգւոց մերոց բաշխեաց զմարմին և զարիւն իւր, 'ի վեր խորհրդածութեանն, ծանոյց՝ թէ զերագոյն է այս խորհուրդ և զօրու-թիւն նորա, քան զարդիւնս մարտիրոսի։

22 Ցանկալի օրինակ։ Այս մասն բանիս առաւել սրբոյ վարդապետին է․ այսր յաւսյ օրինակաւ, ասէ, հաւատալի երկրպագութեամբ ողջունական, թէ յարգանօք, այսինքն առաւել մեծարգոյ գրէ զիս ած 'ի փառս 'ի ձեռն այսր փրկանաց պատարագի, քան Թէ Քաւելոյ, քան թէ իբր խմով ճգամբքս քաւեալ, ողորմեալ, և նկրումն գանեալ․ վասն զի փրկանք և ամէքս պատարագին՝ է յանհասն արժանաւորութեանն քոյն ած․ իսկ ճգունք ապաշխարութեն՝ ըստ ինքեան են 'ի մարդկային արժանեաց․ ուստի առաջինն այնչափ գերագոյն համեմատի առ երկրորդս, որչափ ամենակալն, որչափ ածութեան զօրութի առ մարդն․ և անհուն ամե-նական մարմնոյն նուիրումն՝ առ մատուցումն անբաւնիկ․ և անմաչն առ մաշկանացուն, և այլն։ Հնարաւոր չէ ինչ է եանդ․ մանաւանդ զի, ասէ, ոչ միայն իբրև պատարագ անհասն ամէս ունի, այլ և իբրև ած ընդու-նող պատարագի՝ իւր է կամեցն զմեր փրկութիւն, և կենագործելն 'ի փառս։ Օրհնութեանն ած, այս 'ի նախագրեալ օրինակն յարելի է ըստ նոյն բաղդատութեան։

23 Տուր խաչելոյս․ Նամի մինչև 'ի վախճան առ քո խօսի սուրբ վար-դապետն։

24 Առ 'ի յինէն այս է։ Եթէ 'ի նախասացեալ բանս ողջունական կայ-ցէ, ասէ, Թերութի ինչ, յինէն այս է հաւաստի բան․ զի դու 'ի սըր-բեալս հոգւով բնակես․ և ըստ սերման բարի գործոց՝ հնձեմք զար-դիւնս խորհրդոյ սուրբ պատարագիդ․ և ընդ հակառակն՝ ալարասցն, որոց այգք հոգւոյն ախտացեալ են ադխտութեամբ և մեղօք, ոչ զօրեն վայելել 'ի ջերմութի ամային սիրոյդ, որ 'ի խորհուրդ պատարագին փայլէ։ Եւ թէպէտ այս են օրէնք ամէրական քո նախախնամութեանդ՝ ըստ պատրաստութե և ըստ վաստակոց մերոց մանաւորել զքո բա-րիսդ, սակայն դու բարերար՝ արարիչ գոլով յոչէից, բազում անգամ առանց մեր արժանեաց ներգործես զքո բարիսդ, և յարգէս, համարիս զչարանեալս զկեզ՝ բուսական առ կենդանութի հոգւոց․ զի ոչ ես փա-

կեալ ընդ կամօք. այլ ըստ հաճոյից քոց բաղձամ անդամ յաղթել, և զանց առնել զօրինօքդ ՚ի բնականն և ՚ի գերբնականս, և մնաս դու միայն քեզ կամօք անփոփոխ՝ յաւէտս ամենայն յանցաւորաց։

25 Դ․․ Տ․․ն Ի․․․. յայլ օրին. չկք Տ․․ն։

## ԲԱՆ ՅԻՍՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ յամենայնի առ ամենայն ակնկալութի՛ քո է ողորմութիւն, [1] սկզբնալոյսդ աչաց տեսանելեաց և սրտի խմաստից Յի՛ս. քո է բարերարութիւն, կեանք և անմահութիւն։ [1] Դարձ առ իս զթութեամբ, և հանդերձեսցես [2] դառնալ ինձ առ քեզ կրկին բերկրութ՟բ. զի առանց քոց կամաց ոչ ունիմ լինել նորոգ փոփոխեալ. և եթէ ոչ կամք քո զթասցեն, ոչ զօրեմ փրկել մահու պարտականս. և [3] եթէ ոչ կառավարդ յօրդորեսցես պատրաստել ինձ հետս ճանապարհի՝ որ առ քեզ բերէ, վիհ է ինձ խորոց յաջմէ և յահեկէ։

Բ. Նա ոչ պարծիմ ամենայն խրօք նախատելս, ոչ պանծամ զօրաւէտալս, ոչ խորոխտանամ կքեալս, ոչ մեծաբանեմ պապանձեալս, ոչ ըմբոստանամ ձաղեալս, [4] ոչ երջանկանամ եղկելիս, ոչ արդարանամ ամբարիշտս։ Զի ոչ երբեք հարթ ընթանայ երիվար առանց սանձակալի, և ոչ նաւ [5] համբառնայ հանդէպ առանց ուղղչի, և ոչ արօր կշիռ ինչ գործէ առանց մաճակալի, և ոչ երկուորեակք լծոյն ՚ի ճահ ձեմեսցին առանց եզօղի, ոչ ամպ վերաչուէ առանց հողմոյ, [6] ոչ աստեղք ցընդին և կամ գումարին առանց ժամանակին, [7] ոչ արեգակն փոխաբերեալ ուր շրջանակի առանց տարրական օդոյ, և ոչ ես նոքօք հանդերձ առանց բարեգործիդ հրամանաց ակնարկութեան։ Զի դու միայն ես տուիչ կենաց բանականաց և խնամիչ կարգաց հոլովման արարածոց, և ՚ի քեն է ինձ փրկութիւն, ըստ սաղմոսողին.

և դու ձայնես բարբառ խնդալից աւետեաց հնչման յականջս լսելութեան ամենայն հասակի, Եկայք 'ի համգիստ իմ ընտանիս աշխատեալք, և ես մաքրեցից զձեզ 'ի պարտեաց: Նաև զի՞նչ օգուտ 'ի լուսաւորմանն, եթէ կրկնակի զազրացայց. և կամ ո՞ր օգուտ 'ի ճաշակմանէն, եթէ զեհեանն մատնեցայց: Այլ կամ զիա՞րդ յԱբրահամ պարծեցայց խոթացեալս 'ի գործոց նորին որդիս զարշութեան հօր անմխիթարացելոյ, և մօր քեռացելոյ կամ բամբասելոյ, [8] ըստ մարգարէին որ առ իս յանկուցոր ձայնի. [9] Ժառանգս մերժելի եթողացի և ոչ սենեկին Սառայի, ըստ ակամբողին առ իս առածի, [10] եղբայրս Շամքի և կամ Պարթայ, [11] համբակս անլուայ և անտեղեալ՝ խակակութ պղծոյն խակութեան Սոդոմայ և Գոմորայ, ըստ Եզեկիելի կրկնամախառն կշտամբութեան:

Դ. Այլ քանզի [12] 'ի ծովս բազմախռովս ալեաց հողմոց սաստկագեղս զղուեալ ուժգին ըկանոր 'ի սպառտակնապմանք 'ի ծովին, փոխեալ ընկլցեալ 'ի վտանգ վայրենական որոգիչ. առ որս զմտաւոնս ձեռացս այսր անդր տարաբերեալ, խրը 'ի համանայ բռնութեց զարնանայայր գետոյ, որոտացեալ յախանից ընթացս ազորմոզին զլորման, ջրակուլ ողեսպառ պղտորարբութեանք, զաժանահատ սկախառն մամռարմատ խառնախութ մահաբեր երկամբք վանեալ, ըստ որոց յաղխոցն հեղեղելցին հեղձուցեալ: [13] Այսր առակաւ և ես եղկելիս՝ խօսիմ և ոչ խմանամ, գոչեմ և ոչ լինչ լսեմ, բարբառիմ և ոչ զարթնուցանեմ, [14] հնչեմ և ոչ փոխադրիմ, փողեմ և ոչ զաւմարիմ, վիլուսերիմ և ոչ ես ըզգամ, կաոցն զարշութեան նմանեալ թափուր յազգմանէ բարեաց խմաստից: Ըզգարեւ չար սաստել յանէա խեկայես [15] քան զօրինակդ ձշմարտութինս, ասելի և մեղադրելի և ասենին Աբիսողի արժանայես մատնելի:

Դ. Այլ քանզի [16] անզգամողի ուղւոյն յիշատակ առակացս պարտեաց զայս կտակ թողի որոց ընթեռնուն, խմելս բանիւ առ ոճ կարգալ համապատասխանութեանք, այս կացցէ ասհման [17] յանձնառական խոստովանութե մշանջենաւոր ձայնարկու առաջի քո, ամենակալ. զոր զինչ ընդ մարմնոյս և քանզի ընդ հոգւոյս զանազանեա-

նեղիդ միշտ թախանձեսցէ, իբր յանեղծական մաղթա-
գէ ընկալեալ աղերս 'ի յինէն ձայնէ, բարեգութ, մար-
դասէր, օրհնեալ յաւիտեանս. ամէն.

---

1 [illegible] : Նաւաքին լուսաւորացդ աչաց մարմնոյ և մտաց: Այսպէս կոչէ զքն թէ բառ անծութեան, որով առեալ զարեգակն և զայլ լուսաւորս, և միանգամայն ինքն պարզէ զամենայն խաւարութիւն մտաց. և թէ բառ մարգարէութեան, յորում ինքն եղև առաջին լուսաւորող զի ծնէ կոյս, և առաջին քարոզ և ուսուցիչ Հրաշափառութեան նոր օրինաց:

2 [illegible] : 4 որին. [illegible] :

3 [illegible] : Եթէ ոչ դու առաջնորդդ Ճանապարհի մեր առ քեզ՝ ուղղեսցես զիս, [illegible], յայտ իսկ ին վէհ պատուհէ ինձ [illegible] բարեգործութեան, յորում առանց առաջնորդութեան ոչ գնալ, փառաց կայ հաւատութեան և բազմապատիկ խորհուրդս առաջնորդի. [illegible], յորում անկեալ թողեալ, անկանիմ 'ի վէհ յուսահատութեան և անզգայութեան:

4 [illegible] : Ոչ համարիմ զիս արժանի երանութեան, կամ գովութեան: [illegible]. ոչ ձեռնամ արգար, ոչ ջանացայց զանձն իմ:

5 [illegible] : Ոչ ընթանայ նաւ յառաջիկայս, կամ վերանայ 'ի վերայ ալեաց առանց ղեկավարի: [illegible]. այսինքն ուղիղ, միօրինակ, հաւասար հերկէ. և ոչ զծրագ ընեալ եղանց 'ի [illegible], պատշաճ կամ ուղիղ գծոյցեն, [illegible]. բառ ու-մանց՝ առանց փարոցի եղանց. բայց լաւ ևս, առանց միաւորողի կամ կապողի ընդ՝ որ է մանձակալն. զի բառս [illegible], եկանէ 'ի բառէն [illegible], այսինքն մի, միակ:

6 Ու [illegible], [illegible], հեռանան 'ի միմեանց, և [illegible], հաւաքին և մերձենան առ միմեանս, [illegible], առանց ընդ-հանուր ժամանակին, որով չափին և բաղադրին յատուկ չարժմանց նոցա: Մարթ է խնդալ ևս զայլոց անմարմնոց առակաց, իբր զի երբեմն [illegible], այսինքն ծածկին. և երբեմն [illegible], այսինքն 'ի յայտ եկեալ անուանին՝ բառ գալոյ և գնալոյ արևուն. և առանց այսր առաջինոյին և գիշերային ժամանակի ոչ լինէր յատուկ այդ փոփոխութիւն:

7 Ու [illegible], փոխեալ 'ի անգոյջէն՝ [illegible], որ պարզուն կամ հողմի, այսինքն 'ի ծիր զօղխանաին, կամ զի լուսնք ա-ռանցին. [illegible]. այս կամ բառ կարծեաց նոցա առ, որք զմէջոյն յերկրէ մինչև ցաստեղս համարին օդով լցեալ, և շարժմամբ այնր օդոյ առնն շարժիլ արևու, և կամ զաղջեցութի և զլուսոյն հաղորդութենն առ, որ ներգործի 'ի ստորինս միջնորդութեամբ օդոյ:

8 [illegible] (Եզեկ. ԺԴ. 3.) այր առէ մարգարէն վասն խորշե-լոցւոյ՝ ծնեալ յերկրէ քանանու, զի անդ ծնան նախահարք նոցա. և բառ գործոյն ևս նմանեցան քանանացւոց, ամորհացւոց, և քետա-ցւոց. 'ի սոյն միտս ինքեան յարմարէ առըր փարգապետս՝ թէ զայս բան, և թէ զյաջորդսն:

9 [illegible]. զաւակս հարազատ եթեովպացւոց, որ 'ի բազ հանու 'ի ժառանգութենն արքայութեան: [illegible] (Ամոս. Թ. 7.) «Ո՞չ ապաքէն իբրև զորդիս եթեովպացւոց էք դուք ինձ՝ որդիք իս-րայէլի».

10 [illegible]. այսինքն առանցիւղ (բառ Եզեկ. ԺԴ. 46.)

11 [illegible], մանուկս, [illegible], ոչ լուացեալ, և [illegible], ոչ յա-ղեալ. [illegible], այս բառ առնել 'ի վերայ մանկանն իմանի, և նշա-նակէ՝ տարաժամ ծնեալ, կամ վիժեալ. իսկ եթէ յարեսցի 'ի յաջորդ բառն՝ [illegible], իմանի՝ խակ կամ մանկահասակ արգանդին [illegible] և [illegible]. այս անուանքս նշանակեալ եզեկիել (ԺԶ. Դ.) զբաժանեալ ազգն իսրայէլի, առաջնումն զատան ցեղին, և երկրորդն զյեղն յա-գայ. որովք հշտամբեալ զկատարածումն և զայլ անօրէնութիւն իսրայէ-լացւոց. զոր և տուրք վարդապետս առէ, [illegible] հշտամբանի. վասն զի 'ի մի յայս բան միացուցանէ զատայեալն եզեկիելի 'ի գլ. ԺԶ. և ԻԳ.

12 Ի [illegible] [illegible]։ Նմանեցուցանէ զանձն՝ հեղձուցելոյ ա-մեք, որ 'ի հողմակոծեալ ալիս անկեալ խեղդեսցի. կամ բռնութիւն ա-ռեալ ձգեսցի 'ի հատանոց [illegible] [illegible], 'ի գարնան առատացեալ գետոց, որք ուժգին յորդութիւն ընթացեալ, զամենայն զոր գտանեն յընթացսն՝ վարեալ տանին, այսինքն զքար կամ զոփոլ, զմամուռ փայտից կամ ընձոց, զխոխս, և այլն. որովք պղտորի ջուրն, և գոր-շահատ լինի։ Ուստի անկեալն յայնպիսի ալիսս՝ ողորմելի զգործոմբ ձգեալ, [illegible], կլանի և կլանէ զջուր, և լինի [illegible], ճնշարգել. [illegible], ըմպելով զպղտոր ջուրն, [illegible], խառն ալմով կամ կաւով. [illegible], արմատովք մամռոյ և այլոց խոտոց. [illegible], խառն խոտովք։ Այս բառք կամ իբր մակբայք իմանին, և կամ ածականք են գործիական անուանն՝ [illegible]։ Եւ առնին՝ [illegible]. իմանի վասն որոյ, այսինքն վասն այնպիսի մահաբեր վտանգաց՝ յուղ-խից անտի ձգեալ առեցին հեղձեալք. կամ բառ որոյ, այսինքն բառ օրինակի այնոցիկ՝ որք յուղխից հեղձանիցին։

13 [illegible] [illegible]. այլ օրին. [illegible] [illegible]։ որպէս հեղձուցեալն յա-լեաց ծովու, կամ 'ի հատանոց գետոց՝ 'ի խոսել այլոց՝ ինչ ոչ իմանայ, այսպէս և ես, առէ, հեղձուցեալ 'ի բազում մեղաց՝ 'ի խօսելն ածային բանից, ոչ իմանամ. և այլն։

14 [illegible], առատիկ բախմանք փայտի կամ այլոց գործեաց, և [illegible], ոչ շարժիմ 'ի ամեւոքէս։

15 [illegible] [illegible] [illegible]։ Բան զզարշութիւն կայծն, կամ բազմայն՝ որ է օրինակ իմոյ զարշութեան, առաւել չար է իմ հօղեար զարշութիւն. զի նոյայն օրատպին է՝ 'ի մոլորութէ պաշտողայն. իսկ իմ զարշութիւն՝ 'ի կամաց է։ Կամ, [illegible] [illegible]. այսինքն քան զօ-րինակ հեղձուցելոյն 'ի բռնութէ գետոց՝ առաւել չար է իմ հօղեայս հեղձումն. զի նա ցաւելի է և անմեղադրելի, իսկ ես առելի և մեղադ-րելի վասն կամաւոր խեղդմանս։

16 [illegible] [illegible]։ Ճանապարհի մահուն՝ որ անգառնալի է բառ այժմու կենաց, թեպէտ և գառնալի բառ նոր կենաց յարութեանն։ [illegible] [illegible] [illegible], յեշտակ վասն առաջինեաց պարտեայս մե-ղաց՝ թողի զկատակ մասնեխս. որպէս զի մեջս ալութաւոր կացցէ առա-ջի քո։ [illegible] [illegible] [illegible] [illegible], զբօշուած զբոյս փոխանակ մարմնոյս, և [illegible] [illegible] [illegible], իմաստ բանից փոխանակ հօղւոյս՝ մեջս թախան-ձեալ զանատահմանք ած. որով իբրև յանմահ խնդրող ընկալցիս զա-ղաչանս 'ի ձայնէ աղօթիցս։

17 [illegible] [illegible]. 2 օրին. [illegible]։

# ԲԱՆ ՅԻՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի .*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Իսկ վասն զի ուրացեալ ոգւոյս թեօք 'ի թիւս ան-բաւից ծննդոց մարդկան՝ եդի 'ի կշիռ իմանալեացս մտաց, ոչ զափ [1] զոր համեմատ ինձ պարտաւոր. և առ այս [2] զպարտութեան սաղմոսին զբանն 'ի յերգ ինձ առի զոաւն կշտամբութեան գաւազանաւոր գործակալ. ո՛վ յարիցէ ընդ իս 'ի չարիս հաւասարել յանօրէնութիւն: Իսկ քանզի այս ըստ սմին մասին կնքեցաւ և ճշմարտե-ցաւ առ այլս մահու, և ես վկայեմ կրկին հաստա-տեալ. [3] առ այսր խրատուն գրեմ՝ ինձ միայնոյ զեղծա-նիլ 'ի սպառ, քան իմոյս բանիւ բազմաց տարագրել. թերևս սովլիմք առ այսու արդեօք և ինձ շնորհեսցես, շնորհողիս զպարտիս իմոյն:

Բ. Իսկ արդ զի՞նչ քեզ աղերս հանճարական 'ի յայտ և 'ի սոյն, [4] և ծունր անուշից ընդունելի խնկոց մատուցից, գոլեալ թագաւոր երկնաւոր Ո՞վ, եթէ ոչ զառ 'ի յի-նէն անբծեալսն օրհնել մաղթեմ, զկապեալսն արձա-կել, ազատել զդատապարտեալսն, [5] բարեգործել զնե-ղեալսն, պահել զթշնամանեալսն, սփոփել զտրտմե-ցեալսն, [6] զարմանել զխորտակեալսն, խնամել զօտարա-ցեալսն, պատսպարել զնենգեալսն, զվիրաւորեալսն 'ի մարմնի՝ յոգի բժշկել: Այլ է օրհնութեան բանիւ առ որ մատուցայ, լուիցես. իսկ եթէ անիծիւք, մի հայես-ցիս ընդունել, գթած: Իսկ տառապեալս ամենաթշ-ուառ [7] 'ի վերջին սպառնութեան մաղթանաց այսր մատենի 'ի բովանդակ մասն շնորհեցի իմոյն՝ [8] փակեալ առ 'ի քէն զանիծիցն զժնդակ ըղձիցն չարաշուք ձայն. և [9] զժնէից նենգողացն իմոց՝ ընդ բարեացն 'ի բոլոր սըր-տէ հաշտութեան արգահատեցի, վասն որոյ և ծանր պաղատանաց կրկնեցի. որչափ դու ինձ ահա յոյս ե-լեալ առաւել ողորմեսցիս ըստ քոյդ մեծութեան, գո-

վեալ խնամակալ, կեանքդ՝ մահացուիս, հզօրդ՝ տկա-
րիս, ամենակարդ՝ վարանելոյս, խնամութեանդ աղ-
քիդ՝ յիմարիս և թմբրեցելոյս։ Քանզի յաւէտ սխա-
լեալ անկայ [10] իբրև զոչխար մթայինն ոչ ընդելական 'ի
հաղբս մահու անզգայապէս, չխնդրեցայ զկորուսան, չդի-
տացի զորոգայթն, չտեսի զմիջնոց որսոյն ծածուկ մե-
քենայս, չկարծեցի զխաբուսն կերպարանաց կեղծաւոր
վարմին, չնկատեցի զգայթագղութիւնն շուրջանակի,
չշօշափեցի [11] զպատանդիչ զցանցարկ կարթին, [12] ժա-
մանեցին ինձ չարիք, և ես ոչ կարացի ճանաչել, ըստ
սաղմոսողին։

Դ. Քանզի և որպէս [13] խնամատակի ումեմն արտաք-
նոյ բարուք թուեցաւ, չար աւել զմահ առ չիմանալոյն
պատճառի, և ես վկայեմ խոհս բանիւ. քանզի իբր
զանզգայ պաճարս անասնոց մեռանիմք և ոչ զարհու-
րիմք, կորնչիմք և ոչ հիանամք, թաղեցեալ լինիմք և
ոչ խոնարհիմք, տարագրիմք և ոչ տագնապիմք, եղծա-
նիմք և ոչ զղջանամք, մաշիմք և ոչ մտաւեմք, պակա-
սիմք և ոչ պատրաստիմք, գնամք և ոչ զգուշանամք,
գերիմք և ոչ ես զգամք։ Իսկ հանգիստ աւել երջան-
կին Յոբայ զվախճան մարդոյ, և ես խոստովանիմ ըղ-
ձոյն ընդ սորայն, եթէ ոչ ունէի զբեռն աշխատութեան
մահացու գործոյ ըստանձնեալ։ Մանաւանդ զի որո-
գայթն գաղտնի և հնարագիտն աներևակի, [14] տարր
ժամանակիս յանէից, անցեալն անդարձ և ապառնին
կարծողական, ես անհամբեր և բնութիւն թերահա-
ւատ, աւք անհաստատք և միտք ցնդեալք, կիրք հար-
կաւորք և բարք անժուժկալք, մարմին մեղսամակարդ
և յօժարութիւն երկրասէր, գիտնականութիւն տըն-
կակից և խառնութիւն ներհակական, բնակութիւն
կաւեղէն և անձրևք ուժգնակիք, կարիք անթուելիք և
պատահարք ամենագրաւք, միտք չարախնամք և տենչ-
մունք բարխատեայք, կեանք առօրեայք և [15] զմիադք
սակաւաւորք, խարմանք յիմարութեան և խաղալիք
տղայականք, աշխատութիւնք ընդունայնք և վայել-
մունք երազականք, համբաւք ոչնչից և պահեստք հող-
մոց, նմանութիւնք ստուերաց և կերպարանք ծխացե-
լոց։ Քանզի իբրև եկն եհաս պատուիրանն, ըստ պաւ-
ղոսեան բանին, անպատրաստ գտեալ զիս ինքեան,

մեղչին կենդանացան յանդիմանեալ յարդարութենէն,
և ես մահացայ կենդանւոյն և կենդանացայ կորստեանն։

Դ. Գոհացան ստորք, չարքն զաւմարք, զատուցեալս որոտից խմաստից, [16] ըստ գրոյն կանխագիտութեան. սրով եկն եհաս խոկոյն աստանօր խմաստութէ ընծայուալ, ըստ տառակոչին, և առաւելոյ ոչ բարւոյ ցանկութիւն։ Եւ [17] յառեցի զակն ոգւոյս 'ի գլուխն իմ կենաց Քս, որով ընդ ուղիղն հետևեցայց։ Բանզի կամելով ուժգինս ընթանալ՝ ընկլայ սասանալես, յանչափն ձգտել՝ խնդն ոչ հասի, 'ի մեծագոյնն ամբառնալ՝ ստորասա գլորեցայ, յերկնայինն ուղղոյն անդնդոց մատնեցայ, 'ի զգուշանալն առաւել՝ յաւէտ վնասեցայ, յանարատն պահել՝ մանր խորտակեցայ, կարծելով ընդ ահեակն մերձել՝ յաջն գթեցի, [18] 'ի զերկրորդն խուզել՝ զնախնեն կորուսի, 'ի խնդիր սակաւուն՝ 'ի կարևորոյն զրկեցայ, 'ի յաւիտեն պահել՝ դաշինն դրժեցի, առ աղօթութեանն կորիլ՝ կորուսիչս գտի, 'ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ, զոր ես ինքն ինձէն սուեղծեալ՝ չարաչար դատախազ անձին կարգեցի։ Յորոց փրկել զմանեալ զերծս դու միայն զօրեսցես, կենաց մատուցեալ զընծայեալս մահու զհոգիս. [19] զի դու միայն, տէր Յս, Յիսուսիս բարերար, անտահման փառք ընդ հօր և հոգւոյդ սրբոյ օրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

1 Զ[illegible] համեմատ։ Զ օրէն. համեմատ [illegible]։ խորհրդով մտաց իւր ԹՒովք չուրջ եկեալ յամենայն մարդիկ, քննեցի, կշռեցի, և ոչ գտի զոք համեմատ ինձ յանցաւոր և պղծատոր. վասն այն յարմար ինձ տեսանեմ զբան սաղմոսին, և այլն։ Իսկ թէ որպէս Ճշմարտութիւն առել կարիցէ զանձն յանցաւոր քան զամենայն մարդ, տես 'ի մեկնութեան բանի առաքելոյն, զլուխ մեղաւորաց ես եմ (Ա. Տիմոթ. Ա. 15։)

2 Զ[illegible] [illegible], որ է (Գլ. 16.) «Ո՞ յարիցէ ընդ իս 'ի վերայ չարաց»։ և այլն. որ թէպէտ ըստ գրոյն խմանի յաղագս պատերազմելոյ ընդ երևելի կամ ընդ աներևոյթ թշնամիս, սակայն սուրբ վարդապետս յարմարէ յանձն իւր, թէ ով կարասցէ համեմատիլ ինձ ըստ բազմութե մեղաց։ Զայս բան 'ի [illegible] [illegible] [illegible]. այսինքն 'ի պատմութեան ինձ յարմարեցի, իբր [illegible] [illegible], վերակացու գործառորաց, որ գաւազան 'ի ձեռին կայ հանապազ առ 'ի հարկանել զծուլացեալսն (տաճկ. մէյմար չաւշտարը, կամ մուպաշըր։)

3 Ա[illegible] [illegible]։ Արդարև, առէ, վերադրեալ բան սաղմոսին, [illegible] [illegible], ըստ այսմ մտաց Ճշմարտեցաւ յանձն իմ. և դարձեալ վկայելով կրկին հաստատեմ. [illegible] [illegible], վասն այսորիկ իրաւունս համարիմ

ինձ միայն [illegible], զատել բոլորովին, իբր անարժան և պար-
տաւոր քան զամենեսին մերձել, քան թէ [illegible], անխտրանաց,
թշնամեաց և վրէժխնդրաց, [illegible], բազմաց յանցուցելոց
առ իս՝ մերձել յողորմութեան ։ զի թէպէտ այսու ներողութիւ և զու ինձ
ներեցես ։ Կամ, [illegible], խնամի՝ խնամ զառատանս և բնութիւ զայս
բաղումն պարտաւոր համարել ։ Իսկ պատճառ իրաւունս համարելոյ
զիւրոյ անձինն զատել՝ այն է, զի որովհետև ձանաչէ զանձն ոչ միայն
նման այլոց մեղուցելոց, այլ և ոչ զոք նման իւր մեղուցեալ, առաւ ու-
րեմն իրաւունք են, առէ, ոչ միայն զայս չխառնակութեանց, այլ և զիս
ինքնս միայն զատել, և զայս թէ և յանցաւորս՝ անպարտ արձակել ։
4 [illegible] . . . [illegible] ․ այսպէս առանց նախագրի զնեն բա-
ղձանաց, համեմատ անցելոյն, [illegible] ։ յառաջին տպագիրս
կայր, [illegible], և այլն ։
5 [illegible] ․ բարեաց հաղորդ առնել ։
6 [illegible], որք վասն առ իս յանցանելոյն՝ պատա-
հարք ինչ խորտակեցան յանդամս մարմնոյ ։ [illegible] որք մեր-
ժեցան յընտանեաց, կամ 'ի քաղաքէ ։ [illegible] ․ որք նենգութիւ յայ-
լոց կրեցին ։ [illegible] ․ որք 'ի թշնամեաց վիրաւորեցան 'ի մարմին ։
7 [illegible] ։ Վերջին սուր՝ ոչ բառ այժմու կարգի
աղօթից, զի զհետ այսր զան բազում այլ աղօթք, այլ թէպէտ 'ի սկզբ-
բանն յետոյ քան զայլ աղօթս կարգեալ էր այս 'ի սորայն ։ Ամենայն վեր-
ջին խնդրուած՝ ոչ բառ կարգին, այլ բառ բովանդակ, որպէս թէ զայս աղօթս
իբրև յետին կնիք արար սուրբ վարդապետն, բառ նմանութեան քնի՝
որ 'ի ժամ խաչելութեան անտանելութիւ առեալ խաչահանութեան աղօ-
թեաց ։ Հին բան ․ խնդրոյ՝ զինքն [illegible] առել սուրբ վարդապետին ․
այսինքն ես աստուածաբան՝ որ վերջին կամ անարգ եմ յաղաչողին այսու
մատենիս ։
8 [illegible] 'ի [illegible] ․ արգելեալ 'ի քէն ․ այսինքն աղաչելով զքեզ՝
զի անգործ արասցես զբանս անխտրանացն՝ զորս եառ խնդ չարարարաց ։
9 [illegible] ։ Դժնդակ նմանողաց խնդ՝ [illegible], վասն
բարեաց նոցա, կամ իբր վասն բարերարաց, [illegible],
աղօթեցի կամ հաղայեալ զհաշտութիւնն ։
10 [illegible] ։ Անկայ յորդայթ իբրև զաղայող 'ի նեղեալ ջուրց՝
թէ մարդ իցէ, և թէ Հաւկն ․ [illegible], որ կայ ընդ մութն խորութեան
ջուրցն ․ [illegible], անվտանգ և անհնարին ։ Հին բն ։ [illegible] խնդրոյ
զհեղեղատ փախեւ կարեալ, յոր մարդ անկանի 'ի մթագին ժամանա-
կի ։ Բայց անյարմար է ակնյայտ ։
11 [illegible] ․ յամենայն կողմանց պաշարող և բռնանող ․ [illegible]
[illegible], զցանց [illegible], յորում հաստատեալ է նաև կարթ, այսինքն
ձանկ, կամ ամեցն ։
12 [illegible] (տպմ․ ըթ ․ 13 ․) « Հասին ինձ անօրէնութիւնք
իմ, և ես ոչ կարացի տեսանել » ․ այսինքն խաւարեալ 'ի մեղացս՝ ոչ
կարացի խնդրել զերկեալ հասեալ վնաս և զպատուհաս մեղաց ։ կամ,
հասին ինձ որոգայթք և վտանգք մեղաց, և ես անմտացեալ չխնդրացի ․
և յայս միտս առնու սուրբ վարդապետս ։
13 [illegible] ․ այսինքն փխլխափայի ուժովն ․ զոր առնէր զայլ
պատառ առեն, և առնէր՝ զկխրբիւն ․ [illegible], որ է բանն՝ զոր և
մերս եղիցէ բերէ (Եր ․ 13 ․) « Մահ ոչ խնդրեալ՝ մահ է ․ մահ խնդրեալ՝
անմահութիւ է » ։ Իսկ չար առել զմահ [illegible], այսինքն
վասն ոչ խնդրելոյն, ոչ յայն միտս առէր փխլխափայն, իբր զի ոչ խնդ-
րումք զոր և զմահ մահուն, և ոչ Նը վարդապետս առէ զայս վասն յան-

կարծագէս չարեաց, այլ զի ոչ խորհին մարդիկ զպատճառս մահուն՝ թէ ուստի եմուտ, և որպէս յամենայն հեշտալեաց զերծ զմարդ. և թէ զհետ նեխի մարմինն, և հոգին յետ մահուն փոխի, և այլն: Զայսոսիկ ոչ խորհելով մարդ, անամօթէն կեայ, և անամօթէն մեռանի զճշմարիտ մահն՝ ոչ միայն ըստ մարմնոյ, այլ և ըստ հոգւոյ. վասն այսորիկ յարէ զպատճառն, զի երբեք զանզգայ անասնոց մեռանիմք, [illegible] յապագայ պատժոց: [illegible], անհետ լինիմք բոլորովին յաշխարհէ, մինչ զի թէ որոնիցէ ոք զմեզ, ոչ գտանէ, և առկայն ոչ [illegible] ընդ մարմնաւորութիւն մեր, ոչ զարմանամք ընդ վայրապար հոգւոյն ուժեղութեան, որպէս թէ անկարուսատ իցեմք: [illegible]. ընդ առեալ ամենեցուն 'ի հող արկեալ, և առկայն ոչ [illegible], այժմ հպարտանամք, ոչ կամիմք խնամարհել առ այլս, վերոյ ամենեցուն լինել ցանկամք: [illegible], մերժիմք հալածիմք յայսմ աշխարհէ, և ոչ [illegible], չառնիմք տարածեալ հոգս՝ թէ յոր աշխարհ անծանօթ գնալոց եմք, յորում վիճակի գտանելոց եմք: [illegible], աղաղակեմք, քայքայիմք. և ոչ [illegible] գտնէ ընդ աւերեալ փափկութիւն մարմնոյ: [illegible] որ ըստ որէ, և ոչ [illegible], ոչ 'ի միտ առնումք զմաշիլ մեր, և ոչ զայն թէ գայցէ օր՝ յորում 'ի սպառ ծախեալ մնամք: [illegible]. հեռանայցէ 'ի զօրութենէ, յառաջութենէ, 'ի կարևոր պիտոյից, նա և բազում անգամ 'ի կատարելութեանց հոգւոյ, և ոչ [illegible] առնել պաշար գտնէ վասն հոգւոյ: Այսպէս ասէ [illegible] ճանապարհի կենացս, և ոչ [illegible] 'ի վախճանի [illegible] 'ի մահուանէ, և ոչ ևս [illegible], ոչ զգեցիլ մեր. և ոչ զանհնարին վասնզի հանդերձելոց կենացն: Այսպէս ուրեմն խրատարար առաջս, թէ մահ ոչ խնայեալ՝ մահ է. իսկ ընդ հակառակն որք խորհին զայսոսիկ, բանաւոր կեանս վարեն, չափաւորելով զհեշտալիս, ոչ ապաւինելով 'ի մարմին, խնամարհելով յանձինս, երկնչելով 'ի հանդերձեալ պատուհասից, զգուշանալով 'ի չարեաց, պատրաստելով զբարիս. և այսպէս մահն խնայեալ և խնամարհեալ՝ լինի պատճառ անմահութեան: Վասն այսորիկ պղատոն առեալ 'ի պիթագորայ՝ զիմաստասիրութիւն առհմանէր, խոկումն մահու. (ճնյաղթ. առհմ. պր. ը:) Եւ ասա ըստ այսմ արդարացեալ է՝ [illegible] առել երջանկին յորոյ զվախճան մարդոյ. քանզի ազատել յաշխարհիս վշտաց, փոխի յանաշխատ կեանս առ նա: Զայդ և ես խոստովանեմ, ասէ, եթէ մեղք ծանրաբեռնեալ ոչ էի. յորոց ոչ ապաշաւելով իմ, մահն ոչ հանգիստ ինձ՝ այլ սկիզբն լինի անհանգիստ տանջանաց: Եւ այս առաւել կասկածելի, այնու զի [illegible] մերոյ [illegible] է, և այլն:

14 [illegible], Գոյութի՛ ներկայ ժամանակիս, կամ ներկայ ժամու՝ որ երբ առաւր կամ սկիզբն է ապառնի ժամուն, [illegible]. երբ անցոյ կամ ոչինչ է. զի միայն անբաժանելի վայրկենիւ ինչ ներկայ է, և միանգամայն անկայուն, հապա թէ ներկայ եղեալ, խոկոյն անցանէ. ուստի չիք վաղահել 'ի ներկայ ժամանակս: [illegible] ժամանակ՝ անցեալ է այլ ևս. և [illegible], գալոց ժամանակն կարծեցեալ է, որդեօք ունիցիմ զայն, կամ զհանգ 'ի կեր արկանելոց եմ: [illegible], զգայութիւնք երբ առք հոգւոյ՝ անհաստատք են: [illegible], բնական կեանք կամ պէտքն՝ հարկաւորք են, այլ [illegible], ախորժանք անժուժկալ զօրով, զեղծանեն նաև 'ի բնաւորական պէտսն: [illegible], առն մարմնոյ կաւեղէն. և [illegible], փարձանք առատիկք, որք զեւրա քայքայեն զկաւակերտ մարմինն:

15 [illegible]. վայելմանք կամ զուարճութիւնք առկայք թուով և անօղութիւ: [illegible], անկայուն իրաց հաճոյք

են աշխարհիս իրք. և իբրև գնացելոյ հողմոյ. որպէս թէ զհողմս ժողո-վել և պահել կամիցին:

16 Ըստ Գիրոյն. այսինքն յորայ (Ժէ. 2.) զոր սուրբ վարդապետս այլաբանէ 'ի վերայ հոգևոր առաջնորդաց ծնորհաց և իմաստութեան:

17 Ու յաղեցի զմին: Հակառակ բանի ժողովողին (Բ. 14.) « Իմաստ-նոյն աչք իւր 'ի գլուխ իւրում, և որ անմիտն է՝ ընդ խաւար գնայ ». Եւ ոչ հաստատեցի զակն հոգւոյս 'ի գլուխն իմ Քս, առ ուղիղ գնա-լոյ 'ի ճանապարհին այլ: Իսկ մնացեալ աչա ազքին են. զի ծախեալ առն-գին ընթանալ, այսինքն աստեղ ընթրութէն և փափկական ասանալ զաւակնութեամբ, ընդ մեզ անդադար. ընդ խնդրութեան զժուա-րին առաքինութեանց. զի ոչ ամենայն բեան՝ ամենայն հասակի ասանել է: Ի բազում աղօթս. 'ի բարձրագոյն առաքինութեն կամելով վե-րանալ, առաւել ևս նորա, ասաէն իսկ 'ի ստորին կամ 'ի գիւղին առա-քինութիւն ոչ մնայի կանգուն: Ի ձգտումն այսօր. անխոհեմութեք զդաւաճանելով, առաւել մնացեալ. որպէս կամելով ոք պահել զպա-հութիւն, նաև 'ի կարևորն լռիցէ: Յանդուգն գործել. ոգեխոհութեամբ պահելով զմարմինս, քան իւրեանց. մինչ կամ զաղանի խորհրդովք սրտի, կամ հայեցուածովք, կամ խօսիւք աղաւաղել խորտակեցայ: Կամ յարտաքին մեղաց գործոց անարատ պահելով զիս, ներքին մեղօք սրտի կամ մեղօք զանցառութեն մնացեալ: Կործանեալ ընդ մեզ. ընդ-դէմ մեղաց և ախտից պատերազմիլ, յաղթեալ. 'ի կողմն առաքինու-թեան կամ բարի գործոց անխնամութեամբ զթեցի:

18 Ի չիգիտութեան իմաստս Ի խնդրելն զերկրորդ առաքինութիւնն, ընդ աղխանս յաւիտեան. զնախնի առաքինութիւնն՝ որ զեռ անհաստատ էր՝ կո-րուսի. կամ խնդրելով զաւելու հարկաւոր և զաղտ բարին, զառա-ջին հարկաւորն և զհրամայեալն կորուսի. որպէս փարիսեցիք 'ի խըն-դիր տասանորդաց և պատարագաց՝ զանց առնէին զիրաւունս և զսի-րելն Աստուծոյ, և զողորմութեամբ ընկերին: Ի խնդիր աղքատաց, հաս-տատելով մարմնոյ պիտոյից՝ կերակրոյ, հանդերձի, և այլն, 'ի խառ-նուած հոգևորաց ընկերաց, աւերեալ հոգովք և զբաղմամբ: Ի յափշտակել գործել. 'ի պահել զխոստումն աղաւաղ բարւոյն՝ որ առ Աստուած, զա-նազան՝ որ առ մարդ օրինօք եդեալ, թողլով, որ է անկարգութի մեծ. զի պարզապէս օրինաւոր գործն՝ է 'ի ձեռս արդարութէ. իսկ պարզապէս ուխ-տին՝ 'ի կրօնէ. և երկոքին այս՝ արդարութի և կրօն՝ ոչ հակառակին միմեանց. վասն որոյ այնպէս պահելի է ուխտն, զի մի եղծանիցի զործն: Այսպէս անկարգանոյ ոք՝ որ կամելով ընծայել յեկեղեցի զնուէրն՝ զոր ուխտեալն է, ոչ վճարիցէ զպարտս ընկերին: Առ ասպարիզական ծառայել. առ 'ի բանալ, կամ փոխանակ բանալոյ զչար ասելութիւն ինչ. խառնակեալ իւր. զայլ առաւել մնացեալ ասելութիւնս ասացեալ: Այսպէս յուզաս փոխանակ բանալոյ զչար ասելութի ազատութէն, զմտանութի փրկչին Հնարեաց. և առ 'ի բանալ զմեղս մտանութէն՝ զյուսահատութեն և զանձնասպանութիւնն եղիս:

19 Զի ո գիտէ եթէ յիմարս, ճանաչելոյ բազմաց... ընդ հօր և հոգւոյն: 2 օրին. Ոչ ո գիտէ եթէ յիմարս, ճանաչելոյ միայն բազմաց... ընդ հօր և ընդ հոգւոյն:

# ԲԱՆ ՅԻՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հետեւութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի·*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Իսկ [1] զառիթման մահու դիպուածս դժոխարմատ ծառոյս դառնութեան պտուղք, ընտանիք թշնամիք, հարազատք հակառակք, և որդիք գաւազանողք, ստո֊րագրեցելովք մասամբքդ նշանակեցից՝ գրեալ յանուա֊նէ, որ են այսոքիկ։

Բ. Սիրտս նանրախորհուրդ, բերանս չարախօս, ակնս յայրատատես, ականջս վրիպալուր, [2] ձեռնս մահաձիգ, երիկամունքս անփոյթ, ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս աներկիւղ, հետք խոտորնակ, [3] շունչք ծխախառն, գը֊նացք խաւարային, գոյութիւն լերդի վիմական, խոր֊հուրդ ծորեալ, կամք անկայուն, չար անփոփոխ, բարե֊մասնութիւն սասանեալ, անձն տարագիր, աւանդ վա֊ճառեալ։ Կազմն վիրաւոր, թռչուն նետահար, փա֊խստական քարավէժ, ըմբռնեցեալ վնասապարտ, ա֊ւազակ ծովակուր։ Զինուոր նենգաւոր, մարտիկ ան֊պատրաստ, սպառազէն անժուժկալ, մշակ հեղգացեալ։ Աղօթական անխրախոյս, [4] բեմական ստորնաքարշ, քա֊հանայ անխնդրուկ, օրինական աննուէր։ Կալիր կշտամ֊բեալ, իմաստակ խելագար, ճարտասան անճոռնի։ Կերպ անպատկառ, դէմք անամօթ, [5] երեսք լպրշեալ, գոյն ան֊համբոյր, տիպ տմարդի, գեղ ծանակեալ։ Խորտիկ խան֊գարեալ, ճաշակ գարշեցեալ, [6] այգի գաղձնաւոր, որթ որդնահար, պարտէզ փշաբեր, հասկ ուտճահալ, մեղր 'ի մկանց ճարակեալ, անպատսպար անկեալ։ Սնապարծ յուսահատ, [7] անհամոզելի նզով, անհաշտական բաժա֊նեալ, ունայնաբան շաղակրատ, պաճարամիտ գոռոզ, անասնօրէն ապիրատ, դժոխային ագահ, աներասան յանդուգն։ Մոլեգնութիւն անսանձ, ձեռնաձգութիւն սպանող, տատանական երկրագործ, երջանկութեն եղ֊կելի, մեծութիւն վատթարեալ, վայելչութիւն ան֊

շքեալ, կարգաւթեան տկարացեալ, բարձրութեան խո-
նարհեալ, փառաւորութեան ընդունեալ, պատուիրա-
նազանդութեան յարակայ, սիրելիք Քրիստոսի. Ս՛ա-
տակարար կամակոր, խորհրդակից նենգաւոր, բարե-
կամ հաստատեալ, հաղորդակեաց գողոցն, մերձաւոր
կծծի, բաշխող ժլատ, վերատեսուչ կարկամ,[8] ոգի ան-
ախտակիր, խիղճ անտէր, բարք աւերող, աղիք անգթա-
կանք, գնացք անխոհեմ, աներեւոյթք վնասակարք, ծա-
ծուկք անմիտեալք, գլխաւորք թշնամանեալք. Ս՛ան-
ռական փառնից, շահարար շուայտեալ, պաշտօնեայ որ-
բեցող,[9] գանձուց ստացական երկրին, պատգամաւոր բան-
սարկու, գանձապան քնեալ, աղքատ հպարտ, մեծա-
տուն ժխտող. Վ՛իճակաւորն անօրէն, պահապան մատ-
նիչ, ընտակակից չարախօս, սուրհանդակ անժաման,
թղթաբեր սպրդաւոր, տարեալ խառնարար, միջնորդ
անխնամ. [10] Ո՛րքայ արատեալ, թագաւոր թարմա-
տար, կայսր ողեկործան, իշխան տխրագոյն, զօրավար
զրկող, դատաւոր անիրաւ, ռամիկ նախանձոտ. Կ՛ա-
խատողի ծաղր, սիրելոյ աշխար, բանագրի զորավ յան-
դիմանցի զառաջնորդութիւն. Ո՛չ զի և [11] 'ի վեհադա-
նիցդ կայմանց էր ուրեք արդեօք զի էի, խոկ 'ի վաթա-
րակայնոցդ մասանց եկն երբեմն եհաս զի եղէ. Ո՛րդ
այդքան վնասակարութեանք խարդախութեանց յանձ-
նագոյնից. յորոց յանձանց խաբեցայ եւբև գլխաւ, և
յանձանց տխրեցայ եւբև զաւակ՝ կամաւ մատնեալ զի-
նայն մահու.

Գ. Ո՛րդ զի՞ս 'ի վերագրելոյդ մասանց քեզ առե-
լեայ և իմ կորուսեայ 'ի սոյն պաշտաման քեզ ըն-
ծայեցից, զորս ստացանութեանց պարագրեալս
անհնարիցդ քո մեծութեան հանդէպ կացուցից, և
կամ որքանեօք երկայնմտութեանցդ համբերեցես այս-
քանեաց պարտեաց, որքան ներես, որքէս լսեցես,
զիարդ խակ անցանեցես, եթէ ոչ մատնեցես հարուածոյ
զանից զարժանին սատակման մահու. Ո՛րդ այսոցիկ
անսպառ մթութեանց հաւուց խաւարի ստորնութեանց
լուսոյ քո պատահեսցես բժշկել բանել և կենդա-
ծել, զօրեղութիւն անվթարելի. և քեզ փառք յաւի-
տեանս. ամէն.

1 [illegible]։ Զայսաւջընեթայ բանն առաջնեաց, առելով զնոյն, [illegible]․ փառն որոյ մեծաւ ամենա. զեկեղցին առաջնեաց բանիւ․ ուր որոշ ընծայի խնամս շարադրութեան, եթէ ըղձական՝ [illegible] ասացաք իւրն բարգ մեծամն․ զի գան և այլ անուանք 'ի ուսուցման հոլովից բարգեալք․ որպէս՝ արևմտեան, բարեացապարտ, մատուցմբին, և այլն․ առաջի մերք բանին լինի․ զպատճառան մինչարերս կամ մինչայորդս՝ որք են պատուղք գանձութեան ծառայս, և այլն, յաջորդ բանիւքդ նշանակեցից․ և են նեղքին թշնամիք․ [illegible] բնն, բայց հակառակողք․ [illegible], բայց նենգողք։ [illegible] առաջ են [illegible], և այլն։ [illegible] խնամի՝ զմնդակ կամ խանդխիսութեան արմատ ունող, կամ զմտաւորսն իմէի, կամ թիւնաւոր։

2 [illegible]․ այսինքն յաւարեալ 'ի ազատութեն, կամ ձգեալ յայնպիսի գործ՝ որ մեզ բերէն հոգւոյ։ [illegible]․ այսինքն ոչ փորձեալ, կամ ոչ մաքրեալ յապականեալ ցանկութենէ։

3 [illegible]․ այսինքն խառնեալ ծխով բարկութեան։ [illegible]․ կաղմութեն կամ արդարութեն լերգիս իւրն զխէժ խառնեցեալ անգթութեամբ։ [illegible]․ մաածութեն անհնարին, կամ անգործ, որ թափի 'ի մասոյ մասնակից, կամ անհնարութեն։ [illegible]․ այսինքն զծուռաբարջարեալ 'ի բարին։ [illegible]․ ընական կամ գերբնական բարեաց հակառակութիւնն անհնարին։

4 [illegible]․ այսինքն առաքելոյ, որ մարմնով 'ի բնմ կոչեալ պաշտէ սեզանոյն, այլ հոգւովն յերկրաւորս ձգի։

5 [illegible]․ այսինքն անամօթ, լիրբ։ [illegible]․ այսինքն անախորժ, զզուելի։

6 [illegible]․ յորում լցեալ է զաղձն, կամ զայլ խոտ որ զրթիթով պատառի և ցանկալեացուցանէ․ և այլն։ [illegible]․ կերեալ և սպառեալ յաւուրս ծծնոյ, կամ 'ի ցեցոյ։

7 [illegible]․ անմիջնորդելի նզովեալ, այսինքն զրկեալ 'ի հաղորդութենէ հոգևոր բարեաց։

8 [illegible]․ սիրտ մեղաւ, անկարելեաց։ [illegible]․ խղճք և խորհուրդք սրտի ապականեալք։ [illegible]․ զաղտնի ներհակութիւնք կամ խառնակութիւնք սրտի՝ անխծելք ընկալեալք, կամ առանց համբերութեն։ [illegible]․ առատագին պատահարք 'ի մարդոյ կամ յայլ իրաց՝ արտաքնման տարեալք։

9 [illegible]․ զանձնապես անհնարատուրմ։

10 [illegible]․ հալածեալ յիշխանութենէ կամ յերկրէ իւրմէ։ [illegible]․ անդխառն, կամ լոկ անուամբ եէթ։ [illegible]․ այնպիսի մխիթածան ակր՝ որ փոխանակ խնամարկելոյ զհօտ զանդեալս իւր՝ զողխ նոյա կերծանէ մարմ հրամանսյ․ կամ, որ իշխանութիւն վերամբարձեալ քան զամենեսին, ոչ ունի կերծանի յանդգնոյ՝ ծածուկ զանձնէ խորհելով։ [illegible]․ այսինքն իշխողքն, անհնարանն հրամանի։ [illegible]․ չարախօսի՝ նիւթ ծանրանայ․ խակ [illegible]․ բարեկամի՝ նիւթ լուծ։ [illegible]․ բանսարկուի կամ Չարասատանի՝ ընդդիմակ նիւթ պարտուսնոյ․ խակ [illegible], որ 'ի սիրոյ կամ յիշխանութէ յանդգնանէ զիս առ 'ի ուղղել, ոչ լսելով՝ եղէ [illegible], նիւթ ամբաստանութեան․ կամ տառաջնեալ, եղէ ընդդէմ նմա զառախօսղ։

11 [illegible]։ Ի գերագոյն անուանցդ բարութի մխիթակեցան ինձ յոյժ հոգևորականք, զի եղէ զինուոր, ապաւթուոր, քաջասպաս, մատակարար, զանձապետ, այլոց, և այլն։ [illegible] 'ի պարտաւելի անուանցդ բարութի եւ բառ զործոց իմոց պա-

[illegible]

## ԲԱՆ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հանգոյն
առ նոյն աղերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. *Քրիստոս մե՛ծ անուն ահաւոր, [1] մեծութեան
անեղ, անքննին բարձրութեան պատկեր, անսահման
զօրութիւն, [2] կերպարան փրկութեան լուսոյ, պաշտպան
կենաց, դուռն արքայութեան վերնում հանգստեանն,
Ճանապարհ հանգստութեան, ապաւինութիւն նորոգ
և անսպառական երանութեան, [3] ամենակալ իշխա-
նութիւն բարի կամութեան, օրհնութեան կոչումն,
աւետեաց ձայն, բերկրութեան բարբառ, անմահութե
դեղ, որդի անճառ ոյ միոյ. որ թէև անհնարին է, քեզ
դիւրին է. որ թէև անհասն է, քեզ սահմանեալ է. որ
թէև անմատոյցն է, [4] քեզ հպաւոր է. որ եղկելոց թէև ծած-
կեցեալն է, քում երանութեան մերձաւոր է. որ թէև
անկարելին է, քեզ կատարեալ է. որ թէև անկշռելին է,
քումդ անճառութեան չափեալ է. [5] որ թէև յաւաստա-
տութեանն է, քեզ սփոփանաց է. որ թէև անբժշկա-
կանն է, քեզ անխափանելի է. [6] որ թէև հեծութեանն
է, քեզ խնդութեան է. որ թէև ծանունք են, քեզ

թեթեւացոյցք են. որ ինչ եղծեալն է, քանզի զօրեղու-
թեան զրկեցեալ է. որ ինչ կորուսեալն է, քեզ ընդրա-
նեալ է. որ ինչ անձառն է, քեզ համարեալ է. որ ինչ
մնայուն է, քեզ ծառագայթ է. որ ինչ անթին է, օրհ-
նեալց քում ձեռին բովանդակեալ է. որ ինչ տակա-
լին է, քեզ հեշտալի է. որ ինչ փոփոխելին է, քեզ մա-
նելի է. որ ինչ անմնացյն է, քեզ դիւրահեղելի է.
որ ինչ մահաբերն է, քանզի կենդանութեան զօրութ-
եան ոչ գոյն համարեալ է.

Բ. Ո՛վ դու, ազօրինած ամ բոլորից տէր Տ՟ր Ա՟ծ,[7]
եւ այժմ զօրես առ եղկելիս հոր՝ եթէ գթասցիս. վասն
անուան փառաց մեծութեան Հօր քոյ օրհնելոյ. վասն
կամաց գթութեան Որդւոյդ քոյ սրբոյ, առ 'ի տանջա-
նաւոր կեցից յանդիմանական յայտնութիւն, եւ 'ի խո-
րոյ սրտի խորհրդածութեանց դատախազութիւն. նայեա 'ի
բնութեանս [8] ամենապատաղ խակութի, եւ պարգեւեա
բժշկութիւն մեղաց եւ հնարաւորութիւն կարեկանս,
զերծումն բազմանանեաց մահու եւ շափից կենաց ա-
պականեալցս, նորոգութիւն եղծմանս եւ մաքուր յաւոյ
անխարշաելոյս. Եթէ ես [9] զամենայն ինչ կամս յայցի,
մշտամփ տաւել դու զնորոգականող քո զնորամփ բա-
րերարութիւնսդ. եթէ 'ի փշոց պատոյ ընծայեցա
քաղցրութեան, մշտամփ տաւել 'ի ծառոց կենաց՝ Ձա-
շակ անմահութեան. եթէ ես խնոց տանելեաց [10] ազոր-
մութեան մաղթեցի, դու քոյդս զխոյց ոչ կրկին մա-
տուցես, հզօր, յանտաւազդ տատատութենէ.

Գ. Որդ առս 'ի քոյդ մեծութիւն, բարձրեալ, նայե-
ցեալ 'ի յիմն փրկութիւն. ընկալ զամէն խոստով-
նութիւնս անհամար մեղացս, որ զկառուն համայն ան-
ձանես. եւ որպէս [11] զՄ խմին գթեալ ոչ զրկեցեր, եւ զա-
ւազակն փառս տաանել՝ մի համարեցցիս. եւ [12] խրրի ըզ-
Պաւթին՝ ընդ մեղաւն առէ՝ խաւոյն անդուցեր զպատիժ
պարտուցն, եւ առ իմ ձայնիս հեծութիւն զօյն զօր-
ծեսցես, երկայնմտութիւն. որ տաս ամենեցուն տա-
տապէս անաշառութեամբ որպէս յաղթող բարի բազ-
մախնամ, եւ ոչ նախատես զյեանեալ սարուկս որպէս
ողորմած եւ ամենատեղծ. սասցիր մերատին, եւ [13] մի
կորուսանէր զուժեալս արեանս քո եւ զուծեալս ըս-
տեանս քո, գթած. Զի քո է փրկութիւն, եւ 'ի քեն

է քաւութիւն, և քեզ վայել է փառք յամենայնի յա-
ւիտեանս. ամէն։

---

1 Մեծութեան փառօք. մեծվայելչութեան հօր երևեցուցիչ. կամ ան-
հուն ճոխութեան և հարստութեան ունակ։

2 Կերպարան խորհրդեան: ցոյցք կամ նշանակ ազատութեան 'ի խաւարէ
'ի լոյս. կամ, պատճառք լուսաւոր փրկութեանն։

3 Անձնասէր բնութիւն. ինքնագոյ սիրութեն բուռն էութեան
բոլոր էից, կամ արարածոց։

4 Քեզ հզօր է: մի օրին. քեզ հզօրեալ է: որ ինձ անանցանելի
է վասն հեռաւորութեանն, քեզ մօտ է։

5 Որ ինչ յուսահատութեանն: որպէս դժուարին պատահարք, ծանր
փորձութիւնք, բազմապատիկ տառապանութիւնք, յորս իմ տկարութիւնս յու-
սահատի, քեզ դիւրին է. զու զուարճանաս՝ յայնպիսի դժուարինս
ցուցանել զզօրութիւն քո և զգթութիւն։

6 Որ ինչ հեծութեանն: որպէս պատերազմ մարմնոյ և դիւաց, կամ
հիւանդութիւնք, որք առ ինձ հեծեալ, քեզ խնդութեան է, տեսանելով
զյաղթութիւն իմ, կամ զհամբերութիւն. ըստ բանի առաքելոյն (Բ. կորն.
ժբ. 9: Ըստ որի ասէր երանելի նահատակն Շամունեան (Բ. Մակաբ.
Է. 6.) « Հայի տէր Ած 'ի ճշմարտութիւն պատերազմիս մերոյ, և 'ի ծառայս
իւր մխիթարի »։

7 Եւ այժմ գթեա. ընդ այլ գործս կարողութեան քո՝ զորս թուեցի,
կարող ես և այժմ, զի ամենայն իրք պարտաւորելոյս հնարս ազատու-
թեան գտցես, եթէ գթութեամբ կամիցիս։

8 Ամենազօրագոյն խնամութիւն: յամենայն վտանգաւորս յօժարեալ և պա-
տրաստեալ անխարդախութիւն։

9 Զանձնանց ինչ իմ: Հին լուծ. խնամոյ զաղօթելն վասն չարաբա-
րոյ՝ որ 'ի բանն ՆՆ: Սակայն աստ ասորև առանձինն զնէ զայն տուրք
վարդապետս: Այլ յարմարագոյն իմանալի է, թէ զինքնակամ յայտ-
նութիւն մեղաց և զդատախազութիւն անձին՝ ամենեցուն հրապարա-
կեցի, որ հակառակ էր բնութեան. զի մարդ 'ի ծածկելն է բնաւորեալ,
և հազիւ յանձն առնու յայտնել քահանային 'ի ծածուկ: Եւ այս խոս-
տովանութիւն է պտուղն ընծայեալ 'ի փչոյ. որպէս և ասորև ասէ. Ըն-
կալ զաղօթս խոստովանութեան, և այլն։

10 Ողորմութեան հայցեցի: վասն ողորմութեան խնոց առեկեայն աղա-
չեցի: 2 օրին. ողորմութեան։

11 Զպետրի գթել: զպետրոսի գայթակղելն ուրացութեամբ՝ ոչ մեծ
համարեցար, այսինքն անտես արարեր, ներեցեր. այսպէս զդղրդուիլ
իմ, որ առ նորա համեմատութեամբ իբր աւազ եմ, մի համարիր, ան-
տես արա։

12 Իբրև զդաւիթ: 2 օրին. Իբրև զդաւիթ: որպէս զդաւթի պատիժ
մեղացն իսկոյն թողեր ընդ ասելն մեղայ, նոյնպէս առ հառաչանս աղօ-
թից իմոց զնոյն ներողութիւն արասցես։

13 Մի խորտակեր զթշուառեալս որպէս զի., և զթշուառեալս որպէս զի.,
գթած: 2 օրին. այսքան միայն գնեն. Մի խորտակեր զթշուառեալս որպէս
զի., գթած։

## ԲԱՆ ՅԻՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն տէրս մաղթանաց բանի·*

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Օրհնեալ տէր Յիսուս ընդ հօր, 'ի կամս հաճութեան հոգւոյդ քո սրբոյ. և [1] օրհնեալք ամենայն առ 'ի յօրհնելոյդ օրհնեցան. օրհնեալ միայն որդի օրհնելոյ. չիք իմ թագաւոր իշխեցող ընդ իս բայց 'ի քէն, Ըստ. Այս է օրհնութիւն Յակոբայ, ասէ Եսայի, յորժամ բարձից զմեղս նորա:

Բ. Արդ ողորմեաց ինձ, տէր բարեգութ, ըստ նախնիդ քո սովորութեան, և օրհնեա զանօթս քո բանական, ըստ ձայնին Պաւղոսի և ըստ Մովսէսի. զի բանիւդ քո փրկութեան ժառանգեալ հասից քաւութեան օրհնեալ առ 'ի քէն: Աստուածապէս ինձ հրաշագործեա, ողորմած արքայ երկնաւոր, [2] որպէս անկելոյն 'ի բազմաժամանակեայ մահճացն խշտիս, ժողովելոյն 'ի սրահին Բեթհեզդայ: Յորոց մի էր և [3] կրկին թերահաւատն՝ երից տասանց և [4] ութի միոյ ամօք ախտացեալ յօդիցն լուծմամբ, որում [5] ոչ անխայեցեր զբժշկութեանն ձեռնտուութիւն, իբր զխոռելով զանբոյժ չարութիւնն՝ որ նիւթեացն քեզ յաւուր մատնութեան զառն գիշերին տիրամատնութեան՝ երախտաւորիդ, մեծիդ և բարերարիդ: Որ թէպէտ և կանխաւ իմն զգուշացուցեր, թէ մի մեղանչեր, զի մի կրկնեսցին կրկին քեզ չարիք, ոչինչ վերջացաւ լինել ձեռներէց սկզբնաւոր անհամեմատելի դատողացն զքեզ 'ի խաչին: Իսկ դու այնպիսւոյ [6] անյարիր ջատուկ մահու ծնդեցեալ չարաշուք առն ողորմեցար, անձառ բարութիւն, սխրալի մարդասիրութիւն, սքանչելի ներողութիւն, սոսկալի երկայնմտութիւն, անբաւելի քաղցրութիւն, փառաւորելի հեզութիւն: Որ միշտ [7] յաղթիս 'ի գթութենէ և ոչ թշնամանիս, պարտիս յողորմութենէ և ոչ պարտաւիս, բռնադատիս 'ի մարդասիրութենէ և ոչ անգոս-

նիս, ⁸ հարկիս 'ի բարութենէ և ոչ հայհոյիս, ստիպիս 'ի սիրոյ և ոչ բամբասիս։ Պաղատիս դարձին իմ առ քեզ և ոչ ձանձրանաս, որպէս զկնի ապերասանիս և ոչ լքանիս, ձայնես չլսողիս և ոչ սրտմտիս, ⁹ փութաս մեղկելոյս և ոչ խափանիս։ Դու չարս ես բարի, առ ամենապարտս ես ներող, առ մեղաւորս ես քաւիչ, առ խաւարեալս ես լոյս, առ մահացեալս ես կեանք։

Գ. Այս ¹⁰ են գիրք ամենայն հոգեշունչ օգտակարութեան, որ յաճախս ծնանին երկնաւոր պտուղս անճառս և զարմանալիս։ Այս և ¹¹ ինձ թշուառացելումս, օրհնեալ ամենապարգև, որ առ զմահիճս խշտացդ մեղաց 'ի վայր կործանմանդ, և հեռեալ ժամանեա յանդորր հանգիստ անաշխատ կենաց։ Նշխեսցես ամենակարող սուսերաւ բանիդ հրամանի ¹² զերիզապնդեալ մահազգեստս պարփակութիւն դժոխացնեալ կապանացս, և լոյծ ինձ զհանգոյցս խեղդողական ոգեպահանջ սատակութեանս, առաքելով զարժանաւորս մահու յազատութիւնն վերին անանց բերկրութեանն, կենսաբեր և ածային քո բանիւդ։ Մի տակաւ տակաւ ազդեսցես, և մի օր 'ի յօր յերկարաձգեսցես, զի մի առաւար ծանրութիւն բեռանցս մեղաց տիրեսցէ թիկանցս ազդերաց, և կործանեալ զիս կորացուցէ հայել 'ի դժոխս, և ուժգնակի զոռոզ բռնութեամբ ¹³ անպարտ հոգևորական զինուն արարեալ՝ մահու ծառայեցուցէ։ Այլ օգնեա ինձ, բարի վշտակից հեծութեան կարեացս մահու երկանց, առեալ յինէն ¹⁴ զփայտ սատակմանն, որպէս երբեմն յուսոյ պահակին. որով կառուցես զվայելչականն յաղթանակի արի զօրութեանն, մնգապէս հաւատով յուսոյն կարծրութեան ընդ քեզ բևեռեալ անայթաքելի։ Եւ քեզ ընդ հօր հոգւովդ որով փառք և իշխանութիւն յաւիտեանս. ամէն։

---

1 Օրհնեալ ամէնայն։ Ամենեցուն օրհնութիւն յերկինս և յերկրի 'ի քէն շնորհեցաւ տէր իմ, որ օրհնեալ միայն ես 'ի քէն, 'ի քումմէ խոկութէ, 'ի քոց արժանեաց, որպէս և հայր քո օրհնեալ. իսկ առ այլ արարածս, մանաւանդ յազգս մարդկան, 'ի քէն իջանէ օրհնութիւն. ըստ այնմ «Ի զաւակի քում օրհնեսցին ամենայն ազգք երկրի»։ Եւ որպէս դու միայն օրհնիչ, նոյնպէս միայն տիրապէս Օրհնեալ Ես հոգւոյս կամ կենացս։ Եւ զի ըստ էութեան՝ օրհնութիւն յակոբայ է բանիւ զմեզս նորա, ... ըստ այսմ օրհնութեն, են։

Ի բանն Եսայեայ (ԾԹ. 20.) փոխանակ որչնութեան գնի ՍԻՈՆԻ. և բոլոր բանն այլով շարագրութեամբ կայ անդ. բայց սուրբ վարդապետս բերէ զայն ըստ բնագրի առաքելոյն (Հռովմ. ԺԱ. 27.) «Եւ այս նոցա որ յինէն ուխտ՝ յորժամ բարձից զմեղս նոցա»:

2 ՈՐԴՒՈՑ ԱՆԷԾԻՑ: Այսու ակնարկէ սուրբ վարդապետս, թէ բազմաց ախտաժետաց 'ի պրոպատիկէ աւազանին բժշկութիւն շնորհեաց քո. զոր չէ հարկ իմանալ անընդմիջաբար արարեալ 'ի քէն. զի յովհաննէս զմիոյ եւեթ բժշկութիւն պատմէ անդ. այլ թէ միջնորդութեամբ հրեշտակի ամապէս ներգործեաց զառողջութիւն բազմաց, յուզելով զջուրս աւազանին:

3 ԿՐԿԻՆ ԲԺՇԿԱՐԱՐՈՂԴ: Անդամալոյծն՝ որ յերեսնեւութամեայ հիւանդութենէ բժշկեցաւ. և կայ կրկին կամ երկիցս թերահաւատ, նախ՝ զի զծանուցանելն նորա առ քահանայապետսն՝ թէ յո բժշկեաց զնա (Յովհ. Ե. 15.) ոմանք համարին առ չարութեան արարեալ. երկրորդ, 'ի մատնութեան գիշերին սա էր ապտակեալ զքո, և ըստ այսմ կարծեաց խօսի սուրբ վարդապետս: Սակայն բազում այլ վարդապետք՝ ոսկեբերան, կիւրեղ, օգոստինոս՝ գովութիւն յիշատակեն զայրս զայս՝ ազատ 'ի վերոգրեալ կասկածանաց:

4 ՈՒԹԻ ՄԻՈՅ ԱՄՕՔ: մի օրին. ՈՒԹԻ ՄԻՈՅ: ըստ շարադրութեան խառորդանի է առէլն ԷՐԷՑ ՔԱՌԱՆՑ Ե ՈՒԹԻ ՄԻՈՅ ԱՄՕՔ. փոխանակ գնելոյ՝ երիւք տասամբք և միով ութիւ ամօք. զի թուական բաղդ են ածականք զործականին ԱՄՕՔ, և փոխանակ նոյնին հոլովով գնելոյ՝ եղեալ է 'ի սեռական. որպէս և յայլ բանս նշանակեցաք զայսպիսի խառորդանն:

5 ՈՉ ԱՆԽԱՅԷՑԵՐ: ոչ զլացար նմա զբժշկութեան նպաստն. ԻՐՐ ԳԻՏԷԼԻՔ, թէպէտ և գիտէիր կանխաւ զանբժշկելի չարութիւն նորա, զոր առնէր ընդ քեզ 'ի մատնութեան գիշերին: Եւ թէպէտ յառաջագոյն զգուշացուցեր՝ մի այլ մեղանչել, զի մի կրկնեսցին ԿՐԿԻՆ ՉԱՐԻՔ. այսինքն զի մի չարագոյն լինիցի քեզ, սակայն ոչ զգաստացաւ լինել առաջին ձեռնարկող ընդդէմ քեզ, անխրատ և խիստ 'ի մէջ դատողացն զքեզ, և այլն:

6 ԱՆՅԱՐԵՐ: որ ոչ կարէր յառնել և կանգնել: ՉՈՐՈՐԴ. սովորաբար իմանան կախարդ, գիւտական գիւթութեանց հետեւող. և զի ինչ յարմարութիւն առ անդամալոյծն. թերեւս կարծեսցի յառաջն կախարդ լեալ, և վասն այն պատժեալ. կամ թէ 'ի կախարդութեան ինչ ախտացեալ: Բայց զի կայ այս բառս և 'ի մեկն. մատթ. ոսկեբերանին, ըստ նշանակութեան առեալ փոխանակ կախարդի, այլ կիրառութեամբն իբրև բառ նախատանաց, նոյնին մաղք իմանի և աստ. այսինքն այր վատթար, անարգ, և այլն, հին լուծ. մեկնէ՝ խաբող. իբր զի պատրող և կեղծաւոր բանիւ ասէր՝ ոչ զոք ունիմ. որպէս թէ բարձողս և բերողս յաւազանն ունէր, իսկ ընկեցողս ոչ ունէր: Սակայն թէ արդարև ատուցեալ էր նորա զայս, անարժան լինէր բժշկութեան քո: ՄԵՆԱԾՆԳՆԵՑԵԱԼ: Ողորմեցար այնպիսում չարամիտ առն, որ արդէն իբրև տարրացեալ ունէր յինքն զմահն, և այնու մաշեալ երեւէր. զի զամս երեսուն և ութ կալ հիւանդ՝ սակաւ ինչ ընդհատ է 'ի մահուանէ. մինչ զի տարակուսեալ գոզցես հարցանէր ընդ նա քո, կամիս ողջ լինել. զի կարծեալ այնպէս էր թէ զմահ ընդգրկեալ կայր յանհոգս:

7 ՅԱՂԹԻՒ 'Ի ԳԹՈՒԹԵԱՆ: միշտ գթութիւն զօրանայ քան զարդարութիւնդ յայսմ աշխարհի. և սակայն վասն այսր ՈՒ ԲԺՇԿԱԿԱՆԻ, ընդ հակառակն երկրաւոր իշխանաց՝ որոց միշտ գթալն պարտաւորելի է. 'ի սոյն միտս հայել և յաջորդն:

8 ՀԱՐԿԻՒ 'Ի ԲԱՐՈՒԹԵԱՆ: 1 օրին. 'Ի ԲԱՐԵՐԱՐՈՒԹԵԱՆ:

9 Փոփոխեա Վեղերութ : փոխման կամ հոգաս վասն թուլութեան :

10 Եւ փերթ տեղւոյն : Յայս յատկութիւն հայրն և քերողքն ան- նոյն գիրք ամբաստանիչք և սպասաւորք ( ըստ Ա․ Տիմ․ Դ․ 16․ ) որք վար- դապետութեամբ և օրինակաւ գործոյն ոչ յաճախ պտուղս երկնաւորս ծնանին 'ի հաւատացեալս : Այսպէս ըստ օրինակի անդամալուծին առա և բեր , և այլն :

11 Իմ Թշուառացելոյս : այլ օրին․ Իմ Թշուառականիս :

12 Զծիրանափայլսն : 2 օրին․ Զծիրանափայլսն : Խոյեա հզօր հրամանաւդ զմեռելական պատուէն , որով և ղազար պնդեալ էր . զծածկոյթս , զե- րեզմանական կապանացս : Զպատանս մեռելոյ մաշմամբ կոչէ ծած- կոյթ . զի է երբ յատուկ զգեստ մեռելոց . և նմա կապելոյ կոչկան- դելոյ անշարժ մնան 'ի գերեզմանի : Յայսմ խոկ եղեալս զօրութիւն ձայնին քոյ առ ղազարոս , զի զայնպիսի կոչկանդեալն՝ զկապեալն և ոտս և ձեռս և երեսս՝ ած կենդանի արտաքս : Այդ առ ղազարու՝ մեր- ձակայիցն հրամայեաց քո լուծանել քակել զհանդերձս պնդեալ պա- տանացն . բայց առ իս արձակումն , ասէ , դու միայն զօրես՝ ո ամենա- կարող․ և այնպէս լուծանել , զի զմահու արժանիս յերկնային փայլեալ պատմուճան ընդունիցիս՝ նման ղազարու ազատանօք քեզ բարեկելոյ :

13 Անպարտ հեծեծանաց ջլատեալ : անկարող առնելով զիս 'ի պատրաս- տել կամ 'ի կեր առնուլ զհոգեղէն զենս աղօթից , պահոց , պաշտօնից , երբեմն զկէսն կարկամեալ որ չկարէր առնել զնա 'ի վեր հայել :

14 Զծանր տաղտկանն : զպարտաւորութիւն մեղաց բարձեալ յինէն , որպէս զփայտ խաչին բարձեր յուսոյ սիմոնի կիւրենացւոյ՝ յելանել քո 'ի գողգոթա․ զորոյ խաչակիրն , կանգնեալս , զկործանեալն յաղթո- ղականն , զայն՝ որ պատշաճի յաղթութեան որ կշռաբերն . վասն զի զայ- լոց բեռն և զծանրութիւն բառնալոյն՝ յաղթել թշնամւոյն՝ մեծի արու- թեան և քաջութեան գործ է : Այսպէս սամփսոն զդրունս գազացւոցն բառնալով , նշանակ քաջութեան կանգնեաց 'ի գլուխ լերինն ( Դատաւ․ Ժզ․ 3 :) Հին լուծ․ մեղկնէ , կատարեալ ինձ զփայլելոյ պատկերն , որ ա- րիութեան զօրութեան է պատրաստեալ :

## ԲԱՆ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելեալ կրկին հեծութեան նորին հոգւոյ
առ նոյն ազերս մաղթանաց բանի ·

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա․ Հաւատամ և վկայեմ մտաց գիտութեամբ՝ 'ի քէն ազդեցեալ ոգւոյս խնամոց ուժիւ տեսանեմ , զի ըղձալի են քեզ , բարերար , [1] ապաշխարք մեղաւորաց քան զխնդրուածս արդարոց : Ո՛վ իմն [2] զարտասուութիւն ան- ձին յայտնեալ՝ ճշմարիտ քո ապաւէն , առ որ ծանու- ցեալ զմտութեանս չար , և մեծ կշտամբիչ առաւելն հաւ

բարձեալ [5] ճգնազոր մարտակից նմին իսկ ճգբեան եւ գառն գորովիչ եւ ծածկատես գառափառ։ Իսկ միւսն յարգիւնս բարեացն իւրոց նայելով. [4] յանձին հարեալ ձեռն վաստահութեան, մանանայ զանհման բնութեն, եւ պարգեւաց քան ողորմութեան գիտեալ ակն ունի։ Վասն որոյ [5] առ մինն անթիւ են առեղծուածք ձեռից, որ զողորմութեանցդ քո փողով բարբառոյ ազգէ. իսկ առ միւսն լսեալ են քոյդ, անքնին ահաւոր եւ ամենախնամ, անճառելի ասել՝ թէ եւ երկրաւորս գործոց պամութիւն գրոյդ յառաջեալ։ Որդ որ տէր, եւ [6] մի զօրացի քան զքոյդ ով հողեղէնի. մի կշռեսցին ողորմութիւնք քո ընդ ջանից մարդկան։

Բ. Այս արդ առաջքն անդամոք անկարօտք են բժշկութեան, եւ տեսանողականքն աչօք չունին պէտս առաջնորդի, եւ փարթամքն ընչիւք ոչ դեգերին առ դուրս լիոցն, եւ ամենայնիւ յղփացեալքն ոչ սպասեն փշրանաց սեղանոյ հացի, եւ սուրբքն վարուք [7] ապենիազ են ողորմութեան։ Այս արդ ինձ գթացիս ողորմել, բարձրեալ երկնաւոր հզօր, ամենատուր վարանեցելոյս։ Քանզի թէ էի իբրեւ զՆոյ, ասէի զանձն իմ իբրեւ զնա արդար եւ անարատ. թէ էի իբրեւ զՄովսէս, ասէի վստահութեամբ զնորայն, ծանիցէ տէր զայնոսիկ որ իւրն են. թէ էի իբրեւ զԴաւիթ, ասէի՝ արարի զիրաւունս եւ զարդարութիւն. եւ դարձեալ [8] զմեծն քան զընութիւն մարմնոյ, զմեզս թէ տեսանէի 'ի սրտի իմում, մի լուիցէ ինձ տէր. [9] թէ էի իբրեւ զԵղիա, ասէի զանձն իմ այր այ. թէ էի իբրեւ զԵրեմիա, [10] զքոյդ Չմարտութիւն յանձն օրինակէի. թէ էի իբրեւ զԵզեկիէլ, պարծէի զվարուքն եւ զխրատացն՝ զնայի առաջի քո արդարութեամբ. թէ էի [11] իբրեւ զՊաւղոս, ասէի զիս բնակարան ազգարան եւ ընդունարան այ բանին։ Որ ես անօրէնս 'ի մէջ գիտութեան օրինացն, ոչ միայն չունիմ զանձն իմ քեզ ընծայել յարգանօք բանից իբրեւ զնոսա, եւ զընութին չարս որպէս զլարխն զայնոսիկ առաջի քո յիշատակել, այլ եւ ոչ [12] զամենուստ դոյից զլարեհաչակեալ անուանդ հզօր անբարշտեալս լեզուով գովել։ Իսկ դու առ ամենայն հնարս զօրաւոր՝ մատո ինձ ողի փրկութեան, աջ պաշտպանութեան, ձեռն այցելութեան, հրաման բարութեան, լոյս ողորմութեան,

բան նորոգութեան, պատճառ քաւութեան, գաւազան կենաց օծութեան։ Ով իմ դու ես յոյս ապաւինութեան, տէր Յ͞ս Ք͞ս, օրհնեալ ընդ Հօր Հոգւովդ սրբով յա-ւիտեանս յաւիտենից. ամէն։

---

1 Աղաչանք վարդապետաց։ Արտաքսել աղօթելի են քեզ, ասէ, կամ տա-ւել լսելի այն աղաչանք միաբանութեան՝ զոր ասեն վասն թողութեան մեղաց իւրեանց, կամ զոր յետ աղաշխարհելոյն ասեն վասն այլոց պատա-ճառական բարեաց, քան [illegible], որք վասն այլոց կամ վասն ննջեցելոց հայցեն բարիս, կամ որք յարդարութեան իւրեանց վաս-տակեալ խնդրեն ինչ։ Յայս միտս իմանալի է բանս, և ոչ եթէ արհա-մարհէ և ընդհանրապէս աղաչանք միաբանութեան քան զվարդապետաց ընդու-նելի լինին առ Աստուած. եւ առաւել՝ ոչ իմանի 'ի վերայ աղաչանաց զոր 'ի մէջ զոլով ասեն միաբանքն։ Արդ բառ բացայայտել մասնաւոր տաւ-ւել համեմել լինել այս միաբանութեան աղաչանք համառօտ, ասէ, և փր-կութեան ներքին զխոստովանութիւն և ճանաչմամբ ասացեալ 'ի [illegible]. կամ զի անձամբ զփորձ առեալ էր՝ լսել այս կարկառեալն աղաչանաց իւրոց առաւել եւ փութով քան հայցուածոց այլոց ընտիր արանց. և կամ ազդեցեալ, ասէ, 'ի բանս սուրբ գրոց, և 'ի պէսպէս օրինակս նա-խագրելոց։ Քանզի այսպէս բղխեալ եղեն աղաչանք որդւոյն անառա-կի առ հայրն գթած քան զխնդրուածս երկից որդւոյն անմեղի։ Քանա-նացւոյն շնորհեաց քն զբժշկութիւն դստերն՝ առաւել առ մօրն թա-խանձանաց՝ քան 'ի բարեխօսելոյ աշակերտացն։ Նորոյն նիբեան ա-ղաչանք ընկալաւ անդէն զօրութիւն, ուր մանկաս վասն բարեաց քեան մարխանու՝ ոչ եղև լսելի։ Աւազակին 'ի խաչին աղաչէր զիշխեն միայն յարքայութեան, և առ օրին ընկալաւ զդրախտակցութիւն 'ի դրախտին ընդ քն. իսկ մանկաս պաղատէր առաւել զեթ զաւետարանն երկիր, և զխնդրեալն չընկալաւ։ Առ այսորիկ, ասէ, քեզ մեծի զթութեանդ այլ արարչեալ առ միաբանս, զի կնոջն բարեխօսել առ նա իւր կարկառելոյ՝ ոչ լոկ զնկրումն անդէն և անդ աղբերաց քն, այլ զոխութեան զնա քան զվանատուրն մեծարեաց. իսկ 'ի կանայս հարանեաց՝ զխուլն պակասե-լոյ աղաչաւոր լինէր մայրն, և սակայն թուէր իմն թէ 'ի լսել յարա-զեցէ քն։ Այսմ անցեալ զոլով Զդեմարիս արդարոյն առաքինիք, յոր-ժամ արդ ցանկալին չարժել զգթութիւնն այս, կերպարան զմիաբանսն զանձամբ առնուին, մերձք զոչելով, անօրինեցաք, յանցեաք. և թէ՝ ոչ առ արդարութեանց մերոց արկանեմք զգութ առաջի քո, և այլն։ Նա այսպիսի օրինակաց, ասէ, ազդեալ 'ի ճանաչումն մեղ, թէ միաբանուց աղաչանք բղխեալք եւ են առ Աստուած քան զվարդապետաց։ Իսկ զպատճառս այսպիսի անսխալութեան այս համառօտեալ 'ի կարգին։

2 Զօրութիւն արքին։ Միաբանն 'ի դժնեան բանս իւր՝ զպար-տիլ կամ զյաղթել իւր 'ի դատաստանէն այս խոստովանեալ. կամ բառ որում անանցեալ 'ի [illegible] բանէն, իմանի՝ զպարտաւորութիւն անձինն յայտնելով, միայն շնորհաց արժանութեան ակն ունի։ [illegible] 'ի վերայ այսր, կամ բաց յայտնանէ ճանաչէ զշատ տկար և աղաչա-նաւ ընթեռնուլ, և առաւել յանդգնաբար և ամբաստան լինի զանձնէ, և այլն։

3 [illegible]։ Նիրն ընդ նիբեան համաձայնեալ. այսմ նման է և յա-ջորդն, [illegible]. այսինքն պատերազմող ընդ նիբեան, և 'ի սրտին զաւառեալ։

4 Ցանկին հոգւոյ կենաց։ Իսկ արդարն յարդարութիւն անձինն փառա-հացեալ, նոսանոյ զանձանն Բոոսինանն, զակարութիւն կամ զգեխրատաղա-թեան բնութեան․ չգիտէ թէ յառաջագոյն 'ի մեղս ծնեալ էր, և միայն շնորհօքն այ արդարացեալ, և նովին շնորհօք կացեալ յարդարութեան։ դոյզն զան ողորմութեան, փորձող՝ քան թէ այսու շնորհատուութեն ամն ումն։ Զայսոսիկ եթէ զամբարտաւան և զանձնահաճ կամաց ի-մացուք․ յայտ է թէ այնպիսին ոչ ևս է արդար․ և ոչ խնդրուածք այնպիսւոյն՝ են խնդրուածք արդարոյ․ այլ անընդունելիք այ և մեղան-չականք։ Իսկ եթէ առանց ամբարտաւանութեան խնդրեսցին այսոքիկ, իբրև թէ արդարն անխիղճ գոլով զանձն, և վստահացեալ յանձնիրու-թեան իւր, 'ի խնդրելն ինչ յայ՝ ոչ իբր մեղանչական որ մաղթէ, այլ իբր բարեկամ և վստահականոր առաջի այ, այս ոչ հակառակ արդա-րութեն․ որպէս և եզեկիա արքայ՝ զբժշկութիւն անձինն խնդրելով, յի-շեցուցանէր առաջի այ զարդարագործութիւն իւր (Դ․ Թագ․ Ի․ 3։) Նա-յայս միտս առաւել հայի բաղդատութիւն արդոյ վարդապետիս․ զի ցուցա-նէ աղօթանք մեղաւորաց առաւել յոլովն շարժեն զայ, քան զբա-րեկամական հայցուածս արդարոց․ իբր զի յառաջնումն պատճառ է միայն անհուն ողորմութիւնն այ․ իսկ յերկրորդումն՝ չափաւոր բա-րեկամութիւն արդարոյն ընդ մեզ մաւանէ՝ իբր մերձաւոր պատճառ արդիւնաւորին։

5 Առ զնն ոնթիւ էն։ Առ մեղաւորն, կամ առ ընդունելութիւն աղօթա-նաց մեղաւորին՝ անթիւ են յօրինուածք զոմեանց՝ 'ի գիրս կամ 'ի բե-րան մարդկան, որք զքո ողորմութիւն անհնարին ծանուցանեն իբր փո-քով։ Իսկ առ ձան, առ արդարն կամ առ ընդունելութիւն աղօթից ար-դարոյն, լեալ էն ծոյգ, ոչ այնչափ քո ողորմութիւն քարոզի․ այլ մա-նաւանդ ամենայն աւէլ, թէ և Երկնաւորն ծործոյ զարմանսն, երկրաւոր արդարոյն առաքինութեանց պատմութիւն նոյն յառաջեալ, քան զքո ո-ղորմութիւն առաւել հաչակի։ Վասն զի այս է մարդկան սովորութիւն, յորժամ տեսանեն զխնդրուածս արդարոց կատարեալ, առաւել ար-ժանեաց խնդրողին ընծայեն, քան զթուլութն տուողին այ․ որպէս թէ ած յայնպիսի խնամս իւր՝ առաւել շարժի 'ի բարեկամութէ արդա-րոյ, քան յիւրմէ գթութենէն։ Վասն այսորիկ ասէր Ոզիա իշխանն ցՅու-դիթ (Ը․ 29․) «Աղաչեա զու խնդրուածովք զած․ զի կին արդար ես դու»։ Ընդ այսպիսի սովորութիւն մարդկան գժտեալ առաքեալն պետ-րոս՝ ասաց առ ժողովուրդն (գործ․ Գ․ 12․) «Արք իսրայէլացիք, զի՞ զարմացեալ էք 'ի վերայ այսորիկ, կամ ընդ մեզ զի՞ էք պշուցեալ, իբրու թէ անձին զօրութեամբ ինչ, կամ քաջութեամբ արարեալ իցէ զգնալ դմա»։ Նա թէպէտ ճշմարիտ է, զի ած բազում անգամ 'ի սիրոյ և 'ի բարեխօսութէ արդարոց շարժի գթալ 'ի մեզ, սակայն և այս՝ գործ գթութեն նորա է․ զի ինքն իւրով ողորմութեամբն արար և պահէ զնո-սա արդարս, և նովին ողորմութբ կարգեաց զնոսա միջնորդս և բարե-խօսս․ այլ և յընդունելն զբարեխօսութիւն նոցա՝ ողորմութբ ընդունի, և ոչ բռնադատեալ իբր պարտական․ վասն որոյ յանձնայնի ներգոր-ծէ և զօրանայ գթութիւն այ՝ եթէ առ մեղաւորս, և եթէ առ արդարս․ և այն է յանձնայնի քարոզելի։ Այսմ 'ի դէպ ասէ մեծն վարդան 'ի Մեկն․ սաղմոսին, 'ի յառաջաբանին․ «Թէպէտ թուին սմանք խնդրողք, և կեսք տուողք, այլ մի անէն է՝ որ շարժէ զամենա 'ի խնդիր, և զկեսս՝ 'ի տուր»։

6 Մի՛ պղծեսցի բան պղոյթ։ Մի երևեսցի զօրաւոր քան զքո ողորմու-թիւնդ ով հայրենի, արդարութիւն մարդոյն․ և Փ կըմեւոյն ողորմութեան, մի չափեսցին գործք ողորմութեն քո ընդ ջանից մարդկան, ընդ առա-

քննական վաստակոց արդարոց ․ Որպէս թէ ասել․ եթէ միայն զարդա-
րոց խնդրեան կատարեսցես վասն առաքինութեն նոցա, երեւի՛ թէ ողոր-
մութիւն քո ոչ է կարող ընդունելի առնել զաղաչանս մեղաւորաց․ եւ
եթէ որչափ արդար է ոք, այնչափ առնիցես նմա բարիս, կարծի՛ թէ
ողորմութիւն քո ոչ է աւելի քան զիրաւութիւն մարդկան ։ Արդ զի մի
այսպէս կարծիցի, առաւելապէս գթա յաղաչանս իմ քան 'ի հայ-
ցուածս արդարոց ։

7 Անձնեայց են ողորմութեան ։ Արդարքն իբր արդար՝ անկարօտք են
քաւչական ողորմութեն, թէպէտ եւ պարգեւական ողորմութենն միշտ կա-
րօտ են․ զի եւ 'ի պսակելն՝ ողորմութբ պսակէ ած ։ Բայց իբրեւ մարդ
մեղաւոր՝ կարօտին նաեւ քաւչարար ողորմութեն․ որպէս ասէ 'ի բանն
Հ․ 3 ։ Եւ աստանօր խակ օրինակօքն ցուցանէ՝ իբրեւ զարդարոց խօսել․
զի առողջքն մարմնով, ասէ, դեղոյ ոչ կարօտին, եւ ակնեղին ոչ խնդրէ
առաջնորդ, եւ փարթամք ոչ 'ի մոյրս շրջին․ սոյնպէս արդարոց ոչ է
հայցել ներումն ։

8 Զմեծն քան զբնութիւն․ Զբան սաղմ․ կՆ․ 18․ ասէ, մեծ կամ 'ի
վեր լինել քան զբնութիւն մարմնոյ․ քանզի եթէ այնպէս իմանայցեմք
զասացեալն, թէ ոչ ճանաչէր կամ ոչ գտանէր 'ի սրտի իւրում զմեղս
ինչ, ահա 'ի վեր է այս, եւ մանաւանդ ընդդէմ բնութեանս, ուր ընդ հա-
կառակն նորին արդարքն ասեն՝ ո՞վ պարծեսցի սիրտ սուրբ ունել ։ Իսկ
եթէ իմանայցեմք, թէ 'ի տեսանելն մեղս ինչ 'ի սրտի՝ կասկածէր թէ
ոչ եւս լուիցէ նմա ած, կամ թէ խնդրէր զի մի՛ ներիցէ նմա Տէր․ բա-
ցում եւս 'ի վեր է բանդ քան զկարօտութիւն բնութեանս ։

9 Թէ էր իմն չէին ։ այլ օրին․ Թէ և իմն ։ այսպէս է եւ 'ի հե-
տեւեալն, Թէ և իմ չերեւէր, Թէ և իմն չէին ։

10 Զգոյգ ծննդաբերութեան ։ Երեմիա բաղում իրօք եղեւ օրինակ քի,
այսինքն յարգանդէ նուիրմամբն, կուսութեամբն, մարգարէութբ,
քահանայութբ, առ հեթանոս քարոզութբն, գուշակելով զկործա-
նումն տաճարին եւ քաղաքին, եւ յետ կործանման լալովն, որպէս եւ քս
գուշակեաց եւ լաց․ այլ եւ վիշտս կրելովն յիւրմէ ժողովրդենէն վասն
անաչառ քարոզութեն․ յորոց 'ի գուբ աղմոյ արկաւ իբրեւ 'ի գերեզ-
ման, ուստի եւ հանաւ, յօրինակ թաղման եւ յարութեն փրկչին ։

11 Իմն ըղձալի ։ Ասէր զանձնէ երանելին Պօղոս, թէ յիս իցէ հոգի
ած, քս լինել խօսի կամ այցէ, եւ այլն ։ Արդ եթէ եւ ես նման պօղոսի
էի, կարէի սոյնպէս խօսել, ասէ սուրբ վարդապետս ։ Այս որ եւ ես ա-
սեմ, եթէ յայսմ նման պօղոսի չխօսիմ, 'ի միասումն ահա իբրեւ զնա
կոչեա զքեզ զլուխ մեղաւորաց ։

12 Զամենայն գոյից ։ Ես անխրատելս եւ պատառոր ոչ միայն չկա-
րեմ իբրեւ զարդարոն զայնսիկ համարձակիլ առաջի քո, եւ խօսել
պարզերես, այլ եւ ոչ զահաւոր անուն՝ զոր համօրէն արարածք, ա-
մենայն ուրեք եւ ամենայն օրինակաւ հռչակեն, մեծայացուցանեն, իշխեմ
առնուլ յանարժան բերան իմ ։ Եւ զի՞նչ ասեմ․ եթէ կամիս տէր՝ զի
զամենեցուն զլուխ․ համարձակեալ առաջի քո, պարգեւեա ինձ շնորհս փըր-
կութեան, պաշտպանութեան, եւ այլն ։

# ԲԱՆ ՎԱԹՍՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ [1] որպէս զի ոչ վայելէ օրհնաբանութի՛ւն 'ի բերան մեղաւորի՝ 'ի Սիրաքեան առակէ կանխաւ խոկ ուսոյ, զիա՞րդ յաւելից կրկնել զնոյն գովութիւն աղաչաւորս բազմապատկառ, որ համապազ ընդունիմ անէծս [2] 'ի սաղմոսի բարեբաստութեան: Զի իբր երգեցից ինձ վտանգս և արձանացուցից նախատինս, և 'ի մերկութեանս զրկի փուշս ընդ շուշանաց ժողովեցից. զիա՞րդ ընդ Դաւթի համարձակեցայց ասել, թէ զատամունս մեղաւորաց փշրեսցես. զիա՞րդ դարձեալ, թէ մի՛ անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց. զիա՞րդ, թէ դատ արա ինձ տէր [3] ըստ արդարութեան քո, ըստ անբծութեան իմոյ որ յիս. զիա՞րդ, թէ կատարեսցին չարիք 'ի վերայ մեղաւորաց. զիա՞րդ, թէ խորտակեսցին բազուկք մեղաւորի և չարի, և զայն որ զկնի. զիա՞րդ, թէ տեղասցէ 'ի վերայ մեղաւորաց որոգայթ հուր և ծծումբ. զիա՞րդ, թէ սատակէ տէր զշրթունս նենգաւորս և զլեզուս մեծաբանս. զիա՞րդ, թէ փորձեցեր ըզսիրտ իմ և ոչ գտեր անիրաւութիւն. զիա՞րդ զյաջորդն սմին, թէ ես պահեցի զճանապարհս խիստս. զիա՞րդ զկան, թէ ես արդարութեամբ երևեցայց երեսաց քոց. զիա՞րդ, թէ և ես եղէց անբիծ ընդ նմա. զիա՞րդ զմիւսն, թէ հատուսցէ ինձ տէր ըստ արդարութեան իմում և ըստ սրբութեան ձեռաց իմոց. զիա՞րդ անձամբ ինձէն զստութիւն իմ ծանակեցից՝ ասել ընդ սրբոյն, թէ լըւացայց սրբութեամբ զձեռս իմ. զիա՞րդ 'ի մէջ նանրութեան զամբարշտայն աթոռս բամբասեցից. զիա՞րդ զերջանկին սպարծանս թշուառացելովս կերպաւորեցից, թէ դատ արա ինձ տէր՝ զի ես յանբծութեան իմում գնացի. զիա՞րդ օտարս 'ի բարեաց՝ զխաղիդ գազանեաց արգահատեցից, թէ մի՛ համարիր ընդ ամբարիշտս զանձն

իմ. զիա՞րդ ես ինքն գողով զայս անիծեցից, թէ տուր նոցա տէր զգործս նոցա, և ՚ի կարգ բանիցն համարձակեցայց ։

Բ. Քանզի թէ [4] զյետինս բանիցն առաջնովքն ատանօր եղից, կրկին ծանրանան ինձ ցաւք և յաճախեսցեն դառնութիւնք ։ Բայց [5] ՚ի չեղջեցելոցն արտասուաց՝ դոյզն մի չափեալ, բաւականացայց համապատաղորդեան յանդիմանութեամբ սաղմոսարանին ընտանի ձայնիւն, որ զպարտաւորեալս միշտ կշտամբէ. առ որս և սպառուած քառասներորդի ինններորդի հատուածի բանի յանդիմանողի [6] զիս զարշեցուցեալ, հանապազ խայտառակէ. խցեալ զբերանս ՚ի փառաբանութենէ, եղկելի զանձն իմ ցուցանէ, ա̃ծային ձայնիւն դատախազեալ, յանկարծութենէ կենաց լքանէ, միանգամայն և [7] վերջս մահու ինձ իբր ՚ի պատանչէ առաքէ ։ Քանզի թէ չար է անձն առնուլ յօտարէ, ապա [8] անձամբ զանձն անիծանել կրկին չարաչար. իսկ եթէ չառնուլ նախատինք ՚ի մերձաւորաց օրէնք են, ապա [9] ՚ի տեսողէն հայել զպատիկ, կրից արեան տաժանմանք, վիշտք աղէտից և խեթք մտաց ։ Բայց թէ առ խոնարհութեան անձին իւրում մատնեսցի, [10] ջնեալ և կշտամբեալ անիծիւք ՚ի լեզուէ իւրմէ, ՚ի խոստովանեալ և յանձնիշխան շըրթանց բերանոյ վերնոյն օրհնեսցի. զի ձգցրտեալ թարգմանեաց զդարձն իւր առ նա՝ զհետս կենաց ոչ լքանելով. [11] տաժանման սիրոյ զպարտեացն արժան կրճատեաց, ոչ տիրեալ ՚ի խարդաւանաց չարաբանողաց. ոչխար հօտին Քրի գատու բժշկեալ՝ դիմելով ՚ի յայն բուժիչ [12] աղեացն արկածից ։ Բայց ես անբանական բարոյից է՝ [13] աստն կենդանեաց ՚ի մէջ դալարոց ծաղկածին վայրից կենաձիր բանից թմբրութեամբ մնաց ՚ի յարօտս մահու ճարակել ։

Գ. Այս արդ քանզի [14] իմ է ասակս վերջին կշտամբողական, և առ իս անինարկէ զգիպուածոցն չար պատահմանս, որ ինձէն անձին նիւթեցի միշտ զեղմանս կիզանողականս հրոյ տոչորման, հասեալ ՚ի յերկնաւոր զգոյն գագաթանս իմաստնարանի բազմանկիս ։ Քանզի զիա՞րդ ՚ի յարդիւնս ինձ օգտից սաղման եկեացէ, յորժամ անպտուղ ՚ի բազմերգութենէն լինիցիմ, ոչ նըւագել հոգւով, ըստ թելադրելոյն Պաւղոսի. զիա՞րդ

ընդ մարգարէին եւս զտէրունին խառնեցից մեծս մեղա-
ւորաց՝ նկուն սխրանեաց, ասել ընդ որքոյն, Թէ 'ի
բաց կացէք յինէն ամենեքեան որ գործէք զանօրէնու-
Թիւն. զիա՞րդ ոչ ունելով 'ի բազմացն պատուիրանաց
կատարեալ՝ շնորհին և օրինին՝ բարբառեցայց զերջան-
կին, որ նախ ինքն արար զոր մեզ կամնեաց, Թէ քան-
զի ծառայս քո պահեցի զայս, և որ զհետն զան ասա-
ցեալքն. զիա՞րդ Թափուրս 'ի լուԹենէ իմաստից կե-
նաց ընդ երկիւղածս տեառն օրհնեցից. զիա՞րդ ընդ մե-
ծին մաղԹանաց զիմս յօդեցից, Թէ զմին խնդրեցի 'ի
տեառնէ՝ զտեսիլ վայելչուԹեան նորա և [15] զհրաման-
նատրուԹիւն տաճարի նորա. զիա՞րդ 'ի հրաժարելն
ինձ ձեռնամխեցից, յորժամ լսեմ, Թէ ուղղոց վայել
է օրհնուԹիւն. զիա՞րդ շրԹամբք իմովք զանձն իմ ա-
նիծից՝ ասելով զկնի յոլովից առեալն, Թէ երեսք տեառն
'ի վերայ չարագործաց՝ սատակել զյիշատակս նոցա յերկ-
րէ. զիա՞րդ զմիւսն դարձեալ, Թէ չարք վաղվաղակի սա-
տակեսցին. զիա՞րդ զկերպարանացն իմ նմանուԹիւն,
Թէ բազումք ամբարշտաց խորտակեսցին. զիա՞րդ սա-
տակման ինձ պաղատեցայց, Թէ ահա մեղաւորք կորի-
ցեն. զիա՞րդ զբազմայածեան լեզուս [16] 'ի յօրհնեալն
բան մխեցից, Թէ ասացի պահել զճանապարհս իմ, զի
մի մեղայց լեզուաւ իմով. զիա՞րդ փշովք մեղաց հեղ-
ձեալս զանարատին պարծեցայց, Թէ այլ զիս յանբծու-
Թեան իմում ընկալար. զիա՞րդ ես մեղաւոր և կրկին
պատժաւոր զհանգունակիցսն գովեցից ասել 'ի նո-
ցունց, Թէ 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս
Աստուած.

Դ. Օ՛ իա՞րդ իբր ոչ կուապաշտեալ անպատկառապէս
պերճացայց ունայն պանծանօք ասել ընդ ԴաւԹի, մի-
Թէ մոռացեալ իցէ մեր զանուն այ, կամ ձգեալ զձեռս
'ի մաղԹանս օտար աստուածոց. քանզի որ 'ի մեղս գար-
շուԹեան խոնարհեցի, առաջի կայ նորին կառուցեալ
առեալ 'ի պաշտօն [17] յուշնականացն ախտարծարծիցն
պոռնկապատիր պատկերացն կերպարան՝ [18] Աստարտայ
և Քամովսայ և [19] Մեղքոմայ արուարձանի և [20] Թա-
բահատայ Թարմատարի, ընդ զազրատեացն [21] կանա-
ցեաց՝ իշխանդամիցն պատկառանք անվերարկու ծանա-
կուԹիւնք. Իբր ոչ պատկառեցից ամփոփ ասել ընդ

նաշտակին, որ զայս [92] զխոնարհութիւն առ բարձն ունէր մէջս, թէ վասն քոյ մեռանելոյ զորհնաբար, և որ 'ի կարգին է սորին սորին։ Ներ յխոնհս յայս և փառաւորս առել ճաշակեմ, թէ բերան իմ՝ պատմեսցէ զխոնարհութիւն և սիրոյ զհամարձակ. Երբ [93] մարդկանց կեր պարտաւոր՝ զմարդահաճոյից ամենայն ցրուել մաղթեցից. Երբ [94] զկենէն երկրպագեալն մեծամուն բարութիւնս, թէ հաճոյ եղեւ առաջի ատեան յերկրին կենդանեաց։ Ո՛վ խորհուրդ անհաս ամբաւից մեղաց զորդորդի առեալ կարգացից, թէ ոչ մեղք իմ՝ և ոչ յանցանք, առանց մեղաց ընթացեալ և աղխ եղէ. զխորհրդ զիս նորն մնանեցից կորուսեան յանէն զայս բանն, թէ մի սըրտիր զործոցայն զանօրէնութիւն. զխորհրդ, թէ որպէս հայի մամ՝ առաջի հրոյ, այնպէս և մեղաւորք յերեսաց նոյ. զխորհրդ զրդեալս ապաշխարողս փափկութեամբ՝ ահամանեցից զանմահն խնձ բան, թէ խոնարհեցուցի պաշար զանձն իմ, և զաղքատիկս նորին ընդ նոյն, թէ ես 'ի նեղել նոցա բարձ զզենուլ, և երբև զայսպէս զորաւոր խոնարհ առնէի։ Որպէս հանդարտեցից [95] զխոնարհեալն իմ՝ պատիւ մէջս յիշատակել, թէ առկայն մեծ բարեկութեանն ոյ ոչ ապաշխարի, և արդեն 'ի նմանէ ամենայն մեղաւոր երկիր. Երբև զեան առ ամէն, թէ զամենայն եղջիւրս մեղաւորաց փշրեսցես։ Ո՛վ խորհրդ զասերախտութեան Յակոբայ [96] 'ի ձեռն առեալ հեծենեցից, որ ընդ սատերին զշնորհութեան ընկալեալ, մնացող ընդ նորին նոցին թերութեանց զերախտին Աստի նախապէս առանձնելոյ խորհին փրկանաց, բան նորա զգերափառութեան Մովսէսի ցորին պատմեսցէ, որ զօրէնսն նկարագրելոյ աստուածային մանուածն։ Ո՛վ խորհրդ զյարուցելոյն 'ի մեռեալ զխոյզ զօղեան ցացից. Երբ նորա զտառապեցելոց խառնեալ ազգայն առնել, թէ որպէս զխոնհեալս բարեաց որ 'ի մեզ կար մտանելաւորեայն թուլոյ, այս է՝ սրտոյն արտաւոց. [97] Որպէս զանկեալ զսերմն բանին 'ի ձեռնարհին, և զխարանեալ զկամս ընդ չարին ասել մնացանեցից. Երբև զխոնարհեալն առ 'ի նոյն չարիք չարին պատերազմի՝ զաղոր զաղախնանութ մնաց ազատել, զոր ես զօրացուցի զործակցեալ հնարից բանսարկուին։ Եւ ոչ ունիմ՝ աղերսել, թէ մի յանէր և մի զաղթեր, ասէ. և խորհե-

ցան [28] 'ի վերայ որոց քոյ և տասցին, զոր 'ի կողմն ապստամբս է աղօթել. «Բանզի [29] յորժամ պատահեսցին է առնուլ զպատանիկ 'ի վերայ քահանայութեան մեկնածն զի այ միջա ձեռնասանեաց առ նորընծայս խոստովանութիւն, և ընդ նո-րին նոցին մնալոց.

Ե. Արդ զա, ասէ «Ոչ արդի քարոզեալ մեծին 'ոյ, պատճառս և անխոյլութեան երկնային զօրաց շքեղազար-դութեանն՝ յանձնայն ընթացիկ խորհրդի հրամանի խա-չիվ լուսոյ զինեալ պաշտպանեալ. որ զի թէ և զայլն յիս անարժանութիւնք քարոզելեաներ, այլ ոչ հաշուար-թիւնք. Որ ոչ հանդերձ 'ի կարաւն նմանեալ խնդ անիրաւութեալ, այլ [30] ամենազօրով թագաւորաւն ընդ եղեալն ծիրանի զարդարեալ եկեղեցի վիճակաց, ասա-կաւն զեմհա նորա զհրամանն քեզ զրեցեր, առելով զգործընթացիկն լուսոյ քան, ամենայն զենու ոչ են յա-ւելեալ անվճարել զերկիր վասն զործոյ մարդկան. Եւ միաբանութեան մեծ իմն պարգևեալ ընդ կենաց անմահութեան և պարտաւորութեան սատանայեան. որ երբեմն սասանեաց զզմե-նային զանխոյսելոյ 'ի կործանելեան յանցեր, որպէս ասաց, և [31] առ այլ ամենայն նեղեալ սատանայ վանեցեալ ընդ յամ-բառնալ անձրևին առ մրրկալից ցամաքն. Ընձեռեալ յանցեր [32] քարոզեան անանկս յիշատակաց անմեկին 'ի վերջին աւուրս. քև 'ի ձեռն առաքելոյն քոյ՝ ող-ջոյն հաստատեաց անհամեմատելի հետևողաց քաղցրա-ձայնս հրամայեցեր. Ահա և յիս ցոյցս կենդանի ըղ-ձալիս զթութեանց զօր, զի և ես փրկեցայց քա-ւեալ ամենասուրբ քո այցելութեամբդ. Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն.

---

1 [illegible] ['ի] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] ... [illegible] (ՄԵ. Թ.) « [illegible] 'ի [illegible] [illegible]. »

2 [illegible]

3 [illegible]

4 [illegible]

5 [illegible]

6 [illegible]

7 [illegible]

8 [illegible]

9 [illegible]

10 [illegible]

11 [illegible]

12 [illegible]

13 [illegible]

14 [illegible]

15 [illegible]

16 [illegible]

17 [illegible]

[illegible]

18 [illegible] 13 · 24 ·

19 [illegible]

20 [illegible]

21 [illegible]

22 [illegible]

23 Մուրհակաւ հերձուածողաց: որ ստորագրին կերպարանօք ձեռնագրով որպէս զմուրհակ:

24 Զերկիցս երկրորդեալն. երկիցս ասացեալ մեծամեծ բարութիւնն: Այսու կամ զյաջորդ բանն խնամոյ «Հաճոյ եղեց առաջի տեառն», և այլն. որ երկիցս գտնի 'ի սաղմոսս. այսինքն ծե. 13. և ճժդ. 9. և կամ զասացեալն 'ի սաղմ. իզ. 13. «Հաւատամ տեսանել զբարութիւն տեառն յերկրին կենդանեաց». որ և համար է երկիցս հայցէ. «Զմի խնդրեցի 'ի տեառնէ, և զայն աղաչեմ, բնակել ինձ 'ի տան տեառն զամենայն աւուրս կենաց իմոց»:

25 Զընծայեալսն էի: յայլ օրին. չէր էի:

26 Ի ձեռն ասեղի հեշտութեանց: Որպէս զապականութիւն հրեշից 'ի բարուն ատելով ծաղր արարից, նա՛ որ ընդ աղօթեցին. ընդ հին օրինաց անունով և զխաբէութիւն նոցայ, մատոյց ընդ հրեշիցն նոցին ..., բառ նոցա յանցանացն զերախտիս քան' որ 'ի ձեռն ամենահրաշ փրկանաց խաչին, քան թէ հրեշտակ զառաջնորդութիւն մովսէսի' որ 'ի ձեռն հրաշալի գաւազանին, որ օրինակն էր միայն քան ճշմարտութեանն:

27 Որդւոց պսակելոց: զհարսն զսեղանն բանին' որ ունի 'ի Քահանայապետի մատուցումն, և զհացն իմ' որ եղև Քահանայապետ գինին միաւորելով ընդ նմա, սուրբ խորհրդոյս: Այսպէս հարցանելն խնամօք է բանս, և ոչ ստորասական, որպէս եղեալ էր յայլ աղօթեր. նոյնպէս և յաջորդն. Ի մէջ պսակաւորաց առ 'ի նոյն կարգս. այսինքն որպէս զհեռեալն 'ի նոյն գործ պատարագին սուրբ խորհրդոյս, որ զօրութիւն խնդիր: Իսկ ասացեալ նմանակիցն' է Գառնակ Գառնակալար հարցոյ. այսինքն զազանի պատարագող զօրքն աղաւաղ մասնաւոր, որք են խորհուրդք և իղձք մտախաբութեան, նախանձու, ագահութեան, և այլն. որ իբրև թշնամի զօրք խոցանեն և սպանանեն զսերմն հոգւոյ, գործակից լինելով նենգութեանց սատանայի:

28 Ի Սիրոյ որբոց ոչ (սաղմ. ձբ. 4.) այսու ասէր բառիս այլաբանէ կամ զսերմն ամենայն բանին, և կամ զխաչ միոյ և զհացն. զոր ես, ասէ, 'ի Քահանայապետ մեզոյ արկանելով, և ընդ կարս սատանայի միաւորելով, զհարսն սուրբ անուանեցից, և զանդամակցիմ զգեստ. թէ խորհեցան 'ի վերայ որբոց քոց, և այլն:

29 Յայտ զօրհնաբերն: Թէպէտ և վերադրեալ սաղմոսն ձբ. բառ Քաղին խնամի զպատերազմն այլազգեաց ընդդէմ իսրայէլի. սակայն բառ մասամբ' յայտ յարմար է, ասէ, խնամել 'ի վերայ բանութեն գլխոց, որք մէջ պատարագաց են առ Ներսէսի իմաստութեան, առ 'ի հակառակութիւն այժմու ժամանակիս, այլ և խնամել 'ի վերայ նոցին անձանց. հարուց մարդկան, և ապատամբ մասամբ և կամաց մերոց, որ գործակից լինին և մշակք գլխոց:

30 Աշխարհակուլ Նախախնամի: Յայտ զարմանալի Թախծութիւն կամ տրտմութիւն 'ի վերայ կորստեան աշխարհի ջրհեղեղաւ. ջրհեղեղաւ հեղձուցեալ յարարածոյն: Տրամութիւն նմանութիւն առն զոյ, երբ զի ակամայ սպառէ զմարդ: Այնպէս Աստուած ես իմ, խնամի' մեծապէս զուարճանայ ընդ կեալն անմեղաց ապաշխարութիւն, և որոց արժանի են մահու. որպէս օրինակաւ գդմնութեն ցուցաւ առ յաշխարհ: Իսկ ասելն' Երկիցս ... այսինքն երկիցս անգամ, խնամի միանգամ յասելն, «Զղջացայ զի արարի զմարդն». (Ծննդ. Զ. 6.) և երկրորդ անգամ յետ ջրհեղեղին, ոչ ևս ածից ջրհեղեղ (Ը. 21.) կամ, Երկիցս խնամի կրկնապատիկ, այսինքն առաւել փութայր 'ի ջնջելն զանօրինութեանն' քան եթէ չէր պատժեալ: Իսկ արդարև գթութեանն սահման կոչէ ըղբանն. ... ոչ ևս անփոփանել, և այլն: Զխոյրդ որ ամենատես

նախանձայեաց ընութեան է՝ տարջանայցէ, ապաշաւիցէ. կամ նորոգ ինչ ածիցէ զմտաւ, որպէս թէ յառաջն խորհեալ չէր. և կամ յայլմէ ումեքէ զգացեալ գործեալ իցէ վրիպակս. և այն զի թէ համայնապէսինչ բարձաւ ծննդոց մարդկան, պակասեցոյ արդեօք ոչ ինչ մի 'ի փառացն և 'ի մեծութենէն։ Կամ, զի՞նչ պէտք՝ առ մարդ զի՛ւր արտայայտութիւնն յայտնել, իբր այն թէ սփոփումն առ 'ի նմանէ լինել ունիցի։ Արդարև մի բան է առաջեալդ, բայց զարմանալիս յորժամ յինքեան ունի ամբարեալ, այլ վասն 'ի դէպ խօսկ բազմութականն եղաւ զղջացաւն առ եզականին էառ։ Նա զարմանալի ըղձալոյ ասէ, քանզի անդէն 'ի լսելն բարբառ այգպիսի 'ի բերանոյ նոյ՝ զարմանալն ընդուրեցաւ գոլ, թող թէ առ մասամբ քննիչս, որոց թէ և հասանելի է սակէ՝ թէ մարդկօրէն ձեռնոյ նմ առ 'ի յաւնանելոյ զի՞րն զթութեն, բայց ըստ անդր անսութեն՝ բաղդք իւն համարին զայս ողորմութեանն ոչ առ իւրն արդարութիւն։

31 ԵՒ ՈՒՂ ԱՍԷ, առ եղիայիւ՝ որ զէրիս ամս արգել զանձրև, վերստացար վասն կարի յամելոյն 'ի խնդրել զանձրև. և հրամայեցեր երթալ և երևել աքաաբու, և ալօթել՝ զի եկեսցի անձրև — ՈՒՐԱԽԱՑՈՒՑ ԳՈՐԾԱՆ, 'ի գարման և 'ի պէտս պաշտաղացն զնուաս (Գ. Թագ. ԺԸ. 1։)

32 ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՓԵՍԱՅԻ։ Ի վերջին աւուրս մարդկանոյն քո՛ ցուցեր անձնաւելի աղգս աղգս զթութեն 'ի բժշկել զցաւագարս, 'ի կերակրել զասվեալս, 'ի կենդանացուցանել զմեռեալս, յընդունել զմեղաւորս, և այլն. զոր և անխիւք յիշատակել արժան է և բարեհաճակել։ ԲԱՆ Ի ՎԵՐԱՅ ԱՐԺԵՆՈՅՆ։ Տարակուսելի է՝ թէ այս բանք յանցեալոյն իցեն յարեվեք, թէ ընդ յաջորդն. զի զրչագիր օրինակք անմիաբան գնեն ըղկեան. և մի ընտիր օրինակ առանց կէտի թողու անորոշ։ Ընդ անցելոյն խմանի. բաղում անատկս զթութեն ցուցեր քև, քով անձամբդ, այլ և առաքելովքն առ մերձաւոր ժողովուրդս. խսկ առ հեթանոսն անարժանս՝ հրամայեցեր տանել ողջոյն խաղաղութեն։ Կամ, ՋԱՆ ընթեանուլ ընդ անցելոյն, այսինքն քև անձամբ ցուցեր. խսկ 'Ի ՎԵՐԱՅ ԱՐԺԵՆՈՅՆ յարեացի ընդ յաջորդին, այսինքն հրամայեցեր տալ ողջոյն 'ի ձեռն առաքելոյն։ Սակայն ըստ երկուց ևս ընթերցման կրկնելի է ՆԱ շաղկապն, որ զանց լեալ է սակս յառաջելոյ ՓԵՐՆ. և իմանալի է, քև և 'ի ձեռն առաքելոց։ Արդ եթէ այսքան զթառիրեցեր նաև առ անարժան հեթանոսս, միթէ զլանայցես ցօղել նաև առ իս զհոյլսական զթութենդ ձեր, որ ՉԵՆԴԱՆԻ ևս եթէ 'ի փառս, և եթէ յողորմել. ոչ կարասիս միջնորդաւ առաքելոյն յայց ելանել ինձ. այլ քո բանդ աբաղաձաս ևս է առ իս քան փնդա ոսկոյն ընթացս։

# ԲԱՆ ՎԱԹՍՈՒՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի·*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ ընդէ՞ր է ինձ [1] բնաւն որ ՚ի սաղմոսին այնպիսեաց բանիցն ՚ի կիր արկանել, որ ՚ի նախատինս միանգամայն և ՚ի նշաւս ինձ յարակայլին, համապաղ երգել խնդալ տաւղօք։ Քանզի զխո՞րդ արդեօք գծութ երջանկին ինձ դատապարտելոյս նմանեցուցից՝ ասելով ընդ նմին, թէ ոչ մերձեցաւ առ իս թիւրեալն սրտի։ Զխո՞րդ [2] զկարգադրութիւն տանցն ՚ի յայտնմանէ զկնի թուելոյն զարհուրեցուցչաց ընդաբկից կայից կանոնաց օրինաւորին՝ զինուորին և թագաւորին և մարմնական հրամանատուին, որք և երկնայնոցն են համբուրելիք ասելով, ոչ յուսահատ եղէց ՚ի կենաց պատմոցս աւետեացս և նորոյս աշակերտ անմահ յաւէնուստ բարեկարգութեանց։ Զխո՞րդ ըստ խրատախորհ արդարոյն, ընդդէմ մեղաւորացն [3] մահու զինեցայց ասպառ առաւօտին և ակիզբն արթնութեանն միշտ պատրաստական լինելոյ, որ և ոչ զանդամս մարմնոյս զանեալ խրատեցի. զխո՞րդ մանրակրկեալ մեծին արութեան՝ սատակեցից ՚ի քաղաքի տեառն զանօրինեալսն, որ և ոչ զգուսեալ բիծս հոգւոյս խոց մեռուցի։ Զխո՞րդ առեցից զբողին չէ յայտնելոյն, թէ զմխիթը որպէս հաց կերայ. զխո՞րդ, որ ոչ միացուցի յինքս կրից կռթիլ մի պղտոր ընդ յստակ արտօսր աղբերց երգողին՝ ասեմ ընդ նմին, թէ զմեղելիս իմ արտասուօք խառնեցի, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։ Զո՞րս [4] ինձ գրեցից մեղօք մահացեալս, յորժամ սկզբն ոչ ՚ի բոլոր սրտէ ըղյանցմունս նախնեացն իւր վարկանիցի, թէ մեղաք մեք ընդ հարս մեր՝ անօրինեցաք և յանցեաք, և որ ՚ի փոխանն յանցի սաղմոս խրատմիք առ իս, քան առ Իսրայէլ։ Որո՞վք [5] յարդեցայց զանխիլ ընդ բարիսն, յորժամ մարդկային հնարից այս դեղ պատուեցաւ՝ որ ոչ

յիս զատ, 'ի զարշութենէ կերակրոց 'ի մահ սովե-ցեալք և յանձկութենէ ջրանց 'ի հոգւոյ նուաղեալք, ըստ խստութեան ինքնորէն կռանից ջրելոց և հեթանո-սաց: Ո՜ խորհուրդ արդարութիւն իմ՝ մինչ յաւիտեանս, զոր ոչ ընաւ իսկ կատարեցի:

Բ. Իսկ զի մի տաղտկացայց յամեալ 'ի բանիս, 'ի հա-մառօտել զայն փութացայց: Ո՜ ինչ ունիմ ասել 'ի տեղի բանիցն՝ զոր անծաշունչ ձայնն նուագեաց [6] որհ-ներգողն Դաւթի, թէ բոլորով սրտիւ խնդրեցի զքեզ. զխորհուրդ ընդ սմին զմեծն քան զայս, թէ յամե-նայն ճանապարհէ չարեաց արգելի զոտս իմ. Իբր ընդ եգեալս և զայն մատուցից, թէ 'ի սրտի իմում թաքու-ցի զբանս քո, որպէս զի մի մեղայց քեզ: Որպէս [7] զա-նոյնութեանցս իբր զլուսաւորութեանց ճառեցից ընդ պարս մարգոց, թէ 'ի պատուիրանաց քոց խոտորեալ, [8] ատեցի զամենայն ճանապարհս չարաց: Ո՜ խորհուրդ [9] զհեզոյն ճըշ-մարտութիւն իմում ստութեամբ մշանջենական երդմա-հարութիւն կարգեցից՝ ուխտեալ ընդ հաւատարմին, երդուայ զոր հաստատեցի պահել զդատաստանս արդա-րութեան քոյ: Ո՜ խորհուրդ ինձ հրեշտակ մահապարտ [10] անհրաժեշտ վճռի՝ զբանին պատգամ կրկնեցից, թէ հեռի է 'ի մեղաւորաց փրկութիւն: Ո՜ խորհուրդ չարս խո-կալէս՝ զչարեացն գրեցից՝ որք 'ի տեառնէ առնուն ըզ-նոյն հատուցումն՝ զայս տուն յեղյեղել, թէ բարի ա-նէ տէր ուղղոց սրտից: Ո՜ խորհուրդ [11] զհամառօտն փոխա-դրութիւն անաշառութեան՝ վկայեցելոյս ինձ սահմա-նեցից, թէ զթիւրեալսն յափշտակութեամբ տանի ընդ այնոսիկ, որ գործեն զանօրէնութիւն: Ո՜ խորհուրդ զմեծա-գգեստին պանծանս անմաչեցելոյս ինձ պատուաստեցից՝ ասել զնորայն, թէ տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ և ոչ զբօսան աչք իմ, և որ յետ սորին պատմին սաս-ցեալքն: Ո՜ խորհուրդ [12] զանձանն քան զմարմին բան՝ 'ի ցոյց առից քաջալերութեան վհատելոց՝ ես զանձ գե-հեննին, ասել ընդ օծեալն այ հոգւոյն, թէ յառաջա-գոյն տեսեր, զի ոչ գոյ նենգութիւն 'ի լեզուի իմում, [13] 'ի սկզբնաւորն նախաձայնեալ սաղմոսիս մինչև 'ի լրումն աւարտման բանիս: Ո՜ խորհուրդ զասակցութեան դժնէից մարդոց համբարն այլս մահու և որդիս սատակման բարբառիմ զչարեչարհին, ո՞չ ահա զատեալս քո տէր

ատեցի, և զինայուածն սրտին կորդի: Ո՜ խո՟րդ մե-
ծաւն 14 վստահութեամբ տանելի վէհին, անձն իմ և
դու աշխար աշխարհի, զանդատ քո ողի յառաջ ըն-
ծայեալ՝ մեծացուցանես ընդ պատկերյն, թէ փորձես
զիս տէր և տես, թէ իցեն անօրէնութիւք 'ի ձեռս իմ,
և զյաւելուածն որ զհետ սրտին: Ո՜ խո՟րդ 15 ես զոլով՝
և յայլոց աղօթեմ ասելեալ՝ յուսացելոյն յա՟ծ ձայնակ-
ցեալ, պահեա զիս տէր 'ի ձեռաց մեղաւորի և 'ի մար-
դոյ չարէ: Ո՜ խո՟րդ 16 համբարձայց ընդ փառաւորեալն
մաղթել ա՟յ, թէ դու ես յոյս և բաժին իմ յերկրին
կենդանեաց: Ո՜ խո՟րդ 17 իբր հանդիսացեալ ընդ ձրդ-
նաւորին՝ զհրցանակն յաղթանակի թագաւորին մատու-
ցանելով՝ զառաւելեալն քան զօրինակ աղերս աղօթից,
թէ 18 ինձ սպասեսցեն արդարք քո մինչև հատուցես ինձ:
Գ. Բարեբանեալ է և այս իմաստ հոգևոր և 19 տէ-
րունի գործոյն նմանի, որ զփորձիչն պատկառեցոյց, յոր-
ժամ զամենայն արհամարհիցէ և զնկղնապատճառն
եղելոց միայն ընտրիցէ ասելով, թէ 20 երանի ժողովըր-
դեան, որոյ տէր ա՟ծ է նոցա: Մեծ է և այս բարձրու-
թիւն շնորհի և զգուշական համարձակութիւն լցեալ
երանութեամբ, թէ սուրբք քո օրհնեսցեն զքեզ: Ըղ-
ձալի է և այս ընտանութիւն մերձաւորական հոգևոր
հաղորդութեան՝ յա՟ծ յուսալ և 'ի նոյն արձանանալ
բանիւ սաղմոսին բերկրեալ, թէ զկամս երկիւղածաց
իւրոց արասցէ տէր. և զկարգ բանին կատարէ, մինչև 21
զոգեալին և զգուարճալին ազդեսցէ, թէ պահէ տէր
զամենեսեան որ սիրեն զնա, և զամենայն մեղաւորս
սատակէ տէր. 'ի գլուխս լրման գրոց նուագարանաց
սաղմոսիս՝ իբր թէ զօրինակն իսկ եցոյց վերջին հա-
տուցման արդարոց և մեղաւորաց: Ուղակցորդք են
միմեանց և զկնի երգեցեալքս. զի թէ ընդունի զհեզս
տէր և խոնարհ առնէ զամբարտաւանս մինչև յերկիր,
ապա ինձ ո՟րքան եղկութիւնք կան առաջի. իսկ եթէ
հաճի տէր ընդ ժողովուրդ սուրբ, և բարձր առնէ ըղ-
հեզս 'ի փրկութեան, ապա հերքեալս 'ի բարեմասնու-
թեանց ես ո՞ւր հաստատեցայց. իսկ եթէ օրհնելի է
է ա՟ծ 'ի սուրբս նորա տիրապէս, ապա օտարս ես 'ի մաք-
րութեանց ընդ ո՞րս դասեցայց. իսկ եթէ 22 'ի կանխեր-
գիցն մերձ այսր եղից յիշատակարան ինձ կշտամբու-

թեան, թէ սիրեցէք զտէր սուրբք նորա, զի ստուգու-թիւն խնդրէ տէր՝ և կրկին հատուցանէ ամբարտաւա-նիցն, ապա յորում գնդի ես գտայց զերեալս 'ի գաղտ-նեաց գաղղին չարեաց։ Քանզի զոր օրինակ տատանին տագնապաւ տերևք անտոց [23] եղևին ծառոց շարժեալք 'ի հողմոց ուժգին բախելոյ հոսեալք 'ի խոնարհ, այն-պէս ջանացաւ ջարդել [24] զընթացից իմոց մերձաւորու-թեան քաջաբեր ուղեշս՝ զյարմարեալս ձեռամբ անեղ մշակիդ։ Օ որ հաստատեցես արմատացուցեալ վերըս-տին դարձեալ նոր պտղաւորութեամբ անապականաւ, յանդաստան կենաց խնամոց քոց կամացդ ամենապար-գև թագաւոր Քրիստոս, որհնեալ յաւիտեանս. ամէն։

---

1 [illegible]։ Զամենայն այսպիսի բանս սաղմոսին յա-ռաջ բերել, որք են՛ 'ի նախատինս և յանէծս [illegible], մինչ կան, կամ պատուհասին, հանապազ զնոյնս երգել խմով բերանով իբր տաղս։

2 [illegible]։ Զկարգ հետևեալ սաղմոսին, որք են [illegible]. սեպհական կամ առօրական կարգին կամ վարուցն զաւթի, որ [illegible] էր, այսինքն աշակերտ հին օրինաց, միանգամայն զինուոր, թագաւոր, և մարգարէական իշխան՝ զբաղեալ 'ի զանազան հոգս, և սակայն այնպիսի կարգս վկայէ զանձնէ, [illegible] հրեշտակաց, կամ երկնաւոր վարուց զարդարելոցն էն ախոր-ժելիք։ Զի սաէ անդ, թէ զգաղտ խոստն զընկերէն՝ հալածէի. ընդ ամբարտաւանին և ագահին՝ հաց անգամ ոչ ուտէի. յերկիւղածս ակն ածէի. զամբիծ ճանապարհ 'ի պաշտօնեայ, և այլն (տես սաղմ. Ճ. 6։) Արդ ես զայսպիսի բանս [illegible]. զիա՞րդ ոչ յուսահատեցայց 'ի կե-նաց, որ աշակերտ գոլով նոր օրինացս՝ և քարոզիչ, կրօնաւոր և քա-հանայ, զուրկ եմ յայնց ամենայն բարեկարգութեանց։

3 [illegible]։ Մեռուցից, կամ սպանից, [illegible], նմանութիւն աստուածոյն, որ նշանակէ՝ թէ 'ի սկիզբն արթնութեան պատ-րաստ լինել պարտ է ընդդէմ մեղաց. որպէս ասէր զաւիթ 'ի նոյն սաղմ. Ճ. 8. « Ընդ առաւօտս սպանանէի զամենայն մեղաւորս երկրի »։ Արդ ես զիա՞րդ այսպէս զինեցայց, որ զիմ մեղանչական մարմինս և ոչ զանձն խրատեցի, թող թէ սպանանել։ Այլ և զյաջորդն զիա՞րդ կա-րեմ ասել. « Սատակեցից 'ի քաղաքէ տեառն զամենեսեան՝ որ գործեն զանօրէնութիւն ». որ և ոչ զարտաս հոգւոյս՝ զչար ախտն մեռուցի. թող թէ զայլ անօրինաւորն յուղղութիւն ածելով սատակել զչարու-թիւն նոցա։

4 [illegible]։ Զո՞ր յանցանս կամ պարտաւորութիւնս ընծայեցից ինձ, յորժամ զաւիթ ածանէր զյանցմունս նախնեացն իւր անձինն համարելով ասէ (սաղմ. ՃԵ.) Մեղաք ընդ հարս մեր, [illegible], և որ այլ բանք նոյն սաղմոսին մինչև 'ի վախճան, որք առաւել յիս ճշմարտին քան յիսրայել։ Փոխանակ բանին [illegible], այսինքն ա-ւարտի, մի օրին. [illegible]. 'ի գործ դնի, կատարի։

5 [illegible]։ Ի՞ պատուեցայց կամ համարձակեցայց զասել ընդ բարիսն, յորժամ ոչ գտաւ յիս այն դեղ՝ զոր և մարդկային հը-

նայքն մեծ համարեցան․ իբր զի 'ի [illegible] [illegible], վասն խորշե-լոյն կամ ժուժկալելոյն 'ի կերակրոց՝ 'ի [illegible] [illegible] (Չ․ օրին․ [illegible].) այսինքն մնչուչափ քաղցեալք ։ Եւ վասն բազմութեան Ճգանց, ցրտոյ, ծարաւոյ, տքնութեան, աշխատութեանց, և այլն, 'ի [illegible] [illegible]․ Յուժոյ և յառողջութեան պակասեալք ։ Զայսպիսի մարդկային հնարս պատուեցին հրեայք և հեթանոսք խորութեր [illegible] [illegible]․ յինքեանց օրինադրեալ կամ ինքնակամ կանոնաց՝ առ 'ի չահել զառա-քինութիւնս և զիմաստութիւն ։ Իսկ 'ի յիս ոչ գտան այսպիսի․ այլ զիարդ ընդ այնպիսի բարեաց պատուեցայց ։

6 Օ[illegible] [illegible]․ այսինքն օրհնութիւն երգոցին, կամ սաղմոսա-ցին ։ մի օրին․ [illegible] ։ Չ օրին․ [illegible] ։

7 Զ[illegible] ։ Զիարդ զունայն և զանկատար բաղձանացս՝ իբ-րև զկատարելոց գործովք պատմեցից ընդ մեզուրս, թէ 'ի պատուի-րանաց քոց, և այլն ։

8 Ա[illegible] [illegible] [illegible] [illegible] ։ այլ օր․ [illegible] [illegible] [illegible] ։

9 Զ[illegible] [illegible] ։ Զիարդ զհեղգին դաւթի զհաւատարմու-թիւն իմում [illegible]․ անհաւատարմութեա կարգեցից համարա-ձակ զորեայ սուտերդմնութիւն, թէ երդուայ և հաստատեցի պահել, և սա-կայն գործովք ոչ պահեմ ։

10 Ա[illegible] [illegible] ։ Չ օրին․ [illegible] ։

11 Զ[illegible] [illegible] ։ Զիարդ զարդ կամ զանվրէպ հա-տուցումն անուշան՝ ինձ խոստարեցելոյս [illegible], վճարեցից, կամ յար-մարեցից ։

12 Զ[illegible] [illegible] [illegible] ։ Զբանն որ 'ի վեր է քան զմարդկային բնութիւն, կամ քան զմարմնական ակարութիւն, զիարդ առից 'ի քաջա-լերութիւն տարակուսելոյ՝ ես որ զանձ կամ պահեսս եմ գժոխոց, ա-սել ընդ դաւթի՝ թէ չէք ննջութեան 'ի լեզուի իմում ։ Ոչ սակս բնաւ, կամ չյանցանել լեզուաւ՝ է գժուարին յաղթինութիւն, և գերազանց քան զմարդկային ակարութիւն․ վասն որոյ ասէ առաքեալ մեջս տարա-կուսեին և երկնչին սաստի․ և սակայն դաւթի վկայելով զայն զանձնէ, ցուցանէ հնարաւոր լինել, որով առ քաջալերս առդարոց ։ Բայց ես, սակ, որով զիմք բերից զայս 'ի քաջալերութիւն այլոց ։

13 Ի[illegible] [illegible] ։ յառաջին բանէ նախատացեալ սաղ-մոսիս ԼԸ․ մինչև 'ի վախճան ։

14 Վ[illegible] [illegible] ։ Զիարդ դու անձն իմ որ ոչ բայց ես աշ-խարհի, վասահութեր երջանիկ իշխանին դաւթի՝ յառաջ ընծայելով [illegible] [illegible] [illegible], զանփորձ, զանքննող քո հոգիդ, պարծիցիս ընդ նմա՝ թէ փորձեա զիս, և այլն ։

15 Ե[illegible] [illegible] ։ Ես ինքն գոլով մեղաւոր և չար, զիարդ աղօթեմ առ-բել յայլոց մեղաւորաց, և այլն ։

16 Հ[illegible] [illegible] [illegible] ։ Զիարդ իշխեցից ընդ փառաւորե-լոյն դաւթի աղօթել այ, և այլն ։

17 Ի[illegible] [illegible] ։ Զիարդ ես իբրև հանդիսակից կամ հաղորդ Ճգանցն դաւթի՝ զյաղթանակ Ճգնութեան մատուցանելով այ, առայեց զայն աղաչանս՝ որ 'ի վեր է քան զօրինակ, կամ յոյժ գերազանց ։

18 Ի[illegible] [illegible] ։ այլ օրին․ [illegible] [illegible] ։

19 Տ[illegible] [illegible] ։ Յոյժ գովելի է և այն իմաստ սաղմոսին՝ յո-բում զանձնայն արարածս արհամարհելով, զնա միայն բնարէ ասելով, երանի ժողովրդեան, և այլն ։ Եւ այս նման է քնի գործոյն՝ որով յա-մօթ առար զփորձիչն ասելով․ «Տեառն այ քում երկիր պագցես, և զնա միայն պաշտեսցես» (մատթ․ դ․ 10 ։)

20 [illegible] , [illegible] ։ 2 օրին․ [illegible] , [illegible] ։
21 [illegible] , որ ասէ, զամենայն մեղաւորս սատակէ․ և [illegible] , որ ասէ, պահէ Տէր զամենեսեան՝ որ սիրեն զնա ։ Որով 'ի վերջ կատարման սաղմոսացն իբրև թէ ծանոյց զօրինակ վերջին հատուցման արդարոց և մեղաւորաց ։
22 Ի [illegible] ։ Ի յառաջագոյն երգեալ սաղմոսացն ։
23 [illegible] ․ Հին լուծ․ զեղեւինն մեկնէ, ցախ է ձանձաղ արմատ, այսինքն սաղէտակն եղեւին ասի, յայգիսն բուսանի, աւել կապեն զինքն ։ Բայց այսպիսի տունկ զխո՞րդ ունէր փայտ ազնիւ և ամուր, յորմէ շինուածք լինէին ։ Ոմանք իմանան զնոճին (սէրվի ։) Այլ սաստ ոչ յարմարի․ զի տերեւք նոճոյն մանրիկ և խիտ գոլով, ոչ այնչափ սասանին 'ի հողմոց, և ոչ թօթափին յերկիր․ այլ իմանալի է մայր ծառն, (չամ աղաճը,) որոյ տերեւք դիւրաշարժք են և թօթափելիք ։
24 [illegible] ։ Ջանացաւ սատանայ ջարդել զմարդկային ընթացից շառաւիղման պարարտ ուղեշս, այսինքն զմարդկային կենաց զօրութեան՝ զմտաց և զկամաց և զզգայութեանց, զորս ած յարմարեաց 'ի ծառ բնութեան ։ Բայց մի օրինակ դնէ, [illegible] , այլ․ [illegible] ․ այսինքն զշառաւիղս՝ որ արձակին 'ի ծառոյն․ և ըստ այսմ հետևեալ բառքն՝ [illegible] , լինին բացայայտիչ բառիս՝ [illegible] ։

# ԲԱՆ ՎԱԹՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հետեւութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի․*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա․ Այլ արդ ընդէր ոչ [1] 'ի վերագրեցելոյն սաղմոսն նախաձայնական և յայլ մարգարէիցն մասն ինչ յօդեցից ։ Քանզի զինչ վայելումն իցէ կերակրոյն, եթէ անզգայեալ ցաւոյք ուտիցեմ․ և կամ զո՞ր շահ սաղմոսն ունիցի, եթէ ոչ 'ի միտ առնուցում ։ Քանզի նզովեմ զիս ինքն 'ի նմին և ոչ իմանամ, լուացեալ լինիմ և ոչ պայծառանամ, արեւու ծագեալ և ոչ լուսաւորիմ, մեղր ճաշակեմ և ոչ քաղցրանամ, [2] ռետնիւ լնանիմ և ոչ բժշկիմ, միշտ կանխեմ 'ի նոյն և դատարկ երևիմ, հանապազ ձաղիմ և ոչ երբէք խրատիմ, ողոքիմ դարձեալ և ոչ զգաստանամ ։

Բ․ Արդարեւ մեղք և անօրէնութիւնք իմ յիս, և ես մաշիմ 'ի նոսին, [3] ըստ մարգարէին որ 'ի դիմաց պարտաւորացն բանի և տէրունական առակին հին որ-

կոյն և նոր զինուոյն ։ Վասն զի թէ սատակին անօրէնք և մեղաւորք 'ի միասին, ըստ Եսայեայ ձայնին, ապա և ինձ զմնէլս նոյն բաժին հանդերձեալ պահի ։ Քանզի սակս զայդմանն, թէ հատուցանէ այնոցիկ՝ որ առաւել ամենեն զանիրաւութիւն. և կցորդեմ ամին զընթերցուածն, թէ որ տեսանէ 'ի վերայ հպարտից և անիրաւութեանց. սակս, թէ օտար եղեն մեղաւորք 'ի մօրէ, և որ ինչ կարգ սորին ցուցանէ. յորեմ առ ամին, թէ կործանեսցին անօրէնք երկրի. և անիրաւիչան բարձցի յերկրէ, և անիրաւք մերժեսցին 'ի նմանէ ։ Ողբս ինձ կարդացէք առ ձայնն, թէ զոր օրինակ վարի եղեգն 'ի կայծականց հրոյ, այնպէս այրեսցին մեղաւորք 'ի բորբոքեալ բոցոյն. լացէք առ սաղմոսն, թէ արկցես 'ի վերայ նոցա կայծակունս հրոյ. աշխարս պատմեցէք 'ի բանս ամենեան վճռին մարգարէին սպանեցեալ, թէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ. կոծեցարուք առ սաղմոսն, թէ մահ հովուեսցէ զնոսա. ապա արտասուս ողորմ հառաչմամբ ընդ հեծութիւնս իմ յարմարեցէք, յորժամ բարձրեալն ընդ Իսրայէլի և ինձ ասասցէ բանիւ սաղմոսին, թէ ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում. աւաղ կարդացէք թշուառացելոյս, յորժամ այլ մարգարէ զնոյն գիցէ, վայ նոցա զի վաղեցին զինև ։ [1] Նորբառ փողեցէք 'ի սկիզբ միջնկեալ նոր աղաղակի, յորժամ տեսանողն Աստուծոյ ամաչեցուցեալ զիս կշտամբեսցէ ընդ ապարատան տանն Յակոբայ, տեսէք արհամարհողք՝ զարմացարուք և եղծարուք ։

Դ. Ո՛չ դարձուցես և անփոփեսցես զբարձրացեալ զսուր բարկութեան ահաւորիդ ապստամբելոյ 'ի սարտուցելոյս յերեսաց մեծիդ, և խնամովք աջոյդ բարեբաշխութեան առ իս ժամանեալ՝ օծումն կենաց պարգեւարեսցես քո աղաչողիս ։ Ես քեզ փառք յերկինս 'ի բարձունս, և 'ի մահացուաց յերկիր 'ի խոնարհ, 'ի սահմանս բոլոր ազանց և յամենայն յաւիտեանս. ամէն ։

---

1 Ի [illegible] ։ Արժան է, ասէ, 'ի յառաջիկեալ բանս սաղմոսաց յաւելուլ և յայլոց մարգարէից սակաւ բանս. զի այնպիսի էն կերակուր և գեղ հոգւոյ. և որ չափ 'ի կերակրոյն՝ յորժամ անզգայարար որ ուտիցէ, նոյնպէս զինչ օգուտ 'ի սաղմոսէն և յայլոց մարգարէից, յորժամ ոչ 'ի միտ առնուցում ։

2 Ուրբաթն տանիմ: Ուրբաթն է խեժ ծորեալ 'ի ծառոց, որպէս (չամ սախըզը, թերէմէնթին.) եւ այլն. այսու աղարտանէ սուրբ վարդապետս գծացեալն բանս 'ի սաղմոսաց եւ յայլոց մարգարէից. որք գեղք են մեղաց հոգւոյ: Հին լուծ. զանաղին մեկնէ, հանճարէն քաղցր գեղոյ անուն է, զոր չարբաթ ասեն: Ըստ խնդիրս, 'ի սաղմոսն, յընթերցու զմարգարէս, եւ որպէս թէ ընտ գտարեկ՝ անուղղակ եմ:

3 Ըստ հարթուցին: Ըստ բանի մարգարէին եսայեայ (ծթ. 12.) որ 'ի գիմաց յանցաւորացն ասացեալ. եւ ըստ տէրունական առակին հին տիկն. որպէս զինի նոր մաշէ զհին տիկս, այսպէս անօրէնութիւնք իմ յիս մաշեն զիս:

4 Բարբառ հնչեցէ: Բարբառ նոր աղաղակի իբր փողով հնչեցուցեր մեղկեալ սրտիս:

# ԲԱՆ ՎԱԹՍՈՒՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Բարերար եւ բազմագութ, մարդասէր եւ երկայնամիտ միայն թագաւոր, ընդ հօր քում օրհնեալ եւ օրհնաբանեալ տէր ամենայնի, որդի այ կենդանւոյ.[1] անպարտաձնագ միշտ խնամ կորստեան, որ ամենեւին անփոյթ ես 'ի չարեաց, որ ոչ կամիս զմահ մեղաւորի, որ փրկութիւն են 'ի քոյ կամաց ընծայեցեալ, որ դարձուցանես զմիրիկ մեղաց 'ի յօդ քաւութեան, որ զհուր բարկութեան յանձրեւ փոխարկես: Որ [2]զյեռնեալ ըղձկման 'ի բարեաց՝ կրկնակի գոյն նահանջէր երկեակ բնութի 'ի նոյն արձանի, ոչ խուսափէս ընդ անպարտոն, եւ ոչ համայն ընդ պատժաւորն: Որ զլուծութիւն ծովուն սահմանաց իբր զկարկառս քարանց կառուցեալ յեզմնակեցեր. որ զկարծրանիւթ վէմն անապատին [3]'ի վիժակս վտակաց հոսեալ բղխեցեր: Որ զՅորդանանու ջրոյն արագարժ վայրէկութիւն՝ հրաշաւոր անդրադարձութեամբ [4]'ի յետնորդս հեթանոսաց լուացումն աւազանին 'ի թիկունս աւանդեցեր: Որ զպատուատեալ պարիսպն Երիքովի, յօրինակ կործանման բանութեան սատանայի՝ իբր զթեթեւութիւն յարդի ցնդեցեր. որ զվնասակար ջուր նորին [5]'ի յատակ այլայլութեան առ

'ի բարլին փոխարկութեան՝ քանանացւոցն փրկութեան
խորհրդական աղին համեմեալ անուշեցեր ։ Որ զՄե-
ռայն դառնութիւն, իբր զմնաց անհաւանութիւն, կե-
նացն փայտիւ 'ի քեզ յարմարեալ պիտանի արարեր ։
Որ [6] զառեալն 'ի գետոյն՝ 'ի գծագրութիւն անսահմանդ
քո հրամանի անորակելդ գունակութեան՝ 'ի նոր ե-
րանգ բաղարայլն մածեր արիւն 'ի ցամաքի ։ Որ [7] զան-
կենդան ցուպ զաւազանին, 'ի կերպարանութիւն առ 'ի
զքոյդ մերոփ նկարագրել, այլ և յօտարազնիցն բնա-
բութիւն, 'ի տխլն ապաթոյն կերպիւ վիշապի նմանեալ
ցուցեր ։ Որ զերջանիկ ձեռն աջոյն Մովսէսի, [8] 'ի ցոյց
տեսութեան ապագայից հրաշից մարդեղութեանդ քո,
բարձրեալ, և բե ախտաւոր մարմնոյս մաքուր լինելոյ
անփոփոխ փոխարկութեանն՝ կրկին զուշակեցեր ։ Որ [9]
յայքանեալս շրջագրութիւն բարեխնամաղէս արաեւ-
տիւ սիրոյ զանակնկալն գիւտ մեղաւորաց կորստակա-
նաց [10] նշանակեցեր, օրհնեալ ամենագութ ։

Բ. Որ բուռացանես յերկիրէ զաւարի [11] զմեռեալն
յանշնչականէն, որ զանշարժն իբր զընթացող կառա-
փարես, որ յանարգ արգանդէ կոչես քեզ պատկերա-
կերս, որ տաս պատանեկաց [12] աղօրիս ըմբոշխնելիս, որ
յայտս մաքուրս հերս ընծայես, որ զապարթ սեռ-
թեան վարսից 'ի ձեռն կերպարան զարմանագործես,
ցուցեալ՝ թէ առ ամենայն սահման հեռաւորական յաղ-
թող ես հզօր ։ որ փոփոխես [13] զշրթունս բնաւորա-
կանս, բառ բանին Յորայ, 'ի կամս հաւատարիմս ։ Որ
սասանես զերկիր և [14] զխռնս նորին 'ի հիմանց, նշանա-
կեալ հաստատածին զղիւ՝ թէ դու միայն ինքն անկարե-
չելի ։ որ [15] հողմես զսարերս իբրև զանցաւորս, և զար-
ձեալ 'ի նոյնն կազմես իբրև զյարակայս, յայտ արա-
րեալ՝ թէ և առ մեղաց բազմութիւն զփրկալէս ունել
կամ թողուլ զօրինակս զօրաւոր իցես ։ Որ [16] զարուսե-
կլն անզգայ էութիւն իբր երասանաւ իմն զատափա-
րակես, երևեցուցեալ այնր իրի կերպիւ, թէ զմու-
թեանս չար զխմեցումն յարժամ և կամիս հանդարտ
առնիցես ։ Որ զանբարբառ բոլորակ լուսնին կարգես ու-
նայնս և պատարունս, [17] լուսաւորեալ զպատճառն առ
ատեսխս տեսողաց՝ թէ, 'ի նուազութեանէ բարեաց ըղ-
ղատասսուրս մարմնին զու ածես 'ի լրութիւն առաջնա-

անեղծ հարստութեանն ։ Որ զպատկերս անխօս աստե-
ղաց [18] իբր զգաստս զոյգն հօտից տրոհես և ժողովես ,
յոյս իմն կենաց առ այս խորհրդաբերեալ, քաղցրա-
հայեաց տեսութիւն, թէ և անապաշաւորաց լեզուաց
կարողապէս բանես ողորմել ։ Որ [19] 'ի մէջ մահու և կե-
նաց շաւիղ վստահութեան ուղղես 'ի ծովու, վկայու-
թիւն եղեալ հաւատոյ, թէ և յանկարծամուրն վայ-
րի քեւ պաշտպանիւք անգայթագղելի ։ որ իբր զՆոյ
կաթսայից 'ի հրոյ եռացեալ, որպէս զմեղաց մրրիկ պղ-
տորեալ՝ բանիւ կամաց քոց խափանեցանես ։ Որ հայիս
յերկիր և տեսանես զաս , զի անքնին զմտաւորս ըզ-
գաստացուցանես ։ որ [20] իբր զակատ մի անձուկ նաւի 'ի
վերայ շարժութեան ալեաց՝ զանբաւ թանձրութիւն
գետնոյս զգեցեր , որով ծանուցեալ լինիս ամենից հաս-
տատածոյ՝ թէ իցես աներկրայելի, որ 'ի բան քո զօրեղ
հիմնացեալ ունիս զամենայն ։ Որ [21] սերմանես զարտա-
ծնուցեալ մարմինս յերկրի, և զնոյն անկորուստ պա-
հեալ կրկին կենդանածնես, որ ապականացուս աւան-
դեալ՝ անեղծս ստանաս , որ ընդ մահացու նիւթոյս՝
փոխարդ կենաց խառնես , որ հրամանաւ անկարկու-
թեան [22] 'ի խուն վայրկենի կազմեցեր՝ պատրաստ կա-
ցուցեր զանզարդութիւն ամենից եղանակաց ։ Քո է զօ-
րութիւն և կարողութիւն, որ [23] շրջանակս զժամա-
նակս ամաց հոլովման աւուրց յայլ նմանութիւն բա-
րեպաշտ տեսութեան ։ որ կարգաս զանմանութիւն իբ-
րև զկենդանիս ։ որ ազգես միայն, և նոքա ընթանան,
որ միայն [24] հենուս անկանես անճառ արուեստիւ հնա-
րագիտութեան մէջ և առաւօտ ։ Որ [25] յետ նախակարգ
յօրինուածոյն առաջնաստեղծ լինելութեանն , արարեր
զփառաւորեալն մեծամեծս հրաշակերտից հանդիսից ,
ըստ զրոյն երջանկութեան կանխահիացն զարմացման ,
այլ իմն գոյացութիւն տանելի տեսակի անեղծ աշխար-
հագործութեան ևս քան զոյն 'ի մարդանալդ քո , որոյ
ոչ գոյ թիւ ։

Գ. Որ ահա զմեան մեր քեզ գրեցեր , որ զորդա-
րութիւնն քո մեզ շնորհեցեր , որ ընդ քեզ կրեցեր ըզ-
հաշտութեանն մերում փրկանակ , որ ոչ երբէք լրանիս
յողորմութենէ , դարձո զամբարշտեալս 'ի պաշտօն բա-
րի երկիւղի , զթմբրեալս 'ի զգաստութիւն արթնութե

սրտի, զանմաքուրս 'ի սրբութիւն պայծառութեան կեր-
պարանի, զաղամորիծս յանբծութիւն հանդարտական
սուրբ պատկերի, զեկեղս յողջութիւն, [26] որ 'ի գլխ-
մանց ոչ խորտակի, զլացեալս 'ի խնդութիւն զուարթու-
թեան անտխրելի, զյուսահատեալս 'ի սէր միաւորիչ
անքակտելի, զամաչեցեալս 'ի վստահութիւն հաստա-
տութեան անշարժելի, զխաւարեալս 'ի լոյս երանութե
անմեկնելի, զմահու գերեալս 'ի կեանս որ ընդ եղծ-
մամբ ոչ անկանի։ Օ՜ի փառաւորեսցի անուն քո, Տ՜ր,
խոստովանեալ յամենայնի ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբ-
բոյ 'ի բարձունս երկնի և 'ի ստորեւս երկրի և 'ի բնա-
կիչս նոցա, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

1 [illegible]։ Որ ոչ երբէք պատճառ լինիս խմում կորըս-տեան, խմս ընդ հակառակն, մեջս արգելուս, խափանես զաւխծս կո-րըստեան մարդոյ։ ԱՆՓՈՐՁ ԷՍ 'Ի ՉԱՐԵԱՑ, ոչ արկանես բնաւ 'ի փորձու-թիւնս մեղաց. 'ի փորձելն զմարդ վասն՝ հեռացուցանել զնա կամիս 'ի չար փորձութենէ։ [illegible], յորինակի դնի բայն, զի և [illegible] յորինական խմանի ըստ բանի սաղմոսին. «Կեանք են 'ի կամաց նորա»։

2 [illegible], զոկայ՝ որ յեռանեցաւ 'Ի [illegible], այսինքն 'ի կատարմանէ հրամանին այ չցանկալ յեսս, կամ յեսս մնաց 'ի բարի ընկերացն՝ 'ի ղովայ և 'ի գառեկացն, [illegible], փոխարկելով զնա 'ի քար և յաղ. [illegible], նահանջեցեր, կամ խափանեցեր 'ի գանձա-լոյ 'ի սոդոմ. որով [illegible] եղև 'Ի [illegible], այսինքն խառն բնութիւն քարի և աղի։ Եւ այսու երևեցաւ 'ի նմա արդարութիւն այ, միանգամայն և գթութիւն. զի յորժամ փոխարկելովն պատժեցաւ վասն անհնազանդութեան. և խափանելովն դառնալ 'ի սոդոմ, պահեաց զնա ած 'ի պղծութէ և 'ի հարուածոյն սոդոմացւոց։ Վասն այսորիկ ոչ ընդ անպարտ գառերացն այրեցաւ, և ոչ ընդ կորուսեալ սոդոմացիսն կորեաւ. զի հայելն նորա յեսս՝ ըստ բաղում վարդապետաց՝ էր մեղք ներելի, ներգործեալ յերկիւղէ և 'ի կանացի թեթևամտութենէ։

3 Ի [illegible]։ 'ի հանմունս վառեկաց։

4 Ի [illegible]։ զյորդանանու արագաշարժ ընթացսն 'ի վայր՝ հրաշիւք յետս դարձուցանելով, 'ի հոգեւոր լուացումն մկրտու-թեան յետնորդ հեթանոսաց առաքեցեր, կամ յապագայ լուացումն հեթանոսաց։

5 Ի [illegible]։ Զծխատակար ջուր երկրումն յօրինակ փո-խարկութե 'ի բարին, այսինքն փրկութե քանանացւոց հեթանոսաց, անուշեցեր 'ի ձեռն եղիսէի (Դ. Թագ. Բ. 21։)

6 [illegible] 'Ի [illegible]։ Այս բան ոչ հայի 'ի նշանն՝ զոր արար մով-սէս առաջի փարաւոնի. վասն զի անդ զըռովանդակ գետն արիւնացոյց (Ելից Է. 20.) այլ հայի 'ի նշանն արարեալ առանձինն առաջի եբրայ-եցւոց ըստ հրամանին այ (Դ. 9։) Զայն ջուր, ասէ, թանձրացուցեր յարիւն 'ի ցամաքի, որ էր [illegible], այսինքն նոր կամ ան-բնական գոյն կարմիր, 'ի սեւ կամ յօրինակ ամենայնի հրամանից [illegible], որով անօրակդ գունակեցար։ Արել կամ.

ղանգոյն ջուրն նեղոսի գործուցանելն յարիւն՝ էր օրինակ անմարմին ածութեանդ ընդունելոյ զմարմին և զարիւն մարդկութեա ։

7 Զ—նկէնտ—ն ցո—ղ ։ Զանկենդան գաւազանն մովսէսի փոխարկեցեր 'ի կերպարան անթոյն վիշապի 'ի ...։ յօրինակ նկարագրելոյ կամ ձևացուցանելոյ զքո բնութիւնդ մերովս բնութեամբ՝ առանց մեղաց․ միանգամայն ...։ յօրինակ ընդդէմ օտար ազգաց հեթանոսաց, որք իբրև զգաւազանն անկենդան էին առ ածգիտութեն, և փոխեցեր զնոսա յիմաստութիւն քո, առնել նոցա զխորագիտութիւն օձի առանց չարութեն ։ Բայց ... իբր նկրտորդական իմանալի է, և թերևս 'ի գրչաց մուտ է փոխանակ գնելոյ ...։ Հին լծ․ ...-իմանայ զցիւթան՝ առ որս ընդ իւր եցոյց ած զմովսէս գաւազանաւն ։ Բայց անյարմար է ։

8 Ի ... ։ Առ 'ի ցուցանել զիմաստ հոգևորս, ... , այսինքն զաջոյ ձեռն մովսէսի նախ բորոտ առնելով, և ապա բժշկելով, ...., այսինքն եսուր գաւշակ, նշանակ, յօրինակ ապագայ բժշկութեանցն, զորս 'ի մարդեղութեանդ արարեր, այլ և յօրինակ մաքրելոյդ զախտաւոր մարմինս մեր 'ի մեղաց․ ... այսինքն հաստատուն փոփոխմամբ 'ի յառողջութիւն և յանախտութիւն ։ Իսկ ... առելն՝ կամ հայի 'ի բժշկութիւն ձեռացն մովսէսի, որ միանգամ արարաւ 'ի քորեբ առաջի ած, և երկրորդ անգամ յեգիպտոս առաջի ժողովրդեան (ելից․ դ․ 6․ 7․ 30․) և կամ զերկու ինչ գաւշակելն առէ, այսինքն զմարմնաւոր բժշկութիւնն քոյ առ հրեայսն, և զմեր հոգևոր բժշկութիւնն ։

9 Ց...։ Այսպան օրինակաց յառաջբերութեր կամ ցուցակութեր, կամ շուրջ յածախելով, զգիւտ կարառական մեզաւորացն յայտնեցեր ։ Մինչև յայս 'ի պանչելեաց քո յառաջաբերեաց զօրինակս զթութեանն նորա առ մեղաւորս․ ուսափ, առէ, ... գործեալ․ վասն զի առանձին բարեխնամութեր արարքոյ կարգի բնութեն ցուցանէր ած ։ Իսկ յետ այսր 'ի բնականաց առնու զօրինակ զթութեն քոյ ըստ առօրական կարգի ։ Ի գործս պանչելեաց՝ երևի Ճարտարութեն մերոյն քո, իսկ 'ի բնականսն՝ Ճարտարութեն իմաստութեանն ։

10 Ն...։ Որ ..., և այլն․ այսպէս 'ի մեր օրինակին կիսագրի․ զոր և ընթերցաք համեմատ բովանդակ ընթացից գլխոյս, զհրաշանչելոր հաստատած ... յարաբերականաւ սկսանելով ։ Իսկ այլ աղագիրք գնեն․ ... ։ Օ...., ... ։

11 Զ... ։ զանրին՝ որ 'ի հող արկեալ մեռանի փըտութեամբ, կենդանացուցանես յանկենդան հողոյն ։ ... ․ զանշարժ ծառսն՝ իբրև զառանաւորս կառավարես, զարմասս նոցա ընդ հողով զնացուցանելով ։

12 Ա... ։ Ցանարդ արգանդէ մօր կազմելով մարդ պատկերակից քեզ, առ սակաւ սակաւ փոփոխմամբ յանձանին վերաբերես․ մինչ մանուկ են, 'ի փափուկ լինգս նոցա բուսուցանես ատամունս, այսինքն առամանս ծամելոյ․ 'ի լերկ այտս կամ 'ի ծնօտս՝ բուսուցանես զհերս ։ Իսկ 'ի ծերանալ հասակին, ... , ըղեաւ հերս՝ որք իբր ալերք են գլխոյն, զարմանալի օրինակաւ 'ի սպիտակ զարձուցանես ։ Այսու փոփոխութեր բնութեն՝ որով իբրք 'ի միոյ ներհականէ 'ի միւսն անցանեն, ցուցանես՝ թէ կարող ես առ ամենայն գործ՝ որչափ և հեռի կամ օտար 'ի միմեանց իցեն ։

13 Զ... ։ Բանն յոլըրոյ (մբ․ 20․) առէ․ « փոխո-

խէ զչրթունս հաւատարմաց ». զոր վարդապետք բազմօրինակ մեկնեն· այսինքն անգործ առնել զբանս խմաստնոց, որոց խորհուրդք իբրև պատգամ համարեալ էին, որպէս զաքիտոփելայն ասէր (Բ· Թագ· ԺԷ· 14·) կամ Թոյլ տայ՝ զի քաջ խորհուրդք հաւատարիմ խորհրդականաց՝ չկատարեսցին յօգուտ առողին, կամ առողին· կամ ըստ ոմանց՝ Թոյլ տայ զի ընդոստ մարգարէից կամ վարդապետաց երբեմն սխալեսցին, որպէս եղև մարգարէին ծերոյ՝ որ 'ի բեթէլ (Գ· Թագ· ԺԳ· 18·) կամ ընկալսանէ զայնոսիկ՝ որք զանձինս Ճշմարտախօս կարծեն, կամ ըստ եօթանասնից, զբերանս հաւատարմաց 'ի վերայ օրինաց իւրեանց՝ փոփոխել 'ի հակառակն· որպէս զհրէայսն Ջատագովս մովսիսական օրինացն՝ փոխեաց 'ի քրիստոնէութեան աւետարանին, որում նախ հակառակէին։ Ըստ այսոցիկ մեկնութեց խմանի զխաւարութիւնն յոյլոյ· զի կամի ցուցանել զանբանութիւն ույ 'ի փոփոխել զխորհուրդս և զբանս մարգկանց։ Այն է և միտք որոյ վարդապետիս, որ փոխանակ [illegible] բանին՝ զնէ [illegible]· այսինքն բնաւորեալս կամ սովորեալս 'ի խօսել զուղիղն· որ է ասել՝ [illegible]։ Նա ըստ այսմ յաջորդն, 'ի [illegible] [illegible], հայի աս բանն [illegible]· որպէս թէ ասել, զչրթունս բնաւորեալս կամ սովորեալս 'ի կամս հաւատարիմս։ Իսկ եթէ զայն բառն առցուք բային՝ [illegible], որպէս թէ զբնաւորական չրթունս փոխէս 'ի կամս հաւատարիմս, յայնժամ խմաստն լինի, թէ զպարզ կամ զլոկ բանս չրթանց փոխէս 'ի կատարուածն գործոյն։ Որպէս զհամանայ լոկ բանսն՝ որ վասն փառաւորելոյն պատուէր՝ զոր արքայ կամի, դարձոյց 'ի կատարել գործով 'ի վերայ մուրթքէի· կամ զլոկ բանսն ներքինւոյն՝ որ վասն փայտին պատրաստելոյ, եա կատարել գործով 'ի վերայ համանայ (Եսթեր Է· 10· Է· 9։) Սակայն առանց հայելոյ յիմաստ բանին յոյլոյ, և ուշ դնելով միայն կարգի բանից որոյ վարդապետիս, այլ ինչ Թուի հարազատ խմաստ տեղւոյս· զի 'ի նախադրեալն խօսի զփոփոխութենէ հանճարոց մարդոյն· ապա ըստ այնմ կարգի և այս բանն խմանի, թէ զբնաւորական խօսս կամ զլեզուս ազգաց որք նախ առանց ընտրութեան լինէին խօսեցեալք, ուսանի և չեն հաւատարիմք, ատ փոքր փոքր փոխէս յընտրութի կամաց, որով լինին հաւատարիմք։

14 [illegible]։ Սիրտք երկրի խմանին ախոյադաղմ մտաւանք նորա 'ի խօսս, յորս իբր 'ի սիրտս հաստատեալ կան այլ ևկար մտաւանք· զորս և շարժէ նա զգեստաւորմբն, կամ պատուանմբ· ցուցեալ [illegible], հանդամանօք կաղմութեան երկրիս, թէ նա միայն մնայ անշարժելի։

13 [illegible]։ Հին ըծ· խմանայ զչորս եղանակս տարւոյ, զամանն յաչուն փոփոխելով, նոյնպէս և զայլսն։ Բայց լաւ ևս խմանին չորեքին տարերքն, որք կամ 'ի միմեանս շրջան առնուն, յորժամ ջուրն անօսրացեալ, կամ հողն մանրեալ դառնան յօդս, և ընդ հակառակն՝ օդն խառնի 'ի ջուր կամ 'ի հող· կամ նոյն տարր՝ յինքն հոլովի· որպէս ջուր չոգիացեալ վերանայ, և միւսանգամ թանձրացեալ յինքն ժողովի անձրևով· և կամ տարերքն խառնութբ 'ի բաղադրեալս՝ և դարձեալ լուծմամբն՝ հոլովին և կալին· կամ դարձեալ, հոլովին տարերք մանաւանդ ջրհեղեղաւ, որով ջուրն 'ի հող ամբառնայ, և զօդն զրաւէ, և անդրէն զիջանի· կամ այլուր ընդ հակառակն հողն բացեալ լինի· կամ, յորժամ հաղմով օդ և ծով ապարանեն, և դարձեալ կալին համդարտելով։ Այսու շրջանաւ երևին տարերքն իբրև [illegible], 'ի անդափոխ լինելն և 'ի լուծանելն· և իբրև [illegible], 'ի դադարելն 'ի տեղւոջ իւրեանց, կամ խառնութբ 'ի նոր բաղադրեալս։ Նա սակաւ ցուցանես,

սան, թէ [illegible] [illegible], այսինքն կարող 'ի ներկել կամ 'ի կապել զբաղ_մութեան մեղաց։ այլ օրին․ [illegible]․ այլ․ [illegible]։

16 [illegible] [illegible]։ Զանկենդան բնութիւն կամ կազմած արևուն իբրև երևումնս զալիս, յորժամ յամփոփին թագուս բարձրանալ 'ի հիւսիսակողմն, որով ստացողութեանն․ և 'ի ձմերայնի 'ի հարաւակողմ ցածութեանն՝ առ 'ի մեղմել զատուն․ յուցեալ այսու՝ թէ զչար հակամիտութիւն բնութեան մերոյ հանգամանել կարող եմ։ Ոմանք իմացան զայս նաև 'ի վերայ անընդական ընթացից արևու, որով երբեմն գագաթեցոյց զնա մէծ, որպէս առ յեսուաւ, կամ յետս դարձոյց, որպէս առ եզեկիայիւ։ Սակայն սաս գրական ընթացից նորա խօսի բանս։

17 [illegible] [illegible]։ Զգունդ լուսնի անձնցուցանելով և նուազեցուցանելով, յայտ առնես զխորհուրդն [illegible] [illegible]՝ յուրախութեան կամ 'ի յոյս անսալոյ, թէ կարող եմ և զմարդ նուազել 'ի բարեաց՝ յառաջին հարստութեան զարձուցանել։ Նա օրինակն զնէ, [illegible], համեմատ այլոց բայից՝ որք 'ի վեր և 'ի վայր զնին յանցեալն, այսինքն [illegible] [illegible], [illegible]․ և այլն։ Իսկ յայլ օրագիրս, [illegible]։

18 [illegible] [illegible]։ զանգան սատեալ՝ իբրև զջերս ասելու ոչխարաց երբեմն [illegible], բաժանես կամ հեռացուցանես 'ի միմեանց․ և երբեմն [illegible], մերձեցուցանես, որ յառաջագոյն իմանի զմոլորական սատանայ։ Այսու յոյս իմն [illegible] խորհրդաբար ծանուցեալ ում [illegible] [illegible], քաղցրացութ իմաստակալութեան, թէ նաև համբ կամ անլեզու մարդոց ողորմիս։ Զբառսն [illegible] [illegible] մարթ է եւս յարել 'ի բայն այսպէս․ յոյս իմն փրկարար՝ խորհրդեամբ յայտնեալ առ այս քաղցր գիտութիւն, թէ նաև համբոց ողորմիս։

19 Ի [illegible] [illegible]։ Բոյով անօշութիւ սաս 'ի ծովու [illegible] [illegible] կամ զցուշութ բառ բանի իմաստ․ (Ժդ․ 3․) որով զնան մարդիկ իբրև 'ի մէջ կենաց և մահու․ և այսու սաս մեզ վկայութիւն կամ ասացողդ՝ թէ նաև յանկարծ անդունդ և 'ի ժամանակի՝ յորժամ վտանգք զանազանք պատահին, և մեք անձնատ մնամք, դու ևիցն եւս պաշտպան։ [illegible] [illegible], զծով որ խառնի որպէս ջուր եռացեալ 'ի հրոյ, և զաքով հրամանաւ ցածուցանես, եռալ օրինակ թէ նմանապէս [illegible] [illegible], որ յառնէ յոգիս մեր՝ զու [illegible], խափանես, արգելուս, դադարեցուցանես։

20 [illegible] [illegible]։ Ի յոյն բառէն՝ [illegible], նշանակէ՝ մանկունք, նորոք։ Որպէս զփոքր մանկունս նուաճ միոյ 'ի վերայ այլոյ՝ այնպէս շարժես, ասէ, զբովանդակ թանձրութիւն գետնոյս․ որով ցուցանես անհնարին արարածոց՝ թէ դու կաս սասանց երկրայութեան․ կամ, սասանց երկրայութեան դու եւս այն՝ որ 'ի բան հրամանի հաստատել ածես զնա։

21 [illegible] [illegible] [illegible]։ Ոմանք իմացան զգերմանաց բառս։ Բայց ոչ յաջողոց բանիցն յարմարի, և ոչ բառին [illegible], որ նշանակէ՝ հանել զչանչն, այսինքն մեռանել․ և զի գրեալ սաս 'ի սկիզբն Է հանգոյս։ Այլ իմանին մեռանել մարմինք մարդկան․ զոր ակնածանս, ասէ, թաղմանցն և 'ի հող լուծանելոյն․ բայց և [illegible] պահելով 'ի գիտութեան քում խորասուզեալ մարդոց զգերն մարմնոյն․ զորս դարձեալ կենդանացուցանես՝ ոչ ապականացու իբրև զառաջինն, այլ անապական յարութիւն․ և ըստ [illegible] (մի օրին․ [illegible] [illegible],) ըստ մահկանացու նիւթոյ մարմնոյն խառնես ասէ [illegible] [illegible]․ մի օրին․ և 'ի հին լուծ․ [illegible] [illegible], այսինքն զհոգին բանական․ զի 'ի մեռանել մարդոյն՝ հոգին միայն մնայ կենդանի իբր նշխար․ իսկ [illegible] ա-

սել խմանի. ըստ որում հոգին բանական՝ է պատկեր և հաղորդութիւն անմահ կենդանութեան այ: Մարթ է և ս խմանալ զկենդանականն զօրութիւնն՝ որ անեղծ պահէ զմարմինն յարուցեալ: Ոմանք խմացան 'ի վերայ տէրունական մարմնոյն՝ որ հաղորդութեամբն խառնի 'ի մեզ: Այլ կայն սաստ զյարութեան խօսի սուրբ վարդապետս. յորում, ասէ, ընդ մահկանացու նիւթոյս, այսինքն մարմնոյս, խառնեա զնշխարն կենաց:

22 [illegible]: Եթէ խմասցի 'ի միում բնական վայրկենի յօրինեալ զաշխարհս, է կարծիք բաղում հարց, յորոց ասեալ սուրբն օգոստինոս, ընդարձակ մեկնութեանց: Իսկ եթէ համարիմք 'ի վեց աւուրս զանազանս արարեալ այ զամենայն, ապաքէն ճշմարիտ է՝ 'ի խառն կամ 'ի սակաւ վայրկենի ասել. զի ոչ եթէ 'ի բովանդակ աւուրն առ սակաւ սակաւ զանազանք գործեր ած, այլ լոկ հրամանաւ 'ի մի անզգալի վայրկեան իւրաքանչիւր աւուրն փմարէր զգործն. ուստի զբովանդակ ժամանակ սահմանանն 'ի մի հաւաքեալ, հաւելու զմի վայրկեան մերոյ ժամանակիս կացուցանէր. [illegible] [illegible], այսինքն հանգերձեալ զարդարեցեր զանազարդութիւն [illegible] [illegible], այսինքն ամենայն գործոց և արգեանց՝ որք լինին յիւրաքանչիւր եղանակս աւուրն: Զայս բան յարէ յանցեալն, նշանակել թէ 'ի սակաւ վայրկենի կարող գոլով զարդարել զախելերական բնութիւնս, նոյնպէս կարող է յական թօթափել զմեռեալ մարմինս նորոգել:

23 [illegible]: Կատարածս կամ փոփոխես զշրջան աւուրց տարւոյն [illegible], 'ի ձմերայնւոյ 'ի գարուն, և 'ի գարնանւոյ յամառն, և յամարայնւոյ յաշուն, և իւրաքանչիւր եղանակս ունին զիւրեանց բարեպատեհ վայելչութիւն և զօգուտ: Ոմանք բառ հին լուծ. խմացան զփոփոխմանէ լուսաւորաց յեա աւուրն դատաստանի. բայց ոչ 'ի դէպ. զի տեղիս խօսի զբնական փոփոխութէ նոցա:

24 [illegible]: Ըստ նմանութեան ոստայնի կամ կտաւոյ գործես զմի օրն, իջմամբ արևուն ածանելով [illegible], այսինքն մութն, գիշեր. և ելմամբն ածանելով [illegible], այսինքն տիւ, ցերեկ. որով մի օրն լինի իբրև երկգոյն կտաւ՝ գործեալ 'ի սևոյ և 'ի սպիտակէ: Նա զայս ասանես, ասէ, [illegible] [illegible]. զի զհամեմատութիւն տունջեան և գիշերոյ հաւելու նշմարեն բազմադիմին աշխարհագէտք յիւրաքանչիւր կողման երկրի:

25 [illegible]: Յետ նախկին արարչութեանն՝ արարեր զփառաւորսն [illegible] [illegible], փոխանակ ասելոյ՝ զփառաւոր հրաշակերտ հանդէսս կամ գործս, ընդ որս կանխաւ իսկ հիանայր երջանիկ կամ արքայական գիրն Յովբայ (Թ. 10.) ասելով. «Որ առնէ զմեծամեծս և զանքնինս և զփառաւորս և զհրաշակերտս, որոց ոչ գոյ թիւ»: Մարգարէաբար յեղելոց անտի մեծագործութեանց աշխարհի՝ գուշակեաց յավէտ, թէ ած [illegible], այսինքն առնելոց է զնա հրաշակերտս, որ է [illegible] [illegible], այլ իմն արարած կամ յօրինուած [illegible] [illegible], խնդալի կամ զարմանալի վիճակի. և է [illegible] [illegible], գերազանցեալ քան զաշխարհականս արարչութէ, յորում միշտ եղծանի գործի, և հուսկ յետոյ վախճան առնուցու. բայց արարչագործութիւնն՝ որ 'ի քնի մարդանալոյն՝ անեղծ և անվախճան է, ընդ ամենայն յաւիտենիս տևական, և հրաշալի գործք նորա՝ անթիւք:

26 Ոչ 'ի [illegible]: Ի հարմանէ, կամ 'ի պատահարաց ոչ խորտակի, կամ մի խորտակեսցի:

# ԲԱՆ ՎԱԹՍՈՒՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն ողբս մաղթանաց բանի·*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ առ ամենայն բան յամենայնի ուղիղ ես, Տէր, իրաւամբք դատիս, արդարութեամբ կշռես, ճշմարտութեամբ չափես, [1] օրհնութեամբ հետեւիս, բարւոք ընթանաս, ստուգութիւն սիրես, յստակութիւն կամիս, [2] լուսաւորութիւն համբուրես, փորձիւ յանդիմանես, երկայնմտութեամբ քննես. ոչ ունիս նենգութիւն եւ ոչ գոռոզութիւն, այլ ամենեւին հեզութիւն, հանդարտութիւն եւ ողորմութիւն։

Բ. Երդարացար վերին իմաստութիւն անպայմանական հօրդ հանճարոյ՝ կրկին վկայեալ անդեղջ գովեստիւ յորդեգրեցելոցն շնորհօք, ըստ բանին սրբութեան՝ որ աւետարանաւն կենաց 'ի քէն ընկալաք. որ [3] ոչ 'ի կոծելն ողբացի, եւ ոչ 'ի փողելն կաքաւեցի։ Ասացեր անօրինին՝ թէ մի անօրինիր, եւ ես 'ի նոյն չարիս սնդեցայ. մեղաւորին՝ թէ մի ամբառնայր եղջիւր 'ի բարձունս, եւ ես զընդդէմն քեզ գործեցի, եւ ոչ զգացի երբեք զառածեալս, թէ 'ի ձեռին քո են եղջիւրք արքայութեան հպարտից ամբարձելոց, խոնարհեցուցանել եւ բարձրացուցանել, ըստ Ամբակումայ, Դաւթի եւ Զաքարիայ։ Օրհնութիւն ինձ կամեցար, ողորմած, եւ ես անիծեալս՝ մեծ տարագրութեամբ խոտորեցայ յարժանին ինձ մասն. սիրեցի բարկութիւն եւ ոչ բարութիւն, շօշափեցի ըստ գրոյն զխաւար եւ ոչ զլոյս, կենդանի ձայնիդ քո, գթած, ապառումն պատասխանեցի։ Որդնն անմահ տացեր բանիւ Եսայեայ, եւ զհուրն անշէջ եւ զկշտամբութիւնն անխափան եւ զտեղին յաւիտենից եւ զօրինակ նմին տոկալի, եւ ես ոչ իմացայ ըստ սաղմոսողին եւ ոչ մտածեցի, այլ 'ի մայլ մտաւորական կուրութեան գնացի։ Ցուցեր մարգարէիւն, թէ զօրհնութիւն տացի [4] որ զօրէնս գնէ, եւ ես համա-

ռոտել զնոյն փութացայ ։ Արձան հոգևոր վիմի գրեալ մատամբ քո, տէր Յս Քս, ⁵ զԴաւիթ իւրովքն բանիւք կանգնեցեր, ասելովն նոքեան ընտրութեամբն առոյն, թէ պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան. անդրադարձութեամբ բանին միջնորդեալ զկըրկին հաստատութիւնն, թէ և յաւիտեանս յաւիտենից. ընդ որս և զսորին նմանիս պարծանաց առ իմն խրախոյս, և ոչ զկծեցայ. Ճեպեցայ [6] 'ի տունս Ահաղու և ոչ ծ̃յ. 'ի յերկուս [7] հետս երկմտութեան կրկին կաղացի կասեալ 'ի բարեաց, ըստ երգիծանելոյն Եղիու ։ Սնկիմ զՄովսէս իւրովքն օրինակօք եկեալ 'ի մեռելոց, և զտառս մարգարէիցն գրեալ 'ի յոգի, և զմատեանս առաքելոցն ընդ մտացս մասն յեռեալ, և զտէրդ հասարակաց կտակաւն աւետեաց յարուցեալ 'ի թաղմանէ անթիւ ննջեցելովք, և անհաւատագոյն քան զհնգեւին եղբայրակցութիւնս այնր մեծատան, որ է առակ իմն յարմարական, նմանեալ զգայականացն մասանց անողորմիցն յղփացելոց, մնացի իբրև զսալ [8] դարբնաց անոստ՝ յամառեալ քարացեալ սրտիւ, որպէս օրինակն է Նելխարայ, և ոչ ապաշխարեցի ։

Գ. Այլ ազգեա վերստին առ սոյն կերպարան լքեալ կրկին ողորմութիւն բարի, ահաւոր, մարդասէր, խնամակալ, կենդանի, սուրբ, լուսաւոր և անվախճան թագաւոր, զօրութեամբ պանծալի խաչիդ խորհրդոյ, 'ի կարծրացեալս մեղօք անբեր անդաստան երիկամանցս յիմարութեան և անպտուղ սրտիս լքութեան. զի առեալ նպաստ օժանդակութեան 'ի գթութենէ կամաց ամենակալիդ, [9] որոտասցէ բղխեսցէ հոգիս, ընծայեալ աչաց վշտագնեցելոյս վտակս արտասուաց արբուցանողաց ինձ 'ի փրկութիւն և 'ի մաքրութիւն, և քեզ 'ի հաճութիւն ընդունելութեան, ամենապարգև տէրդ բոլորից, փառաւորեալդ յաւիտենից. ամէն ։

---

1 Օրհնաբանեալ հեգնելս ։ Ի հեռակից մեզ, կամ յորժամ զկնի մեր գաս խնամելով և պաշտպանելով, օրհնութիւն ընդունիս. կամ, զհետ փախուցելոյն 'ի քէն՝ օրհնութբ գնաս, և ոչ անիծանելով. կամ, 'ի գալդ քո՝ օրհնութիւն բերես ։

2 Լուսաւորելով հանճարէս ։ Զ յայտնութե, կամ զպայծառութե մտաց, իմաստութե և սրտի ախորժելս ։ փորձի յանդիմանես. քննելով յանդիմանես, և ոչ անքննաբար ։

3 Ու 'ի [illegible] ։ Ցանձն իւր առնու զառակն մանկանց՝ զոր տէրն ա֊սաց 'ի յանդիմանութեն հրէից (մատթ․ ժա․ 16։) Զայն առակ իբրև խաղ ինչ սովորական 'ի մէջ հրէից համարին մեկնիչքն՝ կուանելոս, մենոքիոս, կալմէթ, և այլք՝ առեալ 'ի թէոփիլակտոսէ։ Արդ ես, ասէ, ոչ ընդ ապաշխարողան կոծեցի, և ոչ ընդ արդարան խնդակից եղէ․ կամ, ոչ 'ի սպառնալն զարհուրեցայ, և ոչ 'ի խոստմունս բարեացն յորդորեցայ։ Ուստի արդար ցուցար իմաստութիդ հօր՝ ըստ քո խոկ առակդ, 'ի գառնեցն գլխ․ [illegible] [illegible], յարդարոցն՝ թէ այժմ, և թէ յաւուր դատաստանի․ [illegible], այսինքն հաստատուն և անփոփոխ դա֊տաստանի․ կամ [illegible], այսինքն գործով և բանիւ։

4 Ու [illegible] [illegible]։ Ըստ սաղմ․ (ձէ․ 8․) օրհնութեն արժանի լեցի՝ որ զօրէնս ուղիղս հաստատէ, կամ 'ի գործ դնէ․ իսկ ես ջանացայ համա֊ռօտել զօրէնս զանցառութեամբ։

5 [illegible] [illegible]։ Իբրև առաւել օրինաց գրեալ զօրութբ քով կանգնեցեր զդաւիթ 'ի ձեռն օրինապահութեն, որպէս և ինքնին վկայէ՝ միշտ պահեալ զօրէնս քո, [illegible] [illegible], վերստին դարձուցանելով կամ կրկնելով զնոյն բան՝ [illegible] [illegible], կըր֊կին հաստատէր զպահումն օրինացն։ [illegible] [illegible], այսինքն ընդ որ բանս և զայլ նման բանս պանծալիս վկայէ, և այլն․ կամ [illegible] [illegible] առեալ իբր եղական, այսինքն ընդ որում, իմանի՝ ընդ դաւթի զնորա նման պա֊տուիրանապահս պանծալիս կանգնեցեր առ 'ի յորդոր ինձ, և ոչ յօ֊ժարեցայ, կամ ոչ 'ի սրտի ամաչեցի, և այլն։

6 Ի [illegible] [illegible]։ 3 օրին․ 'ի [illegible], այլ օրին․ 'ի [illegible]։ Առաւել փութացայ 'ի տաճար կամ 'ի հանդէսս բաշխողու, այսինքն ախտից մարմնոյ, 'ի խրախուսնս աշխարհի, քան թէ 'ի պաշտօն քո։

7 [illegible] [illegible]։ Երկմտութի ոչ զհաւատոյն ասէ, այլ զգոր֊ծոց․ կաղացի յերկուս ճանապարհս բարւոյն և չարին անհաստատ գնացիւք․ կամ, 'ի ծառայութենէ քո խառնեցի և զծառայութեն դիւին, [illegible] [illegible], ըստ նախատելոյն կամ մեղադրելոյն եղիայի (գ․ թագ․ ժը․ 21։)

8 [illegible] [illegible]։ 2 օրին․ [illegible]։ Անշարժ մնացի իբրև զսալ դարբնաց, որ հարկանի կռանօք՝ և ոչ զգայ, ոչ շարժի․ այսպէս և ես անշարժ առ 'ի բարին եղէ ըստ նմանութեան սատանայի։ Եղուկ զու֊անձն իմ․ զի խորտակմանց մեծատունն 'ի դժոխս անդ՝ բաւական հա֊մարէր առ 'ի զգաստութի հնգեցունց եղբարցն՝ եթէ ղազարոս ևեթ յարուցեալ գնայր և քարոզէր նոցա։ Իսկ ես ունիմ աշա, ասէ, զնոյն ինքն զմովսէս եկեալ 'ի մեռելոց յայլակերպութե տեառն, և զբանս մարգարէից և զմատեանս առաքելոցն 'ի միտս և 'ի բերանի կրեմ։ Ի վերայ այսոցիկ և զամենեցուն զաւերդ ունիմ յարուցեալ ընդ բազմաց այլոց։ Սակայն առաւել անհաւան քան զհնգեսին եղբարսն գտանիմ, որ են յարմարական օրինակ անուղղայ մնացելոց զգայութեկս։ Այլ [illegible], պարգևեա, ներգործեա կրկին ողորմութիւն՝ յայս իմ եղկելի սահման․ և 'ի քարացեալ սրտէս բղխեսցէ զօրութբ խաչիդ աղբիւր արտասուաց, որպէս մովսէսի գաւազանաւն 'ի վիմէն։

9 [illegible] [illegible] [illegible]։ Այսպէս եդաք ըստ մերում և ըստ այլ ևս օրինակաց՝ համեմատ իմաստից բանին, իբր ասել․ սիրտս գոլով իբր անդաստան կարծրացեալ և անպտուղ, օժանդակեալ 'ի գթութենէդ որոտասցէ հոգիս զջմամբ, և բղխեսցէ զարտասուս իբրև անձրև առ 'ի ոռոգանել զսիրտս, Իսկ յառաջին տպագիրս եդեալ կայր, [illegible] [illegible], և այլն․ որ չյարմարի նաև շարակարգութե բանին՝ յետ առակըն՝ [illegible] [illegible] [illegible]... յարել, [illegible] [illegible], և այլն։

# ԲԱՆ ՎԱԹՍՈՒՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի ու նոյն ողերս մաղթանաց բանի·*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ ես նախնիս ամբարշտաց, գլուխս մեղաւորաց, պետս անիրաւաց, առաջինս պարտաւորաց, պատկերս յանցաւորաց, [1] տոհմիկեցիս ըստ վատթարութեան՝ այլ ոչ ըստ բարեպաշտութեան, ահա զանձաւրին խնոց ձաւեցի, զպատկառելին խայտառակեցի, զգաղտնիսն հրապարակեցի, զծածուկսն յայտնեցի, ըզթաքուցեալսն ցուցի, զամփոփեալսն տարածեցի, զգաղտնութեանս մաղձ ժայթքեցի, [2] զգործակցութիւն չարին մատնեցի, զամբարեալ թարախ վիրիս քամեցի, զխորս պարտեաց իմոց ծանուցի, զպատրուակն կեղծեաց առի, զքող ողեղութեանն վերացուցի, զամօթալեացն զգեստ մերկացուցի, զգարշելին յանդիմանեցի, զմոլորն մահու փոխեցի, զպղերս հոգւոյս խածուածոց քահանայապետիդ Քսի բացի։ Յանձինս վտանգ ոչ անխայեցի, մարմնոյս սիրոյ ոչ աչառեցի, [3] զարմատն հնութեան տեսիլ արարի, ընութեանս կարեաց ոչ ողորմեցայ, զխաբանութեանն կապ լուծեցի, զգղեակ սրտիս քանդեցի, ընդ կամացս որոյ իբր ընդ դարանակալի մահու կռուեցայ, զպահեստ անյայտից արտաքս հանի, զմթերսն զանձ մեծին գուշակեցի, զգատախազն դատաւորին հանդէպ կացուցի, զապաւինեացն զփորձ այժմէն իսկ զտի, զգաւշն կործանողին կտրեցի, զուխտն խաբողին ցրուեցի, զկատարած մարտին յաղթութեան ի քեզ տէր Յս ապաստանեցի, զպատերազմին խումբ զրգռեցի, ըզզինադրութիւն զինեցմանն՝ բանիւդ ա̃յ յուսացայ, ըզխաւարասիրացն փաղանգ լուսեղինացն զինուցս սադրեցի։

Բ. Եւ արդ, առեղծիչ ամենայն եղելոց Քս որդի բարձրելոյդ ա̃յ, զատեէն զորովեալս յայսպիսեաց բանից եւ զհարուածեալս յայսքանեաց ցանից մի կշտամբեսցես կրկնակի զատել ի մեծի աւուրն։ Ահա, հզօր

անքնին անճառ բարերար Թագաւոր անմահ, առ այս
կերպ պատկառանաց ինքնապարառս խոնարհութեան,
որ ինձէն զանձն մեծաւ ձաղանօք յոգի գտեալ, լից
նուագօք այսր մատենի անարգանօք անօթոյ զգենման սա-
տանայի. և զերեսս կերպի պատկառեցելոյս նշանաւ խա-
չիդ զօրացո: Մխացի կնիքդ լուսոյ 'ի դէղ տեսակիս,
անիւթութեանդ նշան հաստատեսցի [4] 'ի տիպ գիտակիս,
երևակ կենացդ փայտի ձևացի 'ի պատկեր այսմ, ա-
րուեստդ հրաշից 'ի ճակատս շուք նշանակեսցի: Մ՚ի
այլայլեսցի յինէն դրոշմդ լուսապաճոյճ, մի բարձցի 'ի
տեսանելեացս բրաց ճաճանչդ օրհնութեան, մի մեր-
ժեսցի 'ի գլխոյս առհաւատչեայդ վստահութեան, մի
սասանեսցի 'ի բերանոյս ամրութէ սեմոյ՝ փառք տեառ-
նագրութեանդ: Պահպանակդ երկրպագելի 'ի զգայա-
րան որտիս միացի, չորից նիւթոյ խնոյս գոյութեան
քառաթևիդ նշոյլ ազդեսցէ, ձեռնս կարկառման փրկ-
չիդ իշխանութիւն օժանդակեսցէ, մատուցման հա-
տուածոյ մատնս՝ խորհրդարանդ համարձակութեան
բարեգործեսցէ: Ի մեկնելս խնուլ [5] մի հեռասցի սըր-
բութիւնդ, մի լքցի պատիւս 'ի պատւին պարտաւո-
րիս, մի մերժեսցի 'ի յոգւոյս անդաւաճանելիդ փրկու-
թիւն. մի ջնջեսցին գիծք կենդանատուիդ 'ի քո գրե-
ցեալս ինչս, մի եղծցի նկարումն արեան զօրութեան 'ի
տիրատիպ խորանէս, [6] ընդ իս բնակեսցէ յիմում գե-
րեզմանին. 'ի ծածկել մարմնոյս թշուառի՝ օծումն շնոր-
հիդ առ իս պահեսցի, 'ի նորոգութեանն աւուր սոսկա
հանդիպեցայց փառաց փեսայիդ, [7] 'ի քոյոց այտի ծա-
նուցայց, քոյովքդ վստահօք պճնեցայց, երախտեօք
մեծիդ յարգեցայց, աւազանին զգեստիւ պերճացայց՝
քաւեալ ողորմութեամբ: Մասն, բարեգութ, զվե-
րարկուդ անապականութէ տաժանեցելոյս մեղօք մարմ-
նոյս, [8] մի յարիցէ ընդ քոյս՝ բանաւորութիւն, հնացուցիչ
հոգւոյս վանեսցի, խաւարաբնակացն պատիրք մի ընդ
իս վերբերևեսցին: Օրհնեսցի անուամբ քո, գթած,
վիհն իմ հանդատեան, ողորմութեամբ քո լցցի գուբն
իմ գերութեան, ընդարձակեսցի քև ինձ տեղին թը-
շուառութեան, անդորր եղիցի, խնամօք, ինձ բանտն
բարկութեան, [9] մնասցէ զիս առ յաճումն արգանդն
մթութեան, յուսով քո շտեմարանեսցէ զիս յարկն այն

անձկութեան , ձեռամբ քո պահեցայց 'ի խշտին տարտամութեան , թևօք քո ընկալայց 'ի տունն տաղնապի , դու , գովեալ , ընդ իս 'ի սենեակն վանդի ։ Աւաղս ինձ աստանօր [10] 'ի թիւս հազարաց , զի երբեմն էի վերնային և այժմ անդնդային , երբեմն տօնելի և այժմ աշխարհելի ։

Գ. Այլ և արդ [11] կրկին դու օրհնեալ 'ի բոլորից գոյից յերկնայնոց և 'ի ստորնայնոց և 'ի սանդարամետականաց մեռելոց , անպարտականդ այս տարագրութեան ։ Ես վրիպեցայ , ես օտարացայ , ես յիմարեցայ , պարտեցայ և խոտան գտայ . ես լքայ , կամեցայ և կործանեցայ . ես մոլորեցայ , ես մատնեցայ , ես մերժեցայ , ես խարթացայ , գերեցայ և գայթագղեցայ . ես նզովեցայ , ես թշուառացայ , աղբեցայ և վատթարացայ . ես ընկլուզայ , ես խաբեցայ , ես անօրինեցայ , ես ապականեցայ , մահացայ և 'ի սպառ եղծայ . չիք քո առ այս ինչ [12] ման չարի , որ ես միայն անփոփոխ բարի ։ Արդ կամք քո յիս , և [13] խաւարն ինձ ճառագայթ . ճրագ յուսոյ քո անդ , և գիշերն վաղորդայն . մարմնոյ քո հաղորդեալ , և յամօթոյն կարծեաց ապրեալ ։ Իսկ ես [14] ոչ գրեմ զանձն իմ կենդանի վասն անփախչելի վախճանին , դարձեալ զիս ոչ վարկանիմ կորուսեալ վասն աներկեան նորոգմանն ։ Որ և [15] փակեալ համարիմ ինձ զելս կենացդ վասն անքաւելեայն պարտեաց , դարձեալ բացեալ ինձ զշլախուն՝ վասն փրկութեանն աւետեաց . քանզի ոչ այնքան վհատութեանն գոյժ տագնապէ , որչափ փրկութեանդ քաջալերեալ ձեռն կարկառէ ։ Արդ տուր , տէր , տուր ողորմութիւն , առ ամենայն ձայն գոհաբանեալ , օրհնեալ յաւիտեանս . ամէն ։

---

1 Ատտիկեցի ։ Ատտիկէ էր գաւառ աշխարհի , կամ Եղլադայ , որոյ մայրաքաղաք էր աթէնք՝ աթոռ գիտութեց և օրինաց և քաղաքականութեան . յորմէ ատտիկեցի՝ նշանակէ աթենացի . և զի որպէս իմաստութեամբ անուանի էր այն գաւառ , նոյնպէս չարութեամբն և մանաւանդ անպատկառութբ . կամ զի յառաջն 'ի շինութե իւրում բարեբաստիկ գոլով , յետոյ կործանմամբն բնաւ անարգեցաւ . վասն այսորիկ ատտիկեցի ասի առաւելեալն յերկաքանչիւր ներհական , այսինքն թէ 'ի բարեբաստութե , և թէ 'ի վատթարութե ։ Եւ յոյնս՝ ասել , ատտիկեցի հայեցուած , նշանակէ՝ անպատկառ , լիրբ ։ Նոյնպէս , ատտիկեցի պանդուխտ , իմանի անմարդի դրացի ։ Եւ ընդ հակառակն՝ ատտիկեցի հաւատարմութի , վկայ , քաղցրաւենիք , և այլն , իմանի՝ գերազանց , ընտիր ։ Առնէն 'ի սկզբան աղօթիցս [illegible] , կամ [illegible] , ատտ-

էին, և այլն, որպէս և ասացեալն 'ի բանն ՀԲ. Գ. է առօրական խոստովանութեն արանց երկիւղածաց. զոր նոքա ճշմարտութեամբ առեն, քանզի միայն զիւրեանց մեղս և զպակասութիւն քննեն, և ոչ զայլոց. ուստի որպէս ճանաչեն զինքեանս, այնպէս և խօսին, և բանն նոցա գոլով համաձայն ճանաչմանն, ոչ սուտ առի՝ այլ ճշմարիտ (տես 'ի մեկն. Թղթոց. փիլիպ. Գ. 3: ա. տիմոթ. ա. 15:) Բայց այսպիսի սուտ է արդարն 'ի բերան այնոցիկ, որք մեղաւոր առեն զանձինս՝ ոչ զի այնպէս ճանաչեն, այլ զի մի յայլոց ծանիցին այնպիսիք:

2 [illegible] [illegible]: Զիս գործակից լինելս սատանայի [illegible], յայտնեցի: [illegible] [illegible]. 'ի բաց առի զծածկոյթ տգեղութեանս, այսինքն բացի զտգեղութիւն իմ:

3 [illegible] [illegible]: զհին և զփտեալ արմատն. այսինքն զախտս հին մարդոյն, կամ ապականեալ բնութեան՝ որք իբր արմատ 'ի խորս թաքուցեալ կային, [illegible], 'ի վեր հանի 'ի տես ամենեցուն, խոստովանեցի: [illegible] [illegible], այսինքն անօթոյ, պատկառանաց ոչ ողորմեցայ: [illegible], զմիաբանիլ իմ ընդ զգայական կամացս, կամ զզաշն ընդ զիւրն՝ խզեցի խոստովանութեամբ: [illegible], զբերդն, այսինքն զզաղանութիւն արտիս, յոր ապաստանեալ կային ախտքն և մեղք, քանդեցի հրատարակելով: [illegible] [illegible], ընդ կամաց մարմնոյս՝ որ է որս սատանայի, իբրև ընդ խնդրողի զմահ հոգւոյս կռուեցայ, զանհաճոյս նորա գործելով: [illegible] [illegible]. զընդդիմանալն յարձակման սատանայի՝ քեզ ոչ բանիւ [illegible], այսինքն յուսով յանձնեցի: [illegible], զխումբս զիւացն, [illegible] [illegible], հրեշտակաց զինուցն կամ զօրութեան [illegible], յանձնեցի կամ մատնեցի. մի օրին. [illegible]. զոր իբր գործիական առեալ իմանի, զինուն հրեշտակաց զօրացեալ զժողով պատերազմող զիւացն. ոչ առ մակաբէիւ հրեշտակ ոչ վառեալ զինու երևեցաւ, և պատերազմէր յարձակիլ (Բ. մակաբ. ԺԱ. 8:)

4 [illegible] [illegible]: Ի կերպարան երևացս հաստատեցի նշան խաչին՝ փոխանակ ամօթոյս: [illegible] [illegible], երկայթ կամ ձև խաչին արպատուրեցի յայտս իմ, այսինքն յերեսս [illegible]. հրաշալի արուեստ կամ գործիք փրկութեան՝ 'ի պատիւ ճակատուս [illegible]: այլ օրին. [illegible]: Յայս ամենայն բանս՝ այլ և այլ օրինակաւ զմի ինչ խնդրէ. այսինքն անպակաս առնել յինքեան և յանդամս իւր զնշան և զզօրութիւն սրբոյ խաչին: [illegible], սուրբ խաչդ՝ որ է առիչ կամ աթոռ համարձակութեան առ Ած, [illegible], օգնեսցէ կամ յաջողեսցէ մատուցման մատենս 'ի յաղօթել, 'ի խաչակնքել, 'ի կատարել զխորհուրդս եկեղեցւոյ, և այլն:

5 [illegible] [illegible]: Ի բաժանիլ իմում յաշխարհէ, կամ 'ի բաժանիլ հոգւոյս 'ի մարմնոյ՝ սրբութեն շնորհաց մի հեռասցի: 'ի [illegible], յորժամ պատանօք ամփոփի մարմինս, մի բարձցի պատիւն քրիստոնէական, կամ պատիւ պարկեշտութեան: [illegible] [illegible], դրօշմեալք կամ նմանութիւնք կենդանացուցչիդ՝ որ 'ի ձեռն խորհրդոց եկեղեցւոյ, և 'ի ձեռն շնորհաց, մի ջնջեսցին 'ի հոգւոյս զոր դու գրեցեր 'ի քո նմանութիւն. կամ, 'ի հոգւոյս՝ որ քո է գրեալ, այսինքն համարեալ:

6 [illegible] [illegible]: Նշան ամենազօր արեան քո, նմանապէս և օծութն շնորհիդ՝ ընդ իս մնասցէ և պահեսցի 'ի գերեզմանին: Իմանալ պարտ է ըստ զօրութեան. վասն զի ներգործութիւնք խորհրդոց եկեղեցւոյ և շնորհք տիրապէս 'ի հոգւոջ են՝ որ չմեռանի 'ի գերեզմանի. բայց վասն շնորհաց և արժանաւորութեն հոգւոյն պահէ Ած զմարմինն կամ զնշխարս մարմնոյ՝ անմերձ 'ի դիւական ներգործութենէ, և յինչ և իցէ անպատուութենէ:

7 [illegible] ։ Ի յառնել իմում երևեցայց լինել 'ի ծառայից քոց և 'ի սիրելեաց ։ [illegible], զօրութբ հարցարանաց քոց զարդարեցայց ։ [illegible] ։ Ոչ զառաջին անմեղութիւն որ 'ի մկրտութենէ՝ առնել խնդրէ, այլ զամենեւին մաքրութիւն 'ի մեղաց, զոր քաւութեամբ ընդունել առէ ։

8 [illegible] ։ Ընդ քո բարերարութեան կամ պարգևս բնութեան և շնորհաց, որպիսի է հնէք մկրտութեան, զղջումն և քահանայութէ, մի յառնիցէ [illegible], այսինքն գործք կամ զխեալք սատանայի, որք են մեղքն, կամ պարտեք մեղաց ։

9 [illegible] ։ Գերեզմանն մթին՝ իբրև արգանդ վերստին ծննդեան՝ պահեսցէ զիս յաձումն յարութե ։ [illegible], աջով պաշտպանութե քո [illegible], այսինքն ընկալեալ եղէց․ եղայց 'ի տան մահու 'ի գերեզմանի ։ [illegible] ըստ իմաստից պաշտպանութե ընդ իմբեան լինել հայցէ 'ի գերեզմանին, ըստ որում վասն յովնանու ասի (Իմաստ․ Ժ․ 13․) « Ընդ նմա էջ 'ի գուբ » ։

10 [illegible] ։ այսինքն հազար անգամ աւաղ ինձ․ և ըստ շարագրութեն պարզի՝ աւաղ հազար թուով կամ 'ի հազար նուագս․ զի բառն [illegible]՝ որ ածական է թուոյն՝ եդեալ է 'ի ստացական հոլով իբրև յատկացուցիչ, ըստ ոճոյն 'ի բանն Ծն․ լծ․ 4 ։ Իսկ եթէ [illegible] զատ առնուցումք, որպէս թէ հազար անձանց, բացատրի․ աւաղ ինձ պատշաճի ընդ այլոց հազարաւոր անձանց․ զի խօսի զհասարակաց թշուառութէ մարդկան ըստ մահկանացու վիճակին, որով այն որ երբեմն [illegible] էր, այսինքն շրջող 'ի վերայ երկրի, այլ և [illegible], զուարճալի, նիւթ ուրախութէ, մահուամբն և թաղմամբ լինի [illegible], 'ի խորս երկրի ընդ հողով, և [illegible]․ ողբալի, նիւթ սգոյ ։

11 [illegible] ։ Թէպէտ ինձ հազար աւաղ պատշաճի, բայց դու կրկին եւ օրհնութե եւ արժանի՝ իբր անապարտական այսմ իմոյ տարագրութեն մահուամբ․ վասն զի [illegible], և այլն ։

12 [illegible] ։ 3 օրին․ [illegible]․ և իմանի՝ յայս ամենայն չհասարակութիս իմ չունիս դու և ոչ փոքր գործակցութի ։

13 [illegible] ։ Յորժամ կամք քո լիցին յիս, ինկոյն խաւար գերեզմանին լինի ինձ ճառագայթ, և այլն ։

14 [illegible] ։ Այժմ մինչ առաջս եմ, և շունչ իմ յիս է, ոչ համարիմ զանձն իմ կենդանի, [illegible], վասն անդերծանելի մահուանն․ զի որ վճռեալ է մեռանել անվրէպ, իբր արդէն մեռեալ համարի ։ Բայց օրինակ ինչ գնէ, վասն [illegible] վախճանին, զոր մարթ է իմանալ զժամանակէ մահուան, զի ոչ գիտեմք զչափ յապաղման նորա ։ [illegible] 4 օրին․ [illegible] Այնպէս ոչ համարիմ զիս կորուսեալ մահուամբն՝ [illegible], վասն աներկբայ նորոգմանն 'ի ձեռն յարութե ։ Ի բաժանդակ բանիս առել կամի․ ոչ 'ի կենդանութե իմ վստահիմ, վասն զի մեռանելոց եմ․ և ոչ ընդ մահ իմ տրտմիմ, վասն զի յառնելոց եմ ։

15 [illegible] ։ Եթէ հայեցիմ յանհուն պարտիս իմ, փակեալ ինձ տեսանեմ զճանապարհ կենաց․ բայց 'ի խոստումն փրկութեանն հայեցեալ, այժմէն զդրախտն բացեալ համարիմ առաջի իմ ։ Ոչ այնչափ զգամ կամ երկնչիմ յատուցանելոյ պարտուց, որչափ [illegible] այսինքն փրկութեն քաջալերեալ օգնէ․ կամ որչափ աւետիք փրկութեանդ զօրացուցանէ․ քանզի նոյն իսկ սպառնալիք պատուհասին առաջնորդէ 'ի փրկութեան ճանապարհ ։

# ԲԱՆ ՎԱԹՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արդ որ ոք և տացէ զայս դեղ մաղթանաց այսր[1] մատենի պարկեշտականի պահպանել սովաւ, եթէ 'ի մեղաւորաց իցէ մատուցեալն, եղիցի և ես խմորս բանի կցորդեալ նմա. իսկ եթէ յարդարոց գուցէ յառաջեալն, գտայց և ես սովիմք ընդ նմին ողորմեալ նովաւ: Ապա թէ երջանկացի այնպիսին ինքեամբ՝ ինձ միայնոյ զրկեալ զեղկութիւնն, և ես ինձէն վկայեմ այսմիկ: Բայց յիշեսցէ նա զՍողոմոն և զբանս նորա զհոգեշունչս, թէ[2] մի ոք վստահացի սիրտ սուրբ ունել, և կամ մի պարծեսցի մաքուր լինել 'ի մեղաց, և զի ոչ յարեաւ մարդ երկրածին ազատեալ 'ի պատասխանեաց. և ոչ ընտիր՝ ինքնարշաւ վազիւքն, և ոչ՝ թէ և 'ի թռիչս անբարձման թեւոց բերիցի. առ որ զգոյշ լինիցի[3] կրկին երկուցեալ 'ի վիմին իսկ հաստատութեան՝ ուսեալ 'ի Պաւղոսէ, գուցէ անկեալ 'ի յերկիր՝[4] սահմանողի այսմ կանոնի խրատագրի կշռեալ նմանեսցի: Այլ տացէ զայս կշտամբութիւն մաքուրն՝ նիւթ պահոց, առ 'ի չիջանել անընտրողաբար յանձնահաճան բարձրութենէ. և պատժապարտն՝ առիթ ազատութեան, որով անբարձեալ 'ի կործանմանէ հոգեւորական մահուն՝ ապրեսցի յուսով: Իսկ ինձ եղիցի պատգամս այս բանի արձան փորագրեալ ամենեւին անեղծանելի, որ փոխանակ իմոյ եղկելույս անձին մահացուի՝ անդադար հնչմամբ հեծութեան լալոյ առանց լռելոյ միշտ աղաղակէ. լիցի և ոսկերացս քակտեցելոց[5] 'ի հողապատեան շիրիմ վերարկու ին՝ անմռունչ ձայնիւ զայս խոստովանել. հասցէ և մարմնոյս 'ի հող լուծելոյ՝ բարբառով իմն անապականելեաւ ծածկատեսիդ զայն պաղատել:

Բ. Տէր գթութեանց, աղբիւր ողորմութեանց, պարգեւք բարութեանց, որդի բարձրելոյ տէր Յս Քս, ո-

զօրմեա [6] խնայեա, մարդասիրեա, նայեա 'ի վտանգս, անդարկեա 'ի բեկութիւնս, խոնարհեաց 'ի թշուառութիւնս, տես 'ի տարակոյս [7] անձեռնհաս տագնապս, հասիր հալածել կորստական կարեաց։ Շօշափեա բժշկապէս զամենաթշուառ ախտաւորութիւնս, ունկն մատուցեա քաղցրութեամբ ողորմագին հեծութեանս, լուր 'ի խորոյն անդնդոց մահուն գերեզմանի անմռնչելի հառաչմանս, մինչ յականջս ամենալուր լսելեացդ ձայն պաղատանաց վանեալ անդամոցս։ Եւ վասն զի [8] զբաւական կենդանութեանս անսպական է, անփոփոխ լեալ և ողորդ քո գթութիւն. կցորդ լեր հեզութեամբ տաժանաւորս տկարութեան։ Մեռեալ պատկերիս մի ոխս պահեսցես, ընդ անշուշտ կերպարանիս մի 'ի դատ քննութեան մտցես, մահու տանջեցելոյս մի հարուածս յաւելցես, ընդ բեկեալ խեցեղէն անօթոյս մի ուժգնութեամբ մարտիցես, վնասու կոչկոճելոյս մի բարկութի կրկնեսցես, կործանեալ շինուածոյս մի պատուհաս մատուցես, շանս սպանելոյ մի քարինս արձակեսցես, լուսոյ ջախջախելոյ մի սաստիկս որոտասցես, հողոյս անպատուելոյ մի իբր անհարհուածի ուժգինս մնչեսցես։ Ողորմելիս մերժելի մի 'ի դատ ընտրութեան կոչեսցես, զփոշիս ցնդելի մի իբր զքո զխնամորս զոցես, զտիղմն տաղտկալի մի իբր զոսկի փորձեսցես, զգարշութիւնս անզգամելի մի իբր զըռնամարտիկ վանեսցես, զխէթս 'ի բաց ընկենլի մի նիւթ գեհենին պահեսցես, զպարսնեաց բազմապատիկ բանից կշտամբեալս մի վերստին յանդիմանեսցես։

Գ. Այս ամենաթշուառ և [9] խաւարարգել չքմեղն են աչա սրտաբեկ և յոյնաթախիծ արգահատութիւնք. հաստատեսցէ օրհնեալդ քո բան անփոփոխական լինել, բառ սրտի արգահատելոյս. քանզի և այժմ մինչ կենդանեօքս խօսիմ, մեռեալ եմ անհանիդ. որպէս 'ի կորուստ մահուն սատակման՝ ամենազօրիդ հրամանի անեղծ եմ հաւատովքս։ Արդ աղաչեմ զքեզ, տէր Յիսուս, հայեաց յիս ողորմութեամբ, և մի թողացուսցես լինել մասնակից հետ Նեռլխարայ. և զմահապարտեայ տապանին աղդուին անկենդանաւոր թնդման թշուառ թաղման՝ ողողակ ձայնի հառաչման լալեաց քեզ հաշտեցուցեալ՝ յարգեսցես լսել, միայն բարեգործ, հզօ-

տէր, հզօր մարդասէր. և հոգիդ քո բարի բնակեսցէ ընդ իս՝ լոյս առնելով ինձ 'ի խաւարին. Մնասցեն ընդ իս [10] կենարար քո կրից պաշտեցեալ մասունք. զի երբ զուարթ զանձն զիս պահեալ 'ի քեզ, կենաց նորոգման ընծայեցուսցեն. օգնաք անխափանելի զինուց ինձ պատկանեսցին, ընդ իս յարակայեալ քարինք պարսից հոգւոր հնարից՝ զչարին հալածել զգունդ. Որում [11] որ առ իս քն, տէր, վանեսցի. զի եթէ յարիցէ 'ի վերայ իմ պատերազմել, անսեալ զքաղաքն անույն 'ի զօրաց և զազգազգականաց զարծի ապաձայն, զքեզ տէր ունիմ՝ մշտնջենաւոր և անխոնջելի պաշտպան.

Դ. Ո՛չ եթէ այժմ իսկ կանխաւ արագեալ յառաջ քան զօրն կատարածի, և անշուշիդ արդեանն ինձ պատրաստեսցէ, առաքեմ [12] զաղօթս տէրունական նախին զան մահու. եթէ 'ի վայր զիս հնարի կործանել, զծնրադրութիւն արարչին. եթէ [13] 'ի մախիր երկրի թաւալել ձեան բերիցէ, երեսայն ոչ 'ի նոյն մածուցանի զիս հերքեսցէ. [14] եթէ վատախս ինչ ցաւոց նիւթեսցէ, քրտունքն յութի արեամբն զանգեալ փրկչին աշխարհի զիս խաւեսցէ. եթէ [15] յընթացից բարեաց ըղձանց իմ պատանդեսցէ, կապանք ամենաստեղծին զիս արձակեսցէ. եթէ [16] յուրացութիւն պարգևաց լուսոյ բանադատեսցէ, հայհոյութեանն համբերութի յանձամարտիցն՝ զնովին ընդ նոյն կարկեսցէ. եթէ հարուածս նետից զաղտնաձիգ զինուց ինձ արձակեսցէ, կարթ հնարից աղեղան փառաց հօրն կապարձից նախն պատասհեսցէ. Եթէ [17] քաղով լուսոյ խաւարականի մտանել ընդ այս մտածթեսցի, կափուտ գլխոյն ձորձով պատեցեալ լուսոյն ամենից զիս առնէեսցէ. եթէ մղեսցի [18] զվստահութիւն ձեռին կապել, եղեգն մատուցեալ 'ի յաջ գայացուցին զիս չարչարեալ ըմբերանեսցէ. եթէ ձաղանօք այպանման զիս կապեսցէ, ամենեքին ծաղու ամենազօրին զիս հեղգնեսցէ. Եթէ [19] բժժանօք ինչ յութից կախարդել խորամանկեսցէ, ապառաժն զինց հզօրին ոչ զիս սատակապէս անմեղեցուսցէ. եթէ 'ի մէսս գիշերային մթութեանն խաւարու խարէութե [20] լինել մարտիցէ, 'ի ճառագայթից լուսոյ երեւման քո, տէր, խայտառակեսցի. եթէ 'ի միջօրէական տապոյ փորձութեանցն արեգակնակէզ վանիւք խորշակին զիս

'ի յարմատոց խախտել կարծիսն, 'ի զօրութենէ նշանից լուսոյ խլեալ գոսացի։ Եթէ 'ի փչմանէ շնորհի ունայն զիս առնել հնարաւորեսցի, թուրն զոր ընկալաւ աւելին քրովբէից ընդ մեղաւորիս զնա պատկառեցուսցէ։ Եթէ ժանիք խածոյք ինձ ցուցանիցէ, լռութիւն երկնաւորին բերանոյ զնա պապանձեցուսցէ։ Եթէ [21] խածմանս աղուեսուս հօտեւոյս ապգեսցէ, բեւեռացն հարմանք հաստատղին ընտրից զնա կործեցուսցէ։ Եթէ յընթացս անխրատութեանց խորհրդոց զիս մոլորեցուսցէ, սեւեռք ասից անհատանելեացն զնա կապեսցէ։ Թէ հրապոյրս ինձ գծնեալս արբուսցէ, քաղաքին ընդ լեղւոյն խառնեալ 'ի յորբումն բարերարին՝ զնա զառնացուսցէ։ Եթէ [22] տապին Ճնշակմանք փայտին զիս զոցէ, սակայն խորհրդով խաչին ընթանեալ 'ի սպառ պարտաւորեսցի։ Եւ Եթէ ընդվզել ընդդէմ հնազանդութեանն աւանդ հրամանի զանձն իմ ուսուսցէ, բերումն պարտանցի անտահմանելեացն զնա կործանեսցէ։ Եւ Եթէ 'ի մահ սատակման զիս վանեալ վիրաւորեսցէ, սաստ աւէտ զինու մխեալն 'ի կող սատեղծչին Ադամայ զնա հերձեսցէ։ Եւ Եթէ երկանեք [23] վշտաց զծռոխակմանց զիս պատփակեսցէ, պատանայն կատ եւց ունողին զնա ըմբռնեսցէ։ Եւ Եթէ յատակս մահու հալել զիս խարդախեսցէ, ընակել կենդանւոյն 'ի մէջն մահու զնա մեռուսցէ։ Եւ Եթէ խնդասցէ ընդ մարդկորէնս իմ զայթագղութի, կրկին կորստի կարկամեալ կամին, յորժամ անմահն ինձ յարուցեալ փառօք ընդ իւր նորոգեաց զէնս մահացելոյս։ Եթէ ընդ լուծանել փորձ [24] կապանաց հազարամէից բերկրեսցի, զաղացի կրկնեալ վերանին խակոյն ընդ վերջին չղթայս անդերծ տագնապին ընթանման սատակագունի յանվախճան տանջանարանին։ Եթէ [25] ընդ տապին հարուածն դժուարեսցի, զօծ կարտեսն յեանուած սատակմանն անշէջ դեհենին, որ պատրաստեալն է նորա եւ նորին հրեշտակաց, նմա պատմեսցի, որ յաւուրն մեծի մեծին ատենի։

Ե. Արդ [26] ինձ աղաւթելոյս 'ի քեզ տէր Ցնս, միայն Թագաւոր ինքնակալ զօրեղ, արարիչ երկնի եւ երկրի եւ ամենայն զարդուն որ 'ի նոսա, որ զարատենդ քոյ անն ունիս եւ զորովութեան փրկչից ազատեալ յասամ. 'ի յաւս քո անվամնիս, եւ զզարչարարիդ հեռս հանքու-

րեմ, [27] զպարտութիւնս խոստովանիմ և զմեղսս հրա-
պարակեմ, կշտամբանաց քարամբք կոծիմ և հառաչա-
նօք սրտիս տապանամ, 'ի խէթ խղճիս խոցոտիմ և բո-
ցով շնչոյս ճենճերիմ, այլ ցօղով արտասուացս այրիմ
և [28] երկիւղանացս ազդմանք կիզանիմ, յուսակտուր օ-
դով ցամաքիմ և դառնաշունչ հողմով չքանիմ, [29] թա-
խանձանաց բանիւս երերիմ և կոծկոծագին հեծութք
դողամ, տաժանելի կրիւք տուայտիմ և տագնապա-
հոգւոյս տատանիմ, 'ի կոծ մրրկաց ծփիմ և 'ի բախմա-
նէ ալեաց տատանիմ, [30] 'ի լսութենէ համբաւոյն սարսեմ
և յիշատակաւ ահին կործանիմ, կերպարանօք ատենին
հալիմ և սպառնալեօք մեծին մաշանիմ, լուր բազմա-
գութ, քաղցր, մարդասէր և երկայնամիտ, քաղցրու-
թիւն անճառ, որ բարի և տուր անուշակի։ Բանիւդ կա-
րող ես յամենայնի և առ իս շնչոյս խնայ՝ [31] փրկութե
մեծի. և քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւի-
տեանս. ամէն։

---

1 [illegible]։ Այսինքն չափաւոր կամ խոնարհական մտածմունս։ Որ ոք մտանեղամ, ասէ, առաջի զերկ աղօթական գրոցս, եթէ մեղաւոր իցէ, և ես հաղորդ եղէց բանից նորա։ Իսկ եթէ յարդարոց [illegible], իցէ յառաջ կացեալն յաղօթել, եղէց և ես [illegible] աղօթիւք՝ ըստ նմին արդարոյն աղաչեմ նոցա, վասն արդարոյն, կամ միջնորդութիւ նորա։ Այլ եթէ [illegible] այնպիսի աղօթողն, այսինքն երջանիկ կամ անմեղ համարելի զանձն (տես Ղուկ. ԺԸ. 4.) զիս միայն համարելով եղկելի, վասն իմ մեղսեալ [illegible] լինել. բայց վասն իւր՝ յիշեսցէ զաղաղանն։

2 [illegible]։ Է բան առակաց. Ե. 9։ [illegible], և բան Նորին սաղմոսի (Կ. թագ. Ի. 46.) Իսկ առաջեալն, [illegible] այսինքն, և ոչ քաջ կամ յաղթող լինի որ իրում բնական արդարութեամբ. թուի հայել 'ի բանն ժողով. (Թ. 11.) «Ոչ թեթևաց են ընթացք, և ոչ զօրաւորաց պատերազմ»։

3 [illegible]։ Այսինքն բաց 'ի բանից սաղմոսի [illegible] լինելի զարմեալ, երկնչելով յորժամ նաև 'ի վիճի հաստատեալ իցէ, որպէս Դաւիթ ասէր (սաղմ. ԼԶ. 3.) կամ առաւել ևս երկիւղէ հաստատեալն՝ լաւ խրատուն պօղոսի (ա. կորն. Ժ. 12.) Նա բազ [illegible] ոչ նշանակէ զաւուրսն [illegible]։ Բայց 2 կամ 3 օրին. ընթեռնուն. [illegible]։ և մարթ է բացատրել, հաստատութիւն ասացի 'ի պօղոսէ երկնչելոյն յանկմանէ, և ոչ եթէ անկասկած յանձնաց կալով։

4 [illegible]։ Զի մի անդադարութեամբն անկեալ, նմանեսցի անկելոյն սաղմոսի, որ վճռեաց զայս [illegible] կանոն՝ թէ արդարոյն ևս պարտ է երկնչել, և այլն։ Հին լուծ. [illegible] խոնարհ [illegible], իբրև թէ նմանեսցի [illegible]։

5 Ի հաղորդութեան չէրէմ։ Համարեա տէր, թէ ակնկալս փոխանակ ՚ի ծածկոյթ տապանին հողով պատելոյ, կամ ընդ հողով թաղելոյ՝ այսու ձայնիւ աղօթիցս աղաղակեն առ քեզ։ Եւ մարմինս հողացեալ բարբառով իմն անզգալեաւ զայս պաղատանս մատուցանէ, թէ տէր փրկեա, և այլն։

6 Խնայէ մարդասիրէ։ յերիս օրին. չէք մարդասիրէ։

7 Ընկալեալ զհոգին։ այսինքն անդարձանելի կամ անհնարաւոր նեղութեա։ Իսկ ՚ի վեր ասելն ընկալեալ բազմօրեան, իմանի՝ գերազանց, փառաւորեալ, և այլն։ Հոգւոյ հանգուցեալ. այսինքն օգնել կարեաց մահուն։

8 Գերազանցն կենդանութեան։ Հոգիս՝ որ է պատճառ կենդանութեա, և առհասարակ յարութե մարմնոյս։ Հին լուծ. իմանայ նաև զմատեանս. իբր ասել, թէ և ես մեռանիմ, սակայն գիրքս՝ որ անապական մնայ զկնի իմ, է իբր փոխանորդ կենդանութեանս։

9 Խառնարանեցէք չէրէմն. այսինքն գերեզմանին որ արգելեալ կամ պահէ զիս ՚ի խաւարի։ Վերջասացեալ պաղատանս, ասէ, են ցաւագին և բազմապատում խնդրուածք, զորս ՚ի գերեզմանէն առնեմ առ քեզ. փան որոյ հատուածս զխնդրուածքս՝ լինել անփոփոխայնս ընծայեալ առ քեզ։ Եւ ոչ ընդդէմ ինչ է ՚ի մեռելութե խնդրել առնել զայսպիսի խնդրուածս. փան զի այժմ ես մինչ կենդանեօք խօսիմ, կենդանի գոլովս խօսիմ, քո անհնար կենայդ համեմատեալ՝ իբր մեռեալ եմ. սա-ռի որպէս այժմ կարեմ խնդրել, նոյնպէս և ՚ի մահուանս։ Եւ զար-ձեալ, զի և ՚ի մեռելութեան խնդրեմ կենդանի եմ հաւատովք յարու-թեան. ապա իբր ՚ի կենդանւոյ լուր զնոյն խնդրուածս։ Վասն որոյ ա-ղաչեմ զքեզ՝ մահացելոցս զօրանին աղօթս, զմահ ծանուցանող ձայնն գերեզմանին, կամ զձայն գերեզմանին՝ որ է նշանակ մահուան, ընկե-րանակցն բնական, զձայն թմբկան գերեզմանին, որ առանց կենդանու-թեան ՚ի բախմանէ ինչ կամ ՚ի շարժմանէ թմբկին առնէ, իբրև ապա-ցոյց լոյսոյն հաւաստեան յարութեան, ընդունելի համարեցես, կամ հա-ճեսցես լսել։

10 Կենարար քո կէտ։ Ընդ իս միասցեն զանազան չարչարանաց կամ անօրէնութե քո մատանցն կամ զօրութե. զորս և ՚ի կենդանութեանս ունիմ զեղ ընդդէմ բազմազան հնարից սատանայի. որպէս գնի կար-գաւ ՚ի համարն դ։ Օծեալ, լինիցին ինձ գործի կամ հնարք անմահելի զինուց, ընդդէմ չարաչարեալ, ընդ իս միալով մեջս՝ իբրև քարինք պարսա-տկաց առ ՚ի հալածել զգունդն սատանայի։ Մարթ է ես իմանալ առ զօրաւորն նշխարս կենաց փայտին, զխաչն, և զայլոց գործեաց չար-չարանաց փրկչին։ Կամ, իմանալ զխորհրդական նկարն, որք ՚ի պա-տանս մեռելոց դրոշմեալ կան։

11 Մորտն ոչ առ Իս։ Պատերազմին զոր ՚ի մահուան իմ, կամ յետ մա-հու առնէ ընդ իս սատանայ, քո տէր յա՝ փանեսցի. զի յորժամ յառ-նէ նա մարտնչել ընդ իս՝ սեսանելով զմերձեցեալս ՚ի մահ կամ զմե-ռեալս իբրև քաղաք մի ունայն ՚ի զօրաց, և ձգտեալ զարկանել զերծ, զբե-րանս կամ զլեզու՝ որ իբրև փող ազդ առնէ զգալուստ թշնամեաց, ա-ղաղակն, անձայն, լռեալ, յայնմ փանզի զքեզ ունիմ պահապան, և այլն։ Նմանի զի յայս զլուխ առ քո են գեղք աղօթիցն. բայց ՚ի յա-ջորդ համարն դ. յերրորդ գէմս խօսի՝ բայց յերկուց հատուածոց. և ապա դարձեալ առ քո փոխէ ՚ի համարն է։

12 Զօրութեան պէտրոնեան, զաղօթան՝ զոր մատոյց քո տէր մեր։

13 Ի մեծիր երկիր թառանելի։ այլ օրին. թաթանել։

14 Եօթն հողանի նիւ։ 4 օրին. նոյ։ եթէ նեղութիւնս ցաւոց արտացէ

յիս սատանայ, [illegible], յորդաչափ կամ սուտ քրտունք փրկչին՝ խառնեալ արեամբ՝ [illegible], սատապեցուցէ զսատանայ։

15 [illegible]։ Եթէ զհոգի իմ, կամ զիղձս որոյ յընթացից բարեաց յետս ձգեաց, կամ արգելցէ, և այլն։

16 [illegible]։ Եթէ բանադրեսցէ զիս սատանայ ուրանալ զպարգև լուսաւոր յորդութեն, կամ յաւիտենից կենաց, փրկչին համբերելն հայհոյութեցն՝ որք լինէին յանծանօթս հրէիցն, [illegible], զհրեայն ընդ սատանայի պապանձեցուսցէ։ Եւ եթէ զաղանի նեսս խարէութեն յիս արձակեսցէ, [illegible], հնարաւոր կամ ճարտարագործ կարթն (այսինքն չէնկէլ, կամ զանճայ) ձգեալ 'ի կալարճից հօրն, կամ քնի, նմա պատահեսցէ և յետս դարձուսցէ։

17 [illegible]։ Եթէ պատրուակու բարեայ ինչ համարձակեսցի սատանայ մտանել ընդ աչս իմ, այսինքն 'ի մխտակորս կամ յանարժանս խոտորեցուսցէ զաչս իմ, կափուցն ծածկեալ զլխոյ [illegible], լրացուցչին կամ կատարողին ամենից, այսինքն քնի փրկչին, զսատանայ սանձեսցէ։

18 [illegible]։ Եթէ յանդգնեսցի կապել զհամարձակութիւն ձեռացս յաղօթել, կամ 'ի գրել զաղօթքս, կամ 'ի գործել զբարիս։

19 [illegible]։ կախարդական կապանօք, կամ ծրարօք ինչ։

20 [illegible]։ այսինքն անամօթեալ, յանդգնեալ. այլ օրէն. [illegible]։

21 [illegible]։ Մեղմ կամ անուշակ խածմունս, որք են ցանկական խլըտմունք։

22 [illegible]։ Եթէ ընդ պարանօք առաջին ճռշակման ադամայ փակցէ զիս, այսինքն 'ի նեղքոյ սխալից՝ որ 'ի մեղացն ադամայ, զօրութեամբ փայտի խաչին ընդդիմեսցի, և այլն։

23 [illegible]։ Եթէ ցասմամբ մահաբեր փորձութեանց զիս պաշարեսցէ, և այլն։

24 [illegible]։ Զհազարամեայ կապանս սատանայի՝ զոր գրեալ սուրբն յովհաննէս (յայտն. ի. 2.) ոմանք 'ի վարդապետաց իմացան ճշգիւ, իբրև թէ յետ հազար ամաց գալստեան քնի՝ լուծանելոց իցէ սատանայ. որպէս իմանայ և սարգիս մեկնիչ (Ձ. յովհ. ճառ. Ը. եր. 773։) Բայց այլ վարդապետք իմանան զմիջոց ժամանակին՝ որ 'ի քնէ մինչև 'ի կատարած աշխարհի, յորում առնեն լուծանելոց է սատանայ, այսինքն թողլ տայ նմ՝ զի 'ի ձեռն նեռին մոլորեցուսցէ զմարդիկ։ Այսպէս իմանայ և անդրէաս կեսարացի՝ մեկնիչ յայտնութեն։ Այլ և սա ինքն սուրբս գրիգոր. զի յարէ զկնի. [illegible], և այլն, այսինքն յետ լուծանելոյ 'ի հազարամեայ կապանացն՝ [illegible] դարձեալ կապելոց է 'ի վերջին շղթայս յաւիտենական արգելմանն. յորում ոչ ևս կարող է մոլորեցուցանել զմարդիկ. և բաղդատութե այսր յաւիտենական կապանաց՝ զառաջին կապանսն կոչէ [illegible]։

25 [illegible]։ Եթէ գժուարեցաւ սատանայ ընդ առաջին հարուածն՝ որ քնիւ եղև, ըստ որում խորտակեաց զզօրութի նորա, [illegible], այսինքն խապառ պարտաւորութեանն՝ որով 'ի կատարածի աշխարհիս բոլորովին խորտակի զօրութիւն նորա, և մնայ միայն գեհեանն, յիշեսցի նմա։

26 [illegible] 'ի [illegible]։ Այս բան առարի և կայի ընդ յետին բանին, [illegible], [illegible], և այլն։

27 [illegible]. այսինքն զպարտաւորութիւնս, որպէս և 'ի բանն ԺԹ. ըժ. 2։

28 Լեռնամիջոց ադամանդ ։ Հին լուծ ․ զցանկական շարժմունս խնո-
նոյ, բայց անյարմար է ․ այլ խնամոցի է կակուղ կամ՝ նեղութեան ցուցոց
որ յերկրկամանս ։ յառաջնոյ (?) ․․․ այսինքն նուաղեալ ընդոստ որ զկայս
իմ կարէ ․ կամ՝ յուսահատիչ հոգեով մտածութեանց և փորձութեանց
ցանկալի իմ ։

29 Թախծանաց բանից ։ այսինքն Թախծանաց կամ՝ տրտմութեան ։

30 Ի լսելութենէ համբաւոյն ։ Ի լրոյ կամ՝ 'ի լսելութենէ համբաւոյն ։

31 Փրկութեան մեծի ։ Նաև յեղանել հոգւոյս իմոյ՝ կարող ես փրկու-
թեան մեծի, այսինքն 'ի յաւիտենական փրկութիւն իմ ։

## ԲԱՆ ՎԱԹՍՈՒՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ
առ նոյն աղերս մաղթանաց բանի ․

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Բայց քանզի 'յոյժ սաստիկ է բան խոստմանց Քոյին ա̃յ առ իս քան առ սկզբնահայրն չարեաց սատանայ ․ զի վասն նորա յայն սակս յայտնեցաւ, զի լուծցէ զգործս նորին ․ և վասն իմ՝ զի զհնացեալ պատկերս նորոգեսցէ ․ [2] առեալ զկերպարանս բոլոր էութեան կերպին խոկութեան մեծին ա̃յ՝ միացեալ էութեան անշուշտ խառնութեամբ ։ [3] Նորա ոչ են շնորհեալ 'ի բազմացն, և ինձ զբազմապատիկն եհեղ առատութեամբ ․ վասն նորա ոչ երբէք չարչարեցաւ, և վասն իմ՝ հանապազ պատարագի ․ Նա անհաղորդ է կենացն, և ես միշտ վայելեմ 'ի փրկութեանն ․ Նա վանեալ է խաչին, և ես զօրացեալ նշանաւն ․ Նա հեղեալ 'ի լուսոյն, և ես միացեալ ընդ փառացն ․ Նորա ոչ խոստացաւ հանգիստ և յերկրի, և ինձ զերկինս սեպհականեաց ․ զնորայն [3] կլարեաց զառհաւատչեայ, և զիմն առանց խղճից յառակայեաց ․ զնա յերանակս խաղին արգել, և յիս ինքն զօրացաւ ․ զնա կարծեաց օրինակեաց, և զիս ճառագայթ նշանակեաց ․ զնա սողնոց նմանեցոյց, և զիս իւրովն անուամբ կոչեաց ։

Բ. Նաև ես զերախտիս ա̃յ լքի զպարգեւանաց բարեաց արարողի, և չարին զհետ մտեցայ՝ հայել ընդ նմին յատակս դժոխոց, ահա անարժանս բարեաց, [4] անձիւրս և-

բախտակցաց անընդդիմանակս սորոյ, տատանիք մեղաց ձգեալս, յերիկամանց խորոց խոցեալս, քանցեալ ծառս արմա-ւենւոյ, գինին յեղաշրջեալ, ցորեանս հեղեղեալ, մար-հակս ջրեալ, վճիռս պատառեալ, կնիքս այլակերպեալ, Նմանութիւն փոխեալ, արկանելիքս կիզեալ, ընթա-նակս կորուսեալ, նաւս ընկղմեալ, մարգարիտս ման-րեալ, ակնս պատուական սուզեալ, տունկս գօսացեալ, Նեցուկս խորտակեալ, փայտս անհնարին փտեալ, [5] մնա-քաղաքս աղաւաղեալ, յարկս տապալեալ, խորանս խար-խալեալ, բոյսս արմատովք խլեալ, ձէթս հեղեալ, [6] 'ի գռեհս աղբեաց, կաթն հոսեալ 'ի կոյտս մոխրոյ, այլ մահու [7] 'ի յարեանց գնդից․ Քանզի միշտ խրատեալ ընդ Երուսաղէմի առակաւ Ոողիբայի 'ի մարգարէիցն ձայնից անձն իմ՝ ողբալի, և ոչ ինչ խրատեցեալ․ որ առ-տէն անգոսնեալ եմ՝ և անդէն խայտառակեալ, աստ գոռոզեալ և անդ կշտամբեալ, աստ ձաղեալ և անդ նախատեալ, աստ թշնամանեալ և անդ յանդիմանեալ, աստուստ աքշեալ և անդանօր քքեալ․ Աստ հեծումն և անդ հառաչանք, [8] աստ կործիս և անդ կատարած, աստ խէթ և անդ հատուցումն, աստ արկածք և անդ հան-դէպ պատուհասի, ուր ոչ է [9] բան իրաւանց և ոչ ձայն պաղատանաց, ոչ թիւք աւուրց և ոչ երբ ժամանակաց, ոչ ուղք յուսոյ և ոչ դրունք ողորմութեանց, ոչ աջ պաշտպանութեան և ոչ ձեռն այցելութեան։

Գ․ Եւ դու ապաւինութիւն, դու ինքն փրկութիւն, դու այցելութիւն, դու և քաւութիւն, դու երանութիւն, քև բժշկութիւն, քո ողորմութիւն, միայն հզօր, կեն-դանի, անմահ, տէր Յիսուս Քրիստոս բարերար ամ․ օրհնեալ, օրհնեալ և փառաւորեալ օրհնեալ, ընդ Հօրդ քո որոյ յաւէտ բարձրացեալ 'ի փառս հայրենի խնկութեան մե-ծիդ յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

---

1 Յոյժ որդոր է բան․ Բնութիւն արդարութեան այլ առաւել պարտա-ւորէ զիս քան զտառանոյ․ զի նա թէպէտ և սկզբնահայր չարեաց եղև, սակայն յետոյ ոչ տուաւ նմա ակզի թողութեան․ ոչ շնորհեցան նմա բազում բարիք շնորհաց․ ոչ վասն նորա չարչարեցաւ Քն․ զուրկ մնաց 'ի կենաց․ վանեցաւ խաչիւն․ հեղըեցաւ 'ի լուսոյ, ոչ տուաւ նմա հան-դիստ և յերկրի․ յոյս նորա կորեցաւ․ յանդորդ կենդանիս արդելուլ, և նոցա նմանեցաւ։ Իսկ ինձ պարտելի ամենեցուն հակառակն պարգևե-ցաւ քնց․ և 'ի վերայ այսր ամենայնի ես տակաւին չքի զելանխոհն ազ․

և զհետ չարին գնայի։ Ապա առաւել է իմ պարտաւորութիւն քան զսատանայինն։ Այս բաղդատութի ոչ հայի բացարձակապէս յառաւելութիւն մեղաց և պատժոց մարդոյն քան զսատանայինն. զի սատանայ գոլով գործիչ մեղաց, և գրգռիչ ամենայն մեղուցելոց, միանգամայն անյագ 'ի չարութեան, մեծ են նորա մեղքն և պարտաւորութիւն քան զմարդոյն. այլ հայի միայն 'ի մեղս ապերախտութեան. զի եթէ ըստ աւետարանի վճռոյն՝ որում շատ տուաւ, շատ խնդրեսցի 'ի նմանէ, ապա և 'ի մարդոյն՝ որում բազում երախտիք շնորհաց եղեն քան սատանայի, առաւել պահանջի. ուստի մարդ 'ի մեղանչելն առաւել ապերախտի առ ած, քան զսատանայ։

2 [illegible], զմարդկային բնութեան [illegible], ամբողջական, զհոգի՝ զմարմին, զմիտս, զկամս, հանդերձ ամենայն զգայութեամբք և անդամօք. [illegible], այսինքն իսկական բնութիւն մեծին այ՝ յանձն որդւոյն առեալ զմեր բնութիւն, [illegible], միաւորեաց ընդ ինքեան [illegible], իսկական կամ իրական միաւորութեամբ։ Կամ, [illegible], իմացեալ փոխանակ անձին, զորմէ ասացեալ եմք 'ի բացատր. չորակն. համար 257. ասելն՝ կերպ իսկութե, ունի նշանակել՝ պատկեր անձին հօր. այսինքն որդին այ պատկերն անձին այ հօր առեալ [illegible] զբոլոր մարդկութիւնս, և այլն։ Նմին մօք իմա և 'ի կատարածի բանիս, 'ի [illegible]. տես և 'ի հն. ը. 20։

3 [illegible]. այսինքն զհաստատութիւն յուսոյն, կամ զխոստումն այ առ սատանայ՝ որ նախ քան զմեղանչելն, որով խոստանայր նմա զփառս՝ եթէ կայցէ 'ի հնազանդութեան. և 'ի չկալն նորա քակեաց ած զխոստումն իւր։ Ի [illegible], զիմ առհաւատչեայն յուսոյ, կամ խոստմանն այ՝ նաև յետ մեղանչելոյս՝ առանց խզելոյ [illegible], յերկարեաց կամ միշտ պահեաց, սպասելով դարձի իմում։ Դիտեա 'ի բովանդակ բանիս՝ զիարդ յերկուց ներհակաց զծայրագոյնն կարգէ դէմ ընդ դէմ, կարի սաստկացուցանելով զբաղդատութիւն, միանգամայն և զմարդոյն ապերախտութի։ Սատանայի, ասէ, սակաւ բարիք շնորհեցան, այլ ինձ բովանդակն առատապէս։ Վասն նորա ոչ երբէք չարչարեալ քո, վասն իմ միշտ. նա զուրկ 'ի կենաց, ես միշտ 'ի փրկութեան վայելող. նա խաչին հալածեալ, ես խաչիւ զօրացեալ. նա անլոյս զխաւարն, ես 'ի բուն 'ի փառսն միացեալ. նմա և ոչ յերկրի հանգիստ, և ինձ երկինք բացեալ իբր հայրենիք. նա 'ի խորս փակեալ, 'ի յիս քո ինքնին բնակեալ. նա գարշելի սեաւ [illegible] կարճի նմանեալ, և զիս ճառագայթ կոչեաց, աշխարհի լոյս էք ասելով. զնա օձի հանգոյն անուանագրեաց, և ինձ զիւր զքրիստոնեաց անուն և անշիջելի կնիք մկրտութեամբն։ Այսպէս զսատանայ օձից և կարճոց նմանեցուցեալ, հայի 'ի բանն « Ահա ետու ձեզ իշխանութի կոխել զօձս և զկարիճս » և այլն։

4 [illegible]։ ոչ առող զձիր, այսինքն անշնորհակալ երախտեաց։ [illegible]. ոչ ընդունող, արհամարհող ածային սիրոյն, չճանաչող զգթութեանն այ։ [illegible]. փոխանակ գնելոյ՝ 'ի խորս երկկամանց խոցոտեալ, այսինքն 'ի բուն 'ի ներքին ախորժակս հոգւոյ վիրաւորեալ։

5 [illegible]. այսինքն եղծեալ, ապականեալ։ Իսկ [illegible] է բառ յունական. զորոյ նշանակութի բազումք այլ և այլ մեկնեն. բայց առաւել հաւատի է նշանակել զառնելն՝ որոյ արմատն է իբրև զգէմս մարդոյ, ուստի և անուանի՝ մարդատակ, և այլով անուամբ [illegible]. ունի պատուղ նման խնձորոյ՝ անուշահոտ, որպէս

և ծաղիկ նորա անուշահամ է, և միով անուամբ Խնդրափոր ասի ասունին, պտուղն, և ծաղիկն։

6 Ի գահոռ աղբեւոյ. 'ի փողոց արքայից (չեւխիլխանա։)

7 Ի շարժման գնդին։ Ի գնդէ կամ 'ի ժողովոյ արհամարհելոց՝ ես եմ այր մահու, այսինքն մահապարտ։ Բայց յայլ օրինակ ասի. 'Ի շարժման գնդին. և առնել պատշաճ թուի կարգի բանին. որպէս թէ 'ի գնդէ ապստամբաց կամ քաջաց՝ ես միայն եմ մահապարտ։

8 Ըստ ձուլածոյ. ըստ կազմած երկիւղի, կամ ըստ կարծիք յուսոյ՝ թէ գուցէ ապրեցայց 'ի տանջանաց. և ըստ ձևացածոյ, կատարումն երկիւղին, կամ 'ի գերև ելանել յուսոյն։

9 Բան ծրագրոյ. բան ջատագովութեան կամ արդարացուցանելոյ։ Ոչ Բնիկ աւուրց. ոչ գոն 'ի համդերձեալն թիւք աւուրց. և ոչ ծայր ծանօթից, վախճան ժամանակաց. ոչ ուղիք յուսոյ, ուղեք կամ ճանապարհ յուսոյ. այսինքն, անվճար են տանջանքն, և անյուսալի ազատութիւն։

## ԲԱՆ ՎԱԹՍՈՒՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ 'ի յիշատակ աշխարհութեան վերադարձելոցդ՝ որք յօծուած են սպառնալիք ինձ ժամանեցեալք, զինչ՞ դատապարտեցայց 'ի նորոգ ողբերգութեանց, և կամ որպէս զցամաքումն աչաց հեղեղք արտասուաց։ Օ՜ի եթէ զորեքվտակեան առաջս գետոցդ յորդահոսան ծաւալմանցդ, որ զԵդեմ և զերկիր առ հասարակ ողողանեն՝ լիապէս բաւականութեամբ բաշխեալ ամենայնի, և [1] զըղխումն ելից խուրեանց առ աչս իմ եղեալ, զանձինս մեղաց սաստկութեան զբոց զովացուցանել ոչ բաւականացին։ Եւ կամ [2] մարգարէին սրբոյ ըղձականութիւն կրկին ինձ լցցի գլուխս ջուրց բազմութիւն, և ճրագարան տեսութեանց կերպիս՝ աղբերց կայլակմանք, զեկման օդւոցս չափել զվտանգ ոչ ձեռնարկեցեն. և ոչ [3] եղերականք Ջայլեց համօրէն բանահիւսից կանանց լալականաց 'ի սիրտ և յոգի վիրաւորելոց՝ զաղէտ վտանգիս 'ի յերգ արկանել և կամ 'ի նուագս ձայնից բերել։

Բ. Իմ է օրն լինելութեան նզովեալ, և ոչ Յոբայ կամ Երեմիայ. քանզի ատելի է օրն նոցա, զորոց մի

'ի նոյանէ ոչ արժէ աշխարհ, և ոչ տարագրելի. ապա ուրեմն [4] զիս նկատ եղեալ զոչ արժանիս լուսոյ և կամ միոյ մանաւոր բարւոյ, զհանգիստն աւուրն անիծին՝ յորում ես զատայ կորստեան որդիս և մահու դրացիս, մշակս մեղաց և արբանեակս անօրէնութեանց։ Որ ոչ կացի յախտին կենաց՝ զոր դու սահմանեցեր, ով բարերար. ոչ գնացի 'ի քո պատուիրանն կենդանական անմահացուցիչ. ոչ վաստակեցի 'ի հաճոյս արմտեացն, որով 'ի մուտս ձեռանն [5] աւուրցն խաւարութեան կերակրել պատրաստեցայց. ոչ կառուցի ամրութիւն որմոց և ոչ ձեղուն յարկաց ձգեցի, որով 'ի շնչմանէ մրրկաց օդոց պահեցայց. ոչ համբարեցի 'նշխարս պաշարաց 'ի յուղին անեզրական, որով զատագնայ սովոյն իմ բժշկեցից. ոչ հանդերձաւորեցի քեզ աղերս աղօթից, որով առաջի քո կալ համարձակեցայց. ոչ կազմեցի թռչակ փրկութեան վարուց մաքրութեան, որ [6] վնորդութիւն ինձ երաշխաւորէ. ոչ ետու զընտրութեան հաշիւն 'ի կենցաղոյս ճանապարհի՝ խոյզ մատչին, զի 'ի դատաւորին ձեռանէ ատենին խոյս [7] փրծայց. ոչ լուծեամբ ձեռին օրհնութեան մատեայ յանդիման, որով օրէնսդրին մատակից գտայց սրբեցեալ։ Ոչ զխնայ ետու զգուշութիւն և ոչ թիկանց պատսպարութիւն, ոչ աջոյս իմ զինուորութիւն և ոչ [8] ահեկիս պարածածկութիւն, որով 'ի պատերազմիս վտանգէ զերծայց. զերիվարս ոչ զգեցուցի զրահիւք, և ոչ զմարտիկս սպառազինութք, որով զճակատն յաղթահարեցից։ Օ կանուխն ոչ կազմեցի պտուղ, և անագանին ոչ ժամանեցի, և ահա տարակուսիմ ունայն 'ի բարեաց. մաքրութեան ծաղիկ ոչ ունիմ և ոչ իւղ ողորմութեան, և զիշերոյն մայլ՝ աննշոյլ. 'ի նիրհումն մահու ննջեալ եմ, և տագնապ կոչողին փողոյ ստիպէ. զզարդ հարսանեացն կրկին մերկացայ, և զձէթ վարուցն վերստին լքի, և դուռն մտին հարսանեաց առաջի փակի։

Դ. Ես արդ զիա՞րդ առից մխիթարութիւն այսքանեաց վշտաց, և կամ [9] ընդ որքանեա՞ց տարակուսանաց խաւարի՝ լուսաւորութիւն յուսոյ կենաց խառնեցից, և կամ ո՞ւր արդեօք զզարշապարս ոտին կառուցից, և կամ յո՞ր վստահութիւն զաչս իմ յառեցից, և զի՞նչ անդորրութիւն ծփմանցս նկատեցից, և կամ յո՞ր ըղձական

գիտութիւն ձեան համբարձից։ Զի եթէ 'ի ձեղուն բարձրութեան երկնի, անտի անձրեւեաց հուրն Սոդոմայ, որպէս ասացեալ է. իսկ եթէ [10] յատակ խորութե՛ երկրի, սա երաց զկոկորդն ըմբռնողական և եկուլ զԴաթան բանակօքն Աբիրոնի։ Եթէ յանդգնեցայց փախչել յունողէն, ցուցէ կայցի զիս վիշապն ահագին։ Եթէ ընդ ծովամս ինչ թափառեցայց, արագունք են խնդրել զվրէժ ստացողին առաւել առ իս քան երբեմն զՅովնան առ մասամբ [11] մանկունս բեթելացիս քրմորդիս։ Եթէ յամենատարած օդոյս պարզութիւն, այն եղև եգիպտացւոցն խաւար շօշափելի։ Եթէ 'ի թըռչունս բարձանց, նոքա են կոչեցեալք 'ի սպանդն զօհին [12] բաւորայ գիտականացն։ Եթէ 'ի տկարն խիզախեցից, վասնզի [13] 'ի պիծակացն, և զի պիտոյ են ինձ առիծունք։ Եթէ յարջոցն պատառողաց ապրեցայց, մըժիխքն արեան ծարաւիք ինձ պատահեսցեն։ Եթէ յանհօգս ուրեք նստիցիմ, [14] մժղուկքն անարգագոյնք՝ իբր ցնցուղս հրոյ եռացման զինև մաղեսցին։ Եթէ յեղջերէ միեղջերւոյ փախուցում զերծեալ, նկուն [15] ճիճուք աղկաղկաց ճճւոցն մրմռքողաց՝ զիս կեղեքեսցեն։ Եթէ 'ի սենեակս շտեմարանաց խորշից ղօղեալ ամփոփիցիմ, տաղտկատեսակ գարշութիւն զորտոցն [16] մեղաց օրինակքն զիս ղաղրացուսցեն։ Եթէ 'ի վայրս ինչ անդաստանաց կացեալ զետեղեցայց, շարք [17] շանաձանձոցն տարմից զինև պատեսցեն։ Թողում ասել [18] զխառնիճն և զջորեակն զզօրն զօրաւոր ընդ թունաւորն թըթուր և ընդ անկենդանական երևելի, համդերձ ջրակարծ կարկտիւն և ապականագործ եղեմամբն. որ առ աչաց տեսիլ ապաշէնք և նուաստագոյնք, բայց 'ի յակնարկելն Տէր յաւէտ զառաջաբար ուժգնութեամբ հարին հանին վանեցին զհպարտն ամբարհաւաճութիւն Փարաւոնի բռնութեանն բուռն զաւազանին՝ յաղթող վիճակաւ. որ են կերպարանք թարուցելոցն կրից ըկողաց անձնականացն աներևութից եգիպտացւոցն անօրէնութեց՝ [19] յօդի և 'ի մահ տանջողաց՝ զաղտնի ճնշողաց։

Դ. Արդ դու ամենազօր արարիչ բնաւից տէրդ բոլորից, 'ի յատեանն համդիսացիր հերքել զնոսա. և ինձ ողորմեա կրկին զթութեամբ ձեռն մատուցեալ փրկութեան տարակուսեցեալ կոչկոճեալ վարանեալ 'ի մահ

պարտէլցյս ։ Օ՜վ դու միայն Ճանաչիս ամ փառաւո-
րեալ միշտ ընդ Հօր Հոգւովդ սրբով յաւիտեանս յա-
ւիտենից . ամէն ։

---

1 Զբղխ[illegible] : Զանկն՝ ուստի ելանեն չորեքին գետքն . եթէ , առէ , զչորեսին գետս եդեմայ՝ և զակն նոցա յայս խմ եղեալ բղխեցեմ , ոչ են բուսական զովացուցանել , և այլն ։

2 Մ[illegible] : Եթէ ըստ բազմաց երեմիայի (Թ . 1 .) կրկին եա քան զնորայն լցցի գլուխս ջուրց [illegible] . մի օրին . [illegible] . առաջինն առաւել համաձայն է բնագրի մարգարէին , որ ըստ ձեռագրաց գնի . « Ո՛ տայր գլխոյ իմ ջուր » . այսինքն ո՛ տանէր գլխոյ իմ իբրև ջուր ։ Ըստ այսմ և բան սորա փոխադրելոյ խմանի . այսինքն լցցի գլուխս իբրև ջուրց բազմութե[ա]ն , կամ իբրև առաւել ջրոյ ։ Սակայն առաւել մեկն և ըստ կարգի առյ զիմաստն , եթէ չարադրութեն այսպէս զատցի ։ [illegible] , այսինքն առաւելապէս լիս կատարեսցի . [illegible] լինելով ջուրց [illegible] , և [illegible] (2 օրին . [illegible] .) անասնելիքս լինելով [illegible] , համանդք , կամ համբչք աղբերց ։ Եթէ այս եա լինիցի , առակաւն զկնանց խորտակման հոգւոյս մեղաց՝ ոչ [illegible] , ոչ կարասցեն ցուցանել որչափ է ։

3 [illegible] : ոչ եղերական ձայնք ողբոց , կամ ողբալին ե- ղանակք լալականաց՝ կարասցեն լնուլ երգել զաղէտ վտանգիս ։

4 Զ[illegible] : Յորժամ յոր և երեմիա նզովէին զօր ծննդեան իւրեանց , ոչ այնչափ զիւրեանցն զխանն նզովել . զի օր ծննդեան այն- պիսի սրբոց [illegible] է , այսինքն ուրախալի ։ Այլ զիս նկատելով , կամ յիս հայելով , որ չեմ արժանի լուսոյ կամ այլ ինչ բարւոյ , այնու անի- ծեցին զօրն , և այլն ։ Բայց 4 օրին . և հին լուծ . գնեն , [illegible] , և այլն . և խմանի , զիս նկատելով իբրև արդեն ե- ղեալ կամ ծնեալ՝ զանարժանս լուսոյ ։

5 [illegible] : 2 օրին . չէք [illegible] . և խմանի՝ 'ի սկսա- նել աւուրց ձեանն ։

6 Զ[illegible] . այսինքն յապաշխարութեանէ , հա- ւատով ։

7 Փ[illegible] : այլ օրին . [illegible] : Ոչ վճարեցի զհաշիւ մեղացս ընդ մաա- նչին առաւօտոյի . որով առաւէն աղատէի 'ի ձեռաց դատաւորին ։ [illegible] : Թուի հայել 'ի բանն ելից (լբ . 29 .) « Լցէք զձեռս ձեր այսօր տեառն խւրաքանչիւր յորդի իւր , և խւրաքանչիւր յեղբայր իւր՝ տալ 'ի վերայ ձեր այսօր օրհնութի » . այսինքն կատարեցէք զկամս իմ 'ի վերայ որդւոց և եղբարց ձերոց՝ սպանանելով զնոսա . ուստի և օրհ- նութի տեառն լիցի 'ի վերայ ձեր ։ Ըստ այսմ և սուրբ վարդապետս առէ , ոչ լցի զձեռս իմ սպանանելով զանդամս իմ զերկրաւորս . որով օրհնեալ , մանանկից լինէի [illegible] մովսեսի , որբեալ և նուիրեալ տեառն իբրև զորդիսն ղևեայ ։

8 [illegible] : ձախակողմեան շուրջանակի ծածկա- թիւն 'ի ձեռն փոհանի ։

9 [illegible] : մի օրին . [illegible] ։

10 [illegible] . 2 օրին . [illegible] ։

11 [illegible] ՚ի Գ. Թագ. Ը. 23. ոչ յիշատակի՛ թէ յորոց էին մանկունքն. բայց քանզի ՚ի բեթելայ էին նոքա, սուրբ վարդապետս համարի լինել որպէս քրմայն՝ զորս յերոբովամ կարգեաց ՚ի վերայ բարձանց երկնչոյն բեթելայ (Գ. Թագ. ԺԲ. 31. 32։) Զի և կատակել նոցա զեղիսէէ՝ կարծի արարեալ ՚ի խրատուէ ծնողացն, զորս վասն այն կոչեաց մարգարէն՝ որպէս յանցանաց և գատարկութեան։

12 [illegible]. արիւնաշաղախ գլխականցն. է բանն եզեկիէլի (ԼԹ. 17։)

13 [illegible]. որք են խայթիչ կենդանիքն նման մեղուի (եշէկ առլուլ։) [illegible], մժեղունք (մոծակ. սիվրիսինէկ։)

14 [illegible]. փոքրիկ ճանճք գինւոյ կամ խաղողոյ. [illegible], երբեմն ցայամանք բոցոյ (այսինքն խըվըլճըմ.) [illegible], ՚ի վերայ խմ մանր թօթափեցին երբեմ ՚ի մաղէ։

15 [illegible], ճանճքն, [illegible], անզօր մնոյն, որք են փոքրիկ մժեխք։ Բայց 2 օրին. [illegible]։

16 [illegible]։ Այս չէք յօրինակս ինչ, և սատր խիկ թուի ՚ի կարգէ բանին. զի սուրբ վարդապետն յիշելով զգանազան պատուհասաց՝ որ յեգիպտոս և ՚ի քանանացիս, գիտէ միայն ցուցանել, թէ զօրութիւնն աց նաև փոքր և անզօր իրօք պատուհասէ զմարդ առանց զէրծանելոյ. և ոչ գիտէ յայս առնել, թէ այն կենդանիք որոց օրինակք են. ուստի յայլ բանն ոչինչ այդպիսի բացատրութի յաւելու։ Եւ որպէս թուի, այդ յաւելուած յայլմէ եղեալ ՚ի լուսանցոն իբրև լուծումն, յետոյ ՚ի գրչաց ՚ի բուն բանն մուծեալ է։

17 [illegible]։ բազմութեան կամ ժողովոյ չանաճանճից, որք են (կէնէ։)

18 [illegible] և [illegible]. որք են այլեայլ տեսակք մարախոյ։ [illegible]. անչափ փոքրիկ ոջիլ բուսոց, որ իբր անկենդան երեւի։ Այսպիսիկ հայրն ՚ի բանն յովելոյ (ա. 4։ Բ. 25։) [illegible]. ջուր կարծեցեալ, բայց իբրև քար հարկանող և այրող։ Այս բառ երբեմն կարծիք նշանակէլ՝ ՚ի ջրոյ կարծրացեալ և սառուցեալ. համարելով թէ բառն [illegible], երբեմն կրրատանէ գլեռին չ առան, բայց այդ ոչ սատուգեալ։ Որ [illegible]։ Այս անհնայն յիշատակեալք բառ տեսութէ աչաց անդէն, կամ տեսար գոլով և անարգ, ՚ի հրամայելն աց սատոտիկ զօրութի հարին զհպարտութն փարաւոնի [illegible], հզօր տէրութեն, [illegible], այսինքն հարին յաղթանակ կանգնելով ՚ի վերայ բռնաւորին։ Եւ են այսս օրինակք աներեւյթ և հոգեւոր աանջանաց՝ չարչարելոց ՚ի հոգի մինչև ՚ի մահ, ՚ի պատճառ եղիպտական անօրէնութեանց։

19 [illegible] և ՚ի [illegible]։ յօրինակս ինչ՝ չէք ՚ի [illegible]։

# ԲԱՆ ՎԱԹՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ, վասն զի ՚ի ձեռն մեծիդ և ամենահնար արուեստաւորիդ իմ եղանութեան տեառն և այ՝ իբր [1] ՚ի քրայս ընտրութեան փութոյ քոյ սիրոյ համապազ եռամ և ոչ երբէք պաղիմ, միշտ խառնիմ զուգիլ և ոչ ես միանամ, ահա զուր արծաթագործդ երկնաւոր իմ Ճարտարապետ, ՚ի մնոտիս վաստակեալ առ իս աշխատիս, ըստ մարգարէին յայանի առակի, և չարութիւնս իմ ոչ հալեցաւ. զոր ինձէն մոլեալ չարաչար՝ իբր զխելագար դիւաքախ իմն ողորմելի [2] յանդգնեալ անկարգս խօսիմ՝ զիմն զպարտիսս աճեցուցանել, քան հաշտութեան հնարս ինձ այսու կազմել: Եւ զի մի [3] անընդել դիպուած և անկիրթ պատահումն և անհաւասար հանդիպումն՝ պատրաստութիւնք հանդերձելոց տանջանարանացն ինձ երևեսցին, ամենևին անմռաց պահեաց սատակին ՚ի յիմում մարմնի նշխար մնացուածոց նախնումն անիծիցն. զոր ՚ի փոքուէ տարրէ անարգէ զմեծն է ուսանել:

Բ. Քանզի [4] խաղալն ինքնաբերական գիւտք որովայնի՝ բոտոք Ճապուկք շարժողականք և ազգխազգիք, որդունք աղեաց գաղտնակուրք, [5] խաղաւարտք հրակայծակք և բիծք բոյակիծք և անիծք անկերպաւորք և երամակք ոմանք քրտնածինք զազրաթորմիք կսկծեցուցիչք և մարմաջողականք: Եպատակք [6] այլոց վայրենեաց, ըստ նմանութեան դիւաց գիշերամարտից և մեկնաղէն բարբարոս փնդից խաւարասիրաց, և գաղանութեամբ քանասար գայլոց արաբացւոց, կորակոր գնացիւքն, արջնաթոյր գունոյն, կրկնապարոյր կռածագ կտցաւն, որ զօրէն ունի խայթոցաց կարճի, [7] իբր դըժնիկ փշովք խոցոտեալ ծծեն ձգեն զարեանն խմաւութիւն, և յանկողինս մահճաց հանգստեանն վաստակս

կրից ցուցանեն ։ Այլ կարկառեալ տրուք ձեռն՝ հասուցանել զհաստութիւն նոցա նոցին, վաղվաղակի զգան զմիաս փոխանցին՝ [8] զոր ազգէն մարմնոյն. և անդէն իսկոյն ըերկամարմին փոքր հասակաւն՝ իբր թեւօք ինն թռիչս արձակեն, և ըստ մարախի ձևոյ սոստոսեալ այսր անդր տարաբերին. և ըստ բազմապատիկ նենգութեան բարոյից դաւող աղուեսուց՝ խորամանկեալ խուսափեն [9] 'ի պատուածս բազում ելից, զի յերկիւղէ մահուն ապրեսցին ։ Այլ այնքան չքոտի և անքատ անձամբքն ոչ միայն զռամիկսն և զխառնիճաղանճս, այլ և զթագաւորս հզօրս և ահագինս փախուցանեն հանեն տարագրեն 'ի գաւառկոն յարկի ապարանիցն բարձրութեան, և կամ 'ի բացի բնակեցուցանեն. քաջք արանց արեաց, որք լիխեցին ամբոխից և տիրեցին ժողովրդոց և ածին զքաղաքս ազգաց, զպարտութիւն իւրեանց զօրաւոր ձեռնին ինքեանք վկայեն, թէ քանզի ոչ կարացաք 'ի դիմի հարկանել վեհիցն բռնութե, վասն այնորիկ խոյս տուեալ հասաք յայս տեղի ։

Գ. Այլ զինչ է ինձ [10] զփոքունց և զանկածից ծաղբակամնաց ոմանց դոյութեանց 'ի կիր արկանել, որք զօրեղ և անհերքելի ջատագովք են ծնութեանն՝ յիշատակել ինձ զհանդերձեալսն, որք 'ի մարմնոյս անօրինելոյ ընծայեին պտուղք դառնութեան ։ Ընդ որս և եկամուտ սատակչականացն ախտից զիւտք, և կերչացն կոյտք անողոքելիք. յորոց չէ զերծանել, քան թէ հարկաւ մարմնոյն վտանգի զապագայիցն սաքօք իմաստասիրել. և ոչ տեղի է գտանել ապաստանի՝ փախստեամբ անկանել առ նոսա. այլ առանց կամաց քումդ անհնարինութե և մարդկային կարք և հնարք վրիպեցան ։ Իսկ դու, բարերար, զամենայն ունիս բաւականապէս զկենացն հնար՝ եթէ կամեսցիս փրկել, նորոգել, քաւել, բժշկել և կենագործել. և քեզ փառք յամենայնի յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

1 Ի Խորայս ընթերցուածն ։ Ի ձեռն արարչիդ իմոյ՝ ինամօք սիրոյ քո իբրև 'ի քրոջս մայրութեան միջա եռամ, և ոչ երբէք դարձեալ, մայրիմ, որբիմ 'ի մեղաց. մի օրին. Դարձեալ ։ Միշտ խառնիմ առ 'ի լինել միաձոյլ զուտ առանց երկպառակութե ախտից. և սակայն ոչ մտանեմ ընդ իս և ընդ քեզ խաղաղութեք. վասն այսորիկ 'ի զուր աշխատիս 'ի վերայ իմ արծաթագործդ իմ երկնաւոր՝ ըստ մարգարէին Երեմիայ. Զ. 29 ։

2 [illegible]։ Ոչ գրանս աղօթիցս անկարգս առէ, այլ զի ըստ աղօթիցս ոչ ուղղեմ, առէ, զմարս իմ և զսիրտ. վասն այն յանդուգն և անամօթ եղեալ խօսիմ, այլ ինչ 'ի բերանի կրելով, և այլ 'ի մարս իմ. որով առաւել պարտաւորիմ աղօթիւքս, քան թէ հաշտութիւն գտանեմ։ Այսպէս առ 'ի զգաստացուցանել զիմաստութիւն իմ, զհանդերձեալ ատենանն յառաջ ածել՝ օրինակաւ պատուհասիցն զոր առաւէն կրեմք։

3 [illegible]։ Սկիզբն աղօթիցս առ ած եղեալ, առաւել փոխի յերրորդ դէմն։ Զի մի, առէ, հանդերձեալ պատուհասքն երևեսցին ինձ անծանօթ զխրատեալք. [illegible], անասելի պատուհասն. [illegible], անանուն հանդիսութիւն։ Վասն որոյ 'ի յիշատակ հանդերձեալ ատենանցն՝ եթող 'ի մարմնի իմում զնմանութիւն ինչ [illegible], այսինքն անիծիցն՝ որով անէծ ած զերկիր, բուսուցանել փուշ և տատասկ. յորում ծածկեալ են խնդրեալ լինիք, թէ մարմինս մեր ծնանելոց է փշաբերս կենդանիս և ախտս, որպէս զձուն, զորդն, զմիջատս, զոջիլ, զլու, զխաղաղաւորս, զբիծս, և այլն։ [illegible] 'ի փորի և յանդորր իրաց անաւ՝ որք զմեզ չարչարեն, կարեմք ուսանել զմեծ ատենանս հանդերձելոյն։ Զմերձեցելոց փշաբերիցս՝ առէ յառաջին անիծիցն թողեալ 'ի մեզ. վասն զի այսպիսի ծնանին 'ի մեզ յանմաքուր հիւթոյ, յաղտեղութենէ, կամ յօտար ջերմութենէ արեան. որք ոչ լինէին յանապական վիճակին անմեղութեան։

4 [illegible]։ Նմանեալն կամ եռացումն ինքնածին զիւտից որովայնի, որպիսի են [illegible], այսինքն ձձիք որովայնի փափուկք և կակուղք, որք 'ի փորի ծնանին և մեծանան. [illegible], որք կան յաղիս մարդոյն, [illegible]. Զ օրին. [illegible], որք զաղտ ուտեն զանուղիղ հիւթս կերակրոյն, կամ մաշեն զաղիս։ Դիտեա առաւել, զի յորում տեղւոջ սկսեալ մինչև 'ի վերջ անկատար ընթանայ բանն ասացեալ բայի. այլ յարելի է յայն որ առէ, [illegible], և այլն. իբր ասել. ինքնածին ձձիք և արածք մարմնոյ՝ լու, ոջիլ, և այլք եա բնածինք և եկամուտք, յորոց չկարեմք զերծանել, զինչ ծանուցանեն մեզ՝ [illegible]։

5 [illegible]։ Ռնգոյք մարմնոյ թարախոտք, յառաջ եկեալք յապականութէ արեան (չիզան. կամ [illegible]) որք իբրև հուր այրեն, կամ կարմրացեալ ծաղիւն իբրև կայծակն երևին։ [illegible]. մանրիկ բուշտք կարմրագոյնք, որ իբրև բոց կծանեն կամ եռացուցանեն. որպէս ծաղիկն, վարսակն։ [illegible]. յորժ մանուկք, որք իբրև ձու՝ երևին անձև, որպէս 'ի գլուխս մանկանց և կանանց։ [illegible]. բազմութիւնք ոջլոց, որք յաղտոյ քրտանց ծնանին, և զազրութեամբ լցեալք են, և եռացուցանեն զմարմինն։

6 [illegible]

[illegible]

այսինքն որոյ ծայրն ամուր կամ հաստատուն է, կամ կանաչ և ոլորկ, որ ունի զնմանութիւն խայթոցի կարճի:

7 Իբր դեղնի ծաղկի: Դեղնիկն կամ իբրև գոյական խմանի փոխանակ ածականի (առ ակբէն․) և կամ իբր ածական, գեղնեայ և գեղնագոյն փշովք:

8 Զօր ասէին հարցեալ: Զ որին․ հարցեալ:

9 Ի գործոյ, 'ի խորշս կամ 'ի պատուաս բոլոր նեղոց, բազում ձա-նապարհաց փոփոխական:

10 Զծերունին և զանկարծին: Այլ ասացի եղեալ կայր, ծերունի, ասկայն ուղղեցաք ըստ մեր օրինակաց․ զի զպատմականն հոլով պահան-ջէ բանն որպէս և յաջորդն՝ զանկարծին․ այսինքն ընդէր զծերբ և զանկար կենդանեաց ձեռնն, որք մերձ․ բայց եթէ 'ի ցուցանել՝ թէ հզօր և ան-յաղթելի պաշտպանք են իրաւանցն նոյ․ և ասքս այնորիկ են, որք 'ի նոյն խակ 'ի մարմնոյ մերձ ծնանին: Ընդ որս և զանկարծ: Հին լուծ․ ե-կամուտ առա խմանոյ զլուծ․ զի ոչ 'ի մէնջ ծնանի, այլ, այլ արտա-քուստ գայ: Որպէս զերունին զօջիլ, խմանոյ զօջիլն և զլուն: Բայց երկոքին են անպարտք․ զի սուրբ վարդապետն՝ ընդ բնածին կարգեաց զլուծ և զօջիլն․ և ասա յաւելու, թէ բայց 'ի ասցանէ՝ որք 'ի մերձ մարմնոյս ծնանին, են և արտաքուստ մնակալ անհար սատակիչք․ այս-ինքն զանազան հիւանդութիւնք, որք յարտաքնոյ օդոյ կամ 'ի թու-նոյ ներգործին 'ի մեզ: Այլ և զանազան բազմութիւնք կերչաց կամ ապականողաց, այսինքն մարախոյ, մկանց, գայլոց, առիւծուց, օձից և այլ գազանաց, որք անողորմք են, և ոչ կարեմք զերծանել․ այլ 'ի վե-րանց մարմնոյ անկեալ 'ի նոցանէ, բռնադատեմք ասքս զապարաց ամենայն 'ի մեզ բերել․ և չեմք ունելի ասպատանի անկանել առ նոսա, այսինքն փախչել յայն անցիս: Նա եթէ երբեմն մարդկային հնարիւք զերծանիմք յայնցանէ, այսինքն 'ի հիւանդութեանց, կամ յայլ վնա-սակարաց, կամք բարերարութեան քո յաջողեն այն հնարս, և ոչ 'ի մերձ ձարտարութենէ,

## ԲԱՆ ԵՕԹԱՆԱՍՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն ողբս մաղթանաց բանի․

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա․ Եւ քանզի համբարձեալ զընթացս բանիս 'ի փո-քունց աստի երկրայնոց չհամարելոց ընդ գոյս եղելոց՝[1] 'ի մեծագունիցն տեսակս, առաւել զտանելի հանդէս ի-բուանց ահաւորին անպատմութեան: Որ զի[2] թէ մեր-ձաւորագոյնք իցեն ոչ իբրև զնախածանօթ հայրապե-տութիւնն, և կամ մաքրագոյնք որպէս մարգարէն, կամ անքծագոյնք իբրև զառաքեալն, կամ ընտրելա-

գոյնք որպէս մարտիրոսն, եթէ ոչ դու մարդասիրեսցես ամենուաղ բարիդ և անփոփոխ խնամակալութեանդ և անպակաս ողորմութեանդ, ընդունայն է իմն փրկութիւն առ 'ի նոցանէ ։

Բ. Զի եթէ առ նոյն իմքն Աբրահամ ձայն արձակեցեմ, իբր ողորմագին առակ ընչեղին իմն վարդապետէ, 'ի տապոյ անտի պապակեալ, կաթի մի ջրոյ ոչ բաւականանայ. քանզի և նա փակեալ է [3] ընդ կարեօք հաստատակաց անհնարութեան ։ Իսկ եթէ առ Մովսէս, և նա զգածեալ է տկարութեամբ, որ ոչ զօրեաց անձն փրկութեան, որ [4] զհայթայթանաց կրկուսն 'ի պահպանութեանն աւուր ժողովէր. իսկ եթէ առ Ահարոն, և նա իւքնին իսկ կարօտացաւ մաղթողի. իսկ եթէ առ Դաւիթ, 'ի մէջ բարեացն առաւելութեան ստգտեալ է և նա. իսկ եթէ առ Նոյ և Յոբ և Դանիէլ, զորս Եզեկիէլ մարգարէ մեկնեաց՝ յանուանէ իսկ յիշատակեալ զնոսա, և զայն ընդ նոսին իբր 'ի դիմաց ա՜յ ազդեալ, կենդանի եմ ես՝ ասէ տէր, թէ ոչ ապրեցուսցեն զուստերս և զդստերս իւրեանց 'ի բարկութենէն որ հասանիցէ, բայց եթէ իւքեանք միայն ապրեսցին. իսկ եթէ առ Պետրոս վէմն հաւատոյ, 'ի քուեդ խնամոց [5] խուն մի խիթացեալ և նա ընդ կրիւք իմն գրաւեցաւ ։ Թողում ասել զբազմացն գումարութիւն [6] խոնարհեալ առ կարիս կարիս, թէ և յաւէտ երջանիկք իցեն. ընդ որս և [7] Յովհան ամ՜ն մարգարէի 'ի մէջ ծնաւաքն սպասաւորութեան մարդկօրէնն գայթագղութիւն՝ մնայ յալոյլից անթարգմանելի, թէ և 'ի դէմս իմն մեկնութեան ձևակերպեսցի ։

Գ. Այլ քանզի չափեալ սահմանեցաւ զօրութիւն փրկութեան մարդկան, և ցուցան նոքա ողորմեալք բարեբարիդ և զօրացեալք ամենակալիդ, կոչեցեալք պաշտպանողիդ և քաւեցեալք հնարաւորիդ, [8] չնորհեալք ազատեցուցչիդ և բժշկեալք անախտականիդ, կենդագործեալք անապականիդ և լուսաւորեալք նորոգողիդ, այսու հետև գիտացեալ զաւկն որքանութեանց հողածին բնութեանս, [9] որք մխիթար են օրինական նմանաբար հարազատապէս վհատութեան յուսահատելոց, ահա առ քեզ դիմեցից՝ որդի Աստուծոյ կենդանւոյ. Որ օրհնեալ յամենայնի ։ Մանաւանդ [10] զառաւելն ազգակից այսմ

մաղթանաց աստանօր յիշեալ, զմերապրելոյդ բան մերո-
ւոյն արդարացուցանէ. բարի է, ըստ իմաստնոյ ումեմն
երջանկի, անկանել 'ի ձեռս տեառն, և մի 'ի ձեռս մարդ-
կան. զի որպէս մեծութիւն նորա, և ողորմութիւն նո-
րին։ Եւ այս բան թէ և զՔաւութիւն իմն գծագրէր, որ
զերեքմանեան հարուածն մեծեան առաջի եդեալ՝ ընտ-
րեաց ինքնին կամաւորաբար զգատակնիք մահուն սա-
տակման՝ իբր զկենդանի Ք՞սի հաւատոյն յաճախու-
թեամբ, քան զերկուսն ես այլ փորձիւնս՝ որք տան-
ջեանն և ոչ ողորմին. սակայն և իմն օրինակութիւն բա-
նիս պատկերի [11] Ճարակեցելոյ հնարս կենաց կորուսեալս
անձին՝ ոչ է այլայլեալ յարմարութենէ. զի ոչ եթէ
զփրկեալսն նուաստացուցանեմ 'ի մատենի այսր ողբեր-
գութեան, [12] առանց որոց ոչ է մատչել առ տէր, այլ
զփրկողին անուն պատկեմ, և զշնորհ նորին առ ամենե-
սին բարեհաչակեմ, և զընտելին բարձունսն 'ի թախիծ
վարուց խոստովանիմ բանիս պայմանաւ յաւէտ [13] կա-
րօտեալ ողորմութեանն դեղոյ։

Դ. Ահա դու կեանք, դու փրկութիւն, դու բժշկու-
թիւն, դու անմահութիւն, դու երանութիւն, դու լու-
սաւորութիւն. արա ինձ անդորր 'ի մեղաց աշխատու-
թեանց, [14] զի և քեզ լիցի հանգիստ 'ի միտադատս հե-
ծութեանց՝ ձանձրացուցիչս թախանձանաց. որ ոչ այլ
իւիք, քան թէ փրկութեամբ մարդկան պարարիս, որհ-
նեալ յաւիտեանս. ամէն։

---

1 Ի մեծագունիցն տեառն։ Ի փոքր կենդանեաց անտի, որք չհամարին ընդ գոյս եղելոց, 'ի ստեղծեալ էակս (իբր զի 'ի թիւս արարածոց ոչ յիշատակի անուն լուոյ, ոջլոյ, և այլն.) համբարձեալ զընթացս բանիս 'ի կարգս մեծագունիցն, սատակիչ զգործ անաչառ իրաւանցն այ. իբր զի ոչ միայն տկար ստեղծուածքն վեհժինգիր են այ 'ի պատժել զյանցաւորս, այլ և գազք մեծագունից սրբոց անկարողք են 'ի մեր փրկութիւն, եթէ ոչ մարդասիրեսցէ ած։ Կամ, մեծագոյն տեառնս՝ իմա սատանի և զօրաւոր առաջեցեալս իրաւանցն այ, առ որս համեմատեալ երկրաւոր օրինակքդ, ոչ միայն փոքունք են, այլ և ոչինչ համարելիք։ Ցեաոյ 'ի կարգին յիշատակէ զչորս դասս սրբոց, զնահապետս, զմարգարէս, զառաքեալս, զմարտիրոսս։

2 Թէ հրեշտակութիւն։ Թէ և մերձաւորք այ և առաջինք քան զայլսն յածապաշտութե, իբրև քերովբէից հայրապետութիւն, իբրև զնահապետսն՝ նախկինն ճանաչողս և դաւանողս ճշմարտին այ։ 2 օրին. հայրապետութեանն. մի օրին. հայրապետութիւնն. և նովին մտօք իմանի՝ հայրապետք, և նախադրութեն ԽԶԼ. վարի ընդ հայցականի և ընդ տրականի։

3 [illegible] (Գաղ. Ժ. 26.)

4 [illegible] (Թուոց ԺԵ. 32.)

5 [illegible]

6 [illegible]

7 [illegible] (Գ. Թագ. ԺԳ. 1.) [illegible] ('ի Բ. Մնաց. ԺԵ. 5. 17. ԺԹ. 22.) [illegible] (Բ. Թագ. Է. 3. 4. 5.) [illegible]

նուիրեալ զգծագրու · ուստի և ած 'ի պատուհասելն զնա՝ պահելոց առ_
կաւսին զպատիւ ծառային իւրոյ: Այսպիսիք, և այլ ևս բանիւք՝ զորս
թողումք վասն համառօտութեան, մեկնի ըստ իւրաց ինչ մարգարէն զայ_
թակղութիւն մարգարէին այ · զոր միայն գիտէ ասատոր սուրբ վարդա_
պետս, առ 'ի ցուցանել՝ թէ արդարոց ևս պատուհասէ անկանի, որով ո_
ղորմութեանն այլ կարօտին: Այլ ոչ գիտէ ասել, թէ երկոցունց ևս մար_
գարէութիւն ծածկելոց էր, և թէ ած ևս նոյն հակառակ միմեանց մար_
գարէանալ (որպէս ասեն կարծեցին անզգուշաբար:) Այդպիսի մտաց
և ոչ նշանախեց մի կայ 'ի բանս սրբոյ վարդապետիս · նաև կարէր իսկ
ոչ այդպէս կարծել. յայտնապէս ասելով զկոյն (Գ · Թագ · ԺԳ · 18 ·)
թէ ասէաց նմա բեթելացի մարգարէն:

8 [illegible] · այսինքն ներուսն զանեալ յազատե_
ցուցեալ: Այսպէս զօրութիւն բազմաժամն են ամենայն սեռական ա_
նուանքն՝ որ յայսմ բանի:

9 [illegible] · · · [illegible]: 2 օրին · [illegible] · · · [illegible]:
Երկուքին ևս ռանին զպատուական միոս, այսինքն անուանելով զի և սուրբքն
'ի քէն զանին զզօրութիւն 'ի մեզանչելն, և այսու գիտելով զշատ կա_
րողութեան հոգեւորն բնութեան 'ի սիրալիտն նոյա, նոցա իւրև համակա_
րեք մեզ՝ խիւնեանց սրբնակս միխթարիչք լինին վհատութեան յուսահա_
տելոց, կամ միխթարեն 'ի վտանգութեան յուսահատելոց կամ լալեաց ·
վասն որոյ և ես առ քեզ գիտեցից, և այլն:

10 [illegible]: Զվճիան՝ որ նման է այսմ մաղթանաց · և է
բանն սիրալոյ (Ե · 22 ·) զոր և գուիթ առաց առ գագ · (Ե · Թագ · ԻԳ ·
11 ·) Այս բան սիրալոյ՝ [illegible]: Թէպէտ և զգու_
թի երից հարուածոց ընտրութեան յայս ասնէր, որով 'ի ասէլցն՝ 'ի հա_
լածմանէն՝ և 'ի մահուանէն ընարելոց զվերջինն՝ զմահն, որ յայլ լինե_
լոց էր, ուստի համզերձ ողորմութի, միանգամայն յանձնառութեամբ
'ի կամս այ մեռանելովն՝ կենդանիք լինէին հաւատովն յորութեան 'ի
ձեռն քնի · իսկ այլ երկուքն՝ սով և հալածումն թէպէտ և փոքունք
քան զմահ, բայց անմիջաբար յերկրորդ պատճառաց լինելով, ան_
զորմաբար ասնէին: Արդ թէ և գուիթ և սիրալք զընտրութենէ պատ_
ժոցն ասացին, ևս զնոյն օրինակեմ, ասէ, յընտրութիւն բարերարու_
թեանց, լաւ համարելով անկանել առ ած, քան առ արդարս 'ի մարդ_
կանէ: Եւ այսու ոչ եթէ նուաստացուցանեմ զսուրբսն, այլ զանուն
փրկողին մեծացուցանեմ, և շնորհաց նորա և ողորմութեան զամենեսին
կարօտ խոստովանիմ, որով և սրբոցն պատիւ տաւել մեծանայ · քանզի
զի տասել փառք են նոցա յայս ունել զամենայն · քան յինքեանց · որ_
պէս տասել պատիւ է մարդոյ՝ 'ի ձեռանէ թագաւորի համզերձ զգե_
նուլ · քան թէ խորովք գլխաւորք ասնել զայն և ագանել: Ուստի (յայտն ·
Դ · 10 ·) սուրբքն զպսակս իւրեանց դնէին առաջի աթոռոյն այ, նմա
ընծայելով զամենայն փառս և զպատիւ · նշանակելով թէ այս խոստո_
վանութիւն՝ էր նոցա պսակ փառաց:

11 [illegible] · խմա իբրև ներգործական, այսինքն ճա_
րակողի կամ խնդրողի հնարս կենաց:

12 [illegible] · այսինքն ասանց միջնորդութեան սրբոց:
Բայց զայս խմա ոչ բացարձակապէս և առ հասարակ յաղագս ամենայն
բարեաց՝ զոր յայլ ընդունելոց եմք · զի այսպիսի բացարձակ և ընդհան_
րական միջնորդ՝ մի միայն է յն քս տէր մեր: Այլ խմա զհամարձակ
մատչելոյն առ ած · զի սրբոցն արժանաւորութի և համարձակութիւն՝
առ մեզ տասել վստահութի մատչել առ ած · այլ և ըստ առաւու_
թեան մասնաւոր բարեաց՝ զորս ած առհմանեալ է շնորհել մեզ բա_

րեխօսութբ̃ սրբոց: Որպէս բարեկամացն Յոբայ սաստկանեալ էր առ թողութիւն աղօթիւք Յոբայ ( Յոբ. խբ̃. 8:)

13 Կարօտեալ աղքատութեանն: Այս ոչ հակառակի առաջելոյն 'ի բանն ՆԹ. 2. վասն սրբոց, թէ աղքատեալ են աղքատութեամբ: Զի արդարք գո-րով, չեն կարօտ քաւչական ողորմութեան կամ ներողութե, այլ ար-ժանիք պարգևաց: Իսկ տառապեալ խօսի ըստ մարդկային սխալմանց նո-ցա, առ որս կարօտ գտան ամ̃ ողորմութեն 'ի ներել, և երբեմն՝ առա-ւել քան զայլ մեղուցեալս՝ վասն բարձրութե շնորհացն: Տեսանեմք զի առաւել զայրացաւ ած̃ ընդ տրտունջ Մարիամու ընդդէմ Մովսէսի, քան ընդ տրտունջ ռամիկ ժողովրդեանն, ըստ բանին իմաստ ( զ̃. 8.) « Ռամիկն ներելի ողորմութե է. հզօրք հզօրագոյնս պահանջեսցին »: Եւ երբեք զի արդարն առաւել պէտս ունի ողորմութե առ 'ի զգուշանալոյ 'ի մանաւոր մեղաց ինչ. քանզի կեցեալն յարդարութե դըժուարաւ ճանաչէ զիւր յանցումն. որպէս Դաւիթ ասես բաղում ոչ ծանեաւ զմեղս շնութեանն և սպանութեն. մինչև պէտք եղեն ածա-ռաք յանդիմանութեն 'ի Նաթանայ առ 'ի զգաստութիւն:

14 Զի ի քեզ լիցի հանգիստ: Գեղեցիկ այլաբանութե է ընկենուլ հո-գւոյ 'ի յորդորել զգութն ածային. ապա թէ ոչ՝ ած̃ ոչ նայի 'ի զգա-կան հեծութեանց մեղաւորին, այլ իբրև 'ի ձայն քնարաց զուարճանայ:

## ԲԱՆ ԵՕԹԱՆԱՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ես քանզի [1] երջանիկքն և փառաւորեալք սըր-բոյն պալք, յորոց ունիմք դոյզն ինչ գթեցին և յաճա-խագոյնս հաստատեցան, փոքունս սասանեցան և մեծա-գոյն վաւմանէ նշուլից հոգւոյն մաքրութեամբ լուսաւո-րեցան. յորոց [2] միննն զզանգուածոյն յայտնէ զհաստա-կաստեղծն ակարութիւն, իսկ միւսն զգերազանցն քան զբնութեանն օրէնս, վարս և առաքինութիւնս հրեշ-տակականս: Ես արդ նոքա որ օրհնեալքն են յամեն-իշխան բերանոյ ածութեան հօրն Քնի, ընտրեալքն տօնեալքն խնկեալքն և բարեբանեալքն, իբրև զան-դամս Քնի պաշտեցեալք, և իբրև զօթեվանս հոգւոյն սըրբոյ յարդարեալք, [3] յորս չիք ինչ նշմարանք և կամ գիւտք խաւարի, այլ ամենևին անկեղծութիւն և լու-սաւոր արդարութիւն, և որքան մարթ է զմարդն ամ՝ ամ

նմանեցուցանել։ Աչերք պարզք և անպատկառելիք, կրօնք բարձունք և անխոնարհելիք, կեանք զգաստք և անստգտանելիք, [4] պաշտօն առ ած կարծր և անփոխարկելի, ընթացք արխականք և անկասելիք, Ճշմարտութի միատարր և անյեղելի, գիտնազբաւութիւն զօրեղ և անհերքելի, տեսաւորութիւն պայծառ և անապշելի, իմաստասիրութիւն վերնական և անկոխելի, պատկեր մաքուր և անաղարտելի։ [5] Որոց կերպարանս և գլխատակս անուանս աղաչել՝ ած խոկ վարդապետաց, և նորոգ հաճութիւն 'ի մէջ խռովութեան արարչիդ բան լուսաւորեաց։

( [6] Բանք պանծալիք հաշտեցուցիչք այ ։)

Բ. Ով ես անպիտանս յամենայնի, և որքան բան զօրէ պարսաւելոյ, որ մինչ դեռ արթունս եմ՝ նիրհեմ, մինչ դեռ զգաստ երևիմ՝ թմբրիմ, 'ի բարեպաշտելս իմում գայթագղիմ, մինչ դեռ աղօթեմ՝ և վրիպիմ, 'ի յընթանալս իմում և կասիմ, յարդարանալս իմ և մեղանչեմ, 'ի խաղաղանալս իմում ամբոխիմ, մինչ դեռ արշաւեմ՝ առ 'ի յետոյն հակամիտեմ, 'ի չուելն իմում՝ ընդ կրունկն դառնամ։ Ընդ լուսոյն մասին և խաւար յարեմ, ընդ քաղցրութեանն Ճաշակ՝ օշինդր խառնեմ, [7] ընդ կուղս բարեացն՝ չարիս հիւսեմ, ընդ կանգնելն և կրկին գլորիմ։ Ծաղկիմ և ոչ պտղաբերիմ, ասեմ և ոչ առնեմ, խոստանամ և ոչ կատարեմ, ուխտեմ և ոչ վՃարեմ, կարկառեմ և անդրէն ամփոփեմ, ցուցանեմ և ոչ ընծայեմ, մերձեցուցանեմ և ոչ մատուցանեմ։ [8] Ի Ճարակել խոցուածոյս անդրէն վիրաւորիմ, 'ի հաշտեցուցանելն՝ վերստին խռովեմ, [9] զուր հանդիսանամ և իրաւամբք պարտաւորիմ, [10] գրիմ և իսկոյն եղծանիմ, նաւեմ և [11] 'ի գիծն թուլանամ, սկսանիմ և 'ի հանգիստն ոչ ժամանեմ։ Կարգիմ և դարձեալ սասանիմ, ծնանիմ և կրկին հեղում, [12] շարունակիմ աստ՝ և անդ 'ի ստորևս հասիմ, բարդիմ և անդէն տաշորիմ։ Հիմն արկանեմ և ոչ գլխաւորեմ, սակաւ վաստակիմ և բիւրս վատնեմ, դոյզն գանձեմ և անթիւս սպառեմ, զայլս խրատեմ և ես ինքն անփոյթ եմ, միշտ ուսանիմ և երբէք [13] 'ի Ճշմարտութիւն գի-

տութեան ու հասանեմ։ Օ՜ չիջեալ չարիսն նոյնչափ
արծարծեմ, սուղ ինչ քաջալերիմ և առաւելապէս լը-
քանիմ, լարիմ և խոկ և խոկ առ նմին մեղկիմ, զայս
կարկառեմ և զայն պատառեմ, խլեմ [14] զեղինճն և տա-
տասկ տնկեմ։ [15] Ընդ ամբառնալն և այսրէն բերիմ, մը-
տեմ 'ի բոյնն աղաւնի և անտուստ ագռաւ ելանեմ,
գամ սակաւ մի սպիտակ և սրանամ դառնամ ընաւին
սևացեալ, առեմ զիս [16] քեզ դաւանել և սպանողին
նուիրիմ, ընդ յանդիման լինելն և թիկունս դարձու-
ցանեմ։ Ս՛աքրիմ և այլ մրճոտիմ, լուանիմ և նովին
զաղբանամ, կերպարանիմ զՊաւթին և գործք զՍա-
ւուղայն կատարեմ, չրթամբք ճշմարտեմ և ստեմ ե-
րիկամամբք, աջովս մատակարարեմ և ահեակ կողմամբս
աւերեմ։ Ընդ երկրագործութեան ցորենոյն՝ որոմն սեր-
մանեմ, [17] 'ի բարձրագոյն իմաստիցն՝ վայր իջեալ ես
ինքն գտանիմ։ Հրեշտականամ յերեսս և 'ի խորհուրդս
գիւանամ, [18] 'ի յոտս հաստատիմ և 'ի միտս տատա-
նիմ; սուտ ձևանամ և իրօք խոտորիմ, կեղծաւորիմ ար-
դար և արդեամբք ամբարշտեմ։ Պասիմ 'ի պարս հե-
զոց և ընդ այսս կաքաւեմ, 'ի մարդկանէ գովիմ և 'ի
տեառնէ պարսաւիմ, 'ի հողածնելոցս երանիմ և յոր-
դւոյն լուսոյ աւաղիմ, հաճոյանամ յետին ռամկին և
թագաւորից մեծի յաչաց ելանեմ։ Օ՜ ատեանն դատա-
ւորին թողեալ, [19] խառնակրօնիցն աղերսեմ. հելքեալ
'ի վեհիցն, [20] տսկականացն սպրդիմ. մարմնովս արտա-
քուստ պճնիմ, և անձամբս [21] երփնիւ ճայնին ճանաչիմ.
հպարտիմ դաշն հաստատել, և ուխտակորոյս արտաքս
մերժիմ։ Այսօր մաքուր հոգեկիր և վաղիւ մոլի խելա-
գար. զտէրունի պատուէրն լքեալ, թելադրութեան օ-
ձին հետևիմ. արիանամ զօրապէս, և վատթարագոյնս
ընկրկիմ. զծանրութիւն աւուրն բառնամ, և 'ի ժամ
վարձուն անմասն ելանեմ. 'ի բացուստ ճռամն խօսիմ,
և [22] 'ի պատասխանատուութեն պահու պապանձեալ կար-
կիմ. [23] 'ի յելս արևուն հարուստ երևիմ, և ընդ երեկս
ունայն դեգերիմ։ Յաթոռս ծերոց բազմեալ, և խե-
լայեղից կցորդիմ. նմջեմ խեթիւ, և արհաւրօք զար-
հուրեալ զարթնում։ Օ՜ անդաստանս կամօքս չարա-
չարս հերկեմ, [24] փոյթ խնամով 'ի չարիս, միշտ անա-
ռակ ոգիս, անդարձ տարապրեալս, անզղջական զառա-

ծեալս, անմխիթար տրտմեալս, ինքնագլուխ գերեալս, մահու և ապականութեան ծառայեալս, անողոքելի տանջեալս, անփրկելի մատնեցեալս, անպատուաստելի հարուածեալս, անարծարծելի շիջուցեալս, անկազդուրելի խորտակեալս, անհանդերձելի կործանեալս։ Նա եթէ պարտ է զաստիկն աստանօր ասել անօրինեալս անձին նախատինս, ահա գրեմ գրեմ և [25] ոչ անխայեմ 'ի խորախուս նկւթեալ գեհեննին։ [26] Ստացուածս նախանձու նորոյս Ադամայ երկնայնոյ, որպէս և Կայէնն առաջին հնոյն և հողեղինին. որ ունիմ զընաւն աստուստ 'ի յանձին զնշանակ ամբաստանութեանս, ոչ զընչիցս տուրեւառութիւն, այլ զբանիցս կշտամբութիւն։

Գ. Նա արդ ո՞ր իցեն փրկութիւնքն, որ սկզբնահայրն հաւատոց 'ի յուսահատութեանն վայրի զանդրդութեան իմ չարիս կրկնէ, մեծն մարգարէից քարամբք բանից կոչկոճէ, [27] արին բարեփառ աշտէին նիզակաւ 'ի մահ սատակէ, [28] պատկեր Ճշմարտին ընդ Ղուքարու համայնիւ ջնջէ, [29] ծածկեալն վեհից յարագոյն վրիժուց մատնէ, [30] մարգարէածին տեսանողն ընդ ամաղեկացւոյն առաջի տեառն սպանանէ, [31] նախանձաւորն ի՞յ երկնատեղաց բոցովն վառնէ, ստուերին լրումն և նորոյս սկիզբն՝ հեծանոյին ընտրութ̄ հոսէ, պետն առաքելոց ընդ Սափիրայի 'ի կենաց զրաւէ, զարմանալին քննութեամբ հոգւոյն՝ բուրումն ինձ մահու ընդ կենացն քարոզ խառնէ։ Արդ [32] անաչառք և ինձ կաճառք երջանկացն, և ուժգնութեան հրամանի վերնոյն արի սպառազէնք. ընդ հրեշտակացն և մարդիկ, ընդ տիեզերաց երկրի և տարերք, ընդ անզգայիցն և շարժողականք, որովք դատեալ միշտ լինիմ տուժիք լկանաց յօրինակ և յիշատակ սոսկալեացն ապագայից. իբր հողմով փոթորկի ալեաց յուզէտ մրրկեալ կենացս վստահութիւն, մնայ անկայուն 'ի հաստատութեանց։ Ո՞վ որ եթէ որ իմաստութեամբ 'ի քնին առեալ խուզեսցէ [33] զլողականացն բազմատեսիլ զանազանութիւն, զմանունս փոքունս ընդ մեծամեծայն դատեալ, որ առանց թուոյ և քանակութեան համարոյ [34] թխնդս առեալ անբաւ երամոց եռան զեռան սլանան 'ի մարմինս ծովու, վկայեսցէ և հաստատեսցէ Ճշմարտին լինել զասացեալս բանագրութիւն։

Դ. Արդ դու Տէրն օրհնաբանեալ անմահ թագաւոր բարի երկնաւոր մարդասէր Քրիստոս, այ՟ կենդանւոյ միածին որդի, հզօր բարձրեալ անքնին անճառ քաւիչ ահաւոր, սաստեա 'ի ձմեռան ամբոխեալ ալեաց ոգւոյս ծփանաց,[35] արձանացո զծարաւս մոլեգին շարժման երախ խռովութեան, ընդոստնեա 'ի սանձս կառոյ երասանաց ըմբռնման զցնդեալ մտացս վայրագութիւն։ Խզեսցի խաղաղութիւն հրամանաւ մեծիդ[36] ամենակալական բերոյս սատանման, սաստկեա խափանեա զբազմագլխեան անդամս ուրուականս գազանեաց անօթոյս երկրակենցաղ հինից։ Կորեսցեն[37] աղօթս մտամնայցս զայս նորընծայ տուր ողորմագէրս թախծագին ձայնի ողբերգութեան այսր մատենի. հան 'ի խորոց մահուս անդընդոյ չքնաղ ապրեցեալ ընդ մարգարէին փրկելոյ. ընկալ զխոստովանութիւն անձնադատ բանիս[38] 'ի հաշտ անուշից. շնորհեա մխիթար դառնութեան վշտաց ուժգին հեծութեան յուսահատելոյս։ Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք պատիւ և իշխանութիւն յաւիտեանս. ամէն։

---

1 Նշմարեսցին և բազմապատկեսցին։ Սկսեալ բանիս կամ զբաւթէ բայինչ պահանջէ. իբր ասել. երջանիկ են և փառաւորեալ սրբոցն պարք. և այլն։ Եւ կամ յարեալ է ընդ այնմ, որ օրհնեսցին են, 'ի բաց թողեալ զթարմատար բառս ինչ, այսինքն է ասել. երջանիկ և փառաւորեալ սրբոցն պարք՝ թէ և անանք զթեցին և հաստատեցան, սակայն ամենեքին օրհնեալք են յայ հօրէ, և այլն։ Զայս աղօթք խորհրդով զկնի բերէ անցելոյն. յորում զմարգարէն ակարութիւ արդարոց յիշատակելով, զի մի անպատուել ինչ այսու զնոսա կարծիցի. յաւելու 'ի մէջ բերել զգերազանցութիւն նոցա, առ որովք կարի փոքունս լինել առ է զնոսա վկայանս և զանկիմանս։

2 Յորոց միւ. այսինքն զթեւն սրբոց՝ զընտրութիւն մերոյ զհատուածոկաց ակարութիւն 'ի բարին՝ յայտնէ. Իսկ միւս, կանգնումն և հաստատութիւն նոցա 'ի բարիս՝ ցուցանէ զհրեշտակական վարս նոցա, որով գերազանց գոլոյն քան զմարդկեղէն բնութիւնս։

3 Յորս չէր իւր։ Խօսի զսրբոց ոչ 'ի վիճակ անկատար կենաց աշխարհի, այլ 'ի վիճակ կատարեալ շնորհաց և երանութե, յորում ոչինչ նշմարանք կամ գործ խաւարային ախտից գոյ 'ի նոսա։ Զմարդն այ՟ այ՟ նմանեցուցանել՝ զմարդն՝ որ իբր բնական պատկեր այ՟ է, այ՟ նմանեցուցանել 'ի գերբնականս շնորհաց և փառաց։ Կամ, Մարդ այ՟, խնա բառ միտաց առաքելոյն (Ա. Տիմոթ. Զ. 11.) այսինքն մարդ նուիրեալ այ՟, 'ի պաշտօն նորայն կարգեալ. զայնպիսի մարդն նմանեցուցանել առ այ՟՝ գերազանց փառաց սրբութեան։

4 Պայծառ ա ։ Աստուածպաշտութեն նոցա հաստատուն և անբա-

մինչ զի 'ի մէջ ալեաց կատաղութեան ոչ խեխ տեարայաւ, որպէս արբահամեան, յակարայն, յախտախայն, և այլոց։ [illegible] հատատոց սրբոցն՝ [illegible], մարմնով, և [illegible], անկարատ և անխափանլի։ [illegible], զմեկնութիւն յարձակումն նոցա ընդդէմ գիւղաց, ախտից, և թշնամեաց իւր, հզօր. 2 օրէն. և հին լուծ. [illegible], [illegible]. տեսութիւն մտաց յանծայնն՝ պայծառ և անշփոթ։ [illegible] [illegible]. իմաստութիւ սրբոցն՝ երկնային, և [illegible]. անյաղթելի յերկրաւոր իմաստութենէ, կամ անխոնարհելի յաշխարհական իմաստս։

5 [illegible] [illegible]։ Զմտաւորս առաքինութեանց նոցա և գլխաւոր անուանցն [illegible], ասանել 'ի միջնորդ և 'ի բարեխօս, [illegible] [illegible], ուստի 'ի հին և 'ի նոր օրէնս. և 'ի ձեռն նոցա հաշտիլ ընդ խռովելոց կամ բառնալ զխռովութիւնս բանին այ [illegible], ծանոյց։ Կամ, 'ի ձեռն նոցա ազդմունութե զամենայն 'ի բարեկութե այ, յայտնի ծանոյց բանն այ 'ի բազում տեղիս։

6 [illegible] [illegible]։ Այս մանկագիր 'ի մեր օրինակս գնի 'ի լուսանցսն. նշանակել թէ ոչ է սրբոյն, այլ յայլոց եղեալ. զոր յետոյ գրիչքն 'ի ներքս մուծեալ են. և ոչ իսկ հաւանելի է՝ թէ սուրբ վարդապետն ըզխոստովանողական բանս իւր կոչիցէ՝ [illegible]։ Վասն որոյ բառ կարգի յառաջին բանն յարկելի է յաջորդն. զի յետ բարեխօսութեանցն ըզկրօնս սրբոցն, առ նմին զանձին իւրոյ թերութեան խոստովանի ասելով։ Ըստ [illegible] [illegible], և այլն։

7 [illegible] [illegible] [illegible]։ Կալ է ոլորուած կամ կրկնուած չուանոց, կամ խառաց 'ի միասին (զաթ.) ընդ ոլորուածս բարի գործոց, առէ. չարիս խառնեալ. զոր օրինակ, 'ի պաշտելն, 'ի լսելն, յաղօթելն, և այլն. խառնեալ զչարն հպարտութե. 'ի յանդգնմանելն զյանցաւորս՝ խառնեալ զբարկութիւն, և այլն։

8 [illegible] [illegible]։ Ի զարմանել կամ 'ի բժշկել միոյ խոցուածոյս։

9 [illegible] [illegible]։ Առանց իրաւանց յառնեան ելանել, և 'ի քննութեանն՝ իրաւամբք պարտաւորեալ գտանել։

10 [illegible]. 'ի զգայութե կենաց բարի ինչ գործով, և [illegible] [illegible], գտանալով 'ի չարն։

11 [illegible] [illegible]։ Ի նուաճել՝ յաղիղ ընթացիցն, կամ յառաջեկայ յանդուգնաշրջելն թուլանալ. կամ անհոգանալ յաղթել զնուաճ։

12 [illegible] [illegible]։ Շարժիլ և կարգիլ յայս ինչ առաքինութի, և [illegible] 'ի [illegible] [illegible], և յայն 'ի միւս առաքինութեն փոփոխիլ և 'ի խզել թափիլ։

13 [illegible] [illegible] [illegible] [illegible]։ Ի բնագիր առաքելոյն (բ. տիմ. գ. 7.) գնի. 'ի գիտութե ճշմարտութե, այս է՝ 'ի ծանօթութիւն ճշմարտութե կամ ճշմարիտ վարդապետութե։ Դուցէ և սուրբ վարդապետս 'ի բանն գրուածս իւր եղեալ էր, 'ի [illegible] [illegible]. կամ գիտէ ասել, 'ի տառապութիւն հոգևոր գիտութե ոչ հասանել. զի այսմ նման ասէ 'ի փիլոնի բանն առ լևոմնիգոս. «խափանեն լինի առ 'ի ճշմարտութիւնն գիտութեան»։

14 [illegible]. որ է (ընդդէմ խոհին.) [illegible]. (տեսիլ ալկենի.) զփոքր չարն, կամ զնուազ մնասակարն խելմ, առէ, և զատուել չարն կամ զմնասակարն անելմ։

15 [illegible] [illegible]։ Ի վերանալն մտաց յերկրաւորացս՝ խորհուն 'ի խոնարհ իջանել գործեալ։ [illegible] 'ի [illegible]. 'ի անենակ իմ մտանել իբրև առանձնասէր և աղօթական. և առկայն ձանձրացեալ անհանդարտութեամբ, արտաքս ելանել յաշխարհական իրս։

16 Քէզ տուանէլ։ Քեզ ախտել, կամ ընծայել։

17 Ի ճոխութեան խմաւորին՝ ձայր մէշուլ եւ ինձ դատնիմ։ Յայլ օրին. ըստ եւս օրոշի, 'ի ճոխութեան խմաւորին 'ի ձայր մէշուլ. եւ ինձ դատնիմ. այսինքն. 'ի հոգևոր իմաստութեն կամ 'ի խորհրդոցն զրկեալ, գտանիմ որպէս եւ յառաջն՝ ախտաւոր, երկրաւոր, և այլն։

18 Ի յուս հատուածիմ։ մի օրին. հատուածիմ 'ի յուս. այսինքն մարմնովս կամ հաստատուն 'ի մի տեղի, այլ մտօքս այսր անդր տարուբերիմ։

19 Խառնակութեան աղերսիմ։ Թողեալ զօրինաւոր և զարդարադատ դատաւորն, զանօրէնսն՝ կամ որք ըստ հաճոյից և վասն շահու անձանց դատին, աղաչեմ։

20 Առաջնորդաց տարբերիմ։ Ի մէջ ամենայն խառնիմ։

21 Երբեմն ձայնին։ Բնական անարգ գունով ձայնին երևիմ։ Այսօր [illegible]։ Այսօր կամ այժմ տեսանիմ ամենայնիւ մաքուր, անարատ, բոլորովին զհոգի սուրբ զգեցեալ, իբր անմարմին եղեալ. իսկ ճաշէ. յետ սակաւուց ցուցանիմ մոլեալ յախտս մարմնոյ, մարմնաւոր, և [illegible]. վասն զի այսպիսի յանկարծ և արագ փոփոխումն ծայր 'ի ծայր՝ ոչ է առաքինական ակարութեն, այլ խելագարութեն գործ, որպէս յանկարծ լալ և յանկարծ ծիծաղել։

22 Ի գործախառնութեանն։ 2 օրին. 'ի գործախառնութեանն։ այլ. գործախառնութեանն, կամ գործախառնութեանն։

23 Ի յետս [illegible]։ Ընդ առաւօտս հարուստ երևիմ զանազան բարի՝ բայց անգործ յառաջադրութեամբք, ուստի ընդ երեկս դատարկ գտանիմ 'ի գործոցն։

24 Փոյթ [illegible] 'ի [illegible]։ Այս չէք յերիս օրինակս։

25 Ու [illegible] 'ի [illegible]։ Գրեմ համարձակ զմեղադրելիսն՝ առանց խնայելոյ յիս՝ որ խոտ կամ այրելի նիւթ եմ գեհենին։ Բայց 2 օրինակք գրեն, [illegible] կամ [illegible]. և մարթ է առնուլ զառ ասացուած. այսինքն նիւթելով կամ պատրաստելով այսու զպատճառս այրման գեհենին։

26 [illegible]։ Որգես բարկութեն նորոյս ազգածոյ քնի, որպէս եղև կայէն հնոյն ազգածոյ. որ [illegible] կամ [illegible] առացաւ, սակայն եղբայրասպանութեամբն և անզղջութեամբն եղև չար ասացուած ծնողացն. ուստի և ես իբրև զնա կրեմ յանձին զնշանակս ամբաստանութեա, [illegible], ոչ զկենդանութիւն կամ զպահպանութին 'ի մահուանէ, որ առաւ կայենի առ 'ի մշտադատ դատախազութի անձինն, այլ զկշտամբութի բանիցս, որք են իբրև նշանն եղեալ 'ի կայենն։

27 [illegible]։ Փենեհէս որդի եղիազարու, որ քաջ գտաւ և փառաւոր 'ի սպանանել աչաւխ զպոռնկեալսն։

28 [illegible]։ Յեսու՝ օրինակ ճշմարտին յսի։

29 [illegible]։ Դաւիթ արքայ, [illegible]. գաբաւոնացւոյն վրէժխնդրութեն մատնեաց զորդիս տանն սաւուղայ ( բ. թագ. իա։ )

30 [illegible], այսինքն սամուէլ. [illegible]։ Այս բան չէք յերիս օրին։

31 [illegible]։ Եղիա. [illegible]. յաղթանակս մկրտէ. [illegible]. [illegible]։

32 [illegible]։ Արդ ըստ օրինակի յիշատակելոցս՝ անաչառք են առ ի՞ս նաև զանգք [illegible], որք առաւել հրամանին այ զինուորք և պաշտօնեայք են, և այլն։

33 [illegible]։ զծովու կենդանեացն, որք լող տան 'ի ջուրս։

34 [illegible]։ Թնդալով, ամպին ընթացիւք կայտառալով։ Իմաստ բոլոր բանիս է, թէ ամենայն արարածք հակառակ ինձ յարուցեալք, իբրեւ զծով ալեկոծեալ կամ յամբոխման։ Իսկ ծովու նմանեցուցանել զիս, կամ զմարմինս՝ ամենայն որ վկայեսցէ, ՚ի քննելն ըզբաղմազան ախտս մարմնականս՝ որք իբրեւ ձկունք մեծամեծք եւ փոքունք զեռան ՚ի մարմնիս անդուռ թուով։

35 [illegible]։ Զ որին. [illegible]։ Դադարեցո, խափանեա զծարաւս։ Յայտնի է մաղթողական բանս զիսկ զնմանութիւն անցելոյն յիշման մարգարէին. [illegible] ՚ի [illegible]. իբր ընդ առաջ արգել ասէ ձեռն զատաւորեալ մտացս կատարութիւն, որպէս զկէտ յիշման։

36 [illegible]։ Յամենայն կողմն ցրուեալ ձիւնախառն հողմոյս։ [illegible]. որպէս զանդամս վիշապ ձկանն՝ որ եկուլ զյովնան, խափանեա, ասէ, զախտս մարմնոյս. որոց խորհրդանշքն ա. նին զլուխ, եւ ասին անդամք հոգւոյն՝ բայց [illegible], այսինքն նմանական կամ օրինակաւ. [illegible], որք են իբր հէնք (զօրանալ) շրջեալք կամ բնակեալք յերկրի մարմնոյս. կամ են հէնք ցամաքայինք, որք շրջին ՚ի ցամաք երկիր բնութեանս։

37 [illegible]։ Զայս գրաւորական ողբոց ձայնս՝ համարեա իբրեւ զաղօթս յովնանու, զոր մտաց մատոյց ՚ի փորոյ կիտին։ Նա ասէ, [illegible], այսինքն նորոգ յարմարեալ, եւ ոչ թէ նոր գիւտ ա. նելով։

38 Ի [illegible]։ Ընկալ զայս խոստովանութիւն փոխանակ պատարագին՝ զոր խոստանայր յովնան յաղօթն, եւ մատոյց քեզ յետ ելանելոյ ՚ի կիտէն։

# ԲԱՆ ԵՕԹԱՆԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզի առ նոյն ազերս մաղթանաց բանի.

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արդ, ահա ձեզ ասեմ, ով եկեղեցիք միաձայնք եւ աշակերտութիւնք կրօնաւորաց, որք մերկանդամին մատանց ձեռօք առ ախտակալութիւն յաւոյն պարգեւաց բարեաց անբաւից տեսան զինուորեալք, որոց զայս սեղան հանդերձանաց խորտկաց բանից ընծայեցուցի, ընկալարուք զայս աւանդութիւն խոստովանութեան ՚ի չինուած փրկութեան հոգւոց։ Ծանեարուք ամփոփեալ զմարմնոյս պարտութիւն, յիշեցէք զմարդաբեականն ընդ առաքելականին առեալ մեզ ՚ի խրատ, զի մի պարծեսցի ամենայն մարմին առաջի իմ, եւ զոչ որ է արդարն եւ ոչ մի։ Օտարանականն մի մնասցէ, ՚ի

կատարածն իսկ պատուիրանին գողջիք զձեզ ծառայս անպիտանս. մի՛ եղիցի լինել ձեզ որպէս խաբողին. [2] ըզգուշացարուք և զգոյշ, թէ կերակուրք նորա ընտիրքն։ Քանզի և ես իսկ, որ զայս նուազութի միանաւոր պըտղոյ ձեզ ջամբեցուցի. վկայեալ զանձնէ կամաւորական ստգտանք բեւր բամբասանաց անբժշկական մեղանաց, [3] 'ի սկզբնահայրն սկսեալ մինչև 'ի սպառումն ծննդոց նորա՝ կամայականն յանձնառութեամբ հասուցի եդի զիս ամենայնիւք պարտական չարեաց։

Բ. Լուայ [4] յումեմնէ ոչ պարտաւորէ, և ոչ հաճեցայ, 'ի յասելն նորա անյարմարապէս առ այն, որոյ առաջի ոչ է արդարանալ մարմնոյ երկրածնի, թէ ոչ երբէք շնացայ, ոչ պոռնկեցայ, և ոչ զաշխարհիս ինչ համբուրեցի ճաշակս մահու։ Այլ ոչ ընդհատ ինչ յանօրէնութենէ. թողցէ նմա տէր ա̃ծ զայսոսիկ. թէ և յիմարութիւ իսկ գրեցաւ, ոչ ընթացաւ, որքան թէ գրթեաց, 'ի յասել զանյարմարսն 'ի գլխոց ժողովողեանն Իսրայէլի բանիւ. Ո՛ զաքարիայ, օրհնեալ տէր, և մեծացաք. որ է փարիսեցւոյն ձայնի կերպարան։ Բայց ես քանզի գիտողին ա̃յ մատնեալ եմ դատաստանի, որ ըզկիրս աներևութիւն մտաց 'ի կշիռ եդեալ՝ համարի դատել զիս նորօք ամենիւրուք հատուցմամբք, ոչ կերպարանեցայց տեսողին, ոչ կեղծաւորեցայց քննողին, ոչ ստեցից [5] զոչ գործեցեալսն նկատողին, ոչ խաբէութեամբ ընդ միտ ինչ մտից մեծին, ոչ 'ի տեսիլ բարւոյ ցոփութեան զչարս քողարկեցից, ոչ 'ի պատկեր ընտանի զապիկարս երբէք յարդեցից, ոչ [6] խենեշացայց 'ի զարդ օտարոտի, ոչ պճնեցայց այլով պայծառութեամբ, ոչ պաճուճանս յարմարեցից տգեղութեանս գեղոյ։ Ոչ որ մեղաւոր իբրև զիս, ոչ որ անօրէն, ոչ որ ամբարիշտ, ոչ որ անիրաւ, ոչ որ չարագործ, ոչ որ վրիպեալ, ոչ որ սխալեալ, ոչ որ մոլեգնեալ, ոչ որ խարդախեալ, ոչ որ շաղախեալ, ոչ որ ամաչեցեալ, ոչ որ դատապարտեալ, ես միայն եմ և այլ ոչ որ, [7] ես ամենայնն և յիս ամենեցուն։ Ոչ հեթանոսք, զի ոչ գիտէին. ոչ հրեայք, քանզի կուրացան. ոչ տգէտք և խանձիճաղանջք, քանզի յիմարք էին իմաստից։ Ես վարժից կոչեցայ յանձինս դատախազ. ռաբբի ռաբբի անուանեցայ, և զգօնեան առ ա̃ծ եղծի, բարի ասացայ առ եղկութեն ժառանգու-

թիւն. սուրբ վկայեցայ 'ի մարդկանէ, որ եմ անմաքուր առաջի ա̃յ. արդար դաւանեցայ ա̃մ լրօք ամբարիշտս. հեշտացայ 'ի գովեստ մարդկան, զի ծաղր եղէց յաւենին Վ̃չոյ. յաւազանէ կոչեցայ Որթուն, և ես 'ի քուն մահու ննջեցի. 'ի փրկութեանն աւուր Հսկող յորջորջեցայ, բայց զգաստութեանն այս կարիւցի: Ահա զատաստան, ահա յանդիմանութիւն, [8] ահա նոր կշտամբանք և հին դատապարտութիւն, ահա ամօթ դիմաց և տագնապ հոգւոյ, ահա [9] խնդիրք փոքունց և կշիռք մեծամեծաց:

Գ. Ո՛վ դու միայն տէր ա̃ծ մարդասէր, անոխակալ և երկայնամիտ, համարեաց մեղապարտս անձին ընդ վերջին պարտաւորութեան աւուրն ահաւորի զայս կսկծեցուցանող ինքաբանականնախատինս: Մի՛ լուայց 'ի քէն զայսոսիկ, գթած, փոխանակ զի ես ինձէն անձինս զրեցի: Որդ բարձցես և [10] վերացուսցես զպահ պարտաւորութեան կանոնիս ընդ քեզ կապելոյս տենչանօք հոգւոյս: Հան զնախատինս պատկառանաց խայտառակութեանս, ծածկեա աջովդ կարողութեան զորդեղ տեսակ մարմնոյս մերկութե, մատո համգատեան [11] զթօպեալս ուժգին մեղացս բեռամբք, կարգեա ինձ սահման հետոց բարութեան առ եւս կենացդ, պահեա յիշատակ ինձ ողորմութեան և զկնի մահու կեանք ամենեւին, օրհնեալ յերկինս և գովեալ յերկրի, բարեբանեալ միշտ յամենայնի՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

1 [illegible]: Աշակերտեալ անձինք կամ ժողովք մտաւորակեցաց: Որք [illegible], փոխանակ ասելոյ՝ մատամբք ձեռաց, այսինքն որ՝ անզէն ձեռօք զինուորեալ էք ա̃յ, ակն ունելով անբաւ բարեաց յերկինս. որոց և զայս բանական անդան իբրեւ 'ի զանազան խորտկաց՝ ընծայեցի ըստ ձերում խնդրոյ: Ընկալարուք զայս իբրեւ աւանդ կամ տուր խոստովանութե 'ի շահ հոգւոյ, և ոչ թէ 'ի գայթակղել կամ 'ի զարմնել: Քանզի թէպէտ ըստ բազում մասին՝ զղջական բանք են և յանդիմանութիւք՝ յայանիչք անհամար թերութեանց մարդկան, բայց խառն ընդ գեղոց առ ա̃ծ յուսադրութե՝ լինին իբր խորանիկ համեմեալ առ այնոսիկ որք առողջ մտօք ճաշակեսցեն:

2 [illegible]: պահեցէք կամ յիշեցէք զբան գրոյն (ամբակ. ա̃. 16.) զոր հին լուծ. սխալմամբ ընծայէ յորսոյ:

3 [illegible]: Յազգամայ նախահօրէ սկսեալ մինչև 'ի վերջին ծննդոց՝ զամենեցուն յանցանս և զվրիպմունս վկայեցի զանձնէս, իբրեւ ամենայնին պարտական: Մի թուեսցի թէ զպատշաճ սակաւ բանիցս ձեզ մատուցանելով, զձեզ պարտաւոր ցուցանել կամեցայ այսքան

չարեաց. այլ մանաւանդ զանձն իմ միայն խոստովանիմ պարտական։ Իսկ դուք հարցէք իւրաքանչիւր իւրում խղճի. բայց առանց խաբելոյ զանձինս ձեր, և մի՛ նմանիցէք միում, և այլն։

4 [illegible]։ Զայս մարթ էր իմանալ 'ի վերայ հպարտ փարիսեցւոյն, թէ ոչ յաւելոյր զինի սուրբ վարդապետս, [illegible]. զոր վասն փարիսեցւոյն ասէ՝ ոչ յարմարի։ Ուստի իմանի զայլմէ ումեմնէ բարեկրօն անձնէ առ իւրով ժամանակաւ. յորմէ զայնպիսի պարծենոտութեան բանս լուեալ էր, և թերևս 'ի պատճառս աղօթական բանից սորբոյս առաջեալ իցէ նորա զայնպիսի բանս. իբր ոչ հաճելով ընդ ամենապարտ խոստովանութիւն սորբոյս, և սուտ բանիւ ձևանալ կարծելով. որպէս թէ ասել, ես ոչ շնացայ, և ոչ պոռնկեցայ, և ոչ գողացայ, և այլն. և զիա՞րդ ասա առ ած մատուցեալ խոստովանիցիմ այնպիսի մեղաց պարտապան գոլ։ Սակայն սուրբ վարդապետս լուծանէ զխիղճ նորա, և անիրաւ ցուցանէ. զի խօսել զայնպիսի բանս առաջի այ՝ ոչ է հեռի յանօրէնութէ, յորժամ պարծանօք ոք ասիցէ. և զի խորհրդով սխալելն յայնպիսի յանցանս՝ ընդ գործով սխալելոյ պարտաւոր կացուցանէ. և ոչ կարէ ասել ոք, թէ ես և ոչ խորհրդով ընաւ յանցեալ յայսոսիկ. ապա յորժամ ամբաստանէ զանձնէ առաջի այ՝ ոչ խօսի սուտ։ Վասն այսորիկ [illegible]. այսինքն թէ և ճշմարիտ իցէ նորա պարծանքն, սակայն [illegible], 'ի գնալս առաքինութե յառաջելով, [illegible], ամբարտաւանութեամբն, որպէս թէ ասել զանյարմար բանն իսրայէլացւոյ՝ զգլխոյն 'ի զուգար. (Ժա. Յ.) [illegible], այսինքն գոհութի տալով այ վասն կարծեցեալ կամ սուտ մեծութե առաքինութեց, որ և է նման ձայնի փարիսեցւոյն։

5 [illegible]։ Ոչ առեցից այնմ՝ որ նաև զոչ գործեցեալսն ստանէ. այսինքն կամ զորս արտաքին գործով չեմ արարեալ, բայց խորհրդով հաճեալ եմ. և կամ թէպէտ այժմ չեմ գործեալ, բայց յետոյ գործելոց եմ։ [illegible]. ոչ խաբէութե համարձակեալ առաջի այ։ Ու 'ի [illegible]. այսինքն ոչ ընդ կերպարանաւ բարի համարձակութե՝ զչար համարձակութիւն ծածկեցից։ Կամ, ոչ ընդ պատրուակաւ բարի քաղաքավարութե, բարեբարոյ և խոնարհ ընտանութե՝ ծածկեցից զչար քաղցրաբարութի, որպէս Աբեսաղոմ 'ի ներքոյ քաղցր և ընտել բարեմարդութեան առ իսրայէլեան ժողովուրդն՝ թաքոյց զհայրասպան ապստամբութիւն (Բ. Թագաւ. ԺԵ. 5. 6։) Ու 'ի [illegible], ոչ իբրև բնաւորական պատկերաւ կամ ձևով երևեալ, որպէս ցուցից զնկարս, զողորմելիս, ըստ առակի իշոյն՝ որ զանձամբ արկեալ զառիւծենին՝ իբր մորթ իւր բնական, ահարկու և հզօր ձևանայր։

6 Ու [illegible]. այլ օրին. [illegible]։ ոչ զարդարեցայց անպատկառաւէս օտար զարդուք առաքինութե. որպէս լինի՝ եթէ ոք 'ի գովելի գործոց ընկերացն և կամ նախնեացն՝ պարծանս յանձն ձգիցէ, զինքն ոչ գոլով այնպիսի։ Ցայսոսիկ բանս յառաջ ածեալ զառասպելն ճայլին կամ ագռաւուն, որ պճնեալ զմարմինն օտարոտի փետրովք՝ առ 'ի թաքուցանել զբնաւորն տգեղութիւն։

7 [illegible]. այսինքն վերադրեալ զանազան յանցաւորքն բովանդակ ես եմ։ [illegible]. ամենայն մեղուցելոց յանցանքն և պատժապարտութիւն յիս գտանին։ Իսկ թէ այս, և այլ ես անցեալ բանք՝ որպէս ճշմարտութե ասին, տես 'ի ԿԵ. ըծ. 1։ Քանզի յորժամ ճանաչէ զանձն ունող միահամուռ յանցանացն՝ որ յայլ յանցաւորս կան ցրուեալք. հարկաւ զհետ գայ՝ զի ամենեցունցն լինիցի յանձին իւրում։

8 Անհաճոյ կոչումն, առեալ 'ի նշանակութիւն անուանս․ զի Գրիգոր կոչեցայ 'ի մկրտութեան, որ թարգմանի՝ հսկող, արթուն․ և սակայն գործովք թմրեալ և անզգայ եղէ, որով և անունս լինի խիստ կշտամբելի։ Եւ հին դատապարտութեան․ նոր կշտամբութիւն անուանս հաստատէ զառաջին զդատապարտութիւնն՝ զոր արդէն յանձին կրեմ առեալ այլ մեղօքս։

9 Խնդիրք ձայնոց։ Այսինքն և վասն անպատուութեան անուանս լինի քննութիւն, հարցափորձ, որ փոքր կարծի քան զարհամարհութիւն այլոց պարգևաց քոց․ և սակայն Կշիռ ծանրածանր․ ընդ մեծամեծ յանցանաց կշռեալ է։ Վասն զի անկարգութիւն մեծ է և ամօթալի խաբէութիւն, յորժամ գործք ոչ համեմատին անուանն․ զոր օրինակ թէ ոք զանուն ունիցի մարդոյ բանականի, և գործ զանբանի․ ուստի պատշաճագոյն առէ Մեծ դիմաց։ Առաքելոյն ընդ առաւել կշտամբանս յառաջ բերէ և զայն թէ՝ հրեայ անուանեալ ես, և սակայն ոչ իբր հրեայ վարիս (Հռովմ․ Բ․ 17․) և նոյն յանդիմանութիւն առ (յայտն․ Գ․ 9։) Եւ ուր եղեալ անուանեալք իսկ յընթացս նախախնամութեանն քոյ, զի ըստ գործոյ և ըստ պաշտամանն կարգեալ սահմանէ իւրաքանչիւր զկոչումն անուանն, որպէս աբրահամու, յակոբայ, պետրոսի, յովհաննու մկրտչի, և այլոց․ որպէս զի անունն իցէ նշանակ յայտնիչ գործոյն, և իբրև ձայնաւոր պատկեր անձինն անուանելոյ։

10 Վերջացուցիչ ձայն։ բարձցես զկապ կամ զարգելանս անձնադատ բանիցս, զորս իբրև կանոնական աղաչխարանս, կամ իբր բանադրանս եղի անձին իմում, թէպէտ և ըստ փափագանաց հոգւոյս չեմ որոշեալ 'ի քէն, այլ կապեալ եմ ընդ քեզ։

11 Զխոցելոյ։ զհարուածեալս, կամ զխոցեալս ծանր բեռամբք մեղաց մերձեցո 'ի հանգիստ, ըստ որում և հրաւիրեցեր զծանրաբեռնեալսն առ քեզ գիմել և գտանել հանգիստ։

# ԲԱՆ ԵՕԹԱՆԱՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակալի առ նոյն աղերս մաղթանաց բանի․

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Թագաւոր բարձրեալ հզօր ահաւոր, օրհնեալդ միայն տէր Յիսուս Քրիստոս, քո է փոխարկել [1] յանակնկալս կենաց յուսահատութեան զսատակիչ անէծս առ կեցուցանող օրհնութիւնս, զպարտաւանս վհատութեան առ զուարթացուցիչ գովութիւն, [2] ընդ ամօթոյն՝ համարձակութիւն, ընդ պատկառմանցն՝ պատիւ, ընդ տարագրութեանն՝ յոյս բարութե, ընդ բաժանմանն՝ ակընկալութիւն միութեան, ընդ սպառնականացն բանից՝ ողջական օրհնանս, ընդ միանգամ դատապարտութեն [3] կրկին ազատութիւն։

Բ. Ողորմեա, տէր, մահու մեղապարտիս յաւուր արձակման չնչոյս կենդանութեան, մինչ աչացս ողորմագին հայեցուածս 'ի բարձունս կոչկոչիցի, [5] զբազմարկածեան ուղւոյն զանգերծ ընթացիցն զանփոփոխելին ճանապարհ յաչս բերելով մնացս տեսմանք ամենայնիւ վտանգեալ. և 'ի յերդ բնակութեան յարկիս նկատեալ յելիցն շաւիղ, թշուառացեալ կիսամեռութեամբ, դիմօք այլայլութեան, տատանմամբ մտանցս, կարկամ հառաչմամբ, նուաղ հեծութեամբ, նրբական ձայնիւ, յողի թախծութեան յոքնամանեայ տարակուսանաց՝ 'ի խորոցս աներևութից զգործեցելոցս ողբալով հառաչեմ։ Կարօղ ես, բարեգութ, [3] և անդ հրաշագործել յաւէտ զօրեղութեամբ ասելով, թէ ողջ եղիջիր յոգւոյդ խորտակմանէ, և կամ թողեալ լիցին քեզ մեղանք քո, կամ թէ երթ 'ի խաղաղութիւն սրբեալ 'ի մեղաց։ Իսկ զոր յայնմ ժամու ոչ ժամանեցից պաղատել, այսօր ընկալցիս մարդասիրապէս, ով երկայնամիտ բազմաչնորհ ամենակեցոյց։ Յորժամ, որ այժմ [6] բանապանձոյճ խրոխտաձայն սիգացող բարձրապարանոց, անկեալ դնիմ դի անկենդան, կարկեալ 'ի խօսից, կաշկանդեալ ձեռօք, լքեալ անդամօք, խփեալ շրթամբք, կափուցեալ աչօք, տախտակ անշարժուն, կոճղ կիսայրեաց, արձան անզգայ, պատկեր անբարբառ, զգայութի անշունչ, ողորմելի տեսիլ, աշխարհելի կերպարան, ողբալի օրինակ, եղկելի դէմք, արտասուելի նմանութիւն, լռեցեալ լեզու, ցամաքեալ խոտ, թօթափեալ ծաղիկ, ծորեալ գեղ, շիջեալ ղամբար, դատարկ կոկորդ, խոցանացեալ սիրտ, [7] աղխեալ ազդարան, սպառեալ աղբիւր, թալկացեալ մարմին, ժողխեալ որովայն, քակտեալ տաղաւար, կոտորեալ ոտք, բաժանեալ յօդք, հատեալ ծառ, սղոցեալ արմատ, թողեալ տուն, հընձեալ արտ, [8] ատորախուզեալ բոյս, օտարացեալ բարեկամ, մոռացեալ պահեստ, թաղեալ գարշութիւն, մերժեալ ատելի, բարձեալ խէթ, անարգեալ կմախք, և իբր զանպիտան առ ոտն կոխեալ։ Կարօտեալ այլոց մաղթանաց, որք զհաւատոյ թշուառիս ձայնիւ նուագեալ ազերս հառաչման, ցօղով արտասուաց բարեբարից զըթութն 'ի բարձունս տարածանեն։ Ո՛ առ քեզ [9] դարձն յեղանակեն արդահատելով, զոր օրհնեմ. գոչան խա-

չիդ փրկութեան, զոր երկրպագեմ. զյարութեանն ճըշ-
մարտութիւն, որում հաւատամ. զփառացդ քո յայտ-
նութիւն, զոր փառաւորեմ. զգատաստանին ահաւորու-
թիւն, զոր խոստովանիմ. զանցիցդ յանդիմանութիւն,
յորմէ զարհուրիմ. զհոգւոյդ սրբոյ ինձ ողեկցութիւն,
զոր պաշտեմ. [10] զօծմանդ տեառնագրութիւն, զոր և
համբուրեմ. զԹագաւորելն ընդ քեզ, տէր Յիսուս, որում
պաղատիմ։ Որդ [11] լքաւ մերժեցաւ բարձաւ տրտմեցաւ
փախեաւ սրացաւ տեղի ետ կցորդութիւն զուգութեան
կենցաղոյս կենդանութեան, և [12] յայդ որ 'ի քէն պար-
գև՝ մնացական և անջնջական յիշատակարան պահեցաւ։

Դ. Տէր ողորմութեամբ 'ի տարակուսանս վտանգե-
լոյս, միայն բարեգութ փառաբանեալ որդի այ, քաւել
բժշկել կենագործել պաշտպանել նորոգել նկարել
կանգնել հաստատել, վերստին ստեղծագործել յերջա-
նիկն անարատութիւն. քո է կարողութիւն, քո է փըր-
կութիւն, քո ողորմութիւն. չիք քո անկարութիւն, այլ
ամենևին զօրութիւն, բարձրութիւն, իշխանութիւն,
անվախճան թագաւորութի, խոկութիւն, ինքնութի, [13]
ամենատեղի բացարձակութիւն, բարերարութիւն, լու-
սաւորութիւն. փառաւորեալ տիրապէս, անպակաս և
անյաւելուած, [14] խնկեալ խորհրդով անթարգմանելեաւ
յԵրրորդութեանդ սրբում, գոհաբանեալ յաւէտ և
ևս առաւել 'ի նոյն պաշտօն հաւասարութեան միապա-
տիւ զուգակցութեան, երէկ և այսօր և յաւիտենից
յաւիտեանս. ամէն։

---

1 [illegible]։ Ի յաւահաստութեան՝ որ ան-մինկալ է կենաց, փոխարկել զանէծն յօրհնութիւն։

2 [illegible]։ Փոխանակ աւելթոյն՝ շնորհել համարձակութի. բաս-ոյամ և յաջորդքն։ [illegible]. փոխանակ բաժանմանն 'ի քէն՝ շնոր-հել յոյս միութեան, միանալոյ ընդ քեզ սիրով և փառօք։

3 [illegible]։ Փոխանակ միանգամ գատապարտութեանն 'ի մահ՝ շնորհել կրկին արդարութի 'ի մեղաց և 'ի մահուանէ՝ յարութի։

4 [illegible]։ Ուղղոյն կամ ճանապարհի մահուն՝ յո-րում կան բաղում արկածք և վտանգք։ Զայնր անփոփոխելի ճանա-պարհին զգնացսն յուշ բերելով մտօք, և 'ի պատուհասն յարկէ բնա-կարանին՝ որ է շաւիղ կամ տեղի եկանելոյ աղօթքս, հայելով աղօթել կենդանութեամբ, և այլն։

5 [illegible]։ յայնժամ ես կարող եմ հրաշագործել զա-ռաքինութիւն հոգւոյս, և այլն։

6 [illegible]։ որ այժմ բանիւք ճոխանամ։ [illegible]։ խոնա-

բար սատակման կամ սպանման։ Ոճագոյն․ 'ի քայլելն ամբարտաւան ան-
ձամբ գնամ, յետոյ 'ի մահուանս անկեալ գնիմ զի անկենդան, են։

7 Անխնայ ողորմն։ Եթէ աղխիք կամ փականք արգելեալ դըր-
ծի ապգելոյ՝ բերանն կամ լեզուն։ Հին ըծ․ խմանոյ ղուչս և զականջս։
Ծուխնալ որոճոյն․ հարեալ կամ լուծեալ 'ի գարշ հիւթս որովայնին։

8 Սպորախոսնեալ բոյս։ Յարմնոյն խուզեալ կամ կորեալ բոյս։ Նա-
ւագնեալ դաշնակ․ մարմինն՝ որ 'ի պահ դնի 'ի գերեզմանի, լինի որդնա-
հար և ապականի երբեւ զմռայցեալ պահեստ։ Բորբեալ խեթ․ երբեւ ըղ-
խոչընդակն աչաց կամ ոտից բարձեալ լինի մարմինն։ Նմախօ․ ցամա-
քեալ ոսկերոտին։

9 Գործն չեղանակեն։ Զգաստացն առ քեզ զգծմամբ յիշեցուցանեն և
ստէպ յառաջ բերեն՝ Զայս, և զյաջորդ բանն առնու յաղօթից քա-
հանայութեանն։

10 Զօծման քաւութեան։ Խմանոյ զօծմանէն, որ լինի 'ի մար-
մին ննջեցեալ քահանային․ զոր և յաղօթս քահանայութեանն յիշէն։
Այս օծումն աւանդի և բացատրի 'ի գիտնականաւ գրոյն յաղագս ե-
կեղեցական քահանայապետ․ գլ․ Է․ բնաբան․ Է․ երբեւ հասարակա-
բար նաև յաշխարհական ննջեցելոյն 'ի կիր արկեալ․ և այսպիսի ա-
վորութեան վկայեն յիշատակք առաջնոց, որպէս 'ի մաշտոցս ևս յա-
նաց երևի․ և մինչև 'ի ԺԸ․ դարն պահիւր յեկեղեցին ազգաւորնոյ
ավորութիւնն մեռանելոյ զմարմին ննջեցեալ քահանային, որպէս վը-
կայէ պալատն յոյն։

11 Նորոգ մեծութեան։ Թէպէտ և մահուամբս թողաւ, բարձաւ, փա-
խեաւ, հրաժարեցաւ հաղորդութիւն կենաց աշխարհի, բայց յուսոյդ
փրկութեան և յարութեան պարգևն՝ մնայ ինձ անջնջելի յիշատակ։

12 Յոյսդ որ 'ի քեն պարգև։ այլ օրէն․ յուսոյդ․ այսինքն յոյսդ որ է
քո պարգև՝ մնայ ինձ յիշատակարան։

13 Անմոռանալի բարերարութեան։ ընդարձակութիւն որ ընդ ամենայն
տեղի․ ուստի գիւրաւ կարող ես համահաւաքել զցրուեալ մարմինս
իմ և խցեն, և նորոգել զնոսա յանապատութիւն փառաց։

14 Խնկեալ խորհրդով։ օրհնեալ 'ի յաւիտենից անճառելի խորհրդով
'ի սուրբ երրորդութենէդ, այլ և գոհաբանեալ միշտ միանգամայն 'ի ժա-
մանակի՝ նովին հաւասար պաշտմամբ համապատիւ միութեան, և այլն։

# ԲԱՆ ԵՕԹԱՆԱՍՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ
առ նոյն աղերս մաղթանաց բանի․

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա․ Արքայ երկնաւոր, տէր բոլորեցուն, ¹առ ամե-
նայն բան յամենայնի միշտ երկայնամիտ, ով կենդանեաց
անբծից որդի։ Նա ²անդ է, ողորմելն խոկալըս, յո-
րում հասաւ ամենակալութեան վաստակոյն․ անդ է բա-

ընգործել, յորում [3] տեսութիւն խնամոցն խափանեցաւ. յայնմ ժամու է մարգարիտն, յորում տկարութեանն վտանգ պաշարեալ տիրեաց ներքոյ և արտաքոյ. անդանօր է բժշկութիւն ծածկին քոյ ձեռին, յորժամ [4] ընաւ անդամոյն տեղի եա կենդանութիւնն. այն վայր է այցելութեան, յորում ելք հնարից ոչ գոյ: Այն է քո մեծութիւն, յորժամ զյուսահատութեան վէրն [5] ողջացուցանես. այն է հարազատ [6] քումդ ազգակցութեան, եթէ յանակնկալն ժամու արուեստաւորեցես փրկութիւն. այն է հանդիսարան քում յաղթանակի, եթէ զփակեալն մուտս կենաց 'ի սպառումն շնչոյս բացցես. այն են քո շնորհք վայելչականք, եթէ զլարեալս խնդ մնացեալ՝ զլարեալդ քո յիշեցես: Յայնմ ես անոխակալ, եթէ ապախտաւորս ընդ երախտաւորացն խնամարկեսցես. [7] 'ի սոսկն ծանեալ գիտացից՝ եթէ նայեցար 'ի նուէր բանիս նախնի գթութեամբդ, եթէ զամբոխութիւն չարեացս բարձցես:

Բ. Յաղագս այսորիկ [8] հիւսին բանք և եղանակին նուագերգութիւնք, յորժամ տէրն բարի՝ չարն ծառայի զբարեգործացն պարգևեսցէ. որ մինչ կրաւամբք մնացէ բանտի, նա յարքայական ապարանս զնա հանգուցէ. մինչ հրաւիրեալ է 'ի գուբ տղմոյ, նա [9] 'ի բազմականս ամենապատիկս գահուց դրդեցուցանիցէ. մինչ [10] բրելոյ զաչսն գիտեսցէ, նա 'ի բարձրութիւն բերկրութեան հայեցուցանիցէ. մինչ ծայրատութե մատանցն սպառէ, նա մատանի համարձակութեան մատուցանիցէ. մինչ հայի հարուածոց զանից, նա զթոյ զիրկս արկանիցէ. մինչ պատրաստեալ յուսոյ կորստեան, նա երեելի տեսողաց բազմաց առնիցէ. մինչ ակն ունի ատակման մահու, նա ընդ կենացն և փառս ընծայեցուցէ. մինչ հատման զլխոյն նայեսցի, նա զնոյն պսակապայծառացուցանիցէ: Այս պտուղք օրհնութեան, զթած, սքանչելարմատ քում շառաւիղաց. այս արգասիք կենաց արարչականդ քո հրամանաց. այս խղձք խորհրդոց [11] խոստովանեալց քո տենչանաց. այս նշոյլք լուսոյ ամենափայլ Ճառագայթից. այս ախորժութիւն Ճաշակաց բարեբանեալց քո քաղցրութեան:

Գ. Որ միայնոյ են այսոքիկ, տէր. 'ի քէն [12] ազդեցաւ գրել ինձ զսոսին. ահա զքոյդ յատուկ աղերս ա-

գոչեմ, օրհնեալ, 'ի քոյոց այտի պարգևեալ շնորհա-
բաց, տէր, զգանձս քո բարիս, ըստ աղերսանաց սառ-
կին։ Մ՛ի խառնեսցես [13] 'ի համբարս բարեացդ քոց 'ի
չարեացն իմոց. մի շտեմարանեսցես զատելին քո՝ որ
են ոխութիւնք և ցասմունք, ընդ սիրելին քո՝ որ են
գթութիւնք և ողորմութիւնք. մի պահեսցես 'ի տա-
ցուածս քո պաշտելիս զանախորժելիսն քո՝ որ են մթու-
թիւնք և դառնութիւնք, և զիմ զհաճելիքն՝ որ են
մեղք և թշուառութիւնք։ Մ՛ի գրեսցես աջոյդ օրհ-
նութեան [14] 'ի մատենից կենաց զմուրհակ պարտուց ի-
մոցս անիծից. այլ [15] զանհնարաւորսն ինձ համարեալս՝
մեծացուսցես կրկին տալով զանուն քո տէր 'ի նոսին,
ցուցանել զդոյն ինձ զիւրքնս և հեշտականագոյնս։ Շատ
են իմ պարտիքս և մեղք քան զթիւ, այլ [16] ոչ այնքան
հրաշալիք իբրև զքո ողորմութիւնդ. բազում են մե-
ղանքս, այլ յաւէտ են նուաղեալ առաջի քոյդ ներո-
ղութեան. յաճախ են չարութիւնքս, այլ յաղթական
են համայնից, հզօր ամենակալ, քոյդ մարդասիրութի.
Ինձ են անհամար խոյս անձին բիծք, այլ քեզ յոյժ
գրուեալ են ընդ սահմանաւ։ Եւ են այնքան զօրաւորք
առ կենդանութիւն [17] զէնք մեղանաց պատկառեցելոյս
պտղաբերութեան, որքան յիշատակ մահու կենդանացուց
առ փառուն կործանողին բանութեան։ Ո՜ ինչ ազդես-
ցէ [18] փոքր խաւար՝ աւուրդ ՚ոյ, զիարդ բաւեսցէ զոյժն
ինչ աղջամուղջ մեծից ճառագայթից, զիարդ համ-
բարձցի կշռեսցի ընդ խաչի քո կրից՝ [19] խակութիւն հեշ-
տութեան մարմնոյս ոփարութեան։ Ո՜ ինչ երևեսցի
յաշս ամենակալին քոյ տառապութեան՝ կոյտք մեղանաց
ամենայն տիեզերաց. ահա [20] կոշտ մի հողոյ զիւրափոխ-
բելի 'ի կործրութենէ բախման վանեցեալ, իբր զպղ-
պջակ անձրևոյ բազմապէղ հոսմանց քո կամացդ չքա-
ցեալ պայթեալ անդստին։ Ո՜ ինչ ալխոյ են քում զօ-
րութեանդ ամենահնարդ կարողութեան ժամանակաց
տառապութիւն առ յանդունդոց խնոց քառութիւն. [21]
ոչ քթթել մի ական, ոչ խուն մի տեսութիւն ածան-
ցական, ոչ սակաւ մի նայեցուած փայլական, ոչ կխա-
մանեայ յամբութի, ոչ փութացելոյ առից յեղեղումն,
ոչ յելից բարձրունէ մի կանգնոյ կաթի անկելոյ, ոչ գիծ
մի չափոյ մատաց հեռանեցելոյ, ոչ նշուղից արագութիւն,

ոչ ինչ տուրևառութի՛, որպէս յայսմ յանդոյ և յան-
տարաւորական նմանութէ, անձև օրինակաց յաւէտ ան-
կայից՝ այնքան առժամայնք կամ հարևանցիկք, որքան
եղծմանք, ցնդմանք և հալմանք մեգաց սաստամանեայ
պաշտաման քումդ զօրութեան, ով ամենայնի տէր Յս՛
Քս՛, որդի անքնին կենդանւոյդ այ։ Որ տաս պարգևես
արև քաղցրութեան՝ չարաց ընդ բարիս, և անձրևես
երկրաբնակչացն անաչառապէս. կշռես սահմանես խրա-
ւամբք և [22] զվտանգս կլիմն հաւասարաբար. որոց մեծ
է հանգիստն առ անխռովութիւն պարգևին, փոքր խիթա-
նաւ փորձութեան զանկարութիւն պարտուցն աստէն
վճարես. իսկ որ զերկիր ընտրեցին, ներես ողորմութբ,
տալով և տոցա զարման ընդ նոցա՝ միշտ առ քեզ զար-
ձին սպասես։ Եւ քեզ փառք ամենազօրիդ առ ամե-
նայն հրաշագործութիւն բարեխնամող երկայնմտութե,
օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

1 Առ ամենայն բան։ Աղաւել քան զամենայն բան և զմիտս՝ երկայնամիտ ես յամենայնի։ Կամ, առ ամենայն բան, այսինքն թէ 'ի խոստանալ բարիս, թէ 'ի կատարել վրէժս, թէ 'ի փրկել 'ի փորձութեց, թէ 'ի լսել աղօթից մերոց, թէ 'ի պատուհասել, միշտ երկայնմտութբ վարիս։ Զայն միտս թուի ընդարձակել 'ի յաջորդ բանսն, յորս ասէ, ողորմիս յորժամ չէք անխղճութի. մարդասիրես՝ յորժամ ներքոյ և արտաքոյ պաշարեն վտանգք. բժշկես՝ յորժամ յամենայն անդամոց պակասի առողջութիւն, և այլն։

2 Որ է ողորմի։ յայնմ, կամ յայնժամ կատարի ախտադէս ողորմութին, յորժամ չէք անխղճութի վաստակոց բարի գործոց։

3 Տեառնաբար խնամես։ Յորժամ Ճարտարութիւն կամ հնարք մարդոյ խափանեցաւ, յորժամ խորհուրդ մարդոյ մթագնեցաւ, և ոչ կարէ ընտրել զուղիղն և զպատշաճն, յայնժամ երևի քո բարերարեն՝ յառաջնորդել, 'ի լուսաւորել։

4 Ընդ առողջոյն։ յորժամ կենդանութի կամ առողջութի ամենայն անդամոցն բարձաւ, կամ հեռացաւ։

5 Ողջացուցանես։ Զ օրին. առողջացուցանես։ մի օր. ողջացուցես։

6 Բաւական աղքատութեան։ այն է առատական քո ընտանի բնութեց, կամ զօրութեանդ։

7 Ի սովին ժամանակի։ Յայտնապէս ծանուցեալ զխառըց զհամրելն քո յըն-ծայ աղօթիցս ըստ առաջին գլխուն, եթէ զչար սովորութիւն բարձցես

8 Հեղեղին բան։ Յօրինեն բանք զովեստից, և եղանակին ձայնք օրհնութեց, յորժամ բարի ամէն պարգևեսցէ չար ծառայն զայն բարիս՝ որ բարեգործայն վայել են։ Ի շնորհել առատատեառն զպարտս բեւր քանքարաց ծառայն, որչափ օրհնութիւնք արդեօք հնչեսցին 'ի ծառայակցաց նորա։

9 Ի հաւանական ամենագութեան. այսինքն ամենայն իրօք զարդարեալ։

[illegible] մի՛ որին․ [illegible] այլ որ․ [illegible]։

10 [illegible]․ այսինքն ապաւէնցի, մնայցէ․ բայց այսմ և 'ի յաջորդան՝ [illegible], խմանին՝ ապաւէլ, մնալ, կանգնել։

11 [illegible]։ Այս են խորք որոց մտաց՝ ազդեալք 'ի ծածուցեալ կամ յօրինարանելի փոփոխմանց քոց, որովք չկամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալն և զկեալն, և այլն։

12 [illegible]։ Դու քոյով վարդապետութեամբ և պատուիրել գործովք, այլ և ներքին լուսով մտացս և յառաջադրութեամբ կամացս շարժեցեր զիս գրել զայսոսիկ։ [illegible]․ այսինքն փառս որոյ զքո ուսուցեալ և ազդեալ ապաշխար՝ 'ի քոց շնորհաց դու կատարեցեր․ կամ, զքո յատուկ ազդեալ՝ որով ասես առ մեզ, դարձարուք առ իս, և այլն, դու զնոյն շնորհես զատնողով առ մեզ․ կամ, [illegible], մարթ է առնուլ ընծայ, պարգև․ խորև թէ զքո սեպհական և վայելչական պարգևս ներգործութեան, անսխալականութեան շնորհաց։ [illegible] մեծութեանց քոց․ [illegible]․ հայեա 'ի բանն առաքելոյ ( Է․ 21․) « Բաշխեսցես սիրելեաց խնդ զմեծութիւն, և զգանձս նորա լցուսցես բարութեամբ »։

13 [illegible]։ Այս և յաջորդ բանքն ոչ խմանին 'ի ներքս յամծ, այլ 'ի գործս իւր՝ զոր 'ի մեզ երևեցուցանէ․ որպէս թէ ասել․ 'ի գործս շնորհաց և ողորմութեան քո մի խամանեսցես զպատուհասս, որք արժանի են չարեացն խնդ։ Մի ցուցցես զգործս սխալութեան և ցասման՝ որք քեզ աւելիք են, ընդ գործս գթութեան՝ որ քեզ սիրելի են․ 'ի պաշտելի արարուածս քո՝ մի զացին աւելիքն քո՝ [illegible], գործք արդարութեան․ [illegible], գործք խառնութեան, և մանուկանցն [illegible], հեռաւորքն՝ մեղք և թշնամութիւնք։

14 [illegible]։ Ըստ սովորութեան գրոց՝ այլևայլ ասին մատեանք կամ գրութիւնք, յորս գրին արդարք և մեղաւորք ըստ իւրաքանչիւր գործոց․ որպէս 'ի յայտնութեան․ Ի․ 12․ « Եւ գրեանք բանային․ և այլ գիրք բացաւ կենաց »։ Այլ քանզի այն մատեանք իրօք ոչ այլ ինչ են՝ քան թէ մի և նոյն անփոփոխ գիտութիւն ածային մտաց՝ յորոշումն արդարոց և մեղաւորաց, նմին իրի ասասնօր ասէ աստ վարդապետս, թէ մի գրեսցես 'ի մատենից կենաց զԱնս պարառաց իմոց․ այսինքն յածային միտսդ՝ որ է մատեան կենաց, մի գրեսցի ձԱնս դատապարտութեանս։

15 [illegible]։ Առասնօր կարգ չարադրութեան այլափոխ է, և պարզն այսպէս․ այլ զանձնարկին իմա համարեալս [illegible]․ որով [illegible], այսինքն 'ի նոյն անձնարկինս։ և [illegible] ասէ, այսինքն իբր բարերար յաղթմէլն, և իբր ամենազօր 'ի գիւրել զանձնարկինս։

16 [illegible]։ Թէ և անթիւ են պարտիք մեղացս, այլ ոչ այնչափ զարմանալի՝ հայելով յապականութիւն բնութեան, 'ի տկարութիւնն, 'ի տգիտութիւն, 'ի զանազան փորձութիւնս սատանայի, և 'ի պատճառս մեղաց։ Բայց քո անհատ բնութեանդ ողորմելն և ներելն ամբարտաւանից և թշնամեաց՝ 'ի վեր է քան զամենայն զարմանս։

17 [illegible]։ Զէնք կամ զօրութիւնք մեղացն՝ զորս ես ամաչեցեալս պատարերեցի, ոչ են այնքան կարողք առ 'ի կենդանանալ վէրքս, ․․․ամն և տիրել իմա, որչափ յիշատակ մաշու քո կարող է փակել զդառնութիւն սատանայի և զմեղս։ Հայեա յառաջեալսն համ․ գ․ 12․ 13․ 14․ « Մի այսուհետև թագաւորեսցէ մեղք », և այլն։

18 [illegible]։ Գործ մեղացս՝ որ առ քո զօրութիւնդ համեմատեալ,

են իբր փոքր մթութիւն և խաւար առ ախտ, զի՛նչ կարեն առցել։ Կամ, փոքր խաւար մեղացս՝ զի՛նչ իցէ առ մեծային լոյսդ ։

19 [illegible] ։ խակ կամ անտանական հեշտութիւն ակար մարմնոյս՝ զի՞նչ հատուցանեսցի ընդ չարչարանաց խաչին ։

20 [illegible] ։ Հաւաքումն մեղաց ամենայն աշխարհի զի՛նչ է ընդդէմ առաջի ամենակալ տատութեան, բայց իբրև կաթ մի հողոյ՝ որ գլորեալ փչի ՚ի [illegible], փոխանակ առնելոյ՝ ՚ի բարձրանալ կամ ՚ի հարթանալ կարծր նիւթոյ ։ Եւ իբրև պղպջակ անձրևոյ՝ որ պայթեալ անյայտ լինի ՚ի գետնանալ կաթիլ մեծ ։

21 [illegible] ։ Ոչ թարթել մի աչաց . ոչ փոքր տեւութիւն [illegible], որպէս անցանող . ոչ սակաւ [illegible], տեսիլ կամ երևումն փայլական որ լինի յանկարծ . ոչ [illegible], սակաւ կամ փոքր մի յանկուցումն, զեղերանք . ոչ արտաքաշարժ ոտից [illegible], փոփոխումն . ոչ ՚ի ծայրն կատարելութեան բարձրութեան [illegible], այսինքն ժամանումն յերկիր կանթի անկելոյ . յայլ տարագիրս եղեալ էր, [illegible], որ չէ յարմար . վասն որոյ ուղղեցաք ըստ մեր օրինակաց ։ [illegible] . ոչ զիծ մի չափու կամ ձեռն՝ երևակայութեան մարթ ըմբռնեցելոյ՝ որ յայժ արագ կատարի ։ Ոչ արագ ծագումն և ծաւալումն նշուլից լուսոյ . ոչ անդադար տուրևառութիւն շնչոյ ։ [illegible] . և ոչ մի յառաջեալ անհատատ և անյարմար օրինակաց [illegible], յայժ անկայուն և անտեւական եղելոց, [illegible], սակաւ ժամանակեայք են և գիւրանցիկք, որքան եղծմունք և ընջումն զանձելոց մեղացս ։

22 [illegible] ։ Որպէս զխայելումն բարեաց աշխարհի անաչառապէս պարգևեա չարացն ընդ բարեաց, նոյնպէս զփորձանս նեղութեանց խրատականք կշռեա հաւասարապէս արդարոց և մեղաւորաց, առ ցաւ զի արժանիք են . խակ արդարոց՝ զի նոցա անեկալութի հանդերձեալն պահի յերկինս . և առա փոքր վշտաց զաւակաւ պարտս մեղացն վճարեալ մաքրեն . բայց երկրաւորացն ներեա՝ առլեալ զզարմանս կենաց ընդ արդարոցն . զի մեծ զարձի նոցա ապաշխա ։ Կամ, առա և մեղաւորաց ըղձմնեան իբրև զարման ապաշխարութեան, ապաստելով զարձի նոցա ։ Եւ վասն այսր ամենայնի [illegible] . քեզ միայն վայել էն փառք՝ որ ամենակարող ես ՚ի հրաշագործել զամենայն երկայնմտութիւն առ յանցաւորս և անարժանս . տես և ՚ի բանն Ձէ . ըծ . 14 ։

# ԲԱՆ ԵՕԹԱՆԱՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

[1] Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոյ
առ նոյն աղերս մաղթանաց բանի·

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ ընկղմեալ զմայլեալ եւ 'ի սպառ ծած-
կեալ 'ի յանճառութենէ, տատանելութեան բազմանմա-
նեաց յաճախութեան մեծիդ երախտեաց, որ ամենա-
ռատ լցմամբ անմատչելեաւ յաջմէ եւ յահեկէ՝ [2] 'ի դի-
մաց եւ 'ի թիկանց համբարեալ կան անպարտութիւնք։

Դարձեալ առ նմին [3] կրկնապատիկ երկրորդութիւն ածային հոգւոյն
ազդեցեալ, յոր ենչ յասպելոյն անհմանեցաւ ուանդութիւն՝ առ ա-
մենայն լուսաւորութիւն եկեղեցւոյ գաւանութեան՝ մեկնապես եղեալ
տառանօք։ Եւ որ առ անշնչականս նիւթեղէն ցուցանի երանաւոր կեր-
պագրութիւն անձանելի։

Բ. Մատուցանեմ ընծայեմ դարձեալ տառանօք ա-
ւանդ [4] զամենայն զաւանման ճշմարտականի։ Զի որ-
պէս երբեմն [5] հերձուածականին յարափառութեամբ ա-
մենապատիւն խորհրդեամբ նենգաւոյն կարծիւն հա-
ստատեալ 'ի բաց հերքեցաւ՝ ելեալ 'ի գրախտէն, արդ
միաւորականաւս այսու ուղիղ անրծութեամբ՝ 'ի յա-
ւանդ խոհապէս հորհի անզրէն միաւանդամ համբար-
ձեալ սովին՝ 'ի թախծութեաց լուսոյ աչա յերկինս ժա-
մանեցից հեռեւեալ։

Գ. Այլ [6] բանդի յորդանդէն՝ յորում յղացայ հո-
գւոյ երկանց ծնեցեալ, զմեծ եւ զերջանիկ դշխոյ ան-
պատ՝ [7] ամենից կուսից խոհուհի՝ զպանծալի մայրն իմ
գովելի պարտ է կանոնաւ սահմանի բանի արձանագրել
յայսմ մատենի. զի ծանիցի ցուցցի եւ այլոց եւս սպա-
գայից ազգաց պատմեսցի որպանութիւն փառաց խըն-
կելոյն, [8] արժանապէս պաշտամամբ պատուեալ իբր մա-
քուր մայրն [9] ընդ գլխոյ մարգարէութեան բանին ոյ,
'ի յիշատակ ձառիս հաւատոյ Ուղղորդութեանն դաւա-

նութեան ։ Այլ արդ [10] 'ի յայս օրինակ հոգենկար պատ_
կերի բանի, որ զնորանեօ լուսոյ յարմարի, ընկալ զիս,
զթամծ օրհնեալ, քաւեցեալ և սրբեալ 'ի սմին ։ Հան
ատխա 'ի հոգւոյս զնախատանս մեղացս, անմեղս և ան_
բիծս ընդ հովանեաւ սրբին բազմեցս, [11] յաւել զախարս
'ի տունն Պաւթի, և անտուստ փոխեալ 'ի տունդ ոյ,
ըստ մարգարէին ձայնի՝ որ 'ի քեզ Տէր ամենայնի ։ Մի [12]
տալ զմանկոյն, և մի անօգուտ զելոյն հեռաւութիւն ա_
բացես · մի զհաւատոյս ջերմութիւն ցուրտ համարես_
ցես, և մի զհամբոյր ողջունիս անկարգ ինչ վարկանի_
ցես, մի զպաշտօնն աղաչնորհ զրկեսցես, և մի զերկրպա_
գութիւնն անխորհուրդ լքցես · մի անպատուղ լիցի պա_
տասխանութիւն պատկերին, և մի անշոյլ՝ կերպարանին
սքանչելութիւն, [13] մի անհաւր ողջակիզին սպանից մեռ_
ցի, և մի պատարագ ուխտի այս ճաշի՝ արտաքոյ ցրեսցի · մի ճաշակդ լուսոյ ինձ մահու լիցի, և մի բաժակ
քո հեղեցդ արեան՝ 'ի դատապարտութիւն եղիցի ։

Դ․ Աղաչեմ զքեզ, տէր Տէր [14] մեզ յիշութենէդ, ա_
րալ զգիտութիւն հօր քոյ և հոգւոյդ սրբոյ ճաշակեալ
ծանեաք · քանզի [15] 'ի քէն իսկ վարդապետեալ զամե_
նապարգև կարգս եկեղեցւոյ, [16] և 'ի սմին աղօթանուէր
լուսաւոր կենաց փրկութեան բարեաց, տարածեալ
զոխրոս ձեռաց համբարձմանս զայս կնդրուկ բանի ընտ_
կալից 'ի սմա՝ ախորժից ընտրից երկբորբենից մատու_
ցեալ յաւէժ ընծայեցուցանելիք այսու բարբառով բա_
րեխորհութեան ։

Յառ որ 'ի Նիկիայն սահմանեցաւ բան, այլ ինն խորհրդածութիւն
ծննդեան աստուածութեան ։

Ե․ Փառաւորեմք վերաձայնեալ նուագօք օրհնութե_
երգոց 'ի հաւատ պաշտաման բանի զգերահրաման պատ_
ճառն եղելոց զԵրրորդութիւնն անսկիզբն՝ անհամեմատ
բարձրութեամբ, անհասանելի խորհրդոց և անըմբռ_
նելի իմաստից, անզննելի զգայութեանց և [17] անբերելի
եղելոց, [18] քննութիւն վերնականն երկնից և անհաս_
ման ներքնայնոյն խորոց, [19] լռութիւն սրովբէից և նա_
խադրութիւն սկզբանց, [20] մի յերից անշփոթ կերպից,
և երիս՝ միոյ անհատածելի խալութեանց, [21] 'ի վեր

քան զմտաց անարգելութիւն յարաձգեալ ամենայն ու-
րեք բովանդակ։ Նրբափափուկ բարի, անապականելի ուղղու-
թիւն, [22] անխառն կերպարան սիրոյ, մեծութիւն ան-
յաջորդ, բարձրութիւն անխոնարհելի, [23] անվախճանելի
տեսականութիւն, բարերարութիւն աննուազելի, կամք
կայուն, հրաման կենդանի, անմարմնութիւն փրկչական,
երանութիւն ճշմարիտ, անեկալութիւն հաւասարի, խա-
տուն անսասելի, [24] աւանդ արդասաւոր, առոյգ աւետիս, [25]
վերամբարձութիւն անձեռնարկելի։

Զ. Մի հայր միայնոյ որդւոյ՝ միական հոգւոյն պա-
տուեալ, ամենահարուստ բարութեամբ ամենեքին ու-
նայն 'ի չարէ, որհնաձայն գոհաբանութեամբ մերկին
ներբողիւ գովեալ։

Է. Մին բարձրեալ ահաւոր անուն՝ [26] համապատիւ
կցորդութեանց, անպատումն ազգականութեանց, եա-
լուսեանն զուգակցութեանց, անյաւելուածն լրականու-
թէց. Ինքնիշխան կամաւորութեամբ պատուաստեալ
առ հայրն համգունատիպ՝ գործակցութեամբ հոգւոյն
սրբութեան խոնարհեալ իջեալ 'ի յերկնից, աննուազ
գոլով յինքեան փառացն, համաձեցաւ մտանել յարգանդ
մայրենի ծածկին կուսին մաքրութեան. յորում [27] ա-
ձեցոյց զբոյսն օրհնութեան 'ի լուսահաման անպա-
տանելի անարատութեան. ընդ ամենակատարն էութե
համանեալ յանանջրպետ միակութիւն, թափան-
ցական խառնութեամբ յմծութեանն ոգի բաղկացոյց
զգոյութիւն ընչյս հրաշալիս։ Որով [28] անասամբաւելի
երասանն սանձոյ կրթութեան զատահակութիւնս իմ՝
հանգարանեցոյց. և կամաւ ընծայեալ խաչին՝ ամբարձա-
ծաղիկն պաղոյն կենաց [29] 'ի ծայրս լրութեան անմահա-
կանն անկոյ. 'ի մահ վիրաւորեցաւ՝ [30] ծածութեանն ան-
ընդմիջելի 'ի մերասերն մարմնոյ, որով կենացոյց զգօ-
ծին պարատեալ, արարչութեանն խղութեան 'ի նմին
յաւէտ անբաժանօրէն ընդ նիւթական մարմնոյն փշտա-
ցեալ։ Իջեալ 'ի վայրս խաւարային գժոխոց, եհան զկա-
պուտն ի բանտեղծ 'ի կապանաց օդաղին. և իբր 'ի նիրհ-
մանէ ընդ զարթուցեալ, յինքն նուաճեալ զգիշե-
րումն մահու, կանգնեցաւ կենդանացու ծածկել՝ ե-
լեալ 'ի յերկրէ հայն կենաց և հայրեն հօրից բանա-
ւորականաց։ Համատարի եղև յաշխարհի, և [31] ե-

բեւեռեալ նոյնութեամբ ամենեւին անմատուցելի, որպէս եւն հանգոյն, եւ համբարձու բովանդակ. բազմեցու նստաւ 'ի գերունակն գահոյս [32] նախնականին պարգեւութեան արարչական փառաւորութեամբ։ Որ խոստավանիմք ա̃ծ բարերար եւ տէր բոլորից, որ գալոց զամենայն երկիր արդար ընտրութեամբ յաւուրն մեծի, որ [33] նորն է սկիզբն եւ նորն կատարած, նոյն առաջին եւ նոյն առյապայ, անպակաս բովանդակութեամբ թագաւորեալ 'ի լոյս անմատոյց։

Ը. Օրհնաբանեմք ընդ հօր եւ որդւոյ եւ զանբաժանելի բղխումն նորին փառակից հոգւոյն տէրութեան. որ սահեալ զնաւս եւ կենդանածնէ զամենայն, որ [34] անգրաւեն խօսի 'ի բնէ հանապազորդ մթութեան աշխարհական միգի շղջէր նկարէր եւ կերպարանէր ամենանակ ջուրքն անբաւութեան երկրատարածն ծովու՝ 'ի կատարումն արդեան խորհրդոյս՝ զատ լր աւազանն լուացյ։ Նա եւ արար եւ այժմ գործէ, գոյացոյց եւ միշտ կատարէ արուեստ, սքանչելիս, նախատեսութիւնս որդւոց, [35] ազգմանս աստուածորէնս, զօրութիւնս զարմանալիս, մարգարէս, առաքեալս, վարդապետս վարժողս կրթութեան հանճարոյ։ [36] Օրբարոյն մատոյման արեանն Քրիստոսի յարգարեալ, քաւութիւն անձանց, առողջութիւնս մարմնոց, լուս նմանութեան Քրիստոսի սրբութեամբ հրամայեաց։ Մկրտեաց եւ [37] գեր քան ըղջուր, նորեան միայն բաւականութեամբ նորոգեաց լուսաւորեաց. հանապազ նովին բարեգործութեամբ զօրանայ։ Սկսեաց միածնին ամութեանն 'ի հարսանին Յորդանանու, օրինակաւ ակատեան ամփոփ ցուցանէին հօր 'ի լերինն Թաբորական։ Ի նոյն աւուր նմանութեան հովանի եղեւ յակոբեան տաճարն 'ի յերկրին Եգիպտոսի. յաղթողութիւն զօրավարութեան Մովսէսի՝ հզօրել սատանութեան զՓարաւոն ընկղմեաց։ Քահանայս կատարագործէ, խնամատոն կազմէ, թագաւորս զօրացուցանէ, քաւութիւնս ընծեալ, կեանս շնորհէ մահացելոց 'ի նորոգութիւն յարութեան։ Նոյն նորն է [38] օծումն մարգարէին ոյ. միանձնեաւոր հաւատարութեամբ ընդ հօր երկրպագեալ՝ 'ի պատիւ մեծութեան որդւոյ, անհաս փառաւորութեամբ օրհնեալ յաւիտեանս. ամէն։

[39] Նորին աւուցեալ 'ի խորհուրդ սրբոյ եկեղեցւոյ, ընդդէմ պիղծ աղանդաւորացն Թոնդրակեցւոց, նոր մանիքեցւոց:

Թ. Պատուեսցուք 'ի հաւատ ուղիղ և անխառնական անբծութեան՝ համբերելով չլթանց աղջամնեալ [40] զկառուցեալս խորան յանչխարհական արձանաց՝ ինծայլն ընդկութեան եկեղեցւոյս չքնաղածոյ. որ [41] զերադանց զըտու և երկնի ամենայարգ բարձրութեանն, որ 'ի նոցին խակ [42] յառաքելականացն դասուց հիմնեցաւ, յաջակերտաց վերնոյն խնկեցաւ, 'ի սպասաւորաց բանին պաշտեցաւ: Սկիզբն առեալ կենացս այս զանձու 'ի վերնայարկն սրահէ, խորհրդականացն վայրէ, զոր հօգին ոյ լցոյց. փայլեցուցեալ 'ի նմա զօրութիւն յաւուր մեծի պենտակոստէին. նախ զաւանն բարեաւեալ՝ յօրինակ սրբութեան կատարման քահանայ այսր եկեղեցւոյ [43] կանխամեծար աւատելութեան, յորում ասա և 'ի նմին ընակչացն ասաւ լուսանորոգ բարեփառութիւն: Սառի արփին հզօրին ոյ բաշխեալ մասուցանի [44] յանէաքան գոհարելին մահու գուժարկու, մեծաւ բարբառով ձայնի բերկրութեան կենդանութիւն անմահութեան 'ի սմա ազդելով: Քանզի ոչ է կար զօրութեան ուրուք ընդ երկնաւ յանդիման արեգական 'ի սպասաւորութի խորհրդոյ այսր աչաւորութեան ձեռնարկել, եթէ ոչ ընդ թևօք սորին պահեսցի. նա զի [45] ոչ երկինք բաւականանայ այս նուէր ամբռնի մարմնոյ, եթէ ոչ զայս ձեզուն օրհնութեան ծածկոյթ ունիցի. վասն զի մահու անխծխաց հերքի այլ բաւ օրէնքն, որ արտաքոյ խորանի այս վկայութեան զմծայլն պատարագն մատուցանէ. մանաւանդ զի [46] պարատուր արեան կոչեսցի, որ ոչ [47] զանձինն օրինակ արփին յայս նուիրան ընծայեցուսցէ: Սի 'ի սմա լուսոյումն 'ի մահն Քրի, [48] զի մի յանդէտս մնալեալ ամօթինն 'ի ծանուցելումն ըղնախնոյն կրեսցէ. [49] մի ձեռնադրութի 'ի պատիւ օծութեան լուսոյն, զի մի յանբծութիւնն խաբէութիւն խառնեսցի. [50] մի և ճոխհօք բան թէ աղաչխարութի բաւութիւն, զի մի Ճշմարտութիւնն կերպարանօք խաբանեսցի. [51] մի յլնարութիւնն ապառնի՝ հաւատ, զի մի սպառնալիք հատուցմանն զոյցս նիւ ստար համ

բանից գրեցի. մի երկարաձգելոյ [52] գտութեանց մե-
րոց խրատուց կշտամբութիւն, զի մի կիսամանեսցուք առ
մարդն ներքին և առ արտաքին՝ չարի և կամ բարւոյ
փոխատրութիւնն կարծիցի յանմանս զօրութիւն ար-
քայական որդեգրութեանն, զի ընդելութի երկրայ-
նոյս տառուելութիւն մերմամբ թագաւորութեն յայտ-
նապէս Ճշմարտեցի. մի յոյս կենդանութեան [53] ա-
նեղծութիւնն որոց, զի աներկեւանութիւն խառնա-
կերոյն՝ 'ի միտս ունկնդրացն ծանուցեալ հաստատեսցի:

Փ. Ո՛չ [54] դշխոյ պաշտելի անշնչական եկեղեցի տայ
կեանս և մահու իշխէ, բայց օրինակի ազատեան պարզն
յարմարապէս Ճաշակելի. գերազանց քան զբանական
յանշնչութեանն հրաշագործէ. մինչ զի կատարումն ըն-
ձեալէ և նորոգ հաստատէ, [55] մերայոյն նկարեալ 'ի մեզ
զկերպարանն փառաց լուսոյ: Վերեալ ես է [56] ունակ մե-
ծութեան մերումն կամարին սիրելւոյ յառաջնակա-
նոյց քան զէակիլս հայեցմանցն 'ի նմա զօրութեանց:
Որ խնն ընծայէ [57] Թախծս մարմնոյ ընդ թեթեւութիւ
հոգւոյ, պատուականին հարստութեամբ զանարգն յար-
գաւորեալ: Ու [58] խոնարհելի մեզօք զայրանաց, եթէ ոչ
'ի մարդոց չարաց և կամ յանհաւատից կոխիցի: [59] Տէր
իմն է զարմանալու յաղթող խմաստից մերս ունակեց.
անբանն 'ի բանաւորէն կառուցեալ, նմին ծանուցեալ
իբր մեհագոյն յաւէտ նուաստի: Մեծ է քան զմարդ, [60]
որքան ընտրեցելոյն Մովսէսի ցուպն յաղթողական. տա-
ւել քան զբանաւոր, որքան զԱհարոնի գաւազանն խոր-
հրդական ծաղկեցեալ. գերազանց քան զմնաւոր, որչափ
քան զԵղիա և զԵղիսէս գետահերձ մաշկեակն որոն
ջերահրաշ փայլեալ արտեւոսխ: Օգնութիւն սպարգեւէ
կրկին ամենակալար [61] որբանակեալ ձեռաց մարգարէին,
քան թէ զինուորս. մարմնին նիւթական [62] քարի և հո-
ղոյ. գայակից հաւատոյ զգայականաց և որոց: Որ ըղ-
ձիւն անման կենդանի 'ի կործանումն է և 'ի կանգ-
նումն. [63] որպէս զզատուցն ամենից հոգւոց հանգիստ-
նոյ հրաշապէս ազգամամբ յանէծս և յօրհնութիւնս.
իբրև ունող անեղծութեից զանն հրապարակէ և զանն
մածէ. առ ինքն կոչէ զբեալ յանուանէ իբր զոխոց
հրամանատար եղեց: Որ զեւան յանխոնական ան-
հաւանածելի է 'ի զխմանմարտից. [64] ընդունէ զհոգեւոր

իբր զհնարագրութիւն մեծին արուեստի . 65 անմեղս և անվրէպութիւնս ըստ Բնի հետոյն ընթացից , բարձր Ճախութեամբ անպատկառաբար համարձակապէս զօրէն գոմեշոյ գլուխ ամբառնայ :

ԺԱ . Ո՛րքան մեծ ունի սրբութիւն , մինչ զի զորս ըստ պատկերի ոչ եղեն , 66 կանոնաւ խօսէ : Յետ յոգունց ընտրութեանց փորձից՝ թէ համարձակեսցի մարդ որ սխալեալ 'ի գաւիթս նորին մտանել՝ ոչ պղծի , այլ ընդ անպատրաստից թերութեանց դժուարի . ոչ նզովի , այլ տեղի տայ ոչ գիտողացն զշնորհին զգալ . ոչ լքանի կնքեամբ պարտաւոր իւրոյն գտեալ , այլ 'ի մերոց գործոց խրթնանայ . ոչ թողացուցանէ . 67 երկիւս մատչել յըմբռնումն ասելոյն կենդանատուաց , ըստ տերական անձառ խորհրդոյն . 68 ոչ կրկին յաւուր զնոյն ցուցանէ , զի մի անընտրաբար նուիրանն խայտառակեսցի : 69 Աշտակցէ կարեաց զօրապէս իբր անախտակիր ապականութեանց որ 'ի մեղ շարժմանց . առանց բարբառոյ տկրապէս հրամանաւ գտանի :

ԺԲ . Նա զի և տապան իմն է մաքրական , 70 կրկին երջանկական , 'ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց պահպան . ոչ բաղմօք անբանիւք գազանաց գառունք և սակաւ մարդկամբ , այլ ընդ երկրայնոցս և զվերինն յինքն հաւաքէ . ոչ յալիս խաղաղութեան բերի , այլ 'ի բարձրութիւնն երկնի համբառնայ : Իբր զաշակերտ հրահանգեալ հոգւոյն ոչ 71 փախչի 'ի նենգութենէ . 72 ոչ 'ի բողոք մահու մարմնոյ հարուածոյ , այլ 'ի կենացն աւետիս ըմբռնեալ ածէ . ոչ Նոյիւ ձեռնարկեալ գործի , այլ հաստողին հրամանաւ լինի . ոչ Մովսէս ընդ Բեսելիէլ , այլ միածինն ոչ հոգւովն սրբով զսա հանդերձէ . ոչ 73 յարաշարժ հանապազափոխ , այլ մշտակայուցց հիմամբ անսասանելեաւ զսա հաստատէ : Կարծեալ իբր զտապանակն անխօս փայտեղէն մածեալ տախտակօք առանց զգայութեան տեսողականաց մեզ առաջնորդէ . 74 որպէս կերպարան անքանակ Նոյն յառաջ հետեւեալ՝ 'ի հանդերձանս լուսոյն կենաց տեղի պատրաստէ : 75 Ընդ Աղեւելի անտուստ սատակէ , եթէ ոչ խաչապէս յոգի բերիցի . տպանանէ վատնեալ վաղվաղակի առժամայն , եթէ անմանոյնին ընակցութեամբ երկրատիրաբարգեւնական տայլուք՝ իբր զանօթ ինչ ձեռնադրին բարձեալ

տանիցի։ Ոչ [76] լեզուաւ մարդոյ, այլ բանիւ հրեշտակաց խօսի. ոչ ունկան գոյականութիւն, և արագապէս մտաւեալ լսէ. ոչ ձայն կերպաւորական բարբառոյ, և զպատգամս գործոյն Յնի համօրէն աղանց պատմեալ հաչակէ. ոչ խաղալեաց շարժականութիւն, և ծայնով իմն կենդանութեան հաղագաւ ազդէ։ Ոչ ոսկերաց և ջլաց յօդուած, և [77] երկուք հաղարօք կանգնօք լայնութեամբ՝ իբր զգունդն անհամար բարձրեալն ոյ՝ զկենդանական զօրուն գումարտակ հերբայական փառեալ ամբոխին, և այժմ ընդ նոյին իբր զանմաքուրս ՚ի սրբութենէ՝ զամանս ախտիւ մեղանաց ջեռեալս հատուածեալ յինքենէ հեռի, ուղեկցէ ապրեցելոցն ՚ի տաժանաւոր աղխաարկութեանցն։ Այն իսկ [78] էութիւնն ոյ մարմին եղելոյ՝ անուամբ այս մի նշանակեցաւ, սպատամամբ կողին զընտւս արբուցեալ։ Ոչ [79] արեան երակաց ընթացք, այլ լուսոյ վերնոյն շառաւիղք թափանցանց մրութեամբ զոյն կենդանացուցեալ նորոգ պաշտպանէ. [80] ոչ Աղամն կամ Օրաքարէլ մահկանացուաց ստախկանութիւն, այլ ամենից ունողին իմաստ զսա գծագրէ. ոչ անմուխրական հասարակաճաշակ իւղով առ ՚ի Յակոբայ պարարի, այլ ահաւորին արեամբ և փառօք մեծին օծանի։ Ոչ [81] տուն երկրային նիւթոյ՝ քան թէ մարմին երկնային լուսոյ ոյ զարլին որդիս կընքեալ ձեռնադրէ. ոչ կենցաղոյս յերկրէ յղացմունս, այլ արքայութեանն երկնից ժառանգս կրթէ. զ՚ի ծոց իւր զրգեալն զօգոյն Աբրահամու ընծայեցուցանէ։ Փեսայ [82] հարսնութեան սորա որդին ոյ կենդանւոյ, օրիորդք խնձոյից սորին հայրապետացն գումարք։ Այն ինքն [83] մտացուցի ասնէ այսակիր բարձանցն կուռմոլութեան, զի զերկնայնոյն ոյ ունի զծանօթութիւն. ստաբութիւն է ամենայնիւ զիցն զրօշելոյ, զի ՚ի համօրէն քարլիս սորա Քսի երկրպագի. քակտումն է յայտնապէս ուրուական ըղձիցն անտառաց, զի ՚ի բնաւից մայրից աշխարհի նմանութիւ կենացն փայտի ՚ի սմա տէրն նուիրի. խորտակումն է համայն գիւղապատիր յուռթիցն արձանաց, զի քարն զոլեալ կարկեհան ակամբք և վիմօք կենդանեօք այսրէն հաստատի։

ԺԳ. Այս յարկ չքնաղ և ծնընկալ [84] ազատ է միանգամայն ՚ի յամենայն ծառայութենէ. ոչ [85] օրինակ

վերնոյն Աթենի, քան թէ ճշմարտութիւն նմին ձևա-ցի. ոչ [86] կատարշութեան կարգաւ քաղքն և կամ ըծալ որինէին անեղի պարտաւորութեան, այլ ունէրոնի բարե-բարութեան պարգևարան ՚ի մէջ Համբուրի. Ը [87] տուամբ երբեք յայլ ինն կերպարան ձևոյ փոխարկեալ, այլ ՚ի նոյն շուք փառաց մեծապէս ընդարձակի. այն ինքն և երկին երկնի յերկրի բռւստպայծառ կերպիւ Հրա-շակի. Որպէս չէ [88] տառնոյ Հորն Աճի, և ոչ տառնոյ այսր մօր արգանդի յոգի կատարին. [89] Ընտու չքճի ան-բովանդակելին, եթէ ոչ ՚ի ոմին տան տարաւորեցի. ոչ ունի անելի գլխոյն Հանգստեան անլոն բոլորից, եթէ ոչ ՚ի յայս կայարան կենաց մնեալ աղանիցի. Իսան [90] ՚ի կամար վերնոյնին երկնի՝ ՚ի յայս Հիւթասոր բնա-կութի առաւել պարծի. [91] անբաւութիւն ամեն բու-այն, որպէս զգէմս մարգարէին և զօրինակս այրին ծած-կեցին, որպէս փախեան ՚ի փառաց երեսաց նորին, և նմանութեան առուն՝ որ ՚ի տաճարին՝ ոչ Համդարա-ցին, ՚ի տան Համդխափ մեծի գալեստի, և ՚ի բանակս-նաց զաստեց խմբեալ նուագի. տառ որՀնի կրկին բաղ-ձանօք, քան ՚ի գրախտն վայելչական.

ԿԴ. Այս մայր Հոգևոր երկնաւոր լուսաւոր, քան թէ երկրաւոր ճշմաւոր մարմնաւոր, զիս զգուեաց որդի. կանթն առեալ սորա արիւն Աճի. Եթէ [92] ամենայնին խոկ պատկեր զայն որ գրեցաւ. ոչ անօրինի. Իբր զճշան խաչին փրկութեան զօրութիւն զարմանազան և ա-րուեստ բազմօրինակս կատարեալ Հրաշագործէ. ընդ աՀաւորին սանդի՝ ՚ի սմա Հաստատեալ անսանի. ա-վաղ խորհրդապաշտեցին Հերձուածողաց մոլեգնաձայն բե-րանք կարկին. Ունի և [93] բարձրս խին խնամոյս և բա-նաւորականս, որով զզաստուածայնոյս անձնաւորս բազմաս ՚ի բաց արտաՀեալ տարագրէ. Ունի և [94] ամեն անձնս եզական՝ պատկերս մարդոյս միայն այդ Աճի. Ունի և [95] գլխոյն խոր ըստ արեգակ՝ ՚ի անելի խառնման բնութեան մերոյ առաջնոյ. ձևոյն խին ցուցանէ յայտնապէս ըղ-ձորաւորեան այդ շուքիդ, զփառաւորականն առակ ոտրակերն ՚ի զէմս բերեալ մեզ վարդապետէ, զփրկութիւն ՚ի յե-լից անոյշ ծաղման ադամականին ջինեաց երեւմանն ՚ի վերջ-նում՝ առաջին արարածոյ երկրի թարգմանէ. Իյաս Հա-րմէ, անխառնելով բուժէ, զխեղց բանութեանց զօրէ.

Արգանդ ողորմածին որբոյն աստուածն կենդանատուր . ՚ի պատ հոգևորական սրտի զարդ աստղերայն ։ Արքայն Խա-ւոյս բարգաւաճեալ երանութեամբ , մինչ զի նոյն ինքն[96] փրկչին անուամբ փայլեցաւ յորջորջեցաւ . որ-բանօրն լուսոյ կոչմամբ ՚ի մերձաւորաց միածնին ծայ-նեալ կոչեցաւ ։ Ծփելոց մեղաւորաց նաւահանգիստ հանդարտութեան , խորախնամարան վերնոցն դասուց , բժշկարան անախտելի տառապեալ պատուաւորաց , Աստուածութիւն անապական ՚ի սմա փառաւորի օրհ-նեալ յամենայնի ։

ԺԵ . Իսկ եթէ որ[97] ձեռն չարութեան ՚ի վերինն ար-քայութիւն յանդգնաբար համբառնայցէ , և զի ոչ ինչ մարմնաւոր և կամ հոգւոյ մարդկայինն և կամ արուեստ երկրաւորացն զուարճանեալ աստուածութեան ձեռն կերպս եկեղեցի վարկանիցի , և ոչ պարզել առաւել կե-նաց և[98] անյեղութիւն ամենայն և հոգւոյն սրբոյ յայտ-նեալ լուսանորոգ նախայղութեան և երախտեաց բարձ-րելոյն ամենատուր լինելութիւն և կամաց արարողին ինքնաշնորհեալ խորհրդարան և տարերաց ձեռինն աջոյ բարեհաճաձայր հրեշտակութիւն , և միանգամայն ամե՛ զաւան երկնից և բազում ոչ կենդանեաց և մայր կենդա-նեաց աղատ ՚ի պարտեաց և Ճշգրիտ անեալ կերպի ե-րեւելի բանականի , իմանալին՝ խորհուրդ հոգւոյս , և շօշափելին՝ պատկեր մարմնոյս , և որդութեանցն անդան-Ճառից զերազանցեալ նոր որդութիւն և քննեանն նշա-նաց արգասաւորած պատկերեալ , զայնպիսի ոչ խառնա-փառաւոր մերժէ յերեսաց իւրոց հայրն ամենակալ ՚ի ձեռն բանին իւրոյ էակցի , բարձեալ ՚ի նմանէ և զա-ւանդ շնորհի հոգւոյն փառակցի . փակեսցէ զդուռն կե-նաց այս առաքառաքի յանդիման նորին ։ Իսկ մեք զոր-ծրեցաք՝ ամին և միայնակեց , հաւատացեալ որում կար-գեցաք , յանուն և ՚ի փառս ամենակալ Աստուածութեան և միում էութեան , յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

[98] Այն իմ հասաւ յերրորդութիւնն , և այս ՚ի մայրն իմ լուսափառ խառնափառեալ զաւակութիւն ։

1 [illegible]։ Ի լաւ օրինակս, և 'ի հին լուծ. և յանմնս նախնի ապագիրս չէր այս մակագիր, այլ փոխան սորա գնի յաջորդն. [illegible]։ Եւ սաստել հարազատ թուի այս. քանի զի սկիզբն գլխոյս իբրև նախաշաւիղ է հետեւեալ բանին՝ [illegible]. ուստի ոչ ունին պէտս այլևայլ մակագրի։ Եւ ինձ թուի թէ այս աղօթք ըստ կարգի արարեալ իցէ յետ ԼԳ բանին, յորում զգաստանութիւն հաւատոյ արտայայտեալ ըստ նիկիականն հանգանակին։ Եւ քանի զի յայնմ հանգանակի լսեալ ժողովն նիկիոյ զմասնն 'ի վերայ սուրբ Եկեղեցւոյ՝ որ կայ 'ի հանգանակին ասացելոց և կատարմանդանուտոփ ժողովքն, նախ իբր և սուրբ վարդապետս ոչ արար անդ բացատրութիւն 'ի վերայ Եկեղեցւոյ, զոր աստ առնէ ընդարձակ։ Այսմ կարծեաց առաւելապէս հիմն տայ մակագիր բանիս յանէլն, [illegible], և այլն։ Այսպիսի կրկնական բաժոյնից յարմարումն ունին ընդ ՀԳ բանին՝ որ նախ քան զայս. բայց կարի քաջ յարմարին ընդ ԼԳ բանին՝ ոչ միայն ըստ նիւթոյն, այլ և ըստ ոճաւորին. զի աստ ասէ. [illegible], և այլն. ցուցանէ յայտնապէս թէ նախ քան զայս՝ զերախանայն ոյ ձևս արկեալ իցէ ընդարձակարար. որ ոչ այնչափ հայի 'ի բանն ՀԳ, քան թէ 'ի բանն ԼԳ, յորում 'ի վերջին հանգոյն կատարումն յառաջբերէ զերախաին ոյ, ուստի կարի յարմարութեամբ զհետ գայ ասելն, [illegible]։

2 [illegible]. այսինքն յառաջոյ և զկնի։ Զչորեսին գիրս մարմնոյ յիշելով, ասել կամի, յամենայն կողմանց պաշարեալ են զմեզ անբաւ երախայք չորրեակ քոյ։

3 [illegible]։ Միւսանգամ երկրորդումն աստուածութեան ազգելոյ ամծայնն հոգւոյն՝ որ ինչ յատարելոյն սաւհմանեցաւ 'ի պայծառութի զաւանութեն Եկեղեցւոյ, [illegible]. բացայայտարար եղեալ ասատնոր։ Ընդ նմին խորհրդածութիւն՝ որ ինչ 'ի նիւթական եկեղեցին կամ 'ի տաճարին ցուցանի [illegible], հոգևոր նշանակութիւն՝ որով զերբաղդրան երկնից յինքեան բերէ։

4 [illegible]։ 2 օրին. [illegible].

5 [illegible]։ Ըստ չարադրութեանն՝ հերձուածական՝ է ածական եղեալ 'ի սեռական հոլով ըստ չրջեան ձևոյ. և պարզն՝ հերձուածականաւ չարափառութեամբ, որպէս ներհակական ասէ՝ [illegible]։ Ըստ խմաստիցն, [illegible], մանաւանդարար ասել, է կամաւ որ բաժանումն 'ի հոգևոր միութենէ։ Իսկ չարափառութիւն՝ յանոտ մոլորութի 'ի հաւատոյն. թէպէտ 'ի մեր գիրս հերձուածն անխտիր փոխանակ երկոցուն ևս գնի։ Արդ զերկասին ևս հետևեալ ասանձոյ առ նախասակղծն, թիւր մեկնելով զբանն աստուծայինն ոյ, և այնու բաժանեալ զնոսա 'ի հաւատակցութենէ օրէնացն։ Եւ այնպէս յագամ հերձուածական չարափառութեամբ, որ է կարծ աստուծոյի, որոշեցոյ, ասէ, յոյ, և մերժեցոյ 'ի դրախտէն։ Իսկ այժմ այսու միաւորական ուղիղ [illegible], այսինքն ուղիղ առքին զաւանութբ հաւատոյ՝ որ է խնկապէս ասանդ պարզևեալ յոյ, դարձեալ վերացույց յերկինս, [illegible], այսինքն ըստ ասար թեանց հաւատոյ թաչելով։ Հին լուծ. [illegible]՝ խմանոյ զաւանութբ երրորդութեանն, որ միակն է։ Բայց աւագինն է յարմար բանիս, այսինքն միաւորին՝ իբր հակառակ հերձուածականին։

6 [illegible]։ Աշատեր [illegible] թարմանար է, և խմաս-

պարբերութեանն այսպէս պարզի։ Պարտ և արժան է 'ի յիշատակ Ճառիս երրորդութեան՝ նաև զգուշել մայրն իմ զեկեղեցի ըստ կանոնի հաւատոյ արձանացուցանել 'ի մատենիս, [illegible], այսինքն յաւազանէն, կամ 'ի նիւթական տաճարէ անուն՝ յորում հոգևորապէս ծնայ 'ի մկրտութեան։ Որպէս զի ծանիցի յետոյ եկեղեց ազգաց մեծութիւն փառաց [illegible], այսինքն զամբողն՝ որ է եկեղեցին, արժանաւոր պաշտամամբ բանի և մեծարանաց պատուել յամենեցունց՝ իբրև մարմին մարմոր ընդ գլխոյն քնի։ Իսկ եթէ [illegible] ոչ համարիցի Թարգմանար, մարթ է կարել զհարգաւն բանին ընդ աւելոյն զինի, Եւ [illegible] 'ի յայս, և այլն, իբր աւել. և արտաքնեաւ յարգաւորէ աւազանին մկրտութեան արժան է զաւութի յիշատակել աստանօր և զմայրն իմ զշխոյ զեկեղեցի, վասն այն յայսմ աղօթական բանի՝ յորում յարմարել խոսիմ զնորանէս լուսոյ, ընկալ զիս, և այլն։

7 [illegible]։ ամենայն կուսակրօնից՝ 'ի մարդկանէ Ճշմարիտ մայր է եկեղեցի. կամ, Թագուհի ամենայն կուսից։

8 [illegible]։ այլ օրին. [illegible]։

9 [illegible]։ Եկեղեցին իբրև մարմոր մարմին՝ պատուեսցի ընդ գլխոյն, որ է մարդացեալ բանն ած։

10 [illegible]։ այսու հոգևոր պատկերաւ աղօթիւ, որ զեկեղեցւոյ [illegible], յորինի կամ խորհրդածի յինէն՝ որպէս զիս յաղօթելս 'ի ամին։

11 [illegible]։ ընկալ կամ յօգնս զանձխառնս [illegible], յեկեղեցի քնի, և անուն փոխեա 'ի [illegible], յայրպայութենէ երկնից (ըստ զաւթար. ժԹ. 8։)

12 [illegible]։ Զմաանելն յեկեղեցին և զելանելն անուն մի ունայն կամ անօգուտ [illegible], այսինքն Թողցես լինել։ Ի հետևեայն կարգաւ յիշելով զբարեպաշտութեան գործսն՝ որք լինին յեկեղեցւոջ, աղաչէ՝ զի մի վայրապար և անօգուտ անցցեն։ Եւ նախ զհաւատոյ դաւանութեան՝ որ լինի 'ի սկզբան ժամերգութեան, կամ 'ի պատարագի հանգանակաւն, աղաչէ չլինել ցուրտ։ Եւ համբոյր ողջունին՝ որ 'ի պատարագի՝ մի լիցի անկարգ, խառնիխուռն, իբրև զմարմնական ողջոյնս, այլ պարկեշտութեամբ 'ի նշան հոգևոր միութե և սիրոյ. կամ, խմանի համբոյրն արարեալ յորմունս և 'ի սեանս եկեղեցւոյ։ Եւ [illegible] ժամերգութեան, կամ խնկարկութեան մի լիցի [illegible], խառն, անընդունելի։ Եւ [illegible], կամ ծնրադրութեան՝ որ լինի 'ի ժամերգութե, 'ի պատարագի, կամ սրբազան իրաց՝ խաչի, պատկերաց, նշխարաց սրբոց, և այլն, մի [illegible], անբանաւոր արարեալ արտաքին ձևով միայն։ Եւ [illegible], հայեցեալ ձևոյ եկեղեցւոյն, կամ տեսութե քահանային, որ պատկեր է քնի, և խորհրդաւոր զգեցեալ, մի լիցի անօգուտ առանց քննելոյ զխորհուրդն։ Հին ըծ, պատկերաւ խմանայ զհաց և զգինի պատարագին, իբրև թէ ալքա պատկեր են քնի։ Մարթ է աւել զայս ըստ մասին ինչ. այսինքն կամ 'ի վերայ հացին և գինւոյն նախ քան զքահանայագործութիւնն, կամ յետ այնր՝ ըստ խորհրդական տեսակայն միայն. և կամ զի երևեցուցիչ է արիւնաւոր պատարագի խաչին։ Եւ [illegible], պահպանելի խորհուրդ և նշանակութե տեսակի տաճարին և զարդուց նորա մի [illegible], այս և անծանօթ 'ի միտս իմ։ Եւ [illegible], հոգևոր կամ բանաւոր պատարագ աղօթիւք, կամ նուէր ընծայից՝ զորս ընդ քնի պատարագին մատուցանեմ, մի մերժեսցի արտաքս իբրև անընդունելի։ Եւ Ճաշակումն մարմնոյ և արեան քո մի 'ի դատապարտութիւն ինձ գայցէ։

13 Մի [illegible] ։ 3 օրին․ [illegible]․ կրկնակի խմնի [illegible], կամ իբրև մակբայ, այսինքն ատամեց հրոյ սիրոյդ՝ մի զենումն ողջակիզի մորմոց քո՝ [illegible], այսինքն կատարեսցի։ Եւ կամ իբր անուն ածական՝ [illegible], այսինքն ատամեց հրոյ մատուցեալ ողջակիզին զենումն մի մեղցի 'ի միտս իմ։ Եւ ըստ երկրորդ մտացս՝ առաւել յարմար է առել [illegible]։

14 Մի [illegible]․ այսինքն մի յածումնենէք․ ըստ այսմ խմս յարժամ ասի․ [illegible], և այլն․ զոր այլ բազում ուրեք առէ սուրբ վարդապետս։

15 Ի [illegible]։ Ուստք քե և 'ի ձեռն առաքելոց՝ [illegible], ամենեցուն և հասարակաց պարգևեալ կարգս, կամ ամենայն բարեաց պարգևող կարգս եկեղեցւոյ։ Այս կարգ է, առնել նախ քան զամենայն՝ դաւանութիւ ուղիղ հաւատոյ, զոր քո առաջին պահանջէր յամենեցունց՝ որք մատչէին առ նա․ և ինքնին ուսոյց թէ զխորհ սպաս է դաւանել զհայր և զորդի և զհոգի սուրբ․ և 'ի ձեռն առաքելոց բազմայայտ ուսեալ զկարգ հաւատալեաց 'ի հանդամանակին․ զոր և եկեղեցւոյ ընկալեալ, նախ քան զամենայն զհաւատոյ դաւանութիւնն պահանջէ և մատուցանէ։ Հին լուծ․ խմնոյ զկարգ ատախձանաւորաց եկեղեցւոյ․ իբր թէ քո զանազան գործովք եղոյց զատախձան ընթերցողի, կիսասարկաւագի, և այլն։ Բայց առաջինն յարմար է տեղւոյս։

16 Եւ 'ի [illegible]․ ըստ այսմ կարգի առէ յեկեղեցւոջս, որ է տեղի նախիրման աղօթից, և լուսարան փրկութեա բարեաց, մատուցանեմք զայս կնդրուկ դաւանութե, քեզ [illegible], այսինքն փառաւորելոյդ երիցս սուրբ երգով, [illegible]․ այսու բանիւ օրհնութեան կամ գովաբանութեան։

17 [illegible]։ անտանելի կամ անպարագրելի յարարածոց։

18 [illegible]։ քննակից բովանդակից համայն երկնից, որ տաս չափ կամ սահման ընդարձակութե երկնից։ և [illegible], անսահմանելի կամ անպարփակելի անդնդային խորոց։ Ոչ վերինք պարփակեն զքեզ, և ոչ ներքինք, այլ ամենայնի նոյա դու ես բովանդակիչ։ Փոխանակ բանին [illegible]՝ մի օրին․ գնէ [illegible], վրիպակս։

19 [illegible]։ լրացուցիչ, կամ վերջին վախճան ամենայն մտաւոր վախճանաց․ կամ, առատեալ և եղծեալ իրաց լրացուցիչ, ըստ որում 'ի բնութիս իրաց՝ յապականիլ միայն՝ զայլ փոխանակ նորա յարուցանէ նա։ Կամ, լրութի և կատարելութիւն ծայրից իրաց․ այսինքն գերազանցութեց յիւրաքանչիւր սեռի․ իբր զի նա է լրութի գերակատար իմաստութե, գերակատար զօրութե, գերակատար սիրոյ, և այլն։ Եւ [illegible]․ այլ օրին․ [illegible], այսինքն նախկին ամենայն սկզբանց, և է նախկին գոյութե, ըստ որում առաջին քան զամենայն սկզբունս՝ նա գոյ նախկին արարչութեամբ, ըստ որում ինքն գոյացոյց զայլ սկզբունս․ նախկին շարժողութեամբ, ըստ որում ինքն զնոսա շարժէ և մերձեցուցանէ 'ի գործ։ Կամ, զերկու զայս գիմադրեալ իմս այսպէս, դու միշտ ես նոյն, ուր այլք ամենայն սպառին․ և միշտ նախաղիր դու ես՝ յորժամ այլք սկիզբն լինին։

20 Մի [illegible]․ մի էութիւն յերից անշփոթ անձանց․ [illegible], երեք անձինք միոյ անբաժանելի [illegible], այսինքն իսկութե կամ էութե, յորջորջման փոխանակ եզակի եղեալ։ յերիս օրին․ [illegible]՝ 'ի [illegible], զոր մերթ է այսպէս ևս պարզել, երից անձնաւորական իսկութեց կամ անձանց, որք անհատանելի են 'ի միոյն, այսինքն յէութէն։ [illegible] փոխանակ անձին առի և այլուր ( յա

Նախադասում․ գլ․ Է․ երես 33) ուր հայր ած՝ կոչի « պատճառ նոցունց խաւարեանցն »․ այսինքն անձանց որդւոյ և հոգւոյն։

21 Ի վեր քան զմիտս անորակելութեան՝ յարակերպել ամենայն սուրբ բնական․ 'ի մի օրին․ յարակերպեալն կեանս զատանի 'ի հեռաւոր բաւիցն։ Իմաստն է, առաւել քան զիրրութի կամ զանսարութի մտաց՝ որով անարգել մտանէ և ընթանայ յամենայն տեղիս, ած անդր ևս ձգի անչափութեամբն, որով բովանդակ ամենայն սուրբք լինին։

22 Անխառն կերպարան։ Խակութի սիրոյ՝ որ անխառն է յականաւորութենէ, 'ի չարահարութենէ, 'ի մեծացուցիչ խորհրդոց։

23 Անհասանելի տեսականութեան։ անմատչելի տեսողութիւն, կամ անհասանելի տեսիլ և գեղեցկութիւն։

24 Առատ արփիառար։ առաւ[?] կամ պարզև բազմարգիւն․ կամ, պահեստ՝ որ 'ի մեզ նմանեցուցանէ արգասիս բարեաց։

25 Վերամբարձութեան։ գերազանց բարձրութի, յոր չհասանէ ձեռն մտաց, կամ զօրութեան և իշխանութեան։

26 Համագոյակից Երրորդութեան։ Զայս և զյաջորդսն խմա 'ի Թանձրացեալն․ այսինքն համապատիւ կցորդելոյն, անպատում աղցակցացն, երկբլուսեան զուգակցացն, անյաւելուած լրացելոց, այսինքն կատարելոց։ Այլ, ասէ, որդին ած, մի բովանդակ (մի օրին․ բովանդակեալ․) յերից համագոյութեանցն՝ ընդեան կամաւ՝ առ 'ի պատիւ հօրն, գործակցութի հոգւոյն սրբոյ խոնարհեցաւ յարգանդ կուսին, և այլն․ ... 3 օրին․ ...

27 Անճառ ծնունդ։ Կազմեալ զմարմինն՝ որ էր առանձ օրհնութեան՝ 'ի լուսաւոր և յանարատ անդամանէ արգանդի կուսին։ Զոր ընդ ամենակատար էութի ածութեն հանգուցեալ, այսինքն գոյակից արարեալ զմարմինն յանընդհատ միութեան, անբաժանելի միաւորութի, ... , նկըքին և սերտ կապակցութի, ... , յանմարմին ածութեն բաղադրեալ զգոյութի բանական հոգւոյն։ Որովք ասել կամի, անձն որդւոյն ած յիւր ածութեն միաւորեալ անբաժանաբար զմարմինն և զհոգին բանական։

28 Անփոփոխելի նորոգման։ Միաւորելով անբաժանելի զմեր բնութիւնս ընդ իւրում ածութեն, այսու իբր անզերծանելի սանձիւ զիմ ապստամբութիւնս կամ անհնազանդութիւնս հանդարտեցոյց։

29 Ի ծոցս լուսեղէն։ Ծաղիկն կենսատու վերացաւ 'ի բարձրութի ... խաչին, որ եղև գործի անմահութե․ մի օրին․ ..., այսինքն որ անսահման եղև ըստ զօրութե և ըստ տեղւոյ․ զի զօրութի խաչին յերկինս և յերկրի ներգործէ, և պատուի ոչ միայն յերուսաղէմ, այլ մինչև 'ի ծագս տիեզերաց։

30 Առաքեալս ... ։ Որդին ած մարմնացեալ՝ 'ի մահ վերաւորեցաւ, ածութե անբաժանելի գոլով 'ի մեր նմանակից մարմնոյն, որով կենսատու արար զխաչն՝ զգործին մահու։ ..., խմա 'ի Թանձրացեալն, այսինքն արարիչն ած 'ի խաչի անդ միշտ առանց բաժանման կրելով ընդ նիւթական մարմնոյն։

31 Երկնաւոր նորոգութեանց։ մի օրին․ նորոգութեանց։

32 Նախնական պարզութեան․ այսինքն նոստա հանդերձ առեցելով մարդկութեամբն 'ի գերական փառսն՝ զոր նախ ունէր ըստ պարզ աստուածութեանն։

33 Ինձ է միայն։ Ըստ կրան յայսն․ իք․ 13․ « Ես եմ ալֆայ և ով, սկիզբն և կատարած, առաջին և վերջին »։ Եւ այս պատշաճի քնի ոչ միայն ըստ ածութեն, այլ և ըստ մարդկութե, որով 'ի կարգի շնորհաց և փառաց ինքն է սկիզբն և վախճան ամենայնի։

34 [illegible]. այսինքն 'ի սկզբանն համառօտած խաւա-
րին՝ որ կոչեաց ունէր զաշխարհս, ամենածին ջուրքն ծածու երևեցու-
ցանէր զաւրը աւազանն մկրտութեան, 'ի կատարումն [illegible], այժմեան
խորհրդոյս :

35 [illegible], այսինքն ներգործութիւն, գործս, [illegible]. մի-
օրին. [illegible] :

36 [illegible], այսինքն զեկեղեցի, կամ զաւրը սեղանն
սրբարար, յորում մատուցանի արիւնն քո, յարգարեաց, և այլն:
[illegible]: Հոգին սուրբ 'ի մէջ եկեղեցւոյ հրամայեաց տա-
նել քաւութիս հոգւոյ՝ սրբելով 'ի մեղաց, այլ և [illegible] մարմ-
նոյ. որպէս և տէր քո 'ի բժշկել զմարմինն սրբէր բաղում անգամ
և զհոգիս :

37 [illegible]: Գերազոյն քան զջրոյ մկրտութեան ներգործեաց
յառաքելոյն. յորս բաց 'ի ներքին սրբութեան շնորհաց՝ որ լինի մկր-
տութեամբ, ազգեաց և զայլ պարգևս՝ լեզուագիտութեան, պատշելա-
գործութեան, մարգարէութեան, և այլն: Նոյն և զկուանելեանս մկր-
տեաց ասանց ջրոյ՝ իջանելով առ նոսա լեզուացն այլատարազութեամբ
(գործոց. Ժ. 44:)

38 [illegible]: Զհոգին սուրբ օծումն կամ օծանող ասել
քոյ, պէսպէս իմանի: Ըստ գոյացական օծմանն՝ որով մարդկութիւնն
'ի քո ասի օծեալ անձնաւորական միաւորութեամբն ընդ բանին, հո-
գին սուրբ ասի օծանող՝ ոչ 'ի ներքուստ (զի ըստ այսմ բանն ինքն է օ-
ծանողն.) այլ արտաքուստ, ըստ որում գործ մարդեղութեանն արտա-
քապէս յառաջ եկեալ 'ի բարութէ և 'ի սիրոյն այ, առանձին իմն օրի-
նակաւ ընծայի հոգւոյն սրբոյ, որպէս և ասի յղանալ 'ի հոգւոյն սր-
բոյ, և այլն: Ըստ պատահական օծմանն՝ որ 'ի ձեռն հաճոյարար շնոր-
հաց, հոգին սուրբ է օծանող մարդկութեան կամ բանական հոգւոյն
քոյ, ըստ որում գերազոյն լրութիւ շնորհաց 'ի ներքուստ միաւորեալ
էր ընդ նմա 'ի սկզբանէ յղութեան: Դարձեալ, ըստ իշխանական օծ-
մանն՝ հոգւոյն սրբոյ ընծայի օծանելն կամ կացուցանելն զքո ըստ
մարդկութեան թագաւոր, քահանայ և մարգարէ: Նայս կոչումն հոգւոյն
սրբոյ, և խմաստք նորա հաստատեալ են 'ի բանն եսայ. (կա. 1.) « Հո-
գի տեառն 'ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս »: Որպէս և 'ի սաղմ.
(խդ. 8.) « Վասն այսորիկ օծ զքեզ ած ած քո իւղով ուրախութեան »
և այլն. զորմէ մարթ է տեսանել և 'ի մեկն. երրոյ. ա. 9:

39 [illegible]: Յետ ընդարձակելոյ զդաւանութիւն երից անձանց,
անցանէ 'ի դաւանութիւն եկեղեցւոյ ըստ կարգի հանգանակին,
որ ասէ. Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և առաքելական ե-
կեղեցի. զոր սուրբ վարդապետս տարածէ առ կենդանի եկեղեցին, որ
են հաւատացեալք, և առ անշունչ եկեղեցիս, որ են տաճարք: Օրի-
նակք պէսպէս գրեն զմակագիրս. ոմն զմանկերեցիս միայն յիշելով, ոմն
նաև զպօղիկեանս. և թուի եղեալ ոչ 'ի սրբոյ վարդապետէն, այլ յայ-
լոյ՝ առ 'ի ցուցանել զգլխաւորութիւն յաջորդ բանից դաւանութեանս.
Իբր զի գրեաց ընդդէմ Թոնդրակեցւոց, որք ասեն խառնակութեան զա-
նազան աստիճանաց՝ զանազան անուանս ընկալան, այսինքն մանկերեցիք.
պօղիկեանք, կամ պաւղիկեանք, և այլն. որք զեկեղեցի արհամարհէին,
և զամենայն որ յեկեղեցւոջ կատարի, ծաղր առնէին: Նա զի սորա 'ի
տասներորդ դարուն միւսանգամ բազմացան 'ի հայս, նմին իրի վար-
դապետք ժամանակին ըստ բերելոյ պատահութեան գրէին ընդդէմ նոցա
գովեստ եկեղեցւոյ, խաչի, մեռոնի, և այլ սրբազան անօթոց կամ ա-
րարողութեանց: Յորս և անանիա վարդապետ նարեկացի գրեաց զպատ-

մութի և զմերժումն սիրոյ Թոնդրակեցւոյն, զոր և յետ չորրորդին 'ի Թուղթն 'ի միջակէտս։ Գոյ և այլ ձայն ներբողական 'ի շողակաթին, զոր կիրակոս պատմիչ առէ՝ արարեալ անանիայի սանահնեցւոյ՝ յաւուրս կաթողիկոսացն խաչկայ, կամ գէորգայ, կամ պետրոսի։ Ի սոյն պատճառէ և սուրբս գրիգոր զսաջորդ ձայնդ յօրինեաց. որպէս և զբանն՝ յաղագս փոյթի ժամահարին, և վասն սրբալոյս մեռոնին։ Զկատարեալ անդէկութիւն Թոնդրակեցւոց տես 'ի պատմութիւնս։

40 [illegible]։ Դաւանեմք, առէ, զպատճառս եկեղեցւոյ շինելոյ յանչունչ քարանց, երբ ոչ եթէ լոկ զմարմնական շինուածն զնելով նիւթ հաւատոյ, այլ ըստ որում նախերեալ է 'ի բնակութիւն այ, և 'ի կատարումն սրբազան մատակարարութեանց, և երբ այսպէս՝ պատուէլի, և օրհնագրեալ յառաքելոց անտի 'ի նորուն, որպէս և յայխի 'ի մովսիսական օրէնս. վասն այսորիկ յանձնայն զարս և յազգս՝ ուրացողս և արհամարհողս պատուոյ և պխտանութե եկեղեցեաց՝ ընդ հերետիկոսս դասեցան. որպէս և պետրոբրուսեանքն 'ի գաղղիա՝ յերկոտասաներորդ դարուն. որոց առաջնորդն հրով ընկալաւ զատտակումն։

41 [illegible]։ Ոչ է բաղդատութիւն ընդ երկնի երանելեաց կամ ընդ արքայութեան, որում երկրաւոր եկեղեցիքս օրինակք են և երբ զաւիթ, այլ ընդ երկնի աստեղաց. որ Թէպէտ և բարձր է զրէք և աստեղազարդ, բայց երկրաւոր եկեղեցիս, առէ, անձնայնիւ զարդարեալ է հոգևոր շնորհօք, և բարձր ըստ խորհրդոյն. և մանաւանդ երկրաւոր նիւթական տաճարն զերազոյն համարի քան զաստեղեայն, այնու զի քս որ զերկնից ամբարձեալ կայ քան զանձնայն երկինս, աստ 'ի տաճարի կայ 'ի ներքոյ սուրբ խորհրդոյն։

42 [illegible]։ Վկայէն բազում պատմութիւնք, թէ 'ի ժամանակս առաքելոց շինեցան եկեղեցիք և մատրունք ըստ ներելոյ անդէայն. և զնոյն խակ բան առաքելոյն (ա. կորն. ժա. 22.) «Եթէ զեկեղեցեան այ արհամարհէք», յաղագս նիւթական եկեղեցւոյ են խմանան բազումք, ոսկերերան, հերոնիմոս, օգոստինոս. և այլք։ Կայ և հաստատուն աւանդութիւն, թէ զվերնատունն սիոնի առաքեալքն եկեղեցի արարին. զոր և կիւրեղ երուսաղէմ. կոչէ եկեղեցի առաքելոց (կոչ. ընծայ. ժզ. 37։) Եւ սուրբ վարդապետս առէ զնմի, թէ 'ի վերնատանէն սկիզբն եղև հիմնարկութե եկեղեցեաց. և յօրինակ սրբութեան սոյա՝ հոգին սուրբ նախ զատեն էլից հոգիով, և ապա 'ի բնակեալսն 'ի նմա հանդերձ հրեղէն լեզուօքն։

43 [illegible]։ մի օրին. [illegible]։ Հոգին այ նախ զվերնատունն զարդարեալ լցոյց հոգւով, յօրինակ սրբութեան եկեղեցւոյ՝ ցուցանել թէ նախամեծար աւանդութիւն ունի եկեղեցի քան զբնակեալսն 'ի նմա։ Յետ լման եկեղեցւոյ՝ տաւու բնակչացն [illegible]. մի օրին. [illegible]. այսինքն հրակերպ լեզուօքն նշանակեցաւ զանազան շնորհացն պատիւ։

44 [illegible]։ Արիւնն քոյ մատուցեալ յեկեղեցւոջ՝ աւանդել է քան զհաբելին. զի սա եղև [illegible]. զմահն և զվրէժխնդրութիւն բողոքէր. իսկ քոյ արիւնն աւանդել ես ազդողագոյն զկենդանութիւն մեր հայցէ (եբրայ. ժբ. 24։)

45 [illegible]։ պատարագն քոյ ոչ շատանայ 'ի բացի 'ի ներքոյ երկնից մատչել, եթէ ոչ ծածկոյթ 'ի վերայ ունիցի զձեղուն եկեղեցւոյն։

46 [illegible]։ Զ օրին. [illegible]։

47 [illegible]։ Զարիւնն՝ որ էր օրինակ հոգւոյ, արտաքոյ խորանին մատուցանել՝ արգելեալ էր յօրինաց։ Զոր ինչ ցայտելոյ սաղ սուրբ վարդապետս՝ յաղագս ոչ մատուցանելոյ զձեծոյին պատարագն

արտաքոյ եկեղեցւոյ. հայի 'ի մերժումն ախտն աղանդոյն Թոնդրակեցւոց. որք զամէն խորհուրդն անգոսնէին եւրեք զանխափ ռեղմն, ուստի եւ ոչ պատիւ համարէին խորել զանեղի մատուցմանն։ Նոյն թէ ոչ՝ հարկն որ ոչ գիտէ զօրէնս, բայց մ՝ անդամ առնելի արտաքոյ եկեղեցւոյ՝ յայլ պաշտօնատուր տեղւոջ եւ մատուցանել հանդերձ կարեաւ յարգութեանցն. որպէս 'ի ժամանակս հալածանաց, 'ի բազմբեալ պատերազմունս 'ի մէջ բանակին, եւ յայլ վիճակս սոյն կարեոր։ Զի եւ սուրբ գրիգոր լուսաւորիչն զանզան շարժական բեմ իւր շըջեցուցանէր, որպէս յերէ յաջնան խոստովանէր 'ի կանոնան մի։

48 ԶԻ Գ [illegible]։ Հ որին. ՀԻ Գ [illegible]։ Եկեղեցւոջ մի է լուսոյումն կամ մկրտութիւն 'ի [illegible] ( բառ աստհամմ. Գ. 3.) այսինքն 'ի զորութիւն մաշտոյնն քնի, կամ յօրինակ մաշտ նորա թաղմանն 'ի ջուրս։ Նոյն որպէս մանկամ էր մաշն քնի, նոյնպէս մանկամ եւ մկրտութի. ՀԻ Գ [illegible], գի մի անձն բան՝ որ յանդէպ հրէից, կամ անդխատ թէ անարգեցաւ 'ի խաչին, վերաբին 'ի [illegible]. այսինքն 'ի [illegible] կամ 'ի հաւատոյն զառաջին մաշտ կրեացէ։ Ակնարկէ 'ի բանն ( եբրայ. է. 4.) որ ասէ աւագաւոյն, անհնար է մանկամ մկրտելոյն եւ թէ կործանեցին 'ի հաւատոյ անտի, միւսանգամ նորոգել մկրտութ. իւր գի հարկ էր վերաբին 'ի խաչ հանել զորդին այ. եւ գարշելով խայտառակել, որ ոչ կարէ լինել։

49 ԱԻ [illegible]։ խմանի ձեռնադրութի, թէ գրոշմն (որ ափոփոխ 'ի սուրբ գիրս գրութի ձեռաց բայմաբի. տես գործոց ը. 17. մթ. Ց.) եւ թէ քահանայութի, որք գնինք տարաւորելով անջնջելի են, ուստի եւ անկրկնելի։ Եւ երկրքին լինին 'ի [illegible], պատուով ածման մեռոնի. գի ածումն պատուական եւ սրբազան իւրոյ է անկաւոր. միանգամայն զլուսաւորութի նշանակէ, եւ շնորհէ ածեալն։ ՀԻ Գ [illegible]. այս ձեռնադրութի եւ ածումն 'ի գործ ածի յեկեղեցւոջ, եւ այն միանգամ եւեթ, որպէս գի 'ի կողմանէ գրոշմն՝ յանբածութի հաւատոյն՝ զոր ընկալաք մկրտութեամբն, մի խափանութի ուրացութե կամ մոլորութե խառնեսցի. եւ 'ի կողմանէ քահանայութեան, գի մի յանպատրաստ կարգ քահանայութե սղրգեսցի խափանութի անարժան մարդոց, կամ ոչ քահանայից։ Վասն գի ընծայեսցին 'ի ձեռնադրութի գրոշմն եւ քահանայութե՝ հաստատակաց միջնորդութե եւ տեսութե նախին, եւ անուանք նոցա 'ի գիր անկանէին բստ կանոնական առաջնորդե եկեղեցեաց. որով խափանութի ուրացողաց, կամ կարգաթողաց, կամ ոչ քահանայից 'ի յայս եկեալ յանդիմանի։

50 ԱԻ [illegible]։ Զայս անանք բստ հին լծ. խմայան զգաստութենէ՝ որ 'ի շնորհաց մկրտութե. առկայն զմկրտութենն յասաջնորդն էզ սուրբ փարգագեանն։ Այլ բստ կարգի՝ յետ մկրտութե եւ ձեռնադրութեանն, գրոշմն եւ քահանայութե՝ խմանալի է զեկեղեցական աղաչխարհութենն։ Եւ նախ զխորհրդականեն. որ քանզի իւրով զօրութեամբն բերէ զբաւութիւն, եւ որպէս ասի՝ 'ի գործոց գործեցելոց. վասն այսորիկ ասէ. [illegible], այսինքն քան թէ զօրութեամբ առաջխարհական գործոց բերէ զկենդութի։ Իսկ զայս Գ ասէ, իբր ոչ եթէ միանգամ եւեթ արձակելոյ իշխանութի ունիցի եկեղեցին՝ բստ շարափատութե նախախնամաց, այլ թէ Ճշմարիտ զղջացելոյն՝ միով բանիւ եւեթ եւ միանգամայն քաւին անձնոյն մեղք։ ԶԻ Գ [illegible], այսինքն բայց միայն՝ գի Ճշմարտութի զղջմանն եւ ուղղութենն արտաքին կերպարանաւ մի ձեռացի. կամ գի մի Ճշմարտութի նոր օրինացս արտաքուստ միայն կարծեսցի արկել եւ քաւել իբրեւ զհին օրէնսն։ Եկե-

րոյդ. խնձոածք գեղեցկական առաքինութեան, որ լինէր հրապարա-կաւ փառն երկնից մեզ՝ հաստատութեան, մարդասիրութեան, շնոր-հեան, և այլն. յորում քաւութեան պատճառն առնել 'ի շնորհաց քոց կամ եկեղեցւոյ լինէր, քան 'ի զօրութեան առաքինութեանն: Նոյնպէս յայտնի առաքինութեան միանգամ ենթ լինէր բառ կանոնաց, որպէս վկայէ ներբողականս ('ի գիրս յաղագս առաքինութ. գլ. Ե.) Նոյն և սուրբն ամբրոսիոս (գիրք Բ. յաղագս առաքինա. գլ. Ժ.) ասէ ասէ: «Որ-պէս մի է միութեան, նոյնպէս մի առաքինութիւնն, որ հրապարա-կաւ կատարի»: Նոյնպէս և սուրբն օգոստինոս ('ի թղթ. ԾԵԴ. կամ ԾԴ.) [illegible], այսինքն զի մի յանձնառութիւն այսպիսի ա-ռաքինութեան՝ ճշմարտութիւն քրիստոնէական կրօնի և ամրապնդութեան՝ կեցուցանելով ընկալցի 'ի կրկնակից քրիստոնէից, կամ իբր կերպա-րանօք յանձն առնել կարծեցի յանհնարինս:

51 [illegible]: Մի հաւատք փառացի յեկեղեցւոջ 'ի հանդերձեալ յարութեան, որով հանդիսանայ ընտրութիւն արդարոց և մեղաւորաց. [illegible], մեղաւորաց խրքն լոկ քան ինչ նորանոյն վարդապետութեան կարծեցի. որպէս 'ի փառացն պա-տիժ ու ամենայնին գյարութեան մեռելոց, առնէն՝ զի ինչ է նոր վարդա-պետութիւնդ, և այլն (գործ. ԺԷ. 19. 20.)

52 [illegible] 2 որին. չիք [illegible]. Երկուց գոյութեանց որ 'ի մեզ, այսինքն հոգւոյն և մարմնոյն, մի խրատոյն զատանուածն 'ի վերջ նուաճ առաջ՝ փառացի յեկեղեցւոջ. [illegible], զի մի հոգւոյն միայն լինելով հատուցումն, թերի փոխատրութեան կարծեցի [illegible]. յանձնանց յարութեանն՝ որով որ զողքն որդեգրութեան պատկեր յարկացն ոչ. զի յարութեան որդիքն՝ ոչ որդիք են (ղուկ. Ի. 36.) Նոյն [illegible], այսինքն հաղորդութիւն կամ մասնակցութիւն երկրայնոյ մարմնոյս թէ 'ի փառսն, և թէ 'ի տանջանս, կատարեալ ակրութեան վերին թագաւորութեանն ոչ յայտնապէս ծանիցի. թէ ուր է հոգւոյ և մարմնոյ, և զերկրայինն չէ ինքն խրատելիք զատի:

53 [illegible]: յայտ որին. և 'ի հին [illegible]. Նոյս վերկրին բանք, ասելով առնել, Մի 'ի [illegible], են ընդարձակ բացատրութիւնք յետին մասանց հանդերձեալին, որ ասէ, 'ի [illegible], և այլն. զմին առնել 'ի վերայ այլոցն զենի եղելոց, այս ինքն մի միութեան, մի առաքինութեան, մի յարութեան, մի զատաս-տան, մի կեանք յաւիտենական:

54 [illegible]: Թագաւոր յաղթէլ: Եկեղեցի անունս՝ սա յոյնս բղխեալ է, փառն այն բղխեալ անուանք՝ թագաւորաց նմանեցու-ցանել. բառ որում իբր թագաւորական իշխանութիւն [illegible] հաղեալ՝ խորհրդով հաղորդութեան. [illegible]. մերձելով զմեզ մեզաց 'ի ձեռն միութեան և առաքինութեան. այլ և 'ի մարմնաւոր մահուանէ ապրեցուցանելով զփոխարկեալն 'ի նա, [illegible], ծառայն կենաց, որ անկենդան զոլով ձայնակցին կեանս առոյր, և 'ի մահուանէ ախտից պահէր:

55 [illegible]: Զարմանական պատկերն ոչ զմարդն՝ զոր բա-նական ծնողքն ծնան, եկեղեցին անչափ՝ կատարէ և կրկին նկարէ 'ի ձեռն շնորհաց:

56 [illegible]: Եկեղեցին ձեռնն և ներգործութեանցն նմա-նութիւն հանդերձեալ է կատարին երկնից. [illegible]: Նոյս ենթէ զերկնից խմացի, իբրև թէ յաւազ քան զհրեշտակս կատարեալ իցէ յոյ, եւ կարծիք ամենայն նախնեաց՝ ականաւոր և զենքովու

ւի, զոր և սուրբ վարդապետս Թուի ակնարկել 'ի զանձն եկեղեցւոյ, յասելն. «Որ յընկղմանէն յառաջակառոյց զայս կերպարան հրաշալարդ իրի հաճեցար լինել. նախ զբնակն, ապա զբազմացն: Զգեցեր զերկինս, և անդ զերկնայինսն, և այլն»: Բայց այս չէ ընդունելի ըստ հասարակ կարծեաց: Առնայն ըստ կարգի բանին՝ յորում երկու ածականքն [illegible] [illegible], են ուղղական հոլով համաձայն գոյականին [illegible], պարտ է իմանալ զեկեղեցւոյ, այսինքն եկեղեցի գոլով նմանութիւն երկնից, յառաջակառոյց է քան զբնակեալսն յենթեան հրեշտակական զօրութեան: Զի եկեղեցին նախ կառուցանի, և ապա օրհնի առեն այ, որով լինի բնակարան հրեշտակաց: Եւ այսու զխմզլական առաւելութիւն ինչ ընծայէ եկեղեցւոյ, քան երկնից. իբր զի երկինք ոչ կառուցան յառաջ քան զհրեշտակսն բնակեալս. իսկ եկեղեցի յառաջ քան զբնակիլ հրեշտակացն կառուցանի:

57 [illegible] [illegible]: Նորօրինակ Թռչունն կամ Թեւ առոյ մարմնոյ մեռոյ՝ կարի զանազանել 'ի բնական Թռչնոց. ընդ [illegible] [illegible], Թեւթեւութք կամ Թեւթեւացուցանելով զհողմոն 'ի մեղաց. և զի զհոգւոն երկնային պարգևք յերկինս Թռուցանելով, ընդ նմին և մարմինքն Թեւակից լինին. որով [illegible]՝ հոգւոյն հարստութեամբն, [illegible] մարմինն մեծարէ: Մարթ է ևս իմանալ զյարութիւն մարմնոյ այնոցիկ՝ որ ընդ հովանեաւ սուրբ եկեղեցւոյ Թաղին. իբր զի սրբութք տեղւոյն զոյ յոյս՝ Թէ մարմինքն Թաղեալք ընդ նորա հովանեաւ՝ յարիցեն 'ի կեանս փառաւոր:

58 [illegible] [illegible]: Եկեղեցին ոչ պղծի յուրոց մեղաց կամ աղտեղութեց. այլ միայն յորժամ կոխի 'ի մարդոց չարաց՝ որոց մուտն արգելեալ է 'ի կանոնաց, և կամ [illegible]:

59 [illegible] [illegible]: Է կինք ինչ զարմանալի՝ յորում զաղտնի խորհուրդք փակին 'ի վեր քան զմիտս. և որպէս անկենդան կնիքն յարհեստաւորէն չինեալ, օգնէ բանականաց 'ի փրկաս և 'ի մուրհակս, այսպէս և եկեղեցին:

60 [illegible] [illegible]: Ըստ չարադրութեն՝ [illegible] իմանի խրնդիր [illegible] բառին, որ զօրութք կրկնելի է. այսինքն եկեղեցին մեծ է քան զմարդ, որքան մեծ է ընտրեցելոյն մովսէսի, այսինքն քան զընտրեալն մովսէս ցուցին նորա յաղթողական: Նոյնպէս 'ի յաջորդն, [illegible] [illegible], կրկնելի է, որքան քան զահարոնն: Ըստ այսոցիկ և յաջորդն, [illegible] [illegible] [illegible], յերիս օրինակս զրի առանց [illegible]: Այսու օրինակք բացայայտէ զյառաջաւորելոյն, Թէ եկեղեցի անշուշ 'ի բանականն չինեալ օգնութե առոյ նմա. որպէս և զաւազանք մովսէսի և ահարոնի, այլ և մաշկեակն եղիայի՝ 'ի մարդկանէ արարեալք, առաւել զօրացան քան զմարդիկ 'ի նշանագործութիւս. և մարդիկ նոցա նպաստիւք առնէին մեծամեծս:

61 [illegible] [illegible]: Թուի ակնարկել 'ի վէմն՝ որք ընդ բաղկօքն մովսէսի եդեալ, զօրացուցանէին զձեռս նորա ընդդէմ ամաղեկայ (Ելից ԺԷ. 12:) Այսպէս եկեղեցի Թէ և 'ի վիմաց չինեալ, օգնութիւն պարգևէ ձեռաց քահանայից՝ կրկին կատարելութք, քան զոր առաջ վէմն մովսեսեան, [illegible], մատուցեալ զձեռս քահանայից, քան Թէ [illegible]. իբր զէն լինելով: Կամ, [illegible], օգնութե առոյ ձեռաց քահանայից առ 'ի մատուցանել զպէս խորհրդոց եկեղեցւոյ, և ոչ Թէ զէն տալով 'ի ձեռս նոցա առ 'ի սպանանել զյանցաւորս, որպէս լինէր 'ի հին քահանայութեանն քարկոծմամբ, և այլն:

62 [illegible] [illegible] [illegible]: Յայլ օր. այսպէս զատանի. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible]: այսինքն

Նիւթ գոլով 'ի քարէ և 'ի հողոյ՝ բնութենակից և հարազատ երևի զգայնոց և սրբոց :

63 [illegible] · Զարդարատօնելոյ՝ ներգործութիւն հաւատոյս մեծանց՝ ընծայէ եկեղեցւոյ · զի որպէս զվէմն քո՛ 'ի կործանումն է անհաւատից, որք նախանձին ընդ պայծառութիւն նորա · և 'ի կանգնումն հաւատացելոց, որք խնդան և մեծացուցանեն զփառս նորա : Իբր գասող հոգւոց՝ անխծանէ զանհնազանդս, և օրհնէ զհնազանդեալս : Իբր քննող զաղանեաց՝ [illegible], զբանադրելին հրապարակէ · [illegible] զզջացեալն զարմանէ, կամ մնացանէ : Նա նոյն կոչէ յանուանէ զերախայս մկրտելիս, և զձեռնադրելիս, որոց կոչումն լինի յեկեղեցւոջ · և այսու եկեղեցին լինի իբրև հրամանատար էից արարածոց՝ նման այն, որ զամենեսին յանուանէ կոչէ՝ ըստ բանի առաքելոյն :

64 [illegible] · Որպէս զհօտեար մարգիկ, [illegible], իբր ուսկան՝ արօտատեղին այն կարգեալ · կամ, խնամոյ և որոշէ զհօտեար մարգիկն 'ի շնչաւորաց՝ իբրև հնարիւք կամ Ճարտարութեամբ զխոտ թեան այն : Զ օրէն · զնի · [illegible], այսինքն իբրև հնձեարկեալ ձեռամբն այն :

65 [illegible] · անմեղութեամբ և առանց սխալանաց կամ խառնակելոյ, ըստ օրինակի անուանն եկեղեցւոյ ընթանայ զկնի հետոցն քո : Այս՝ բանական եկեղեցւոյն յաւէտ պատշաճի ըստ առաքելոյ ( Եփես · Ե · 24 · 27 · )

66 [illegible] : Այնչափ մեծ սրբութիւն ունի յինքեան նիւթական եկեղեցին, մինչ զի զբանականս եղեալս 'ի պատկեր այն, խորհելով առ ինքն ընդունի · զի այլ կարգաւ և կանոնաւ ընդունի զերախայսն, այլով զհօրականութիւն, այլով զհաւատացեալս դառ ապաշխարողաց · այլ կանոնաւ զապաշխարհականս, և այլով զեկեղեցականս : Իսկ եթէ յետ այնորիկ ընթացուցեալ՝ բանադրեալ ոք, կամ երախայ, կամ ապաշխարող, կամ այլ ոք անարժան մտանիցէ, ինքն ոչ պղծի և ոչ նսեմի, [illegible] · այսինքն՝ ներէ անպխտողացն զչափ սրբութեան նորա · կամ թէպէտ յինքեան ոչ պղծի, սակայն յանձն առնու արտաքուստ համարիլ պղծեալ վասն ոչ զխտողացն զսրբութիւն նորա · զի յետոյ օրհնութեամբն ցուցցի՝ թէ որչափ սրբութիւն պահանջէ եկեղեցին : Ու [illegible], փակմամբ կամ աւերմամբ՝ վասն իւրոց յանցանաց, այլ վասն մերոյն :

67 [illegible] : Ոչ թողլ տայ հաւատացելոց երկիւղ յաւուրն մատչել յընդունելութիւն սուրբ հաղորդութեան, որ է իբր ըմբռնել զկնի զանդորր ոտս քո, [illegible] · որպէս անքն ոչ թողլ էառ մադգաղենացւոյն երկիւղ ըմբռնել զոտս նորա ( յովհան · ի · 17 · ) այլ միանգամ միայն ընդ այլոց կանանց ( մատթ · իը · 9 · ) Եւ այս անուանութիւն փրկչին ունի զմեծ խորհուրդս · որոց մին այս էր, այսինքն ոչ երկիւղ յաւուր ընդունել զսուրբ խորհուրդն : Կամ, ախրական խորհուրդ խնա զնոյն իսկ խորհուրդ հաղորդութեան · և միւս բանին ձեռանց այսպէս · ոչ թողլ տայ երկիւղ յաւուր մատչել յատ քո ըստ ընդունելութեան խորհրդոց մարմնոյ և արեան նորա :

68 [illegible] : Ոչ երկիւղ յաւուրն պատարագէ 'ի վերայ նոյն սեղանոյ · որպէս էր հին սովորութիւն, մանաւանդ արևելեայց, զոր և ցայժմ պահեն յոյնք : Կամ, ոչ երկու անգամ յաւուրն, այսինքն յատուստ և յերեկոյի թողլ տայ պատարագել · որպէս 'ի հին օրէնս սովորութիւն էր առնել պատարագս առաւօտու և երեկոյին ( Թուոց · ի · 4 · ) Իսկ եթէ 'ի վերայ նոյն քահանայի խնդրի՝ ոչ պատարագել

յաւուրն երկիցս, այս հայի 'ի սովորութենէ արեւելեան եկեղեցեաց ։ զի յարեւմտեան եկեղեցիս գոյ յիշատակ յեօթներորդ դարէ անտի, թէ չէր արգելեալ քահանայից 'նոցա կրկին պատարագել յաւուրն ։ Տե՛ս Գ. [illegible] ։ զի մի յաճախս պատարագելովն՝ սովորութեն եղեալ, անմտածութիւն եւ ասանց յարգութեն՝ [illegible], 'նուէր պատարագին արհամարհեսցի ։ Ոմանք բառ հին ըն - խոնարհեան 'ի միջոյ սեղանոյ պատարագին ։

69 [illegible] ։ Երբ ըմբիշ սաղմ՝ փոխակից եւ զորմանից յետ սեղանոյն սփռոցից հացոյ եւ մաղթանաց, [illegible]. ետքն աղօթս գարով յամենայն սպասաւորութեան, որոնց ։ զի եւ թէ սարկաւագն աղաւնաբն ըն'նէր զարման ամենայն սփռոցից հացեկեանց եւ մաղթանաց, բառ առաքելոյն 'նորա (Ա. Թեսաղ. Բ. 29.) մրչակ եւ աստուել եկեղեցւոյ պրօսոնեից, յորս պարտաւորեն մեղաւորք, հիւանդք, գերաւորք, փորձանաւորք, եւ այլք ։

70 [illegible] ։ Կրկին եւ երբեմն քան զհոգեւոր սաղմոսն. զի ոչ միայն զամենայն հոգեւոր 'ի նմա՝ պահել 'ի հեղձման մաղթանաց եւ հացոյ, այլ եւ ծնունդ եւ բարեխօսութեամբ մկրտութեամբն, ննջեցեալ հաւատացեալքն, եւ զարդարել այսպէս խորհրդով ։ Թող զայլ սաստկութիւն՝ զոր 'ի կարգիս յիշէ մինչեւ 'ի բանն [illegible] ։

71 [illegible] ։ Եկեղեցին խորհ հնուոց հացոյն (Խոստա. 5.) ընդունի յետին զմտաւորական առ 'ի տրփէլ, բայց ոչ զնենգաւորս ։ որպէս եւ սաղմոսն 'նոցի ոչ ընկալաւ սանն զանն ։

72 [illegible] ։ Տաղմոսն 'նոցի չնութիւն խորով գծով բաղդեր ամե'նայն մարդկան ։ խաղ եկեղեցին կեանս սահմանեալ 'ի չնեալ խորան ։

73 [illegible] ։ Ոչ խորհ զսաղմոսն 'նոցի, կամ զխորանն միայնութեն՝ անդադար շարժի եւ փոխի անդուոցն 'ի անդի ։ այլ հաստատուն կասացանի 'ի անդուոցն ։ զի չէ արէն փոխել զանդի եկեղեցեաց, կամ զանդի որ եկեղեցի հիմնեալ է, փոխել յաշխարհական շինուած ։ [illegible] մի արէն ։ [illegible] է ։

74 [illegible] ։ 'Նոթաակաց եկեղեցին խորհ 'նմանութեն [illegible], անօթոց կամ անօսահմանելի կեն ոյ, որպէս եւ սաղմոսակն մախախական՝ որ զամ երեւեցուցանէր, սառաջնորդ ընթերցին անդի պատարասակ յերկինս ։

75 [illegible] ։ այսինքն այսոյ (Բ. Թեսաղ. Գ. 7.) [illegible], անդէն փոփոխական սաստկէ, [illegible], խոր զխաչ 'ի չորից կողմանց ընծայութ, [illegible], յանձին կամ յաւուս բարձեղի, կամ 'ի հացուոյ կերեցի ։ քանզի եւ այս յայն սակս պատահական՝ սանն սանձք, զի ոչ բառ հրամանին ոյ ընծայք սանելին զսաստկական, այլ 'ի սաղի եւ զեալ երեւելք ձգելին ։ Նոյնպէս եւ եկեղեցի պատահական զաշխարհն, որք ոչ մերձին առ 'նա հաստատակ եւ երկիւղածութեամբ, այլ անհամեմական երկիրպագութ հացոյ մասին խորհ յանձն ինչ անսարք եւ ձեռամբ չոշափելի ։

76 [illegible] ։ այլ արէն ։ [illegible] կամ [illegible] ։ Ոչ մարմնեալն ընդունէ խոսի 'նոթաակաց եկեղեցին, այլ [illegible], այսինքն հացեկարագեւ, կամ միջնորդութիւ հրեշտակաց ։ որպէս 'ի մախախական խորանին եւ 'ի սաղմոսեան սաստկին բարձր անդամ պատարագի ընդէ զեւկն 'ի ձեռն հրեշտակաց ։ կամ զորմնեալ, [illegible] խոսի զսառաջնորդս եւ զբանձնեալս բառ պօղոսի (Ա. Կորն. Ժ. 10.) որոց ընդունեն խոսի եկեղեցին ։ Ու [illegible] ։ չանի կարգեալ անկանոց, եւ սակայն արարողս ընդ զաղաչանս, զոխոս, զարհամարհանս, եւ զա'նեծս մարդկան ։ Ու [illegible], չանի ձայն յաղաւ արէ, եւ սակայն զհրամանս

և զգործս յոր ամենեցուն ծանուցանել ՚ի ձեռն պատկերաց և քարո-
զութեան պաշտամանց։ Ոչ Խորհրդոյ. չասէր զպարգևաւն խորհրդոց ընդու-
փոխելն. և ապա յետ իմաստին կենդանի հաղորդս առնէ։

77 Եւ ընդ Հրեշտակս։ Որպէս փառն առաքինականն հրամայեաց յետս, զի երկու հազար կանգնաւ հեռի տարցի ՚ի ժողովրդենէն (յեսու գ. 4.) և այնպէս ժողովուրդն Իսրայէլ և էր զանազան ազգ, և կենդանի Յովսէփայ ՚ի հարուածոց անապատին, սակայն փառն անտրրութեան հեռի ՚ի տապանակէն գնացին։ Այսպէս և այժմ եկեղեցին Հրեշտակն, ընդ հրեշտ՝ հեռացուցանել յինքենէ երբեմն անտուրբս զայն քրիստոնէայս՝ որք ընդ-դէմ էին մեղաց սրտիւ. և Հրեշտ ՚ի ձեռն քահանայութեան և կանոնական առաջնորդութեան ուղղափառ, աստուածային ապրեցելոյն յեկեղեցականն ուղղափառութեանց, որք են անհնարինք և այլ մեղք։

78 Եւ Սիոնն ես։ Նմանապէս կանոն ոչ ՚ի պարզ իմաստէն մտածի, այլ ՚ի քո մարգարէն, որպէս և բացատրէ՝ ես Հովիւ Եղեն, առաքել և խնդրել՝ նոյն նշան եմ մարմնացեալ քո, բառ սուրբ եկեղեցւոյ Սիոն կոչեցաւ յառաքելոյն (ա. կոր. ժ. 4.) այլ և ՚ի մարգարէից անուանեալ և բանիւք գուշակեալ (եսայ. խբ. 16. զաքարեա. բ. 44. 45. զաքար. գ. 9.) Եւ բառ նմանութեան վիմին որ զխորտակեցելոյն որդւոց յանապա- տին, նշան եւս որոց զհաստատեալս յաղթելոյ կոչին խոյս։

79 Ընդ Եմմանուէլ։ Ոչ եթէ արեան յարմարեալ յերկինս կենդանու- թեան և պահպանել զեկեղեցին, որպէս յայլ կենդանիս, այլ չափ- -իւք իմաստին բանին ՚ի նոյնս թուաբերեալ։

80 Ոչ անդամն։ Ոչ ապաւինի կամ զօրութեան աստուածայինն, մի- աբանութիւն կամ զօրականութիւն, որք մաքրութեամբ էին, այլ ա- մենափառն եւ Տիրապետութիւնն զծագել զեկեղեցին բառ խորհրդական նշանականութեան։ Եւ թէպէտ զդժուարութիւն ամենայնն են յոյժ սաստ- նորդութիւն ՚ի ձեռն զօրութիւն ընկալեալ աստուծոյ, սակայն այժմ եկե- ղեցւոյս շնորհիւն՝ խորհրդական և յոյժ բարեխօսութեան է, և այլն։

81 Տէր Եմմանուէլ։ Յանկար անուամբ և հաստատեալ խորհրդ ամենայն գլխոյն, տուն նոյ կոչեցաւ զանկին (ծննդ. իը. 19.) խակ նոր արմտոյ միանձնեան ամենայն զեկեղեցին ՚ի ձեռն պատարագին, ոչ եթէ տուն նիւթական կերպէ զօրքս եկեղեցւոյ, այլ մարմնոյն երկնային և յաւա- նար, երբեմն զհրեշտակն՝ որք երկնային և երկրային ընդ ամենայնիւ։ Ոչ Եմմանուէլ։ ոչ ծնունդս յարուցեալս յերկրէ կենդանիս, այլ յերկինս ՚ի մարմ- նոյ և յարմնել անուանել, այլ երկինք ժամանակս են, Աստուած մեր. զգեցեալ ՚ի ծոցի խորամ խորհրդակս և ամենայնք. ՚ի զօրն արարածոց յերկինս ծանուցանել։

82 Հաւատացելոց. Նախ նշանաւ եկեղեցին՝ անուամբ բարոյական եկեղեցւոյ առաջ հարսն. զի որպէս այն՝ քրիստոնէից հաւատով, այսպէս և չինեալ եկեղեցիք անուամբ բնակչին քան. Սիոնին, կառուցանողք որոնք և պայծառացուցիչք եկեղեցեաց եղեն սուրբ հայրապետքն։

83 Սաղմոսն։ Այսու զհայհոյիչ ասութիւն թանգարանեցելոցն ՚ի զլուխ նոյին չոքէ, որք զեկեղեցիս արհամարհեցին երբեմն հեթանոսա- կան շինուածս, կամ ՚ի նոյին ամբարութիւն առնել։ Ոչ այսպէս, ասէ, այլ մանաւանդ մասնագունել զգեղեցիկ բարձունս կառուցանելով. զի զՑանկալին նոյն ամենեցուն ծանուցանել. առաքելութեան, զատս գործեալ. զի քո ՚ի սոյն երկրպագեն. քանզի է կոչեցեալ անուամբ հե- թանոսաց, զի քո բառ նմանութեան կենաց փոխանակ զբանին ՚ի սոյն պատարագի. խորհրդ է ամենայն Խորհրդոյն Սրբոյ, կենդանարար բարութեանց, զի մինչ քո զօրէն ՚ի մարգարէից, այլովք քահանայք՝ ասա- ցեալքն և սրբութք հաստատեն ՚ի սոյն։

84 Ազատ է: Ոչ միայն քաղաքական եկեղեցին ազատ է 'ի լծոյ հին օրինաց, այլ և նախնական եկեղեցին ազատ է 'ի հարկաց իշխանաց, և յայլ քաղաքական պաշտամանց. ըստ որում անկանելին անուանք տեղիք: Ակնարկէ 'ի բանն գաղատ (Դ. 26.) «Վերինն երուսաղէմ ազատ է»․ և այլն:

85 [illegible]: Նախնական եկեղեցին ոչ այնպէս օրինակ է վերին սիոնի ազատութեան, որպէս էր երկրաւորն երուսաղէմ. զի առ իւրև տանէր մարմնաւորապէս միայն երևելեացն զերկնաւորն երուսաղէմ. իսկ եկեղեցին մանաւանդ [illegible]. այսինքն իւրև բուն իսկ վերինն սիոն համարի՝ որպէս մանկունք և նախադաւառն. զի 'ի սոյն սկսանին անմնայն ծնունդեան ազատութեան, և անդ կատարին. և զի 'ի սմա իւրք ընակէ քն նա 'ի խորհուրդ սուրբ սեղանոյն:

86 [illegible]: Ոչ ըստ կարգաց, կամ ըստ բանադատութեան կատարչական օրինացն [illegible], անդի պատահեցաց ստ. ու-սուածոցն, յորոց առաւանդեր պատմոց բանքի լինէին. և բազում ան-գամ զխռախան զօրութիւ պատուհանեին զմարդիկ: [illegible]. ըստ պարտաւորուէ հին օրինացն՝ անդի պատուհասից օրինազանցիցն. զի յանցաւորք հին օրինացն՝ յառաջ կոչէին 'ի խորանն վկայութեան, և անդ յանդիմանեալք յոյ՝ պատժէին. որպէս աւհարան և մարխամ, կորխ, դաթան, և այլն: Իսկ եկեղեցին ըստ հովանաւորն՝ է անդի պարգևաց բա-րերարութեան նոյ, և անդի հաշտութեան յանցաւորաց:

87 [illegible]: այսպէս զնի յիշտակք օրինակս. ուր այլ տառ-գիրք առեն, [illegible]. բայց տառքինն առաւել յարմար է. այսինքն ոչ խախտի կամ այլայլի յերկրէ ձեռին. այս ոչ միայն ըստ անեղութեանն իւնին, իբր զի մինչև 'ի կատարած աշխարհի լինելոց են կառուցմունք եկեղեցեաց, այլ և ըստ առաւարին ձեռին. զի ընդհանրական ձև կամ արարուած եկեղեցւոյ մարմնոյ պահի յամենայն ազգս. այսինքն որո-շումն խորանին և բեմին և դասին և տաճարին և գաւթին. և եթէ յայ-սուհետ մանր փոփոխութիւնք լեալ իցեն, կամ լինիցին, միշտ յառա-ւել փառաւորութի եկեղեցւոյն լինին. զի ոչ միայն արարողն կատա-րածութիւն է [illegible], այլ և նմանութիւ կանմարայարեկ ձեռին, և ս-րբութեամբ կայանիցն, յորում զանազան զասք սպասաւորութեանց և ոչ սպասաւորաց՝ որոշեալք տեղեօք և պաշտամամբք՝ երևեցուցանեն զզանազանութիւն դասուց հրեշտակաց յերկինս:

88 [illegible]: Որպէս չէ հնար կատարել հոգւով, կամ վերածնա-նել առանց հօր նոյ, նոյնպէս և ոչ առանց արգանդի մօրս եկեղեցւոյ, այսինքն առանց աւազանին մկրտութեան:

89 [illegible] 2 օրին. [illegible]. իբր մանկաց, առանց առն, կամ բաշխմեայ շրջի անդրանկամելոյն նա, եթէ ոչ կոչցէ եկեղեցի. որպէս զառաջանակէն առեր նա (Բ. Թագ. Է. 6.)

90 [illegible]: Առաւել պարծի նա 'ի նախնական եկեղեցիս՝ քան յերկինս. յորում եթէ երկինքն առցի ըստ բնական փայլեցու-թեանն, աչաց յայանի է բազդատութիւն. զի առս յեկեղեցւոջ անդրա-փայլցութիւք ճառագայց զանանին: Իսկ եթէ երկինք խնայցի արքայու-թիւնն, հանգիստ բազդատութիւն, ըստ որում յարքայութիւն՝ նա և բնակութիւնն զարմանաւորն՝ որ է գործ արգարութե. իսկ առս յե-կեղեցւոջ սրբանի երանութե անմե զանդարմանան, որ է գործ անդրա-պարանութիւն նոյ, որով առաւել մեծարի նա՝ քան առաջինն. որպէս ասաց և 'ի բանն ձԴ. Ա. Ու սաի ըստ այսմ մասին (և ըստ այլ եւ բաղ-դատութեց. զոր թերևս մի փառն համառօտութե.) եկեղեցին առաւել պարծելի է նոյ, քան արքայութիւն երկնից. թէպէտ և ըստ գերազան-

ցութեն՝ տատուել է ողջայութեան քան զեկեղեցին։ Սակայն մանր են հայելով 'ի կատարելութիւն անցելոյ բանին, յարմարագոյն թուի Լամբր Ձբերթայն տանել զբանն երկինս՝ իբր աթոռ փառացն նոյ, այսպիսի ունելով միտս։ Քանզի առաջ նախ, թէ ոչ ունիցի ակն բոլորից հանգստարան խորումն գլխոյ՝ եթէ ոչ յեկեղեցւոջ մանաւանդ իջխանեսցի։ մարթ էր տարակոյս ընդգծել բերել, զիարդ երկինք անուան և անհանգիստ լինիցի ած առանց եկեղեցւոյ, այն որոյ աթոռ և բնակութիւն՝ երկնից երկնիցն են։ Այս սակ, չէր յայտ հակառակութիւն. վասն զի տասուել պարծի ած, տասուել զբարբառմանս և հանդչի 'ի նուիրական եկեղեցի մարդկանս հանդերձ՝ քան ընդ վերին երկինս. քանզի զայն անաշխատաբար արար ած՝ ասելով եղեւ, իսկ զեկեղեցի տառապանօք արեամբ. երկնից՝ արարիչ միայն է, իսկ եկեղեցւոյ՝ փրկիչ. երկինք 'ի պէտս եկեղեցւոյ արարեալ, իսկ եկեղեցի 'ի փառս նոյ. այն՝ ճեմարան նոյ, և սա՝ հանգստարան. և վասն այսորիկ կարէ քո մեկնիլ յերկնից, բայց յեկեղեցւոյ ոչ երբէք։

91 Աթոռ փառացն անձայնին՝ որ լուսաւորեալ երեւայ 'ի գլուխ մասանց, և յօրինական եկեղեցւոյ՝ որք են խորանն վկայութեան, և տաճարն սրբութեան, անհամեմատ արժանի էին հնոյ ժողովրդեանն, մինչ զի փախեան յերեւաց մարդկան. և 'ի տաճարէն իսկ ելեալ քահանայքն։ Եւ սակայն նոյն փառքն այժմ 'ի վեր հանգիստ, հանգիստոր ամենափրկութեան եկեղեցւոյ, 'ի հաստատեցելոյս անկարելի համարձակութեան խորհրդոց նորոց. միահամուռ բարեբանել ընտանեաց։ Ահա 'ի գլխոյ լուսոյն զարհուրեցաք ահել տայն, ասա յեկեղեցւոջ 'ի բան էական լոյսն համարձակին մարդիկ։ Աթոռ մեծի։ Նոյն ինքն ած և մեծութեան նորա երկնապատիկ բարձնոր օրհնի յեկեղեցւոջ, քան յերեւմական գլուխին. վասն զի անդ առաւ անմեղութեան պարգեւ միայն, այլ ոչ թողութեան. յետ արտաքսելոյն անտի ադամայ՝ ոչ եւս այլ թողութեան մտանել անդր յետ արտաշխարհելոյն։ իսկ յեկեղեցւոջ տառապանան պարգեւ և անմեղութեան և թողութեան. եթէ վասն մեղաց արտաքսեսցի ոք առաքի, դարձ անդրէն յայս մտից 'ի զղջանալն։ Եւ դարձեալ, 'ի գլուխին փափկութեան լինէր օրհնութիւն նոյ ըստ երկրաւոր դէզեցկութեան. իսկ յեկեղեցւոջ երկնաւոր բարեաց հաղորդութիւն է։

92 Աստուածածնին իւր։ Եթէ ամենաին պատկեր և նմանութիւն համարեսցի ոք զեկեղեցի, ոչ սխալի. ոչ արտաքոյ ճշմարտութեան խորհի. ոչ սխալէ. ոչ անպատեհ տանէ զակնածեայն. ըստ որում և եկեղեցին կուսութեան 'ի ձեռն աւազանին ծնանի որդիս նոյ, որպէս և սա զնին. այլ և զնոյն ինքն զքս որ ըստ որէ ծնանի խորհրդաբար 'ի պատարագին։

93 Գուշակէ։ Ըստ օրինակի լերին սինայ, յորում քարինք արձակեալ 'ի մերձենալ փառացն, ամպ և եկեղեցին քարինս խնամողին՝ վարդապետութեան, կամ բանադրանաց, որոնք դղրդանացին հերձուածողս, կամ զանհաւանս քրիստոնէայս չթողու մերձենալ առ ինքն, կամ 'ի ներքս մտանել։ Թերեւս ակնարկէ յանցան անօրինաց և հեթանոսաց, որք 'ի տաճարին քարամբք և այլ զանոնց հարուածեցան (Յովհ. ա. 16. գ. 26։) Այս զօրութիւն տասուել պատշաճի բարձրական եկեղեցւոյ. սակայն երրորդ երեւի և 'ի նուիրական եկեղեցիս. որպէս զմարմնաւոր եզրայեցոյն ոչ թողոյր 'ի ներքս մտանել (վասն հարանց Ա. 288։) 'Ի քոյ որդւոց։ 2 որին. 'Ի քոյ հարսանեաց։

94 Աստուածային տաճար։ Եկեղեցին միրաւոթեամբն ծնանի որդիս նոյ շնորհօք. որք են սահմանեալ անդր՝ պատկերակիցք ճշմարիտ և բնական որդւոյն նոյ, որ է յն քս։

95 Զորն իւր ընդ որ... 'նախնի ամփոփութեան էր յամ քրիստո-

նեայս, զի յաղօթելն՝ յարեւելեան կողմն հայէին, որում վկային բա-զումք յառաջնոցն. որպէս սուրբն բարսեղ ('ի գիրս յաղագս հոգւոյն սրբոյ. գլ. իէ.) ասէ՝ յաւանդութենէ ունիմք յարեւելս աղօթել։ Նոյն-պէս գիրքն խնդրոց առ ուղղափառս, յուստինոսի տուցեալ, խնդ. ճժը. յառաջբերեալ անուն ունիմք ասէ։ Յիշէ և տերտուղիանոս, 'ի ջա-տագովութեան գրքին. այլ և 'ի գիրս ա. յաղագս ազգաց։ Եւ սուրբն օգոստինոս գիրք բ. յաղագս բանից տեառն 'ի լերինն. գլ. Ե։ Այլ և դամասկացին յերկար խօսի, 'ի գիրք Դ. յաղագս ուղղափառ հաւա-տոյ. գլ. ժբ։ Այլ սովորութեան զայն խորհրդական պատճառս տան մեկնիչք վարդապետքն, զոր և աստ տայ սուրբս գրիգոր, և վասն որոյ մեջ նախապատիւ համարի արեւելեան կողմն յեկեղեցական պաշ-տամունս։ Արդ յայսմանէ նաև զշինուած եկեղեցեաց՝ կամ զսեղանոյն կողմն յարեւելս հայեցուցանէին սովորաբար, որպէս վկային տաճարքն կառուցեալք 'ի հին ժամանակս. որ և աւանդի յառաքելական սա-ցեալ սահմանադրութեան. գիրք բ. գլ. ծէ։ Բայց ոչ անխախտելի էր այս սովորութի. և պատմէ սոկրատ (գիրք Ե. գլ. իա.) թէ տաճարն անտիոքայ հակառակ այլոց եկեղեցեաց ունէր զդիրսն, զի սեղանն նորա ոչ հայէր յարեւելս, այլ յարեւմուտս։ Եւ յետ ժամանակաց այլայլե-ցաւ այս սովորութի 'ի կողմանս ինչ եւրոպիոյ՝ առեալ բազմութեն քա-հանայից պատարագաց, թէպէտ յարեւելեան ազգս պահի մինչև ցայսօր։

96 [illegible]։ Զեկեղեցի՝ փրկչին անուամբ կոչել՝ ասեմք խնա-ցան, թէ վասն զի օծեալ կոչի եկեղեցին, այլ և տուն և տաճար այ, և վէմ, որք են անուանք քի։ Սակայն երկրին անուանքդ՝ յառաջարար եկեղեցւոյ պատշաճին. և 'ի նմանէ փոխաբերին առ քս. տես 'ի վեր լուծ. 78. իսկ օծեալ կոչի յերրորդ օծմանէն 'ի ձեռն մեռոնի, և ոչ յանուանէն քի։ Վասն որոյ խնամոյ բանին այն է՝ զի բազում եկեղե-ցիք նուիրեալք քի՝ նորին իսկ անուամբն կոչին [illegible]. կամ [illegible]. որպէս և մինչև ցայսօր ասեմք։ Նաղիկ պատմիչ (գ. 14.) յիշէ զեկեղեցի 'ի մուշ [illegible] անուանեալ։ Սոյնպէս ասելն, [illegible], ոչ խնամի թէ վասն զի եկեղեցին տէր կոչի 'ի գաւթայ. այլ զի նովին անուամբ [illegible] կոչին բազում եկեղեցիք շինեալք 'ի պատիւ նորա, և այս՝ 'ի [illegible]. այսինքն յառաքելոց ան-ափ. որպէս սուրբն բարդուղիմէոս զեկեղեցին՝ յոր եգ զհրաշալի պատ-կեր տիրամօրն, կոչեաց [illegible]. ըստ գրելոյ խորենացւոյն, 'ի թուղթն առ սահակ արծրունի. և յայսմաւ. օգոստ. 15. 20։ Սոյնպէս եկեղե-ցին շինեալ յեգեսիա 'ի սրբոյն թադէոսէ՝ կոչեցաւ [illegible]։ Ըստ այսմ եկեղեցիք յայլ քրիստոնէից եւ կոչին [illegible]. [illegible], և այլն։ Եւ սուրբ վարդապետս կամի նաև յայսմ կողմանէ ցուցանել զփառաւորութիւն և զյարգ եկեղեցեաց։

97 [illegible]. որպէս նկատեմք, որ պատճառք զտաճարն այ այրել (բ. մակ. ժգ. 32. 33.) Այսպէս որ զբռնադրեալ կառուց-մանս եկեղեցեաց արհամարհիցէ, համարելով մարդկային ինչ գործ, կամ երկրաւոր շինուած, այնպէս է՝ իբրև ընդդէմ երկնից արքային զձեռն համբառնալ։

98 [illegible]։ Եթէ չհամարիցի զեկեղեցին՝ տեղի ածային յաւայ, կամ ակն ունելոյ ածային պարգևաց։ 2 որին. [illegible] [illegible]. այսինքն յայ ակնարկութենէն կամ 'ի հրամանէն սահմանեալ։ Եւ 'ի հոգւոյն սրբոյ յայտնեալ լուսաւոր [illegible], յառաջա-գոյն գուշակութի 'ի հին օրէնս՝ խորանաւն վկայութեն, տապանակաւն, և տաճարաւն։ Եւ երախակացն այ [illegible], ամենա-

պարգեւ առատութեան տեղի։ Եւ [illegible], շնորհօք 'ի ձեռն ա-ւազանին՝ [illegible] 'ի [illegible] ցաւոց և անխծից՝ հակառակ եւայի։ Եւ յատուկ նմանութի [illegible], երևելի բանական բնութեանս, ըստ որում [illegible]՝ զօրութիւն շնորհաց, բժշկութի, և այլն, է նշա-նակ հոգւոյս մերոյ. Եւ [illegible]՝ ձեռն և կալուածութիւն՝ յօրինակ մարմ-նոյս։ Եւ [illegible], նոր սրբութիւն՝ գերազանց քան զորբազան կալուածսն՝ որ 'ի հին օրէնս անդ պաղանիք էին, զորոց գրէ առաքեալն (Եբր. Թ. Ձ.) ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ։ Արդ եթէ ոչ այսպիսի խոստովանիցի զեկեղեցին, զայնպիսին մերժէ յերեսաց իւրոց Աստուած հայր. փակելով ընդդէմ նմա զդուռն այսր առագաստի կենաց։

99 Ա[illegible]։ Յայլ տպագիրս, [illegible], բայց լաւ ևս հա-մարեցաք գնել ըստ մեր օրինի. զի բովանդակ դաւանական ձեռս ունի երկու մասն. առաջինն 'ի սուրբ երրորդութիւնն, երկրորդն 'ի սուրբ եկեղեցին. ուստի ասելն, [illegible], իմանի՝ առաջինն այն է իմ դա-ւանութի 'ի սուրբ երրորդութիւնն. Եւ [illegible] երկրորդս կամ վերջինս է խոստովանութիւն 'ի մայրն իմ սուրբ եկեղեցին։ Եւ զայս բան դնէ 'ի կատարածիս իւր իւր ձեռնագիր և կնիք 'ի հաստատութիւն դաւա-նութեանցն։

## ԲԱՆ ԵՕԹԱՆԱՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Աստուած ողորմած, բազմագութ, հզօր, ահա-ւոր, մարդասէր, օրհնեալ, կենդանի, անճառ, [1] որ ոչ եղանի երբէք ըստ բան քո իր անձեռնարկելի, որ և մի-տաց է անհնարաւոր. քո է հատուցանել պտուղ քաղց-րութեան [2] ընդ փշոյ խստութեան, սկզբնահայրդ այսմ նորոգ և զարմանաւոր կանոնաց կենաց. քանզի բարի առնել ատելւոյն և աղօթս 'ի վերայ հալածչին, և փըր-կութիւն հայցել խոցողին, և սպանողին ներումն խընդ-րել՝ 'ի քէն ընծայեցաւ պտուղս այս հրաշից. որոյ քաղց-րութիւնն անճառ է քան զօրինակ և բարեբանեալ կա-մաց քոց ախորժելիք և գովեալ շնորհաց քոց ճաշակե-լիք. հօգի երեսաց և զօրութիւն գեղջ մերոյ տէր՝ Դու օրհնեալ 'ի բարձունս։ Այլ մարդք երկրածինք և ա-մենավրիպողք՝ և բարեմասնոյց ձեռաց չարիս դարձուցին.

խոկ դու լոյս և տուիչ լուսոյ. ⁵ ոչ լինիս անէծս, ոչ ախտաժետս չար, ոչ կամիս կորուստ, ոչ ըղձանաս մահ, ոչ յուզիս 'ի խռովութենէ, ոչ ախտիս 'ի ցասմանէ, ոչ հարկիս 'ի բարկութենէ, ոչ մթանաս 'ի ոխից, ոչ այլայլիս 'ի գթութենէ, ոչ փոփոխիս 'ի բարութենէ, ⁴ ոչ թիկանց շրջումն և ոչ երեսաց անդրադարձութիւն, այլ ամենևին լուսաւորութիւն և նկատումն փրկութեան։

Բ. Եթէ քաւեսցես, կարող ես. եթէ բժշկես, զօրաւոր ես. եթէ կենդանացուցանես, բաւական ես. եթէ շնորհես, առատ ես. եթէ ողջացուցանես, հնարաւոր ես. եթէ պարգևես, ամենալի ես. եթէ արդարացուցանես, ամէնարուեստ ես. եթէ մխիթարես, ամէնիշխան ես. եթէ նորոգես, ամենակալ ես. եթէ հրաշագործեսցես, ամենաթագաւոր ես. ⁵ եթէ վերստին հաստատես, արարիչ ես. եթէ կրկին գոյացուցանես, ած ես. եթէ հոգաս ընդ մեր, ամենատէր ես. եթէ կորզես 'ի մեղաց, այցելու ես. եթէ չարժանեացս ընձեռես, օրհնեալ ես. եթէ յորդորէն զերծուցես, փրկիչ ես. եթէ զեղցես 'ի քոյոց 'ի մեզ, հարուստ ես. եթէ նախ քան 'ի մէնջ խնդրելն դու կարկառեսցես, անկարօտ ես. եթէ լայնես նեղութեանս, անդորրիչ ես. եթէ զվերջացեալս կոչես, խնամակալ ես. եթէ զսասանեալս հաստատես, վէմ ես. ⁶ Թէ պապակելոյս արբուցանիցես, աղբիւր ես. թէ զծածկեալսն երևեցուցանես, լոյս ես. թէ զօգտակարն իմ ծանուցանես, բարի ես. թէ զբիծն անտես առնիցես, երկայնամիտ ես. թէ ընդ փոքու 'ի դատ ոչ մտանիցես, բարձրեալ ես. թէ ծառայիս ձեռն մատուցես, ստացող ես. թէ աջոյդ քո պաշտպանեսցես, յանձանձիչ ես. թէ վհատելոյս դարման մատուցես, կերակրիչ ես. թէ զանգէտս պարարեսցես, վարդապետ ես. թէ զգիմեալս առ քեզ ընկալցիս, ապաւէն ես։

Գ. Ու՛ր արդ քո են այսոքիկ, տէր ողորմութեան, ⁷ ոչ միայն գրեալ, այլ կատարեալ և զլխաւորեալ, նախնի նախահաւատիկ համբերութեան վկայից, որ վասն խնդ փրկութեան հանդիսացար զօրացեալ յաղթարքոյ Քահանայն, զի կակղեսցես զկարծր բնութիւն մարմնոյս զազրութեան վարժմամբ կրթութեան չարչարանացն վտանգի. և յանպարտակիրց մարմնոյն չարեալ զոհ-

Թեւանս մերում զառաժանականն տագնապ տուժի, զի զգթութիւնդ որ առ մեզ՝ արդեամբք ցուցցես 'ի քեզ օրհնակեալ, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

1 Որ ոչ էլանէ: 'Ի բանէ հրամանի քո ոչ մի ինչ անձեռնարկելի կամ անհնարին կարէ եղանել կամ վրիպել. այսինքն առ քո հրամանդ չէր ինչ անկարելի. [illegible] թէ և մասաց անհնարաւոր իցէ կամ թուիցի:
2 Ընդ ծագս: Փոխանակ խիստ փոյց մեղացս՝ հատուցանել քաղցր պտուղս՝ քեզ է սեպհական, որ առաջին հայր կամ վարդապետ եղեր պտղաբերելի կանոնացս՝ թէ բարի առնել ատելեացն, և այլն: Այս հրաշալի պտուղք 'ի քէն ընծայեցան, որոց քաղցրութիւն 'ի վեր է քան զօրինակ, և սխրալիք են օրհնեալ կամաց քոց, և այլն:
3 Ու [illegible]: Յորժամ ոք անիծանէ զընկերն, ոչ կամիս լսել զայնոսիկ անէծս. արգելուս անիծանել նաև զանիծիչս մեր (ըստ մատթ. Ե. 44.) [illegible]. ոչ գոյ 'ի քեզ խռովութի, ոչ ցասումն, ոչ բարկութիւն: [illegible], ոչ աղտանուս, ոչ նուազիս 'ի սիրոյ. կամ 'ի սիրելեաց՝ ոչ խռովիս յայն, որպէս լինի առ մարդիկ, մթութի ակնառութբ կամ շահու, կամ ոչ պահելով զօրէն սիրոյ: Այնչափ անխառն է սէրն քոյ, մինչ զի նաև յատելն զմեղս և զմեղաւորս, և 'ի պատուհասելն զյանցաւորս, մեջ սէր քոյ, 'ի սիրոյ շարժի և գործէ. այսինքն 'ի սիրոյ անդրու բարութե իւրոյ: Նման այսմ ասաց Գ. ա. [illegible]:
4 Ու [illegible]: Աստուած յիւրմէ կողմանէ ոչ առնէս առնէ զմարդն 'ի խմանց, որ նշանակի շրջմամբ թիկանցն. կամ երեսաց [illegible], այսինքն յետս դարձուցմամբն. այլ մարդն դառնալով 'ի ստեղծուածս. թիկունս դարձուցանէ առ ած, և մերժէ զինուանդորս. որով և ած առի դարձուցեալ զերեսս. ըստ սաղմոսին (ԺԷ. 27.) «Ընդ թիւրսն թիւրեսցես»:
5 [illegible]: Եթէ դարձեալ հաստատես զմեզ 'ի բնական կամ 'ի գերբնական բարիսն. կամ, եթէ կրկին [illegible] յաւ բութբ 'ի մեռելոց, յայնմ ամենայնի ցուցանես լինել արարիչ և ած. քանզի նովին արարչական զօրութբ որով եղեն առաջինքն, լինին և յետինքս. և նոյն իրաւունք ածութե են յառաջնումն և յերկրորդումն: Եթէ [illegible], եթէ անարժանիցս պարգեւես բարիս, օրհնութիւն ընդունիս՝ և ոչ մեղադրութի. ուր ընդ հակառակն առ մարդիկ մեղադրելի է երբեմն բարերարել անարժանին՝ յորժամ այնու լինի նմա զեղծանել:
6 [illegible]: Ծարաւելոյս: ըստ այլ օրին. առա և 'ի հեծեծելոյն գնի. [illegible]:
7 Ու [illegible]: Վերագրեալ բանքս քեզ պատշաճին՝ ոչ միայն իբր ոճամարտակեա գրեալք, այլ զի կանխաւ արդեամբք կատարեալ և փորձեալ են 'ի քէն առ քո, [illegible]. յառաջընթացդ ամենայն վկայից, որ նախ հանդիսացար յաղթելով նեղութեանց, առ 'ի ճնշել զապստամբութիւն մարմնոյ. և 'ի քո անպարտական մարմնով ընդունելով զառաժանելի կիրս բնութե մերոյ, արդեամբք օրինակեալ ցուցեր զանձնառ գթութիւնդ՝ զոր անփոխանակ բնութբ ածութեանդ անմարթ էր ցուցանել. զի մերկ ածութեանդ գութք անտեսարար ներգործեն, զոր մարդանալովդ արարեր յայտնապէս:

## ԲԱՆ ԵՕԹԱՆԱՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ո՞ւ քանզի օր է օրհնաբանեալ և ¹ լուսանորոգ կշռութեան երկուց ընտրութեանց արարածոցս ստանութեանց՝ յեղանակելոյ յայլ ինն էութիւն երկնակենցաղ անփոփոխարկելի, անբարձելոյն խոնարհութեան և կործանելոյս վերբերութեան, սարսափելի սրբաթու մեծի պատւերս, յորում եկն եհաս ժամ բարեպատեհ գրել ինձ զայս նուագ ձայնի հեծութե ² զուարճախտան երկլեզիւ, ահա բղխալի հանճարիւ՝ աւել առատօր 'ի քոյոց այսի՝ զոր ընդ իմ կրեցեր, ո՛վ բարերար։

Բ. Կացեր յառենի քում՝ անեղծուածոյն խնխոյ կերպիւ, ³ ոչ խոսեցար աւելորդ բանի, ոչ բարբառեցար հատիչ լեզուի, ոչ ձայն արձակեցեր ստամբիչ երկրի, ոչ մնչեցեր ամենազդեցիկ փողք մեծութեան, ոչ երախտեօքն քո յանդիմանեցեր և ոչ չարեօք նոցին ընկերանեցեր, ոչ մռնչեցեր անձեթոյ զմահաբերիչսն զքեզ ամեջանաց մահու, ոչ 'ի կապելն զքեզ զխոնարձեցեր և ոչ յապտակելն դժուարեցար, ոչ 'ի թքնելն թշնամանեցեր և ոչ ընդ կափելն երբեք խռովեցար, ոչ ընդ կատակելն սրտմտեցար և ոչ ընդ խայլ արկանելն երեսս փոխեցեր։ Մերկացուցին զզգեստ պատմուճանին ⁴ իբրև 'ի տկարէ, և դարձեալ ագուցին իւր անփրկանաւոր ընկենեցելոյ։ Ո՛չ թէ ոչ էր ⁵ արբեալ կրկնակի քացախ զանգեալ ընդ լեղւոյ, ոչ էր հեղեալ մաղձն իմ մթերեալ նախնի դառնութեանն. ճաշակեաց վհատութեանն և արգել անդէն ապականաւոր, ասէն մեկնողք և դարձեալ մատուցին անպատկառապէս. Կանխ հարուածոց յետին անարգութեան 'ի մէջ խառնի. Ձաղանքն ամբոխի զատապարտեցին, ծանր կրկնեցին նախատանաց և պսակ եդին արհամարհութեան։

Դ. Ո՛վ եստն [6] հանգիստ կենդանութեանց, եթէ ոչ
զգործի մահուն կեալ քեզ պատարագեցին. ընկալար
իբր երկայնամիտ, առեր իբրեւ զՏէր, բարձեր որպէս
համբերող, [7] բառնանձնեալ իբր զպարտականն զփոյթն
փութոյ. որպէս զծաղիկ շուշանաց հովտաց՝ տալ բե-
րեալ զպէտն կենաց, զի յարհաւրաց գիշերայնոց [8] զխ-
բակերտս զահաւորակս մարմնեղէն գոյութեանս պահ-
պանեալ ՚ի գասապարութեանն փայլի իբր ՚ի խորա-
ձան քնձոյից. Հանեն արտաքս իբր զաղջակել. կախե-
ցին իբր զփոյն տարեկից ձգեալ զեղջերայն, տարածե-
ցին ՚ի սեղան խաչին իբր զպատարագ, բեւեռեցին որ-
պէս չարագործ, մերկեցին իբր զապստամբ, զխարազա-
թիւնդ երկնաւոր իբր զաւազակ, զանկապուտ մեծու-
թիւնդ իբր զտառապեալ, զոր ՚ի քրովբէից պաշտե-
ցեալ իբր զքամահեալ, զամենայնից կենաց իբր զմահա-
նաւոր տառապեալ մահու, զաւետարանին ՚նկարիչ իբր
զհայհոյիչ օրինին, զայլ եւ զկատարումն մարգարէից [9]
իբր զհակառակ գրեցելոյն, զճառագայթդ փառաց
եւ [10] զկնիք անքնին խորհրդոցդ հօր իբր զներհակ ծա-
ղից կամաց, զորհնեալդ խաղաղս իբր զատապարտեալ. [11]
զկարգ օրինին լուծիչ իբր զայր ՚ի նզովս գրեալ, ըղ-
հորդ ծախիչ իբր զհերքեալ ինն կայանաւոր, զահա-
ւորդ երկնի եւ երկրի իբր զհաւատոյ պատժաւոր, զի
լոյս անմատոյց ծածկեալդ իբր զհողածին ըմբռնեալ.

Դ. Ո՛վ քաղցրութիւնդ եւ երկայնամիտ բարերարու-
թիւնդ ողորմածիդ զթութեան, որ փառն տառապա-
ւոր եւ անօրինեալ ծառայս ունիցդ բարերից զայս ամե-
նայն կամաւորապէս եւ հաւանողական [12] հաճութեամբ՝
տարեալ մարմնոյդ մխութեամբ ՚ի քեզ ընկալար, եւ
մինչեւ ՚ի բնական չիրմն տապանին անապական ՚ի լու-
թեան, անգամ ՚նուաստութեան ունդ անքնին՝ փոյթ կրեալ
՚նախատանս անձնա համբերութեան, յարեար կենդա-
նի խորհրդական բարձրութեամբ լուսոյ, անմատոյց մարմ-
նով եւ անթերի աստուածութեամբ. Օրհնեալ փա-
ռօք, գովեալ զթութեամբ, բարեբանեալ մեծազօ-
րութեամբ, յաւիտեանս յաւիտենից. ամէն.

1 [illegible]: Օր ուրախութեան չարչարանաց, յորում լոյս արեգական՝ որ 'ի վեց ժամուն խաւարեցաւ, կրկին նորոգեցաւ յիններորդ ժամուն. կամ նորոգեցաւ լոյսն ածգխաւութեան: [illegible]. որ կշռութե կամ բաժանման երկուց մասանց ասէր, այս ինքն աուրընջեան և գիշերոյ. զի 'ի միում ցերեկի եղև միանգամայն տիւ և գիշեր. կամ, որպէսման ընտրութե արդարոց և մեղաւորաց, որ ցուցաւ յերկու աւազակսն: [illegible] յորում արարածք իւրաքանչիւր ըստ իւրեանց պայմանի սասանեցան. արեգակն և լուսին խաւարմամբ, երկիր շարժմամբ, վէմք պատառմամբ, գերեզմանք բացմամբ. որ է օրինակ [illegible], փոփոխելոյ յայլ որպիսութիւն ոչ միայն մարդկան, այլ և ամենայն արարածոց, որոց նորոգութի եղև քնի չարչարանօքն: [illegible] գիտաց կործանման, և մեզ կործանելոցս՝ կանգնման և բարձրութեան:

2 [illegible]: 2 օրին. [illegible]: Գրեմ, ասէ, զայս աւօթս երկիւղիւ խառնեալ ընդ ուրախութե: Երկիւղ, զի չարչարանք փրկչին՝ վրէժխնդրութի և դատաստան են խոյց մեղաց, և եթ նոր մեղօք անպատեղ տանեմ զնոյնս, և ապերախտութե դատաստանաւ պարտաւորիմ: Եւ խնդութի, զի այն չարչարանք՝ փճարումն են մեղացս, և փրկանք հոգւոյս, և յուսադրութի քաւութե նոր պարտեացս. որով խմանամ զանբաւ սէրն ՚՚ի, և զմեծութի շնորհաց նորա, և զպատուականութի հոգւոյս: Եւ այսպէս նոյն չարչարանք տեսան ըստ այլ և այլ բանի լինին պատճառք խնդութե և երկիւղի, որք միանգամայն լինին 'ի սրտի բարեպաշտի միայն՝ մին յաջորդելով միւսումն, և ոչ ֆիզիգապէս: Եւ այս կրկին ներգործութիւնք լինելոց են 'ի սրտի՝ ըստ իւրաքանչիւր մասնութե: Եթէ փորձութիւնք մեղաց յարձակին ի մեզ, երկիւղ ասցուք շնորհել զչարչարանս փրկչին. եթէ լքումն կամ յուսահատութի գայցէ 'ի վերայ, զխնդալիսն ածցուք զմտաւ:

3 [illegible]: Զանճառելի համբերութե և զխոնարհութե փրկչին բացատրելով, զիւրաքանչիւր հանգամանս չարչարանաց նորա սաստկացուցանէ իւրեանց ներհակաւն: Լռեալ կացեր, ասէ, որ տուիչդ ես խօսից. ոչ ձայն հաներ՝ որ զերկիր դղրդես, և այլն: Զայսոսիկ առ քն յերկրորդ դէմն խօսի. բայց 'ի բանէն՝ [illegible], մինչև 'ի համար ՚՚է. թուի յերրորդ դէմն դարձուցանել, որ և յայտնի է յանէն, [illegible]:

4 [illegible]: Զհանդերձս փրկչին 'ի բաց հանեին համարելով զնա ակար, անզօր 'ի պաշտպանել զանձն. իսկ տեսեալ զի անզխորդորձ մնայր, դարձեալ ագուցին նմա, համարելով թէ անփրկելի ըմբռնեալ է, փախչել ոչ կարէ առ ապատելոյ զանձն:

5 [illegible]: Միանգամ նախ քան զխաչելն մատուցան զինի ընդ լեղի խառնեալ (ըստ մատթ. իէ. 34.) կամ զմռսեալ (ըստ մարկ. ժե. 23:) Երկրորդ անգամ 'ի խաչին՝ քացախ ընդ լեղւոյ. և զերկուսին ես [illegible] կոչէ սուրբ վարդապետս: Յառաջնումն [illegible] ըմբռնեալ և թուլացեալ զոլով 'ի զօրութե. բայց [illegible], խակոյն [illegible]. զի մի երևեցուսցէ՝ թէ առ չգիտելոյ ցաւոցն ճաշակէ. այլ ինքն յայտ առնէ ճաշակեաց, զի զգայցէ զցաւութիւնն, առանց խափանելոյ զցաւսն: Եւ ասէ եթէ ոչ այսպէս կրկնակի արբեալ էր փրկիչն զցաւն ըմպելիս, ոչ 'ի բաց փոխէր զմաղձ առաջին զաւն մեղացն ադամայ, զապականութիւնն՝ որ 'ի մեղաց ադամայ մթերեալ էր 'ի հոգիս:

6 [illegible] (մի օրին. [illegible]:) Յետ առնելոյ ըղձեղ ընդ գիշերն ողջոյն, պէսպէս զաւն հարուածոց և նախատանաց

հրէից և հեթանոսաց, ոչ եսաւն կենդանատարրից և ոչ փոքր մի հանգիստ, այլ անդէն զգործի մահուն զծանրակիր խաչափայտն հանգուցին 'ի թիկունս քո. Նախ քեզ եսաւն բառնալ զծանրութիւն խաչին, և ապա խաչին բառնալ զքեզ, իբր առաւել 'ի խաչն՝ քան 'ի քեզ խնայելով: Իսկ դու, ով երկայնամիտ, ընկալար յուս քո զխաչն՝ որպէս արգարև հանգիստ քո, իբր թեթև ինչ դիւրատար և ախորժելի, որպէս թէ ծաղիկ շուշանաց էր, և այլն:

7 Բարձեալ իբր: Ամենայն բարձեալ զխաչն իբր պարտական փոխանակ մեր, կամ բառ կարծեաց հրէից: Նոյնպէս ասելով՝ բառն Իբր, երբեմն երբեմն իմանի բառ յարմարութեան իւրաքանչիւր բանին. այսինքն մի՝ յայտնողական՝ բառ ճշմարտութեան. որպէս ասելն, Իբր երևելի, Իբր Աստուած, և այլն: Երկրորդ՝ յայտնողական առ կարծիս հրէից. որպէս ասելն. Իբր չարագործ, Իբր չարաչար, և այլն: Երրորդ՝ նմանական, որպէս ասելն. Իբր զհովիւ ոչխարաց:

8 Զի բարձեալ էր: Զառ յինքեան կալեալ ախթառ կամ բաղձանս հոգւոյ՝ զմարմինն, զառաքինութիւն առեալ խաչն 'ի գլխաւորին երկիւղալեաց, 'ի յաղագս ստացութեանն Աստուծոյ, 'ի ժամ քննոյն՝ որ է պատուիժ մեղաց, և բառ որում պատկեր մահու՝ նշանակէ զպարտաւորիլ մեր 'ի մահ. ասաւ այնպէս անէրկիւղ պաշտեցէ զնա 'ի ժամ քննոյն, որ զի անկողնոյն էնիցին ընութեանս ափափումն հանգստեան իբրև 'ի խորախճանի:

9 Իբր հանդարտիւ: Իբրև զկրճատիչ կամ լուծիչ զաւշակութեանց մարգարէիցն: Ըստ այլ մտաց՝ ճշմարտութիւն առի քո համառօտիչ օրինաց, այսինքն բառնալով զաւելորդսն, և 'ի համառօտութիւն աւետարանին վերածելով, ըստ բանին հաւմ. (Թ. 28.) « Զբանն համփրճ առնելոց է տէր » և այլն:

10 Զինչ առնել: Զբանն նշանակ և զհաստատութիւն խորհրդոց այ հօր՝ իբրև զհակառակ կամաց նորա:

11 Զկնդրեալ օրէնս: Զլուծիչ պարտաւորութեան հին օրինաց՝ խաչեցին իբր զնզովեալ 'ի նոյն օրինաց: 2 օրին. Զլուծիչ օրէնս, այսինքն ըզլուծիչ պարտաւորող կամ բանադատող օրինաց:

12 Հրաշագործ բառ նորա: 2 օրին. Խաչեալն: Զայս ամենայն ախորժական կամօք կրելով, 'ի ձեռն միաւորութեան մարմնոյդ՝ Ի բէղ յաստուածայնն անձնդ ընկալար. և մինչև 'ի գերեզմանն անպականս և նոյն ած գոլով, կրեցեր զնոյն նախատինս անպատում համբերութեամբ: Ուրեմն թշնամիք քո յաղեցան նախատանօք խաչին, և ոչ անհատանելի սէր քո շատացաւ կենդանւոյն չարչարիլ վասն մեր. այլ յետ մահուան և 'ի խաչէն եւս իջանելոյ՝ տակաւին առ գերեզմանին նախատէին զքեզ զինուորօքն և կնքելովն, և դու զայն յանձն առեր. մինչև ապա յարեար, ոչինչ 'ի բաց թողլով 'ի մարմնոյդ՝ բայց զանարգութիւն եւեթ, զգեցեալ փոխան այնր զաստուածային բարձրութիւն փառաց: Եւ արդ զինչ տացուք արխտուր քեզ ընդ այսր ամենայնի անկշիռ երախտեաց. եթէ օրհնութիւն, եթէ գոհութիւն, եթէ բարեբանութիւն, այսոքիկ թէ և յաւիտեան մատուցցին, այլ փոքունք են: Ահա դու յո փրկիչ, դու միայն քեզ փոխարէն.

# ԲԱՆ ԵՕԹԱՆԱՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան Նորին Հոգւոյ առ Նոյն այլերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ անկեալ յերեսս՝ հողանիւթ կերպիւս,
՚ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագութեամբ,
զբարեգործիդ ողորմածութե՛ն զկենդանարար աջ համ-
բուրեմ, զայս օրինակ մաղթանաց մեծիդ ընծայեցու-
ցեալ։

Բ. Աղաչեմ զքեզ, միայն խնամակալ, մարդասէր,
գթած, կեցուցիչ, հզօր, այցելու, պաշտպան, [2] մի ու-
նայնասցի վաստակն աշխատութեան փրկականդ կրից
մարդացելոյդ վասն իմ ո՛չ. [3] մի սուտ եղիցի քրտանցն
հալածեալ խառնեցեալ արեամբ ՚ի մատնութեանն ա-
ւուր գիշերին. մի լիցի ստուերացեալ լուսոյդ երախ-
տիս, զոր ձրի և առանց փրկանաց թշուառացելումս ինձ
պարգևեցեր. մի ջնջեսցին չարչարացդ աւետիս, զոր կո-
ղից քոց կայլակք նորոգեցին. մի անշահ եղիցին կրիցդ
պտուղք, զոր կարօտութեանս խնամ մատուցեր. մի
պարծեսցի բանսարկուն վանեալ՝ զքո ստացեալս իւրա-
ցուցանել. աՀա յաղթեսցես կամօք քո՛ ըղձից չարին,
վերստին ապշեսցի միանգամ զարհուրեալն, կրկին պար-
տեսցի ՚ի սպառ զատեցեալն. մի անխայեր [4] զաղաւթա-
ւորդ քո բան, որ զստեղծեալս քո քեզ ընծայեալ՝ վե-
րստին առ քեզ դարձուցանէ։ Ո՛ անճառն արարեր բա-
րերարութիւն [5] յանակնկալ ժամու՛ն յուսահատութե՛,
յորժամ բնաւ խոկ կորեալ և օտարացեալ էր կենդա-
նութեանն շարժողութիւն. մեռար անմահդ և զմահա-
ցեալս նորոգեցեր. [6] եթէ զկամն համաձայնութեան օ-
րինին փոխեցեր, արդ զդիւրինն և զհեշտականն և զևս
հնարաւորն մի արգելցես, սկզբնաձիր ողորմածութեան
բարեգութ օրհնեալ և երկայնամիտ թագաւոր։ Աղ-
գեա բանիւդ ամենազօրաւ, որ զգոյութի՛ լուսոյն ստեղ-

ծէր 'ի նախնումն աւուր, և փաղփաղակն փոփոխեալ զը-տայց 'ի լոյս անդր. և փոխանակ զի ես ոչ խնդրեցի հե-տևել լուսոյդ, դու ելցես ինձ յայց՝ Ճառագայթ ծագ-ման հայրենի կերպիւ, և կոչեցայց առաջի քո ծառայս վստահապար՝ ողորմեալ շնորհեալ առ 'ի քէն. [7] ոչ է ժամանակ յերկարամտութե առ 'ի զպարտսն հատուցա-նել, աՀա շնորհեա ինձ տառապելոյս զերեսս քո՝ լցոյ 'ի խաւարի սրտից մՀատելոց. Երգել և կոչեա [8] զքո թագաւորս երկրի, որ միշտ զեզուն բարիքն Հասեալ 'ի յուշոյս իմ տեսութենէ. պաՀեա ինձ զշնորՀ ամենա-պայծառ զանձուցդ միացականաց, որով պատուական զտեալ՝ քո անուանեցայց. պաշտպանեալ 'ի քէն, ան-սաՀման բարի.

Գ. ԱՀա ողորմեա ինձ, գթած, աղաչեմ զքեզ ողոր-մեա ինձ, Հզօր, կրկին ողորմեա. Մի փոխարկեր եր-կունս ցաւոց ընդ չարեաց իմոց, բարիդ ամենեւին. մի բառնար 'ի վտանգելոյս զառ 'ի քէն պարգևեալդ շնորՀ, մի կապտեր զփչումն ամենօրՀնեալդ Հոգւոյդ, մի լուծա-ներ զխնկեալ [9] զկնիք արքունական պատկերիդ. Մի յայտնեսցես [10] փուշք մեղանացս 'ի սրբութիւնս մտացս, մի խզեր զկապ միութեան զընդ քեզ սիրոյն պնդութե, մի մերժեսցես [11] զարուեստ զօրութեան լեզուիս յար-մարութեան, մի պակասեցուցաներ զաջողուած աջոյս 'ի զլուսոյդ մասունս բաշխել. Մի զրկեր [12] 'ի զըր-րութեան կենաց մատենից զանհաջուն պարտիս, մի պա-հեր, մի ինձ համարիր, մի յիշեցուցաներ, մի ամաչե-ցուցաներ, մի նախատեր, մի առն հարկաներ, [13] մի ար-ձանագրուցաներ զմեղկութեանցն, մի ամբարեր զկորըս-տեանցն, [14] մի իբր ստգտեալ իմն ամբաստաներ. Մի յարուցես ընդ իս [15] զծառն անիծից, մի արձակեր 'ի յիս զաղաղարթ վնասուցն, մի ընծիւղեր զծաղիկ մեղացս, մի բերցես ընդ առաջ վճռանակ պարտուցս, մի արտաքսե-րեր զէութիւն պտղոյն. Մի թուեսցես [16] 'ի ձիւղս երկ-րասերեղծ մասանցդ զգլուխս գործոյս, մի մատուսցես բան ընդդէմ աՀեղ զանօրէնութիւնս իմ յիշատակել. մի մատնեսցես իմոյս կամաց զաւանդս Հոգւոյս վարել 'ի զերութեան, մի առնէն զիս փառաւորեր՝ զի անտա-նօր զատապարտեսցես, [17] մի նուաղութեամբ այսր ան-ցաւորի զյաւիտենական բարիսն տուժեր, մի 'ի ամկա-

ւում՝ այսմ՝ ժամանակի զանխափխձանելի զփառսն չա-
փել, մի ընդ հախիս վշտաց հեծութեան զանախտա-
կան զկեանս զրաւել, մի ընդ ստուերի այսր մթութե
զանձնանեփիլ յոյս փոխանակել, մի զերանունակ մասյս
կեցեա՝ ըստ արտաքի հեռս հեռանել, մի [18] զկանոնըս
կենդարցս զրեցեալ ընդ հանգստեան բաւականութիւն.
մի [19] զհօլիս հանճարոյ տուերական արահետ 'ի հան-
գերձեալն ընդ հրապարակել։ Այլ է՝ ամբարիշտս զատանց
հանգոյց զգործոյս իմ՝ չարիս, մեռայց կենդանւոյն. եթէ
չանմարմինս 'ի որոր, ստանաւի կցելով անչոց այրե-
ցույց. եթէ բնակեցեն զանօրէնութիւնս, առանց յան-
զնման բեղ լինելոց 'ի այսա հայեցոյց. [20] եթէ անկա-
կից ընդ թողցես զմեզան, 'ի նոսին վասնելով մաշեցոյց։

Դ. Ընտրեցէս, միշտ զորեղ ամենակարող, փախ-
նուլ չարութեանցս որ յիս, զի բարիդ քո եկեալ փո-
խանորդեսցէ. հրամայես, գթած, խնամակալ, զաւեալ.
յոյս անշրջանելի, զօրութեամբ անսահմանելեաւ. զի [21]
նոր հաստատեսցի զդաւթին ընթութեան մարմնեղէն
յարկի անդամոցս. յորում հանգուցեալ անլքանելի
բնակեսցես բարձեալ ախորժ անեշանօր՝ մխութեամբ
հոգւոյս իմ՝ ընդ քեզ. զատախմութիւն մեզացս մեր-
ժեալ 'ի այսոս՝ յանդորրութիւն զիս պատրաստեսցես
ամենակեցոյց թագաւոր անմահ տէր Յսն Քսն, օրհ-
նեալ յաւիտեանս. ամէն։

---

1 Հողանիւթ եւրոյս։ մի օրին. եւրոյն։

2 Մի անձնահաճի կամացս։ 2 օրին. կամացին.

3 Մի սոյն եղելի։ Մի անզօրս և անզօր եղելի կործանած քրտանց քոց. խառնեցէք օրէնքս։ Նշանակէ սաստ և 'ի բանն 49. 4. որ հաստատէ զհատորակ կարծիս մեկնչաց՝ թէ քրտունք խառն ընդ արեան հանէին 'ի մարմնոյ փրկչին 'ի գիշերի մատնութե. իսկ կայեաստոս համարի՝ թէ յետ սպանելոյ քրտանցն բաժանորակ ալիւն անխառն հանէր։

4 Զօրացուցեր եւ ես։ Մի խնայեր զբաւութե քո բանդ. որով ու-սեփր. Թողելով լեզին քեզ մեզ քո. կամ, արժանելով ես 'ի հիւանդութենէ բաւմէ. և այլն։

5 Յանախնձուլ ժամուն։ Որպէս առ անդամալոյծն՝ որ երեսուն և ութ ամ անդամական մնացեալ, կայր 'ի յաւաղհատութե, անանկեալ յա-ցեր զբարերարութիւ, նմանապէս և առ մեռեալ միածինն՝ որ 'ի Նային, այսպէս և առ մեռուցեալ բնութիւնս՝ որ անչափ մնացեալ 'ի բնական օրինաց, և անսփնական 'ի գրաւոր օրինաց. կայր յաւաղհատել 'ի բժշկութենէ, և սպառ 'ի հոգեոր կենաց. զոր 'ի վերջնում զարու յան-կարծ երեւեցար, և զանձնառ բարերարութիւ ցուցեր. մեռանելով քո մեր։

6 Եթէ վճռես: Եթէ զկանոն օրինացն՝ որ հաստատէր յանցանացն չարեաց զպատիժն, ասելով. ակն ընդ ական. կամ՝ հրամայէր, անձն որ մեղիցէ՝ նոյն և մեռցի, զու փոխեցեր. զի ոչ միայն 'ի մէնջ բառ յանցանաց ոչ պահանջեցեր զհատուցումն, այլ և մեր փոխանակ անօրինաց մեռար: Կամ՝ եթէ զայս կանոն օրինաց ընթերցաւ, զի 'ի մեռանել մարդոյ՝ հարկ է եղծանել անձինն, զու փոխեցեր՝ մեռանելով մարդկութեամբդ, և անմահ մնալով աստուածութեամբդ. եթէ զայսուիկ՝ որ բանիւքս մեծ էին և զժուարին, տարար ողորմութեամբդ, տալ մի արքայութ զերկրային և զհեշտալին, թէպէտ և առ քո զօրութիւնդ՝ ամենայն ինչ միօրինակ դիւրին է: Իսկ առ ողորմելին քո՝ նաև անհարինքն հարելի է. զի ողորմած ես, առաւելին պարգևաց ողորմութեան ես. նախկին զործ զոր առնել կամեցար՝ ողորմութենէն է. մինչ զի նաև 'ի պատուհասելոյ ոչ յետնես յողորմութենէ:

7 Ով է ծածկեալ: Ով պիտոյ է բեզ երկրար ժամանակ առ 'ի զպարտս իմ հատուցանել, այլ բաւական է երևեցուցանել զերեսս քո. կամ՝ մի յերկարաձգեսցես զհատուցումն պարտուցս. այլ փութապէս ընդհէա, և այլն:

8 Զանթաքոյժան եղէն: Խառնանեա զանապականութիւն, որով արտաքսեա ընթացեալ եղանեն և հասին յուշոյ իմն բարիքն քո. այլ դարձ 'ի մեռս իմ զերդ յերկ թանձրաց եղանանցդ:

9 Զբոս. ընդդիմադ, որ է նմանութիւն ածութեանց:

10 Փոյթ Հեղանոյ: Մի վերստին ծնանիցին մեղք իմ 'ի [illegible] 'ի հոգիս իմ, որ արդէն աղաչապարութիւ: Թուի ակնարկել 'ի բանն եսայեայ (Ե. Ե.) ար զայլոյ ահան՝ որ զհոգին նշանակէ, ասէ. « Բուսցի 'ի նմա փուշ եղեղն 'ի խոպանի »: Կամ՝ առակէ զանդս առ ձորին առ մակարդացուածն, յորում 'ի պտղոյն արբութեան թափ բուսեալ էին (ա. մակ. դ. 38:)

11 Զ[illegible]: Մի բարձցես զյաջողութիւն կամ զծաղկաւորութիւն ընդունի և բանի 'ի քարոզէն. կամ՝ մի արհամարհեսցես զյորդնուած ձայնալից արդիւնս. կամ՝ մի արգելցես զքո ընդդիմամաձայն տուեալ պատշաճաւոր արդիւնս: Նախաջին խնամոյն ասացեալ յորմէր է յաջորդ բանին. մի [illegible], և այլն. այսինքն մի եղիցի յանարժանէ բարձցես յինէն զշնորհ քարոզութեան, և մի զարժանաւորութիւն ձեռին 'ի բաշխել ժողովրդեան զխորհուրդ մարմնոյ քո:

12 Ի [illegible]: Տես զնման այսմ բանի 'ի հ. բան. 14:

13 Մի [illegible]: Ի մասանց կենաց մի հատանեալ նշանակեսցես [illegible], զյանցանս հեզգութեանց իմոց: Եւ մի ամբարեր [illegible], զզարդս արժանի կարգեալ:

14 Մի [illegible]: 3 որին. իբր [illegible]: Բառ առաջնոյն խնդրէ. մի անբաւականել զինէն իբրև զյանցաւորս, իբրև զմեղապարտ. Զերկրորդն մարթ է բացատրել. եւ մեզք փոխուցեալ յերկիւղէ պատուոյ. մի իբրև 'ի ձեռս անկեալ համարիցիս, և անբաւական լինիցիս:

15 Զ[illegible]: Մի թողլ առցես՝ զի ընդ իս յարիցէ ասպականութիւն ընթութեամբ, որոյ վնասակար աղտեղութ կամ ակրն էն չար մասածութիւք. և ծածկեն՝ անկարգ յաւարութիւք. իսկ պատուր՝ զործք մեզաց: Կամ որոյ [illegible], մի 'ի յայս բերեր, մի երևեցուցանել, կամ մի արգիւնացուցանել [illegible], զհատուցումն զործոց մեզաց: Այսպիսի երևին 'ի մեզուոր յարուցեալն. ուստի խնդրէ՝ զի մի բառ նոյս վճռականն լինիցի և իւր յարութիւնն:

16 Ի [illegible]: Նմանութեամբ ասացէ՝ չթողել ձգցիս և մի բառ միայն զզործս մեզաց. զի որք կամին արդարար թողել իրս ինչ. 'ի վերայ մատանցն համարեն մի, երկու, և այլն:

17 [illegible]

18 [illegible]

19 [illegible]

20 [illegible]

21 [illegible]

## ԲԱՆ ՅՈԹԱՆԱՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

[illegible]

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. [illegible]

Բ. Ո՜վ թեւեալս [5] զսաստկութիւն տանջմանցն, որ պատրաստեալ է ինձ ինձ՝ արկանել զորդիս գեհենին [5] զորդ մահուն յաւիտենականի. բարձ զանօթոյս պարտիս, որ պահեալ է յայսմիկ թշուառականիս յետին աւուրն յանդիմանութեան : [3] Երաշխաւորութեան յառաջագոյն ողորմութեամբ քո ընծայեցո. զի մի անտանելիքն ահաւորութեան ՚ի ցոյց ինձ եկեալ կերպարանեսցին, անյոյս ապշութիւն ընդ կենաց զղջման առաջի կարգեալ, դատաստանն ահաւոր, անկաշառ և անխաբելի դատաւորն, անօթն սակաւի, կշռամբանքն տարաժամելի, յանդիմանութիւն անփախչելի, տագնապն անձկողալելի, պակուցումն անփրախուսելի, դողումն անվճարելի, լալումն անդադարելի, կրծումն ատամանցն անբժշկելի, ապականութիւնն անողջանալի, անէծքն տարաժամելի ամձային քո բանից, փակումն գթոյն և արգելումն ողորմութեանն : Որ [6] ընդ գալարելն երկնի և ընդ երկրի դղրդելն ընդ կործանութիւն յատակին, բակուսակելոց կոչակաց խաւարութեան ծալու իբր փախրոտեան կերպ ցուցանելով, մի զմիոյ հետս խափանեն կասեալ յերկրացունց. և [7] տատանեալ սասանեալ լայնանատարած գետնոյս թանձրութեան ՚ի հիմանց անտի, ընդ ուժգնակի բախման թնդելոցն երբենային խորոց հարթէ զլերինս, և հալեալ հրդեհին բռնութիւնք վիմաց և ամենայն տարերաց գոյից. այլայլին երկինք յանեղծ փոփոխութիւն, և յեզանակին արարածք տարերօք իրաւք ՚ի նորոգ նմանութիւն : Ծածկութիւնք զարդոյս հրապարակին և աներեւոյթք կրից մեր յայտնին. վասն կրօնից ներգործեցելոց [8] ՚ի մարմնիս մեր նկարին. թագաւորն երկնից յաւէտն նստի, վճիռ հատուցման ՚ի ձեռին իւրում : Ահա [9] վայ ինձ եօթնիցս անգամ՝ կրկին եղկութեամբ, բառ չափոյ կշռութեան այսր համառօտ, որ զանբառութիւնս թուոց պարագրէ : Ո՛ ինչ գործեցից ողբալիս հագի յայնմ մեծի աւուր վճարցի. քանզի սաստիկ է յիշատակն իսկ յառաջեալ քան զհանդիպումն. զոր [10] ամս մարգարէ զօրինակին նմանութիւն ՚ի գլխն բերելով, զձեւ տագնապի անզերծ փախստեանն նշանակէ ասելովն. զոր օրինակ եթէ փախիցէ ոք ՚ի ձեռաց առիւծու և պատահեսցէ նմա արջ, և փախիցէ յերեսաց արջոյն և մտանիցէ ՚ի տուն և յեցուցէ

զձեռն իւր 'ի յորմ, և խածանիցէ զնա օձ. և դարձեալ
կրկին ստուերացուցանէ առ 'նմին կերպարան իրի զան-
ձին քաջնեկի. ոչ ապաքէն, ասէ, խաւար է օր տեառն,
որ խաւարոյ և մթոյ, որ անլոյս և մառախլոյ.

Դ. Յայնժամ հրեշտակն պահպանողական [11] կենա-
կից հզօր ասպիկան իբրու անձինք ամբաստանութեանցն, և հա-
տուցանողն ահաւոր արդարութեանք յանդիմանութեանն.
ապստամբք թագաւորին ատենից խնայելոց խաւարեն,
զանձինս 'ի կեանս հրաւիրեն և զանձինս յանօթն դատա-
պարտեն. կիրաց զեխ ցեխոյ ծաղու ցուցանեն, և ընդ
աճարկուս և քաջնեկս երևեցուցանեն. անձինց պատիւ
բանադրաձայն մատուցանեն, և այլոց կորուստ մահու
բաղձեն. արդարոցն ձայն աւետեաց, և ընդ դոյժ ան-
փոփոխան վշտաց. [12] Յայնժամ առ բարկութիւն մահու յաղ-
թութիւն 'ի սպառ մեռանի, և ընդ չարաչարծիս կրկին
յարակայի. որ զբանն բանիլ ոչ ինչ օգտիցէ. վճար
եղեալ զթութեանն առ իս. Յայնժամ [13] զօրութիւնք
հրաշիցն զարմանալեաց, որ են ծածկեալքն յայժմուս
հասարակաց վարուցն տեառնք մարգարէիցն բնութեան
գործոց. յայնժամ որոյ եղեն զօրութիւնք անհնարին էից,
յետ բարանցն մարմնոյ անապական զբութեանք խոկոյն
երևին. և խաւթութիւնք անձնաւորին կերպեցելոց յանա-
պէց ատեանցս առաջի աչաց մերոց կերպարանին. Ապ
այժմ [14] չարհամախձութիւնք ողոց և արտասուաց
գերկինս զրաւեն, և անդ լիր զարդամանն բնդունայ-
նութիւնք արհամարհեալք լրանին. համաչափիւնք հե-
ծութեան ոչ կանխաւ սատի ատարեալ, չէ երբեք գը-
տանել անդէն. արդարութիւնք ձիգալ սերմանեալ, ոչ
պայծառ վաստակք զնան առաջի. Ապ [15] ստորանն նա-
խայանցիցն և կատարանն ախտանարգիցն և նշանն ա-
հաւոր այժմուցս՝ յանդիման եղեալ մեծամայրս զա-
տախազեն. յորում սահման փայլի անն զօրխան կցոր-
դութեան հայրենի և անն զխորանն վկայութեան ան-
տեսից և անն զարին մեծին այս ամբաստան ինն խրա-
տայի [16] առաջի իմ ստորանանեն. Ստանջանարանն
բազմապատկի անձանք անձին ատենէն խոկ պատրաս-
տեցի, զխորց մխիթարեցայց [17] հանճառուեալս յաւոյ-
գի եթէ զորքն լուսոյ՝ զատոր արդարոցն, որ փառաւո-
րեալքն են երանութեամբ, [18] սորանն զաղարով, ոչ բա-

ւեն բերել զահաւոր տեսիլ երեւաց մեծ դատաստա-նին, եւ եղկելիս՝ ուանդակորոյս սատակման որդիս ո՞ր երեւեցայց. որ ոչ միայն չեմ պակելոց, այլ և պատու-հասն իմ անտանելի և կորուսան անօգուտելի.

Դ. Ո՛Վ [19] արդարեւ, ամենապարգև զօրութիւն ան-ձնառ, ձեռն փրկութեան 'ի կորուստ գերելոյս. զի օգ-նեալ 'ի քէն՝ դարձայց միւսանգամ 'ի դրանց դժոխոց, ամենապատրաստ հանդերձեալ ամենեւին անվտանգելի ոլրծեալ 'ի պատժոց. սատանիօք տեսեալ մնացս խնա-մոք զապագայիցն դիպուածս, բաւականացեալ 'ի լուր երկնիցն 'ի տագնապէ տանջանաց՝ ահին համբաւով, կամօք քո բարեաց զերծեալ տարեցայց. և մի մատնե-ցայց կորեանցն աւիծաց, որք խնդրեն 'ի քէն զիս 'ի կերակուր՝ ծախել ատամամբքն գազանութեան. զի զա-րուրյն մահուն լցուցեալ՝ զատուստ պարարեալս անդ ձգեալ հալէն, ուր անապառ պահի մնացուած մթերիցն 'ի ծախումն յաւիտենից. Ո՛վ ի դու միայն բաւես կոր-զել 'ի ժանեաց սատակման 'ի կեանս և յերանութիւն, բնաւից սպաւէն թագաւոր լուսոյ տէր Յի Քի, որհ-նեալ յաւիտեանս. ամէն.

---

1 Զամենքեան [illegible]. Ջնջեա իբրև բժիշկ զապականումն ա-րեանս, որ ընթանայ յամենայն մասունս մարմնոյս ընդ ճանապարհ ե-րակացն. և խմանին իղձք և յօժարութիւնք մարմնոյ. և 'ի քննելն այս-պէս, տեսանես զի մարդ եմ [illegible], այսինքն յօժարեալ, կամ բնաւորեալ [illegible], անմաքրութբ և թիւր խորհրդով յայն [illegible], 'ի չարն, որպէս և դու անստուտ Ճշմարտութեամբ վկայեցեր (Ծննդ. Ը. 21.) Վասն որոյ իրաւացի է համարիլ, թէ եւ ընդ մարդկօրէն սխալեալսն կրկին յաղթեալ եմ և պարտաւոր իբրև զերկրածին ախտաւոր մար-մին, քան քո բանիւդ ստեղ երևել: Զայս զմեր բնածին ախտաւորու-թիւն վկայելով քո, իբր իրաւամբք ցուցանես զողորմել քո առ մարդն մեղուցեալ, քան առ զեռ: Ի սոյն միտս 'ի սկզբան աղօթիցս յետ ա-նէցյն, [illegible], յարէ 'ի նոյն, [illegible]. որպէս թէ յայն տակս զթաս 'ի մեզ, վասն զի սիրող իրաւանց ես:

2 [illegible]: 2 օրին. [illegible]: գիտես՝ թէ [illegible], ապա-կանեալ կամ անկարգ է արարուածն մեր, այսինքն ծնունդն վասն սկզբնական մեղաց, [illegible], բնական կամ 'ի ծննդե-նէ յօժարութեն առ չարն. [illegible]. խորհուրդքն ազդեալք 'ի մարմնոյ և յարենէ՝ ոչ փափախին 'ի չարէն, այսինքն միշտ 'ի չարն հակամիտեն: Զայս բան ասաց իմաստունն (Իմաստ. ԺԲ. 10. զքանանացւոց՝ վասն մահաւոր պատճառի անիծիցն, ընդ որով ան-կեալ էին. որպէս և յարէ զկնի (համար. 11). «Զի զաւակ անիծեալ էր 'ի սկզբանէ» (բստ Ծննդոց. Թ. 25.) Եւ առ իբր վարդապետս յար-

մարէ զայն առ ամենայն մարդիկ՝ առկս ընդհանուր պատճառի սկզբնական մեղաց ։

3 [illegible] [illegible] ։ Զծանրութիւն յաւիտենական տանջանացն՝ [illegible], այսինքն բարձ յինէն քաւութիւն մեղացս . կամ, նուազեցո փոխարկելով 'ի ժամանակաւոր տանջանս ։

4 [illegible] [illegible] ։ Նա որդիս գեհենի, որ վասն մեղացս եմ իբր զորդ, այսինքն պատշաճաւոր նիւթ յաւիտենից պարտաւորութեան, որպէս զողն է զարդ կախաղանի ։

5 [illegible] [illegible] ։ Պատուհաս հաշտութեան ընդ քեզ՝ այժմէն քո ողորմութիւնդ առ 'ի վերայ իմ . զի մի [illegible] [illegible], երկիւղալիքն ահաւոր մեծութեան քո կամ դատաստանիդ . կամ, զի մի ահաւոր անտանելիքն յանդիման աչացս եկեալ երևեսցին . անյուսալի ապշութիւն ընդ [illegible] [illegible], փոխանակ կենսաբեր զգլման առաջի դնելով ։ Այն անտանելիքն են [illegible] [illegible], և այլն ։

6 [illegible] [illegible] [illegible] ։ Գալարումն երկնից՝ խորհրդեամբ յայլ և այլ միտս առեալ է 'ի վարդապետաց ('ի մեկն . յայսմ . դ . 14 .) ոմանց զերկրորդ գալուստ քնի իմանալով, և այլոց՝ զհրեշտակաց փառակցելն ընդ կործանումն երկրի . և կիսոց՝ զեկեղեցւոյ անյայտելն յաւուրս նեռին ։ Բայց ըստ ճառին տիրապէս իմանան մեկնիչք զհաւաքումն և զգալարել թանձր և մթագին ամպոց զերեսօք երկնից . որովք խաղաղ ծածկի իբրև զմագաղաթ փաթթութեալ . և լուսաւորքն՝ որք իբր զգրուածք են 'ի տարածութեան երկնից, աներևակ լինին ։ Կամ, գալարումն իմա զպղտորս խիտ ամպոց, որք 'ի միմեանս շրջանակելով երևեցուցանեն զերկինս գալարել ։ Ընդ որս և երկիրս դղրդեալ, շարժի [illegible] [illegible], 'ի սաստութեան իւրում իբրև 'ի խառնեալ ծովու, յորում կոհակք կամ ալիք գլգլացեալք իբրև փախչել ցուցանեն, բայց գլխեալք միմեանց՝ կասին ։

7 [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ 2 օր . [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ Այն շարժումն երկրի՝ ոչ իբրև զբնական գետնաշարժս՝ լինի 'ի մասնաւոր տեղիս, կամ առ երեսօք գետնոյ . այլ բովանդակ հողագունդս ամենայն թանձրութեամբ դղրդի, 'ի ներքին խորոց անտի զոլորշեացն հողմ ուժգին յարուցանելով . որով լերինք տապալին, և հալին [illegible] [illegible], 'ի ծծմբավառ հրոյ . կամ հալել առէ զմանր փշրելն . և այրեալ եղծանին բնութիւնք [illegible] [illegible] . այսինքն գոյացեալցն 'ի տարերաց, որք են բաղադրեալքն 'ի նոցունց . զի բուն տարերքն մաքրին միայն 'ի հրոյն, և ոչ ապականին ։ [illegible] [illegible], երեսք երկնից կամ օդս մաքրին յօտար խառնութենէ . և մնան այնուհետև յստակ և անեղծ . և [illegible] [illegible], փոփոխին նիւթական արարածքս՝ [illegible] [illegible], բաղադրեալ սկզբամբք իւրեանց, 'ի [illegible] [illegible], 'ի նոր կերպարան . որով իմանի՝ թէ մարմնաւորքս ամենայն կերպարանափոխ լինին ։

8 [illegible] [illegible] ։ Գործք արդարոց և մեղաւորաց երևին 'ի մարմինս իւրաքանչիւր արտաքին նշանօք ուրախութեան և տրտմութեան, գուցէ այլովք ևս նշանօք՝ որպէս 'ի կայծն ցուցաւ ։ Այսպէս վարք կամ վարմունք իւրաքանչիւր կրօնից կամ կարգաց՝ ըստ որում գործովք ցուցեալ են, յանդիման լինին բովանդակ երկնի և երկրի . և իւրաքանչիւր այր թէ ըստ իւրում անկեալն գործեալ իցէ՝ և կամ հակառակ՝ զատի անկներև ։ Ընդ երկնից այսպէս նստեալ դատաւոր, և վճռահատուցմանն 'ի [illegible] [illegible], այսինքն պատուհասական, բան հրամանի նորա ինքնին զօրաւոր, վճռատու և գործադիր միանգամայն, անկարօտ այլում ձեռին ։

9 ՎԱՅ ԻՆՉ ԵՐԿՆԻՑ ։ Յայտն․ ը․ 13․ երիցս վայ տուաւ երկրի․ իսկ ինձ, ասէ, եօթն անգամ վայել է․ և այն՝ ԻՆՉ ԵՐԿՆՆԻՑ, թէ վասն հասարակաց աւերածոյ երկրի, և թէ վասն իմոյ սեփհական կորստեանս․ կամ, եօթն վայ վասն հոգւոյս, և եօթն ևս վասն մարմնոյս ։ Այս եօթն թիւ զանբաւութիւն թշուառութեանս նշանակէ․ զորմէ տես 'ի բանն ԼԱ․ ըծ․ 6 ։

10 ՈՐ ՄԱՐԳԱՐԷ ։ Այսինքն ամոս (Ե․ 19․ 20․) բայց վերջին բանն՝ օր ԽԱՒԱՐՈՅ, և այլն, է սոփոնիայ (ա․ 15․)

11 ԿԵՆԱՑ ։ Այսու յայտ առնէ՝ թէ հրեշտակն պահապան 'ի ծննդենէ կարգեալ 'ի խնամս մեր, ընդ մեզ մնայ մինչ 'ի մահ․ ուստի որպէս քաջ տեղեակ ամենայն գործոց պաշտպանեցելոյն՝ կարող է մի ըստ միոջէ վասն ամենայնի վկայել ։

12 ՅԱՐԺԱՄ ԱՅՆ ԵՐԿԻՆ ։ Յայնժամ 'ի վերջնումն դատաստանի՝ մահն որ յաղթեալ էր բարեգործաց բառնալով զկեանս մարմնոյն, դադարէ իսպառ անմահ յարութեամբ նոցա, որով ոչ ևս կարէ յարձակել 'ի վերայ նոցա ։ Իսկ ԻՆՉ ՉԱՐԱԳՈՐԾԻՑ, այսինքն չարագործացն իբրև զի կրկին ևս յաղթի, յոր կայ մնայ յաղթութի մահու․ զի թէպէտ չարագործք ևս յառնեն սասանց այլ ևս մեռանելոյ, բայց ժամանութի մահու անփարատելի կայ 'ի նոցանէ, անշարժելիք զօրէն անկենդան գիոյ, զարհուրելիք, գարշատեսիլք իբր դեւ, միշտ 'ի տագնապս իբր օրհասական հոգեվար․ միով բանիւ, գոյ 'ի նոսա ամենայն զանութի մահու, բաց 'ի միակ զեւրութենէն՝ որ է անզգայութիւն ։

13 ԴԻՏՈՂՈՒԹԵԱՆՑ ՀՐԱՇԻՑՆ ։ Մատեանք հրաշալի գործոց մարդկան՝ որք այժմ ծածկեալք են՝ թէ յայլոց և թէ յիւրաքանչիւր անձնէ․ զի ոչ միայն զայլոց զբարիսն կամ զչարիսն ոչ ճանաչեմք այժմ հաւաստի, այլ և զբազումս 'ի մերոց գործեցելոց ։ Այս մատեանք՝ են խիղճ մտաց իւրաքանչիւրոցն, այլ և յայտնութիւն ածային, որ իբրև 'ի գիր ծանուցանէ ամենեցուն զգործս իւրաքանչիւրոց ։ Եւ ասէն ՀՐԱՇԻՑ, կամ հրաշալիք զարմանալեաց․ զի անկարծելի իրք յայտնին յայնժամ․ բազում բարի կարծեցեալ գործք՝ ցուցանին լինել չար, և չար կարծեցեալքն՝ բարի․ փոքր չար կամ անփոյթ համարեալն՝ տեսանի լինել մեծ․ տեսանին յայնժամ անթիւ մեղք և տեսակք և պարագայք չարութեանց, որք աչքեցուցանեն զմիտս․ տեսանի և անհասանելի ապերախտութիւն մարդկան առ անհամար երախտիսն Այ ։ Այս ամենայն տեսութիւնք ՅԻՐԱՒԱՆՑ ՄԱՐՄՆՈՅ, այսինքն 'ի կիրս զխմաց իւրաքանչիւրոց, այլ և 'ի խոստովանութիւն բերանոյ նոցա ԱՆԴԱՄՈՅ ԳՐՈՒԹԵԱՄԲ, ձեռք և անդամք ծանօթութեամբ երևին, զի կիրք զխմաց և բանք բերանոյ՝ են իբր գիր 'ի մարմնի ։ Ուր յաւելուածն՝ թէ վասն մարդոյ եղեն գոյութիւնք ամենայն էից, զայն ակնարկէ թէ քննութի լինիցի՝ զիարդ վարեցաւ մարդ իւրաքանչիւր արարածովք, և թէ նոքին իսկ լինելոցք են դատախազք և տեսողք հաստուածոյն՝ որ չափեաց մարդկան ըստ գործոց 'ի լաւն կամ 'ի վատթարն․ Եւ ԽՈՐՀՐԴԵԱՆՑ ԱՆՃԱՌԻՑՆ, զաղտնի խորք անճառ խնամոցն Այ, նախախնամութեան, փրկագործութեան, երկրպագութեան, ներքին ազդեցութեան, պահպանութեան հրեշտակաց, փառաց արդարոց, և տանջանաց մեղաւորաց, և այլն, որք անծանօթք են յայժմու մեր զխառութեամ, անդ 'ի դատաստանին յայտնապէս ծանիցին ։ Եւ այսպէս գործք մարդոյն և գործք Այ երևեսցին իբրև երկու լերինք, յորոց վերայ կացեալ Այ դատեսցէ զմարդիկ (զաքար․ Զ․ 1․ և ժդ․ 4․) Յոբյս խմս և զսաղմոսն (լե․ 7․) «Արդարութիւնք քո որպէս լերինք ած, իրաւունք քո որպէս խորք բազումք» ։

14 ԸՆԴԱՌԱՋԵԱՑԱՒՈՒԹԵԱՆՑ ԱՆԵԼՈՅ ։ Զ օրէն․ և 'ի հին լուծ․ Եւ...

հաւբխան։ Ուր այժմ շահեկանութիւն ոգւոց դըժմամ զերկինս կարեն առնուլ, անդ յետ ասաց կենայս իւր զգածման ընդանայնութեան, իբրև զանապան հասնել, կամ ոչ 'ի պատշաճ ժամու արարեալ անպիտան գործս՝ արհամարհին։

15 Տողանն նախայանցիցն։ Տողանն նոյն երևեալ 'ի յանդիմանութե առաջին յանցաւորացն 'ի բնական օրէնսն։ Եւ կարկառանն փիլանագիցն. առխառակք օրինացն մովսէսի երևեալին հրեիցն անարգողաց զգրն. որպէս և խաչն քնի երևեալ ազգաց, քրիստոնէից՝ որք 'ի նոր օրէնս։ Ձևացուցանէ զանսիլ առենին քնի իւր բանասաեղծ՝ բատ օրինակի նկարչաց, որք զնոյ երևեցուցանեն առաջնորդն, և զմովսէս առխառակօքն։ Այլա թէ ոչ՝ նիւթական առաջնորդն և առխառակքն ոչ միայն մինչ յօր դատաստանին, բայց 'ի խաչափայտէն քնի. զոր յաւետարանէ գիտեմք միով և երևել 'ի դատաստանին։ Արդիւն 'ի փառս մովսէսի ասէ բատ սմանց կարծեաց՝ և վասն առխառակաց մովսէսի երևել յայնժամ. այնպէս և վասն նոյեան առաջնոյն աւի 'ի գիրս ինչ՝ կարապետ լինել համբերծեալ տուրին։ Բայց այսոքիկ յանընդունելեաց կարգի են։ Ապա միայք որոց փարդապետիս է, թէ նոյ բնական օրէնքն՝ (զոր կոչէ տախտ հայրենի.) յանդիմանէ զառաջին մեղուցեալսն. և մովսէս՝ նաև գրաւորական օրէնքն կշտամբէ զհրեայսն. և քն նաև աւետարանական օրէնքն՝ զքրիստոնեայս։ Իսկ ինձ, ասէ, երեքին ևս դատախազ լինին. զի երիւքն ևս խրատեցայ, և յերիցն երախտիս վայելեցի, և ոչ ուղղեցայ։

16 Աստեղքն իմ փարածանէն։ Զփանջանարանն բաղմապատիկ անյամք են։ 2 օրին. այսպէս զնէն. աստեղքն իմ փարածանէն, զփանջանարանն բաղմապատիկ, ըստ անյամք անձին ատեն իւի դատարաննցի։ Զիմաստ միխթարեցայց, են. որ այսպէս խմանի. զերևաւին օրէնսն առաջի իմ առարածանէն՝ իբրև բաղմապատիկ ասնդիկս, զորս անձամբ իմով առա ինձ պատրաստեցի. Վասն որոյ զիարդ միխիթարեցայց, և այլն։

17 Համառօտելս յասայ։ պակասեալս 'ի յուսոյ։ տես 'ի բանն 2. ըծ. 1։

18 Աստեղն տաղալեալ։ Դողալն հրեշտակաց և սրբոց՝ խմանի պատկառիլ որդիլապէս յահաւոր մեծութէ դատաւորին, և ոչ յերկիւղէ դատաստանին իբր յանցաւոր կամ դատելի։ Այլու օրինակաւ խօսի և Ոսկեբերան (Ճառ ա. առ Թէոդորոս մեղուցեալ.) վասն ընդհանուր դատաստանին. «Երկիւղ անհնարին պաշարեսցէ զնոյն իսկ հրեշտակս, և ոչ միայն զհրեշտակս, այլ և զհրեշտակապետս, զաթոռս, զտէրութիւնս, զիշխանութիւս, և զզօրութիւս. զի ասէ, զօրութիւք երկնից շարժեսցին. վասն զի ծառայակիցք նոցա պատիժս ընդունելոց են վասն անցեալ կենաց իւրեանց»։ Նա ինքն Ոսկեբերան. թղթ. ք. առ Ողիմպիադա ասէ վասն հրեշտակաց. «Զի թէպէտ և միոյ իրիք յանցանաց խիղճ ոչ ունին, և ոչ 'ի դատաստան մտանելոց են, սակայն ահաւոր 'ի հարցափորձի զընդհանուր ազգ մարդկան և զազգիս անհամարս, ոչ առանց երկեղի կան անդանօր»։

19 Արձեւ։ Կանխեցա յառաջ քան զօր դատաստանին յետն իւր կաբխան, զօգնութե փրկութե. որով տարեայց մաանգամ, որպէս յայլ անգամս ապաշխարութիւ, 'ի տրամն դժնդակ, 'ի պարտաւորութե զմոխոց. և բարի գործովք ամենայնիւ պատրաստ եղէց՝ անվանդեալ ատեանին 'ի պատժոց անտի. և այժմ մեղս ունանելով զապաւինի ահաւոր զիպուածն, բաւական լիցի ինձ լուր երկիւղի ասնդանացն. և կամք քո եղիցի, այսինքն բարերար քո կամօքդ զերծայց. և մի մատնեցայց կորստեանն աղանդոյ, դիւացն՝ որք կամին որսալ զիս 'ի ձեռն, 'ի շնորհաց քոց հանել. որպէս զի չարաչար նման, զմահացուցիչ որոգայթս իւրեանց լցուցանելով, շուտափոյթ դարձուցեալ, զիս՝ զոր առա պատրաստեցին մեզք, անդ 'ի գժոխս հալեսցեն, և առանց տարակոյս ծախեսցեն։

# ԲԱՆ ՈՒԹՍՈՒՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն ողբս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ ՚ի վերայ այսքանեաց [1] յուսահատութեանց և ահարկու սրտաբեկութեանց, պակուցանողական սաստկութեանց ա̃ծային բարկութեանց, տագնապեալ ոգւով թախծութեան ՚ի սպառ, աղաչեմ զքեզ սուրբ ա̃ծածին. Հրեշտակ ՚ի մարդկանէ, մարմնատեսիլ քերովբէ, երկնաւոր արքայուհի, անխառն իբրև զօդ, մաքուր որպէս լոյս, [2] անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան, գերազանց քան զընակութիւն [3] անկախելին սրբութեանց, երանաւոր խոստմանն տեղի, Եդեմ շնչական, ծառ կենացն անմահից [4] բոցեղէն սրովն պարունակեալ, ՚ի բարձրեալն հօրէ զօցեալ և հովանացեալ, հանգստեամբ հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ, բնակութեամբ որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ. միածնին հօր և քեզ անդրանիկ, որդի քո ծննդեամբ և տէր արարչութեամբ. ընդ անաղտ [5] մաքրութեանդ և անբիծ բարի, ընդ անարատ սրբութեանդ և խնամակալ բարեխօս: Ընկալ զմաղթանս այսր աղերսանաց [6] քում դաւանողիս, և մատո ընծայեա ընդ սմին խառնեալ [7] զլանն իմ նախնի մեծիդ ներբողի ՚ի քոյդ պաղատանս. հիւսեա միայն զմեղուցելոյս զառն հեծութի̃ ընդ քումդ երջանիկ և խընկաւորեալ հայցուածոյ, տունկդ կենաց պտղոյն օրհնութեան. զի ՚ի քէն միշտ օգնեալ և բարեգործեալ, և ՚ի մաքրական քո ծնելութիւնդ ապաւինեալ և լուսաւորեալ, կեցից Յ̃սի որդւոյ քոյ և տեառն:

Բ. Օժանդակեա թևոցդ աղօթիւք, խոստովանեալ [8] մայրդ կենդանեաց, և ելից իմ յերկրէս հոլովէ, առանց ըլկանաց հետևել ՚ի կեանս օթեվանացդ պատրաստութեան. զի թեթևասցի կապարածն իմ ինձ ծանրացելոյս անօրէնութ̃ը: Արասցես տօն ինձ բերկ-

րութեան զօրն իմ տագնապի, ողջացուցիչ երկանցն Եւայի. բարեխօսեա խնդրեա աղաչեա, զի ըստ անճառելի մարթութեանց և ահա զեանից հաւատամ զընդունելութիւն: [9] Ապաստաւոր օգնեա վտանգեցելոյս, գովեալդ 'ի կանայս. ծունր խոնարհեցո առ իմ հաշտութիւն, ծնողդ Այ. ընդ խնամ թշուառիս հոգա, խորան բարձրելոյն. ձեռն տուր անկելոյս, տաճար երկնային. փառաւորեա զորդիդ քո 'ի քեզ՝ [10] ածօրէն ինձ հրաշագործել քաւութիւն և ողորմութիւն, աղախին Այ և մայր. բարձրասցի պատիւ քո ինև և ցուցցի փըրկութիւն իմ քև:

Գ. Եթէ զիս գտցես՝ տիրամայր, [11] թէ ինձ ողորմեսցիս՝ որբուհի, թէ զկորուսեալս շահեսցիս՝ անարատ, թէ [12] զհարթուցեալս յանձանձեսցես՝ երջանիկ, թէ զամաչեցեալս յառաջ մատուսցես՝ բարեշնորհ, թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես՝ միշտ սուրբ կոյս, թէ զմերժեալս ընտանեցուսցես՝ մեծարեալդ Այ, թէ յիս ցուցցես զգթածութիւն՝ լուծիչդ անիծից, թէ զծփեալս հաստատեսցես՝ հանգիստ, թէ 'ի խաւարութեանցս յուղմանց փոխեսցես զիս՝ խաղաղարար, թէ վրիպելոյս ինձ հնարաւորեսցես՝ գովեալ, թէ վասն իմ [13] մնասցես 'ի հանդէս՝ մահու նահանջիչ, թէ զդառնութիւնս իմ անուշեսցես՝ քաղցրութիւն, թէ զբաժանմանն իմ խըռրոց քակեսցես՝ հաշտութիւն, թէ զանմաքրութիւնս իմ բարձցես՝ եղծման ընդդամնիչ, թէ զմատնեալս մահու փրկեսցես՝ կենդանի լոյս, թէ զլալեացս ձայն հառցես՝ բերկրութիւն, թէ զխորտակեալս կազդուրեսցես՝ դեղ կենաց, թէ 'ի կործանեալս յիս ակնարկեսցես՝ հոգելից, թէ ողորմութեամբ ինձ պատահեսցես՝ [14] կատակնուիրեալ: Օրհնեալդ միայն 'ի շրթունս անբիծս լեզուաց երջանկաց, ահա [15] կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ անձրևեալ՝ կենաց ինձ զօրէ, մայրդ բարձրելոյ տեառն Յսի արարչին երկնի և ընաւին երկրի, զոր անճառապէս ծնար [16] բովանդակ մարմնովն և համայն Ածութեամբն, որ փառաւորեալն է ընդ հօր և հոգւոյն սրբոյ էութեամբ և անքննութեամբ մերոյին բնութիւնս միացելով, [17] ամենայն և յամենայնում, մի Երրորդութենէն. նմա փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն:

1 [illegible]: Ի վերայ այսքան յուսահատիչ իրաց և դիպուածոց, և զարհուրելի [illegible], ըմանց արտի, և սարսափեցուցիչ [illegible], սպառնալեաց, որք միայն ինձ յանձայն բարկութեանէն յաչեց զատաստանին, այժմէն ըմբռնեալ տխրութեամբ, թեպէտ և պաղատեցի առ գթութեան այ ազատել զիս յանդերձ կորստեանէն, բայց երկնչիմ զուցէ վասն անարժանութեանս չլինիցիմ լսելի. վասն այսորիկ ապաւինեալ 'ի քո միջնորդութիւն, [illegible] [illegible], և այլն: Յաղագս բառիցս՝ [illegible], [illegible], կամ [illegible] [illegible], [illegible], և նմանեաց սոցին, գիտելի է, զի պէսպէս օրինակս վարին 'ի գիրս. երբեմն նշանակեն զյուսահատեցուցիչ իրս. երբեմն զմեծ զժուարութիւն իրաց. երբեմն զմեծ և զսաստիկ տրտմութիւն: Բայց յաճախաբար նշանակեն զչարժումն բազմազգական մասին մարդոց 'ի բարույն՝ զոր չէ հնար տանել. և ըստ զանազանութեան բարեացն և անհնարութեանց նոցա, յուսահատութիւն ևս լինի բարի և օրինաւոր, կամ անբարի և անպարտաճան: Եթէ հայի 'ի գերբնական բարիս փրկութեան՝ իբր անհնարինս առ տանել նաև զօրութեամբն այ, միշտ է չար, և մեղք ընդդէմ հոգւոյն սրբոյ: Եւ սակայն յայտ է թէ ոչ ըստ այսմ մտաց 'ի կիր առնու սուրբ վարդապետս, որ ամենայն ուրեք խոստովանի զնա՝ կարող ամենայն անհնարից, և միշտ հայցէ զշնորհս և զփրկութիւն (տես 'ի բանն ԺԱ:) Իսկ եթէ յուսահատութիւն հայի 'ի բնական բարիս՝ իբր անհնարինս բնական զօրութեամբ, կամ 'ի գերբնական բարիս՝ իբր անհնարինս մարդկային զօրութեամբ, կամ նաև ըստ կարգի հասարակ նախախնամութեանն այ, ըստ այսմ յուսահատութիւն բարի է և օրինաւոր՝ յորժամ անհնարութիւն ճշմարիտ է: Եւ յայս միտս իմանալի է՝ ուր ուրեք սուրբ վարդապետս զինքենէ, կամ զայլոց կենդանի մեղաւորաց ասէ յուսահատեալ կամ պակասեալ 'ի յուսոյ. որպէս 'ի բանն ՀԱ. 4. 'ի վերջն. [illegible] [illegible]: և ՀԸ. 2. [illegible] [illegible]: և ՀԹ. 3. [illegible] [illegible]: և ասա. 3. թէ [illegible] [illegible]: ըստ այսմ և ԼԱ. 3: ԺԲ. 1: ԽԴ. 2: Վասն զի ծանրութիւն մեղացն՝ զոր խոստովանի, յաճախութիւն փորձութեանց և որոգայթից սատանայի, դիւրասահութիւն 'ի մեղս, ապերախտութիւն մարդոյն, արդարութիւն այ, և այլն, այս ամենայն անհնար առնեն զազատութիւն մեր յայնցանէ՝ ոչ միայն մարդկային զօրութեամբ, այլ և բազում անգամ ըստ հասարակ օրինաց նախախնամութեանն այ. ուստի յայսմ կողմանէ յուսահատութիւն ներգործի 'ի մարդն. բայց քանզի ազատել կարող է նա բացարձակապէս, և անդուլ աղօթութեամբն կամի և խոստանայ առ ճշմարիտ հայցողսն, վասն այսորիկ մնայ տեղի յուսոյ խառն ընդ երկիւղի: Թող զի սովորաբար ընդ կիրս յուսահատութեան կից գոլով տրտմութիւնն, և ըստ մեծութեան յուսահատութեան՝ մեծ տրտմութիւն. նոյն իրի բազում անգամ [illegible] նշանակէ սաստիկ տրտմութիւն, և յուսահատեալ նշանակէ կարի տրտմեալ, լքեալ, և այլն: Զայս համառօտիւ ծանուցաք, ոչ միայն վասն բանից սրբոյ վարդապետիս, այլ և վասն այլ գրոց՝ յորս գտանին այսպիսի բառք. որպէս և այն՝ որ 'ի չարչարանս յարութեան առև: « Մայր խաչեցելոյն, զի՞ ըստ յուսահատեալ », ուր յայտնապէս զբնական յուսոյն խօսի՝ որով անհնարին էր բնական ճանապարհաւ կենդանի տեսանել զորդի իւր. յորմէ և անհնարին թախծեալ կայր. և ոչ եթէ զգերբնական կամ զաստուածային յուսոյն, որոյ պակասութիւն միայն է մեղք ընդդէմ հոգւոյն սրբոյ: Իսկ զայս այլ ազդ իմանալին՝ այնպէս խոտորնակ է, որպէս եթէ առ զասելն առաքելոյն (Բ. Կորն. Ա. 8.) « Մինչև անյոյս լինելոյ մեզ և 'ի կենաց », իմանայցէ՝ անյոյս լինել 'ի

զօրութեան այ. կամ 'ի յաւիտենական կենաց, ուր բանն է զազատութենէ 'ի նեղութեանց բնական ճանապարհաւ : Վասն որոյ զգուշալի է՝ զի մի ոք անփութաբար այլ ընդ այլ խառնայցէ զուգինս դրեալսն, կամ առգաանիցէ զզրոյցն, որով զանձն ագէտ ցուցանիցէ :

2 Անշաղախ : Մաքուր, յստակ՝ իբրև զանախտ ... այսինքն առանց տատասկի, յորժամ բարձր է, և յառաջինթաց լինի արեգական :

3 Անմերձենալի սրբութեանց : Քան զանգի սրբութե սրբութեանց, ուր ոչ կոխէին քահանայքն և ժողովուրդքն (Եբրայ. Թ. 7.) և սուրբ կոյսն գերազանց առաւել քան զայն, զի անդր միանգամ յամին մտանէր քահանայապետն՝ մատուցանել զարիւն անբանից. իսկ 'ի սուրբ կոյսն ոչ երբէք եմուտ մարդ, այլ միայն ածն բան՝ առնուլ 'ի նմանէ մարմին :

4 Բարձրագոյն ... : Հրեշտակաց պաշտամանց սպասել էր սուրբ կոյսն՝ ոչ զի 'ի խնամոց նորա անձառակ մնայցեն մարդիկ իբրև զծառն գրաւածին, այլ զի կուսութի նորա անմերձենալի 'ի մարդկանէ լինիցի, և զաղանիք մեծութե նորա թաքուն պահեսցին 'ի գիտաց :

5 Մարդասիրութեամբ : 2 օրին. Մարդասիրութեամբք : ընդ անախտ մաքրութեան կուսութեանդ՝ միանգամայն բարի ես՝ ոչ միայն այլովք առաքինութեամբք, այլ և հաղորդութեամբ քոյ բարեաց 'ի մեզ : Սոյնպէս զանապատ սրբութիւն ունելով, ոչ գարշիս յանսուրբ մեղաւորացս, այլ լինիս ...

6 Քաղցր ... : Որ զաւանեալ զքեզ մայր այ և միշտ կոյս, և ամենայն պիտոյից խնոց զօրեղ բարեխօս :

7 Զ... : զԳուսմարք խմբեցն առէ, զոր ամք յառաջ յօրինեալ էր ըստ խնդրոյ առեփանէոսի մեկաց եպիսկոպոսի, յորժամ գրեաց զպատմութե խաչին ապարանից : Եւ զի այն փոխադրութիւն և շինութե դիպաւ 'ի նոր թուականին, որպէս առ անատոր 'ի յիշատակարանին, եթէ միով կամ երկու ամաւ զկնի յօրինեցաւ ներբողեանն, զհետ գոյ իբր 18 կամ 20 ամք յառաջ ալարեալ քան զաղօթսն, որ կատարեցան 'ի թուին ՆԾԱ կամ ՆԾԲ :

8 Մայր կենդանեաց : 2 օրին. Կենդանութեան. այլ օր. Կենաց : Օգնեա, հաս 'ի թիկունս ..., բազկատարած աղօթիւք, կամ փոխադրութբ հոգւոյս՝ թևովք աղօթից, խնամ եղանելցս յաշխարհէ՝ ով ամբարծին, զոր խոստովանիմք ճշմարիտ մայր կենդանեաց կամ կենդանութե՝ փոխանակ եւայի, որ եղև առաւել մայր մեռելոց : Որպէս զի եղիցի ինձ առանց վտանգ և տագնապի ելանել գնալ 'ի ... խոս փոխադրութբ հոգւոյս, այսինքն գնալ 'ի պատրաստեալ օթևանս կենացն. որով զանէ կատարած կենացս մահն՝ թեթևանայցէ ինձ, զիւրանայցէ, որ 'ի կենդանութեան ծանրացոյց մեզաք : Այնպէս զի օր մահուն՝ որ տագնապեցուցիչն է, լիցի վասն իմ առն ցնծութե. և այս չէ քեզ դժուարին կամ անհնար. քանզի դու ողջացուցիչ կամ բարձող գոլով երկանց ցաւոցն եւայի, ըստ նմին և զտագնապս մահու՝ որ եղև 'ի մեզ յանիծից նորա՝ կարող ես 'ի ցնծութիւն փոխարկել : Այլ և քում բարեխօսութեան ոչինչ ակարանոյ. քանզի հաւատամ թէ որպէս անճառելի է մաքրութիւնդ, նոյնպէս ամենընդունող է աղաչանքդ. որպէս սրբութիւն քո է ածամայրական, նոյնպէս խնդրուածքդ՝ ածամայրական, այսինքն այնպիսի խնդրուածք՝ զի է միանգամայն իբր հրաման առ որդի :

9 Արտասուաց ... : Բանաստեղծօրէն զցթալից աղաչանսն կոչէ արտասուս, իբր նշան փոխանակ նշանակելոյ : Կամ, զարտասուսն զոր 'ի չարչարանս փրկչին եհեղ. աղաչէ ընծայել այ : ...

ցս, ոչ զմարմնական ծնրադրութիւնն ասէ, այլ զխոնարհական պաղատանսն: Զեռով այսպիսեաց բանից այնպէս խնն հեղու զսիրտ իւր առաջի տիրամօրն, որպէս եթէ զցաւագին զիւր կիրս զարթուցանել ՚ի նմա կամիցի. իբրև ասել. Ես արտասուելով պաղատիմ, արտասուեա և դու ընդ իս, ով ամենագութ. Ես ծնրադրութբ հայցեմ, խոնարհեցո և դու ծունր առ իմ հաշտութի. ՚ի հոգս վշտացնիմ ես, ընդ իմ թշուառու[illegible] և դու: Այնչափ հաստատեմ զգորով մայրենի գթոյդ առ մեզ-ցեալս, մինչ զի եթէ հնար էր՝ դու ինքն ընդ իս լայիր, ծունր դնէիր, հոգած լինէիր:

10 [illegible]: Որպէս ՚ի Կանայ գալիլեացւոց քով միջնորդութեամբ հրաշագործեաց քո, զՋուր ՚ի գինի փոխելով. ոչ զի դու փառաւորեսցիս, այլ ՚ի քեզ որդին. նոյնպէս ընկալ և այժմ, զի ամենարար ներգործեսցէ յանձն իմ զպարգևս թողութեան և երանութեան. որով որդին քո փառաւորեսցի իբրև սկզբնաձիր ողորմութե. բայց նաև պատիւ քո բարձրասցի ՚ի պատճառս իմ, ցուցանելով թէ փրկութիւն իմ քև յաջողեաց. զի որչափ առաւել մեղապարտ եմ ես և անարժան, նոյնչափ մեծանայ պատիւ քո յերկինս և յերկրի, եթէ քոյով պաշտպանութեամբ ապրեցայց:

11 [illegible]: Բովանդակ բանքս՝ որք [illegible] շաղկապաւ կապեալ են, կրկնակի նկատին: Մի՝ յարելով ընդ նախընթաց բանին, [illegible] այսպէս: Ցուցցի փրկութիւն իմ քև, եթէ զիս զայես ով տիրամայր, են. և ըստ այսմ ամենայն պատուոյ անուանքն ընծայեալք ածածնին, իմանին իբր կոչականք. այսինքն ով սրբուհի, ով անարատ, ով երջանիկ, և այլն: Երկրորդ, նկատին իբր նոր գլուխ բանի. և ըստ այսմ պատուոյ անուանքն ոչ են կոչականք, այլ ուղղական, այսպէս, եթէ զիս զայես, տիրամայր ես, և այլն: Այսմ մասց նշանակն 2 օրինակք, որ զատուցեալ անուանց չեչանն ՚ի վերջն, գնելով, [illegible], [illegible], [illegible], և այլն:

12 [illegible]: զխրատեցեալս, կամ զանձնկորեալս:

13 [illegible]: զննեալսն կի մարմնոյն շղեմ թշնամեաց հոգւոյս:

14 [illegible]: Կատակ ես որդւոյն, որով ած թողու մեզ զմեղանդութի ողբալութեան: Կամ, իբրև կատակ հոգևոր զրեցար ՚ի ժամ խաչելութեն, թողեալ մեզ յորդւոյդ մայր հաստատեալ. սասաի ողորմութեամբ խնդրեմ պատահել ինձ: Այսպէս ընդունեալ իմ յամօթ եբեալս, ոչ համարձակիմ օրհնութիւնս երգել առ քեզ, այլ ողբս՝ զի անրիծ չրթանց միայն վայել է օրհնել: Աստն ՚ի [illegible], խմանալի է փոխադրութեամբ հոլովս, այսինքն յերջանիկ շրթանց անրիծ չրթանց:

15 [illegible]: Այլաբանութի է, առ որ համարձակի զզջական աղօթաւորն՝ ոչ եա իբրև մեղապարտ, այլ զորդիական աղաւնութիւն ընկալեալ՝ իբրև առ մայր խօսելով: Մի միայն կաթիլ կուսական ըսանանցդ ցօղեալ ՚ի վերայ իմ, բաւական է, ասէ, կենաց առ ինձ նուազեցելոյս. խնդրաւած մի ևեթ կուսական գթութենդ զօրէ առնուլ յայս կենաց վասն իմ. կամ, կուսական վարուցդ մի միայն առաքինութիւն յանձն իմ կերպարանեալ՝ բաւական առ ՚ի կենաց է ինձ:

16 [illegible]: Զարարիչն ամենայնի ծնար ամբողջ մարդկային բնութեամբն, և [illegible], ունելով և զկատարեալ ածութիւն. որ և փառաւորեալ է ընդ հօր և հոգւոյն սրբոյ՝ ոչ միայն ածային էութեամբն, այլ և մարդկայնով բնութբս միացեալ յանձն նորա. զի որպէս ՚ի կուսէդ մարմնացն ած ծնեալ, նոյնպէս առաւածութեամբն ՚ի հօրէ՝ մարդ փառաւորակից հօր:

17 [illegible]: տես ՚ի բանն [illegible] . 6:

## ԲԱՆ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ընդ ընծայելին մաղթանաց՝ աշա և զերկնային անմահ հրեշտակաց լուսակերպից զաղերս հայցուածոց, որ վասն իմ գոշեն առանց լռելոյ հանապազորդեան արգահատութեամբ [1] մաքուր բերանոց, ընկալ բարեգութ. որք են բարիք բարեգործեալք ՚ի բարերարէդ [2] անկիրթք չարեաց, հաստեալք յանձնիշխան հրամանաց էիդ, զօրութիւնք հզօրք անմարմնութեան բարձրելոյդ, սուրբք, մաքուրք, անարատք, օրհնեալք, փայլչափանք, յաղթողք և անպարտելիք, և ըստ ընթացից տեսութեան մտաց արագունք:

Բ. Սոքա և պաղակորոյս անկոյ թզենւոյն [3] եռամեանն դատարկութեամբ, որ զենու յաւիտեանս պարտաւորէ ժամանակին՝ զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնւոյն, յամուլ յամլութեամբն յերկարաձգելոյ, յայգի աշխարհիս արմատացելոյ, սին սաղարթիւն պաճուճելոյ՝ զրկեալ ՚ի պտղոց, որ է Ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութեանս, սոքա բարեխօսք, հանդերձիչք, այլ և խնամակալք. որ դեգերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում [4] կրից կարեկցելով, բարեմտութեամբն մեր սպասեն. և [5] յաւիտենականն կենդանութեամբ փրկութեն մեր աղօթեն՝ զայս բան ասելով, զգործս ձեռաց քոց մի անտես առներ: Վասնզի արդարեւ [6] մեր են այս աղաչանք ՚ի բարերարէդ այ վասն մեր կարգեալ առ նոսա. զի [7] նոքա բանիւ են ստեղծեալ, և մեք ձեռօք ներգործեալ: Սոքա և գալոց են ընդ միածնիդ վկայք սոսկալի դատաստանին հատուցման, Ճշմարտութեան դատախազք յանցաւորութե երկրայնոցս, յահաւորին աւուրն յայտնիչք խրատամբք զմատակարարութիւնն որ առ մեզ. [8] որ և անդանօր կարեկցեն ազգեալ հառաչմամբ զղջանուերն նուաղ ձայնի, ողորմեա՝ դու ստեղծեր, մի կորուսաներ:

Գ. Տէր ընդ գոհութեան ձայնիւն խնդրուա-ծոյ անմահականացն վէհից՝ և 'ի մեր հեծութիւնս հա-ստատեցին, բնակից արարիչ, որ [9] յաղթես գթութ՟ղ քո վերնոցն և ստորնոյնոցս. քանզի քո է բարեբարելդ առ մեզ և առ նոսին։ Տէր [10] վասն բարեգործութեան անախտականացն, հրաշատեսիլ հրակերպիցն, անշա-ղախ մաքրոցն, անմեղիցն, բոցանիւթիցն, հոգեղինացն և անմարմնեղենացն, [11] ամենաձեցուն առաւելութեամբ 'ի բարձրն ընտրականութիւն գերափայլ յաձախ գիտու-թեամբ՝ անցուրս ջերմութեամբ ջեռուցանողք խնկոց-րուն տարփմն ա՟ծսիրութեան բառ խնքեանց գմերս սա-նատեր սրախցս անբարբառ չիջումն, այրիլ անաղօտ 'ի մե-ծախորհուրդ սրբում սեղանիս՝ որ 'ի խորանիս, առանց նիրհելոյ և դանդաղանաց տեսանել հրամանաց երանա-կանաց կեցուցիչ կանաց ամենատեղծիդ, քրովբէօրէն առաքինութեամբ յա՟ծ միացեալք անբաժանելի։ Որք երկնաւոր պետութիւնք են մեծք, և զինուորութիւնք անբիծք, աչաւորք, երկնաւորիդ ա՟յ [12] տեսանողեայ պաշտօնեայք, 'ի յանմիջոյդ լուսոյ ցոլք նշուլից։

Դ. Որովք և ինձ մեղաւորիս հոգեղինի մարդասիրեա-ցես ողորմել, Յիսուս, [13] աղաչանօք խնդին հրեշտակի, դարձուցանելով զիս, տէր, 'ի բարիդ քո հետս լուսոյ. զի զառանդ հոգւոյս իմ պաշտպանութեան, զոր հաւա-տացեր նմին տեսչութեան, զընկալեալն 'ի քէն 'ի կեն-ցաղ ստանալս՝ ուրախութեամբ սրտիւ յիս բերկրեալ, անմեղադրելի առ 'ի քէն օրհնեալ՝ խնդալից գնաց զուարձութեամբ քեզ, արքայ բարձրութեան փառաց անհասից, 'ի խորախաձանս կենդանախումբս բերկրեցե-լոցն սրբոց մատուցեալ ընծայեցուսցէ, գովեալ սրբ-ման։ Եւ քեզ անդնին ընդ հօր անհասի՝ թուականու-թեամբ հոգւոյդ անձառի վայելէ փառք պատիւ և եր-կրպագութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

1 ՄԱՍՆ ԲԵՐԱՆՈՅ։ Բերանք հրեշտակաց՝ են միտք նոցա, որք մա-քուր կուսին հակառակ ապշութիւն բերանոց մարդկան։ Արդ ընկալ-եալ է, զխնդրուածս այսպիսի մաքուր միջնորդաց. բայց ընդ ՏԱՌԱՊԱ-ԾԱՆԷՆ ՍԱՂՄՈՍԱՑ, այսինքն յետ բարեխօսութեն սրբոց ա՟ծածնին. զի նա է միշտ առաջին բարեխօս մեր։ Կամ, զաղաչանս հրեշտակաց ըն-կալ զսդ ընդ աղաչանաց ա՟ծածնի. որով զօրանայցեն խնդրուածք նո-

ցա։ Բարեխօսութիւն տիրամօրն ինքնին միայնակ ընդունել կարող է զա-մենայն բարիս, բայց հրեշտակացն՝ ոչ առանց նորա։

2 ՍԷՆԻՐՔ ՏԵՐԷԱՑ։ Այսինքն անմարմինք. զի զբարին շնորհաց՝ զոր յարարչութեանն ընկալան, ոչ կորուսին իբրև զչար հրեշտակսն. և յետ այնր եղեն անընդունակք մեղաց։ Վայելչականք, լցեալք վայելչութեամբ, գեղեցիկք, կամ վայելուչք բարեաց։ Արագ ընթացիւք. բառ շարժման ան-ութեան մտաց՝ յոյժ արագ են հրեշտակք. զի միով հայեցուածով ըմ-բռնեն զէութիւն իրաց, և զյառաջս նոցա. նախքն ճանաչմանն խնա-մոն զպատճառս և զգործս։ Կամ, արագաշարժք են բառ ընթացման մտաց, այսինքն մտաց ներգործութիւն շարժին անդուստ 'ի տեղի. զի ան-մարմին բնութիւն մտաց միայն կարէ անդադրութ լինել։ Կամ դարձեալ, արագ են հրեշտակք բառ օրինակի շարժման մտաց. զի որպէս արագ և 'ի վայրկենի բերին միտք 'ի միոյ ճանաչմանէ յայլ, նոյնպէս հրեշ-տակք 'ի միոյ տեղւոյ յայլ տեղի։

3 ՆԱՒԱՍՏԵԱՆՆ ԳԱՂԱՓԱՐՈՒԹԵԱՄԲ։ Թռչնոյն երկրամերոյ անդադրութիւ, ուստի և չափայր չափորութեամբն, երկրաժամանակեայ հեղգութիւ կամ արգելմանն յերկարաձգելոյ։ Որ, այսինքն այն ժամանակ երբեմն ասոց՝ դժնդա յաւիտենին, զրաւանդակ զարս աշխարհի պարունակէ, այսինքն զանցեալ զարս, զներկայս և զգալոցն։ Այսպէս Թռչնոյ անկելոյ յաշ-խարհս, և ամենայն սերնդոցն զարդարելոյ աստանց պղզոց (որ է օրի-նակ ողորմելի մարդոյս,) հրեշտակքն են Քերէոբէ, և այլն։

4 ԿՐԹՕՂ ԲԱՐԵՀՆՉԻՒՆ։ Դարման տանելով մերոց հոգեկան և մարմնա-կան կրից, և ոչ եթէ յինքեանս զգալով զմեր կիրս. և մեզ խնամ տա-նելով, այսպէսն, մէջս Քերէոբէանն մեր, մասնակից լինելոյ մեզ 'ի բարիս իւրեանց. կամ, այսպէս տանին, ծառայեն բարերջանկու-թեան մերոյ։

5 ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՆ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՄԲ։ Մշտնջենաւոր և անլռելի հոգւով աղօթեն վասն մերոյ փրկութեան։ Կամ, ինքեանք ունելով զյաւիտենա-կանն կենդանութիւ, անխափանձարար խնդրեն զփրկութիւն մեր. կամ, այնր փրկութեան վասն հայցեն՝ որ 'ի յաւիտենական կեանսն տանի, և ոչ լոկ 'ի ժամանակաւորն։

6 ՄԵՐ ԷՆ ԱՅՍ։ Ի գխնոյ մերոց. կամ վասն մեր են այս աղաչանք, 'ի Քերէոբէ ... ։ Նմանողութեամբ առ ի զհրեշտակայն-տաց ասելով առ հօծ. «Ողորմեա՝ զա ստեղծեր, մի կորուսաներ. ըզ-գործս ձեռաց քոց մի անտես առներ». որպէս երգեմք 'ի Թագաւորքն հրեշտակաց։

7 ՆԱՒ ԲԱՆԻ։ Այս որոշումն՝ թէ հրեշտակք բանիւ ստեղծան, և մարդն ձեռօք, առաւել է յեղանակէ խօսից սուրբ գրոց, և մանաւանդ ծննդոց, որ զերկնից և զայլ արարածոց ասէ բանիւ եղեալ, իսկ զմար-դոյն լինելութիւ ձեռացուցանէ իբրև արհեստագործ ինչ արարեալ յԱյ. (Ծննդ. Բ. 6. 21. 22։) Այլս թէ ոչ՝ տիրապէս խօսելով, ամենայն արարածք մարմնաւորք և հոգևորք ստեղծան բանիւ հրամանին Այ։ Նոյն-պէս հակառակն՝ ամենեքին են սուրբ գործք ձեռացն Այ, և ձեռակերտք. ձեռաց այլաբանելով զզօրութիւն արարչական։

8 ՈՐ Է ԱՌԱՋԻ։ Այսինքն 'ի դատաստանի անդ հոգւոյն, խնամ տա-նին, ... ։ եթէ զհրեշտակաց ասացի հասարակ, իմանին այլաբանութեամբ՝ կարի գութ և փափագ նոցա առ մեր փրկութիւն։ Բայց մարթ է իմանալ զհատուցումն մարդկան, զոր 'ի կենդանութեան արարին զգծման, և զոր հրեշտակք 'ի դատաստանի անդ յիշեցուցա-նեն առաջի Այ։ Զայս խնամս հրեշտակաց և զողորմութիւ հայցելին՝ ոչ է պարտ իմանալ վասն ամենայն դասուց առ հասարակ, այլ միայն

վասն զգնացեալ հաւատացելոց, և զայն եա իբր մեկնողաբար, այսինքն առաջի առնելով այ զգործս զգիման նոյա, կամ զայլ բարիս, որպէս երեւի 'ի պատմութեանն պարապելեաց, պետրոսի մարտւորին, և այլոց (վարք հարանց. Ե. 660. 271:) Այլս թէ ոչ՝ պարզապէս սուրբ մութի հայցել վասն աննեկան՝ եա և անդեզքից, հակառակն ոչ միայն այլոց բանից սրբոց վարդապետաց, որոնք անողորմ խոստովանի զդատաստանն այ, որպէս 'ի բանն Ե. 1. «Անողորմ են հրեշտակքն.... և անողորմ հատուցմանցն». և ՀԵ. 3. «Արդ անաչառք և խիստ կաճառք երբժանեկայն ... ընդ հրեշտակայն՝ և մարգեկ». տես և ԼԹ. 2: ՀԹ. 2. 3. այլ ընդդիմանայ և առաջիկայ բանիցս, որով զհրեշտակս 'ի դատաստանին առէ [illegible]. իսկ զատախող և բարեխօս՝ հակառակ են մեհւոնց: Այս խմանի բառ այլ և այլ անձանց, առ անհաւատս և առ անզեղծս՝ զատախողք են, իսկ առ զգնացեալ հաւատացեալս՝ բարեխօսք:

9 [illegible]: Գերազանցես զթուլթ քան զհրեշտակս և զմարգեկ. քանզի դու բարեբարես — [illegible] և — [illegible]. առ մեզ ողորհարաչխութեամբ և ներողութբ, իսկ առ հրեշտակս՝ ողորհարաչխութեամբ միայն. վասն որոյ եթէ հրեշտակք գթան 'ի մեզ, առաւել եւ դու: Արդ թէպէտ և յաղթող գթութբք մեզ կալով եա 'ի բարեբարել, բայց կամիս և 'ի մէնջ հայցուած խնդրհական. վասն որոյ ոչ բաւականացեալ մատուցանել զբարեխօսութի հրեշտակաց, 'ի նոյն ըծորգեմ և զմեր հեծութիս: Նոյնպէս և 'ի բանն ՁԲ. յետ զնեղյս զաղաջանս առաջելոց, զմարտիրոսաց և զճգնաւորաց, առէ 'ի հաւասն եխառնել և զմեր անմաքուր բանս, և այլն:

10 [illegible]: Վասն փայլըւթե ընակն և գերբնական Հոգւոյն՝ որոնք զնաա Ճախացուցեր. կամ վասն բարեյարմարութե հրեշտակայն՝ ողորհեա և մեզ ջերմանալ սիրով քո 'ի ժամ առըր խորհրդոյն. զի յայնժամ պարակից են մեզ հրեշտակք բորբոքեալք սիրով ածութեան. և եթէ մեք միրով ցրտութեամբ մնայցեմք, անմխարանութի մեծ է: Հին բւծ. առա [illegible] խմանայ զվիմառն 'ի խորանի մարմնոյ: Բայց զայն չէ մարթ կոչել [illegible] և [illegible]. այլ խմանալի է սեզան սրբոյ պատարագին, որպէս առաջաց:

11 [illegible]: յայժ գերազոյն անձամբ կամ կատարելութեամբ, 'ի [illegible], 'ի բարձր մեծաց կամ աստիճան, [illegible], առաս զիտութեամբ բնականա և գերբնականա. կամ, զայս գործնական խնս իբր սեռական յատկացուցիչ, այսինքն 'ի բարձր աստիճան առաս կամ բաղմազան գիտութե. յոր բնական գիտութե կամ Ճանաչմանն այ՝ զհետ զայ բնական սէր աստուածային, որ անշիջանելի է 'ի հրեշտակս: Իսկ գերբնական գիտութեան կամ Ճանաչմանն այ հաւատով մինչեռ 'ի Ճանապարհի էին, զհետ զայր սէրն հեզական, զոր և անշէջ պահեցին հրեշտակքն. յորմէ առա անցեալք 'ի գիտութին երանական, լյան երանական սիրոյն անշիջանելեաւ: Իւ այսպէս [illegible] անմեղելի սիրոյն խ[illegible] ջեռուցանեն [illegible], այսինքն ըստծին առաջին. որ յատկապէս խմանի զբնական սիրոյն հրեշտակաց. կամ եթէ [illegible] խմացի՝ ոչ իբրև 'ի զօրութենէ կամ յարգեանց բնութե ծագեալ, այլ իբր համեմատ բնութե բանականի, բառ այսմ առնել նաև զհեզական և զերանական սէրս հրեշտակաց՝ և մեր. զի թէպէտ և այս երկու սէր՝ գերբնականք են բառ սկզբանց և բառ արդեանց, բայց և կարի փայլուն չք բանական բնութե: Նյսաւ առաջով, առէ, ջերմացուցանեն [illegible], անհանելոյ, կամ առաւելեալ սրտից

յորդորակ շնչոյն, զմտաւորս վառել շնչումն․ այսինքն զպահապանութիւն սիրոյ։ Ի կատարելութիւն շարադրութեան անուամբ՝ զբանն ընծայաբերութեան պարտ է խնդրել սեամբն՝ երբեմն զայլ անցեալսն․ այսինքն, անձինքն, հոգեշնորհք, ընծայաբերական խնկաբերութեան փառաց, և այլն։ Այլ և 'ի սկզբնէ անտի, Ասէ Տէր բարեպաշտութեան, և այլն, մինչև յայն, տէրէ անոյշ, անկատար է բանն․ և զօրութիւն այլ բայ պահանջէ յարել ընդ նմա, այսպէս։ Արդ վասն բարեզարդութեան անախտականացն, և այլն շնորհեա կամ պարգևեա այրել անարատ 'ի սուրբ սեղանիս, և այլն։

12 Առաւօտեան պաշտօնեայք․ բառ որում թէպէտ և ծառայք են, բայց և որդիք և ժառանգք այ․ և զի աղօթս յօժարութիւ ծառայեն այ․ այլ և բնութեամբ աստուածային զօրով, 'ի սպասաւորութիւն անարգապս յօժարին։

13 Առաւօտեան խնդրանք։ Ողորմեա ինձ աղաչանօք իմոյ պաշտօնեան հրեշտակին, զարձուցանելով զիս 'ի բարի և 'ի լուսաւոր ճանապարհս քո․ որպէս զի զշնորհ իմ զաւանդեալն 'ի պաշտպանութիւ և 'ի խնամս իւր, զոր ընկալաւ 'ի քէն 'Ի կենդանի ասաղս, 'ի կեանս աշխարհիս (զի յետ մահու զադարէ մանաւանդ պաշտպանութիւն հրեշտակին,) մատուցեալ ընծայեսցէ քեզ փառաց արքայիդ 'ի խրախճանս զառացն արդարոց, ուրախ սրտիւ խնդալով 'ի վերայ իմ․ և վասն հաւատարիմ պաշտպանութեանն՝ անձկագորովն, այսինքն զմիութիւ օրհնութիւն ընդունելով 'ի քէն․ վասն զի յաւելումն 'ի հրեշտակս պատահական փառք՝ փրկութիւ պաշտպանելոյն 'ի նոցանէ։ Կամ, անձկագորովն, այսինքն ես աստէն մեղաւորս օրհնեալ լինելով․ բառ այնմ, « Եկայք օրհնեալք հօր իմոյ »․ ընդ որ և խնդայ, երկրորդ պաշտօնեան իմ․ առանելով զի պաշտպանեալն իւր օրհնութիւ առնու, և ոչ անէծս ընդ ձախակողմեանն։

## ԲԱՆ ՈՒԹՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի․

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա․ Տէր ած բարերար, բազմապարգև թագաւոր, կենաց պտղատուարան, լուսոյ կերպարան, լայնատարր հանգստարան․ որ յաղագս մեղուցելոյս եկեալ մարմնացար, գործեցեր զանպատումն և հանդերձեցեր ըղձրաշալին, [1] մինչև կատարեցեր զաւետեացն ընդ ամենայնի ածութեանց։

Բ․ Արդ վասն առաքելոյն որոց յերկնատեղծ բաձևացդ ձեռնադրելոց և հոգւոյդ սրբոյ օծելոց, [2] զորոց զգալեան արժանաւորութեան բառ խնամ կարի՝

տու 'ի փառս քո, տէր ամենայնի, յայլում բանի պաշտեցի, և ինձ ողորմեցիս [3] յիշատակաւ սիրոյ նորին ընտրութեան։ [4] Տուիր ինձ եղից նորօք հանդերձեացես յերանութիւնն փափաքելի. ձայն բարի հովուութե՛ նորին 'ի յաղջյն ինձ կենաց քաղցր լուիցի։ Ա՛ն կալոյց [5] 'ի յանեղծութիւն փրկութեան տանեցեալ յուսոյն՝ ընդ առաջնորդացն կենաց, սկզբնաշնորհիցն պատուոյս, փառաւորեալն դասուց, գետոցն բանականաց, աւետարանչացն բարձանց, իշխանացն պանծալեաց, լուսապայծառ թագիւ պճնելոցն, 'ի զարդ անկապուտ զօրութեան շնորհին պայծառացելոց, իւղովն զուարթութեան տիրական լուսոյն կատարելոց։

Գ. Ընդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ Այ Քնի [6] և մարտիրոսացն ընտրելոց նահատակութք, որք մահացու և վշտաշարչարն մարմնով, վտանգաւոր և ամենակիրն անդամօք, երկրաւորական և հողաղանգուածն բնութեամբ մարտուցեալ [7] ընդ տարր գոյից ամենայն նիւթից՝ պատկերան բարձրացան և կենդանացան հոգեպէս. արիաբար եղեալք 'ի յերկրէ, [8] բատ մարգարէին, վկայք Ճշմարիտք [9] ամենափորձն մահու, խնանալեացն անտեսիցն և ծածկելոյ աներկրայ բարեացն յուսով տեսելոցն առաւէն նկատիւք. աշակերտք առաքելոցն և չարչարակիցք նորին. որ [10] հաւատարեալ գործովք ընդ նոսին, կատարեալ լրմամբ անպակասելեա պարեն 'ի խորախճամս անկէան երանութեան. որոց հաճոյական և ընդունական մաղթանօք, արիւնըմծայ վատակմանէր [11] քրմանկնդրուկ աղերսիցն յարգմամբ՝ ընկալ զկս նորոգ [12] բատ նորին մասին անեղծ փրկութեամբ 'ի քեզ արձանացեալ։

Դ. Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ արեամբ ներկելոցն, [13] և Ճգնաւորացն որոց հարցն միանձանց և [14] քեզ հետեւելոցն, որդի Այ, անպարտելի քաջութեամբ և անպատիր զգաստութեամբ, ընդ դժնեայ զառագի մարմնոյս բնութեան արիապէս մարտուցեալ, սովին վանեցին զանմարմինն Բելիար. և մշտամարտ հանդիսիւ յապաքինի կենցաղոյս առանց զլուանաց ծանրաբեռնութեան 'ի լայնածաւալ ծփանաց աշխարհիս ծովու տապանակաւ մարմնոյս թանձրութեան զթեթեւութիւն հոգւոյն թռուցեալ՝ 'ի նաւահանգիստն կենաց

հասին. և երբ սիրողք [15] վերնում վիճակին առանց յետնոյն մտածութեան, զԹագն յաղթութեան համարձակապես պայծառ ճոխութեամբ պճնեալ իսկապես ՚ի գլուխ կապեսցին. վասն նոցին արժանաւոր մաղթանաց և նուիրական հայցուածոց և զիս զմեղաւորս ՚ի պատժականաց ընկալ ընդ նոսին.

Ե. Այս ահա խառնեալ զանմաքուրս բան [16] ընդ նախագրեալ երջանկայն փառաւորական աղերսարկութի, որ վասն իմ գոչեն քեզ ՚ի հաճութիւն, և ես ընդ նոսին երբ զառնութիւն եղեալ ընդ քաղցու, կամ [17] տատասկ ընդ ողորկութեան, տգեղութիւն ընդ վայելչութեան և տիղմ ընդ գեղեցկութեան մարգարտի, կամ հող ընդ յստակութեան ոսկւոյ, և կամ քարինս անարգս ընդ պայծառութեան արծաթոյ, [18] բացասութի ընդ ձիւնարտութեան, [19] կամ աւազ ինչ աստանատու ընդ կակղութեան զանգուածոյ հացի. արդ լուր, հզօր, հնարաւոր, գովեալ, [20] զնոյայն վասն իմ և զիմն ընդ նոսին ՚ի նոյին գովեստ, ՚ի փրկութիւն իմ և ՚ի փառս քո, ամենագութ, բարերար, օրհնեալ, երկայնամիտ, կարող, անքնին, անճառ, անեղծ և անստեղծ. Դու ես պարգևք, քո են շնորհք. դու սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի. Ոչ ես դատապարտիչ, այլ ազատիչ. ոչ ես կորուսիչ, այլ գտիչ. ոչ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ոչ ես տարագրիչ, այլ ժողովիչ. ոչ ես մատնիչ, այլ ապրեցուցիչ. ոչ ես ընկղմիչ, այլ վերածիչ. ոչ ես գլորիչ, այլ կանգնիչ. ոչ ես անիծիչ, այլ օրհնիչ. ոչ ես վրիժառու, այլ շնորհիչ. ոչ ես Թշուառացուցիչ, այլ մխիթարիչ. Ոչ եղծանես, այլ գրես. ոչ սաստնես, այլ հաստատես. ոչ ոտն հարկանես, այլ սփոփես. [21] ոչ պատճառս յօղես մահու, այլ հնարս խնդրես կենաց. ոչ ես ՚ի կամս շարժեալ սաստկման, այլ ՚ի փրկութիւն ողորմութեան. Ոչ մոռանաս զայցելութիւն, ոչ լքանես զբարի, ոչ արգելուս զգթութիւն, ոչ բերես վճիռ կորստեան, այլ կոչ ազատութեան. [22] Ոչ Թըշնամանիս յառատութեանց, ոչ բամբասիս ՚ի շնորհաց, ոչ հայհոյիս ՚ի պարգևաց, ոչ նախատիս ՚ի ձրի ձրից, ոչ անգոսնիս յերկայնմտութեանց, ոչ եպերիս ՚ի ներութեց, ոչ բանսարկիս ՚ի բարութեց, ոչ անպատուիս ՚ի քաղցրութեց, ոչ քամահիս ՚ի հեզութեանց, ոչ ա-

ռաքին այսօրիկ տրտնջմունք, այլ անչափելի գոհաբանու-
թիւնք ։ Նարձ զմեղս իմ, Հզօր · լոյծ զանէծս իմ, օրհ-
նեալ · քաւեա զպարտիս իմ, ողորմած · ջնջեա զյան-
ցանս իմ, գթած · [23] մատո մատն այցելութեան, և ան-
դլատին խոկ կատարեցայց · զինչ քեզ, Տէր, քան զսա-
ռին դիւրագոյն, և կամ զինչ ինձ պարտաւորիս կարևորա-
գոյն ։ Այլ կենդանագրեա, բարեխնամ, քոյինաստեղծ
պատկերիս փչումն կրկին 'ի շունչ նորոգման լուսաւորու-
թեն մաքրական շնորհի զամենամեղս ոգի պաշտպանեալ ։

Զ. Ո՛վ ածէր, ողորմած, ինձ [24] որ տարաժամ 'ի հա-
մառօտս երբե՛ անթոշակ ապաշխարութեամբ ընդ ան-
կատար ուղին հետևել, մի մատուցաներ բաժակ դառ-
նութեան 'ի ժամ ծարաւու · [25] մի փակեր, գթած, իմ
հանդէպ զյաջողուած հոգևոր օգուտս, և մի իբր յան-
կարծադէպ հինից ասպատակ գիշեր մահուն ինձ պա-
տահեսցէ · [26] մի տապ տօթոյն յանպատրաստ պահուն
զարմանս հատեալ ցամաքեցուսցէ, և մի լուսնական դի-
պուածք հատեալ զաղտնեօք վնասեսցեն, մի պահեսցի
ինձ սառն մեղացս, և մի հոսմունք աղխից կենցաղոյս զիս
ողողեսցեն ։ Ո՛վ [27] հանդիպան մահ բերիցէ, և մի նըն-
ջումն 'ի սատակումն յառաջեսցէ · մի քունն ինձ կո-
րուստ լիցի, և մի նիրհումն ապականութիւն գործես-
ցէ · մի վախճանն անյարմար 'ի վերայ իմ արշաւեսցէ, և
մի շնչոյս վերարձակութիւն ըմբռնեալ 'ի խոնարհ լիցի ։

Է. Դու ես Տէր, դու գթած, դու բարերար, դու
երկայնամիտ, դու ամենակարող, [28] առ ամենայն բան
անհասութեան անձառ զօրաւոր, քաւել փրկել կենդա-
գործել լուսաւորել, վերստին հաստատել, 'ի ժամեաց
կերպյաց գազանաց և կամ յատամանց վիշապաց 'ի կեանս
կորզել. 'ի խորոց անդնդոց 'ի լոյս բերկրութեան ածել,
և 'ի հեղձմանէ ծփանաց մեղաց [29] ընդ արդարս երջան-
կաց փառօք բազմեցուցանել ։ [30] Ամենայն ոգի քեզ ակն-
կալեալ յուսով սպասէ, կարօտեալ քումդ շնորհաց, ե-
թէ երկնայինք և եթէ երկրաւորք, եթէ անկեալն մե-
ղօք և եթէ ամբարձեալն արդարութեամբ, եթէ տէր
և եթէ ծառայ, եթէ տիկին և եթէ աղախին. և 'ի ձե-
ռին քո է շունչ կենդանական բոլորեցուն ։ Եւ քեզ
ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն ։

1 Մինչև խոստովանեսցէ փառաց՝ զօրութեան մարդկութեան, ընդ ամենայն աթոռակիցն․ ընդ ամենակատար ածութեանդ՝ ընդ աջմէ հօր բազմեցուցանելով 'ի միութիւն անձինդ։ Կամ իմա, մինչև կատարեցեր զընկալեալ մարդկութեանդ նախերագործութիւն 'ի խաչին, ըստ բանին․ « Եւ իբրև կատարեցաւ, եղև ամենայն հնազանդելոց իւրոց », և այլն․ « Հայեցարուք 'ի կատարիչն յա » (Եբր․ Ե․ 9․ ԺԲ․ 2։) Զայս կատարումն արար քո ամենակատար ածութեամբն։ Հին լուծ․ իմանայ զկատարելութիւն երեսնամեայ հասակին քոյ․ բայց անդուստ ոչ 'ի դէպ գայ։

2 Զօրաց պետական։ Զընդարձակ ձայն ասէ, զոր յօրինեաց 'ի սուրբ տաճարսն և յեօթնամատեանսն։ Բայց չէ յայտ թէ քանի ժամանակաւ յառաջ քան զաղօթքս արարեալ իցէ։ Ոմանց թուեցաւ՝ ընդ այլ երկուց ձայնից խաչին և ածածնի արարեալ 'ի նմին ժամանակի։ Սակայն 'ի յիշատակագրի այնց ձայնից ոչինչ այդպիսի նշանակի․ և ոչ մակագիր ձայնին տաղերց ցուցանէ զկապակցութիւն ինչ ընդ նոսա, որպէս այլոց երկուց ձայնիցն մակագիրք ցուցանեն յայտնապէս։ Մանաւանդ կարծես անհունդ՝ յետոյ քան զայն ձայնն արարեալ զտաղերցն, յասելն սրբոյ վարդապետին 'ի սկզբան անդ․ « Քանզի տա ձեզ և յաղագս ձեր 'ի տէր առաքելոց շարժեալ կարգ բանիս », և այլն։

3 Յիշատակաւ սիրոյ։ Յիշատակաւ սիրոյ քո՝ որով զնոսա ընտրեցեր․ կամ, յիշատակաւ ընտիր և գերազանց սիրոյ նոցա առ քեզ։

4 Ընթացից նոցա ձայն հայրապետաց։ Լուիցի․ ընթացից նոցա ձայն, և հայրապետաց․ այսինքն նոցա բարեխօսութիւն և վարդապետութիւն պատրաստեսցեն ինձ ճանապարհ ուղիղ առ քեզ գալոյ։ Զայն բարբ․ ձայն առաջնորդութեան նոցա, որ իւրեանց գրովքն 'ի մեզ հասանէ, լուիցի ինձ իբրև ողջոյն կենաց, զոր ասանդէին աշակերտեալցն ըստ հրամանին քոյ (Մատթ․ Ժ․ 12։)

5 Ի յառաջնորդութեան փրկութեան։ Մասն կամ բաժին ընդունիցիմ, հաղորդ եղեցիմ ընդ առաքելոցն․ որք քարոզութեամբ եղեն առաջնորդք կենաց 'ի յանեղծ փրկութիւն յոր յուսամք․ կամ 'ի տանելի յոյսն անեղծ փրկութեան։ Առաջնորդութեան, որք եղեն առաջին տուիչք առաջնորդական պատուոյս։ Նոյնն հաղորդ լինել առաքելոց 'ի յուսացեալ փրկութիւն, հայի յայն բանս նոցա՝ որովք զհաստատեալսն կոչէին նոքա հաղորդակիցս, միաձակակիցս, հանգիստապատիւս, և այլն։ Իւղով զուարթ․ որք իմանալի զուարթարար իւղով օծեալ եղեն, այսինքն տէրունի, քննական օծմամբն եղեն կատարեալք․ որք տիրապէս օծեալն քոյ եղեն ընկերք կամ փոխանորդք յերկրի․ որ և է գերազանց վսեմութիւն առաքելոցն։

6 Ընդ նահատակաց ընտրելոց։ Իմաստք բանիս զկատարումն առնուն յասացեալ անդր՝ ուր ասի, «Ընդ համօրէն և ընտրեալ նահատակս»․ Աստի կարծելի է այսպէս․ ընդ աշակերտաց մեծիդ՝ նաև մարտիրոսացն նահատակութեբ և հաճոյական մաղթանօք ընկալ զիս միասանգամ, եւ․ և ըստ այսմ «ընդ» յարաբերելով զբանն նահատակացն, կրկնի միայն 'ի բացայայտութիւն և 'ի կապակցութիւն բանին։

7 Ընդ պէսս գոյից։ Մարտիրոսքն սուրբք մարմին ունելով վտանգի, և անդամս ներքոյ անկեալս բազում վտանգաց, մարտեան պատերազմեցան քաջութեամբ ընդ ամենայն ազգ տարերաց․ ընդ հրոյ՝ այրեցմամբ, ընդ ջրոյ՝ ընկղմամբ կամ սառուցմամբ, ընդ օդոյ՝ կախմամբ, 'ի բարձանց ընկեցմամբ, խեղդմամբ շնչոյ․ ընդ հողոյ՝ ազմարինակութեբ, թաղմամբ, և այլն։ Նոյնպէս ընդ գազանաց, ընդ զանազան տանջանարանաց։

8 Ըստ [illegible] ։ Նշանակէ յերկրէ ըստ մարգարէին, եթէ իմասցի՝ ըստ նմանութեան մարգարէին, կամ նշանակի սամուէլ, զոր կինն վհուկ հանեալ ելեալ յերկրէ իբրև ած (ա․ թագ․ իը․ 13․ 14․) և կամ ցուցանէ զեղիա, որ հրեղէն կառօք ամբարձաւ յերկրէ (դ․ թագ․ բ․ 11։) Իսկ եթէ իմասցի՝ ըստ բանի մարգարէին, ակնարկէ զբան սաղմ․ (ձէ․ 7․) «Ելս եգ ՚ի մահ իւրում ՚ի հովանս արդարութեան»։

9 [illegible]։ Զամենայն փորձանս կամ զվիշտս կրող մահուամբ՝ վկայք եղեն ճշմարտութեանն․ կամ, ամենավիշտ մահուամն քան վկայք։

10 [illegible]։ Ընդ առաքելոցն հաւատարեցան, գործովք վկայելով և հաստատելով զճշմարտութիւն քարոզելոյ ՚ի նոցանէ․ սուտի ոչ իւիք պակասելոյ ՚ի նոցա նմանութենէ, ընդ նոսա վայելեն յերանութեանն։

11 [illegible]։ Աղօթիցն՝ զոր ՚ի կնդրկահոտ քրտամբս տանջանացն մատուցանէին նահատակքն։

12 Ըստ [illegible]։ Այսպէս է ընթեռնուլ ըստ լաւ օրինակաց, և ոչ [illegible]։ Աղաչանօք մարտիրոսացն՝ զոր քրտամբք և արեամբ ընծայեցին քեզ, ընկալ, աստ, զիս վերամին ՚ի շնորհս քո․ իբրև մասնակից վաստակոց նոցա, ՚ի քեզ ապաւինելով զիս անկորուստ փրկութեամբ։ Այսու բանիւ ոչ ընդ այլս ինն ակնարկէ սուրբս գրիգոր զնախնի սովորութիւն յեկեղեցւոջ, որով սուրբ մարտիրոսք բարեխօս լինէին առ աստուծոյ եկեղեցեաց՝ արձակել ՚ի բանադրանաց զզղջացեալսն, կամ թողացուցանել նոցա ՚ի կանոնական ապաշխարութեանց։

13 Ել [illegible]։ Այս սեռական՝ է անէր բային [illegible]․ այսինքն ընդ արեամբ նահատակելոցն՝ նաև Քրիստոսեանցն սրբոց ընդ մարմնոյ իւրեանց արիապէս մարտուցեալ, վանեցին, և այլն։ Ուստի վասն նոցին մաղթանաց՝ և զիս ընկալ, և այլն։ Կարգ Քրիստոսեանցն թէ և ոչ ընդ երևելի թշնամիս պատերազմեցան՝ որպէս մարտիրոսք, բայց նոքին հանդոյն անպարտելի քաջութեան մարտեան ընդ գաղանի մարմնոյս [illegible]․ այսինքն բնաւոր կամ անշնորհ մարմնոյս։ մի օրին․ [illegible]․ և մարթ է իմանալ, բնական կարեաց մարտեան․ որով և յաղթահարեցին զատանայ։ Իբրև մենամարտիկք յասպարիզի աշխարհիս մէջտ հանդիսացան ՚ի կախ առանց [illegible]․ ոչ կրելով զվիշտս ծանրութեան նեղութեց աշխարհիս․ զորս ՚ի բաց թօթափեցին Քրիստոսի և ամենանուէր աղքատութեամբ։

14 [illegible]։ այլ օրին․ [illegible]։

15 [illegible]։ 3 օրին․ [illegible]․ իբր սերովբէ երկնային վեհակին․ կամ գերագոյն առաքինանի սրբութեան․ [illegible], առանց խորհելոյ զմարմնաւորս, կամ առանց հայելոյ յանցեալ Ճրգնութիւն՝ որ ըստ օրէ յառաջադէմն ջանայն։

16 [illegible]։ այլ օրին․ [illegible]։ Ընդ գովասանական աղերսանս նախայիշատակելոցն երանելեացն՝ առաքելոց, մարտիրոսաց և Քրիստոսեանց՝ խառնելով նաև զիմ անարժան աղօթս, և ես ընդ նոսին պաղատիմ, գոչեմ, թէպէտ յոյժ ստորացեալ ՚ի նոցա նմանութենէ․ որպէս գառն ինչ ընդ քաղցր նիւթոյ, և այլն։

17 [illegible]։ Փչալից բոյս ընդ ողորկ չուառիցի․ կամ ընդ յղկեալ գաւազանի։

18 [illegible]։ Ուրացումն Քրիստոսի, կամ սատանաութեան, կամ սուտ ինչ ընդ Քրիստոսի իրի։

19 [illegible], որ ՚ի հաց խառնեալ, [illegible] լինի․ այսինքն արգելու զատամունս ՚ի ծամելն, և չանցնելն առնէ։

20 Զմնացորդն ըստ ՁԷ։ Լսեր զաղաչանս նոցա որ փառն իմ. և շինն ընդ-դէմն, և զիմ աղաչանս ընդ աղաչանաց նոցա, որ եղիցի նոցա 'ի զաւակին, և ինձ 'ի փրկութիւն 'ի փառս քո։ Եթէ նոցա լսիցես, և եթէ ինձ, եթէ նոցա զօրեաւ լինիցի, և եթէ ինձ փրկութիւն. ամենայն կատարի 'ի փառս քո. փառն զի քո են պարգևք և շնորհք. զաւ. պատճառ բարեաց ամենայնի։ Եւ զարմեալ, 'ի քէն զոլով ամենայն պարգև, ոչ կարօտիս միջնորդութեան այլոց. և 'ի քումն բարութեան ոչ զատաստարածս լինիս, այլ աղաւաւ, և այլն։

21 Ու զ...։ Թէ և մեք որդւոյն մարդոյ միջանկեալք, բայց զազթած՝ ոչ պատճառս բրասնաց կամ զատաստանի պարտաւորութեան եկեղեց, այլ մանաւանդ խնդրեա զամենայն փառս, շնորհս կենաց. ոչ ... 'ի ...։ այսինքն ոչ յաձախես 'ի կամս սպառնալեաց, կարաւանելեաց, այլ 'ի ...։ այսինքն 'ի փրկել պորտուութիւն, ձրիապես, տալոց փառաւորաց որդւոց։

22 Ու ...։ Յաստատաձեռնելոց քո՝ Թէպէտ և կարի մեծ իցէ, ոչ թշնամանիս իբրև շատոյ. այսպէս 'ի շնորհեաց, յերկայնամտելոց, 'ի ներելոց, 'ի հեզութիւն գնալոց, և այլն, ոչ պարտաւորիս իբրև անիրաւեալ, կամ ակար. և ոչ տրտունջ 'ի մարդկանէ առնուս, այլ գոհութիւն. զի 'ի գործել քո զայս ամենայն՝ ցուցանես զբարութիւն, զխնամութիւն, և զաստուածութիւն. և ոչ ... զիկանս առնես։ Նոյա եթէ ... որ կամ նախանձառ այլ ... խորհելով, տրտնջեալ, կամ մեղադիր լինիցի. իբրև ... յանդիմանի. որպէս ... կոչեցեալ մշակքն՝ 'ի տրտնջելն զատանամանեն լսեմն, եթէ չառնիցեմ յիմն իշխանութիւն՝ առնել զինչ և կամիմ (մատթ. Ի. 11. և այլն։) Այսպէս երեկ որդին զմեռա-րեալ ընդ ընդդէմ եղբայրն անառակին, լսեաւ պատասխանի. ոչ էր որդ ... ընդ կենդանութիւն և ընդ զիւտ եղբօր քո (ղուկ. ԺԵ. 28. և այլն։) Թէպէտ տեսցես՝ և երեւմնայի զանդամանեալ զնոյ փառն երկոյն մաւ թեն ... (Ժբ. 1։) Բայց ոչ էր զանդամ, այլ մարդկորէն զարմանք ընդ անիրաւութիւն նոյ. զորոյ զպատճառն զխոսելով ... թուղթն (Հռոմայ. 3.) «Հաղամեա ... իբրև զոչ ... 'ի ...» ։ այսինքն յաջողէ նոցա ... զի յանդգամ ... զ... զոտս իբրև ... Նոյա ... է ... յամենայն 'ի գործս իւր. և մարդիկ միայն լինին պարտաւորք, յորժամ ... կամ ներեն յանդգնաբար. զի ոչ են ... ընդ ... կամ իրաւունց ապաշխարութեան։

23 Ա... ։ Ակնածեցա ... զհնազանդութիւն, և անզգամին, իւ ... կատարեալ զաղօթ յաջողութիւն, 'ի քաւութիւն, և այլն։ Ն... 'ի ... պատկերս ... կամ ... իբրև զաւակին, նորոգելով յաւուր ... որ զմարդութեան շնորհաց յիշելոյ ունի։

24 Ու ... ։ այսինքն անզգամ, կամ անզգամ, 'ի ... 'ի կարծ ժամանակիս, ... անզգամ զատարկութիւն բարի գործոց. ... ընդ անխափան ... պարտ մաշեալ զնոյ։ Նյոտ և յաջորդ բանիւն ... մի յանկարծ որջասաւ ... 'ի կենաց՝ անպատրաստ և ունայն 'ի բարի գործոց։

25 Մի ...։ Մի թողուր տար խափանել ինձ 'ի յաջողութեան ... զհար ... ապաշխարութեան և այլ բարեգործութեան, որք խափանին ... զի բառ նմանութեան յանկարծահաս ... բարեաց զամենայն բարիս։

26 Մի ... ։ Նշանակէ ... 'ի բառն ... « Նրե զանգն 'ի ... մի ... և մի լաւ ... 'ի ... » ։ ... կամ

խմնոյ գրական ջերին մաշտեր, որ արտաք ցամաքեցուցանէ զար-մատ կենաց, և կամ՝ զչոգեկան տօղնոյ գիտական փորձութեանց 'ի ժամ մաշման։ Եւ մի [illegible], պատահմունք որ 'ի քննոյ՝ մի յան-կարծ կամ՝ զազանազէս մեռանելն. և զայս ևս խոս կրկնակի, այսինքն կամ՝ զգիտականն, որպէս տխամածութիւնք 'ի քննոյ ներգործելոյ, կամ թուանդր մաշտարայք, և այլն. և կամ՝ զչոգեկանն, որպէս են փոր-ձութիւնք 'ի մարմնոյ ծնեալք։

27 [illegible]։ Այսպիսի ևս բառ կարգի խմնոյն են բառ մարմ-նականին, այսինքն մի հանգիստ մարմնոյ 'ի մահճիս՝ մահ բերել. են։ Եւ մի [illegible], այսինքն մի փակեալ 'ի վերայ իմ՝ յանկարծ մաշն բանական որ պատահէ անկմամբ. ընկղմամբ, այրմամբ և այլով տար ձևաւորեցաւ, որք չեն բառ բնական կարգի եղծման մարմնոյ։ Կամ՝ [illegible] առ մաշն հասեալ 'ի ժամ՝ քնոյ, որով 'ի վատնդաւոր յայնմ՝ ժամանակի ամենեքին անզգաստաբար եղանէ մարդ յաշխարհէ։ Եւ մի [illegible], եղանի կամ՝ տուրևառ ընչոյս մի 'ի ներքս արգելցի խեղդմամբ. կամ՝ արձակումն հոգւոյս 'ի մարմնոյ մի 'ի գի-նւոյ արգելեալ 'ի տարփ խափանեացի. կամ՝ տօղնոյ հոգեփարութե մի տանջեացի։

28 [illegible]։ Այս անձնոյն իւր անհատանելիս կամ անհնա-րինս՝ անձնաւորէս զօրութ։

29 [illegible]։ այսինքն ընդ արդարոց երջանկաց կամ և բանակելոց. կամ՝, ընդ արդարս երջանիկս. բայց բառ չարագրութեանն՝ մի բառ գնի նախդրիւ արական, և մեան վերջահողով. վասն զի [illegible] նախադրութեան յարմարին երկուքեան ևս։ Այն առ է և յառաջաս-ցեալն, [illegible]։

30 [illegible]։ Անձնոյն բանաւոր քեզ անենկալեալ, [illegible] ոչ անձնոյն մարմնոյ՝ այլ զանազանաբար. այլ ազգ [illegible], հրեշ-տակքն, և այլ ազգ [illegible]. որպէս այլ ազգ մեղաւորն և այլ ազգ արդարն, այլ ազգ ուխտն և այլ ազգ ծառայն, և այլն։ Այլոց հրեշտակաց յաւտով ազատելն և կարատիլն շնորհաց՝ եթէ խնայի բառ բնութեան նոցա, և յառաջ քան զկրանութեն, աչա յայտնի է բանն. զի յուսանիս առ ած՝ և նորին շնորհքն կայլին յանմեղութեան և երանութեան։ Բայց քանզի բանս 'ի ներկայումս խօսի, իբրև այժմ՝ ևս յուսացողս և կարօ-տեալս շնորհաց, բառ այսմ ոչ խմանի զնորոգ առաջմանէ շնորհաց. այլ զհանապազորդութէ առաջելոյ շնորհաց և երանութեն. զի որպէս զենի առէ, 'ի ձեռին այ է շունչ կենդանական անձնեցուն՝ թէ բառ բնա-կան, և թէ բառ գերբնական զօրյն։ Այսմ բանի համեմատ խօսի նրն ամբրոսիոս ('ի մեկն. սաղմ. ձժը. (թւ. 29.) « Այլ ազգ կարօտի ար-դարութեն այ հրեշտակն, և այլ ազգ մարդն. այլ ազգ պէտս ունի ո-ղորմութէ հրեշտակաց և այլ ազգ մարդն... նա պէտս ունի ո-ղորմութեանն այ, զի մի կարօտեալ մեղիցի. և մի անկեալ 'ի շնորհացն այ՝ յաւետ զլորեսցի »։

# ԲԱՆ ՈՒԹՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի·*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Բարձրեալ անքնին, զօրութիւն ահեղ, տէր արարածոց, թագաւոր երկնի, ստեղծիչ հրեշտակաց,[1] գոյարան մտաց, հաստիչ հրեղինաց, պէտ բարի հոգւոց, աջ ապաւինութեան, անդորրութիւն հանգստեան,[2] տեսարան լուսաւորութեան, պայծառութիւն բերկրութեան, ձեռնապարզ երանութեան, պատճառ կենդանութեան, առիթ բանաւորութեան, փրկութիւն[3] առանց չարութեան, առաջնորդ խաղաղութեան, աղբխող անմահութեան, պատուար պահպանութեան,[4] ցանկ բոցոյ մեծի օրհնութեան, սահման անոխակալութե̃,[5] յիշեա յայնմ ողբերգութեան մատենի բանիս խոստովանութեան եւ զոր 'ի մարդկային ազնէ թշնամիս մեր՝ 'ի բարի, եւ արա կատարեա նոցին քաւութիւն եւ ողորմութիւն։ Մ՛ի բարկանցիս նոցա վասն իմ, տէր, իբրեւ զսուրբս բամբասողաց՝ առ յաճախ սիրոյդ որ յիս, այլ որպէս զչարս կշտամբողաց եւ իրաւամբք նախատողաց՝ ներեա յանցանաց նոցա։ Եւ արդ մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի քո, արդարադատ,[6] ոմանք առ մեզ ճշմարտագոյնք սակաւուք, թերեւս եւ յիրաւի բամբասելոցս, եւ ես առ քեզ, ամենապարգեւ, անթիւս եւ անկշռելիս բազմօրինակ ուխտազանցութիւնս։

Բ. Արդ յիշեա զքո մեծութիւնդ, տէր, նայեցեալ 'ի յիմս անարգութիւն. եւ ընդ խնդրելս իմ 'ի քէն բարի խնդոյն ատելեաց,[7] եւ դու առ քոյս ըստ քում մեծութեանդ անճառելիս հրաշագործեսցես։ Մ՛ի սատակեսցես[8] զիմն խածանողսն, այլ փոփոխեսցես. խլեալ ըղխտամս բարս երկրաւորս, զլարխոն արմատացուցես եւ յիս եւ 'ի նոսին։ Մանաւանդ զի դու լոյս ես եւ յոյս, եւ ես խաւար եւ յիմար.[9] դու խնկութեամբ բարի զովելի, եւ ես համայնիւն չար ապիկար. դու տէր սորիցս եւ

երկնից, և ես անիշխան ընչիս և հոգւոյս. դու բարձրեալ 'ի կարեաց զատեալ, և ես տաժանաւոր և վտանգաւոր. դու 'ի վեր քան զկիրս երկրիս, և ես կաւ անարգութեան պարշութեան. դու ըստ մարգարէին մնաս յաւիտեան յանբաւ բարձրութեան, և ես միշտ կործանիմ ըստ Նորին բանին. 'ի քեզ ոչ է մթութիւն կամ նենգութիւն, և ես [10] բովանդակն իսկ եմ՝ որ զաւանդն իմ ոչ պահեցի։ Հան զիս 'ի բանտէս, արձակեա 'ի կապանացս, [11] զերծո 'ի շղթայիցս, փրկեա 'ի խեղդմանէս, ազատեա 'ի տագնապէս, քակեա 'ի յերկաթիցս, լոյծ 'ի պաշարմանցս, [12] արտաքսեա յերկմտութեանցս, սփոփեա 'ի տխրութեանցս, հանգո 'ի նեղութեանցս, փարատեա 'ի վշտացս, հանգարտեա 'ի խռովութեանցս, ապաքինեա 'ի ցաւոցս, մերժեա 'ի հեծութեանցս, հեռացո 'ի յողբոցս, կազդուրեա 'ի կականմանցս։ Լցուած ողորմութեան և պարգևատու քաղցրութեան, մի զգրաւեալս արեամբ հզօրիդ անտես արարեալ ընդ վայր կորուսաներ. կանգնեա զհասեալս յափն մահու 'ի բազմավտանգ հիւանդութենէս։

Գ. Ահա [13] բարդեցան կուտեցան շրջանակք ամացս ընդունայնութեան, յորմէ հետէ յայտնեցեալ ցուցայ յուպէտս երևեալ, 'ի յանդաստանէ մօրն իմոյ սննէկի փուշ դժնկի մեղաց շառաւիղի. մի լինիր ինձ խայթող խոցոտիչ՝ որպէս անդ [14] առ Հերին Յուդայի, և կամ զաւակին Եփրեմի։ Եւ քանզի բաւեցեալ անկեցի յագիս փոխանակ ցորենոյն բարեսերմութե՛ [15] խոտս խայթողականս ինքնաթոյնս ընդարմացուցիչս, ըստ գրոյն բանի՝ որ երկեցն է քան զաւետիսն, զիա՞րդ ոչ կոչեցից զանձն իմ զարշելի անդաստան անխծաբեր փշովք մեղաց հեղձեալ։ Եւ սերմանեցի արդարութիւն, ըստ բանին Ովսեայ, և զիա՞րդ հնձեցից և ժողովեցից զկենաց պտուղն։ Անկաւ տունք կուսութեան անձինս մաքրութեան, ըստ մարգարէին բանի՝ որ առ Իսրայէլ, կարող ես տէր 'ի նոյնն հաստատել։ Լայնեցի ընդարձակեցի ըստ մլեկեան բարուցն Յուդայի զանկողին կամացս՝ դիւացն հաճանեաց, 'ի ձեռս քո է ամփոփել դարձեալ 'ի նոյն զգաստութիւն։ Եթէ [16] մարմնապէսն կցորդութի՛ ընդ անսանողին անարատ գործեաց զպտունկն, իսկ դու փրկութիւն հոգեպէս միացեալ 'ի յիս՝ կրկին մաքրես-

ցես. եթէ արեգակնս այս անկենդան ստեղծեալ առ 'ի քէն երկրիս մատակարար, և [17] զկարակումն մօրից ցամաքէ և զոհաս պտուղս հասուցանէ, իսկ ստացողդ ամենից հոգիդ ո՞չ որքան զօրեսցես զախտ չարեաց ազգոյ և զթարախ պղծութեան մեղաց մթերից խեղդն սպանել։ Վասն այսր կանխաւ իսկ ժամանեցի հայցել առ 'ի քէն բարի՝ առելեացն իմոց 'ի կարգ այս բանի, զի զհերքեալ չհասակալս պարտուց մահու յամենախնամ աչաց հզօրիդ մի մերժեսցես, օրհնեալ գթութիւն. այլ կենագործեա զիս զամենամեղս անդամօք մարմնոյս [18] ընդ բնութեան հոգւոյս խառնել միշտ ըղ-ձայոդ։ Իսկ բարեգործացն խնդրել բարիս, բնութեան են օրէնք՝ [19] անբանադատ կրիցն յարակցապէս առ սոյն բերումն։ Վասնզի արդարեւ առ միդ այդ պատուէր ամենայն հասակ զօրանայ, իսկ միւսոյդ երկրորդի առաջնոյն խնամով հանդիպել՝ ամենակալիդ է նմանութիւն. յաղագս այսր իրի նախնի դասեցի զթշնամեացն իմոց աղերսանս քան զերախտաւորացն բարիս։

Դ. Եւ արդ յիշեա զնոսա [20] կրկին ընդ միս, որ 'ի քո անուն բարձրացեալ զանարժանս զիս ընկալան. և տուր նոցա, տէր ամենառատ բարերար և անոխակալ, վարձս արդարոյ և մարգարէի, թէ և ես յաւէտ թափուր իցեմ յարժանեաց, ըստ հաւատոյ նոցա և առ յոյս նոցին ակնկալութեան, որ առ պարտաւոր գերիս ողջամիտ կամօք ակնարկէն, որպէս թէ [21] 'ի մասանցդ քո կեցուցչաց 'ի պահպանարան հոգւոյս ծածկութիւն անկցիմ։ Եւ զպատժաւորս [22] անամփոփելի 'ի քոց անսութեանց և յանխաբելի 'ի յուղիղ կշռութե՛ց՝ քաղցր գթութեամբդ անսահմանելեաւ մերձեցեալ առ իս մաքուր արարցես, անխայտառակելի պահելով 'ի ահեղերական յանդիմանութեանն։ Եւ որպէս շուք իմն վայելչական դնել ախորժեն խնամ անարժանիս սիրելիքն քո վասն քո, նոյնպէս 'ի կրճնս զգեստու բարեկերպութեան, չզխտելով զփծս զաղտնեացն՝ երջանիկ կարգան եղկելոյս, և դու հնարաւոր ամենապարգև օրհնեալ մարդասէր՝ առ բնաւս ողորմած, վասն ամենաթշուառիս հեծութեան հաշտեաց ընդ նոսա ըստ հաւատոց նոցա. ընծայեալ նոցին մատապարգևեա զանեղծ մեծութիւնդ և զանթառամելի զպսակդ յաւիտեան ա-

ւոյն յեռանամ հաստատչական ամենափրկչի ընտրութեան ։

Ե. Ո՜վ դու ես գրաւ փրկութեան մեծութեան անվաճառելի և [23] անծախ գանձուց՝ ստրկիս և սովեցելոյս, ՚ի փոխան վերնային շահու օգտութեան՝ բանից որ ՚ի քէն՝ յարգեալ ձոխանամբ ։ Կասա ինձ սահման ջրոյ հանգստեան. [24] արձանայ, անփոփոխ, պատրաստական վստահութի. կարգեա, օրհնաբանեալ, անկեղծակարծ յուսոյ ամրութիւն. տուր, ամենախնամ դու անաչառ պաշտպանութիւն, սատանեցելոյս բարեաց անդորրութիւն, տարակուսելոյս լուսոյ ապաւինութիւն, աշխարելոյս մեծ երջանկութիւն, վհատելոյս կենաց օգնութիւն, լքելոյս անպայթագղելի օժանդակութիւն, նահանջելոյս անսայթաք վերընթացութիւն ։ Ո՛վ [25] քո է ընտրել և ՚ի քէն է ամենայնիդ, և ՚ի ձեռն քո բաշխին հաստատութիւնք պիտանացուաց հանդերձից կենաց. և քեզ վայելէ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

1 [illegible]. այսինքն գոյացուցիչ մտաց և ուղղիչ խորհրդոց. կամ, միտք առ՝ փոխանակ իմանալի և հոգեղէն գոյացութեան ։

2 [illegible] ։ Երևեցուցիչ լուսոյ. կամ, պատճառ ամենայն լուսաւորութեան հոգևոր և մարմնաւոր. կամ, դու ինքն [illegible] և կայան լուսոյ. ըստ այնմ, բնակեալ ՚ի լոյս անմատոյց ։

3 [illegible]. այսինքն փրկութիւն ազատ ՚ի վնասակարաց, կամ ՚ի վտանգաց, որ է ասել, անվտանգ փրկութի. կամ, փրկութիւն ՚ի պատժոց՝ առանց տուգանաց կամ գանից. կամ, փրկիչ միայն՝ առանց կորուսանելոյ ։

4 [illegible] ։ Ցանկ կամ պարիսպ հրեղէն (ըստ Զաքար. Բ. Ե.) որ ունի զբոց մեծ՝ ոչ այրելոյ իբրև զբոցեղէն սուրն շրջապատող ծառոյն կենաց. այլ [illegible], զի է քոյ սիրոյ ։

5 [illegible] ։ Ի կարգի աղօթական բանից զգուշութեան յիշեա և զթշնամիս մեր որ ՚ի մարդկանէ, բայց առանց նոցա թշուառութ և ողորմութք, և ոչ ՚ի պատուհասել. մի բարկասցիս նոցա ՚ի պատճառս իմ, վասն առնելոյ սիրոյ առ ին ընծայեալ վրէժխնդիր. որպէս թէ զօրքը զէք բամբասիցեն. այլ իբր զայլ ոք յիրաւի կշտամբիցեն, այնպէս ներողամիտ լեր առ նոսա ։ Տարակուսանս զուցէ ոք խորհիցի, եթէ իրաւամբք կշտամբեն նոքա կամ թշնամանեն. զիարդ այնուհետև յանցանս համարիցի ։ Բացատրելի է, զի կամ զայլ յանցանս թշնամեաց հայցէ ներել, և ոչ զկշտամբելն զինքն կոչէ յանցանս, և կամ նոյն խակ կշտամբանք թէ և իրաւամբք արարեալ, նոցա ՚ի յանցանս լինի, զի առ թշնամութէ առնեն զայն, և ոչ յաւգտութի, նախատեն՝ այլ ոչ սիրեն, ոչ ունին խղճմտութի խրատելոյ, յանդիմանելոյ, և է եա՝ զի զիւրեանց զգերանն թողեալ, զշիւղս առաջնորդաց յանդիմանեն ՚ի բերան ։

6 [illegible] ։ Այսպէս կիտադրեալ զառանեն լաւ օրինակք. միայն զբառն [illegible] առեալ ՚ի յաջորդն. թերևս և յե-

րաւի բանսարկուաց ։ Խռովարարք են . մատուցեալ երկրպագութեամբս առաջի քո 'ի խնդրուածս , ամենք որք մեզ թշնամիք են , և քանի ես վստա-հացեալ . չարախօսք և չարարարք . մինչ առաւելագոյն քան զարժանն իմ . կամ , մինչ պակաս քան զոր ես վստահացայ եմ առ քեզ . և թերևս նաև յերկուցն բամբասանն զմեզ վասն անկարգ գնացից մերոց ։ Ըստ չա-րագործութեան արարչին է . ամենք վստահացեալք առ մեզ , թերևս առ յի-րաւի բամբասանացս ։ Եւ ես առ քեզ . և ես ընդ նոսա մատուցեալ առ քեզ՝ զործոց , ունոյս անիծիւ ուխտադրժութեան ։ Աշխարհս լսելեաց խանին բառս՝ զործոց , կամ պարտաւոր ։ Կամ , հայցականն [illegible] , առեալ է զործիական նշանակութեամբ , այսինքն թշնամիք իմ ամենայն վստահացայք , խոկ ես անհնարին զանազան ուխտադրժ-ութեամբք . ուստի առաւել ներելի ողորմութեան են թշնամիք իմ , քան թէ ես , և այլն ։

7 [illegible] ։ Ի խնդրելս զլուրն վասն խմբց առնելեաց՝ և զա-ռա քո առնելիս՝ անձնականի բարիս պարգևեսցես ըստ քում մեծութեան ։

8 [illegible] ։ Որք լեզուաւ խածանեն զիս բամբասանօք կամ զրպարտութեամբ ։ Յայտնապէս բանս թերևս անկեալ է յայն չարախօսս՝ որք զաւրք վարդապետաց մարդկան համբաւէին՝ ըստ պատմութեանն ։

9 [illegible] ։ 1 որին . [illegible] ։

10 [illegible] ։ 3 որին . [illegible] ։ Ի քեզ ոչ գոյ ինա ոչ ազխատ-ութիւն և ոչ նենգութիւն , խոկ ես բազմազանի խոկ եմ կամ իցեմ . այս-ինքն թէ ազխատութիւն եմ , թէ նենգութիւն . մինչ զի և ոչ զաւանցն իմ պահեմ , կամ պահել կարեմ ։

11 [illegible] ։ 2 որին . [illegible] , 'ի զերծում բայէն ։

12 [illegible] ։ արտաքս հան 'ի կապանացս ։

13 [illegible] ։ Անհաւատից բարգեցան ակն ընդունայնու-թեան կենացս . ըստ որում 'ի ծննդենէ անտի՝ որով ցուցայ յաշխար-հի , անդրանն մտցի . մանաւանդ թէ յարգանդէ մօր իմոյ յառաջ եկի իբրև փուշ զմնիկ և շատաւիղ 'ի սկզբնական մեղաց ։

14 [illegible] ։ Է բանն ակնեայ (Է . 12 .) « Եւ ես իբրև զխոտ եղեց եփրեմի , և իբրև զխայթոց տանն յուդայի » ։ Բայց աղուէսն , առէ , մի ըստ արժանեաց իմոց զու ինձ լինիր խայթոց , առ իս թիւրեալս և խոտորեալս զնալով խոտորեալի ։

15 [illegible] ։ Փոխանակ բարի ակրման ցորենոյն՝ անկեցի 'ի յազուցիս խոտս խայթիչս , որպէս եղեւն և այլ փշալից բոյսք ։ [illegible] , ինութեամբ թուշաւորս . որպէս մոլախինդն և այլք , որք առա-տիկ ցուրտ զոլով կամ ջերմ , թոյն լինին ։ [illegible] , թմբեցու-ցիչս . ըստ [illegible] . յոբայ (լա . 40 .) « Փոխանակ ցորենոյ բուսցի եղինճ , և փոխանակ գարւոյ՝ մորենի » ։ [illegible] . որ նախկին է քան զաւետարանի առակ որոմանցն ։

16 [illegible] ։ Ամուսնանալն ակնեայ (ա . 3 .) եթէ այն անուանութի մարմնական ընչեղոյ զանուն պանծալութեանն 'ի կնո-ջէ անտի , ես առաւել զու փրկութիւն ամենայնի՝ հոգևորապէս 'ի ներքս յիս մտանելով , կրկնապատիկ ես մարդիւ կոչող ես , ըստ հո-գւոյ և ըստ մարմնոյ ։

17 [illegible] ։ Զզուրչ խոնաւութի ազգից ցամաքեցուցանէ ։

18 [illegible] ։ Նշանագիրս զմեղուցեալս ամենայն անդա-մոց մարմնոյս . զի և մարմնոյ միարանեալ ընդ ինական յանարութեան հոգւոյս . զբոյն խարշեցի . կամ , կենդանեացս զմեռեալ մեղքս անդամո մարմնոյս , հանդերձ ապականեալ ինութեամբ հոգւոյս , որ է առել՝ զմար-

մինս և պնդիս ։ Կամ պարզելի է, զիս զամենամեծս, այսինքն որ բովանդակ միջոցելով եմ թէ անդամք մարմնոյս, և թէ բնութեամբ հոգւոյս, որ է ասել մարմնով և հոգւով, կենդանացո զի խորհեցայց զբանամն և զպատուիրանս ։

19 [illegible] ։ Վասն երախտաւորաց բարիս խնդրել՝ օրէնք են բնութեան, ոչ միայն բանականիս՝ այլ և ընդհանուր ամենայն կենդանեաց, ունելով 'ի սայն զրերումն կամ զհակումն խնդրաչափ կրիցն կամ ախորժակաց. [illegible] . խրր ընդարոյս և անդրաժանելի ։ Վասն զի [illegible] , առ 'ի բարերարել երախտաւորաց՝ որ հրամայեալ խսկ է, ամենայն մարդ բաւ խրախուսիւր հասանի, կամ ամենայն կենդանի կարող է և յօժարեալ. զի բաւ անասն բանի, սիրել զսիրելիս, բարի առնել նոցա և ոչխոյն առալ, և մեղաւորք և մաքսաւորք յորդորամեալ են (Մատթ. Ե. 46. 47 ։) Իսկ [illegible] . երկրորդին՝ որ է բարիս կամել թշնամեաց, [illegible] , առաջող լինել, [illegible] , համերեալ բարիս առնելով երախտաւորաց, այս է նմանութիւն այ, բաւ որում և ասէ, լինել որդիք հօրն երկնաւորի՝ որ ածէ արև և անձրև 'ի վերայ չարաց ևս ։

20 [illegible] ։ Կրկնապատիկ փոխանակ մեղ երախտեաց նոցա շնորհեցես. և տուր նոցա վարձս բաւ արդարոյ և մարգարէի. զի թէ պէտ ես յայժ պակասեալ եմ յարժանաւորութէ արդարոյ և մարգարէի, բայց նոքա այսու հաւատով և յուսով հային յիս և բարերարեն ։

21 [illegible] ։ Բարերարութք իմ հանմարին, թէ յաւարինական գործոց՝ որք են մասունք քոյոյ սրբութեան. լիով ունիցիմ 'ի յագուրդ ։

22 [illegible] ։ Ընթացջելի, անծածկելի ։ Զիս զպատմապարատ՝ որ անծածկելի եմ 'ի ասնուխթ. քումմէ, և չկարեմ զերծանել 'ի քո անսխալ գատողութէ, մաքրեա ապաշխմ անպահմանելի գթութեամբդ, զի մի խայտառակեցայց 'ի ահեգերական ատենին ։ Եւ զի քո սիրելի ծառայքն կամին պատիւ ինձ գնել վասն քո, հայելով յարտաքին կերպարանս կրօնաւորութեան, և ինձ երանի կարգան՝ առանց գիտելոյ զգաղտնի արատս իմ. վասն այսորիկ աղաչեմ, բաւ հաւատոյ նոցա հայեաց 'ի նոսա, և պարգևեա զանթառամ պսակն, են ։

23 [illegible] . անապառնելի գանձուց ։ Այս հատուած բանի՝ սկսեալ անտի, Զի [illegible] , կապակցի ընդ նախընթաց բանին, որպէս թէ ասել. վասն խնդրեմ երախտաւորաց 'ի քէն հայցեմ զհատուցումն բարեաց. վասն զի ինձ անանկիս զու ես զրաւ կամ առհաւատչեայ մեծութէ անապառ գանձուց, 'ի [illegible] , 'ի բաշխումն երկնային օգնից ։ [illegible] , բանիւ իշխանութեան քահանայութէ և վարդապետութէ, որով 'ի քէն յարգեալ ձեռնասդրէ. խրրև թէ՝ այսպիսի իշխանութբ զօրով կարգեալ մատակարար շնորհաց քոց՝ իշխեմ 'ի նոյն գանձուցդ առնուլ մասն վասն խնդրոյ բարերարաց ։

24 [illegible] ։ Հաստատեա, տուր սինդութբ զպատուհասն և զցնդող փառահոսութի 'ի բարի գործս կամ 'ի մէջ վտանգաց ։ Կարգեա ինձ [illegible] , անհրկերայելի յուսոյ ամբութի ։ 2 օրին. [illegible] ։

25 [illegible] ։ Այդ ամենայն զոր հայցեմ, քո է առանց նուազելոյ. և [illegible] , 'ի քէն ունիմ զամենայն, և մեզ 'ի քէն միայն պարգևի՝ և ոչ յայլմէ, և 'ի ձեռն քո բաշխին [illegible] , զարմանք կամ զօրութիւնք սխրալից ամենեցուն կենաց ։ 2 օրին. [illegible] , այսինքն չափն կամ որոշմունք խորախնիւր բանականին ։ 1 օր. [illegible] , համեմատ չափք ։

# ԲԱՆ ՈՒԹՍՈՒՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արքայ երկնաւոր, թագաւոր բարձրեալ, տէր բոլորից, ամենից ակնկալութիւն, ստեղծող անսահմանաց. հաստիչ խնամակալեաց, [1] պատճառ եղանութեանց, կազմիչ համագերձելոց, տուիչ լուսոյ, առիթ առաւօտու, պատրաստիչ վաղորդայնի, երևեցուցիչ երեկոյի, տարբիչ խաւարի, [2] արուեստաւոր բարեհնար, խնամոտութէ գործօնեայ, [3] քուրայն օրհնեալ. հալիչ մեղանաց, հալածիչ ցաւոց, քակտիչ դառնութեանց, պահպանարան հանգստեան, [4] հնարք նիրհման, յարմարիչ քնոյ, պարգևիչ ննջման, ճշգող յարակարգութիւն, զգայութեան անդորրութիւն, ցրիչ ցնորից, յեղանակիչ անուրջոց, փոխարկութիւն զարհուրմանց, այլայլութիւն տխրութեց, խափանիչ խիթմանց, ընդարձակիչ կարծեաց, [5] համայլութիւն ծփմանց, ահագնութիւն խարդախմանց, հարուածիչ դիւաց, փախուցիչ ախտից, ընկղմիչ գայթագղութեանց:

Բ. Պաշտպանեա երկնաւորդ ձեռամբդ, զօրացո բարձրացեալ քո աջովդ, ամփոփեա ամենակալդ թևօք, ծածկեա ամենայն խնամօքդ, ամրացո վերակացութեամբ վերնայնոցդ, շուրջանակի պարապեա դու մարտակօքդ անմահից. ՚ի յամենուստ պարփակեա կցորդութբ հրեշտակացդ, վանեա զընդդիմամարտն իմ զխաւարութբ զաւարթնոցդ, պատսպարեա զստանեալս՝ ծածանիւք մաղթանօք, զբանակս անպարտելեացդ [6] բարեկարգեա ինձ պահապան: Նայ [7] ընդ աչացս զինուց և զմտացս իմ տեսանելիս, զգաստ արա ընդ ոգւոյս և զծանրաբեռն կրիցս դանդաղութիւն, վերացո տէր ՚ի զգայութեանցս զմածեալս յիմարութիւն. բարձ, միայն բարեգործ, ըզպատրուակս թանձրութիւն: Ընդ սկզբան [8] բերանս լուսոյ՝ զօրութիւն քո ծագեա, ընդ ելից արևուն՝

արդարութեան արեգակնդ 'ի յանձկութի՛ւ սրտիս մըտա-ցս. Ճառագայթ քո փառացդ 'ի յիմաստից խորհրդա-նոց ջահեացի. խաչիդ անառնազրութիւն ընդ շունչս և ընդ մարմնոս հաստատիւ տարածեսցի։ Յանձն առնեմ՝ քեզ յաւուրս գծս յարմարեալ տաղաւարս պաշտպանա-ղւոյս՝ որ 'ի սմին։ Ո՜վ դու ես ա՛ծ ամենքին, առ ամե-նեսին բաւական և յամենայնում բովանդակ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

1 Գործօղ էականութեանց։ Պատճառ կամ ներգործող եղեալ իրաց, որ գոյացեալքն են։ Կազմիչ հանդերձելոց. յօրինող ապագայ իրաց, որք լինելոցն են։ Ածիչ առաւօտու, պատճառ առաւօտեան ժամուն, յորում ծագէ արեգակն։ Դասաւորիչ հասարակաւուրի. ժամուն յորում բարձրանայ արեգակն։ Տարրիչ խաւարի. գոյացուցիչ գիշերային ժամանակին՝ յորում ծածկի արեգակն։ Այսպիսի ժամուց պատճառ ասի ա՛ծ, իբրև զի նա առնէ զարեգակն և զլուսին, և զնոսա դնէ և զմուտ այնպէս կարգեաց, զի անփոփոխ կանոնաւ յաջորդեսցեն միմեանց տարեկան ժամքդ, և որպէս սահմանեացն, նոյնպէս պահէ միշտ. բստ այնմ. «Եթէ խափանիցէք զուխտ իմ զտուընջեան, և զուխտ իմ զգիշերոյ» եւն. (Երեմ. լգ. 20։)

2 Արուեստաւոր բարբառոյ։ Ըստ որում ա՛ծ հնարեաց՝ թէ զաւելն բան բնութեան իւրաքանչիւր իրաց, և թէ զմարդկային արհեստ, լուսաւորելով զմիտս մարդկան 'ի գիւտ այնց. և 'ի բարւոք կիրառութիւն նոցա, ըստ յոբայ (լթ. 36.) «Ո՞վ ետ կանանց իմաստութիւն ոստայնանկութեան»։ և այլն։ Իմաստաբերեան խորհրդոց, ամենայն գիտութեանց առաջնորդ, կամ յաջողիչ առ մարդիկ։ Գիւտ մարդկային հմտութեանց լինի ապաքէն խուզիւ մարդկային հանճարոյ. բայց ներքոյ՝ ա՛ծ է որ զմիտսն լուսաւորէ. այլ և բուն նախկին գիտութեանցն որ յադամ, ա՛ծ ինքնին է տուիչ։

3 Բարբառոյն օրհնելոյ։ տուիչ ձայնից և պատմելոյ, որք վասն ամենայն օրհնութեան արժանի են։

4 Հնարք ներհամն։ Ըստ որում ա՛ծ կարգեաց 'ի բնութիւն կենդանեաց զհաւաքումն զօրութեանցն 'ի խելապատակն, որով ծանրանան և թմրին զգայութիւնքն, այս է՝ ներհամումն. որում զհետ գայ քուն, այն է՝ կապումն զգայութեանց. և քնոյն զհետ գայ ննջումն, այն է՝ յերկար հանգիստ զգայութեանցն և բոլոր մարմնոյն։ Եւ յայսմ անգամ հանգստեան մարմնոյն՝ տանուլին պարգևէ ա՛ծ ցնորս երազատեսութեան, զհանապազոր-դութիւն տուրևառի ցնցոյն. կամ, ինքն ա՛ծ է ցնցոյ յարակարգիչ։ Ցրուէ զգիտական երեւմունս յերազի. զմշտակարգ երազս փոխարկէ 'ի բա-րին։ Փոփոխարկութեան զարհուրանաց. փոփոխէ կամ բառնայ զպարհուրանս՝ որք լինին յերազի կամ յարթմնութեան։ Այլայլիչ տրտմութեանց. փո-խէ 'ի խնդութիւն զտրտմութիւնս կամ զտրտմալի իրս, որ յերազի կամ յարթմնութեան։ Խափանիչ խթիմանց. խափանէ զխթիչ ցաւս, կամ զանձ-կութիւնս սրտի, որ ներգործին 'ի հաւաքմանէ արեանն։ Ընդհատիչ ներհմանց. փարատիչ փարանական խորհրդոց երևակայութեան՝ որ լինին 'ի քուն կամ յարթմնութեան։

5 Հանդարտութեան ծփմանց ։ Հանդարտութիւն կամ խաղաղեցուցիչ խռովութեանց սրտի ։ Ահագնութեան խարդաւանաց . ահացուցիչ խարդախութեանց դիւաց կամ մարդկան . որք 'ի քուն կամ յարթնութեան կամին վնասել մեզ ։

6 Բարեկարգեա ։ մի օրին . Բարեփարծեա ։ Ցես խնդրելոյ զպաշտպանութիւն հրեշտակական դասուցն , և զբարեխնամութիւն սրբոյ աստուածածնին , յաւելուն թէ զբանակս անդրանկաց կարգեա 'ի պահպանութիւն , յայտնապէս զաւրս 'ի մարդկանէ ցուցանէ անդրանկացն անուամբ ։

7 Ընդ ուխտս դէմաց ։ Բաց , լուսաւորեա ընդ զգալի աչացս՝ որք 'ի դէմս իմ հաստատեալ են , նաև զհայեցուածս մտացս ։ Դեղոյ ուր , թեթեւացս , զօրացս ընդ մարմնոյ շնչոյս՝ նաև զծանր կրկցս դանդաղութեան . այսինքն զծուլութիւն , զպղերգութիւն՝ որ 'ի կրից քնոյ ծանրանայ ։ Զինուէ , փարատեա 'ի զգայարանացս զմածեալ մթութեան , զթմրութիւն , զանզգայութիւն հոգւոյ իմաստից . այլ և բարձ զդանդաղ ծանրութեան , զթուլութիւն մարմնոյ , և զզբաղումն 'ի թանձր ախորժակս զգալի ։

8 Իւրումն լուսոյ ։ Յայս է 'ի բանէ աստի և յայլոյն եւս , զի այս աղօթք արարեալ է վասն առաւօտեան ժամուն . վասն որոյ հայցէ ընդ ծագման լուսոյ՝ լուսաւորել և զմիտսն ։ Ի ճակատս խորհրդոցս . զի ճառագայթ երեւեացն ոյ , այսինքն իմաստութիւն , խոհականութիւն փայլեսցէ 'ի գլուխն , որ է ուղեղ և գործարան խորհրդոց՝ իմաստից . զի նշան խաչին , և յիշատակ տէրունական չարչարանաց տպաւորեալ կայցէ 'ի հոգի և 'ի մարմին ։

# ԲԱՆ ՈՒԹՍՈՒՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն ազերս մաղթանաց բանի .*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Իսկ արդ վասն զի [1] արթնականն մեր զուարթութիւն քեզ նմանութիւն իմն է համարեալ , իսկ 'ի խոր թմբրութիւն լսելն՝ վասն ուղիղ հաւատոյն 'ի քեզ՝ անթարթափ բացութիւն աչաց , ուղղեա հոգւոյդ քո իմաստութեամբ [2] զյաջողուած ձեռինս գործոյ ընդ հեծութեան ձայնիս մաղթանաց ։ Օրացս , տէր , 'ի հանդէս բարի ձգնաւորական [3] արի վաստակոյ , կցորդ լեր կարեացս տկարութեան , [4] թեթեւս կացո զաշխատութեանս այս սկիզբն . արագեա , միշտ կարող , զյառաջադրեալ ձեռակերտս , զիւրաւորս ընթացս 'ի յաւարտումն լը-

մանն ։ Ի վախճան իւրն բերկրութեամբ զիս հասս, ժամանն կացուցես 'ի հանդիպումն յուսոյն, կցորդ լեր ուղւոյն [5] Ճանապարհիս ընթացից, 'ի թախիծ անբարձման փութացուսջես յօգտակարն, ընդ աջմէ իմ լերիս 'ի վըտանգի ծանրութեանն, զձայն քո լուս 'ի յանձկութեն պահու, ձեռամբ քո կեցո [6] 'ի կորստեանն ժամու, մատամբ քո ազդեա 'ի սահմանին անձկութեան, հարթեա զխորոց ամենաչար խափանմանն, հոգեղինին սաղմամբ ըստ Ամբակումայ ինձ հնարեա, բան ինձ շնորհեա 'ի յաւէնի բազմութեան, իմաստութի յիս տընկեա 'ի հանդիպման քննութեան ։ [7] Ամպով կամաց քոց հովանացիր հրաշալես. հանդարտեցո փայտիւդ կենաց զծովուս մրրիկ, սանձեա զսատեաց կենցաղոյս պատկեր քոյին հրամանաւդ. քանզի թէ սաս ողորմութիւն քո, տէր, կամեսցի, այս լուծութիւն կոհակաց կարծր է քան զվէմ. և թէ 'ի ցամաքի անտես անկիցես. իբր զանկայուն՝ մնդութիւն յատակիս 'ի ներքոյ սատի հասեալ սասանի ։

Բ. Արդ ընկալ, Տէր, զպաղատանաց ձեռնարկութի քեզ 'ի հաճութիւն, և արա ինձ [8] զամենակարծն զայթագղութիւն մեծ վստահութիւն ։ Որպէս 'ի ջրահեղձոյց ամենակործանն զարու, որք 'ի հարթ տարածման գետնի առանց երկիւղի յանհոգս կէին, յողորմութէդ անայի մնացեալ կորուսան. իսկ ընդ հովանաւոր [9] մածուածով լաստիւն յօգնատասան հիմանն հայթայթանօք յանուն զթածիդ յեցեալ պահեցան. ընդ որս և զաղաչողս մշտատատան 'ի նաւահանգիստն խաղաղութեան մարդասիրապէս պրծեալ ապրեցո. [10] վարձս 'ի քոյոցդ ընդ իս բերելով հոգևոր շահից. զսոորարերս այս սսուարութիւն պարտուցս լքեալ բանիդ առակու, 'ի քեզ տէր անկայց միացեալ 'ի սպաս անբաժանելի, օրհնեալ յամենայնի ։ Եւ կցորդելով այսմ մաղթանաց հոգեղէնքն ամենամաքուրք ընդ հողեղինացն մարտիրոսաց, որք ջրով և հրով փորձեցան, և [11] յելից զերծմանն ընդ մեր խնդրեցին, և մեզ յիշատակ թողին օգնութեան, առասցեն ընդ մեզ համարձակար զուգամասնութեամբ՝ եղիցի եղիցի ։

1 [illegible]։ Մարմնով միայն արթուն լինելն մեր՝ առանց հոգևոր զգաստութեան, առաջի քո Տէր քուն համարեալ է. ըստ այնմ (Եփես. Ե. 14.) « Արի որ ննջեսդ » . և ընդ հակառակն՝ 'ի խոր քուն կալն մարմնով քեզ Տէր անփակ բացումն աչաց համարեալ է վասն ունութեան ուղիղ հաւատոյն առ քեզ, որով աչք մտացն միշտ արթուն են. ըստ այնմ (Սաղմ. Իդ. 15.) « Աչք իմ յամենայն ժամ առ Տէր » ։ Սկսեալ աղօթիցս յայն հայի, թէ ոչ զի զգաստացեալք 'ի քնոյ՝ կարող եմք ձեռնարկել 'ի գործ իւրաքանչիւր, այսորիկ աղօթս անկարող ինչ իշխեմք ոչ յաջողելոյն։ Վասն զի այս մեր արթնութիւն իբրև զքուն թմբիր համարեալ է առ քեզ, ինքնին անգործ և անպտուղ. այլ ընդ հակառակն՝ հաւատով փառաւորել յած զօրութեամբ է իբրև զքուն արթնութեան, թէ և այլ խոր 'ի քուն կայցէ։ Վասն այսորիկ պիտոյ է և վասն ցերեկի գործոց պաղատել առ քեզ։

2 [illegible]։ Ոմանք խնդրեն զյաջողումն աղօթական գրոցս։ Բայց 'ի կարգէ բանիցն յայտնի է, զի և այս աղօթք վասն առաւօտեան ժամուն ասացեալ է. ուստի հայցէ զյաջողումն ամենայն գործոց՝ զոր յաւուրն առնելոց է իւրաքանչիւր ոք ըստ իւրում վիճակի և պաշտաման. խնդրելով զի յաւուր հասուցէ քո զիւրաքանչիւր գործս ըստ իւրոց հաճոյից, և զխափանարարն կամ զարգելն խափանեսցէ։

3 [illegible]։ Ի գործ պահոց, լռութեան, սաղմոսերգութեան, ողորմութեանց, և այլն։ Զօրացո, Տէր, յորժամ առաջի կայցէ ինձ ձեռն արկանել 'ի գործ առաքինի և բազմավաստակ, թէ առանձնաւոր գործ իցէ, և թէ հասարակաց։ Եւ եթէ ոչ ինքնին ծանր իցէ, այլ առ իմում ակարութեան, դու լեր կցորդ։

4 [illegible]։ Օգնելով տկարութեան՝ թեթև արա ինձ զանկիրդն այսր աշխատութեան. կամ. փոխագրութե հոգւոյս, թեթևացո զաշխատութիւն սկզբանս. որովհետև յամենայն գործս՝ սկիզբն դժուարին է միշտ. և [illegible], յառաջեկցա զառաջիկայ ձեռագործս։ [illegible]. զիւրաւ յաջողեա 'ի վճարումն գործոյս. և այնպէս խնդութեամբ հասո 'ի կատարած իրացն, և 'ի [illegible], 'ի ստացումն յաւելեալ իրին, կամ օգտին՝ զոր ակն ունիմ 'ի գործոյ աստի։

5 [illegible]։ Ընթացից սկսեալ գործոյն, կամ. ուղևորութեան, զոր վասն հոգևոր կամ մարմնաւոր գործոյ առնէ ոք։

6 [illegible]։ Յորժամ վասնզի ինչ լինիցի, 'ի [illegible]. 'ի ժամու դժուարութեան գործոյն՝ մտաւոր քո օգնես։ [illegible]. բարձ զարգելս խափանարար խափանմանն, [illegible]. առաքեա հրեշտակին ինձ նորոգ շնորհեա 'ի սմա, կամ յայլ անձնաւորին զիրաւուն, որպէս զանխելի արարեր 'ի ձեռն Ամբակումայ։ 'Ի [illegible]. խնամանաց զիս 'ի քնելն զբանս սուրբ գրոց, կամ զճշմարտութիւնս հաւատոյ, և զմնալով վարդապետութիւնս։

7 [illegible]։ Զանցս խորշելոցս ընդ ծունր կարծիր՝ յորմամբէ 'ի բանիս. 'ի ննջարկելն իմ, տէ, առաջ խնամոց քոց հովանի լեր. և զօրութեամբ սուրբ խաչին հանգստեալս զմիտս. անձնեա զհաւանեալ ծնունդ, որ է պատկեր փրկութեան կենդանութեան։ Վասն զի յաղօթել քո՝ լոյս ալիք ծովու կարծր լինին քան զվէմ. իսկ եթէ 'ի ցամաքի անտես մնացեալ, պնդութիւն գետնոյս իբրև զանկայուն ինչ 'ի խորոց անտի թուլացեալ սասանի։

8 [illegible]։ Զ յայն երկիւղալի զայթակղութեան կամ վտանգն՝ փոխեա 'ի մեծ վստահութե. մի որին. [illegible]. այսինքն զպէտ

կարծր կամ դժուարին արգելս գործոց։ Նոյն որ առի, [illegible] [illegible], այսինքն կարգեալ բան. մի օրին. գնէ՝ [illegible]։

9 [illegible] [illegible]. Տախտակամած շինուածով տապանին, [illegible] [illegible] [illegible], նպաստիւք շարժական հիման տապանին՝ որ տատանէր 'ի վերայ ջուրցն։

10 [illegible] 'ի [illegible]. Արժանաւոր գործս բարեաց ընդ իս բերելով 'ի քո հոգևոր շնորհացդ. որպէս նոյեանքն զաւուրք կենդանեաց հանեին 'ի տապանէն քեզ 'ի պատարագ, [illegible] [illegible], զխայրահակ ծանրութիւն պարտուցս առաէն թողլով, [illegible] [illegible], բառ նմանութեն յիշատակեալ բանից փրկութեանն նոյի. որ զատուար կաղմութիւն տապանին եթող, և միայն աւուր պատարագքն եկեալ, քեզ յանդիման եղև։ Հին լուծ. 'ի յաջորդն յարէ զայս, որպէս թէ առ հայր ասել. բառ օրինակի բանից 'ի քեզ միայն հայր, որպէս և նա. զի առաց. հայր դու յիս, և ես 'ի նմա. զի և նոքա 'ի մեզ եղիցին։ Այսպէս մեկնէ, ոչ հայեցեալ թէ առ քն է աղօթքս. որպէս և տեսանի 'ի համարն [illegible] [illegible] [illegible] [illegible], և այլն։ Վասն որոյ բառ այգիմ մնաց առնել ես, և առ քն ուղղեալ, այսպէս իմանալի է. բառ բանից քո քն՝ որով առաջեր, եղիցին 'ի մեզ, միացյց և ես անբաժանելի։

11 [illegible] [illegible]։ Մարտիրոսք ողջ 'ի մահուն իւրեանց փառն մեր խնդրեցին, և յիշատակ օգնութեն թողին զխալս և զնշխարս իւրեանց, [illegible] [illegible], միաձայն կցորդութեամբ տասայեն ընդ մեզ. ամէն։

## ԲԱՆ ՈՒԹՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ընդ այսր հառաչմանց թախծութեան ողբոց 'ի բազմաց կերպից շարակարգելոց, և ամենից հոգւոց ողորմեա, գովեալ և երկայնամիտ թագաւոր։ Եւ այնոցիկ առաւել[1] որոց հատեալ է անհնարութիւն փրկութեան կենաց. որք նոքեցին անպատրաստաբար շիջեալ լապտերօք իւղոյն պակասութեան. Հա յիշեա, տէր իմ գթութեան, և[2] 'ի յայս ևս պատասխան խրատուն իմ գրեա. [3] Բանզի թէ և 'ի փառս աշխատութեան սքանչելեաց մեծիդ՝ հակառակօքն հանդերձեցեր զկազմած մարդոյս,[4] զամն ծանր և զամն թեթև, զմին զօղ և զմիւսն հրային, զի գիմողութիւնն 'ի հակառակացն հարթ պահեսցեալ՝ արդար կոչեսցուք հա-

ւատարիմ հաւատարութեամբն. [5] և 'ի յայսմ դարման առաքինութեան վերաբերեալ ընդ ամբարձելոյն, զխոնարհութիւնն առ կան զխոնարհն անմոռաց պահեալ՝ պսակ ընկալցուք ճգնաւորական։ Այլ քանզի յայսմ կամանէ ուխտի վրիպեցաք, և անտանաբար սահեցմամբ ըստ հողոյն գիջման ընդ երկիր մածաք, [6] այլ ոմն ախտիւ և այլ ոմն անգթութեամբ, միւս մասն մոլութ՛ք ամենաբաղձ կերակրոյ իբր զազան մշտաբոյծ յարակայ կապեալ ընդ բնութեանս։ Իսկ 'ի քաւիչս [7] ոմն անըմբռնելի և անողորմելի սլացմամբ 'ի բաց սասուցեալ՝ վայրենապէս ամբարտաւանէ. եթէ ջեռնումք տապով սիրոյն որ 'ի քեզ՝ նշխարաւ բոցոյն որ 'ի մեզ, ցուրտն առընթեր կենակից նմին զնոյն կասեցուցեալ, բարւոյն ընդմիջէ. եթէ օդականաւն հրեշտակայնոյն յառնիցեմք 'ի քեզ, ծանրութիւն թանձրու անդրանիկ նիւթոյս այս հողոյ 'ի ստորև քարշեալ խափանէ։

Բ. Իսկ արդ [8] յամենասուտ պարտեալ և 'ի սպառ լըքեալ՝ իբր զապիկար հաշմեալ հերքեցայ կորեայ վանեցայ, վատնեալ 'ի բաղմոց 'ի մահ դրաւեցայ. վասն որոյ 'ի պարգևականէն զրկեցեալ՝ յաղթութեանն կողմ նայիմ, և պատկառեալ դիմօք համայնից ունողս զընաւից աղերսաբանեմ զմեռելոյն՝ քեզ կենդանեաց. քանզի կարող ես յաւէտ հնարիւք և կարստականայն ըստ իս մեռելոյն. ամենայն ինչ քեզ զօրելի է. նա՝ զի և ընդ անտկար կարելոյդ և կամելդ է ախորժելի։

Գ. Արդ այսց [9] երկուց բարգաւաճ շնորհաց նորոգչաց առ միմեանս եկեալ՝ կարելն ընդ կամելն, բարձեալ եղիցի և յուսահատութեանն վհատութիւն ազգաց մեղաւորաց. և ժամանեալ հասցէ աւետեացդ լոյս հողւոց բժշկութեան քումդ հրամանի, տէր ամենայնի, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

1 Ուրոյ հայէրէն է։ Աչառելի է կարծել, թէ այսու բանիւ խնդրիցէ սուրբ վարդապետս զողորմութիւն վասն յուսահատ և անզեղջ մեռելոյն. զի այդ ոչ միայն օտար է 'ի ճշմարտութենէ, այլ և հակառակ բազում բանից՝ որովք սուրբ վարդապետն յաղօթս իւր ցուցանէ, թէ անզեղջ մեռելոյն չիք ողորմութիւն 'ի հանդերձեալն. որպէս 'ի բանն ՀԹ. Չ. « Փակումն գթոյն, և արգելումն ողորմութեան »։ և զկնի. 3. « Ուր զրանն բաղխել ոչինչ օգտիցէ. վճար եղեալ գթութեան առ իս »։ և զկնի. հատուցմունք հեծութեան, և այլն։ (տես 'ի բանն 20. ըծ. 8։)

Նորա հարկաւ զայլ միտս ակնարկէ ասացելոյս ։ Ոմանք իմացան՝ ոչ զմեռեալ մարդոյ. այլ զկենդանեացն՝ որք 'ի քում ծառայութեան նոցին ։ Բայց զայդպիսեաց ոչ ճշմարտի ասել, թէ հատեալ է ակնկալութիւն փրկութեան. և նոյն իսկ մեռեալ բանին ցուցանէ՝ թէ վասն մարմնով մե-ռելոց է աղօթքս. զի ասէ, ընդ այլ խնդրուածս՝ զոր զանազան օրինա-կաւ կարգեցի, Ի ՄԵՌԵԱԼՍ ԱՌՆԻՑԵՍ ՍՔԱՆՉԵԼԻՍ. որպէս թէ ասել, վասն կեն-դանեացն բազմօրինակ պաղատեցի, այժմ և վասն մեռելոցն աղերսեմ ողորմել, մանաւանդ վասն այնոցիկ հոգւոց՝ որոց ակնկալութիւն փրկու-թեան պակասեալ է ։ Վասն որոյ իմանալի է բանս վասն այնոցիկ. որք 'ի մեղաց գործելոյ, ծուլութեամբ կամ արտաքնոց մահուամբ փոխե-ցան յաշխարհէ՝ առանց ապաշխարութեան. որոց ոչ եւ մնայ յոյս՝ ի-րեանց արժանաւոր գործովք փրկել 'ի պատուհասից արդարութեանն այ. այլ կրկուք պատժոցն վճարել. և 'ի սոյն միտս յարէ, ՈՐՔ ՆՆՋԵՑԻՆ ԱՆ-ԳՈՐԾԱՐԱՆՈՐԷՆ, այսինքն առանց պատրաստութեան բարի գործոց. զի թէ-պէտ զլապտեր հաւատոյն ունէին, և զանէր առ փեսայն քն նորոգեցին՝ յառնելով ընդ առաջ նորա, այլ չունէին զիւղ բարեգործութեան ։ Նոյն-պիսիքս, ասէ, առաւել պէտս ունին ողորմութեան. զի որպէս ասէ 'ի բանն. ՀԴ. 1. « Ահա է ողորմելին իսկապէս, յորում հատեալ ակնկա-լութիւն վաստակոյն » ։ Արդ յիշեա զնոսա տէր իմ, և այլն ։

2 Ի ՅՈՅՍ ԵՒ ԳՈՎԱՍՏ ։ Ոմանք մեկնեն, այսու պատճառաւ՝ զի վասն այնպիսի հեղգացելոյ ողորմութիւն հայցեմ, դու ես իրաւունս համարեա ինձ ողորմել ։ Մարթ էր և այսպէս իմանալ. այսու պատճառաւ, այս-ինքն ողորմելովդ այնպիսեաց, 'ի վերայ իմ նոր իրաւունս բարերարու-թեան գրեա. կամ, զիս համարեա քեզ պարտական ։ Սակայն առաւել համաձայն կարգի բանին այսպէս իմանալի է. թէպէտ և յիշատակեալ անապաշխար մեռեալքն անկեալ են 'ի ձեռս արդարութեան քո, և վասն հեղգ կենացն չեն արժանի ողորմութեան, բայց դու յոյս խնդիր իմ տուր ինձ իրաւունս, կամ իրաւացի համարեա, հայցեալ 'ի գթութե-քո, որում բաւական է և փոքր իրաւունք ։ Զպատճառս իրաւանցն 'ի յաջորդն ցուցանէ ։

3 ԳԹԱՑԻ ԻՆՁ Ի ՏԵՍՈՅ ։ Համառօտ իմաստք բովանդակ բանիս այս-պէս պարզին ։ Թէպէտ և 'ի ցոյց սքանչելի զօրութեան քո՝ հակառակ տարերօք յօրինեցեր զմարմին մեր, զի հակառակութիւն միոյն՝ միւս ներհակաւն չափաւորեալ, պահեսցի 'ի մեզ արդար հաւասարութիւն՝ թէ 'ի բնական առողջութեան, և թէ 'ի բարոյական ուղղութեան ։ Բայց քանզի անտանաբար վարեցաք, նոյն իսկ հակառակութիւն տարերացս խափան եղև մեզ առ բարին. զի յորժամ հրով սիրոյ ջերմանամք, ցրտութիւն ջրոյն շիջուցանէ, և այլն ։ Վասն այսորիկ 'ի կողմանէ մե-րում մեղքն առաւելեալ՝ կան արդելք բարւոյն, և հակառակ 'ի չարն ։ Իւ յայսպիսի զխառնարանութիւն ակարացեալ մեղանչեմք. և հեղգա-նամք 'ի գործս ապաշխարութեան. և յայսմ պատճառէ լինիմք ներելի ողորմութեան ։ Ահա այս է իրաւունքն՝ որոյ վասն համարձակիմ խնդրել ողորմութիւն վասն անապաշխար մեռելոյն. զի ցուրտ և թանձր բնու-թիւնս մեր կասեցոյց զնոսա 'ի փութոյ ապաշխարութեան ։

4 ԶԱՌ ԾՈՎՈՒ ։ Ասացեալ առն և առն ոչ զմարդոց ասի, այլ զտարերաց. զմին 'ի հակառակաց, ասէ, եղեր ծանր, այսինքն զհողն, և զմիւսն ԹԵԹԵՒ, զօդն ։ զմին ԱՌ Ջ. ցուրտ, այսինքն. զջուրն, և զմիւսն ՀՐԱՅԻՆ. ջերմ, այսինքն զհուրն ։

5 ԻՐ 'Ի ՅՈՅՍ ՏԵՍՈՅ ։ Իւ այսու գաղափարաւ ստացքնութեան, այս-ինքն հաստատութեամբն, ՀԻՄՆԱՐԿԵԼՈՒՄ ԸՆԴ ԱՆՏԱՌԱՄԱՆԵԼՈՅՆ, 'ի վերնայն կամ 'ի բարձրանալն ընդ հոգւոյն որ փոխմանկանն է. կամ, ԸՆԴ ԱՆԵՐԵ-

Ցեղոյն. այսինքն ընդ հրոյն՝ որ 'ի բարձրն գնաց. [illegible] ա-
կան. զխոնարհութի և զնուաստութիւն մեր հայեցեալ առ հող մար-
մինս՝ անմտութեան ապաշխարեսցուք. որով ընկալցուք զյաղթական Տզնութեն :
3 օրին. և հին լուծ. և 'ի յարժ 'ի փափան. և մարմ է մեկնել. այսու
որոշմամբ կամ ընտրութեամբ առաքինութեան :

6 [illegible] : Իբրև զանասունս 'ի հաղեցեն յարեցայց, ասն սխ-
ալի գիջութեն մարմնոյ, որ յաստակութէ ջերմոյն և խոնաւին լինի :
[illegible] միան բարկութեք, որ 'ի հաղայն մաղձէ լինի,
և 'ի գոլորշեաց՝ որք ողոյ 'նման խառնեն զխելսն. և այլ միան որկորա-
մոլութեք, որ 'ի ցամաքութեէ կամ 'ի ցրտութեէ հողոյ լինի. կամ յան-
չափութեէ ջերմոյն՝ որ ապառէ զկերակուրսն : Այդպս խորաթնչերն կա-
պեալ կայ ընդ [illegible]. ընդ բնական խառնուածոյս՝ իբրև զաղան
[illegible]. միշտ մտածեալ յիւր անասնական կերակրոց : Այսու բա-
նիւ ոչ եթէ ասացանէ զբնական խառնուածսն, կամ զնոսա առէ ապա-
ճառ խորաթնչիւր մոլութեց. այլ զի մարդն անասնաբար վարելով,
բստ բերման խառնուածոյն գործէ, և ստամոք զմոլութիւնս :

7 Ոչ [illegible] : Պատահէ՝ զի 'ի չորից տարերացս՝ կամ 'ի խառ-
նուածոց՝ միոյ առաւել լինելով ծայրութեք բնականին, 'ի բաց փա-
խէ 'ի միաբանութէ այլոցն, և իբր փայլենի՝ անբարառնէ 'ի վերայ
հակառակին : Որպես եթէ երկին ջերմանամբ 'ի սեր քո բնական կամ
գերբնական 'ի ձեռն ընտրած քոց. [illegible] Մեղսա-
ծով ջերմութեն՝ որ 'ի բնութեն մերում, ցրտութիւնն որ առ 'նմա է
միշտ, մեղկացուցանելով զնոյն, [illegible]. արգել կամ խաղաց
լինի բարւոյն : [illegible]. [illegible] թեթևութեամբ
կամ 'նրբութեամբն՝ որ է 'նմանութիւն հրեշտակի, կամ հրեշտակային
վարուց, [illegible]. մաք առ քեզ ծանրանայ. ծանրութիւն
ծանր հողոյս 'ի վայր քարշեալ խափանէ : [illegible] առել
զհոգին, այն է՝ զի յառաջին արարչութեն 'նախկին յեշտակի ընդ ա-
նուամբ երկրի. և զի 'ի կարգմունթե մարդոյ՝ հողն առն առաջին հիմն և
նիւթ մարմնոյ (Ծնն. ի. 7 : գ. 19 :) Բայց վասն անձնոյն տառապելոյ
ծանիր. զի սուրբ վարդապետն ոչ եթէ զպակասութիւ տարերացն հա-
մարի բստ բնական պատճառս բարւոյն կամ չարին 'ի մարդն, այլ 'ի
բնական զխմանմարութե նոցա բարոյապես խորհրդածէ զխմանմար-
ութե բղձից և յօժարութեց հոգւոյն և մարմնոյն. քանզի այսմ բա-
րոյական զխմանմարութե՝ բազում անգամ բստ պատահման պատճառ
լինի զխմանմարութեն տարրական, յորժամ բանականն կամ հակէ. և
կամ անհրաժեշտ 'ի կանոնել զնոսա :

8 [illegible] : Ամենայն կարգանէ, կամ յամենայն գործս
յաղթեալ վասն հակառակամարտ յօժարութեց, [illegible]
[illegible] իբր զանկար որ կծկեալ անդամքն, հերքեցայ և փանեցայ 'ի
[illegible], այսինքն 'ի բազում բարեաց, կամ բազում փորձութեց և մե-
ղաց : [illegible], յառաքինական վարուցն զրկեցեալ.
որով արժանի լինէի պարգևաց փառաց, առաքինութեն 'ի կորձ [illegible]-
մութեան : Եւ [illegible] ամենեցուն մեզոյ՝ ապերախտ [illegible]
[illegible] : վասն ամենայն մեղացն՝ որք քեզ կենդանի են ( բստ
[illegible] ի. 38 :) Ցայլ ասացեր եղեալ էր որոշումն, [illegible]
[illegible] : որպէս թէ խոնարհեալ վասն մեղուցն կենդանեաց՝ որք առ ա-
մենայն էն : Բայց վասն 'նքեցեալց լինել [illegible]՝ ցուցաք 'ի սկզբանն :
Քանզի կարող ես և հնարաւոր՝ [illegible]. իբրև
զիս՝ արժանի կորուսեան եղեալ մեղօքն. այսինքն որք իբրև զիս ա-
ռանց բարի գործոց 'նքեցին :

9 Երկնոյ Երգեցուած Շնորհաց։ Յորժամ մտաբանեսցին կարեկց և կամեկց (որք են երկու տառ և անպակաս շնորհք արտաքինք. ընդ որում պատճառաբար ներգործեն 'ի մեզ զամենայն շնորհս.) այնուհետև բարձցի յաստուածօրհնաբանն հնօրհնութենէն, լրումն յաւոյն՝ որով ընդ գործոց խորհրդոց երկրի անկայուր 'ի փրկութէ Յիսուսին մեղաւորին՝ թէ կենդանիք, և թէ մեռեալք. զի ոչ կարեն անձամբ արդարանալ 'ի մեղաց, կամ ազատիլ 'ի պարտեաց մեղաց։ Վասն որոյ յարդարացուցանել քո զմեղաւորն յաւուր կեանս, և 'ի թողացուցանելն զպարտս մեղաց 'ի հանգերձեալսն, այսորիկ ցուցանես զզօրութիւն քո և զկամս բարերարութեան։

## ԲԱՆ ՈՒԹՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ քանզի 'ի գլուխ կատարման հասեալ տկարաւանդանեալս կատկի այսր ողբերգութեան, արա, տէր, փոխանակ գաղափարման առնուլ՝ ընդ այսց բանից մաղթանաց խնդրանախառն կշտամբութեան՝ և որ յիս կրին չար սովորութիւնք։ Որ քեզէն կարգեցեր սահման աւետեաց աննկալութեան գաղափարատեղյս՝ ասելով, ոչ են կամք առաջի Հօր իմոյ՝ եթէ կորնչիցի մի ոք 'ի փոքրկանցս. և դարձեալ, այս են կամք Հօր իմոյ՝ զի զամենեսին ինձ յանձնարարեալսն ոչ կորուսից։

Բ. Դու օրհնեալ ես 'ի գթութեան, բարեբանեալ միշտ 'ի քաղցրութեան, խոստովանեալ յերկայնմտութեան, ծանուցեալ 'ի յայցելութեան, քարոզեալ տէր 'ի փրկութեան, ներբողեալ դու յառատութեան, պատուեցեալ 'ի պաշտպանութեան, [2] փառաւորեալ ես 'ի փրկութեան, երկրպագեալ յանբաւ բարձրութեան, պաշտեցեալ 'ի յանքննութեան, գովեցեալ միայն 'ի յաղթութեան, վերաձայնեալ 'ի մեծ զօրութեան, խնկաւորեալ յողորմածութե՛ն, համբուրեցեալ յանձառ հեզութեան, [3] ճաշակեցեալ 'ի խոնարհութե՛ն։ Ընդ քեզ և ծնողդ քո երկնաւոր ա̃ծդ [4] բոլորից մխիթարութեան. ընդ որում հոգիդ քո սուրբ բարութեան, որ զանհկեալ[5]

զզբաստ թշնամւոյն և զգայթագղեալ մարդն անբանու-
թեամբ՝ կամեցեր ոչ անտես առնել։ Որոյ [6] երախտիս
հզօրիդ 'ի յիս, և առաքինութիւն մեծիդ 'ի բարձունս
տօնեալ անդադար յանվախճան փառաբանողաց. որովք
զայս ձայն աղերսական յարդեալ ընկալցիս մարտիրո-
սացն պաղատանօք 'ի հոտ հաճութեան բուրման անու-
շից։ Նա և այսու [7] փրկանօք հաշտարար բանի՝ զնախնեացն
պարտս և զաներևոյթ վէրս միջնովքն և վերջնովքն մա-
հացուցանողօքն զանձն և զմարմին բժշկեա, ամենակա-
րող, զներքինս և զարտաքինս, [8] զոխքն և զգիծքն և
զխարանս հարուածոցն. բարձեալ և մաքրեալ դեղովք
ողորմութեանդ զկտեալ խածուածս բազմագունիս, որք
զարշելիս ընդ ախորժելեացն քեզ ցուցանեն զէութիւն
բնութեանս։

Դ. Նա եթէ [9] հասից յամս ծերութեան քև առաջ-
նորդեալ արժանիս մահու, մի թողցես զակարութիս,
մի անարգեր զալիսն, մի կորացուսցես զկործանեալն,
մի զլիջուսցես [10] զկքեալն, մի վայրաքերեր զխոնարհեալն,
մի շնչման հողմոյ մատներ զառկայծեալն, մի ընդդարհ-
կեսցես զդեդևեալն, մի անվերարկու առներ զսառու-
ցեալն, մի անդարման լիցի տագնապեալն, մի սասանց
տածելոյ [11] յարկն խարխալեալ, մի անպատիւ պատկերն
հնացեալ, մի պարարտութիւն անհամեալ, մի շուք շնոր-
հին անարգեալ, մի հնութիւնն քամահեալ, մի նաւ
հոգւոյս ալէկոծեալ, մի երկարութիւն յուսոյն կորե-
ցեալ, մի լար շաւիղին խզեալ, մի ուշ իմաստին բար-
ձեալ, [12] մի զոյին կազման զեղծեալ, մի ամբարձմանն
թևք փետտեալ, մի զուարթութիւն դեղոյն ադեղեալ,
մի ճաճանչ նշուլին քաղեալ, մի պատուհանք աչացս
փակեալ, մի լուսաւորութի՛ նորին խափանեալ, մի պատ-
կերն խոսուն անկեալ։ Ո՛հա աղաչեմ զքեզ, բարեգութ,
ամենայն որբովք պաղատիմ, [13] լուր սոցին ինձ կանխաւ,
զի զանազանն մի մոռացիս։ Դու առաջնորդեցեր ինձ
ըստ սաղմոսղին և ապրեցուցեր. հա՛ն, տէր, ընդ եր-
գողին և 'ի կործեացն կասկածանաց, յորմէ երկնչիմ։
Իսկ ես չեմ արժանի 'ի քէն և ոչ [14] հասարակական
կերակրոյն վարձու, այլ դու կարող ես սովորաբար և
առ զղջացող բարեգործել։ Ո՛վ են զարմանալիք անձա-
ռից բարեաց, միայն հրաշագործ առ ամենայն երկայն-

մասութիւն, ընդ հօր և հոգւոյդ սրբոյ օրհնեալ համա- պազ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

1 [illegible]: Ի կատարման աղօթական գրոցս՝ զոր և իբրև [illegible] գլխման գրեմ և թողում յետ իմ. շնորհեա տէր, զի և չար սովորութիւնք իմ վերջասցին:

2 [illegible]: մի օրին. [illegible].

3 [illegible] 'ի [illegible]: Առ քո ասէ, որում իբրև մարդ՝ պատշաճի խոնարհութիւն, և ոչ իբրև ած, որ և 'ի խորհուրդ հաղորդութեան ճաշակի 'ի մէնջ անճառ խոնարհութեամբ:

4 [illegible]. ընդ քեզ օրհնեալ է, ասէ, և հայրդ երկնաւոր՝ ածն ամենայնի մխիթարութե: 2 օրին. [illegible]. իբրև թէ, որ բոլորից է մխիթարութի: [illegible]. որպէս և հոգիդ քո սուրբ օրհնեալ է ընդ քեզ:

5 [illegible]: Ելից իգ. 5. 'ի մեր բնագրի գրի՝ զգրաստ [illegible]. բայց այլ թարգմանութիւնք, եբրայականն, քաղդէացին, յոյնն, և լատինն գրեն՝ [illegible]. որպէս անդ (համար 4.) Նաև մերս՝ համեմատ այլ թարգմանութեանց գրէ խնամ տանել եղին [illegible]: [illegible]: 'ի կանոնեալ՝ չառնել անտես զանկեալ գրաստն, օրինակաւ ծանուցեր՝ չառնել անտես զմարդն գայթակղեալ ոգխութի 'ի մեղս, կամ 'ի մոլորութի. կամ, այլ բանիւք սուրբ գրոց ազդեցեր զգայթակղեալ եղբարս յարուցանել, կամ չտալ պատճառս գայթակղութեան:

6 [illegible]: Բարերարութիւնք հզօրիդ 'ի յիս ներգործին. իսկ [illegible]. զօրութի քո կամ առատութիւն 'ի յերկինս փառաւորի 'ի հրեշտակաց. [illegible], այսինքն հրեշտակք, կամ ընդ փառաւորութեան նոցա ընկալ և զայս մաղթանս՝ խնդրուածովք մարտիրոսացն:

7 [illegible]: Այսու համառօտմամբ հաշտեցուցիչ բանից՝ մաղթեա [illegible]. եթէ իմացի վասն իւր մեղացն, նշանակէ՝ զառաջին ամացն կամ զմանկութե մեղսն, և զցաղանի վէրս հոգւոյն. [illegible], համդերձ մեղօք պատանութեանն, կամ երիտասարդութե. և [illegible]. մեղօք կատարեալ հասակին և ծերութե, որք սպանանեն զհոգի և զմարմին: Բայց եթէ զայլոց մեղաց իմասցուք զայս բան, հայցէ՝ զի աղօթական բանիւքս քաւեսցէ ած զպարտս առաջնոց մեղուցելոց, այլ և զներկայից և զապագայից զմեղսն: [illegible], զհոգևոր մեղս խորհրդոց. և [illegible], զմարմնական մեղս գործոց:

8 [illegible]: Զհնացորդս մեղացն, այսինքն զչար ունակութիւն, զողկարութիւն առ բարին, զխայթ խղճին, և այլն. որք իբրև հետք են անցեալ մեղացն: Եւ [illegible]. զերկարութին, կամ զկրկնումն անկումն 'ի նոյն մեղս, որով մեղքն իբրև գիծ ինչ շարունակի, և տարածի առ այլս չար օրինակաւ: Եւ [illegible], զխարեալ տեղին կամ բղձերան՝ որ 'ի հարուածոց հրացեալ նետիցն սատանայի. որով իմանին չար յօժարութիւնքն՝ զրգռեալ 'ի փորձութեանց դիւաց: [illegible]. զհարմամբ եղեալ խածուածս բազմազանս, որք զարշելի առնեն զհոգին մեր, ընդ [illegible], այսինքն փոխանակ ախորժելի իրացն շնորհաց և առաքինութե. կամ խառն ընդ ախորժելեան ած է, բևեն 'ի մեզ, այսինքն ընդ բարեան բնութե, որք հաճելի են ած:

9 [illegible]։ Իմանամք բանիւս՝ չև ես 'ի խոր ծերութիւն հասեալ որքոյ վարդապետս 'ի յօրինել աղօթիցս, թէպէտ և ըստ հաւանական հաշուի՝ ունէր յայնժամ զոնէ ամս վաթսուն. տես յիշատակարանն։ Ես ոչ կենաց, այլ մահու, ասէ, արժանի եմ. բայց եթէ քո կամօք հասից յամս խորին ծերութե, այժմէն աղաչեմ, մի անխնամ թողուր զտկարութիս իմ. զի յայնժամ առաւել կարօտ եմ քոյ խնամոց, յոր ժամ յես յաւէտ տկարացեալ՝ ամենայնիւ 'ի մարդկանէ զատանեմ հոգաղութե։ Նա ապա այլ և այլ բանիւք 'ի կարգ արկանէ զխնամս և զվիշտս՝ որոց ներքոյ անկեալ է հասակն ծերութե, է որ 'ի բնութէ, և է որ 'ի մարդկանէ. զորս ինքնին երջանիկ աղօթաւորս տեսեալ իսկ էր յայլ ծերս. և այնու իմանայր որչափ առաւելին տկարութե պէտս ունիցի այր հինաւուրց, զի մի 'ի ծերութեն կորուսանիցէ զոր յերի-տասարդութեն վաստակեաց, նմանեալ Ճանապարհորդի՝ որ անվտանգ հասեալ զերկայն ուղի, առ դրան տան կործանիցի։ Այս աղօթք են կարևոր ամենեցուն, կանխապէս եւ ազդեալ 'ի սաղմոսերգու մարգա-րէէն. «Մի ընկենուր զիս տէր 'ի ժամանակի ծերութե, 'ի պակասել զօրութեան իմոյ մի թողուր զիս» (սաղմ. հա. 9։)

10 [illegible]։ Զթիւրեալն մարմնով, զկծկեալն, որոյ քամակն կո-րացեալ է։ [illegible]. զկեանս ծերութե՝ որ իբր ճրագ ապականեալ մերձ է 'ի շիջանել, մի տար յանկարծ պակասել։ Մի [illegible]. սովորաբար մեկնի, մի հերքեր, մի մերժեր, մի անտես առներ զդողդոջեալն. բայց ըստ այլում՝ ելանէ սա 'ի բառէն [illegible] (այսինքն անկարիսց բանեզած.) յորմէ նշանակէ՝ մի բռնադատեր 'ի գնալ, կամ մի ծանրաբեռներ զդողդոջեալն 'ի ծերութենէ, կամ յայլ ցաւոց։

11 [illegible]։ Զծերութիւնն նմանեցուցանէ զանազան ի-րաց ապականելոց. և 'ի ինդրեալն՝ չառնել անպատիւ կամ չանարգել, զնծայլին խնամոն ասէ չպակասեցուցանել, և ոչ եթէ զառ 'ի մարդկա-նէ պատիւն խնդրէ։ Մի [illegible]. մի իբրև զկծուեալ իւղ անպի-տան թողցի։ Մի [illegible]. մի յարգ զեղեցկութեն անարգեսցի։ Մի [illegible]. երկարութի յուսոյ վարձուցն՝ որով 'ի ծերութես յերկար ապաւեմ, մի կորեսցի անվարձ մնալովս. կամ, մի վասն երկա-րութեն թուլասցի յոյս իմ։ Մի [illegible]. բարն՝ կամ չուանն, որով առաջնորդիմ 'ի Ճանապարհ քո, մի խզեսցի, այսինքն հաւատքն, լու-սաւորութիւն մտաց, և այլն։

12 Մի [illegible]։ այլ օրին. [illegible]. այսինքն կազմած մարմ-նոյս, կամ զգայութեցս մի խանգարեսցի։ [illegible]. բազուկք և ձեռքն մի լքցին անպիտան իբրև զփետեալ թևս թռչնոց։ [illegible]. մի լոյս աչացն նուաղեսցի։ [illegible], արտևանունքն թուլանալով մի փակեսցին. և մի լուսաւորութի աչաց [illegible], ըն-ժօք ինչ՝ որք արտաքուստ խափանեն զտեսութիւն։ Եւ մի [illegible], կենդանի մարմինս անկեալ գտիցի անդամալուծութե, կամ ան-կարութեամբ 'ի շարժիլ։

13 Լուր [illegible]։ Լուր ինձ յայժմու աղաչանս՝ նախ քան զծերա-նալն. [illegible], զխնամս քո որ 'ի ծերութեան՝ մի մոռասցիս. կամ, այսու աղաչանօք՝ զոր կանխաւ մատուցանեմ, յիշեա և զանազան ա-ղօթսն զոր ցանկամ առնել 'ի ծերութեանս, բայց գուցէ չկարիցեմ յայնժամ։

14 [illegible]։ Թէպէտ ես չեմ արժանի նաև վարձու հասարակ կերակրոյ իբրև զվարձկան, բայց դու կարող ես [illegible], ըստ քում առատութեան նաև [illegible]՝ առ ապերախտս բա-րիս առնել. վասն զի [illegible], դու առնես բարիս անճառս, և

առնես պատշաճելի օրինակաւ 'ի զարմացումն ամենայն մտաց. և առաւ-
ձինն 'ի գործ որ և իցէ երկայնմտութեան առ մարդիկ՝ զու միայն ես կա-
րող [illegible]: Ոչ մարդիկ և ոչ հրեշտակք կարացին այնչափ ժուժ-
կալել 'ի վրէժխնդրութիւն անարգանաց իւրոց, որչափ Տէրն նա ոչ միայն
ժուժկալէ, այլ խնամս ևս յաւելու՝ փոխանակ պատուհասից. և ինքնին
խոկ արգելեալ ցածուցանէր զաստուածս արամութեան եղեալ, և զհրեշ-
տակին առ զաւթա: Ցայլ բարերարութիւն ընկալաւ իբր գործակից
նա 'ի հրաշագործել. պարգևաց և մարդկան և հրեշտակաց գործել
մեծամեծս 'ի վեր քան զկար բնութեան. բայց յերկայնմտութեան առ յան-
ցաւորս՝ միայն նա է հրաշագործող. Վասն զի նա միայն է որ յանչափս
առնէ զմեղս, և յանչափս պահէ զփառս իւր. նա միայն կարող է և զար-
ժանի պատուհասն և զարգահասն 'ի վերայ ածել անարգելարար
յաւէտ և իցէ: Այլ 'ի վերայ այսր ամենայնի ներել յանցաւորին,
առ ժամանակ, զարմանս նորա մատուցանել, ոչ աղաքէն 'ի վեր է
քան զամենայն հրաշս, և միայն ամենազօր բարւոյն սեպհական: Այ-
սորիկ աղագաւ ընդ նմանեան անուանց դասեալ է 'ի գրոց և [illegible]
[illegible] կոչումն. և նոյն ձայն որ խօսեցաւ առ մովսէս, յայտնելով նմա
զիւրականն անուն Ո՞վ, զուգապէս կոչեաց առ նա՝ [illegible], [illegible]
[illegible] (Ելք. լդ. 6:) Ցիրաւի ապա կատարած ասելոց՝ միայն հրաշա-
գործ զնա առնէ առ երկայնմտութիւն. և այս ոչ 'ի միում կամ յերկուս,
այլ [illegible] երկայնմտութիւն. զի չիք խոխր մեծի և փոքու. այնպէս
հրաշալի է երկայնամտութիւն նոյ առ դաւիթ, որպէս և առ նաբուգոդո-
նոսոր. ո՞վ ոք չկարիցէ զարմանալ ընդ երկոսին, կամ ոչ օրհնել զեր-
կայնամտողն յաւիտեան: Տես և բան ԼԴ. լծ. 37. 38: Սովին իմաս-
տիւք աւարտէ և զբանն ՀԴ. [illegible]
[illegible]:

## ԲԱՆ ՈՒԹՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի
առ նոյն աղերս մաղթանաց բանի.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ես արդ 'ջուր կամաց և կաթ արտասուաց՝ բե-
կութեամբ հոգւոյս մտացս լքմամբ՝ խորտակմամբ սըր-
տիս հեղեալ առաջի, զմարգարէին յիշեցուցանեմ զա-
րանաթայոյն Սամուէլի, զոր առեալ եհեղ 'ի սպաս-
տանէ յանդիման քո, ամենատես, առ ժողովրդեանն
օրինակութեան զանձն արկանելոյ խոստովանութեամբ
և հնազանդութեամբ կենդանարարդ զարշապարաց:
Բ. Ես արդ ընկալ զայս հիւսուած բանի աղիողորմ
հեծեծանաց, և հաստատեսցիս յայս նուէր բանի անա-

րիւն զոհի, թագաւոր երկնի. և օրհնեալ որբեա զաւա- մանենի այսր ողորմութեան, և դրեալ դրոշմեսցես յարձան յաւիտեան [2] ընդ հանգուցելոցն ազատու- թութինս։ Կացցէ առաջի քո մշտնջենաւոր, և յիշա- տակեսցի 'ի լուսոյ քո հանգստեան. բարբառեսցի [3] շըր- թամբք ընտրելոց քոց, և խօսեսցի բերանովք հրեշտա- կաց քոց. տարածեսցի հանդէպ աթոռոյ քոյ, և ըն- ծայեսցի 'ի սրահ սրբութեան քոյ. խնկեսցի 'ի տաճար նուան քոյ, և բուրեսցի 'ի սեղան փառաց քոյ. պա- հեսցի [4] 'ի գանձարանի քում, և համբարեսցի 'ի տա- ցուածս քո։ Պատմեսցի 'ի յականջս ազգաց, և քարո- զեսցի 'ի լուր ժողովրդոց. նկարեսցի [5] 'ի դրունս խնա- մից, և տպաւորեսցի 'ի սեամս զգայութեանց. իբր կեն- դանեօք զինս պատմեսցէ խոստովանեալ զանօրէնութիս. և թէպէտ փախչան ընկալայց իբր զմահացու, այլ յա- րակայութեամբ բանի այսր աղերսի՝ գրեցայց կենդանի։ Մնասցէ սա անեղծ 'ի կամս քո, տէր, [6] ինձ պատժա- պարտս հանդերձեալ միշտ անդուլ դատիչ, անաչառ կշտամբիչ, անպատկառ յանդիմանիչ, անանխայելի դրո- ւեղիչ, անողոքելի պարսաւիչ, անհամբոյր ծանակիչ, ան- մոռանալի մատնիչ, անփրկելի տանջիչ, անկաշառ կառափիչ, անխնամելի յայտնիչ, տարաւամ հրապարա- կիչ, աշխարհալուր բողոքիչ։ Փոխել մեծութեան ազդ- ման առանց լռութեան և կամ դադարման զինոցս պար- տեաց խոստովանեսցի։

Դ. Այն զիր խնդը ձայնիւ [7] իբր զիս ընդ իմ աղա- ղակեսցէ, տարածեսցէ զծածկեալսն, հռչակեսցէ ըղ- գաղտնիսն, կակղեսցէ զկատարածն, հնչեսցէ զմոռա- ցեալսն, յայտնեսցէ զանէրեւոյթս, բարբառեսցէ զլու- րմն, քարոզեսցէ զխորսն, պատմեսցէ զմեղսն, մերկացուսցէ զանասելիսն, ցուցցէ զկերպարանս թա- քուցեալն։ Շօշափեսցին [8] ամլաս որքն, դարձին զայ- թագղութիւնքն, յանդիմանեսցին անձարքն, քամեսցին չարեացն մնացուածքն։ Եւ թագաւորեսցեն կեանք չարհաց ողորմութեան քո, Քրիստոս, 'ի գանձս [9] ապահեստի տկերացն ցանկալեաց. որով 'ի ժամանակս կենդանու- թեանս սկզբնաւոր լուսոյ մտի զարմայնոյն նորոգման ու- սուրն պայծառութեան՝ քաջալ ցօղով յոգի ածեցեալ այսու փրկութեամբ անմահականաւ, և անցանորեկի

վերամբարձութիւն ջատախօս ձգեալ խմմալեացն բա-
րեաց՝ դարձեալ դալարասցայց և կրկին ծաղկեսցայց ըստ
քնքնաշունչ գրոյն յուսադրութեան։ Եւ քեզ միայ-
նոյ փրկողի և Հոգւոյդ քում Հօր խնկակցի, միասնական
էութեանց և անձնա Երրորդութեանց խորհրդա-
կան գովեստի փառք և երկրպագութիւն յաւիտեանս.
ամէն։

---

1 [illegible]. այսինքն ջուր կենսաբաշխ, որ այն ինքն է [illegible], ՚ի բերմանէ հոգւոյս հեղլով. [illegible] յիշեցուցանել, այսինքն զջուրն աւազանի, [illegible] ըստ առաքելոյն, հեղեալ առաջի տեառն (Ա. Թագ. Է. 6։) Որ սուրբ վարդապետս զհեղումն ջրոյն՝ ոչ խմմոյ ՚ի վերայ հեղման արտասուաց, որպէս անմիք համարին ըստ յայտնութեան և ըստ հին լուծ. այլ ՚ի վերայ հասարակ և բնական ջրոյ. [illegible], որինակելով այնու զխոստովանութիւն, և զխոստովանութիւն զորձն ժողովրդեանն առ Աստ. կամ, յորինակ և ՚ի յորդոր ժողովրդեանն, զի այնպէս խոնարհեսցին առաջի տեառն։

2 [illegible]. Ըստ կարգի ընթանան աղօթքս. զի յանդիմանութիւն մաղթեսց վասն ժամանակի ծերութեան, և յայսմ որ վասն յետ մահուն։ Զայս մասնան զգձական հայցուածոց գրեսցես, առէ, վասն որ արասցես իբրև [illegible], այսինքն մուրհակ, գիր հաստատուն, անփոփոխելի. ՚ի համար կամ ՚ի թիւ ծառայութեանց [illegible], հաճոյացելոցն քեզ արդարոց. կամ, խնո զայս սեռական՝ փոխադրութիւն հոլովոյ. փոխանակ առելոյ՝ ընդ հաճոյական կամ ընդունելի աղաստուորութիւս արդարոց. այսինքն որպէս հաճելի վաստակք արդարոց ընկալուաս են առաջի քո, նոյնպէս ընդունելի կացցէ այս մասնան։

3 [illegible]. Ընթերցալս խնմուակք զմիանձունս և զանապատաւորս. իսկ [illegible], կամ զբուն զանմարմինսն՝ որոց միջնորդութիւ մատչին աղօթք մարդկան առ Աստ, և կամ առանձինսն՝ զպաշտօնեայս եկեղեցւոյ, ըստ առաքել (Ա. Կորն. ԺԱ. 10։) Արդ այս մասնան խօսեսցի, առէ, բերանով միանձանց և պաշտօնէից եկեղեցւոյ. թէ յառանձնական աղօթս, և թէ հրապարակաւ ՚ի վերայ հիւանդաց։

4 Ի [illegible]. յընդունելութիւն քում իբրև հաճելի ընծայք. կամ, պահեսցի յեկեղեցւոջ քում։ Ի [illegible] ՚ի [illegible]. մաղթեսցի ՚ի համբար քոյ առաջուածոց՝ իբրև քոյով զօրութիւն սերմանեալ, բուսեալ և պտղաբերեալ։ Տեառնեան արդիւնք այսր խնդրուածոյ, զի գիրք Նարեկի պանծեալ պահին այժմ ընդ այլ եկեղեցական գիրս ՚ի պաշտամունս եկեղեցեաց։

5 Ի [illegible]. Տպաւորեսցի ՚ի յիշողականն. կամ ՚ի լսելիս՝ ընդ որս մտանէն բանք խմմատութեն. ՚ի [illegible], ՚ի շրթունս. որպէս զի [illegible], իբր կենդանի գոլով իմ. կամ մանաւանդ իբր կենդանի ոք՝ պատմեսցէ զանօրէնութիւս իմ։ Զի թէպէտ մեռանիցիմ ես, բայց միշտ մնալով այսր աղօթական գրոցս՝ համարեսցայց կենդանի։ Այսու բանիւք հայցէ սուրբ վարդապետս՝ զի անպակաս իցեն այս աղօթք ՚ի մտաց և ՚ի բերանոյ ժողովրդեան. և տեսանեմք՝ զի կամքն այս կատարեցան խնդրուածք երանելւոյս. զի գիրք աղօթից նորա յածին ՚ի ձեռս ամենեցուն. և բազումք ՚ի բերանոյ ուսանին, և անդ

փափագմամբ զնոյն աղօթէն։ Եւ թէպէտ 'ի միում կողման վասպուրական աշխարհին յօրինեցան աղօթքս, բայց ըստ խնդրոյ երանելւոյն սփռեցան 'ի լուր բոլոր ազգաց հայաստանեայց. մանաւանդ և նորուն արժանահաւոյց աղօթից պտուղս խնձ հանդերձ, զի աշխատեալ միանգամ 'ի բազմադիմութիւն բանից նորա, դարձեալ յետ խոր երկարեան ամաց՝ յաջողեաց յաւելուածովք և ես պարզել զխթութիւնն, թէ և ոչ բովանդակ ամենայնին։

6 [illegible]։ Խնձ մեղադրաբար, ասէ, եղիցի ստ [illegible], անդադար զասող, և այլն։ Զայս 'ի սաստկութէ զգծման ասէ. և թէպէտ այսպէս փափաքէր և խնդրէր երանելին, բայց յորդեանցն տեսանեմք՝ զի այս մասամբ ոչ ևս է 'նմա անհաշտ կշտամբիչ. այլ գովեստ յաւէրժական. խակ մեզ անդադար յանդիմանիչ, զի բիւրապատիկ առաւել մեղուցեալք. չունիմք զանէ մասն ինչ 'ի նորա զգծմանցն։

7 [illegible]։ Որպէս թէ ես կենդանի իցեմ, փոխանակ իմ աղաղակեսցէ։ [illegible], աղբալով յայտնեսցէ զխառնակած մեղացն և զկենաց, կամ զվախճան պատուհասիցն։ [illegible], մեծամեծ ծանուսցէ կամ մերկանայցէ զսուտ պատճառանսն։ քարոզեսցէ [illegible], զարմանս կամ զնեղքին աղքատն մեղաց։

8 [illegible]։ Աւասիկ գրով 'ի ձեռս եկեսցեն զաղանի պատարանք բնութեան, կամ առաքինւոյն. որովք որպէս զմարդ 'ի մեղս։ [illegible], յայտնեսցին նշանք կամ պատճառքն գայթակղելոյ 'ի մեղս։ [illegible]։ յերևան եկեսցեն անտանելի կամ թաքուցեալ մեղքն։ [illegible], խաղաց թափեսցին կամ ապաւեսցին մնացորդք մեղացս։ որպէս զի [illegible] յանկերս իմ կենդանեաց շնորհաց, ևն։

9 [illegible]։ Ի զանձս պաշտամանի անկերպոյս, այսինքն 'ի գերեզմանի, [illegible], սրբեսցեն [illegible], կենդանացուցիչ զօրութեանն քո, որ է շնորհք մարմնոյս. և ոչ ըստ բնական սկզբանց նորա պատշաճելով ինչ։ Այլ յորժամ մաքրի մարդ 'ի մեղաց մերոյ, և ապաշխարութէ, և գործովք ամպաշտանս որքի մարմինն 'ի մնացուածոց մեղացն, և սուրբ խորհրդոյն ճաշակմամբն անմահ, յայնժամ պատշաճ նմա զօրութեան ամայլ խորհ կենդանութեան։ Որով 'ի [illegible], 'ի ժամանակի կենդանանալոյ, զարմանալին սկաման նորոգ լուսաւորութէ, որ այն ինքն է զարութեան յարութէ, օր պայծառութէ արդարոց, [illegible], ազդարար հրամանաւ փողոյն, կամ 'ի զօրութէ արեանդ քո, [illegible], կենդանական շնչովն անձնեալ անմահ յարութէ, անթառամ [illegible], այսինքն ընծիւղմամբ շատաւորս արձակեալ [illegible] [illegible]. այսինքն հոգևոր բարեաց շնորհաց և փառաց հոգւոյն իբրև շատաւորս արձակելով զփառս մարմնոյն, որ են պայծառութիւն, անապականութիւն, թեթևութիւնն և անչարչարութիւնն, այսու օրինակաւ կրկին զալարիմ և ծաղկիմ մարմնովս՝ գերազանց քան զառաջին կենդանութիւն։ [illegible] [illegible], ըստ յաւելուածոյ 'ի քէն ազդեցեալ դրոյն, որ 'ի բազում տեղիս աւանդէ զյոյս յարութեան, որպէս (Եսայ. ԻԶ. 19.) « Յարիցեն մեռեալք, և կանգնեսցին որք իցեն 'ի գերեզմանս. զի ցօղն որ 'ի քէն է, բժշկութիւն է նոցա »։ Այլ և Եզեկիէլ. ԼԷ։ Բայց Յոբ և զյորդոյն խմանալ (Ժդ. 7.) « Զի գոյ յոյս ծառոյ, զի թէպէտ և կտրեսցի, միւսանգամ ծաղկեսցի » և (12.) « Եւ մարդ ննջեաց, և ո՞չ յարիցէ »։

# ԲԱՆ ՈՒԹՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելեալ կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն ազերս մաղթանաց բանի·*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

*Աստուած և տէր, կեանք և արարիչ, ողորմած, գթած, լոյս, երկայնամիտ, անոխակալ, մարդասէր, ամենազօր, պարգեւատու, փրկիչ, օրհնեալ, գովեալ, բարեբանեալ: [1] Դարան ամրութեան, պատսպարան վստահութեան, առանց նենգութեան բարի, առանց խաւարի ճառագայթ, քաւիչ մեղաց, ողջացուցիչ վիրաց, անհասանելեաց հնարք, [2] անմատչելեաց հպաւոր, անյուսութեան ելք, անուն քո խոստովանեալ ՚ոյ որդի· և հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի, և հոգւոյդ ամենակալի և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք և պաշտօն գոհաբանութեան յաւիտեանս· ամէն:*

---

1 ԴԱՐԱՆ ԱՄՐՈՒԹԵԱՆ: Ամփոյթ տեղի ամրանալոյ ՚ի ձեռաց դիւաց: ԱՌԱՆՑ ՆԵՆԳՈՒԹԵԱՆ. այսինքն աննենգելի բարի· կամ, այնպիսի բարի և անկեղծ, յոր ոչ կարէ խառնիլ նենգութիւն· որպէս և ԱՌԱՆՑ ԽԱՒԱՐԻ, անմթանալի ճառագայթ, կամ, լոյս՝ որում ոչ յաջորդէ խաւար:

2 ԱՆՀԱՍԱՆԵԼԵԱՑ ՀՆԱՐՔ: Անմատչելի տեղեաց մերձ· զի յերկինս է, և ՚ի խորս անդնդոց· ըստ սաղմոս (ՃԼԸ · Ը·) « Թէ ելանեմ յերկինս », և այլն: ԱՆՅՈՒՍՈՒԹԵԱՆ ԵԼՔ· յանյուսալի իրս՝ հնարք և դարման:

# ԲԱՆ ԻՆՆՍՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հետեւութեան նորին հակոյն առ նոյն ալեօք մաղթանաց բանի.

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Բարեբանեալ իմ երկնաւոր, միայն արարիչ, տէր ամենակալ, մեծութիւն ահեղ, գթութիւն օրհնաբանելի, ողորմութիւն խոստովանելի, բարերարութիւն երկրպագելի, խնամակալութիւն պաշտելի, մարդասիրութիւն տօնելի, պահպանութիւն խնկելի, բարձրեալ անունն, մերձաւոր կամարար, առաւէն անհասկանելի, մխիթար սրտից, փարատիչ վշտաց, ապաքինիչ ցաւոց, ապաւէն վհատութեանց, բարձումն պարտեաց, [1] փոխարկիչ կորեաց, կարգաւորիչ կրից, յարմարիչ բանից, անձնարկու լեզուի, [2] շրջագրութիւն շնչոյ, կայուցիչ հոգւոյ, [3] ամփոփիչ խորհրդոց, կրթութեան կամաց, արձանացուցիչ յուզմանց, հանդարտութիւն մրրկաց, խաղաղութիւն ծփանաց, որ ունիս զթեւս ամենայնութեան իշխանականս, և խնամութեամբ նուաճեալ առ քեզ զարմացմանս.

Բ. Գոհաբանեալ միշտ երախտաւոր, որ հեղութն անհաղորդութեան երկնայնոցն [4] հանդերձ անեղանոր անձամբ հրաշիւք յանձնիս սրբոց. Թագաւոր էից հանդիսից, ամենայնիւ ծանուցեալ գթած. սկզբնահայր և [5] նախաշաւիղ սիրոյն ընթացից. Ճանապարհ կենաց, որ առաջնորդես քաղցրութեամբ զհետեւս ի յայգ վերին. Ձեռնկալու մեծ փառաւորութեան, որ ոչ թողացուցանես զայթագդելս ի վայր կործանել. յաւայ կենարարն, [6] Հզօրին առ հաւատչէն աղաչողաց մատանց յայտնի երեւեալ. ապաւինութիւն հանդստեան, որ ոչ երբէք մնաներ վարանգի զատապարտութեան. Ազատութիւն ճորտածնի, որ տաս լծակեց առանց փախստութեան փրկանաց. առատութիւն անխափանելի, որ քոյին փառաւորութեամբ զանարգ նիւթ հոգւոյ ձե-

խաչուցանես։ Պայծառութիւն անստուեր, որ ճառա-գայթիւք աշխեղ բարձրութեան պարածածկեալ զթ-շուառ՝ կրկին բարգաւաճ առնես։ Բանիւ մեղանաց բազմաց, որ զհեղեղեալս ՚ի փրկութենէ առաջնոյն պայ-ծառութեանն նորոգեալ՝ վերստին փայլեցուցանես։ Հնարաւոր դիւրահաս [7] առ ամենայն մարդ, գերամ-բարձութիւն յաւէտ յառաջեալ, և փառաւորութեան առ խոստացելոյն փայլեալ. երանութիւն անձկալի, [8] յոր զկենդանութիւն շնչոյս կցանես է ախորժելի, զի զբեղ զանց՝ կենդանի։ Կամք անփոփոխագրելի առ ՚ի բաւութի գերագոյն զօրացեալ ամենագովելի. անախտելի գեղ կե-նաց, որ և մեռելոց բնութիւն եղծելոց առնես զերանե-լիս։ Ամենատեսդ անքննելի, որ զհուրբ կիզեալս և զհողմոյ հանեալս և զմանեալ գաղափար ծախեալս ՚ի քթթել ական [9] նախին հիւթականութեանն անդա-կաս յարուցանես։ [10] Անհասանելի համարձակութիւն, յորում՝ ամենօրէն պանծանաց պարծելն է խրախուսի։

Դ. Հայեաց, Տէր, յերկնից զուարթ քաղցրութեամբ յամենակարծան փառաց նեղելոյս, և որս անզօր հան-գստական զիւրաւոր ՚ի բազմատարփառս հեծութեան. Դու զյարուցեալ զամպս սառնակալոյն, եթէ ապառա-ժենք այսական զմնեալ հնարաւորութէ [11] բաւ ան մար-տակցաց պատերազմեալ զինուք, եթէ մեղաց ազեղ և քա-ռակի կերպարանք, եթէ ցուրտ և սառից վտանգք և հրատական նշմարանք, մերժեսցես հանցես հատցես խափանեսցես և հալածեսցես հեռի առ ՚ի սահմանաց ՚ի սոյն տարագրեալ անդարձ դաշինք վերստին կարասեան. և կառուցես կապուցես նորատուկ կենաց և անմահ սա-հարձան վիշան խաչիվ տարածեալս ՚ի քեզ՝ փրկութի։ Դու յայտ [12] անզօրս և անզգաստս և անվնասելի ա-բանեանց աշխարհից մեծութեան լուծցեն որդայթքն զաղանածածուկ սատանայականք, կապեսցին մերե-նայքն, փակեսցին գայթակղութիւնք, խայտառակես-ցին հաղորդն զղութիւնք, յայտնեսցին երևոյթք որ-սոյն, գացին նենգողին ծուղակք, վերասցին փորձին վե-րարկուք, տաշրեսցին որոմնոյն բոյսք, նզովեսցին բռ-նաւորին չարաքանութիւնք, կորեսցի լար խաբէութե ՚ի մահ որսողին, պարտեսցին պատերազմին բանսարկու-թիւնք, պակասեսցին զէնք զրպարտողին, անկցին ստ-

նեղք մահաբերին , սուզեցին սալրոլն պատրաստու-
թիւնք , արձակեցին տոռունք տագնապողին ։ [13] Բա-
ըալեցին սուտ կերպարանք կեղծաւորին , սատակեցին
խրոխտականացն խիստ յարձակմունք , ցրուեցին կոր-
ղութիւնք կերչացն , բաժանեցին ազինք ուղղակացն ,
քայքայեցին բայլք բարբարոսացն , քանդեցին ամրոցք
ապստամբողացն , արգելցին ամպրոպք յանդգնելոյն ,
փարատեցին փորձողին անձրեւք . հալեցի և ցամաքեց-
ցի եղեամն ազանդաւորին ։ Խորտակեցի եղջիւր գառ-
զին , մանրեցին [14] ամբառնալիք գլխոյն կերպարանաց ,
փշրեցին ամբարհաւանութիւնք հպարտացելոյն , նա-
հանջեցին գխեցմունք ձախատելոյն , քակեցին մա-
քառութիւնք զօրացն Բելիարայ՝ թէ անմարմինք և ե-
թէ մարմնաւորք , փախիցեն ընդ նոյն ձանապարհ 'ի մի-
շուզայ հետոյ [15] յեօթն տարակոյս . 'ի զուրն խնձ փո-
րեալ նիրեանք ընկճեցին ։ Յեղանակեցին [16] ձմերունք
ձանձրացուցչին , հասցի կայն կցորդութեան մշտաջան
ուսումնին , նողկացի մոայս կայից հանգիր շուպար-
թին , ընդ միջեալ մեկնեցին նեռաձգութիւնք նեղչին ,
կացցէ 'ի սասանման նաւ խարգախողին , խլեցին յար-
մատոց անտի սատանմունք խածանողին ։

Դ. Այսոն փայտից որհնութեան կենաց՝ յորում
պլկեցար՝ ամեն անսկզբնելի , յիշատակու բեեռացդ՝ ո-
րով 'ի գործի մահուն մածուցար արարիչդ երկնի և երկ-
րի , արեամբդ անբռնականու՝ որով [17] գլխաւորեցա մեծ
կարթիւ ածեալ որսացար , լերոյն գանձութեամբ՝ զոր
ոլոեալ [18] զզեղջատուութի կորուսին արտաքս հեղեր , [19]
պատմութեամբ ըղձական ձեռխս կրիցն սարսա-
փելեաց՝ որով զլրութիւն հակառակողին ընկերանեալ
ամաչեցուցեր , անուամբդ անհասականու անհնարին
անթարգմանելույդ՝ յորմէ զօրան և զապապարտին առ-
կացեալ սատանել սարսափմամբ ընութիւնք անմնայն [20]
երևութից և աներևութից , եղիցին [21] այս ամենայն
պարգեւք չարչաց խոստովանելոյս 'ի պաշտպանութիւն ,
'ի բժշկութիւն և 'ի քաւութի ։ Այս մահաբեր [22] զա-
նաթոյն օձին , և որ 'ի նմա աղդեցոյ ախեղերալու չա-
րութիւն , 'ի սատակումն եղիցի նորին . նոյն ճիւղն 'ի
կորուստ և յանբժշկական հարուած սանդարամետ տափա-
մաննեցի , կապեցի և ընկճեցի ։ Եղիցի արդարութի

ստեղծողիդ ընդ իս, և չունչ ոգւոյս իմ՝ ընդ քեզ անբաժանօրէն կապաւ միացեալ 'ի մի ։

Է. Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի մաղթանաց գովման աղօթից հայցման [23] ծերոց և տղայոց, կանի և երիտասարդի, և եթէ յաղախնաց որ պաղատեսցի ա̃ծօրհնաբար, հաստատապէս անպաշաութեամբ ընկալցին 'ի քէն մաւն երանութեան պարգեւաց ազատութեան, հասեալ վերստին յանարատութիւն նորոգ մաքրութեան, [24] նկարեալ դարձեալ զքոյդ կերպարան անփոփոխելի ։ Եհա մաքրապէս հնարաւոր, զօրեղ, անպատում, անհաս, անխախտալի, [25] անեղէս ատառնոր 'ի հաւասարս կողկողանաց այսր հեծութեան, որ 'ի բոլորից չըմաց ընծայեալ քեզ մատուցանի, վասն հօր քո երկնաւորի և բարերարի, և հոգւոյդ սրբոյ փառակցի և կենդանատուի, ամենեցուն բարեխօսութբ և խնդրուածովք ամենայն սրբոց ։ Զի դու առեղծեր զամենայն, և 'ի քէն եղեն ամենայնք, և դու տէրես ամենայնի. և քեզ փառք յամենեցունց, միշտ յնկութենէ անժամանակ Երրորդութեանդ, զուգակցապէս փառաւորեալ յանբաւս, և յաւիտենից յաւիտեանս . ամէն ։

---

1 Փոխարինիչ կարեաց ։ Բնական կարեաց մարմնոյ՝ այսինքն քաղցու, ծարաւոյ, քնոյ, խոնջման, և այլն, փոխարինիչ, կամ զարմանիչ. վասն զի կամ արգելու զայնս, որպէս արար առ բազումս 'ի սրբոց, որք անկերակուր և անջուր կային, անքուն պահելով, անխոնջ աշխատելով. և այլն. և կամ բնական զարմանօքն բառնայ զայնս. զի զկերակուր կարգեաց 'ի դեղ քաղցու, սոյնպէս և յայլսն ։ Կարգաւորիչ կրից. այսինքն բնական կրից հոգւոյն, սիրոյ և ատելութե, ցանկութե և փախստեան, յուսոյ և յուսահատութե, և այլն. զորս ա̃ծ կարգեաց 'ի բնութեա, և ինքն ուղղէ 'ի բարւոքն կիրառութիւն ։ Սանձարկու լեզուի. զաղող լեզուի. ոչ միայն պատուիրանօքն արգելլով զանպիտան խօսս, այլ և բնական կազմութեամբն, փակելով զլեզուն ատամամբք և շրթամբք ։

2 Շրջապարփակիչ շնչոյ ։ Շուրջ բոլորեալ կամ արգելիչ շնչոյ. զի 'ի ձեռին նորա է շունչ ամենայն կենդանեաց ։ Կամ, յարմարող և ամբարձակող շնչոյ. զի յամենայն կողմանց շուրջ փակեաց զթոքսն, որպէս զի զ'ի ներքս առեալ օդն՝ անդրէն արտաքս շնչեսցէ ։ Խօսեցուցիչ հաղորդի. ընծայեցիչ հաղորդի կամ ձայնի. կամ, արարող հաղորդին, այսինքն ձայնի ընծայողին. զոր աձնայն և փողք լեզուաւն յարմարեալ 'ի յօդել զձայնս և զբարբառս ։ Նոյնքն խմսակ երկուց բանից՝ առաւել համեմատ են այլոց նախընթացոց և հետևորդ բանիցն ։

3 Ամփոփիչ խորհրդոց ։ Ամփոփող և ամբարող խորհրդոց մտաց. կամ բառ որում յարմարեաց զխելապատակն, յոր մտածութիւնք ժողովին ։

կրթարան կամաց. հրահանգիչ կամ վարժիչ կամաց յուղից ախորժմանս։ Արեգակնաշողեալ յարգանաց. խափանիչ խաւարութեանց օդոյ, կամ հոգւոյ։ Որ ունիս շնորհաց անընդհատ. Թեւովքն իմանի զեկն, այլ և Թև Թռչնոց. և այլաբանութիւն՝ երագութիւն մտաց և տէրութիւն կամաց, որովք անձնիշխանական մեր յամենայն իրս ձգի։ Զայսոսիկ, ասէ, ունիս և ըմբռնես, և առ քեզ դարձուցանես։

4 Հանգչելոյ տեղւոյդ։ Հանգչել այ յանձինս արդարոց ըստ բանի գրոյն, « Ես յո՞ հանգեայց՝ եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս » ( Եսայ. կզ. 2.) լի է արդարև անձամբ հրաշիւք. քանզի որպէս որ ինքն ծայրագոյն երանութիւն է՝ յայլ ինչ հանգչելոյ ախորժարար. և եթէ յանձինս արդարս հանգչի ասկս արդարութեան որ 'ի նոսա, զիա՞րդ ոչ առաւել յինքեան հանգչելոյ՝ քան թէ 'ի նոսա. իսկ և յիւրմէ գոլով նոցայն արդարութիւն։ Այսպէս աշա հրաշալի է արդարև հանգչել այ յայլս։ Նոյնպէս զքանչելի և այն, զի Թագաւոր գոլով էից համայնից, բոլոր արարածոց, տիրող ամենիշխան, տակաւին է ծառայելով, արգեամբք վկայեալ Ամենայնի Տեառն, որպէս եթէ հայր միայն է՝ լի գըթովք, առ ամենեսին ողորմած։

5 Նախասիրիչ տեսչին։ Առաջին ծնող և առաջնորդ սիրոյ ըստ ներգործութեան՝ եղև ած, ըստ որում յանբաւ սիրոյ բարութեանն իւրոյ շարժեալ, նախ ինքն սիրեաց զամենայն արարածս, հաղորդեալ նոցա զբնական բարիս. և նախ ինքն սիրեաց զբանական արարածս, հաղորդեալ նոցա զգերբնական բարիս։ Այլ և ըստ պատուիրանին՝ առաջին օրէնսդիր սիրոյ եղև ած, աւանդեալ զայն 'ի բնական օրէնսն, 'ի գրաւորականն և յաւետարանականն, յորում Նոր և Նոր պատուիրան կոչեաց զն (յովհան. ժգ. 34. ժե. 12։) Դարձեալ, ըստ վախճանին և ըստ առարկային՝ առաջին եղերիչ սիրոյ՝ ած է. զի ամենայն ինչ սիրելի է իբրև բարի. և բարութիւն նոցա է հաղորդութիւն ինչ բարութեան այ. ուստի յամենայն իրս՝ գլխաւոր սիրեցեալն է բարութիւն ածային, յայտնի՝ կամ լռելեայն, որպէս իմաստասիրէ սուրբն Թովմաս ագուինացի (ա. մ. խն. Ը. այր. ա։ և խնդ. իբ. յաղագս Ճշմարտ. այր. բ։) Ի վերայ ամենայնի այսոցիկ՝ Նախասիրիչ է ած սիրոյն ընԹացից, առաջնորդ և նախօրինակ Թէ որպէս պարտ է սիրել զած և զընկերս, Ճշմարտիւ, սրտիւ, հաստատուն, ոչ 'ի շահ անձին, ոչ առժամանակ մի, ոչ ըստ ամանեաց. որով ած ոչ միայն է օրինագիր և վախճան սիրոյ, այլ և գաղափար։ Զայն ինքնին ասէր զն, եթէ սիրեսջիք զմիմեանս, որպէս և ես զձեզ սիրեցի (յոհ. ժե. 12.) և սիրոյն աշակերտն երկրորդէ յառաջին կաԹուղիկէն (դ. 11.) « ԵԹէ ած այսպէս սիրեաց զմեզ, ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրել » ։

6 Ճշմարիտ առաջնորդողի։ Դու ես պատկեր կամ ցոյց յուսոյ՝ ըստոյգ խոստմամբ, կամ փորձիւ զանազան ողորմութեանց, առաջնորդ հաւատոց (մի օրին. առաջնորդ հաւատոց.) աղաչող անձանց յայտնի երևեալ։ Առանոր՝ Հոգի խելամտութեան ձևով փոխանակ բոլոր մարդոյ գնի։

7 Ամենայն անբաւ։ Դու հնարող ես դիւրաւ կամ անաշխատ՝ առ ամենայն անկարելի կամ անչափ բարձրութիւն ժամանող։

8 Ցոյց զինեցանութեան ընդհայ։ այլ օրին. որ. և մարթ է իմանալ՝ որով կամ երբ շաղկապ՝ մինչ զի. այսինքն այնչափ ցանկալի երանութիւն ես, մինչ զի ախորժելի է Թողուլ զկենդանութիւն՝ բնական մահուամբ, կամ բարոյական մահուամբ, ապաստանելով զմարմնոյ ախորժակս։

9 Ներքին հեթանոսութեան։ Ներքին կազմուածով մարմնոյ։ Այլ նաև վկայեալ ես և խոստովանեալ առանց երկբայելոյ՝ թէ դու ինքն ես ամենայնի ստեղծիչ, զի զմարմինս մարդկան զծախեալսն հրով, զման-

բնալս 'ի փոշի և հասեալս հողմով, կամ զկերեալսն 'ի գազանաց. զու-գայնակսի մարմնոյ 'ի միում վայրկենի կենդանացուցանելու ամբողջ զկա-բաղադրութիւն ըստ առաջին ձևոյ՝ նովին բաղադրութեամբ ։ Այսպիսի կեն-դանագործութիւն ոչինչ պակաս է յարարչագործութենէ ։

10 [illegible] : Դու անմնման ասպարէզն ես՝ համար-ձակելի ամենեցուն, յոր [illegible] [illegible], այսինքն յոր իբրև յամ-պարծելն՝ խրատեցի կամ արդար է ։ Անիրաւ է պարծել 'ի մարդ կամ յայլ արարած. այլ որ պարծելն կամի, 'ի տէր պարծեսցի՝ ըստ գրոց ։

11 [illegible] [illegible] : Զօրեղ պատերազմողաց, [illegible] [illegible], պատերազմելոց զինուք ։ Զժողովս ստուերս չնաւակողացն՝ որք յառ-նիցեն 'ի վերայ իմ, թէ իցեն զինուորն գունդք զօրեղ պատերազմողաց՝ ամրացելոց զինուք չարութեան, թէ իցեն զանազան ախտք զարշելի մե-ղաց, և թէ իցեն կործանիչ ցաւք և հարուածք մարմնականք. զամե-նայն մերժեսցես. և հեռացուսցես [illegible] [illegible], առանց վերաւոր-գանելոյ նոցա 'ի կործանել զիս. կամ, զզեան տարագրեսցես ան-դարձ հեռացմամբ յերկրորդ կորուստ խորխորդ. որպէս միանգամ կո-րուսեր զնոսա յարդարացուցանելն զիս ։ Եւ ընդդէմ սոցա կացուսցես ինձ զնշան խաչին իբրև անուր [illegible], մարտկոց կամ աշտարակ պա-տերազմի ։

12 [illegible] : Անյաղթելի, կամ անպարտական, և [illegible], անմեն-գելի կամ ճշմարիտ, [illegible], կրից չարչարանաց, կամ զօրութեան ։ Զփրկագործ անարժանութեան քոյ կոչէ [illegible], իբրև հնարս անճառ իմաստութեան այ, թէ որպէս հակառակօք զհակառակսն ներգործեաց. իբրև պարտաւոր երևեալ, բայց անմնայնիւ [illegible]. իբրև տկար, այլ [illegible]. իբրև մեռեալ, այլ [illegible] ։ Այսա յայսմ անյաղթ կամ յան-պարտական և 'ի ճշմարիտ չարչարանաց աւհաւորից քոյ՝ ընծայեն գաղա-նի որոգայթք սատանայի, և այլն ։ Յայտնեսցեն [illegible] [illegible], համբա-մանք որսանայն, կամ կազմութիւն թակարդեն. բարձցեն [illegible] [illegible], ծածկոյթք վարմին ։

13 [illegible] : Յայտնեսցեն, երևեսցեն ըստ բուն կերպարանին սուտ զեղքն կեղծաւորին սատանայի. ցրուեսցեն [illegible] [illegible]. միաբանութիւնք կերչացն կամ յափշտակողաց ։ [illegible] [illegible], ժո-ղովք աւազակաց ։

14 [illegible] [illegible] : Զուգ նշանաց գրօշակացն սատանայի՝ մատ-նեսցեն, խորտակեսցեն ։

15 [illegible] [illegible] : Ընդ նոյն ճանապարհ՝ ընդ որ յարձակեցան 'ի վերայ իմ, փախիցեն 'ի մի հետոց յեօթն կամ 'ի բազում բաժանեալ ճանապարհս. որով խմանի, ցիր և ցան փախիցեն ։

16 [illegible] [illegible] : Փախեսցեն 'ի ջերմութիւն ցրտացուցիչ փորձութիւնք գիւին, որովք ջանայ ձանձրացուցանել զմեզ. [illegible] [illegible]. կայծն՝ որով ընդ խիղճս կամ առ խիղճն արգելեալ ունի զիս, հարեսցի ։ [illegible], գարշելի և զզուելի լեզի [illegible] [illegible] ։ Ճակատու՝ յորում կայ ուղեղն՝ տեղի խորհրդոց, [illegible] խորհուրդեան գիւին. [illegible], արգելեալ կամ նահանջեալ հեռասցին վշտացուցիչ փոր-ձութիւնք նորա ։

17 [illegible] [illegible] : Զսատանայ արկանիք իբրև կարթիւ ըմբռնեալ որսացար, ըստ բանին Յոբայ (Կ. 8 ։ Խ. 20 ։)

18 [illegible] (4 օրին. [illegible] ։) Զմահաբեր, կամ զկախարդական գեղ սատանայի արտաքս հանէր ։

19 [illegible] : Քարոզութիւն և լսողութեամբ ըղձալի ճառից տարաժիկելի չարչարանաց քոց ։

20 Երկնաւորաց և երկրաւորաց։ Երևելեաց և աներևութից բնութեանց գողան յանուանէ քումմէ, ըստ բանին. «Յանուն յիսուսի ամենայն ծունր կրկնեսցի» և այլն (փիլիպ. Բ. 10։) Ի վերայ հրեշտակաց՝ գոլով յինչ միտս իմանալի է, տեսցուք 'ի բանն ՀԹ. լուծ. 17. իսկ [illegible] ասելն՝ իմանի 'ի վերայ չար հրեշտակացն դիւաց։

21 Այս ամենայն դողդոջէ։ Վասն որոյ խաչիդ, տէր, և յիշատակաւ սուրբ բևեռացդ, և այլովք մասամբք չարչարանացդ, այն ամենայն շնորհք՝ զոր հայցեսցի վասն կործանման սատանայի և պատրանաց նորա, [illegible] ինձ 'ի պաշտպանութի, և այլն։ Այսպէս ձևանայ կարգու թիւն բանիս՝ եթէ դողդոջէ բառիւն իմասցուք զհայցեալ ազատութեան 'ի բռնութենէ սատանայի. բայց եթէ դողդոջէ իմանամք զմասունս չարչարանաց փրկչին՝ զոր նախ կարգէ, ըստ այսմ ոչ պատշաճ լինի յարմարումն բանին ասել, թէ վասն որոյ խաչիդ և յիշատակաւ բևեռացդ, և այլն, [illegible] այս ամենայն դողդոջէ ինձ 'ի պաշտպանութիւն, և այլն։ Այլ պարտ էր զակիզբն բանին՝ [illegible] մինչև 'ի բայն [illegible]՝ յարել յանգեալ բանին, իբր ասել. խոցոտեսցին, մանրեսցին, քակտեսցին, փախիցեն, յաղթահարեսցին, և այլն, վասն փայտիդ օրհնութեան, և յիշատակաւ բևեռացդ, և այլն։ Իսկ բայն [illegible]՝ լինի առանձին պարբերութիւն սկսանելի զատ առան գլխով, որպէս դնէ և օրինակ ինչ։

22 [illegible]։ Պարգևք շնորհաց չարչարանացդ՝ որք ինձ 'ի բժշկութի լինին, եղիցին 'ի սատակումն դառնաթոյն օձին. այլ և [illegible], այսինքն սատանայի՝ որ 'ի նմա 'ի նոյն օձն ապգեաց զանխղերացու կամ զաշխարհաւեր չարութիւնն։ [illegible] սատանայ 'ի կորուստ մատնեսցի [illegible], զօրութեամբ չարչարանացդ։

23 Ծերոյ և տղայոյ։ Այս սեռական անուանք հայցին 'ի մասնական անունն [illegible]. զի երբեմն 'ի սեռական հոլով դնի բացառական խնդիր այսպիսի մասնական անուանց, և իմանի ասել. որ ոք 'ի ծերոց և 'ի տղայոց, 'ի կուսից և յերիտասարդաց ընթերցցի զայս աղերս, և այլն. բայց այլ օրինակ այսպէս զատանէ կնիք, [illegible], իբրև թէ որ ոք ընթեռնուցու զաղերսական գիրս աղօթից՝ պատշաճելոց ծերոց և տղայոց. ընկալցին 'ի քէն մասն [illegible]։ 2 օրին. [illegible]։

24 [illegible]։ Վերստին նկարելով 'ի հոգիս իւրեանց զքոյդ կերպարան շնորհաց՝ որ 'ի քեզ անփոփոխելի է. կամ, [illegible] իբր մեղաց խնդրելով, նկարեալ առանց փոփոխութեան՝ հաստատապէս զքոյդ նմանութիւն։

25 [illegible]։ Հայեսցիս 'ի հառաչանս զղջման բանիս՝ որ 'ի բերանոյ ամենեցուն ընծայի քեզ, [illegible], վասն սիրոյդ առ հայրդ երկնաւոր։ [illegible]։ Այժմ իսկ թախանձեմ զքո գթութիւնդ՝ ողորմել ամենեցունց կատարողաց զաղօթս զայսոսիկ, վասն զի զամենեսին դու արարեր յոչնչէ. և [illegible], ամենայն ինչ որ 'ի մարդանմ և կամ յայլս՝ 'ի քէն եղեն՝ բնականք և գերբնականք. եթէ գործիցեն ինչ այլքն ևս արարածոց, սակայն 'ի քէն ներգործեն՝ և ոչ առանց քո. այսորիկ աղագաւ դու ափրես ամենայն իբրև քում ստացուածոյ. դու պահպանես զամենայն. և առ քեզ դարձուցանես զամենայն. և բոլոր իրաւամբք քեզ վայել են փառք [illegible]. ով որդի այ [illegible], յաւիտեան [illegible] սուրբ երրորդութեանդ։

# ԲԱՆ ԻՆՆՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր տէր գթութեանց եւ ա̃ծ ողորմութեանց, անուն մեծութե̃, ձայն ահաւորութեան, կոչումն սաստկութեան, լուր անհասութեան, բարբառ զօրութեան, հնչումն հիացման, յուսադրութիւն բարերարութեան ամենողորմ քաղցրութեան. յորմէ երկուցեալ սատանայն ամենայն բնութիւնք եղելոց [1] 'ի քո սպառնալեաց ահիդ պակուցման, սուսանին սէրոբէք, ամփոփին քերոբէք, պատուրին պարք լուսակերպիցն, երկնչին հիացմամբ բոլոր պետութիւնք վերնոցն, նոյնք ցնծան զօրութեամբ մեծաւ 'ի մի՛նաւակատիս բերկրութեան, զարհուրին դեք, ընկրկին չարութեանցն գունդք, պակասին խաւարասիրացն հոգիք, անդնդոց մանին [2] հրեշտակք օտարին: Կայլին նշանաւ խաչին յարձակմունք դիմամարտին, փակին 'ի սորին բանալի [3] քինաւոր ամաղեկացիքն, անխզելի հանգուցիւք պաշարին խումբք հաւաքակորդին, [4] արգելլին անզերծ զընդանաւ՝ մահաղինացն կաճառք, պնդին 'ի մետաղս ահեղ հրամանիդ [5] այսակմանայն գումարք, պապանձին կարկեալ ընդդիմաբանիցն դասակցութիւնք, պարուանդին հիւծմամբ կորստեան աներեւութիցն ժողովք, անլոյծ շղթայիւք նեղին [6] սատաբելութիւնք Վերաքրիստոսին:

Բ. Ահա կարկառեմ մատամբք ձեռինս զտէառնագրութիւն նշանիդ 'ի ժամ գիշերիս, որ ոչ մթանաս խաւարաւ անգիտութեան, ամենեւին անսահմանութի, քան թէ 'ի լոյս անմատոյց հանգուցեալ բնակես: Ընկալ զաղաչողս վստահանաւոր գոհաբան ընդ պահպանութեամբ թեւոց հզօրիդ, փրկեա 'ի ցնորից եկամուտ պղծութեանց, սուրբ արա զզգայարան հայելեաց սրտիս նկատմանց, ամրացո փայտիւդ կենաց 'ի տխրական անըրջոց, արեամբ քո սրսկեա [7] զշրջարկութի̃ս կայից, ըղ-

հետս եղումոյն կաթուածով կենարար կողից գծագրեա, [8] երրորդն պահպանարան քառակերպից ձեռակերպութիւն եղիցի, հանդէպ տեսութեան աչացս ամբարձման փրկականդ քո կրից խորհուրդ ասղիցի, [9] ընդ բարաւոր յարկիս չարչարանաց քոց գործի հաստիցի, զծառոյդ օրհնութեան հաւատք յուսոյ իմոյ կախեսցի ։ Արգել, տէր, սովաւ զատակիչն հոգւոյ, մոցէ անխափան պաշտպանն լուսոյ, և [10] ընդ սաստիկ ծանրութեան ցաւոցս և զբեռն պարտեացս թեթևացո, զոր 'ի լաւանի մնացս ամփոփման մահձացս անկողնի ուշաբերեալ ըղ-յուսահատութեանցն դառն պտղոյն՝ խոստովանիմ ամենապղծիդ զանհամար մասունս գործոց չարաչար անօրէնութեանցս ։

Գ. Հանգո զվաստակեալս [11] 'ի բազմածուփս աշխատութենէ, բարձ զտագնապ տարակուսանաց ոգւոյս կործանման, [12] զդառնութիւնն ընդ վշտացն, զհեծութիւն ընդ կարեացն, զանձկութիւնն ընդ թշուառութեանցն, զհառաչմունսն ընդ խորտակմանցն, զեկութիւնսն ընդ տաղտութեանցն, զթմբրութիւնսն ընդ շրտմանցն, զարբեցութիւնն ընդ յիմարութեանցն, զթերամտութիւն ընդ խելագարութեանցն, զասումն սիրոյն և զհրային ջերմութիւն աղուական ախտին ։ Օժանդակ լեր տկարութեան բազմախոհս տարտամութեան, բարեգործ աջովդ շնորհի, [13] ձեռամբդ նորոգողի, մատամբդ կենսաբաշխի, փառօքդ միտախայլի, յարակայութեամբ անեղծի, երեսօքդ զուարթականի, խնկութեամբ էիդ պաշտելի, բարձրութեամբդ երկրպագելի ։ [14] Հատո զչարաչար հեծութիւն կորստականս խեղդման, զնոր գիւտ չարին, զհին խարդախութիւն բանսարկուին, զօտար աղդեցմունս 'ի մահ կրթողին, զանյարմարական երևոյթս հանապազորդեան եղեռնագործին, զառ աչս հնարագրութիւնն դժնդակ դիւին, զողոքական բոցաշնչութիւն ձգող կախարդին ։ Պահեա 'ի տեղւոջ հանգստեան մեռօրինակ այսր դադարման [15] յաներևոյթ մտածութեանց, 'ի մանկաւոր սխալութեանց, 'ի մեծագոյն գայթագղութեանց, 'ի փոքրագոյն ստնասութեանց, 'ի խաբեբայչար ձանձրութեանց ։ Հեռացո [16] զանհանդէպ մտածութիւնն 'ի պգծութեանց ծառայիս յանցաւորի, [17] զխիղս արկելս, զվարս թշնամանելս, զգխպուածս պատկա-

ունելով, զհետս վրիպելով, զպատիրս ձաղելով, զխոր-
հուրդս անգանելով, զաւելորդութիւնս նշկահելով ։
Նախատ հոգւով և անշաղախ մարմնով զապաւինեալս
'ի քեզ հանդերձեա, 'ի չնչմանէ հողմոց, [18] 'ի զարկմա-
նէ բռնութեանց, 'ի բախմանէ փոթորկաց, 'ի յառնմա-
նէ մրրկաց. 'ի յարձակմանէ գազանաց ։ Ի կախման ա-
չացս հայեցուած սրտիս մի տատանեսցի, այլ զուար-
թասցի պայծառասցի վայելչասցի՝ ընդ քեզ փայլեսցի,
տէր Յս Քս, լուսաւոր վառմամբ անշիջանելեաւ ։ Նա-
նիւ քո սրբեա [19] զպատսպարանս բազմականիս 'ի խորա-
մանկութեանց, 'ի զբաղմանց, 'ի քո առել յիշատա-
կաց, 'ի վերնամարտ մտածմանց, 'ի քրէական մրրու-
թեանց, 'ի տխրանենգ անհնարհութեանց, յաստուած-
ընդդէմ հերձուածութեանց ։ Վնդիւք վերնայնոցդ վե-
րակացու խնամ լիցիս, պետութեամբք իշխանութեամբք [20]
զօրաւորօքն անյաղթականաց մատակարարաց
սուրբ ածութեանդ . [21] առաքեալքն աւետեաց աւետա-
րանաւն, մարգարէքն կտակարանօքն, մաղթանք երջան-
կացն 'ի կատարածի աւուրն ընծայեալ ։ Որովք նորհե-
ցիս [22] երկիւղիւ ըստ քեզ սրտմութեամբ, և զարթեայց
շնորհօք քո կրկին ուրախութեամբ . [23] եթէ մհատու-
թք ննջեցից, յարեայց զարձեալ հոգևորական բերկրու-
թեամբ . եթէ ընկողմնեցայց մեղանօք, կանգնեցայց
վերստին զատեալ 'ի խղճէ անաղտ անբծութեամբ ։

Դ. . Տուր խնդրուածոց ամենահառաչ ձայնիս հեծու-
թեան, միայն բազմագութ, բարեխօսութեամբ սրբոյ
ածածնիդ և ամենայն արդարոց և նահատակաց ընտ-
րելոց ։ Եւ քեզ փառք յամենեցունց խմբիւ գոչմամբ
վերառաքեցեալ [24] սրբովք զուարթնոցն անմահականաց
դասուց, 'ի գովեստ հօր քոյ այ մերոյ և հոգւոյդ սրբոյ
բնաւից հաստողի և նորոգողի, յաւիտեանս յաւիտե-
նից . ամէն ։

---

1 Ի [illegible] ։ Ի քո աւհաւոր ապաւինեալ եցդ 'ի վերայ յանցա-ւորաց՝ [illegible], զթեա յածեցուցանեն սերովբէք 'ի նշանակ երկի-ւղի և պատկառանաց ։ [illegible] որք յահաւորութէ քումմէ երկնչին, ընծայեն պատկառանօք 'ի [illegible], 'ի մի տօնախմբութիւն դասուց խոբեանց ընդ արդարոցն 'ի մարդկանէ ։ Յետ ասելոյն 'ի սկզբան աղօ-թիցս թէ անուն և կոչումն այ է աւհաւոր, սարսափելի, և միանգա-

մայն քաղցր 'ի յոյս բարեաց, երբև զի ընդ անհաս մեծութեն յայտ առնէ և զնախախնամականն զօրութի, 'ի կարգ արկանէ ապա զներգործութիւն որ յառաջածս ազգին 'ի մեծութէ նորա. զի ընդհանուր ամենայն բնութիւք սասանին, առէ, յահէ նորա. հոգեղէնքն գերամաքուրք՝ և սարսափին պատկառանօք, և ցնծան ընդ փառս նորա անհնապատրաստ հպատակութի: Իսկ ոգիքն չարք՝ ապստամբք, զօրս այլ և այլ անուամբք շարխշար կարգէ զնի, սարսափին միայն յանուանէն այ, աանջին և անյոյս պատուհասին:

2 Հրեշտակն օտարին: Դևքն՝ որք են հրեշտակք սատանայի՝ օտարացելոյն յայ:

3 Թշնամւոյ ամաղեկացւոյն: Ամաղեկացիքն, կամ որք քինու և վրէժխնդրութեամբն այ պահեալ էին (Եզեկ. ԺԷ. 14:)

4 Աւրհնելին. այսինքն արգելանին. 2 օրին. օրհնելոյն: ըմբռնելին յանձերծ բանտ ճահաղինաց խաւարի, խուժբք ամբոխայն զմահաբեր զէնս, կամ զենելոյն 'ի մեռուցանել:

5 Այսահարացն. այսինքն այսոցն կամ զեւաց զուամբք՝ կապեալն 'ի մեղաց, յարգելանս ահեղ հրամանիդ:

6 Առաքելութեան զօրաւորութեանն: Հրեշտակք սատանայի, որ է ստոր քո:

7 Զարհուրելի կայծակ: Զծմմ կողմանս կամ զօրմուննս կայարանիս:

8 Երգոցն: Տանեաց անձնեկիս՝ պահպանիչ լեցի ձև խաչիդ:

9 Ըստ բարբառոյ: Ի սկզբն անձնեկիս գործիք չարչարանաց հաստատեսցին: Ըստ պայմանաց. զխաչեդ կախեսցի յուսալից հաւատք իմ: Այլափոխ հայցմամբ ազգ առնէ երանելիս, թէ 'ի մնւսս գլխերոյն ոլորոյ է քրիստանէին յիշատակաւ չարչարանաց փրկչին ամրանալ և մտանել յանկողին. քանզի այս ոչ միայն 'ի պահպանութիւն լինելի ընդդէմ գիշերային արկածից, այլ և 'ի ցերեկի տայցէ զուարթուն ունել զմիտս 'ի յիշատակ փրկագործ խորհրդոյն քոյ:

10 Ըստ առաջին: Դուցէ յաւս ինչ մարմնոյ կրէր երանելիս, զոր աղաչէ թեթևացուցանել հանդերձ բնաւմբ մեղացն. զի կարասցէ զչափաւոր քնոյն պէտս վճարել: Որ 'ի նուաղն. զոր յանկողինս՝ որ է անզրաղ անզի հանգստութե մտացս, նուաճելով յիշատակելով զցաւն պարզոյն յուսահատութեանց, և այլն:

11 Ի բազմաժամանակ անկանութենէ: Ոչ հայցէ հանգչել յաչխատութէ աղօթական բանից, զի այն անխոնջելի էր նմա. այլ յաչխատութենէ խառնութեանց հոգւոյն, կամ 'ի տանջնայնին զբաղմանց:

12 Զտառապանութեան մաղձին, ըստ հրաշից հոգւոյն: Զդժնդակութեան 'ի վերայ անցեալ մեղացն. ըստ խորհրդոյն ցանկութեց՝ որք դարձեալ 'ի մեղս գրգռեն: Զաղտեղութեան, զնեղութե սրտին, ըստ նեղութեանց, ձախող պատահարացն, որք տանել նեղեն զսիրտն: Զհառաչանաց բերանոյն՝ ըստ խորհրդոյն, ստոյգ ախտութեց և լրմանց սրտին: Զթշուառութեան, զթուլութիւն մարմնոյն, ըստ տկարութեան հոգւոյն: Զթմրութեան զգայութեց, ըստ ալեկոծոյն, ընդ յանկարծ երկիւղական ըմբռնմանց աչաց կամ սրտի, որ լինի 'ի քուն՝ կամ յարթնութե: Զդժնդակութեան, զանզգաստութիւնն 'ի գործս, ըստ ծուլացութեանցն, ընդ թիւր գաղափարութեանցն: Զխռովութեան, զանխաղաղութին, ըստ խլրտմանցն, ընդ խեռագար գործոցն կամ բանից: Զաղտն, զպղծութին ծածկին սիրոյն, և զհետևեալ չքմեղութե աղտեղութեանն, հեշտալի ախտին ցանկութեան, որ լինի 'ի քուն:

13 Զխաւարին աղօթից. այսինքն նորոգող ձեռամբդ. այսպէս խնամ և զգեստաւորեն, այսինքն կենդանարար մատամբդ, մշտափայլ փառօքդ.

և այլն․ յորս զածականն յետադաս դնէ 'ի սեռական հոլով իբրև յատ-կացուցիչ, որպէս և առորև ըծ․ 20․ և կամ ուղղական դնէ տառից ինչ համաձայնութեան, կամելով սահել զնման յանգ ի գրոյն։

14 [illegible]։ Հատ կամ բարձ զատանիկ հեծութիւս [illegible], խեղդիչ արամութեա՝ որ 'ի կորուստ յուսահատութէ կարէ արկանել զիս։ [illegible]․ զայս 'ի վերայ խեղդմանն մարթ է իմանալ, զոր 'ի կեր առ սատանայ 'ի մատնիչն յուդաս, և յայլս ևս․ և նոյնն՝ [illegible], 'ի կայեն, յաքիտոփել, և յայլս։ Բայց զայատնիկ մարթ է և յայլ իմաստ առնուլ․ այսինքն [illegible] իմանալով զնորատարած մեղսն, և [illegible]՝ զամօթական մեղս։ [illegible], զհրապոյրս ատարս 'ի բնութէ կամ յօրինաց․ 'ի [illegible], 'ի մահ ձգողին, որպէս ոմանց ազդէր սատանայ՝ 'ի ծով կամ 'ի խորս ընկենուլ զանձն, սովամահ կամ ծարաւամահ լինել, և այլն։ [illegible]․ զհատանիխութն երևակայմունս երկիւ-ղալիս կամ աղաւեղիս, զոր յարթնութէ կամ 'ի քուն ձևացուցանէ, [illegible], զառաջք խարէական տեսիլսն, որպէս պատ-կերս կանանց, գազանաց, հրեշտակի, և այլն։ [illegible]․ զմեղկացուցիչ հրեղէն շունչն, զոր յայտնի կամ ծածուկ խարդախու-թեամբ փչէ սատանայ 'ի տափանս սիրոյ։

15 [illegible]։ Յանգործ կամ 'ի սնոտի մտածութեց՝ որք չերևին 'ի գործ․ կամ յանյայտ մտածութեց՝ որոց ոչ երևի կա-տարածն՝ բարի իցէ արդեօք, կամ չար, 'ի [illegible], յան-սովոր սխալմանց։ 'ի [illegible]․ 'ի մեծ և 'ի ծանր մե-ղաց գլորմանէ։ 'ի [illegible]․ 'ի փոքր կամ յակամայ յանցանաց, և պատահմանց բնութէ՝ որք լինին 'ի քուն, և արգելուն զհամարձակութիւ սիրոյն առ ած յաղօթս, և յայլ սրբազան պաշտա-մունս։ 'ի [illegible], զորս երբեմն բերէ սատանայ 'ի զարթնուլն և յանել 'ի պաշտօն աղօթից։

16 [illegible]։ 2 օրին․ [illegible]։

17 [illegible], այսինքն պարսաւելիս։ [illegible]․ ըղ-պատրանս ծիծաղելիս։ [illegible], զաւելորդ բանս, կամ զանհաւատալի խօսս արհամարհելիս։

18 [illegible]։ Անխտիր հոգւով և մարմնով պահեա զիս 'ի բաղխմանէ չարաց հեղեղաց։ [illegible], յանկարծական ատաֆկ հողմոց (խոյ։) 'ի [illegible], 'ի յանկեալս պատուհաս հողմոց։

19 [illegible]․ զառապատ կամ զծածկայթ անկող-նոյս․ կամ լաւ ևս, զանհեակս՝ ուր բազմիմ, որպէս 'ի [illegible], յա-տուածամարտ [illegible] հպարտութէ, արանջման, զառաղութէ, են։ 'ի [illegible], ընդդէմ ածային մեծվայելչութեն եղեալ յի-մարութեց, որպէս հայհոյութի․ յանդգնութի, և այլն։

20 [illegible]։ Անյաղթելի զօրութեան, կամ զօրու-թեամբք, [illegible]․ մարուր մատակարարք կամ պաշտօ-նէիւք ածութեց։ Զայս ոճ այլուր ևս փորէ սուրբ վարդապետս, 'ի գործիական անուն դայական՝ յարելով զածականն 'ի սեռական հոլով, և կամ ընդ հակառակն․ տես 'ի բանն բ․ լուծ․ 14․ և առա․ ըծ․ 13։

21 [illegible]։ Նատանոր կրկնելի է զօրութք բայն, [illegible] լի-ցին առաքեալքն աւետարանուն, մարգարէքն հին կտակարանացն, ա-ղօթք երջանկացն արդարոց՝ 'ի [illegible], զոր յերեկոյին, կամ 'ի կատարած կենաց իւրեանց ընծայեցին քեզ․ կամ աղօթք մարտիրո-սացն մատուցեալք վասն հաւատացելոց 'ի ժամ նահատակութեանն։ Իսկ առելն, թէ առաքեալք աւետարանուն պահապան լիցին, և մար-

զարեւք կատարածոցն, 'նշանակէ թէ կամ զարբուցան գիրսն զնէր առ մանկունս, և կամ զբանս ինչ 'նոցա խորհելով մտանէր 'ի քուն։

22 Եւ լինէր ... ։ 'Նմնեցից հոգւոց երկնիցս, և ոչ մարմնականաց, ... 'ի վերայ մեռելոց։ Զ բանն ... մարթ է առնուլ 'ի վերայ յանցողին, այսինքն բառ քեզ կամ բառ ոչ արժանաւորութեամբ, որպէս առէ առաքեալն (Բ․ Կորն․ Է․ 9․ 10։)

23 ... ։ Եթէ ննջեցից տխրութեամբ սրտի կամ տարակուսանօք, թէ մի արդեօք անդէն ինչ մնացէ ընդ իս 'ի ժամ քնոյ, յարեայց հոգւոյ ուրախութեամբ՝ անմանելով թէ ոչինչ 'ի կամածելոյն արտաքնոց։ Եթէ ընդհատմանեցայց միայն կամ ամենայնով գիտել, առ ըզծուձն յանկարծ որով կանգնեցայց անուն ... 'ի խաղէ մեղացն։

24 Սրբութեան ... ։ այսինքն հանդերձ սրբովք դասուք զուարթնոցն։ Այս ընդ հակառակն վերագրեալ անձն 'ի ԺԸ․ 20․ զածականն զնէ 'ի գործականն հոլով, և զցոյականն 'ի սեռականն հոլով։

## ԲԱՆ ԻՆՆՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

¹ Ի փայտն երջանիկ բարեբաստութեան ժամանակին խորհրդածութեան․ աղաչանս եղեալ ընդ կերպարանս Թարգմանութեանն։

Ա. Գոհանամ զքէն, բարեգութ, միայն մարդասէր, արարիչ երկնի և երկրի, որդի այ կենդանւոյ, ² այն ինչ զարթուցեալ անձկութեամբ սրտիս քոյ յիշատակի 'ի լռութիւն հնչման փայտից հրաւիրման։ Որով բախեալ ³ զձայնարձակութեանցն զաղաղակաւորն, սթափեցար կանգնեցաք, 'ի վեր յարուցեալ 'ի մեծօրհնաթ թմբրմանէ․ առաւ իրր կոչմամբ սփոփմանց բանի բերեալ ձգեցաք 'ի ժամ պաշտաման օրհնաբանութեան, յանդիման լինել քեզ ուրախութեամբ հանգերձ հաւատացելովս բանի։

Բ. Եւ հա փառք քեզ, անսահման անուն և անբաւանդակելի զօրութիւն, որ այսպիսեաց հնարաւորութիւնք ⁴ ընդ փրկութեան խմել հոգացար․ զօրհնութեամբ անեղծ խնկութիւն, որ կերպարանեցեր ⁵ հրաշիւք առարակին զհանգերձելոյն 'նմանութիւն, հանդարտ զարթեա փայլականաւ փայտի անօթոյ առ քանս անշարժ սաստիկս որոտալեր։ որպէս թէ ընդ ծածկութեան զանգակութիւն զյանդիմանութիւն խրատուց խառնեցեր, 'ի հաղորդն սրբոյ հեղութիւն զաւժ զկութիւն ձայնթման յարեցեր․ ⁶ յընդոստ զարկուած երկաց միջնոր-

գոյ՝ մարգարէրապէս քաղցր անձրևեցեր. ոչ մեղմու-
թեամբ [7] մեղմական վանդիւ ներհմամբ ընկղմեցեր, և
ոչ անխնամաբար ահաւորութեամբ զսաստեալ Հո-
գիս զարհուրեցուցեր. Ծնրադրական երկրպագութիւն
ստեղծելոց բոլորից, որ այժմէն ցուցեր համայն յայտ-
նապէս զօրինակ ահեղ բարբառոյն մեծի աւուրն յա-
րութեան, կենդանացուցեր ՚ի դադարմանէ [8] գժոխա-
կան անբանութենէ, ՚ի խնդիր ելեալ կոչեցեր զալա-
սախոս ՚ի գիտից ուրախութեան. որպէս զայն լինել [9]
Հանդերձից, անպարտ Հարսնին առ սէր փեսայից. եր-
կուցեր փոքր այս խթանաւ [10] զապարասանն զխիթխա-
րութիւն, լուծ սաստիկ կրթութեան սաստկակին ուսոյ
զայս իբր զործեցեր, վարդապետ վանիչ չարախօսին կզա-
կոց եղեալ կազմեցեր. Փառաւորեալ յաւէտ անբաւ
բարձրութիւն մեծից ով, որ փախարկեցեր [11] զխայտին
պարտիս յազատութիւն շնորհից կենաց, խնամացու-
ցեր վերստին զարձեալ զխնամս ցնդեալ Հովուական
Համբերողաց, կարկառ կռձեամբ զանըմբռնութիւն Հա-
րուածոց օձին աւանդ մեռանելոյ մշտաթարգմանեցեր, [12]
ընդ Եղերդութեանց գծագրութիւն զկայն երեքկին
իմ փառաւորեալն ՚ի կատարածին ամբիծ կրկնեցեր.

Գ. Պսակեալ ներբողից բուրմամբ խնկոց վերստա-
քեմ քեզ, ամենախնամ, զի ՚ի սասպատիր կարծն բաղ-
մապատուածութենէ [13] աւանել յանձնապատանիք որսա-
ցար զանձն իմ պարտաւոր ՚ի քո երկրպագութի, խոլոխ
և ահարկու նախրեալ փայլիւս զճշմարտութիւնն քա-
րոզեցեր, մեծացուցեր այսր պատճառաւ պատշաճնկա-
նաւ զնոր ալեսաբանութեանց պատիւ. Այն ինքն ա-
ղաղակ բարձրութեան զօրման սպառազինութեանց քո,
որքայ պետութեանց կայսերաց երկրի առ Քրս. Նշան
խրախութեան աւարտման Համեղխի մարտի քո. Հն,
յորում խմանալին Փարաւոն կայեալ ընկղմեցաւ, կրա-
փիչ Հանապազորդեան գլխոյ զազանթան Հպարտացեալ
չարագործին՝ չերաս այս աաշեցեալ. Սովաւ զամարին
՚ի պատերազմի որդէք Սինի ընդդէմ աշխարհականին
խաւարի. [14] տօն խնն ծնաւանդ կրթութեն կարգեալ
՚ի Հեռաւոր այս դրօշաւոծ իւղեալ՝ աւանդ Հնդկաց և
կամ խափանման, նշանակիչ ժամանակի ապագայիցն
Հատուցման ՚ի բացաւոր անդր ծանուցմանքն, [15] ազգա-

կից հանգուցանման կենացն փայտի՝ որ 'ի դրախտին էր, կշռման բարւոք հաւասարման փոխ ընթացիւք 'ի յարկն օրհնութեան, պատկեր տեսակի [16] անկոյն գիտութեան 'ի կարգ ընտրութեան բարւոյն և չարի, յիշատակ մեծ [17] տեառնագրութեան յերկոս կերպիս հոգւոյն որոյ վիշտն խաչին, [18] նախադրեկցն աւետարանաց փառաց զարմանան 'ի դշխոյն պահեալ սուրբ Թագաւորին, յորդորիչ քաջալերական մաքրապարեցն խրախճանութե, [19] անախտական սիրարկու անձնահանձնին կցորդութեան չքեղաշուք բազմած ամենածին կուսին Թագուհւոյ, յորդորիչ ծածուկ պձնութեան՝ որ 'ի հոգին է վայելչութիւն, [20] նմանութի պատգամին Միոյ, որ 'ի տերունեացն արտաքս սաւրիւր. միշտ օրհնէց պանծալի անշաղախ որդւոց մայր անարատից՝ սովոր փառաւորիչք.

Դ. Կերպացն քան զԱչըրկայլին [21] փոխն եղջերեաց զրանութիւն Նեփլիարայ սովոր հարթեալ տապալեցեր, քարինս արձակեցեր պարսիւ այս փայտեաց՝ ընդդէմ Գողիաթու, [22] զայլսան նորոգ կառուցեր վկայ ահարկու կործանմանն սատանայի, զ'ի խոր աճեցեալ որմնոս մեղացն մերբնոյիւս այսու խլեցեր, զմնացեալ գործոցս իմ պարտիս՝ այսր երախտեօք ընդ իս կալեցեր. Ով եթէ այլ ինձ ձայն բանից էր անուանեմ նախադասեալ երկուորութեանն, ոչ սխալեմ քան թէ ճշմարտեմ. 'ի տիպ սմանս այս նուէթց հոգեկրի մեծութիւն գործոցդ Յոփ սաւուեղայն պատմեալ հրաշակի. բիւրաւոր օգնականութիւնս վերնապարգեւս և բղխմանուրս 'ի յայսմ անպատապար ապախնութենէ երկրագնացոյ զարմանագրեցեր.

Ե. Խոստովանեալ ամուղղ անըմբռնի մարգարէից բարեխնամութեան, խնկեալ [23] խորհրդով սրբանանութեան անզծագրելի կերպարան լուսոյ, որ կրկնաձիր նշանաւս այսու նեսս արձակեցեր հեռաձիգս ձայնատրականս օգաչուս և յարմարաթափիչս ունոցս յինքեան հոգի կենդանի, որով անախտ հանգիստեանն վերանալն խաւարային աղեղնաւորին զազանութեան յաւէտ կործանմանն 'ի յետս ընկձեցեր. Իբր [24] զպատանեկս ամբարերձ բերդամարտութեան կանգնաւորս անկոյրարկեալս՝ սատուս անպաճոր զկոնեալ զխրատածս այս փայտի զարկեան հրեշտակ կանգուր Թշնամեացն ներ-

հակ վերյուղարկեցեր ։ Բանիւ հրամանի մեծիդ ան֊
արկութեան, [25] օծութեամբ շնորհիդ արևամբ քո խառ֊
նեալ՝ զայս եղջիւր խեթկիչ մոլի զաւաղին իբր զխաչիդ
փրկանակ յեսանեալ սրեցեր ։ Ի մեծ ազգմանէ այսր
աշխարհի [26] գեր քան 'ի վերնոյն քանդեալ վերացեա֊
գրանդն անխութեան կանոնց անխախտելոյ և ամեներկ֊
չոտ խռնուչութեան կարձանմին, ընդ հրէական որոմն
խմորից և սուտերական ամին կործանութեան ։

Զ. Փառաբանութիւն քեզ վերընծայեմ, անմահ
թագաւոր, զոր արարեր և հաստատեցեր աջովդ քո հը֊
զօր, աղաչեմ զքեզ, կրկին ներգործեա ։ Նշուցեր ա֊
փու հերքեալ աա 'ի մէնջ [27] զխէթ դժնդակ խորամա֊
կութեան բանսարկուին, զատժամական ստոյ մեղաց,
զհօգն զանտութեան չնչման խաբողին, զապր արկա֊
ծից մահու երկիւղի, զառ 'ի յօղից ցնդմանէ փառա֊
կար բերմանս սխրեցուցիչս, զայսախոան հեծեծու֊
թիւնս թալկացուցիչս ։ Յուսեա վերասին քցլնաղէն
հեծանաւ՝ օժանդակեալ թևօք նշանիդ՝ զանձս հրա֊
ծինս, զզօսանմն կարկատբերս, [28] զցաւագին ցոլմանս
հրախառ կեղծաւորութեան փչմանս բազմասանի մե֊
շայլին, զաւր սատակմանս, զձակատամարտ զփխեցման, [29]
զյորուցելոյն 'ի վերայ վայրենական խորհրդոց զցի֊
ւայն կաքաւս ։ Յորմէ զարհաւրին յայսմ իրէ փոքու՝
անդի սաւեալ մեծաւ զաղութեամբ, կիրթ իմն ծանօ֊
թութեամբ յայանի գիտացեալ, թէ [30] յայս ազգ ձայ֊
նի յանէ ակր 'ի զատաստան ։ Իսէ խրախուսին յաղի֊
սութեամբ զրահեալ սնդարակս սուսերաւ հոգւոյն [31]
ճծաբեալ մարտիկք ամենայն 'ի ձև կանոնի այսր յիշա֊
տակի, որ զամենափորձ հրոյն ընտրութենէ զոմանք
անկերպագրելեաւ հանճրէն ազանց քարոզէ 'ի յօրինա֊
ւոր սապարէզ երջանկաբար նահատակութեան ։

Է. Հարաւ աշա [32] փող աւագախոր, համբարձաւ սա֊
փու ձծ օրհնութեամբ, պատմեցաւ ամլիկ ամենայն
երկրի, հնչեաց 'ի լսելիս բաժանման հեթանոսաց, ձայն
պաշտպանաց մեծին զօրացաւ, ըստ բանին Եսայեայ,
և 'ի նոյն բարբառ աւհասարակ ցնծացաք ։ Յնդեցան
ջրոյն սառակու 'ի ձեռն սրին թշնամիք խաչին, անպա֊
տուեցաւ Ճնշակն պղղղ [33] սաաջին փայտին, մանեցաւ
նիւթ այս խորհրդական կենաց անուանեալ, [34] անոր֊

ցեցաւ երկաթ առ 'ի սկսու պատերազմի, խոյ զօրու-
թեան տեառն [35] 'ի սանձս երկխարին մեծին 'նշանի այս
փայտակենաձայն յարմարապրեցաւ, անփոփեցաւ օծեալս
ցայով Հոլովին երկնային [36] սուր իշխանութե մարդկային
ձեռին։ Եւ գծեալ 'ի քար տաճարին [37] մարմին գործա-
գի. խակ յանծակերտս խորան փայտս այս 'նուիրեալ ընդ
խաչին թեւոց սրբեալ զօրէ։ Եւ 'ի գլուխս անձին և
կամ՝ յեօթնեկցս եօթնեբրորդս յորելինեցն՝ յանկեանու-
թեք խափանմանց փողէ, այլ ընդ ծագս ափեղերաց և
ընդ ծիրս եզերաց՝ 'ի ծոցս ջուրց բազմութե ծովուց և
կղզեաց 'նոցա յաճախ սատակութեանց անարգել ճայթ-
մանց իւն անձայնով հնչեցեալ աւետարանէ։ Կատարե-
ցան [38] սուսերք սատակողին այս փայտի ցուցմանց, յան-
օգտակարէ անուն մեզ փոխանձեալ 'ի խոփս և 'ի ման-
գաղս։

Ը. Եւ [39] արձագանք արձանաց 'ի խորոց քնոյ գանչու-
թենէ, խիստս ատարեցեալ, և ոչ գծնդահարէս բաս ի-
մաստակի ամենն սաւրի զօղ վիրաւորեալ, ոչ անախորժ
սրութեանց ընդ ունկն մնեալ և ոչ զանձն ազգին ան-
կամակութեանց չար թնդեցուցեալ, ոչ ամերցն փոշ
խրտուցման յանձն բաւուցեալ և ոչ մնացն այլայլ աղ-
շաւթիւն աստղի արկեալ, ոչ զանգակ 'նսեթոյ սգենոյ
զանգաչեցուցեալ և ոչ քար ընդ վերգս սալի սասանց
բազցրութեան առ 'նոյն զարկուցեալ։ Պարփակարան
անխորտակելի 'նորոյս Սիմէոնի, մի առ 'ի սպասուցն կազ-
մուածոյ արարչութեանն գլխաւորաց. զոր եկեղեցա-
կանքս քրիստոնէից ընդ գեւսակարանցն զգուշաւորագէս [40]
բարձեալ յանձանձեն. որինակ [41] ձայնի Հրեշտակին,
զոր սատակողին բան՝ Հաւուն կոչմանք այսու անաղա-
ղային ապաւորեաց. 'նոր զարծի չորհի 'նուագարանաց ա-
ւետարանին՝ զարթուցիչ [42] Հոգւոյն ոյ առ մեզ, բան առ
որհնաբանութե սաղմոսարանին 'ի վերայ Եղիսէին, [43]
Սկզբնապար 'նախընթացութեան ազեյարմար ջութա-
կաց բարեսաւիղ աղերդարկութեանց՝ բարեցուցական
բանքսան բաւողի բարբառութեանց. որինգ 'նորոց այլ
իմն ակնակաւ առեալ մեզ ընդ Հնոյն փոխանորդութի,
ոչ Հեթանոսրէն [44] արբուածոյն Հնչման և կամ Հրեա-
բար խակախորհութեան, զոր մարգարէն ակրանք աղ-
գեցոյց՝ 'ի բաց արա յինէն. այլ զաս սիրեաց և կոչին

պատուեալ մարդկան ստածանք՝ աճարկու գլխոյ և ամենայն չար պատահարաց ։

Թ. Եւ արդ [45] ընկալ օրհնութեանք յարգեալ զա-վեստի զայս առ արդարութեան՝ ինձ պահպանութիւն և քո փառաւորութիւն , քո պաշտօն և իմ՝ գոհութիւն , [46] մնացանց արուեստ բարձրութեան արարչական փառաւորութեանց ։ Մոյն [47] ձայնից այդ ածարեալ ընդ պատուասա յօղինս շաղկապութեան , հանել 'ի հոգւոյս զպատկերս գլխոյ և զմտաս անխծից և մեղաց ապականութեան ։ Նշանակս լինել [48] զայս իր նշանակիչ քնար քահանայական , անձկելի նախնի , քարոզով անխախտնական աւրունական մտորինականաց ։ Նշա պարգեւս սորա , բարեգութ , աղաչեմ , հզօր , կրկին մեզ շընորհես պահպանութիւն 'ի գխմնեղականց յանկարծակի և յերեւելի ։ Ընձեռեա մեզ , [49] ձեռն ամենայնի , որ բանաս և մասնցմունս պատարաստութիւն բաշխանք 'ի մասանս բազմապատիկս , որոց բաղդդութի , անծրեւոց շահեկանութի ։ Պարկեսեցին բայց հրամանաւ այսու բարբառով հոգւ՝ տապախման , ծծուծն ցաւարեր , յարձակմանց հինից չար խարդախութեանց ․ սովու խափանեցին ամենայն գխմնեղութիւնք գնտութեանց դըժնեալ մահուչին , հալեցին հասցին և մեղցին յերջանիկ ձայնէ. օծեալս այս փայտէ որդն և ուտիչ , և ամենայն նմանք սոցին , որ 'ի մերոց մեղաց զօրացեալ ընդ մեզ պատերազմին ։ Ընծայեա մեզ [50] սովու տանիկ երանութեան գյուսոյդ 'ի քեզ մեծ պաշտպանութի , սաեղծիչ բարբից , տէր արարածոց , զայս ծառ Սարեկայ , որ ունի կախեալ 'ի գիտակ սասոյն զաւանց սուրբ նորոց այժմու փրկութեանս ծաղկեալ քե , Որ , 'ի պտղկենաց անմահականաց ։ Փախիցեն յանհուն հեռաստան խորին խաւարի՝ այսր փայտի փառաւորելոյ բարեգեկոյց ձայնարձակութեանք՝ [51] նէ.սորք ներհակք սասպատրիչն սատանականաց բազմաձեռնեան խարդաւանդաց ։ Մերժեսցին սովու 'ի յանդոց [52] պաղատահմանական արօրադրութեանց մերոց սահմանաց և 'ի քո մշակեալ կենդանի երկրէ՝ վէրք փառնէքք և հոյժ մանրերասցէքք ․ կորեսցին սովու [53] յաւէրաւութք կղկիասղեղ և անկայելութ պատահմանց 'ի հնարից չարին 'ի մեզ յարանելոց ․ խեղդեսցին փանեցի սովու , որք [54] յերկրացնչի-

րոց բնութեանցս մերոց վերերևէն ինքնաստեղծութիք մերձաւոր զաւաձանողաց, յումեմն օտարին վրիպակ մը-տածմանս, և յայլումն զարշ գոյութիւնք անմաքուր գեհենոցն ապականողաց. Փրկեա, տէր Յն, աղաչեմ զքեզ, փրկեա, բարերար. կարկառեա առ իս զաջդ ա-մենազօր, և օգնեա ինձ սոխաւ՝ զերծո զիս յամենե-ցունց ընդդիմացողաց.

Ժ. Խնամեացի միացի հրաման քո 'ի սոյն՝ առ 'ի փո-խարկել [35] զադամանդեայ սիրտս յիմարեալ՝ 'ի քոյն բանից արդիւնաւորութիւն. հարցես մխեցես [36] զայս նեցուկ հրաշից քումդ սքանչելեաց 'ի սիրտս ծարաւս և յոգնս լքեալս, և հաստատեսցես կազմեալ մնդալես 'ի կայումն ուղիղ անսասանելի. իսկ [37] զանընդատն կակ-ղացուցես զարթնուլ և զգաստ լինել յոգի հեզութե ածաւանդ քո պատուիրանիւ, որպէս զՊաւղոսն և ըզ-Մատթէոսն. Յիշեցո՝ մարդասէր, պատուելոյ այս փայտիւ զերախտիս խաչիդ, որով զանձառն ներգոր-ծեցեր. բարձ յինէն կեցուցիչ, զվտանգ պարտեացս [38] պանծալի ըմակօք ամբառնալեայ նոր տապանակիդ. Լաց-ցին կամք քո, հզօր, 'ի յայս ձայն կենաց՝ լսելիք սըր-տից յամառեցելոց. լուիցեն յայս մեծի բարութեան 'ի քումդ անհարկութիւն՝ ականջք խլից. պարզեսցին 'ի ձեռն տուին լեզուք համրացելոց. լուսաւորեսցին 'ի սոյն տեսարանք աչաց, հայել մաքրապէս 'ի քեզ պշուցեալ անայլայլաբար. զղջասցին դարձցին կազդուրեալ [39] կամք յափրացելոց. ընձեռեալ տացես, տէր, տաղնապելոցս անձրև արտասուաց. Եղիցի քև սա մեզ լուր ցնծու-թեան, ձայն ուրախութեան, բարբառ բերկրութե, [60] նուագ հանգստեան, նիւթ երանութե, պատճառ փըր-կութեան, առիթ քաւութեան, մերժումն վշտաց, [61] խզումն խեղդմանց, ընդարձակութիւն նեղութեանց, համառօտումն խեթմանց, հալածումն հեծութեանց, թեթևութիւն թառաչմանց, յապահովութիւն կա-րեաց, կարգադրութիւն կրից, սփոփութի վհատմանց, բժշկութիւն ցաւոց, տևականութիւն հեղգութեանց, ուշադրութիւն անտեսիցն.

ԺԱ. Ի յայս [62] կամուրջ ցանկալի անխոտոր և անխո-տորնակ, և 'ի վերնաշաւիղ բարձրաբերձ սըրահետ սան-դուղ երկնաշու, առ հայր քո օրհնաբան ուհաւոր անուն

ձգեալ մատուցես, բարերար, հոգւոյդ առաջնորդու-թեամբ միայնոյ 'ի քեզ անընդմիջելի. որով և որդւոյ միոյ միայնոյ և միածնական տէրութեանդ և անեղծ ա-րարչութեանդ 'ի կենդանեաց և յանշնչականաց հաւ-ատելոց վայելչական գոհութեամբ փառք և իշխանութի̃ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

1 Ի ԺԱՄՍ ԵՐԵԿՈՅԻ։ Յաղագս օրհնեալ փայտին՝ որ գործի լինի հո-գևոր բարերարութեան՝ հակառակ փայտին անիծից։ ԺԱՄԱՀԱՐԻՆ ԽԱՉԵԼ-ԴԱՄԲՈՒԹԵԱՆ, խաչհրդաւոր ժամահարին, այսինքն կոչնակին, որ ունի զխորհուրդ յետին փայտին. կամ ժամահարին՝ որ հրաւիրէ 'ի սրբա-զան պաշտամունս։ ՄԻԱՅՆՈՅ ԷԱՏԷՈՒ. աղօթքս կարգեցաւ ըստ ՀԵՌԱԳՈՐԾ-ԲԱՐՁՐԱՑՈՒԹԵԱՆՆ, հանգերձ անասութը մեկնութեան, կամ ըստ օրինակի բացայայտութեան։ Այս մակագիր թուի եղեալ 'ի սրբոյ վարդապետէն, որպէս և առ՛ն ցուցանէ։ Իսկ թէ որդեաք ինքն եդ զայս Տեառն 'ի կարգ աղօթիցս, թէ յայլոց եղաւ, չէ յայտնի. զի մեր ընտիր օրինակն 'ի յիշատակարանի անդ թուէ զն աղօթս, և ընդ թիւ նոցա, առէ, յաւե-լան բանքն որ վասն ժամահարին, և վասն սրբարար մեռոնին։ Այս ինչ յայտնի երևի. զի զերկուսին զայսոսիկ բանս արար սուրբ վարդապետն ընդդէմ բարբանջմանցն Թոնդրակեցւոց (զորոց տես 'ի բանին ՀԸ. լծ. 39։) Եւ զի աղօթական ձևով արար զայնս, նմին իրի այլք թերեւս 'ի կարգ աղօթիցն գրեցին, յարմար դատելով զլինի երեկոյեան աղօթիցն դնել զայս՝ իբրև աւարտումն։ Եւ չէին ինչ զարմանք՝ թէ Թոնդրակե-ցիք արհամարհէին զամրարութի ժամահարին. քանզի և յարևմուտս երևեցան աղանդաւորք, որք զՆշանուն զանգակաց արհամարհէին, փոխ ստամանոյն կոչելով։

2 ԱՆ ԻՆՉ ՇՆՈՐՀԱՑԵՍՑԷ. Նոյնպէս զարթուցեալք փափաքանօք սիրոյ քո, 'Ի ՏԷՐՈՒԹԵԱՆ ՔՈՒՄ, 'ի լոյս, կամ լսելով զձայնումն փայտիդ հրա-ւիրման 'ի պաշտօն քո։

3 ԶՄԻԱՅՆԱԲԱՆԱԿՈՒԹԵԱՆՑՆ ՇՆՈՐՀԱՇԱՐՈՒՆ։ Զխնկէլիսա՛ որ է անձի աղօթեն, կամ զգացող ձայնից՝ բաղխեցեր ժամահարաւն, որով զգաստացեալք և յարեալք 'ի մեռելականոյ թմրութէ քնոյն. յանդիման լինել քեզ ա-ռաջի ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԲԱՆԻ, սրբանական բեմս, կամ ատենիս՝ առ մեզ զխորհրդականութիւն և զայլ պաշտօն ծառայութեանս մերոյ հաւատացեալ-նեալք քեզ. և զու ըստ քում առատութեան՝ զմարձս աշխատութեան մեր հատուցանես։

4 ԸՆԴ ՔՐԻՍՏՈՍԻ։ Այսպէս զարմանալի միջնորդաք հօգայոր վասն փրկութեան իմոյ։

5 ՀՐԱՇԷԼԻ ԳՈՐԾՈՅ։ Զարմանալի օրինակաւ առաւել կամ այժմէն ձևացուցեր ՀԱՆԴԵՐՁԵԱԼՑՆ, զաղաղակայելցն նմանութի. զի հանգոյն գոր-ծեաւ ժամահարին՝ որ ՀԱՅՆ ՁԱՅՆԷ, առ անկանդնելի խոր քումն իմ ուժգին որոտացեր, որպէս առ Մովսէս 'ի կատարածի աշխարհիս որոտալոց եւ զարթնելեանն փողոյն. ուստի Յովհաննէս ձայնին՝ զծա-ռութիս իմ յանդիմանեցեր. իսկ փայտեաց՝ և ոչ երկաթի գործեաւն՝ զհեզութի քո ցուցեր։ Հին լծ. առա զբաան ԱՆԴԱՐԷՐ մեկնել՝ անյար-մար. զի առէ, քանզի անյարմար է բանականի։ Սակայն աղգեցար 'ի բանն ԾԴ. լծ. 3. թէ այս բառ նշանակէ՝ անկանդնելի. վասն որոյ ոչ միայն միւս նշանակութեն անյարմար է բանին, այլ և առնեալ պատ-

ձայն. զի մարդս ոչ է լոկ բանական, այլ և կենդանի, որում յարմարի քաղցր. ուստի և սուրբ վարդապետս 'ի վերադրին (բան ՁԴ. 1.) կոչեաց զնա՝ [illegible], [illegible], [illegible]։

6 [illegible]։ Ընդդատուցիչ զարկուածով [illegible], այսինքն առատական և թախանձելի, այն է՝ փայլուն կամին. կամ, երկուց կամեաց ընդդատ հարմարքն անձրևեցեր առ ևս զողորմութիւն քո, որպէս բաղխմամբ ամպոյն զ ըմբակն անձրևն ծորոցէս։ Ոմանք զամենն, [illegible], մեկնեցին՝ զմիջինն երկուց ձայնից՝ ոչ խիստ, և ոչ մեղմ. բայց այս սուտ է 'ի գրոյն։

7 [illegible]։ Ոչ փաղաքշական բանիւ կամ ձայնիւ 'ի քուն ընկղմեցեր, որպէս տղայոց անենն յորդորի. և ոչ խստութեամբ ահաւոր ձայնիւ զարհուրեցուցեր, որպէս գերեաց անենն։ Մարթ է դարձեալ զերկուսին ևս խմանալ 'ի վերայ ձայնի ժամանակին, իբր զի հնչումն նորա ոչ այնչափ մեղմ է, որով տաւել ընկղմեր 'ի քուն՝ քան թէ զարթուցանէր. և ոչ այնչափ սաստիկ՝ որով 'ի զարթուցանելն զարհուրեցուցանէր ևս։

8 [illegible]։ Յարուցեր զմեզ 'ի գաղափարեն զերկնմնական անզգայութենէ, այսինքն թմրութենէ որ յանկողնի, որ զերեզմանի նման է։ Եւ կոչեցեր զթմրեալսն քնով 'ի [illegible], 'ի ժամերգութիւն, 'ի սաղմոսերգութիւն, որ զինի է ուրախացուցիչ ոճապաշտից։ Յարմարէ զբանն առակաց Թ. 4. 5։

9 [illegible]։ Զզարթուցիչ ժամանակին արարեր պատրաստող եկեղեցւոյ 'ի պաշտօն փեսային։

10 [illegible]։ Փայլուն կոչնակիւ՝ իբրև փողը խնդութ. (մաշմուզով) տարածեցուցեր զանուանն զլուրն զահազդին մեծութեան։ Եւ արարեր զսա իբրև թանձր լուծ նուաճելոյ զուս աղըտամբն սատանայի. և իբրև [illegible] [illegible], ող զայլեւ կցակաց սատանայի։ Բայց զերկուսին զայս բան մարթ է 'ի վերայ մարդկան խմանալ. որպէս թէ կոչնակաւս իբր խնդութ. շարժեցեր զանհանգիստ 'ի պաշտօն քոյ, և իբրև լծով կրթութեան զուս հեզգացելոցն ծանրացուցեր. և իբրև կալ բերանոյ արարեր շարախոս թանգրաեկեցւոյն, որք արհամարհեն զժամանակս։

11 [illegible]։ Զպարտուն՝ որով եղև զործի խաբէութեան եւայի, փոխարկեցեր յաղատութեն քո շնորհիդ, առնելով զայն՝ զործի ոճապաշտութեն. և որ առաջին փայտիւն յիմարեցաք, ամեն. խմաստնացուցեր զմեզ հոգևոր հանճարով։ [illegible] [illegible], այսինքն կարկատմամբ կամինն հնչեցուցանելովն, կամ բաղխելով զատախտակն՝ զանբժշկելի հարուածս օձին անմոռացմեղ ծանուցեր. իբրև թէ՝ օձն փայտիւ խաբելով զմեզ, դու ևս համեմատ կոչնակիս միշտ զգլուխ նորա հարկանես։

12 [illegible]։ Ի գծագրեալն զանուն սուրբ երրորդութեանց 'ի գեմս խմ՝ յորժամ զարթնում ձայնիւ ժամանակին, դու զերեքկին կամ զանլըյծ կայլմուս սատանայի՝ որով 'ի [illegible] կապեալ է, այսու [illegible], կամ հաստատեցեր։ Ոմանք [illegible] [illegible] խմացան զերիս չուանսն՝ որովք կախի կոչնակն, և համարին զայն 'ի նմանութեն կապից սատանայի։ Բայց լաւ ևս լաւ գրոյն այլ խմաստ ունի. զի սովորութի է 'ի հարկանել զժամանակն՝ թէ 'ի սկզբան և թէ 'ի կատարածին՝ միով կամուս երիցս կափել, 'ի նշանակ սուրբ երրորդութե. ուստի 'ի կատարածին ևս կրկնելով զերիցս կափումն, այսու կրկնեցեր, ասէ, զերեքկին կամ զանլուծանելի կապն սատանայի։ Այս սովորութի կափելոյ երիցս 'ի սկզբան և 'ի կատարածին՝ պահի մինչև ցայժմ նաև 'ի մեջ յունաց։

13 Առաւել յաճախագոյնս ։ Ի խորհրդական պաշտամանէ կայց՝ առաւել բազմագոյն կամ զօրագոյն գործեալ և արուեստականօք որա-ցայր զնա 'ի քո երկրպագութի· զի որպէս նուագարանաւոր ձայնիւ փողոյ և այլոց արուեստականաց ազդ առնէր ամենայն ազգաց երկիր պագանել խրագործ արձանին, նոյնպէս դու բաց յայլոց հոգևոր կամ մարմնաւոր գործեաց եւս մեզ զժամանակս՝ հրաւիրեա 'ի քո երկրպագութիւն ։ Եւ նոյնպէս յօրինեալ . այսինքն օրհնել փոխանի ( բստ որում գոյ 'ի մաշտոցն կանոն օրհնութե ժամանակին ) 'ի հարկանել նորա՝ միմարտութե քրիստոնէական կրօնից հաշակի, և պատիւ-նորդ սեւեառանին հնչէ 'ի լսելիս ամենեցուն ։ Եւ է իբրև [illegible], բարձրաձայն բարբառ փողոյ, 'ի նշան ազատագինելոյ արքային քոյ, և խմբելոյ զօրաց նորա պաշտանէից եկեղեցւոյ ընդդէմ սատանայի ։ և նշան [illegible], ուրախութե 'ի վերայ յաղթութեան մարտին քոյ ընդդէմ անմարմին փարաւոնի, որպէս Թմբուկն մարիամու՝ յետ յաղթութեանն ընդդէմ մարմնաւոր փարաւոնին ։ Եւ է իբր հանապազորդ ծեծող գլխոյն սատանայի՝ ըստ այս . տախտակս · կամ փայտեայ կոանն ։

14 Տն ԽԾ ։ 3 օրհն · զօրն ԽԾ, որ առաւել յարմար է · զի անճարկէ յորձանն՝ զոր եօծ յակոբ 'ի տեղւոջ տեսլեանն, և զանզին կոչեաց բեթէլ, այսինքն տուն այ ( Ծննդ · ԻԸ · 18 · 19 · և ԼԵ · 7 ։ ) Այսպէս և ժամանակն՝ ուրպաւ զրօշեալ, և օծեալ մեռոնաւ 'ի չորս ծագսն, եղև իբրև տուն այ ։ Օրհնութեան, ծածկին պաշտաման · որոյ հնչմանն անդր ժողովին ալօթաւորք, որպէս խորայեղացիքն 'ի բեթէլ · Խորհուրդ 'ի հնդատոգ, օրինակեալ կանխաւ յորձանն յակոբայ · [illegible] · զի փայտն օծեալ անփոխելի մնայ, և նշանակէ զանխախախտ անդրութե պաշտամանն այ ։ Նշանակին ժամանակի, զձայնն 'ի հեռաւորս ծանուցանելով՝ նշանակէ զժամանակ ալօթից հաւաքմանն, կամ զատաստանին Օծութե ժամանակին է հին արարողութե, որպէս աւանդեն հին և ձեռագիր մաշտոցք ( զոր 'ի ապագրեալսն կրճատեալ 'ի բաց թողեալ են · ) քանզի և առ լատինս մինչև ցայժմ սովորութե է օծանել զզանգակն, զոր 'ի ներքոյ կողմանէն 'ի չորս տեղիս մեռոնեն խաչաձև · և արտաքուստ յեօթն տեղիս օծանեն, այլ օրհնել ևեղով · և զայս արարողութե կոչեն Մկրտութիւն զանգակի ։

15 Աւետարան ։ Նմանակից կենաց ծառոյն՝ թէ բնութե, փայտ գոլով և խաչ · և թէ գործովք · զի կոչէ հաւաքել յեկեղեցին, որպէս կենաց ծառն հրաւիրեր 'ի դրախտն ։

16 Տէրունի խաչատուփն ։ Նմանութե ծառոյն գիտութեան, որով լինէր ընտրութե բարւոյն և չարին · այսպէս ժամանակաւն ճանաչեմք փոյթքն և ծոյլքն 'ի պաշտոն այ ։

17 Տէրունագրութեան ։ Յիշատակիչ աւանդագրելոյ 'ի դէմս իմ ... · զի ձայն ժամանակին յիշեցուցանէ խաչակիրել զդէմս · մանաւանդ զի և հարկանողն 'ի սկսանելն՝ յանուն հօր ասէ, և երիցս կոփէ միով կռանաւն ։

18 Նախադրնեայ ։ Ժամանակն է յառաջագոյն ծանուցանող և իբր նախընթաց փառաւոր գալստեան քո՝ 'ի ... , առ եկեղեցին, որ սպասեալ է աւուր թագաւորին · իբր զի ազդ առնէ ժողովել 'ի ժամերգութիւն, որում յաջորդէ գալուստ քոյ 'ի աւուր պատարագին՝ յարժանաւոր հաղորդութե հաւատացելոց ։

19 Անախտական ... ։ Որպէս յորդորիչ է ... , մի որ- ... · եկեղեցականացն և կրօնաւորաց 'ի պաշտօն այ, այնպէս անախտ սիրարկու է ... , հոգևոր համբուրի

միանալոյ ընդ քնի, [illegible] [illegible] փոփոխուչ քաղաքկեալ կա-նայն կամ հաւատաւորաց․ որք 'ի սոսկմանէ քաղցրութեն ժողովին՝ զատ յարանց․ և կոչին [illegible], հագեար ծննդեանք և աղօթիւք բազում օրգիս ծնանելով ի՞յ․ և [illegible], իբրև թագաւորին քնի հարանցելոց․ որոց ձայն ժամանակին լինի [illegible] [illegible] [illegible], հագեար զարգարանաց պատրաստելոյ յաղթս, և ոչ մարմնական զարդուք. որպէս աշխարհականաց է սովորութեն։ Այսպէս իմանալ՝ տալեւ յարմար թուի կարգի բանին, քան թէ իբրև զատ հատուած բանի առնուլ զառեալն, [illegible] [illegible] [illegible] [illegible]․ որպէս թէ՝ ընծայող կամ քաղաքեա կուսին եկեղեցւոյ։

20 [illegible] [illegible]։ Բաժանմունք ձայն ժամանակին է պատգամ հրաւիրման առ ած, իբրև զմինչական պատգամս տեսելոյ ձայնիւ փողոյն, որ 'ի [illegible], 'ի տեղւոյն՝ ուր ած կայր, որպէս հնչէր (Ելից․ ԺԹ․ 16․ և այլն։) Ոմանք 'ի [illegible] իմացան՝ 'ի միքայէլ հրեշտակապետէն․ իբր զի հրեշտակքն՝ տէրունի զօրութիւնք ասին։ Բայց օտար է․ այլ իմանի առ բառ յանձախ կիրառութեան յանաց և լսանելեաց, որք զատնորան կամ զանգիս որբեալս այս կոչին [illegible], կամ [illegible]․ որպէս նախլին մատ կայ 'ի վերոյեց գնդա․ Յ․ 'ի բնագրին․ « Ի քանի աւուրս արժան է մնալ 'ի տէրունեան »։ Այլ և նոյն անուն 'ի կեր առեալ է 'ի ժողովս անկեղբայց կան․ ԺՆ․ 'ի նեռակեացային կան․ Ն․ 'ի լուսաշխհական կան․ ԽԸ։ Իւ զպատճառ այսպիսում կոչման յայս առնէ եւեալ 'ի Ներքոյ Կոստանդնանոս գլ․ ԺԷ․ ասելով թէ յամենեցունց անաստէն ընկալեան զանուանս կոչութեն։ Արդ որպէս 'ի պատրաստութեան մինչական պատգամացն լսոյցան ժողովուրդն (անդ 14․) այսպէս 'ի ձայն ժամանակին՝ [illegible] [illegible]․ մէջ պանծալի եկեղեցին՝ անարատ որդւոց մայր՝ [illegible], զարդարիւր հոգևորապէս․ մի օրին․ [illegible] նման այլոց յաջորդ բանիցն, [illegible], [illegible], [illegible], և այլն։

21 [illegible] [illegible]․ 2 օրին․ [illegible] [illegible]․ և մարթ է բացարել․ տալեւ սոսակապէս քան թէ զերկրորդ արութեն եղջերեաց փողովն՝ զբանութեան բեկերաց տապալեցեր ժամանակաւ։

22 [illegible]։ Այսինքն նոքա, որով այգ արար յեսու զարմանալալոյն՝ յարձակել 'ի կործանումն գայեաց (Յեսու․ Զ․ 18։) Այսպէս և ժամանակն այգ առնէ ժողովրդեան յանել 'ի կործանումն սատանայի․ զի զարմանս մեղացն՝ որ են հեզգութեն յանձայնին պաշտամանս, և մատուցութեն գործոց մերոց, խէ՛ սասանելովն 'ի ժամերգութեն․ ուր ածային գրոց բանիւքն [illegible] [illegible] [illegible] [illegible], զմեզս իմ, կամ զպարտս բարի գործոց՝ զորս մոռացեալ եմ, յիշեցուցանէ։ Վասն որոյ եթէ զժամանակսն՝ [illegible] [illegible] [illegible] [illegible] կոչեցեալ իբրև զերաբակեան յոհանանեա, ոչ սխալեմ․ զի այս տեար անմանսխ [illegible] [illegible], նիւթական իրի՝ որ օրհնութեամբն կրէ զզօրութեն հոգեոր, տասեալպէս պատմի մեծութեն գործոց քոց․ հրաւիրելով զժողովուրդն 'ի լուր աւետարանին, յորում տասեալպէս ծանուցանին գործք քո, քան յոհհաննու քարոզութեամբն։ Իւ զի յոհանանեա նշան ինչ ոչ արար, բայց զու 'ի [illegible] [illegible] [illegible], այսու տեար սպասաւորեա՝ երկրաւորաց բազում սքանչանութիւնս զարմանալիս գործեցեր․ զի հարմանք կոչնակին, որպէս և հնչմանք զանգակաց՝ պահպանիւք 'ի մրրկաց, 'ի կայծակաց, 'ի կարկտէ, 'ի ժանտախտէ և այլն, զորս և յիշէ զինի 'ի հանդէր կ․ թ․ Ժ․ այլ և աղօթք օրհնութեան ժամանակին զնոյնս հայցեն, որպէս տեսանի 'ի մաշտոցն։

23 [illegible] [illegible]։ Այնունք քո քո օրհնեալ է խորհըր-

գական բանիւ սրբերգութեն, որում մասնակից են երեք անձինքն եւ։ ԱՆՔԾԱԳՐԵԼԻ, անմեկնելի, կամ խմանալի կերպարան լուսոյ։ ԱՅ ԵՐԵՒԵԼ ՆՇԱՆԱՒ, յետ խաչին երկրորդ անգամ շնորհելով փայլիւս, կամ փայլիւս՝ որ կրկին ձիրս հոգւոյ եւ մարմնոյ ներգործէ, հնչեցեր ձայնս, որք իբր նետս շառաչողս՝ ազդմնոցս յարմարապէս թռուցեալ հոգւով զօրութեն քո, հարկանեն զնդրատակն սատանայի՝ զծուլութիւն, զանկրօնութիւն, զաղխտութիւն ամպայնոց, եւ այլն։

24 ԶԱՌԱՒՕՏՆ։ Զայս 'ի բաղդատական հոլով պարտ է իմանալ. այսինքն իբրեւ յամրականայց՝ կանգնեալ, ԱՆՇԱՐԺԵԼԻ. անկործանելի պատներաց (պէտէն, մէթերիզ.) ԱՌԱՒՕՏ, 'ի սախառակէ ժամանակին, կամ 'ի անդրոյն՝ ուր հարկանի, ՆՇՈՅԼ ԴԻՄԱԾՈՅ, զբախեալ հարուածս այս փայլոյն՝ իբրեւ պատսպարանաւ քո առարկեցեր իղեմ թշնամեացն սատանայի։

25 ՄԾԱՒՈՒԹԵ ՔՈՆՈՒԹԵԱՆ։ Ի ձեռն մեծանի ծննդեանն, կամ թէ հագեալ շնորհիւ իբրեւ ծնունդ լինելով այսմ փայլոյ, ՈՐԴԻՔ ԼՈՒՍՈՅ, ոչ եթէ խորհրդական արեւուն քնի խառնելով առ զմեռանն, կամ ածեալ զփայլն, այլ թէ զօրութիւն արեւուն քնի խառնեալ 'ի յածումն եւ 'ի փայլն, իբրեւ եղջիւր ԽՆԴՐՈՒ, հարկանող սատանայի՝ բառ նմանութեան խաչափայլին, ՅԵՏՆՈՐԴԻՉ, ծնանիմքն իբրեւ 'ի յետինի սրեցեր։ Այսու բանիւ 'ի ժամանակին յարմարէ զատայեալսն յաղագս սերմանց որդւոցն, եւ եղջերաց նորա, զորս բառ հրամանին նոյ պարտ էր ծնանել իւզով, եւ սրբել արեամբ (Ելից ԻԹ. 21. Ղեւտ. Թ. 9. Եբրայ. Թ. 19. 21. 22.)

26 ԴՆԵԼ ՆՈՒՆ 'Ի ՎԵՐԱՅՆ։ Նմանել 'ի ձայնէ ժամանակին վերայա գրանցն, քան 'ի ձայնէ սերովբէիցն բառ անաչեանն եսայեայ (Զ. 4.) զի անդ վերացումն գրանցն, այսինքն վերին սեմոցն նշանակէր, ասէ, զկործանումն հրէական խմաստիցն, եւ առաւելականն տան հին օրինաց. իսկ 'ի ձայն ժամանակին բանին գրանցն ՎԵՐԱՑԵԱԼ ԳՆԱՑ, այսինքն սինդութիւն կանոնց՝ անարժան եւ անհնարինս ԻՆՔՆԱՑԵԱԼ, այսինքն զանդարդութեն կամ վասութեն կարծամին ծուլին։ Բառս ԻՆՔՆԱՑԵԱԼ, 'ի գիրս այլոցոց բազում անգամ զնի փոխանակ վասութեան, հեղգութեան, եւ այլն։ Իսկ բառն՝ ԱՆՇԱՐԺԵԼԻ. 'ի լու օրինակ ինչ զնի՝ ԱՆՇԱՐԺԵԼՈՅ. իբրեւ թէ՝ անփոյթ լուրջ. այսինքն զուրկ 'ի լրջութէ, կամ 'ի զուարթութենէ, անյոժար։

27 ԶԻԵՐԻ ՏԻՐՈՒՆ։ Զգաստալի ցաւս, կամ զտրտմութ, կամ զեթշնամութիւն, եւ այլն։ Զայս եւ զհեռաւեալսն մարթ է իմանալ 'ի վերայ մարմնաւոր եւ հոգեւոր փորձանաց. յորոց զերծանիցէ կամ նոյն իսկ հարմամբ ժամանակին, եւ կամ ձայնիւ նորա յաղթեաս եւ 'ի պաշտօն նոյ յորդորեալն։ ՆՈՐՈՑ ՄՈՐՃԻՆ, զպատմառս մահացեր փորձանաց։ ՆՄԱ 'Ի ՅՈՒՐԾ. 'ի ցնդմանէ կամ 'ի թուլութէ յօդուածոց եղեալ վտառակար զխղուածս։ ՆՈՅՆԱԿԵԱՆ, նենգութի կամ գործակցութի գիտին եղեալ հասարակաց նուաղեցուցիչս. որպէս յարժամ լինի 'ի սուգ մեռելոց, կամ 'ի կորստեան այլ իրաց։ Զայսպիսի արկածս, ասէ, ձայնիւ ժամանակին բազում անգամ անցուցեր 'ի մէնջ. արդ զոր նախ արարեր, արդ ել զբեզ՝ գործեալ ներգործեա. ցրուեա վերաւին ՍԱՅՆՈՒԹԵԱՆ ՆԵԽԱՆԱՑ, քո զօրութ. զինուորեալ փայլիւս ժամանակին՝ հանդերձ ազնուականութեամբ ՆՇԱՆԻՆ խաչի։

28 ԶՄՇԱՒՈՐՆ ՀԱՒԱՆՍ։ Զցաւեցուցիչ աչաց, կամ զերկիւղալի ցոլմունս զեհերայինս, որք առէպ առէպ փայլատակեն 'ի խաւարային ամպոց, եւ են օրինակք ՀՐԱՇԱԼԻ ԵՐԵՒՈՒՄՆԵԱՆ սատանայի. որ խաւար գոլով ձեւանայ 'ի լոյս հրեղէն իբրեւ հրեշտակ՝ պատրողական փչմամբ խորհրդոց։

29 Ցայտաքնեալն․ Ձ որին, Ցայտաքնեալն․ Եթէ այսպէս եդական առ-
ցի․ Հայի առ բանն՝ ցՄեծն․ այսինքն զծնկատաանելոյ զՄեծութեան 'ի
վերայ յաղթութեան․ բայց յայնմիկան եղեալ՝ Հայի առ բանն Խորհրդոյ․
այսինքն զՄեծութեան փառքեանն խորհրդոյն 'ի վերայ յաղթութեանց․ կամ
յաղթանակաց․ իսկ յանդորրն՝ ... Խառաա, զատ Հաստատեալ է․ այս-
ինքն ցրուեալ զհայելեակն զԲանսն, որք ճշգրին ընդ միասն մեր՝ Հայոց
և ձայնից․ կամ յարգարանելով ...

30 ...

31 ...

32 ...

33 ...

34 ...

35 ...

36 ...

38 ...

[illegible]

և ըստ այլաբանութեան՝ զհաստատեալ յարութիւնն 'ի փոխել հրեշտակին :

42 [illegible] 3 օրին․ և հին ըծ․ չէք [illegible] : Ժամանակն իբրև նոր գործի փրկարար 'ի մէջ նուագարանացն՝ որ առ քրիստոնեայս 'ի կիր արկանին, առաւել զարթուցանէ 'ի մեզ զներգործութի կամ զըղջարժմունս հոգւոյն սրբոյ, քան թէ 'ի վերայ եղանակի [illegible]. այսինքն հնչմամբ կամ 'ի նուագել ստեմնարանին : Իսկ առաւելութին տեսանի այնու նախ, զի մեծ հնչումն նուագարանին արար ազդումն յեղանակ միայն, և ոչ յայլ մերձակայս․ իսկ Ժամանակին հնչումն զարթուցանէ զբոլոր ժողովուրդն 'ի պաշտօներգութի : Երկրորդ, անդ առ եղանակիւ տուեալ մարգարէութի 'ի նպաստ մարմնական ծարաւոյ ևեթ․ իսկ Ժամանակին ձայնիւ տուեալ կատարին նպաստք պէսպէս շնորհաց հոգւոյ և մարմնոյ : Այլ զի՞ ասէ, [illegible], այր 'ի հնումն օրինադրեալ և նախանկարեալ էր, որպէս և յառաջն ասաց : Ըստ հանգամանացն և ըստ զօրութեան ասի նոր, և ստորև բացայայտելով իսկ ասի, [illegible] :

43 [illegible] : Պարագլուխ յառաջընթաց այլոց նուագարանաց, որք յեկեղեցւոջ կամ արտաքոյ հարկանին․ ըստ օրում ձայնիւ Ժամանակին հաւաքեալք յեկեղեցին, 'ի պաշտամանն հնչեցուցանեն զայլ նուագարանս, կամ կատարեալ զպաշտօնն՝ ապա գանեն 'ի մարմնական ուրախութիս այլոց նուագարանաց․ որք են՝ [illegible], այսինքն աղեօք կազմեալ երգարանք (սանթուռ, կամ քեման․) [illegible], քաղցրանուագ ողբական երգոց : [illegible], զբարս երգողին կամ լարոցն ցուցանող և շարժող, [illegible], զոր ամանք մեկնեն (չալփարայ, զիլ․) և այլք (թամպուռա․) [illegible]․ բանիւք խօսից յարմարեալ ցուցումն բարուց մարդոյ, և այլ կենդանի կամ անկենդան իրաց, և ոչ ձեռակերպութեամբ զգեստուց և շարժման մարմնոյ․ կամ, գեղեցիկ յօրինեալ բանաստեղծութեց : Զերկոսին խմասա ևս նշանակեն այս երկու անուանք․ և բանին ևս յարմարի․ զի հարկանողք չալփարայի կամ թամպուռայի՝ յերգել իւրեանց երբեմն յառաջ բերեն զզեմս այլոց՝ բանիւք, և ոչ կերպարանաւ, և երբեմն միայն վայելուչ բանաստեղծական բանս ասեն : Ի գործեալ [illegible], նոր օրինօք՝ ոչ փոխմամբ, այլ հարմամբ, տուեալ մեզ փոխանակ արինգի հին օրինաց :

44 [illegible] : Անոսի կամ աննշան հնչման, զի հեթանոսաց նուագարանք ոչ ունէին խորհուրդ ինչ, և բանք նուագացն՝ սնոտի և առասպելք էին : Եւ ոչ [illegible], ըստ հրէական թանձր մտածութե, որով համարէին զարտաքին հնչմունս լինել հաճելի այլ և փառաւորիչ և հաշտեցուցիչ․ վասն որոյ և բերանով ամովսայ (Ե․ 23․) արգել այծ․ այլ զԺամանակն [illegible], ընկալաւ, և առաւել պատուեաց [illegible] օրհնութեն և օծմամբ իբրև աչարկու գիւաց :

45 [illegible] : յօրինակս ինչ, [illegible], որ առաւել յարմար է․ զի արդէն վկայեաց՝ թէ Ժամանակս ընդունելի է այլ․ ուստի ոչ մնայ խնդրել՝ թէ ընկալ, այլ թէ՝ ևս ընկալայ օրհնութբ և գովասանութբ զայս [illegible], պարգև սրբազան՝ ինձ 'ի պաշտպանութի․ և այլն : Վասն որոյ [illegible], և այլն․ մի այլ օրին․ [illegible] :

46 [illegible] : Անխարդախ, և անխարդախելի հնարք կամ գիւտ գերազանց․ զի Ժամանակն ոչ յազանդաւորաց հնարեալ է, և ոչ կախարդանօք ինչ խափանել կարէ :

47 [illegible]։ Զայն ժամահարին իբրև ձայն նծայլին մայէ ընդ կապս յօդուածոց մարմնոյ, և հանդէ 'ի հօգւոյս զգայարանս գիւսյ, և զմտեալ ախտս անծից. որպէս քո նծայլին ձայնդ հասեալ 'ի մարմինս ախտացելոց՝ բժշկէր զնոսա յամենայն ցաւոց։ Նոյն զձայն ժամահարին [illegible], կամ նծայլին, խմանի՝ հօգևոր, 'ի պաշտօն այ կոչգեալ, զարթուցիչ յածայլին ազգմունս. յորդորիչ այլոց նուագարանաց՝ որք 'ի գործ ածին նաև յաշխարհական հանդէսս, բայց ժամահարին յեկեղեցականս միայն։

48 [illegible]։ Զայս նիւթեղէն իրս արտայեա [illegible]. խորհրդդաւոր քնար [illegible], պայծառացեալ զօրութեամբն և հնչմամբն իբրև զայսահալած քնար դաւթի։ Զ բառն [illegible] մարթ է և յարել 'ի բառն [illegible]. այսինքն իր կամ նիւթ նշանակիչ ժամերգութեան, և այլ եկեղեցական պաշտամանց. զի և յոյնք 'ի նշանակելոյն կոչեցին զսա [illegible], այսինքն նշան։ [illegible], անեզծանելի կամ անհրաժարելի գիր հրաւիրման յեկեղեցի քո. [illegible], պաշտպան կամ վրէժխնդիր անխափան՝ եկեղեցական աւորէնութեցն. զի սախալէ կանխել 'ի հանդէսս անդ։

49 [illegible]։ Շնորհեա մեզ ով ամենատատ ձեան՝ զօգոց քաղցրութիւն. որ մատուցանես զգեղ պատրաստ կամ յօժարական բաշխմամբ 'ի բազմապատիկ տեսակս բարեաց. 'ի ցանկալի ձայնէ [illegible], այսինքն փայտիս որ ածեալ է մեռանել, մեայն որդն և այլ ձնիք, որոց մահարեր է խաղն։

50 [illegible]։ Ժամահարաւս, կամ հնչմամբ և ներգործութեան նորա անկեա 'ի մեզ զաւանկ երանութեն, որ է պաշտպանութեն յաւայն մերոյ առ քեզ։ [illegible], խնա գործիական, այսու ծառովս՝ այսինքն ժամահարաւս, որ իբրև զծառն սարեկոյ անի 'ի [illegible], 'ի ծայրին իւրում զսուրբ խաչն փորագրեալ կամ հաստատեալ, որ է նոր աւանդն այժմու փրկութեանս, ծաղկեալ քնի 'ի բերել զպտուղ կենաց։ Նոյնչ կամի. հնչմամբ ժամահարին յիշելով զսուրբ խաչն՝ զգործի փրկութեան մերոյ, անկեա յայնժամ 'ի սիրտ մեր զյոյս կենաց։

51 [illegible]։ Զայնիւ փայտիս փախիցեն յանհաւն հեռաւորութի խաւարի զժոխոց՝ դևքն, չար ոգիքն, որք սատրնականք են, յի զժոխականք, և [illegible], յայժ զօրաւոր կամ բազմազան արինակաւ խաբողք։

52 [illegible]։ Ի մեր պատղաբեր հերկագործեալ անհմանաց, այլ և 'ի [illegible], 'ի մարմնոյ մերմէ, որ է քո մշակեալ երկիր կենդանի, մերժեսցին [illegible], բազմութիւնք կեծեցուցիչ կենդանեաց. որպէս օձիլ, մժեխ, որդն, թրթուր, լու, և այլն։

53 [illegible]։ Եղանակս պակասութեք պատահարաց, որք 'ի վերայ բնական ազդեցութեանն՝ կրկին ազդեցուցանեն զմարմինս մեր, որպէս կուրութի, կաղութի, ձեռնատութի, կարկամութի, և այլն. կամ, բորոտութի, դանջութի, և այլ ախտք մնայականք. կամ ցուցանքաւոր այլանդակութեք. որպէս երկգլխանի լինել, ծամածռաթզուկ, և այլն. որք 'ի հնարից սատանայի բաղում անգամ գործին 'ի մարդիկ, թոյլ տալովն այ 'ի պատիժ մեղաց, կամ 'ի ցոյց գեղեցկութեան այլոց կատարելոցն։

54 [illegible]. 'ի հօգւոյ և 'ի մարմնոյ մերոյ երեսն [illegible], անգամին 'ի ներքուստ ծնեալ իրք. որք իբր ընտանի թշնամիք ներեզեն։ Բառ որում [illegible] 'ի հօգւոյ ծնանին սար մասամանք մեղանչականք. և [illegible] 'ի մարմնի՝ անմարթուր զեռունք ապականիչք։

55 Զարմանալեաց մէջտ· այսինքն յայժ կարծր և խիստ· տաճկա-
րանն յունականն՝ որ նշանակէ զզօրաւոր պատուական (էղեմա,) ՚ի մեր
ժամանակացս դնի ՚ի նշանակել ՚նաև զմարմինն, թէ փառն կարծրութե
երիկամացն, և թէ զի Հնդկայքն զօրաւորն ամէն ասեն՝ զյառաջէ զօրու-
թիւն իւրև զմարմինս· և բառ երկուց ՚նշանակութեանցս փոխաբերի ՚ի
՚նշանակել զկարծր և զդիւրին նիւթս։

56 Զ... (այսպէս,) դնիլեն
՚ի սիրտս ..., թուլացեալս, և հաստատեալս ՚ի ..., ՚ի կանդ
՚նումն ուղից։

57 Զ... մի որին· ..., զանազանեան սրտի. կակղա-
ցուցեալ քո հեղ ձայնիւդ, զզատ լինել նմայքն պատուիրանիւդ, որ-
պէս զօրաց և զմտաթեան։

58 Պ... երկուք կամեաց ժամանակս իւրև ընտիր տա-
սյանակին՝ բարձեալ զծանրութիւն սրբութեցս։

59 Կ..., տարաերայելոց ՚ի հոգևոր սիրոյ։

60 ՚Ն... Նորք հանդուցին հոգւոյս· զայս և զյաջորդան
խնս ՚ի փերայ հոգևոր զործոյն, բառ որում ժամանակն է զործի տա-
տաւածոյին պաշտաման, որով յաջողի ՚ի մեզ հանդիսա հոգւոյ, երա-
՚նութիւն, բաւութիւն, և այլն։ Իսկ բառ մարմնաւոր զործոյն կարէ
ժամանակն ՚նկարարել ՚նպատա, բառ որում որձնաթեանն ՚նուի-
րեալ է, և ամէն յինեան զօրութիւն եկեղեցական տօթիցն, որպէս
զանգակն, որձնական ջուրն, և այլն։

61 Խ... Խօսք կապոյ խնդրանաց հոգևորաց կամ մարմ-
՚նականաց։ ... բարձումն ՚նկրքն ցաւոյ, թէ հո-
գւոյ, և թէ մարմնոյ· կամ երկինային կանխամանաց, թշնամութեց·
... յափշտակութի կրից հոգւոյ, ապրանութե, տրրտ-
մութե, բարկութե, և այլն։ ... երկայնմտու-
թիւն հեզդ բարուց կամ հեզզացելոց։ ... հայե-
ցումն խնամոյն իւրոյ, կամ հանդերձելոց։

62 Կ... ժամանակս լեալ իւրև ուղիղ և անխառնելի
կամօքն· և իւրև ... մի որին· ..., իւրև ստն-
գուրք լեզ որ մարդկայք միայն անցանեն, և ոչ ափերք։ Նա առևա-
տաղջնորդել հասուցեն զիս, առէ, առ հայր քո ..., այսինքն
որձնարանել, կամ որձնող զնեղ· միացեալ հոգւովդ սրբով· և եղիցի
այս պատճառ փառաւորելոյ զամենատուրս երրորդութեանց համօրէն
արարածոց՝ փայլքելոյն ..., մի որին· ...։ Յար-
մարեալս ՚ի կատարած տօթիցս որինակելոց զժամանակն ՚ի ...
և ՚ի ..., ուր յանդերձան առակելոց ՚ի փող, ՚ի որինդ, ՚ի զաւա-
զան, ՚ի զէն, ՚ի սուսեր և այլն։ Վասն զի յառաջն խորհրդանշէր զնո-
րեար ՚նպատակն՝ որ ժամանակին տզդեցութեն յաջողէին ՚ի կենդանու-
թեան մարդոյ· իսկ ՚ի կատարածիս կամեցեալ յայս ասել և զոր ՚ի
փոխանակ մարդոյն կատարէ, առակաւ կամքն և անդգոյ բնարեաց
բացատրել· իբր զի մանչն՝ անցումն է առաւ յայլ կեանս, և վերացումն
յերկրէ յերկինս· և ՚ի մահուան հասատելոց՝ ամփոփութիւն է հար-
մանք ժամանակին, որպէս և զանգակաց, այց առնել ժողովրդեան՝ զի
աղօթեսցեն փառն Ննջեցելոցն։

# ԲԱՆ ԻՆՆԱՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

[1] Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն ազերս մաղթանաց բանի․

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

[2] Աղօթք թարգմանօրէն վասն սրբալոյս խաղին մեռանի։

Ա․ Սուրբ ահաւոր անուն բարձրեալ անպատում, անձկութեան [3] փոփոխ յարախորժելի, [4] 'ի սրբերգենիցն փառաւորողաց միշտ սրբաբանեալ բնակեալդ 'ի սրբըբում, լի եւ ամենայնեղուն բարութեամբ առատաձեռն աննուազելի, լոյս բարի եւ ծագումն գովելի, [5] երկրպագեալ փառաւորելի, ահեղ եւ անզննելի, [6] ամէն եւ յաւիտենայնում։ Ո․ յու բանիւ [7] գաշամբք յուսոյ ուխտ ընդ քեզ միութեան, հզօր, [8] այո, ամէն, ալէլուիայ․ գովեալ թագաւոր հանուրց, տէր բոլորից, ստեղծիչ գոյից եւ տէր կամարար, [9] միայն առիթ պատճառաւորաց, փրկիչ եւ [10] օծեալ մշտապաշտելի։

Բ․ Ստոյ [11] մեկնայես թարգմանեալ 'ի մեզ զայս գանձ անխաճառ եւ հարստութիւն անփոխադրելի․ Ո՛ն Ո՛ն արքայ երկնաւոր, որում գոլութեամբ մեծաւ [12] սպասեն անմահականացն ահեղից լուսաւորերան բազաշըն-չութիւնք, կրկնեալ քեզ յօժարութեամբ 'ի հաճութենէ անխտրար մտաց, ծունր զօհութեան [13] ստեղծող էութեանց, որ են 'ի տեսանն եւ 'ի ծածկութեան։ Սը-եալ եւ էիր միայն բովանդակ ամենեւին անպակասելի, առեր զմեր խնկայես համայն, զի 'ի լրութենէ քումմէ լցուցես․ օրհնեալ եւ բարեբանեալ, ծանուցեալ յաւէտ միշտ անքննութեամբ ողորմութեամբ մեզ 'ի փըր-կութիւն, 'ի փառս եւ 'ի գովեստ անճառ բարձրութեան ահաւորիդ բարերարութեան։ Անըղձածիր [14] օծմամբ շնորհի մեծախորհուրդ նըրաշագործութեան․ [15] բանզի լոյս քո մեզ ծանուցեալ ճառագայթ անհաս, ծագումն անսահման, արեգակն անպատասխրա, [16] տատող սահմանիչ երկակշիռ տարրութեանց, [17] ճրագ աւրից եւ լոյս

հեռանալոյ, [18] որով 'ի ցոյցս խմաստից եկեալ տեսութի բանիս այս յարմարութեան, տանեմք պարերգութեանք հրեշտակօրէն յատականապատ փրկչավայելուչ հնդըր-կաւ խնկեալ զպարգեւաբաշխ առատատուութիւն ամե-նախնատիդ յիւղ զուարթ անբիծ դաւանման։ Քանզի 'ի սկզբան անդ [19] կապտեցելոյ ողորմելի տխրականու-թի 'ի փչմանէ բարձրագոյն շնորհին՝ հայրն իմ սկզբնա-տեղծ՝ և հնացեալ յաւէտ մեղացն գերմամբ 'ի մահ գրաւեցաւ, կապեալ ընդ եղծման ապականութեան ան-զերծ հանգուցիւ, 'ի ծառայն պատճառաւորեալ յան-կումն անյարիր ամենակործան գլորման, հերքեալ 'ի լուսոյ՝ այսր խաւարին վայրի մատնեցաւ. իսկ դու, զը-թած տէր ողորմութեան, քանզի յաւէտ բան զնոյն ծանեար զոր ստեղծեր, [20] և զի չէին ակնկալութեանք չեկաց յոր կոչ էրն, որով անկարողանայր իսկապէս տե-սանել 'ի լոյսն վերին անմատոյց գերակայութեան ան-տահմանելոյդ ոչ մշտափայլ յարակայ վառմամբ սնա-զօտելի տարածանեցեր, այլ զիշերայնոյն ստնալիրծ մթին արհաւրաց ձեռնկալութիւն ձիթոյ՝ շարամանու-թեամբ նիւթոյ պատրուգի ընդ նոյն զանգելոյ՝ յօրի-նակ քո անախտ միութեամբ ընդ մեզ խառնելոյ՝ մար-դասիրապէս հիւսեալ կազմեցեր. զի որ 'ի ստուերս մա-հու տարագրեալ դտաք՝ կանխակորուստ անկոչն պար-տեաց, 'ի պատճառ իրին ազգակցաւ պտղոյն ջահաւորե-ցեալ հաւատոյն վառմամբ՝ 'ի նոյնն դարձցուք խնկաւո-րութիւն. որպէս և փայտիւն մահու՝ մածմամբ քո 'ի նա՝ ածեալ մածուցեր զմեզ, առաւել մեծի խորհրդոյն միաւորեալ 'ի փայտն կենաց։

Դ. Այլ արդ [21] որպէս ոչ է որ լցմամբ առանց գիշե-րոյ, և ոչ անօրէնութիւն յարկի առանց ձիթոյ պիտոյից խնդրոյ. քանզի իբր օրինակն հասարակայինն ոչ նուիրա-ւոր՝ զմարմնաւոր աչաց տեսութի լուսաւոր առնէ, նոյն-պէս և մաքրեալն քոյինաշունչ շնորհին ընտրութեամբ անխմնալեաւ զաներևոյթ հոգիս միութեամբ 'ի մեզ անտեսից հրաշափառապէս պայծառացուցանէ։ Զի որ-պէս [22] յիջումն լուսարանի տուրք աւազանին լուացմամբ մարմնոյն զանձինն հաւատամք առնուլ սրբութի, նոյն-պէս 'ի յօծումն իւղոյն պարարեալ յաւոյն՝ զհոգւոյն զօրութիւն առնեմք և 'ի նոյն հանմարիք ունել ամենայ-

նիւ աներկմտելի ։ Այլ որպէս հրամանդ տէրունական օրհնաբանելի զքաւութիւն մեղաց ախտացելոցն [23] նախակնձնէիր, իսկ ոչ հաւատ ունողացն առ այն՝ բժշկութիւն հրաշալի յանդիմանակաց անտուստ առնելին մարմնոյն տեսակի հաւատարիմ վկայ անդարձիցն հաստատէիր, սոյնպէս իւղս այս փրկութեան լուսոյ կատարեալ՝ հեղեալ 'ի մեզ օծանէ զարտաքին խորանս. իսկ զներքին մարդս աներևակ ծածկապէս մնեալ՝ նոր կենդանածնէ ։

Դ. Պատկեր պանծալի [24] այս զանգուած նիւթոյ արարչին երկնի. քանզի որք զեւղջն կրեցին օգտութիւն՝ որ յողորմութենէն շահընծայութիւն, և դու 'ի գովեստ քեզ զայս բան սահմանեալ, թէ ողորմած եմ ես տէր. քանզի որպէս սիրոյն [25] անուան կցորդիս ինձ, նոյնպէս 'ի մասնէ և այսու զիջեալ գծագրիս՝ ըստ տնտեսութեան որ առ մեզ ։ Մեհագոյն մեծութեան խորհրդոյ յարմարաւոր [26] զխմակերպութիւն այս ձիրոյ պարարտութեան երկրի թանձրութեան հողանիւթ գոյակնութեան. զի որպէս սոյն մասն 'ի կենդանեացն ոչ 'ի կերակուր հրամայիւր անդ ըստ օրինին, այլ արարչութեանդ բոլորովին [27] պտուղ որոշիւր, նոյն նմանութեամբ ևս և աստանօր [28] իբր գգօրութիւն՝ տեառն մատչելի յայս աւանդ հաճութեան էից ՚ոյ վայելչապէս տուեալ նուիրի, հոգւոյս հարազատ զուգաձանապարհ, արարողից պահեալ և ախտեալ. քանզի ոչ շուն՝ արեան և ոչ ձէնձէր ինչ զուարթութեան [29] օրինակ հոգւոյս խնդ և կարգս ընդ անդամաթիւս մայն ծախի, այլ արքայութեանդ վերնում վիճակի տէրունական բազմականին ձօնեցեալ ճաշակ՝ այս նիւթ ջահաւորական մշտաբորբոք անաղօտելի ։

Ե. Ակ էր մատչելի 'ի նախագահութե՛ն արու անդրանիկ [30] գատիչ քննողաց, եթէ ոչ օծմամբ ինչ նշանակէր. ոչ քահանայութիւն 'ի յանկախելին տեղի ձեռնարկէր, եթէ ոչ այսու կատարեալ լինէր ։ Յակոբ ըզքարն [31] պատկեր վիմին, 'ի խորհուրդ երկար՝ խորանին ընտրութեան, օծմամբն տպաւորեալ կերպացոյց. առ որ զիջումն անճառ բարձրելոյդ տեսութեամբ սանդղոյն յարմարութեան, և զիս 'ի վեր տանելոյն անդուղէկութեամբն, զարձանն իւղեալ կառոյց նշանակ 'ի

ցուցս տարանեացն յիշատակի ։ Հարմնեան քահանայ-
ութեանն պայծառութիւն հրամանաւ մեծիդ Տյ օծ-
մանբն Ձոխանայր. որով 'ի գլխոյ անտի 'ի մօրուսն գե-
գեալ [32] գերափառ իւղոյն զարմանազան կենդանագրու-
թիւն, ըստ սաղմոսողին, զփառաց նախնւոյն առակեր
զանզրադարձութիւն և զշնորհիդ կենաց սրբութեան
ընդ մեզ խառնութիւն ։ Անգաւորութիւն ոչ էր պան-
ծալի անդամոր [33] պատկերան սուեղծագործիդ, եթէ
ոչ եղջերբ իւղոյն օրհնութեան ձեռնագրեալ՝ պսակա-
պՃնութեան Թագին յանուն քո, Քն, գլուխ ամբաւ-
նայր ։ Իսկ զփարդ զնախնին վեհից մուայոյ, զծառայն
մեծիդ և զկերպարանն անպարագրելւոյդ. ո՞չ ահա Մել-
քիսեդեկ յօրինակ Ճշմարտիդ ահաւորութեան 'ի ձի-
թաստանեաց լերինն, ուր յետոյ առք մարմնացելոյդ Տյ
զետեղեալ կացին, [34] 'ի վերնոց անտի հրեշտակաց [35] 'ի
պտղոց տեղւոյն իւղեցաւ. ուստի [36] շիրմի սկզբնահօրն
պաշտպան եպիսկոպոսական արքայապատիւ Ձոխութ
'ի քէն հանդերձեալ նոտաւ, մինչև յայանեցար երևեալ
լրմամբ համայն խնկութի ադամայլին կենագործութեգ ։
Դ. Իսկ արդ, քանզի քո են շնորհք և քեզ վայելէն
գոհաբանութիւնք, օրհնաբանեալ որդի Տյ, դու ինքն
յարմարեա [37] բարենշմար տպաւորութեամբ զաղաչանս
իւղաւորականս խնկապատարս զմուսայրս պատՃառ քեզ
փառաց, և ինձ մեղապարտիս առիթ բժշկութեան. մա-
տո, տէր Յն, վկրացս աներևութից [38] զայս ձէթ լու-
սանիւթ, և արկ 'ի սոյն խարանս խոցոյ մահացուի զկա-
թուած օրհնութեան իւղոյդ փրկութեան անապակ գի-
նեաւ սիրոյդ, միութ արարչականաւ պատպարեալ
պատանօք խնամոց. զի յիշատակարանս թարգմանօրէնս
բանիս մաղթանաց՝ վայելչական իմն յարմարութեամբ
'ի թևս հոգւոյդ զկարգ իւր գտցէ ։ Ի վերայ Գլխութի
հոգի քո, բարձրեալ, յայնմ օրէ խաղաց. յորմէ օծու-
թեամբն նուիրեցաւ ։ Աւուղ յայլ յայլ և 'ի մարգա-
րէս սմանս անտուստ իսկ գրեցաւ, յորժամ օծումն ժա-
մանեցաւ գագաթան նորին. [39] արքայութիւնն սարեա-
տանեայց օծմամբն գրաւեալ մատուցաւ 'ի կցորդութի
տանն Իսրայէլի. [40] կայսերս սմանս նշանաւորս վեհս և
երևելիս 'ի խժականաց բարբարոս ազգաց իւղս այս կեն-
սացնցուղ ցօղով անձրևեալ՝ իբր կարթիւ որսացաւ 'ի

յընտանութիւն հպատակութեան մեծիդ այ. բանն որ
առ Կիւրոս [41] երկնաւորին պատուասիրութե՝ զօծեալն
ձայն նմին մեծ վարկաւ. ձայն սաղմոսողին [42] գեր քան
զմարգարէութիւն զօծեալն անուն նախայայտմարեաց,
կանխափակ ընդմիջարկութեամբ պատուէր աւանդեալ,
մի մերձենայք և մի մեղանչէք. առ Հեղխոս տաւրե_
լութիւն ծայրին հրամանատրութեանն, [43] նշանակ իմն
հանելոյ ՚ի պաշտամանէ անտի Բահաղու, զօծելութ՚ին
՚ի Բորեք ազգեաց Յէուայ և Ազայէլի: Եւղ թափեալ
անուն փեսայիդ ՚ի հոգելից բանից իմաստնոյն վերա_
վկայեալ՝ կանխաւ իսկ գրեցաւ. [44] որպէս զի հոգին, ոչ
յաւէտ պատկեր և նշանակին, զ՚ի փոքուս զմեծդ կեր_
պագրութիւն քև նկարագրեալ՝ ընդ քեղ միասցուք առ_
մամբ քո շնորհիդ:

Է. Այլ զի և ես երկարս [45] պատուածորէնս բացակա_
նագոյնս գծագրականս և առակաւորս շարագրեցից ա_
ռաջի վերնոյդ և ահաւորիդ մաղթողական բանաստեղ_
ծութիւնս. տէրդ և կենդանարարդ՝ արարիչդ երկնի և
երկրի [46] ՚ի յօծմանէ անտի սկսար քարոզել զաւետա_
րանն արքայութեան, վկայեալ անուամբ ՚ի Յովհաննէ՝
օծեալ և զաւն այ բարձող մեղաց աշխարհի: Օ՜ ի թէ_
պէս ընդ օծմանն օրհնութեան հոգլին էր քեղ խոկա_
բար լումամբ և ածութեանն խառնութիւն բոլանդա_
կապէս, այլ անուննն պաշտի խորհրդեամբ շնորհին հրա_
շափառապէս ազդելոյ ՚ի սուրբսն. զի զատրկութիւն ա_
ղամեան մարմնոյն մեծանալ յաւէտ այսու յորջորջ_
մամբ պատրաստ արարցես: Բացեալ զառածս մարգա_
րէութեանն Եսայեայ՝ դու ինքն [47] ածութինդ մար_
գացեալ ընթերցար, հաւատարիմ առնել զբան ծա_
ռայից քոց, տէր. և իբրև ծանուցեալ եղեր օծութ՚ն
՚ի կարգ անդ բանին, թէ հոգի տեառն ՚ի վերայ իմ՝
որով և օծ իսկ զիս, ապա [48] փակեցեր ՚ի հանդիսա_
փառն օծելութենէ զորքանութ՚ի երկաքանչիւրոցն յայտ
արարեալ խորոցաւ սահմանի՝ ընդարձակ հեռաւորու_
թեամբ մեծաւ կնքեցեր, զմերս կաթուածով ինչ շնոր_
հազարդեալ, և զքոյդ խոկութեամբ ընդ հօր և ընդ հո_
գւոյդ հաւասարութեամբ թարգմանեալ: [49] Ի նախա_
ծանօթ մերակերպութեանն պանծալի իմն զոլեստի՝
օծեալն կոչմամբ ՚ի հրեշտակացդ փառատրողաց արարա_

ծոյ երկրի ծանուցար ։ Զոր մարգարէն կանխաւ գու-
շակեաց զ'ի Յորդանան, և յընտրեալն լեառն Թաբո-
րական հայրենի ձայնիդ եկաւորութիւն, թէ [30] որ պատ-
մէ 'ի մէջ մարդկան զօծեալ իւր ․ զոր սաղմոսին ձայն
կանխաւ պատմէ՝ Հզօրիդ փառաց զայս պատիւ [31] առ 'ի
զառեալդ ձեռնադրելոյ, օծ զքեզ ա̃ծ՝ ա̃ծ քո իւղով
ուրախութեան ։

Ը․ Հոգի երևաց մերոյ տէր Ք̃ի ․ որ է [32] օծեալ ա-
նուանդ խակոյն, որով զփչումն կենդանութեան 'ի դէմ
մեր լոյս բարերարութեամբդ քո ազդեցեր ․ [33] իմաստու-
թեամբ ումեմն երջանկի՝ մարդասիրութիւն խոստովա-
նելի, ասելով առ ոմն, թէ եղ վկայութի՞ առաջի տեառն
օծելոյն ․ զնոր աւետեացս վկայելով, թէ կօշիկս անգամ
ոչ առի յամենայն մեղեաց ։ Աշըգոյն երգ [34] իւղեփե-
ցական զինի զԱ՛ստուծոյ ծանուցեալ զխորհուրդն 'ի
գովեստ հարսին ասէր եկեղեցւոյս՝ զմուռս առաքինու-
թեան համբերձ ամենայն առաջին իւղովն ․ և ես զը-
մուռս և կնդրուկ մաքրութեան վարուց ամենայն փու-
շեաց անուշից իւղովքն զանգեալ՝ անգուտին և այսր յա-
ռաջաբերեաց ։ Պանծիւք զկենդանատու մահու քո, Ք̃ս
թագաւոր երկնի, 'ի վեր քան զօրինակ կոչումն ձայնի
զայս անուանադրեալ վկայեաց յայտնի, թէ զինի վաթ-
սուն և ինն եօթներորդացն սպանցի օծեալն, և օծեալ
առաջնորդ զքեզ յորջորջեաց ։ Որպգակիր աշտանակն [35]
Զաքարիայ Եգովայ՝ որ 'ի Նաբէքեայ [36] իւղոյն բա-
րեբաշխ բացատրութեամբ 'ի մասունս եօթանց առա-
ջադրութեանց զնդիցն վառելոյ՝ 'ի ջահէ անտի զօրու-
թեամբ անեկամատարար վերձակուորեալ, զ'ի քոյդ լրու-
թեանէ 'ի մեզ փրկութիւն և օծելութիւն գերաբնագէս
նախազեկուցեր ։ [37] Զոր ըստ օրինին անուսուտ գուշակ-
մամբ 'ի խորանին որ 'ի տաճարին՝ ամէնըմգեալ ինն կըր-
թութեամբ սովորաբար մատուցեալ լինէր, պանք բա-
զարջընծայք և նաշխհք իւղովք խառնեցեալք, և զաւա-
րակք եղանց իւղարկեալք, և տիրական անուամբ ձայ-
նեցեալք, և հաւատց անանց թաթաւմամբ յագգակից
ճարպին 'ի յարիւն, այսր խորհրդոյ առձեռն անսակք և
նշանակիչք յարմարականք քեզ, միածին ծնունդ օրհ-
նաբանեալ մեծիդ ա̃յ ․ միայն դու օծեալ նորոգ և զար-
մանալի՝ ինքնութեամբ համայն էութեամբ իսկապէս
լրմամբ ամենայնիւ անպակասելի ։

Թ. Այլ զի ես իցէ բազմապատիկս նշանակել առ այս
մեծ խորհուրդ անհասանելի, [58] և ոչ ճաշակել զքեզ,
քաղցրութիւն. իմանալ քև զայս՝ թէ զի՞նչ իցէ իւղն,
եթէ ոչ զախորութի՞ն 'ի փայտն պարտեաց սովիմք բժըշ-
կեալ, ըստ սաղմոսողին, զուարթ գործեսցես. և զի՞նչ
պարարտութիւնն, եթէ ոչ զկերակուրն մահու սովու
մոռացուք լցեալ 'ի սմանէ. և զի՞նչ օծութիւնն, եթէ
ոչ զմխրոյն թշուառ տեսութիւնն 'ի ձեռն սորին փո-
խարկեսցուք 'ի պայծառութիւն յաւէժ ուրախութե,
անուամբ քո փրկեալ յոգի զօրութեան՝ հօր անուա-
նեսցուք. և զի՞նչ արգեօք մարգարէին հոգևոր ըղձա-
կանութիւն ամենատենչ բաղձմանայն իցէ իմանալ, [59]
որպ ծերութիւնն առակի 'ի ձէթ պարարտութեան, և
կամ օծանելն իւղով զգլխոյն վերամբարձութիւն, ե-
թէ ոչ զհի՞ն խարդախութիւն սգոյն սատակութեան 'ի
մահ կործանմամն կենագործեալ դեղովս այս կենաց՝
պատսպարեալ օժանդակեսցես. և զի՞նչ [60] Հրագին լու-
սաւորելոյ շնորհակալութիւն, եթէ ոչ 'ի մէջ իմն ան-
յուսութեան մեղային միգի և կռապաշտութեանն խա-
ւարի՝ կերպակցապէս մութեամբ 'ի յիս Նմանունել.
և կամ զի՞նչ մարգարէն ա̃ծաբանեալ 'ի սփոփանս զու-
ւարթարար օրհնութեան՝ նշանակ յայտնի վայելչա-
պէս ումանց ասէ, օծցին իւղով 'ի միրոյ պարզելոյ. և
կամ իմաստունն 'ի գիմաց հարսինն ասէ օրիորդացն,
հաստատեցէք զիս իւղով և գեղեցկազարդ խնծորով
յարկեալ ծածկեցէք, և [61] 'ի պարտէզ իւղենեաց տա-
ծեալ զրգեցէք, եթէ ոչ այսր ահա [62] ընտրական նիւ-
թիւ հոգւոյդ քո լցեալ՝ 'ի սոյն լոյս տեսցուք զանխա-
նալիդ 'ի մեզ բարձրութիւն գովեալ։ Այլ արդ քեզ,
միայն իմաստակալ, պատճառ բարի [63] բնաւից եղելոց,
ձեռն համբառնամ տարածմամբ բազկացս, երիկամանցս
գործակցութեամբ, սրտիս հեծութեամբ, լեզուիս և
շրթանցս ձայնարկութեամբ. լուր ողորմութեամբ, տէր,
պաղատանացս խնդրուածոյ առ քեզ կարդալոյս. շնոր-
հաւորեալ այսու պարգևօք՝ գոհաբանութիւն քեզ վեր-
ընծայեմ, հզօր ահաւոր բարձրեալ անքնին, անփակ
փափաքմամբ միշտ համբուրեցեալ, սուրբ սուրբ և միայն
միշտ սուրբ, օրհնեալ հանապազ յաւէժ անդադար եր-
կաձայնութեամբ։ Ընձեռեա առաւել բարերարութիւն

'ի սպառ վճռելոյ. սուր յոյս քաղցրութեան՝ [64] ոչ մնալին միոյ մատուցման լուսոյ արժանաւոր ինչ համբե-րելոյ, լայնել քեզ, բարի, գթութիւն ծածուկ խոր-հրդոյս, դրդութիւն խառնեալ ընդ աղերս՝ սակս ընդ Պաւղի, ընկալաք ա՟ծ զողորմութիւն քո, և զծածուկս գաղտնեացդ անտեսից՝ իմաստութեամբ քով յայտնի արարեր.

Ժ. Քու արդ մեծութիւն քեզ, ամենակալ տատա-ձեան աննուազելի, ամենափոյթ առ 'ի գթութի, մըշ-տայօժար 'ի բժշկութիւն, զի միացուցեր խառնեցեր ընդ մերձաւոր դիւրագիւտ [65] ընտանի նիւթոյս զհրաշս ան-ճառս քումդ ըզանցելեաց ահաւորութե. Քանզի զոր երկին ամենայն բարձանց՝ երկիրս լայնութեամբ և ան-դընդոց նեղընդոց խորութեամբ՝ ծովուց բազմութեամբ ոչ զօրէ տանել, այլ ևեր դդոցն 'ի մեծէ բերի. 'ի փոքր դոյս տեսականեցեր զօրութեամբ՝ սահմանեալ ճշմար-տապէս անհրապուրելի. զի մի նորոգ իմն երեւելով յայտ նութենէ՝ առ այս հարևանցի [66] երևակմութիւն ինչ վարկանիցի, մնասորել քան թէ բժշկել անընտրաբար զկարծիս մտաց. Քանզի [67] որպէս մարմին քեզ հաւա-տապէս, որհնաբանեալ որդի ա՟յ, խնկութիւն և ոչ օրի-նակ 'ի յարդեանցն ցորենոյ արարչապէս մշտահանդեր-ձեցեր, և կայլակ կաթիլ զարիւն խաղողոյ, և արգանդ կենաց հագևոր ծննդեանն զաւազանութիւն ջուրց յոր-դութեան, նոյնպէս և զհողի անմահին փչմամբ՝ սոփա և 'ի սոյն արդիւնաւորեցեր. [68] երկուք կենաց՝ որոյ կեր-պարան յառաջ եկելոյն և ոչ հեթանոսութեամբ է փո-խարկութիւն, որպէս ոչ անտանագրութեան խաչական փայտի ինչ երկրորդութիւն, նստելոյս յերկիր խառա-րի լոտ նմանութեան քո, տէր, ծաղկեցեր. Քանզի [69] յոյս կերպարան ճոխոյհի զմնոյակտ լոյութիւն անհա-սից յայտնեալ աշխարհի լուսաւորեցեր, զի մի անանկն կարօտացի և մի ընչեղն բարձրամտեսցէ, լոտ օգոյ հա-ւասար բաշխման և լուսոյ արեգական տարածման և ջրական վտակոյ ղեղման. զի հաւասարապէս բաշխիր երկրածնաց մանանայնն զուգամտութեամբ՝ փրկունցն տաւել քան մեծամեծացն.

ԺԱ. Իսկ այս նիւթոյ [70] անտառութիւն խորին խոր-հրդոյս և 'ի ընտաս անտաւս հրաշապէս անի զեթարգ-

մանութիւն. որպէս զի ոչ երկմտեալ ինչ շուարմութե
անհաստատապէս զանգի փոխէ, և ոչ նենգաւորաւոր ըղ-
ընակութիւն ինքեան կրանէ. քանզի ոչ մերձնակաւոր
անձնաւոր հերքի, և ոչ յընդդիմանիցէ ումեքէ, որոշեալ
արտաքս եղանէ: Այսն զի որպէս [71] պատահումն զանոյ
յեւութիւն մարմնոյ անփոփոխ իմն և անհրաժեշտ, որ
զոլոյն զայացուցանէ և ոչ զոլոյն ապականէ, այսպի-
սեաւ իմն յարմարութեամբ խղճիս զօրութիւն անդրո-
ւմն 'ի յերկրոյ անտի կերպարան զառեալն ունողի մխա-
նական զուգութեամբ ընդ մեզ խոկ կցորդեցեր, ակը
Ճն Բն, ընդ իրին զոյի և զօրինակն ծախկելով. քան-
զի զանխնմանդին տեսութեան աչաց և մտաց ըղձից 'ի
գեն բերեալ կերպաւորեցեր, 'ի պարզ երկրի ծնեալ
մեկով զարմանալեօք հրաշագործութեամբ մասնակա-
րարիլ մեզ պատրաստեցեր: Նմանապէս զի [72] ոչ յո-
լովից խառնից 'ի մի եկեղոյ խմբակցութենէ զանազան
ծաղկանց, բստ հնոյն և սաուերին բաղմատրեան այ-
լայլութենէ, զայս իղ ծնութեան հրամանատարեցեր,
այլ իբր զօրինակ փոխեալ զայն առ այս՝ զու ինքն խառ-
նեցար 'ի այն մարմութիւն մերմնոյս ձիթոյ: Եւ թէ-
պէտ անձնան են համեղութիւնք բուրմ անուշութեան,
և [73] ընդ օրինակաց իրիք ոչ համեմատի, այլ ծաղիկ դաշ-
տի և շուշան հովտաց և նարդոս բնակի և եղեգնախառնի
խառնեալ հոտուելու, յարմարութեամբ հոտոյ քրքմոյ
փթթեալ ողկուզոյ և աղնիւ զինւոյ, ոչ սակ քան թէ
խղճի միութեամբ պատշաճապէս օրինակեցար փառա-
ւորեալ անուոց անունին, որ զամենայն ինս, և յիրի
խմբէ ամենեւին ոչ կարօտանս: Ոսափ [74] ոչ չփութե-
լովք 'ի հակառակոց բնադատութեանց բաժանեալ
կանանց մեկնն առաելի, այլ 'ի սիրոյ հաւանութենէ առ-
տուածապէս 'ի մէջնոջ պարարխ, վասն մեր բստ մեզ առ
ամենայն վայելչական նմանութիւն օրինակեցեալ. առ
որս լոյս բարի և հօր ջեռուցիչ, առաւ սիրոյ աստից մա-
սին ինչ չնչմեան ստդթական ստանայութ է այս զան-
գուած նիւթոյ կաթուածոյ ձիթոյ մարքար մոաց տե-
սեալ խմանի, որով յիրաւի սովոր 'ի յան է միանալի:
Ընդ Աղամանի ծերոյ ողջեզրիկցելոյ ոյ երգեաց բերա-
նով հարսին երկնաւոր փեսայից բարեբան գոհարա-
նութիւն, համբուրեալ 'ի յեղծ մտաց զհառ իղոյ քոց

քան զամենայն խունկս, և իբր զբանս կենաց յաւիտենականաց ունողի, ըստ հոգելից բանի իմաստնոյն և [76] մածքան աւետարանչին, զհետ քո 'ի հոտ իւղոյ քոց ընթասցուք [76] լուացեալ զերեսս ջուրբք կենաց, որ 'ի վեր է քան զերկին օդոյս այսորիկ, և օծեալ զգլուխ անախտական իւղովդ երկնայնով՝ յանդիման եղէց քեզ ուրախութեամբ, զուարթապէս և ոչ տխրաբար։

ԺԲ. Ո՞յս իւղ խնկելի [77] պաշտելի և երանելի, ոչ սոսկ օծումն ուղղոյս սենեկի, և կամ հերաց վարսից գագաթան նպաստ ինչ մատուցանի, եթէ ոչ տէրունական կենսատու խաչիւդ տեառնագրեցի։ Այն իւղ զարմանահրաշ որհնութեան լուսոյ զհրեայն և [78] ըղխումն՝ զհնդիկն և զբարբարոսն՝ զսկիւթացին և զելլենացին՝ զգուժն դժնէաբար և զարհաւրատեսակ շանագլուխն սոսկալիթխար, զտէրն ազատ և զստրուկն ծառայածին՝ քրիստոսեան արարեալ, անուամբ քո կնքէ, և հոգւոյդ սրբոյ ընծայէ, և հօրդ երկնաւորի հարազատ որդի հաստատէ։ Բազմօրինակ են սովաւ արուեստից տեսմունք յարմարեցեալք [79] նախ նիւթոյն, ապա զօրութեանն։ Քանզի իբր անօթ փայտեղէն մինչչև օծեալ իցէ՝ դիւրաբար հերձի և անօգուտ եղեալ անպատուի, նոյնպէս և մարդ ոչ իւղեալ սովաւ՝ հեշտեաւ խորտակի, և մեկուսի եղեալ առ 'ի քէն՝ ոչ լուսաւորի։ [80] Ա՛ման սա քո, Տ̃ր, որով զհրաշալիսն զարմանագրես. քանզի իբր անգծելի կազմութեամբ կարծր պահպանակաւ՝ ամենապատրաստն շրջարկութ̃ պաշտպանեալ ծածկէ յայլագունակ խրթնի եկամտից. մինչ զի այսու մաքրութեամբ թաթաւեալն 'ի սմա ոչ ներկի արեամբ, և ոչ տխրատեսակ երփնիւ այլայլի։ Այս զի և թափանցանց ինն խառնութեամբ հոգեպէս ընդ թանձրութիւն [81] մերոյս գոյութեան մտեալ անցանէ. զի թէ անէծք սաղմոսողին ձիթոյ առակաւ ընդ ոսկերս չարին համայնիւ բաշխի, որչափ ևս հոգիդ սոյն ճարպով լուսոյ զաներևոյթ ներքնոյն տեսակս կենդագործեալ ողջացուցանէ, ազդումն տուեալ 'ի խորոց անտի շնչման հագագին՝ մինչև 'ի սպառուած ծայրիցն եղերաց զընաւն ընկղմէ զյիշատակ մարմնոյ մահուն արկածից. քանզի կենդանական զօրութիւն քո միշտ աշաւոր, տէր Տ̃ս Ք̃ս, 'ի սմին խառնեցեալ՝ ընդ սոյն իսկ բնակէ.

ԺԳ. Այս օծումն բարեխօսիլ և[82] առ բանամարտիկ մերկամրցմանց ըմբիշս իբր զօրաւոր Հնարից կերպարան ձգնաւորական անըմբռնելի ձեռաց ներՀակին օրինօք պաշտի, դիւաց և ախտից Հզօր ահարկու. Քանզի յորժամ յոքնապաճոյճ պճնութիւն բանին Եզեկիէլի առ խմանալին Փարաւոն, Հեգնաւոր առակագրութեամբ ողբականօք շարայարմարեալ, յորժամ եղէր, ասէ, և Հանդերձեցար ընդ օծելոյ քերովբէին, ուր արձանքն Հրեղէնք Հաստատեալ կառուցան. Օրհնաբանեալ աՀաւորութիւն[83] ամենալայր ձեռնկալութեան, որ միշտ անճառ ես բանից և գերազանցեալ քննութեանց, որ աւետարանաւն կենաց խնկիս յարակայ իբր նորածին օծեալ 'ի քաղաքի Դաւթի, և 'ի քաՀանայապետին Հարցմանէ, դու ես օծեալն որդի օրՀնելոյն, և յերանաւորն դաւանութենէ Պետրոսի օծեալ միայն որդի ա͞յ կենդանւոյ, և յայաՀաւատ քննողացն, եթէ դու ես օծեալն, ասեն, ասա մեզ Համարձակ. և 'ի կանոնականայն քոց Հաւատամք յօծեալդ ուսուցիչ և տէր ամենայնի. և Հերովդէս յառաջ քան զայն զօծեալդ անուն յայտնապէս Հարցեալ. և զխորդ գրեն, դու խոկ ասացեր, զօծեալն ա͞յ զտէրն Դաւթի զանսկիզբն որդի՝ ժամանակաւ որդի. Քանզի այսպէս ընկալաք վայելչաբար զայս թարգմանեցեալ, որ 'ի մեզ բերի ծայրն կատարման խորհրդական կոչմանն՝ վիճակ քրիստոնէից նախապատուութեան.

ԺԴ. Այնքան ունի աՀաւորութիւն միանգամայն և սրբութիւն[84] իղաւորական խնկաւորութիւն սոսկալի անունս օծութեան, մինչ զի որպէս ոչ է Համարձակել ուրուք յերկրայնոցս[85] ա͞ծ անուանել՝ այլ ա͞ծային, նոյնպէս ոչ բերէ մարմին զՔրիստոսդ անուն անձին Համարել, այլ զքրիստոնեայն. անտանելի[86] նախնւոյն մեծութեան մկրտչին՝ Ջուրբ զՀոգին Հրաւիրողին. քանզի չեմ ես, ասէ, օծեալն, այլ առաքեալ առաջի նորա. Սմին շրջէին, որպէս բանն ազդէ աւետարանչին Մարկոսի,[87] առաքելականացն ընկերութիւնք, իբր ազգակից Հարազատ ձեռնոդ ա͞յ՝ այսու վարեցեալք. քանզի իւղով օծանէին և առանց մարդկային Հնարից անուանք քո բժշկէին. Սան զի որպէս խաւար 'ի լուսոյ և[88] ցաւ յառողջութենէ, գիշեր 'ի տուընջենէ և մաՀ 'ի կե-

նաց, այսպէս և 'ի սոյն իրէ տիրապարգևէ ամենայն չա-
րին երևոյթք մերժին խափանին և բնաւին ամփոփին ։
Վասնզի որպէս ձմանք զազիրք և փոքր զեռունք սարդից
և [89] ոստայնանկից իբր 'ի դեղոյ մահու յայսնիւթոյ սպա-
ռեալ պակասին, սոյնպէս լրութեամբ շնորհի օրհնու-
թեան սոյն իւղ զօրացեալ՝ և զայս վանէ և զմուրհակս
չարեաց ջրէ և զվձիռ մահու պատառէ ։ [90] Սա է առա-
ջան կատարեալ՝ առանց օծման օժանդակութեան ։ [91]
Եթէ աւազակացն մահու խոցման զմարդն առաջին, [92]
այս դեղ փրկութեան մատուցեալ տուաւ. եթէ անձա-
րակ վիրացն Հակոբայ և Իսրայէլի, սոյն իր պատուա-
կան յիշատակեցաւ. այս իւղոյ փափաքեալ Դաւիթ՝
իբր ծիթենի պտղալից 'ի տանն այ̃ [93] յուսով յարակայի,
լրեալ զթլփատութիւնն՝ անդստին զմկրտութեանս շը-
նորհ գուշակէ ։ Եւ զի է ինձ զայսմանէ ձառել, և հա-
մայնին կարծել հասանել, որ [94] և ոչ վերինքն զօրեն
ձեռնարկութեամբ ինչ բանի [95] զսոյն խորհուրդ 'ի մտա-
նաւորէ ինչ ձառելով նշանակել, թողում ասել՝ թէ
յիսկութենէ ։

ԺԵ. Փառք քեզ միշտ և յամենայնի, անմահ Թա-
գաւոր, 'ի յայժմու երգեցեալ [96] օրհնաբանութեանս,
զոր արարեր և կատարեցեր առ իս, բարեխնամ գթած
և երկայնամիտ, հարուստ և առատ ամենայաղթող. ան-
դրստին 'ի հարցն գծագրելով զօրինակն՝ մինչև 'ի լրումն
ածեր զփրկութիւնն ճշմարտապէս ։ Դու լոյս իսկ բնու-
թեամբ և արեգակն մշտապայծառ, և զաշակերտացն
դաս լոյս անուանեցեր, որով զարարածս ամենայն երկ-
րի ձառագայթիւք երջանիկ շնորհի նոցին լուցեր ։ Ըն-
կալար զիւղն անուշութեան [97] յումեմնէ 'ի յոտս՝ յօ-
րինակ ընդունելութեան մաղթանացս քեզ, և 'ի միւս-
մէ պռունկէ 'ի գլուխ՝ նշանակ սիրոյ գթութեանդ առ
մեզ. մշտափափաք բաղձանօք անտահմանելիդ 'ի սոյն
հաստատեալ, [98] մինչ զի ուխտիւ անփոփոխադրելեաւ օրէնս
յարակայս օրհնաբանելիս՝ քոյինահրաման պատուէրս
կենաց ընդ համօրէն աշխարհ քարոզել զսակաւաձեռն
իւղոյն յարգաւորութիւն, զարմանս հրաշից լուացն
առ ապառնեացն յուսադրութիւն ։ Դուք օծութիւն
ունիք զորոյն՝ ասաց [99] երջանիկն առաքելութեանց,
մեկնեալ զխորհուրդն որ 'ի մեզ զեղեալ յաւելու-

թենէ կենդանարարիդ անպակաս բովանդակութեան։ Սեառն յաւէտ իմն յարմարաւոր և հանդուցանատոյ[100] 'ի մասնաւորն նմանութիւն լուսոյդ և հոգւոյդ սըրբոյ՝ այս կաթուած օրհնութեան 'ի վերնոյդ բարերարութեանց անսպառաբար սրսկեցեալ 'ի մեզ, և սոփրոյս, իբր զնախաթիւ գոլ ստեղծուածոց և արարչութեանց պատկերակից, որով զխաւար մթութեան մեղաց հալածես. [101] Իսկ հուր, զի յամենայն տարր արարածոց հաւասարապէս ունի զուգութիւն ըստ էականին կշիռ բաշխութեան, ծածուկ և յայտնի, լեալ և ծանուցեալ. և եթէ ոչ ընդհարցի 'ի հակառակէն, ոչ յինքնաստատ յօժարմտութենէ բաղձայ բորբոքիլ։ Դարձեալ[102] և օծումն, զի արքայաբար որդեգրեալ ընդ քեզ 'ի ժառանգութիւն հօրդ մատուցես. ողորմութեանդ ազգակցաւ նկարեալ 'ի մեզ անեղծանելի՝ 'ի հանդերձեալ փառսն փայլեցուք. դարձեալ և հողի, զի մաքրեալ զարկածս խաբէութեանն՝ որ 'ի բանսարկուէն ներգործութենէ, նորոգ փոփոխմամբ հոգւով և ճշմարտութեամբ հօրդ երկնաւորի երկրպագեսցուք, բնակեալ ընդ քեզ յուսոյն հաւատովք, ամենապարգև։

ԾԶ. Ո՜հ արդարեւ յաւէտ իսկապէս իւղս այս լուսապատար[103] խնկալից՝ վերնականից սիրոյ տեսութի։ Վասն որոյ և Պաւղոս իսկ պատշաճ վարկաւ 'ի ճառ գոհաբանութեանն՝ ասելով յայտնի, [104] որ օծ զմեզ ձեօք հանդերձ 'ի Ք՜ս Յ՜ս՝ ա՜ծ է, որ և կնքեաց զմեզ և ետ զառհաւատչեայ հոգւոյն 'ի սիրտս մեր. և դարձեալ, մի, ասէ, տրտմեցուցանէք զհոգին սուրբ ա՜յ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան։ Պատուական և անվանելի[105] օծութեանս յորջորջութիւն՝ իբր 'ի նորումն յաւէտ քան 'ի հնումն. քանզի բանն դաւթեան սաղմոսին զոխրականն տնօրինականաց սկզբնաւոր կրեցդ խորհուրդ՝ ճշմարտաբար վերաստահմանէ, ժողովեցան կուտեցան իշխանք ժողովրդոց վասն տեառն և վասն օծելոյ նորա։ Մարգարէութիւն մեծ սպասաւորեալ զանսրբելի արեանց պարտիս հրէախումբ չար մոլեգնութեանն՝ որ 'ի տէրդ յանդգնութիւն, ո՜վ է[106] որ ձգիցէ զձեռն իւր յօծեալն տեառն և քաւեսցի. քանզի թէ և յազգայնոյն սպանմա Սաւուղ, այլ ոչ 'ի սպառ մերժեցան յամօթ և 'ի նախատինս ազգաց օտարաց, մին-

չև արեանդ ա՜յ հաղորդեալ գտան։ Գրաւական մեծ յի-
շատակի ապագայից ժառանգութեան [107] աղօթանուէր
աղերսարկութիւն ասել սաղմոսին, վասն Դաւթի սի-
րելոյ քոյ մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ.
և դարձեալ, նայեա և տես յերեսս օծելոյ քոյ, և արա
ողորմութիւն ընդ օծելոյ քոյ։

ԺԷ. Զեռանդն քո, Տ՜ր, երկրպագեալ պարգևատրու-
թիւն այս հիւթ լուսակիր. քանզի [108] ոչ այլ մեծ բարձ-
րութիւն յարքայութեանն Զօրութենէ ասէ մարգա-
րէն՝ 'ի գլխոց քոց, տէր, քան թէ գտի զԴաւիթ ծա-
ռայ իմ և իւղով սրբով իմով օծի զնա։ Աստի կիրթ
իմն յիշատակաւ զքոյդ համբուրեալ լուսոյ օծութիւն,
տէր Յ՜ս Տ՜ր, ծանիցուք զքեզ անփոփոխ միանձնաւո-
րութիւն, թէ դու ես ամենայն՝ և յամենայնի միայն
թագաւոր թագաւորութեանց, և ճշմարիտ օծեալ իւ-
ղելոց. փառաբանեալ երկրպագութեամբ երէկ և այ-
սօր։ Քանզի զոր օրինակ պատրոյգ թացեալ 'ի ճար-
պում ոչ երևեցուցանէ ինչ նշոյլ՝ մինչև հուրբ լուցեալ
վառիցի, սոյնպէս և այս օծութիւն լուսոյ առ 'ի մեզ հե-
ղեալ 'ի հանդերձեալն ջահաւորի։ [109] Այս է կերպա-
րանին մեկնաւոր բացերևութիւն, 'ի նախնեացն և այսր
բերեալ բարենշան իմն յարմարութեամբ՝ հրաշապայ-
ծառ երանգաւ գունեալ։

ԺԸ. Արդ այսոցիկ պատճառ [110] վերագոյն մասանց
կեցուցչաց ա՜ծականաց արարչութեանդ հարազատոց, [111]
առանց որոյ ոչ է գրել քրիստոսեան, և ոչ նազովրեցի
անուանել, և ոչ յիշատակել յորդիս Յուդայի, և կամ
խրախոյս բառնալ յանուն ա՜յ Յակոբայ, այս [112] հի-
թականութիւն օրհնութեան ձիթոյս, յորում սուրբ
Երրորդութիւնդ խառնեցեալ միաւորի, ճառագայթ
շնորհաց, [113] շուք մերոց գլխոց, նկարագրութիւն երե-
սաց, բարեձևութիւն պատահմանց, լուսաւորութիւն
աչաց, տեառնագրութիւն բրաց, վայելչութիւն այտից,
զարդ կերպարանաց, պահպանարան շրթանց, [114] հան-
դերձիչ կրօնից, յարմարիչ վարուց, շաղկապ հաւաք-
մանց, զօրութիւն անձանց, ուժգնութիւն զինեցմանց,
խափանիչ [115] յուռթից, քակտիչ հմայեկաց, նահան-
ջիչ ձեռնածուաց, խայտառակիչ կախարդաց, գտիչ ա-
ղանդից, բռնախոյեան դիւաց, փարատիչ ցաւոց, [116] կա-

տարիչ կնքեցելոց, տենչանք երախայից, [117] անգնին ար-
տաքնոց, հիացումն հեթանոսաց, նախանձարկու ան-
հաւատից, մերկացուցիչ գաղտնեաց, [118] յորդանք յետ-
նոյ, փառք ստրկաց, պճնումն կանանց, աճեցումն տը-
ղայոց, հրճուանք ծերոց, ձեռնադրիչ նուիրելոց, զգու-
շութիւն մաքրոց, պսակ թագաւորաց, ճոխութիւն ար-
քայից, յառաջադրութիւն կայսերաց. Քանզի զոր օ-
րինակ ամեն ինչ կնքեալ՝ նշանակիչ իմն է, [119] ներքնայ-
նոյն մեծագնութեան, նոյնպէս բարձրութիւն շնորհին
'ի մեզ սոլաւ ծածկեցեալ յանուն քո, ամ տէր Յի-
սուս, վայելչական իմն տեսակաւ ծանուցեալ նշանակի. [120]
Իսկ անունն իսկոյն անդստին 'ի նոյն յորջորջեալ կոչ-
մամբ, ըստ հոգելից արանց իմաստնոց՝ որ յեգիպտա-
ցւոց անտի սկսեալ, 'ի դէմս ածելով զիրին կերպարան՝
աշաւոր խորհրդոյ պատկեր.

[121] Սակս սրբալոյս իւղոյն մեռոնի ։

ԺԹ. Քանզի մեռոնս այս օրհնաբանեալ, [122] զոր մար-
գարէն կանխաւ լոյս աչաց գրեթէ զսոյն աղերսեալ
խնդրէր, ըստ քերթութեանն բառի որ ըստ խորութեան
Հոմերոնի, թարգմանեալ [123] խմանի, ինձ մայր. այս-
ինքն է՝ առ 'ի յինքն ձգող զմերս բնութիւն զօրապէս,
և կայուն հաստատել չքնաղ փոփոխմամբ զջուրց լու-
ծականութիւն առ աւազանին լուսաւորութիւն. և իր-
րև զգեղ մածուցիչ կաթին՝ 'ի նոյն ինքն յեղանակել
զցնդեալս իմ վայրագութիւն, և զաղբերց հեղեղեալ
մշտահոսութիւն. [124] Իսկ մառնամուտ՝ որ և այս մի-
ռոն, ըստ այլում բառի ցուցանի. այս ինքն է՝ մթին, որ
և խաւարչուտ գոլ և ծածկեցեալ՝ կամ անտեսական.
որ և սոյն կոչումն դիմառութեան չէ օտարացեալ. քան-
զի արդարեւ յիրէ անտի անունն նշանակի. վասն զի
անքնին է այս խորութիւն յաւէտ քան զամենայն սըր-
բութիւն սրբոց. Ո՛վ ի ոչ եթէ ջրոյ օրինակաւ զաղտ
ինչ լուանայ, և կամ հացի բնութեամբ զսիրտն հաս-
տատէ, այլ նորոգ իմն յարմարութեամբ 'ի մասունս ազ-
գողականացն անօրինապէս տեառնագրի. սակայն ան-
հասութեամբն վերնականաւ և զանունն ունի անքնին.
Քանզի որպէս ամ [125] իսկ և իսկ 'ի լոյս անմատոյց սաի,

իսկ անտահման փառաւորութեամբն յեղանակաւ իմն անբաւութեան 'ի խաւար անգիւտն ծածկեալ խնամի, փակեալ արտաքուստ 'ի ձեռնարկութեանց մերոց խնամոց, նոյնպէս և այս ծորումն լուսոյ 'ի լեզուաց սմանց ճարտարաց 'ի ճաշ ճնմութեանց գրականապէս անունադրութեամբ մնայր առձայնի, վասն ոչ զօրելոյ երկրածին բնութե զխակն զխուելոյ ։ Իսկ զերկաքանչիւրս [126] ածականացն անգատին յինքեան հարստաբար տիրապէս ունի. քանզի 'ի կոչումն անուան բարձրելոյն նմանակերպեալ՝ կրկին մեծանայ իւղս այս նուիրեալ ամենաբուրեան ախնի կնդրկաւ. վասն զի ած մեր հուր ծախիչ է ըստ Մովսէսի, և դարձեալ լոյս է ըստ Յովհաննու. ուստի և Եսայի ճշմարտապէս զայն ակնարկէ, եղիցի, ասէ, լոյսն Իսրայէլի 'ի հուր ։

Ի. Դարձեալ այլ իմն կերպացուցանելով զբանս առ 'ի նոյն պատկեր յայտնութեան իւրի. վասն զի ոչ մնանամ [127] զիմն նորկութիւն՝ որ 'ի գլթութե մեծիդ քաղցրացաւ՝ վերստին զովեստիւ օրհնել. քանզի [128] Մեռայ, որ է դառնութիւն, այս ինքն՝ նշանակ իմն յարմարական չարչարաւոր կրից տաժանմանց, որ և միւսն ստուգաբանեալ մեկնապէս ըստ մեզ՝ մեռելութե աղգականութի ։ Քանզի այսու օծմամբ հոգևորականաւ խզեալ կամ հատեալ 'ի նստիատէր մահակերպարան տաղտկազգական հեշտութեանց հակառակողին, որ օգախնաւ մեղկութի զքնարս ձայնատրական և կամ զարկուած վերածածկութե մինարհեստ ուժգնաբարբառ խորախտահնչական կազմուածոյ թմբկիս գործականութեան ջրացիր իմն գինջութեամբ անվայելուչ թուլացաշնակեալ՝ 'ի ստորև կորստեան քարշէ զօրինակ մերս գոյութեան, կապիւք յուսով վերստին դարձեալ ընդ անձառ խորհրդոյ խաչի քո, Քս, մկրտեալք 'ի մահ կենդանւոյդ՝ անվախճան կենացդ ստլաւ հաղորդիւք. 'ի քեզ իսկ ած հանճոյնիւ խրախուսեալ 'ի սպառ ամենեւին անհատուածելի ։

ԻԱ. Արդ իւղ [129] զըրօշեալն քառակուսեան յանուն քո, Յս, նշանի բարձրելոյդ հաւատար հաստէ. շնորհ ընձեռեալ զուգափառ և [130] նմանատիպ արեան կեցուցչիդ նոյն անվանելի փառօք ստակեալ մեծացուցանէ ։ [131] Փայտ անուանի իւղոյ օրհնութեան, ըստ մարգարէին

կանխաձայնութեան, զ'ի հասարակաց կազմեցեալ բա-
ռից անտառաց զօրաւորս ուղղեալ՝ 'ի խակութենէ չարին
արկածից և օտար կարծեաց 'ի ստեղծողդ վերաբերեալ
առ նոյն նիւթս կենաց հասուն նկրգործէ. [132] Ո՛ի և
որ 'ի մեզ մտից պատուհանաց մշտաբացիկ թափան-
ցանցութիւնք՝ յանուն մեծութեան ահաւորից զօրու-
թեան 'ի խոհական իմն համեստութիւն քե տեւանա-
գրեցեալ առ 'ի յըղձակերտ օթեվան հոգւոյդ՝ անազ-
դելի պատրանաց չարին խաւարահողմ խարդախողին, [133]
այսու լուսով զապեալ ամփոփիւք 'ի նուազ գոհութեան
երեկորեան պաշտաման ընդ երկնայնոցն զամբարաց՝ առ
օրինակ վառման ճնորհից որ 'ի մեզ. [134] 'Ի սոյն յիշա-
տակ փրկութեան բարեացն սուրբ տնկեցեալ ծաղի, և
ծաղկաւէտ եղեալ պտղածնի, 'ի սոյաս ընթրեացն պատ-
րաստութէ յեռնուս գիշերի 'ի մեծից զալստեան. [135]
ահա զայս լոյս ճրագի համարեալ 'ի կեր արկանեմք։

ԻԲ. Կարծեալ [136] ըստ գծագրացն գումարութեան
քան և չորից շարագրութեան՝ որ յալփափեաց ան-
տի վերաթուի մինչև 'ի քսաներորդ երկրորդն կարգի,
յորում զայս խորհուրդ խորութեան անուսում թարգ-
մանեալ՝ ճաշակ հեշտալի որոց հաղորդին ջամբել պատ-
րաստեմք ամենակազմ յարմարութե՛. քանզի յութ-
ըներորդէ անտի զրոյ 'ի չորեքհարիւրն փոխաբերեալ՝
ստուգաբանօրէն քննութե՛ ընդ ձիթոյն անուան նիւթ
Ճշմարտագրի. որ է կերպարան արդեան խմբոյ յինքն
բերողի զգանդուածն զօրեղապէս. որ ոչ սակաւ 'ի յո-
լովէն պարագայի, քան թէ 'ի նոյն իրն դարձուցեալ,
ըստ աւետարանական առակին, զամենայն առ ինքն վե-
րաբերեալ ածեցուն առնէ։

ԻԳ. Այն իւր հեղութեան միշտ համբարձման և խո-
նարհութեան օրինակ և նմանութիւն, [137] առ ոմն կա-
կուղ պատառ մատուցեալ ջամբի, հարթակշիռ և
բարեյարմար բանի կերպարան. իսկ համայնից լուծա-
կանաց հոսանուտ և ստորածորելի նիւթից դերափառ
վերաշրջական հրաշափառ խորհրդոյ պատկեր, քանզի
և [138] յաման իւր մրթոյ արկեալ՝ ոչ ըստ գինւոյ ձեւոյ
և կամ ջրոյ թացութեան մեղկէ, այլ 'ի սահման պատ-
շաճին պահէ։ Ո՛ յարկս ընկալեալ գջոյոց բարեաց [139]
անհաւասար առաւելութիւն ոգի այ կենդանւոյ, զըն-

բանուէր այս օծելութիւն 'ի ճակատ գլխոցս [140] արեամբ քո գրեմք, և 'ի բնութիւն շնչոյս հոգւով քո տպաւորեմք, հաստատեալ խորհրդով մտացս, եթէ յաւէտ յայտնեսցի նորոգ փայլեցեալ բազմաճաճանչ [141] ծայրարձակութեամբ 'ի տարածումն յագնատեսիլ զարմանահրաշ ընդարձակութեան՝ պտուղ խաղոյ ընծայեալ զլոյս 'ի փառս աստուածեանցն համբերձելոյն ։ Այս ճարդ հոգւոր երջանիկ և վերնանշոյլ 'ի դէմս երեսաց իմ պատկերի՝ քումդ նշանաւ ջահաւորեսցի ։

ՃԴ․ Եւ քանզի իբր անհաս [142] ոչ ըմբռնական այս մեծ զօրութիւն արագ սլացմանց 'ի թեւս թեթեւս մտաց պայմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից անհուն հետեւման անհետ փախստեան՝ լայն իմն միջոցաւ 'ի սպառ որոշեալ, փակեցաւ յինէն, ոչ օրինակեցաւ կցորդաւ, ոչ նմանեցաւ զուգամանութեամբ, ոչ սահմանեցաւ ձեւակերպութեամբ, ոչ կշռեցաւ ընկերին չափով․ այլ ահա ընդ ամենեան խաչիւդ նշանի հաստատութեամբ արեան կեցուցչիդ հոգիապէս գերազանցեցաւ ։ Եւ արդ օրհնեա զմեզ, տէր, սովաւ և 'ի սմին․ եւ ես և[143] անուանդ քո ահաւոր, լուսաւոր, երկնաւոր և զարմանաւոր, 'ի գովեստ փառաց անճառից մաքրակրօնից բորվառաւ խնկեալ, սուրբ, սուրբ, անքնին, անպատում,[144] բարձրեալ, ողորմած, վերերգեալ, ճշմարիտ, բարերար և սուրբ, արա սովաւ փրկութիւն, տուր և քաւութի, պարգեւեա բժշկութիւն, [145] համբերձաւորեա շնորհ, աստուածեանեա երանութիւն ։ Զօծումն այս ձիթոյ երկնանձրև լուսոյ անպարտ զօրոյց․ յեղեալս այս [146] թեղան բանաւորական մի մնասցէ և մի զրաւեսցէ տխրականութիւն աղտոց մեղանաց՝ շաղախել երբէք զոգւոյս կերպարան ։ Եղիցի սոյն իւղն որոց մատչին օծանել սովաւ [147] հարսնապաճոյճ պանծանօք պճնել գեղայօրէն սուրբ վայելչութեամբ՝ երջանկապէս յոգի զարդարեալ ։ Եղիցի հուրս այս լուսափառ և աստուածածիր՝ մերձեցելոցն 'ի սոյն բնութիւն [148] մաքի կրկնեաց և բարեփափուք ջերմութեան այլ յօրինուածոյ, որով ամենայնիւ ամենապատրաստ պնդութեամբ՝ 'ի կարծրականումդ անսասան վիմիդ յարակայեցեալ միշտ արձանացայց 'ի քեզ հաստատեալ աներկմնելի ։ Լիցի նշանակ[149] վերնամիցանակ այսր պարգեւի սովաւ վառելոցն, ոչ որո-

զիլ ջուրք, ոչ այրիլ հուրք, ոչ ցրտանալ 'ի սառնութէ, ոչ մնասակար հողմով շրջանիլ, ոչ աղտեղիլ յուրուական ինչ պղծութենէ, ոչ զպահեալսն՝ չարին մատնել, և ոչ 'ի սորա ելից զմթերս գանձուն կենաց յիմարաբար արտաքս հանել. ոչ անպատսպար մնալ 'ի թևոց քոց օգնականութենէ, և ոչ զեղցեալն 'ի մեզ օծութիւն անմաքրապէս 'ի բաց մերկանալ: Այլ եղիցուք քև 'ի սոյն հրացեալ, սովիմբ պարարեալ, սովաւ լուսաւորեալ, այսու արդարացեալ ազատացեալ պսակեալ և թագաւորեալ: Եւ [150] քեզ միայնոյ միայն օծելոյ յամենեցունց օրհնութիւնք երգոց, ալէլուք լեզուաց, հնչմունք ձայնից, յաղթանակութիւնք գովեստից, բարեբանութիւնք շրթանց, սրբաբանութիւնք սաղմոսաց, ընդ հօր և հոգւոյդ սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

[151] Այն իմ ձեռնարկութիւն 'ի սրբութիւն, և այս արձանագրութիւն 'ի սրբութեանցն սրբութիւն:

---

1 ՎԵՐՋԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ: Այս մակագիր չէր 'ի մի օրինակ, այլ միայն յաջորդն, ԱՂՕԹՔ ԹԱՐԳՄԱՆՕՐԷՆ, և այլն: Եւ թերևս յօրինակողաց մուծեալ իցէ. քանզի և օրինակք ոչ սակաւք չունին 'ի կարգի աղօթիցս զբանն որ վասն մեռանի:

2 ԱՂՕԹՔ ԹԱՐԳՄԱՆՕՐԷՆ (մի օրին. աղօթք ԹԱՐԳՄԱՆՕՐԷՆՔ, այսինքն մեկնաբանականք.) աղօթական բացայայտութիւն 'ի վերայ ..., սուրբ կամ հոգևոր լուսոյ սուրբ իւղոյն մեռանի: Վասն այսր բանի՝ թէ ու ինչ յօրինեաց սուրբ վարդապետս, և կամ ինքն արդեօք եդ 'ի կարգ աղօթիցս, թէ այլք՝ տես 'ի բանն Դ.Բ. լԾ. 1: Ասասնօր ծանիր, զի սուրբն կիւրեղ երուսաղէմացի ունի ճառ 'ի վերայ մեռանի, կամ դրոշմի, մակագրեալ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ՆՇԽԱՐՀ, որ թէպէտ ոչ գոյ 'ի հայումս 'ի տպագրեալ կոչումն ընծայութեան, բայց խոստանայ ('ի գլ. ժԿ. երես 424.) ասացանել. « Որպէս դրոշմն ձեզ տուաւ 'ի հաւատարութիւն հոգւոյն սրբոյ »: Արդ սուրբս զրերոր բաղում ինչ համաձայն այսմ ճառի խօսի յատաջինկայս. որպէս տարե 'ի ներքս ինչ յիշեսցուք:

3 ՓԱԿԱՆ ՇԱՐԱԽՕՐՀՆԵԼԻ: Տենչանաց փափագ միջոց անպարժելի, այսինքն անյագ փափագմամբ անպարժելի. որչափ աճաւոր ես, և բարձրեալ և անպատում, նոյնչափ և անձկալի միջոց փափագանաց:

4 Ի ՍՐԲԵՐԳԵՆԻՑՆ: Ի սուրբ սուրբ երգող փառաբանողացն, այսինքն 'ի սրովբէից միջոց օրհնաբանեալ, բնակեալդ 'ի ..., 'ի սրբութեան երկնից:

5 ԵՐԿՐՊԱԳԵԱԼ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ: 2 օրին. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ:

6 ԱՄԷՆ. այսինքն դու ես ամենայն՝ գոյութի, զամենայն անխառն կատարելութիւնս ունելով ծայրագոյն օրինակաւ. պատճառաւ՝ իբրև գոյացուցիչ ամենայնի. գաղափարաւ՝ զամենայն իրաց իսկութիւնս 'ի

քան զլուսեղէնս երեւեցուցանելով, և յաւիտենից, յամենայն իրս գոյով էութեամբն՝ իբրև ամենատեսդ, ներկայութեամբն՝ իբրև ամենատես, և կարողութեամբն՝ իբրև ամենիշխան։ Զայս տես և ՚ի բանն 2. 3. և առաջ է ՚ի բանէն ա. կորնթ. ժե. 28։

7 [illegible]։ Այսու բանիւ խոստովանութեամբ իբրև յատագրեն զաշամբ եղեցի ենձ ուխտ միութեան ընդ քեզ։ Դաշն յառաջ առ է ընդ հանրական մարդկային զաշանց, որք ՚ի վերայ ամէն զգալուս որգարութեն, և խորհրդաւորեալ զաշանցն պարտ առնեն տալ ինչ և սանուլ յօգուտ մեծագին։ Բայց դաշն առ ած՝ զմարդն միայն պարտական առնէ ճշգիւ. իսկ ած ՚ի պարտ գոյ միայն յերիմէ առատութէն, և ոչ առնու ՚ի մարդոյ զնորայն ինչ յօգուտ իւր. այլ մարդն առնու բախտաւորակ յայն՝ թէ զպահպանութի զաշինն, և թէ զհատուցումն. վասն որոյ դաշն մարդոյ առ ած՝ է դաշն ակնկալութեան բարեաց յայդ։

8 Առաքելոց։ Հայրք օրհնութեց են՝ առաջ ՚ի յայսմ. (ա. 7։)

9 [illegible]։ զու միայն պատճառ ամենայն [illegible], առաջնորդ, եղելոց։ Հին լուծ. իմանաց են զհայր պատճառ որդւոյ և հոգւոյն. բայց անյարմար, զի առ քն են գէմք բանիւ։

10 Օծեալ [illegible]։ այսինքն քն մեջ պաշտաման արժանի։ Զայս բան զնէ իբր հիմն յաջորդ մեկնարանութեանցն ՚ի վերայ մեծանի. զի յոծմանէն քնի ածութեամբն զարձուցանէ զբանն յոծումն մեր շնորհօք, և յայսմ օծմանէ՝ ՚ի մեծանն, որ է նիւթ օծմանն շնորհօք։ Վասն այսորիկ առնու զյաջորդն։

11 [illegible]։ այսինքն վասն որոյ, կամ յորմէ, այսինքն ՚ի քեն քն, կամ ՚ի քումմէ օծմանէ բացայայտեալ ՚ի մեզ [illegible] օծմանս մեր շնորհօք, որ է անվախճանելի, և հաւատութի [illegible], անբաւանդելի, անհարրուստ յեկեղեցւոջ։

12 [illegible]։ Սպաս տանիս, ծառայեն հրեշտակաց [illegible], այսինքն բնութեանն՝ որք զայս օրհնութեան և զբաց ակրոյ ընչեն, որք և յաժարական համեմութի հոգւով ծանիր զնեն քեզ։

13 [illegible], որ ես ՚ի [illegible] և ՚ի [illegible]. այսինքն առաջնորդիչ ամենայն բնութեց կամ գոյից՝ որք անատանին և որք ծածկեալք են, այսինքն երեւելեաց և աներեւութից։ Բայց յընթեր օրինակ ինչ չեք այս բան։ Իսկ յաջորդն, [illegible], իմանի՝ զու որ այժմ ես բախանդակ կատարեալ, և ՚ի սկզբանէ նոյնպէս էիր միայն կատարեալ, ընկալեր առանձին զմեր բնութիս խեղաղէս և ընկալեալ՝ ոչ ՚ի քո պէտս ինչ, այլ զի քոյով լնութե զմերս թերութի լցուսցես. վասն որոյ զանձայնն առեր, և զլցեալն ետուր. և այսմ ՚ի մէջ արքեալ ոչ այլ ինչ՝ բայց օրհնութի և բարերարութի, խոստովանելով թէ որպէս յեղութեղ անքննելի ես, նոյնպէս յողորմութե ՚ի փրկել զմեզ. և քո ողորմելդ՝ է քեզ ՚ի փառս և ՚ի գովեստ անճառ բարձրութե. քանզի անհնար է ցայտելայր լինել ողորմած՝ բայց միայն այնմ որ յանչափս բարձր իցէ։

14 Օծման [illegible]։ Զմեր բնութիս առնելով, և լրութե քո լցուցանելով, օծեր զնա. և այսու եղեր [illegible] առաջին պարգևիչ օծմանս մեր շնորհօք. որ ունի զմեծ խորհուրդ հրաշալի. զի այնու օծմամբ լինիմք և մեք ածացեալք։ կամ, առաջին պարգևիչ օծմանս. բստ որում ՚ի ձեռն առաքելոց կարգեաց զեւզն ՚ի նիւթ օծմանս։

15 [illegible]։ Լցա ածութե քո, և լցա օրինացդ [illegible] ՚ի ձեռն օծման մեռոնի. բստ այնմ (ա. յովհան. բ. 27.) « Որպէս զի նորա օծութեն ուսուցանիցէ զձեզ »։ Իսկ հետեւեալքն կոչականք են, այսինքն ով [illegible] ՚ի մասունս աչաց։ [illegible]

[illegible], որ ոչ սահմանիս անցեալ, կամ ժամանակաւ։ [illegible] [illegible]. որ անխտրաբար ախտս զլոյզ յորդորս և 'ի մեղուորս։

16 [illegible] [illegible]։ Ոմանք ըստ հին ըծ. զարեգակնն խմանան՝ ըստ որում կշռէ զջերմ և զցուրտ, զտիւ և զգիշեր։ Բայց զարեգակն Նախ եգ. այլ իմանալի է՝ արուսեակ որոշիչ կամ ցուցանող [illegible] [illegible], երկուց հանմանսա կամ ընթրգեալ գոյուեց, այսինքն առընչեան և գիշերոյ, որք իբրև զթաթս կշռոյ ըծեալք ընդ միմեանս, 'ի խառնուրհիւ միոյն՝ ամբառնայ միւսն։ Նա սոյն որոշիչ կամ գուշակ է արուսեակն. զի երբեմն յառաջընթաց լինելով արեգական՝ առաւօտ գործէ. և երբեմն հետևակ լինելով նմա, գիշերոյ է գուշակ։ Արդ և զն առի արուսեակ (յայտն. խբ. 16.) զի առաւելէ և առաւելական հին օրինացն, և աւետարանին նորոյս. այլ և 'ի անոքենութեն իւրում՝ մերթ ըստ հրէականին զատուերականգ գործս օրինացն առնէր, և մերթ զերազանց օրինացն՝ զուսուցանեն աւետարանին չափս առանդէր։ Դարձեալ, զի միաւորութեամբն ունէր յինքն զմնութեն իբրև լոյս, և ըզմարդկութեն իբրև գիշեր և խաւար առ մնութեն. ըստ այնմ (յովհ. ա. ե.) «Լոյսն 'ի խաւարի անդ լուսաւորէ» և այլն։

17 [illegible] [illegible]։ Այն՝ որ յինքեան արեգակն է համապայծառ, չափով լուսաւորելով օրինացն զնառեալսն 'ի խաւարի անգիտութեն, առի Ծրագ առից հոգւոյն, այսինքն կարողութեցն. և [illegible], զնացիցն կամ ընթացողոյն 'ի Ճանապարհ ստապաշտութեան։

18 [illegible] 'ի [illegible] [illegible]։ Լուսով քո տեսեալ զգաղանի խմաստ [illegible] [illegible] [illegible], յարմարութե խորհրդոյ մեանին ընդ լուսոյ ստութեք, կամ ընդ խորհրդոյ մարդկութեք։ Բայց յորին. [illegible], [illegible] [illegible] [illegible]. և խմնի, յորինմամբ այսր Ճառի, հաշակեմբ [illegible] [illegible], հրեշտակային՝ հոգևոր պարերգութեամբ, կամ պարելով ընդ հրեշտակս. [illegible], յատակ և ուղիղ մասը[illegible] [illegible], քեզ փրկչիդ վայելչական կնդրկաւ օրհնութե, [illegible] [illegible], անբիծ զաւանութե իբրև զուարթ իւղով, խնկելով զաստուածութիւն պարգևաց։ կամ [illegible] զաստուածութե պարգևաց [illegible] [illegible]. որ ըստ պխոպխ և ըստ պատշաճին զանմեա հնարս լուսաւորելոյ զմեզ։ [illegible]։ մի որին. [illegible]։

19 [illegible]։ խմս կապանեալ գոլով, այսինքն զրկեալ հայրն ազամ 'ի բարձր շնորհաց անմեղութե և իմաստութե, և կապեալ ընդ ապականութե անզերծանելի [illegible], կապով, 'ի ծառայն գերութե [illegible], այսինքն բերեալ յանկումն [illegible], անկանգնելի 'ի նոյն վիճակ անմեղութե, [illegible] [illegible], որով ամենայն բնութիւնս զըրկեցաւ. և այնպէս մերժեալ 'ի լուսաւոր կենաց դրախտին, խաւարային կենացս մատնեցաւ՝ աղխութե և վշխպանաց։ Զոր դու [illegible] [illegible] [illegible], առաւել քան զաղամ ծանեար [illegible] [illegible], այսինքն զփառսն և զանմեղութեն նորա, որով ասեղծեր զբնութեն նորա և զմեղանչականութեն, և թէ յոր բարձրութէ յոր անարգութեն անկաւ, և թէ որ էն նորա պատշաճաւոր զարմանքն։

20 [illegible] [illegible] [illegible] [illegible]։ Նա որովհետև յուսով ծնծանայր՝ որ չէր հնարաւոր, ոչ եկաց յանախտութենն և 'ի փառսն՝ յորում էր, որով և չէր կարող [illegible], այսինքն յայտնապէս առանց օրինակաց և առակաց հայել մաքր 'ի լոյս ծնութեանց, վասն այսորիկ [illegible] [illegible]. զգխութիւն ծնայնոցն ոչ պայծառ յայտնութեամբ ուսանդեցեր, այլ նպատախւք և նմանութէ զգալի խորհրդոյ. ուստի և խաւարային [illegible] [illegible], առից առհեցուցիչ [illegible], փառնպաց կամ երկիւղալի տեղեաց՝ [illegible], կամ հատւ զծնանկալութեն Ծրագի, զծէթն խառնեալ ընդ

պատրուգի, որ է օրինակ միաւորութեան քո ընդ մեզ, ձէթ՝ զծնու-
թիւնդ նշանակելով. և պատրոյգ՝ զմարդկութիւնդ։ Նաև կամի. որպէս
՚ի դարման գիշերային վառեղաց կարգեցեր զճրագն, սոյնպէս ՚ի դար-
ման աղխտութեան և գիւրատահութեանն՝ որ ՚ի մեղացն ադամայ, ետուր
զիւղ մեռոնին. որպէս զի ովք ՚ի խաւար մեղաց անկեալ արգելեալ պը-
ղծին, ՚ի [illegible], ՚ի դարման այնր իրի, կամ վասն այնորիկ՝ [illegible], նմանակից պտղով ձիթոյն լուսաւորեալք հաւատով,
յառաջին [illegible]՝ ՚ի փառս անմեղութեանն գործցուք։ Յայտ
բանէ սորայ վարդապետս երևի՝ թէ առ ժամանակօք նորա զմեռոնն
առնէին ՚ի պտղոյ ձիթենեաց. և ոչ ՚ի սերմանց շուշմայի. որպէս էր
սովորութիւն առ ժամանակօք շնորհալւոյն. զոր և նշանակեալ էին յոյնք
՚ի հինգերորդ խնդիր իւրեանց. և յետ նա նիւթն շնորհալին ՚ի թուղթն
առ ալէքս։

21 [illegible]։ Որպէս ոչ է կատարեալ օր բնական՝ առանց գի-
շերոյ, այսպէս ոչ է կատարեալ լուսաւորութիւն հոգւոյ՝ և փրկութիւն
յաւիտենական՝ որ նմանի տունջեան, առանց զգալի խորհրդոյ. որք
իբր գիշեր են վասն գաղտնութեան՝ այլ և բաղդատութիւք առ հանդեր-
ձեալսն։ Եւ որպէս ոչ լինի [illegible]. գործառնութիւն առն
առանց ձիթոյ ճրագի, այսպէս և ոչ կարգաւորութիւք եկեղեցւոյ ա-
ռանց ձիթոյ մեռոնին. քանզի որպէս հասարակ ձէթն [illegible],
ոչ օրհնեալ, լուսաւորէ զմարմնոյ աչս, նոյնպէս օրհնեալն անխառնա-
կի ընտրութիւք [illegible], քահանայապետական օրհնութիւքն
կամ իշխանութեամբ, որ իբր ՚ի բերանոյ քո օրհնէ. կամ, ընտրութիւք
հոգւոյն սրբոյ, որ է շնորհ շնչեալ ՚ի քէն, զաներևոյթ հոգիս մեր պայ-
ծառացուցանէ, միանալով քո ընդ մեզ անտեսաբար։

22 [illegible]։ Երեկոյն ՚ի լուսաւորան. մի օրին. [illegible], և
մարթ է իմանալ, զերեկոյն ՚ի սուրբ աւազանն հաւատալք՝ մարմնոյն
լուացմամբ առնուլ [illegible], զհոգւոյն սրբութիւն ՚ի մեղաց։ Սոյնպէս
՚ի յօծումն զրոյմին մեռոնաւն՝ որով պարարի մարմինն յուսով, զհո-
գւոյն զօրութիւնն համարեալք ընդունել։

23 [illegible]։ Ի բժշկել քո զախտաժէտս՝ նախ կամէիր քաւել
զմեղս նոցա՝ զպատճառս ախտիցն։ Եւ ոչ հաւատացողացն [illegible],
այսինքն առ քաւութիւն մեղացն, զհրաշալի բժշկումն մարմնոյն վաղվա-
զակի յանդիման [illegible], մարմնոյ աչացն՝ հաւատարիմ վկայ
հաստատէիր անզգեցն թերահաւատիցն։ Որպէս առ անդամալուծաւն՝
նախ զթողութիւն մեղացն առաց, և յանհաւատանալ դպրացն՝ եւ մարմ-
նոյն բժշկութիւն, առ ՚ի գիտելոյ նոցա թէ կարող է և զմեղս թողուլ
(մարկ. բ. 5. 10. 11.) սոյնպէս և առ մեզ փրկութիւնս իւղ մեռոնին՝
ածային օրհնութեամբն իբր լուսով կատարեալ. օծանէ [illegible]
[illegible], զմարմինս. և զհոգիս՝ [illegible]. զաղտնի ածային զօրու-
թեամբն ներգործեալ, [illegible]. այսինքն զծնեալն մկրտութեանն՝
նոր օրինակաւ կենդանացուցանէ, ամրութիւ տալով շնորհացն և հա-
ւատոյն՝ զոր մկրտութեամբն ընկալաւ։

24 [illegible]։ Իւղն որպէս օրինակաւ պատկեր առի այ և
քծի։ Բայց աստանօր միայն բառ ողորմութեան նմանեցուցանէ. քանզի
իմաստուն կուսանաց օգտիլն իւղով իմանի օգտիլ ողորմութեամբն.
ուստի իւղն է օրինակ ողորմութեան. և որպէս նիւթն սուրբ վարդապետս
առէ ('ի մեկն. երգոց եր. 290.) «Իւղ՝ ողորմութեան կոչի». զի և ՚ի յոյն
նման անուամբ անունն, [illegible], ողորմութիւն. [illegible], իւղ. և զի ողորմու-
թիւնն է նիւթն ած, այսու իւղն լինի պատկեր այ։ Եւ որպէս սէր կոչի
ած, նոյնպէս ՚ի [illegible]. բառ իմիք՝ [illegible]. իւղոյ անուամբ զի-

ջեալ հեամաց, ըստ տնօրէնութեանն որ առ մեզ, ըստ մարդկայնութեան՝ արժ-
ևորև ևս զուարթացուցիչ թափեցաւ 'ի մեզ. կամ, ըստ բարեխնամութեանն որ առ մեզ:

25 Ութսուն երկուք. 2 օրին. Ութսուն երկու է:

26 Գինեփիրքսն այս ձորդ: Մեծի խորհրդոյ յարմար նմանութիւն կամ նկարագիր է խաղս կամ ձէթս, ձորդ ասացեալ, ըստ որում որպէս 'ի կենդանիս ձարպն, այսպէս ձէթն 'ի ձիթենիսն՝ է պարարտութեն թանձր և հաղորդ մասանց նորա: Արդ որպէս ըստ օրինացն՝ ձարպ զոհին ոչ էր ուտելի, այլ այլ նուիրելի (գլուխ Է. 23. 25.) այսպէս և և առաջինք, այժմ խաղս օրհնեալ, ... , որպէս զենքն պարարտութիւն և այժ խոյոց՝ ... , այլ նուիրելի, և ոչ մարդկան, յայս ... , 'ի նոր օրէնս, համձոյթէ քո մատուցեալ նուէրի. ... , հոգւոյս կարինման, ... , հաւատար կամ նման ընթացող. զի որպէս հոգին թափանցիկ է 'ի մարմին, այսպէս ձէթն ընդմնանող: Եւ ասի որպէս հոգին՝ քեզ արտորոյ միայն պահեալ, նոյնպէս և ձէթն օրհնեալ: Բայց յերկու օրինակ այսպէս զատանի բանս. նոյնպէս 'ի ... և ... որ ... ... , Այս ձորդ ... , և այլն. իբր թէ՝ սա է ձարպ պարարտութեան, և այլն:

27 Պտուղ ... : մի օրին. ... :

28 ... ... ... : մի օրին. ... ... ... ... : որպէս թէ անմատչելի կամ անուտելի 'ի մարդկանէ:

29 Օրինակ ... : Արիւնն և ձարպն, կամ ձէթն որք են օրինակք հոգւոյս խնկ, և ... , կարողութեա, ոչ են այրելի ընդ անդամս կենդանւոյն, այլ վերին արքայութեանց ... , բաժին հանեալ լինին, իբրև ... ... , ... ընծայեալ կերակուր, ... օրհնեալ ձիթոյս, որ միշտ բորբոքի և պայծառ վառի զօրութեամբն 'ի մէջ եկեղեցւոյ:

30 ... : Դատաստար և գլուխ տանն: Անդրանիկ որդին, տէր. բայց 'ի նախածնութեան պարտ էր ունել և զծառայն տա 'ի լինել նախագահ տանն. զի տար՝ թէ 'ի հնումն անդրանիկն վարէր 'ի տանն զպաշտօն քահանայի: Հին ըստ. տէր տատ, յերկուց տարրակայն՝ ընդմին զենոյր քահանայն, և յարենէն օծանէր զմանուկն: Բայց 'ի գիրս չէր այդպիսի օծումն (տես գլատոյցող ժբ. 7. 8.) Եւ ... . Քահանայն հրէական չունէր իշխանութեն մտանել 'ի սրբութեն սրբոց. որ անկոխելի էր նաև հասարակ քահանայից, եթէ չէր օծեալ գերագոյն իւղովն, թէ և սերեալ էր 'ի քահանայական ցեղէ:

31 ... : Օրինակ հոգևոր վիճին քնի. 'Ի ... . 'ի հետևոր կամ 'ի համզերձեալ խորհուրդ ընթացութեան մաքրական խորանին՝ զգայն օծեալ կացոյց յակոբ: Ա . . . , այսինքն առ արով. կամ բայց յայնմանէ աղաւաղեալ նաև ... ... ... . ըստ մարդկայութեն իջանելոյ 'ի մեր բնութեն անալեամբ ամեղղոյն. և զիս 'ի ... ... , այսինքն 'ի վեր տանելն, ... , անդր ընդ իս ուղեկից լինելովն, կամ առաջնորդելովն իւր յերկինս: Պարզ իմաստքն են. նախհայրեան յակոբ 'ի Ձանապարհի միջավայրոց օծանելով զքարն, և արձան կանգնելով, երկու ինչ նախանկարեաց: Մի. զքարն զայն՝ յօրինակ հոգևոր վիճին՝ կանխապէսկոյց խորհրդով եդ իբր հիմնարկութի մաքրական խորանին: Միւս ևս բարձրագոյն, զի աներևոյթ խմանալի ամեղղոյն՝ ընդ որ յերկինս ելանելոյ մեզ տայր յոյս, զնոյն զօծեալ արձանն եդ կացոյց վկայ իջման բարձրելոյն առ մեզ:

Նմանօր զչարագրութիւն՝ [illegible], մարթ է պարզել և պայծա-ռա որ, այսինքն առ զիջումն բարձրելոյդ՝ զարձանն իսկել կարոյ նպատակ, և այլն։

32 [illegible]։ Փառաւոր կամ մեծագին իւղոյն՝ կազմելոյ խառնութբ ազնիւ իրաց (Ելից. Լ. 23. և այլն.) իջեալ 'ի գլխոյն ահարոնի 'ի մօրուսն՝ [illegible], զարմանալի ձևակերպութեամբ [illegible], նշանակէր զանդրէն զարձումն կամ առաջումն փառացն ազգաց, և զխոստութիւն շնորհացն ոչ ընդ մեզ։ Զի օծումն գլխոյն նշանակէր զօծումն քնի ածութեամբ. յորմէ շնորհք և փառք 'ի նախահայրն իջանէին, որ վասն հնութեան՝ մօրուօքն նշանակի։ Ամբողջ խմաստքն են. քահանայութիւնն ահարոնեան ըստ հրամանից քո օծմամբն միայն առնոյր զկար յարգ և զօրութիւն. որով յիջանել ազնուագին իւղոյն 'ի գլխոյ անտի ընդ մօրուսն, և անդուստ ընդ բոլորագործ հանդերձն՝ որ և է հրաշագան գեղեցիկ նկարագրութիւն ըստ սաղմոսողին, յայտ առնէր խորհրդաբար զվերատին փառաւորութիւն նախատակօծին՝ առբառբար քոյ շնորհացդ 'ի մեզ խառնելով։

33 [illegible]։ Անդամոր յիսրայէլեան ազգի և յորէնն ոչ էր [illegible], որպէս ընդունելի, օրինաւոր՝ թագաւորական իշխանութիւն՝ իբրև պատկեր հազարց իշխանութեան արարչին 'ի վերայ երկրի, եթէ ոչ օրհնեալ իւղովն ձեռնադրեալ՝ [illegible], իբրև օծեալ ոչ զարդարեալ թագիւն ամբառնայր զգլուխ 'ի վերայ ժողովրդեան։ Թէպէտ և յազգէ թագաւորաց ոք էր, և 'ի ծիրանիս ծնեալ. ոչ թագաւորէր օրինօք առանց օծման։

34 Ի [illegible]։ Նշեալ է այս յերկար պատմութէ ինչ յանուց, որ կայ թարգմանեալ յայսմաւուրսն. մարտի 25. ուր 'ի վերջն ասի, թէ մելքիսեդեկ կայր առանձնացեալ 'ի լեառն ձիթենեաց (և ըստ յունականին՝ 'ի Թաբոր.) առ որ երթեալ աբրահամ՝ օծաւ իւղով 'ի մելքիսեդեկայ. և լուաւ ձայն յերկնից՝ թէ մելքիսեդեկ մնացէ քահանայ յաւիտեան. և այլն։ Եւ թէպէտ 'ի պատմութէ անդ ըստ այժմու օրինակաց ոչ գրի յայտնապէս, թէ 'ի հրեշտակաց օծեալ էր մելքիսեդեկ, սակայն կամ յայլ օրինակս կայր գրեալ, և կամ յայնմանէ իբրև հետեւցուցանելով ասէ սուրբ վարդապետս, թէ անդ 'ի հրեշտակաց օծեալ էր մելքիսեդեկ։ Այս պատմութիւն՝ յանուն սրբոյն աթանասի հրատարակեալ առ յոյնս, ընդունելի էգև ոմանց. բայց ապա քննեալ առուցեալ՝ ոչ աթանասի գոլ, և ոչ ընդունելի։ Այլ ընդ հակառակն՝ ոսկեբերան ('ի մեկն. Ծննդ. Ճառ լե.) գրէ այսպիսի ինչ. «Քահանայ էր, թէպէս անձամբ ձեռնադրեալ, զի այնպէս էին յայնմ ժամանակի քահանայք. կամ զի հինաւուրց էր հասակաւ, յիւրոց անափ ընկալաւ զայն պատիւ»։

35 Ի [illegible]։ մի օրին. 'ի [illegible]. այսինքն յիւղոյ պաղոց ձիթենեացդ։

36 [illegible]։ Նմանութի է առաջնոյն՝ առեալ 'ի հրեից. թէ նոյ զսակերս ազգաց ընդ իւր ունելով 'ի տապանին, յետոյ անփոփեաց 'ի լեառն զոգդոթա. որով անդի զագաթան անուանեցաւ. ուստի և գերեզմանին ազգաց պահապան կարգեցաւ, ասէ, մելքիսեդեկ. իբրև եպիսկոպոս և թագաւոր։ Բայց ոչ կարոց քակել վասն ազգաց. մինչև յայտնեցաւ զա [illegible], բոլանդակապէս, [illegible]. բան Աշխարհիս քահանայց կենդարծութեան ազգաց։ Բայց ըստ օրինակին գնէ. [illegible]. որպէս թէ, մինչև յայտնեցաւ, և եղեր կատարելապէս Աշխարհիս քահանայ։

37 [illegible]։ Բարեխօսել կամ հաճելի կացմութեամբ յարմարեալ զայս աղօթս [illegible], օծեալս եանդգիւ ակ-

րոյ. [illegible], առատացեալս Նախնեանց ամպաշատութեան, վառա-
ւէրս, լցեալս զաւրութեամբ զգման։

38 [illegible]։ Զզօրութիւն մեռնին՝ որով օծայ, մատո 'ի վերս հո-
գւոյս. և զներգործութիւն օրհնութեան Նորա հանդերձ զենեաւ սիրոյդ
արկ 'ի խոցուածս հոգւոյս, փոխանակ ամրապինդ պատանաց՝ զմտ-
թիւնն ընդ արտաքինս շնորհելով. որպէս արարեր անկելոյն 'ի ձեռս ա-
ւազակաց. [illegible]. որպէս զի այս մեկնողական
ճառս մաղթանաց՝ վայելչապար 'ի [illegible]՝ առաջնորդութեամբ
հոգւոյդ սրբոյ կարգաւորեսցի։

39 [illegible]։ Զայս իմացան ոմանք բառ հին լուծ.
'ի վերայ ազայելի ալքայի ասորւոց. զորմէ ասացաւ առ եղիա՝ օծանել
'ի Թագաւոր ասորոց (Դ. Թագ. ԺԹ. 15։) Բայց ոչ յարմարի. զի
սուրբ վարդապետս ասէ՝ թէ օծմանքն մատուցաւ 'ի կցորդութիւն
անուն իսրայելի. իսկ Թագաւորութիւն ազայելի եղև 'ի կործանումն նո-
ցա. և զի զլուն օծմանն ազայելի յետոյ զաա յետ սուրբ վարդապետս։
Այլ թուի իմանալ զաէրութիւնն ասորեստանեայց՝ զնուաճեալն 'ի
կիւրոսէ, վասն զի կիւրոս կոչեցաւ օծեալ այ 'ի ձեռն եսայեայ (խե. 1.)
և նա եղև առաջին հրամանատար և ձեռնտու գերեդարձին հրէից և
շինութեան տաճարին։ Եւ յետ Նորա դարեհ առ զօրաբաբելն, և արտա-
շէս առ Նեեմեաւ և առ եզրասաւ բազում Նպաստս և պարգևս արարին
հրէից՝ իբրև զանաչհական Թագաւորս իսրայելացւոց (տես ա. եզր. Բ.
Դ. 43. 47։ Ը. 4. 10. և այլն։) Վասն որոյ բառ այսմ յարմարի ա-
սելն, թէ օծմանքն որ 'ի կիւրոս, ալքայութեան ասորեստանեայց զլա-
ւեցաւ և մատուցաւ 'ի միաբանութիւն անուն իսրայելի։

40 [illegible]։ Ոմանք բառ հին լուծ. իմացան 'ի վերայ կայսե-
րաց կամ Թագաւորաց 'ի ժամանակս հեթանոսութեան. որպէս կիւրո-
սի, դարեհի, և այլն. և զօծումն Նոցա ոչ իրական, այլ Նմանութեամբ
իբրև մեղմացուցանելով զնոսա այ 'ի գազանութենէն, և 'ի հնազանդու-
թիւն ձգելով։ Բայց լաւ ևս իմանալի է վասն ժամանակի քրիստոնէութեան.
յորում յայլ և այլ ազգաց զերևելի Թագաւորս՝ [illegible],
հոգևոր կենաց աւիշ ցօղով միրոնութեան հեղեալ 'ի Նոսա,
արարցաւ 'ի հպատակութիւն այ քրիստոնէական օրինաց. որպէս զկոս-
տանդիանոս 'ի լատինացւոց, զտրդատ 'ի հայոց, զնորայրս ա Նուշի-
րուան 'ի պարսից, զարենոնեար հայր յովասափայ 'ի հնդկաց. և զայլս
յողուանից, 'ի բուլղարաց, 'ի թաթարաց, և այլն։

41 [illegible], Բանն պատուոյն կամ մեծարա-
նացն, որով կամէր այ յարգելի ցուցանել զկիւրոս, սաստել մեծ հա-
մարեցաւ Նմա զօծեալ անուանն (եսայ. խե. 1.) քան թէ կոչել զնա՝
Թագաւոր, ծառայ, և այլն. զի թէպէտ և չէր Նա օծեալ օրինական իւ-
ղովն, այլ զի ընտրեալ էր յայ իբրև յատուկ Թագաւոր իսրայելի՝ իր-
նամ տանել գերեդարձի Նոցա, և շինութեան քաղաքացն և տաճարին,
վասն այն օծեալ ասացաւ։ Եւ սուրբ վարդապետս յայտնանէ ձեռնար-
կէ զառաւելութիւն օծմանն։

42 [illegible]։ Առաւել քան զմարգարէն պատիւ զօ-
ծեալ անուանն Նախադասեալ, ասելովն (սաղմ. ՃԴ. 15.) «Մի մերձե-
նայք յօծեալս իմ» . և ապա դնելով «և 'ի մարգարէս իմ մի մեղան-
չէք»։ [illegible], արդեւլողական որոշմամբ զատանե-
լով 'ի միմեանց. իբր զի առ մարգարէսն՝ զմեղանչելն կամ զվնասելն
արգելու. իսկ առ օծեալս՝ Նաև զմերձենալն։

43 [illegible]։ Առաքումն որ 'ի հրամանէն այ առ 'ի Նշան թէ հա-
նելոց է զհեթանոսս և զիսրայէլ 'ի պաշտամանէն բաղհաղու, եղեալ

ազգեաց ծանել գելու 'ի Թագաւոր խորայելի, և զաղայել 'ի Թագա-
ւոր առորւոյ ։

44 Ուղեւ-ղի հոգին, [illegible] [illegible]. Ն[illegible] ։ Ա-
նորոշ է խմաստ բանիս 'ի ասելս կարգի շարադրութեան, որով նոյն բառ
կամ հատուած կարէ վերաբերիլ առ այլեայս, և որով բարդս՝ ուղ-
ղեւ-ղի, [illegible], հոգին [illegible], կարեն ոչեալս խմանիլ ։ Մեկ ման-
քննեալ բառ մեր ոգին ։ որոշեցաք կեանսքդ ։ և բառ եղելումն՝ այսպէս
խմանալի է ։ Այսուն փեսայից 'ի ասացմանէ գրեցաւ եւ թ Թափեալ, այս-
ինքն 'ի մեզ Թափեալ, որպէս զի հոգին մեր՝ որ եայ պատկեր և նշանա-
կիչ է առաւել քան զայլ ընականս, [illegible],
'ի փոքր ընական նմանութեան՝ զմեծ նմանութեն գերբնականն [illegible], քա
Թափմանքն նկարագրեալ, [illegible] ընդ սկզբնատպից միացուք ծանմանք
շնորհից ։ Կամ, [illegible], մարթ է խմանալ՝ 'ի փոքր եւ ղս կամ 'ի փոքր
օրինակս եւ ղոյ ։ իբր ասել ։ որպէս զի հոգին մեր 'ի փոքր եւ ղս զմեծից
եայ կերպարանիցն կամ օրինակին՝ յինքեան նկարագրեալ խմարհա-
Թեամբ, ընդ քեզ միացուք, և այլն ։ Իսկ եթէ այլ ազգ առցին բառքդ,
այսինքն [illegible] ասնալ իբր նախադիր, [illegible], և զհեռանեալ
[illegible] ասնալ իբր շաղկապ, յայնժամ այսպէս խմանի ։ եւ ղ Թափեալ
գրեցաւ մեանեղ, [illegible], որպէս զԹափեալ 'ի հոգին մեր ։ [illegible]
[illegible], որպէս զի փոքր հոգւոյս՝ զմեծ քո կերպարանեղ նկարագրեալ,
և այլն ։ Իսկ եթէ [illegible], խմացուք զհոգին ասոր, յայնժամ մեկնի ։
որպէս զի հոգին եայ՝ Թափմանք եւ ղոյն՝ առաւել պատկեր և նշանակիչ
զի փոքր բնութեան զմեծ նմանութեան ձեւացուցեալ, և այլն ։ Հին լուծ ։
յայլ ինչ առարացուցանէ զբանս, 'ի գեմս հոգւոյն ոգւոյ ասել ։ Ո՛վ
հոգի եայ, որ այս եղս՝ առաւել պատկեր և նշանակիչ քո է, որպէսզի
զի ընդ փոքրանս զմեծ ընդ քեզ կերպաւորեսցուք ։ Անյարմարութեան
ինքնին յայտնի է ։ զի բաժանեալ ընԹացք բանիս առ քո խօսին ։

45 [illegible] ։ Մանուածոյ, կամ խրԹնածանօթ բանաստեղ-
ծութիւնս ։ [illegible], հնատուրս, կամ մեկնողականս ։ [illegible]
[illegible], օրինակականս, նմանականս ։ Զինչ եւ յաղագս մեծութեան խ-
ղղյս առնեալ զանց բանս 'ի հնատուր և յօրինակական և 'ի մԹին ազա-
ցուցից, ուր ոչ առ գու ինքն աշտարեգ, և այլն ։

46 Ի [illegible] ։ Եկա քարոզեցոյց՝ ծնեալ, ասա սկսար քարո-
զել զաւետարանն, վկայեալ 'ի մկրտչէն (յովհ ։ ա ։ 36 ։) « Ահաւասիկ
քո գառն եայ » ։ Կամ յօրինակական ծննդեան անուն՝ որով 'ի մկրտու-
Թեանն զհոգին ասոր մարմնաւոր աւուրեամբ ընկալար 'ի քեզ, սկսար
քարոզել ։ Զի Թէպէտ [illegible], փոխանակ որդութիւ-
նական կամ շնորհական ծննդեան 'ի սկզբանէ յղութեան հոգին ասոր էր
քեզ ծնուամբ [illegible], եւ Թեամբն կատարելապէս ընդ քեզ լի-
նելով, [illegible], և միաւորութեան ծնութեան բանան-
գակ էր ծնուամբ մարդկութեանդ, այլ [illegible], առակայն անուն
ծննդեան կամ ծնելոյ հաշուէի 'ի մկրտելց, կամ յետ մկրտութեանց, [illegible]
[illegible], 'ի խորհուրդ կամ 'ի նշանակութիւն շնորհական ծ-
նման, որ 'ի ասրբան զործի ։ որով անուանի վնաատութեան ազատման
ընութեանս մեծացուցես ։ Այսինքն, [illegible], յերկու օրինակ զնի,
[illegible] ։ և ասոյ զայս միաս ։ Թէպէտ և քեզ առաւելութեամբ
հոգին ասոր էր ծնուամբ, և չէին ոչեալ անուանակոչութեան ծնելոյ, առ-
կայն առակաւին անունն պաշտէի էր, յորդոյ և հաշուէլի առ 'ի նշա-
նակ ծնման սրբազդոյ, և այլն ։

47 Ա[illegible] ։ այսինքն նոծղ մարդացեալ ։ որպէս

և յայլ բանս ասացեալ եմք թէ վարդապետք 'ի խմբին զնծայնոց՝ բա-
զում անգամ զհետ գնացեալ առաւելս 'ի կեր ամենայն փոխանակ ժամանա-
կացելոց. զոր ինքն եւս 'ի մարգարէութեան անձամբ ընթերցար զբան
նոյնոյ. հարկ առանց 'ի վերայ իմ և այլն. և ծանուցանէ 'ի կարգի բա-
նին թէ զբանին առաւել մարգարէութի է. վասն որոյ փակեցեր, եւն.

48 ՓՈՒԼԵՑԵՍ 'Ի ՀԱՆԴԻՍԱՒՈՐԱՑ ՔԱՀԱՆԱՅԻՑԴ. Եթէ փակել խմանալի բը-
գեղան՝ զոր ինքնին երաց քո, և կատարեալ զընթերցուածն՝ խփեաց,
բառ այսմ բաղդն 'ի ՀԱՆԴԻՍԱՒՈՐԱՑ ՔԱՀԱՆԱՅԻՑՆ յարեալ են 'ի յաչորդն.
Իսկ եթէ զփակումն ոչ առ գիրսն ամենայն, յայնժամ 'նշանակէ՝ խա-
փանել, 'ի բաց առնել, արգելել, և խմանել՝ այնու մարգարէական բանի-
ցայլ օծեալն 'ի հաւատարապատի. օծմանէ՝ արգելեր, զատեր. ՀԻ-
ՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԵՐԻՑԱՆՑԵՐՈՐԴԻ, այսինքն երկոտասնիցն օծմանցն նախայի-
շատակելոց՝ քո և մեր՝ յուշեր բազում խորհրդոց ասորերէնով. զմեր
իբր կանթեղ մի շնորհաց, և զբոյժ՝ բովանդակ լիութեան ձմռանական.

49 Ի ՆԱԽԱԾՆԻ ՏԻՐԱՄԱՅՐԴՈՒԹԵԱՆ. Ի նախկին ծանօթանալոց մերոյս
կերպի 'ի ծննդեան գիշերին, հրեշտակք ԱՅԼՈՑ անուանք քարոզե-
ցին հովուաց (Ղուկ. Բ. 11.)

50 ՈՐ ԳՈՐԾԷ 'Ի ՄԷՋ ՏՈՀՄԻՆ. է բանն անխօս (Գ. 13.)

51 ԱՅՆ 'Ի ՀԱՄԱԳՈՅՆ ՅԵՐԱՆԱՒԵՏԵԼՈՅ. Այն 'ի զատեալ մարգարէութեան ձեռ-
նադրելոյ օծմանցն. Զայս պատուի օծման, ասէ, պատուելոյ զաւիթ
(սաղմ. խզ. 8.) զոր խմացեալ զանձնաւորական օծմանէն, պատուի-
առի՝ ոչ իբր վարձք արդարութեանն քոյ. զի բառ այդմ հեռանել՝ թէ
քո իբրև լոկ մարդ գործեալ իցէ զարդարութի, և այնպէս արժանա-
ցեալ անձնաւորական միաւորութեան, որ նեստորական է. ասաց յա-
ռել առաքելոյն. « Վասն այսորիկ օծ զքեզ ած » և այլն, [illegible]
ոչ յայս առնէ զարգիւնական պատճառն, իբրև թէ վասն սիրելոյդ
զարդարութի, և վասն ատելոյդ զանօրէնութի եօծ զքեզ անձնաւորա-
կան միաւորութեամբն. այլ յայս առնէ զվախճանական պատճառն,
իբրև թէ վասն այնորիկ եօծ զքեզ, որպէս զի սիրեսցես զարդարութի,
և այլն. Իսկ եթէ ԳՈՐԾԻ խմացի փառք մարմնոյն քոյ, միութիւն ա-
նուանն, զատուական իշխանութիւնն, և այլն, որովք ես առի օծեալ
պատուհական և արտաքին օծմամբ, բառ այսմ առելն [illegible],
նշանակէ զարգիւնական պատճառն. իբրև թէ վասն սիրելոյդ զարդա-
րութի օծ զքեզ ած իւրով փառաց առաւել քան զընկերս քո, այս-
ինքն քան զամենայն երանեալս և փառաւորեալս, որք հաղորդութի
փառացն առին ընկերք քոյ. Զայս անգի առաքմանն այսպէս որոշին և
մեկնեն վարդապետք և ծանօթք, և զգուշութի է քննել. զորմէ տես
'ի մեկն. սաղմ. և մեք իսկ խօսեցեալ եմք 'ի մեկն. եբրայ. ա. 9.

52 ՕԾԵԱԼ [illegible]. Նաւէն երեմիայ (ողբ. դ. 20.) հոգի երե-
սաց մերոց օծեալ քո. յայս առնէ զբան զխոկական անունդ օծեալ.
կամ զանուանն խոկութեն և Հրեմարտութեն. որով ծանուցեր մեզ՝ թէ
կենդանական շունչ ես 'ի հոգիս մեր բառ առաջին փչմանն (ծննդ. բ.
7.) և միանգամայն լոյս փառաց յօծմանէդ, բառ սաղմ. դ. 7. նշանե-
ցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. ուրախութի պարգեւեալ սրտից մերոց
'ի պտղոյ ձիթոյ.

53 ԻՄԱՍՏՈՒԹԵԱՄԲ ԱՌԱՋ ԵՐԹԵԱԼ. այսինքն սիրողայ (իմ. 22.) [illegible]
[illegible]. կամ առ նախատացեալ բանն յարեալ է
այսպէս. բարերարութեամբդ քո ազդեցեր՝ իմաստութեանն սիրա-
քոյ. ով մարգարէութի իմաստնականի. [illegible], վասն ա-
մենի, այսինքն վասն ասանելի, թէ եղ վկայութի առաջի [illegible]
[illegible], այսինքն սատուածոյ. զոր ասեր վարդապետս այլայանէ 'ի քո.

[illegible] վկայելով բանիւն, թէ և ոչ կօշիկս առի յամենայն մարգոյ։ Նոյն կամի. առանձել յօծեալն սուրբ գրն տեսանելով, զնոր աւետարանի կանոնն պահելով խոստովանէր զայն՝ զոր քն աւանդեաց առաքելոց՝ մի բառնալ կօշիկս։ [illegible] [illegible]. Դանիէլ մարգարէ զկենդանատու մահուանէ քո [illegible] յայտնապէս, զայս կոչումն ձայնի, այսինքն զօծեալն՝ անուանադրելով 'ի [illegible] [illegible], այսինքն արտաքոյ քան զամենական կոչմունս պատուոյ. և վկայեաց առեալն թէ զկնի [illegible] և [illegible] եօթնեկորդացն ապանցի [illegible]։ Ի տեսլեան Դանիէլի (Թ. 26.) առի՝ յետ վաթսուն և երկուց եօթնեկորդաց. իսկ սուրբ վարդապետս զնէ՝ վաթսուն և ինն, 'ի մի գումարելով զամենայն ժամանակն սահմանեալ մինչև 'ի քն, ըստ յառաջընթաց բանի տեսլեանն, համար 25, մինչև յօծեալն առաջնորդ՝ եօթնեկորդք եօթն, և եօթնեկորդ վաթսուն և երկու. որով ընդ ամենայն՝ վաթսուն և ինն կատարի։

54 [illegible] [illegible]։ Գինի կազմեալ ըստ արհեստի խառնակելով՝ խառնութիւ ազնիւ խաղոյ, [illegible] [illegible] [illegible] մարդկութեան, այլ և զամենայն վարս առաքինութեան և մաքրութեան, [illegible] [illegible], 'ի սկզբանէ անտի, կամ 'ի սկզբնէ գրոյն մինչև 'ի վերջն՝ անուամբ զմասոյ, կնդրկի, և ամենայն փոշեաց անուշից՝ խառնեալ կազմելոց [illegible]. արտայայտեաց, ծանոյց (տես երգոց Ա. 3։ Բ. 4. 5։ Դ. 6։ Դ. 10. 11. 14. Ը. 2։)

55 [illegible] [illegible]՝ [illegible] 'ի [illegible]։ Նատանօր փոխադրութիւն կայ անուանց. զի ըստ գրոյն (զաքար. Ա. 1. 7.) զաքարիա մարգարէ որդի էր բարաքեայ և թոռն ադդովայ. իսկ աստ եդեալս երևի ցուցանել՝ որդի ադդովայ և թոռն բարաքեայ։ Բայց իմանալի է այսպէս. զաքարիաս 'ի տանէն ադդովայ՝ միջնորդութիւ բարաքեայ. և ըստ այսմ յարաբերականն՝ [illegible] 'ի բարաքեայ՝ ոչ ցուցանէ զադդով, այլ զզաքարիա։ Օրինակ ինչ նշանակեալ 'ի լուսանցսն գջիր ա. փոխանակ ասելոյ՝ որ 'ի [illegible], ակնարկէ ընթեռնուլ որդի [illegible]։ Իսկ 'ի [illegible] ասելն փոխանակ 'ի բարաքեայ, վասն լծորդութեան առաջին է. զի և երկրայականն գրէ՝ պէրէխիա, և առաջին՝ պէրախիա։

56 [illegible] [illegible] [illegible]։ մի օրին. [illegible], և նոյն է իմաստն. այսինքն հաւասար որոշմամբ կամ բաշխմամբ խաղին 'ի մասունս եօթն [illegible], այսինքն ձրագաց կամ բերանոց. [illegible] [illegible]. ձրագացն վառելոց 'ի գնդին, 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible]. զօրութիւ 'ի նեկրթուսա, կամ ընածին զօրութեամբն բաշխեալ, այսու զփրկութիւն մեր և զծունն 'ի քումէ լրութէ [illegible], չնորհօք կամ գերագոյն օրինակաւ [illegible], նախածանուցեր։ Ըստ այսմ իմացեալ, առաջին ուղղական անունն՝ [illegible] [illegible], լինի տէր բային [illegible]։ Սակայն կասկածելի է վրիպակ ինչ մտեալ 'ի գրչաց 'ի բայն [illegible], փոխանակ գրելոյ [illegible]. այսինքն աշտանակն զաքարիայ եօթնաջահեան խաղին բաշխմամբ յառաջագոյն ծանուցանէր զմեր օծումն, և այլն։

57 [illegible]։ Զօրս միանգամ ըստ օրինացն՝ [illegible] [illegible] [illegible], յայտ ծանուցեալ սովորութեամբ, [illegible] [illegible] հրէիցն. այսինքն զօրս միանգամ սովորաբար ընծայէին հրեայքն 'ի տաճարին. այք են [illegible] [illegible]. բլիթք հացի 'ի բաղարջոյ առաբեալք կամ անխմորք (այսպէս առանց կիտի գնին 'ի մեր օրինակս, համեմատ բանին Եկից. Խթ. 2. ուր առի՝ պանս բաղարջս. և այլն ամենայն հրամայի լինել բաղարջ։) և [illegible], այսինքն մանրամաղ ալիւր ցորենոյ՝ և այլ կազմեալքն 'ի նմանէ՝ զանգեալք իւղով (տես և ղևտ. Բ. և Է. 12։) Եւ

զուարթականք եղանց Խաչերգեացս. ունանք միջնեան՝ ուղղականք, պարարտք. բայց խմանալի է՝ օծեալք. ըստ որում քահանայն դնէր 'ի գլուխ նոցա զօծեալ ձեռն իւր (տես եղեց իթ. 10. ղեւտ. դ. դ. ժգ.) Եւ Քերովբէ առաքեալ, այսինքն տերունի, կամ տէառնական ձօնեցեալք. ըստ որում նուիրեալք էին տեառն (ղեւտ. ժգ. 8.) Այլ և պատարագք հաւուց՝ թաթաւամամբ միայն յարեան միւսոյն, որ է Ողջակէզ Ճերմի, նմանակից Ճարպին կամ իւղոյն (ղեւտ. ժգ. 6.) Այս ամենայն, ասէ, կամ իւղով զանդեալք, և կամ օծեալք, են Այսօր Խորհրդոյ մեռոնին՝ Առաքեալ Քերեք. առաջինկոյ կամ յայտայանդիման օրինակք, և նշանք յարմարեալք քեզ քո, որ սքանչելի նոր օծմամբ ածուցեալ եղեր պատարագ և զոհ.

58 Եւ ու Ճառագէն Զգէս. Զինչ ես յերկար զօրինակին հնոյն նկատեցից, և ոչ Ճաշակեցից մօտք զօրինակեալդ 'ի նոսա քաղցրութեան. խմանալով թէ Զինչ Խէչ Իւղ, զինչ նշանակիցէ իւղն արկեալ 'ի պատարագն, բայց եթէ զարամութիւն՝ որ 'ի Ճաշակմանէն ադամայ, Ահէրէ, իւղով մեռոնին բժշկել. ըստ որում իւղ զուարթ առնէ. Եւ Զինչ Դաւրդաւութեան, Ճարպն, բայց եթէ զի զմահաբեր կերակուրն՝ մեռնելոյ մատացուք, լցեալք 'ի սմանէ. Եւ Զինչ Օծութեան ձեռաց, զլխոյ, ականջաց, և այլն, բայց եթէ ըստ բանին եսայեայ (կա. 3.) զմախրանեան սրամտութիւն այսու իւղով ուրախութեան փոխարկեսցուք. և Ոստանէ Քո, քնական անուանեալ փրկեալք, ազգ և զուարթք ՅՅ անուանեսցուք (ըստ եսայ. կա. 3. 9.)

59 Որոյ Ծերութեան Առաքէ. այսինքն օրինակի՝ կամ այլաբանի 'ի հէթ պարարտ (սաղմ. զա. 11.) Բաղձանքն դաւթի՝ զի ծերութիւն իւր լինիցի օծեալ հիւթով, և օծանիլն գլխոյ նորա (իբ. 5.) զինչ այլ թայ խմանալ, ասէ, բայց եթէ զհին օձապատիր սուգն մահու կենդանացուցել կամ բժշկել գեղով մեռոնին.

60 Ճրագին Լուսաւորելոյ Զօրհնեալութեան. Շնորհս մատուցանելն դաւթի վասն լուսաւոր անձկոյն զճրագն (սաղմ. ժէ. 29.) Մարթ է ըղբառն Լուսաւորելոյ ընթեռնուլ զատ. Լուսաւոր Եղեւ. քանզի և 'ի մի օրինակ գնի՝ Լուսաւոր Եղելոյ. Այս շնորհակալութիւն, ասէ, զինչ յայտ առնէր խորհրդաւոր, բայց եթէ զի 'ի մէջ խաւարի անգիտութեան և կատարածութեան՝ Լերդամբքայ Քրիստոս, ընդ մերում կերպի բնութեան միանալովդ՝ 'ի յիս լինելոյ ես էմմանուէլ.

61 Ի Դարբնէ Խաչանիշս. Ի բնագրին երգոց, գ. 1. գնի. « Ի պարտեզ իւր 'ի դաշտս խնկոց », և 10. գնի, « 'ի պարտէզս ընկուզաց ». Իսկ սուրբ վարդապետս գնէ Խաչանիշս. զի խնկենին և ընկուզին՝ իւղայինք են.

62 Ընտրեալ Նիւթիւ. Բանն եսայեայ (իէ. 6.) օծցին իւղով, և այլ բանք երգոյն զինչ այլ ցուցանեն, բայց եթէ՝ զի այսու նուիրեալ նիւթով մեռոնին՝ յորում գոյ զօրութիւն հոգւոյն սրբոյ. լուսաւորեալ տեսցուք զանխմանալի բարձրութիւնդ.

63 Քնարիս Եղելոյ. մի օրին. Քնարին Եղելոյ. Ով քեզ որ պատճառ ես ամենայն եղելոց, ձեռն համբառնամ հաստչանիք երկնամանցս, ըստ ողորմութեամբ պաղատանաց առ քեզ Խորհրդոյ, այսինքն կարգադգիս, աղաղակողիս. կամ, ըստ կարգալոյ պաղատանաց. Զօրհնաբերեալ շնորհազարդեալ պարգեօք օծմանս, գոհութիւն քեզ մատուցանեմ, որ բարձրեալդ ես, և Ամենայն Քաղաքամբ, անըմբռնելի, անպատ փառաբանիլ միշտ օրհնեալ, և այլն.

64 Ու Հաւոյ Ռեոյ. և ոչ փոքր ինչ լուսոյ մատուցման արժանի եղելոյ՝ առ յոյս քաղցրութեան, Լուսերեւ, պարգեւ, բացայայտել քո լուսովդ՝ զպաղանիս մեռոնին. որպէս զի Քրիստոս, զախորժական և ըղ_

հեշտացուցիչ իմաստս խառնելով ընդ ալէքսանդրական բանիցս, ասացից՝ թէ ողորմեցար ինձ, և զանյայտս իմաստութեան քո յայտնեցեր ինձ (սաղմ. խէ. 10. Ծ. 8.)

65 ՀԻՓՈԹԻՓՈՍԻՍ: Ընդ առօրեական կամ հասարակ նկարագրութեան ձևոյս միացուցեր ՇՓՈԹՈՒԹԻՒՆ, զպայծառութիւն հրաշալի գործոց քոց: ԷՎԻԴԷՆՏԻԱ ՆՈՄԻՆԷ · մի օրին · ԷՎԻԴԷՆՑԻԱ ՆՈՄԻՆԻՍ: Արդ մինչ բաղդատութիւն երկրի և երկնի առ ձեզ՝ ոչ է ըստ էակութեան, այլ ըստ բնական զօրութեան նոցա առ ընդհանուր և սքանչելագործ զօրութեանն քո: Զոր բնաւ ոչ գրէ, ասէ, ասնել երկինք և երկիր, այլ ԻՆՔՆ ՍՏԵՂԾՈՂՆ 'Ի ՄԵԾԷ ՓՈՔՐ · որպէս ըղ-փոքր 'ի մեծէ պարունակի կամ յաղթահարի · զի բնական զօրութիւնք նոցա յաղթահարին 'ի սքանչելագործ զօրութեանն քո: Արդ զայսպիսի զօրութիւն, ասէ, 'Ի ՓՈՔՐ ԳՈՅՍ, 'ի նուաստ էակս ձևոյս ՓԷՌՄԻՍԻՍՏԻ ՎԻ-ՐՏՈՒԹԷՄ · էացուցեր կամ երևեցուցեր հաստատութիւն, առհամեմեալ ճշմարտապէս ԱՆՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ, առանց պատրանաց · ՁԻ ՄԻ ՊՈՌՆԻ ԻՆ · զի մի յորժամ նորահրաշ գործ ինչ երևեցի եղեալ մեանման (որպէս 'ի դրոշմին՝ այլ ընդու խօսել, կամ մարգարէանալ.) յուշ ԷՍՍԷՆՑԷ, յո-տար կոչէ ձևոյն, որ բնաւ չունի յինքեան զայնպիսի զօրութիւն, այլ զայս անձնուր ակնել ինչ կարծեցի · որով միայ առաջոյն վերա-ւորին ասաւել թերեհաստատութիւն, կամ ծայր աննելով զերանս մեր, քան թէ բժշկին հաւատալով, և լուսաւորին: Նոյնպէս կարի · զլինել այնպիսի մեծ զօրութիւն 'ի ձևոյն նուիրական՝ յայտ հաստատութեամբ հաւատարմացուցեր յայտնի նշանաւք, զի յորժամ սքանչելի գործ ինչ երևեցի լինել յայնպիսի ակար իրէ, մի կարծեսցի պատրանք ինչ դի-ւական, այլ ճշմարիտ ներգործութիւն: Այս են նկրբին իմաստք ամբողջ բանիս, բայց ըստ չորրորդութեանն՝ յարաբերականաւն ՇՈՐ, լաւ ևս է իմանալ զհոգին սուրբ, համեմատ յաջորդ բանիցն, և իմաստքն սպար-զին: Զայն հոգի՝ զոր աշխարհ ոչ կարէ երկնից բարձրութեան, և երկրի լայնութեան անդնդոց խորութեան, այլ մանաւանդ այս ամենայն իբր փոքր ինչ ամփոփեալ լինի առ 'ի հոգւոյն, ահա զայս զմեծ 'ի ակար նկատ-տաւորեցեր, ըստ օրինակի հացին և գինւոյ 'ի հաղորդութեան, և ջրոյն 'ի մկրտութեան, և այլն:

66 ԻՆԹԷԼԼԷԿՏՈՒԱԼԻԱ ՊՐՕ ՍԷՆՍԻԲԻԼԻԲՈՒՍ: մի օրին · ՍԷՆՍԻԲԻԼԻԱ ՊՐՕ ԻՆԹԷԼԼԻԳԻ-ԲԻԼԻԲՈՒՍ · այսինքն երկրայականն իբր ինչ, կամ կեղծիք:

67 ՕՐԴՕ ՆԱՏՈՒՐԷ: Որպէս զհայն ցորենոյ ճշմարտապէս քո մարմին տարրեր տարրական զօրութեան, և զարիւնն խաղողոյ զգինին՝ ՍԱՆԳՈՒԻ-ՆԷՄ, արիւն քո տարրեր · ՍՈՒՐ զկողինն միայն յեղէ, զի երևելի մնան էր աներևոյթական սրբանն: Եւ որպէս զջուրն ճշմարտապէս տարրեր սրբանից հոգևոր ծննդեան, ՆՈՅՆՊԷՍ Ն ՇՆՈՐՀԻ ԱՆՁԱՆԻՑ ՏԻՒԱՆ (այսպէս 'ի լաւ օրինակին · իսկ ՆՈՐԻ ԱՆՁԱՆԻՑ ասելն՝ ոչ յարմարի ·) նոյնպէս և զհո-գեւ՝ զոր փչեցեր յառաքեալսն, ԱՌՆԷՈՒ Ն 'Ի ԱՈՅՆ, մեանման և նկրբին զօրութեամբ նորա 'ի յօծեալսն ՍՊԻՐԻՏՈՒՍԷՆՑԷ, արգեամբք կամ խա-կապէս շնորհեցեր: Որ ասաւնի յայտնապէս, զի համեմատութիւնն ոչ է ըստ փոխարկմանն, այլ ըստ ճշմարտութեանն և ըստ ներգործու-թեան · իբր ասել · որպէս 'ի խորհուրդ հաղորդութեան՝ քահանայագոր-ծեալ հացն և գինին են ինքնապէս մարմին և արիւն քո և ներգործեն զշնորհս նոցա, և որպէս 'ի խորհուրդ մկրտութեան ջուրն ինքնապէս ծնա-նի զմեզ 'ի հոգևոր կեանս, այսպէս 'ի խորհուրդ դրոշմին՝ մեռոնն ի-կապէս տայ օծելոցն զհոգին սուրբ: Այսու օրինակաւ խօսի և սուրբն Կիւրեղ յերրորդ խորհրդածն · զոր յիշեցաք 'ի լծ · 1 · ասէ · « Զգոյշ լեր, մի իբր մերկ և սոսկ համարիցիս լինել · զի որպէս հացն հաղոր-դութեան յետ կոչման հոգւոյն սրբոյ ոչ է հաց հասարակ, այլ մարմին

քնի, նոյնպէս և սուրբ իւղս ոչ եւս է լոկ իւղ յետ կոչմանն, այլ քնի պարգևարան, և հոգւոյն սրբոյ ներգործող՝ հասեալ գալով ածութեն նորա։ Նոյնպէս և 'ի դիոնեսիոսեան գիրս յաղագս եկեղեց · քահանայութ · (գլ · Դ · բնաբ · Դ ·) խորհրդոյ հաղորդութեն համեմատելով, ասէ · « Զայս՝ ածային աստիճանորդքն մեր՝ որպէս համակարգ և նոյնագործ ժողովոյն նուիրագործութե (այսինքն հաղորդութե,) նորաւմբք պատկերաց ըստ բաղում իրէք, և խորհրդականաց բովանդակութեանք և սրբազնասրբանութեանք գծագրեցին մեզ »։

68 [illegible]։ Ըստ օրինակի վերջանկիւնս զատանեն զայս 'ի նախընթացէն, և լաւ ևս է։ Նախ կամի · զերկուսս կամ զծնունդ կենաց [illegible] · յայտնեցեր 'ի մեզ, [illegible] · այսինքն գեղք կամ կենք ծնեալքն հոգևորապէս՝ և ոչ հեթանոսութե կամ ուրացութե կարէ փոխարկել · զի անջնջելի է կնիք դրոշմին, որպէս և մկրտութեն, որով և անկրկնելի · ըստ բացատրութեա՝ [illegible] իբր ածական խմանի՝ փոխարկելի · այսինքն կերպարան յառաջ եկեալն ոչ է փոխարկելի։ Իսկ եթէ ասցի իբր գոյական, բառն [illegible] 'ի սեռական հոլով խմանալի է · այսինքն որոյ յառաջ եկեալ կերպարանին ոչ է փոխարկութե և ոչ հեթանոսութե · [illegible], որպէս և ոչ օրհնութե կամ օծման խաչի լինի [illegible], կրկնումն · զի միանգամ օրհնութեին առէ 'ի նմա՝ ցորչափ անխարտակելի մնայ։ Զայսպիսի անկրկնելի ծնունդ օծման, ասէ, մեզ նաւակացս 'ի խաւարի ծագեցեր [illegible], որպէս և քո ծնունդն մարդկութեանդ միանգամ է և անփոփոխելի։

69 [illegible]։ Ի շնորհ մեռոնին զանապականս լինելութի քո ծանուցեր · որով ոչ աղքատն կարօտացի, և ոչ մեծատունն բարձրամտեսցէ · որպէս և զօգն և զլոյս արևուն և զջուրս հաւասար ամենեցուն բաշխեցեր։ Նոյնպէս կամեցար և զշնորհ մեռոնին՝ [illegible], բաշխեալ լինելով երկրաւորացս ըստ նմանութե մանանային · թէպէտ ասամուր [illegible], խոնարհայն հոգւով առաւել հաղորդի շնորհին, քան [illegible]. հպարտաց։ կամ, փոքունցն առաւել, այսինքն աղքատաց կամ նուաստից առաւել ասի բաշխել, այնու զի թէպէտ հաւասար են պարգևքն առ մեծամեծան և առ աղքատս, բայց առվխմբ աղքատն և նուաստն բարձրանայ 'ի հաւասարութե մեծատանն, որով առաւել լինի քան զոր էրն։

70 [illegible]։ Այսր նիւթոյ յայտնութեանն կամ ներգործութեանն խորին խորհրդոյ՝ [illegible], նաև 'ի բնական հանգամանայն կամ 'ի յատկութեանց իւրոց ունի զարմանալի օրինակաւ [illegible], զմեկնութե կամ զբացայայտութեան իւր։ Մի օրինակ գնէ [illegible]։ Իսկ թէ ոչք են այն հանգամանք, իբր զի ասէ, ձէթն [illegible], ոչ երկչոտ չառապմամբ ինչ փոխէ զանգն, որպէս անտիկն անհաստատ · և ոչ [illegible], ծածկապէս կամ առ սակաւ սակաւ թողու զանօթն կամ զայլ ինչ՝ յոր միանգամ շաղախեալ է, որպէս թողու ջուրն՝ ցամաքելով մեղմաբար։ և ոչ [illegible], յորժ զորաւոր մաքրողական նիւթովք հերքի · և ոչ [illegible]. 'ի հակառակէ խմբէ, 'ի ջրոյ՝ կամ 'ի գինւոյ՝ կամ յայլ իրէ լուացեալ ելանէ · և զայսոսիկ խմա յորժ գժուարաւ ելանել ասձառովք կամ այլ իրօք։ Արդ, ասէ, այս բնական թափանցումն ձիթոյն, և գժուարաւ ջնջումն՝ յայտ առնէ զանջնջելի ներգործութե նորա 'ի դրոշմին և յայլ եկեղեցական օծմունս · որպէս յօծանելն զեկեղեցի, զսկի, զխաչ, զզանգակ, և այլն, որոց օծումն ոչ կրկնի՝ ցորչափ անեղծ և ամբողջ կան։

71 [illegible] [illegible] · Որպէս բնական գոյնն 'ի գոյացութեան մարմնոյ անփոփոխ է և [illegible] . անեղանելի · մինչ զի 'ի գոլ իւր՝ գոյ և մարմինն, և յեղծանել իւր՝ եղծանի և մարմինն (իմա զայս ըստ բոլորովին եղծման բնական գունոյն, և ոչ ըստ պատահական այլայլութեան ինչ։) Այսպէս և [illegible] [illegible], իմա հայկական, այսինքն զդեղնական զօրութեն կամ զազդեցութիւն իւղոյս, որ անդստին 'ի [illegible] [illegible] [illegible], յիւրոց կերպարանաց կամ 'ի համպամանաց անտի [illegible] [illegible], ունի կամ ըմբռնէ զատեալն այսինքն զահեղին կամ զանօթն՝ զոր մնանդամ կոչեալ է, [illegible] [illegible], իբրև համարուն կցորդութիւն ընդ մեզ կապեցեր։ [illegible] [illegible] [illegible], ընդ շնորհացն կամ գերբնական ներգործութեանն՝ որ է իրն նշանակեալ 'ի ձիթոյ անտի, [illegible] [illegible], զբնութեն ձիթոյն՝ որ օրինակ և նշան է աներևոյթ ներգործութեան նորա, յարմարելով։ Որով և զներգործութեն մեռոնին՝ որ անտեսանելի է աչաց և մտաց, իբրև երևելի ձեռացուցեր բնական համգամանօք ձիթոյն։ Այլ և զի 'ի [illegible] [illegible], 'ի ձիթոյ կամ 'ի շուշմայէ [illegible] համեալով զիւղն՝ զարմանալի օրինակաւ մեզ 'ի կերակուր և յօծումն պատրաստեցեր։ Որ և այս յարմարի հոգևոր ներգործութեն մեռոնին · զի որպէս իւղն ծածկեալ թագուն է 'ի մարմնի աղացոյն, և միայն [illegible] երևի, այսպէս ներգործութեն մեռոնին անտես գոլով աչաց՝ 'ի հալածանս և 'ի նեղութիւս որ վասն հաւատոյ՝ երևի գործովքն։ Բովանդակ բանիւս զայն յայտ առնէ, զոր և ամծարանքն ծանուցանեն, թէ նիւթք խորհրդոց թէպէտ և ոչ բնական զօրութբ ներգործեն զհոգևոր գործս, սակայն ունին բնական նմանութեն ինչ ընդ այնց գործոց · որպէս 'ի մկրտութեան՝ ջուրն բնութբ լուացող է աղտեց · և 'ի հաղորդութեան՝ հացն բնութբ է յագեցուցիչ, և գինին բնութեամբ զուարթացուցիչ, համեմատ հոգևոր գործոց իւրեանց։ Այսպէս և 'ի դրոշմին՝ մեռոնն բնութբ դժուարեղանելի է՝ համեմատ անջնջելի ներգործութեան իւրոյ։ Վերադրեալ բանն, 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], կարէ իմանիլ և այսպէս · իւղոյս յիւրոց համպամանաց անտի՝ իբրև բնութիւն զատեալն ենթակայ ունողի · իբրև թէ, զենթակայն՝ զոր առնու, իբր բնական ինքեան ըմբռնէ, կամ 'ի նորա բնութիւնն կերպանաց։

72 [illegible] [illegible] [illegible]։ Ոչ հրամայեցեր զայս իւղ կոչիլ 'ի բաղադրութեն քաղում խառնեալ ծաղկանց և յայլ և այլ անուշահոտ իրաց, որպէս հրամայեցեր մովսէսի 'ի հին օրէնսն (Ելից · Լ · 23 ·) այլ փոխանակ այնպիսի իրաց զօրինակն 'ի ճշմարտութիւն փոխելով, զու ինքն [illegible], ոչ բնութբ, այլ զօրութեամբն 'ի այն անխառն ձէթ [illegible], աւետ երկնային լուսոյ։ Այսու ոչ եթէ աւելորդ կամ անպատշաճ առէ զխառնութեն անուշահոտ իրաց 'ի մեռոնն, որ հին սովորութեն է նաև առ յոյնս, որպէս յիշէ յուստինոս վկայն, որ էր յերկրորդ դարուն, 'ի բանն ընդդէմ տրիփոնի · այլ և յիշատակի 'ի դիոնեսիոսեան գիրս, յաղագս եկեղեց · քահանայապ · գլ · դ ։ Այլ առէ եթէ, թէ ոչ հրամայեաց քո 'ի նորումս, որպէս հրամայեցաւ 'ի հընումն · յայտ արարեալ թէ այս խառնութեն ոչ է 'ի հարկէ խորհրդոյն, և ոչ յամծայնին հրամանէ, այլ միայն եկեղեցական արարողութեն և հրամանն ըստ իւրաքանչիւր ազգի։ Զի և վասն խառնութեն բալասանի, որ սովորութեն է առ լատինս և առ յոյնս, այնպէս քաղում ամծարանք՝ արարողութենց քննիչք, թէ հարկաւոր է առ նոսա յեկեղեցական հրամանէ միայն, իբր զի նախ քան զվեցերորդ դարն չէր առեալ՝ յիշատակ խառնութեն բալասանի։ Այլ զայսցանէ յերկարել ոչ է աստուծոյ (?) ։

73 [illegible] [illegible] [illegible]։ Թէպէտ և քաղցրութեն քո միով օրինակաւ

ոչ համեմատի, այլ զանազան իրաց նմանիս, այսինքն ծաղկի զաչառոյ, չուշանի, նարգասի, եղեգնախինկոյ, քրքմոյ, ողկուզոյ, և այլն, առկայծ [illegible], ոչ վայրապար, [illegible] օրինակեցար [illegible], միայն պարզ իւղոյն օրինակեցար փառաւորեալ [illegible], որ իւղ թափեալ առաջար յերգան. իբր զի դու զամենայն լնուս, և ոչ ի-միք կարօտիս. և այսու առաւել նմանիս 'ի յիւղն. զի յամենայն առա-ցեալ ծաղկիս և յանուշահոտ իրս փակեալ զօանին իւղոյն մասունք. և նման է ազնուութիւն նոցա:

74 Ու [illegible]: Պարզ և անխառն իւղոյն օրինակելով, և 'ի նա-մանալոց պարարիս. որով ցուցեր՝ թէ ոչ խառնեցելովք 'ի [illegible] [illegible]. յայլ և այլ հակառակ և աննման իրաց, որ է [illegible] [illegible]. յայանի օրինակ բաժանեալ կամաց և անմիաբանութեան, այլ 'ի միաբանական սիրոյ մերմէ [illegible]՝ իբրև արարիչ մեր պարա-րիս և զուարճանաս. ուստի և վասն մեր [illegible] [illegible]. ըստ մեր ակարութե կամ խմաչողութե՝ ամենայն յարմար նմանութիւք օրինակիս. [illegible]. ընդ որ նմանութեց՝ նաև նիւթ ձիթոյս մաքուր մասաց աեսանի իբրև լոյս բարի, և հուր սիրոյ անխառն 'ի չնչմանէ [illegible] (մի օր. [illegible].) այսինքն առաեցուցիչ հոգւոյ անզթութեան:

75 Ա[illegible] [illegible]: Յովհաննու (Զ. 69.) որում միա-բան ասէ իմաստունն (առակաց Գ. 10.) «Ընկալ զբանս իմ, զի բազ-մասցին ամք կենաց քոց»:

76 Լ[illegible] [illegible]: Ի կեր արկանէ զլան աեան (Մատթ. Զ. 17.) «Օծ զգլուխ քո, և լուա զերեսս քո». ըստ որում և ես, ասէ, լուա-ցեալ զերեսս կենսատու ջրոյն աբաստանեաց, որ է ջուրն գեր 'ի վերոյ քան զհաստատութե երկնից (Ծննդ. Ա. 7.) և օծեալ զգլուխս մաաց երկնային իւղոյդ լուսաւորութեամբն, յանդիման եղէց քեզ յաղօթս ուրախութբ, և ոչ արտմութեամբ:

77 Գ[illegible]: Յարգելի հագեալ մեծարանօք. և [illegible]. զովելի. [illegible] [illegible]. յարգելի և զովելի է ոչ իբրև լոկ ածանոյ և կակղացու-ցիչ [illegible] [illegible], խելապատակիս, կամ գագաթանս, որ է անօթ ուղ-ղոյ, և կամ ըստ որում հերաց գլխոյն նոյատ ինչ մատուցանի նախա-կակղացուցանելոյն. այլ ըստ որում ոէքրանական խաչին աեսանա-գրի յորհնելն. 'ի մի օրին. [illegible] [illegible], իւղ եղեալ փոխանակ ուղ-ղոյ, ընդ որում այս է իբր իւղ և պարարտութիւն գլխոյն:

78 Զ[illegible], զխուժառաանի մարդն. [illegible], զեթովպացին. [illegible] [illegible], զպարսիկն. [illegible], զթաթարն. [illegible]. զհասան. [illegible] [illegible]. զվայրենի գազանաբարոյն. և [illegible], զար-հուրելի կերպարանք [illegible], յայն վայրենի ազգէն՝ որ չան նման գլուխ ունի, [illegible], ահաղին մեծութեամբ. որպէս էր քրիս-տափոր վկայն: Զայս ամենայն, ասէ, իւղն օրհնութեան՝ քոյան ա-նուամբն մի առնէ. և իբրև մի ազգ՝ երկնաւոր հօրն որդի [illegible], հաստատելով զենոյս միրտութե: Այսու 'ի կեր արկանէ զլան աա-քեղյն (կողոս. Գ. 11:)

79 Հ[illegible] [illegible]: Բազում զարմանալի ներգործութիւնք աեսանին նախ՝ 'ի բնական հանգամանս ձիթոյն, և [illegible] [illegible], այլ և խոր-հրդական զօրութե նորա յարմարին: Որպէս անօթ փայտեղէն ոչ օ-ծեալ՝ գիւրաւ բեկանի, այսպէս մարդ ոչ դրօշմեալ, [illegible] [illegible] 'ի հաւատոյ և 'ի շնորհացն, զոր միրտութեամբն ընկալաւ:

80 Մ[illegible] [illegible]: Այս իւղ օրհնեալ՝ է իբր հրաշագործ մասն քո, կրելով յինքեան զզօրութե հոգւոյն սրբոյ՝ որ մասն նոյ առի: Վասն զի ասա իբր [illegible] [illegible]. որպէս 'ի փայտ կամ յանօթ օծեալ,

խաղն լինի իբր պաշտպան ընդդէմ ջրոյ կամ ցրտոյ, այսպէս մեռանն իբրեւ անմատչելի կազմած զրահի եւ ամուր պաշտպանակ, [illegible]. յամենայն կողմանց հաստատուն կամ զգուշաւոր պարփակմամբ պաշտպանէ զծնունդն յայլանդակ [illegible], 'ի նմանութեցին օտար յաւելուածոց. ուստի թաթաւելոյն ամեն՝ ոչ ներկի [illegible] անզգութեն, մարդասպանութեն, եւ այլն. եւ ոչ միթայլին [illegible], գունով ազնուութեան, կամ այլ մեղաց այլոյլ։

81 [illegible]։ Որպէս, ասէ, ձեւթն տարածական եւ թափանցող զօրութի ունի, մինչ զի անկեալ 'ի հանդերձ կամ 'ի փայտ՝ յամենայն մասունս նորա տարածի եւ ընդմանէ. ուստի եւ սաղմոն զանէծս բառնանութեան ձիթոյ ասաց բաշխել յոսկերս ամբարշտին։ Այսպէս մեռանուն հաղորդակս ընդ բնութեան մեր թափանցէ հոգին առ բարս. եւ տարածմամբ [illegible], զկերպարան հոգւոյն, կամ զամենայն մերս նորա. եւ օծանելով զամենայն անդամս մարմնոյն, որպէս աւանդէ 'ի գրոցն, զգացումն առ կամ ներգործէ 'ի [illegible], 'ի ներքին շնչափողէ անտի մինչեւ 'ի ծայրս մատանց ոտիցն. եւ մնացուցանէ զփչառակ մաշուն. զի օծումն՝ անապականութեն է նշանակ. եւ զի յայս խորհրդական օծումն միշտ միացեալ է կենդանարար զօրութիւն քո։

82 [illegible]։ Այս վայելչական օծումն՝ նաեւ առ ընկեր՝ որք բաժինք ձեռաց կամ ուժով բաղխի մարմնչին, եւ [illegible], մերկ մարմնով կաւին, [illegible]. սովորաբար իբրեւ օրէնք 'ի գործ ածի. իբրեւ զօրաւոր հնարից [illegible], հանդամանք կամ ակ. առակ պատերազմական, որպէս զի անըմբռնելի լինի ձեռաց հակառակորդին։ Այսպէս խորհրդական օծումն 'ի մեզ՝ աճապարէ է ընդդէմ գիւաց եւ այլ ախտաց։ Քանզի գեղեցկագոյն բանն եղեւ[ե]լի առ ու. խմանայլին փարաւոն ասանայ, եւ այլն։ Առաւնոր յարմարէ զբանն եղեւ[ե]լի (գլ. խը.) որ բառ գրոյն խօսի զկշխանէն ծուխոյ, եւ առ 'ի մեռու՝ զատարանոյն. յորում զկարծանումն նորա [illegible], ընդ ծալք նմանարանութ եւ ուրական խաւսք յարմարեալ առ (հռոմ 13. 14։) Յորժամ հաստատեցար. եւ [illegible] 'ի պատերազմ [illegible], այսինքն ընդ օծեալ քրիստոնեին՝ որ իբր հրեշտակացեալ է. [illegible]. յորում պարգեւ եւ շնորհք հոգւոյն իբրեւ հրեղէն քարինք պատրաստեալ կային առ 'ի ջախջախել զգլուխ քո։ Յայս միտս բերէ զայս սուրբ վարդապետն՝ յարմարելով անցելոյ բանին. թէպէտ բառ ձայնին սովորաբար յայլ միտս խմանան մեկնիչք։

83 [illegible]։ Աշաւոր աւրութե, որ յամենայն աւ. գիս օգնական են եւ կարող, անճառելի բանիւք, եւ գերազանց քան զըմբռնութիւն մտաց։ Որ աւետարանութն [illegible], օրհնիս, օրհնութեամբ պատուեալ յիշատակիս իբրեւ օծեալ ակր, որպէս առ հաւիւան 'ի գիշերի ծննդեան (ղուկ. բ. 11.) եւ 'ի քահանայապետէն հարցեալ 'ի մատնութեան գիշերին (մատթ. իզ. 63.) եւ պետրոս նոյնպէս դաւանեաց զքեզ (մատ. ժզ. 16.) եւ 'ի թերահաւատ խնդրողացն նոյնպէս հարցար (յովհ. ժ. 24։) [illegible]. 'ի կանոնական խրատուց կամ հրամանաց քոց. յորս ասացեր (մատթ. իգ. 10.) ուսուցիչ ձեր քո է, այնպէս հաւատամք եւ մեք։ Եւ յառաջ քան զայսոսիկ՝ հեռուդէս օծեալ անուամբն հարցանէր զքեն առ վարդապետս հրէից (մատ. բ. 4։) Եւ նոքին աւետարանիչք [illegible], թէ դու իսկ ասացեր, զիարդ զաւիթ զծնեալն ած՝ զակր իւր եւ զանակնդրն որդի ոյ՝ կոչէ որդի իւր ժամանակաւոր։ Այամ հարցման հրեայք չկարացին առ. պատասխա.

նի․ բայց հաւատացեալքս տօղէս ընկալեալ զմեկնութիւն բանից , թէ կա_
տարումն այնր խորհրդական կոչման ծնելոյ՝ 'ի մեզ հայի ։ Այն է գե_
րազանց վճռակ քրիստոնէից․ իբր զի ժամանակաւոր ծնեալ որդիս
ազատնոյ՝ օծմամբ մեռոնին հաստատեալք որդիք են ։ Գիտելի է , զի տա_
ստանօր յայտնագոյն լինին իմաստքն, եթէ զբայն տէրն ընթեռնումք և_
զակառն՝ տէրն․ իբր սակս․ զաւ խոկ տասցեր, զիարդ զրէ զաւիթ զան_
սկիզբն որդին՝ նիքեան ժամանակաւ որդի, և այլն ։

84 Իւղակայական խնկարկութիւն ։ Գերազանց անուն ծածութեան զայն_
քան աչաւորութեան ունի և զօրութիւն և զանմնաստ յորդութիւն
կամ օրհնութիւն, մինչ զի, և այլն ։

85 Անփոփոխ անուանք ։ Ոչ դը 'ի սահղծաւածոցս իչխէ ած կոչել
բնութեամբ ( թէպէտ և հաղորդութեամբ կոչին երբեմն․) այլ ածային կոչին
պատահարար, այսինքն վերաբերեալ առ ած իբր բնակարան, իբր
պաշտօնատար, իբր հաղորդեալ խմաստութեան ևոյ, կարողութեան, մե_
ծութեան, և այլն․ բառ որում ասեմք, ածային տեղի, ածային տա_
ճար, և այլն ։ Խոկ էականապէս խմացեալ զածային, ոչ տալի սահղ_
ծուածոց․ զի բառ այսմ բնութեամբ ևոյ պատշաճի, որպէս ասեմք՝ ածային
անձն, բանն ածային, և այլն ։ Սոյնպէս և բնրէ մարդն, ոչ տանի մարդն՝
զքն անունն խսկապէս կրել ( թէպէտ և պիտակարար տալ․ որպէս
կիւրեղ 'ի խորհրդածս․ մեան․) « Դրօշմեան քն եղայք » ․ այլ և նիքն
նր վարդապետս բերէ յածապանէն ('ի մեկն․ երգ․ եր․ 314․) « Քրիս_
տոսս զեամ զկեցեալն բառ քնի » ․ այս է 'ի զովեստ ածանաս․ բան խս․
այլ բառ Ճշմարիտ ծածութեան՝ միայն քրիստոնեայ կոչիմք ։

86 Նախատօյն մեծաբնեան ։ Օծեալն անուն անտանելի եղև մեծութեան
յափշտակութեան մկրտչի, յասել նորա, չեմ ես քն ( յովհ․ ա․ 20 ։) Նա_
խատոյն ասեմք բառ հին լուծ․ խմանան բառ հատակի, իբր վեց ամսովք
յառաջ ծնեալ քան զքն․ բայց լաւ ես խմանի բառ գերազանցութեան
սրբութեան․ այսինքն գերազանց սրբութեան յափշտակութեան՝ որով մեծ կոչե_
ցաւ և առաւելաւ քան զամենայն մարգարէս, չեղև համարձակելի քնդ
անուան ։ Հարցն շնորհին, որ մկրտութեան լոկ ջրոյն պչողեալր մկրտութեանն
պատրաստեաց ( մատ․ գ․ 11․) կամ, 'ի ջուրն յորդանանու հրաւի_
րեաց զհոգին սուրբ 'ի վերայ քնի ։

87 Անտեսականակցն չափակցութեան ։ Առաքելոյն երկու երկու մատա_
նութեան (մարկ․ զ․ 7․ 13 ։) իբր ազդակից, խողամն իբրև քա ձեռամբ
վարեալ, բժշկէին զհիւանդս ։

88 Յառաջահանութիւն ։ Յայտնիկ օրինակս զանմխարանութեան խառա_
քանչիւր հակառակացդ պարտ է խմանալ, և ոչ զմերժումն միայն 'ի
միասնէ․ այսինքն որպէս ցաւ չկարէ կալ ընդ առողջութեան, և ոչ մահ
ընդ կենաց, նոյնպէս ընդ ածապարգև խողոս չկարեն կալ զինչ և իցէ
գործք չարին ։

89 Ոտնհարութիւն (ականջմասուկ․ մաքառ պէսճէկի ։) բայց 'ի մի օրին․
և հին լուծ․ զնի, ոտնհարութիւն ։ որպէս Ճանճք․ սաւ, և սարդք ( մա_
մուկ․) և ունկնամուռք ձիթով մեռանին, այսպէս սոյն ձէթ շնորհօք
օրհնութեանն զցես հալածէ, և զպարառ չարեաց՝ ներելի մեղաց քնջէ ։
կամ, զպարառ չարեաց հերետիկոսութեան սրբէ, զի առ հինան սովորու_
թիւն էր՝ զցարձեալսն 'ի հերձուածոց մաքրական օծմամբ մեռանել․
զոր և յիշէ առաջին սուրբ ժողովն կատանդն․ 'ի կանոնն է ։ որպէս և
զպղծեալ սեղան, կամ եկեղեցի, կամ սկի՝ սովորութեան է օծմամբ սրբ_
րել ։ Եւ այլ եւս, զպարառութեան մահու բանից նշանակաւ յա_
րութեան․ զի օծումն՝ կենդանութեան նշանակ է ։

90 Ուշ ադրութիւն ։ Եթէ աւազանաւ խմացուք զանօթն կամ

զլուացարանն մկրտութեան , առ ի ոչ լինել կատարեալ առանց օծման , զի յորժամ զաւազանն՝ եպիսկոպոսն մեռնէ 'ի ներքուստ զչորս անկիւնսն , և քահանայքն ընդ 'նմին արտաքոյ կողմանէն օծանեն . որպէս գտնեն գրչի մաշտոցք (զոր տպագրողքն զանց արարեալ են .) և յետ այսպէս օծանելոյ՝ ապա կատարեն 'ի 'նմա զմկրտութիւն : Իսկ եթէ աւազան իմացուք զնոյն իսկ մկրտութիւն , անկատար ասէ զայն առանց օծման , ոչ ըստ բանի խորհրդոյ . զի առ խորհուրդ մկրտութեան բաւական է ջուրն բնական՝ կոչմամբ ամենասուրբ երրորդութեանն . այլ խօսի ըստ կարգաւորութեան մկրտութեան . յորում օրէն է 'ի գործ ածել զմեռոնն , կամ 'ի ջուրն հեղլով , որպէս մերս է սովորութիւն , և կամ զմարմին մկրտելոյն օծանելով . որպէս առ լատինս քահանայն յետ մկրտելոյ գլխոյն՝ մեռոնաւ օծանէ զգագաթն , որ ոչ է խորհուրդ դրոշմի , այլ լոկ արարողութիւն : Դարձեալ , մարթ է իմանալ ըստ գործոյ մկրտութեան . զի թէպէտ գործ մկրտութեան՝ ըստ որում շնորհք հոգևոր ծննդեան՝ կատարեալ է ըստ ինքեան , բայց հաստատութեան պէտս ունի առ 'ի պահպանութիւն , զոր տայ օծումն դրոշմին :

91 Եթէ աւազակացն : զօրութեամբ իմա , եթէ աւազակացն ասես՝ մահարեր խոցելոյն զզգամ , որոյ օրինակ էր իջեալն յերիքովէ (ղուկ . Ժ . 30 .) օծումն առաւ գեղ (համար . 34 :) Այնպէս եթէ անգարմանելի վիրացն յակոբայ ասես , այն գեղ յիշատակեցաւ (եսայ . ա . 6 :)

92 Առ տէր ծնընդեան : մի օր . այս տէր՝ ծնընդեան [illegible] , են :

93 Յաւէտ [illegible] : Յաւէտ ասէ կամ մշտնջենաւորէ . զի փափաքէր լինել 'ի տանն նոյ՝ պտղալից ձիթենի , որ մշտադալար է (սաղմ . ծա . 10 :) Որով իբրև թողեալ զթլփատութիւն , զշնորհս մկրտութեան գուշակէ , ըստ որում կից է ընդ 'նմա օծումն (տես ըծ . 90 :)

94 Եւ ոչ ձեռնիշն : Եւ ոչ գերագանց վարդապետքն , կամ , և ոչ հրեշտակք բնաւ որ Ճառաշմամբ բերանոյ կարող են բացայայտել զգերբնական ներգործութիւնս օծման՝ գտնէ ըստ մասին , թող թէ կատարելապէս և ըստ խելութեանն : կամ , առ մեր ըմբռնումն ասէ , թէ և ոչ հրեշտակք կարեն կարողութեամբ բանից մեզ իմանալի առնել զանէ անկատարապէս : Այսպէս ես զի՞արդ կարիցեմ Ճառել , կարծելով հասու լինել բովանդակապէս :

95 Զայն խորհուրդ 'ի հանդերձեալ [illegible] : մի օր . զայն խորհուրդ հանդերձեալ [illegible] :

96 Օրհնաբանութեան : մի օրին . օրհնաբանութեան : այսու գովաբանական օրհնաբանութիւն փառս տամ քեզ , Տէր տէրանց , վասն այնր՝ զոր արարեր առ իս . իբր զի 'ի հարց անտի գծագրելով զօրինակս այսր օծման . զՃշմարտութիւնն 'ի մեզ կատարեցեր :

97 Յ[illegible] 'ի յոտս : 'ի մեջ կնոջէ ընկալար 'ի յոտս , ըստ գրելոյն յովհաննու (ժբ . 3 .) ուր իմանի մարիամ քոյրն ղազարու . յօրինեալ ընգունելութեան . զի յաղաչելն զոք՝ յոյս նորա անկանիմք . ուստի ընգունելով զօծումն անուշ՝ նշանակեցեր ընդունել զմաքրութիւն մեր : Եւ 'ի վերայ գլխոյ . և յայլմէ պոռնիկ կնոջէ զօծումն ընկալար 'ի գլուխ , ըստ գրելոյն ղուկայ (է . 38 .) ուր ինքն տէրն վկայէ (համար 46 .) « Իւղով զգլուխ իմ ոչ օծեր . սա իւղով անուշիւ օծ » : և զայս օծումն 'ի գլուխ ընկալար 'ի ցոյց քոյոյ սիրոյդ առ մեզ , որպէս թէ մեծ ցանկալով հասանել յոյս իւղ ընծայեալ : Այդ յայտնի բանս ասէ ը փոխաբերական՝ այլ և այլ լինել ցուցանէ զերկասին օծանող կանայսն , ըստ կարծեաց բազում հարց , թէպէտ այլք մի ասեն : Տեղւոյս ոչ է անդ 'ի խնդիր մտանել , և ոչ հարկ ինչ կամ պիտանութիւն յորդորէ : Մանաւանդ զի բազմապէսին մեկնիչքն՝ եռախտ և կողմէ թ՝ 'ի մասնաւոր

ճառի յաղագս այսր խնդրոյ, յառաջ բերեալ զպատճառս այլ և այլ կարծեաց, կնքեն զբանն՝ թէ անլուծանելի է այս խնդիր և ընդ տարակուսանօք :

98 Մեմ չի ... : Այնչափ հաճելի եղև քեզ օծումն կնոջն 'ի տան սիմոնի բորոտի, մինչ զի [illegible] ասելոյն իւրև երգմամբ, [illegible], զօրութիւն բայ խմանի, այսինքն հաստատեցեր կամ աւանդեցեր հրաման մշտնջենաւոր՝ ընդ ամենայն աշխարհ քարոզել զսակաւ իւղոյն պատիւն (մատթ. իզ. 13.) 'ի զարմացումն լսողաց, և 'ի յոյս ապագայից : կամ առանց այլ բայի յարմարելի է. այնչափ սիրեցեր, մինչ զի ընդ յարակայ օրէնս և պատուէրս աւետարանին քարոզել ընդ աշխարհ զընծայս սակաւ իւղոյն :

99 Նուն [illegible] . այսինքն առաքելոց երջանիկն՝ կամ և րեալն յովհաննէս ասելոյն 'ի ա. թղթ. բ. 20 : Եւ դուք օծութիւն ունիք զսրբոյն, պարզաբանեաց զխորհուրդ շնորհաց օծմանն՝ որ 'ի քումմէ անսպառ լնութենէ զեղեալ 'ի մեզ :

100 Սա 'ի [illegible] : Իբրև առաւել յարմար առ յատուկ նմանութիւն քեզ խմանալի լուսոյդ, և հոգւոյդ սրբոյ, այս իւղ որ է օրհնեալ կաթուած փառաց կամ մեծութեան վերնոյդ, առանց ապաւելոյ հեղանի 'ի մեզ. և կոչի լոյս՝ [illegible], նախադոյակ զոլով լոյսն քան զայլ ակասկս ստեղծուածոյ, զի լոյսն յառաջնում աւուր արարաւ, որ է [illegible], նմանութի և օրինակ արարչին՝ յատակութեանցն, բարձրութեանցն, աղեկութիւքն, թափանցութիւ, և այլն : Նոյն այնպէս և իւղս կոչի լոյս, իբր նախաթիւ 'ի կարգս խորհրդոյ, կից զոլով ընդ մկրտութեան, և 'ի նմա 'ի գործ ածելոյն. և զի առլուսզխաւար մեղաց հալածէս :

101 Այն հաւր : Հուր կոչի իւղն սուրբ. զի որպէս հուրն՝ այնպէս իւղս յամենայն մարմնաւորքս հաւասարապէս կցորդի. և ոչ եթէ մեծայն առաւել, և փոքունցն սակաւ : [illegible], ըստ հաւասար բաշխման էականին ոյ, որ թէ ըստ էութեան, և թէ ըստ ընդհանուր նախախնամութեան յամենեսին գտանի անխտրաբար. կամ, ըստ որում էականն ած բաշխեալ է զհուրն չափով յիւրաքանչիւր մարմինս : Ամենք ըստ հին ըծ. [illegible] խմանալով էակ, իր. բացատրեն թէ հուրն ըստ քանակութեան և ըստ չափոյ իւրաքանչիւր էակի մտանէ : Բայց զայ խմանալ յարմար ես է. վասն զի բառն [illegible] բաղում ուրեք նշանակէ ինքնագոյ կամ ինքնակայ, որ այ միայն պատշաճի : Որպէս (սղաւթ. 207.) ասի. « Ջայր յերկրէ գիտէ, և զերկիր յօրինէ, և զած՝ էական » : Եւ (եզնիկ գլ. բ.) « Որ շարժին և փոփոխի, չէ էական » . և (գլ. դ.) « Մի է պատճառ ամենեցուն՝ և նոյն էական և մշտնջենաւոր » . և այլն : Եւ ըստ այսմ առեմք, էական ած, էական լոյս, էական բարի, և այլն : Ուստի որպէս բառն [illegible]՝ երբեմն իբրև գոյական նշանակէ՝ ածութիւն (տես 'ի բանն 2դ. 3 : և գործոց ժէ. 29.) այնպէս [illegible] նշանակէ ածութի կամ ած : Եւ որպէս հուրն յոմանս յայտնի վառի և յոմանս ծածուկ և լռեալ կայ, մինչև հարկաւ երկաթով կամ քարիւ յայնժամ երևի, այսպէս իւղդս բնութի 'ի զանազան պատուզս և 'ի սերմանիս ամփոփեալ կայ. յոմանս յայտնի թարմամբ երևի, և յոմանց ճնշմամբ մզեալ ելանէ. կամ, երբեմն 'ի նիւթս ինչ ինքնին վառեալ ցոլանայ, և երբեմն ոչ վառի՝ թէ ոչ յայլ հրոյ զրգռեալ զարթիցէ : Ըստ նմին օրինակի և ներգործութի օծման օրհնեալ իւղոյն՝ յոմանս յայտնի երևի լիզուախօսութի կամ այլովք նշանօք, և յայլս ծածուկ կայ, և երևի 'ի յառնել փորձութեց և հալածանաց հաւատոյ : Նրգ որպէս յայտնիկ հուրն նմանի այ, նոյնպէս և առաւել ես իւղն նք :

102 Եւ օծման ։ Կոչի դարձեալ օծումն՝ իբր արքայական նշանակ , որով զծնեալսն որդեգրեալ հօր քում , քեզ ժառանգակիցս առնիցես . և [illegible] , խաչիւ՝ որ անուամբ և ներգործութեամբ նմանակից է քո օծութեանդ (տես լուծ . 24 .) նկարելով 'ի մեզ անեղծաբար զարքայական որդեգրութիւնդ , 'ի հանգերձեալ փառսն պայծառասցուք իբրև ծնօղք ։ [illegible] ։ Կոչի դարձեալ հոգի անուամբ իւղոյ օրհնեալ , իբրև նիւթ և գործի շնորհաց հոգւոյն սրբոյ . որով մաքրեալք 'ի գլխաւորական ախտից մարմնականաց և փոփոխեալք , հոգւով և շնորհութեամբ երկրպագեսցուք , հաւատովք և յուսով պնդեալք 'ի քեզ , և այլն ։

103 Խնկալիր ։ Ըստ նախագրելոցս՝ աչա իսկապէս ցուցաւ , թէ լուսապատար այս իւղ խնկալիր , այսինքն յոյժ արդոյ և պատուական . և [illegible] , քոյ երկնաւոր սիրոյդ [illegible] , ցոյց և նշանակ ։

104 [illegible] ։ Եւ բանն է . կորն . ա . 21 . 22 ։ Իսկ հեռանալն , է [illegible] , է 'ի կողոս . գ . 30 ։ Եւ թէպէտ ամենք 'ի վարդապետաց զայսպիսի բանս իմանան 'ի վերայ օծման շնորհաց , սակայն բազումք ևս իմանան զօծմանն մկրտութեան , ըստ որս և կատարելոց մեկնիչ ։ Այնչափ ծածկեալ քո սիրոյդ , ասէ , նշանակ և տուրք է օծմանս պարգև , մինչ զի և պօղոս առաքեալ 'ի գոհացողական բանս իւր պատչաճ վարկաւ զայս առանձինն յիշատակել՝ իբր գերագոյն 'ի բարերարութիւնս քո ։

105 [illegible] ։ Կոչումն կամ անուն օծման և օծելոյ՝ տալ ասելով պատկանելի և զօրաւոր է 'ի նոր օրէնս , քան 'ի հինն . քանզի անդ առաւելական քահանայի և երկրաւոր թագաւորի էր պատիւ , իսկ աստ՝ որդւոյն այ , և երկնաւոր քահանայութեան , և որդեգրելոց այ ։ Բայց այլ օրինակ զնէ , [illegible] 'ի [illegible] , և իմանի , որպէս 'ի նորումս՝ ասելով ևս 'ի հնումն պատկանելի էր՝ ոչ նկատմամբ մարմնաւոր օծելոց , այլ նկատմամբ երկնաւոր օծելոյն քնի . իբր զի պարզապէս օծեալ ասելով զՄեսիայն իմանային ։ Այսմ մասաց նպաստէ յաջորդ բան սաղմոսին (բ . 2 .) ժողովեցան իշխանք վասն տեառն և վասն օծելոյ նորա ։ Վասն զի այսու շնորհեալ նշանակէ Դաւիթ զխորհուրդ իշխանացն՝ [illegible] , այսինքն որ նախ քան զեկիս կամ զպարշապանս տիրական անօրէնութեանց քոյ . կամ , յայս ասէ զխորհուրդ նախընթաց կրից տէրունեաց և անօրինականաց . այսինքն կամաւոր կրիցդ յանձն առելոց վասն փրկութեան , և այլն ։

106 [illegible] (ա . թագ . իդ . 9 .) Այսու բանիւ մեծ մարգարէութիւն ծանեաւ , թէ անբաւելի են պարտիք յանցանութեան հրէից առ քն . զի եթէ վասն սաւուղայ միայն ասացեալ էր զայն , աչա նա սպանաւ յամաղեկացի պատանւոյն (բ . թագ . ա . 13 .) զոր [illegible] կոչէ , համարելով հրէայ զոլ . և սակայն վասն այնր սպանութեան ոչ պատուհասեցաւ ազգն հրէից , այլ յորժամ արեան որդւոյն այ պարտական գտան ։ Շարագրութիւն տեղւոյս պարզելի է . ծանեաւ Դաւիթ զանպարտելի պարտիս առ քս օծելոյդ՝ հրէական կատարութեան , որ էր յանցաւորութեան ընդդէմ տեառնդ ։

107 [illegible] ։ Այն աղօթամատոյց աղաչանքն՝ զոր մատուցանէր Դաւիթ և սաղմոսն , և զոր մեք առնեմք 'ի սաղմոսին , մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ , է [illegible] , մեծ առհաւատչեայ 'ի յիշատակ ժառանգութեան ապագայից օծելոց քրիստոնէից . կամ 'ի յիշատակ ժառանգութեան ապագայ փառացն յաղորմութեան այ ։ Վասն զի եթէ մարմնաւորն այն օծումն թագաւորական Դաւթի և այլոց՝ շարժէր զնա յաղորմութեան և 'ի պաշտպանութեան , որչափ ևս առաւել հոգևոր օծումն քրիստոնէական ։

108 [illegible]։ Ի բովանդակ արքայական Ճոխութեան գաւթի ոչ գայր մեծ պատիւ յինէ. քան թէ խաղով արբով խմով ածի գնա (սաղմ. ձբ. 21։) [illegible]. յորմէ հասուն եմք տեղեկու_թեամբ զքո ածութիւն խմացեալ, ծանիցուք՝ թէ դու ես թագաւոր թա_գաւորաց, և Ճշմարիտ ածեալ [illegible]. քան զայլ ածեալս, որք էին միայն օրինակ, առ ժամանակ մի ածեալք 'ի թագաւոր կամ 'ի քահա_նայ, իսկ դու 'ի մշտնջենաւորս անփոփոխ ածեալ թագաւոր և քահա_նայ միանգամայն. և այսպիսի երկրպագիս [illegible], 'ի սկզբանէ մինչև ցայժմ, և յապառնի նոյնպէս։ Բայց զայս, այսինքն թէ զքո Ճշմարիտ ածութիւն, և թէ զմեր հաղորդեալ ածութիւն՝ ծանիցուք մա_նաւանդ 'ի հանդերձեալն։ Զի որպէս [illegible], տեղորեալ 'ի [illegible], 'ի Ճարպ կամ 'ի ձէթ, ոչ տայ լոյս՝ մինչև վառիցի հրով, նոյնպէս ածութիւն եղեալ 'ի մեզ՝ պայծառ երևի 'ի մերձենալ հրոյ ա_տուածութեան 'ի հանդերձեալն։

109 [illegible]։ Այս և այսչափ է հանգամանաց կամ մե_ծութեան մեռանին պարզ բացայայտութիւն, 'ի հնոց անտի մինչև 'ի մեզ աւանդեալ պատշաճ օրինակօք և նմանութիւնք, որովք իբրև պայծառ գոյ_նովք նկարագրի մեծութիւն և զօրութիւն նորա։

110 [illegible]։ Այսպիսի գեղագոյն ածային գործոց կամ պարգևաց՝ [illegible] է իւրն սուրբ։ [illegible], այսինքն գործոց կամ պարգևաց՝ որք բնութեան և սեպհական են արարչին։ Կա_պակցութիւն բանիս պահանջէ զէական բայ. և տէր բային ըստ կարգի իմանալի է [illegible]. որով բանն կազմի այսպէս. [illegible] ... է [illegible]. այսինքն այս մարմնական նիւթ օրհնեալ ձիթոյ, և այլն։ Իսկ այլ բանքն միջանկեալք են։

111 [illegible]։ Այսանց ածման մեռանին ոչ լինի գրիլ քննեան. և իմանի այս՝ կամ զի յօծմանէն տեւեալ լինի անուանն քրիստոնեայ, և կամ զի մկրտութեան կից է լինք ածման։ Զայս և կիւրեղ ասէ 'ի խոր_հրդած. «Սրբոյ մեռոնիս արժանացեալք, քրիստոնեայ կոչիք. Ճշմարտութեան անուանս՝ վերստին ծննդեամբն առացեալք. զի մինչև էր պարգևեալ ձեզ այս շնորհ, այնմ անուան ստրապէս չէիք արժա_նի. այլ յայն նկրտէիք՝ զի լինիցիք քրիստոնեայք»։ [illegible]. և ոչ կրօնաւոր կոչիլ, կամ 'ի կրօնաւորութիւն մտանել առանց օծ_ման գրոշմին. զի [illegible] յեկրրայականն նշանակէ զատեալ, որոշեալ. և հրեայք իմանային այսու զհրաժարեալն 'ի մարմնոյ հեշտութեանց. որ_պէս են կրօնաւորքն առ քրիստոնեայս։ [illegible]. և ոչ անուանիլ յեկեղեցական աստիճան կամ իշխանութիւն՝ առանց գրոշմի. կամ առէն [illegible], իմանի՝ 'ի թիւ խոստովա_նողաց, կամ 'ի խորհուրդ խոստովանութեան. զի [illegible]՝ խոստովանող լսի. և չէ օրէն զնև ևս գրոշմեալն մեռոնաւ՝ ընդունել 'ի խոստովանու_թիւն. [illegible]. յարդարիլ կամ գիտել 'ի նահատա_կութիւն վասն Ճշմարիտ հաւատոյ՝ առանց գրոշմի. զի այս է նորա ներ_գործութիւն՝ զօրացուցանել զմկրտեալն 'ի պահպանութիւն հաւատոյ։

112 [illegible]։ Այս մարմնաւոր նիւթ օրհնեալ ձիթոյս՝ յո_րում սուրբ երրորդութիւն միաւորի զօրութեամբն և շնորհօք, և ոչ թէ անձնաւորապէս, է [illegible]. թէ 'ի հոգին՝ ներգործելով 'ի նմա զշնորհ հաստատութեան, և թէ 'ի մարմինն՝ բարեկարգութիւ սաղով անգամոցն։ Սոյնպէս գյաջորդան իմա յերկուս մասս, այսինքն հոգևո_րապէս և մարմնաւորապէս. զի երևելի մասունք զլխոյն՝ զորս յինէ, օծանին 'ի գրոշմին։

113 [illegible]. զարդ կամ վայելչութիւն [illegible]. Ճակատուն. [illegible]. գեղեցկագունութիւն երեսաց։ [illegible], այսինքն բնական գունոյ երեսացն. զի խիղ զուարթ առնէ. բայց աստանօր կասկածիմ վրիպակ մտեալ փոխանակ գրելոյ [illegible], զի գրոշմեալքն անթխածութեամբ ծիծաղելով, բարեձև ցուցանեն զատամունսն։

114 [illegible]։ Կարգաւորիչ կամ պատրաստիչ արտաքին գործոց աստուածպաշտութեան. այսինքն հատուածոց աղօթից, պատուաւորութեան եկեղեցւոյ, և այլն. [illegible], բարեկարգող առանձին վարուց բարեպաշտութեան. [illegible]. Ժողովոյ հաւատացելոց. [illegible]. զօրութիւն կամ արհեստ գիտելոյ ընդդէմ թշնամեաց հաւատոյ։

115 [illegible]։ Կախարդական կամ հեթանոսական ծրարից և նշանաց. [illegible]. մի օրին. [illegible]. այսինքն բարձող [illegible], անտախտապաշտ կապոց (հմայիլ.) [illegible], արգելող կամ կապող այնոցիկ՝ որք ձեռամբ գիտեն (փալձի, կեօզպաղջի.) [illegible], 'ի յայս բերող կախարդական ծածուկ կապից, կամ ծածուկ հերձուածոյ. [illegible], զօրաւոր ախոյեան ընդդէմ գիւաց։

116 [illegible]. այսինքն մկրտելոց, նոր կենք և շնորհս ստացեալ 'ի նոսա. [illegible], նորահաւատից, որք բաղձան երախայական օծմանն, այլ և բաց 'ի մկրտութենէն՝ ցանկան ևս օծման դրոշմին։

117 [illegible]։ Անգիտելի անհաւատից և անկնունք մարդոց. յորոց ծածկեալ լինէր խորհուրդ դրոշմին. և ոչ 'ի նոցանէ միայն, այլ և 'ի հասարակ ժողովրդենէն. որպէս գրի 'ի գիրս յաղագս եկեղեցական քահանայ. գլ. Պ. ընար. Ղ. կամ, անմերձենալի յանհաւատից. զի մեռոնն յեկեղեցական օծմանս միայն 'ի գործ ածի, և ոչ յաշխարհական. [illegible]. 'ի տեսանելն զպարգևս հոգւոյն սրբոյ 'ի վերայ դրոշմելոցն, որպէս 'ի լեզուս խօսել, մարգարէանալ, և այլն։ Այսպիսի հիացմամբ ընդրանեալ սիմոն մոգ. խնդրեաց զայն իշխանութիւն (գործոց. Ը. 18։) Եւ յայսմանէ լինի [illegible]. զի անհաւատք 'ի հրաշալի գործոց օծմանս՝ կամ 'ի բարինախանձ քրիստոնէութեան չարեաց, և կամ 'ի հակառակութիւն գրգռին. [illegible], յայտնիչ զաղանի խորհրդոյն այս կամ մարդկան. զի հոգին սուրբ բազում անգամ տայր դրոշմելոյն զպարգև մարգարէութեան և հոգետեսութեան. որպէս ծանուցանէ առաքեալն (Ա. կորնթ. ԺԴ. 24. 25։)

118 [illegible]։ Պատիւ աղքատաց կամ անարգաց. որպէս և [illegible], զնածու ծառայից. զի ամենեցունց հասարակ է օծումն դրոշմին. ուստի և կանանց զարդ է, և [illegible] անձումն 'ի շնորհս, որպէս և ուրախութիւն [illegible], որք կամ 'ի ծերութեան մկրտեալ դրոշմին, և կամ զառաջին դրոշմն յիշելով խնդան. [illegible]. 'ի քահանայութիւն և յեպիսկոպոսութիւն, որք մեռոնաւն կնքին 'ի Ճակատն և 'ի ձեռս. [illegible], այսինքն մաքուր անձանց հում անօթոց՝ որք 'ի նշանակ սրբութեան օծեալ լինին. [illegible], որք 'ի պսակելն թագաւոր՝ օծանին մեռոնաւ. [illegible], այնոցիկ՝ որք 'ի գերագոյն աթոռ կամ իշխանութիւն ամբառնալ. նորոգապէս օծանին. [illegible], գերազանցութիւն կամ մեծ աստիճան կայսերաց, ունելով զառանձին օծումն կայսերական։

119 [illegible]։ Կնքեալ ամենանշանակէ զպատուականութիւն 'ի ներքս եղեալ իրացն. այնպէս մեծութիւն շնորհաց հոգւոյն՝ [illegible], մեռոնաւ իբր կնքով ծածկեալ 'ի մեզ [illegible]. զօրութիւն քա-

կամ զի մասնն յանուրէն կոչի եւ [illegible], որ երբ կնիք է նշանակիչ ա-
նուանս [illegible]:

120 [illegible] [illegible]: Այս 'ի մեր օրինակս, որպէս և յայլս՝ վեր-
ջակիտիւ զատանի 'ի նախընթաց բանէն. և իմաստն եւ այնպէս պա-
հանջէ. երբ ասել. ածմամբ մասանին երբև կնքով ծանուցեալ նշանակի
պատասխանութիւն շնորհին: Բայց և անունն [illegible], այսինքն բան
յատկութեան, կամ ենթն յատուկ անունս [illegible], նախին եւս կոչմանքն
ըստ գնելոյ արանց իմաստնոյն, որ [illegible] [illegible] [illegible]. երբև թէ՝
զոր և եգիպտացիք 'ի գործ ածեն զմասն անունն, 'ի [illegible] [illegible].
յայտ առնէ զօրախութիւն երին՝ լինել [illegible], նշանակ աջաւոր խոր-
հրդոյ: Իսկ թէ զինչ է այն խորհուրդ, 'ի յաջորդան մեկնարանէ,
առաջարանելով զանունս [illegible] ոչ միայն 'ի յատնականն, այլ և 'ի հայն,
և յերբայականն:

121 [illegible] [illegible]: Այս մակագիր յայլոց եդեալ թուի, և ոչ 'ի
արբոյ վարդապետէն. զի յաջորդ բանն պահանջէ անմիջապար յարել
յանցեալն:

122 [illegible] [illegible]. գաւիթ 'ի խնդրելն լոյս աչաց՝ (սաղ. ժբ. 4.)
զոր թէ զայսր մասանի ածումն խնդրէր:

123 [illegible], [illegible] [illegible]: Յատնական բառս [illegible], երբև պարզ անուն ըստ
ասվորական նշանակութեան և կերպաւորթէ՝ նշանակէ իւղ անոյշ. ածա-
նելիք: Իսկ առաջարանութեան՝ զոր ասա գնէ ասէր վարդապետս, հայի
յայն երբև 'ի բարգեալ յերկուցս՝ [illegible], [illegible]. ուստի և ասէ, [illegible] [illegible]
[illegible] [illegible]. այսինքն ըստ քերականական կազմութեան, հայելով
յարմանն՝ յորմէ եղանէ. որ [illegible] [illegible] [illegible]. այսինքն ըստ ո-
րոշմանն, կամ ըստ նշանակութեան՝ զոր ունի յատնական անունս [illegible].
որ 'ի նոյն արմատոյ եղանէ՝ յորմէ և բառն [illegible]. կամ, [illegible] իմա-
ցեալ փոխանակ յանի, առել կամի. զայս որոշումն բառիս առնուլ
ոչ ըստ հայումս, այլ ըստ յատնականին. կամ գարձեալ, [illegible] փո-
խանակ բանաստեղծի իմանի, երբև թէ ըստ բանաստեղծական որոշ-
ման առեմ, և ոչ ըստ ասվորական նշանակութե բառին: Նոյն ըստ այսմ
քննելով մարթ է առնուլ զ[illegible] բառն՝ 'ի յոյն գերանուանէս [illegible], այս-
ինքն ինձ, և 'ի բայէն [illegible], հանեմ. որոյ ընդունելութե ներկայ՝ [illegible],
այսինքն հանող. յորմէ ածանցին բայքն [illegible], բղխեմ, հանեմ. [illegible], հաս-
տատեմ. [illegible], ձգեմ, պահպանեմ, բուռն հարկանեմ: Ըստ որում ասելն
[illegible] նշանակէ՝ ինձ բղխող, կամ հանող. զոր ասէր վարդապետս
ըստ ծնողութե իմանալով գնէ [illegible] [illegible]: Այսմ մեկնութե նպաստեն
յաջորդ բանքն. զի մեկնէ, յինքն [illegible] զմեր ընութիւնս [illegible]. և
կայուն [illegible] զլուծութի ջուրց. և այլն. ուր 'ի կեր արկանէ զնշա-
նակութի բայիցն ածանցելոց 'ի [illegible] բայէն: Ի առաջարանութե ասաի
խորհրդածէ զյատուկ գործ մասանին. երբ զի առոյ ակըութի և արիու-
թիւն 'ի պահել զգրիստոնէութեն՝ ընկալեալ մկրտութեամբն. ուստի
զմեր գիւրասաց ընութիւն, ասէ, յինքն ձգեալ պնդէ, և 'ի ջուր աւա-
զանին հեղեալ, հաստատուն առնէ զընութիւն ջրոյն ըստ լուսաւոր
ծննդեանն. և [illegible] [illegible] [illegible]. երբև զմակարդ արկեալ 'ի կաթն՝
որով թանձրանայ և մածնու. այսպէս մասանն խառնեալ 'ի մեզ, յեւր
հաստատութեն փոխարկէ զցիւրացնդելի [illegible], անհաստատու-
թիւնն 'ի բարին, կամ զատարանալն 'ի բարւոք կենաց, այլ և [illegible]՝
զջուրց ընական մշտահոսութիւնն:

124 [illegible] [illegible], այսինքն խաւարագըլեայ, կամ մթագին եւ ցու-
ցանի [illegible] [illegible]՝ ըստ այլում բառի, որ թուի լինել յատնականս [illegible],
այսինքն սեաւ, մթին, որպէս և ենքն գնէ. որ և այս [illegible] [illegible].

[illegible] , փոխարկեալ կամ այլաբանական անուանս չէ [illegible] , անհըման , անյարմար · զի ըստ իւրին կամ գործոյն՝ անուանն յարմարի նմա · որոյ խորութիւն կամ գաղտնութիւն առաւել է քան զանհնոյն [illegible] հին օրինաց , այլ և օրինակաւ ինչ քան զնոր օրինացս , այսինքն քան զմկրտութիւն և զհաղորդութիւն , ոչ ըստ գերազանցութեան խորհրդոյն կամ գործոյն , այլ ըստ եղանակի ներգործելոյն ուժի գաղտնութեան ինչ քան զնոսա ։ [illegible] , ոչ իբրև զջուրն լուացմամբ մարմնոյ աղտեղն՝ յայտ առնէ զլուացումն հոգւոյն · [illegible] , ըստ ընութեան հացին՝ ճաշակմամբն յայտ առնէ զհաստատութիւն սրտին կամ հոգւոյն · այլ նոր յարմարութեամբ ՚ի [illegible] , ՚ի զգայարանան խորհրդաբար [illegible] , ՚ի ձև խաչի մատուցանի · և այս եղանակ մերձեցուցման ՚ի զգայարանան՝ գաղտնապէս ցուցանէ զներգործութիւն նորա , այսինքն զհաստատութիւն հոգւոյն և զարիութիւն ՚ի հաւատս · թէպէտ ընական հանգամանօք իւրոյն երևեցուցանի այն , որպէս ասաց վերագոյն · ըծ · 70 · 71 · զի [illegible] , հոգևոր կամ ծածկեալ ներգործութեամբն գաղտնի է , վասն այսորիկ և զանուանն ունի անգնին կամ մթին ։

125 [illegible] ։ Նախապէս ՚ի լոյս անմատոյց առ ած , վասն ծայրագոյն պայծառութեան · առակայն վասն անհասանելի գոլոյն ՚ի մերոց մտաց՝ ՚ի խաւար ծածկեալ առի (սաղմ · ժէ · 12 ·) « Եդ զխաւար ՚ի ծածկոյթ իւր » ։ Սոյնպէս և այս օծումն թէպէտ և լուսաւոր՝ առակայն ՚ի լեզուագիտաց անուանի ՚ի [illegible] , յարմարական բանաստեղծութեանց կամ խօսից , [illegible] , մակագրական անուամբ՝ [illegible] , մութն կոչի , ըստ վերագրեալ յաճախական բանին ( ըծ · 124 ։) այլ օրէն · [illegible] , կամ [illegible] ։

126 [illegible] ։ Ձեռկուսն յածայլին անուանց յինքեան ունի լինել · և այսու ածականաց կոչմամբ կրկին մեծանայ իւրս այս նուիրեալ · որ միշտ պատուի բուրմամբ խնկոց · զի ըստ անուանն այ կոչի [illegible]՝ վասամարն , և [illegible]՝ լուսաւորելոյն · և այսմ ՚ի դէպ յարմարի բանն եսայեայ · Ծ · 17 ։

127 [illegible] ։ ոչ միաւանամ զիմ զաւանդելոց զարչութիւն , որ ՚ի քո գիթութեանդ քաղցրացաւ · վասն այն այլ ազգ եւս ձևացուցից զբանս , յարմար ՚ի յայտնել զնոյն Ճշմարտութիւն ։

128 [illegible] · կամ [illegible] , յերրայականն զաւանութեան նշանակէ , և ՚ի հայումս՝ զմեակելութեան · և երկոքին հաւալ են յաճախական անուանս՝ [illegible] , որ և է յարմար նշանակ մեռուցանող կրից · զի զգաստութեան մեղադն բանից , և սաստանէ զհին մարդն մեղաց ։ Վասն զի հոգևոր օծմամբս հաստատիմք ՚ի մահահանդոյն և ՚ի [illegible] , ՚ի զղջալ և ՚ի զարշ հեշտութեանց սատանայի · որովք իբրև [illegible] , խանձուացուցիչ թունաւորք , [illegible] , զանձինս մեր , [illegible] , զմերամածեալ արկանելին [illegible] , մաշկամձ յօրինեալ , և սաստիկ հեշող կաղամաաձոյ [illegible] , թմրկի ականջացս , [illegible] · թուլացուցանելով ՚ի կարգաւոր ձայնարձակութե ։ Նաև կամ որպէս լայք քնարին , և մորթ թմբկի խոնաւութբ օդոյ , կամ ցանմամբ ջրոյ թուլացեալք խանգարին ՚ի հնչումն ձայնի , այսպէս սատանայ զաղէր հեշտութիւքն թուլացուցեալ զանձինս մեր և զայլ զգայարանս , ՚ի կորուստ մահու քարշէ զբնութիւն մեր ։ Իսկ սուրբ մեռոնաւն օծեալք ՚ի մկրտութե և ՚ի դրոշմին , վերստին կազմիմք և պնդիմք զօրութբ չարչարանաց փրկչին , և ՚ի մահ նորա մկրտեալք՝ կենաց նորա հաղորդիմք , զխոմլին յած զօրացեալք առանց այլ եւ հեռանալոյ ։

129 [illegible] ։ Ձկազմեալ խաչն յանուն քո օրհնե-

լով և ծածանելով. [illegible] , բուն խաչափայտից՝ յորում բևեռեցաւ. [illegible] , ըստ զօրութեան պատուելեաց. կամ ըստ յարգութեան. զի որպէս խաչափայտն քնի՝ նոյնպէս ծածկեալ խաչք երկրպագութի առնուն, և պատուելիս գործեն: Օրհնութի և ծածման խաչի՝ է հին աւանդութիւն, ոչ միայն առ հայս, այլ և առ յոյնս, զորմէ գրեալ շնորհալին 'ի Թղթին առ ալեքս, և յառաջին Թղթին առ կիամանուէլ կայսր:

130 [illegible] : Նման արեան փրկչին՝ զօրութի պատուելեաց ընծեալ ծածկեալ խաչին, որ զարհուրանօք զեղուց երևեցուցանէ:

131 [illegible] : Այսու գծիծնեին իմանան մարգարէք (եսայ. խա. 19: անգեայ. բ. 20.) իսկ առա փոխանակ մեանի իմացան անմնք: Բայց լաւ ևս ըստ կարգի բանին իմանի խաչն, որ մեանուան ծածկեալ, փայտ իւղոյ անուանի առէ. այսինքն իւղեալ փայտ օրհնութե. զոր մեանն [illegible] գիտմեցեալն 'ի համաբակ անկոց անտառաց՝ [illegible], որբեալ և մաքրեալ 'ի [illegible] 'ի մաշրութե զիւակա աղգեցմանց, և 'ի պաշտօն սանդղոց վերաբերեալ, [illegible], առ փայտդ կենաց [illegible] հաստատեսցէ. հաստատէ: Այսու ոչ կամի ասել, թէ ոչ ծածկեալ խաչի երկրպագելն՝ կատարելութիւն է, այլ թէ աւարտութի օրհնութե և ծածման եղեալ է 'ի զգուշութի ասպարիզացն. զի մի կարծիցեն՝ թէ փայտին երկրպագեմք, այլ այնմ խաչի՝ յորում բևեռեցաւ տէրն, յորոյ անուն օրհնեմք զայն և ծածանեմք:

132 [illegible] . Որպէս խաչն, ասէ, յանուն քո ծածկեալ սեառնագրի, այսպէս և որ 'ի մեզ են պատուհանաց զգայութեց [illegible], մինչ բաց գրունքն կամ անցքն, ընդ որս անցանեն աւարիկայք և մտածութիւնք նոցա, յանուն քո, և [illegible] 'ի ձեռն մեանին սեառնագրին 'ի զգուշաւոր համեստութի, առ 'ի լինել համձեյի օթեան հոգւոյդ, և [illegible] (մի օրին. [illegible]) անմերգործելի 'ի պատրանաց խաւարաշունչ նենգողին սատանայի:

133 [illegible] ի մի օրինակ վերջակիտիւ զատանի այս 'ի նախընթաց բանէն, և ասել կամի: Այսու լուսով մեանին զայեալ զգայութեամբս ընդ երեկս, հաւաքիմք 'ի պաշտօն երեկոյին [illegible], ընդ աստեղացն՝ որք են օրինակ փայլման շնորհին 'ի մեզ 'ի ձեռն մեանին:

134 [illegible] : Առ սմին՝ նաև յիշատակ հանգերձեալ բարեացն փրկութե՝ [illegible], լուսով մեանին անկի 'ի սիրտս մեր. և բղխիւք զգծման և սիրոյ ծաղկեալ, պատարէրէ զանազան ներգործութիւնս նծպաշտութե 'ի պատրաստութիւն ընծրեաց յետին գիշերի գալստեանն:

135 [illegible] : Այսպէս ասացելով սկսանի 'ի մեր լաւ օրինակն, վերջակիտիւ զատեալ յառաջնոցն. և ասել կամի: Ահա զլյս ծրագին՝ զոր 'ի գիշերապաշտամանն լուցանեմք, համարիմք յօրինակ լուսաւորութեան մեանի:

136 [illegible] մի որ. և 'ի հին լծ. [illegible] : Որմանք ըստ հին լուծմանց քննեան յարմարել զայս բան՝ յոյն ալփաբետացն. սակայն փայլաապար և սարս խօսին. զի ասացեալս ոչ կարգի յունական գրոյն յարմարի, և ոչ Թուական նշանակութեան նոցա: Այլ իմանի միայն 'ի վերայ հայկական գրոցն, որպէս և ինքնին աւրբ վարդապետն բացայայտէ զինի: Արդ ասէ, ըստ հաշուի կամ ըստ գումարման նշանագրացն՝ [illegible], այսու կամ զԹիւ ալփաբետացն յայս առնէ, որ ըստ յունաց և ըստ այլ բազում ազգաց՝ 24 Թուի,

թէպէտ և մէջ 36 է բառ նախնեաց․ և կամ առաւել զ20, և զ4 թուոյ բաղադրութիւն առէ․ զորս բազմապատկութիւն ընդ միմեանս չորրորդելով եղանէ թիւն 80․ զի չորից քառն՝ առնէ 80․ ուստի և յաւելու․ [illegible] ․ այսինքն յորրորդէնէն 'ի վերուստ թուելով զգիրն նշանակող 80 թուոյ, որ է [illegible]․ և հասանելով մինչև 'ի [illegible], մինչև 'ի 22 գիրն կարգի այբուբենին, որ է [illegible]․ այսու օրինակաւ, առէ, զխորհուրդ մեծանին բացայայտելով, ախորժելի ձայնիկ պատարատամբ ընթերցողաց․ Վասնզի 'ի 80 նշանակող գրոյն՝ որ է [illegible], փոխեալ 'ի 400, որ է [illegible], անվրէպ ընդ [illegible], փոխանակ [illegible] բառին եղանէ [illegible]․ Ուր ուսանի, զի առըր վարդապետս զ[illegible] ընթեռնու [illegible], իբրև 'ի նոյն արմատոյ եկեալ, և նշանակութիւն մերձաւոր․ որով միոյ ձայնի փոփոխմամբ [illegible] լինի [illegible]․ Յայտէ և խորհրդածէ, թէ նուէրն զոլով առաջին յիրս, և իբրև պարունակիչ նուէրեաց, է օրինակ և նշանակիչ [illegible], իւրի կամ ներգործութեան խորհրդոյն, որ ինքն սակաւ զոլով զբովանդակ զանդուած ալերն յինքն փոխարկեալ ամենայնիւ․ Այսպէս և մեռանն խառնեալ 'ի բնութիւն մեր, հոգւոյն սրբով զմեզ հաղորդութեանն․

137 Աշ [illegible]․ Իւղն կամ պարզ և կամ խառնեալ յայլ ստեղծ՝ կակղութիւն մատնէ 'ի բերան․ որով է օրինակ խոնարհութեան և հեզութեան․ միանգամայն [illegible], համեմատ և յարմար օրինակ [illegible], թէ ածայն բանին, որ հեզութիւն և քաղցրութիւն սա մեզ քարոզի, և թէ մարդկային խորհրդ․ որք անզխմնդարձ մատնեն 'ի լուսն․ [illegible], այլ ամենայն լոյծ և հեղուկ նիւթոց գեր 'ի վերոյ կացեալ, 'ի վերոյ կամ յերեսս նոյա շըջի․ որով է օրինակ բարձրութեան, և անխառն լինելոյ 'ի մարմնական անցաւոր հեշտալիս․

138 [illegible]․ Ի ախեն արկեալ իւղ, ոչ թուլացուցանէ զայն և եղծանէ, որպէս աւանն գինին և ջուրն․ այլ 'ի պատշաճ կակղութեան պահէ զախեն․ այսպէս և մեռանն զծեալս իւր․

139 [illegible]․ Անհամեմատ կամ անզուգական առատութիւն, կամ գերազանցութիւն․

140 [illegible]․ Զօրութիւ արեան քո զրեմք 'ի ձախաս մարմնոյս կամ հոգւոյս զայս օծումն․ զի ներգործութիւն ամենայն արբազան իբրոյ՝ 'ի զօրութենէ չարչարանաց սեաւն յաջողին․

141 [illegible]․ չատաւխղմամբ․ Հաւատամ, թէ նորոգ յայտնեցի բազմածածանչ չատաւխղմամբ այս [illegible]՝ մեռանս, ընծայելով զլոյս 'ի համդերձեալ փառսն՝ թէ հոգւոյն, և թէ մարմնոյն․ Յորում ժամանակի [illegible]․ իւղս հոգեոր բանն ներգործութեանն՝ համերձ նշանաւ խաչիզ 'ի զէմս իմ փայլեսցէ․

142 Ու [illegible]․ Զօրութեն մեռանիս իբրև անըմբռնելի ինչ՝ թաւցեալ մասւոր թեւր, 'ի վեր քան զհասումն մեր մտաց՝ անհասն ձանապարհաւ և անհետ փոխառմամբ հեռացեալ ծածկեցաւ յինէն․ որում 'ի հին օրինաց կամ յայլ բնական իրաց ոչ զտաւ հաւասար օրինակ, կամ մանանկից, կամ ձեւակերպութիւն, և ոչ այլ ընկեր՝ ընդ որում կշռեալ չափեսցի, բայց միայն ածեան խաչդ և արիւնդ․ ընդ որս [illegible], հոգեոր զօրութեամբն գերազանցեալ երեւեցաւ․

143 [illegible]․ Յորժնեզդ քո զմեզ մեռանաւս, եղիցի և անունդ քո աշխարհ՝ զովեալս անձնաս փառաց, [illegible], արդարոց կամ հրեշտակաց բղխիչքն օրհնեալ․

144 [illegible]․ 2 որին․ [illegible]․

145 [illegible]․ 2 որին․ [illegible]․

146 [illegible]․ Ըստ բառին նշանակէ զերկայն թեւան՝ արք կեցաւ ան-

ցուցանեն ընդ սակս կատուցն · Նմանութիւն գնի փոխանակ զգայութեանց կամ կարողութեանց հոգւոյն, և կամ փոխանակ բոլոր մարմնոյն, որ երբ կատու գործեալ է յնյ · Նոյնպէս ածեալ թեզանս, սաղ, մի մոյլ · և մի ափրեսցէ [illegible], ազնուութի կամ սեւութի աղտեց մեղաց ·

147 [illegible] · Երբև հզօրն զարդարեալ, կամ հզօրին պատճառեալ փառք, [illegible], գեղեցիկն յօրինեալ հոգևոր գեղեցկութիւն ·

148 Սուր երկսայրեայ · Այս ածապարգև հուրս եղիցի մերձեցելոցն յընթացութիւն կամ 'ի մաքրութիւն քրիստոնէութեան մասանց կրկին եասցմանք սրբեալ, բարեփափագ հոգևոր ջերմութեն, [illegible] · որով 'ի կակղութենէն փոխեալ 'ի կարծրութեան, լինի այլ յօրինուած կամ գործած · Նաև կամի, որպէս 'ի հուր հրացայտ կամ 'ի յեռացեալ հէթ մխեալ երկաթն' առաւել կարծր լինի · այսպէս զօրութիւն մեանիս եղիցի ածելոյն սրա' մասանց կրկին կամ առատիկ և սայման · որով սինգեալ հոգևորապէս, 'ի կարծր և յանասան վէմ հաստատուն մնայից ·

149 [illegible] · Վերին յաղթութեան պարգևս, կամ վերնայաղթ պարգևս' այս լիցի նշանակ սրա զինելոյն, զի մի տրզեսցին [illegible] մարմնական հեշտութեանց · մի այրեսցին [illegible], բարեկաթեան, Նախանձու, և այլն · մի ցրտասցին 'ի [illegible] սիրոյ · մի չըքանիցին [illegible] փրկութեանց · մի աղաւաղեսցին [illegible], 'ի գեղեցկոյն կամ յերբայական պղծութենէ · Մի [illegible], զանձինան որք քնի պաշտեալք են (բաց յոգայ · Թղթոյն · 1 ·) կամ զհոգի և զմարմին և զնոցա զօրութիւն' որք ոչ պաշտեալք են, մանաւ առանձնայի · Եւ մի 'ի [illegible], 'ի փոխան եղիցն յաշխարհէ, կամ 'ի մահուանն զմթերեալ զանձս գործոյն սարքնութեն յնմարարար կորուսանել · Եւ մի [illegible], զընկալեալն 'ի մեզ ածութիւն' անմարդութիւն 'ի բաց մերկանալ բառ գործոյն և բառ պատուոյն, թէպէտ և բառ կնքոյ գրոմին մշա մնայ ·

150 [illegible] · մի որին · [illegible] · [illegible] որ միայն և մի Տէրմարդու ածեալ ես, սայլին [illegible], ուրախակից կարգացմանք լեզուաց · Հնչմանք [illegible] Նուագարանաց · [illegible], յայլ որին · [illegible] զովեստից, այսինքն յաղթողական գոհութեանց · [illegible], երանական բարբառք շրթանց · [illegible], որպիսան երգեցմանք սաղմոսաց ·

151 [illegible] · Այսպէս կայ 'ի մերում լաւ օրինակի որ առաւել յարմար թուի (որպէս և այլուր առացաք 'ի բանն ՀԵ · ըԹ · 99 ·) Բանդի Տարքս որ վասն ժամանակին և վասն մեանին, ասին սա մեկնութ կապակցութեն երրե ընդդէմ թանգարանեկեցոյ ասացեալք · ուսանի այս յետին բան երրե առարագրութեան ինչ հայի սա երկրորդ ես · վասն այն սաէ · Այն առաջին բանն' որ վասն ժամանակին, է իմ հետնարկ կամ խառնամանութեն 'ի [illegible], 'ի ժամանակին, որ և լոկ պարբաքան գործի եկեղեցական · և այն' երկրորդ բանս որ վասն մեանին, է իմ [illegible], հաստատուն գրութեն զաւանական' 'ի [illegible], 'ի մեանին' որ կրկին սուրբ է քան զժամանակին, երբ նուիթ խորհրդոց · և սրբացուցիչ եկեղեցեաց, և ամենայն սրբոյան անօթոց ·

# ԲԱՆ ԻՆՆՍՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Աստուած յաւիտենական, բարերար և ամենակալ, ստեղծիչ լուսոյ և յօրինիչ գիշերոյ, կեանք 'ի մահու և լոյս 'ի խաւարի, յոյս ակնունողաց և երկայնմտութիւն տարակուսելոց, որ ամենարուեստ իմաստութ̃բ քո [1] դարձուցանես յայգ զստուերս մահու, աննուազ ծագումն և անմուտ արեգակն. քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ. որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. որ լսես զհեծութիւն կապելոց և հայիս յաղօթս խոնարհաց և ընդունիս զխնդրուածս նոցա, ա̃ծ իմ և թագաւոր իմ, կեանք իմ և ապաւէն իմ, յոյս իմ և վստահութիւն իմ, Յ̃ս Ք̃ս ա̃ծդ ամենայնի, սուրբդ համբուրեալ 'ի հոգիս սրբոց, մխիթարութիւն վշտաց և քաւարան մեղուցելոց, որ գիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա. տարածեա զպահպանողական զօրութիւն աջոյ քո և փրկեա զիս յերկիւղէ գիշերի և 'ի դիւէ չարէ։ Որպէս զի զյիշատակ սոսկալի և սուրբ քո անուանդ միշտ համբուրեալ [2] շրթամբք հոգւոյ ըղձութեան ճնչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ։

Բ. Դու [3] 'ի դրօշմ խաչի քոյոյ նշանիդ, զոր ա̃ծային արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և 'ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր, և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր, այսու պարգևօք ա̃ծականօք ամաչեսցէ սատանայ, քակտեսցին մեքենայքն, բարձցին որոգայթքն, պարտեսցին մարտուցեալքն, պակասեսցին զէնքն սայրասուրք, մերժեսցի մէգն, փարատեսցի խաւարն, մեկնեսցի մառախուղն։ Բազուկ քո հօ֊

վանացի, և աջ քո կնքեսցէ․ վասն զի գթած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է ՚ի վերայ ծառայից քոց։ Եւ քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

---

1 Դարձուցանես յայգ։ Քո հնարաւոր խնամութիւ յառաւօտ գործածեցանես զստուերն, որ է խոր հեղձք և նմանութիւն մահու․ կամ, զկըտանգս մահու փոխարկես ՚ի բարեյաջողութիւն։ [illegible] ․ արեգակն ես ինքնալոյս, ամենապայծառ, բոլորից լուսատրող․ բայց ոչ իբրև զարեգակնս զգալի՝ մտանես, ծածկիս, յանցս առա ՚ի միջէ կողմանէ երկրիս, կամ ՚ի մարդկանէ․ երկինք և երկիր համեդերձ բնակելովքն ՚ի նոսա՝ քեզ ներկայ են․ ոչ մի ինչ յայնցանէ կարէ մտանել առ քեզ, այսինքն ծածկել, անտես լինել։

2 [illegible]։ Զ վիճառակ տուրք անուանց մեզ համբուրելով բերանով հոգւոյս, և փափաքանօք սրտիս․ որ է առել, զանուն քո մեզ ՚ի բերանի ունելով ջերմեռանդն հոգւով, և այլն։

3 [illegible]։ Ի տեսանողութէ խաչիդ՝ որ է նշան քո, զոր ծայրին արեւմտից ներկեալ [illegible], այսինքն ՚ի փայտէ մահու՝ փայտ կենաց արարեր․ և նովաւ ՚ի շնորհ որդեգրութեան վերածեր զմեզ մերժութիւն, և ըստ պատկերի քո յօրինեցեր զմեզ․ [illegible], զայս ՚ի յաջորդն յարէ լաւ օրինակն․ այսինքն, այս պարգևք խաչիդ քո և արեանդ և շնորհաց մկրտութեան՝ [illegible], և այլն։ [illegible]․ բազուկ քո զոր ՚ի խաչին տարածեցեր, հովանի պաշտպանութեան եղիցի․ և [illegible], զոր ընկալեցեր ՚ի Թեւս խաչին, [illegible], իբր կնքով պահպանեսցէ զիս ՚ի յարձակմանց Թշնամեաց․ իբր իւր սեպհական հաստատեսցէ զիս։

## ԲԱՆ ԻՆՆՍՈՒՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի․*

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա․ Երգական արդար, [1] Զաւագայթ օրհնեալ, լուսոյ կերպարան, փափագ անձկութեան, բարձրեալ անքննին, զօրեղ անպատում, բարւոյ բերկրութիւն, լուսոյ տեսութիւն, գովեալ երկնաւոր, Թագաւոր փառաց, Քրիստոս արարիչ, խոստովանեալ կեանք։ Եւ արդ զԹերութիւն վրիպանաց բազմախոհ ձայնի եղկելոյս ամենազօրդ բանիւ լցեալ մատուցես յաղերս հաճութեան

հօր քում բարձրելոյ ։ Զի վասն իմ [2] ՝ի փոյթ եկիր ա-
նիծից, կերպարանեալ զիմ նմանութիւն, ամենեւին կե-
նաց օրհնութիւն, վերնոց եւ ներքնոց բարեխնամող տե-
սուչ համայնից ։ Զի թէ յանձն առեր մեռանիլ վասն
իմ, մեծ եւ ահեղ բոլորեցուն, որչափ հաճեցիր առա-
ւել եւ այժմ վտանգաւորս կլից կարեկցել, ընդ իմ պար-
տաւորիս միշտ աղօթելով [3] ազգակցաւ մարմնոյդ առե-
լոյ ՝ի մէնջ՝ առ համապատիւդ քո հայր ։

Բ. Եւ վասն արեանդ պատուականի [4] միշտ մատու-
ցելոյ ՝ի հաճութիւն կամաց առաքչիդ՝ բարձցին վտանգք
մեղուցեալ դատապարտելոյս. թողցին պարտիքն, ապա-
քինեսցի ամօթն, մոռասցին պատկառանքն, [5] բարեգոր-
ծեսցին դատակնիքն, սատակեսցին որդունքն, վերասցի
լալն, հանդարտեսցէ կրճումն ատամանցն, սպառեսցին
ողբքն, հատցին արտասուքն, մերժեսցի սուգն, հալա-
ծեսցի խաւարն, վանեսցի հուրն սաստկութեան, հեր-
քեսցին տանջանարանքն բազմօրինակք ։

Գ. Եկեսցեն գթութիւնք կամողիդ եւ պարգեւողիդ
կենաց ամենից, ծագեսցի լոյսդ, արագեսցէ փրկութիդ,
հասցէ օգնութիւնդ, ժամանեսցէ այցելութիւնդ, կան-
խեսցէ ցօղդ ողորմութեան, յառաջեսցէ արբուցէ զան-
դաստանս պապքեալ՝ անկեալ ոսկերացս թշուառութե՛
՝ի վիհն մահու. ծաղկեցուսցէ պտղաբերեսցէ [6] բաժակդ
երկնաւոր արեան կենարարիդ զերկիրս խնամեալ ա-
ւուրն լուսոյ, որ անծախապէս [7] միշտ պատարագի յի-
շատակ կենաց փրկութեան հոգւոց ննջեցելոց ։ [8] Զի
ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝ շնոր-
հօք քո, գթած, ՝ի քեզ զօրացեալ քեւ նորոգեցայց,
զատեալ ՝ի մեղաց անմահ կենդանութեամբ ՝ի յարու-
թեանն արդարոց, հօր քում օրհնեցեալ ։ Ընդ որում
քեզ փառք, եւ հոգւոյդ սրբոյ բարեբանութիւն վայել-
չական գոհութեամբ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն ։

---

1 Ճառագայթ օրհնեալ ։ Դու որդի ես, որ ըստ լուսաւորելոյ զաշ-
խարհ ճշմարիտ ես, երբ ծագեալ ՝ի հօրէ՝ համագոյակից ես, ոչ որպէս
պատահումն ինչ անցաւոր, այլ գոյակ անձնաւոր, որով եւ օրհնեալ
ես միշտ ընդ հօր ։ Լուսոյ ճառագայթ ։ քանզի խոկութիւն լուսոյ, կամ կեր-
պարանիչ եւ գոյացուցիչ լուսոյ ։ Ճառագայթ ..., փարատիչ յայժ

կարստանօք սրտի․ [illegible] , բարի կամ առաքինի մարդոյ զուարճութիւն․ կամ, բարի և անարժանի իրաց պատճառ բերկրեցուցանելոյ, կամ զուարճացուցանելոյ զմեզ․ [illegible] , յուսոյ նպաստակ կամ հաստատութիւն ։

2 Ի [illegible], ի պատճառս իմ զփորձ անխծից կրեցեր մաշուածք խաչի, առնլով զիմ նմանութի։ Վասն որոյ եթէ այսու օրինակաւ մեռանել յանձն առեր վասն իմ, նա առաւել հաճեսցիս զթերութի աղօթական բանիցս ընուլ․ և ընդ իմ աղօթելով կարեկից լինել [illegible], ցաւոց զղջմանս, կամ վտանգաւոր ախտից։

3 [illegible] ։ Փոխադրութի հոլովից է և ասա, եղեալ ըղձական իբր յաւակացուցիչ․ և պարզելի է․ ազգակից կամ բնութենակից մարմնով՝ զոր ՚ի մէնջ առեր, որ է առել․ ըստ մարդկութեանդ աղօթելով առ հայր․ որում ըստ ածութեանդ համապատիւ ես ։

4 [illegible] ։ Որ միշտ ընծայի յընդունելութեան ոյ, կամ ՚ի խորհուրդ պատարագին ։

5 [illegible] ։ Ի բարձրն փոխեցին վճիռք պարտաւորութեա։ [illegible] ։ Տէրն յաւետարանի անմահ տայ զորդն գեհենոյն․ խակ աստանօր առակել առի ըստ զերծանելոյն ՚ի խածուածոյ նոցա, իբր առել․ մի եղէց կերակուր որդանցն ։ Ըստ այսմ իմանալի է և վասն յաշորդացն, այսինքն մի պարտաւորեցայց ՚ի լոյն, ՚ի կրճուրն, յողբսն ։

6 [illegible] ։ Բնական արեանդ՝ թէ այն, որում ՚ի կենդանութեան հաղորդեցայ, և թէ այն՝ որ ՚ի մահուանս մատուցանի սուրբ պատարագաւն, պողոպեր արասցէ [illegible] մարմնոյս, զարմանեալ [illegible], վասն աւուրն յարութեան ։

7 [illegible], արեանդ․ բայց մի օրէն․ [illegible], զու ։

8 [illegible] ։ Որպէս զի հոգիս որ զլխովին մեռեալն է [illegible], գործովք մեղանչական ախտաւոր մարմնոյս, շնորհօք քո զօրացեալ նորոգեսցի, անմահ կենդանութի որբեալ ՚ի մեղաց ՚ի յարութի արդարոց, [illegible], այսինքն ՚ի հօրէ քումմէ ընդ այլոց ընտրելոց ընդունելով զօրհնութիւն ։

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ [1] ՄԱՏԵՆԻՍ ԴՐՈՒԹԵԱՆ

Ըստ հոլովման ընթացից ամենակալ յաւաջ շարժութեան, որ ըստ [2] լուսատուին նշուլագեղն արփիաճաճանչ լուսակիրն օրակչիան մշտափարատն ակնապարար ական արեւու՝ ստեղծականն արուսեկի, [3] որ համբարէ հոլովէ կուտէ ամաց յոլովութիւն ՚ի չափս դարուց ճնչապատ և կենդանաձևոյց տաւղեկան յաւիտենից, [4] ՚ի յաւարտումն կատարման [illegible] յոբելինին, ՚ի սկիզբն պատկելոյ մոի տասնեկին յոբելեական տաճմիս տումարի, յետ երից ամաց անցելոց՝ որ զկնի գալստեան ՚ի կայս և ՚ի կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արեւելից՝ յաղթող և մեծ կայսերն Յունաց Ռոմայի, յորժամ ընդարձակ և մակագաւիթ կանոնաւ սփիռ

տարածեր՝ լնաստհման և անխառնից 'ի ստուարակարկառ կոհթոցս կարծր արձանաց՝ 'ի ձգումն ձեռին և յանխղելի լեռս պարանաց երկարաձգունից՝ անթարթափ 'ի նոյն վերաստացեալ 'ի յաջ և յահեակ՝ սեպհականել յաւելուլ բաժինս մասանց վիճակաց խոփից աշխարհաց 'ի ծոց իւր, որք 'ի յայնմ՝ անդորրութեան միջոցի, յորում եղերեալ ընդառնեցաւ. [5] Թշնամիք եկեղեցւոյ, ստացեալ հինեցի, կատուցի, կարգեցի, կաւեցի, արձանացուցի, [6] դիղի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատեալ 'ի հրաշակերտութիւն միապաց իւր զուգանսստեղծեան զրուագս զրութեան այսմ սափերի արգասուորի, եւ Պորփիւր [7] կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսացն և կրտսեր վարժապետաց, գործակցութեամբ եղբօր իւրոյ ընտրելոյ Յովհաննէս կոչեցելոյ՝ Նորեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի վանականի. որք իւրև զմի մարմին բանական [8] 'ի յերկուց սա մի կերպարան շինելոց զինուց կենդաղավարելով, ոչ միայն հաբաղանաք, այլ և միաշունչք միակրօնք համապատիւք զուգահամանք, 'ի քառից սչաց սա մի և նոյն շաւիղ խորհրդոց անանալք։

Արդ հայցեմք 'ի ճաշակողացդ յայսմ՝ սեղանոյ յորնորէն և ախորժահամ համադերձելոյ[9] յիշատակել զմեզ 'ի մաղթանս ուղիղս և 'ի պատկանաւոր խնդրուածս, սեան սիրով 'ի միոս բարիս. որով և դուք եղիջիք գրեալ 'ի մատեանս կենաց վերին դպրութեանն։

---

1 Մ[illegible] [illegible]։ Այսինքն կարգեալ յօրինուածոյ, կամ կողմնութե մասնունս. յայս միոս զնե և զնին. [illegible] [illegible]. Նոյնպէս 'ի Ճակատ մասնունն, [illegible] [illegible], և այլն։

2 Լ[illegible]։ Մեծաւ լցեալ ստատ լուսով հակառակ լուսնին՝ որ լնանոյ և պակասի. [illegible], փեղեցիկ նշուլիւք կամ Ճառագայթիւք. [illegible], լուսատիփւս, կամ հրափայլ. [illegible]. շափող զօրն. [illegible] ամփոփատող խաւարի. [illegible], պարարող կամ զուարՃացուցիչ աչաց. [illegible] [illegible], ստեղծեալ արևուն, յորոշումն քնի որ նմանութիւ կոչի արեգակն և արուսեակ։

3 Որ [illegible]։ Արեգակն իւրով տարեաւ շրջագայութիւ հեռաչեալ ժողովէ զբազմութիւն ամաց, որով չափին զարք. [illegible] յանխանենս կամ ժամանակի աշխարհիս, յորում ամաց շունչն պակասի մահուամբ, և [illegible], և ամաց կենդանութիւն նորոգի ծննդեամբ. [illegible], անցաւոր, անկայուն. մի օրին. [illegible]։

4 Ի [illegible]։ Ի կատարել իւն յօրէլինից, այսինքն յետնից, որ

լինի 450 ամ ի [illegible], մնանելոյ 'ի տասներորդ յիսունն. յետ երից ամաց գալստեան կայսերն Հռոմայ բազի երկրորդի 'ի [illegible], յաշխարհս տայոց՝ որ 'ի հիւսիսոյ կայ [illegible], յորում գրեաց սուրբ վարդապետս [illegible], և [illegible] յանդաստանի. յորում ժամանակի բազել կայսր [illegible] տայոց. որպէս և զայլ բազում տաճմանս [illegible] 'ի [illegible] (զորմէ տես 'ի պատմ. Հատ. Բ. եր. 881.) [illegible] նուաճեալ տաճմանս. [illegible]. [illegible] տաճմանց. և [illegible] ընդ մէջ մնանելոյ [illegible] տաճմանց. կամ, [illegible] 'ի [illegible]. 'ի [illegible], [illegible] կոնթողակ քաղաքաց, զոր կանգնեաց [illegible]. կամ յորոշումն տաճմանց և [illegible]. 'ի մեր [illegible]. [illegible] այսինքն Թանձր կուսակալ, գիզեալ: [illegible] պատմին և 'ի պատմութե [illegible] յաւելլ. « [illegible] քաղաքելու . . . 'ի գեմ երեսաց պատկերաց [illegible] մտաւոյին » և այլն : Յետ [illegible] պատմիչ [illegible] 'ի տաճմանս բուլղարաց : [illegible]. [illegible] գմիջաց տաճմանացն. կամ նմանութե[illegible] [illegible] և [illegible] պատմելով [illegible]

Յաղագս [illegible] Թուականին՝ յորում [illegible] է. զի գալստեան վասլի կայսեր՝ [illegible] ոչ [illegible] 'ի [illegible] հայոց՝ [illegible] (Դ. 42.) [illegible] 'ի Թուին [illegible], [illegible] կոզմն [illegible] կամ [illegible]: [illegible] խաղչն տայոց 'ի ժամանակին՝ յորում [illegible] տայոց. որ [illegible] 'ի կայսր [illegible] [illegible]. [illegible] յայն պատմիչ [illegible] ամին, այսինքն [illegible], [illegible] մեր պատմիչք [illegible] Թի, ընդ [illegible] և [illegible] վասլի. զի [illegible] (Դ. 42.) [illegible] Թուին. [illegible] (Գլ. Ա.) 'ի [illegible]. [illegible] 'ի [illegible]. [illegible] հաւանական է. ոչ միայն զի [illegible] և [illegible] ժամանակաւ և [illegible], [illegible] է բանի սորա վարդապետիս. զի [illegible] երեք ամք անցեալ էին՝ յորժամ [illegible]. [illegible] վասլի [illegible] 'ի Թուին [illegible], կամ [illegible], [illegible], լինէր Թուականն [illegible]. կամ [illegible]. և [illegible] լինէին 'ի [illegible] տասներորդ յիսունին, [illegible] 'ի [illegible]. [illegible] մեր պատմագրաց [illegible] է, Թէ [illegible] 'ի [illegible] [illegible], կամ [illegible], կամ [illegible]:

5 [illegible] : Պարսիկք, [illegible] և [illegible]. [illegible] պատերազմեցաւ բազել [illegible] հայոց:

6 [illegible] : [illegible] զեղանեմ բայէն, այսինքն [illegible]. [illegible] 'ի [illegible] [illegible], այսինքն [illegible] [illegible] [illegible] մնանի [illegible]:

[illegible] Հնդացուցանէ [illegible], և [illegible] զորոց [illegible] յաճախէ [illegible]. և որպէս [illegible] 'ի ժամանակի [illegible] յաջողին, այսպէս և [illegible], յայսմ մեջոցի [illegible] երկրիս՝ [illegible] հայեաց [illegible] և հաւաքեալ յանձայն գրոց, [illegible] [illegible] որ [illegible] 'ի վերոյ նորա [illegible] և

այլ խնդրուածս՝ երբեմն որմանս չնուածոյն․ կարգեսցի բառ զանազան
սխալից՝ երբեմն անձնակս․ կազմեսցի 'ի նոյն բազմապիսի զարդս և կա-
րասիս հոգևորս, ոչ հարևանցի և անհաստատ, այլ հաստատութբ
արձանագրութեամբ․ և բառ այլ և այլ տիրապետակաց ազգաղացն՝ դի-
գեսցի և բարգեսցի գլխաւորապէս խնդրուածս նման միմեանց․ որպէս
և յուցի 'ի բարբառեալ բոց՝ թէ որով որանս և բանս կարեն ասելի ա-
ռած․ և զայս ամենայն բազմածիւղ յօրինուած օգտակար մասանցս՝
հաստատեսցի երբեմն մի չինուած հրաշակերտ․ յորում անձինք ջերմե-
ռանդն ազգասէրտացս տիրապետանք հանգիցեն․ Ի հաստատունս այսպիսի
աշխատութեան ոչ այլ ինչ խնդրեմք, բայց անանձնական յիշել զմեզ յա-
ղօթս, և այլն․ Եթէ խնդիր որ թերեւս առնիցէ զիտել, որպէս ազգս
հետաքննաւ գրեցան անընդհատ, թէ պարապով ընդ ժամանակս ժա-
մանակս․ Այսպէս 'ի կարգի աղօթիցն չէք նշանակ պարապով գրեալ․
զոր օրինակ 'ի գաղիա ասպետացն կայ նշանակ այնպիսի, յասել անդ․
«Ի գաղափարմանէ բառն չարժեալ կարգ բանիս» և այլն․ Մանաւանդ ընդ
հակառակն՝ յարատևութեան յիշատակարանիս ցուցանէ՝ առանց զա-
դարելոյ սկսեալ՝ և աւարտեալ զնառակս․ քանզի ասէ, յորժամ ան-
գորրութեան միջոցի ——— , ——— , և այլն․ որով 'ի մի
ժամանակ առհասարակ գնէ՝ թէ զչհինելն, այսինքն զսկսանելն, և թէ
զկատարումնելն․ Եւ այն զարմանալ, զի սկսանելի 'ի բանն Հէ․ 'ի մեծի
ուրբաթուն գրեալ զայն աղօթս․ եթէ յայնժամ 'ի բազմապաշտօն
աւուր ոչ գաղարեաց 'ի գրելոյ, եւ ասսել յայլ աւուրս անդադար
լինէր․ Զայն և պատճառ գրելոյ աղօթիցն հաւանեցուցանէ, երբեմն զի
ոչ եթէ անձին առանձին ըղձմամբ յօժարեցաւ յայն, այլ 'ի թախան-
ձելոյ մեծարգոյ հարց վանականաց, և անմարթ էր զխնդիր նոցա յա-
պաղանք առնել 'ի գլուխ․

7 ——— ——— մի օրին․ ——— 'ի ———․ Յիշեր զելս առ-
նուլ երանելին զհարցմունս աղօթական մասանցս․ ուստի ոչ միայն յա-
ւանդութէ բովանդակ մերոյ ազգիս՝ աներկբայելի գիտեմք զնա եղբն
լինել յօրինող նորեկեան աղօթիցս, այլ և յայսմ վկայէ յիշատա-
կարան մասանցս․ որպէս և 'ի կարգի աղօթիցն (ՀԲ․ Զ․) 'ի ——— ա-
նուանեն առնու զյանգիմանողական պարսաւանս անձինն․ Իսկ զոր
յաւելու՝ զարմանցութեամբ եղբօր իւրոյ յաւէնանս, խնամովի է բառ
օգնականութեան ինչ 'ի գրելն զանգիս աւուր զրոյ, կամ բառ խորհրդ-
դակցութե, կամ բառ փոխադարձելոյ զգրեալսն․ Այսպիսի փոքր զոր-
ծակցութիւն նորա բաւական էր առ խանդաղութե երանելւոյս՝ անուա-
նել զնա փառակցակից իւր՝ յիշելոյ արժանի․

8 Ի ——— — Գ․ Ի յերեկոյ՝ երբեմն մի մասնաւոր հոգևոր եկեղ կո-
մէք, և միով կերպարանաւ զիմաց ———․ Զ օրին․ և հին լսծ․
———․ Այն որ ասէ, — Գ ——— ———․ 'ի մի օրի-
նակ գնի, — Գ ——— 'ի ——— ———․ Եւ ոչ միայն բառ մասնոյ
———, այլ և հաղորդ միաշունչք, և այլն․ 'Ի ——— ———, չորեք
ասէք՝ ինն և եղբօրս 'ի մի և նոյն զիտաւորութիւն մասոց ———, հա-
կայաք․

9 ——— ———․ յայլ օրին․ չէք ———․

Բայց առնմն ապաշխմէք զբարեպաշտ ընթերցողս՝ խառնել և զմեզ
'ի յիշատակ մաքուր աղօթից ձերոց, զաշխարհիկ աշխատութեան 'ի բա-
ցայայտութիւն զեմուրնոց բանից սրբոյ վարդապետիս, կենաց զնելով
մեկնողական զրուցս զորոյ բանիբուններն պատուպետ յաւուրս մեկ-
նութե աղօթից՝ որ 'ի պատարագի․ «Այսպէս և զրուածը բանից խոր-
« հրդական աղօթիցս համառօտեալ, բայց ոչ և ըղձականութիւն․ այլ

« աշխատանաց ուղեկցութեանց բանիցս՝ բղխիցն և փոփոխմանն, համաշ-
« մանն և արտասուացն ճանապարհ հարցել 'ի յանձինս. զի մի լեցի
« լեզուաւ կալ 'ի յաղօթս, և մտաց անպտուղ առ 'ի նմանէ լինել »:

---

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի կատարած լուծմանց սորա հարկանիմ հարցափորձել զկընգիրն զայն զգիտանի, և լուծանել կարգաւորապար, թէ յորում ժամու հասակի գրեաց երանելին Գրիգոր զաղօթական մատեանս: Արդ քեն տեսաք առաւել 'ի յիշատակարանին, զի աւարտումն եղև աղօթիցն 'ի հայկազնեան թուականին ՆԾԱ կամ ՆԾԲ: Այլ պատմութիւն վարուց նորա և յայսմաւուրս սահ ծնեալ 'ի Ն թուականի, և կատարեալ զկեանս 'ի ՆԾԲ. իսկ այն թէ անդէն 'ի կնքել աղօթիցն՝ կնքեալ իցէ և զցանկալի կեանսն ամաց յիսուն և երկու: Իսկ յայլ յիշատակարանս ինչ նորեկեան աղօթից եղեալ կայ զրոյց՝ թէ յերիտասարդական չափու հասակի զկեանսն փախճանեալ իցէ և այն հանրաւեցաւ 'ի բան և 'ի գիր՝ իբր աւանդութի 'ի կարծիս այնոցիկ՝ որք առանց քննելոյ ընթեռնուն: Սակայն յետ ժամանակաց 'ի հարցափնութենէ յիշատակարանաց նորին իսկ սորա վարդապետի յայտնեցաւ՝ ոչ միայն երկբայելի գոլ այնմ աւանդութե, այլ և անհաւանելի: Վասն զի մեկնութի արարեալ նորին վարդապետի յերգս երգոց 'ի հարկեցուցիչ խնդրոյ գուրգենայ ուրուք, ասէ 'ի յիշատակարանին լինել հայկազնեան թուականին ՆԻԶ. այս է՝ իբր 26 ամօք յառաջ քան զաղօթսն, և յայտ է թէ ոչ մատաղօրեայ վաղահասուկ որ էր նա 'ի մեկնել զայնպիսի խորհրդաւոր գիրս, այլ վարդապետական աստիճանաւ գերապատուեալ, և անուանի նաև առ թագաւորս 'ի մէջ գիտնաւորաց ժամանակին. ուստի երեսնամենայ գէթ ունէր յայնժամ զամս հասակին. յոր յաւելեալ և ամս 26, լինէր իբր յիսուն և վեցից ամաց 'ի յօրինել աղօթիցն:

Այլ աւելի յայտնեալ մեզ միւս ևս ճշգրիտ ապացոյց 'ի ձեռս բերել 'ի մեկնութեանց պատարագի արարեալ մեծին խոսրովայ եպիսկոպոսի՝ հօր սորին Գրիգորի. քանզի յիշատակարան դնէ 'ի նմա այն մեծս գրիգոր, և ասէ թէ աւարտ որդի խոսրովու արար զառաջին զծագրութիւն կամ զգաղափարել մեկնութեանն 'ի թուականին ՅՂԹ: Եւ զի սորա ծնեալ էին յառաջ քան զեպիսկոպոսանալ խոսրովու, և առ յետ եպիսկոպոսութեանն գրեաց զմեկնութիւն ժամակարգութեանն և զպատարագին, յայտ է սովաւ՝ զի ամօք յառաջ քան զն թուականն ծնեալ էր գրիգոր, ունելով մտաւոր ամս գէթ վեց կամ եօթն. և յաւելեալ 'ի յիսուն և վեց ամսն, լինէր գրիգոր աւելի քան զվաթսնամեայ 'ի յօրինել աղօթիցն: Իսկ թէ յետ այնր փութացեալ եղև նորայն կատարումն ի յաւիտենիցն հանգիստ, զայդ 'ի սոյդ յիշատակարանաց գիտուս ընկալաք:

Արդ բաւ ասացելոցս՝ յերից նշանագիր յիշատակարանաց միայս գրիգորի հաստատեալ ցուցանի, առաջին՝ թէ ամօք յառաջ ծնեալ էր նա քան զչորեքհարիւր թուականն, բստ յիշատակարանին որ 'ի մեկնութեան պատարագի խոսրովու: Երկրորդ. 'ի ՆԻԶ թուականին՝ յորում մեկնեաց ինքն զերգս երգոց, լինէր նա երեսնամեայ՝ և աւելի ևս: Երրորդ զհետ գոյ այսորիկ՝ լինել նմա անցեալ զվաթսնամենիւք 'ի

թուականին ՆԾԱ, կամ ՆԾԲ, յորժամ զաղօթամատոյց գիրսն կատարեաց։ Այլ թէ յոր միտս խմանի ասացեալն 'ի բանն ԶԿ. Յ. եթէ հա-[illegible], բացատրեցաք անդ ԼԾ. Գ. խօսել զիւրին ծերութեն։
Յայսցանէ ամենայնէ մերկանայ զխօսքն անհիմն թուաբերութիւնն՝ որ եղեալ կայ 'ի մեկնութեն խաչին ապարանից յակոբայ պատրիարգին. թղթածամար չիք. յաղագս ժամանակի կենաց և գործոց երանելւոյ Նարեկացւոյն։

# ՑՈՒՑԱԿ

## ՄԵԿՆԵԼԻ ԲԱՌԻՑ ԻՆՉ ՆԱՐԵԿԻՆ

Ագանիլ : կենալ տեղ մը : օթուրաղ էթմէք : հէ · 13 :
ագին : եդեմ, գլխաւորն տեղը : խզ · 3 :
ագանդք : անօրէնք, կամ անէր · այս անուն է երկրայեկեղեցին : լճ · 8 :
ադամայնեայ : ատել զատէ : ձա · 3 :
ազգականութիւն : մէկ բնութիւն ունող : հէ · 7 :
ազգակից : նման, ույզուն : կ · 4 · գբ · 3 :
ազբարան : խաղաղ տալու, կամ բան խմցնելու տեղ : խաղկերկեաց : կամ, խաղաղ տալով · խմցնող, խառող, ինչպէս բերանը կամ ըմպան : ծթ · 2 : հզ · 2 :
ազբել : բխել · փայտա բխել : քեար էթմէք : ծ · 2 : կամ, խմցնել, խաղաղ տալ : տուչուրմաք : ա · 1 :
ազբարարան : խաղաղ կամ ձան տուող : խաղկերատ : գբ · 1 :
ազդումն : ձայն, խօսք : դ · 1 : կամ, գործք, հասնիլ : զ · 3 :
ազդր : սրուն · խունջայ : ծբ · 3 :
ազն : ազգ · միլէթ : ձգ · 1 : կամ, ժողով : ջիւմհիւր : դ · 3 :
ալէլուէ : ալէլուեային կարգը · օրհնութիւն · մեդհ : գդ · 24 :
ալէտանջ : տալղա բերող : միւթէմմիլիճ : ծդ · 3 :
ալիք : տալղա : ըն · 3 : կամ, ջերմակ մորուք : ձէ · 3 :
ալփաբետք : այբբեն : հէճէ, էլճէա : գդ · 22 :
ախոյեան : դէմ ելլող ջէնկճի : հասիմ : է · 1 :
ախորժ : հաճ ըլլալու : խոշ : հբ · 4 :
ախտ : ցաւ · հիւանդութիւն մարմնաւոր կամ հոգեւոր, մարդու, խույ, այէբ, և այլն :
ախտանալ : հիւանդանալ : խասթա օլմաք : ծա · 2 :
ախտարծարծ : ախտ կամ գէշ խույը վառող : կ · 4 :
ածանցական : շուտ անցնող : հդ · 3 :
ակատ : խայիխ : կդ · 2 :
ակն : աչք : կէօզ : իդ · 2 :
ակնայայլատ : աչքը մեղցող : իբ · 4 :
ակնապարար : աչքը լեցնող կամ զուարճացնող (ճէշմադարան :)
ակնատու : խալթըր նայող : ծղ · 2 :
ակնարկել : նայիլ : պագմաք : ի · 3 : կամ, խմցնել, ցցնել : ակյան էթմէք : գդ · 19 : կամ, աչք ընելով հրամել : էմր էթմէք : հբ · 4 :
ակնարկութիւն : կամք, հրաման : էմր : ձա · 1 :
ակումբ : ժողով : ջիւմհիւր, մէճլիս : իզ · 1 :
ահագնութիւն : զարհուրելի ըլլալը : հէյպէթլիլիք : ձգ · 1 :
ահեակ : սոլ : ծն · 4 : կամ, սոլ գին : կբ · 2 :
ահեկան : ձախ գին : սոլ թարաֆըն : ի · 2 :
աղանդ : կախարդական գրուածք, կամ կապ : գդ · 18 :

աղանդաշնար : խաբէական : ըէ · 2 :
աղանդաւոր : մոլորեցնող, խաբեբայ : դ · 3 :
աղարտել : աւրել ձեռքով, կամ խօսքով : պղծել : Ն · 1 :
աղաւաղել : աւրել, փճացնել : եօղ կէթժէք : ի · 2 :
աղերս · ա · 1 : } աղաչանք : եալվար, նիազ :
աղերսարկութիւն · ձը · 5 : }
աղէյարմար : աղէքով շինած : քիրէչլի : ղը · 8 :
աղէտ : սրտի ցաւ, կսկիծ : իւրէք եզինթիսի : իա · 2 :
աղխաղորմ : խիստ ողորմուկ : ժը · 2 :
աղիւսարկութիւն : թօղլա կամ քէրփիճ շինելը : հէ · 12 :
աղխ : փակ, գոց, կղպէք : քիլիթ : ժը · 2 :
աղխել : կղպել, գոցել : քիլիթլէմէք : ժդ · 1 :
աղկաղկ : տկար, խեղճ : ազիֆ : կը · 3 :
աղճատանք : ապուտաճուպուռ խօսք : խէ · 2 :
աղօրիք : տէյիրմէն : և նմանութեամբ՝ ակառ : տիշ : կդ · 2 :
աղու : կակուղ : մէլայիմ : ը · 1 :
աղուական : կակուղ, հաղ ընելու : խօշ : կդ · 4 · ղա · 3 :
աղուէս : թիլքի : ծա · 4 :
աղջամուղջ : հդ · 3 : } մթութիւն : գարանլըք, փուս :
աղջութիւն : դ · 3 : }
աղտապատին : աղբ, չօռ : աճը, զէհիր : լթ · 2 :
աղօթկեր : աղօթք ընող : տուաճի : ծա · 5 :
աղօտական : մթնշաղ : ծը · 1 :
աղօտանալ : մթննալ, մարիլ : սէօնմէք : է · 3 :
աճառ : աղտ հանելու շինած բան, ինչպէս սապօնը · ևն : դդ · 11 :
աճիւն : մոխիր : քիւլ : ի · 1 :
ամայաբնակ : եաբանը կեցող : խդ · 1 :
ամայի : պարապ, երեսի վրայ ձգած : եապան, վէրան : դ · 3 : ծը · 1 :
ամանակ : ժամանակ, ատեն : վագըթ (յիշատակարան :)
ամբառնալիք գրօշից : պայքարինկերուն կոթերը : դ · 3 :
ամբարել : ժողվել, պահել : տէփլէմէք · սաղլամաք : դ · 1 :
ամբարձուղէշ : բարձր ձուլով : տալլը : թ · 2 :
ամբոխ : խառնապառպար, հաշխ : հէ · 12 : կամ, խռովութիւն · վէյվէլէ : ա · 2 :
ամբոխութիւն : նոյն է : ըդ · 9 :
ամենաբաղձ : փէք հաղ ընելու : ձդ · 1 :
ամենաբոլոր : սխուափութիւն, եէքփարէ : ժէ · 2 :
ամենաբուժ : ամեն ցաւ բժշկող · խիստ օգտակար : փէք ֆայտէլի : խդ · 1 :
ամենաբուրեան : խիստ հոտով : փէք գոգուլու : ղդ · 19 :
ամենագորով : խիստ խղճացող · փէք մարհամէթլի : կ · 5 :
ամենագլուխ : ամենէն առաջ, գլուխ ընող : ը · 2 · ջը · 1 :
ամենազգեցիկ : ամենուն լսելու : փէք քէսկին : հէ · 2 :
ամենախնկաւոր : խիստ աղնիւ : ծը · 1 :
ամենածախս : խիստ եղող մրկող : թէլէֆ էտէն : իը · 1 :
ամենակարծ : խիստ փափկալու, կամ փափկարար : փէք գոլգոլու : ձէ · 2 :
ամենակիր : ամեն թիւրլիւ առնող : է · 3 : կամ, խիստ չարչարուած : փէք եօրուլմուշ : ձը · 3 :
ամենապատաղ : ամեն բանի ատլիկ ընող : ծէ · 2 :
ամենապատիկ : ամեն թիւրլու : խէ · 1 :
ամենապատիր : փէք խարըլած : ծա · 1 :

ամենապատկառ : ամօթով լեցուած : խղճէ զգալ : թ · 1 :
ամենապայծառ : խիստ պայծառկան , փէք ուչյու : խդ · 3 :
ամենապատար : ախէթին զայ եղած : լդ · 2 :
ամենասփիւռ : ամէն տեղ եայըլմըշ եղած : խէ · 2 :
ամենավայր : ամէն տեղ հասնող : գդ · 13 :
ամենավարան : փէք ֆէսաֆէսէլի : ա · 2 : կամ, սարսափաւորն ընող : հա · 4 :
ամենավերեւ : ամէն բանի՝ կամ մէջս եայըլմըշ եղող · հզ · 1 :
ամենատեղայ : ամենուն վրա անձրևած : դ · 1 :
ամենատեղի : ամէն տեղ մնող կամ տարածող : հգ · 3 :
ամենատենչ : խիստ փափագող : դզ · 9 :
ամենատխուր : խիստ տրտում : փէք մահզուն : խէ · 3 :
ամենափորձ : փէք վուգուֆ : խդ · 1 : կամ, ամէն բան քաշող : ձբ · 3 :
ամենափկար : խիստ տկար՝ կամ վատուժ : լբ · 2 :
ամենընդարձակ : խիստ առատ : փէք պօլ : լէ · 1 :
ամենարուեստ : խիստ վարպետ : փէք ուստա : հզ · 2 :
ամենէրկչոտ : խիստ վախկոտ : փէք գօրգագ : դբ · 5 :
ամենընտել : սովորական : փէք աշինա : դզ · 8 :
ամենընթաց : ամէն գի վազող : հթ · 1 : գ · 1 :
ամոլք : Նուէր զլխու գինուն երկու տիրէկը : կէմինին պաշթարաֆին
եկի տիրէկլի : խէ · 2 :
ամպարշաւանիլ , կամ ամբարշաւանիլ : սիրտը ուռեցուցնել : պէնլիւ_
լէնմէք : ի · 2 :
ամպրոպ : հավայի խառնակութիւն : ահա պատեր կինին , աֆան թու_
ֆան : դ · 3 : գ · 3 :
ամրաբերձ : ամուր ու բարձր : դբ · 5 :
ամրոց : բերդ : զալէ : գ · 3 :
ամփոփել : եա ամնել : կէրի ալմաք : ժթ · 2 · կամ , ժողվել , պահել ,
ծածկել : անմէզիրմէք , էօրթմէք : խէ · 3 : Նաև կրաւորականն , ամփո_
փիլ , քաշուիլ , պահուիլ , քիչնալ , պզտիկնալ , և այլն :
այգ : առաւօտ : սապահ վագթի : ժդ · 1 :
այլաբանել : օրինակով խօսիլ : մէջիազէն սէօյլէմէք : խբ · 1 :
այլազգունակ : տարը րէնկ , այլանդակ : դզ · 12 :
այլագնեալ : այլանդակ : պէզ : խբ , 3 :
այլանմանութիւն : կեղծաւորութիւն : իկի իւզլիւլիւք : լա · 3 :
այլայլ · թիւրլիւ թիւրլիւ : դբ · 8 :
այս : դև : ջին : հա · 2 :
այսախառն : սատանայի խառնուելովը կամ ձեռքովը եղած : դբ · 6 :
այսահարն : դև , սատանայ : ջին : խա · 2 : գա · 1 :
այսակիր : մէջը դև ունող : ջինլի : ժբ · 2 : հէ · 12 :
այտ : թուշ , երես : եանագ : կդ · 2 :
այտուցումն : ուռեցք : շիշմէ : ժբ · 2 :
անագան : ուշ : կէջ : լթ · 3 : կամ, ատեն անցնելը , ատեն թուրֆանտա :
կբ · 2 : ձէ · 3 :
անագգելի · չխտուելու : կդ · 1 : կամ, չխկրելու : դզ · 21 :
անախտակիր : ախտ կամ կիրք չունող , ախ չխալահող : բ · 2 : կամ , ցա_
ւակից չեղող , չխախծացող : ծ · 1 · ծդ · 2 :
անաղարտ : հիլլէսիզ : դբ · 9 :
անաղարտելի : չաւրելու : հա · 1 :
անաղելի : չաղած , հասած : գուղլանմամըշ : ծդ · 2 :
անաղերալի : չաղաչող : եալվար ոլմայան : խթ · 2 :
անաղօտ : ձա · 3 : } չխմբթնալու , չմարելու :
անաղօտելի : դզ · 2 : } սէօնմէզ :

անամփոփելի ։ չմնեղնալու , չժողվուելու ։ ժզ . 1 ։ կամ, չծածկուե_
լու ։ ձզ . 4 ։
անանջրպետ ։ չզատուելու ։ պէօլիւնմէզ ։ հէ . 7 ։
անաշառ ։ խաթրը կէօնիւլ չնայող ։ ե . 1 ։
անաշառապէս ։ առանց այրը սէչմի , կամ պօլ պօլ նայմիշ ընող ։ գզ ։ 2 ։
անապակ ։ զուտ ։ սաֆի ։ իթ . 1 ։
անապշելի ։ շաշմիշ չըլլալու ։ հա . 1 ։
անառակ ։ էտէպսիզ ։ իզ . 2 ։
անարգելութիւն ։ զապտ չըլլալը ։ ըզ . 1 ։ հէ . 5 ։
անարի ։ սիրտ չունող ։ իւրէքսիզ ։ կամ, վայրենի . բիրտ ։ եապանի ։ ը . 1 .
անարծարծելի , չհրահրելու , չվառուելու ։ է . 3 ։
անարտաքսելի ։ դուրս չելլելու ։ իզ . 3 ։
անբաժին ։ իը . 6 ։ | անբաժանելի . չզատուելու ։
անբաժ ։ ըզ . 5 ։ | այրըլմազ , թագսիմ օլունմազ ։
անբարդելի ։ չժողվելու ։ ճէմ օլունմազ ։ իէ . 3 .
անբերելի ։ չտարուելու ։ չէքիլմէզ ։ ժը . 3 ։
անբերրի ։ անպտուղ . գըսըր ։ ը . 2 ։
անբոյժ ։ չբժշկուելու . չբուժնալու ։ օնուլմազ . ծը . 2 ։
անբորբոք ։ չվառուելու ։ ալէվլէնմէզ ։ ձա . 3 ։
անբուժելի ։ տես անբոյժ . ը . 2 ։
անբռնադատ ։ առանց զօռի՝ կամ ուզելով եղած ։ ձզ . 3 ։
անգծելի ։ չգծուելու , երկաթ չբռնելու ։ գզ . 12 ։
անգոսնել ։ վար զարնել , բանի տեղ չսեպել ։ զէմմ էթմէք ։ ծը . 2 ։
անգոսնելի ։ զզուելու , գանելու ։ ըէ . 3 ։
անդ ։ արտ . թառլայ , ղը . 9 ։
անդաճմունք ։ մամուռք ։ գուրանիթա , էնափշէ ։ իէ . 3 ։
անդամաթիւ ։ բաժնած անդամները ։ ղզ . 4 ։
անդամանդեայ ։ խիստ կարծր ։ փէք սէրթ ։ ղը . 10 ։
անդամնձանք ։ հին օրէնքին ծածկուկ բաները ։ հէ . 15 ։
անդառնելի ։ կարգի մէջ չմտնող ։ արայէ կիրմէզ ։ ըզ . 7 ։
անդատ ։ անխոհեմ , անխրատ ։ նէհադ ։ խե . 2 ։ կամ , չհանչցած ։ եա_
պանճի ։ խղ . 2 ։ կամ . չփորձած ։ թէճրիպէսիզ ։ կա . 2 ։
անդարման . դեղ չեղած ։ թիմարսըզ ։ ձէ . 3 ։
անդորր ։ ընդարձակ , լայն ։ էնլի ։ կե . 2 ։
անդորրիչ ։ հանդչեցընող , խաղաղեցընող ։ ըը . 2 ։
անդորրութիւն ։ հանգստութիւն ։ րահաթլըք ։ ըզ . 2 ։
անդուլ ։ չդադրող ։ թէք տուրմազ ։ ձը . 2 ։
անդուղեկցութի ։ ջան մէկտեղ երթալը , կամ տանիլը ։ գզ . 4 ։
անդրադարձութիւն ։ ետ դառնալը , կամ դարձընելը . թէքրար ընելը ,
կամ ըսելը ։ կէրի տէօնիւշ , թէքրարլամաք ։ իէ . 1 . հզ . 1 ։
անել ։ չելլելու , չխալըսելու ։ չըքմազ ։ ե . 1 ։
անեկամատար ։ դրսէն չգալով . ներսէն ։ ասըլ քէնտինտէն ։ գզ . 8 ։
աներասան ։ կէմսիզ , իւլարսըզ ։ ծզ . 2 ։
աներեւակի ։ ծէ . 3 ։ | աներեւոյթ , չերեւցող ։ կէօրիւնմէզ ։
աներեւակ . գզ . 3 ։
աներեւութերակ ։ ծածուկ տամարներէն քալող ։ ժզ . 2 ։
աներկեան ։ առոյգ , հաստատուն ։ սաղիհ , գավի ։ զ . 1 ։
աներկմիտ ։ շիւպհէսիզ ։ ժ . 2 ։
անզերծ ։ չազատուելու ։ խ . 3 ։
անզգուելի ։ առանց նեղելու ։ ճէֆասըզ ։ ժզ . 3 ։
անզենին , չզենելու , չմեռնալու ։ խա . 2 ։

անզօրանալի ։ չիպաղըշկէլու ։ ԺԹ · 3 ։
անզուգական ։ Նմանը չունող ։ մէնէնտի եօք ։ Կ · 1 ։
անզօրելի ։ Ճար չըլլալու ։ չարէսիզ ։ ԽԴ · 3 ։
անըմբերելի ։ չիհամբերելու ։ տաքա ղըւնմազ ։ Ծ · 1 ։
անընդել ։ ալըշմիշ չեղող, եապանի ։ Թ · 3 ։
անընդմիջելի ։ արալըխ չունեցող, չիբաժնուելու ։ ԽԴ · 1 ։
անընդոստ ։ չիշարժող ։ գըմըլտանմազ ։ ԴԲ · 10 ։
անընտիր ։ անպիտան, նետելու ։ Բ · 2 ։
անընտրաբար ։ Թէմէքքէլլի ։ ՀԵ · 11 ։
անթառամելի ։ չիթառամելու ։ սօլմազ, ՃԴ · 4 ։
անթարթափ ։ աչքը գոցելու բանալու ։ ՃԵ · 1 ։
անթափելի ։ չիխալըսելու ։ գուրթուլմազ ։ ԽԴ · 2 ։
անթերի ։ լման ։ թէքմիլ ։ ԼԳ · 5 ։
անթոշակ ։ ղաչիրէսիզ ։ ԽԴ · 2 ։
անթոշակութիւն ։ Ճամբու ղաչիրէ չունենալը ։ ԽԴ · 3 ։
անժամանն ։ ատըը չիհասնող ։ կէրի գալան ։ ԾԴ · 2 ։
անիշխան ։ չիշխող ։ գատիր օլմայան ։ ՃԴ · 2 ։
անլքանելի ։ տանից երեսէ ձգելու ։ ՀԳ · 4 ։
անխայել ։ խայծօղ, խըյմիշ չընել ։ ԽԳ · 4 ։
անխարդախ ։ չիխառնուելու · անփորձ ։ զարարսըզ ։ ԺԳ · 3 ։
անխրախոյս ։ չիզօրանալու, սիրտ չառնելու ։ Ճէսարէթսիզ ։ ԾԴ · 2 ։
անծագելի ։ չիլուսնալու ։ ԽԴ · 2 ։

| | |
|---|---|
| անծախ ։ ԼԳ · 10 ։<br>անծախելի ։ ԼԲ · 2 ։ | չիմաշուելու, չիհատնելու ։ թէլէֆ օլմազ ։ |

անկազդուրելի ։ չուժովնալու ։ ՀԾ · 2 ։
անկած ։ անշահ, ցած ։ ալչագ ։ ԿԹ · 3 ։ կամ, ընկած, կործանած ։ տիւշ-
միւշ ։ ՃԲ · 6 ։
անկամակութիւն ։ հաղ չընելը ։ պիզարլըք ։ ԴԲ · 8 ։

| | |
|---|---|
| անկայ, ՀԴ ։ 3 ։<br>անկայուն ։ ՃԵ · 1 ։ | չիմնացող, անհաստատ ։ գարարսըզ, թէմէլսիզ ։ |

անկանել ։ հուսել, թեղկեաւ բանել · տօգուլմաք ։ ԿԴ · 2 ։
անկաշառ ։ ըռըշվէթ չառնող ։ Բ · 1 ։
անկապուտ ։ չիյափշտակելու ։ գափըլմազ ։ Կ · 1 ։
անկասելի ։ տանից գադրելու, տանից վող գալու ։ Ի · 2 ։
անկատար ։ վերջ կամ ծայր չունող ։ սօնսուզ ։ ՃԲ · 6 ։
անկեղակարծ ։ շիւպհէսիզ ։ ՃԿ · 5 ։
անկերպարանելի · չիձեւանալու ։ եօռատըլմա կէլմէզ ։ ԴԲ · 6 ։
անկէտ ։ չիվերջանալու ։ սօնսուզ ։ ԼԹ · 2 ։
անկնդրուկ ։ պաշհօսր չունող ։ ԾԴ · 2 ։
անկշիռ ։ անհամար · հաշուաառ չունող ։ պիմիզէնա ։ Ծ · 2 ։
անկշռութիւն ։ չիկշռելը, չիսեղմելը ։ պայմամար ։ ԽԵ · 2 ։
անկողին ։ տէօշէկ ։ ՃԴ · 3 ։
անկոփիչ ։ ձան չիհանող · սէսի քէսիք ։ ԺԴ · 2 ։
անկրելի ։ չունենալու, օղրաթմիշ չընելու ։ ԽԹ · 2 ։
անկցելի ։ չիմխանալու, չիկարկտուելու ։ պիթիշմէզ ։ ԽԲ · 3 ։
անհագագ ։ անշունչ ։ նէֆէսսիզ, սօլուգու քէսիք ։ ԼԳ · 7 ։
անհամաօտ ։ երկան, չիկարելու ։ Կ · 1 ։
անհամբոյր ։ Նախա, սէրթ ։ ԽԲ · 2 ։ կամ, պիղծ · մուրատր ։ ԽԴ · 2 ։
անհամբուրելի ։ չիկանկրնալու ։ ԾԲ · 2 ։
անհամեղելի ։ չիհաշտուելու ։ բիճարըդ ։ Է · 2 ։ ԾԴ · 2 ։
անհանդերձելի ։ չիգործելու, չիբանելու ։ բըչէնմէզ ։ ԼԾ · 1 ։

անհամբեր : սէպր , ույգունսուզ : գա · 3 :
անհաս , չհասանող , անպակաս : թիւքէնմէզ : իդ · 4 :
անհաստատելի : չհաստատուելու : այրըլմազ : հէ · 5 :
անհարթութիւն : անհաւասարութիւն : եօքուշլուք : խէ · 2 :
անհարուածելի : չհարուածուելու : վուրուլմազ : հէ · 10 :
անհետ : իզ չունող : գդ · 24 :
անհետազօտելի : չփնտռուելու : արաշտըրլմազ : խթ · 2 :
անհերքելի : դէմ չկենալու : գարշըլանմազ : խէ · 2 ,
անհուն : չափ չունեցող : կէչիլմէզ : լդ · 2 : կամ , չափ չունող : գդ · 24 :
անհրաժեշտ : ետ չդառնալու , չփոխուելու : կա · 2 :
անհրապուրելի : առանց խաբէութեան · ըղըրգիլէ : գդ · 10 :
անձաւ : մաղարայ : խ · 2 :
անձեռնարկելի : ձեռք չդարնելու , անկարելի : գաղըլըմըզ : հդ · 1 :
անձիր : չնորհակալ չեղող : նանքօր : կէ · 2 :
անձկալ : բաղձալ : արզուլանմաք : խը · 2 :
անձկական : նեղ : սըգը : դ · 1 :
անձկութիւն : կարօտ : հասրէթ : ժը · 1 : կամ , քիչութիւն , պակասութիւն ,
եօքսուլլուք : ժդ · 2 : կամ , նեղութիւն : սըգլէթ : խէ · 3 :
անձնական : բանական : ը · 1 : կամ , հոգեոր : դ · 3 :
անձնահամբոյր : հոգեորապէս սպասարուելու : դը · 3 :
անձնամատն : ինք զինք մատնող : կէնտին խային : խը · 2 :
անձուկ : նեղ , պզտիկ : տարաճըգ , ուֆաճըգ : ա · 2 : ժէ · 2 ·
անճարակ : ճար չունող : չարէսիզ : ը · 1 :
անճողոպրելի : չազատուելու : դ · 1 : խ · 3 :
անճոռնի : սէթ , եաղըշըգսըզ : ծդ · 2 :
անմահարձան : խուլէ՝ կամ սուրճ չունող : լթ · 2 :
անմանչելի : կդ · 2 : } տուսիկ , առանց ձայնի : սէսսիզ :
անմասնչ : լդ · 5 :
անյատակելի : խիստ խորունկ : փէք տէրին : խը · 4 :
անյաղթ : չկանգնելու , վեր ելնել չկրցող : ժդ · 2 · դէ · 2 :
անյարմարագիր : սէթ գրած , եօլով գրած : ծդ · 4 :
անյեղլի : չփոխուելու : տէյիշիլմէզ : դ · 1 :
աններելի : չներուելու : խը · 1 :
աննշոյլ : մութ : քարանըգ : իդ · 2 :
աննուաղ : չհատնելու : թիւքէնմէզ : թ · 3 :
անշաղախ : մաքուր , թէմիզ : ձ · 1 :
անշամանդաղ : տումանսըզ : դ · 1 :
անշուք : անփառք կամ ճոխութիւն չունող : չըպլագ : կդ · 4 :
անշնորհութիւն : ապերախտութիւն : նանքէօրլիւք : դա · 3 :
անշուշտ : ստոյգ , հաստատ : սահիհ : կէ · 1 :
անշփոթ : անշփոթեցուած : չպուլանըգլըգ · խթ · 2 :
անոխութիւն : ոխ չպահելը : լա · 3 :
անողոքելի : չկակղեցուելու : ձը · 2 :
անողոյ : եաղսըզ · խօրէսաա : խը · 4 :
անսասան : տեղէն չշարժող , քըմըլտանմազ : կդ · 2 :
անորակ : գոյն չունող : ըրէնկսիզ : լդ · 10 :
անունակ : չունեցող , զուրկ : մուհթաճ : լդ · 2 :
անորսնելի : չփնտռուելու · իզ չունող : դ · 1 :
անուր : հալքայ : ժէ · 1 :
անուրկը : տեղի մէջ չմտնելու : խդ · 1 :
անուրջք : երազ , քնոյ մէջ խէյալ : ձդ · 1 :

անչափագիր : գծով կամ չըգըրըով չիչափուելու : րէսմի եօք : Գ. 1 :
անպանծալի : չիլլին, նուխուսէթ : ԽԶ. 3 :
անպատիր : չխաբող, կէ՛ չխաբուելու : ալտաթմազ, ալտանմազըան : Գ. 1 :
անպատուաստելի : չիկյացուելու : էյլէնմէզ : Ի. 3 :
անպատուար : պատ չունող : տուվարսըզ : ԼԹ. 2 :
անպատսպար : տեղ մը՛ կամ մարդ մը չունող : պիչարէ : ԺԷ. 1 :
անպարագիր : չէվրէի մէջ չիփարգմելու : ԺԿ. 1 :
անպարառ : բանի հետ չեղող, չխառնող : գաթըշըգսըզ : ԾԶ. 3 :
անպարուրելի : չփաթթելու, չիգոցուելու : գափանմազ : ԽԿ. 3 :
անպարտաս : չմեղադրելու : ԽԶ. 6 :
անպարտ : չյաղթուելու : եէնիլմէզ : Գ. 3 :
անպարտակիր : կրելու կամ չարչարուելու պարտք չունող, տուշար
տէրը չարչարուած : ՀԿ. 3 :
անպարտութիւն : չյաղթուիլը : ԽԹ. 2 :
անջատել : բաժնել : այըրմագ : ԼԳ. 5 :
անջնջելի, չջնջուելու, չքերուելու : ԺԶ. 1 :
անջրպետ : բաժնող բան : արալըղ մընող : պէօլմէ : ԽԷ. 2 :
անջրպետել : բաժնել, հեռացնել : այըրմագ : ԺԲ. 2 :
անսալ : մտիկ ընել, մնալ : տինլէմէք : ԽԷ. 4 :
անսայթաք : չսահելու, չիյնալ : սիւրչմէզ : ԺԶ. 2 :
անսասանութիւն : չինալը : գլուխ քաշելը : ԽՁ. 2 :
անսպառելի : եա չիպատնալու : ԼԹ. 2 : կամ անյապաղ, արագահաս :
անսաստրակելի : գլուխ չիվերցնելու : ՀԵ. 7 :
անսագիտ : պակասութիւն չունող, կամ չկարօտելու : ԽԲ. 3 :
անսափոփելի : չխմխթարուելու : թէսէլլի օլմազ : ՀԹ. 2 :
անվայրապելի : չըհալելու, չկործանելու : եըգըլմազ : ԳԲ. 5 :
անվայրափակ : տեղ չփարգմելու, սինօր չունող : ԽԿ. 1 :

| | | |
|---|---|---|
| անվանական : ԾՁ. 3 : | } | դէմ չիդնելու : գարշը լանմազ : |
| անվանելի : ԽԿ. 1 : | | |

անվատնելի : պայ չըլլալու : ՃԿ. 5 :
անվերապահելի : չիպարտաւորելու : Էօրթիւլմէզ : ԽԿ. 3 :

| | | |
|---|---|---|
| անվթար : Ժ. 2 : | } | չաւրուելու, չիպակսելու, հաստատ : պիր- |
| անվթարելի : ԽԿ. 3 : | | գարար, գաիմ : |

անվրէպ : չիծռելու, չիսահ : Եանլըշսըզ : ԼԲ. 2 :
անտարակոյս : չխախտուելու : Կ. 1 :
անտարփակ : սահմանի մէջ չփարգմելու : ԺԿ. 1 :
անտիրելի : ազատ : ԼԵ. 1 :
անտխուր : տրտմութիւն չունող : դասասըզ : ԼԲ. 2 :
անտպաւորական : տեղ կամ նշան չունող, չուտ անպետ : ՀԿ. 3 :
անտրջական : քունի մէջ եղած : ԾԲ. 3 :
անցք : հանդիպած փորձանք : պէլա : ԽԵ. 1 :

| | | |
|---|---|---|
| անփոփոխագիր : ԺԶ. 2 : | } | չփոխուելու, չվերնալու : տէյիշիլմէզ : |
| անփոփոխագրելի : ԳԿ. 2 : | | |

անքանակ : չափ չունող, էօլչիւսիզ : ՀԵ. 12 :
անքառ : ակար, խեղճ : զայիֆ : ԿԹ. 2 :
անքոյթ : ապահով : էմին, սալիմ : ԽԵ. 2 :
անքող : չծածկած, բաց : փէրտէսիզ, այան : ԺԶ. 2 :
անօթ : աման : գապ : ԺԲ. 2 :
աշխար : ողբ, լաց : ադաւիշ, Ֆիղան : ԼԲ. 4 :
աշխարհակալ : աշխարհ բռնող, բոլոր աշխարհք գրաւող : ափիննեայը թու-
թան : ՀԵ. 8 :

աշտանակ : շամտան , կամ մոմակալ : գդ · 8 :
աշտէ : խըշտ : հա · 3 :
աշտակել : խաժթըր նայիլ : կն · 1 :
աչացու : աչքը սախտա : ալիլ · քեօս : ժէ · 2 :
ապարան : բերանը գոցուած : աղքը թութուգ : խէ · 3 :
ապագործ : անպիտան : պօշ , իշէ եարամազ : խն · 2 :
ապայէն : ախլահուրդ : է · 1 :
ապաթոյն : զէհիրախիզ : իգ · 2 :
ապամանման : ուշ հասնող : կէճիկըմիշ : հթ · 3 : կամ պէմարխա : թ · 2 :
ապախտ առնել : անարգել , պօշ ընել : իէ · 3 :
ապախտաւոր : ապերախտ : էյլիք պիլմէզ : կ · 2 :
ապականարար : աւրող , մնարօղ : իթ · 2 :
ապահար , կամ ապարահ : հայցը բանած կնիկ : ճ · 2 :
ապահաստատ : անհաստատ , անհնիզ : գդ · 13 :
ապաձեռն : ձեռքը պարապ : էլի պօշ , ֆուգըր : իդ · 3 :
ապաձեռնութիւն : ձեռքը բան չունենալը : ձբ · 6 :
ապաշաւ : դ · 2 : } զղջում : փիշմանլըք :
ապաշաւանք : ժ · 2 : }
ապաշխարան : ապաշխարելու տեղ : ժդ · 3 :
ապաշնորհ : ապերախտութիւն ընծայող : էյլիք պիլմէզ : է · 2 :
ապաշուք : ցած , խեղճ : բաղդէթսիզ : լդ · 7 :
ապաջան : փուճ աշխատող , կամ թէմպէլ : ի · 2 :
ապառնի : եալի գալիքը · ըլլալիքը : անդրադի , կէլէճէք : լ · 2 : լթ · 3 :
ապառում : խօսքէ կամ ապուշանքէ չառնող : նադա , անհղօրիզ : ժա · 3 :
  կամ զըլթութենով : կդ · 2 :
ապաստան : մէկի մը ընկած , կամ կիւվէնմիշ եղած : ժա · 3 :
ապաստանել : յանձնել , ապաւինել : սփարիշ , կամ թէսլիմ էթմէք :
  կէ · 1 :
ապաստուածութիւն , անաստուածութիւն : մուլհիտլըք : խէ · 1 :
ապարանջան : պիլէզիկ : լդ · 1 :
ապարանք : սարայ : իբ · 6 :
ապարասան , կամ ապերասան : նախս , ինատճի : կբ · 2 :
ապաւանդակ : նաւի , կամ չարքի չուվան : խի : իէ · 2 :
ապաքինել : բըրնալընել : ապաթմիք : լդ · 2 :
ապէնիազ : անկարօտ : իհտիաճսըզ : ծթ · 2 :
ապիկար : տկար , չիկրցող : գուտրէթսիզ : ժ · 1 :
ապիրատ : չար , գէշ : ծդ · 2 :
ապշիլ : խելքը գոյ ըլլալ : շաշմաք , մատթ գալմաք : ժէ · 1 :
ապրանք : սիլէ , շամտա : կդ · 4 :
աջակողն : աջ կուշտը : սաղ թարաֆըն : ի · 2 :
առ : առնելը , յափշտակելը : գափըշ : իբ · 4 :
առագաստ : փէրտէ : իբ · 1 :
առած : խելայի խօսք : մթալ : ճ · 1 :
առակայք : առջևի կամ մօտը եղածները , ըլլալէր : ժգ · 3 :
առականք : ամօթ տեղուանքը : ժթ · 4 :
առակել : օրինակել , ցցընել : գդ · 5 :
առանցեալ : առնելը անցած : փողթի կէչմիշ : լա · 1 :
առաջադրութիւն : առջևը կամ դուրս ցցուած բան · ինչպէս մաշալային
  թեները : գդ · 8 :
առաջք : Ճակատ կամ ջրի ճամբը , ծովը , թև : գօլ : կբ · 1 :
առասան : չուվան : իփճիմ : ժ · 1 :

տատասկ : թուփն : ժբ · 3 :
տարակուսութիւն : զերկբայս : կեռնաւորիչ : դգ · 6 : կամ, տարակոյս · բա-
  րոգիչ : դգ · 15 :
տարընթեր : քոյր , ծոյլ : եանդիտա : ձզ · 1 :
տաժանելի : կարծ զինդալ , շատ անցեալ : հգ · 3 :
տախտակ : գեղեց · կամ փեշարման , չարչարի : ի · 2 :
տախթ : պատմառ : ակալեալ : ա · 2 :
տակաւին : մարմինը եղած : ձէ · 3 :
տաճարաշէնք : չէշեի , փէյ : իէ · 4 :
տաձեան : պատրաստ : հագրը եղաւ : դգ · 8 :
տապալեան : անցեալ , անցնող գոյալ · ( յիշատակարան : )
տապի : բրդէ լալթ : իա · 3 :
տարան : խառը , բանական : կ · 2 :
տարակուսաւորս : շան ակն ալտալ , կամ ձիանց պահապան : լէ · 17 :
տարապանակ : չէթէճի , քէլէփիրչի : կթ · 2 :
տարաբեր : բայ անկ : մեկյան : ա · 2 · թ · 1 :
տատրակս : կուպ մը կնկան բիանէթով : կ · գ :
տարփք : ար անզիններըր , աշխրքիս : ձա · 4 :
տալ ակտանալ : եղեռագեւալ կուպրք տալի ակս : ի · 2 :
եծախատն : եյ հետ միասնած : ծգ · 4 :
եծակեան : եծալին բնութիւն · եծութիւն : ձգ · 3 :
տաղիկ : ակատ : ակչ : Ն · 2 :
տաղանդատու : ակալի խիչմեչ եղալ : ակչէ ագանան : ձբ · 5 :
տաեան : ախկան , մեծլիս : լբ · 4 :
տասիկելի : ակթէնը քադքէն : կն · 1 :
տրամ · չարատ : չափըք : կբ · 3 :
տրամաբան : ամմէն անկ ճամբա բնալ , եալրլմիչ եղալ : ժբ · 2 :
տրամաբան վասահութեան : ճասահ ճամբա : իղ · 3 :
տրամանակ : խրդմէթքեար : կբ · 2 :
տրրչիա : գինով : ակրիօշ : բ · 2 :
տրրուժ : խանչը : իչմէք : լթ · 2 :
տրրուն : հատակ , արենք : եաչ : չափու տրրունն : չափաւոր հատակ ·
  քեամիլ եաչ · ալքըշալըքլը · գ · 2 :
տրգահատել : ալաշել : եօլճալ ալմալ : ժբ · 1 : ժն · 1 :
տրգանդ : փոր : գարըն · աաչմ : լա · 1 :
տրգաստոր : շահաւոր : ֆայտալը · հն · 5 · ( յիշատակարան : )
տրգանք : գործ : իշ , հարէքէթ : գ · 4 :
տրգեալն : փանկլու անկ : հափիս եէրի : բ · 2 :
տրգարագրուկ : հախ անգը չարչարած : իթ · 2 :
տրգեան : ժբ · 1 : } հիմիկվան : չիմտիկի :
տրգի : ժն · 2 : }
տրգիւն : բէրք , գործ : հասիլէթ : լա · 2 : դգ · 22 · կամ, հասըլ բերը :
  գբ · 10 :
տրգիւնական : հասըլ եղած : պաշաչըգըմըշ , թէքմիլ : խն · 1 :
տրգմանական : հիմն ըլլալ , կամ գալ եղած : իբ · 2 :
տրժանիք : արժանաւորութիւն , տրգիւնք : ակվալ : ձգ · 4 :
տրի : պատառ , կարիճ : իկիա , գուվէթլի : ձՆ · 1 :
տրծարծել : հրահրել : ալէֆլէթմէք : Ղ · 2 : հա · 2 : կամ, նորոգել :
  թազէլէմէք , ալարըլմաք : իգ · 2 :
տրկածք : փարձանք : ակէրա , խէթա : գ · 3 :
տրկանելիք : փայլի լոյթ , հաղուտ : կիյմէնճէք իթ · 2 :

արկուած ։ փոխ ձգելու բան ։ Նորթիւ ։ դ՟ · 20 ։
արհաւիրք ։ մեծ վախ, վախնալու բան ։ գոյնեթ գործուելու չէյ ։ խա · 3 ։
արձագանգ ։ ետ դարձող ձայն ։ եանգս, աձաժ աձա ։ դ՟ · 8 ։
արձակերտան ։ ախղինք կամ խալարք թողած ։ խթ · 2 ։
արձակուրդ ։ արձակումն, արձկաւելը ։ Դ · 3 ։
արձան ։ քար ։ գոչ ։ Դ · 3 ։ կամ, ախըխէ գոչ ։ խդ · 1 ։
արձանագրել ։ հաստատ գրել ։ գայս եթմէք ։ հե · 3 ։
արձանանալ ։ խամի գրուիլ. կամ գրուիլ ։ խդ · 2 ։
արձանացուցանել ։ բանել, արգիլել ։ մէն եթմէք ։ հա · 4 ։ կամ, հաստատուն գրել ։ հշ · 3 ։
արձանայուցիչ ։ բանող ։ գաղրեցընող · դ · 1 ։
արմատակտուր ։ քեցքը՝ կամ քեզքէն կտրող ։ ժդ · 3 ։
արմատաքի ։ քեզքէն, կամ քեզքով ։ կէ · 2 ։
արմաւենի ։ խուրմա ապաձը ։ կէ · 2 ։
արմուկն (արմկունք ։) ախրաէկ ։ Դ · 3 ։
արմունք ։ ընդելընկ ։ թերեքէ, եբին · զախիրէ ։ կշ · 2 ։
արշաւել ։ վազել ։ գաշմաք ։ հա · 2 ։
արուարձան ։ երին մարգու քխալէթ ։ կ · 4 ։
արուեստ ։ ղէնաշաթ, մարիֆէթ ։ թ · 3 ։
արութիւն ։ զօրութիւն, ուժ · գուվվէթ ։ խթ · 3 ։
արուսեակ ։ աստղ եըլտըզը ։ ծ · 1 · կամ, արեւ ։ լշ · 2 ։
արջնաթոյր ։ կթ · 2 ։ } սև, մութ ըռէնկ ։ գարա ։
արջնատես ։ լա · 3 ։ }
արտաբերել ։ դուրս հանել ։ աըշարը չըգարմաք ։ խէ · 2 ։
արտաբերութիւն ։ դուրս հանած բան ։ լէ ։ 2 ։
արտաբերել ։ հասոյ ընել ։ Ժ · 1 ։
արտաքսած ։ քշած, սիւրկիւն, կամ այլ եղած ։ ծդ · 2 ։
արտաձգեալ ։ դուրս ձգած, զատուած տարած ։ ծդ · 3 ։
արտաշնչացեալ ։ հոգին ելած, մեռած ։ կդ · 2 ։
արտաքինայարդար ։ դրսանց մաքրած ։ աըշարըն սիւզկիւն ։ խէ · 3 ։
արտաքոյ ։ Ճամբէ դուրս, ծուռ ։ եոլտան չըգմըշ ։ հշ · 3 ։
արփիացնցող ։ արեւէն, կամ արեգակին տանդը ցոլուած ։ կամ, լոյս ցոլցնող ։ դ · 1 ։
արօտ ։ չայիր, օթլաղ ։ խէ · 3 ։
արօր ։ հորոր ։ սաբան ։ ծդ · 2 ։
արօրադրել ։ գետինը հերկել ։ սաբան սիւրմէք ։ ժբ · 2 ։
աւագափող ։ մեծ պոռու, կամ գուռնա ։ զբ · 7 ։
աւազանաւ ։ ջուրով լուած ։ խշ · 4 ։
աւազակն ։ լոտու, խըղճակի ։ խդ · 1 ։
աւաղ ։ խղճուկ ձայն ։ խդ · 3 ։
աւաղել ։ խղճալով ցաւիլ, վայ տալ ։ խթ · 2 ։ խշ · 4 ։
աւանդ ։ էմանէթ ։ դ · 4 · կամ, ընծայ ։ փիշքեշ ։ ծ · 2 ։
աւանդք արդարոյ ։ ցանած հունտերը՝ բան հասցընելու ։ թ · 2 ։
աւանդական ։ աւետարան գրող ։ կամ քարոզող ։ լշ · 6 ։
աւարել ։ թալլել ։ եաղմա էթմէք ։ ժբ · 3 ։
աւարտել ։ լմնցընել ։ պիթիրմէք ։ լշ · 5 ։
աւետական ։ ախուրախ ընող ։ աւետացող ։ միւժտէն ։ խբ · 2 ։
ափն (ափունք ։) ծովու կամ գետի քենար ։ գըյը ։ Դ · 3 ։
ափշել ։ պապել մնալ ։ շաշմաք ։ լշ · 2 ։
Բաբելոն ։ պղպղոտ ։ ա · 1 ։
բագին ։ կուռքի պատկերը ։ փութ ։ խէ · 3 ։

բազմարկղան : շատ պօլ , պէրէքէթլի : ԽԶ · 3 :
բազմարիծ : շատ կերպով : չէք ճէրէկի : Ը · 1 :
բազմաբոյլ : խիտ շատվոր : չօքլուք : Է · 1 :
բազմարուրեան : շատ Թիւրլիւ հասով : ԳԴ · 11 :
բազմակ : նստելու , կամ կենալու տեղ : օթուրաք : Կ · 3 :
բազմական : նստելու տեղ , ինչպէս աթոռ , մինտէր , և այլն : կամ նըս_
տարաններ : ԽԶ · 1 · Ծ · 2 :
բազմակոհակ : շատ ալիքալը : ԺԵ · 3 :
բազմաձեռնեան : շատ ուժով · կամ զօրլու : ԳԸ · 9 :
բազմամանեայ : կերպ կերպ , շատ Թարզլը : ԽԵ · 2 :
բազմայածեան : շատ բանի պէտքով , չէք չէշիթ տօլաշան : Կ · 3 :
բազմատեսլեան : շատ Ճուզով : տայլը : ԽԵ · 2 :
բազմարժանի : խիտ արժանաւոր : փէք լայըգ : Ե · 1 :
բազմարկածեան : խիտ փորձանքաւ : պէլալը , խէթալը : ՀԴ · 2 :
բազմիլ : նստիլ : օթուրմաք : ԼԶ · 2 :
բազուկ : Թեւ մարդու : գօլ : ԼԹ · 2 :
բախումն : զարնելը , զարնուածք : վուրուշ , տօգունուշ : ԿԴ · 4 :
բախտ : կուռք : փութ : ԾԹ · 4 :
բահաղ : կուռքի անուն է : ԿԴ · 2 :
բաղկացուցանել : միաւորել : պիրլէշտիրմէք : ՀԵ · 7 :
բամբիշն ( բամբշան ) չալփարայ , զիլ : ԳԲ · 8 :
բանակիր : Ճարտասան , կամ բանաստեղծ : շայիր : ԾԴ · 2 :
բանակ : օրտու : ԿԶ · 3 :
բանապաՃոյՃ : ՃառթՃութ խօսող : ՀԴ · 2 :
բանդագուշել : խելագար , կատղած : չըլկըն : ԺԶ · 2 :
բանսարկել : բամբասել : պրթլամաք , տիլլէնմէք : ՁԵ · 5 :
բառաչ : ոչխարի , կամ կովու ձայն : ԺԵ · 2 :
բառայր : վարպետ , սիրուն շինած : ուստայ : ԳԲ · 8 :
բառիր : Ե · 1 :
բառերէ : ԳԹ · 3 : } քաշքշելու , մեղադրելու : տըրփըլը :
բարտնութիւն : բարք կամ Թակիէթ ցոյնող խօսք : Թաշիքէթ : ԳԲ · 8 :
բարբացուցական : բարք կամ Էչի ցըլնող : ԳԲ · 8 :
բարբառ : գլուն վէրի չէմը : ասյա : ԳԹ · 2 :
բարբանջումն : խենթութենէթ խօսք : ԽԶ · 4 :
բարբառ : խօսք , ձայն : սէօզ , սէս : ԳԲ · 8 :
բարգաւաճ : աստա : պօլ : ԽԶ · 5 : ՁԴ · 3 :
բարգաւաճութիւն : մեծնալը , առաջ գալը : ԽԶ · 2 :
բարգութիւն : գիզուելը : երջունեթը : Թ · 1 :
բարեբաստութիւն : յաջողութիւն : բախտ : ԼԴ · 10 :
բարեհրաւէր : ՚ի բարին յորդորող : ԾԹ · 3 :
բարենշմար : աղէկ , սիրուն : չիրքին : ԳԴ · 6 :
բարեպատեհ : խիտ յարմար : փէք ույկուն , ՀԷ · 1 :
բարեսերմութիւն : աղէկ հաւնող սալը : ՁԴ · 3 :
բարետեսիլ : անուշ ձայնով : տիւղէնլի : ԳԲ · 8 :
բարձունք : կուռք պաշտելու բարձր տեղեր : ՀԵ · 12 :
բարձրաբերձ : խիտ բարձր : փէք եիւքսէք : ԽՃԷ : ԳԲ · 11 :
բարձրայօն : ընդվիծ հպարտացող : Դ · 2 :
բարձր ( բարձից ) Թօփուխ : ԺԶ · 3 :
բարօյք : բարք , Թադիկէթ , ազնուութիւն , ադէթ : ԾԹ · 3 :
բարունակ : Ճուղ : դալ : Է · 2 :
բարուք : մեղադրանք : պէհանէ : ՁԶ · 3 :

բարօրութիւն ։ աղէկութիւն ։ իյիլիք ։ լա . 3 ։
բացական ։ հեռու կեցող ։ ուզագտաքի ։ թ . 2 ։
բացականագոյն ։ հեռուանց առած ։ զկ . 7 ։
բացատութիւն ։ ճիլեար ընելը ։ աւա խօսք ։ ձր . 5 ։
բացատրութիւն ։ բաժնուիլը, զատուիլը ։ թէվյի ։ զկ . 8 ։
բացարձակութիւն ։ ընդարձակութիւն . հեռաւորութիւն ։ ուզագլըգ . մէյտան ։ հկ . 3 ։
բացերեւութիւն ։ յայտնի երեւալը, մեկնութիւն ։ մանա ։ գգ . 17 ։
բաւանդակապէս ։ լման ։ պիւթիւնլիւք ։ կ . 4 ։
բաւել ։ կրնալ ։ գանիի օլմագ ։ իը . 3 ։
բաւիղ ։ աոչախ, զուրս եղած ծածք ։ խ . 2 ։
բեկեար ։ սատանայ ։ ծա . 4 ։
բեկանել ։ կոտրել ։ գըրըմագ ։ իէ . 2 ։
բեկութիւն ։ կոտրտուիլը, ջարդուիլը ։ ի . 2 ։
բեհեզեղերաց ։ ճանճերու ածք . կուռք մի է ։ ծա . 4 ։
բեմ ։ ատեան, բարձր տեղ ։ թախտ ։ իղ . 2 ։
բեմական ։ բեմը կեցող . այնինքն ատեկաց ։ ծկ . 2 ։
բերդամարտութիւն ։ խալէի ճէնկ ։ ղր . 5 ։
բերել ։ վրան ունենալ, կամ դիմանալ ։ կեօթիւրմէք, դայանմագ ։ գ . 2 ։
բերումն ։ պատահմունք ։ կելիշ ։ իէ . 2 . կամ, բանի մը հանէ ընկնե-
լը ։ լկ . 2 ։
բեւր ։ հազար եղած բան ։ ժը . 2 ։
բժժանք ։ կախարդական ծրար ։ չըգըն . թըլըսըմ ։ կկ . 4 ։
բիր (բրի ։) աչից պէպէք ։ կէ . 2 ։
բիծ ։ լէքէ, դէքքէ ։ գ . 3 ։ կամ, կածիծ ։ սիվիլճիկ ։ կթ . 2 ։
բլուր ։ թէփէ հէր, պայիր ։ խ . 2 ։
բնաւ ։ բոլոր . ամենն ։ պիւթիւն . ճիւմլէ ։ լէ . 1 ։
բոլորապատ ։ բոլոր ընծայուած ։ հէրթարաֆէ փիւշքէշ օլմուշ ։ ա . 1 ։
բողբոջ ։ ֆիտան, ֆիլիզ ։ լէ . 3 ։
բողք ։ մեծ ձայն . կամ ֆիրեատ ։ է . 2 ։ իա . 2 ։
բոյլ ։ ժողով ։ ճիւմհիւռ ։ լա . 2 ։
բոսոր ։ կը . 3 ։ | կարմրած, արիւնոտ . կասկարմիր ։ ղըմ ղըր-
բոսորային ։ կկ . 1 ։ | մըզը ։
բոտոտ ։ փորու սոլուճան ։ կթ . 2 ։
բոցակիծ ։ կրակի պէս կծող, կեռացընող ։ կթ . 2 ։
բոցաշիչութիւն ։ ալէֆլի նէֆէս ։ զա . 3 ։ զհ . 2 ։
բուժեալ ։ բժշկուած, բըընացած ։ ծէ . 3 ։
բուծեալ ։ սնած, պէսլէնմիշ եղած ։ ծէ . 3 ։
բուռն ։ ամուր, ուժով ։ զօրլու ։ ժը . 2 ։
բուռն հարկանել ։ ձեռք զարնել ։ էլ վուրմագ ։ լա . 2 ։
բուրվառ ։ պուխուրտան ։ է . 2 ։
բուք ։ ձիւնով քամի ։ գըյամէթ ։ հա . 4 ։
բռնալ ։ ճերմկցուցած ։ պաստառալը ։ իէ . 3 ։
բռնալիր ։ ափուճը լեցընող, փէք մեծ ։ ժկ . 3 ։
բռնաւորական ։ ուժով ճէնկէճի ։ կիւլէշճի ։ գկ . 18 ։
բռնամարտիկ ։ կիւլէշճի, փէհլիվան ։ գկ . 13 ։
բրել ։ գետինը փորել ։ եէր գազըմագ ։ հկ . 2 ։
բրտեր ։ բուք կամ թուֆան բերող ։ իէ . 3 ։
բրտացեալ ։ բուքով կամ թուֆանով ծեծուած ։ ժէ . 1 ։
Գաղաթն ։ թէփէ . գաֆա ։ լկ . 2 ։
գալարել ։ ոլորել ։ պիւզիւլմէք, տիւրիւլմէք ։ հթ . 2 ։

գահ, կամ գահոյք : մեծ աթոռ : թախտ : լը · 2 : խթ · 2 :
գահաւորակ : թախտրաւան : հէ · 3 :
գաղձնաւոր : զարդարելը խառամ՝ կամ գաղձ խառամ լցուած : ծզ · 2 :
գաղտնակուր : ծածուկ՝ կամ քիչ քիչ ուտող · ինչպէս որդը · ցեցը · և այլն : կթ · 2 :
գայլխան : մրջիւն : դը · 4 :
գան : ծեծ : քօթէք, տայաղ : լէ · 3 :
գանչութիւն : կանչելը, սուր ձայն : եօթմէք : գդ · 8 :
գարնանագոյն : գարնան կապուած, ազնիւ եղած : ծզ · 3 :
գարշապար : ոտից տակը : տապան : ժզ · 2 :
գարշահոտ : մուրտառ բանով լեցուած : խէ · 3 :
գաւիթ : տան բակ : աւլը : լդ · 7 :
գգուել : սիրով պլեւ ընել : եօզշամիշ : հէ · 14 :
գեհեան : խոր անդ, դժոխք : Ջեհէննէմ : է · 2 :
գեղ : տեսք : կէօստէրիշ · սէյիմթ : ծզ · 2 :
գեղայօրէն : գեղեցիկ յօրինած : սիրլի : գզ · 24 :
գեղմն : բուրդ : եափաղը : ծը · 1 :
գետահերձ : գետը պատռող, Չզզող : հէ · 10 :
գետնաքարշութիւն : գետինը սուրբերմը քսուելը · այսինքն, աշխարհի բա-
նական հանգիստներուն : լը · 2 :
գեր : մենձ : փայելի, խաւաքին : դ · 2 :
գերապանծեալ : նմանին վերաւթեամբ, կամ գարմանալի կերպով : հեր-
մերթեէ : զզ · 8 :
գերանակիր : սիրելի ունող : սիրելի : խէ · 3 :
գերաշխարհան : խիստ լուսող : ինչիօ ագայան : խզ · 5 :
գերաշխարհիկ : մենծ փայելի, փէք խեթելը : դ · 2 :
գերաքոտ : խիստ ագնիւ : նէձըհաւր : զզ · 5 :
գթել : սկրդեղ ընկնել : աքամիշ : ծէ · 3 :
գժգմնութիւն : երեա կախեր : սուրաթլըն ասմիշ : խէ · 2 :
գժտութիւն : կռիւ : զօղքայ · չէքիշ : խէ · 2 :
գինդ (գնդի) օղ : քիւփէ : լդ · 1 :
գիշաւել : բղըբաել : փատալամիշ : ժէ · 1 :
գիշերավար : խրխխան կամ գիշերվան առաջ, կամ սառմահայ : լէ · 1 :
գիջութիւն : թացութիւն : ըտլըկ, նէմլիք : զզ · 20 :
գխախախ : մեղերը չալը, կերեւ չորցած անկուած : ժը · 2 :
գլխաշոք : գլուխը ծածկող : պաշ էօրթէն : լդ · 1 :
գլխաւորել : լինգընել, գլուխ հանել : պաշա չըգարմիշ : խթ · 1 : գլ-
խաւորեալ յանդուորութի : լինած թէրմիշ ըլմիշ : թ · 3 :
գծագիր : այրենին գրերը : զզ · 22 :
գծագրել : գծով նշան ընել : չիզմամիշ : ժը · 3 : կամ, խոնցընել · ցը-
ցընել : նըշան վերմէք, տաշըրմաք : չ · 3 :
գձուձ : խեղճ : սէֆիլ : է · 2 :
գոզնիք : տանցէք, ըսէք : աէյին : հը · 1 :
գողարշի : պատրուակ ջրի կամ կրակի : պուխար : դ · 3 :
գողարանան : կախուցիկ, փախուստ : ձաղից : խզ : 2 :
գոյ (գոյի) եղած բան մը : ը · 2 : կամ բանի մը չէնքը · ձեր : սիշիմ
է · 1 : անկայուն գոյի : խախուտ չէնքով :
գոյականութիւն : ըլլալը, չէնքը : հէ · 12 :
գոյարան : հալել ընող : փաթ եօխծի : ձզ · 1 :
գոյժ (գուժի) բօթ ձայն : մէօտհիշէթլի խաբէր : է · 3 :
գուող : խլխան : զաղից : դ · 3 :

գործակալութիւն : շէնք · ըլլուածքը : հոփը : գկ · 20 :
գործարան : բանելու տեղ : ֆէբրիգա : ըկ · 2 :
գործենեաց : բանին ատեր կամ գլուխը · վարպետ կամ գաղփող : կամ
  ընող , բանող : կափճի : ձկ · 1 :
գորով : սրտի գութ , Թալկութիւն : խԹ · 2 :
գումար : ժողով : ճիւմլիւն : ՀԷ · 12 :
գումարտակ : սիւրիւ , պէօլիւկ : Կ : 3 :
գունդակութիւն : գոյն առնելը : պօյանմաք : կկ · 2 :
գունդ : ժողով : պէօլիւք : Կ · 1 : կամ , գունտ , կլոր շէնքը : գկ · 8 :
գունել : ներկել , ռէնկ տալ : պօյալամագ : ըկ · 2 : գջ · 17 :
գուշակ : խմացընող : խապար տուող : ժկ · 2 :
գուպար : ճիւմլիւն , պէօլիւկ : Կ · 4 :
գռիչ : ճամբայ : սօքագ : ԿԷ · 2 :
գրաբանական : գրով բացած : ըկ · 1 :
գրաստ : տավար , հայվան : ժկ · 3 :
գրաւ : փէկ , ռէհին : ժա · 1 :
գրաւական : ռէհին , կամ չէհիզ : Ճ · 2 : կամ փէկ : գկ · 16 :
գրաւականել : փէկ , կամ ռէհին տալ : ըԺ · 3 : կամ , գրաւ դնել : ըկ · 1 :
գրաւել : բանի մը տակ դնել , սպաննելընել , գրաւ դնել : Թ · 1 : խԹ · 1 :
  գրաւի · կխտաբարկուի : Ի · 1 :
գրգռել : նախնի ստանել , փափաք մեծցընել : ժկ · 3 : խջ · 2 :
գրգռութիւն : բարակ միտք : նախնի մեծուն , կամ մանուն : գկ · 9 :
գրել : ստկել : եազմագ : Ծ · 1 :
գրկանք : գրկելը : գուճագլամաք : ԽԼ · 2 :
գրուան : ցորենի հոլէկ , չինիկ : ըԻ · 3 :
գոչել : խածխծել , ծակծկել : ԺԼ · 1 :
գտանել : ճարել : գուրթուլմագ : խկ · 1 :
Դադար : դադրելու , կամ հանգչելու տեղ : ասուրաց : Խ · 3 : բաստի
  դադարք : խլխալան կամ խռկէլէ : խկ · 2 :
դամբանական : գօրշէկի , գանելու : մէրբուհ : խՆ · 2 :
դամբանաշատ : գօրշաշատ : փէկ գօրմաչ : ծկ · 3 :
դամբանութիւն : գառնութիւն , ընկերութիւն : ամբրէր · ծկ · 4 :
դայլար : կանանչեղէն , խոտ : օթլուգ , եէշիլ : Կ · 2 :
դահիճ : ճէլլատ : խա · 2 :
դանդաղ : էհմալճի : Հ · 2 :
դանդաղութիւն : Թուլութի , անճրկելը : ձկ · 2 :
դանդաչել : երերալ , ծուռնուռ քալել : ԺԹ · 3 :
դանդաչկոտանել : Թանկ Թանկ չալել : կԻ · 8 :
դաշն : դաշն : շարթ : խկ · 1 :
դաշնադրել : դաշն դնել : շարթլաշմաք : Կ · 3 : Ժկ · 2 :
դաստակ : սիւրիւ , պէօլիւկ : կկ · 2 :
դաստառակ : պիլէկ : Ի · 2 :
դաստիարակել , կամ իլ : սորվել : էտէպլէնտիրմէք : ըԻ · 3 :
դաստիարակ : տավաճի , Համան : Ի · 1 :
դաստակենիք : վճիռ : սիճիլ , Կալամ : Կ · 1 :
դար : աշխարհի Թարեխները : ամէմի գէլման : ըկ · 5 :
դարան : պահուելու տեղ : պուսուանճագ եէր : ձԹ :
դարանակալ : փուսույէ կիրիճի , քէմինճի : խջ · 4 :
դարաւանդ : գլուխ : պայըր , պայըրլըգ : խկ · 3 :
դարբին : չիլինկիր : կկ · 2 :
դարման : պէտ : Թիմար , ալարման : Կ · 5 :

գաւաճան ։ խաղերայ ։ պատարքի ։ ծա ․ 5 ։
գաւառ ։ խարազ ։ հիլլեցող ։ կթ ․ 2 ։
գգմնի ։ գզմի խոտ ։ գաղտոց ազատի ։ կ ․ 5 ։
գեղեցիկ ։ ցոյցաւոր ըլլալ ․ անարիկին ձևով ։ գ ․ 3 ։
գեղեկալ ։ գարգզալով ․ երերալով ։ ձէ ․ 3 ։
գեղ ։ մերկերեալ ։ թ ․ 1 ։
գեղասասութիւն ։ գեհեր ։ գ ․ 4 ։
գենար ։ գաշեկան ։ գաւառաց արծթէ՝ կամ ասկիէ ։ ժէ ․ 3 ։
գերաքն ։ նեան ։ ահճճալ ։ գա ․ 1 ։
գեղք ։ կերալ ։ թարգ ։ գ ․ 2 ։ Նա գեմս ալոթից ։ ալոթքի թարգով ։
գմնեալ ։ ջաղ ։ եամաւգ ․ գալլոմ ։ է ․ 3 ։
գմնեպար ։ պէթ թաղիեթլի ։ գն ․ 12 ։
գմնիկ ։ փառչ է ։ ալ ախրեն ։ կթ ․ 2 ։
գմախաղնեալ ։ գերեգմանի մեթալին ։ ծբ ․ 3 ։
գմախալմառ ։ գմախային կամ խաղըշպառատչ քեաչ ռնալ ․ կամ քե-
քը գեհիրլի ։ ծգ ․ 1 ։
գմախարակայն ։ փոքը գմախլի պէս կըլլալ ։ ժ ․ 1 ։
գմաւարամիրելի ։ գմաւար անաշնալա ․ լեզի ։ խբ ․ 3 ։
գմաւալք ։ ալատած կամ քարոտ անդաւանք ։ ասաշ հեր ․ գաղչ ըդ ։
խ ․ 2 ։
գմրել ։ խաղի կամ մարդու խաղեաւթի ընել ․ սեղալէն չալմաք ․ նեղը-
եթմք ։ ծէ ․ 4 ։
գի ։ մեաած մարմին ։ լեչ ։ ժբ ․ 2 ։
գինաղրաւութիւն ։ սրատնց րանի մէջ մանելը ․ աղմեչ ընելը ։ կ ․ 4 ։
հա ․ 1 ։
գինաղրութիւն ։ ներհակութիւն ։ գրթըք ․ թեկալեք ։ է ․ 1 ։ ձգ ․ 1 ։
կամ, գեմ գնելը ։ գաւըը գամար ։ կէ ․ 1 ։
գինակ ։ երեսի ծամք ։ առքէթ ։ կ ․ 1 ։ Գինակս գինակս ։ ալ ալ ․ թիւր
լիւ թիւրլիւ ։ լթ ․ 3 ։
գինակերպութիւն ։ օրինակ ։ նաւմանէ ։ գգ ․ 4 ։
գինասութիւն ։ փերաւեալ խաղ ։ մարդի սեալ ։ գգ ․ 19 ։
գիմել ։ վրա վազել ։ սիրաւլ եթմք ։ գ ․ 2 ։
գիղաւած ։ գաչիլք ։ ասգամքչ ։ գբ ․ 5 ։ կամ, պատահմանք ․ գլխու գա-
լեք ․ փորձանք ։ գաղա ։ ա ․ 2 ։
գիտակ ։ երես ։ ալիքաթ ։ կէ ․ 2 ։ կամ, ծայր ։ ուճ, թեփե ։ գբ ․ 9 ։
գիւաճենճեր ։ աստանալի գաւղան ընելու ։ ծա ․ 4 ։
գիւան ։ ախվան ․ կամ ակ՚իաքեր ․ քիւթիւկ ։ իգ ․ 2 ։
գիւանապետ ։ պէքիաւլատր ։ ծգ ․ 2 ։
գիւրափիրելի ։ խալայ փչելու ։ հգ ․ 3 ։
գգեակ ։ րերդ ։ գալէ ։ կէ ․ 1 ։
գշխայ ։ թագուհի ։ ասլթան ։ հէ ․ 3 ։
գոյգն ։ քէչ ։ ճիգլի ։ է ․ 1 ։
գում ։ խորհանթ ․ կալիա ․ եապանի ։ գգ ․ 12 ։
գաաիկան ։ աան խաթ ։ կթ ․ 2 ։
գարալ ։ քամաշրանք ։ գեմք ։ ծգ ․ 2 ։
գարավել ։ քամաշրել ․ վար զարնել ․ գեչ խաել ։ աշալա փարմալ ․
գեմք եթմք ։ ր ․ 2 ։ խթ ․ 2 ։
գրակառակա անանոազրութիւն ։ վրան գրած՝ կամ թախմեչ ըրած
անուն ։ գգ ․ 19 ։
գրանդ ։ գրան չեմ ։ գբ ․ 5 ։
գրաչմ ։ ալաւանք ․ նչան ։ կէ ․ 2 ։

դրուակ, կամ դրուագ ։ շինած բան, կամ խօսք ։ լդ ․ 8 ։
դրութիւն ։ դիրք ․ շէնք ։ հաստատ, պինդ ։ իգ ․ 2 ։
դրօշ ։ պայրաղ, սանճաք, թուղ, ալէմ ։ լէ ․ 1 ։ դ ․ 3 ։
դրօշեալ ։ կուռք ։ ը ․ 1 ։ կամ, ինչեւիցէ տաշած եւ փորած բան, ինչպէս սուրբ խաչը ։ գդ ․ 21 ։
դրօշուած ։ քարէ կամ փայտէ փորուածք ։ դը ․ 3 ։
Եդեմ ։ դրախտին երկիրը ։ լէ ․ 2 ։
եզող ։ միաւորող, կապող ։ ծդ ․ 2 ։
եզր ։ ծայր ։ քէնար, ուճ ։ խ ․ 2 ։
ել (բայ ։) ելլալ ։ օրինակ ։ լդ ․ 7 ․ ելով ։ ելլալով ։ օրինակէն, օրուէ ։ իդ ․ 2 ։
ել (անուն ։) ելք ․ ելլելը չզգմանը ։ գ ․ 1 ։ է ․ 3 ։ կամ, ճար ։ չարէ, եօլ ։ ը ․ 1 ։
ել եւ ելս առնել ։ մէկմէկու վրայ ելլել, կամ անցնիլ ։ աշխուժ, խառն ուման ։ խէ ․ 1 ։
եղենոյթ ։ հաստամ ։ գդ ․ 12 ։
եկամուտ ։ դրսէն եկած, եապանճի ։ խէ ․ 1 ։ գդ ․ 12 ։
եղեամն ։ զըրաղը ։ կը ․ 3 ։
եղեգնախառնեկ ։ պուշօր քամիշը ։ գդ ․ 11 ։
եղեռնութիւն ։ եղած բան ։ վաք օլմուշ շէյ ։ խթ ․ 1 ։
եղեռնագործ ։ խիստ չարագործ ։ սարքաճայ ։ գ ․ 2 ։
եղեռնալուր ։ չար բաներ մտիկ ընող ։ իը ․ 3 ։
եղերական ։ լալու՝ կամ ողորմուկ խօսք ։ կը ․ 1 ։
եղերերգութիւն ։ ողորմուկ երգ ։ խէ ․ 1 ։
եղեւին ։ սէրվի, կամ չամ աղաճը ։ կա ․ 3 ։
եղէգնախախ ։ չորցած քամիշէ շինած, կամ ժողված ։ է ․ 3 ։
եղինճ ։ բարակին խոտ ։ հա ․ 2 ։
եղծական ։ փճանալու ։ եօզ օլաճագ ։ ծա ․ 1 ։
եղծանել ։ աւրել, փճացնել ։ եօզ էթմէք ։ լդ ․ 8 ։
եղկութիւն ։ խեղճութիւն, կամ վայ տալը ։ իգ ․ 2 ։ ծ ․ 1 ։
եղջիւր ։ պոյնուզ ։ հէ ․ 3 ։
եմուկ ։ ակրէֆին յամն՝ կամ սիփէր կողմը ։ խ ․ 2 ։
Ենթադրել ։ ընել ։ էթմէք ։ ժա ․ 2 ։
եպերանք ։ մեղադրանք ։ սիթէմ ։ իը ․ 4 ։
եպերել ։ մեղադրել ։ սիթէմ էթմէք ։ ձը ․ 5 ։
եռալ ։ գըթլալ, վխտալ ։ գայնամաք ։ կթ ․ 1 ։
եռապատուական ։ իրեք լայ կամ ճառագայթ ունող ։ հէ ․ 7 ։
եռանդն ։ եփ ելլելը ։ գայնալըշ ։ խէ ․ 5 ։
եռօրեայ ։ իրեք օրուան ։ իւչ կիւնլիւք ։ լդ ․ 5 ։
երախայ ։ մկրտելու մարդ ։ գդ ․ 18 ։
երախայրի ։ առջի պտուղ ։ թուրֆանտա ։ լա ․ 2 ։
երախան ։ սրյա ․ պէշքէշ ։ իդ ․ 1 ։
երակ ։ տամար ։ իդ ․ 3 ։
երամ, կամ երամակ ։ սիւրիւ ։ լա ․ 3 ։ իդ ․ 1 ։
երանգ ։ գոյն ։ բոյէնկ ։ լդ ․ 2 ։ գդ ․ 17 ։
երաշխաւորել ։ հաստատել ։ թահհուդլանմաք ։ կը ․ 2 ։
երասան, կամ երասանակ ։ կէմ, ախզլըն, դիզկին ։ ի ․ 2 ։ ձը ․ 2 ։
երբ (երբի ։) } ատեն ։ վագըթ ․ զաման ։ ձը ․ 6 ։ լդ ․ 3 ։
երբեք (երբեքի ։) }
երգիծանել՝ սիթէմ ալ ։ կդ ․ 2 ։
երգութիւն ։ երգելը ․ կանչելը ։ խայըրշ ։ ի ․ 1 ։
երգ ։ երգեր ․ տաղեր ։ տաղ ։ ժը ․ 3 ։ գա ․ 2 ։

երեսակ ։ տեսք ։ կէօստէրիշ ։ կգ · 2 ։
երեսպաշտութիւն ։ սուտ երեւմունք ։ խէյալ ։ դգ · 10 ։
երեւիլ ։ խաւաց ոչիլ, կամ կիւմէ ։ կը · 3 ։
երեւոյթ ։ տեսք · բանին թարզը կամ ինչ ըլլալը ։ իգ · 3 ։ խ · 3 ։ կամ, տեսիլ · աչքի երեւցածը ։ խը · 4 ։ կամ, երեւելի, տեսնելու, աչքի տակ ընկած ։ լգ · 4 ։ գ · 4 ։
երիքարեան զինակցութիւն ։ իւշկիլլամէ սալմիշ ընելը ։ խէ · 2 ։
երիզապատեայ ։ երկան լաթով պատած ։ ծը · 3 ։
երիթացեալ ։ չորցած, ցամքած ։ գուրումուշ ։ խթ · 2 ։
երիկամունք ։ պէօվրէկ ։ ժգ · 1 ։
երինջ ։ կէնճ կով ։ տանա ։ խն · 2 ։
երիցութիւն ։ մեծութիւն ։ պէօյիւքլիւք ։ ժգ · 1 ։
երկակչիւ տարրութիւնք ։ երկու մեկմեկու կապուած բան ։ դգ · 2 ։
երկգլխի ։ երկու կերպ ։ իկի թարզ ։ իդ · 2 ։
երկեանութիւն ։ շիւպհէ ։ ժա · 1 ։
երկմիտ ։ վախկոտ ։ գօրգագ ։ դգ · 11 ։ կամ, անհաւատարիմ ։ խային ։ ծգ · 2 ։
երկմտութիւն ։ շիւպհէ ։ ժէ · 2 ։ կամ, վախ ։ գօրգու ։ ձգ · 2 ։
երկն (երկունք ։) ծննդեան ցաւ ։ ժը · 1 ։ կամ, ինչ և իցէ ցաւ, աշխատանք, զահմէթ ։ իդ · 1 ։
երկնել ։ ծննդեան ցաւ քաշել ։ ի · 2 ։ կամ, ցաւով փէյտահ ընել ։ ա · 2 · գ · 3 ։
երկուորեակ ։ ջուխտ եղներու, կամ մարդու ։ ծգ · 2 ։
երկրաքարշութիւն ։ երկրաւոր բաներու համեստ ընելը ։ Ն · 3 ։
երկրորդութիւն ։ կրկնելը · թէքրարլամըշը ։ դգ · 10 ։
երկք ։ մեծ աշխատանք ։ չալըշմայ, զահմէթ ։ Է · 1 ։
երփն ։ մէվ կամ մութ գոյն ։ հա · 2 ։ դգ · 12 ։
եւզինծիւղ ։ եղ տուող, ինչպէս զէյթինի ծառը ։ լթ · 2 ։
Զազիր ։ գարշելի ։ մուրտառ, նէփրաթ ։ ժթ · 3 ։
զազրաթորմի ։ խիստ գարշելի ։ փէք մուրտառ ։ կթ · 2 ։
զազրանալ ։ պղծուիլ ։ մուրտառլանմագ ։ իթ · 3 ։
զակատիլ ։ բանի մը սէր կապել, կամ խէնթենալ ։ աշկը օլմագ ։ ի · 2 ։ խը · 3 ։
զայրանալ ։ սրդողիլ ։ տարըլմագ ։ իգ · 2 ։
զանդուած, կամ զանկուած ։ մէկտեղ խառնած բան ։ քիւթլէ ։ իգ · 2 ։ հա · 1 ։
զատածեալ ։ Ը · 1 ։ տես զարտուղի ։
զարմանութիւն ։ զարմանալի բան ։ հիքմէթ ։ խթ · 1 ։
զարտուղի ։ ճամբէ ծռած ։ եօլտան շաշմըշ ։ Ի · 1 ։
զգածիլ ։ պըրշկիլ ։ պօւլաշմագ ։ Հ · 2 ։
զգայարեկ ։ զգայութիւնը առնուած ։ իը · 3 ։
զեղծանիլ ։ սուրիլ, զլխէ ելլել · եւս ըլլալ ։ պօզուլմագ, ֆէնայէ կիթմէք ։ Ծ · 4 ։ ծէ · 1 ։ ձէ · 3 ։
զեղուլ ։ թափել · պօլ լեցնել ։ լէ · 1 ։
զեղուն ։ լեցուն ։ տօփտօլու, դաշկըն ։ խդ · 3 ։
զենանիլ ։ մորթուիլ ։ պօղազլանմագ ։ լգ · 3 ։
զեռուն ։ պէօճէկ, սօլուճան ։ ժգ · 3 ։
զետեղիլ ։ տեղ մը կենալ ։ տուրմագ, եէրլէշմէք ։ կը · 3 ։
զերծանիլ ։ ազատիլ, խալըսիլ ։ գուրթուլմագ ։ Ծ · 2 ։ կամ, բացուիլ · չըլըպախմալ ։ խը · 2 ։
զերծումն ։ բանալը, վերցնելը ։ աչմագ ։ լգ · 1 ։

գգուանք ։ գանկը ։ թիթմօրնմէ ։ Դ · 1 ։
զէն (զինու ։) սիլահ փուսատ ։ ԽԴ · 2 ։
զլացող ։ ազէկութի չինանչցող՝ կամ ճիրէար ընող ։ ՁՆ · 3 ։
զընդալ ։ տատանիլ, չորչորուիլ ։ էզիլէթ չէքմէք ։ ԺԴ · 1 ։
զընդան ։ զընտան ։ ԺԴ · 1 ։ ԶԱ · 1 ։
զխտ (զըստի ։) խաչմաներուն տակի կողմը ։ և նմանութիւ, նաւին տա-
կի կողմը ։ ԽԵ · 2 ։
զուրակին երթալ ։ ինք զինք մոռցընել ։ կէնտինի եօլախուրմէք ։ Է · 3 ։
զկծեցուցիչ ։ սիրտ կսկծցընող ։ իւրէք աճըէն ։ ԼԹ · 3 ։
զկծիլ ։ սրտին քեար ընել, կիւճէնմիշ ըլլալ ։ ԽԹ · 2 ։
զմրաղք ։ ուրախութիւն, փայէլմունք ։ զէվք ։ ԾԵ · 3 ։
զմուռս ։ անըլզէնտ, միւռր ։ ԶԴ · 8 ։
զմռսելի ։ անըլզէնտով լեցուած ։ ԶԴ · 6 ։
զննել ։ ձեռքով նայիլ, թէֆթիշ ընել ։ ՀԹ · 1 ։
զոյգ ։ ջուխտ ։ չիֆթ ։ Է · 2 ։ կամ, պարապար ։ ԾԻ · 1 ։
զօղ, կամ զօղական ։ պաղուկ ։ ֆէրրահ ։ ՁԴ · 1 ։ ԾԴ · 1 ։
զօվացուցանել ։ պաղըշարկել ։ ֆէրրահլանթըրմագ ։ ԿԻ · 1 ։
զուարակ ։ կէնճ եզ ։ թօսուն ։ ԼԶ · 2 ։
զուգագործ ։ նման գործող ։ ԺԵ · 2 ։
զուգակցութիւն ։ հաղորդ, մասնակից ։ իշթրագ ։ ՀԵ · 7 ։
զուգաճանապարհ ։ ԶԴ · 4 ։ | մէկ ճամբա գացող. մէկ կերպ քալող
զուգաշաւիղ ։ ԽԻ · 2 ։ | ալիր եօլա կիտէն ։
զուգափառ ։ մէկ փառք ունող ։ պիր փայէլի ։ ԼԴ · 3 ։
զուգիլ ։ մէկ ըլլալ ։ պիրլէշմէք ։ ԿԹ · 1 ։
զուգութի ։ միաբանութի, մասնակցութի ։ իշթիրագ ։ ԶԴ · 15 ։
զուր ։ փուճ ։ պօշ ։ ԽԻ · 2 ։
զոփալ ։ սարսափիլ, դողալ ։ թիթրէմէք ։ ԽԹ · 2 ։
զրահ ։ զըրխ ։ ԿԻ · 2 ։
զրահեալ ։ զըրխ հագած ։ ԶԻ · 6 ։
զրահեաթական ։ փուճ, անպատուղ ։ ԽԵ · 1 ։
զրաւել ։ վերջացընել ։ պիթիրմէք ։ ՀԱ · 3 ։
զօգել ։ կոցընել, կամ տեղաւորել ։ եէրլէշտիրմէք ։ Թ · 1 ։
զօրել ։ կրնալ ։ գատիր օլմագ ։ Թ · 1 ։
զօրէն ։ նման, պէս ։ կիպի ։ որպէս ․ Զօրէն գակէըդ ։ Ճերմակերեսի պէս ։
ագ իւզլիւ կիպի ։ ՀԵ · 1 ։
Է ։ եղած բան մը ։ զաթ ։ ԽԴ · 2 ։ կամ, ած, անսահման էակը ։ ԺՆ · 2 ։
էական ։ բուն էակը, կամ ածային բնութիւն ։ ԶԴ · 15 ։
էականութիւն ։ էութիւն, ամբ բնութիւնը ։ զաթը ։ ԾՆ · 1 ։ կամ, ե-
ղած բան ։ ԾՆ · 1 ։
էութիւն, եղածը, կամ ըլլուածքը ։ իւրև զէութի գործոց ։ անոնցի գործ-
քով եղածը ։ Դ · 4 ։
էրէց ։ առջինը ։ էվվէլքի ։ ՁԴ · 3 ։
Ըղձական ։ փափագելու ։ բաղըլէթլի ։ ԿԻ · 3 ։
ըղձակերտ ։ ախորժելու ։ հաղղ էանէճէք ։ ԶԴ · 21 ։
ըղձութիւն ։ ԶԴ · 1 ։ | բաղձանք ։ արգիւ ։
ըղձումն ։ Է · 3 ։ |
ըմբերանել ։ բերանը գոցել, պապանձեցընել ։ աղզընը գափաթմագ, սու-
էթմէք ։ ՀՆ · 2 ։ ԽԹ · 3 ։ Ի · 1 ։
ըմբիշ ։ փէհլիվան ։ ԶԴ · 13 ։
ըմպոշխնել ։ ծամել ։ չինէմէք ։ Ն · 2 ։ ըմպոշխնելի ։ ծամող ։ չինէյէն ։
ՁԴ · 3 ։

ըմբոստանալ : երես փակել, գլուխ քաշել : պաշ չէքմէք : ծզ · 2 :
ըմպահանք : արհամարհանք : բէզարլըգ, նէզարէթ : խը · 4 :
ըմպանակ : գաւաթ, կամ բաժակ : գատէհ, մէշրիպալ : Է · 2 :
ընդլուզանել, կամ ընդլուզանիլ : պաթմիշ ըլլալ : Գ · 3 : խբ · 3 :
ընդակից : բնական եղած, առարական : զաթի : կա · 1 :
ընդարմացուցիչ : թմրեցընող : ուէրսեմ եանէն : ձգ · 3 :
ընդդողել : դողը՝ կամ մէջը ունենալ : ծա · 4 :
ընդերք : փորուն միջինները, աղէք : գառըն իչի, պաղըրսագ : ըգ · 2 :
ընդ կրունկն : ետեւանից, ետ ետ : կէրի կէրի : հա · 2 :
ընդհատ : հեռու : պաշխա, Ֆարկլը : հբ · 2 :
ընդհարկանել : զարնուիլ, դպչիլ : տօգանմագ : խդ · 2 :
ընդմիջարկութիւն : զատելը : սէչմիշ ընելը : դգ · 6 :
ընդմիջել : արանքն առնել : ըէ · 3 : կամ էնկել ըլլալ : ձգ · 1 : կամ, արգե-
լուլ : գ · 3 :
ընդոստ : վեր ցաթկող, կամ ցաթկեցընող : գբ · 2 :
ընդոստնիլ, կամ ընդոստնուլ : վեր ցաթկել : սըչրամագ : Է · 3 : խգ · 3 :
ընդոտնել, ոտքի տակ առնել : չիղնեմէք : խէ · 4 : խբ · 3 :
ընդունայնաթող : փուճ՝ տեղը չարչարող : նաՖիլէ զահմէթ վէրէն :
խը · 4 :
ընդպաշտել : հրել, կամ անկարեւոր բանել, քշել տանիլ : ձէ · 3 :
ընդվայր : փուճ : նաՖիլէ : խբ · 4 :
ընդվզել : գլուխ քաշել : պաշ գալտըրմագ : կդ · 4 :
ընթացքութիւն : տակ առնելը, կամ ընկնելը : խէ · 2 :
ընթացք : գնալը, ճամբա, վարմունք : կիտիչ, եօլ, դավրանըշ : գ · 1 :
ժգ · 2 :
ընթերակայ : մօտը կեցած : եաքընտա տուրան : ժէ · 4 :
ընթրիք : իրիկուան կերակուր : աքշամ թաամը : դգ · 21 :
ընծիւղել : Ֆըշխըրմիշ ընել, կամ ըլլալ : ըբ · 2 : հը · 3 :
ընկենուլ : վար ձգել : աշաղը պրագմագ : ըէ · 3 :
ընկողին : տէօշէկ : ժը · 2 :
ընկողմնիլ : ընկնիլ պառկիլ : եաթմագ : զա · 3 :
ընկճիլ : ամփիլ : չէքիլմէք : խէ · 4 : կամ, խաղխաթի ըլլալ : ղ · 3 :
ընկրկիլ : ետ ետ քաշուիլ : կէրի չէքիլմէք : հա · 2 :
ընձեռել : ձեռքով տալ : վէրմէք : Ե · 4 : Ժ · 2 :
ընչեղ : հարուստ : զէնկին : Հ · 2 :
ըսթափիլ, կամ սթափիլ · խելքը գլուխը գալ : այըլմագ : Ժբ · 3 :
ըստանձնել : շալկել : սըրթլամագ : ծէ · 3 : հէ · 3 :
ըստգտանել, կամ ըստգտանիլ : տես ստգտանել :
թաթաւիլ : թաթխուիլ : պուլաշմագ : դգ · 12 :
թալկանալ : թուլնալ, ուժը թափիլ : մէհման օլմագ : Է · 2 :
թախանձ : խիստ աղաչելը : նիազ : խէ · 3 :
թախծիլ : կամ, թախձիլ : տրտմիլ : թասալանմագ : Ժա · 1 :
թառամիլ : թոռմիլ : սօլմագ : իթ · 2 :
թառանչ : հառաչանք : ինլէյիշ : իգ · 2 : խը · 2 :
թատերք : խաղի տեղ, կամ մէյտան : լա · 2 :
թարահատ : տես 'ի լուծն : Կ · 20 :
թարգմանել : մեկնել, իմացընել : թէՖսիր էթմէք : իթ · 2 :
թարթափումն : աչք բանալ գոցելը : ըէ · 3 :
թարմատար : փուճ, անշահ : ծգ · 2 :
թափանցական, կամ թափանցանց : ներս անցնող, կամ մտնող : հէ ·
7 · 12 :

Թափանցանցութիւն ։ անցնելու կամ մտնելու տեղ. ծակ. ինչպէս ոչքը, կամ անկածը ։ գժ · 21 ։
Թափառիլ ։ անտիրկին ըլլալ ։ ժն · 2 ։
Թափուր ։ պարապ ։ պոչ ։ ծգ · 3 ։
Թաքչիլ ։ պահուըտիլ ։ ապաստանիլ ։ ը · 1 ։
Թեզան ։ մանած թել ։ պէզ արըը ։ գժ · 24 ։
Թելադիր ։ խրատ տուող, յորդորող ։ էջխիթ վէրէն ։ խը · 2 ։
Թերամտութիւն ։ խելքի պակասութիւն ։ ապըլ գլխանը ։ գա · 3 ։
Թերափ ։ կատարուածից գործքը ։ համոյիլ ։ խն · 3 ։
Թերի ։ պակաս ։ դատարկ ։ լէ · 2 ։
Թերութիւն ։ պակասութիւն, անկատարութիւն ։ դատարկութիւն, էքսիկլիք ։ գ · 2 ։ լա · 2 ։
Թև ։ զանտ ։ ժգ · 3 ։ կամ, անումն ։ գ · 3 ։
Թևապարփակ ։ Թևով գոցած, Թևին տակն առած ։ լգ · 4 ։
Թիկն (Թիկունք ։) կռնակ ։ ողըթ, արքա ։ ժէ · 1 ։
Թինդս տանիլ ։ Թնդալով քալել, վազել ։ հա · 3 ։
Թիւր ։ ծուռ ։ էյրի, եանլըշ ։ ի · 3 ։
Թխամախ ։ մութ տեսքով. սեցած ։ գէֆիրլի ։ խ · 3 ։
Թմբուկ ։ Թէֆ ։ կամ անկըծի նէրսի մաշկը ։ գժ · 20 ։
Թշնամանք ։ անարգանք ։ ռէզալէթ, անաշնամ ։ լէ · 3 ։
Թշուառաբեկան ։ Թշուառ բախտով վատաբեկած ։ խն · 3 ։
Թոշակ ։ Ճամբու պաշար ։ ժ · 2 ։ կամ, հախ, էօլէֆէ ։ խդ · 3 ։
Թոզեալ ։ ծեծքած, էօրսէլէնմիշ եղած ։ հբ · 3 ։
Թուլադաշնակեալ ։ աղբէնը Թուլցած կամ աւրած ։ գժ · 20 ։
Թռիչք ։ Թռչիլը ։ ուչուշ ։ ի · 2 ։
Թռչարան ։ Թռչելու գործիք ։ ինչպէս նաւին եէլքէնը ։ խն · 2 ։
Թրծեալ ։ փուռը եփած ։ փիշմիշ ։ ի · 2 ։
Թքնուլ ։ Թքնել ։ Թիւքիւրմէք ։ հէ · 2 ։
Թօթափել ։ Թափթփել, Թօթվել ։ սիլքմէք ։ ժթ · 4 ։
Ժամանակացուցանել ։ հասցընել ։ եէթիշտիրմէք ։ ձն · 1 ։
Ժամանել ։ հասնիլ ։ եէթիշմէք ։ լբ · 2 ։
Ժայթքել ։ փսխել ։ գուսմաք ։ կն · 1 ։
Ժանգ ։ աղու ։ զէհր ։ գ · 1 ։ կամ, կանանչեղենաց ոժիլ ։ խա · 2 ։
Ժանիք ։ գազանի կեռիք ։ Ճանավար տիշլէրի ։ գ · 1 ։ ժթ · 2 ։
Ժիր ։ արինճ, չուստ ։ համարձակ ։ է · 2 ։
Ժլատ ։ նէքէս, խըսիսը ։ ծգ · 2 ։
Ժխտել ։ ինքեար ընել ։ ր · 1 ։ խգ · 2 ։
Ժողխեալ ։ տրորած, նեխած, ջըջըկած ։ հդ · 2 ։
Ժպտիլ ։ քթին տակը ծիծաղիլ ։ ըլըրթմաք ։ խն · 3 ։
Ժպրհիլ ։ յանդգնիլ ։ քիւսթախլըք էթմէք ։ կ · 4 ։
Իժ ։ էնկէրէք եըլանը ։ Ծ · 4 ։
Իղձ ։ բաղձանք ։ հավէս, արզու ։ ա · 1 ։
'ի մասնէ ։ կտոր մը ։ պիր միգտար ։ խն · 1 ։
Ինքնարուն ։ ասըլ բուն, ասըլ ինքը ։ գ · 1 ։ կամ, զաթը ։ ձա · 3 ։
Ինքնագործ ։ ինքնիրեն ըրած ։ ի · 2 ։ կամ, ինք իր գլխուն դացող ։ քէնտի պաշընա կիտէն ։ ծգ · 2 ։
Ինքնագրաւ ։ ինք զինք մատնող ։ խա · 1 ։
Ինքնադարով ։ ինք զինք մեղադրող ։ խբ · 2 ։
Ինքնաթոյն ։ ինք իրեն զէհիրլի ։ ձգ · 3 ։
Ինքնակշտամբելի ։ ինք զինք յանդիմանող ։ խթ · 2 ։
Ինքնասաստ ։ ինք իրմէն բանըկող ։ գժ · 15 ։

ինքնարշաւ ։ ինք իրեն վազող ։ կզ . 1 ։
ինքնարգոյ ։ ինք զինք մեծցընող ։ քէնախնէ ալ յէնէն ։ ժ . 2 ։
ինքնագոր ։ ինք իրեն ծեծկըւող ։ ծթ . 1 ։
ինքնօրէն ։ ինք իրմէն իմաստ ըրած ։ կա . 1 ։
իշանդամ ։ իշու պէս ամօթ ունող ։ կ . 4 ։
իսկ (անուն ։) ասըլ բանը ։ զաթ ։ ժէ . 2 ։ իզ . 4 ։ իսկոյն ։ այսինքն իս-
կութեանն, ասըլ բանին ։ գդ . 18 ։
իսկ և իսկ ։ իրաւցնէ ։ կէրչէքտէն ։ իէ . 3 ։ գդ . 19 ։
իսկակից ։ մէկ էութիւն ունող ։ հէմզաթ ։ լդ . 4 ։
իսկութիւն ։ էութիւն ասըլ բանին ինչ ըլլալը ։ զաթը ։ ժա . 3 ։
իսպառ ։ բոլորովին, խիստ ։ փէք ։ ժա . 1 ։
իրաւակշիռ ։ շիտակ կշռող ։ հագ թարթան ։ ճ . 4 ։
իրաւամերժ ։ հախ ակըը վարնտած ։ իթ . 2 ։
իւղաւորական ։ պարարտ, եաղլը ․ այսինքն ջերմեռանդութեամբ խառ-
նուած ։ գդ . 6 ։
իւղել ։ օծել ։ եաղլամաք ։ գդ . 5 ։
իւղենի ։ եղոտ ծառ ։ գդ . 9 ։
իւղեփեցական ։ եղանիի կամ մականիի զէնահալթով եփած ։ գդ . 8 ։
իւրակերտ ։ իրեն շինածը ։ հէ . 3 ։
Լայնատարր ։ լանուարձակ ։ մէյտանը ։ ձբ . 1 ։
լանջք ։ կուրծք ։ կէօկիւս ։ լգ . 1 ։
լաստ ։ սալ ։ կամ նաւուն տակը ։ իէ . 2 ։ կամ, նաւ ։ կէմի ։ իգ . 2 ։
ձէ . 2 ։
լար ։ չուան ։ իփ ։ ձէ . 3 ։
լափլիզող ։ լափելով լզող, չորցընող ։ ժ . 1 ։
լեարդ ։ ճիյէրի ակուց ։ իզ . 3 ։
լեռնակարկառ ։ լեռան պէս գիզուած ։ ժէ . 3 ։
լերկամորթն ։ բարակ կամ չըլլախ մորթով ։ կթ . 2 ։
լիճ ։ կէօլ ։ թ . 1 ։
լկանք ։ ձ . 2 ։
լկութիւն ։ լա . 3 ։ } չարչարանք ։ սխալէթ, էզիէթ ։
լճակ ։ աղբիւր ։ գբ . 10 ։
լկնիլ ։ աներեսութիւն ընել ։ էտէպսիզ օլմաք ։ կգ . 4 ։
լկտութիւն ։ աներեսութիւն ։ էտէպսիզլիք ։ լա . 3 ։
լոյծ ։ ջրլի, կակուղ ։ սուլու ։ լգ . 4 ։
լուծ ։ պոյունտուրուգ ։ լգ . 1 ։ լուծ կշռոյ ։ թէրազիին թէլը ։ թ . 1 ։
լուղակ ։ ծովու կամ ջրի կենդանի ։ հա . 3 ։
լուսարանել ։ յայտնել, մեկնել ։ պէյեան էթմէք ։ դ . 1 ։
լուսակիր ։ լոյս ունող ։ նուրլու (յիշատակարան ։)
լուսանցոյց ։ լոյս անցընող կամ տուող ։ ժբ . 3 ։
լուսապաճոյճ ։ լուսով զարդարուած ։ չէօհլէլի ։ կէ . 2 ։
լուսնական ։ լուսընկայէն եղած ։ այսանի զիւհր ալմուշ ։ ձբ . 6 ։
լուտացող ։ չար խօսող ։ քէմ տիլլի ։ ժա . 3 ։
լուցումն ։ վառելը ։ եագմաք ։ լա . 2 ։
լպրշեալ ։ աներես ։ սաւըղ ։ ծզ . 2 ։
լարան, տուն կենալու տեղ, ինչպէս տէօշէկը ։ գա . 2 ։
լսելափակ ։ անկանը գոցած ։ գուլաղը գափալը ։ ծ . 4 ։
լնացեալ ։ ճերմըկած ․ ինչպէս բըրնցած եալրայլին տեղը ։ իգ . 12 ։
լրականութիւն ։ կատարեալ ․ ամէն բանով լեցուն ։ թէմամ ։ հէ . 7 ։
լրապատար ։ լեփլեցուն ։ տօփտօլու (յիշատակարան ։)
լրբութիւն ։ էտէպսիզլիք ։ զ . 4 ։

լլթացոյն · մլթացոյն · մութ մօռ · Ը · 2 ·
լուսթիւն · լրման ըլլալը · թէմանլըք · ԺԹ · 2 · կամ, լսելը · իջիթմէք · ԺԹ · 2 · ԿԳ · 5 · ԳԺ · 1 ·
լքանել · թողուլ, երեսէ ձգել · պղտամօր · ԻԿ · 2 · կամ, փերջինել, ընչել · եռք էթմէք · ԼԳ · 1 ·
խաղք · խարէութիւն · հիլլէ, ֆէնա · Գ · 3 ·
խաթարեալ · աւրած, փճացած · պօղոսեանց · ԻԿ · 3 ·
խակախորհութիւն · խակա միտք · ԳԵ · 8 ·
խակակուռթ · խամ · ԾԳ · 2 ·
խակութիւն · անկարգութիւն · գաղալըք, հապանինիք · Ը · 4 ·
խաղալիք · անդամներուն խաղը · ցնոյ · ՀԵ · 12 · կամ, խաղալու բաներ · ցյուճոյց · ՁԵ · 3 ·
խաղատարտ · հարայի ուռկցք · չիպան · ԿԹ · 2 ·
խաղեր · աուգոն · ԼԵ · 3 ·
խայրեր · պատուգք · մէյմէ · ԼԹ · 1 ·
խանդաղատական · ողորմուկ, թալկըտելու · ԼԹ · 8 ·
խառնախուխ · չալը չըլփըլալ խառնած · ԾԳ · 3 ·
խառնիճ · ոչ մը մարախ · գանատալը չէքիրկէ · ԿԹ · 3 ·
խառնիճաղանճ · խառնախառըշ, ապուսձուպա · ԼԾ · 2 ·
խառնք · խառնած բաներ · ԳԳ · 11 ·
խարան · հարա տալելու երկաթ · Գ · 1 · կամ, տաղած հարա · ԺԹ · 3 ·
խարդաւանք · խարէութիւն · ֆէնա · Կ · 2 ·
խարխախ · նաւու երկաթ · ըէնկէր, կէմի ունմիրի · ԻԿ · 2 · խարխախի բարձից · ոտքը, կամ թօփուխը · ԺԵ · 3 ·
խարխալեալ · գըրգըռած · ՁԿ · 3 ·
խարխափանք · գուրգուրալը · քէօռ կիպի եօգլաշըշ · ԺԿ · 2 ·
խարխուլ · գըրգըռած, խախուտ · ԽԵ · 4 ·
խարուած · հարա տալը · ԽԳ · 2 ·
խափուցանել · խափանել, արգիլել · մէն էթմէք · ԿԳ · 2 ·
խեթանալ · թշնամի ըլլալ, մէկի մը հետ ուրիլ · պօղոսեանց · ԺԳ · 1 ·
խեթկէչ · պօյնուզ զարնող · ԳԵ · 5 ·
խեթումն, կամ խիթումն · սրտի խառնուկ · խըրէք սանճիսի · ԳԵ · 10 · ԽԾ · 3 ·
խեղդեալ · խեղդը կտրած, կամ թաւած · ախաւանէ · ՀԾ · 2 ·
խեղք · նաւու խըշ · ԻԿ · 2 ·
խեղճ · խղճալիը · պօղոսեանց · ԻԿ · 4 · կամ, խղճելու կարգ · քէմէնա · ԼԿ · 3 ·
խենէշէնալ, կամ խենեշանալ · հանդարտ ապրիլ · ՀԵ · 2 ·
խենեշութիւն · անձրկածութիւն, թէմպէլութիւն · ԳԵ · 5 ·
խէթ · թշնամութի, ոխ · ԻԿ · 4 · ՀԾ · 2 · կամ, արգելք · էնկէլ · ԿԳ · 2 ·
խթան · մատալ · ՀԳ · 3 ·
խժական · պէռանի, հագանի · ԳԳ · 6 ·
խիզախել · աթմիչ թութմիչ ըլլալ · ԿԵ · 3 ·
խիթ · ցաւ, խառնուկ · սանճի · ԽԳ · 3 · Գ · 4 ·
խիթալ · վախ ունենալ · գորգմալ · ԺԿ · 1 ·
խլրտումն · կեցած տեղը շարժիլը · գըմըլտամըշ, թէփրէնիշ · Գ · 3 · կամ, կեցած տեղը շարժող բան, ինչպէս թըռթըռը · Է · 1 ·
խխունջ · հողէն հանուած եղած թըռթըռ, կամ սլէօնէկ · Է · 1 ·
խծբծել · փնտռտելը · արաշըրըշ · ԽԵ · 4 ·
խնծիղք · խնդում · շաղէք, աշէնք · Գ · 1 ·
խնկաւորել · Հ · 1 · ՁԿ · 2 · | խնկով պատուել · օրհնել, փառաւորել ·
խնկել · կամ խել · ԳԳ · 13 · | Այս բառէս եղած անուններն ալ կը-

Նշանակեն՝ օրհնեմք, օրհնելու, և այլն ։
խնծոյք ։ ուտել խմել ։ զիաֆէթ ։ ժբ . 1 ։
խշտի ։ տէօշէկ ։ ժբ . 3 ։
խնհերք ։ գաղտնութիւն ։ մանտաալըք ։ խէ . 2 ։
խոզխողեալ ։ մորթած ։ սօղանլընմըշ ։ ժգ . 2 ։ խե . 2 ։
խոյ ։ արու ոչխար չինկատած ։ խօչ ։ հէ . 3 ։
խոյզ ։ փնտրտուելը ։ թէֆթիշ, արաշտըրմայ ։ խգ . 2 ։
խոշորս ։ խառմախառըշ ։ խզ . 3 ։
խոստմնացումն ։ չորնալը, խըտան ըլմալը ։ լէ . 2 ։
խոտել ։ երեսէ ձգել ։ կեօզտէն պրագմաք ։ խթ . 1 ։
խոտանմանեկել ։ ֆէնտով խաբել ։ ալ էթմէք ։ լէ . 2 ։
խորխորատ ։ խորունկ փոս ։ ակրեն չուգուր ։ է . 3 ։
խորհրդակիր ։ մտածմունք ունեցող ։ տիւշիւնկէն ։ ա . 1 ։
խորշ ։ ուծ պուճախ ։ ճ . 2 ։
խորշակ ։ տաք հով ։ սամ եէլի ։ կզ . 4 ։
խորտակել ։ ջարդբուրդ ընել ։ հուրտաւհաշ էթմէք ։ է . 2 ։ լգ . 8 ։
խորտիկ ։ թէրպիյէով կերակուր ։ թահըմ ։ ծզ . 2 ։
խուէլ ։ նեղել, չարչրկել ։ էզիէթ վէրմէք ։ կզ . 4 ։
խուզել ։ փնտրտուել ։ արամաք, արաշտըրմաք ։ թ . 2 ։ ծէ . 4 ։ կամ,
խըուխմիշ ընել ։ լէ . 3 ։
խուժ ։ խուժաատանցի ։ զգ . 12 ։
խուճապել ։ արտաքցընել ։ էվէթէլէթմէք ։ հթ . 3 ։
խուռն ։ քիչ ։ աղճըք, ձիւզի ։ կգ . 2 ։
խուսափել ։ սիվիշմիշ ըլալ՝ փախչել ։ կթ . 2 ։
խուփ ։ տապան անօթի, կամ գըլըճի ։ զբ . 7 ։
խուխ ։ չոլը չօփը ։ ժզ . 2 ։
խռրոց ։ երկու բան մէկմէկէ բաժնող ։ պէօլմէ ։ ժգ . 3 ։ կամ, հեռա-
ւորութիւն, արալըգ ։ բ . 1 ։
խռովութիւն ։ այլը սեչի ։ զգ . 19 ։
խրախոյս ։ յորդորանք, սիրտ տալը ։ գայրէթ ։ Ժ . 2 ։
խրթնանալ ։ չէնք շնայիր կորսընցընել, ուրել ։ խըթըֆիի, կամ, տիւ-
զէնի գայդ էթմէք ։ հբ . 11 ։
խրթնի ։ ապէզ, մնաած ։ չիրքին ։ զգ . 12 ։
խրճունք ։ կտոր ։ ակմէթ ։ լթ . 2 ։
խրոխտ ։ եռանդ, քէակին ։ զբ . 3 ։
խրոխտանալ ։ խօրոզլանմիշ ըլալ ։ ծգ . 2 ։
խրտուիլ ։ խոռնչակ ։ գօրգուլուգ ։ խզ . 3 ։
խրտուցումն ։ խուրքմիշ ըլալը ։ զբ . 8 ։
խցանել ։ գոցել ։ գափամաք, թըգամաք ։ է . 3 ։
խօլական ։ խէլառացընող ։ խէնթուամէնթ ։ ժբ . 3 ։
խօսնական ։ խօսելու, խօսող ։ լէ . 3 ։
Ծամխել ։ զայ ընել, հատցընել ։ թէլէֆ էթմէք ։ հթ . 4 ։
ծայրակատար ։ ծայրը՝ կամ վերջը կատարող ։ խբ . 1 ։
ծայրատութիւն ։ ծայրը կտրելը ։ հգ . 2 ։
ծանակել ։ խախք ընել ։ ռըսվայ էթմէք ։ ծզ . 2 ։ կ . 1 ։
ծերպ ։ խոմխուխ, կամ արալըխ ։ ճ . 2 ։
ծիր ։ չէմբէր ։ զբ . 7 ։
ծծումբ ։ քիւքիւրթ ։ լ . 2 ։
ծնկեցեալ ։ հոլած ու մաշած, ճըղած ։ ծբ . 2 ։
ծնոտ ։ չէնէ ։ խէ . 2 ։ լգ . 2 ։
ծորել ։ վազել, թափիլ, կաթել ։ ագմաք ։ ծզ . 2 ։ կէ . 2 ։

ծործոր ։ լեռներու մէջ զառիվար տեղ ։ Էնիշ եօգուշ ։ խ. 2 ։
ծուէնք ։ կտաւի կտոր ։ փարչա ։ իէ. 2 ։
ծուղակ ։ տուզախ ։ խդ. 3 ։ ղ. 3 ։
ծուփք կամ ծփանք ։ չալգանթը ։ ծգ. 3 ։ իէ. 2 ։
ծրգեալ ։ տողորուած, ալըշկած ։ զարկ օլմուշ, պուլաշըգ ։ ի. 1 ։
Կազդուրել ։ ամրցընել, զօրացընել ։ գավիլէմէք. գուվվէթլէթմէք ։ ի. 1 ։ ժ. 2 ։ ձ. 3 ։
կազմ ։ հազըր ։ խդ. 3 ։
կազմած ։ շէնք ։ պինայ, եափը ։ ձգ. 1 ։
կաթսայ ։ խալկին ։ գազան ։ կդ. 2 ։
կալանաւոր ։ զընտանի մարդ ։ հափիս ։ հէ. 3 ։
կական ։ հեծեծալով լալ ։ եօքիւր եօքիւր աղլամաք ։ իէ. 1 ։
կաղակարծ կամ կեղակարծ ։ շիւպհէլի ։ խը. 2 ։ ը. 2 ։
կաղկանձողական ։ վընկվընկացող ։ լէ. 17 ։
կաճառ ։ ժողով ։ ճիւմհիւր, սիւրիւ ։ Ն. 3 ։ զա. 2 ։
կայթ ։ ցաթկըտելով խաղալը ։ սըչրայըշ ։ խա. 2 ։
կայլակ ։ կաթ ։ տամլայ ։ ղ. 3 ։
կայմ ։ եէլքէն բռնելու փայտ ։ սէրէն տիրէյի ։ օրթա տիրէք ։ իէ. 2 ։
կայուն ։ հաստատ կենալը ։ գավիլիք ։ ղի. 10 ։
կայտառ ։ վխտացող կենդանի. ինչպէս պէօճէկը ։ խէ. 3 ։
կայք ։ կենալու տեղ ։ տուրաճագ եէր ։ ժա. 1 ։ կամ, կողմ, թարաֆ ։ ժը. 2 ։
կանխել ։ առաջ առկանիւ ըլլալ ։ կը. 1 ։
կանոնաւորակ ։ արգելող ։ եասագ էտէն ։ ղդ. 6 ։
կանուխ ։ առջի բերքը, կամ պտուղ ։ թուրֆանտա ։ կը. 2 ։
կաշառել ։ ըռըշվաթ տալ, մէկ բանով մը շահուիլ ։ ավլաշըլմագ ։ ի. 1 ։
կաշառակալութիւն ։ կաշառի տեղ տալը ։ լդ. 2 ։
կաշկանդեալ ։ խըրխըլտուած կապած ։ ժը. 2 ։
կապարան ։ կապելու բան կամ գործիք, ինչպէս չուանը, կամ քընէ-տը, և այլն ։ իէ. 2 ։ խէ. 2. 3 ։
կապարճ ։ օգլըգ, թիրքէշ ։ կդ. 4 ։
կապուտ ։ թալան, եաղմա ։ ժդ. 1 ։ հէ. 7 ։
կապտել, թալլել. եաղմա էթմէք ։ դ. 1 ։ ը. 2 ։
կառավարել ։ առապայով ճամբա ընել ։ լդ. 5 ։
կառափիչ ։ գլուխ զարնող կամ կտրող ։ ճէլլատ ։ ձը. 2 ։
կառուցանել ։ շինել ։ եափմագ, գուրմագ ։ ը. 2 ։
կասել ։ դադրեցընել ։ մէն էթմէք ։ խը. 5 ։ և կասիլ ։ դադրիլ կենալ ։ տուրմագ, ֆէրաղաթ էթմէք, վազ կէչմէք ։ է ։ 2 ։
կատակել ։ ծաղր ընել ։ մասխարայ էթմէք ։ հէ. 2 ։
կատակերգութիւն ։ մասխարայի կամ խնտալու երգ, ճառխ ըլլալու խաղ ։ լթ. 3 ։
կար ։ ուժ ։ գուվվէթ ։ լը. 2 ։ ղդ. 4 ։
կարակումն ։ մանուառ թագութիւն ։ չամուրլուք ։ ձգ. 3 ։
կարեկցել ։ ցաւակցիլ, կարօտութեանը գտնուիլ ։ լդ. 10 ։
կարթ ։ օլթայ. չէնկէլ ։ գ. 3 ։ խդ. 3 ։ կդ. 4 ։
կարիք ։ պիտանաւորութի ։ իգթիզա, նաչարլըք ։ է. 2 ։ ժթ. 3 ։ խթ. 1 ։
կարծրերախ ։ բերանը կամ չէնէն սէրթ. ինչպէս պաղի ձիանք ։ կէմ ալմազ ։ իը. 2 ։
կարկամ ։ ձեռքը քաշուած, խըռխըռ ։ ծգ. 2 ։
կարկառ ։ դէզ ։ եըղըն ։ կդ. 1 ։ Կարկառ կաճմանք ։ երկընցընելով զարնելով, կամ վերցուցած գոփեցընելով ։ ղը. 2 ։

կարկառել ։ երկընցընել , մօտեցընել ։ սունմաք ։ ժզ · 2 ։
կարկել ։ պապանձեցընել ։ աղըզը գափաթմաք ։ ժէ · 2 ։
կարկեհան ։ կայծքար · ձէվահիր՝ որ գիշերը կըփայլէ ։ չէփչէրաղ · սյա-
ճիքն , չամչրաղ ։ հե · 12 ։
կարութիւն ։ կարողութիւն ։ գուվվէթ , թագաթ ։ ժթ · 4 ։
կափուճ ։ գոցելը ։ գափայըշ ։ ղա · 3 ։
կափուցանել ։ գոցել , խփել ։ գափամաք ։ ն · 3 ։
կաքաւ ։ խօրօս թէփմիշ ընելը ։ բագա ։ խա · 2 ։
կեղէքել ։ պատըռտել , ծւէ ծւէ ընել · կամ չարչըկել , հարուկէմիշ ընել ·
կը · 3 ։
կեղծիք ։ սուտ բան , շինծու կերպարանք ։ եալան՝ կամ ձիւխմախիղ չէյ ։
խն · 2 ։
կենազէն ։ կեանք տալու սկըլահըլամիշ եղած ։ ծ · 3 ։
կենդանախարոյկ ։ ողջ ողջ երող ։ տիրի տիրի եաքան ։ ըց · 5 ։
կենդանախումբ ։ կենդանիք ժողվելու ։ ձա · 4 ։
կենսախրախոյս ։ կենաց յորդորանք տուող ։ հէյաթ ղայրէթի վէրէն ։
խդ · 2 ։
կենսացուցող ։ կեանք ցըցընող ։ ղզ · 6 ։
կենցաղ · աշխարհի կացքը ։ ձա · 4 ։
կերպագրութիւն ։ շէնք , ձև ։ պիչիմ , տիւզէն ։ իդ · 1 ։
կերպակցաղէս ։ մէկ թարղ ըլլալով ։ ղզ · 9 ։
կերպառութիւն ։ օրինակ տալը ։ կզ · 1 ։
կերպացուցանել ։ ձևացընել ։ եօսսաամա գօմաք , ույտուրմաք ։ ժբ · 3 ։
խթ · 2 ։
կէտ ։ վճիռ ։ սխճիլ ։ խը · 3 ։ կամ , մեծ ձուկ ։ ատա պալըղը ։ խզ · 1 ։ Կէտ
կցորդի ։ միանալու ծայր ։ լա · 1 ։
կիզանել , կամ կիզել ։ երել ։ եագմաք ։ ն · 2 ։
կիսայար ։ կէս մարմնովը կանգնած՝ կեցած ։ եարը պէլ իլէ գուլէմէշ ·
տուրմուշ ։ լբ ։
կիրթ ։ վարժ , հասուն ։ վուգուֆ ։ ղզ · 17 ։
կծծի ։ խըմխըմ ։ ծգ · 2 ։
կկել ։ թեղկեաշ բանիլ , կատու գործել ։ տօգումաք ։ է · 3 ։
կմախք ։ մեռելի ոսկորներ ։ եօլի կէմիքլէրի ։ հզ · 2 ։
կնդրուկ ։ պուխուր , աւրլըղէնտ ։ ն · 2 ։
կնիւն ։ սաղ , ջրոտ տեղ բուսած խոտ ։ հասիր օթու · հասիր սազը ։
լթ · 2 ։
կշիռ ։ շիտակ ։ տողըտու ։ ծզ · 2 ։ կամ , հաւասար , պիր գատար ։ ղզ · 15 ։
կամ , թէրազի ։
կշտամբանք ։ չէխ , չախ ։ ազար , սխթէմ , թազիր ։ իբ · 1 ։
կոթող ։ տիքիլիթաշ ։ լէ · 3 ։
կոծ ։ ծեծկուիլը մարդու՝ ծոծու · եհ ։ տէօյիւշմէ ։ կզ · 5 ։
կոկորդ ։ կենդանւոյ պողալ ։ իզ · 3 ։
կոհակ ։ տալկայ ։ իէ · 2 ։
կողահերձ ։ կողը պատռող բացող ։ իը · 6 ։
կողկողանք ։ ողբի ողբի գալը ։ իզ · 1 ։
կոչկոճել ։ սեամէք ընել ։ թէփէլէմէք ։ իզ · 2 ։ իը · 6 ։
կոչտ ։ գունտ հող ։ եումրու թօփրագ ։ հզ · 3 ։
կոչարան ։ կանչելու գործիք , կանչող ։ ղբ · 3 ։
կորակոր ։ վար ծըռած , գլուխը կախած ։ կթ · 2 ։
կորզել ։ քաշելով փըցընել , խափմիշ ընել ։ չէքիփ ալմաք , գօփարմաք ·
հթ · 4 ։

կորիւն ։ գազանի ձագ, լակոտ ։ ճանաւար եավրուսու ։ ի · 1 ։ կամ, պզտիկ ձուկ ։ պալըգ ճըղը ։ խե · 1 ։
կուզ ։ ոլոր, խաթ ։ հա · 2 ։
կուտել ։ դիզել ։ թօփ էթմէք, եըղմագ ։ խե · 1 ։
կուր ։ կերակուր, ուտելիք ։ եէյէճէք ։ կ · 4 ։
կռածաղ ։ ծայրը սուր, կամ կոկած ։ կթ · 2 ։
կռփել ։ գլուխը ծեծել, կամ վայ վրան բերել ։ հէ · 2 ։
կռեալ ։ զարնուած, զարնելով եղած ։ ձէ · 2 ։ ղբ · 5 ։
կտտել ։ ծակ ծակ ընելով չարչարել ։ է · 3 ։
կրթել ։ վարժել, սորվեցնել ։ թէրպիյէ վէրմէք ։ հէ · 12 ։
կրկնադատ ։ խաթխաթ դատապարտուած ։ իդ · 2 ։
կրկնակական ։ թէքրար լալու ։ խէ · 1 ։
կրկնակապէն ։ երկու հեղ չար վարձք տրուած ։ լզ · 2 ։
կրկնապարոյր ։ երկու խաթ եղած՝ կամ ծռած ։ կթ · 2 ։
կրկնեալ ։ երկու խաթ տաքցուցած ։ դզ · 24 ։
կրկուտ ։ չալը ։ հ · 2 ։
կցորդ ։ կպած, միացած ։ իլհագ ։ լա · 1 ։
կքեալ ։ կծկուած ։ ձէ · 3 ։ կքումն · կծկուիլը ։ ժբ · 2 ։
հազագ ։ խուշակ ։ պօղազ ։ իզ · 2 ։ դ · 1 ։ կամ, շունչ ։ սօլուգ, նէֆէս ։
 հէ · 12 ։
հալոցական ։ ոճախով կամ փօթայով բան հալող ։ ը · 2 ։
հալուէ ։ էօտ ապաճըի եղը ։ սէպր ։ դզ · 11 ։
հակամիտութիւն ։ անկարգ յօժարութիւն ։ իդ · 2 ։
հակիրճ ։ կարճ ։ գըսա ։ ժէ · 3 ։
հաղբ ։ որոգայթ ։ թուզագ ։ դ · 1 ։
համարան ։ խօսքը մէկ, ույղուն ։ պիր աղըզ ։ կա · 2 ։
համարարուոյ, կամ համարարոյ ։ մէկ սիրտ ունող ։ իդ · 3 ։
համագրութիւն ։ համաձայնութիւն ։ միյնա ։ ձդ · 1 ։
համագուգակցել ։ հաւասարել ։ պէրապէր օլմագ ։ թ · 1 ։
համաձեռութիւն ։ մէկ չափով ընելը ։ հբ · 2 ։
համաճարակ ։ բոլոր կերած, կամ եայըլմըշ եղած ։ ժէ · 2 ։
համայն ։ բոլոր, ամմէնը ։ պիւթիւն ։ լդ · 4 ։
համառօտ ։ կարճ ։ ձբ · 6 ։ կամ, չխառն, արդար ։ տօղրու, հագ ։ կա · 2 ։
համատիւ ։ ամմէն դի եայըլմըշ եղող ։ լդ · 1 ։
համեցողութիւն ։ նմանութիւն ։ իդ · 2 ։
համբար ։ տան զահիրէ ։ լա · 1 ։
համբարձակ ։ բարձր տեղ, աշտարակ ։ գուլէ ։ դ · 3 ։
համբոյր ։ հեղուկ, անուշիկ թասպիէթով ։ լէ · 1 ։
հայթայթել ։ ճարել, փէյտահ ընել ։ գօտուլմագ ։ լդ · 8 ։
հայթայթումն ։ գութ շարժելը ։ մէրհամէթէ կէթիրմէք ։ ժդ · 2 ։
հանդիսատես ։ մէկ կամ նման փառք ունող ։ դզ · 1 ։
հանգոյց ։ հանգուրց, կապ ։ տիւյիւմ, իլմէկ, զայտուպէնտ ։ ժբ · 1 ։ ծբ ·
 3 ։ զա · 1 ։
հանգունակից ։ ժէ · 1 ։ } նման, մէկ թարզ ։ պէնզէր, մէնէնտ ։
հանգունատիպ ։ դզ · 15 ։ }
հանդարտաբար ։ հանդարտ թասպիէթով ։ եավաշ ։ լա · 3 ։
հանդերձանք ։ բանի մը չէնք ։ տիւզէն ։ ժա · 1 ։ իբ · 4 ։
հանդերձաւորել ։ դ · 2 ։ } պատրաստել, սազել ։ հազըրլամագ, տիւ-
հանդերձել ։ ժբ · 1 ։ . . . } զէլթմէք ։
հանդիմանել ։ մէյտան ելլել, բանի ձեռք զարնել ։ իա · 1 ։
հանդիսարան ։ ժողովելու, կամ տղայի տեղ ։ մէյտան ։ ա · 2 ։ լդ · 1 ։

հան : մամ, մեծ նինէ : պէյիւք վալիտէ : ԼԴ · 2 :
հանճար : խելք : ագըլ : Է · 4 :
հանճարագէտ : խելքը կորսուած : ագլը ուչմուշ : ԻԵ · 3 :
հանուրք : ամենը : հէր, հէփ, ճիւմլէ : ԼԹ : 4 :
հաշիւ : շիտակ : ԿԵ · 2 :
հաշմեալ : ձեռքը ոտքը քաշուած, խասխաթի եղած : ՁԴ · 2 :
հաշտարան : հաշտեցընող : պարըշտըրըճը : ԼԵ · 2 :
հասակ : տարիք, կամ պոյ : ԼԸ · 4 :
հաստարան : հաստատուելու կամ կաթընելու տեղ : տայանաճագ եէր : Գ · 3 : կամ, հաստատութիւն տալող : ԽԵ · 2 :
հաստուած : բանին շէնքը : եափը : Գ · 3 : կամ, ստեղծուած : եարա- տըլմըշ էյ :
հաստումն : հաստատութիւն : պէրգէլք : Է · 4 :
հատու : սուր : քէսկին : ԺԴ · 1 :
հատուած : կտրուած կամ զատուած բան : Ժ · 2 : ԽԴ · 1 :
հատուցանել : հատցընել, պակսեցընել : թիւքէթմէք : ՂԱ · 3 :
հարազատ : նման : աքրան : Թ · 2 : կամ, մէկի մը հետ սրխ : ԺԷ · 2 : կամ, ազգական : խըսըմ : ԾԴ · 1 : կամ էօզ զաւակ : ԽԶ · 1 :
հարևանցիկ : թէզով անցնող : էյրէթի : ՀԴ · 3 :
հարթ : դուր, շիտակ : տիւզ : ԾԴ · 2 :
հարթակշիռ : լըլլըման : թէմամ : ՂԴ · 23 :
հարթուցեալ : խրատած, ամըչնալով փախցած : ԺԷ · 1 : Ձ · 3 :
հարումն : զարնելը, զարնըլուածք : վուրուշ : ԽԶ · 6 :
հաւաստութիւն : մանր քննելը : ինճէ թէֆթիշ : ԺԴ · 2 :
հեծան : հաստ փայտ : սոփա : Ժ · 2 : ԺԶ · 1 : Այսպէս կոչնակը, կամ կոչնակին փայտը՝ ՀՆՋՈՆ կըսուի : ԴԶ · 6 :
հեծանոց : հովիչ, հարմանձիներուն քիւրէկը : եափա : ՀԱ · 3 :
հեծել, կամ հեծեծել : հառաչել : ահ էթմէք : ԺԱ · 1 : ԻԹ · 3 :
հեղեղավայր : ջրոտ տեղ : ԼԹ · 2 :
հեղեղատ : պզտի գետ : չայճըք : Ա · 2 :
հեղեղել : սէլ ընել, կամ հանել : ԽԶ · 6 : հեղեղիլ : սէլէն քշուիլ տա- րուիլ : ԾԴ · 3 :
հեղձումն : խեղդըւիլը : պօղուլմաք : ՀԵ · 12 :
հեղոյս : գամ : էքսէր, մըխ : ԽԵ · 2 : ԽԶ · 6 :
հենգնել : ծաղր կամ մասխարա ընել : մէզագ էթմէք : Գ · 1 : Կ · 4 :
հենուլ : կտաւ գործել : պէզ տօգումաք : ԿԴ · 2 :
հետեալ : գլուխ քաշած : սաք : ԼԹ · 4 :
հետազօտել : քննել, թէֆթիշ ընել : ԻԴ · 2 :
հետք : գնալը, քալուածք, կամ ճամբա : ԺԶ · 3 : ԺԶ · 2 :
հերապանծ : մազերով պարծեցող կամ զարդարուած : սաչլը : Թ · 2 :
հերձել, կամ հերձուլ : ճղքել : եարմաք : ԼԴ · 2 :
հերք : երկան մազ : սաչ : ԼԶ · 3 :
հերքել : վռնտել, կորսնցընել : գովմաք : ԼԴ · 2 :
հէն : չէթէճի : ԻԱ · 2 : ԻԵ · 2 :
հէք (հէքոյս :) խեղճ, թշուառ : ԻԱ · 2 :
հիացումն : մաթ մնալը : թաամճճուպ : ԻԷ · 3 :
հիմ : հիմն : նիշէն : ԻԴ · 2 :
հիւթ : նիւթ · մարմնաւոր բան : ԻԹ · 2 : ՂԴ · 17 :
հիւծումն : հալիլ մաշիլը : ճաղիլը : ԽԶ · 1 :
հիւղ : մանր թօղ : զէրրէ : ԻԷ : 2 :
հմայեակ : կախարդական հմայիլ : ՂԴ · 18 :

Հմայք ։ փալ ։ փալճիութիւն ։ պագըճըլըք ։ խէ․ 3 ։ ծա․ 4 ։
Հնարագիր ։ տուզախ դնող ։ ծե․ 3 ։
Հնդիկ ։ սև մարդ․ հապէշ ։ արապ ։ ղգ․ 12 ։
Հոլով ։ անիւ ։ խը․ 4 ։
Հողապատեան ։ հողով ծածկած ։ կդ․ 1 ։
Հողմահար ։ հովով քշած ։ խէ․ 2 ։
Հոմանի ։ սիրահար ։ աշըգիյա, զէնփարէ ։ ձգ․ 3 ։
Հոմիշխան ։ մէկ իշխանութիւն ունեցող ։ հէմմի պիր ։ ըթ․ 6 ։
Հոյլ ։ բազմութիւն ։ սիւրիւ ։ ա․ 2 ։ ըա․ 2 ։
Հոսանուտ ։ ջրլի․ ջրջրկոտ ։ սուլու ։ ծգ․ 1 ։ ղդ․ 23 ։
Հոսել, կամ հոսիլ ։ թափել, թափուիլ ։ տէօքմէք, տէօքիւլմէք ։ ժթ․ 2 ։ իդ ։ 1 ։
Հոսումն ։ դուրս բռնելը, կամ բռնած բանը ։ ղ․ 3 ։ ժդ․ 2 ։
Հովիտ ։ եայլա․ տէրէ ։ ա․ 2 ։
Հուպ ։ մօտ, քովը ։ եագըն ։ իգ․ 1 ։
Հպիլ ։ մօտենալ ։ եագլաշմաք ։ եանաշմաք ։ իթ․ 2 ։
Հրահանգել, կամ իլ ։ սովրեցընել, սովրիլ ։ թէրպիյէ վէրմէք, կամ ալմաք ։ հե․ 12 ։
Հրաշակերտութիւն ։ զարմանալի շէնք կամ գործք, եօղէնմիշ եղած բան ։ ծդ․ 4 ։
Հրաշէկ ։ կրակի գոյն դեղին ։ աթէշլի ։ բ․ 2 ։
Հրապոյր ։ զէհիրոտ խմելիք ։ կդ ։ 4 ։
Հրատ ։ կրակի դէզ ։ աթէշ եըղընը ։ ղ․ 3 ։
Հրատատ ։ կրակի պէս տաք ։ խ․ 3 ։
Հրացան ։ կրակ ձգող բան ։ բօմպընըլըք ։ է․ 2 ։
Հրճուանք ։ ճիւղը ։ շաղըըք․ շէնլիք ։ ղդ․ 18 ։
Հօրան ։ այծի սիւրիւ ։ խդ․ 1 ։
Ձաղանք ։ խայտառակութիւն ։ մասխարա ։ ե․ 1 ։ իէ․ 3 ։
Ձաղել, կամ իլ ։ խախք ու Ճասխս ընել կամ ըլլալ ։ ըռէզիլ էթմէք, կամ օլմաք ։ իթ․ 2 ։ կբ․ 1 ։
Ձաղկել ։ ծեծ ուտել ։ տայագ եէմէք ։ ժբ․ 1 ։
Ձայնատրական ։ ձայն հանող ։ ղդ․ 20 ։
Ձայնարկու ։ ձայն ձգող խապար տալու ։ ծդ․ 4 ։
Ձգարան ։ ձգելու կամ քաշելու գործիք․ ինչպէս չուանը ։ չէքէճէք ։ դ․ 3 ։
Ձգտիլ ։ եանէ ընկնիլ ։ պիր չէյէ չալըշմաք ։ ծե․ 4 ։
Ձեղուն ։ տանը ծածք ։ թավան ։ ծա․ 4 ։ կէ․ 2 ։
Ձեռնադրեն ։ ձեռքով բռնելու ։ էլէ կէլէն ։ հե․ 12 ։
Ձեռնածու ։ կէօզպաղըճի ։ ղդ․ 18 ։
Ձեռներէցութիւն ։ ձեռք ձգելը կամ երկընցընելը ։ էլ ուզատմաք ։ ըգ․ 1 ։ կամ, կարած խօսք ։ մէքալ ։ ըա․ 3 ։
Ձեռներէց ։ առաջ նստող ։ էլ պաշը օլան ։ ծբ․ 2 ։
Ձիավարժ ։ աթլը, սիւնիճի․ սիւվար ։ դ․ 2 ։
Ձիր ։ պախշիշ ։ ժգ․ 1 ։ ժէ․ 3 ։
Ձորձ ։ լաթ, հագուստ ։ էսպապ ։ ժդ․ 2 ։
Ձու ։ հաւկիթ ։ եումուրթա ։ բ․ 1 ։
Ձուլածոյ ։ թափծու կուռք ։ տէօքմէ փութ ։ խը․ 3 ։
Ձուլել ։ հալած բան մը թափել ։ գալըպլամաք ։ ժթ․ 1 ։
Ձօնել ։ ընծայել ։ փիշքէշ էթմէք ։ ե․ 2 ։ ղդ․ 4 ։
Ղամբար ։ մեծ կանթեղ ։ մաշալա ։ ըա․ 1 ։
Ղեկ ։ տիւմէն ։ դ․ 3 ։

զղել : ծածկելով : պահուըտիլ : կիզլէնմէք : դ · 1 :
ճակատ : ասկէրի երեսը : էպէր էօնիւ : կբ · 2 :
ճակատամարտ : գինագէմ ճէնկ : ղբ · 6 :
'ի ճահ : յարմար : ույկուն , եագըշըգլը : ծղ · 2 :
ճայթել : չաթ ձան հանել : ղ · 3 :
ճաշակ : ուտելու բան : եէյէճէք : դդ · 4 ·
ճապուկ : կակուղ : եումշագ : կթ · 2 :
ճառ : երկընկեկ խօսած՝ կամ գրած բան : քէլամ : դ · 1 :
ճառել : զուրցել , ըսել : նագլ էթմէք , անմէք : իբ · 1 :
ճարակիլ : եայըլմիշ ըլլալ , ավմիշ ըլլալ : թ · 3 : կամ , ուտել : եէմէք : ծդ · 2 :
ճարպ : փորու եղ , ճրագու : իչ եաղը : ա · 2 : դ · 3 : կամ , եղ : եաղ : դդ · 4 · 17 :
ճեմել : օլթա զարնել , քալել : կէզինմէք : ծդ · 2 :
ճեմութիւն : քալելը , կամ վարպետ զրուցք · փառէլի խօսք , պէլագէթ : դդ · 19 :
ճենճեր : մըխ քէֆ : ա · 1 :
ճենճերել : քէֆ ելլել : բ · 2 : կամ , սիրտը եփիլ : ժբ · 1 :
ճեպ : արտորանք : աճէլէ , սըրգէթ : է · 3 :
ճիրան : փէնչէ : դ · 3 : կբ · 3 :
ճչգրիտ : ըղորդ : սահիհ : իբ · 3 :
ճչել : խըսխըս ըլլալ : խմաղ էթմէք : լա · 1 :
ճշմարտապէս : բուն նման : չինչէք : լդ · 1 :
ճոխ : ձեռքը պօլ , սիրտը մենծ : խդ · 3 :
ճոխութիւն : մենծ փառք : սալթանաթ : լդ · 5 :
ճոռոմ լեզուանի : ճոռոմ : փաֆ փուֆ , ճառթճուռթ : հա · 2 :
ճրագակիր : գանտիլլի : դդ · 8 :
Մագնեսիա : մըխլատըղ : խե · 1 :
մածանիլ : կպչիլ : եափըշմաք : լբ · 2 :
մածուած : թանձրցուցած բան : լց · 4 : կամ , կպցուցած չէնք : պիթիշտիրմէ : ձե · 2 :
մակագրութիւն : մէյտանը ( յիշատակարան : )
մակարդել : պանրի կամ մածունի պէս թանձրիլ : ժա · 1 : իբ · 3 :
մահագուշակ : մահ ցցընող : խբ · 4 :
մահաղէն : մեռցընելու սիլահլանմիշ եղած : ղա · 1 :
մահամասոյց : մահ բերող , մահուան պատճառ : խբ · 3 :
մահարձան : խուլէ , պուրճ : ղ · 3 :
մահիճ : տէօշէկ : ժբ · 2 :
մահողկուղեան : զէհիրտա սալըըմըը : է · 2 :
մաղձ : սաֆրա : ե · 1 :
մաճ : սապան աղաճը : իդ · 2 :
մաճակալ : սապանի փայտը կամ բուռը բռնող : ծդ · 2 :
մամռապատ : գորտնբուրդի քէօքով լեցուած , կամ խառնած : ծդ · 3 :
մայրք : մեծ ծառեր չամի , կամ ուրիշ ադ : թ · 1 :
մանկաղ , կամ մանգաղ : օրագ , թըրփան : լե · 3 :
մանկավարժ : վարպետ : թէրպիյէ տուող : խոճա : ծա · 4 :
մանուկք : պզտիկներ , քէչէր : բիւչիւքլէր . աղար : հա · 3 :
մանրագոր : բոյս մի է · գանգուրաւան : կէ · 2 :
մաշկեակ : կաշիէ լաթ : հէ · 10 :
մատախուղ : փուշ , տուման : ե · 2 : բ · 1 :
մատնամատ : սև մութ : զարանթը : դդ · 19 :

մասնաւորել ։ կտոր մը տալ ։ պիր փայ վէրմէք ։ ճէ · 3 ։ կամ, բաժնել, բաշխել ։ թէվզի էթմէք ։ ճդ · 2 ։
մատակարարութիւն ։ պաշտօն, խըզմէթ ։ մանսուպ ։ ճէ · 1 ։
մատեան ։ գիրք ։ քիթապ ։ դ · 2 ։
մատենագէտ ։ քեաթիպ, սըռ՝ կամ ախլան քեաթիպի ։ ծդ · 3 ։
մատն եղանիլ ։ մատնել, էլէ վէրմէք ։ ծէ · 2 ։
մարգելոյզ ։ մարդ ափլամիշ ըսող ։ կ · 4 ։
մարմանջմունք ։ եաք, կեասլը ։ խէ · 2 ։
մարմաջողական ։ կեաշըյըճըող ։ կթ · 2 ։
մարտիկ ։ կռուող ։ ճէնկճի ։ Է · 1 ։
մեծագործել ։ մեծ բան ընել ։ պէյիւք սայմաք ։ ժէ · 3 ։
մեծգինականական ։ փէք փուգուֆ ։ դ ։ 2 ։
մեկին ։ յայտնի ։ աշիքեարէ ։ գդ · 11 ։
մեկնագէն ։ մինակ՝ կամ ինք իր գլխուն ճէնկ ըսող ։ կթ · 2 ։
մեկնաւոր ։ յայտնի ։ այան, աշիքեարէ ։ գդ · 17 ։
մեկուսանալ ։ զատուիլ, հեռանալ ։ չէքիլմէք ։ ծդ · 2 ։
մեհեան ։ կուռքի տուն ։ փութխանէ ։ ծա · 2 ։
մեղկել ։ թուլցնել ։ կէվշէթմէք ։ գդ · 23 ։
մեղսամնակարգ ։ մեղքով մաղձկոտած ։ կիւնահքեար գարկ պլմուշ ։ ծէ · 3 ։
մեսայք ։ սիւրկինի տեղ, հալիս ։ գա · 1 ։
մերակերպութիւն ։ մեզ նման ըլլալը ։ գդ · 7 ։
մերասեր ։ մեր ազէն եղածը ։ ըդ · 9 ։
մերկամարտիկ ։ ըա · 2 ։ | չըլպախ ճէնկ ըսող · ինչպէս փէհլիվան-
մերկամրցանակ ։ գդ · 13 ։ | ները ։
մերկանալ ։ բացուիլ, երեւնալ ։ աչըլմաք ։ ծէ · 4 ։
մեքենայ ։ գործիք մեացընելու, բանելու, և այլն ։ ծէ · 2 ։ դ · 3 ։
մզել ։ քամել ։ սիւզմէք ։ գդ · 11 ։
մզնարհետ ։ բարակ զարի պէս շինած ։ գդ · 20 ։
մէգ ։ փուս, տուման, գարանլըք ։ խա · 1 ։
մթեր ։ ամպար, խազնա ։ դ · 1 ։ կամ պահած բան ։ ժդ · 1 ։
մժխի ։ մածուկ ։ սիւզիւինէք ։ կթ · 3 ։
մժղուկ ։ գինիի կամ խաղողի ճանճ ։ կթ · 3 ։
միագոյ ։ մէկ կտոր ։ եէքփարէ (յիշատակարան ։)
միականութիւն ։ միաւորութիւնը ։ հէ · 7 ։
միայնակեցին ։ մէկ գին սախտա ։ սատըղար ։ ժբ · 2 ։
միատարր ։ մէկ խալիս ։ հա · 1 ։
միեղջերու ։ կէրկէտան ։ կթ · 3 ։
միտել ։ բանի մը ետեւէն ընկնիլ ։ ասլըկ օլմաք ։ կէ · 2 ։
մխել ։ խոթել ։ սօգմաք ։ խթ · 3 ։
մղձկիլ ։ խեղդուիլ ցաւէն, կամ սրտողէն ։ խ · 3 ։
մղոնաչափ ։ փուս փարսաղ (յիշատակարան ։)
մոլեգնաճառ ։ խենթութեամբ խօսող ։ հէ · 14 ։
մողէզ ։ կուպր ամմնայուց ։ Ի · 2 ։
մոռմռել ։ կսկծցնել ։ խըշխշցընել ։ ծդ · 1 ։ կթ · 3 ։
մոլորութիւն ։ խենթութիւն ։ ամլըկը ։ խէ · 2 ։ գա · 3 ։
մուխ ։ երկաթի ջուր տալը ։ գդ · 24 ։
մուն (մոյ.) մանր ճանճ ։ ուճաճըք սինեք ։ կթ · 3 ։
մուր ։ թանաք ։ միւրէքքէպ ։ ըդ · 8 ։
մուրհակ ։ պարտքի թուղթ ։ թէմէսսիւք ։ դ · 1 ։ կամ, կնիք ։ խըլամ ։ ծդ · 5 ։ խթ · 2 ։
մուրճ ։ թաշճիի չէքիճ ։ գդ · 7 ։

մայլ ։ մութ ։ գարանլք ։ իդ․ 2 ։
մանչել ։ մամալ ։ պոռալ ։ սումուրտանմաք ։ պաղըրմաք ։ կդ․ 2 ։
մրճոտիլ ։ մրոտիլ , աղտոտիլ ։ խոլէնմէք ։ իա․ 2 ։ հա․ 2 ։
մրմնջել ։ քթին տակէն երգել կամ կանչել ։ մըրլտամաք ։ լթ․ 5 ։
մրուր ։ գիրտ ։ թօրթու ։ ժթ․ 1 ։
մրցանակ ։ յաղթութիւն , կամ յաղթութեան պախշիշ․ էօտիւլ ։ ժ․ 2 ։
մրցութիւն ։ ճէնկ ։ լա․ 2 ։
մօր ։ ցեխ ։ չամուր ։ ձդ․ 3 ։
Յաճախել ։ շատցընել , մեծցընել ։ չօղալթմաք ։ ժդ․ 1 ։
յամայր ։ շատ տանի ։ ձա․ 2 ։
յամառ ։ ինատճը , սէրթ ։ ծդ․ 2 ։
յամրայլն ։ ուշացող , տնտնացող ։ էյլէնճը ։ խը․ 2 ։
յայրատ ։ աներես ։ էտէպսիզ ։ լդ․ 1 ։
յանգել ։ վերջանալ , լմննալ ։ պիթմէք ։ կա․ 1 ։
յանդիմանիլ ։ առջին ելլել ։ հուզուրինէ չըգմաք ։ է․ 3 ։
յանկուսր ։ ուրոյն , մինաւոր ։ ծդ․ 2 ։
յանձանձել ։ պէտ ընել ։ կէօզէթլէմէք ։ ժդ․ 3 ։ դդ․ 14 ։
յանցք ։ մեղք ։ սուչ ։ իդ․ 3 ։
յառաջադրութիւն ։ մեծ պատիւ ։ պէօյիւք փայէ ։ դդ․ 18 ։
յարադող ։ արևու դէմը կեցող ։ հա․ 3 ։
յարաթաթու ։ միշտ կամ բոլոր մալակնած ։ խե․ 2 ։
յարախորժելի ։ միշտ՝ կամ խիստ հաճ ընելու ։ դդ ։ 1 ։
յարակայել ։ միշտ՝ կամ հաստատ պահել ։ դաիմ թութմաք ։ կէ․ 1 ։
յարակայիլ ։ միշտ կենալ ։ տայիմ տուրմաք ։ կա , 1 ․ դդ․ 14 ։
յարակցաբես ։ միաբանելով , ուղիղ ըլլալով ։ ձդ․ 3 ։
յարգանք ։ պատիւ , մեծարանք ։ րիայէթ ։ լդ․ 1 ։
յարգարել ։ շինել , կարգ դնել ։ տիւզէթմէք ։ ձ․ 1 ։
յարկ ։ տուն ։ էվ ։ բ․ 1 ։
յարկել ։ վրան ծածկով դցել ։ էօրթիւ չաթմաք ։ դդ․ 9 ։
յարմարատեան ։ տալի պէս սիրտն շինած ։ իդ․ 2 ։
յաւակնիլ ։ յանդգնիլ ։ անիրաւութենով առաջ նետուիլ ։ լդ․ 7 ։
յաւէտահրաշ ։ խիստ զարմանալու ։ փէք շաշըլաճագ ։ լդ․ 4 ։
յաւնական ։ կամ յաւանական ։ տես ՚ի կ․ լուծ․ 17 ։
յափրացեալ ։ պըխմըշ եղած , պէզար ։ դբ․ 10 ։
յեղուզակ ։ աւազակ ։ հարամի , զարպուտազ ։ ղ․ 3 ։
յեղանակել ։ փոփոխել ։ տէյիշտիրմէք ։ բ․ 3 ։ կամ , երգել ։ գայտէ
պլըրալմաք ։ իդ․ 1 ։
յեղեղել ։ փոփոխել ։ թէպտիլ էթմէք ։ կամ , ոլոր ոլոր ընել ։ թէքրար
լամաք , կիրիւէ պիրտէ սէօյլէմէք ։ կա․ 2 ։
յեռուլ ( յեռեալ ) կէյտիրմիշ ընել ։ կդ․ 2 ։
յեսանել ։ երկաթը քարին զարնել ։ պիլէմէք ։ դբ․ 5 ։
յերիւրումն ։ ուրիշին չէնք ։ տիւզէն , եաղըշըգ ։ խ․ 3 ։
յառել ։ աչքը տնկելով նայիլ ։ կէօզ տիքմէք ։ իէ․ 4 ։ կբ․ 3 ։
յղփացեալ ։ խիստ լեցուած , պոլ պոլ ունեցող ։ իբ․ 2 ։
յոբելեան ։ յիսներորդ տարին ազատութեան ։ դբ․ 7 ։
յոլով ։ շատ ։ չօք ։ խե․ 1 ։
յոլովամեղծ ։ թանձր կտած ։ փէք խալըն ։ իբ․ 4 ։
յոյզք ։ խռովութիւն , իրար անցնիլը ։ ալավէրա ։ թ․ 3 ։
յովանակ ։ իշու քուռակ ։ գուլուն , սըփա ։ իբ․ 2 ։
յորդ ։ պոլ , դաշկըն ։ իդ․ 3 ։
յորձանք ։ ծովու կամ գետի պտոյտ ։ պուտուրնթու , կիրտապ ։ խ․ 1 ։

յորջորջումն ։ կանչելը , անուն տալը ։ ԻԹ ․ 2 ։
յորսայսել ։ վերջնական ձգել ։ ԼԳ ․ 2 ։
յուռթի ։ առատ ։ պտղ ։ ԿԳ ․ 4 ։
յուռութք ( յուռթից ։ ) կապարապատական , կամ կախարդական հմայ-
իլ ։ ԿԳ ․ 4 ։ ՀՆ ․ 12 ։
յպնաժախիծ ։ խիստ տրտում ։ փոքր մեռուլ ։ ԻՆ ․ 3 ։
յպնախիթում ։ խիստ խիթող կամ կսկծացընող ։ ծանր քնար հանին ։ ծէյեր
տեղէն ։ ԻՆ ․ 2 ։
յպնահարար ։ շատ կերող ։ չար թիւրլի ։ ԼԳ ․ 1 ։
յպրանք ։ շառանք , շառեր ։ չցելար ։ Ը ․ 1 ։
յպնօրէն ։ կերող կերող ։ թիւրլի թիւրլի ( յեղատակարան ։ )
յոգ ։ անգամներուն խաղը ։ զինաց ։ ԼԳ ․ 2 ։ ԽԿ ․ 2 ։
յոգաւորարար ։ մարմին ունենալով ։ ԼԳ ․ 5 ։
յոգաւորական ։ խօսք կամ լսելերար կապող ։ Ժ ․ 1 ։
յոգել ։ միացընել ։ պիթիչակիմՀը ։ Կ ․ 3 ։ կամ , խօսք տիպելիչ ընել ։
Ն ․ 4 ։
յոգուած ։ կապ ։ ԽԿ ․ 3 ։ կամ , խօսքին կապը , տիպէնը ։ Ա ․ 1 ։ Գ ․ 1 ։
յոնք ։ ընկուլ ։ գոռ ։ ԽՆ ․ 2 ։
յօշատել ։ պատառ պատառ ընել ։ փառչա փառչա էթմէք ։ ԽՆ ․ 2 ։
յօրինել ։ շինել , սարքել ։ տիւզմէք , տանզիմ էթմէք ։ ԼԳ ․ 4 ։
Նախադուռն ։ տան փակը ։ նախադուռն կակորդի ։ պռօսպին փակը , այս-
ինքն բերանը ․ կամ բերնին մէջը , կամ ատամները ։ ԽԿ ․ 3 ։
նախազգուշացընել ։ առաջուց իմացընել ։ էվվէլտէն պիլտիրմէք ։ ՂԳ ․ 8 ։
նախակարապետ ։ առաջուց թափած ։ ԽԵ ․ 3 ։
նախայանցք ։ առջի մեղաւորները ։ էվվէլքի կիւնահքեարլար ։ ՀԹ ․ 3 ։
նախայեղք ։ մեկտեղ առջինները ։ դալըը էվվէլքիլէր ։ Գ ․ 3 ։
նախընթացութիւն ։ առաջնորդ կամ գլուխ ըլլալը ։ ՂԸ ․ 8 ։
նահանջ ։ պասաս ։ այտերի ։ ԼԷ ։
նամակ ։ թուղթ , բարեւագիր ։ մէքթուպ , նամէ ։ ՀԶ ․ 3 ։
նանիր ։ փուճ ։ Չիւրիւք ։ ԾԱ ․ 1 ։
նաշիհ ։ շարժմանց պտուղ ։ սիմիտ ունու ։ ՂԳ ․ 8 ։
նաւակատիք ։ ուրախութեան օր ։ տօնախմբութ ։ ՂԱ ․ 1 ։
նաւուղիղ ։ խարսխան , կամ տիւմէնճի ։ ԽԵ ․ 2 ։
նարգոս ։ ծաղիկ է ․ նարպին կամ նէրկիզ ։ ՂԳ ․ 11 ։
նեխրոց ։ գահաւանդ ։ մեռնող ։ ՀՆ ․ 6 ։
ներգեւեալ ։ ուժէ ընկած , անճար կամ խեղճ դարձած ։ ԽԱ ․ 2 ։
ներգործել ։ բան մը ընել ։ պիր իշ էթմէք ։ ԼՆ ․ 1 ։
ներութիւն ։ ներում , թողութիւն ։ աֆֆ ։ ԺԶ ․ 1 ։
նեցուկ ։ սայտա ։ ԿՆ ․ 2 ։
նետար ։ չոր դե ։ մէյուէ չէքիրմէ ։ ՂԶ ․ 9 ։
նժար ։ թեկտանէին թասը ։ Թ ․ 1 ։
նիւթել ։ գործել ։ փէյտահ ընել ։ Ն ․ 3 ։
նկատ եղանիլ ։ տեսնել ։ կէօրմէք ․ պագմազ ։ ԿԶ ․ 2 ։
նկարել ։ նախշել , ներկով քաշել ։ պոյամագ ։ Գ ․ 5 ։ նկարիլ յօրինուածի ։
տպին մարմինը ձեւանալ ։ Գ ․ 2 ։
նկուն ։ ընկած , անճրկատ , սիրտ չունող ։ Գ ․ 2 ։
նշանչել , կամ նաշանչել ։ արգիլել , եա քաշել ։ կերի չէքմէք ։ Ծ ․ 3 ։
նշաւակել ։ խայտառակ ու ծաղր ընել ։ խալքէ էթմէք ։ Գ ․ 2 ։
նշկահել ։ անարգուած , մէկդի ձգած ։ ԽԲ ․ 1 ։
նշմար , կամ նշմարանք ։ շաշարդ , մնացորդ ։ ԽԴ ․ Ժ ․ 1 ։ ԽՆ ․ 2 ։ Գ ․ 3 ։
նշոյլ ։ շաւղ ։ չէօհէ ։ Ն ․ 2 ։ ԺԱ ․ 1 ։

նողկալ ։ գարշելի լինել ։ խորշել , կամ մերժել աչօք ։ գ · 3 ։
նողկութիւն ։ գարշելութիւն , անհաճութիւն ։ գկ · 20 ։
նուագ ։ տխրալի խօսք , կամ խօսել ։ ժէ · 1 ։
նուազ ։ քիչ ։ ծիւղի ։ լէ · 1 ։
նուաճութիւն ։ տակն ընկած ։ թագի · մեծի ։ կ · 4 ։
նուխրան ։ պատարագ ։ ճէ · 11 ։
նպաստ ։ օգնութիւն ։ եարտըմ ։ ծ · 2 ։
նպաստել ։ փէքան ձգել ։ խկ · 3 ։
նպատակ ։ նետի նշան ։ նիշան , նիշանկեահ ։ թ · 3 ։
նրբութիւն ։ բարակութիւն , բարակ բան ։ ինճէլիք ։ գկ · 9 ։
Շաղակրատ ։ լաֆազան , շաթաֆճի ։ ծկ · 2 ։
շաղկապ ։ մէկտեղ կապ ։ գկ · 18 ։
շաղկապութիւն ։ միանալը , կապուիլը ։ պիրլէշմէ ։ գէ · 9 ։
շամփ ։ եղեգնոյ ։ գամըշլըգ ։ թ · 1 ։
շանագլուխ ։ եօթանի ազգ մի է ։ գկ · 12 ։
շանաճանճ ։ կէնէ ։ կէ · 3 ։
շանթ ։ կայծակ ։ եըլտըրըմ ։ կ · 3 ։
շառաւեղ ։ ծիլ ։ ֆիտան ։ ժէ · 2 ։
շարամանութիւն ։ մէկտեղ գնելը ։ գկ · 2 ։
շարաւ ։ թարախ ։ իրին ։ կ · 1 ։ իկ · 3 ։
շարունակ ։ կարգ ։ սըրայ ։ իէ · 1 ։ իզ · 2 ։
շաւիղ ։ ճամբու իզ ։ իկ · 2 ։
շերտ ։ փայտի կամ տախտակի կտոր ։ գէ · 3 ։
շիջ ։ գէզ ։ եըգըն ։ Է · 2 ։
շիրիմ ։ գերեզման ։ թիւրպէ ։ լկ · 2 ։
շնչասպառ ։ շունչը հատցընող , հոգին հանող ( յիշատակարան ։ )
շշուկ ։ վըզվըզ , փըսփըսուն ։ ի · 3 ։
շոգի ։ գոլորշի ։ պուխար ։ իծ · 4 ։
շռայլութիւն ։ առատ խառջը ։ մէսթի միւսրիֆլըք ։ իծ · 3 ։
շութափութիւն ։ արտորանք ։ աճէլէ ։ գկ · 11 ։
շունչ ։ ոգի , նէֆէս ։ կամ , քամի , հով ։ րուզկեար ։ ի · 2 ։
շուք ։ շէնք շնորհք ։ եարաշըք ։ իէ · 2 ։ կամ , պատիւ ։ իզզէթ ։ ձկ · 4 ։
շտեմարան ։ ծածուկ տեղ ։ կիզլի եէր ։ ի · 2 ։
շրջագայութիւն ընել ։ շուրջ գիէն նէֆէսը բռնող ։ դ · 1 ։
շրջանակ ։ ալէմ ։ ձկ · 3 ։
շրջաբերութիւն ։ շուրջ գիու կամ էթրաֆի եղած բան , ինչպէս պարը ,
կամ ղըրխը ։ գա · 2 ։ գկ · 12 ։
շփոթումն ։ խըրլըշ ըլլալը , շաշըրմիշ ընելը ։ գա · 3 ։
շքեղաշուք ։ սիրուն զարդարուած ։ փէք շէհրէթլի ։ գէ · 3 ։
Ոգեպահ ։ ապրելու կէր ։ կէչինէճէք ։ իէ · 4 ։
ոգեպահանք ։ հոգին հանող ։ ճան ալըճը ։ իէ · 6 ։
ոգեսպառ ։ շունչը հատած կամ կտրած ։ նէֆէսի քէսիլմիշ ։ ծկ · 3 ։
ոգորել ։ կասկածել ։ շիւպհէլմէք ։ թ · 3 ։
յոգւոց հանել ։ ախ ընել ։ ինլէմէք ։ իթ · 3 ։
ոխութիւն ։ ոխ պահելը ։ գարէզ ։ հկ · 3 ։
ողկոյզ ։ կուզ ։ սալգըմ ։ ժէ · 1 ։
ողողակ ։ ջրի տակը քալող , ինչպէս ձուկը , կամ սալըգըր ։ ծէ · 2 ։
ողողել ։ խոխում ընել , կամ սէլի տակ առնել ։ ձէ · 6 ։ ողողիլ ։ լուա-
ցուիլ ։ կամ սէլով տարուիլ , ծածկուիլ ։ գկ · 11 · 24 ։
ողորկութիւն ։ գուր կամ ախորժ ըլլալը , ախորժ բան մը ։ ձէ · 5 ։
ողորմագերս ։ ողորմուկ եանըմ ըլլալու ։ հա · 4 ։

ողջք ։ խնդրուածք ։ նիազ, տիլէկ ։ ժբ · 1 ։
ողջական ։ կակուղ, եաւաշ ։ բ · 1 ։
ողջաւոր ։ աղօթք ընող ։ տուաձի ։ ծդ · 4 ։
ոծ ։ ցորենի և այլ նմաննեաց վեր ելած բոյսը, կամ խաւէմը · և նմանութեամբ ։ կարգ, սրայ ։ ե · 3 ։ յոծ'ն առաջին · այսինքն առջի ջուրը, առջի ճամբան ։
ոսոխ ։ հասիմ, տավաձի ։ կդ · 2 ։
ոստայն ։ կտաւի թելը, կամ, եօրիւմճէք ։ Է · 3 ։
ոստիկան ։ բեհեայ, մուպաշիր ։ ծդ · 2 ։
ոստիկանութիւն ։ վրակեցու ըլլալը ։ մուպաշիրլըք ։ հն · 12 ։
ոստումն ։ ցատկելը ։ սըչրայըշ ։ ղա · 3 ։
ոտնալզիրծ ։ ոտքը սրկրդող ։ ղդ · 2 ։
ոտնատութիւն ։ ոտքի ատրկելք ։ ղա · 3 ։
որակութիւն ։ գոյն ։ ընկդ ։ Թ · 1 ։
որայ ։ ցորենի կամ գարիի կապոց ։ թութամ, տէմէթ ։ բ · 2 ։
որոջ ։ էգ ոչխար կենճ ։ լա · 3 ։
ուլ ։ այծու ձագ ։ քեչի եավրուսու ։ խդ · 1 ։
ուղեկցել ։ մէկանց երթալ, ճամբա ցըընել ։ հդ · 12 ։
ուղեղ ։ ըղեղ ։ ալէյն ։ ղբ · 8 ։
ուղերձեալ ։ ծլած, բուսած, մեծցած ։ ժն · 4 ։ խթ · 2 ։
ուղեշ ։ փիտան, կամ երկըեցած ձուղ ։ ատլ ։ խդ · 2 ։
ուղի, կամ ուղք ։ ճամբա ։ եօլ ։ խա · 1 ։ կէ · 2 ։
ուղխ ։ սել ։ ծդ · 3 ։
ունելիք ։ մաշայ ։ լդ · 5 ։
ունկի ։ օնձա, 8 կամ 12 արեմ ։ խղ · 2 ։
ունկնախից ։ անկանծը թրխամիշ ընող կամ ըրած ։ Ծ · 4 ։
ունկնադրութ ։ անկաճմտուկ ։ մաղաս պէօճէյի ։ ղդ · 14 ։
ուշ ։ յիշողութիւն, յիշելը ։ հըֆըզ, խաթըր ։ խդ · 2 ։ կամ, միտք ։ ապլ. փիկըր ։ ծթ · 1 ։
ուռ ։ առմայի ատլ ։ խդ ։ 1 ։
ուս ։ կռնակ ։ օմուզ ։ հէ · 3 ։
ուտիչ ։ ցեց ։ կիւվէ ։ ղբ · 9 ։
ուտձոհալ ։ ցեցէ կամ պէօճէկէ կերած ։ ծղ · 2 ։
ուրոյն ։ զատ, հեռու ։ պաշկաձա ։ Է · 3 ։
ուրոյնութիւն ։ պաշխա ըլլալը ։ փարղ ։ լդ · 7 ։
ուրուական ։ թախըլիթ ։ հա · 4 ։ կամ, առտումուտ ։ հն · 12 ։
ուրուաձայն ։ անշահ ձայն հանող ։ պէթ սէսլի ։ ղբ · 8 ։
Չարաշուք ։ խիստ չար, կամ ցած ։ նուխուսէթ ։ ծն · 2 ։
չուառալի ։ չհասատալու, սուտ, կուռք ։ ծդ · 4 ։
չորեքվտակեան ։ չորս ձուղ վաղող, չորս սէլալ ։ կբ · 1 ։
չու ։ քալելով առաջ երթալը, ճամբա ըննելը ։ կեօչ ։ բ · 2 ։
չքնաղ ։ ազնիւ ։ չիբին, տիլպէր ։ ժա · 1 ։
չքաւոր ։ ցած, խեղճ ։ սէֆիլ ։ կթ · 2 ։
Պալար ։ եարայի ուռեցք ։ զապարձըք ։ խդ · 2 ։ կն · 1 ։
պախարակիլ ։ նախատուիլ ։ ախլէնմէք ։ խբ · 5 ։
պակուցումն ։ մեծ վախ ։ իֆիրաթ գորգու ։ Է · 3 ։
պահակ ։ անկարիայի բռնած, ինչպէս սիմոն կիւրենացին ։ ծբ · 3 ։
պահպանակ ։ պահող, կամ պահուելու տեղ ։ կ · 3 ։ կե · 2 ։ կմ, ղըրի, սինէպէնտ ։ ղդ · 12 ։
պաղատանք ։ աղաչանք ։ տիլէկ ։ լդ · 9 ։
պաղպաջուկ ։ քեօշկի պէս շինած տեղ ։ խն · 2 ։

պաճար ։ ծէ . 2 ։ } ամաւոտն ։ հայվան , տավար ։
պաճարեղէն ։ Ժ . 1 ։
պաճուճել ։ զարդարուիլ ։ ստնանմանք ։ Թ . 2 ։
պայապատ ։ քրչիպատէ ։ Է . 2 ։
պայթել ։ ճաթել ։ փաթլամաք ։ ՀԷ . 3 ։
պայման ։ չափ . կանոն ։ քաւլ ։ Ի . 3 ։ Է . 1 ։ ԾԷ . 5 ։
պան ։ հացի գնդակ ։ սոմուն ։ ԼԷ . 8 ։ ՂԷ . 8 ։
պաշտօնէատեղ ։ պաշտելու տեղ ։ հոգի տուն ։ Ծա . 4 ։
պապակել ։ խիստ ծարուիլ ։ հէրարէթլէնմէք ։ ԻԹ . 2 ։
պապքել ։ ծարաւէն ցամքել ։ սուսամաք ։ Ի . 3 ։
պատանդել ։ խրախճանաւ կապել , բռնել ։ զաւդ էթմէք ։ ԿԼ . 4 ։ պա-
տանդել ։ ռէհին դրուիլ ։ ԽԸ . 3 ։
պատանի ։ կէնճ տղայ ։ օղլան , տէլի գանլը ։ ԺԸ . 2 ։
պատարուն ։ ըեցուն ։ գաչկըն ։ ԽԸ . 3 ։
պատգամաւոր ։ խապէրճար ։ ԽԷ . 3 ։
պատիր ։ խարէութիւն ։ ֆէնտ ։ Կ . 3 ։ ԿԷ . 2 ։
պատկանել ։ յարմարել ։ ույտուրմաք . տուգէն վէրմէք ։ ԽԼ . 3 ։ կամ ,
հաստատել , տեղաւորել ։ եէրլէշտիրմէք ։ Է . 3 ։
պատճառաւոր ։ սանդրուած ։ ԴԷ . 1 ։
պատնէշ ։ մէթէրիզ , Թապիյէ ։ Կ . 2 ։ ՂԻ . 5 ։
պատշաճագամ ։ հախով կամ ճայիղ տեղը դատապարտած ։ ԻԹ . 2 ։
պատուածօրէն ։ պաճուկ , մութ ։ տօլամբը ։ ԴԷ . 7 ։
պատուաստ ։ կցուածք ։ կէյտիրմէ ։ ՂԻ . 9 ։
պատուաստել ։ կցուել , միանալ ։ գայնաշմաք ։ ԽՆ . 4 ։
պատրել ։ խաբուիլ ։ ալտանմաք ։ ԻԹ . 3 ։
պատրոյգ , կամ պատրոյկ ։ մոմի կամ ճրագի ֆիթիլ ։ ԴԷ . 2 ։
պար ։ չալղ ։ օյուն ։ Է . 2 ։
պարարել ։ գիրնալ ։ սէմիրմէք , Թավլանմաք ։ Ժ . 1 ։
պարուրել ։ ծածկելով գոցել ։ սարմէք ։ ԺԻ . 3 ։ ՂԾ . 1 ։
պարս ։ քար նետելու գործիք ։ սափան ։ ԼԷ . 7 ։ ՂԻ . 4 ։
պարսաւ ։ քամահրանք ։ բիւտալըք , մէլամէթ ։ ԽԸ . 2 ։
պարսել ։ սափան նետել , քարկոծել ։ Հ . 2 ։ Զ . 3 ։
պարտել ։ յաղթուիլ ։ եէնիլմէք ։ ԻԹ . 3 ։
պերճանալ ։ փառաւորուիլ , կամ աղալտմիշ ըլլալ ։ ԺԷ . 2 ։
պիծակ ։ էշէկ առըսը ։ ԿԸ . 3 ։
պղպջակ ։ ջրի կամ ապակւոյ բուշտը ։ սու գապարճըղը ։ ՀԷ . 3 ։
պճնել ։ սաղուիլ ։ պէզէնմէք ։ Ը . 2 ։
պնդել ։ ամուր կապել , ամրցընել ։ ԽՆ . 1 ։ պնդել ։ եաւէն փաքել ։ ար-
տըրըրա տուշմէք ։ ԽԸ . 2 ։
պոետիկոս ։ բանաստեղծ ։ շայըր ։ ԽԸ . 6 ։
պուրակ ։ կապոց ։ տէմէթ ։ Թ . 1 ։
պչրութիւնք ։ անհամեստ զարդարանք ։ էտէպսիզ եօրտամ ։ ԽԸ . 4 ։
պսակ ։ վերջ ։ սօնղ ։ ԽԼ . 2 ։
պսակապաճոյճ ։ պսակով զարդարուած ։ ԸԷ . 1 ։
պտղաբերել ։ պտուղ բերել ։ ԴԷ . 21 ։
պտղատուհանկան ։ տալելու պտուղ տուող ։ ՂԻ . 9 ։
պտուտել ։ պտըտիլ ։ տօլաշմաք ։ Զ . 4 ։
պրկել ։ խրախճանաւ կապուիլ ։ Զ . 4 ։
ջահ ։ մաշալայ ։ ԴԷ . 8 ։
ջահել ։ ծանթել , փայլել ։ չէօհրէլէնմէք , եըլտըրամաք ։ ՁԷ . 2 ։
ջամբել ։ կերցընել ։ եէտիրմէք ։ Է . 2 ։

Ջայլ ։ ողբումայ ։ ադամայր ։ կը · 1 ։
Ջատուկ ։ Ճատը, կամ յաւագոր ։ մարտիկը ։ ծը · 2 ։
Ջեռնուլ ։ տաքնալ ։ գրգռիլ ։ ճէ · 12 ։
Ջերմն ։ տենդ ։ սըթմա ։ գ · 3 ։
Ջերմնական ։ սըթմալը ։ ի · 3 ։
Ջնար ։ սանթուռ ։ դը · 9 ։
Ջնկալ ։ ծեծուած ։ կ · 2 ։
Ջորեակ ։ ուղ մը մանր չէքիրկէ ։ կը · 3 ։
Ջութակ ։ սանթուռ, կամ քեման ։ դը · 8 ։
Ջրակարծ ։ ջուր երեցած, ջրի ակն ։ կը · 3 ։
Ջրել, ջրիլ ։ ջնջել, ջնջուիլ ։ պղտիմք, պղտուլիմք ։ լը · 3 ։ կը · 1 ։
Ջրողող ։ ջրով ծածկուած կամ խեղդուած ։ կ · 5 ։
Ռետին ։ ծառէ վազած խէժ · ինչպէս զամխ, չամսախըղի, ևն ։ կը · 1 ։
Սագրել ։ յանձնել ։ սիփարիշ էթմէք ։ կամ, գրգռել ։ տիւրթմէք ։ կէ · 1 ։ սադրող ։ գրգռող ։ ղ · 3 ։
սալ ։ էօրս ։ կդ · 2 ։ կամ, զայլան քար ։ դը · 8 ։
սակ ։ չափ ։ միգտար, ժդ · 2 ։ ժէ · 3 ։ խէ · 2 ։ ձ · 3 ։
սակաւաձեռն ։ ակար ։ զայըֆ ։ գ · 2 ։ կամ, քիչ ։ ճիմրի ։ դդ · 15 ։
սակաւամանեայ ։ քիչ, կարճ մը ։ ալըր ալ ։ ա · 1 ։
սահանք ։ ջրին խաղով վազելը ։ ի · 2 ։ կդ · 1 ։
սահման ։ չափ, սինօր · կամ, չափաւոր և կտրած խօսք ։ Է · 3 · 4 ։
սաղարթ ։ տերև ։ եափրագ ։ Թ · 2 ։
սայլասուր ։ բերանը սուր ։ աղզը քեսկին ։ դդ · 2 ։
սանդարամետական ։ գետնին տակը եղած, կամ գեհենային, դև ։ լդ · 5 ։ խը · 3 ։
սանձ ։ կէմ, աղըզլըն ։ դ · 2 ։
սանձակալ ։ կէմը բռնող ։ դ · 2 ։
սանձակոտոր ։ կէմը կոտրող ։ զապդի չէկող ։ կէմ ալմող ։ խը · 2 ։
սառնամանիք ։ սառոյց ։ պուզ ։ դ · 3 ։ Է · 1 ։
սառնուտ ։ սառն ակն, պուզ կտրած ։ ձա · 3 ։
սառնասրտութիւն ։ պաղ պուզ ըլլալը ։ դդ · 11 ։
սաստ ։ չէխ ։ շգդըշ, Թագիր, խըշմ, գազէպ ։ Ղ · 2 ։
սատեր ։ զօլօթայի չափ սատակ ։ խէ · 1 ։
սարդ ։ մամուկ ։ էօրիւմճէք ։ դդ ։ 14 ։
սարսուռ ։ դող ։ Թիթրէմէ ։ դ · 3 ։
սարսուցեալ ։ գլուխ քաշելով փախած ։ խը · 2 ։
սաւանիլ ։ խամամների սալիքին ըլլել ։ զա · 1 ։
սպալ ։ սրակիլ ։ գայթե կամ էլէմ չէքմէք ։ խէ · 1 ։
սեամք ։ դրան էշիկ ։ ժը · 3 ։
սեղանանենզ ։ գուզ էրմէք խայինը ։ խը · 2 ։
սեպհական ։ սուրբ իրենը ։ զաթը ։ լդ · 5 ։
սեպուհ ։ ազնուական ։ դ · 2 ։
սեռն ։ պայծառ, յխտակ ։ գեղով, փալ ։ Յ · 2 ։
սեռս ։ գամ ։ մըխ, էքսէր ։ կդ · 4 ։
սթափ ։ զգաստ, շուստ ։ զայրէթլի ։ խդ · 3 ։
սթափիլ ։ խելքը գլուխը գալ ։ այըլմագ ։ դ · 3 ։
սիգացող ։ ազատամիտ եղող ։ ճօսուլ ։ ճդ · 2 ։
սիկ ։ բարակ հով ։ խոշ բուզկիար ։ լաթըֆ էէլ ։ լը · 3 ։
սին ։ փուճ, ունայն ։ բէ · 3 ։
սիրարկու ։ սէր ձգող ։ դէ · 3 ։
սլանալ ։ փալով Թռչիլ ։ ի · 2 ։

սլաք ։ նետին ծայրի երկաթը ։ օք տէմիրի ։ ժգ ։ 1 ։ իգ · 3 ։
սխրալի ։ զարմանալի ։ աճայըպ ։ ծը · 2 ։
սկախառն ։ կաւով կամ չամուռով խառնած ։ չամուռլու, պալչըքլը ։ ծգ · 3 ։
սկաւառակ ։ թապախ, կամ սահան ։ շ · 2 ։
սկզբնալոյս ։ առաջին լուսաւորող ։ ծգ · 1 ։
սկզբնածին ։ առջինեկ ։ իլք օղլու ։ լթ · 5 ։
սկզբնաձիր ։ հը · 2 ։ } առջի տուողը, կամ պարգևողը ։
սկզբնաշնորհ ։ ձն · 2 ։ }
սկզբնապար ։ պարի կամ չալղըյի գլուխ ։ գը · 8 ։
սկիւթացի ։ թաթար ։ դգ · 12 ։
սղոցել ։ տէստէրէլէմէք ։ ծա · 4 ։
սնոտիապաշտութիւն ։ փուճ կամ անշահ շինուած ։ եօրտամընդ ։ գ · 1 ։
սողուն ։ սողուճան ։ լը · 2 ։ կէ · 1 ։
սուտ ։ փուճ, անշահ ։ ֆայտասըզ, նաֆիլէ ։ հը · 2 ։
սոսկական ։ եայան, կամ ցած, կամ պայալը մարդ ։ գ · 2 ։ հա · 2 ։
սոսկալիթխար ։ սոսկալի մեծ, ահագին ։ պալապան, ահըմին ։ դգ · 12 ։
սոսկումն ։ մեծ վախ ։ իֆիրաթ գօրգու ։ լէ · 3 ։
սոր ։ փոս տեղ՝ սէլէն փորած ։ խ · 2 ։
սուգ ։ տրտմութիւն ։ գամ, թասա ։ ծ · 1 ։
սուզել ։ խորը իջեցընել ։ պաթըրմագ ։ լզ · 2 ։
սուրհանդակ ։ չաթըր, փէյիկ ։ ծգ · 2 ։
սոփեր ։ խմաստուն խօսք, կամ չէնք ։ ձը · 2 ։
սպանդ ։ մորթած անասուն, կամ մորթուիլը ։ լթ · 5 ։ խգ · 2 ։
սպանդարան ։ մորթելու տեղ ։ խէ · 3 ։
սպառազէն ։ սիլահլը, կամ սիլահտար ։ գ · 3 ։ ծգ · 2 ։
սպառիլ ։ հատնիլ ։ թիւքէնմէք, եօղ օլմագ ։ ը · 2 ։
սպառուած ։ լմննալը, ծայր ։ թէքմիլ, ամ ։ լա · 1 ։
սպաս ։ սեղան ։ գիաֆէթ ։ դը · 21 ։
սպեղանի ։ մէհլէմ ։ ժը · 3 ։
սպրդիլ ։ ներս սըփըշմիշ ըլլալ ։ խը · 5 ։
ստամբակ ։ գլուխ քաշող, զապգոշ ։ լա · 2 ։ ինչպես տատանոյ ։ խը · 3 ։
ստապանել ։ մերկացընել, աւշը երեսը զարնել ։ այըպլամագ, սիթէմ էթ-
մէք ։ խթ · 3 ։
ստինք ։ ծիծ ։ մէմէ ։ ը · 2 ։
ստորաքեր ։ վար քաշող ։ ձէ · 2 ։
ստորախուղեալ ։ տակէն խորափիճ եղած ։ հգ · 2 ։
ստորածածկիլ ։ տակը ծածկուիլ ։ լէ · 3 ։
ստորնաքարշ ։ ցած կամ փուճ բաներու ընկած ։ ծգ · 2 ։
ստորք ։ վարինները ։ աշաղըլըլէր ։ ձգ · 2 ։
ստուար ։ հաստ, խոշոր ։ գալըն, գապա ։ խգ · 2 ։
ստուարակարկառ ։ խոշոր քարերով կարկըռած, կամ էքլէնմիշ ե-
ղած (յիշատակարան ։)
ստուարատեղի ։ հաստ կամ խոշոր տալերով ։ թ · 2 ։
ստուգաբանել ։ բառով կամ անունով խապաթ ընել ։ դգ · 20 ։
ստուեր ։ շուք ։ քէօլկէ ։ ժգ · 1 ։
ստրկամեծար ։ ծառան կամ ցած մարդը մեծարող ։ գ · 1 ։
ստրկութիւն ։ ցածութիւն ։ ալչագլըք, էսիրլիք ։ դգ · 7 ։
ստրուկ ։ քոլէ ։ գ · 2 ։
ստրջանալ ։ փիւշման ըլլալ, վազ գալ ։ իթ · 3 ։
սրագործութիւն ։ սուր բան շինելը, կամ երկաթ սրելը ։ խգ · 2 ։

սրահ ։ աւլա , մեյտան ։ ծա · 4 ։
սրանալ ։ վազ ընելով փախչիլ ։ ժա · 3 ։ ի · 2 ։ խէ · 3 ։ սրացեալ , մերձ՝
սրեցած , ցցուած ։ սիվրիլէնմիշ ։ խէ · 3 ։
սրբաձեռ ։ սուրբ կամ Թէմիզ ձեռքեր ունող ։ գի · 11 ։
սրբերգեան ։ սուրբ սուրբ երգող ։ գզ · 1 ։
սրինգ ։ տիւտիւկ ։ չըղըրթմա , կամ նէյ ։ գի · 8 ։
սրսկել , կամ սրսկիլ ։ ցըցընել , ցանել , ցանուիլ ։ սէրփմէք , սէրփիլ
մէք ։ խէ · 5 ։ գա · 2 ։
սփիռ ։ պօլ , ընդարձակ , կամ չորս դին ( յիշատակարան ։)
սփոփանք ։ մխիթարանք ։ Թէսէլլի ։ խէ · 3 ։
սքանչելութի ։ զարմանալի ըլլալը , զարմանալի՝կերպ ։ աճայիպ Թարզ ,
հըքմէթ ։ ժէ · 2 ։ հէ · 3 ։
Վաղըրգայն ։ տաւուտ ։ տապահ վազելի ։ կէ · 3 ։
վայր ։ տեղ ։ եէր ։ խգ · 1 ։
վայլչութիւն ։ եագըշըգլըգ , եագըշըր ։ Լ · 4 ։ ըզ · 1 ։
վանդակապատ ։ պարմախլըխով կամ խաֆէսով շինած տեղ ։ գաֆէս
լէր ։ խն · 2 ։
վանել ։ հրելով ձգել , վռնտել ։ խըթխըլմէք , գօվալամագ ։ խէ · 3 ։
վաստակ ։ աշխատանք ։ զահմէթ , սըզլէթ ։ ձէ · 1 ։
վատնել ։ ցրուել , զայ ընել ։ տաղըթմագ ։ խէ · 3 ։
վարակել ։ ապականել , չորս դին կամ բոլոր եայըլմիշ ըլլալ ։ լա · 3 ։
վարանիլ ։ վախէն կամ տէրանէն անձրկիլ , կամ տէսիրկէն ըլլալ ։ ժա ·
3 ։ խգ · 3 ։ խէ · 2 ։
վարապան ։ բերնի կապ , կամ քթի շէնկէլ , կամ հալխայ ։ գի · 2 ։
վարատական ։ բարբարական , տէսիրկին ։ ժա · 3 ։ խբ · 2 ։
վարատիլ ։ ցրուիլ ։ տարտղնիլ , տէսիրկին ըլլալ ։ խէ · 3 ։
վարկանք ։ մտքի դրածը , մտածմունք ։ Թահմին , գըյաս ։ խա · 4 ։
վարկանել ։ միտքը դնել , սեպել ։ սանմագ ։ ժԹ · 3 ։
վարմ ։ Թոռ , կամ տուզախ ։ խ · 3 ։ գ ։ 3 ։
վարսք ։ փէրչէմ ։ կզ · 3 ։ կամ , ծամի փէրչէմը ։ Թ · 2 ։
վեհ ։ խիստ մեծ ։ ուլու , մէշհուր ։ Է · 2 ։
վերադրութիւն ։ վրա ընէնիլը , կամ մէկմէկու վրա դրուիլը ։ խ · 2 ։
վերակացումն ։ վրա կենալը կամ հասնիլը ։ ա · 2 ։
վերակենդանել ։ ողջընալ ։ տիրիլմէք ։ լզ · 5 ։
վերամբարձութիւն ։ վեր բարձրանալը կամ ելլելը ։ ձե · 3 ։ գզ · 9 ։
վերընթացութիւն ։ վեր ելլելը ։ ձզ · 5 ։
վերծանել ։ կարդալ ։ օգումագ ։ խէ · 4 ։
վերնակենցաղ ։ երկինքը ապրող կամ ապրելու ։ ծա · 4 ։
վերնամուտ ։ ինչ գէմ ձէնէկ ընող ։ գա · 3 ։
վերնամրցանակ ։ երկնային յաղթութեան մուժտալխի ։ գզ · 24 ։
վերնաշաւիղ ։ վեր ելլելու ։ գի · 11 ։
վերջնական անձառ ։ ալա հասնելու զօրաւոր գեղ , ինչպէս պաշ . առար-
նր · և այլն ։ գզ · 11 ։
վէս ։ քիթը մեծ · հպարտ ։ մաղրուր ։ Ճ · 2 ։
վիթխարութիւն ։ խիստ մեծութիւն ։ հանթաըլըք ։ գի · 2 ։
վիժած ։ անցուցած աղայ ։ վաղթինաէն եկէլ տղանուշ ։ Ի · 2 ։
վիժակ ։ վար վազելը ։ կզ · 1 ։
վիհ ։ խորունկ փոս ։ ժա · 1 ։
վիձակաւորել ։ բաժնուիլ ։ Թէվզի օլմագ ։ գզ · 8 ։
վիմական ։ քար դարձած ։ քարի պէս պինդ ։ ծզ · 2 ։
վիրգ ։ նետելու մեծ կակ քար ։ կ · 2 ։ վիրգ ասլի ։ ակօչէմէյի քար ։ գի · 8 ։

վհատիլ ։ սիրտը թուլնալ կամ կոտրիլ ։ իւրէյի քըրըլմաք ։ Դ․ 4 ։
վտակ ։ բարակ վազուկ ջուր ։ ագար սու ։ Ե․ 2 ։ ԽԵ․ 4 ։
վտարանդի ։ հայրենի տեղ ընկած, կամ փախստած ։ ԺԵ․ 2 ։ ԾԱ․ 4 ։
վարել ։ քշել ։ գօվմաք ։ ԽԹ․ 3 ։
վասել ։ լռեցընել ։ զապունդըլաթմաք ։ Ի․ 2 ։
վրան ։ չատըր ։ Ի․ 2 ։
վրիժառու ։ էօճ կամ հայֆ ալող ։ ՃԲ․ 5 ։
վրիպակ ։ զուլտա, կէ՛ զըլկում ։ ԽԿ․ 2 ։ կէ՛, ծուռ ։ եանլըշ ։ ԺԲ․ 8 ։ ՂԲ․ 9 ։
վրիպիլ ։ Ճամբէն դուրս ելլել ։ եանլըշ շաշմաք ։ Ե․ 2 ։ կամ, զրկուիլ ։ մահրում գալմաք ։ ԼԲ․ 2 ։
վրէժխնդրական ։ Հիւռ ալէս ցանկութիւն, կամ ալմըշ ըլլալը ։ ԽՆ․ 2 ։
Տագնապ ։ սըխընթը ։ Է․ 3 ։
տաժանելի ։ ԽԵ․ 3 ։ } մեծ աշխատանք ։ էզիյէթ զահմէթ ։
տաժանումն ։ Բ․ 2 ։
տածել ։ պէս ընել ։ պէսլէմէք, թիմար էթմէք ։ Ե․ 2 ։ Թ․ 2 ։
տակաւ տակաւ ։ կամաց կամաց ։ աղըր աղըր ։ ԾԸ․ 3 ։
տաղանդ ։ օխայով սաակ ։ ԽԿ․ 2 ։
տաղաւար ։ խուլիպէ ։ կամ չատըր, գօնաք ։ Բ․ 1 ։
տաղաւարել ։ բնակիլ ։ գօնաք էթմէք ։ ՀԵ․ 13 ։ կամ, բնակուիլ, բնա- կարան ըլլալ ։ գօնաք օլմաք ։ Ձ․ 1 ։
տաղտկացուցական ։ իյլաձ ընելու ։ փէք մուրատտա ։ ՂԿ․ 20 ։
տաղտկալի ։ զզուելու ։ իյլաձ էնէձէք ։ Ծ․ 1 ։ Կ․ 5 ։
տաշտ ։ թաս, լէյէն ։ Շ․ 2 ։
տապ ։ տօք, տապութիւն ։ սըճագլըգ ։ Կ․ 3 ։
տապախտան ։ տափ գօդով խանձած, խնչափ սամ կէյրն ։ ՂԲ․ 9 ։
տապալել ։ տապնալ ։ գըրըլմաք, բարթըմա օլմաք ։ ԽԹ․ 2 ։
տապար ։ կացին ։ պալթա ։ ԺԴ․ 3 ։
տառ ։ գիր ։ եազը ։ կամ գրուածք, գրած խօսք ։ ԼԳ․ 2 ։
տառամանելի ։ տրտմելու, հոգալու ։ գասավէթլի ։ ԼԾ․ 2 ։
տատասկայան ։ խոշոր փուշ, կամ ակմիր ոզնէնի ցանող ։ ԾԿ․ 2 ։
տարագրել ։ վռնտել, հեռացընել ։ գովմաք ։ Ե․ 2 ։ Բ․ 1 ։
տարաղ ։ կերպ ։ թարզ, եօլ ։ ԺԲ․ 2 ։ ԾԿ․ 5 ։
տարաժամ ։ պէվագտ ։ ՃԲ․ 6 ։
տարակոյս ։ մէրթ՝ բաժնուած Ճամբա ։ Ղ․ 3 ։
տարակորզել ։ փրցընել ։ չէքիփ քօփարմաք ։ ԺԿ․ 2 ։
տարացոյց ։ օրինակ ։ էօրնէք, նումունէ ։ ԺԿ․ 2 ։
տարմ ։ սիւրիւ ։ ԿԸ․ 3 ։
տարտամ ։ անձկանութիւն ։ ՀԹ․ 2 ։
տարտարոս ։ գժոխքի անդունդը ։ Ճէհէննէմ ։ Բ․ 1 ։
տարր ։ մարմնաւոր բաներուն թէմէլը ։ այսինքն ։ կրակ, օդ, ջուր, և հող ։ ունսուր, անասըր ։ ՃԲ․ 3 ։ կամ, անոնցմէ հասարակ եղած բան ։ Բ․ 2 ։
'ի տարր գալ ։ եղած բաներուն տարրը մէջը ։ ԽԾ․ 2 ։
տարր արկածից ։ պատահած փորձանքներու ։ ՂԸ․ 6 ։
տարր ժամանակաց ։ ակիզբը կամ վերջեւանը աշխարհիս ժամանակին ։ ԾԵ․ 3 ։
տարրիչ ։ հասարակ ընող ։ ՃԿ․ 1 ։
տարփանք ։ մեծ բաղձանք ։ արզու ։ ԺԲ․ 1 ։
տաւիղ ։ գանուն ։ չալգը մի է ։ ԿԾ․ 1 ։
տեղալ ։ անձրեւի պէս թափիլ ։ եաղմաք ։ ԺԹ․ 2 ։
տենչանք ։ տես տարփանք ։ ԺԲ․ 1 ։
տեսական ։ երեւելի, աչքի եկող ։ կէօրիւնէճէք ։ ԽԿ․ 2 ։ կամ, տեսնող ։ կէօրէն ։ ԼԿ․ 5 ։

տեսականել ։ երևելի ընել . ցցընել ։ դժ . 10 ։
տեգ ։ մըզրախ ։ խե . 3 ։
տենդերադաւ ։ աշխարք խառող ։ ալեմի ալտատան ։ ղ . 4 ։
տիղմ ։ ցեխ ։ չամուռ ։ ժէ . 1 ։
տիպ ։ կերպ , կերպարան ։ քիալէթ ։ դ . 1 ։
տիրադաւ ։ ծդ . 2 ։ } տէրը խառող , անհաւատարիմ աղասընա խային ։
տիրադրուժ ։ է . 2 ։ }
տիք ։ արենք , տարիք ։ եաշ ։ ժա . 2 ։
տխուր ։ տրտում ։ մէլուլ , մահզուն ։ իթ . 2 ։
տխրատեսակ ։ սև մութ գոյն ունող ։ լդ . 8 ։ դդ . 12 ։
տղմախից ։ թանձր չամուռով լցուած ։ պալչըգլը ։ ժգ . 1 ։
տնկակից ։ բնակից ։ տալընտան , զամթը ։ ծէ . 3 ։
տնտեսել ։ հոգալ . տալ ։ գոյըրմաք ։ ժե . 2 ։ կամ , ցցընել ։ պէյան էթ-
մէք ։ խը . 6 ։
տնօրէնութիւն ։ տան գործք , կամ թիմար ։ դդ . 3 ։
տոկոսիք ։ տարեկի շահ ։ ֆայըզ ։ ա . 2 ։
տոհմ ։ ազգ ։ սոյ , սինսիլէ ։ ծա . 5 ։
տոհմական ։ սոյլու , սոյզատէ ։ դ . 2 ։
տոյժ ։ զարար , ճէրիմէ , ճուքամ ։ բ . 2 ։ իդ . 2 ։
տոչորել ։ երել մրկել ։ եանմաք ։ է . 5 ։ կամ , ցամքել . քուրումաք ։ իդ . 2 ։
տոմն ։ չուվալէ կապ ։ քէնտիր ։ իե . 1 ։ կէ . 2 ։
տուայտել ։ հալել , մաշել ։ կդ . 5 ։
տուժել ։ ճէրիմէ կամ ճուքամ քաշել ։ է . 3 ։
տումար ։ տէֆթէր ։ լթ . 2 ։
տպաւորագոյն ։ շատ նման ։ փէք ույկուն , թըպկը ։ ժթ . 3 ։
տառն ։ պոչ ։ գույրուգ ։ խե . 3 ։
տրոհել ։ բաժնել , զատել ։ այըրմաք , սէչմէք ։ ժդ . 1 ։
տրուպ ։ ցած , անարգ ։ ալչագ , էտնա ։ ժե . 2 ։
Ցայգ ։ գիշեր ։ կէճէ ։ Ը . 2 ։
ցանց ։ մէշա ։ տուզագ ։ լե . 1 ։
ցանց ։ խ . 3 ։ } ադ , ձուկ կամ ղուշ բռնելու թօռ ։
ցանցարկ ։ ծէ . 2 ։ }
ցասումն ։ բարկութիւն ։ էօֆքէ ։ ժէ . 3 ։
ցեղ ։ սոյ ։ ժբ . 2 ։
ցիռ ։ վայրի էշ ։ եապան էշէյի ։ խդ . 2 ։
ցնորք ։ խենթութեան մտմտուքներ կամ երազներ ։ խէյալ ։ ժբ . 3 ։
ծդ . 1 ։
ցնցուղք ։ ցաթկտուք ջրի կամ կրակի ։ սըրփինթի , փըսկիւրմէ ։ կ .
3 ։ կբ . 3 ։
ցոլանալ ։ փայլիլ ։ շուլալանմաք , չէօհչէլէնմէք ։ ե ։ 2 ։
ցոլք ։ փայլմունք ։ շուլալար ։ ձա . 3 ։
ցոփութիւն ։ համարձակութիւն ։ աչըքլըք , սէրպէստլիք ։ հբ . 2 ։
ցուպ ։ գաւազան ։ տէկէնէք ։ կ . 4 ։
Փաղանգ ։ սիւրիւ , գաթար ։ կէ . 1 ։
փաղաքշել ։ շոյել ։ խօշ բէշ կէչինմէք ։ ժ . 1 ։
փապար ։ խօվուխ տեղ ։ խ . 2 ։
փարթամութիւն ։ շատ պէս եաւրողութիւն ։ խէ . 2 ։
փթթեալ ։ չիչէքլէնմիշ եղած ։ դդ . 11 ։
փոխարկել ։ հատուցանել ։ մուգապէլէ էթմէք ։ Ն . 3 ։
փոխատրութիւն ։ հատուցումն ։ մուգապէլէ ։ հէ . 9 ։
փոկ ։ կաշիէ կապ ։ խէ . 2 ։

փող (փողի ։) պօղազ ։ խդ · 3 ։
փող (փողոյ ։) զուռնա ։ կը · 2 ։
փողել ։ զուռնա կամ պօռու չալել ։ կդ · 2 ։ գը · 7 ։ կամ, անուր կանչել, պօռալ ։ պաղըրմիշ ։ կը · 2 ։
փրկանակ ։ փրկութեան գործիք, կամ միջնորդ, ազատող ։ գուրթարըճը ։ խդ · 2 ։ ծա · 4 ։
փրկանք ։ ազատելու գին ։ պէհա ։ ձէ ։ 2 ։ զ · 2 ։
փրանալ ։ ուռիլ ։ պէյփուլէնմէք ։ ն · 2 ։
Փռղեալ ։ քաշուած, սրքած, քէշքրցած ։ խթ · 2 ։ ձէ · 3 ։
քաղցկեղ ։ կերցու ։ չիբիֆինջէ ։ ժը · 3 ։
քաղցրաւենի ։ անուշեղէն ։ թաթլը, շէքէրլամէ ։ խա · 2 ։
քամահել ։ անարգանել ։ այըփլամագ, գէմմ ալմագ ։ հէ · 3 ։ ձը · 5 ։
քայս, կամ քառ ։ կերասուրի, լէֆ ։ լզ · 1 ։
քանակել ։ չափի մէջ մանել, պղտիկնալ ։ եօլիւի կիրմէք, քիւչիւլմէք ։ լզ ։ 10 ։
քանաստր ։ ժանտ ։ զալիմ, եաւուզ ։ կթ · 2 ։
քանդակուած ։ փորուածք քարի, կամ փայտի վրայ ջրմա ։ ժա · 2 ։
քանիք ։ ննջարար բույը ։ Է · 1 ։
քանցել ։ փրցուել · կտրուել ։ գօփարըլմագ · գըրըլմագ ։ խդ · 1 ։ կէ · 2 ։
քանքար ։ օխայով կամ քէօէյով ասակ ։ ժը · 1 ։
քառագիմակ ։ չորս աչքով, կամ չորս գինւ անանդ ։ ծա · 4 ։ առս 'ի լուծմանցն ։
քառակերպ ։ չորս կողմ ունող, նիշպէս սուրբ խաչը ։ զա · 2 ։
քառակուսեան ։ տէօրթ թարաֆլը ։ գդ · 21 ։
քառեակ ։ չորս ։ տէօրթ ։ ձդ · 1 ։
քարակոշկոճ ։ քարով ծեծկըուող ։ ժը · 2 ։
քարամէժ ։ խոյոյէ վար նետած ։ ծդ · 2 ։
քարր ։ թաշ եըլանը ։ ը · 1 ։ Ծ · 4 ։
քարանէն ։ թուղթ ։ քեաղըտ ։ թ · 1 ։
քաւարան ։ քաւող ։ աֆֆ էանէ ։ գդ · 1 ։
քեղեք ։ մանրուս · կամ, մանրին կամ ափումնին կոթը ։ լը · 3 ։
քերթութիւն ։ քերականական շէնք ։ գդ · 19 ։
քթթել աչօք ։ անթարթ, աչք թարթել գոցելը · և նմանութիւ ։ քէլէկ մը ։ ակը ալըճըք ։ ժդ · 1 ։
քնքք ։ ասմախ ։ խդ · 2 ։
քնուոր ։ զարէզին ։ զա · 1 ։
քղանցք ։ փէշ, էթէկ ։ ժը · 2 ։
քնարան ։ քնանալու տեղ, գերեզման ։ հէ · 4 ։
քնին ։ թէֆթիշ ։ 'ի քնին առնուլ ։ քննել ։ թէֆթիշ էթմէք, առամայ ։ հա · 3 ։
քողարկել ։ ծածկել ։ էօրթմէք ։ հը · 2 ։
քողընծայ ։ քողով ծածկած ։ գը · 3 ։
քմինակրօն ։ քու կրօնքին կամ կանոնին ։ լզ · 1 ։
քմինանութ ։ քէզմէ չինած, կամ հասել բրած ։ ծդ · 4 ։
քմինաշուէն ։ քու շնչով կամ բերնով խօսած ։ լզ · 2 ։
քսանևափուշ ։ խը · 6 ։ | փուշ փուշ բնող, կամ բլլալու ։ խիստ գա-
քսանևեղի ։ . . . ը · 1 ։ | լու ։
քրայ ։ զուլումճիի կամ խաղճիի օճախ ։ ժթ · 1 ։ խդ · 3 ։
քրէական ։ թագաւորի կամ անօրէնի գէմ բրած ։ ծա · 4 ։ զա · 3 ։
քրձազգած ։ չուլ կամ խարար հագած ։ խթ · 2 ։
քրմերգի ։ քուրմի կամ կռքի քահանայի զուռնակ ։ կը · 3 ։

քրտնախնդրակ ։ անուշահոտ քրտինքով եղած ։ Ճբ · 3 ։
քրքում ։ զաֆրան ։ գկ · 11 ։
քրքուանք ։ ծեծկռտելով լալը ։ Ժբ · 2 ։
Օդ ։ հով ։ խէ · 2 ։
օդաթռուան ։ հովուն թռչող ։ գկ · 20 ։
օդաչու ։ հովային մէջ թռչող ։ գէ · 5 ։
օդուած ։ տես յօդուած ։
օղք (օղից ։) ոտից անուն ։ փաղուճ ։ խէ · 3 ։
օթեւան ։ իջնելու տեղ , տուն ։ օթաղ , գոնաղ ։ Ը · 1 ։
օթոց ։ զգեստ , հագուստ ։ եափաղ ։ Դ · 1 ։
օժանդակ ։ օգնական ։ եարտըմճը ։ ԽԹ · 1 ։
օժանդակել ։ օգնել ։ եարտըմ էթմէք ։ ԿՆ · 2 ։ կամ , զօրացնել , մեծ
  բանի հասցնել ։ Ն · 1 ։
օձաք ։ գործիք ։ ախտամտիքը , փուստա ։ ԿԴ · 3 ։
օն և օն գրել ։ իրաւ սեպել ։ հաք սայմաք ։ ԽԹ · 3 ։
օշինդր ։ փելին ։ Դ · 3 ։ ՀԱ · 2 ։
օրակշին ։ որ չափով (քիշտատեղարան ։)
օրհներգ ։ օրհնութիւն երգող , օրհնող ։ ԿԱ · 2 ։
օրոտ ։ բամբոզ , ցրուող ։ տաղըթան ։ ԺԿ · 4 ։ կամ , բամբուած , գլուխ
  քաշած ։ պըրըլմըշ , պաշ չէքմիշ ։ ԽԶ · 2 ։

# ՎՐԻՊԱԿ

| ԵՐ. | ՏՈՂ. | | ՈՒՂՂԻՂ. |
|---|---|---|---|
| 127 | 1 | *երեւեցաւ* | *երեւեցայ* |